Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները`*

*Պաշտոնական կայք`* **[http://www.armin.am](http://www.armin.am)**

*Էլ. փոստ`* **[info@armin.am](mailto:info@armin.am)**

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

# ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 1997

*Խմբագիր*
ՀՀ ԳԱԱ իսկական անդամ
Լ.Ա.ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

*Սույն գրքի տպագրության ծախսը հոգացվել է ի հիշատակ Արցախյան գոյապայքարով հպարտ ԿԱՐԱՊԵՏ ԳԻՆՈՍՅԱՆԻ եւ ԹՈՒՐՔՈ ՔԱՐՑԻ-ԵԱԼՈՎԱՅԻ, ՕՐԹԱԳՅՈՒՂ-ՊՈՒՐՍԱՅԻ ու ՔՂԻ-ԷՐԶՐՈՒՄԻ 1915 թ. նահատակների, հովանավորությամբ Ամերիկահայոց Արեւելյան շրջանի ու Կանադայի թեմի առաջնորդ գերաշնորհ ՄԵՍՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Ա ՇԵՅԱՆԻ, որին հայտնում ենք մեր երախտագիտությունը:*

**ԲԱԳՐԱՏ ԱՐՇԱԿԻ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ**

# ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

**Խմբագիր՝ Լ.Ա.Խուրշուդյան**
**Սրբագրիչ՝ Ա.Մկրտչյան**

# Առաջաբանի փոխարեն

Արցախյան գոյամարտի նոր եւ աննախադեպ հզոր պոռթկումը տեղի ունեցավ 1988 թ. փետրվարին՝ անմիջապես էլ իր վրա առնելով շրջապատի, ամենայն իրավամբ կարելի է ասել՝ համաշխարհային հանրության սեւեռուն ուշադրությունը: Կատարվել էր խորհրդային դարաշրջանի համար չեղած-չտեսնված մի իրողություն, եւ պետք է բացատրություն ստանար, նշվեին պատճառները, մղիչ ուժերը, նպատակը: Ահա այստեղ էլ ասպարեզ նետվեցին Ադրբեջանի կառավարական մարմինները, գիտական ու մշակութային միջավայրերը, փորձեցին աշխարհին համոզել, որ արտասովոր ոչինչ էլ տեղի չի ունեցել, արցախահայությունը տասնյակ տարիներ հաշտ ու խաղաղ ապրում էր Ադրբեջանի բազմադարյան հողը հանդիսացող Լեռնային Ղարաբաղում, որը նա բնակության վայր էր դարձրել 19-րդ դարի առաջին կեսին՝ այստեղ տեղափոխվելով Պարսկաստանի ու Թուրքիայի մի շարք մարզերից: Եվ, ահա՛, օգտվելով գորբաչովյան վերակառուցման ազատությունից, Հայաստանում ու Սփյուռքում գլուխ բարձրացրած ազգայնամոլ որոշ շրջաններ որոշել են կենդանացնել հայության մոլար երազը Մեծ Հայքի չեղյալ պետությունը վերականգնելու մասին, որոշեցին սկսել Ղարաբաղից:

Այսպե՛ս, ուրեմն, հայ ազգայնամոլ շրջաններն են, որ գլուխ են բարձրացրել, իսկ իրենք՝ ադրբեջանցիները, իրենց Ադրբեջան երկիրն ու նրա իշխանությունները դժգոհելու ոչ մի առիթ չեն տվել, հակառակը, արցախահայությանը պահել են բարեկեցության ու եղբայրական հոգատարության մի վիճակում, որը նախանձելի պիտի լիներ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ նույնիսկ Հայաստանի տարբեր շրջանների համար: Այդ պատճառով էլ իրենք պարզապես զարմացած ու զայրացած են փետրվարի 20-ին (88-ի) Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի ընդունած արտառոց որոշմամբ: Բազմակողմանիորեն սուտ եւ անտրամաբանական այսպիսի վարկած հրապարակելու համար պետք էր հիմար խաբեբա լինել կամ կորցրած լինել սովորական հիշողությունն ու խելամտությունը:

Ես նպատակ չունեմ Ղարաբաղ-Արցախի հնավանդ հայկական, հայաբնակ ու բացառապես հայադրոշմ լինելու հանգամանքը, որ երեւում է առաջին իսկ հայացքից, նույնիսկ պատմական իրողություններից անտեղյակ մարդկանց: Այլ նպատակ ունեմ Լեռնային Ղարաբաղը, նրա բնիկ հայության կամքին հակառակ, այսինքն՝ ապօրինաբար ու բռնությամբ ինքնավար մարզի կարգավիճակով, նորահնար Ադրբեջանի հանրապետության սահմանների մեջ առնելուց հետո՛ անգամ այդ հայության ու նրա սեփական հայրենիքի դեմ պարբերաբար կիրառված սադրանքներն ու բացահայտ բռնությունները, դրանց արձագանքները ԽՍՀՄ հասարակական-քաղաքական ամենատարբեր մակարդակներում: 1920 թ. նոյեմբերի 30-ին Խորհրդային Ադրբեջանի ղեկավար Նարիման Նարիմանովը խորհրդայնացող Հայաստան էր ղրկել հեռագիր, որով հաստատում էր, որ «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջեւանը համարվում են Հայաստանի սոցիալիստական հանրապետության մասեր»: Եվ, այնուամենայնիվ, շուրջ տասն ամիս անց նույն Նարիմանովը հայասյաց Ստալինի դիվային օժանդակությամբ աջողացրեց այդ «Հայաստանի սոցիալիստական մասեր» Լեռնային Ղարաբաղն ու Նախիջեւանը բռնակցել իր Ադրբեջանին: Եվ երբ երկու տարի հետո էլ, Լեռնային Ղարաբաղի բնակչության 95 տոկոսը կազմող հայության բողոքն ու ընդվզումները խաղաղեցնելու համար, ստիպված եղան նրան ինքնավարություն «շնորհել», դա ձեւակերպեցին այսպես. «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմել ինքնավար մարզ...» (Այս եւ հարակից փաստաթղթերի քննությունն ու Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վիճակի քննությունը տե՛ս Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյամարտը, Ա., Երեւան, 1994):

Ուրեմն, իրենց Ադրբեջանի ղեկավարի հավաստմամբ՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մաս էր եւ այն Ադրբեջանին էր բռնակցվում որպես «հայկական մաս»: Սակայն բռնակցվում էր ոչ թե այն բարեկարգելու եւ ծաղկեցնելու, այլ հայաթափելու, յուրացնելու համար: Ուստի եւ ինքնավար մարզի սահմանները գծելիս հոշոտեցին այն, ծայրա-

ստեղծել էին մի այնպիսի մթնոլորտ, որում հնարավոր դարձավ, որպեսզի «Բակինսկի րաբոչի» թերթը 1987-ի հունիսին իր առաջին էջում տպագրի Հայաստանի զինանշանը՝ հոշոտված ու այլանդակված (այն լույս էր տեսել առանց Մասիսների)։

Իսկ դրանից հետո էլ Ադրբեջանի ողջ տարածքում, մամուլի եւ առհասարակ լրատվական բոլոր մարմինների, գաղափարական ողջ բնագավառի բան ու գործը հակահայկական քարոզչությունն էր, զրպարտություններն ու անսանձ հարձակումները..., որովհետեւ ակադեմիկոս, այն ժամանակ ԽՍՀՄ ղեկավարի խորհրդական Աբել Աղանբեկյանը Փարիզում ունեցած մի հրապարակային հարցազրույցում համարձակություն էր ունեցել հայտարարելու, թե ինքը հարմար է համարում, որ Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավար մարզը՝ անցյալում անօրինական ու բռնի ճանապարհով կցված Ադրբեջանին, վերադարձվի Հայաստանին։ «Ես, որպես տնտեսագետ,- ասել է Աղանբեկյանը,- գտնում եմ, որ այն (Լեռնային Ղարաբաղը.- Բ. Ու.) առավել շատ կապված է Հայաստանի, քան Ադրբեջանի հետ։ Այս առթիվ էլ ես մի առաջարկություն եմ արել եւ հույսով եմ, որ վերակառուցման, ժողովրդավարության պայմաններում խնդիրը կգտնի իր լուծումը» («Յումանիտե», 1987, նոյեմբ. 18)։

Սույն հայտարարության մասին Հայաստանում դեռ ոչինչ չգիտեին, իսկ Ադրբեջանում եռանդագին պատրաստվում էին համապատասխան հակաքայլերի. Սումգայիթում շուրջ չորս ամիս հետո կատարվելիք վայրագությունների ժամանակ պարզվեց, որ այդ քաղաքի խողովակագլանման եւ ուրիշ գործարաններում անցյալ տարվա նոյեմբեր-դեկտեմբերից սկսած երկաթե բութ ու սուր գործիքներ են պատրաստել՝ գործադրելու նախապատրաստվող հակահայկական պատժարշավներին։

Իսկ բուն Լեռնային Ղարաբաղո՞ւմ... Այստեղ 88-ի փետրվարը ո՛չ նորություն էր, ո՛չ էլ անսպասելի կամ զարմանալի մի բան։ Այդ մարզի տեր հայությունը, որ Հայոց միացյալ թագավորության բարձունքից հետո բազում դարերի ընթացքում անընդմեջ պահպանել էր իր բնիկ, սեփական իշխանությունը (ուշ միջնադարյան դժնդակ իրականության մեջ Այսրկովկասում հաստատված պարսկական ու օսմանյան բռնատիրության ներքո՝ անգամ ունեցել է իր մելիքական վարչությունը), իսկ 1918-21 թթ. հերոսաբար իր անկախ ազատությունն էր պաշտպանել Ադրբեջանի նորաթուխ պետության ոտնձգությունների դեմ։ 1921-ի հուլիսին բռնությամբ ու ապօրինությամբ այն կցորդը դարձրին Ադրբեջանի։ Դրանից հետո քաջազնական մարզը գտնվում էր վարչա-քաղաքական, տնտեսական ու մշակութային մի վիճակում, որն ավելի վատ ու անտանելի էր, քան ստրկությունը։ Այո՛, ավելի վատ ու անտանելի, որովհետեւ ստրկության մեջ մարդիկ ազատ են լինում ապրելու եւ կատարելու իրենց գործը... Իսկ Ադրբեջանի իշխանություններն այն գլխից ծրագրած ունեին Լեռնային Ղարաբաղը հայաթափ անել եւ այդ եթե սկսել էին Շուշիի հայության բնաջնջումով (1920-ի մարտ) եւ դրա համար վաստակել էին հայակերների հոչակ, ապա հետագայում հորինեցին ու հմտորեն կիրառեցին ամենաբազմազան միջոցառումներ, որոնցով պիտի հայկական ինքնավար մարզը պարպեին իր բնիկ տերերից եւ վերածեին արոտավայրի։ Պատկերացնելո՞ւ բան է. այդ մարզը հացի արտադրության գլխավոր եւ հարստագույն գոտին էր հանրապետության մեջ, սակայն ցորենաղաց գործարան չուներ եւ, ամեն տարի հացահատիկի իր անհուն հարստությունն անկուշտ իշխանություններին հանձնելով, պարտավոր էր նրանց ձեռքից սպասել ողորմություն՝ սեփական կարիքները բավարարելու համար։ Այդպես էր դրությունը նաեւ գյուղատնտեսության մյուս բնագավառներում (այգեգործություն, անասնապահություն եւն)։

Իր տարածքի մեծագույն մասը փարթամ ու հարստագույն անտառներով ծածկված մարզի անտառատնտեսության ղեկավարությունը նստում էր անտառազուրկ Աղդամում եւ բաղկացած էր անտառային գործի հետ ոչ մի առնչություն չունեցող ադրբեջանցիներից, որոնց պարտականությունն էր միայն մարզն անխղճորեն կողոպտելը։

Սարսանգի ջրամբարի ու ՀԷԿ-ի ղեկավարությունը եւս ադրբեջանական էր ու Միր-Բաշիրում էր նստում, այդ պատճառով էլ մարզն իր ջրամբարից ու իր հզոր էլեկտրակայանից չէր կարող օգտվել։



Մարզի բնական մետաքսի կոմբինատը, որ տարեկան շուրջ երկու տասնյակ միլիոն մետր գործվածք էր արտադրում, ներկարարական ցեխ ստեղծելու իրավունք չուներ եւ պարտավոր էր իր ամբողջ արտադրանքը հանձնել Նուխվա նույնանիշ ձեռնարկությանը, որպեսզի սա էլ ներկեր եւ վայելեր հասանելիք եկամուտները։ Այդպես էր վիճակը նաեւ մարզի բնական հարստությունների մյուս ճյուղերում. բազմատեսակ եւ ընտիր քարերն ու անտառանյութը տեղափոխում-մշակում էին Բաքվում, Կիրովաբադում եւ այլուր՝ դարձյալ նույն նպատակով։

Իսկ մշակույթի, լուսավորության, առողջապահության ասպարեզո՞ւմ... Այստեղ եթե ոչ զարգացում ապահովելու, ապա գոնե դրությունը տանելի վիճակում պահելու պարտադիր պայմանն այն կլիներ, որ մշտական ու ազատ կապ պահպանվեր մայր ժողովրդի հանրապետության հետ, այնտեղից ներմուծվեին անհրաժեշտ կենսահյութեր, առաջընթացն ապահովող խթաններ... Սակայն ինքնավարության տասնամյակները եղել են հայկական մարզը հայոց հանրապետությունից զերծ պահելու, նրանց միջեւ խուլ ու բութ անջրպետ ապահովելու ժամանակներ։ Պերճախոս մի դեպք. 1948 թ. ամռանը Ստեփանակերտ էր այցելել Ավետիք Իսահակյանը։ Մարզի մտավորականությունն ընդունել էր իր ազգի մեծ բանաստեղծին։ Կուսակցական մարզկոմում եւս համարձակվել էին ընդունել ու սովորական զրույց ունենալ նրա հետ։ Եվ սա բավական եղավ, որպեսզի անմիջապես հանրապետական քննչական ու դատական մարմինները բուռն գործունեություն ծավալեին մարզում, բանտ ու աքսոր քշվեին մարզի մտավորականության տասնյակ ու տասնյակ լավագույն ներկայացուցիչներ, պաշտոնանկ լինեին կուս. մարզկոմի եւ մարզխորհրդի գործկոմի բազմաթիվ ղեկավարներ։

Այսօրինակ պատժարշավներն ու բռնությունները շարունակվել են նաեւ հետագա տասնամյակներին, վաթսունականներին՝ ընդգծված դաժանությամբ, միութենական հնչեղությամբ, չնայած նույն Միության ուրիշ վայրերում, իբր, դեռ տիրական էր, այսպես կոչված, խրուշչովյան ձնհալի մթնոլորտը։

Եվ այսքանից հետո պնդել, թե Արցախյան գոյապայքարի պոռթկումը 88-ի փետրվարին՝ անսպասելի մի երեւույթ է եղել, այն էլ հրահրված դրսից, հայ դաշնակցական կենտրոնների կողմից, պարզապես հիմարություն է կամ ունկնդիրներին ու ընթերցողներին հիմարացնելու ստոր փորձ, որին չէր կարող հավատալ ոչ ոք, հատկապես նույն Միության կենտրոնի գրասենյակներում։ Չէ՞ որ տասնամյակներ շարունակ սրանք տեղյակ էին Լեռնային Ղարաբաղի չդադարող բողոքի գրերին, պայքարի դրսեւորումներին։ Իսկ Գորբաչովյան վերակառուցման աղմուկներին հավատալով էլ Արցախյան քանի՜-քանի պատվիրակություններ էին գնացել, ներկայացրել մարզի հայության ցավագին դրությունը, յոթանասունամյա վճիռը ազատագրության ու մայր ժողովրդի հետ վերամիավորվելու վերաբերյալ։

Ուրեմն, 88-ի փետրվարն սկսվել է 1918-ի մայիսից, երբ Այսրկովկասի արեւելյան մասում ստեղծվեց մինչ այդ երբեք գոյություն չունեցած Ադրբեջան, եւ սա էլ իր նպատակը դարձրեց տիրանալ Արցախ-Ղարաբաղ հայկական մարզին։ Արցախը ոտքի ելավ, նետվեց գոյապայքարի, որը շարունակվեց տասնամյակներ, մինչեւ 1988-ի փետրվարը։ Այս կետում արդեն այն պայթեց իբրեւ համազգային վճռի, հանուր հայության ընդվզումի աննախադեպ ու արդար պոռթկում, որը չէր կարող չպսակվել հաղթանակով։

նից կարմրած, ցուցարարների համար ուրախ-ուրախ կարդում էին նստաշրջանի որոշումը, թերթերի համարները տնից տուն էին ուղարկում։ Հրապարակում դադար չառած հանրահավաքի հռետորներն իրար հերթ չտալով խոսում էին Որոշման պատմական դերի մասին, նրա վճռական նշանակությունն էին բացատրում՝ սահմանադրությունից ու լենինյան քաղաքականությունից անտեղյակ ամբոխին...

Եւ մեկ էլ դեպուտատները հիշեցին, որ մարզգործկոմի նախագահն ու քարտուղարը Որոշման տակ չեն դրել իրենց ստորագրությունները, Որոշումը չեն կնքել։ Հավաքվեցին մարզգործկոմի շենքում։ Դռները փակ էին։ Կիրակի օր էր, ոչ ոք աշխատանքի չպիտի գար։ Բայց եւ այնպես նրանք ներս անցան, մարզի բոլոր ղեկավարներին ոտքի հանեցին։ Եւ պարզվեց, որ կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Կեւորկովը նախապես գործկոմի նախագահ Օսիպովին կարգադրած է եղել գործկոմի կնիքն առնել ու գետնի տակ անցնել։ Ասել է՝ «Կորած այնքան կմնաս, մինչեւ որ Քյամրան Մամեդովը (Բաղիրովը) բեկանել տա այդ հիմար որոշումը»։

Որոշումը հրապարակվել էր թերթերում։ Հրապարակված էլ չլիներ, միեւնույն է, այն ընդունվել էր սահմանադրական ամեն տեսակ կարգուկանոնի համապատասխան, եւ նրա օրինականությունը կասկածի տակ առնել ոչ ոք չէր կարող... Եւ, այսուհանդերձ, մարդկանց երջանկությունը խախտված էր ինչ-որ չափով։ Դառնորեն մտածում էին, որ մարզի բախտը տնօրինող երկու մարդ, եւ, ինչ էլ որ լինի, երկու հա՜յ մարդ, իրենց դրսեւորեցին որպես շառլատաններ, խաչագողներ... Նրանք չէին կարող չիմանալ, որ ստորագրություններն ու կնիքը տվյալ դեպքում սոսկ ձեւական նշանակություն ունեն եւ ոչինչ, տառացիորեն ոչինչ չեն որոշում։ Բայց եւ այնպես իրենց վերջին ստոր քայլն էին կատարել։ Այո՛, վերջի՛ն, որովհետեւ պետք է իմանան նաեւ, որ հաջորդ մեծ հավաքն էլ կլինի իրենց այդ ստոր արարքը դատապարտելու համար, եւ այն ժամանակ իրենց չի փրկի ոչ մի թաքստոց։ Բայց նրանք, հավանաբար, համոզված էին, որ կատարել են իրենց համար վերջին նպաստավոր քայլը՝ բաղիրովներին ցույց են տվել, որ Ադրբեջանի շահերին նվիրված են մինչեւ վերջ, հոգեվարքին անգամ գործում են նրա օգտին, նրա համար։

✧ ✧ ✧

**Փետրվարի 21-ի** առավոտյան, դեռ լույսը չբացված, Ստեփանակերտից զանգեց Վարդան Հակոբյանը եւ հաղորդեց մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի մասին, ընթերցեց նրա ընդունած որոշումը։

Հիվանդանոցային իմ սենյակը դարձավ կայարանային տեղեկատու։ Հիվանդներն ու հիվանդապետները, բժիշկներն ու մնացած բուժաշխատողները մտնում էին, հարցուփորձ անում, խանդավառված ելնում, որպեսզի իրենք էլ քաղաքում տարածեն ցնծալից լուրը, դառնան համազգային խանդավառության մունետիկներ։

Միջօրեից հետո հայտնվեցին Ստեփանակերտից եկած երեք երիտասարդներ, որոնք իրենց հետ բերել էին մարզային թերթերը՝ Որոշման հայերեն ու ռուսերեն տարբերակներով, եւ խորհուրդ էին հարցնում՝ ի՞նչ անել, ո՞նց անել, շարունակությունն ինչպե՞ս կազմակերպել։

Ես նրանց խորհուրդ տվի հենց անմիջապես գնալ Հայաստանի կուսակցության Կենտկոմ ու Գերագույն խորհուրդ, պահանջել, որպեսզի Կարեն Դեմիրճյանն ու Հրանտ Ոսկանյանը ծանոթանան Որոշմանը, դառնան Լեռնային Ղարաբաղի հարցի տերը։

- Այդ պետք է անել այժմ եւեթ, քանի դեռ Ադրբեջանի ղեկավարները գործնական հակաքայլերի չեն դիմել,-ասացի ես։-Հակառակ դեպքում նրանք պիտի դիմեն մեզ համար նույնիսկ աներեւակայելի խառնակչությունների, եւ մենք անզոր պիտի լինենք դիմադրություն ցույց տալու։ Դեմիրճյանը հենց այսօր էլ պետք է սկսի գործել, հետո ուշ կլինի, ուշ եւ ապարդյուն։



✧ ✧ ✧

Հաջորդ օրվա առավոտյան ղարաբաղցի սուրհանդակները կոտրված սրտով եկան հիվանդանոց եւ տեղեկացրին, որ իրենց, մեղմ ասած, վռնդել են Կենտկոմի ու Գերագույն խորհրդի ընդունարաններից։

- Ո՞նց թե։

- Այդպես։ Զանգում ենք օգնականին՝ Լեւոն Չախմախչյանին (մեզ այդ գործում հոժարակամ օգնում էր ընդունարանի բարի աշխատակիցը)։ Բացատրում էինք մեր առաքելության նպատակը։ Հետո էլ նա ասում էր՝ սպասե՛ք... Շատ էինք սպասում, մինչեւ որ մեր հերթական զանգին օգնականը պատասխանեց այսպես. «Լավ կլինի ձեր այդ նացիոնալիստական տրամադրություններն առնեք, հեռանաք այստեղից»։

Ուրեմն, ԼՂԻՄ-ի մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը «նացիոնալիստական տրամադրությունների» արտահայտություն էր Հայաստանի այն օրերի ղեկավարության համար։ Թե՞ Լեւոն Չախմախչյանի ինքնագործունեությունն էր դա։ Չէ՞ որ ես ծանոթ եմ նրան, գիտեմ, որ ընդունակ է նման մեքենայության. նախորդ տարում 5-6 ամիս շարունակ ես չէի կարողանում Դեմիրճյանին հասցնել իմ խնդիրքը, որպեսզի ընդունի ինձ... Եւ պատճառը նա էր, այդ խրտվիլակ Չախմախչյանը։

Փետրվարի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմը որոշում էր ընդունել «Լեռնային Ղարաբաղի իրողությունների մասին»՝ ըստ էության դատապարտելով ԼՂԻՄ-ի մարզխորհրդի ընդունած որոշումը, այն համարելով մի խումբ անջատականների գործունեության արդյունք եւ եզրակացնելով, թե ԼՂԻՄ-ում վարչատարածքային փոփոխություն իրականացնելը կհակասի երկու ժողովուրդների շահերին ու ցանկություններին։

Ադրբեջանի ղեկավարության թելադրանքով Կենտկոմում այսպիսի որոշում էր ընդունվել, լրատվական միջոցներով տարածվել ողջ երկրում, իսկ Ստեփանակերտում այդ հակահայկական որոշման դեմ զայրացած ժողովուրդը հավաքվել էր ցույցի, իր ցասումն էր արտահայտում, ցուցադրում իր վճռականությունը՝ որոշումն իրականացնելու համար պայքարելու մինչեւ վերջ, մինչեւ ադրբեջանական բռնակալությունից մեկընդմիշտ ազատագրվելը։

Արցախյան դեպքերից խանդավառված Երեւանը եւս ոտքի էր ելել։ Տարերայնորեն հորդացած ժողովրդական խմբերը Սպենդիարյանի անվան օպերայի թատրոնի հրապարակում էին կուտակվել, գոյացրել բազմահազարանոց հանրահավաք, որը հաջորդ օրերին այլեւս դադար չպետք է ունենար։

**Փետրվարի 22**, երկուշաբթի.-Ղարաբաղի սուրհանդակների գնալուց հետո հայտնեցին, որ անցած երեկոյան Կ. Դեմիրճյանը Երեւանի կուսակցական ակտիվի նիստ է գումարել իր առանձնասենյակում եւ հայտարարել, թե իբր, ԽՄԿԿ Կենտկոմն արդեն դատապարտել է Ղարաբաղում տեղի ունեցած ազգային խմորումները՝ դրանք համարելով առհասարակ հայ ազգայնական մտավորականների կողմից հրահրված երեւույթ, ուստի եւ ինքն ու հանրապետության մյուս ղեկավար ընկերները ոչինչ չեն կարող անել խեղդված հարցը վերակենդանացնելու, տեղից շարժելու համար։ Ասում են՝ հավաքին ելույթ են ունեցել մեկ տասնյակի չափ պաշտոնյաներ, պաշտպանել Կենտկոմի քարտուղարի հայտարարությունը՝ համոզված, որ ադրբեջանցիներին արդեն հաջողվել է փակ դնել Լեռնային Ղարաբաղի հարցի վրա եւ Հայաստանի կողմից ձեռնարկվելիք ամեն մի քայլ պետք է դիտվի հակաինտերնացիոնալիստական, որ նպատակ ունի խախտել վերակառուցման սկզբունքները։ Եւ միայն երկու հոգի՝ ՄԼԻ-ի հայկական բաժանմունքի դիրեկտոր Հր. Սիմոնյանն ու հանրապետության արտաքին գործոց մինիստր Ան. Մկրտչյանն են դիմադրել իշխող տրամադրությանը, Դեմիրճյանի ու կողմնակիցների դիրքը համարել անհանդուրժելիորեն կրավորական՝ գտնելով, որ պետք է պաշտպանել Լեռնային Ղարաբաղի մարզխորհրդի նստաշրջանի Որոշումը եւ պայքարել հարցի վերջնական լուծման համար։ Եւ ասում են՝ այն ժամանակ Դեմիրճյանն այս «ծայրահեղականներին» իր բազկաթոռն է ցույց տվել եւ հեգնանքով առաջարկել. «Ձեզ եմ զիջում, բազմեցեք եւ պայքարեցեք մինչեւ հարցի վերջնական լուծումը»։

✧ ✧ ✧

**Փետրվարի 22-ի** ուշ գիշեր.-Այսօր ժամը 22.30-ին, «Լրաբեր» հաղորդումից հետո Հայաստանի հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը եւ կարդաց «պաշտոնական» իր խոսքը Ղարաբաղի հարցի ու նրա շուրջ ծավալված իրադարձությունների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ.Ս. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ 1988 Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 22-ԻՆ.

«Թանկագին ընկերներ:

Հանգամանքներն ստիպում են դիմել ձեզ:

Ինչպես գիտեք, վերջին օրերում Երեւանում, Օպերային թատրոնի հրապարակում տեղի են ունենում միտինգներ ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի բնակչության՝ Սովետական Հայաստանի կազմի մեջ մտնելու խնդրանքին: Այդ հարցի առթիվ միտինգներում ընդունվել են հանրապետական եւ միութենական ղեկավար օրգաններին հասցեագրված դիմումներ:

Լեռնային Ղարաբաղի շուրջ ներկայումս ստեղծված իրադրությունը կրում է քաղաքական լուրջ բնույթ: Դրա նկատմամբ մակերեսային մոտեցումը կարող է մեծ վնաս հասցնել ազգամիջյան հարաբերություններին, ժողովուրդների բարեկամությանը: Առաջացած իրավիճակը հարուցում է մտահոգություն, մեզանից պահանջում բարձր պատասխանատվություն, վճռական միջոցների ձեռնարկում, այնպիսի իրադարձությունների զարգացման կանխում, որոնք կարող են հասցնել չկանխատեսված եւ անգամ դժվար ուղղելի հետեւանքների:

ԽՄԿԿ Կենտկոմը համակողմանիորեն քննարկել է Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները: Այդ ռեգիոնում տեղի ունեցող ազգային-տերիտորիալ կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ աշխատավորների շահերին:

Մեզ հանձնարարված է ձեռնարկել իրադրության առողջացման կոորդինացված միջոցառումներ:

Անհրաժեշտ է անել ամեն ինչ կուսակցության կենտրոնական կոմիտեի առաջադրած պատասխանատու խնդիրը իրականացնելու համար, քաղաքական եւ գաղափարախոսական ազդեցության բոլոր միջոցներն ուղղել լենինյան ազգային քաղաքականության, արդի փուլում դրա էության պարզաբանմանը: Այդ ամբողջ աշխատանքում պետք է ելնենք այն բանից, որ ազգային հարցը պահանջում է ազգային առանձնահատկությունների, հոգեբանության, աշխատավորների կենսական շահերի նկատմամբ մշտական եւ սեւեռուն ուշադրություն:

Մեր կուսակցությունը բացառիկ կարեւոր նշանակություն է տալիս արդի փուլում ազգային հարաբերությունների զարգացմանը: ԽՄԿԿ Կենտկոմի առաջիկա պլենումներից մեկը հատկապես կնվիրվի ազգային քաղաքականության պրոբլեմներին: Ինչպես Կենտկոմի այս տարվա փետրվարյան պլենումում նշեց ընկեր Մ.Ս. Գորբաչովը, «Մենք այսօր խոսում ենք երկրի բոլոր ազգերի ու ազգությունների ազգային ինքնագիտակցության աճի մասին, ազգային զգացմունքների դրսեւորման մասին (որ երբեմն ի հայտ են գալիս խեղաթյուրված տեսքով): Այս բոլորը կենդանի հարցեր են եւ դրանք պետք է լուծել»:

Կցանկանայի ձեզ տեղյակ պահել, որ Ադրբեջանի ու Հայաստանի կոմկուսների կենտրոնական կոմիտեներին, հանրապետությունների Մինիստրների խորհուրդներին հանձնարարված է մշակել սոցիալ-տնտեսական բնույթի անհրաժեշտ միջոցներ Լեռնային Ղարաբաղում իրականացնելու համար:

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը դիմում է հանրապետության աշխատավորական կոլեկտիվներին, նրանց կուսակցական կազմակերպություններին, բոլոր կոմունիստներին, աշխատավորներին, մեր երիտասարդությանը եւ կոչ անում ցուցաբերել քաղաքական ու



քաղաքացիական բարձր գիտակցականություն: Ժողովուրդների բարեկամությունը մեր անգին հարստությունն է, սովետական եղբայր ժողովուրդների միասնական ընտանիքում հայ ժողովրդի հետագա բարգավաճման երաշխիքը: Եւ մենք պետք է այն աչքի լույսի պես պահպանենք հանուն սոցիալիստական հայրենիքի բարօրության, մեր անդուլ աշխատանքով ամրապնդենք այդ բարեկամությունը, այն հարստացնենք հայրենանվեր նոր գործերով:

Մեր ժողովրդի պատմության մեջ եղել են ե՛ւ հերոսականը, ե՛ւ ողբերգականը: Մեր ժողովրդի պատմությունը հարուստ է Անդրկովկասի ժողովուրդների, մեր մեծ հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ իսկական ինտերնացիոնալիզմի, եղբայրության, փոխադարձ հարգանքի, բարիդրացիության եւ համագործակցության վառ էջերով: Մեր ժողովրդի պատմությունը հարուստ է հեղափոխական, մարտական եւ աշխատանքային փառապանծ ավանդույթներով:

Դա մեր հոգեւոր անանց հարստությունն է, եւ այժմ, այս պատասխանատու օրերին մեր հայրենասիրական պարտքն է թույլ չտալ անխոհեմ քայլեր, որոնք կարող են սասանել այս ամենը:

Մեկ անգամ եւս դիմում ենք Սովետական Հայաստանի քաղաքացիներին՝ այս պատասխանատու պահին հանդես բերել արիություն, ինքնազսպում, զգոնություն, համբերություն, քաղաքական հասունություն, բարձր կազմակերպվածություն, էլ ավելի ակտիվորեն ձեռնամուխ լինել մեր հասարակական կյանքի բոլոր կողմերի վերակառուցմանը, սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ եղբայրության ամրապնդման աշխատանքին»:

Ես այս ելույթն ամբողջությամբ ներկայացրի, որպեսզի ընթերցողը գոնե մասամբ պատկերացնի քաղաքական դիրքն ու մտածողության կերպն այն գործչի, որը հայ ժողովրդի պատմության ամենաճակատագրական, ամենալրջագույն պահերից մեկում գտնվում էր գործի գլուխ եւ ի պաշտոնե պարտավոր էր գլխավորել մեր ազգային շարժումը, այն տանել մինչեւ վերջ, մինչեւ լուծում, մինչեւ վերջնական հաղթանակ: Պարտավոր էր, սակայն չգլխավորեց: Ոչ միայն չգլխավորեց, մի կողմ կանգնեց եւ շարժումը թողեց ինքնահոսի, այլեւ, երբ խոսք ասելու, իր կարծիքն ու համոզմունքն արտահայտելու հնարավորություն տվին, վեր կացավ ու արտահայտեց մի կարծիք, որը եթե ծիծաղելի է թվում այժմ, ապա, միեւնույն է, այն ժամանակ էլ չէր կարող խրախուսվել իբրեւ զգուշավոր մարդու ծայրահեղ քայլ: (Լեռնային Ղարաբաղում-Բ.ՈՒ.) «գոյություն ունեցող ազգային-տերիտորիալ կառուցվածքի վերանայմանն ուղղված գործողություններն ու պահանջները հակասում են Հայկական ԽՍՀ եւ Ադրբեջանական ԽՍՀ աշխատավորների շահերին»: Մարդկային լեզվով ասած՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայաստանին վերադարձնելը հակասում է Հայկական ԽՍՀ աշխատավորների շահերին: Կարելի՞ է պատկերացնել...

Հիվանդանոցային միջանցքում դրված հեռուստացույցի առաջ Գեւորգ Էմինն ու ես քարացել էինք այս խոսքի ազդեցությամբ:

Առավոտյան ցուցարարների ներկայացուցիչներն էին ինձ այցի եկել: Խնդրեցին, որ երկու խոսք գրեմ հրապարակում կարդալու համար:

Ջերմությունից գլուխս պայթում էր: Նույնիսկ կարգին նստել չէի կարող: Մի կերպ իրար բերեցի մտքերս, գրեցի այդ օրվա իմ խոսքը, որը եւ տարան ու կարդացին հրապարակում:

Ահա այդ խոսքը.

«Սիրելի հայրենակիցներ, ազգ հայոց, մեր ժրաջան ու իմաստուն, մեր բազմաչարչար ու բազմափորձ եւ միշտ արդար ու ազնվական ժողովուրդ:

Այս օրերին դու ոտքի ես ելել հանուն քո ոտնահարված իրավունքի պաշտպանության: Վերակառուցման ու ժողովրդավարական կարգերի հաստատման աղմուկով ոգեւորված՝ դու պահանջում ես վերջ դնել հայոց բազմաճյուղ ու բազմակնճիռ հարցի այն բաղկացուցիչին, որը չի շոշափում ոչ ոքի շահը, բայց լուծվելով՝ պետք է առավել հզորաց-

նարած քոչվորները, արոտավայրերի փնտրտուքի մեջ, հրով ու սրով խուժել են ուրիշների հողերը, նստելով դրանց վրա եւ, չորս կողմը նայելով, հազիվ գլխի ընկել, թե վատ չէր լինի ստեղծել սեփական «ազնվազարմ անցյալ»: Բայց որտե՞ղ գտնել այն, եթե ետեւում համատարած սպանություններ են եղել, կողոպուտ ու բռնություն: Իհարկե, վերցնել հարեւաններից, մանավանդ, որ նրանց մշակութային հուշարձաններն էլ գտնվում են բռնագրավված տարածքներում: Ահա եւ հայտնվեցին Զ. Բունիաթովի, Դ. Ախունդովի տիպի կեղծարարների հորինվածքները, որոնցում, առանց աչք թարթելու, աղվանական ձեռնածություններով յուրացվում են հայ ճարտարապետության կոթողները: Իսկ պոեզիան, մանրանկարները, գորգե՞րը... կարելի է թռցնել հարավի հարեւաններից՝ հին պարսիկներից: Բոլոր այդ կեղծ-գիտական ջղաձգությունները այնքան ողորմելի են, որ անմիջապես հօդս են ցնդում՝ դեմ առնելով իրական, իսկական փաստերին:

Եւ, երկրորդ, «կասաղած ամբոխները», որոնց պետք է կանգնեցնի ակադեմիկոս Համբարձումյանը... Միլիոնանոց այդ հանրությունը բաղկացած է հասարակության բոլոր խավերից, բարձրացրել է եկվորների կողմից զավթված իր հողերի արդար պահանջը: Իսկ թե ի՛նչ է նշանակում վայրենի ամբոխը, ցույց տվին Սումգայիթի դեպքերը, երբ գազանացած հորդաները ձեր ժողովրդին «պսակեցին» եղկելի ամոթով: Ողջ քաղաքակիրթ մարդկության համար պարզ դարձավ, որ թուրքերի ժառանգները 1915 թվականի վայրենության ու բարբարոսության դիրքերից առաջ չեն շարժվել եւ ո՛չ մի թիզ:

Դրա համար էլ, «գերապասիվ» ադրբեջանական գործընկերներ, խորհուրդ կտայինք ձեր ջանքերը գործադրեիք սեփական ժողովրդին քաղաքակրթելու բարի նպատակի համար: Եթե, իհարկե, դա էլ իրականանալի նպատակ է:

Հայկական ԽՍՀ ԳԱ աշխատակիցներ»:

Ահա՛, այս էլ այսպե՛ս: Լուր չունենք, թե «ինտերնացիոնալ իրենց պարտքով» վառվող բարբարոսները ի՛նչ էին զգում, երբ կարդացին այս խոսքերը:

**Մարտի 2-ին** ԽՄԿԿ Կենտկոմի հանձնարարությամբ Ստեփանակերտ ժամանեցին մոսկվաբնակ հայ նշանավոր մի խումբ գիտնականներ (ակադեմիկոս Տ.Ս. Խաչատուրով, ակադ. Ն.Ս. Ենիկոլոպով, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ի.Գ. Աբաբեկով, թղթակից անդամ Ա.Գ.Սարգսյան, պրոֆ. Մ.Ա. Սարկիսով, պրոֆ. Ռ.Ա. Սրապիոնյանց): Նրանց հանձնարարված էր ուսումնասիրել մարզի տնտեսությունն ու սոցիալ-քաղաքական վիճակն առհասարակ, ներկայացնել զեկույց՝ հետագա միջոցառումներում հաշվի առնելու համար: Ըստ երեւույթին, Մ.Ս. Գորբաչովը հույս ուներ, թե այդ ականավոր հայերը (հիմնականում ծագումով արցախցիներ) կարող էին լուրջ ազդեցություն ունենալ իրենց հայրենակիցների վրա, ոչ միայն կուսումնասիրեն տնտեսությունն ու ստեղծված իրավիճակը, այլեւ կխոսեն տեղերում, խորհուրդ կտան բավարարվել ամեն ինչ կարգավորելու մարզի բազմակողմանի զարգացումն ապահովող միջոցառումներով եւ կհրաժարվեն Հայաստանին միավորվելու պահանջից:

Սակայն գիտնականները, շուրջ մեկ շաբաթ հետազոտելով մարզի տնտեսական, քաղաքական, մշակութային վիճակը, նույնիսկ բոլոր այդ բնագավառների խորհրդային տասնամյակների ժամանակ, ներկայացրին խորաթափանց ու իրատեսական մի զեկուցում (շուրջ մեկ մամուլ ծավալով), որի ընթերցողը չի կարող չմտածել, թե Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը մեկ շաբաթ անգամ Ադրբեջանի կազմում պահելը հանցագործություն է: Ներկայացնելով տնտեսության բոլոր բնագավառներում տիրող ծայրահեղ հետամնացությունը, սոցիալական հատուկ ծրագրով իրականացված հակահայկական քաղաքականությունը՝ նրանք առանձնահատուկ ուշադրություն էին դարձրել նաեւ մշակութային կյանքում մեթոդիկ կերպով կիրառված քաղաքականությանը, այն արհամարհալից վերաբերմունքին, որի հետեւանքով երկրամասի հայությունը ոչ միայն կտրված է եղել զարգացման որեւէ հնարավորությունից, այլեւ զրկվում էր անցյալ դարերում ստեղծված նյութական ու հոգեւոր արժեքներից, որովհետեւ հան-



րապետության գիտական ու վարչական մարմիններն այստեղ եւս հատուկ ծրագիր էին կիրառել. կամ «սեփականացրել» են հայկական-ազգային հուշարձանները, կամ ոչնչացրել-անհետ կորցրել:

Հասկանալի է, որ այսքան ազնիվ սկզբունքով կազմված զեկույցը պետք չէր գորբաչովյան Կենտրոնին, ուստի եւ այն ոչ մի հետեւանք չունեցավ, ոչ մի դեր չխաղաց ղարաբաղյան բարդույթի հետագա արծարծումներում:

Ստեփանակերտի կենտրոնական հրապարակի հանրահավաքում հայտարարվեց, որ ստեղծվել է «Կռունկ» կոմիտե, որը պետք է գլխավորի մարզի աշխատավորության շարժումը վերամիավորման համար: Որոշվեց ժամանակավորապես դադարեցնել գործադուլը («Կռունկը» մինչ այդ էլ գոյություն ուներ, սակայն գործում էր առանց իր շուրջն ավելորդ աղմուկ անելու):

**Մարտի 6-8.** Ստեփանակերտում եւ մարզում սուգ էր՝ Սումգայիթում ու Կիրովաբադում նահատակված հայերի համար: Ստեփանակերտի հուշահամալիրում կոթող կանգնեցվեց զոհերի հիշատակին:

**Մարտի 8-ին** Ստեփանակերտի հուշահամալիրում սգո հանրահավաք էր՝ նվիրված Սումգայիթի նահատակներին: Հավաքը դարձավ յուրահատուկ վերջերգը նախօրոք հայտարարված սգո օրերի: Համալիրում տեղի ունեցավ նահատակների հիշատակը հավերժացնող հուշարձանի բացումը: Շուրջ մեկ շաբաթվա ընթացքում երիտասարդ քանդակագործ Արմեն Հակոբյանը, գիշեր-ցերեկ աշխատելով, ստեղծել էր պերճախոս կերպարը մեր ազգային նոր ողբերգության:

Կանայք էին հավաքի տնօրենները: Այն բացեց ու իր սրտառուչ խոսքն ասաց այն օրերի ժողովրդական միջոցառումների ոգին դարձած Ժաննա Գալստյանը՝ Ստեփանակերտի թատրոնի տաղանդավոր դերասանուհին:

- Այսօր երջանկությունը պիտի ծփար մեր հոգիներում, մեր տներում, գարնանամուտի մեր աշխարհում,-ասաց նա:-Սակայն համատարած սուգ է ամենուրեք, որովհետեւ Բաքվի չարագործ մեծերի հրահանգով ու ղեկավարությամբ մեր հարազատներին կոտորել, հոշոտել, հրեշավոր տառապանքների են ենթարկել Սումգայիթում: Մենք միայն մեր ցավի մասին խոսք էինք ասել աշխարհին եւ սպասում էինք, որ կբուժեն այդ ցավը: Նրանք դժոխային վայնասուն բարձրացրին, որ խլացնեն մեր ձայնը, դժոխային գործիքներով ելան մեր դեմ, որպեսզի սպանեն մեզ եւ մեր արդարությունը: Բայց ո՞ւր են պաշտոնական մարմինները: Ա՞յս էր նրանց հռչակած ժողովրդավարությունը, այսպե՞ս են վերակառուցվում ու վերակառուցում: Մի՞թե սուտ են այս մթնոլորտը լցրած կոչերն ու հավաստիացումները... Ո՛չ, մենք կանգ չենք առնի, մենք չենք ընկրկի չարության ու հակահայկական դավերի դեմ: Մենք այսօր կերդվենք մեր նահատակների սուրբ հիշատակի առաջ, որ կգնանք առաջ, կքայլենք աննահանջ, որպեսզի բացվի մեր փրկության դուռը, եւ մենք տերը դառնանք մեր ազատ անկախության եւ հարազատ լեռնաստանի:

Խոսեցին Ղարամետաքսկոմբինատի անվանի աշխատողներ Նադյա Բաղդասարյանը, Սվետլանա Պետրոսյանը, Ռիմա Քոչարյանը: Նրանց ավագը՝ տիկին Նադյան, անեծքով ավարտեց իր խոսքը.

- Թող չորանան այն արգանդները, որ ճիվաղներ են ծնել, թող սովահար գայլերի պես ոռնան այն ղեկավարները, որ այդ ճիվաղներին քշել են մեր անմեղ ազգակիցների վրա:

Խոսեցին Մանկավարժական ինստիտուտի դասախոս Արզիկ Մխիթարյանը եւ ուրիշներ, ապա Ժաննան խոսք ասելու հրավիրեց Սումգայիթի գեհենից փրկված Ալեքսանդր Բաբուրյանին, որը ցավից ու տառապանքից կծկված, բազմատանջ հարազատների մասին պատմեց, խնդրեց, որ տեր կանգնեն փրկվածներին, ապաստան տան նրանց, օգնեն բուժելու թուրքի հասցրած վերքերը...

Կարճ ժամանակում հուշարձանը ծածկվեց գարնան առաջին ծաղիկներով, որով-

հետեւ արարողության բոլոր մասնակիցները՝ ավելի քան տաս հազար մարդ, ծաղիկներ էին բերել՝ վարդ ու մեխակ, մանուշակ ու ձնծաղիկ։

**Մարտի 9-ին** ընդունված որոշմամբ Մոսկվայում նախատեսվում էր հարցը լայնորեն քննարկել, պատրաստել վերջնական վճռի համար։ Մարզի աշխատավորական ու ղեկավար զանազան մակարդակներում դա առաջացրեց նոր եռուզեռ, բոլորն էլ փորձում էին իրենց մասնակցությունը բերել հարցի նախապատրաստությանը։ Կազմվեց հեղինակավոր մի պատվիրակություն, որը պարտավոր պիտի լիներ հասնել Մոսկվա, իր առաջարկությունները ներկայացնել բարձրագույն ղեկավարությանը, պահանջել հարցի արդար ու շուտափույթ լուծում։ Պատվիրակության կազմում էին՝ Ղարմետաքսկոմբինատի երկու շատ հեղինակավոր ներկայացուցիչները՝ ԽՍՀՄ ԳԽ-ի դեպուտատ Սահդա Օրբելյանը, Սոց. աշխատանքի հերոս Քնարիկ Առաքելյանը, Ասկերանի շրջանից՝ ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ Իվան Աքայանը (Չանախչի), Ստեփանակերտի Կոշիկի ֆաբրիկայի վարպետ, մարզխորհրդի դեպուտատ Տատյանա Սոբոլեւան, Ղարմետաքսկոմբինատի կուսկոմիտեի քարտուղար Ռոբերտ Քոչարյանը, Ստեփանակերտի ավտոշարասյան պետ Մաքսիմ Միրզոյանը եւ մի ուսանող Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտից՝ Սերգեյ Շահվերդյանը։

Պատվիրակությունը, անկասկած, մոսկվաբնակ ճանաչված հայեր Հրանտ Եպիսկոպոսովի եւ Հ. Շահնազարովի օգնությամբ, հանդիպումներ ունեցավ քաղաքի հայ համայնքի մի մեծ խմբի, ապա կուսակցական Կենտկոմի պատասխանատու երկու աշխատողների, Համաշխարհային տնտեսագիտության ինստիտուտի դիրեկտոր, ակադեմ. Եվգենի Պրիմակովի հետ։ Հետո էլ, մարտի 16-ին՝ Կենտկոմի քարտուղար Եգոր Լիգաչովի մոտ զրույց ունեցավ։ Վերջին հանդիպման մասին մարտի 18-ին կենտրոնական հեռուստատեսությամբ հաղորդում եղավ։ Իսկ այն իրենից ի՞նչ էր ներկայացնում իրականում։

Պատվիրակության անդամ Մ. Միրզոյանն է գրի առել հանդիպումների բովանդակությունը, որը հիմնականում վերաբերում է իր ու ընկերների (հատկապես իր ու Ռ. Քոչարյանի) ելույթներին, ցույց է տալիս, թե նրանք, ինչպես եւ ուրիշ հանդիպումների ժամանակ, բարեխղճությամբ ու տրամաբանական հյուսվածքով ներկայացրել են ղարաբաղյան բարդույթի պատմությունը, վիճակը ստեղծված պայմաններում, մանավանդ վերջնական ու արդար լուծման անհետաձգելիությունը։

Լիգաչովը, ըստ երեւույթին չուզենալով մերկացնել իր հակահայկական, մանավանդ հակաարցախյան դիրքորոշումը (չնայած այն արդեն բացահայտել էր ոչ շատ անցյալին Բաքվում ունեցած հանդիպումներում), ուշադրությամբ լսում էր պատվիրակության անդամների այնքան արդարացի խոսքը, պահանջի բծախնդիր օրինականությունը եւն, ապա հաճախ էլ դատարկ ու անդեմ միջամտություններ էր անում, ինչպես, օրինակ, Արցախի հին տերերի ռուսասիրության առթիվ՝ «Ձեր պապերն իրավացի՜ էին, եւ դուք դրանով կարո՜ղ եք հպարտանալ», Պետրոս Մեծի հայապաշտպանության խոստման վերհուշի առթիվ՝ «Մենք տեղյա՜կ ենք պատմական այդ առնչություններին, եւ այսօր էլ հենց դրանք պետք է ուղեցույց լինեն մեզ համար»…

Կոնկրետ ո՛չ մի խոսք, ո՛չ մի հանձնառություն կամ խոստում։

Այսուհանդերձ, պատվիրակությունը տուն դարձավ ոչ թեւաթափ, որովհետեւ պաշտոնական վայրերում ոչ ոք չէր մերժել նրանց առաքելությունը, եւ կար ուրախացնող մի երեւույթ. ոտքի էր ելել մոսկվաբնակ հայությունը, փորձում էր օգտագործել, գործի դնել ամեն տեսակ հնարավորություններ՝ հարցին դրական լուծում տալու համար։

Հանդիպումներում պատվիրակության անդամների հետ էին կամ նրանց թիկունքում՝ հիշված գիտնականներ Եպիսկոպոսովը, Սրապիոնյանը, ապա եւ Սերգեյ Միկոյանը, Կոստանտին Գեյվանդովը, Նամի Հարութինովան (Գրիգոր Հարութինովի դուստրը)։ Նրանք եւ շատ ուրիշներ հետագայում պետք է մերվեին շարժմանը եւ կատարեին իրենց հայրենասիրական մեծ ու գնահատելի աշխատանքը։



✧ ✧ ✧

Լեռնային Ղարաբաղի խնդիրը «լուծելն» սկզբից իսկ իրենց խնդիրը դարձրին մոսկովյան պարբերական հրատարակչությունները։ Նրանցից մեկն էլ՝ “Новое время” շաբաթաթերթը, իր 14-րդ համարում, այսինքն՝ 88-ի ապրիլի երկրորդ շաբաթ, իր համար հեղինակավոր գիտնականների հետ սարքած հարցազրույց էր տպագրել, եւ այնտեղ ինչ-որ դոկտոր Բ. Լազարեւ ասում էր. «Լեռնային Ղարաբաղը Հայաստանի տարածքի հետ անմիջական կապ չունի եւ պատմականորեն ընդգրկված է Ադրբեջանի տնտեսական սիստեմի մեջ»։ Զրույցն անցկացնող Ի. Մակսիմովն այդ անջատվածության հիմնավոր հիմք է համարում ԼՂԻՄ-ի եւ ՀԽՍՀ արանքում, իբր, գոյություն ունեցող անանցանելի լեռնաշղթան, որը, դարձյալ իբր, «այնքան բարձր է, որ Ղարաբաղում նույնիսկ հնարավոր չէ ընդունել Երեւանից տրվող հեռուստահաղորդումը»։

Այս հարցազրույցին խոսք ասողները կամ հիմար մարդիկ են կամ էլ հիմար էին ձեւանում՝ ինչ-որ շրջանների դուր գալու համար։ Թե չէ, կնայեին քարտեզին եւ կտեսնեին, որ Ղարաբաղը Հայաստանից բաժանող լեռնաշղթա չկա, այլ այդ Արցախ-Ղարաբաղն արեւելքից եզրափակում է Հայկական բարձրավանդակը։ Այսքա՛ն բան։ Իսկ եթե լեռնաշղթայի առկայությունն էլ կարեւոր լիներ, ապա մի՞թե Ուրալյան լեռնաշղթան պիտի Ռուսաստանի ֆեդերացիան բաժաներ երկու մասի։

✧ ✧ ✧

Մարտի սկզբներին մոսկովյան թերթերից մեկը տպագրեց «Մամուլի նորությունների գործակալության» (АПН) նախագահի տեղակալ Կարեն Խաչատուրովի օրագրային գրառումները (ինձ է հասել հրապարակումի քսերոպատճենը՝ առանց լրագրի անվան եւ ամիս-ամսաթվի)։

Խաչատուրովն իր խոստովանությամբ ԼՂԻՄ է ժամանել մարզխորհրդի որոշումից մի շաբաթ անց, ջանում էր ամեն ինչ տեսնել խորքով ու լայնքով, անել ճշմարիտ եզրակացություններ։ Սակայն փրկություն էր համարում Միխ. Գորբաչովի կոչի (փետրվարի 26) թեզերը եւ, հակառակ մոսկովյան հայ գիտնականների ներկայացրած զեկույցի վերջաբանի, գտնում էր, որ սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումով կավարտվի խնդիրը («Իմ կարծիքով, ամենակարեւոր հարցերից մեկը ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքի ապահովումն է հակասահմանադրական, հակաօրինական գործողություններից»)։ Իսկ սա էլ այն էր, ինչ որ խոստանում էին եւ միշտ էլ պետք է խոստանային Ադրբեջանի ղեկավարները։

Կարեն Խաչատուրովը մի տեղ ներկայացել է որպես մեծ նկարիչ Գեւորգ Բաշինջաղյանի թոռ։ Պապը հազի՜վ թե ինչ որ պայմանի (տվյալ դեպքում՝ պաշտոնի) թելադրությամբ դառնար այսքան պատեհապաշտ

**Մարտի 8-ին** Բաքվի հայերեն «Կոմունիստ» թերթը լույս տեսավ մի հոդվածով, որն ստորագրում էր ինչ-որ Ա. Զարգարով, տնտեսագիտության դոկտոր, Ադրբեջանի ակադեմիայի հասարակական գիտությունների գծով Գիտական ինֆորմացիայի դիրեկտոր, երեւի հայ, քանի որ, եթե սուննաթած ազգանվան վերջը վերականգնվի, կլինի Զարգարյան։

Այս սուննաթված հայը, իհարկե, իրեն պաշտպանելու, հետագայում եւս իր տերերին ծառայելու համար, կեղտ էր թափում ազգակիցների վրա, քանի որ նրանք, չցանկանալով սուննաթվել, պահանջել են հարգել իրենց ազգային ու մարդկային իրավունքները։

Ազգադավ գիտնականն իր բարբաջանքն սկսում է՝ առաջարկելով հետեւել հին խրատին՝ «արմատի՛ն նայիր»։ Բայց չի ասում, թե «արմատին նայելով» ինքն ինչ է պարզել, «արտակարգ բացասական դրսեւորումների ու հնարավոր անկանխագուշակելի հետեւանքների» գործն ինչո՞վ է դատապարտելի, հակահասարակական ու հակաժողովրդական։ Նրանո՞վ միայն, որ մարդիկ դեռ արժանապատվության զգացում ունեն, ազատ ու

հայտնվեցին հաղորդումներ, որոնցում դեպքերը շարադրվում էին պակասավոր ու միակողմանի, իսկ հայ բնակչության օրինական պահանջները ներկայացվում էին իբրեւ ծայրահեղական՝ նախապես պայմանավորելով բացասական պատասխանը:

Դժբախտաբար, հարկ է արձանագրել, որ արդեն ո՛չ առաջին անգամ սրված իրադրության մեջ բացախոսությունը հայտնվում է ճնշված վիճակում, հատկապես այն պահին, երբ այն չափազանց անհրաժեշտ է:

... Այսպես թե այնպես, վերակառուցմանը ձեռնոց է նետված: Ես հույսով եմ, որ երկրի ղեկավարությունը, Քաղբյուրոն, ԽՄԿԿ Կենտկոմը, Գերագույն խորհուրդը կգտնեն իրադրությանը համապատասխանող լուծման եղանակը՝ վճռական, ժողովրդավարական ու սահմանադրական:

Այս նամակում բարձրացված խնդիրները դարձել են վերակառուցման, անցյալի դիմադրությունն ու բեռը հաղթահարելու նրա կարողության փորձաքարը: Չի կարելի նորից տասնամյակներով հետաձգել այդ հարցերի արդար ու անխուսափելի լուծումը եւ երկրում թողնել լարումների մշտական գոտիներ»:

**Մարտի 22-ին** ԽՍՀՄ կազմի մեջ մտնող բոլոր հանրապետությունների Գերագույն խորհուրդների նախագահությունները, երեւի Մ. Գորբաչովի հանձնարարությամբ, քննեցին ԼՂԻՄ-ում ստեղծված վիճակը եւ ընդունած որոշումներում ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությանը խնդրեցին միջոցներ ձեռք առնել՝ ըստ ԽՍՀՄ սահմանադրության, այսինքն՝ պահպանելով Ադրբեջանի հանրապետության ամբողջականությունը: Միաժամանակ պահանջում էին կտրական միջոցներ ձեռք առնել նման պառակտչական տրամադրությունների դեմ, քանի վարակը չի տարածվել խորհրդային եղբայրական հանրապետություններում:

**Մարտի 23-ին** ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահությունն ընդունեց որոշում «Լեռնային Ղարաբաղում, Ադրբ. ու Հայկական ԽՍՀ-ներում ստեղծված վիճակի առթիվ միութենական հանրապետությունների դիմումների կապակցությամբ (ձեռնարկվելիք) միջոցառումների մասին»:

✧ ✧ ✧

**Մարտի 24-ին** ԽՄԿԿ Կենտկոմն ու ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեցին «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը 1988-1995 թթ. արագացնելու միջոցառումների մասին» որոշումը, որն անմիջապես էլ թմբկահարվեց որպես մարզի աշխատավորության պահանջների բավարարման միակ ու սպառիչ միջոցը եւ այնպիսի փրկություն, որի համար հայությունը պետք է հավերժաբար երախտապարտ մնար ԽՍՀՄ գորբաչովյան ղեկավարությանը: Բավական է հիշել, որ ԼՂԻՄ-ի նման փոքրիկ մի վարչական միավորի յոթնամյա զարգացման համար այդ որոշմամբ հատկացվում էր 400 միլիոն ռուբլի, երբ մարզի տարեկան ողջ բյուջեն նախորդ տարիներին կազմել էր ընդամենը 40 միլիոն ռուբլի: Ամբո՜ղջ բյուջեն:

Միութենական կառավարությունը մարզին խոստանում էր վիթխարի մի գումար՝ երեւի մտածելով, թե արցախահայությունը կլսի նրա մասին եւ, խելքը թռցրած, վրա կտա ու կմոռանա իր պահանջը:

Սակայն մարզում այդ գումարի լուրը եւ առհասարակ որոշումն ընդունվեց մի այնպիսի պաղարյունությամբ, ասես ոչինչ լուրջ բան էլ տեղի չէր ունեցել, եւ պետք էր համառորեն շարունակել պայքարը մայր Հայաստանին միանալու համար:

Այստեղ հարկ չենք համարում խոսել որոշման այլեւայլ թերությունների, մանավանդ նրա իրականացման անհնարինության մասին: Բավական է նշել միայն, որ որոշումն ինքն իր կենսագործման վերաբերյալ ոչինչ չէր պարունակում, իսկ մարզն ուներ արտադրական նվազագույն հզորություններ, որոնց առկայությամբ անհնար էր լինում յուրացնել նույնիսկ Ադրբեջանի կողմից ամեն տարի հատկացվող ողորմելի միջոցները:



**Մարտի 27-ի** միջօրեին զանգեցին ԳԱ-ի նախագահությունից, ասացին՝ պրեզիդենտ Վիկտոր Համբարձումյանն Ավագների խորհրդի նիստ է հրավիրում, պետք է ներկայանամ:

Հետո իմացա, որ ստեղծված է հասարակական այդպիսի մարմին, որի կազմում են հանրապետության մշակույթի ու գիտության անվանի կամ, թերեւս, Արցախի խնդրին սերտորեն առնչվող մարդիկ, որոնք, ըստ հարկի, պետք է պարբերաբար հավաքվեն, որոշեն, թե ի՛նչ է պետք ասել եւ անել, ինչո՛վ պետք է օգնել արցախյան բարդույթի լուծումն արագացնելուն:

Համբարձումյանի առանձնասենյակն էին հավաքվել Սիլվա Կապուտիկյանը, Վարդգես Պետրոսյանը, Գալուստ Գալոյանը, Գագիկ Սարգսյանը, Սոս Սարգսյանը, ակադեմիայի մի շարք աշխատողներ:

Պարզվեց, որ Ավագների խորհուրդն իր հեղինակավոր, այդ պատճառով էլ վճռական խոսքը պետք է ասի գործադուլ-դասադուլ-հանրահավաքների մասին, որպեսզի հայ ժողովուրդը (Հայաստանում եւ ԼՂԻՄ-ում) պարապ ու անպտուղ այս զբաղմունքին վերջ տա, անցնի աշխատանքի:

Նիստի համարյա բոլոր մասնակիցներն էլ մեկ կարծիքի էին, հատկապես պետք է վերջ տալ գործադուլներին, չէ՞ որ պարզից էլ պարզ է, որ դրանով ոչնչի հասնել չի լինի, հակառակը, ողջ Խորհրդային Միությունում ենք աչքից ընկնում, վարկաբեկվում, կորցնում վաղեմի անունն ու փառքը: Լրատվության մարմինները, հատկապես հեռուստատեսությունը, ամեն օր հաղորդում էին Երկրի տարբեր հանրապետությունների ղեկավարների ու շարքայինների, հատկապես բանվորական կոլեկտիվների զանգատները մեր դեմ: Մի առանձին զայրույթով դատապարտում էին մեր «Նաիրիտ» արտադրական միավորման պարապուրդը, որի պատճառով իրենք չեն ստանում պայմանագրով հասնող այլեւայլ արտադրանքը եւ պարապ կանգնած են իրենց հաստոցների առաջ...

Իհարկե, կարելի էր հասկանալ զանգատավորներին: Բայց մի՞թե այդպես էլ նրանք չպետք է հասկանան հայ ժողովրդին, չպահանջեն, որ մարդկային ու օրինական վերաբերմունք ցուցաբերվի նրա ցավի նկատմամբ:

Համարյա որոշվեց, որ ավագներս գնանք, ելույթ ունենանք հանրահավաքների առաջ, մեր կարեկցական խոսքն ասենք այս հայ մարդկանց, մեծավարի խորհուրդ տանք: Գտնում էին, որ ես էլ Ստեփանակերտ պիտի գնամ, որովհետեւ այնտեղ ինձ կլսեն, խոսքս բանի տեղ կդնեն...

Նիստի ամբողջ ընթացքում ես լուռ ունկնդրել էի եւ, վերջապես, փորձեցի կարծիքս էլ հայտնել:

- Վիկտոր Համազասպովիչ, ես այնպես եմ կարծում, թե մենք այսօր հանձնարարություն ենք կատարում, մեր հանրապետության ղեկավարության հանձնարարությունը: Այդ ղեկավարությունն էլ, մեզ այսպիսի քայլի մղելով, կատարում է Կենտրոնի հանձնարարությունը:- Խոսելիս ուշադիր նայում էի պրեզիդենտի երեսին, եւ այնտեղ նկատեցի մի խաղ, որ ասում էր՝ այո՛, այդպե՛ս է: Համենայն դեպս ինքն էլ շատ էր ուշադիր: Այդ վայրկյանին մտածեցի՝ նա հիշո՞ւմ է ինձ, ճանաչո՞ւմ է: Տարիներ առաջ, 1976-ին, Ակադեմիայի տարեկան հանրագումարային նիստում գովեստագիր է հանձնել «Խաչենի իշխանությունը 10-16-րդ դարերում» գրքիս համար: Պատմագիտության բնագավառում անցած տարվա միակ մրցանակը: Հանձնում էր եւ, ըստ երեւույթին միայն ինձ համար լսելի, ասաց. «Ես շատ ուրախ եմ, որ Ձեզ մրցանակ եմ հանձնում ա՛յս գրքի համար»: «Ա՛յս գրքի համար»: Ուրեմն, Խաչեն-Արցախը նշանակություն ուներ, կարեւո՜ր նշանակություն, եւ այսօր մեզ ժողովի հավաքելով՝ այդ Խաչեն-Արցախի ճակատագրին վերաբերող հարց է քննում, մեզ մղում է վճռական քայլի:- Վիկտոր Համազասպովիչ, դուք համոզված եք, որ հանրահավաքը լսելո՞ւ է մեզ, կատարելո՞ւ է մեր տված խորհուրդը: Իսկ եթե կատարի էլ, ի՞նչ երաշխիք, թե դա լինելու է օգտակար քայլ: Չէ՞ որ ժողովուրդը, մեր ամբողջ ազգը, հուսահատությունից է գնացել այդ քայլին, իր մեծ ու անհուն ցավի հանդեպ քար անտարբերության դեմ ընդվզելո՜ւց...

Կարծեմ՝ այսօրինակ մի քանի ուրիշ նախադասություն էլ էի ասել: Տեսա՝ ինձ ակ-

խաղաղության, բարեկամության ու համագործակցության եւ այս նպատակին ծառայեցնենք մեր ամբողջ գործունեությունը, խոսքը, մանավանդ մշակույթը...

Գուցե դուք համաձայն չե՞ք մեր ծրագրած երկու միջոցառումների հետ կամ ունե՞ք առաջարկություններ, ես հաճույքով կլսեմ։

**Սոս Սարգսյան** (ԽՍՀՄ ժող. դերասան).-Ես առաջարկում եմ Սումգայիթի աղետը կոչել իր իսկական անունով՝ Եղեռն (գենոցիդ)։

Վերջերս մեր հանգուցյալ գործընկեր Հենրիկ Մալյանն իր «Կոմիտաս» սցենարը տարել էր Մոսկվա՝ նկարահանման համար թույլտվություն ստանալու, եւ նրան ասացին. «Բավական է, էլի՜, դուք արդեն ձանձրացրել եք ձեր այդ եղեռնով։ Ի՞նչ եք ուզում վերջապես, աշխարհը ողջ գլուխն առնի ու ձեզ հետ միասին սո՞ւգ դնի»։ Եւ Մալյանն սկսել է նրանց այսպես բացատրել. «Դուք եւս եղեռն եք ունեցել,-ասել է նա։-Գերմանա-ֆաշիստական հորդաները այս ու այնտեղ զանգվածաբար կոտորել են ռուս խաղաղ բնակչությանը։ Բայց մեր ու ձեր եղեռնների միջեւ մի «փոքրիկ» տարբերություն կա. դուք եւ սովետական բոլոր ժողովուրդները միասին հաղթել եք ֆաշիզմին, ջարդել նրա մեջքը, արժանիորեն պատժել եւ այդ ամենը մեծ դաս դարձրել աշխարհի համար։ Իսկ մեր եղեռնի համար չարը չի պատժվել, մենք ենք խեղճացած տարտղնվել աշխարհով մեկ, եւ մեր տեր պետությունը նույնիսկ չի էլ ընդունում, որ այդպիսի եղեռն է եղել։ Այո՛, չի՜ ընդունում։ Ամերիկայի կոնգրեսն ընդունում է, Եվրոպառլամենտն ընդունում է, աշխարհի բոլոր խելամիտ երկրներն ընդունում են, իսկ իմ երկրի գերագույն ղեկավարությունը չի ընդունում։ Բա սա՞ ինչպես է լինում։ Դրա համար էլ չարերը կարողանում են նոր եղեռն հրահրել, սումգայիթյան դեպքերից շատ առաջ այնտեղ բոլոր հայերի հասցեները ճշգրտված-հավաքված են եղել, քաղաքի գլխավոր գործարանում նոր-ահավոր սառը զենքի հսկայական քանակություն է պատրաստված եղել։ Եւ հիմա հերյուրում են, թե մարդասպանները թմրամոլներն են եղել, խուլիգաններ ու զանազան քրեական տիպեր։ Բայց այդ գողերն ու թմրամոլներն ինչո՞ւ մի ադրբեջանցու էլ չկողոպտեցին, կամ նրանք գիշերվա կեսին ինչպե՞ս էին տարբերում հային ու ոչ հային։ Որ այս ամենը ծրագրված ու նախապատրաստված է եղել, ապացուցվում է անառարկելի փաստերով։ Սումգայիթում նախապես քարոզիչներ են շրջել եւ միայն ադրբեջանցիներին հաղորդել են հնարովի տեղեկություններ Ղարաբաղում ու Հայաստանում, իբր թե, տեղի ունեցած ադրբեջանական ջարդերի մասին։ Նույնիսկ մեր Մասիսի շրջանի Նիզամի գյուղում հայտնվել է մեկը, որ նմանատիպ քարոզչությամբ է զբաղվել, որ տեղի ադրբեջանցիները բողոքեն-փախչեն Ադրբեջան։ Իբր նիզամեցիները քշել են այս խաբեբային։ Բայց ինչո՞ւ չեն պարզում, թե ո՞վ է եղել այդ քարոզիչը, որտեղի՞ց եկած...

Պանթուրքիզմը մարքսիստական փիլիսոփայությունից միայն մեկ ճշմարտություն է յուրացրել՝ որ քանակը վերածվում է որակի։ Եւ մի տեսեք, թե Հայաստանում, մեր այս մի բուռ հողի վրա, մեր ադրբեջանցի եղբայրներն ինչպես են փիլիսոփայական այդ ճշմարտությունն իրականացնում, Հայաստանում տարեկան 15-20 կին են արժանանում հերոսուհի մոր կոչման, բոլորն էլ ադրբեջանուհի։

Մենք դեռ չենք մոռացել եւ չենք էլ մոռանա չարահուշ 15 թվականը, չէ՞ որ նրա վերքը դեռ չսպիացած՝ մեզ նոր վերքեր են հասցնում մեր հայրենիքում, աշխարհի աչքի առաջ...

**Գեվորգ Ղարիբջանյան** (ակադեմիկոս).-Երբ 1918 թ. սկզբին մուսավաթական կառավարության հորդաները Շամքորի մոտ կոտորեցին զինաթափված ռուս զինվորությանը, Շահումյանն էր, որ ճշմարիտ ու դատապարտող հոդված գրեց այդ բարբարոսական, հրեշավոր արարքի դեմ։ Ադրբեջանցի հասարակագետներն այս օրերին շատ են երդվում Շահումյանի արեւով, նրա անունը շատ են տալիս՝ իրենց «ինտերնացիոնալիզմի» գինը բարձրացնելու համար։ Բա չի՞ լինի, որ Շահումյանի օրինակով մի ճշմարիտ հոդված գրեն Սումգայիթի մասին, ոչ թե քամու աղացներ ջարդոտեն, այլ դատապարտեն այդ եղեռնի իսկական կազմակերպիչներին ու իրականացնողներին։

Ադրբեջանական ազգայնամոլներն իրենց ստոր գործարքներն աներկյուղ կատարում



են՝ թիկունքում զգալով Անկարայի հորդորները։ Իսկ մեր երկրի տեղեկատվական մարմիններն ու նրանց գործակալները սուտ, միակողմանի, խեղաթյուր հաղորդումներ են հրապարակում՝ ամբողջ երկրի բնակչությանը կարծես դիտավորյալ կերպով ապակողմնորոշելու համար։ Ահա այդպիսի հաղորդման ամենաթարմ օրինակը՝ «Պրավդայի» վերջին հոդվածը՝ կրկնակի ցավալի ա՛յն պատճառով, որ այն լույս է տեսել կուսակցական Կենտկոմի օրգանի էջում։

**Զորի Բալայան**.-Հենրիխ Ավերյանովիչ, մենք բոլորս հրաշալի գիտենք ձեզ, ճանաչում ենք ձեր բարձր հեղինակությունը մեր երկրում։ Իսկ ես վերջին համատեղ ճամփորդության ժամանակ այն տեսա նաեւ Ամերիկայում։ Եւ այս պատճառով էլ ինքս անձամբ սարսափում եմ ձեր ծրագրած միջոցառումներից, երբ մտածում եմ, թե դուք մեր երկրի կարգուկանոնի համաձայն կփորձեք հավասարակշռություն ստեղծել վիճող երկու կողմերի միջեւ, ուրեմն եւ կասեք բաներ, որոնք չեն համապատասխանում ճշմարիտ իրականությանը...

Դուք Ղարաբաղ եք գնալու եւ այնտեղ պիտի ծանոթանաք դեպքերի ակունքներին։ Դրա համար էլ ես խորհուրդ կտայի տեղյակ մարդու հետ գնալ Շուշի, դիտել հայկական գերեզմանոցները, որոնք բուլդոզերների բերանն են տրվել՝ Բաքվի թերթերում տպագրված կոչերով։ Այդ կոչերից մեկը, դեպքերի համար թերեւս ամենաթարմը, լույս է տեսել «Строитель» թերթում, մի ճարտարապետի անունից եւ ունեցել է այսպիսի վերնագիր՝ «Мертвые свели живых». Եւ ադրբեջանցի ապրողներն ապացուցեցին, որ ճիշտը հակառակն է՝ իրենք՝ ապրողներն են ուտում հանգուցյալներին, մանավանդ, երբ սրանք այլացեղ են ու այլադավան։

Գնացե՛ք, տեսե՛ք Գանձասարի ճարտարապետական հուշքը, այցելեցեք Դադիվանք, Ամարաս, Գտիչ..., էլի ո՜ւր որ կուզեք... Եւ վերջում ինքներդ ձեզ հարց տվեք, թե այս պատմության, այս առօրյայի վրա ինչ հավակնություն պիտի ունենա ադրբեջանցին, որ այնպես մեծադղորդ, մեր ամբողջ երկրով մեկ բանեցնում է։

**Ալեքսան Կիրակոսյան** (ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդին կից Հուշարձանների պահպանության վարչության նախագահ).-Հարգելի ընկեր Բորովիկ, ես էլ շատ լավ ճանաչում եմ ձեզ եւ հարգում եմ ձեր գործը։ Բայց այս պահին չեմ կարող պատկերացնել, թե դուք ի՛նչ պիտի տանեք Թիֆլիս եւ ի՛նչ ընդհանուր եզրակացության պիտի գաք այնտեղ։ Վերջերս մամուլում ու հեռուստատեսությամբ թմբկահարված այն միահամուռ եզրակացությունները, որոնց տերերն էին միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդների Նախագահությունները, ապացուցեցին, որ մեր վերակառուցվող ու դեմոկրատականացող երկրում դեռեւս հնարավոր է քար անտարբերությունը մի չարչրկված ճակատագրի հանդեպ եւ օրինական կարող են համարվել գործից անտեղյակ բյուրոկրատների բացահայտորեն սուտ, կեղծ ու պատիր հայտարարությունները։

Բայց ինքներդ ձեզ հարց տվեք. մի՞թե այս բոլորի փոխարեն մեր ղեկավարները չէին կարող գործը հասկացող մասնագետների, գիտնականների, հեղինակավոր հասարակական ու քաղաքական գործիչների հանձնաժողով կազմել եւ նրան վստահել հարցի քննարկումն ու եզրակացություն հանելու իրավունքը։

Դուք մեր երկրի խաղաղության շարժման ղեկավարն եք, եւ ես ահա ձեզ եմ դիմում. այս ո՞նց է լինում, որ մեր օրերում ազգի դեմ նոր Տեր-Զոր են կազմակերպում, եւ թերթերն ու հեռուստատեսությունը կամ բերանները ջուր են առնում այդ ահավոր վայրագության դեմ, կամ էլ խոսքերը մեկ արած փորձում են կոծկել, սվաղել, մարդկանց ներկայացնել իրականության հետ կապ չունեցող մի խաբեություն։ Իբր Սումգայիթում տրվել են զոհեր, որոնք պատկանում են տարբեր ազգերի։ Սա նույնքան անբարոյական է, որքան թուրք կեղծարարների այն պնդումը, թե 1915-ին իրենք եւս զոհեր են ունեցել, եւ դա արդեն հիմք է եզրակացնելու համար, թե ջարդերն ու կորուստները եղել են երկուստեք։

Դուք փորձեցեք բաց աչքերով նայել Սումգայիթին։ Թաքցնում են նրա՛ զոհերի թիվը...

**Հ. Բորովիկ**.-Ես համաձայն եմ ձեզ հետ, մենք պարտավոր ենք պարզել բոլոր ման-

ռամասները եւ կատարել հանգամանալից հրապարակումներ...

**Ալ. Կիրակոսյան.**-Փորձեք հասկանալ, թե ինչպես է, որ մինչեւ այսօր երկրի ղեկավարությունը ցավակցություն իսկ չի հայտնել զոհերի հարազատներին ու աղետյալներին...

**Հ. Բոռովիկ.**-Դուք միանգամայն իրավացի եք:

**Ալ. Կիրակոսյան.**-Դա ոչ թե սովորական վրիպակ է կամ հանդուրժելի թյուրիմացություն...., այլ անդրադարձ արտահայտությունն է այն վերաբերմունքի, որ ադրբեջանական ղեկավարության թելադրանքով ստեղծվել է վերին օղակներում:

Լեռնային Ղարաբաղում տասնյակ ու տասնյակ գյուղեր են ամայացել: Նրանց բնակիչներն արտագաղթել են ավանդական բնակավայրերից, գնացել են ոչ ավելի բարեբեր տեղեր՝ թերեւս հազիվ իրենց գոյությունը քարշ տալու համար, որովհետեւ իրենց նկատմամբ մարզում տեսել են միայն արհամարհանք ու ազգային անարգ վիրավորանքներ՝ հանրապետության շովինիստների եւ նրանց տեղական հլու կամակատարների երեսից: Իսկ առավել անտանելին Ադրբեջանի մյուս հայաբնակ շրջանների հայերի վիճակն է: Եւ ինչո՞ւ միայն հայերի: Ռուսներն ու մյուս այլազգիները հիացա՞ծ են իրենց կենսապայմաններով: Եթե վերջին մեկ տասնյակ տարիների ընթացքում Ադրբեջանից արտագաղթել են ավելի քան 300 հազար հայեր, ապա նույն ժամանակաշրջանում այդպիսի բախտի են արժանացել նաեւ 120 հազար ռուսներ: Մի՞թե սա մեր երկրի ղեկավարությանը չի ասում, թե ի՛նչ արժե Ադրբեջանում այնքան հարգի աղմուկը ժողովուրդների բարեկամության մասին:

Դառնալով Նախիջեւանի, Ղարաբաղի եւ Ադրբեջանի մնացած հայաբնակ շրջանների բախտին՝ պիտի ասեմ. պատմական հուշարձանը լակմուսի թուղթ է, որն իր վրա ցույց է տալիս նրան տեր դարձածի քաղաքակրթական մակարդակը: Գնացե՛ք, տեսե՛ք Նախիջեւանի, Քարհատի, Գանձակի կողմերի հայկական, նախկինում փառահեղ հուշարձանները եւ սփռված կլինեք կրկնելու մեծ ֆրանսիացու խոսքը. այս տեղերով թո՛ւրքն է անցել:

**Ստեփան Վարդանյան** (Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին կից եկեղեցական գործերի վարչության պետ).-Ղարաբաղի դեպքերի սկիզբն ու նախերգանքն է հանդիսացել մարզխորհրդի որոշումը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայկական հանրապետությանը վերամիավորելու մասին: Ինչո՞ւ այդ որոշման մասին հրապարակավ խոսվեց մեկ ամիս հետո եւ այն էլ կես-բերան: Ինչո՞ւ այդ որոշումը չարժանացավ այնպիսի վերաբերմունքի, որը նրան վերապահել են մեր երկրի անբեկանելի օրենքները:

Նույնը եւ Ղարաբաղի կուսակցական մարզկոմի պլենումի որոշման մասին պիտի ասեմ. մարզի կուսակցական ղեկավար մարմինն ընդունել է որոշում, որը պահանջում է կուսակցական ամենաբարձր մակարդակով քննել մարզի աշխատավորության պահանջը եւ օրինական լուծում տալ նրան: Միեւնույն օրը տեղի է ունեցել նաեւ կուսակցության Ռոստովի մարզկոմի պլենումը: Այս վերջինի մասին անմիջապես հաղորդում հրապարակվեց, իսկ Ղարաբաղի կուսակցական մարզկոմի նիստը մինչեւ այսօր էլ փակի տակ է:

Սա՞ է մեր հրապարակայնությունը:

**Վարդգես Պետրոսյան** (գրող).-Մենք հույս ունենք, թե մեր կուսակցության Կենտկոմը դեռեւս զբաղվում է Ղարաբաղի հարցով, եւ վստահ ենք, որ դուք, ընկեր Բոռովիկ, ձեր բարձր ծառայությունը կունենաք այդ մեծ գործում: Դրա համար էլ ցանկանում եմ մի քանի էական, սակայն առայժմ ուշադրության չարժանացած փաստերի վրա ուշադրություն հրավիրել: Դրանցից առաջինը. Ադրբեջանի կուսակցական Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը փետրվարի 20-ին մասնակցել է Ղարաբաղի մարզխորհրդի նստաշրջանին, 21-ին Աղդամ է գնացել, զրույց ունեցել տեղի կուսակցական ակտիվի հետ, եւ հաջորդ իսկ օրը, փետրվարի 22-ին, աղդամցիները շարժվել են Ղարաբաղի Ասկերանի շրջկենտրոնի վրա: Մի՞թե սա ինքնին ոչինչ չի ասում: Իսկ եթե սրան էլ գումարենք համանման մյուս փաստը. Բաղիրովը եղել է Սումգայիթում, այնտեղ ժողով է արե՜լ, եւ դարձյալ հաջորդ իսկ օրը լույս է տեսել արդյունքը՝ սկսվել է հայերի զանգվա-



ծային ջարդը...

**Հ. Բոռովիկ.**-Ընկերնե՜ր, ընկերնե՜ր, մենք այս հարցերում պարտավոր ենք մի քիչ ավելի զուսպ լինել եւ մեր կասկածներին ու ենթադրություններին չհաղորդել իրականության պատրանք, որը կարող է հեռուն տանել:

**Վ. Պետրոսյան.**-Ես խոսում եմ այնպիսի փաստերի մասին, որոնք իրական դեպքերի հետ անմիջական առնչվում են: Այլապես դժվար թե կարիք լիներ ասպարեզը հասկացնելու Սումգայիթում չգիտես որտեղից եւ ինչպես հայտնված թմրամոլներին ու քրեական տարրերին:

Եւ, այսքանից բացի, կարծում եմ՝ Սումգայիթում տեղի ունեցածը եղեռն է եղել, այն պետք է այդպես էլ գնահատել: Իսկ նրան ուրիշ պիտակներ կպցնողները հավանաբար դեռ հույս ունեն, թե հնարավոր կլինի քողարկել մարդկայնության դեմ նյութված նոր չարագործությունը:

**Գագիկ Սարգսյան** (ակադեմիկոս, Արեւելագիտության ինստիտուտի դիրեկտոր).-Հենրիխ Ավերյանովիչ, դուք կարեւոր միսիա եք ստանձնել Ղարաբաղի եւ նրա շուրջ ստեղծված հարաբերությունների հանդեպ եւ, եթե թույլ կտաք, ես կանեմ իմ առաջարկությունը...

**Հ. Բոռովիկ.**-Խնդրե՛մ, հաճույքով կընդունեմ:

**Գ. Սարգսյան.**-Ես շատ կցանկանայի, որ դուք քննարկվող հարցերում ունենայիք ձեր կոնցեպցիան, եւ այն էլ իր հիմքում ունենար հետեւյալ երեք սկզբունքները.

Ա) Որ Ղարաբաղի դեպքերը եւ նրանց հաջորդած երեւանյան ցույցերը ոչ մի կերպ չեն հակասել վերակառուցման ընթացքին, հակառակը, թելադրված են եղել նրա թարմացնող շնչից եւ պարզապես նրա ծնունդն են հանդիսացել:

Բ) Որպեսզի պարզ լինի Ղարաբաղի բնակչության ազգային զգացմունքների պոռթկման պատճառը՝ այդ զգացմունքների շարունակական արհամարհանքն ու ոտնահարումը հանրապետական ղեկավար մարմինների կողմից, ապա այդ վերաբերմունքի դեմ պայքարելու սովորական եղանակների ու միջոցների անօգտակարության գիտակցությունը:

Գ) Վտանգավոր կլինեն Հայաստանում ու Ադրբեջանում կատարված դեպքերի գնահատման միանշանակությունը, հավասարակշռելու եւ երկու կողմերը խաղաղեցնելու միօրինակ ջանքերը:

**Էդուարդ Միրզոյան** (Կոմպոզիտորների միության նախագահ).-Ինչի՞ է ձգտում հայ ժողովուրդը: Ճշմարտությա՜ն: Ադրբեջանցին ծնված օրից մի երգ է սովորում եւ այն էլ գիտե. Ղարաբաղն ի՜մն է, նրա հողն ու ջուրը՝ ի՜մը, այդ հողի վրա ստեղծված նյութական ու հոգեւոր արժեքները՝ ի՜մը: Պատկերացնո՞ւմ եք, նույնիսկ խաչքարե՜րը:

**Սերո Խանզադյան** (գրող, Սոց.աշխ. հերոս).-Միութենական թերթերը գրում են, եւ հեռուստատեսությամբ էլ ասում են՝ հայերի արածը հակաինտերնացիոնալիստական է, վերակառուցմանը խանգարում է եւ այլ այսպիսի բաներ: Սա սուտ է:

Ղարաբաղի բնակչության աչքի առաջ է Նախիջեւանի օրինակը: Նախիջեւանում վերջին մի քանի օրերին հայկական երեք վանական համալիր են պայթեցրել: Եւ այդ երկրում հայ մարդ չի մնացել, որ այդ չարիքը գործող ձեռքը բռնի, այդ վանդալիզմի դեմ պայքարի: Ղարաբաղցիներն ու հայ ժողովուրդը սրա դեմ են ընդվզել, ուզում են Ղարաբաղի այսպիսի ապագան կանխել: Պա՞րզ է:

Փրկեցե՜ք Ղարաբաղը, եւ մենք ձեզ երախտապարտ կմնանք հավիտյանս հավիտենից:

**Սիլվա Կապուտիկյան.**-Ընկերներ, վերջերս վերացվեց Ղարաբաղի հարցը տնօրինող մեր հանրապետական կոմիտեն, եւ պարզ է, որ կոմիտեականները դեռեւս հնարավորություն կունենան ազատ ու հանգիստ շարունակել իրենց առօրյա գործն ու կյանքը: Իսկ ի՞նչ պիտի կատարվի Ղարաբաղի այդ նույն կոմիտեի անդամների հետ: Մենք չենք մոռացել այնտեղ տասնամյակներ մոլեգնած շովինիզմի ու բռնությունների հայակործան դեպքերը: Ուրեմն մենք պարտավոր ենք սաստ կանգնել մեր արյունակիցներին եւ վերին ղեկավարության միջամտությունն ապահովել, որպեսզի Ղարաբաղն այս անգամ եւս չդառնա դաժան հաշվեհարդարի ասպարեզ:

Հ. Ա. Բորովիկ.-Ընկերներ, ես ուրախ եմ այս հավաքի համար. կարճ էր այն, բայց բավական օգտակար, քանի որ մենք հնարավորություն ունեցանք հարցին ծանոթանալ շատ կողմերից։ Սակայն դա չի նշանակում, թե ես համաձայն եմ այստեղ ասված ամեն ինչի հետ։ Օրինակ, մի՞թե կարելի է մտածել, թե ադրբեջանցի կանայք շատ երեխաներ են բերում իրենց ներսում եղած պանթուրքիզմին հագուրդ տալու համար։

Շատ խոսվեց Սումգայիթի մասին։ Այժմ մեր առաջնահերթ խնդիրն է պարզել, թե այն ինչպե՛ս է եղել ըստ էության, եւ հասարակությանն ասել ամբողջ ճշմարտությունը։

Ասեմ նաեւ. գուցե Քաղբյուրոյի որոշումը դեռեւս վերջնական չէ։ Ուրեմն, մեզնից յուրաքանչյուրի պարտքն է օգնել պարզելու, բաց անելու ճշմարտությունը, որպեսզի հեշտանա ճանապարհն այն վճիռների, որոնք ընդունելի պիտի լինեն այսուհետեւ։

Իր խոսքի վերջում Բորովիկն ասաց նաեւ այսպիսի բան.

- Ես ձեզ այնպես հասկացա, թե արդեն հրապարակված որոշումը պակասավոր է, քանի որ չի լուծված հիմնական խնդիրը՝ Ղարաբաղը չի տրվել Հայաստանին։

- Մի՞թե դրա մեջ կարելի է կասկածել,-խոսում են այս ու այն կողմից։

Եւ Բորովիկն այս առթիվ հայտնեց իր տարակուսանքը, որ երեւի թե բերել էր մայրաքաղաքից՝ իբրեւ վերեւներում տիրապետող մտայնություն։

- Բայց դուք չե՞ք կարծում, որ եթե հարցը լուծված լիներ ձեր ուզածի պես, դա կստեղծեր հավերժական Սումգայիթ...

Ահա՜ թե ինչ։ Ահա թե ադրբեջանական վայրագությանն ինչպե՛ս հաջողվեց երկրի գերագույն ղեկավարությանը ծնկի բերել եւ թելադրել իր հայակուլ կամքը։

Եվ այս մտայնությամբ Հ. Ա. Բորովիկը Ղարաբաղ է մեկնում, այնտեղից էլ պիտի Բաքու գնա, որպեսզի ծանոթանա դեպքերի տրամաբանությանը, այն դարձնի իր հաղորդման էությունը։

Համենայն դեպս, ինչպե՞ս ընդունենք ասվածը, ի՞նչ բացատրություն տանք խորհրդային նշանավոր հասարակական գործչի հայտարարությանը. դա սպառնալի՞ք է հայ ժողովրդին (տեսեք՝ ի՜նչ է սպասում ձեզ, եթե փորձեք համառել ձեր պահանջի վրա), ուրեմն եւ հորդոր ադրբեջանցիներին՝ շարունակելու վայրագությունը, քանի որ միայն դա կարող է փակել «հայկական ախորժակը»։ Թե՞ պարզապես խոստովանություն է, որ մեր այդ Խորհրդային Միության մեջ ապահովված չէ հայ ազգի ֆիզիկական գոյությունը, ուրեմն զուր են ջանքերը՝ ազգային իրավունքի պաշտպանության եւ ազգի միավորման համար։ Ո՞րը սրանցից։ Թեկուզ երկուսն էլ՝ առանձին-առանձին անտրամաբանական են, անմիտ ու վայրենի։

Սպասենք, տեսնենք, թե ի՛նչ կասի պատրաստվելիք հաղորդումը

✧ ✧ ✧

Խաղաղության կոմիտեում տեղի ունեցած ժողովին Զ. Բալայանի ելույթը մի մտահոգություն ուներ. Հ. Բորովիկը, իբրեւ Կենտրոնի ներկայացուցիչ, պարտավոր պիտի լինի հաղորդումը կառուցել հավասարակշռության օրենքով (նա հենց այս բառն էլ օգտագործեց՝ «балансирование»)։ Այն ժամանակ մենք՝ հայերս, որ զրկված եւ այժմ էլ պահանջող կողմն ենք եւ դեպքերի օրերին աչքի ենք ընկել հասարակական կարգի ու խորհրդային օրինականության պաշտպանությամբ, պիտի արժանանանք նույն վերաբերմունքին, ինչ ադրբեջանցիները, որոնք առաջներում մեզ զրկողներն են եղել, հիմա էլ դարձան սումգայիթյան եղեռնի եւ զանազան կարգազանցությունների մարոդները։

Այս մտահոգությունը բաժանում էինք համարյա բոլորս, եւ, բնականաբար, մեզ այդպես էր տրամադրում նաեւ Բորովիկի դիրքը. չէ՞ որ նա, երեւանյան ժողովում Սումգայիթը բարբարոսություն համարելով հանդերձ, մեզ զգուշացնում էր նրա շարունակականությունից...

Բորովիկը գնաց Ղարաբաղ։ Իսկ մենք անհանգիստ որոնում էինք մի միջոց, որով



հնար լիներ խափանել արդեն պատրաստվող հաղորդումը։

Իսկ Ղարաբաղից նպաստավոր լուրեր էին գալիս։ Ասում էին՝ Բորովիկն այնտեղ բարյացակամություն է ցուցաբերել ցույցերի ու պահանջների նկատմամբ, կինոխցիկի առաջ ազատ արտահայտվելու հնարավորություն է տվել տեղացիներին, հատկապես նրանց, որոնք պահանջները ներկայացրել են պատճառաբանություններով, հիմնավոր ու համոզիչ։

Լավ էր նաեւ Բաքվից եկած մի լուր, որն ասում էր՝ Բորովիկն այնտեղ ամեն կերպ ջանացել է բաց անել Սումգայիթի մութ ծալքերը։ Իբր Բաքվից տրված հեռուստատեսային հաղորդման ժամանակ էլ թղթակցի մի հարցին պատասխանել է տեղացիների վարքի անսքող քննադատությամբ, եւ անմիջապես հաղորդումը դադարեցվել է...

Եւ, այսուհանդերձ, Երեւանում տագնապած էին. հիմնարկ-ձեռնարկներից նամակներ էին հղում հեռուստատեսության միութենական ղեկավարությանը՝ խնդրելով ու պահանջելով, որ մի նոր ու ապակողմնորոշող լրատվությամբ ավելի չմթագնվի Ղարաբաղյան դեպքերի շուրջ ստեղծված մթնոլորտը։ Հանրապետության Գրողների միությունում հավաքվեցին հայրենական պատերազմի վետերան գրողները, 25 հոգի, Սերո Խանզադյանից մինչեւ Արտաշես Պողոսյան, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ.Ս. Գորբաչովին ուղղեցին մի նամակ, որի մեջ խնդրում էին կասեցնել հաղորդումը, քանի որ միութենական լրատվական մարմիններն իրենց կանխակալ, կողմնակալ ու անհրատես հաղորդումներով ծայրաստիճան լարել են դրությունը, եւ յուրաքանչյուր նոր ելույթ, մանավանդ «Դիրքորոշումի» հաղորդումը, կարող է յուղ լցնել կրակի վրա։

Երեւի թե հաղորդման հեղինակ Հ. Բորովիկը չէր բաժանում հայ մարդկանց այս տագնապն ու թերահավատությունը։ Այդ պատճառով էլ նա գործադրեց բոլոր ջանքերը, որպեսզի հաղորդմանը կանաչ ճանապարհ տրվի։ Մոսկվա հրավիրել տվեց խաղաղության պաշտպանության Հայկական ու Ադրբեջանական ԽՍՀ-ների կոմիտեների մի շարք աշխատողների, ապա եւ երկու հանրապետությունների մշակույթի ու գրականության գործիչների խմբերին, հատուկ ասուլիսներում նրանց համար հնարավորություն ստեղծեց, որպեսզի բոլորն էլ անկեղծորեն արտահայտեն իրենց կարծիքները քննարկման դրված հարցերի առթիվ, անեն իրենց դիտողություններն ու առաջարկությունները...

Ըստ երեւույթին կողմերից յուրաքանչյուրն էլ այս ասուլիսներում իր հաղթանակն ապահովված էր համարել։ Ես լսել եմ, օրինակ, Մոսկվայից փայլուն տպավորություններով վերադարձած Հր. Հովհաննիսյանի ու Արամ Գրիգորյանի խոսքերը։ Ուրիշներն էլ ասում են՝ պակաս լավատեսական չեն եղել նաեւ Գ. Գալոյանի ու մյուսների տրամադրությունները։

Այսքանից հետո ի՞նչ պետք էր սպասել. հայկական կողմի համամիութենական լրատվական հաղթանա՞կ, թե՞ մի նոր անփառունակ խաղ, որը դարձյալ պետք է պղտորեր մթնոլորտը, Խորհրդային Միության հարյուր միլիոնավոր հեռուստադիտողներին առավել մոլորեցներ ու հեռացներ այն ճշմարտությունից, որ պարունակում էին Ղարաբաղյան պարզ ու շիտակ դեպքերը, ինչպես եւ նրանց շուրջ ստեղծված իրադարձությունները։

## «ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ» ԱՐԴԱՐ ԴԻՐՔԸ

Ղարաբաղյան դեպքերը, որոնք այս տարվա փետրվարի կեսից մինչեւ այսօր իշխում են մեր սրտերի ու մտքերի վրա, հասարակական կյանքի շատ կողմեր առան իրենց լուսարձակի տակ, շատ բան ցույց տվին, եւ նրանց մեջ էլ՝ երկու կարեւորագույն հանգամանք. առաջինը՝ մեր ժողովրդի բարոյական ու քաղաքակրթական բարձր մակարդակը, երկրորդը՝ մեր մամուլի եւ առհասարակ լրատվական մարմինների անմխիթարական վիճակը։ Այս երկրորդն այնպես ցայտուն էր երեւում վերակառուցման, դեմոկրատացման ու հրապարակայնության վերաբերող աղմուկներում, որ հաճախ ստիպված էին լինում խոստովանել նաեւ իրենք՝ մամուլի ու հեռուստա-

տեսության սպասավորները: Այդ պատճառով էլ մենք կանխապես ինչ-որ տագնապով էինք սպասում Հենրիխ Բորովիկի ղարաբաղյան ելույթին՝ իր ղեկավարությամբ հրապարակվող «Դիրքորոշում» հաղորդաշարով:

Բարեբախտաբար մեր տագնապն իզուր էր եղել. այդ պարզ դարձավ ապրիլի 26-ի «Դիրքորոշում» հեռուստահաղորդման առաջին իսկ կադրերից, երբ էկրանում հայտնված երիտասարդ հայուհին անքող ու արդար զայրույթով դատապարտեց ղարաբաղյան դեպքերի ու նրանց շուրջ ստեղծված երեւույթների մասին տրվող հաղորդումների ու լուրերի հեղինակներին եւ պահանջեց ասել ճշմարիտ խոսք, գալիքի սերունդներին օգնել հասկանալու այսօրվա դեպքերի ազնիվ մղումները:

Եւ հաղորդումն իր ընդհանրության մեջ եղավ առաջին մեծ ու հաջող փորձը՝ ճշմարիտ խոսք ասելու Ղարաբաղի խնդրի, ղարաբաղյան դեպքերի, երեւանյան ցույցերի, ինչպես նաեւ Սումգայիթի վայրագությունների մասին: Փորձը փորձ, չի կարելի մոռանալ, որ «Դիրքորոշման» ելույթը տեղի ունեցավ համամիութենական լրատվության՝ շուրջ եռամսյա անբարյացակամ, արդարությունից շատ ու շատ հեռու հաղորդումներից, մանավանդ արդեն ընդունված ու հրապարակված որոշումներից հետո, որոշումներ, որոնց ո՛չ վճռական դիրքը, գլխավոր հարցը շրջանցելու եւ երկրորդական-երրորդական խնդիրների արծարծման ու լուծման հեռանկարներ ասպարեզ քաշելու միրաժն էլ հենց պղտորել էին միութենական մթնոլորտի տարբեր շերտերը:

Եւ հաղորդման ղեկավար Հենրիխ Բորովիկը պատրաստ էր ոչ միայն նկատի առնել այս ամենը, այլեւ, ասելով իր ճշմարտությունը, շատ էլ չհակադրվել տիրապետող մթնոլորտին: Սրանո՛վ պիտի բացատրել հաղորդման այն առանձին, միայն առանձի՞ն, հատվածները, որոնց հետ չի կարելի չվիճել: Ադրբեջանցի գրողներն ու գիտնականները, էական հարցերի քննությունը թողած, խորհրդային ժողովուրդների բարեկամության պարապ քարոզն էին անում: Բաքվում բնակվող մի վիրուհի պատմում էր, որ ամուսնացել է ադրբեջանցու հետ, երեք ադրբեջանցի զավակ ունի եւ էլ Վրաստան չի՞ ուզում (ուրեմն, ղարաբաղցիները պիտի ձեռները կտրեն ու տեղերը վայր ընկնեն): Մի քանի տարի առաջ Բաքվից Երեւան փոխադրված մի ադրբեջանուհի-ուսուցչուհի գանգատվում էր, թե Երեւանում հայերի ու ադրբեջանցիների միջեւ խտրականություն կա, մի բան, որ իր Բաքվում նա երբեք չի տեսել, եւ փետրվար-մարտյան օրերին էլ ինքն ստիպված է եղել գիշերներն անքուն մնալ, որպեսզի որեւէ աղետ չպատահի իր զավակներին...

Իհարկե, դժվար չէր նկատել հաղորդավարի ակնհայտ երգիծական վերաբերմունքը ուսուցչուհու անլուրջ խոսքի նկատմամբ: Ի՞նչ է, ձեր դռան ետեւին արկղնե՞ր էիք դասավորել, որպեսզի հարձակումից հուսալիորեն պաշտպանվեք,-հարցրեց նա, եւ բողոքարկու ադրբեջանուհին անմիջապես էլ վրա տվեց՝ այո՛, այո՛:

Եթե նմանօրինակ տրտունջները պարզելու համար փորձենք նայել այս ուսուցչուհու գանգատի հիմքին, կտեսնենք մի շատ հետաքրքիր պատկեր: Երեւանյան «խտրականությունն» ամբաստանող Սոնա Կադիրովան, որ «Սովետ Էրմենիստանի» թերթի բաժնի վարիչի կողակիցն է, երեւի թե իրավունք ունեցել է խոսելու Երեւանում տիրող «խտրականության» մասին: Այդ իրավունքը տվել է նրա կենսական փորձը: Պատկերացրե՛ք, ընկերուհին Երեւանում մշտական բնակություն հաստատելուն պես աշխատանքի է նշանակվել որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի: Նշանակվել է՝ առանց հերթի սպասելու, առանց որեւէ քաշքշուկի, երբ Երեւանը նեղվում է ռուսաց լեզվի ուսուցիչների եւ ուսուցչուհիների առատությունից, հետեւաբար նրա բախտակից հայերը նախ հերթագրվում են, ապա տարիներ ի վեր սպասում իրենց հերթին: Իսկ իրեն ո՛չ հերթագրել են, ո՛չ էլ սպասեցրել: Սա խտրականությո՞ւն է, թե՞ ոչ:

Երեւանում տիրող «խտրականությունից» դժգոհ Կադիրովան իր շրջապատին խուզարկու հայացքով նայելու դեպքում կարող էր վկայակոչել «խտրականության» առավել էական օրինակներ եւս. 1979 թ. մարդահամարի տվյալներով Երեւանում բնակվում են 2241 ադրբեջանցիներ, որոնց համար գործում են ադրբեջանական եր-



կու դպրոց, մեկ թատրոն ու մշակութային ուրիշ օջախներ: Իսկ նրա ծննդավայր Բաքվում, ուր ապրում են շուրջ հարյուր անգամ ավելի հայեր, քան Երեւանի ադրբեջանցիների թիվն է, այժմ չկա ոչ մի հայկական դպրոց, եւ թատրոնն էլ փակվել է 1940-ական թվականների վերջին:

Սա խտրականությո՞ւն է, թե՞ ոչ: Անկասկա՛ծ: Բայց, կարծեմ, այդ դատապարտելի երեւույթի դեմ գանգատվելու իրավունք ունեն Բաքվի հայե՞րը եւ ոչ թե երեւանաբնակ Կադիրովան:

Եւ, վերջապես, Կադիրովան ասում է՝ իր երեխաներին աղետից փրկելու համար Երեւանում գիշերներն անքուն է մնացել: Բայց չի ասում, թե այդ ի՛նչ աղետ է, որ եղել է կամ պիտի լիներ, իր ազգակիցներից ո՞րը ե՞րբ է ենթարկվել աղետի, քանի որ ինքը չի կարող չիմանալ ու չհիշել, որ հայերն աղետների ենթարկվել են եւ միշտ էլ ենթարկվում են Աղդամում ու Կիրովաբադում, Բաքվում ու Սումգայիթում... Սրա՞ն ինչ անուն տանք, եթե ոչ խտրականություն: Խտրականություն է, որի տեղն ու հասցեն ճիշտ պիտի ասել, ապա թե ոչ, մեր անծայրածիր երկրի բազմամիլիոն հեռուստադիտողներին մոլորեցնելու համար կարելի է եւ պատասխանատվության կանչել:

Ես Սոնա Կադիրովայի խոսքի վրա մի քիչ երկար կանգ առա, նկատի առնելով նրա մասնագիտությունը. եթե այս ընկերուհին իր աշակերտների հետ է՛լ այնպես է խոսում, ինչպես հեռուստադիտողների հետ, ապա չպետք է զարմանանք, եթե ապագայում եւս լինեն սումգայիթներ:

Դիտողություն ընդունող մյուս հատվածներից ես կառանձնացնեի աղդամցի թեթեւմիտ ավտովարորդի ու խանաբադցի անհոգ հայ պառավի հանդիպումը, որը լուրջ բանի տեղ դնելու դեպքում պետք է հեռուստացույցդ անջատես կամ կոճակը շուռ տաս ու դիտես գոնե դրանից պակաս անհամ որեւէ հաղորդում...

Կան Բորովիկի դեմ գանգատավոր մարդիկ, որոնք, հաղորդման հենց այսօրինակ երկրորդական հատվածներից դժգոհ՝ աղմուկ են բարձրացնում, պատեպատ են զարկվում՝ մեզ էլ գլխի գցելու համար, թե, իբր, դրանք են կարեւորը, մանավանդ, երբ հաղորդման մեջ բացակայում է լրատվության սխալների աներկմիտ գնահատականը, դատաստանն ու դատական եզրակացությունը:

Կարի՞ք կա պնդելու, թե սա կարծիքն է այնպիսի մարդկանց, որոնք երեւի սպասել են, որ Բորովիկն իր ընդդիմախոսների, այսինքն՝ «վերակառուցման հակառակորդների», վարքը մերկացնելիս նաեւ մայր հայհոյի...

Սակայն մենք փորձենք հիշել եւ հիշողության մեջ պահել հաղորդման բոլոր այն հատվածները, որոնք վերաբերում են բուն երեւույթին եւ նրա առանձին դրսեւորումներին:

Դա պարզապես առաջին մխիթարական երեւույթն էր համամիութենական ռադիո-հեռուստատեսային մարմինների գործունեության մեջ եւ, անհրաժեշտ է խոստովանել, հաղորդման կազմակերպիչ ու ղեկավար, խորհրդային ականավոր գրող ու խաղաղության մարտիկ Հենրիխ Բորովիկն արել է այն ամենը, ինչ հազիվ թե հնարավոր էր կենտրոնական հեռուստատեսության ու մամուլի ղեկավարների կողմից հիշյալ հարցերի շուրջ ստեղծված աննպաստ մթնոլորտի առկայությամբ:

Նորից հիշենք հենց առաջին կադրերը. երիտասարդ, բարետես հայուհին դառը կշտամբանքով դիմում է հեռուստատեսության աշխատողներին. ամբողջ երկու ամիս դուք, միութենական թերթերի թղթակիցների հետ միասին, անստույգ եւ պարզապես անհեթեթ լուրերով ու տեղեկություններով մեր երկիրը պահել եք թյուրիմացության մեջ: Իմ խոսքն է՞լ պիտի անդամահատեք, դարձնեք կեղծիք ու թյուրատեսություն... Իսկ ի՞նչ է կատարվել իրականում. հայկական ինքնավար մի մարզ ցանկանում է միանալ իր մայր ժողովրդի խորհրդային հանրապետությանը եւ դրա իրականացման համար մեր երկրի օրենքներով ու սահմանադրությամբ իրեն տրված իրավունքներից է օգտվել՝ հրապարակային ցույցի է դուրս եկել:

Ապա ցույց են տրվում Ստեփանակերտի հանրահավաքները. ժողովուրդը հորդացել

է քաղաքի գլխավոր հրապարակն ու փողոցները, ծփում է հորիզոնից հորիզոն: Այդ ծովացած մարդկային անծայրության վրա պաստառներ են շողշողում՝ Լենինի ու ինտերնացիոնալիզմի, Գորբաչովի ու վերակառուցման փառաբանությամբ: Ցուցարարները ելույթներ են ունենում՝ նշելով իրենց հավատարմությունը խորհրդային կարգերին, լենինիզմին, վերակառուցման գաղափարին: Ներկայացնում են իրենց պահանջը՝ ամեն կերպ ապացուցելով նրա արդարամտությունը... Իսկ Երեւանի ցույցե՞րը... Նույն խաղաղ, զուսպ, գաղափարապես անթերի բովանդակությամբ... Եւ դարձյալ նույն փոթորկվածը հորիզոնից հորիզոն...

Մինչեւ հիմա այս ամենը ներկայացվել է որպես մի խումբ ծայրահեղականների ու ազգայնամոլ տարրերի խառնակչություն... Հիմա միլիոնների առաջ հորդում է մի ամբողջ ժողովուրդ... Մի՞թե սա չի ասում, թե սուտ ու բամբասանք է եղել այն ամենը, որ մինչեւ հիմա ձեզ է հրամցվել, տեսե՛ք ու համոզվե՛ք, որ Ղարաբաղի դեպքերն ու նրանց երեւանյան արձագանքները ամբողջ հայ ժողովրդի (եւ ոչ թե մի խումբ ծայրահեղականների ու ազգայնամոլ տարրերի) կամքի արտահայտությունն է եղել:

Գերագույն դատախազի տեղակալը, որի մինչեւ այժմ տված բացատրություններից անհնար էր հասկանալ, թե Սումգայիթում ո՛վ է ում սպանել, ի՛նչ է նշանակում «տարբեր ազգությունների պատկանող զոհեր», նույնիսկ դժվար կլիներ գուշակել, թե որտե՛ղ է գտնվում այդ Սումգայիթ քաղաքը,-այս անգամ պարզ ի պարզո ասաց, որ ջարդը կազմակերպել են ադրբեջանցիները, որոնք կոտորել, կողոպտել են հայերին... եւ հանգամանորեն բացատրեց, որ Սումգայիթի կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները 3 օր շարունակ բռնությունները ինքնահոսի են թողել, իսկ միլիցիան եւ առհասարակ կարգապահությանը հսկող մյուս մարմինները ոչ մի մասնակցություն չեն ցուցաբերել վայրագությունները արգելելու եւ դադարեցնելու գործին: Շեշտվեց նաեւ, որ ապացուցվել է, թե ինչպես աղետյալները բազմիցս հեռախոսազանգերով դիմել են միլիցիայի բաժանմունք եւ չեն արժանացել ոչ մի օգնության, որի համար էլ դատական գործեր են ստեղծված միլիցիայի մի շարք նախկին աշխատողների դեմ:

Մինչեւ այժմ լոկ մի օր էր հատկացվում սումգայիթյան ջարդերին: Այս անգամ Բորովիկն ինքը քանի՜ անգամ հիշեց երեք օրը, եռօրյա գեհենի փաստը: Նաեւ շատ կարեւորը՝ կես ժամվա ճանապարհ է Ադրբեջանի մայրաքաղաք Բաքվից մինչեւ Սումգայիթ, եւ այստեղ երեք օր շարունակ չարագործները անպատիժ կերպով իրենց գործն են տեսել: Իսկ խելք ունեցող հեռուստադիտողը թող մտածի՝ այդ հանրապետության ղեկավարները արդյոք իրե՞նք չեն սանձազերծել չարագործներին եւ հետո էլ ազատություն տվել, որպեսզի երեք օր գործեն...

Եւ պատահակա՞ն է, որ այս երեք օրվա հետ շաղկապվում են 15-ի Մեծ եղեռնի երեք ամիսը (Բորովիկ.-«Երեք ամսվա ընթացքում թուրքերը ջարդեցին մեկ ու կես միլիոն հայ») եւ Շուշվա հայ բնակչության ոչնչացումը 1920-ի գարնան երեք օրվա ընթացքում («Մուսավաթականների գլխավորությամբ ջարդեցին Շուշվա ամբողջ հայ բնակչությանը»):

Այն ե՞րբ է եղել, որ համամիութենական լրատվական որեւէ մարմին այսքան խոսք է նվիրել 20-րդ դ. սկզբում իսկ մեր ազգին վիճակված այս ողբերգական դեպքերին: Եւ ամենագլխավորը՝ այսքան բարյացակա՜մ խոսք, գաղափարական մշուշն ու քաղաքական անբարեհաճությունը զրո՜ղ խոսք: Ասում են՝ հայերն իրենց անցյալի ողբերգական անցքերը մշակում-զարգացնում են (Культивируют) եւ նրանցով դաստիարակում իրենց ժառանգներին,-այս Բորովիկի խոսքն է, որ զարգանում է հետեւյալ շարունակությամբ.-Հայերն իսկապես չեն մոռանում իրենց պատմության տխուր անցքերը: Ես տեսել եմ եղեռնի հուշարձանը, որի առաջ անկարելի է կանգնել առանց սարսուռի: Բայց չէ՞ որ դա իրենց սեփական պատմությունն է, իրենց ապրածը, տառապալից ճանապարհը... Եւ հետո, այդ ժողովուրդն էլ այդպես է ապրում: Մի՞թե ուրիշնե՛րը պիտի թելադրեն նրան իր ապրելու կերպը:



Փորձենք հիշել հաղորդման ուրիշ մանրամասները.

Հեռուստաէկրանին իրենց պարտականությունը «իրականացրած» ռուս զինվորներն են, որ պատմում են քաղաքում կատարված վայրագությունների մասին: Էկրանին ցույց են տրվում հայերի ավերված բնակարանները, անօրինակ բարբարոսության մյուս հետքերը, երեւում են դրանց հեղինակները իրենք՝ ադրբեջանցի երիտասարդներ, որոնց դեմքերին դրոշմված են բութ ու վայրենի բնազդը, ավերումի ու սպանության մոլուցքը...

Եւ հարցազրույց վարողը մեկ էլ հայտնվում է Երեւանում տեղակայված ռուս զինվորների առաջ: Այս զինվորներն էլ իրար հերթ չտալով հայ մարդկանց բարության ու բարեկրթության մասին են պատմում, հայոց հին ու նոր պատմությունից իմացած մանրամասները, ապա հայտնում, որ ծառայությունն ավարտելուց հետո ավելի երկար ժամանակով պիտի գան, ծանոթանան այս հին ու հետաքրքիր ժողովրդի մշակութային ժառանգությանը...

Մինչեւ այժմ ո՞վ է տեսել, որ Ղարաբաղի մասին խոսելիս որեւէ ակնարկ անեն նրա ազգային-քաղաքական վիճակից, բացատրեն նրա պահանջը, մանավանդ այդ պահանջի ակունքները: Իսկ հիմա՝ այստեղ հնուց ի վեր հայերն են ապրում, որոնք խորհրդային կարգերի հաստատման տարին կազմել են մարզի բնակչության 94 տոկոսը եւ հիմա էլ դարձել են 74 տոկոս: Ապա անմիջապես հայտնվում է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դոցենտն իր արդար հայտարարությամբ. «Ադրբեջանի ղեկավարության միակ մտադրությունն այն է, որ մեզ քշի մեր մարզից»:

Ինքը՝ Բորովիկն ասում է. 1921-ին որոշված է եղել Լեռնային Ղարաբաղն իր հայ բնակչությամբ վերադարձնել Հայկական ԽՍՀ-ին: Սակայն հետագայում այս որոշումն ինչ-ինչ պատճառներով բեկանվել է, եւ 1923-ին մարզը թողնվել է Ադրբեջանի կազմում՝ ազգային ինքնավարության իրավունքով: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունն ինչպե՞ս է վերաբերվել այդ հայկական մարզի ազգային իրավունքներին: Շա՜տ վատ: Եւ, ահա՛, կուտակված դառը հարցերն էլ այդ վերաբերմունքն են ապացուցում ու պահանջում են լուծում:

Չի կարելի չհիշել նաեւ լուծման մասին հաղորդավար-մեկնաբանի տված դեղատոմսը: Ասում է՝ ղարաբաղցի հայերը ճանաչում են հարցի լուծման միայն մեկ ճանապարհ՝ մարզը վերադարձնել Հայաստանին: Բայց եթե այդ առայժմ անհնար է, ապա մի՞թե չի կարելի մարզի ազգային ինքնավարության սահմանները լայնացնել կամ մարզը դարձնել ինքնավար հանրապետություն՝ դարձյալ ազգային կյանքի առավել լայն հնարավորությունների շնորհումով, որպեսզի վերջ տրվի 1920-ական թվականներին ազգային արդար քաղաքականության խեղաթյուրմանը, որն ահա քանի՜ տասնյակ տարի անհանգստացնում է մարդկանց:

Եւ այստեղ էլ՝ նրա քննադատությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի գործունեության կամ անգործության վերաբերյալ. այս երկրում բոլորը խոսում են Ղարաբաղի մասին, բացի նրանից, որը, չգիտես ինչու, գոնե մի Ազգությունների հանձնաժողով էլ չունի: Այսինքն՝ եթե Ազգությունների խորհուրդն ազգային մարզի ցավով չի հետաքրքրվում, ապա նրա գոյությունն էլ ինչո՞վ պիտի արդարացվի:

Այս է «Դիրքորոշում» հաղորդաշարի «Լեռնային Ղարաբաղ. բարձրաձայն մտորումներ» հաղորդումից իմ ստացած տպավորությունը:

Հեռուստադիտողների ցանկությամբ հաղորդման կրկնությունը տեղի ունեցավ մայիսի 12-ին: Այս անգամ Բորովիկը հաղորդումից հետո խոսեց տարբեր հանրապետություններից, այժմ արդեն «տարբեր ազգերի ներկայացուցիչներից» ստացված հազարավոր նամակների, հեռագրերի, երախտագիտության ու հիացումի արտահայտությունների մասին: Մարդիկ շնորհակալությամբ նշում են, որ վերջապես ճշմարիտ խոսք լսեցին Ղարաբաղի ու նրա շուրջ ստեղծված իրադարձությունների վերաբերյալ: Խոսք, որ լի է ցավով, խղճմտանքով ու արդարամտությամբ: Խոսք, որն ունկնդրելուց հետո չես կարող չհավատալ, որ արդարությունը կհաղթանակի, եւ մարդիկ վստահությամբ կքայլեն դեպի վաղվա օրը:

✧ ✧ ✧

«Դիրքորոշումն» արեց այն, ինչ որ պիտի աներ. հայերը հիմնականում գոհ էին եւ մտածում էին, թե արդեն բարի ճեղք է տվել կենտրոնական լրատվությունը, այսուհետեւ պիտի խոսի բանիմացությամբ ու բարյացակամ: Իսկ ադրբեջանցիները հիմնականում, եթե չասենք՝ անմնացորդ, այդ հաղորդումն ընդունեցին որպես հարձակում իրենց պատմական ու ազգային իրավունքների, իրենց ազնվական անվան ու հեղինակության դեմ: Բաքվում, Սումգայիթում ու մյուս քաղաքներում կազմակերպեցին ցույցեր, որոնք կոչվում էին հակաբորովիկյան: Ասում են՝ ցուցարարները ձեռքներին տարել են Բորովիկի այլանդակված նկարները եւ վառել կամ ոտքերի տակ ձգել-տրորել: Ասում են նաեւ, որ հազարավոր նամակներ ու հեռագրեր են հղել միութենական ղեկավար մարմիններին, թերթերին ու հեռուստատեսությանը՝ հաղորդումը գնահատելով իբրեւ հայ ազգայնամոլների ու ծայրահեղականների հերթական ձեռնարկը:

Հավանաբար հենց այս բողոքներն են եղել հիմնական պատճառը, որ հաղորդումը կրկնվել է մայիսի 12-ին:

Ադրբեջանական հակադրությունն, այնուհանդերձ, իր արտահայտությունը գտավ կենտրոնական հեռուստատեսությամբ. մայիսի 17-ին «Ժամանակ» հաղորդման մեջ մտավ Ադրբեջանի Գրողների միության առաջին քարտուղար Անարը, որին ներկայացրին Համամիութենական կուսակցական 19-րդ կոնֆերանսի պատգամավորի դերում, եւ նա հայտարարեց, թե Բորովիկի հաղորդման մեջ սխալ դիրքերից են գնահատվել սկզբունքային հարցերը, այդ պատճառով էլ երեւույթն ընդհանուր առմամբ ծուռ պատկերով է էկրան բարձրացել:

Անարն օգտվեց իրեն տրամադրված բարձր ամբիոնից եւ դատապարտեց նաեւ Ղարաբաղում ու Հայաստանում «վերջերս սրված բարոյաքաղաքական վիճակը»: Ահա նրա խոսքի հիմնական մասը՝ վերականգնված հիշողությամբ, բայց հաղորդումից անմիջապես հետո:

- Մենք գնում ենք դեպի մեր ժամանակի խոշորագույն երեւույթը՝ կուսակցության կոնֆերանսը, որին սպասել էինք վաղուց, ամբողջ կյանքում: Սակայն մեր խանդավառությունը խեղաթյուրված է այն երեւույթներով, որոնք դեռեւս տեղի ունեն Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ: Վերջապես այս երեւույթներն ո՞վ պիտի դատապարտի, եթե ո՛չ ինքս՝ գրողս, որի աչքերի առաջ թունավորվում են երկու ժողովուրդների՝ հայերի ու ադրբեջանցիների երբեմնի եղբայրական հարաբերությունները: Ամեն օր Ղարաբաղից, Հայաստանից ու Ադրբեջանի հայաբնակ շրջաններից ինձ մոտ՝ Գրողների միություն են գալիս տասնյակ ու տասնյակ մարդիկ, իմ հայրենակիցները եւ դառնորեն բացատրում են, որ իրենց համար այլեւս անհնար է ապրել այդ վայրերում...

Այսքա՛ն բան:

Բայց որքան հայտնի է, **մայիսի 10-17-ը** իրենք՝ ադրբեջանցիներն են Աղդամում, Կիրովաբադում եւ այլ շրջաններում ծեծել հայերին, ջարդել նրանց մեքենաները: Շուշիում այդ ժամանակ նրանք ծեծելով սպանել են երիտասարդ Վիտալի Պետրոսյանին եւ շրջանային հիվանդանոցում էլ մահը վերագրել ինֆարկտի: Ադրբեջանցիներն այնքան են սանձարձակացել, որ գիշերով հարձակվել են Ստեփանակերտի մանկամսուրի վրա, ջարդոտել պատահած իրերն ու կահույքը եւ թունավորել սննդամթերքը: Բարեբախտաբար տեղի երիտասարդները բռնել են նորահայտ վանդալներից երկու հոգու... Եւ հիմա Աղդամում ու Շուշիում սրանց պաշտպանները ցույցեր են անում՝ դրությունն այնպես ներկայացնելով, թե «իրենց համար այլեւս անհնար է ապրել այս մարզում»:

Եւ այս բոլորն էլ եթե չլինեին, Անարը Սումգայիթի տերն է ու պատասխանատուն...

Ծանոթներիցս մեկը զանգեց, թե.

- Տեսա՞ր, էլի՛ առաջ ընկան, եւ մենք պիտի պաշտպանվենք:

Անարից ավելի բարոյական չգտնվեցին Ադրբեջանի ԿԿ Կենտկոմը, հանրապետության Գերագույն խորհուրդն ու Մինիստրների խորհուրդը, որոնք հանրապետական թեր-



թերի մայիսի 18-ի համարներում հրապարակեցին կոչ, որով, իբր թե, իրենց տագնապն ու անհանգստությունն են արտահայտում Լեռնային Ղարաբաղում, Հայաստանում ու Ադրբեջանում հայ-ադրբեջանական փոխհարաբերությունների նոր բռնկումների վերաբերյալ, սակայն ըստ էության նորից ու նորից ոտնահարում են հայ ժողովրդի, Հայկական ԽՍՀ իրավունքները, հեղինակությունը եւ, որ ավելի հատկանշական է, հանդես են գալիս ուժի դիրքից, բռունցք ցույց տալու եւ սպառնալիքի եղանակով:

Օրինակ, ինչո՞վ բացատրել այն հանգամանքը, որ Ադրբեջանի տերերը հայ-ադրբեջանական փոխհարաբերության բռնկումների շարքում չեն տեսնում իրենց քթի տակ կատարվածները, ասենք, Կիրովաբադի ու Մինգեչաուրի ադրբեջանցիների գործադրած բռնությունները համաքաղաքացի հայերի դեմ, երեւանյան ավտոբուսների ջարդելը եւ ուղեւորների հասցրած մարմնական ծանր վնասվածքները, Շուշիում հայերի դեմ կուսշրջկոմի քարտուղար, քաղաքական բախտախնդիր Հաջիեւի գլխավորած վայրագությունները, որոնց հետեւանքը եղել է նաեւ մարդկային զոհ: Եւ հանկարծ կոչի մեջ նշում են լոկ Հայկական ԽՍՀ Արարատի շրջանում մայիսի 11-ին տեղի ունեցած դեպքերը, որոնց արդյունքում «կան տուժվածներ, սակայն զոհեր չկան»:

«Մենք դիմում ենք բոլոր հայրենակիցներին, հանրապետության քաղաքացիներին՝ ադրբեջանցիներին, հայերին, ռուսներին, Ադրբեջանում ապրող բոլոր ազգությունների մարդկանց... Հիշեցե՛ք՝ մենք բոլորս պատասխանատու ենք մեր հանրապետության պատվի համար, ադրբեջանական ժողովրդի պատվի համար»,-այսպես է ավարտվում կոչը: Ուրեմն, ադրբեջանական ղեկավարության երեսից տասնյակ տարիներ տուժված, Սումգայիթում ամենաքստմնելի վայրագությունների ենթարկված հայերի համար հիմա ամենակարեւորն ադրբեջանական ժողովրդի պատիվն է եւ ոչ թե իրենց ազատությունն ու մարդավայել ապրելու իրավունքը:

Կոչի սկզբում հաղորդվում էր, թե Բաքվում մայիսի 16-ին տեղի է ունեցել երիտասարդների, ուսանողների եւ մտավորականության մեծ միտինգ (միտի՜նգ եւ ո՛չ թե ցույց), որին ներկա են եղել հանրապետության ղեկավարները, կուս. Կենտկոմի բյուրոյի անդամները: Հաղորդվում է միտինգի դրդիչի՝ Լեռնային Ղարաբաղի եւ նրա շուրջ ստեղծված իրավիճակի մասին, ապա՝ որ «Միտինգի մասնակիցների բարձրացրած հարցերն ուշադրությամբ քննարկվել են: Նրանցից մի քանիսի առթիվ ծրագրվել են անհետաձգելի միջոցառումներ: Սակայն հարկ է հաշվի առնել, որ բարձրացվել են նաեւ այնպիսի հարցեր, որոնց լուծումը պահանջում է խոր ուսումնասիրություն ու որոշակի ժամանակ»:

**Մայիսի 16-ին** Շուշվա շրջանային ղեկավարության նախաձեռնությամբ քաղաքի շուրջ հարյուր հայ բնակիչների լցրել են մեքենաները, փոխադրել Ստեփանակերտ եւ այնտեղ, Լենինի հրապարակում իջեցնելով՝ հանդիսավոր կերպով հայտարարել, թե դա է նրանց տեղը, որքան ուզում են կարող են ցույցեր անել: Ասել են նաեւ, թե դրանց բախտին են արժանանալու նաեւ Շուշվա մնացած հայ բնակիչները:

Ակներեւ է, որ Շուշվա հայերի այս բռնագաղթեցումն Ադրբեջանի ղեկավարների կազմակերպած «անհետաձգելի միջոցառումներից» է եղել: Իսկ թե որքան են այն հարցերը, որոնք պահանջում են «խոր ուսումնասիրություն ու որոշակի ժամանակ», դա նրանց գաղտնիքն է, որ կբացվի ու կգործադրվի ժամանակին, անկասեցնելի՛. քանի որ Հայաստանի ղեկավարությունն իրեն «խաղից դուրս» վիճակ է զգել, հեռացել իր ազգի ճակատագրին վերաբերող հարցից եւ վայելում է Նիրվանայի խաբուսիկ անդորրը:

✧ ✧ ✧

**Ապրիլի 2-ին** Ստեփանակերտ-Ասկերան ավտոխճուղու վրա, Խոջալու գյուղում ավազակային հարձակման ենթարկվեցին հայ ավտովարորդները, որոնցից մի քանիսը՝ մարմնական վնասվածքներով, փոխադրվեցին հիվանդանոց:

✧ ✧ ✧

Շուշիից հետո սա հաջորդ սանձարձակ դեպքն էր, երբ բուն ԼՂԻՄ-ում նրա տեր հայության դեմ թուրքերը կատարում էին բացահայտ բռնություն՝ փաստորեն ազգամիջյան բախումի հրավիրելով հայերին։

✧ ✧ ✧

**Ապրիլի 3-ին** «Մոսկովսկիե նովոստի» թերթը տպագրեց ակադեմիկոս Անդրեյ Սախարովի հոդվածի ընդարձակ տարբերակը Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ տեղի ունեցող դեպքերի մասին, որով մեծ գիտնական-մարդասերը երկրի ղեկավարությանը կոչ էր անում ընդառաջել ԼՂԻՄ-ի գերագույն մարմնի՝ մարզխորհրդի որոշմանը, մարզը վերամիացնել Հայաստանին, տարաձայնությունների դեպքում խորհուրդ էր տալիս, որ վճռական որոշում հանի ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը։

**Ապրիլի 4-ին** կուսակցության ԼՂ մարզկոմի բյուրոյի անդամներն ու անդամության թեկնածուները ծավալուն դիմում հղեցին Մ. Գորբաչովին՝ շարադրելով մարզի բարդ վիճակը վերջին դեպքերից հետո, ժողովրդի անհողդողդ վճիռը միանալու Հայաստանին եւ պահանջեցին հարգել արցախահայության ինքնորոշման իրավունքը, մարզը միացնել Հայաստանին։

✧ ✧ ✧

**Ապրիլի 9-ին** “Советская культура“ թերթը տպագրեց դրանից մի քանի օր առաջ Կինեմատոգրաֆիստների միության սկզբնական կուս. կազմակերպության նիստում Ալեքսանդր Գելմանի արտասանած ճառը, որում մասնավորապես ասվում էր. «Ինչպես բոլորը, այնպես էլ ես ինքս մտահոգված եմ Լեռնային Ղարաբաղի դեպքերով, ինչպես եւ այն ամենով, որ տեղի ունեն Ադրբեջանում ու Հայաստանում։ Այնտեղ արյուն է հեղվել։ Դրա մեջ մեղավորները, բոլորը՝ մինչեւ վերջինը, պետք է հայտնաբերվեն, հրապարակվեն, պատժվեն։ Դժբախտաբար, ցավակցության խոսքեր էլ չհնչեցին անմեղ զոհերի համար։ Երեւան եկավ մեր լրատվության միջոցների անպատրաստ լինելը՝ մարդկայնորեն ու ազնվորեն լուսաբանելու դրամատիկ դեպքերը։ Հրապարակված նյութերի վերաբերյալ խոսքի մի քանի երանգներ առաջացրին մոսկվացիների դժգոհությունը, իսկ ի՞նչ ասենք Երեւանի ու Սումգայիթի ընթերցողների մասին։ Մեր միությունը, Կինեմատոգրաֆիստների քարտուղարությունը պետք է գործադրեն հավասարակշիռ, կարեկցական ջանքերի իրենց բաժինը՝ այդ հանրապետությունների ստեղծագործական մտավորականության գործողությունների մեջ խելամտության ոգին ամրապնդելու համար»։

Վերջում թերթը հայտնում էր, որ սույն ելույթը՝ համապատասխան որոշմամբ հանդերձ ուղարկվել է ԽՄԿԿ Կենտկոմ։

**Ապրիլի 6-10-ին** Շուշիի հայ բնակիչները մարզային ղեկավար մարմիններին գանգատվում էին շրջանի ղեկավարների կողմից իրենց դեմ վիրավորական արտահայտությունների, գործադրված խտրական վարքի դեմ։

Ֆիզուլու շրջանի ադրբեջանցիները հակակարկտային հրանոթներից Հադրութի շրջանի Դրախտիկ եւ Ազոխ գյուղերի կողմ կրակ էին բացել, եւ 4 արկ ընկել էր այդ գյուղերի վրա։

✧ ✧ ✧

**Ապրիլի 10-ին** Ստեփանակերտ ժամանեց ԽՄԿԿ Կենտկոմի մեքենաշինության բաժնի վարիչ Արկադի Իվանովիչ Վոլսկին, որը 3 օր շարունակ եղավ քաղաքի ձեռնարկներում, լսեց աշխատավորներին ու մարզի ղեկավարներին, իր ելույթներում ար-



դարացի համարեց մարզի հայության պահանջը եւ խոստացավ Մոսկվա վերադառնալուն պես ամեն ինչի մասին հանգամանորեն ու անկեղծ զեկուցել երկրի ղեկավարությանը։

**Ապրիլի 23-ի** առավոտյան ժ. 11-ին ինձ, Բոգդան Ջանյանին, Վարդան Հակոբյանին ու Իգնատ Մամյանին ընդունեց Ղարաբաղի մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանը։ Մտերիմ, անբռնազբոս զրույցն սկսվեց անմիջապես եւ տեւեց ավելի քան երկու ժամ։ Զրույցի կեսից մասնակից դարձավ նաեւ Ստեփանակերտի կուս. քաղկոմի առաջին քարտուղար Զավեն Մովսիսյանը, որին թերեւս ինքը՝ Պողոսյանն էր հրավիրել նախապես։

Զրույցը պտտվում էր Ղարաբաղի հարցի շուրջ, եւ բոլորս մի կարծիքի էինք հարցի բոլոր հոլովումներում։ Քարտուղարը գտնում էր, որ հարցը չի փակվել եւ անպայման պետք է որեւէ լուծում ստանա։ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը պետք է միացվի Հայկական հանրապետությանը։ Հակառակ դեպքում նրան պետք է տրվի հանրապետության կարգավիճակ՝ լայն վարչական լիազորություններով... Իսկ ծայրահեղ դեպքում պետք է դառնա միութենական ենթակայության վարչական միավոր՝ թերեւս մի ընդհանուր խումբ համանման այնպիսի միավորների հետ, ինչպիսիք են, ասենք, Աբխազիան, Օսեթիան եւլն։ «Ինչո՞ւ չի կարելի ստեղծել միութենական մի կենտրոն՝ նրան ենթարկելով այս միավորները»։ Եւ ցույց տվեց սույն ամսի 10-ին Մ.Ս. Գորբաչովին հղած մի նամակ, որի եզրափակիչ մեկ էջը կարդաց միայն։ Այնտեղ գրված էր մոտավորապես հետեւյալը. Լեռնային Ղարաբաղի մարզի աշխատավորությունը եւ կուսակցական ու վարչական մյուս մարմինները խորապես զգացված են ԽՄԿԿ ԿԿ-ի ու կառավարության (տնտեսական զարգացմանն ուղղված) որոշման համար, քանի որ այն ներծծված է Ղարաբաղի տնտեսական ու սոցիալական զարգացման հոգսով։ Դա շատ բարձր հոգատարություն է, սակայն, ցավոք, դեռեւս ամեն ինչ չէ եւ մեկընդմիշտ չի լուծում մեծ կարեւորություն ունեցող խնդիրը։ Հարցն, անշուշտ, վերջնական ու միակ ճշմարիտ լուծումը կստանար, եթե Ադր. ԽՍՀ ղեկավարությունը ցուցաբերած լիներ ըմբռնողություն ու եղբայրական բարեկամության զգացում։ Դժբախտաբար, այդ տեղի չի ունեցել, եւ հարցն ավելի խճճվել է, որի պատճառով էլ ոչ մի կերպ չի կարելի վերադառնալ նախկին վիճակին։ Ուստի եւ մարզի աշխատավորության անունից խնդրում ենք ձեզ՝ ընդառաջել վերջին երկու ամսվա ընթացքում հայ ժողովրդի արտահայտած ձգտմանը եւ մարզի վարչական վիճակի հարցին տալ վերջնական ու արդար լուծում։

Այս կոչին ստորագրել են մարզկոմի բյուրոյի անդամներն ու անդամության թեկնածուները։

- Իսկ դուք հավատո՞ւմ եք, որ հարցը կլուծվի,-հարցրինք մենք։

- Չի կարող չլուծվել։ Անհնար է, որ չլուծվի, որովհետեւ ստեղծվել է մի դրություն, որը պարզապես անհնար է դարձնում մեր որեւէ տեսակ առնչությունը Ադրբեջանի հանրապետության ղեկավարության հետ...

Եւ այս խոսքի վրա վեր կացավ, զանգեց Մոսկվա, կապվեց մեկի հետ, խոսեց շատ սիրալիր, փորձելով իմանալ, թե ի՞նչ եղավ այն խնդիրքը, որի շուրջ պայմանավորված են եղել... Ապա մեզ հաղորդեց, որ խոսում էր ԽՄԿԿ Կենտկոմի մեքենաշինության բաժնի վարիչ Ա. Ի. Վոլսկու հետ (սա այն մարդն է, որ Դեմիրճյանին ասել է՝ «Դու ինչպե՞ս ես ղեկավարել հայ ժողովրդին, եթե մինչեւ հիմա ոչ մի անգամ չես եղել Լեռնային Ղարաբաղում»)։

- Լավ մարդ է,-Պողոսյանը խոսեց Վոլսկու մասին։-Մեր նամակը հանձնել էինք Շահնազարովին, իսկ Վոլսկուն ինքս էի խնդրել, որպեսզի հաջողացնի, որ ընկ. Գորբաչովն ընդունի մեր բյուրոյի մի խումբ ընկերների... Հիմա ասում է՝ երեւի թե հաջողվի...

- Իսկ Գորբաչովի հետ ունեցած զրույցից ի՞նչ եզրակացության եք հանգել, ինչպիսի՞ն է նրա վերաբերմունքը,-Ջանյանն է հարցնում։

- Ես համոզված եմ, թե նա կլուծեր հարցը: Ուղղակի շատ կողմերից խանգարեցին... Բայց հիմա, հատկապես ստեղծված իրավիճակում, մենք համարյա լուրջ հաջողության չենք հասնի, եթե Հայաստանի ղեկավարները չդառնան հարցի համար պայքարողներ...

Հարցին խառնվեցին բազմաթիվ ենթահարցեր, որոնց առթիվ նա արտահայտեց իր կարծիքները՝ միշտ էլ տրամաբանված, իրավացի ու արդարամիտ:

- Այդ Խուռաման խանումի մասին տարածված պատմությունը հեքիաթ է. նա Աղդամի կենտրոնում է խոսել խուժանի առաջ: Իսկ, ինչպես գիտեք, աղդամցիները ոչ միայն չեն հրաժարվել իրենց երթից, այլեւ հասել են Ասկերան եւ այստեղից ճողոպրել դեպի ետ: Խուժանի մի մասին ետ է պահել մոլլան: Թող նրա՛ մասին գրեն...

- Սումգայիթցիների համար մենք ամեն ինչ անում ենք, որպեսզի նրանց նոր կյանքը դասավորվի տանելի կերպով: Բայց այստեղ էլ մեծ օգնություն է պետք. օրինակ, եթե Երեւանի տնաշինական կազմակերպությունները մեզ տային երկու հավաքովի շենք...

- «Այդ սրիկան (Կեւորկովը) երեւի Ալիեւի հովանավորությամբ ձեր մարզում շատ ավերածություններ է արել»,-ընկեր Գորբաչովը հարցրեց մի հեռախոսազրույցի ժամանակ: Ես պատասխանեցի՝ «Ոչ թե հովանավորությամբ, այլ հանձնարարությամբ»: Եւ նա համաձայնվեց:

- Պատմությունը լավ բան է, բայց հիմարություն է, երբ աղավաղում են, ու այդպիսի կեղծիքն էլ հիմք է դառնում նոր հիմարությունների համար: Ես նրանց քանի՜ անգամ ասել եմ՝ ձեր ի՞նչ գործն է, թե մենք ո՛վ ենք եղել երեկ-մյուս օրը: Այսօր հայ ենք, եւ դուք չեք կարող մեր հայկականության՝ վրա որեւէ ստվեր գցել: Ա՛յ, սա՛ է կարեւորը, եւ այս դիրքից ենք խոսում ձեզ հետ:

- Ասում եք՝ շուշեցիները հարձակվե՞լ են մեզ վրա: Շուշեցիների ռեխն ի՞նչ է, որ հարձակվեն: Նրանք մեզ լավ են ճանաչում, համոզված են, որ չենք մոռացել 1920-ի մարտի 21-23-ը, որի հաշիվը դեռ պիտի պահանջենք ու մաքրենք:

- Մենք այն գլխից պիտի հասկացած լինեինք, որ Հայաստանին վերամիանալուց առաջ անհրաժեշտ է Ադրբեջանից բաժանված լինել: Բաժանված այնպես ու այնքան ժամանակ, որ հանրապետության ղեկավարներն ու նրանց գաղտնի եւ բացահայտ կոչերով շարժվող ամբոխը հաշտված լինի վիճակի հետ:

- Եւ հիմա անարյուն բաժանո՛ւմը պիտի իրականացնենք: Մարզային կազմակերպությունները, հատկապես արդյունաբերական ձեռնարկները չեն ենթարկվում հանրապետական վերադասներին: Սովխոզները վեր են ածվում կոլխոզների, որոնք իրավական տեսակետից շատ ավելի ազատ են ու ինքնուրույն: Մարզի տեղական արդյունաբերական բաժնի վարիչը մի քանի օր առաջ գնացել է Մոսկվա, պայմանավորվել, որ իր բաժին հումքը, հանձնարարությունները են ստանա Երեւանից ու այլեւս ոչ մի առնչություն չունենա Ադրբեջանի մինիստրության հետ: Մշակութային օջախները, նախկին երկչոտությունը հաղթահարած, կապվում են Երեւանի իրենց համապատասխան կազմակերպությունների հետ: Նույնիսկ ջանքեր են գործադրվում,-դա շեշտեց Պողոսյանը,-որպեսզի Ստեփանակերտի մանկավարժական ուս ինստիտուտը փակվի, եւ նրա տեղ մարզի կենտրոնում ստեղծվի Երեւանի համալսարանի բաժանմունքը...

- Ահա այսպես մենք կբաժանվենք, կդառնանք մեր գլխի տերը եւ հետո... Հետո արդեն ասվա՜ծ մեծ է,-ժպտաց մարզկոմի քարտուղարը:-Իմ տոհմակից նախնիները՝ Հասան-Ջալալյանները, այսպիսի դիվանագիտական իրավիճակներում միշտ էլ ճիշտ են կողմնորոշվել (Հենրիկ Պողոսյանը մոր կողմից Հասան-Ջալալյան իշխանական տոհմի ժառանգ է):

Երբ դուրս էինք եկել, Իգնատ Մամյանն ուրախ-ուրախ բացվեց առաջին անգամ.

- Ի՜նչ պինդ մարդ է: Որ ընդունեց, փոքր-մոքր էր երեւում, կամաց-կամաց աչքիս մեծացավ-մեծացավ... եւ բաժանվելիս թվում էր աժդահա մի հերոս, որն այս լեռնաստանը պիտի պահի՝ միացած թե չմիացած:



✧ ✧ ✧

Ապրիլին «Լոս-Անջելես թայմս» ամերիկյան պարբերականում լույս էր տեսել ռուս անվանի պատմաբան, ճահճացման ժամանակներին բավական աղմուկ հանած Ռոյ Մեդվեդեւի հոդվածը ղարաբաղյան բարդույթի մասին («Ազգային բարդույթ Անդրկովկասում եւ բացախոսության քաղաքականության ճգնաժամը»): Լույս էր տեսել, ուրեմն, ապրիլին, պարբերականի համար ընդարձակ ծավալով, կնշանակի՝ գրված պիտի լիներ գոնե նախորդ ամսի վերջին, ակադեմիկոս Անդրեյ Սախարովի հայտնի նամակի հետ միաժամանակ, նույն ոգով ու արդարամտությամբ, պատմական հիմքերի բացառիկ ճշգրտությամբ, որ այն օրերի համար ոչ թե զարմանալի, այլեւ անսպասելի ու անհնար մի բան էր: Անսպասելի՝ մանավանդ հիմքերի քաջատեղյակության համար, որ պիտի պահանջեր տեւական աշխատանք, հետազոտություն: Էլ չեմ խոսում ազնվամտության մասին, որը նմանապես այն օրերին Սախարովի նման անհատների մենաշնորհն էր հանդիսանում:

Հոդվածի սկզբում հեղինակը նշում է, որ ինքն արդեն գրել է «Ադրբեջանի ու նրա կազմի մեջ մտնող Լեռնային Ղարաբաղի մարզի (ԼՂԻՄ) ազգային բարդույթի վերաբերյալ», մարզ, որը «ԽՍՀՄ-ում միակ ինքնավար կազմավորումն է, որի կողքին գոյություն ունի միութենական հանրապետություն՝ բնակչության նույն ազգային գերամասնությամբ»:

«ԽՄԿԿ Կենտկոմում գիտակցվում եւ քննության է առնվում ԼՂԻՄ-ի հայ բնակչության դեմ Բաքվի կողմից խրախուսվող ազգային խտրականության փաստը, արհամարհանքը մարզի սոցիալական ու մշակութային խնդիրների նկատմամբ,-հաղորդում է Մեդվեդեւը եւ ավելացնում, որ արդեն ընդունված են որոշումներ մարզի տնտեսական ու մշակութային զարգացման համար եւ, իբր, սրանք արդեն սկսել են իրականանալ: Անմիջապես էլ նշում է, որ «Սակայն մարզի բնակչության գերակշիռ մեծամասնության գլխավոր պահանջը՝ պաշտպանված նույնիսկ կուսակցական մարզկոմի ու մարզխորհրդի կողմից՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին տալու մասին, մերժվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունում, ուր ելույթ են ունեցել ոչ միայն Գրոմիկոն ու Գորբաչովը, այլեւ միութենական բոլոր հանրապետությունների ներկայացուցիչները: Այդ որոշումը պատրաստվել է այնպիսի շտապողականությամբ, որ նրա մեջ տեղ են գտել ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող մի շարք դրույթներ,-հաղորդում է Մեդվեդեւը եւ անմիջապես էլ տեղեկացնում.-Նախագահության որոշման մեջ, օրինակ, կա այսպիսի արտահայտություն. «համարել անթույլատրելի... ԽՍՀՄ Սահմանադրությամբ ամրագրված ազգային-պետական ու ազգային-վարչական սահմանների վերանայումը» («Պրավդա», 1988 թ. մարտի 25): Մինչդեռ ԽՍՀՄ Սահմանադրության մեջ չկան միութենական ու ինքնավար հանրապետությունների սահմաններն ամրագրող հոդվածներ: Հակառակը, ԽՍՀՄ Սահմանադրության 73-րդ հոդվածը ԽՍՀՄ Գերագույն խորհրդին թույլ է տալիս «հաստատել միութենական հանրապետությունների միջեւ սահմանների փոփոխությունները» եւ «կազմել ինքնավար նոր հանրապետություններ ու ինքնավար մարզեր միութենական հանրապետությունների կազմի մեջ»: Բոլոր այսպիսի փոփոխությունները կատարվել են բազմիցս, ընդ որում նաեւ Անդրկովկասում: Բայց Գերագույն խորհրդի Նախագահությունը, չգիտես ինչո՛ւ, ելնում է ոչ թե 73-րդ հոդվածից, այլ 81-րդից, որն առաջին հերթին միութենական հանրապետությունների իրավունքներն է պաշտպանում դրսի ոտնձգություններից, «Աշխատավորության հեղափոխական նվաճումներն է պաշտպանում իմպերիալիզմի դեմ» («ԽՍՀՄ Սահմանադրություն, Մոսկվա, 1982, էջ 240):

Գիտնականն այնուհետեւ խոսում է Հայաստանում շարժման դեմ կիրառվող հակաժողովրդական բռնությունների մասին, անդրադառնում ողջ ԽՍՀՄ-ում կիրառվող այն կեղծիքներին, որոնք տեղի ունեին պաշտոնական մամուլում, մանավանդ նրա առաջատար՝ «Պրավդայի» էջերում: Այս թերթը հասել էր այնպիսի սանձարձակության, որ հանրահայտ ժողովրդական արտիստ Հրաչյա Ղափլանյանի անունից ղարաբաղյան շար-

**Հուլիսի 13-ին** կուս. մարզկոմի բյուրոն, ի պատասխան Ե. Լիգաչովի հրահանգ-զանգի, միահամուռ ընդունեց որոշում, որով հաստատում էր մարզխորհրդի որոշման օրինականությունը եւ իր՝ բյուրոյի համերաշխությունը մարզի հայության անհողդողդ կամքի հետ:

Հաջորդ օրերին մարզ ժամանեցին ԽՄԿԿ Կենտկոմի բազմաթիվ աշխատողներ, հանդիպումներ ունեցան աշխատավորների եւ տարբեր աստիճանների ղեկավարների հետ, տվին խոստումներ, խորհուրդ տալով, որ մարզն սկսի աշխատել հուլիսի 18-ին՝ ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությունում ԼՂԻՄ-ի հարցը քննելու օրը:

**Հուլիսի 18-ին** ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությունն ունեցավ վաղուց սպասված իր նիստը՝ միայն Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի հարցի քննարկման համար,- նրա մասին Հայկ. ԽՍՀ ու Ադրբ. ԽՍՀ ԳԽ-ների ընդունած որոշումների կապակցությամբ: Ելույթ ունեցան բազմաթիվ դեպուտատներ երկու հանրապետություններից ու երկրի տարբեր կողմերից, միութենական ղեկավարներ, գիտության ու մշակույթի գործիչներ: Մեծ մասը, հավանաբար, ծանոթ լինելով Գորբաչովի ադրբեջանամետ տրամադրությանն ու վճռին, ջուր էր լցնում ադրբեջանցիների ջրաղացին, իսկ Գորբաչովը բացահայտորեն պաշտպանում էր նրանց բռնակալական իրավունքները, խրախուսում նրանց՝ նույնիսկ սանձարձակ, ակնհայտորեն սխալ, ըստ էության հակահայկական ելույթները: Այս տեսակետից շատ բնութագրական էր, օրինակ, ակադեմիկոս Ե. Պրիմակովի ելույթը, որը ժխտում էր անգամ հայերի պատմական իրավունքը Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա: Ո՞վ է ասել, թե որեւէ ժողովուրդ այսօր էլ տերն է այն հողերի, որոնց վրա ապրել, շինություն է արել պատմական ինչ որ ժամանակ,-պնդում էր այդ գիտնականը եւ, այսքան էլ քիչ համարելով, հայերի դեմ էր լարում մերձավոր հարեւանին,-Ղարաբաղում աջողվելով՝ մի օր էլ Վրաստանի կես միլիոն հայերը վեր կկենան ու կասեն՝ մենք էլ ենք միանում մայր Հայաստանին, Վրաստանը եւս բաժան-բաժան արեք:

Դրսիններից համարյա միայն մի բանաստեղծ Ռասուլ Համզաթով էր (Դաղստան), որ կոչ էր անում հետեւել ազգի ու մարդու իրավունքների միջազգային նորմերին, հարգել ազգային փոքրամասնության տարրական կանոնները եւ ընդառաջել ինքնավար մարզի հայության արդար պահանջին:

Հայ մասնակիցները, որքան էլ ենթակա Գորբաչովի ու նրա մանկլավիկների հարձակումներին, բարձր պահեցին իրենց արժանապատվությունը, ելույթներում ասացին ամբողջ ճշմարտությունը եւ, այն օրերի մամուլի բազմաթիվ անդրադարձումների համաձայն, արժանացան երկրի բոլոր արդարամիտ մարդկանց հավանությանը (նիստի խմբագրված տեսագրությունը հեռարձակվեց հեռուստատեսությամբ): Բարձր տպավորություն էին թողել Հայաստանի ղեկավար Ս. Հարությունյանի, ակադեմիկոս Վ. Համբարձումյանի, գրող Վ. Պետրոսյանի, մանավանդ կուս. Ղարմարզկոմի քարտուղար Հ. Պողոսյանի ելույթները: Իսկ ակադեմիկոս Ս. Համբարձումյանի ճառ-ճակատամարտը Գորբաչովի անպատկառ հարձակումների պայմաններում՝ արժանացավ խոր մի համակրանքի, որի նմանը երբեք չի եղել այդօրինակ ժողով-ներկայացումների պատմության մեջ: Հետագայում ռուս մտավորականներից շատերն անդրադարձան այդ ելույթ-բանավեճին՝ նշելով, որ Գորբաչովը հրաշալի դաս ստացավ հայ գիտնականից, եթե, իհարկե, խելք ունենա ըստ արժանվույն ընդունելու այն եւ սովորելու:

Ադրբեջանական կողմը հաղթեց նիստում. ընդունվեց մի որոշում, որով պաշտպանվում էր նրանց պահանջը (ԼՂԻՄ-ի ո՛չ մի բաժանում եւ ո՛չ մի միացում Հայաստանին): Բայց բարոյական հաղթանակը հայոց կողմն էր. ամբողջ խորհրդային երկիրը տեսնում էր նրանց արդար դիրքը, դրա դրսեւորման բարոյական ու բանական եղանակները, ոտնահարվող իրավունքի նրանց պաշտպանության ազնիվ ու անզիջում կեցվածքը...

Ճիշտն ասած, ցանկության դեպքում կարելի էր որոշման մեջ նկատել հայանպաստ մի կետ. ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությունը մարզ էր ուղարկում իր ներկայացուցիչներին, որոնք պետք է ջանային կարգավորել վիճակը՝ սերտորեն կապ պահպանելով Ադր-



ԽՍՀ եւ Հայկ. ԽՍՀ ներկայացուցիչների հետ: Եւ հենց այս հանգամանքի վրա էլ հույս դնելով՝ հայկական կողմը (մարզում էլ՝ հայությունը) մտածում էր, թե հնարավորություն պիտի լինի ինչ-որ բան շահել:

Եւ մարզի աշխատավորությունը հաջորդ օրն իսկ դադարեցրեց գործադուլները, անցավ աշխատանքի:

◇ ◇ ◇

Այստեղ հարկ համարեցի ժողովի, ըստ իս, առավել նշանակալից հատվածի սղագրությունը ներկայացնել՝ իբրեւ հայկական կողմի բարոյական հաղթանակը եւ առհասարակ բացառիկ մի երեւույթ, որ չէր լինում այն ժամանակների բարձր պաշտոնական շրջանակներում:

Ասացի, որ հայերի ելույթները կոպտորեն ընդմիջվում, խանգարվում էին Գորբաչովի կողմից: Գռեհիկ միջամտությունն ու անտեղի հորդորները, պարզապես անիմաստ ու բարձրահունչ խորհուրդներն այնպես թափվում էին հայ հռետորների գլխներին, որ թվում էր՝ նրանք ահա ուր-որ է կթքեն-կհեռանան դահլիճից: Երբ ծայրահեղ անտակտ այս եղանակին ենթարկվեց գրող Վարդգես Պետրոսյանը (Սումգայիթը համարել էր եղեռն-գենոցիդ, եւ պահանջում էր հենց այդպես գնահատել, կազմակերպիչներին էլ դատել որպես եղեռնագործների)... Այն ժամանակ ամենագետ ու ամեն տեսակ նկատողության իրավունքով օժտված ղեկավարը հարձակվեց նրա վրա, ունկնդիրներին բացատրեց, թե մարդը չի էլ հասկանում՝ ի՜նչ բան է գենոցիդը (հայ գրո՜ղը, հա՜յը չգիտե՝ ի՛նչ բան է ու ի՛նչ է նշանակում գենոցիդ) եւ ահա այս բարձրագույն ամբիոնից նորից նոր կրքեր է բորբոքում, փորձում է մոլորեցնել աշխարհը...

Հարձակումն ինչ-որ չափով հասավ նպատակին. Պետրոսյանն առաջին պահի կորցրեց իրեն (չէ՞ որ վիթխարի Խորհրդային Միության ղեկավարն էր հարձակվողը, այն ե՞րբ է եղել, որ չընդունվի նրա դիտողությունը, առավել եւս՝ մեղադրանքը), ընկրկեց փոքրամարմին Վարդգեսը, խղճալի վիճակի մեջ ընկավ եւ, չնայած քիչ անց ելույթը շարունակելու հնարավորություն էլ ունեցավ, խոսքն այլեւս այն չէր, հնարավոր է՝ ունկնդիրները չէին էլ հետեւում շարունակությանը...

Այս սովորական, բարձր ղեկավար շրջաններում ընդունված միջադեպը երեւի Գորբաչովին թեւավորեց, հուսադրեց, թե հարցի քննարկումը կընթանա ըստ նախատեսվածի, եւ ինքը, վերջապես, մի լավ դաս կտա այդ հայերին, որոնք քար են գցել վերակառուցման դեմը եւ երես էլ ունեն համարձակ խոսելու միութենական ամբիոնից:

Վարդգես Պետրոսյանից անմիջապես, թե մեկ-երկու խոսողից հետո, ելույթի իրավունք տվին Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, ՀԳԱ ակադեմիկոս, դեպուտատ Սերգեյ Համբարձումյանին, եւ նա սկսեց խոսել այնպես, ոնց որ ոչինչ էլ չի պատահել իրենից առաջ, ղեկավարը չի զգուշացրել, որ այստեղ չի կարելի պահանջատիրոջ անունից հարցեր բարձրացնել:

- Հարգելի ընկերներ, այսօր մեր հանրապետությունում իրավիճակը ծայրահեղ լարված է: Արդեն վեցերորդ ամիսն է, որ հայ ժողովուրդը՝ վիրավորված ազգային զգացումով, ըմբռնումի ու կարեկցանքի է սպասում,-ահա այսպես սկսեց նա, որ զգուշացված էլ էր, թե այստեղ դուք իրավունք ունեք խոսելու ոչ թե տուժվածի ու մեղադրողի, այլ մեղավորի, Երկրի առաջընթացը խանգարողի դիրքից: Եւ շարունակեց նույն ոգով.-Լեռնային Ղարաբաղի խնդիրը նոր չէ: Այն գոյացել է դեռեւս 20-ական թվականներին, երբ ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի ոչ սահմանադրական որոշմամբ, Ստալինի ուղղակի ճնշման տակ եւ Ադրբեջանի հեղկոմի առաջուց հրապարակած հռչակագրին հակառակ, Լեռնային Ղարաբաղը մտցվել է Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ: Այսպիսով տեղի է ունեցել պատմական անարդարություն, եւ հայ ժողովրդի մի մասը, հակառակ իր կամքի, հայտնվել է Խորհրդային Հայաստանից դուրս ստեղծված ինքնավար կազմավորման մեջ:

Այսօր, երբ վերացվում են անհատի պաշտամունքի շրջանում կատարված ապօրինի

այս դարի սկզբին ադրբեջանցիները Երեւանի բնակչության ո՞ր տոկոսն էին կազմում:

**Համբարձումյան.**-Դարասկզբի Երեւանո՞ւմ... Դժվարանում եմ ասել:

**Գորբաչով.**-Բայց դուք պարտավոր եք իմանալ: Ես ձեզ հիշեցնեմ՝ դարասկզբին Երեւանում ադրբեջանցիները բնակչության 43 տոկոսն էին կազմում: Այժմ ադրբեջանցիների տոկոսն ինչքա՞ն է:

- Հիմա շատ քիչ է, մեկ տոկոսից էլ պակաս:

- Ես դրա համար չե՛մ ուզում մեղադրել հայերին, որոնք այնտեղից դուրս են մղել ադրբեջանցիներին: Հավանաբար եղել են ինչ-որ իրողություններ, որոնք պետք է պարզել: Եթե մենք այսպես ամեն մի քայլից կառչենք, նրանից անենք հեռուն գնացող եզրակացություններ, իրար մեղադրենք, ապա ոչինչ չի ստացվի: Չէ՞ որ դուք գիտնական եք: Պետք է ճշգրիտ լինել լուսավորության մեջ, ճշգրիտ՝ ճշմարտության մեջ: Եթե դա լինելու է միայն ձեր ճշմարտությունը կամ իմ ճշմարտությունը, դա դեռեւս ճշմարտություն չէ: Բայց կա ճշմարտություն, որը եղել է, տեղի է ունեցել. այդ հողի վրա դարերով ապրել են հայերն ու ադրբեջանցիները: Ձեզ համար Լեռնային Ղարաբաղը դա օրրան է, այսպես ասած, հայ ազգի հենման կետերից մեկը, հոգեւոր հենարան (երեւի կարդալու են տվել Սերգեյ Գորոդեցկու հանրահայտ հոդվածը.-Բ.Ու.): Բայց չէ՞ որ Շուշում էլ եղել են ադրբեջանցի ե՛ւ կոմպոզիտորներ, ե՛ւ արվեստի շատ ուրիշ գործիչներ: Եւ այս բոլորը Լեռնային Ղարաբաղն է: Չի կարելի այդպես խոփով հերկել մարդկային հոգիները, դարերը, մարդկանց ճակատագրերը:

**Համբարձումյան.**-Միխայիլ Սերգեեւիչ, կարիք չկա հերկելու: Իսկապես պետք է ունենալ ճշգրիտ լուսավորություն: Մենք հույս ունենք, թե Գերագույն խորհուրդը, Գերագույն խորհրդի Նախագահությունը կհանի այնպիսի որոշում, որով Հայկական ԽՍՀ դեպուտատները կկարողանան գնալ, ժողովրդին համոզել, թե այդ որոշումն ամենահարմարն է:

**Գորբաչով.**-Քաղաքականությունը դա հնարավորի արվեստն է:

**Համբարձումյան.**-Իհարկե:

**Գորբաչով.**-Այստեղ քաղաքական գործ է ընթանում, որոշումը մշակելու ընթացք:

**Համբարձումյան.**-Դրա համար էլ ես ասում եմ՝ Լեռնային Ղարաբաղի հարցը պետք է լուծել քաղաքական ճանապարհով եւ ոչ թե ձեւական մոտեցմամբ»:

Ահա այսպես է ավարտվել ակադ. Սերգեյ Համբարձումյանի «մենամարտը» Գորբաչովի հետ: «Մենամարտ», որ տեղի է ունեցել Մոսկվայի՝ նոր ժամանակների Տիզբոնի, կենտրոնում, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունում, որը պակաս բռնատիրական միջավայր չէր, քան դժնատեսիլ արքունիքը Տիզբոնում: Եւ զուր կամ պատահական չէր, որ սույն միջադեպը հիշող արդարամիտ մարդիկ անպայման նշում էին նաեւ, թե հայ գիտնական-դեպուտատի խիզախությունը եղել է բացառիկ մի երեւույթ բռնակալական իշխանությունների պայմաններում:

**Հուլիսի 27-ին** կենտրոնական թերթերն ու լրատվական այլ մարմինները հրապարակեցին ԽՄԿԿ Կենտկոմի ու ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության որոշումը Ա.Ի. Վոլսկուն՝ իբրեւ Կենտկոմի ու ԳԽ-ի Նախագահության ներկայացուցչի, ԼՂԻՄ ուղարկելու մասին: Որոշման մեջ այդ նախաձեռնությունը կոչվում էր հուլիսի 18-ի հայտնի որոշման իրականացմանն ուղղված միջոցառում, որի նպատակն էր՝ «Ադրբեջանի, Հայաստանի ու ԼՂԻՄ-ի կուսակցական, խորհրդային ու տնտեսական մարմինների աշխատանքի կազմակերպում ու համատեղում»՝ Կենտրոնի վերոհիշյալ եւ ուրիշ որոշումների իրականացման համար:

Հետաքրքիր է ներկայացուցչին վերապահվող իրավունքների փունջը, որ ըստ էության, կարելի էր անսահմանափակ ու ամենազոր համարել, եթե, իհարկե, նրանով օժտվողը պիտի կարողանար լրիվ ու մինչեւ վերջ տնօրինել, դառնալ նրանց անշեղ կիրառողը: Բավական է ասել, որ նա վեր պիտի լիներ կանգնած Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավար մարմիններից եւ պիտի գլխավորեր, համատեղեր նրանց աշխատանքները: Ոչ միայն նրանց, այլեւ միութենական համապատասխան մինիստրությունների ուժերն ու հնարա-



վորությունները օգտագործեր, կարիքի դեպքում «նրան տրված էր իրավունք՝ ծագող հարցերը լուծելու նպատակով աշխատանքի ներգրավել նաեւ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության, մինիստրությունների եւ գերատեսչությունների, կենտրոնական այլեւայլ մարմինների պատասխանատու աշխատողներին»:

**Դարձյալ հուլիսի 18-ի** որոշման հիման վրա՝ ԽՍՀՄ ԳԽ-ի դեպուտատներից կազմվում էր հատուկ հանձնաժողով, որը պիտի ենթարկվեր Ա. Վոլսկի-ներկայացուցչին:

Մի խոսքով՝ ստեղծվեց միայն կենտրոնական կառավարությանը ենթակա մի մարմին, որն ուներ ամենալայն իրավունքներ մարզի ինքնուրույն ու ինքնիշխան տնտեսական, վարչական եւ մշակութային զարգացումը կազմակերպելու համար:

Սա այն էր, ինչ ԼՂԻՄ-ի մարզխորհուրդն էր պահանջել հունիսի 21-ի իր արտակարգ նստաշրջանի որոշումով:

Այն օրերին ես գտնվում էի Ստեփանակերտում, երկար զրույցներ ունեցա կուս. մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանի հետ: Նա, իբրեւ խելոք, շրջահայաց եւ ցանկացած իրադրության մեջ անմիջապես ու ճիշտ կողմնորոշվող մարդ, շատ էր ցավում շարժման սկզբից իսկ վերցրած սխալ ուղղության համար: «Հենց այն գլխից էլ ես մտածում էի, որ մենք առաջ պիտի շարժվենք աստիճան առ աստիճան. նախ բաժանվենք, հետո՛ միայն մտածենք միավորման մասին»,-հաստատ ու անշեղ համոզմունքով ասում էր նա: «Իսկ ինչո՞ւ չէիր ասում մարդկանց, ինչո՞ւ չէիր համոզում,-հարցրի նրան:-Չէ՞ որ այդպիսով առաջին աստիճանն այսքան արյուն չէր պահանջի: Նույնիսկ Բաքուն դա պակաս թշնամանքով կընդուներ եւ ոչ թե այսպես կդիվոտվեր»: «Իսկ ո՞վ էր ինձ լսողը: Բերանս բացելուն պես վրա էին տալիս՝ տեսա՞ք, սկզբիցեւեթ կիսատ-պռատ քայլի է գնում,-պատասխանեց Պողոսյանը՝ ցավագնորեն հիշելով նաեւ, որ այդ կարծիքի համար իրեն համարում էին շուռ տված հայրենասեր, որ պիտի ամեն ինչ անենք միանգամից եւ վե՛րջ... Նույնիսկ Պարույր Սեւակի հայտնի բանաստեղծությունն էին աչքս խոթում»:

... Ինչ-որ է, որոշումը կար, եւ մնում էր քաղաքական ու դիվանագիտական իմաստություն ձեռք բերել եւ գործն առաջ տանել:

◇ ◇ ◇

Նույն օրն էլ, **հուլիսի 27-ին**, Կենտրոնի ներկայացուցիչ Ա. Վոլսկին ժամանեց Ստեփանակերտ, անմիջապես խորհրդակցություն ունեցավ մարզային ղեկավար աշխատողների հետ, բացատրեց իր առաքելության խնդիրները: Իսկ երեկոյան դեմ, Հ. Պողոսյանի հետ միասին, ճանապարհվեց Մոսկվա՝ մասնակցելու ԽՄԿԿ Կենտկոմի պլենումին:

**Օգոստոսի 1-ին** Ստեփանակերտում շարունակվում էին նախորդ օրերին սկսված ժողովրդական ցնցումները: Պատճառը, իբր, Հայաստանից փախստական դարձած եւ ուրիշ տեղ չպատսպարված թուրքերի բնակեցումն էր մարզի ադրբեջանական գյուղերում: Գալիս էին միլիցիական հսկողության տակ առնված ավտոբուսներով, տեղավորվում Շուշիի այն բնակելի շենքերում, որ հայերից էին խլել, նույն շրջանի, ինչպես նաեւ Հադրութի ու Մարտակերտի, Մարտունու եւ Ասկերանի գյուղերում: Կառավարական մարմինների, հատկապես Կենտրոնի ներկայացուցիչների բացատրություններից հայտնի էր, որ մարզում պետք է ազգագրական վիճակագրությունը փոփոխող քայլերից հեռու մնան երկու կողմերը: Մինչդեռ թուրքերը շտապում էին իրենց թիվը մեծացնել եւ 1989 թ. հունվարին տեղի ունենալիք համամիութենական մարդահամարին ներկայանալ մարզում իրենց տոկոսը բավական բարձրացրած:

Ստեփանակերտում պատմում էին, որ Ասկերանի նախադռներին հայ երիտասարդները «փախստականներով» ծանրաբեռ երկու «Իկարուս» ետ են ճանապարհել՝ ուղեկցող միլիցիոներներին հանձնարարելով, որ այլեւս նման բեռներ չհասցնեն Ղարաբաղ:

**Օգոստոսի 2-ին**, երկու օր առաջ Մոսկվայից Ստեփանակերտ վերադարձած Ա.Ի. Վոլսկու հրավերով, Ստեփանակերտ ժամանեցին Ադրբեջանի ու Հայաստանի կուս.

**Սեպտեմբերի 22-ից** ԼՂԻՄ-ում եւ Աղդամի շրջանում հայտարարվեցին հատուկ դրություն եւ պարետային ժամ։

**Սեպտեմբերի 28-ին** «Правда»-ն տպագրեց շարժման սկզբից իսկ իր կեղծապատիր խզբզանքներով հայտնի Օվչարենկոյի ու ինչ-որ Ա. Չեռնենկոյի նոր դավադիր հոդվածը, որը հաղորդում էր, թե Ղարաբաղում արյուն է հեղվել, Շուշիից դուրս են քշվել նրա հայ բնակիչները, եւ այդ առթիվ Երեւանի Թատերական հրապարակում հավաքված ցուցարարները առավել ագրեսիվ են տրամադրված, քան փետրվարին էին։

Հոդվածում խոսք կար այն մասին, որ Հայաստանում ու բուն Լեռնային Ղարաբաղում պաշտոնապես (սա էլ չակերտներում) գտնում են, թե այժմյան բարդ վիճակն ստեղծվել է Խոջալվում հեղված արյունից հետո, նրա հետեւանքով (հասկացիր՝ այդ գյուղի չարագործ ադրբեջանցիների հրահրումով), սակայն, իբր, իրականում այն գոյություն է ունեցել արյունահեղությունից շատ օրեր առաջ։ Եւ սա էլ ա՛յն պատճառով, որ ԼՂԻՄ-ում «այսպես կոչված դիրեկտորների խորհուրդը, իսկ ըստ էության Ադրբեջանի ԽՍՀ ԳԽ-ի Նախագահության կողմից արդեն ցրված «Կռունկ» կոմիտեի անդամներն իրե՛նք են սերմանում նորանոր խռովություններ ու խառնակչություններ»։ Ասում են՝ դրանք՝ այդ ցրված «Կռունկի» կոմիտեականները, կաշառակերներ ու հովանավորչականներ են, տնտեսական մեքենայությունների վարպետներ եւ ժողովրդին գրգռել են մարզի իրավապահ այն մարմինների դեմ, որոնք ստուգում են իրենց մութ գործերը, իբր երեւան հանում ահավոր մեղքեր։ Իսկ իրականում ի՞նչ էր այդ կոմիտեականների պահանջը.-հարց են տալիս լրագրողները եւ պատասխանում.-որպեսզի մարզից հեռանան Ադրբեջանի ու ԽՍՀՄ դատախազական խմբերը, որոնք մարզ են եկել մեղսագործություններ հորինելու, նրանց շուրջ աղմուկ անելու համար, պահանջում են իրավապահ մարմինները մաքրել հանցագործ տարրերից եւ, օրինակ, հայկական ինքնավար մարզի դատախազ նշանակել տեղացի հայ մարդու...

Հոդվածում խոսեցնում էին նաեւ Երեւանում գործող խմբերի ղեկավարներին, եւ ահա թե սրանք ի՛նչ էին ասում.

**Վ. Սիրադեղյան.**-Գլխավոր սխալն այն է եղել, որ մենք փետրվարի 26-ին դադարեցրել ենք գործադուլներն ուժի դիրքից...

**Լ.Տեր-Պետրոսյան.**-Անհրաժեշտ են հայկական զինված միավորումներ։

**Մ. Գորգիսյան.**-Մոսկվայից չեն կարող կառավարել Հայաստանը։ Այնտեղ (Մոսկվայում) թշնամական շտաբն է... Եւ կնշանակի՝ մենք պետք է պարզ երեսով հայտարարենք պատերազմ։

**Ա. Մանուչարյան.**-Նրանք, որ մեզ վրա նորից բանակ են ուղարկում, թող լավ իմանան, որ մենք այդ բանակը կընդունենք, որպես գաղութարարի։

Հոդվածի եզրակացությունն այն էր, որ այս տարածքում ոչ մի լուրջ խնդիր էլ չկար, այլ հանցագործ տարրերն էին ժողովրդին ոտքի հանել, ստեղծել խառնակչություն ու քաոս, որպեսզի վարագուրված մնան իրենց արարքները։

Սա ոչ միայն հոդվածագիրների, այլեւ Կենտրոնի կարծիքն էր, ավելի ճիշտ՝ վերջինի թելադրած կարծիք-միրաժը, որը պետք է տարածվեր լրատվության միջոցների կողմից։

**Սեպտեմբերի 29-ին** Ա. Վոլսկին եւ Հ. Պողոսյանը մեկնեցին Մոսկվա՝ ԽՄԿԿ Կենտկոմի պլենումին մասնակցելու, վերադարձան հոկտեմբերի 2-ին։

**Հոկտեմբերի 3-ին** Ստեփանակերտ ժամանեց դեռեւս հուլիսի 18-ին ԳԽ-ի նախագահության որոշմամբ ստեղծված հանձնաժողովը՝ նրա ղեկավար, ԳԽ-ի Ազգությունների խորհրդի նախագահ Ա. Է. Վոսսի գլխավորությամբ։

Վոսսի հանձնաժողովը (մասնակցությամբ հանձնաժողովի նախագահի տեղակալ, ԽՍՀՄ Արդարադատության մինիստր Բ. Կրավցովի, Տաջիկստանի կուսկենտկոմի երկրորդ քարտուղար Պ. Լուչինսկու, ԽՍՀՄ էներգետիկայի մինիստր Ա. Մայորեցի) չորս օր առավոտից մինչեւ ուշ գիշեր հանդիպումներ ունեցավ մարզի ղեկավարության, արդյունաբերական խոշորագույն ձեռնարկությունների, աշխատավորական կոլեկտիվների, լուսավորության, մշակույթի, ստեղծագործական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ուշադրությամբ լսեց բոլորին, վերջում էլ խոստացավ Մոսկվա վերադառնալուն պես երկրի ղեկավարությանը հանգամանորեն զեկուցել այս ամենի մասին եւ ըստ կարելույն օժանդակել, որպեսզի ԼՂԻՄ-ի հայության հարուցած խնդիրն ստանա վերջնական, արդար լուծում (Այս հանդիպումներին ներկա էինք՝ ես, Զորի Բալայանը, Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Բաբկեն Արարքցյանը)։



✧ ✧ ✧

**Հոկտեմբերի 4-ին ու 5-ին** առավոտից մինչեւ ուշ երեկո ներկա էի հանձնաժողովի հանդիպումներին, լսում էի մարզի աշխատավորության ներկայացուցիչներին, հիմնարկ-ձեռնարկությունների, գործարանների, ուսումնական հաստատությունների ղեկավարներին, աշխատավորական կոլեկտիվներում կազմակերպված խոսք ու զրույցներին էի ունկնդիր... Ամեն ինչ լավ էր գնում, հանգիստ, խելոք, ամենաբարեկիրթ եղանակով։ Այս անգամ էլ զարմացած ու հիացած էի հայրենակիցներիս անթերի կուլտուրայով, հանպատրաստից ասված խոսքի այն տրամաբանությամբ ու մշակվածությամբ, որի ունկնդիրը պիտի մտածի, թե մարդիկ նախապատրաստվել են տարիներ ի վեր, կամ նրանց թիկունքներում կա աներեւույթ մի իմաստուն, ահռելի խելքի ու բանականության տեր մի խորհրդական, որը թելադրում է, հուշում, խոսքի ու բանավեճի մղում... Եւ եթե այս ամենի մեջ կար անհանգստացնող որեւէ բան, դա էլ արվող առաջարկության թե ներկայացվող պահանջի միօրինակությունն էր. ելույթն ինչպիսին էլ լիներ, ջղային ու կրքոտ, թե հանգիստ-հավասարակշիռ, ավարտվում էր մեկ եւ նույն եզրակացություն-առաջարկություն-պահանջով. մարզը հանեցե՛ք Ադրբեջանական ԽՍՀ կազմից։

Մտածում էի, թե հյուրերն այս ամենի մեջ կարող են տեսնել կառավար մի ձեռքի, վերին մի հրահանգի առկայություն, եւ դա էլ կարող է բացասաբար ազդել ընդհանուր տպավորության վրա։ Սակայն հանդիպումներից ամեն մեկի վերջում Վոսսն էր խոսում՝ անպայման շեշտելով ելույթ ունեցողների հենց այդ եզրակացություն-առաջարկ-պահանջների նույնությունը, դրա մեջ տեսնելով մարզի ամբողջ հայության կամքի միասնությունը...

Եւ այստեղ ես հանգիստ շունչ էի քաշում։ Տուն էի գալիս, եղբո՛րս տունը եւ, նրան տեսնելով բազմոցի անկյունում կուչ եկած, իբր, նկատողություն էի անում.

- Ա՜յ Աշոտ,-ասում էի,-վերեւներից եկածները հիացած են ձեր վարքով ու պահանջով... Շա՜տ են լավ տրամադրված։ Ինչո՞ւ գործի չեք դուրս գալիս։ Ի՞նչն է ստիպում, որ այսքան երկար գործադուլ անեք...

5-ի իրիկնադեմն էր, այս դիտողությանս վերջին չէի հասել, որ հեռուստացույցի էկրանին բլբլացող մոսկովյան խոսնակը Լեռնային Ղարաբաղի անունը տվեց, ապա պատմեց, որ Ազգությունների խորհրդի հանձնաժողովն է այնտեղ՝ Վոսսի գլխավորությամբ, հանդիպումներ է ունենում մարզի աշխատավորության ներկայացուցիչների հետ, որոնք բարձրագույն իշխանության ներկայացուցիչներին պատմում են տասնամյակներով կուտակված իրենց սոցիալ-տնտեսական խնդիրների մասին՝ կատարելով տարբեր, մեծ մասամբ իրար ժխտող եզրակացություններ ու առաջարկություններ, ներկայացնում՝ դարձյալ տարբեր, իրար հակասող ու մերժող պահանջներ։

«Տարբե՜ր, իրար հակասող ու մերժո՜ղ...»։

Եղբայրս անտարբեր լսում էր այդ բարբաջանքը, երբ զայրացած հայհոյեց թղթակցին, նա քմծիծաղի միջից ինձ հարցրեց.

- Բա զարմացա՞ծ էիր, թե ի՛նչն է մեզ այսքան երկար գործադուլի մեջ պահում։

◇ ◇ ◇

**Հոկտեմբերի 11-ին** Ստեփանակերտ ժամանեցին Հայաստանի ու Ադրբեջանի կուսակենտկոմների առաջին քարտուղարներ Ս. Հարությունյանն ու Ա. Վեզիրովը, ըստ տրված հայտարարությունների՝ որպեսզի գտնեն փոխզիջումային տարբերակ՝ հարցը լուծելու եւ մարզի կյանքը բնական ընթացքի մեջ դնելու համար:

Մի քանի օր անց, սակայն, Բաքվի լրատվական մարմինները հրապարակեցին հաղորդումներն այս հանդիպման առթիվ Ադր. ԿԿ Կենտկոմի բյուրոյի նիստի ընդունած որոշման մասին, որից ստացվում էր, թե ոչ մի փոխզիջման առթիվ էլ խոսք չի եղել, եւ բարձրացված հարցը մեկընդմիշտ լուծվել է ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության հուլիսի 18-ի որոշումով:

**Հոկտեմբերի 12-16-ին** Վոլսկի հանձնաժողովի հետքերով ԼՂԻՄ-ում գործում էր ԽՍՀՄ ԳԽ-ի Ազգությունների խորհրդի հանձնաժողովի մյուս կեսը՝ ԽՍՀՄ մինիստր Ի. Գլադկիի գլխավորությամբ:

**Հոկտեմբերի 18-ին** Մոսկվայում սկսվեց Սումգայիթի հակահայկական ջարդի հանցագործների դատավարությունը:

Հոկտեմբերի երկրորդ կեսին, օգտվելով Ա. Վոլսկու եւ Հ. Պողոսյանի բացակայությունից (նրանք մի քանի օր գտնվել են Մոսկվայում), Ադրբեջանի շինարարական կազմակերպությունները հապշտապ գործեր ձեռնարկեցին մարզի ադրբեջանաբնակ վայրերում, հատկապես Խոջալվում ու Մալիբեյլիում: Շինարարական եռուզեռը գլխավորում էր Շուշիի կուսակալ կարգված Թ. Օրուջեւը (Ադր. ԿԿ Կենտկոմի քարտուղար):

**Հոկտեմբերի 25-ին** Մոսկվայում ստեղծվեց Խորհրդային սոցիոլոգիական նոր միություն (ասոցիացիա), որի առաջին իսկ նիստը նվիրված էր Ղարաբաղի, ավելի ճիշտ՝ Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման խնդրի քննարկմանը: Այդ քննարկման հանգամանալից շարադրանքն ուղարկվել է ԽՍՀՄ հանրապետությունների գիտությունների ակադեմիաներին ու զանազան գիտական հաստատություններին: Նրանցից մեկն էլ, որից քաղում եմ սույն տեղեկատվությունը, գտնվում է իմ արխիվում:

Միության առաջին-հիմնադիր նիստում ելույթ են ունեցել Յա. Դաշկեւիչը, Գ. Ստարովոյտովան, Ի. Կրուպնիկը, Ս. Հարությունովը, Լ. Աբրահամյանը, Ռ. Կապլանովը, Ա. Հակոբյանը, Ֆ. Շելով-Կովեդյաեւը եւ ուրիշներ: Հանգամանորեն քննության են առնվել Ղարաբաղյան բարդույթի պատմական արմատները, ստեղծված վիճակից դուրս գալու ուղիները: Առաջարկվել են բարդույթի կարգավորման երեք տարբերակներ, որոնք տեղեկատվության մեջ տեղ են գտել բառացիորեն այս ձեւով.

1. Անմիջապես Լեռնային Ղարաբաղում հաստատել պրեզիդենտական վարչություն, որպեսզի հետո էլ ստեղծվի կոնդոմինիում (համակառավարում), վերջում էլ անցկացնել հանրաքվե՝ որոշելու ԼՂԻՄ-ի պատկանելությունն այս կամ այն հանրապետությանը (իհարկե, ժողովրդի կամքի համաձայն): Այս առաջարկությունն արել է Յա. Դաշկեւիչը՝ համոզված, որ բարդույթի նման լուծումը կիրականանա տարիների, գուցե եւ տասնամյակների ընթացքում:

2. Հենց այժմ որոշել ԼՂԻՄ-ի շրջանների պատկանելությունը մեկ կամ մյուս հանրապետությանը՝ նկատի առնելով շրջանի կամ բնակավայրի բնակչության ազգային կազմը (Գալինա Ստարովոյտովա):

3. ԼՂԻՄ-ն անմիջապես վերամիավորել Հայաստանի հետ, քանի որ փաստորեն տեղի է ունեցել հանրաքվե եւ ուրիշ եղանակներ փնտրելը լինելու է պարապ գործ, հայ ժողովրդի բաղձանքների ոտնահարում (Հայաստանի ԳԱ փիլիսոփայության ինստիտուտի գիտական քարտուղար, որի անունը չի նշված փաստաթղթերում):

Այսքանից հետո մեջ է բերված Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւի ելույթը, որ բնորոշ է եղել նիստի ընդհանուր ոգուն եւ, ինչո՞ւ չէ, նաեւ ժամանակի խորհրդային առաջադեմ մտավորականության տրամադրություններին:



«Ամենագլխավոր հարցում ես համաձայն եմ Դաշկեւիչի հետ,-ասել է Շելով-Կովեդյաեւը եւ շարունակել.-Հատկապես նրա այն տեսակետի հետ, որով ղարաբաղյան խնդրի լուծման առաջին փուլը պիտի լինի ԼՂԻՄ-ում իսկական պրեզիդենտական վարչության ստեղծումը: Կուզենայի միայն ավելացնել, որ յուրաքանչյուր կարգավորման հեռանկարում պետք է լինի ԼՂԻՄ-ի վերամիավորումը Հայաստանի հետ:

Ցանկանում եմ վճռաբար պաշտպանել Դաշկեւիչի պահանջը՝ ստեղծելու Անդրկովկասի իրական-ճշմարիտ պատմությունը: ԼՂԻՄ-ի ինքնորոշման խնդիրը չի լուծվի առանց պատմությունը հաշվի առնելու: Քանի որ մարզը համապատասխանում է բոլոր այն հատկանիշներին, որոնք պահանջվում են այն գիտականորեն, քաղաքական սկզբունքներով ճանաչելու Հայաստանի անբաժանելի մասը: Այն (Արցախ-Ղարաբաղը.-Բ.Ու») հայ ազգի էթնիկական, մշակութային ու քաղաքական ձեւավորման ընթացքի մեջ է եղել բազում դարերի պատմության համաձայն եւ, կարեւոր է ասել, այստեղ չի ընդմիջվել հայ ժողովրդի գոյությունը հնադարից մինչեւ մեր օրերը: Այդ պատճառով էլ հայ ժողովուրդը նրա վրա ունի պատմական իրավունք:

Եթե կուզեք, էական սրբագրումներ պիտի կատարել, առաջին հերթին, Ադրբեջանին վերաբերող հետազոտություններում: Անդրկովկասի պատմության մեջ Ադրբեջանի պատմաբանների կատարած կեղծարարությունների նկատմամբ 50-ական թվականներին ցուցաբերվում էր անհոգի վերաբերմունք, որը պատճառաբանվում էր նրանով, թե չունենալով պատմագիտական փորձ՝ նրանք կարիք ունեն սեփական խնդիրները հասկանալու եւ ստեղծագործական արտոնյալ պայմանների, դրա համար էլ սիստեմատիկաբար պահանջմունքների շերտաձողիկը (планка) իջեցվում-հասցվում էր նրանց մակարդակին՝ փոխանակ նպատակաուղղված ջանքերի, որպեսզի նրանք իրենք բարձրանան եւ իրենց ուսումնասիրությունները բարձրացնեն, հասցնեն համաշխարհային մակարդակի: Այս վերաբերմունքը բերել-հասցրել է նրան, որ վերջին տարիներին Զ. Բունիաթովն ու Ադր. ԽՍՀ ԳԱ մյուս անդամները նույնիսկ սկզբնաղբյուրներ հրապարակելիս բնագրի տեքստերից հանում-դեն են շպրտում ոչ միայն հայերի, այլեւ ռուսների, առհասարակ քրիստոնյաների մասին եղած հիշատակությունները Անդրկովկասի եւ ուրիշ տարածքների առումով՝ թողնելով միայն հեղինակների վիրավորական դիտողությունները այդ ժողովուրդների հասցեին:

Իսկ եթե այժմ դառնանք ավելի մոտիկ ժամանակաշրջանին, ապա ես անհրաժեշտ եմ համարում առանձին էջով տպագրել, օրինակ «Правда»-յում, ինչպես այդ արվել էր վրացական միջադեպի առթիվ, փաստաթղթերի լիակատար հավաքածու Անդրկովկասում ազգային բաժանումների վերաբերյալ (ԼՂԻՄ-ի խնդրի կապակցությամբ) 20-ական թվականների առումով: Այդ փաստաթղթերի մի մասը տպագրված է «Լեռնային Ղարաբաղ. պատմական տեղեկանք» (Երեւան, 1988) գրքում, ուրիշները բազմացված են կոմպյուտերով եւ մտել են ղարաբաղյան ու Հայաստանյան դեպքերն արտացոլող բրոշյուրների մեջ՝ սկսած 1988 թ. հունվարից:

Անհրաժեշտության դեպքում կարելի է այդ նյութերն ստուգել:

Ուզում եմ նշել նաեւ, որ Սումգայիթի կոտորածը, ըստ երեւույթին, թույլ է տալիս ազգամիջյան հարաբերությունների «ինքնատիպ» մի տարբերակ եւս դիտարկելու (քանի որ ադրբեջանցիները ծագումնաբանությամբ պատկանում են թուրք էթնոսին), ինչպիսիք էին ոչ միայն 1915, 1918, 1920 թվականների հայկական ցեղասպանությունները, այլեւ թուրք-հունական բարդույթը 1974 թ. Կիպրոսում, ինչպես եւ, ակներեւ է, դեպքերը Կոսովոյում (Հարավսլավիա) եւ հայկական նոր ջարդերը Ղազախում, Շամքորում, Կիրովաբադում ու Ադր. ԽՍՀ այլ վայրերում, որ տեղի ունեցան արդեն Սումգայիթից հետո եւ միանգամայն լռության մատնվեցին մամուլի ու իշխանությունների կողմից:

Վերջին պարագան մեզ իրավունք է տալիս հայտարարելու, որ զանգվածային լրատվության միջոցների կողմից սանձազերծված հակահայկական կամպանիան, ԼՂԻՄ-ի, Հայաստանի ու Մոսկվայի դեպքերի միակողմանի լուսաբանությունն ու նրանց պատ-

ճառերի քողարկումը ոչ թե արդյունք են լրագրողների մասնագիտական ցածր մակարդակի, վստահելի տեղեկությունների բացակայության կամ հանկարծակի հայտնված դեպքերի առաջ ղեկավարության գլուխ կորցնելու, «այլ գիտակցված-ծրագրված քաղաքականություն է՝ թելադրված իշխանությունների կողմից»:

Տեղեկագրությունն ավարտվում է Ի. Կրուտնիկի առաջարկությամբ, որպեսզի քննարկման արդյունքներն անմիջապես հրապարակվեն մամուլում եւ հասցվեն ԽՍՀՄ օրենսդիր մարմիններին՝ անպայման ուշադրության առնելու համար:

**Նոյեմբերի 2-ին** Մոսկվայից վերադարձած Հ. Պողոսյանն ու Ա. Վոլսկին Թ. Օրուջեւին հրավիրեցին մարզկոմ, կտրուկ հանձնարարեցին դադարեցնել ապօրինի շինարարությունները, իսկ Խոջալվում ու Մալիբեյլիում կանգնեցրած տնակները բնակվելու տալ միայն Ստեփանակերտից հեռացած թուրքերին եւ ո՛չ մի դեպքում Հայաստանից փախածների:

**Նոյեմբերի առաջին կեսին** Ադրբեջանի հանրապետական կազմակերպությունները եռանդուն արշավ սկսեցին մարզի ադրբեջանական բնակավայրերում բնակշինարարություն ծավալելու, նրանցում Բաքվի եւ այլ քաղաքների ձեռնարկների բաժանմունքներ ստեղծելու նպատակով: Հանրապետության լրատվական մարմինները սանձարձակ զրպարտչական հաղորդումներ էին անում մարզի հայության դեմ, կատարում գրգռիչ հայտարարություններ, մոգոնում ստեր եւ զրպարտություններ:

**Նոյեմբերի 10-ին** Շոշ գյուղի «Խաչին տափ» հանդամասում Քանաքեռի ալյումինի գործարանն սկսեց կառուցել պանսիոնատ, ինչպես նաեւ ֆիննական տնակներ՝ Շուշիից փախած հայ ընտանիքների համար:

Շատ շուտով թուրքի լրատվական մարմիններն այս շինարարության դեմ ծավալեցին հերյուրալից վայրահաչություններ: Բաքվում դրա առթիվ եղան ցույցեր ու հանրահավաքներ, որոնց նպատակն էր հանրապետության ժողովրդին ոտքի հանել հայության դեմ եւ մեկընդմիշտ լուծել տալ Ղարաբաղի խնդիրը:

**Նոյեմբերի 20-ին** Ա. Վոլսկին ժամանեց Երեւան՝ Հայաստանի ղեկավարության հետ խորհրդակցելու ԼՂԻՄ-ում եւ նրա շուրջ բորբոքված վտանգալից վիճակը կարգավորելու համար:

**Նոյեմբերի 22-ին** Ադրբեջանի հեռուստատեսությունը եթեր հանեց Բաքվի կենտրոնական հրապարակում տեղի ունեցող բազմահազարանոց հանրահավաքը, որն սկզբից մինչեւ վերջ հակահայկական էր, մոլեռանդ ամբոխի սովորական շախսեյ-վախսեյ, որի տիրապետող հանկերգն էին՝ մա՜հ հայերին, Ղարաբաղից դո՜ւրս քշել նրանց:

Նույն օրը Հայկական ԽՍՀ ԳԽ-ի նստաշրջանը դադարեցրեց իր աշխատանքը՝ առանց քննարկելու ԼՂԻՄ-ի վերաբերյալ ԽՄԿԿ Կենտկոմի, ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահության եւ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշումների կատարման մասին» հարցը, որ ծրագրված էր հանգամանորեն քննարկել եւ ընդունել ընդարձակ որոշում գործադրվելիք միջոցառումների մասին: Այդ առթիվ հրապարակվեց հետեւյալ լրատվությունը: «Նստաշրջանն ընդհատվեց Ադրբեջանական ԽՍՀ-ում եւ Հայկական ԽՍՀ-ի որոշ շրջաններում իրավիճակի խիստ սրման կապակցությամբ: Նստաշրջանին ներկա գտնվող ԼՂԻՄ-ում ԽՄԿԿ Կենտկոմի եւ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության ներկայացուցիչ Ա.Ի.Վոլսկին համառոտ ինֆորմացիա տվեց երկու հանրապետություններում ստեղծված ծանր իրադրության մասին եւ դեպուտատներից թույլտվություն խնդրեց հեռանալ նստաշրջանից, որպեսզի անմիջապես մեկնի Ստեփանակերտ:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ, դեպուտատ Հ. Ոսկանյանը առաջարկություն մտցրեց նստաշրջանի աշխատանքը շարունակել առանց մտքերի ծավալուն փոխանակության եւ որոշումներ ընդունել քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ: Սակայն Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ Ա. Մանուչարյանը հանդես եկավ հակառակ առաջարկությամբ. նստաշրջանի աշխատանքն ընդհատել երկու-երեք օրով՝ այդ բարդ իրավիճակում ժողովրդի հետ լինելու համար: Դեպուտատ Ա. Մանուչարյանի առաջարկությունը պաշտպանեցին դեպուտատներ Ս. Մուրադյանը, Ա. Ղազարյանը, Վ. Համազասպյանը, Ս. Խանզադյանը, Ա. Կիրակոսյանը:



Երկու առաջարկությունն էլ դրվեց քննարկության: Ձայների մեծամասնությամբ ընդունվեց դեպուտատ Ա. Մանուչարյանի առաջարկությունը, եւ նստաշրջանն ընդհատեց աշխատանքը:

Իրադրությունն իսկապես շատ էր սրվել: Այս հանգամանքը հանրապետության ղեկավարությանը, կուսակցական եւ խորհրդային ակտիվին, Գերագույն խորհրդի դեպուտատներին հարկադրում էր անհետաձգելի գործնական միջոցներ ձեռնարկել շրջաններում ազգամիջյան հողի վրա ընդհարումները կանխելու համար: Ադրբեջանի հայ բնակչության անվտանգության ապահովման հարցերով մշտական կապ էր պահպանվում միութենական մարմինների եւ հասարակական կարգի պահպանման ուժերի հետ:

Իրադրության կարգավորումից հետո Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի աշխատանքը կշարունակվի. («ՍՀ» թերթ, նոյ. 26):

**Նոյեմբերի 25-ին** տեղի ունեցավ կուս. Ղարմարզկոմի պլենումը, որը, նկատի առնելով շրջկոմների պլենումների, սկզբնական կազմակերպությունների, աշխատավորական կոլեկտիվների որոշումները մարզում ստեղծված իրավիճակի, Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի ու մյուս ղեկավար մարմինների հակահայկական գործողությունների, նրանց օրըստօրե սաստկացրած նվաստացուցիչ ձեռնարկումների մասին, մանավանդ Բաքվում, Կիրովաբադում, Նախիջեւանի ԻԽՍՀ-ում կազմակերպված հակահայկական բռնությունները եւ նրանց կազմակերպման մեջ Ադրբեջանի կուսակցական ղեկավարության նախաձեռնող դերը, որոշեց ընդառաջել մարզի բոլոր հայ կոմունիստների միահամուռ կամքին եւ որոշմամբ արտահայտել իր անվստահությունն Ադրբեջանի ԿԿ Կենտկոմին: Այս կապակցությամբ ընդունված որոշման մեջ նշված էր.

Որ մարզային կուս. կազմակերպության հետագա գտնվելն Ադր. կոմկուսի կազմում համարվում է անհնար եւ խնդրվում է, որպեսզի ԽՄԿԿ Կենտկոմը ղարաբաղյան կուսկազմակերպությունն ուղղակի ենթարկեցնի իրեն՝ այն կոչելով ԽՄԿԿ Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտե: Ապա խնդրվում էր, որ ԽՄԿԿ Կենտկոմն անմիջապես իրականացնի սրանից բխող միջոցառումներ:

**Նոյեմբերի 25-ին** Հ. Պողոսյանն ու Ա. Վոլսկին թռան Մոսկվա:

Նոյեմբերի վերջին օրերին փակվել էին ԼՂԻՄ մտնող ավտոճանապարհները: Հարեւան թուրքական շրջաններից տարբեր ավազակախմբերի հարձակումներ եղան մարզի հայկական բնակավայրերի վրա, քշում-տանում էին հայկական ֆերմաների անասունները, հրդեհի մատնում դեզերն ու անասնաշենքերը:

**Դեկտեմբերի 1-ին**, Հայկական ԽՍՀ մի խումբ ժողովրդական պատգամավորների հարցադրումով, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանում քննության դրվեց ԼՂԻՄ-ի խնդրի շուրջ Ադրբեջանական ԽՍՀ ու Հայկական ԽՍՀ փոխհարաբերությունների ու սրված վիճակի հարցը: Հայ պատգամավորները պահանջել էին, որպեսզի այդ առթիվ զեկուցեն նախընթացին ԼՂԻՄ-ի ու երկու հանրապետությունների վիճակին ծանոթացած հանձնաժողովը (Ա. Վոսսի գլխավորությամբ) եւ ԽՄԿԿ Կենտկոմի ու ԳԽ-ի Նախագահության ներկայացուցիչ Ա. Վոլսկին:

Ըստ երեւույթին Վոսսի հանձնաժողովը դեռեւս չէր պատրաստել իր տպավորությունների ընդհանրացումն ու առաջարկությունները: Դրա համար էլ նստաշրջանում ելույթ ունեցավ միայն Արկադի Վոլսկին:

Վոլսկու ելույթն ամբողջությամբ հրապարակվել է մամուլում: Այն շատ բնութագրական է այդ գործչի կերպարը, հոգեբանությունը, դերն ու խնդիրները պատկերացնելու համար: Իբրեւ անկեղծ ու անկաշառ մարդ ներկայացնում էր մարզի տնտեսության, ժողովրդի կենսական վիճակի քայքայվածությունը (երբ Ադրբեջանի հին ու նոր ղեկավարներն ամբողջ Միության մթնոլորտը լցրել էին այն պատկերացմամբ, թե Ղարաբաղում ամեն տեսակետից վիճակը շատ ավելի լավ է, քան Ադրբեջանում ու Հայաստանում) եւ հայ-

տներից... Դուրս քշեցինք՝ առանց թույլ տալու, որ այս պաղ դեկտեմբերին հագնեն գոնե իրենց տաք հագուստները...

Բաքվից փախած ընտանիքների զավակներից կազմված երկու մանկական հաստատություն, մեկ մանկամսուր եւ մեկ մանկապարտեզ, Սպիտակում հողի տակն են անցել: Սրա՞նց պիտի փրկեն ու օգնեն ադրբեջանցի բարբարոսները:

Նրանք այս լուրն առնելուց հետո ինչպե՞ս պիտի ապրեն աշխարհում, ինչպե՞ս պիտի նայեն ծանոթ-անծանոթի աչքերին: Թե՞ համազգային բնավորության մարմնացումը սումգայիթցի այն չարագործն էր, որ հանգիստ բացատրում էր, թե բութ գործիքներով ինչպես ջախջախեց հայ պառավ կնոջ գլուխը, ինչպես նրան վառեց ցեղակիցների սարքած խարույկի վրա... , ապա տուն գնաց, խաղաղ ընթրեց եւ տրվեց երաժշտության ու թղթախաղի (ջահել սումգայիթցու այս խոստովանությունը շատ էր «դուր» եկել լրագրողներին, եւ նրանք իրարից առնելով քանիցս հրապարակել էին):

Հաջորդ օրն իմացանք, որ Երեւանի ու մյուս քաղաքների փոստային բաժանմունքները հեղեղվել են Ադրբեջանից եկող հեռագրերով. հայերին շնորհավորում էին երկրաշարժի առթիվ, «բարեմաղթություններ» են անում, ցանկանում համանման նորանոր միջադեպեր:

Հայաստանի երկաթգծի Թիֆլիս-Լենինական տեղամասը փակվել էր ավերածության պատճառով: Մոսկվա-Երեւան գնացքները ուրիշ ճար չունեին, Բաքվով ու Հորադիզով էին Երեւան հասնում... Եւ հասնում էին ջարդոտված, խոշտանգված: Հարեւաններս տեսել էին կայարանում կանգնած մի գնացք, որի վագոնների կողքին թրքական ցնծության լոզունգներ են եղել: Նրանցից մեկը՝ “Да здравствует землетрясение, вечная слава!“:

Այ, սա՞ որ իրենք են՝ առանց երկերեսանության:

✧ ✧ ✧

Հաջորդ օրերին՝ աղետի գոտի հայտարարված Հայաստանի հյուսիսային շրջաններին Բաքվով փրկարարական բեռներ բերող գնացքները տեղ էին հասնում կողոպտված ու ավերված վիճակում: Եթե սննդամթերքով էին բեռնված եղել, ավազակների բաժին էին դարձել: Շինանյութերն էլ էին կողոպտվում: Իսկ անտուն մնացած անհամար խեղճերի համար ուղարկված տնակները ջարդոտված էին լինում այնպես, որ ջարդոնը միայն վառելիքի տեղ կարող էր ծառայել: Քանի՜ վագոն էր տեղ հասել քարացած ցեմենտով, հեղուկ վառելիքի փոխարեն ջուր լցրած հսկա տակառներով, անճանաչելիորեն փշրված-ավերված բուժսարքավորումներով... Բողոքներին ու քրեական պատասխանատվության կանչող փաստաթղթերին ի պատասխան՝ մեկ անգամ հեռուստաէկանին ցույց տվին ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների մինիստրին, եւ սա հուզված խոսնակի անհանգստությանն անվրդով պատասխանեց, թե հայերի գանգատները չափազանցված են. նմանատիպ դեպքեր լինում են նաեւ Հայաստանից ելնող գնացքներում, եւ դրանց դեմ էլ Ադրբեջանի տուժված բնակիչների գանգատներին վերջ չկա:

... Իսկ աղետի գոտում եւ հատկապես Լենինականում ահավոր ավերածություն էր:

**Դեկիտեմբերի 7-ին** էր, որ կալանավորեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ Ռաֆայել Ղազարյանին (ՀԽՍՀ ԳԱ-ի թղթակից անդամ), Աշոտ Մանուչարյանին, Դավիթ Վարդանյանին, Համբարձում Գալստյանին, 10-ին՝ Լեւոն Տեր-Պետրոսյանին, Վազգեն Մանուկյանին, Բաբկեն Արարքցյանին, Ալեքսան Հակոբյանին, Սամվել Գեւորգյանին, 15-ին՝ Իգոր Մուրադյանին, 24-ին՝ Վանո Սիրադեղյանին ու Սամսոն Ղազարյանին, ապա նաեւ Խաչիկ Ստամբոլցյանին, Արցախի «Կռունկ» կոմիտեի ղեկավար Արկադի Մանուչարովին, Երեւանից էլ՝ մի քանի տասնյակ երիտասարդների, որոնք, թեպետ եւ ոչ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ, սակայն երեւի վտանգ էին ներկայացնում Հայաստանի այն օրերի ղեկավարության համար:

Հավաստի աղբյուրներում ասում էին՝ կալանքի ենթակաների ցուցակները կազմում էր



ՊԱԿ-ի նախագահը, քննության դնում կուսակցության Կենտկոմի քարտուղարությունում եւ, վերջինիս հրահանգն ստանալուց հետո միայն անցնում գործի: Ասում էին նաեւ, թե «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին կալանքի տակ առնելու հրաման տրվել է Միխ. Գորբաչովի կողմից, չնայած ձերբակալման առաջին օրինակների ժամանակ այդ Գորբաչովը եղել է ԱՄՆ-ում: Իհարկե, հնարավոր է, որ նա հրահանգ տված լիներ ուղեւորությունից առաջ, իսկ երկրաշարժի գոտի այցելելով (դեկտեմբերի 10-11-ին) համոզվել է, որ քչերն են փակի տակ առնված, եւ ժողովուրդն առաջվա պես կրակված է ղարաբաղյան խնդրով, կաթվածահար խոսեց մթնոլորտի շիկացման հավանական մեղավորների մասին, նրանց բնութագրեց որպես հանրապետության իշխանությունը նվաճելու ձգտումների, այսինքն՝ հեղաշրջում կազմակերպողների: Իսկ սա այն ժամանակվա նորմերով՝ հանձնարարություն էր այդքան մեծ հանցագործության ծրագրողներին մեկուսացնելու...

Ուշադրության արժանի է «Ղարաբաղ» կոմիտեի անդամների վարքն ու գործը բնութագրող Գորբաչովյան մի խոսքը, որը, դժբախտաբար, հետագայում պետք է իրականանար այնպիսի ճշգրտությամբ, կարծես ընդհանուր առմամբ կարճամիտ ու անհեռատես այդ մարդը հենց միայն «Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ անսխալական կանխագուշակող էր դարձել: Երեւանին հրաժեշտ տալիս ասել էր. «Ի՞նչ է, դուք մտածում եք, որ այդ «Ղարաբաղ» կոմիտեականների շատ մեծ հո՞գսն է ժողովրդի վիճակը, կամ հենց Ղարաբաղի ցա՞վն է նրանց տանջում: Ո՛չ, նրանք ասպարեզ են իջել իշխանության հասնելու համար, եւ հենց սա էլ նրանց վերջնական նպատակն է»:

**Դեկտեմբերի 11-ին**, Երեւանից Մոսկվա թռչելուց առաջ օդանավակայանում Գորբաչովը կենտրոնական հեռուստատեսության համար տված հայտարարության մեջ անդրադարձավ նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրին: «Ես կարծում եմ, Ղարաբաղի խնդիրը, որպես այդպիսին, առկա է,-ասաց նա:-Այն արմատներ ունի, եւ այն սրվել է նրանից, որ այդ բնակչությանը ինչ-որ շրջանում նախկին ադրբեջանական ղեկավարությունը (միայն նախկի՞ն.-Բ.ՈՒ.) վերաբերվել է ո՛չ ճիշտ, ո՛չ լենինյան ավանդույթների ոգով եւ երբեմն պարզապես ո՛չ մարդկային: Դա էլ մարդկանց վիրավորել է: Դա մենք քննարկում ենք: ... Իսկ Ղարաբաղի խնդիրը կգրավի իր այն տեղը, որ պետք է ունենա»:

Ահա այսպե՛ս. ինչ-որ ժամանակ նախկին ղեկավարությունը վիրավորել է իր անմարդկային վերաբերմունքով, հիմա նորերը ներողություն կխնդրեն, ինքն էլ մի երկու մխիթարական խոսք կասի... Այսպես մակերեսային, անբանական ու տխմար: Իբր, ինքը չի վիրավորել եւ հենց այդ ցանցառ խոսքով չէր վիրավորում...

**Դեկտեմբերի 12-ին** Լաչինի շրջանի Փառաջան (մինչեւ 1920 թվականը հայկական Փառաջանք) եւ Սուարասի գյուղերից զինված ասպատակիչների խմբեր են հարձակվել Հադրութի շրջանի Խծաբերդ ու Արփագյադուկ գյուղերի վրա, քշել-տարել ավելի քան 100 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Նույն գիշեր շուրջ 50 զինյալ թուրքեր խուժել են Արփագյադուկ, կրակ բացել անպաշտպան տների վրա, ապա պահանջել, որ բնակիչները գյուղը թողնեն, հեռանան 3 օրվա ընթացքում, ապա թե ոչ, պիտի բնաջնջվեն: Միայն Հադրութի զորամասից ժամանած ջոկատի միջամտությամբ ասպատակիչները ժամանակավորապես հանգիստ թողեցին հայկական գյուղը:

**Դեկտեմբերի 15-ին** երկրաշարժի գոտու փրկարարական աշխատանքները ղեկավարող, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովն ու ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Ն. Սլյունկովը Երեւանում ընդունեցին ԼՂԻՄ-ից եկած պատվիրակությունը, որի կազմում էին մարզգործկոմի նախագահի տեղակալ Շ. Պետրոսյանը, մարզի ավտոտրանսպորտի ղեկավար Բ. Դադամյանը եւ ուրիշներ:

Ռիժկովը խոստովանեց, որ աղետի գոտում անգամ Ղարաբաղի խնդիրը հուզում է բոլորին: Այդ նշանակում է՝ ամենաասարսափելի ողբերգությունն իսկ նրա անմիջական զոհերի հիշողությունից չի ջնջել այդ հարցը: «Մենք պետք է անպայման լուծենք: Դա մեր ոչ միայն պետական-քաղաքական, այլեւ մարդկայնական պարտքն է»,-հավաստիացրել է Ռիժկովը:

✧ ✧ ✧

10 օրվա ընթացքում արցախահայության մի զգալի մասը մարզի փոխադրականն ու տեխնիկական ամբողջ ուժն առած, Աղետի գոտում էր, փրկարարական գործին էր մասնակցում, առաջին օգնությանն ու հայրենակիցների կյանքի կարգավորմանը:

Առաջին տաս օրվա ընթացքում, նախորդ ամբողջ տարում լոկ գործադուլներով ու ցույցերով ապրած արցախահայությունն աղետի գոտուն նվիրեց՝ ինչ-որ կարող էր, ինչ-որ կարելի էր նվիրել, միայն դրամ՝ 4.477.800 ռուբլի...

Թուրքի լրատվական բերանները ոռնում էին, թե այս ղարաբաղցիները մի գլուխ հարայ են տալիս՝ իբր վատ են ապրում, նեղվածքի ու զրկանքների մեջ, բա որտեղի՞ց այդքան դրա՜մ, ամեն օր ավտոշարասյուներով փոխադրվող մթերքնե՜րը...

Գողության ու ավազակության վարպետները որտեղի՞ց իմանային, թե հարազատին վերջին շապիկն անգամ նվիրելու, ուտելիքի վերջին պատառը կիսելու մարդկային օրենքներ էլ են լինում...

✧ ✧ ✧

**Դեկտեմբերի 20-ից** մի քանի գիտնականների ու լրագրողների ուղեկցությամբ Ստեփանակերտում էր ակադեմիկոս Անդրեյ Սախարովը: Մինչ այդ նա Բաքվում ու Երեւանում հանդիպել էր երկու հանրապետությունների ակադեմիաների ու հասարակայնության ներկայացուցիչների հետ: Զրույցներ ունեցավ Ա. Վոլսկու եւ մարզի ղեկավարների հետ, մեծ գիտնականը եւ խումբը (պ.գ.դ. Լեոնիդ Բատկին, Գալինա Ստարովոյտովա, Անդրեյ Զուբով, Ելենա Բոններ եւլք) եղան նաեւ Շուշիում, հանդիպեցին շրջանի ղեկավարության, աշխատավորության ներկայացուցիչների հետ: Ապա Ստեփանակերտում հանդիպեցին եւ երկար ու հանգամանալից զրույց ունեցան Բաքվից, Սումգայիթից, հեռու-մոտիկ ուրիշ շրջաններից փախստական դարձած հայ մարդկանց հետ:

Ակադ. Սախարովի խումբն Ստեփանակերտից դուրս եկավ դեկտ. 24-ին:



# 1989

**Հունվարի 4.** Ադրբեջանի ու Հայաստանի հանրապետական թերթերը հրապարակեցին երկու հանրապետությունների կուս. կենտկոմների, Գերագույն խորհուրդների ու Մինիստրների խորհուրդների կոչերն այն քաղաքացիներին, որոնք թողել էին մշտական բնակության վայրերը: Առաջարկվում էր վերադառնալ, ապրել իրենց բնակավայրերում, քանի որ դրա համար ապահովվում է իշխանությունների բազմակողմանի աջակցությունը:

**Հունվարի 6-ին** Մ.Ս. Գորբաչովը ԽՄԿԿ Կենտկոմում գիտության ու մշակույթի ներկայացուցիչների հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտնեց, որ մի քանի օր հետո, հունվարի 11-ին, վերստին շոշափվելու է «ցավոտ հարցը»: Հանդիպմանը մասնակցած Հայաստանի ԳԱ նախագահ Հր. Հովհաննիսյանի այն առաջարկությանը, թե «Պետք է վերացնել ազգամիջյան թշնամանք ստեղծող բոլոր պատճառները», Գորբաչովը պատասխանել է այսպես. «Ես պետք է հիշեցնեմ, որ մեզ մոտ ստեղծված է իմ նախագահությամբ Քաղբյուրոյի հանձնաժողով՝ երկու կողմերի՝ Ադրբեջանի ու Հայաստանի դեպուտատների մասնակցությամբ: Հունվարի 11-ին մենք պետք է ավարտենք ցավոտ հարցի քննարկումը: Մենք ստիպված էինք ընդմիջել այն պատճառով, որ երկրաշարժ էր եղել: Տեղի էր ունեցել սարսափելի աղետ: Սակայն արդեն նշանակել ենք այդպիսի հանդիպում 11-ին...»:

Իսկ ի՞նչ պիտի տար այդ հանդիպումը: Արդյո՞ք ոչ այն, ինչ նախորդ հանդիպումները, որոնք, ինչքան էլ բարձր մակարդակի հորջորջված, ավելին չէին, քան սովորական անպտուղ խոսքուզրույցը:

**11-ին** սրտատրոփ սպասում էինք որեւէ բախտորոշ լուրի: Հանրապետական ու միութենական լրատվական մարմիններն այդ առթիվ քար լռություն պահպանեցին, եւ մենք մի գիշեր էլ անցկացրինք անքուն քրքրվելով:

Առավոտյան ժ. 9-ը չկար, որ հեռախոսն աղմկոտ զանգեց, եւ հեռախոսավարուհին ասաց՝ «Պատասխանեք Ստեփանակերտին»: Վարդան Հակոբյանն էր, ողջունեց ուրախ-ուրախ, ապա խառնվեցին Գուրգեն Գաբրիելյանն ու Հրաչիկ Բեգլարյանը, եւ եռաձայն խորը ցնծությամբ հաղորդեց՝ «Բաժանել են, է՜, բաժանել են: Էլ ոչ մի կապ չունենք թուրքի հետ, ո՛չ մի կապ: Այս գիշեր Բաքայանն է զանգել Մոսկվայից, եւ հիմա ամբողջ մարզն իրար խառնված է»:

Առաջին պահի չկարողացա խոսք գտնել, արձագանքել տղաների ցնծությանը:

Մի արտասովոր երջանկությամբ էլ չէի համակված, որ ասեմ՝ դրանից էր, լեզուս կապ էր ընկել: Ուղղակի անսպասելի էր: Որքան էլ սպասված, որքան էլ այսպիսի լուծումը օրակարգի պահանջ ու տեւական երազանք... Լուծումն ինքն արդեն շշմեցուցիչ էր: Գուցե նրանից, որ պահանջում էինք եւ միաժամանակ գիտեինք, թե ի՛նչ ահավոր ուժեր են կանգնած մեր արդար պահանջի դեմ: Ուրեմն եւ նրանք անհնար պիտի դարձնեին հարցի լուծումը: Ուրեմն, մենք, որքան էլ համոզված մեր հարցի արդարության մեջ, միշտ էլ ունեինք նաեւ նրա լուծման անհնարինության գիտակցությունը...

Ես միշտ էլ մտածել եմ, որ այս լուրին չպիտի դիմանամ:

Սակայն ոչինչ էլ տեղի չունեցավ: Ավելի ճիշտ՝ աստիճանաբար ինձ գտա, խոսեցի, մանրամասներն իմացա: Հետո էլ խնդրեցի, որ հայրենակիցներին իմ անունից էլ շնորհավորեն:

... Եւ սպասեցինք լրատվական մարմիններին: Իսկ սրանք, ինչպես ամբողջ տարվա ընթացքում, ուշացան, ուշանալուց էլ կակազեցին, թերասացությամբ ու երկդիմի խոսքերով հաղորդեցին իրողությունը: Կարծես շարունակում էին ստուգել ժողովրդի համբե-

րությունը:

**13-ի** երեկոյան էր կարծեմ, «Ժամանակով» հաղորդեցին, թե Ադրբեջանի ու Հայաստանի ներկայացուցիչները հավաքվել ու որոշել են՝ երկու ժողովուրդների եղբայրական բարեկամությունն ամրապնդելու նպատակով Ադրբեջանական ԽՍՀ ԼՂ-ի ինքնավար մարզում սահմանել կառավարման հատուկ ձեւ:

Այսքան բան, որն անտեղյակ զանգվածներին ոչինչ լուրջ բան չասելով՝ գրգռում էր եւ ավելի բորբոքում: Եւ պատահողը մի գլուխ իր զայրույթն էր արտահայտում, բա այսպես էլ խայտառակությո՞ւն կլիներ, մի ամբողջ տարի ազգը լարված պահելով՝ անլեզու, անխիղճ որոշում ընդունեցին, ոնց որ էլի մուկ ու կատու են խաղում:

**Հունվարի 12-ին** Մոսկվայում տեղի էր ունեցել Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարների խորհրդակցություն ԼՂԻՄ-ի խնդրի առթիվ:

Նույն օրն էլ գումարվեց ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության նիստ, որը, քննելով ԼՂԻՄ-ի խնդիրը, ընդունեց հետեւյալ հրամանագիրը՝ մարզում կառավարման հատուկ ձեւ մտցնելու մասին:

«ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

Ադրբ. ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում կառավարման հատուկ ձեւ մտցնելու մասին:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում եւ նրա առնչությամբ ազգամիջյան հարաբերությունների շարունակվող լարվածության կապակցությամբ, նպատակ ունենալով կանխել դրանց հետագա սրումը եւ կայունացնել իրադրությունն այդ ռեգիոնում, հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ կուսակցական ու պետական մարմինների, ինչպես նաեւ Ազգությունների խորհրդի հանձնաժողովի առաջարկությունները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը, այդ հարցը քննության առնելով Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության հետ, ԽՍՀՄ Սահմանադրության 119-րդ հոդվածի 14-րդ կետին համապատասխան որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում ժամանակավորապես մտցնել կառավարման հատուկ ձեւ՝ պահպանելով Լեռնային Ղարաբաղի, որպես Ադրբեջանական ԽՍՀ կազմում ինքնավար մարզի, կարգավիճակը:

Կազմել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Հատուկ կառավարման կոմիտե՝ ընկ. Ա. Ի. Վոլսկու նախագահությամբ:

Դադարեցնել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի քսաներորդ գումարման ժողովրդական դեպուտատների խորհրդի լիազորությունները մինչեւ խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Կառավարման հատուկ կոմիտեն անմիջականորեն ենթարկվում է ԽՍՀ Միության պետական իշխանության եւ կառավարման բարձրագույն մարմիններին, լրիվ ծավալով օժտված է ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի եւ նրա գործադիր կոմիտեի լիազորություններով, իսկ Կոմիտեի նախագահը՝ ժողովրդական դեպուտատների մարզային գործադիր կոմիտեի նախագահի իրավունքներով ու պարտականություններով:

Հիշյալ կոմիտեի վրա դնել Լեռնային Ղարաբաղի պետական իշխանության եւ կառավարման տեղական մարմինների ղեկավարումը, ինչպես նաեւ նրան հանձնել ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի ապարատը՝ որպես աշխատանքային մարմին:

3. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում գտնվող միութենական եւ հանրապետական ենթակայության ձեռնարկությունները, հիմնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաեւ նրանց մասնաճյուղերը, արտադրամասերն ու մյուս կառուցվածքային ստորաբաժանումները սույն հրամանագրի գործողության ժամանակամիջոցում, այն հարցերում, որ կորոշի ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը՝ հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի կարծիքը, ենթարկվում են Կոմիտեին:



Մամուլի, ռադիոյի եւ հեռուստատեսության, զանգվածային լրատվության մյուս միջոցների մարմինները, հրատարակչությունները, պոլիգրաֆիական ձեռնարկությունները, ներքին գործերի մարմինները, ինչպես նաեւ մշակույթի, ժողովրդական կրթության, առողջապահության հիմնարկություններն ու ոչ արտադրական ոլորտի մյուս կազմակերպությունները, անկախ իրենց ենթակայությունից ու գերատեսչական պատկանելությունից, իրենց գործունեությունն իրականացնում են Կոմիտեի կամ նրա լիազորած անձանց անմիջական ղեկավարությամբ:

Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում դատախազության ու դատարանի գործունեությունն իրականացվում է գործող օրենսդրության ու այն կարգի համաձայն, որ կսահմանեն համապատասխանաբար ԽՍՀՄ գլխավոր դատախազը, ԽՍՀՄ արդարադատության մինիստրությունը եւ ԽՍՀՄ գերագույն դատարանը:

4. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Հատուկ կառավարման կոմիտեին իրավունք տալ.

Դադարեցնել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական, ավանային խորհուրդների, նրանց գործադիր եւ կարգադիր մարմինների լիազորությունները, ինչպես նաեւ նշանակել հիշյալ տեղական խորհուրդների ընտրություններ եւ կազմակերպել դրանց անցկացումը:

Դադարեցնել հասարակական կազմակերպությունների եւ ինքնագործ միավորումների՝ ԽՍՀՄ սահմանադրությանն ու օրենսդրությանը հակասող գործունեությունը կամ, անհրաժեշտության դեպքում, արձակել դրանք: Հանրապետական կամ ընդհանուր միութենական մարմիններ ունեցող նշված կազմակերպությունների ու միավորումների գրանցումը կամ արձակումը կատարվում է այդ մարմինների հետ համաձայնեցնելով:

Անհրաժեշտության դեպքում պետական, տնտեսական եւ սոցիալ-մշակութային շինարարության հարցերի առթիվ առաջարկություններ ներկայացնել անմիջականորեն ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահություն, ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդ, ԽՍՀՄ մինիստրություններ, պետական կոմիտեներ ու գերատեսչություններ:

5. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում ժամանակավորապես դադարեցնել «Պետական ձեռնարկության (միավորման) մասին» ԽՍՀՄ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ ու 5-րդ կետի երրորդ պարբ. եւ 7-րդ հոդվածի գործողությունը:

6. Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությանը՝ ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

7. Սույն հրամանագիրը կիրարկել 1989 թ. հունվարի 20-ից:

*ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության նախագահ՝ Մ. Գորբաչով,*
*ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության քարտուղար՝ Թ. Մենթեշաշվիլի:*
*Մոսկվա, Կրեմլ, 1989 թ. հունվարի 12»:*

Միաժամանակ հաստատվեց նաեւ Կառավարման հատուկ կոմիտեն՝ բաղկացած հետեւյալ ութ հոգուց.

Կոմիտեի նախագահ՝ Ա. Ի. Վոլսկի (ԽՄԿԿ Կենտկոմի մեքենաշին. բաժնի վարիչ),
Կոմիտեի անդամները. Վ. Մ. Միշին (Համ. պրոֆմիության քարտուղար),
Վ. Ա. Սիդորով (ԽՄԿԿ Կենտկոմի ենթաբաժնի վարիչի տեղակալ),
Ս. Ա. Կոսորեւ (Ներքին զորքերի գեներալ-մայոր),
Վ. Վ. Պլիսով (ԽՍՀՄ ծանր մեքենաշինության մինիստրի տեղակալ),
Ս. Ա. Բաբայան (ԼՂԻՄ-ի մարզգործկոմի նախագահ),
Վ.Ա. Թովմասյան (ԼՂԻՄ-ի ժող. վերահսկողության կոմիտեի նախագահ),
Վ.Դ. Ջաֆարով (կուս. Շուշիի շրջկոմի առաջին քարտուղար):

Այստեղ տեղին է հիշել, որ Կոմիտեի ստեղծման առթիվ Կենտրոնը վերացրել էր նաեւ կուսակցության մարզկոմը: Ավելի ճիշտ՝ մարզկոմը գոյություն ուներ, սակայն առանց քարտուղարների: Սա էլ պատրվակ էր առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանից ազատ-

վելու համար:

Վերջին հարցը «լուծվել էր» առանց պատճառաբանության կամ իրավաբանական որեւէ բացատրության: Սակայն բոլորին հայտնի էր, որ Կենտրոնն այդ քայլին գնացել է՝ ընդառաջելով Ադրբեջանի ղեկավարությանը, որի կարծիքով՝ Արցախը փոթորկված էր Պողոսյանի նախաձեռնությամբ, եւ միայն նրանից ազատվելով է, որ հնարավոր պիտի լինի մարզը քաշել իրենց լծի տակ: Երեւի թե նոր Կոմիտեն նրանց համար որեւէ վտանգի հեռանկար չի ներկայացրել, որովհետեւ հույս են ունեցել, թե փորձված միջոցներով իրենց ազդեցության կենթարկեին Կոմիտեի ղեկավարությանը, եւ հետո հարցերն իրենց օգտին լուծելը կդառնար խաղ ու պար:

Անկասկած, Ադրբեջանի ղեկավարության համար գայթակղիչ խայծ են հանդիսացել նաեւ հրամանագրի մի քանի արտահայտությունները՝ կապված «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» կապակցության հետ եւ, մանավանդ, «պահպանելով Լեռնային Ղարաբաղի, որպես Ադրբեջանական ԽՍՀ կազմում ինքնավար մարզի կարգավիճակը» խոստումը... Չնայած հրամանագիրն ուշադիր ընթերցելու դեպքում կարելի էր նկատել շատ ավելի կարեւոր հանգամանքներ, որոնք նորաստեղծ Կոմիտեն, ուրեմն եւ նրա կառավարման ներքո գտնվող մարզը, հիմնովին դուրս են բերում Ադրբեջան կոչված հանրապետության իշխանության ոլորտից եւ ամեն տեսակետից ենթակա դարձնում լոկ միութենական մարմիններին:

Պատահական չէ, որ Բաքվում սկզբից իսկ որոշ տարրեր թուր ու թվանքով դիմավորեցին այս միջոցառումը, սրանց գրգռած ամբոխն էլ առավել բորբոքվեց, եւ, այսպես կոչված, ժողովրդական տարերքը դարձավ անկառավարելի:

Չի կարելի ասել, թե որոշման հրապարակումը վերջ տվեց թյուրիմացություններին, եւ հասարակության բոլոր խավերն ստացան լիակատար պատկերացում պետական կարեւորագույն միջոցառման մասին: Չեմ խոսում գռեհկության մասին, որովհետեւ նույնիսկ նրանք, որոնց կես-նպատակին եղել է մարզի բաժանումն Ադրբեջանական ԽՍՀ-ից, հիմա փորձում էին հրամանագրի մեջ չտեսնել դրա ապահովումը: Մարդ Աստուծո,-ասում եմ,-է՞լ ինչպես խոսեմ, որպեսզի հասկանաք, որ Ղարաբաղի գլխին այլեւս Ադրբեջան ու ադրբեջանական շովինիզմ չի լինելու: Ասում էին. «Չե՞ս տեսնում սողանցքները. «կորոշի ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը՝ հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի կարծիքը», եւ 6-րդ կետը՝ «Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ»:

– Հետո՞: Եւ դուք էլ մտածում եք, որ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությունը պիտի համարձակվի չընդունե՞լ սույն հրամանագրից բխող որոշումները: Կամ նա պիտի ունենա ուրի՞շ կարծիք, քան իրեն հուշել են այս հրամանագիրն ընդունողները: Իսկ այն, որ Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությանն «են թողնում» ընդունելու «սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ», օրինական է, սահմանադրական: Չէ՞ որ ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան կետն է պնդում, թե փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տարածքային ու վարչաքաղաքական հարցեր լուծելիս հարեւան հանրապետությունները պիտի համաձայնության գան, հակառակ դեպքում ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն է ընդունում որոշում եւ իր այդ որոշումը պարտադրում նրանցից այն մեկին, որը համաձայնության չէր գալիս:

Մենք տարիներ շարունակ դեմ էինք առնում ԽՍՀՄ Սահմանադրության այն կետին, որն Ադրբեջանին իրավունք է տալիս օգտվելու բռնակալի իրավունքից ու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը չվերադարձնելու իսկական տիրոջը: Դեմ էինք առնում այդ չարաբաստիկ պատնեշին եւ պահանջում էինք, որ երկրի գերագույն կառավարությունը վերացնի բռնակալի իրավունքը, ստիպի, որ նա համաձայնությամբ ու համերաշխությամբ հարգի մեր իրավունքը... Պահանջում էինք ու երազում: Եւ հիմա, երբ գերագույն կառավարությունը վերջապես հարգել է մեր խնդիրք- պահանջ- երազանքը, երբ բռնացող կողմին ստիպում է սեփական որոշումներով ընդառաջել սույն հրամանագրին ու Ղարաբաղի հայությանը, ամբողջ հայ ժողովրդի պահանջին, ի՞նչ անենք, վեր կենանք ու դե՞մ կանգնենք:



Ինչ վերաբերում է անջատմանը, որն ըստ էության մեր հարցի վերջնական լուծումը չէ, այլ կիսակատարը, դա եւս հասկանալի է ու բնական: Երբ փետրվար-մայիս ամիսներին հարցը խճճվել էր վերջնականապես, եւ վերին կառավարությունն էլ միայն որոշումներ էր ընդունել մարզի սոցիալ-տնտեսական վիճակը կարգավորելու համար, մենք ուրիշ պահանջ չունեինք, քան անջատումը: Ես հիշում եմ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Ազգությունների խորհրդի նախագահ Վոսի պատվիրակության հանդիպումները մարզի աշխատավորության ներկայացուցիչների հետ: Վերջիններս պահանջում էին բաժանում եւ ուրիշ ոչինչ: Հասկանալի է, մարդիկ այլեւս հույս չունեին հարցի վերջնական լուծման վրա եւ թերատ լուծումն էլ համարում էին փրկություն: 92-ամյա Մամիկոն Խաչիյանի՝ մեր մարզի հին ու ազնիվ ղեկավար-աշխատավորի, բաղձանքն այն էր, որ մարզն անջատված տեսներ ու նոր հրաժեշտ տար այս աշխարհին: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանն ասում էր. «Մենք սխալ ենք սկսել: Պիտի նախ ապահովեինք անջատումը, որից հետո միացումը ոչ մի դժվարություն չէր ներկայացնի»: Եւ այնուհետեւ էլ նա էր, որ երկրի ղեկավար մարմինների առաջ դրեց մեր հարցի աստիճանական՝ ըստ էտապների լուծելու խնդիրը:

Հիմա ապահովվում է առաջին էտապը՝ անջատումը, որ ամենադժվարն է:

Ոմանք մոլորություն ունեն կարծելու, թե հնարավոր է, որ այսպես բաժանված որոշ ժամանակ պահելուց հետո գերագույն կառավարությունը մեկ էլ մարզը վերադարձնի Ադրբեջանին: Սա, իհարկե, ամեն ինչից վախեցած մարդկանց մոլորությունն է, որը ոչ մի հիմք չունի, թե չէ, էլ ի՞նչ կարիք պիտի լիներ այսքան աղմուկ հանելու համար: Մանավանդ, որ բաժանվելով՝ մարզն առավել հեռանալու է Ադրբեջանից, առավել կապվելու է մայր Հայաստանին: Այն ժամանակ ո՞ր խելագարի մտքով պիտի անցնի առաջարկել, որ ազգային ինքնավար մարզը վերադարձվի նախկին ստրկական վիճակին:

**Հունվարի 13-ին**, նախորդ օրը ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության ընդունած հրամանագրի իրականացման նպատակով, ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդն ընդունեց որոշում, որը կոչվում է «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը ղեկավարման նոր ձեւ մտցնելու հետ կապված միջոցառումների մասին»:

Այս որոշման առաջին կետով ԽՍՀՄ Պետպլանին ու Ֆինանսների մինիստրությանը հանձնարարվում էր ԽՍՀՄ պետական բյուջեի մեջ, սկսած 1989 թվականից, հատուկ տողով նախատեսել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման կարեւորագույն ցուցանիշները, ինչպես նաեւ 1988-ի մարտի 24-ին ընդունած որոշմամբ տրված հանձնարարությունների կատարման համար անհրաժեշտ միջոցները... Պետպլանին՝ հատուկ տողով առանձնացնել նյութա-տեխնիկական այն միջոցները, որոնք անհրաժեշտ են նշված խնդիրներն իրականացնելու համար: Նմանապես կամ այս խնդիրներից բխող հանձնարարություններ՝ նաեւ միութենական ուրիշ մինիստրություններին ու գերատեսչություններին եւ վերջում՝ Կառավարման հատուկ կոմիտեն ստացված հանձնարարականների, որոշումներով նշված միջոցառումների կենսագործման առթիվ պիտի կանոնավոր զեկուցի ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին (այսինքն՝ նրանից վար ոչ ոքի ենթակայության մասին խոսք չկա):

Նույն օրը Բաքվում գումարվեց հանրապետության կուսակցական ակտիվի նիստ, որն իր հավանությունը տվեց ԼՂԻՄ-ը Կառավարման հատուկ կոմիտե մտցնելուն: Հասկանալի է, որ Ադրբեջանի ղեկավարությունը, նրա հետ էլ՝ փողոցներն ու հրապարակները լցված ամբոխները, համարյա իրականացած տեսնելով իրենց պահանջը՝ մարզի ինքնավարությունը վերացնելու վերաբերյալ (չէ՞ որ Կառավարման հատուկ կոմիտեի առկայությամբ փաստորեն վերացվել էին մարզգործկոմը եւ կուսակցության մարզկոմը) եւ հատկապես Հենրիկ Պողոսյանին «աքսորելով» մարզից (այդ օրերին նա մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից ազատվել էր «հիվանդության» պատճառով, իբր, իր դիմու-

մի համաձայն, եւ բնակության տարվել Մոսկվա), համաձայն էին ցանկացած տարբերակի հետ՝ երեւի հուսալով, թե հետագայում լեզու կգտնեն այդ փոքր չարիքների հետ:

**Հունվարի 20-ից** արդեն գործող Կառավարման հատուկ կոմիտեի նախագահ Ա.Ի. Վոլսկին ամսի 26-ին Բաքվում հանդիպում ունեցավ կուս. Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խ. Վեզիրովի, երկրորդ քարտուղար Վ.Պ. Պոլյանիչկոյի եւ պետպլանի նախագահ Ա. Ն. Մութալիբովի հետ, պայմանավորվեց այն միջոցառումների առթիվ, որոնք պիտի իրականացվեին մարզում (չնայած Վոլսկին կարող էր գործել եւ առանց նման պայմանավորվածության):

**Հունվարի 28-ին** Ա. Ի. Վոլսկին ժամանեց Երեւան, հանդիպում եւ զրույց ունեցավ կուս. Կենտկոմի առաջին քարտուղար Ս.Գ. Հարությունյանի հետ, պայմանավորվեցին մարզի ինքնուրույն գործունեության, մանավանդ սոցիալ-տնտեսական, մշակութային եւ ուրիշ բազմաթիվ հարցերի լուծման համար ստացած ինքնուրույնության, դրանից օգտվելու առավել ճիշտ ու օգտակար եղանակների եւ խնդիրների մասին:

Հունվարի վերջերին Ստեփանակերտ ժամանեց ԽՍՀՄ ներքին գործերի նախարար Վ.Վ. Բակատինը եւ որոշեց ԼՂԻՄ-ի ներքին գործերի վարչությունն ուղակի ենթարկեցնել ԽՍՀՄ ներքգործնախարարությանը:

Գործունեության առաջին շաբաթներին Ա. Ի. Վոլսկին ու կոմիտեի մյուս աշխատողները բազմաթիվ հանդիպումներ ունեցան մարզի արդյունաբերական ու գյուղատնտեսական կոլեկտիվներում, լուծեցին շատ ու շատ հարցեր, որոնց հանդեպ նախընթացին քար անտարբերություն էին պահպանում հանրապետության ղեկավարները:

Հունվարի վերջին Ստեփանակերտ ժամանեցին ԽՍՀՄ Մամուլի ու հրատարակչությունների կոմիտեի ներկայացուցիչները եւ մարզում ստեղծեցին տարածքային հրատարակչական միավորում, որն իրավունք ուներ սկսելու գրական-գեղարվեստական պարբերականների եւ առհասարակ ինքնուրույն գեղարվեստական գրականության հրատարակություն:

Որոշվեց Ստեփանակերտի կոշիկի ֆաբրիկայի գործունեությունը կապել Երեւանի համանման, բարձր որակավորում ունեցող ձեռնարկների հետ, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանը մտցնել Հայաստանի «Լույս» միավորման մեջ, կահույքի ֆաբրիկան՝ Հարավ-կահույք միավորման հետ, ամենակարճ ժամանակում կարգավորել մշակութային ամեն տեսակ կապերը Հայաստանի հետ... Նախորդ տասնամյակների թմբիրից հանվում էր նաեւ հոգեւոր կյանքը. որոշվեց բացել-գործի դնել մարզի հոգեւոր-եկեղեցական երկու համբավավոր կենտրոնները՝ Գանձասարն ու Ամարասը:

**Փետրվարի 9-ին** Կոմիտեի միջնորդությամբ հրապարակվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն.Ի. Ռիժկովի կարգադրությունը, որով թույլ էր տրվում արցախյան ավանդական խմիչքի՝ թթի օղու արտադրությունը:

**Մարտի 26-ին**, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունների օրը, ԼՂԻՄ-ից դեպուտատներ ընտրվեցին Արկադի Վոլսկին, Հենրիկ Պողոսյանը, Զորի Բալայանը, Վահան Գաբրիելյանը, Վաչագան Գրիգորյանը, Բորիս Դադամյանը եւ Վ. Ջաֆարովը:

Մարտի վերջին ու ապրիլին Հատուկ կառավարման կոմիտեն, գրելով մարզգործկոմի մի շարք բաժիններ, ստեղծեց նրանց փոխարինող միավորումներ (բնակարանային-կոմունալ տնտեսության, բնակչության կենցաղային սպասարկման, բնության պահպանության եւն), որոնք պիտի ենթարկվեին միայն Կոմիտեին եւ ոչ մի առնչություն չունենային հանրապետական գերատեսչությունների հետ: Սա, իհարկե, ապահովում էր այդ բնագավառների լիակատար անկախությունը հանրապետությունից, սակայն միաժամանակ վերացնում էր մարզի ինքնավարությունն ապահովող սահմանադրական այն վերջին օղակները, որ մնացել էին մարզգործկոմն ու մարզկոմը գլխատելուց հետո:

Միաժամանակ բացահայտվում էին եւ Կոմիտեի անձեռներեցությունն ու անկարողությունը մարզի սոցիալ-տնտեսական խնդիրները՝ նախորդ որոշումներով նախատեսված շրջանակներում իրականացնելու գործում, քանի որ միջոցները եւ առհասարակ



նյութա-տեխնիկական հնարավորությունները դեռեւս մնում էին հանրապետության ձեռքում, իսկ ճանապարհների շրջափակման եւ ուրիշ այլեւայլ սադրանքների հետեւանքով խաթարվում էին մարզի տարածքում սկսվող համարյա բոլոր նախաձեռնությունները: Եւ դրա կողքին էլ Ադրբեջանը մարզի ադրբեջանական բնակավայրերում սկսել էր շինարարական ու բարեկարգչական մի այնպիսի եռուզեռ, որն ամենայն հավանականությամբ կլանելու էր մարտի 24-ի հայտնի որոշման իրականացումն ապահովելու համար բաց թողնված շուրջ կես միլիարդ ռուբլին: Հանրապետական «Վըշկա» թերթի մայիսի 11-ին հրապարակված մի թղթակցության համաձայն՝ միայն Խոջալու գյուղում ծավալվել էր եւ բուռն թափով առաջ էր գնում տեքստիլ ֆաբրիկայի, Բարդայի կարի ֆաբրիկայի բաժանմունքի, հզոր ավտոշարասյան, հիվանդանոցի, նոր միջնակարգ դպրոցի, մշակույթի պալատի եւ սոցիալ-տնտեսական ուրիշ բազմաթիվ օջախների շինարարությունը: Եւ սա էլ այն դեպքում, երբ հարեւան հայկական գյուղերում բացարձակապես ոչինչ չէր կառուցվում եւ չէր էլ կառուցվելու, քանի որ չկային շինանյութեր եւ ուրիշ առաջին անհրաժեշտության միջոցներ:

**Մայիսի 3-ին** մարզի չորս շրջանների կուսակցական բոլոր ղեկավարները (քանի որ մարզն այլեւս չուներ իր սահմանադրական մարմինները) երկրի ղեկավար Մ.Ս. Գորբաչովին հղեցին մի նամակ, որը պատմում էր ոչ միայն այս բոլորը, այլեւ ժողովրդի զայրույթն ու վճռականությունը՝ աներեր պայքարով հասնելու ինքնավար մարզի ազատ անկախությանը:

Կարեւոր էին նամակի մի շարք դիտողությունները, որոնք վերաբերում էին Կառավարման հատուկ կոմիտեին եւ ցույց էին տալիս նրա գործունեության արմատական թերությունները: Ահա դրանցից ամենակարեւորը. «Այն տպավորությունն է ստեղծում, թե Կառավարման հատուկ կոմիտեն մարզն ադրբեջանականացնելու գործում զբաղեցնում է հանրապետության ղեկավարությանն աջակցողի դիրքը»: Ապա նշվում էր. «Մենք կարծում ենք, որ Կառավարման հատուկ ձեւը չպետք է փոխարինի տեղական կուսակցական ու խորհրդային մարմինների կառուցվածքին, այլ պետք է վեր կանգնի նրանցից՝ փոխարինելու հանրապետական ղեկավարությանը, որը լրիվ վարկաբեկել է իրեն եւ նախկին շովինիստական քաղաքականությունն է շարունակում Լեռնային Ղարաբաղի նկատմամբ»:

«Չնայած Ձեր այն հայտարարություններին, թե ազգամիջյան խնդիրները կարող են եւ պետք է լուծվեն վերակառուցման ընթացքում, Ադրբեջանի ղեկավար Ա. Խ. Վեզիրովը բազմիցս հրապարակավ հայտարարել է, թե ԼՂԻՄ-ի խնդիրը լուծված է վերջնականապես ու անդարձ: Ըստ այդմ նա հենվում է անձամբ Ձեզ հետ հաճախակի ունեցած հանդիպումների ու զրույցների վրա»:

Այս ու նմանօրինակ վճռական խոսքերից հետո շրջանների ղեկավարներն զգուշացնում էին, թե ստեղծվել է մի վիճակ, որ հղի է անկանխատեսելի հետեւանքներով եւ պահանջում էին հանդիպում ունենալ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ ու գտնել ճգնաժամային վիճակից դուրս գալու ելքը» («Խորհրդային Ղարաբաղ», մայիսի 9):

**Մայիսի 4-ին** ԼՂԻՄ-ից ընտրված ԽՍՀՄ ԳԽ-ի դեպուտատները համանման մի նամակով դիմեցին Հայաստանի ղեկավարությանը՝ հայտնելով, որ ԼՂԻՄ-ի Կառավարման հատուկ կոմիտեի երկդիմի կեցվածքը մարզը չփրկեց Ադրբեջանի տիրապետությունից, եւ դա մարզի համար դարձել է առավել կոպիտ ու կործանարար: Պարզվում է, որ, եթե առաջ մարզի տեր հայության ինքնորոշման ու ինքնավարության քաղաքական խնդիրը վերածվել էր սոցիալ-տնտեսական վերափոխումների ծրագրի, հիմա էլ մարզի սոցիալ-տնտեսական վերակառուցում նշանակում է մարզի ադրբեջանական գյուղերի սոցիալ-տնտեսականա ծաղկում, մարզի ադրբեջանականացում:

Իսկ ինչո՞ւ այս ամենի հանդեպ միայն անտարբեր դիտող է դարձել Հայաստանը,-հարցնում էին դեպուտատները եւ պահանջում, որ մայր հայրենիքի ղեկավարությունը վճռական քայլեր կատարի, կանխի մարզի վերջնական կործանումը:

ղեկավարները, փոխվել են կոչերն ու լոզունգները, բայց այդ քաղաքականությունը գործել է անփոփոխ ու անխափան։

Իսկ հիմա՞ ինչ է կատարվում։ Փոխվե՞լ է որեւէ բան։ Ո՛չ, անհնար է։ Մոսկվան մարզը ողբերգական վիճակից հանելու համար բաց է թողել 450 միլիոն ռուբլի։ Այդ 450 միլիոնը ճանապարհին լովել-մնացել է Բաքվում, մենք երեսն էլ չենք տեսել։ Եւ դրանից բացի, փողը դադարում է արժեք ներկայացնելուց, դառնում է լոկ թուղթ այն ժամանակ, երբ չի ապահովվում ֆոնդերով, մանավանդ շինանյութերի, սարքավորումների ֆոնդերով։ Իսկ այդ ֆոնդերը մեզ էլի Բաքուն պիտի հատկացնի, սակայն չի հատկացնում...

Այս եւ հաջորդ դիտողությունների ունկնդիր Գորբաչովը մարդ լիներ, արժանապատվություն ունենար, գլուխը պատով կտար, կասեր՝ իմ մեղքո՛վ է շարունակում տառապել այս ժողովուրդը, հարցը լուծենք միանգամից, մարդկանց փրկենք այդ ադրբեջանական դժնդակ գերությունից...

Դաղամյանը վերջում նույնիսկ ղարաբաղյան խնդրի լուծման մի նախագիծ-որոշում էլ ներկայացրեց։ Սակայն ոչի՜նչ, ասես ոչինչ էլ չէր եղել, համագումարի ղեկավարության ականջները խուլ էին, աչքերը՝ փառով ծածկված։ Իսկ դահլի՞ճը... Դահլիճը, ինչպես ասում են, ըմբռնումով, տրտմությամբ ընդունեց։ Ասում են՝ ընդմիջումներին Դաղամյանը միշտ էլ շրջապատված էր բարեկամացած, հետաքրքրասեր, ցավակից պատգամավորների խմբերով։ Լրագրողների հարցումներին պատասխանելով՝ Մարիի մարզից պատգամավոր Պ. Եմելյանովն ասել է. «Մենք մեծ հետաքրքրությամբ էինք լսում Բ.Վ. Դաղամյանի ելույթը։ Նա ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի պատմությունը, ինքնավար մարզի այսօրվա վիճակը։ Ես չգիտեի այդ բոլորը։ ԼՂԻՄ-ի բնակչության պահանջը համարում եմ արդար։ Այդ խնդիրը պետք է լուծել առանց հետաձգելու, ճշմարտության ու արդարության հիման վրա»։ Իսկ Յու. Աֆանասեւը՝ հանրաճանաչ մոսկովյան գիտնականը, գտնում էր, որ «Համագումարը կունենա բավականաչափ արիություն եւ հասուն իմաստնություն, որպեսզի լուծի ղարաբաղյան խնդիրը» (ռուս. «Կոմունիստ», հունիսի 2)։

Կունենա՞։ Չունեցավ, որովհետեւ նրա սանձերը Գորբաչովի ու գործակից, համախոհ հայատյացների ձեռքին էին գտնվում։

Իսկ Արցախում հանրահավաքներ էին, գործադուլներ, ժողովրդական բողոքի ու ցասման դրսեւորումներ, որովհետեւ մարզի վիճակն օրեցօր դառնում էր անտանելի, ադրբեջանական շրջապատն իր ճիրաններն էր սրում գիշեր-ցերեկ, խստացնում շրջափակումը։

◇ ◇ ◇

Աշխարհահռչակ իրավապաշտպան Անդրեյ Սախարովը հունիսին տված մի հարցազրույցում (այն վարել է Գրիգ. Ցիտրինյակը) գտնում էր, որ կայսերապետական համակարգն իր բոլոր այլանդակություններով հատկանշական է եղել ոչ միայն Խորհրդային Միությանը, այլեւ նրա սահմաններից ներս գտնված այն հանրապետություններին, որոնց կազմի մեջ էին մտնում ազգային փոքրամասնությունների տարբեր կազմավորումներ, քանի որ այս վերջինների համար էլ այդ հանրապետություններն էին դարձել կայսրություններ, միայն թե ավելի փոքր մասշտաբների։ Այդ պատճառով էլ առաջարկում էր ԽՍՀՄ փոխարեն ստեղծել կոնֆեդերացիա, որի մեջ ինքնավարության հավասար իրավունքներով ու պարտականություններով օժտված կլինեն բոլոր հանրապետությունները (միութենական ու ինքնավար), մարզերն ու օկրուգները, որոնք, մինչեւ այժմ ունեցած տարբեր անունների փոխարեն, կստանան մեկ ընդհանրական անուն՝ հանրապետություն, եւ կմտնեն կոնֆեդերացիայի մեջ, իրար հետ հարաբերություններ վարելիս կլինեն անկախ ու հավասարիրավ, կենթարկվեն միայն համադաշնության (կոնֆեդերացիա) օրենքներին։ Այս պայմաններում, «Օրինակ, Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը չի պատկանա ո՛չ Հայաստանին, ո՛չ Ադրբեջանին, կլինի ինքնուրույն եւ կստանա իրավունք



մտնելու տնտեսական եւ այլ հարաբերությունների մեջ նրա սահմաններում, ում որ ինքը կցանկանա» («Օգոնյոկ», 1989, N 31)։

**Հունիսի 2-ին** Երեւանի «Կոմունիստ» (ռուս.) թերթը տպագրեց անվանի պատմաբան Լեոնիդ Խուրշուդյանի հոդվածը՝ «Ազգային հարցը երեկ եւ այսօր», որը նվիրված էր ղարաբաղյան բարդույթին՝ նրա ակունքից մինչեւ նոր արծարծումները եւ ցույց էր տալիս, որ անհնար է այդ խնդրի լուծումը հնավանդ եղանակով, մինչդեռ վերին մարմինները, իբր թե, շահագրգռված լուծման եւ արցախահայության ճակատագրի լուսավոր էջ բացելու ցանկությամբ, ոչ մի կերպ չեն հրաժարվում անիծյալ անցյալի տխուր ժառանգությունից։ Տեսե՛ք, կառավարման նոր ձեւ են պարգեւել Ղարաբաղին, որին սկզբից եւեթ՝ զրկել են ինքնուրույնությունից ու անկախությունից, քանի որ կոմիտեն իր գործը պետք է իրականացնի Ադրբեջանի Մինիստրների խորհրդի հետ հաշվի նստելով։ Իսկ թե այդ Մինիստրների խորհուրդն ի՞նչ հաշիվներ ունի Լեռնային Ղարաբաղի հետ, այդ էլ պարզ է անցյալ տասնամյակների պատմությունից։

Գիտնականն առաջարկում էր հետեւյալը. «Ինքնավար հանրապետություններն ու ինքնավար մարզերը պետք է տրվեն համամիութենական ենթակայության։ Անհրաժեշտ է ստեղծել «Ազգային գործերի միութենական կոմիտե»։ Դրանով փաստորեն կվերականգնվի 1924 թ. ապրիլի 9-ին վերացված Ազգային գործերի ժողովրդական կոմիսարիատը»։

Այս արժեքավոր առաջարկությունը հար եւ նման էր այն օրերին մեծ տարածում ունեցող կոնֆեդերացիայի (համադաշնության) ստեղծման առաջարկին, որի հեղինակն էր մեծն Ա. Սախարովը։

**Հունիսի 15-ին**, Ա. Ի. Վոլսկու հայտնի միջնորդումներից շուրջ կես տարի հետո, հրապարակվեց Հայաստանի Մինիստրների Խորհրդի որոշումը ԼՂԻՄ-ի պատմական հուշարձանների վերանորոգումների ու վերականգնումների գործին ցույց տալիք օգնության մասին։

**Հունիսի 19-ին** Մ. Գորբաչովը կատարեց ԼՂԻՄ-ի շրջանների ղեկավարների մայիսի 3-ին գրած նամակի խնդրանքը՝ մարզի մի խումբ ղեկավար աշխատողների հետ հանդիպելու վերաբերյալ։ Հանդիպումը տեղի ունեցավ, երկրի ղեկավարն «ուշադրությամբ լսեց» մարզի ներկայացուցիչներին, խոստացավ ամենակարճ ժամանակում վերականգնել մարզխորհուրդը, Կառավարման հատուկ կոմիտեին տրված իրավունքները դարձնել հաստատուն, մարզը ենթարկեցնել բացառապես կենտրոնին, որպեսզի նրա հետ այլեւս ոչ մի առնչություն չունենա Ադրբեջանը։

**Հունիսի 23-ին** սկսվեց Հայկական ԽՍՀ ԳԽ-ի նստաշրջանը, որը պիտի քններ նաեւ ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ Կենտրոնի ընդունած որոշման իրականացնելու ընթացքը։ Արձանագրելով այդ ընթացքի անբավարարությունը, նստաշրջանը նշեց միջնորդումներ, որոնք պետք է օգնեին աշխատանքի բարելավմանը։ Որոշվեց հարց բարձրացնել Կենտրոնի առաջ Կառավարման հատուկ կոմիտեի կարգավիճակի բարձրացման, ինչպես նաեւ ազգային հարցերի առթիվ ԽՍՀՄ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ։

Հայաստանի ղեկավարությունն ուզում էր ժողովրդին ցույց տալ, թե ինքն էլ գործ է կատարում։

**Հունիսի 27-ին** Ստեփանակերտի բազմահազարանոց հանրահավաքում ելույթ ունեցան հունիսի 19-ին Գորբաչովի հետ հանդիպում ունեցածներից մի քանի հոգի, պատմեցին զրույցի, Գորբաչովի տված խոստումների մասին։ Իսկ տեղական աչքաբացները բացատրեցին, որ հանդիպումից հետո առավել վատթարացել է մարզի վիճակը. Ադրբեջանը պարզապես անտանելի է դարձրել ճնշումը վերեւից ու կողքերից։

**Հուլիսի 1-ին** կենտրոնական հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Գորբաչովը՝ ժողովրդին կոչելով զգաստության ու հավասարակշռության՝ ազգամիջյան փոխհարաբերություններում, եղբայրական համագործակցության ու փոխադարձ հարգանքի՝ ֆեդերատիվ Միության բոլոր գոտիներում։

Կարծես դա էլ կոչ էր Ադրբեջանական ԽՍՀ տերերի համար։ Բաքվում սկսվեցին հա-

այժմ այնտեղ վիճակը սրվել է ծայրահեղորեն: Ավելի ճիշտ՝ առկա են համարյա քաղաքացիական պատերազմի բոլոր նշանները»:

**Օգոստոսի 30-ին** Հայաստանի Գիտությունների ակադեմիայի եւ համալսարանի ստեղծագործական կազմակերպությունների ներկայացուցիչների միացյալ ժողովը հրապարակեց հռչակագիր, որով հավանություն էր տալիս ԼՂԻՄ-ի սահմանադրական մարմինների, հասարակական-քաղաքական կազմակերպությունների ողջ հայ բնակչության վճիռը՝ մարզն Ադրբեջանից անջատելու եւ Խորհրդային Հայաստանին միացնելու վերաբերյալ, որը նշանակում է ոչ թե սահմանների վերաձեւում, այլ պատմական անարդարության, բռնության ու հայ ազգի ամբողջության դեմ կատարված ոտնձգության վերացում: Հավանություն էր տրվում վերջին օրերին ստեղծված «Ազգային խորհրդին՝ իբրեւ մարզի իշխանավարության ժողովրդավարական օրգանի», պահանջում էր ամենակարճ ժամկետում ԽՍՀՄ ԳԽ-ի առաջիկա նստաշրջանում քննել եւ լուծել ԼՂԻՄ-ի հարցը՝ նկատի առնելով նրա տեր հայության վճռական կամքը եւ ինքնորոշման իրավունքը:

**Օգոստոսի 31-ին** ԼՂԻՄ-ի պրոֆխորհուրդների 8-րդ պլենումն ընդունեց որոշում, որով Հայաստանի Պրոֆխորհուրդների միությանը խնդրում էր մարզի խորհուրդների սպասարկումն ընդունել իր հովանու տակ, իսկ Պրոֆմիությունների համամիութենական խորհրդին՝ քննելու եւ դրական լուծում տալու միջնորդությանը:

**Օգոստոսի 7-ից մինչեւ սեպտեմբերի 1-ը** Ժնեւում կայացավ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ենթահանձնաժողովի նիստը, որը քննարկեց մի շարք հարցեր՝ ազգային փոքրամասնությունների իրավունքները, ինքնորոշման իրավունքը, բռնությունը, մարդու իրավունքների եւ ազատությունների խախտումը, ինչպես նաեւ իրադրությունը Լեռնային Ղարաբաղում ու նրա շուրջ: Նշվեց, որ արցախահայության պահանջն ու խաղաղ ցույցերը առաջացրել են ադրբեջանցիների զայրույթն ու ավերիչ ատելությունը, որոնց արդյունքի ցայտուն արտահայտությունները դարձան 1988-ի փետրվարյան ու նոյեմբերյան ջարդերը: Սրանց հետեւանքով էլ՝ առաջին բռնագաղթերը, զանգվածային փախստականությունները: Հարցի սահմանադրական լուծման բացակայության եւ ավելորդ ու հակաօրինական քաշքշուկներն ադրբեջանական կողմին հնարավորություն տվին շարունակելու խտրականության հին քաղաքականությունը եւ առավել խորացնելու բարդույթը,- նշեց ենթահանձնաժողովի նիստը, ապա որոշեց ԽՍՀՄ կառավարությանն անել հետեւյալ առաջարկությունը. Լեռնային Ղարաբաղում անցկացնել հանրաքվե՝ այդ գոտու բնակչության մեծամասնության կամքը որոշելու նպատակով, ինչպես նաեւ բացահայտել, ամբողջությամբ հանրության դատին ներկայացնել 1988-ի փետրվարին ու նոյեմբերին Ադրբեջանում իրականացված հակահայկական ջարդերի ու բռնությունների մանրամասները:

Դժբախտաբար, ո՛չ ՄԱԿ-ի ենթահանձնաժողովը կատարեց, ավարտին հասցրեց իր նախաձեռնությունը, ո՛չ էլ իրավասու միութենական ու միջազգային կազմակերպությունները նման նախաձեռնություն ցուցաբերեցին, եւ գորբաչովյան անհեռանկար քաղաքականությունը հարցը տարավ, մտցրեց փակուղի:

**Սեպտեմբերի 1-ին** ԽՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցավ Ադրբեջանի ու Հայաստանի կուսակցական ղեկավարների հանդիպումը քաղբյուրոյի անդամներ Ն. Սլյունկովի ու Վ. Չեբրիկովի հետ: Զրույցը գնաց, իհարկե, Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ, եւ քանի որ հրավիրված չէին Ղարաբաղի ներկայացուցիչները, մանավանդ զրույցը ղեկավարում էր ո՛չ թե հարցի լուծման իրավասու ղեկավարը՝ Կենտկոմի գլխավոր քարտուղարը, այլ քաղբյուրոյի շարքային անդամներ, ընդունվեց ու հրապարակվեց հերթական մի դատարկաբանություն, որը կարելի էր նետել ճահճացման շրջանի արխիվը: Ահա նրա հատվածներից մեկը. «վերականգնել ավանդական կապերը հասարակական-քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքի բնագավառներում: Եւ գլխավորը՝ ապահովել յուրաքանչյուր ընտանիքի, յուրաքանչյուր մարդու անվտանգությունը» («Պրավդա», 1989, սեպտ. 1):

Այդ օրվա երեկոյան հանկարծ ԼՂԻՄ-ի ամբողջ տարածքի հեռուստացույցների էկ-



րաններին, տեղական հեռուստահաղորդումների ալիքի փոխարեն, հայտնվեցին եթերահենության «հերոսները», որոնք դրանից հետո պետք է արցախահայությանը զրկեին սեփական, ինչպես նաեւ մոսկովյան հաղորդումներ ընդունելու հնարավորությունից եւ եթերը լցնեին Շուշիից տրվող հակահայկական վայնասունով:

Հաջորդ օրերին Բաքուն եռում էր հանրահավաքների ու գործադուլի եռուզեռով, որի ալիքները հասել էին հանրապետության մյուս, հատկապես հայաբնակ քաղաքներն ու շրջանները: Ազգամիջյան բախումները, հայերի դեմ կազմակերպված ջարդերն ու ավազակային զինված հարձակումները դարձել էին սովորական, որովհետեւ դրանք հովանավորվում ու հրահրվում էին հանրապետության ղեկավարության կողմից: Հայտնի են իրավապահ մարմինների, կուսակցական ու խորհրդային ղեկավար աշխատողների ելույթները, որոնք պարունակում էին բացահայտ կոչեր համախմբվելու, անողոք կռիվ մղելու հայերի դեմ:

Այդ կոչերի առաջին արձագանքներն էին կատաղած ամբոխի հարձակումները հայկական սրբությունների, պատմական ու այլազան հուշարձանների վրա: Վայրենի մոլուցքը հիմա էլ ոչնչացրեց մարշալ Հովհ. Բաղրամյանի կիսանդրին Կիրովաբադ-Գանձակում:

Այդ օրերին զինված ադրբեջանցիների մի խումբ Շուշիից պարբերաբար հարձակումներ էր գործում Բերդաձորի ենթաշրջանի հայկական գյուղերի վրա: Եղցահողի դեմ կազմակերպված գրոհը խափանվեց, եւ ՆԳՄ զորամիավորման կողմից կալանքի տակ առնվեցին երկու ավազակներ: Այդ պատճառով էլ **սեպտեմբերի 3-ին** ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նախագահությունը որոշեց դիմել Հայկական ԽՍՀ ղեկավարությանը՝ խնդրելով մարզ մտցնել հանրապետության Ներքգործմինիստրության զորքեր՝ ապահովելու հայ բնակչության անվտանգությունը:

Ազգային խորհրդի Նախագահությունը համապատասխան բովանդակությամբ մի դիմում-հեռագիր էլ հղեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ:

**Սեպտեմբերի 11-ին** միության լրատվական մարմինները հաղորդեցին, թե ԼՂԻՄ-ում պատանդ է վերցվել ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի վարչության պետ գեներալ-գնդապետ Վ. Շատալինը: Չհաղորդվեցին դեպքի մանրամասները, եւ կարելի էր կարծել, թե այդ «ղարաբաղցի ծայրահեղականները» հիմա էլ Կենտրոնին են ձեռնոց նետել: Հետո, սակայն, պարզվեց, որ Շուշիի ադրբեջանցիներն են ձերբակալել Շատալինին եւ պահանջում են ազատ արձակել Եղցահողի մատույցներում կալանքի տակ առնված երկու ավազակներին: Գործարքը տեղի ունեցավ. երկուսի ազատ արձակվելուց հետո ազատություն ստացավ նաեւ գեներալը՝ երեւի խոստանալով, որ դրանից հետո ինքն ու իր հրամանով գործող զորամասերը կանեն այն, ինչ Ադրբեջանի ավազակներին է ձեռնտու:

**Սեպտեմբերի 12-ին** «Իզվեստիայում» տպագրվեց ԽՍՀՄ ԳԽ-ի Ազգությունների պալատի նախագահ Ռ. Նիշանովի պատասխանները թղթակցի հարցերին: Գորբաչովի ձեռնասունն ու Կենտրոնում մուսուլմանության իրավունքների պաշտպանն այնտեղ Արցախի խնդրի առթիվ ասում էր. «Լիակատար որոշակիությամբ կարող եմ պնդել, որ ոչ ոք չի պատրաստվում ոտնձգություն կատարել Ադրբեջանական ԽՍՀ ինքնավար իրավունքների, նրա սահմանների վրա»: Ուրեմն, Ադրբեջանն ազատ է շարունակելու հակահայկական իր չարագործությունները:

**Սեպտեմբերի 15-ին** Ադր. ԽՍՀ ԳԽ-ի նստաշրջանում քննարկվում էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վիճակի հարցը: Ո՛չ զեկուցողը (Ն.Ս. Ֆաթալիեւ), ո՛չ էլ ելույթ ունեցողները՝ կուսակցական ու խորհրդային ղեկավար աշխատողներ, գրողներ ու գիտնականներ, չէին կարողանում զսպել իրենց ազգայնամոլ, վայրենի կրքերը, խոսել մարդկային լեզվով, չափի ու կշռի տակ դնել արտահայտությունները՝ գոնե նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ խառնաժողովն անմիջապես հաղորդվում էր հեռուստատեսությամբ:

Հայհոյանքը, զրպարտությունները, ամբաստանություններն ու հաշվեհարդարի կոչերը հորդում էին նրանց բերաններից, մեծ մասամբ անկառավարելի դահլիճի շարքերից, եւ

ոչ թե Գերագույն խորհուրդը: Դրա ընդհատման մեր պայմանները մնում են ուժի մեջ. ամենից առաջ Հայաստանը պետք է հրաժարվի Լեռնային Ղարաբաղի հանդեպ տարածքային հավակնություններից: Ընդհանրապես, ես գտնում եմ, որ դա շրջափակում համարել չի կարելի: Պարզապես մենք դադարեցրինք Հայաստանին տալ այն, ինչը նախկինում տալիս էինք անվճար՝ մեր նավթը եւ մեր մթերքները...»:

Ինչպես խմբագրությանը հաղորդեցին Հայկական ԽՍՀ պետմատում, հարյուր հազար տոննա բեռներից, որոնք ամեն օր (մինչեւ շրջափակումը) Հայաստանն ստանում էր ադրբեջանական երկաթուղով, ապրանքների միայն 3-4 տոկոսն էին ադրբեջանական արտադրության («Մոսկովսկիե նովոստի», 40, 1989 թ. հոկտ. 1):

**Հոկտեմբերի 6-ին** «Արգումենտի ի ֆակտի» (N39) շաբաթաթերթը հրապարակեց հարցազրույց ԼՂԻՄ-ի Կառավարման հատուկ կոմիտեի անդամ Վ.Ա. Սիդորովի հետ: Խոսքն սկզբից մինչեւ վերջ վերաբերում էր Արցախի խնդրի լուծմանը, եւ Սիդորովը պնդում էր, թե «լուծումը դժվար է լինելու: Բայց պետք է լուծել, այն էլ առանց ուշացնելու: Հարցը չափազանց հասունացել է»: Այն լուծելիս պետք է նկատի առնել ոչ թե ադրբեջանական կամ հայկական գործոնը, այլ միայն եւ միայն «ազգային ինքնորոշման գաղափարը»: «Անկասկած, այստեղ կարող են լինել իրողությունը նկատի առնելու մի շարք փուլեր: Այսօր, օրինակ, ես չեմ տեսնում ուրիշ որեւէ համարժեք, քան Հատուկ վարչությունն է, ԼՂԻՄ-ի ժամանակավոր ենթակայությունը Կենտրոնին: Ժամանակավոր՝ մինչեւ այն պահը, երբ կմարեն կրքերը եւ հնարավոր կլինի հարցը լուծել հիմնավոր կերպով»:

Ուրեմն, Ղարաբաղի հարցը պիտի լուծել՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի առումով, առանց կանգ առնելու ուրիշ որեւէ խնդրի առաջ: Սակայն, քանի հիմա ազգամիջյան բախումների ծանր շրջանն է, հարկ է ժամանակավորապես հետաձգել հարցի լուծումը, որպեսզի կրքերը մարեն... Իսկ այս «ժամանակավորապես» ամենահարմար ձեւն էլ Հատուկ կոմիտեն է, որը, ինչպես վերը տեսանք, գործում է հօգուտ արցախահայության շահերի, այսինքն՝ Արցախն Ադրբեջանից անջատելու եւ Հայաստանի հետ վերամիացնելու հեռանկարով:

Կարո՞ղ ենք մտածել, թե Սիդորովը, միութենական թերթում հանդես գալով, արտահայտում էր լոկ իր անձնական կարծիքը եւ ոչ թե այն, ինչ մտածում էր նաեւ իր նախագահը, ինչ նպատակով գործում էր Հատուկ կոմիտեն: Իհարկե, ո՛չ: Հակառակ դեպքում Ա. Վոլսկին որեւէ կերպ կհասկացներ, թե Սիդորովի խոսքերի տերը միայն ու միայն ինքը՝ Սիդորովն է... Բայց նման բան տեղի չունեցավ:

**Հոկտեմբերի 10-ին** ԽՍՀՄ ԳԽ-ի նստաշրջանը քննեց Ադրբեջանի ղեկավարության կողմից ԼՂԻՄ-ի ու Հայաստանի շրջափակման հարցը: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալը, որ այդ ժամանակ գլխավորում էր Հայաստանի աղետի գոտում իրականացվող աշխատանքները, իրատես, ճշմարիտ տեղեկանք ներկայացրեց շրջափակման մասին, դատապարտեց այն: Իսկ ԳԽ-ի նախագահ Ա. Լուկյանովը մանվածապատ խոսքով համարյա պաշտպանեց շրջափակումը... Վերջն էլ ընդունվեց մի որոշում, որը ոչ ոքի ոչինչ չէր պարտավորեցնում: Շրջափակումը կարելի էր շարունակել:

Հայ պատգամավորները լքեցին նստաշրջանը՝ Նախագահությանը հղելով թուղթ, որով դատապարտում էին կատարվածը:

Նույն օրն Արցախի պատգամավորները եւս բողոքի դիմում թողեցին նստաշրջանի նախագահությունում՝ արտահայտելով իրենց զայրույթի խոսքը Կենտրոնի գործողությունների դեմ: **Սեպտեմբերի 25-ից** Ադրբեջանը հռչակել էր իր անկախությունը, որը միայն մեկ բան է նշանակում, որ այն անկախ ու ազատ է արցախահայությանը խեղդելու, դուրս մղելու նրա ավանդական հայրենիքից,-գրված էր այդ բողոքի թղթում:-Իսկ Կենտրոնն իր անտարբերությամբ խրախուսում է ադրբեջանական չարությունը, անտարբեր դիտում, թե ինչպես նա նույնիսկ վերացված է համարում մարզի ինքնավարությունը, մարզի տարածքում հաստատում արտակարգ դրություն, որ նշանակում է լոկ անպատիժ չարագործություն հայ բնակչության դեմ:



Արցախի պատգամավորների թուղթը հիշեցնում էր Ադրբեջանի ղեկավար Վեզիրովի մի խոսքը՝ արտահայտած իրենց ԳԽ-ի նստաշրջանում. «Փախստական ադրբեջանցիները բոլորն էլ եկել են մեր հանրապետություն, իսկ հայերը... ով որտեղ կարո՛ղ էր.-Վեզիրովի երջանիկ հայտնությունն է:-Դուք հասկացա՞ք, ես ինչ եմ ուզում ասել... Սահմանադրության 70-րդ հոդվածը նոր ձեւով պիտի արտագրել: Ձեւակերպենք, որ հանրապետության հողն ու տարածքը անբաժանելի են, այսինքն՝ այնպես, ինչպես Թուրքիայում»:

Ահա թե Վեզիրովն ինչպես կարողանում էր նույնիսկ փախստականների ճակատագրի դառնությունից օգտվել...

**Հոկտեմբերի 10-ը** երեւի թե արտասովոր ամենաողբերգականն էր մինչ այդ եղած վատ օրերից:

Այդ օրը մի ավտոշարասյուն Շուշիից Սվերդլովսկի ռազմական ինչ-որ ուսումնարանի սաներ պիտի փոխադրեր Գանձակ: Ճանապարհն ուղիղ կտրելու փոխարեն, մտավ Ստեփանակերտ (հասկանալի է, քաղաքի բնակչությանը վրդովեցնելու եւ նոր սադրիչ գործողություններ հրահրելու նպատակով)՝ առանց մարզի ու քաղաքի ղեկավարներին նախապես հայտնած լինելու: Քաղաք մտնելուց հետո էլ փողոցներն էր չափում վարից վեր, մեքենաները դղրդացնելով, սուլիչների հրեշավոր ռռնոցներով: Եւ երբ այս վայրենի տեսարանը դիտելու համար անտեղյակ բնակիչները դուրս էին եկել փողոց, մեքենաներից սկսեցին կրակել նրանց վրա: Վիրավորվեցին մեկ տասնյակի չափ անմեղ մարդիկ, որոնցից մեկը՝ բանվոր Սպարտակ Հակոբյանը, վախճանվեց:

Հետաքրքիր է, որ այսքանից հետո էլ հատուկ շրջանի պարետ գեներալ-մայոր Վ. Սաֆոնովը վերեւներին մոլորեցրեց՝ զեկուցելով, թե ավտոշարասյան Ստեփանակերտ մտնելու մասին մարզի ներքգործվարչությունը նախօրոք տեղեկացված է եղել:

Միութենական լրատվական մարմինները տեղի ունեցածը համարեցին «բախում շարասյան պահակախմբի ու տեղական բնակչության միջեւ»:

Իսկ Հայաստանի ԳԽ-ը հոկտ. 15-ին բացված իր նստաշրջանում քննարկման հենց առաջին հարց դարձրեց Ստեփանակերտում կատարված ողբերգությունը (զեկուցող՝ ՀԿ Կենտկոմի երկրորդ քարտուղար Օլեգ Լոբով): Ընդունված որոշման մեջ, դատապարտելով խաղաղ բնակչության դեմ կիրառված հանցագործությունը, նստաշրջանը հարց էր հարուցում, որպեսզի ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հանձնաժողով ստեղծի կատարվածը հանգամանորեն քննելու եւ հանցագործների դեմ համապատասխան միջոցներ գործադրելու համար:

**Հոկտեմբերի 16-ին** տեղի ունեցավ Արցախական աշխարհի հնագույն հոգեւոր կենտրոնի՝ Ամարասի վանքի վերաբացումը: Գրիգոր Լուսավորիչն է հիմնադրել սրբարանը, պապի հիմնադրած տաճարի կառուցումն ավարտին է հասցրել թոռ Գրիգորիսը՝ Արցախի թեմի առաջին առաջնորդը:

Ամարասի գործունեության վերարծարծումը կատարվեց մարզի բոլոր կողմերից ժամանած բազմահազար հայերի մասնակցությամբ:

**Հոկտեմբերի 19-ին** տեղի ունեցավ ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի նիստը, որը քննարկեց մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ին ընդունած որոշումն իրականացնելու համար ձեռնարկվող միջոցները, մանավանդ ս. թ. հուլիսի 12-ին մարզխորհրդի ընդունած որոշումը՝ մարզն Ադրբեջանի կազմից դուրս բերելու մասին, որով փաստորեն կատարվել է արցախահայության ինքնորոշման սահմանադրական իրավունքի թելադրանքը, ապա սրան հաջորդած միջոցառումները (ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահության կողմից 89-ի հունվարի 12-ին մարզգործկոմը վերացնելու մասին ընդունած որոշումը, որով փաստորեն վերացվել է մարզի ինքնավարությունը), որոնց թելադրանքով էլ ստեղծվեց ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը՝ որպես արցախահայության վարչական ինքնուրույնության հզոր կռվան: Ընդունվեց որոշում, որով, ՄԱԿ-ի ու միջազգային այլ մարմինների, ԽՍՀՄ սահմանադրության ու մյուս իրավական նորմերի հիման վրա, դիմում էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ ԼՂԻՄ-ն ընդունելու Հայկական ԽՍՀ կազմի մեջ:

**Հոկտեմբերի 20-ին** ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահությունը նորից քննար-

նոյ. 19)։

Ուրեմն, ղարաբաղցիների պահանջն արդար էր, նրանք բռնությունների էին ենթարկվել, ճնշվել էին նրանց իրավունքները։ Եւ «արդարադատ» Գորբաչովը, նրանց իրավունքները պաշտպանելու, նրանց վիճակը բարելավելու համար վերացրել է կուսակցական մարզկոմը, աշխատավորական դեպուտատների մարզխորհուրդը, ուրիշ խոսքով՝ ջնջել է նույնիսկ մարզային կիսատ-պռատ ինքնավարությունը։ Կառավարման հատուկ կոմիտե էր ստեղծել, սակայն սկզբնապես նրան տրված իրավունքները հետագայում այնպես խուզելով, Ադրբեջանի իրավունքները մարզում այնպես վերականգնելով, որ այդ կոմիտեն աստիճանաբար դարձավ ավելորդ ու անօգնական մի կցորդ, որի պայմաններում նախկին մարզը զրկվել էր նույնիսկ ձեւական ինքնավարության ընձեռած անէական արտոնություններից։

«Հարկավոր է, որ այդ երկրամասն իրական ինքնավարություն ունենա»,-հայտարարում էր անպաշտպան դեմագոգն ու երկերեսանին, երբ երկրամասից խլել էր նրա «ինքնավարության» վերջին փշրանքները եւ մարզը նետել հարեւան բռնակալի առաջ։

**Նոյեմբերի 19-ին** ԱՄՆ-ի սենատը հաստատեց Արտաքին գործոց հանձնաժողովի ներկայացրած բանաձեւը Լեռնային Ղարաբաղի խնդրի առթիվ։ Այնտեղ, ներածական բավական ծավալուն խոսքով Ղարաբաղի խնդրի միջազգային նշանակությունը ցույց տալուց, հայ-ամերիկյան բարեկամական հարաբերությունները նշելուց հետո, սենատը վճռաբար ներկայացնում էր հետեւյալ կետերը.

1. Շարունակել օժանդակությունը եւ խրախուսել Հայաստանի վերականգնման ջանքերը.

2. Խորհրդային պրեզիդենտ Գորբաչովին կոչ անել վերականգնելու իրավակարգը, անմիջապես կարգավորել Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի տնտեսական կառույցների ու ժողովուրդների սպասարկումը, ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական անվտանգությունը հարձակումներից եւ շարունակել երկխոսությունը Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ՝ հանուն խաղաղ կարգավորման։

3. Խորհրդային Միության հետ երկխոսությամբ օժանդակել Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված բարդույթի արդար կարգավորմանը, որն արտացոլի այդ մարզի ժողովրդի հայացքները։

4. Խորհրդային միության հետ երկկողմ բանախոսության ընթացքում պահանջել բռնի գործողությունների քննություններ իրականացնել, երեւան հանել եւ դատական պատասխանատվության ենթարկել սպանությունների եւ արյունահեղության մեջ մեղավորներին։

5. Արտահայտել ամերիկյան ժողովրդի լուրջ մտահոգությունը բռնությունների ու անկարգությունների շարունակման համար, որը խանգարում է օգնության միջազգային ջանքերին» (Երեւանի ռուսերեն «Կոմունիստ», 1989, նոյեմ. 23)։

Նույն օրն էլ ԽՍՀՄ ԱԳՆ-ի տեղակալ Բեսսմերտնիխն ԱՄՆ-ի դեսպան Ջ. Մեթլոկին հանձնեց նոտա, որով դատապարտվում էր ԱՄՆ-ի սենատի ընդունած միջնորդական փաստաթուղթը Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման վերաբերյալ։ Իբր, դա կոպիտ միջամտություն է ինքնիշխան պետության ներքին գործերին եւ ռեցիդիվն է սառը պատերազմի շրջանի դատապարտելի քաղաքականության։

Այդօր ԽՍՀՄ ԳԽ-ի Միջազգային գործերի հանձնաժողովը քննարկեց ԱՄՆ-ի սենատի բանաձեւը։ Ելույթ ունեցան Ֆ. Բուրլացկին, Հ. Բորովիկը, Ս. Համբարձումյանը, որոնք, սենատի քայլի մեջ չտեսնելով որեւէ անօրինություն, հակառակը, խրախուսելով նրա մտահոգ ու ջերմ վերաբերմունքն անարդար կերպով ճզմվող հարցի նկատմամբ, քննադատեցին ԽՍՀՄ ԱԳՆ-ի նոտան, որն իսկապես անցյալ դատապարտելի ժամանակի «կարգուկանոնի» կրկնությունն էր հանդիսանում։

Նրանք պահանջեցին նման դեպքերում անպայման հրապարակել քննության ենթարկվող փաստաթուղթը, որպեսզի հասարակությունն իմանա՝ ինչի՛ մասին ի՛նչ է ասվում, այլապես դատարկ խոսք կմնան բացախոսության ու հրապարակայնության մա-



սին արվող հայտարարությունները։ Իսկ ԽՍՀՄ ԱԳՆ-ը սենատի նոտան դատապարտելիս, ԽՍՀՄ հանրապետությունների անուններից նրա դեմ վճիռ հրապարակելիս ոչ միայն երկրում այն հրապարակած չուներ, այլեւ նրա բովանդակությանը տեղյակ չէր դարձրել նույնիսկ Հայաստանի արտգործնախարարությանը, որի երկրին անմիջապես վերաբերում էր բանաձեւը (Այս առթիվ «Խորհրդային Հայաստան» թերթում հայտարարություն հրապարակեց Հայաստանի արտգործնախարար Ա. Մկրտչյանը)։

ԽՍՀՄ ԱԳՆ նոտայի դեմ հայտարարություն արեց նաեւ ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը։ Նոտայում գրված է եղել, թե «Սենատի հանձնաժողովի այդ որոշումն առաջ է բերել խորհրդային քաղաքացիների սուր դժգոհությունը, եւ այդ զայրույթը չի կարելի չհասկանալ։ Ազգային խորհուրդը նոտայի հեղինակներին հարցնում է, թե ձեզ այդ ո՞վ է լիազորել խորհրդային քաղաքացիների անունից նման պնդում անելու։ Բայց մենք կարող ենք վկայել, որ «հայ ժողովուրդն ամբողջությամբ եւ ԼՂԻՄ-ի բնակչությունն էլ հատկապես գոհունակությամբ են ընդունել ԱՄՆ-ի սենատի հանձնաժողովի որոշումը»։ Այդ պատճառով էլ «ԼՂԻՄ-ի հայության՝ մարզի ինքնիշխան տիրոջ անունից ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդն իր երախտագիտությունն է արտահայտում ԱՄՆ-ի սենատի արտաքին գործոց հանձնաժողովի անդամներին՝ Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարն ըմբռնելու եւ պաշտպանելու համար»։

Ազգային խորհուրդն իր այս հայտարարությունը՝ երախտագիտական նամակով հանդերձ, նոյեմբերի 21-ին ուղարկեց ԱՄՆ-ի սենատին։

**Նոյեմբերի 28-ի** երեկոյան դեմ պարզվել էր, որ ԽՍՀՄ ԳԽ-ի նստաշրջանում քննարկվում է ԼՂԻՄ-ի հարցը, եւ դրա համար նույնիսկ պատրաստ է որոշման նախագիծը, որի մասին ոչ մի պատկերացում չունեն հայ երկու պատգամավորական խմբերը, իսկ ադրբեջանականը ոչ միայն տեղյակ է, այլեւ պարզապես մասնակցել է կազմելուն, հուշել իր ուզած կետերը։

Իմանալով նաեւ, որ Գորբաչովը չի մասնակցելու քննարկմանը, արցախյան պատվիրակությունը նիստի սկզբում պահանջեց քննարկումը հետաձգել՝ նախօրոք հող պատրաստելով արդյունավետ աշխատանքի համար։ Ապա, տեսնելով, որ առաջարկությունն անուշադրության է մատնվում, արցախցիները լքեցին դահլիճը։ Քննարկման ժամանակ արժանանալով անբավարար ուշադրության եւ զգալով նախագահող Լուկյանովի հատուկ հակահայ վերաբերմունքը, դահլիճը թողեցին նաեւ Հայաստանի պատգամավորները։ Եւ այսքանից հետո ադրբեջանցիների հետ միասին ԽՍՀՄ ԳԽ-ն ընդունեց որոշում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում վիճակը կարգավորելու միջոցառումների մասին»։ Ահա՛ նրա բովանդակությունը.

Առաջին կետով հույս է հայտնվում, թե Ադր. ԳԽ-ի նախագահը հայտարարում է իրենց պատրաստակամությունը Հայաստանի ու ԼՂԻՄ-ի շրջափակումը վերացնելու մասին, եւ դա արդեն հարցը լուծում է վերջնականապես։

Երրորդ կետով պիտի մարզում երկկողմ սկզբունքով ստեղծվի հանրապետական կազմկոմիտե եւ վերականգնվեն մարզխորհուրդն ու նրա գործադիր կոմիտեն՝ նրանց ենթակա բոլոր մարզային հաստատություններով հանդերձ։

Չորրորդ կետով հանձնարարվում էր, որ Ադր. ԽՍՀ Գերագույն խորհուրդն ամենակարճ ժամանակում օրենսդրական եղանակով բարձրացնի մարզի կարգավիճակը, ստեղծի պայմաններ մարզի հայության իրավունքների պաշտպանության, կենսապահովման եւլնի համար։

Հինգերորդ կետով աննպատակահարմար էր համարվում Կառավարման հատուկ կոմիտեի գոյությունը։ Դրա փոխարեն ստեղծվում էր վերստուգիչ-դիտորդ հանձնաժողով, որը պիտի ենթարկվի միութենական համապատասխան մարմնին։

Վեցերորդ կետով նախատեսվում էր մարզում պահել ԽՍՀՄ ՆԳՆ զորքեր, որոնք պետք է ենթարկվեն վերստուգիչ-դիտորդ հանձնաժողովին։

Եւ էլի երկու այսպիսի կետեր, որոնք լուրջ ոչինչ չասելով՝ հույս են հայտնում, թե երկու հանրապետությունների ղեկավարությունները կապահովեն նորմալ փոխհարաբերու-

թյուններ միմյանց հետ, կստեղծեն համերաշխության ու համագործակցության մթնոլորտ:

**Նոյեմբերի 29-ին** Ստեփանակերտում տեղի ունեցավ բազմահազարանոց հանրահավաք, որի ընդունած ու հրապարակած բանաձեւը դատապարտում էր նախորդ օրը ԽՍՀՄ ԳԽ-ի ընդունած որոշումը՝ իբրեւ հակահայկական, արցախահայության իրավունքները ոտնահարող, ադրբեջանական ատելի բռնատիրությունը մարզում վերահաստատող մի փաստաթուղթ: Որոշվեց նորից դիմել Հայաստանի Գերագույն խորհրդին՝ արագացնելու մարզը մայր հայրենիքին միավորելու գործը:

Նույն օրը համանման որոշում ընդունեց նաեւ ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը:

**Նոյեմբերի 30-ին** Բաքվում գումարված կուսակցական-տնտեսական ակտիվի նիստը ցնծությամբ արտահայտեց իր գոհունակությունը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած որոշման համար, այն համարեց իր հանրապետության մեծագույն հաղթանակը, խանդավառությամբ ընդունեց որոշում այն «միջոցառումների» վերաբերյալ, որոնցով պետք է իրականացվեր եւ կարճ ժամանակում կենսագործվեր երկրի Գերագույն խորհրդի այնքան սպասված որոշումը:

Նույն օրը բացվեց Հայկական ԽՍՀ ԳԽ-ի արտահերթ նստաշրջանը, որին մասնակցում էր ԼՂԻՄ-ի Ազգային խորհուրդը: Նստաշրջանում օրակարգի առաջին հարցը երկու օր առաջ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի՝ Արցախի վերաբերյալ ընդունած որոշումն էր, վերջինը՝ ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի դիմումը:

Բուռն քննարկումներին մասնակցում էին ոչ միայն հանրապետության ԳԽ-ի, այլեւ ԽՍՀՄ ԳԽ-ի դեպուտատները, գիտության, մշակույթի նշանավոր գործիչներ:

Ստեղծվեցին հանձնաժողովներ, որոնք պետք է որոշումների նախագծեր պատրաստեին քննարկվող հարցերի առթիվ:

**Դեկտեմբերի 1-ին** շարունակվեցին նախորդ օրն սկսված հարցերի քննարկումները: Տաք վեճեր էին գնում հատկապես ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի դիմումի կապակցությամբ. ընդունե՞լ որոշում Արցախը Հայաստանին միացնելու վերաբերյալ, թե՞ ոչ: Որքա՞ն օգտակար կլինի ընդունելը մի ժամանակ, երբ այն իրականացնելու միջոցներ եւ ուժ մենք չունենք, մանավանդ մեր դեմ կանգնած են Բաքուն ու Մոսկվան, որոնք այլեւս կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ, չեն խորշում մարդկությանը հայտնի եւ անհայտ ոչ մի խարդավանքից:

Նստաշրջանը տեղի ուներ Շահումյանի անվան մշակույթի տանը, որը պաշարված էր ցուցարարների բազմահազար, խլրտուն ու աղմկոտ հասարակությամբ: Միացման կողմնակից պատգամավորության պարագլուխները՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Վանո Սիրադեղյանը եւլն, ստեպ-ստեպ դրսի աղմուկի վրա էին ուշադրություն հրավիրում. այսինքն՝ ահա՛, այնտե՛ղ է ժողովուրդը, որը միայն մեկ վճիռ ունի՝ միացում, նստաշրջանից մեկ որոշում է սպասում, միացումն ազդարարող, Արցախը Հայաստանի գիրկը բերող որոշո՜ւմ: Հակառակ դեպքում նա պատրաստ է դաժան հաշիվ տեսնել ընդդիմացողների հետ, ոտքի տակ տրորել նրանց ապազգային գլուխները:

**Դեկտեմբերի 1-ն** արցախյան շարժման ամենաճակատագրական հանգույցներից մեկը դարձավ, դժբախտաբար՝ բացառիկորեն ձախողակ հանգույցներից:

Հիմա արդեն ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այդ օրը Հայաստանի ԽՍՀ ԳԽ-ի ընդունած որոշումը եղել է ժամանակավրեպ, անիմաստ եւ, ամենակարեւորը, վնասակար: Այն եղել է մահմեդական շախսեյ-վախսեյի շղթայի մի այնպիսի հարված, որ հավատացյալն ինքն է իջեցնում իր գլխին: Այո՛, դա իսկապես վնասակար որոշում էր, այնքան, որ նրա հետեւանքը պետք է համարել 1990-ի հունվարին Բաքվում կատարված հայկական ջարդերը (չնայած այդ ջարդերը վաղուց նախապատրաստած թուրքը, միեւնույն է, առանց Հայկ. ԽՍՀ ԳԽ-ի որոշման էլ պետք է իր գործն աներ):

Հետագայում շատ են եղել իրավացի տրտունջներ ու կշտամբանքներ այդ որոշումն ընդունողների դեմ: Որ դա անհեռանկար ու անիրականանալի է եղել սկզբնապես, եւ ընդունողները, հատկապես այն ժամանակվա Գերագույն խորհրդի մեծերը, հանրապետության կուսակցական ու պետական ղեկավարները, նման մեռելածին որոշում ընդունե-



լով, թող են փչել ժողովրդի աչքին, լավմարդ դարձել՝ իրականում փակուղի մղելով Արցախի հարցը, կատարել ճակատագրական մի քայլ, որն ինչքան երեւութական, նույնքան էլ կործանարար է եղել շարժման եւ հատկապես Արցախի փրկության համար:

Այս մեկնաբանության մի տարբերակն էլ կար սկզբնապես. իբր, հայաստանաբնակ «հարյուր հազար ղարաբաղցիները», որոնք առհասարակ այստեղ գոյություն ունեն իբրեւ սադրիչներ (ասում է՝ մենք ուզում ենք Հայաստանի տունը շինել, իրենք «ոռնում են՝ Արցախը մոռացա՜ն», եւ կարծում են «ինչքան լաց ու շիվան կապեն, այնքան Արցախի անկախության հարցը կարագանա»), ահա այդ հայաստանաբնակ արցախցիների ճնշման տակ էր, որ Հայաստանը գնաց նման որոշում ընդունելու եւ ինքն իրեն դավաճանեց: Բայց ավելի լավ է խոսքը տանք կարծիքի հեղինակին. «Միայն մեկ անգամ տեղի տվեցինք այդ սադրանքին եւ քայլ առ քայլ ծրագրած մեր ընթացքին դավաճանեցինք եւ պայմանագրի փոխարեն Գերագույն խորհուրդով միացյալ Հայաստան հռչակեցինք: Եւ մեզ ու մեր ապագա խորհուրդը զրկեցինք վճռական քայլերից, մեր քաղաքական զինանոցը սպառեցինք» (Վանո Սիրադեղյան. Առաջին ու վերջին քայլը ազատության ճանապարհին. «Ո՞րն է մեր ճանապարհը» ժողովածու, Երեւան, 1990, էջ 88):

Անկախ մանրամասների ու արտահայտությունների գռեհիկ տոնից, որն ասես պատկանում է հակառակորդի՝ արցախահայության դեմ սանձազերծած քարոզչական վայնասունին, չի կարելի չնկատել այս «եսակետի» անհեթեթությունը: Չէ՞ որ հայտնի են այն օրերի իրողությունները. Գերագույն խորհրդի նստաշրջանն ամբողջապես հեռարձակվել է, եւ ժողովուրդը տեսել է ու գիտի, թե Արցախը Հայաստանին վերամիավորելու հարցն ո՛ւմ հարկադրանքով եւ ինչպե՛ս է մտել օրակարգի մեջ, ինչպե՛ս է ընդունվել այդ իսկապես օրապակաս, ավելի ճիշտ՝ մեռելածին որոշումը: Իսկ որ հայաստանաբնակ արցախահայերն այն ժամանակ Գերագույն խորհրդում չեն ունեցել իրենց լիազոր ներկայացուցիչները, դրսում էլ նեղ-տեղայնական հանրահավաքներ կամ ցույցեր չեն կազմակերպել, որպեսզի դրանցով Գերագույն խորհրդին մղեն որեւէ անօրինական կամ ազգավնաս քայլի..., դա առանց բացատրելու է՜լ, հայտնի է:

Սակայն այստեղ, ինչպես ասում են, վիճակը գցված է. որոշումն այլեւս դիտվում է որպես հայոց ազատագրական նոր շարժման ընթացքի ամենագեշ քայլերից մեկը, եւ հնարավորություն ունեցողը ջանում է անջրպետվել նրանից, մեղքից հեռու մնալ: Բայց որքա՞ն հարմար է, որ այդպիսի փորձեր կատարում են նաեւ որոշման նախաձեռնողներն ու նրանց նորահայտ պաշտպանները: Պաշտպաններն ավելի՜ շատ, որովհետեւ երեւի նրանք մտածում են, թե իրենք որոշման հետ անմիջական կապ չեն ունեցել եւ հիմա ի՛նչ ուզեն, կասեն, կգրեն, կբմբկահարեն...

Այդպիսին էր նաեւ հետագայում հրատարակված մի հոդված՝ ինձ համար միանգամայն անհայտ Գրիզելդա Նավասարդյանի ստորագրությամբ («Ազգ», 1992, հունվ. 21): Ի՞նչն էր տարօրինակն այս տիկնոջ արտահայտած տեսակետի: Ոչ միայն մեղավորներին անմեղ հրեշտակներ ներկայացնելու մարմաջը, որ ամբողջ հոդվածի ոգին էր, այլեւ ամեն ինչ կողմնակի, անհասցե մեղավորի վրա բարդելու ոչ պակաս տգեղ փորձը: Ասում է. «ինչ կատարվեց 1988-1991 թթ., կատարվեց միայն ու միայն ժողովրդի «ճնշմամբ», եւ բնական էին այն սխալները, որոնք թույլ տրվեցին...»: Մինչ այս էլ հայտարարել էր, թե որոշումն ընդունվել է Հայկ. ԽՍՀ ԳԽ-ի կողմից (ուրեմն՝ նրա գերամասնությունը կազմող բոլշեւիկների կամ հեղինակ տիկնոջ հեգնոտ բառերով՝ «պատկառազդու, փորձառու, իմաստուն, պրոֆեսիոնալ, քաղաքագետ այրերի» նախաձեռնությամբ):

Ահա ես նայում եմ իմ՝ հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանի (1989-ի նոյեմբերի 30-ի ու դեկտեմբերի 1-ի) նիստերի դիտորդի գրառումները, որոնք իրենց բոլոր մանրամասներով հետագայում էլ ստուգվել են նստաշրջանի արձանագրությամբ: Նախապես որոշված է եղել քննության առնել Արցախում իրադրությունը նորմալացնելու միջոցառումները, մարզի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի կոմիտեի բանաձեւի առթիվ ԽՍՀՄ Արտաքին գործերի մինիստրության արած հայտարարությունը, ինչպես նաեւ Հայաստանի ու Արցախի շրջափակման վերացումն ապահովելու խնդիրնե-

րը:

Եւ ահա այդ հարցերն օրակարգ մտցնելու մասին ԳԽ-ի Նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյանի հայտարարությունից անմիջապես հետո Աշոտ Մանուչարյանը հաղորդում է, որ նիստին մասնակցում են Արցախի Ազգային խորհրդի ներկայացուցիչները, ուստի եւ հարկ է արձանագրել, որ «տեղի է ունենում Արցախի Ազգային խորհրդի եւ Հայաստանի Գերագույն խորհրդի համատեղ նիստը»:

Ոսկանյանը զգուշացնում է, որ դրանից առաջ որոշում է ընդունվել, որպեսզի մինչեւ մարզային խորհրդի վերակազմումը, իբրեւ մարզի իշխանություն ընդունել Ազգային խորհուրդը: Այդ «մինչեւն» արդեն նշանակում է վերապահում: Արդյոք այդ պայմաններում օրինակա՞ն կլինի համատեղ նիստ գումարելը: Հետո էլ խոսում է Սահմանադրության մասին եւ դարձյալ զգուշացնում հնարավոր թյուրիմացություններից...

Մանուչարյանի առաջարկությունը լրացնելու իմաստով ելույթ է ունենում ԼՂ-ի Ազգային խորհրդի ներկայացուցիչ Վաչագան Գրիգորյանը՝ առաջարկելով անել հետեւյալ ձեւակերպումը. «Հայաստանի Գերագույն Խորհրդի նստաշրջան՝ մասնակցությամբ Արցախի Ազգային խորհրդի ներկայացուցիչների: Այլ կերպ այսօրվա մեր նիստը կհամարվի անօրեն»,-պնդում էր Արցախի ներկայացուցիչը:

Զգուշացումները ցանկալի արդյունք չեն տալիս, քանի որ անմիջապես ելույթ է ունենում Խ. Ստամբոլցյանը՝ բացատրելով, որ համատեղ նստաշրջանը հակասահմանադրական համարել չի կարելի, «որովհետեւ Գերագույն Խորհրդի նստաշրջանը նույնիսկ իրավունք ունի փոփոխելու սահմանադրությունը... Եթե նստաշրջանը քվեարկում եւ ընդունում է, այլեւս հակասահմանադրական չէ»:

Ելույթ է ունենում նաեւ Լ.Տեր-Պետրոսյանը եւ հանդիսավորապես հայտարարում. «Մենք պետք է ընդունենք պատմական որոշում, պատմական հայտարարություն, որով մենք ճանաչում ենք, հայտարարում ենք Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի վերամիավորման փաստը»: Սրանից հետո էլ. «Այս նիստը, ինչպես Աշոտն ասաց, համարվում է Հայաստանի Գերագույն Խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստ»:

Ոսկանյանը նորից է զգուշացման իր աղերսանքն անում. «...դա հակասում է սահմանադրությանը»: «Գիտենալով, թե ինչ է սպասվում, որպես քաղաքացի, որպես հայ ես իմ պարտքն եմ համարում զգուշացնել, որպեսզի ընդունենք այնպիսի որոշում, որից մեր ժողովուրդը միայն շահի: Ձեր գործն է՝ ինչպես կքվեարկեք»:

Եւ Ոսկանյանի այս դիմադրության դեմ հնչում է Լ.Տեր-Պետրոսյանի վճռական խոսքն իր հանգամանալից պատճառաբանությամբ: «Ընկեր Ոսկանյան,-ասում է նա,-ես ձեզ հավատացնում եմ, որ, եթե այս որոշումը, որ պետք է կայացնի այս նիստը, հրապարակվի միայն Հայաստանի Գերագույն Խորհրդի անունից, դա ավելի հակասահմանադրական կլինի, կդիտվի որպես միջամտություն հարեւան հանրապետության ներքին գործերին: Միակ ճիշտ ձեւը, որը մեզ հնարավորություն կտա խուսափել այդ մեղադրանքից, համատեղ նիստի գումարումն է: Մենք պետք է ամբողջ աշխարհին այսօր հռչակենք, որ Խորհրդային Միության տարածքում կա երկու հայկական պետական կազմավորում, որոնք խորհրդային պետական կառուցվածքի տարբեր օղակներն են, եւ այդ օղակները իրավունք ունեն գումարելու համատեղ նիստ, կայացնելու ցանկացած որոշում: Սա մեկ:

Երկրորդը: Մենք, իհարկե, գիտենք, որ վաղը եւեթ, նույնիսկ ցանկացած որոշման դեպքում Կենտրոնը պետք է դա համարի ապօրինի: Մեզ համար սա կարեւոր չէ: Եւ հետո, ընկ. Ոսկանյանը, որ այդքան պնդում է, թե պետք է մենք հետեւողականորեն մնանք սահմանադրության շրջանակում, մոռանում է մի բան, որ Մոսկվան շարունակ ինքն է ոտնահարում սահմանադրությունը»:

Այս տեսակետի պաշտպանությամբ ելույթ են ունենում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորներ Սերո Խանզադյանը, Կարեն Սիմոնյանը, Հայաստանի ԳԽ-ի պատգամավորներ Էդուարդ Աղայանը, Ա. Մանուչարյանը: Եւ երբ թվում էր, թե հարցը պարզից էլ պարզ է ու պետք է դրվի քվեարկության, Լ.Տեր-Պետրոսյանը վերստին ելույթ է ու-



նենում՝ Ոսկանյանին ու հանրապետության ղեկավարությանը մեղադրելով անվճռականության, իր խոսքով ասած՝ խաբեբայության մեջ:

«- Ես ուզում եմ, ընկեր Ոսկանյան, ընկեր Նախագահություն, ձեզ բացահայտ ասել. ժողովուրդը ձեզ չի վստահում, ձեր խոստումներին չի հավատում: Դուք, որ ասում եք՝ վերջում կընդունենք այդպիսի որոշում, մենք համոզված ենք, որ դուք նորից կխաբեք մեր ժողովրդին: Մենք այդ բանն այլեւս թույլ չենք տա, որովհետեւ մենք դառը փորձ ունենք: Բազմիցս մեզ հրավիրել են եւ Նախագահություն, եւ Կենտկոմ, խոստումներ են տվել, մենք համատեղ բանաձեւ ենք մշակել, եւ մյուս օրը պարզապես մեզ խաբել են: Բավակա՛ն է: Բավական է, եւ իմացեք՝ ժողովուրդը ձեզ անվստահության քվե է տալիս»:

Տեր-Պետրոսյանին է պատկանում նաեւ մի խոսք, որը, տեղական ղեկավարության անճարակությունը շեշտելով, զգուշացնում էր նաեւ Կենտրոնի խարդավանքներից: «Մեր ժողովուրդն այսօր մեզնից ունի միայն ու միայն մեկ սպասում, եւ այդ ժողովուրդը չի հեռանա հրապարակից, քանի դեռ մենք չենք կայացրել այդ որոշումը: Ես այդ մտավախությունն ունեմ (մենք ունենք դառը փորձ), եթե մենք ձգձգենք այդ որոշման ընդունումը, հետաձգենք վաղվան, գիշերը Մոսկվայից մեր ղեկավարության վրա կլինի մի մեծ ճնշում»:

Ուրեմն՝ որոշումն ընդունել հենց այդ օրը:

Դժվար չէ պատկերացնել, թե այսպիսի հայտարարությունը, մանավանդ ՀՀՇ-ականների ջանքերով ժողովարանի շուրջը հավաքված բազմահազար ցուցարարների դղրդաձայն սպառնալիքների ուղեկցությամբ, ինչ ազդեցություն պիտի գործեր նախագահությունում կուչ եկած ղեկավարների վրա: Եւ պատահական չէ, որ անմիջապես էլ ընդունվել է Ա. Մանուչարյանի ու Լ. Տեր-Պետրոսյանի առաջարկությունը, եւ հնչել է նախագահողի ձայնը. «Ուրեմն, Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի ու Արցախի Ազգային խորհրդի համատեղ նիստը հայտարարվում է բացված»:

Այսպիսին է եղել սկիզբը: Սրան էլ հաջորդել են մեկ նալին, մեկ մեխին զարկելու այն անկանոն ու ոչինչ չասող առաջարկությունները, բարձրացրած հարցերը, որոնց բոլորին անդրադառնալու դեպքում նստաշրջանը պիտի ձգվեր մի քանի շաբաթ: Մինչդեռ նախաձեռնողներն ու փոթորկված դահլիճը խանդավառվել էին Արցախի վերամիավորման խնդրով եւ շտապում էին այդ առթիվ որոշումն ընդունել ժամ առաջ: Ա. Մանուչարյանն, օրինակ, գտնում էր, որ Արցախի հարցը տնօրինելու իրավունք կստանանք՝ հենց անմիջապես որոշում հանելով Միության դեմ, որը չի կատարում իր պարտավորությունները»:

Լ.Տեր-Պետրոսյանը, դատապարտելով երկու օր առաջ Մոսկվայում ընդունված հակահայկական գարշելի որոշումը, դրա պատճառն էր համարում Հայաստանի ղեկավարության անդեմ ու անհամարձակ վարքը: Նա առաջարկեց, առանց ական թոթափելու, անցնել վճռական քայլերի եւ Կենտրոնին ցույց տալ, որ մենք ունենք մեր շահերը եւ նրանք մինչեւ վերջ պաշտպանելու քաջություն: Ահա եւ առաջարկը. «Մենք այսօր գոնե պետք է հռչակենք մեր սուվերենության ընդլայնումը, դեմոկրատիայի խորացումը մեր հանրապետության մեջ եւ ամբողջ աշխարհին հայտարարենք, որ Հայաստանը իրեն հայտարարում է դեմոկրատական հանրապետություն եւ ձեռնարկում է խորը, արմատական դեմոկրատական վերափոխումներ: Այսօր ամբողջ աշխարհը պետք է իմանա, որ Հայաստանում վերացված է կոմունիստական կուսակցության գերիշխանությունը, Հայաստանի սահմանադրությունից պետք է վերացվի կոմունիստական կուսակցության ղեկավար դերին վերաբերող 6-րդ հոդվածը: Դա արդեն հասունացել է Խորհրդային Միության բոլոր դեմոկրատական ուժերի շրջանակներում, եւ վաղ թե ուշ պետք է այդ որոշումները կայացվեն ուրիշ հանրապետություններում, եւ մենք այդ դեպքում կկորցնենք հայկական գործոնի ազդեցությունը: Մե՛նք պետք է դա նախաձեռնենք, մե՛նք պետք է իսկապես վերանայենք մեր պարտավորությունները Կենտրոնի հանդեպ, ապահովենք մեր հանրապետության սուվերեն գոյությունը, որը միակ երաշխիքն է Արցախի եւ Հայաստանի վերամիավորման հարցում հաջողության հասնելու համար»:

Լ.Պողոսյանի, Ա. Սադոյանի, Ա. Կիրակոսյանի, Ռ. Ղազարյանի, Ս. Մուրադյանի, Լ. Հարությունյանի, Գ. Խանջյանի եւ ուրիշների ելույթներից հետո խոսում է նաեւ Արցախի Ազգային խորհրդի նախագահ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր Վաչագան Գրիգորյանը։ Նկարագրում է արցախահայության ծանր վիճակն ադրբեջանական շրջափակման ու չդադարող վայրագությունների պայմաններում, Մոսկվայի տմարդի վերաբերմունքը մարզի ցավերի նկատմամբ ու, ինչպես իրենից առաջ էլ Ա. Մանուչարյանը, Լ.Տեր-Պետրոսյանը եւս, առաջարկում է ընդունել մարզը Հայաստանի Հանրապետությանը միացնելու որոշում։

Խոսելով մարզում ստեղծված Ազգային խորհրդի կազմավորման հանգամանքներից եւ նշելով իրենց խնդիրները, Գրիգորյանը տեղին է համարում քննադատական սուր խոսք ասել նաեւ Վոլսկու վարչության մասին, այն խոսքը, որ այդ օրերին տարբեր ձեւերով ու երանգներով հոլովվում էր երեւանյան հանրահավաքներում եւ նույնիսկ Գերագույն խորհրդի ամբիոնից։ Ասում է. «Մենք գիտենք, որ Հատուկ կառավարման կոմիտեն՝ Վոլսկու գլխավորությամբ, միայն պետք է ջլատի մարզի ներքին ուժերը եւ կատարի այն բոլոր հանձնարարությունները, որ ստանում է Մոսկվայից»։

Հարցի քննարկումը բուռն, աղմկոտ ընթացք է ստանում։ Միաձայն ու միահամուռ լինելով հիմնական հարցում (ընդունում ենք որոշում-հռչակագիր մարզը մայր Հանրապետությանը միացնելու մասին), վիճում են մանրամասների վրա, խոսք կռվացնում, օրինակ, մի այնպիսի երկրորդական խնդրի շուրջ, որպիսին այդ որոշում-հռչակագիրը Կենտրոնին հաղորդելն է (պաշտոնապես ներկայացնել ԽՍՀՄ ժող. պատգամավորների համագումարի՞ն, պարզապես տեղյա՞կ պահել, թե՞ առհասարակ բանի տեղ չդնել վերեւներին)։

Ի դեպ, իբր, այս վեճն ու աղմուկը լիցքաթափելու նպատակով ելույթ է ունենում նաեւ Վանո Սիրադեղյանը՝ ներկայանալով որպես ԽՍՀՄ Գրողների միության անդամ։ Ահա մի երկու նախադասություն նրա տագնապոտ խոսքից. «... շատ հնարավոր է, որ հիմա հեռուստատեսությունն անջատվի, եթե մի 20 րոպե էլ շարունակվի այս բանավեճը։ Ինձ թվում է՝ հետեւանքները շատ վատ են լինելու։ Չեմ սպառնում, այստեղ պատերը փակ են, այնպես է կառուցված այս շենքը, որ դրսից ձայները չհասնեն այստեղ։ Բայց շատ վտանգավոր է վիճակը։ Եթե այսպես շարունակվի, ժողովուրդը կարող է գալ տներից, շատ անհամ բան կստացվի... Հիմա պետք է Ղարաբաղի համար որոշում ընդունել, ժողովուրդն այդ միացյալ որոշմանն է սպասում...»։

Ուրեմն, ժողովուրդը, հա՛յ ժողովուրդը եւ ոչ թե Երեւանում ապրող հարյուր հազար ղարաբաղցիները, որոնք հետագայում պետք է ճանաչվեն չարիքի աղբյուր։

Այսպե՛ս, մարդը խոսում է ծայրահեղորեն լարված ժողովրդի կողմից եւ ի՛նքն է պահանջում ընդունել որոշում։ Մանավանդ, գիտի, որ ընդունելիք որոշումը նախապես հայտնի է ժողովրդին, եւ նա միայն դրա՛ն է սպասում։ Ինքն էլ հենց՝ այդ որոշումն էր պահանջում, եւ որքան էլ զարմանալի, ո՛չ սադրիչ հայաստանաբնակ հարյուր հազար արցախցիներն էին նրա կոկորդին կանգնել, ո՛չ նրանցից որեւէ մեկը նստաշրջանում էր վեր կացել, թե պարոն Սիրադեղյան, այսպե՛ս ու այսպե՛ս, դու բարի եղիր մեր անունից հռչակագիր ընդունելու։

Շատերը համառորեն առաջարկում էին, որպեսզի հարցի առթիվ որոշման նախագիծը մշակվի բարեխղճորեն եւ հաստատվի հաջորդ օրվա նիստում։ Սակայն մարդիկ, որ կողմ էին նույն օրն ընդունելու եւ ժողովրդի անդորրն ապահովելու, համառում են, առաջիններին մեղադրում պասիվության ու անտարբերության, նույնիսկ ինչ-ինչ խաբեբայական խաղեր անելու մեջ։ Շտապում էր նաեւ դահլիճի սանձերն իր ձեռքը հավաքած Տեր-Պետրոսյանը, որը հիշեցրեց անցյալ անգամ հետաձգված նստաշրջանի պատմությունը։ «Վոլսկու հայտարարությունն այստեղ,-ասաց նա,-բոլորովին ապակողմնորոշեց ժողովրդին, սրեց իրավիճակը։ Իրականում այն այդպես սուր չէր, ինչպես ինքը ներկայացրեց։ Դա էլ Մոսկվայի այն ճնշումն էր, որի մասին ես քիչ առաջ ձեզ ասացի»։

Այնքանից հետո էր, որ կուս. Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը



նրան ընդառաջեց, երեւի սարսափելով դրսի ահագնացած աղմուկից։ «Լեւոն,-ասաց,-ես դեմ չեմ այդ հարցը տեղափոխել, այսօր քննարկել։ Բայց դա ի՞նչ սկզբունքային նշանակություն ունեցող հարց է։ Կարող ենք եւ էսօր քննարկել»։

Կ. Սիմոնյանը Գերագույն Խորհրդին առաջարկեց դահլիճից չհեռանալ (դա ետկեսօրյա նիստին էր), մինչեւ որ չընդունվի որոշում «այսօր այստեղից չպիտի գնանք, մինչեւ չընդունենք այս հռչակագիրը»։

Հետաքրքիր է նաեւ Լ. Տեր-Պետրոսյանի՝ այդ օրն արտահայտած շատ խոսքերից մեկը, որին էլ հետեւել է որոշման իր ներկայացրած նախագիծը։

Լ.Տեր-Պետրոսյան.-«Մենք համոզվեցինք, որ մենք ենք լուծելու մեր խնդիրները, մենք ենք լուծելու Արցախի եւ Հայաստանի վերամիավորման հարցը, եւ այդ առումով կա իրավական հիմք։ Այս առաջարկությունը լիովին ամփոփվում է միջազգային իրավունքի սահմաններում, որը գերադաս է խորհրդային գործող սահմանադրության նկատմամբ, եւ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, որպես խորհրդային պետական կառուցվածքի երկու ինքնավար կազմավորումներ, համատեղ կնքում են այդ պայմանագիրը, համատեղ որոշումը կամ հայտարարությունը»։

Երբ շտապողները շատ էին համառում (օրինակ, Կ. Սիմոնյանը պահանջում էր տեղնուտեղն ընդունել որոշում, «մեր նստաշրջանը հռչակում է Արցախի եւ Խորհրդային Հայաստանի վերամիավորումը, որից հետո կատարվում են մնացած բոլոր տեխնիկական խնդիրները... մենք այսօ՛ր միանում ենք իրար...»), Սուրեն Հարությունյանը տատանվածի դիրքում էլ հաղթողի կեցվածք ընդունելով՝ փորձեց ծայրահեղ լարված մթնոլորտը խաղաղեցնել, ասաց.

- Սկզբունքորեն մենք բոլորս մի կարծիքի ենք այդ հարցում։ Առաջարկություն մտցվեց, եւ դրա մեջ ես ոչ մի վատ բան չեմ տեսնում։ Դա օրինական ճանապարհն է. (պետք է) ստեղծել հանձնաժողով, որը նայի ներկայացված այս առաջարկությունը, որ արել է ընկ. Տեր-Պետրոսյանը, եւ ներկայացնել մեր նստաշրջանի քվեարկությանը։

Ուրեմն, ստեղծել եւ հաստատել հանձնաժողով, որը որոշման նախագիծ պատրաստի, ներկայացնի Գերագույն խորհրդի քննարկմանն ու ընդունմանը։ Այս կարգը կանխեց Լ.Տեր-Պետրոսյանը՝ գրպանից հանած քառածալ մի թուղթ նետելով նախագահողի առաջ։

- Առե՛ք, կարդացե՛ք ու ընդունեցե՛ք, ձեր հանձնաժողովը դրանից լավը չի կարող ներկայացնել։

Աղմուկ-աղաղակից, երկար-բարակ վեճից ու կիսատ-պռատ քննարկումից հետո Լ.Տեր-Պետրոսյանի ներկայացրած նախագիծը նույն օրվա երեկոյան էլ նստաշրջանին ներկայացվեց հետեւյալ ձեւակերպմամբ.

«Հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքի վրա եւ արձագանքելով հայ ժողովրդի՝ բռնի ուժով բաժանված երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը որոշում են.

1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ինքնորոշման փաստը՝ հաստատված ԼՂԻՄ-ի մարզային խորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի եւ հուլիսի 12-ի նստաշրջանների, ինչպես նաեւ մարզի բնակչության լիազոր ներկայացուցիչների 1988 թ. օգոստոսի 16-ի եւ հոկտեմբերի 19-ի համագումարների որոշումներում։

2. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումարը եւ նրա ընտրած Ազգային Խորհուրդը՝ որպես մարզի միակ օրինական իշխանությունը։

3. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը հայտարարում են միացյալ հայկական հանրապետության ստեղծումը, որից հետո Լեռնային Ղարաբաղի բնակչության վրա տարածվում են Հայաստանի հանրապետության քաղաքացիական իրավունքները։

Դաղամյանը երկար տարիներ գլխավորել է ԼՂԻՄ-ի ավտոբազան, նրան բռնել են նախկին աշխատակիցները եւ հաշիվ են մաքրել:

Դաղամյանն այս բոլորի առթիվ դիմեց ԳԽ-ի Նախագահություն, հատկապես նախագահ Լուկյանովին, պահանջեց քննել ու պատասխանատվության ենթարկել հանցագործներին: Սակայն սրան ոչինչ չհետեւեց, որից էլ գործին ծանոթ մարդիկ ենթադրում էին, որ ամեն ինչ կատարվել է վերնագույնի հանձնարարությամբ կամ համաձայնությամբ:



# 1990

**Հունվարի 2-ին**, միջօրեի դեմ, Աղդամից Շուշի գնացող մի ավտոշարասյուն (5 ավտոբուս, 1 բեռնատար եւ 1 զրահամեքենա), որն, իբր, 150 խաղաղ բնակիչներ էր փոխադրում Կրասնոյարսկի միլիցիական դպրոցի սաների ուղեկցությամբ, որոշել էր, ուղիղ ավտոմայրուղին թողած, ծովել, Ստեփանակերտ մտնել եւ այնտեղ փորձարկման ենթարկել հայ մարդկանց համբերությունը: Հավանաբար, նախորդ տարվա հոկտեմբերի 10-ի փորձը գոհացուցիչ չի եղել, եւ Սվերդլովսկի ռազմական սաների ուսումնարանի արյունոտ փորձն էլ արժանի գնահատական չի ստացել...

Ստեփանակերտում շարասյունը կանգնեցրել են ջղագրգիռ քաղաքացիները, հարցուփորձ արել, թե այն ի՞նչ իրավունքով է քաղաք մտել եւ հիմա էլ մարդաշատ փողոցներում խլացնող հռնդյունով «զբոսնում է»: Ի պատասխան՝ զինվորականները կրակել են օդում, սպառնացել ու հայհոյել: Եւ այն ժամանակ առավել զայրացած քաղաքացիներից ոմանք քարեր են շպրտել ավտոբուսների վրա: Դրան հետեւել է զինվորականների «ռազմական պատրաստությունը». ավտոմատների կրակահերթերից մեկ տասնյակ հայ քաղաքացիներ վիրավորվել են: Մահացել են քանդակագործ Արմեն Հակոբյանն ու Քոլատակցի մի կին (Ռոզա Բաբայան):

Իհարկե, մարմնական վնասվածքներ են ստացել նաեւ ուղեւոր ադրբեջանցիներից մի քանիսը: Բայց ո՞ւմ է պետք եղել այդ նոր սադրանքը, որ, նախորդի պես, դարձյալ պետք է անպատիժ մնար, ինչպես նաեւ միութենական լրատվության կողմից ստանար սուտ ու հերյուրված մեկնաբանություն եւ զրգռեր բանից անտեղյակ հասարակության զայրույթը: Ըստ «Իզվեստիա»-յի **հունվարի 4-ի** հոդվածի՝ հայերը քաղաքի շուկայի մոտ հրակոծել են ավտոշարասյունը, նույնիսկ վառել մի ավտոմեքենա, եւ զինվորականներն էլ միայն պատասխան կրակ են բացել նրանց վրա, ու միայն մեկ հայ է վիրավորվել...

ԳԽ-ի արցախցի պատգամավորներն Ադրբեջանի ղեկավարության կողմից կազմակերպված այս նոր սադրանքի մասին հատուկ նամակով հաղորդեցին երկրի ղեկավար Գորբաչովին՝ պահանջելով, որ պատգամավորական հանձնաժողով ուղարկվի Ստեփանակերտ՝ դեպքի հանգամանքները տեղում ուսումնասիրելու եւ ճիշտ գնահատական տալու համար:

Այդ դեպքի առթիվ ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի հրապարակած հայտարարությունից էլ պարզվում էր, որ ավտոշարասյունն Ադրբեջանի այլ շրջաններից նոր բնակիչներ էր տեղափոխում Շուշի, եւ դա առաջին անգամը չէր:

**Հունվարի 2-ի -լույս 3-ի գիշերը** Կրկժանում ադրբեջանցիները հրազենի տարբեր տեսակներից գնդակոծել են հարեւան հայերի բնականները:

**Հունվարի 3-ին** Խոջալուի ադրբեջանցիները փակել են Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհը եւ քարկոծել ճանապարհն անցնելու փորձ կատարող հայերի մեքենաները:

**Հունվարի 4-ին** Կրկժանի ադրբեջանցիները նորից գնդակոծել են հայերի բնակարանները: Կրակը դադարել է միայն պատասխան գործողությունից հետո:

**Հունվարի 5-ին**, իրականացնելով անցյալ տարվա նոյեմբերի 28-ի որոշման մի կետը, ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությունը Վ.Կ.Ֆոտեեվին նշանակեց ԼՂԻՄ-ում միութենական վերստուգող-դիտորդ հանձնաժողովի նախագահ:

Այդ օրը միութենական ռադիոն, հեռուստատեսությունը, թերթերը լայնորեն արտացոլում էին նախորդ օրերին կիսատ-պռատ, ծամծմելով հրապարակված դեպքերը, որոնք տեղի էին ունեցել ադրբեջանա-իրանական սահմանի ամբողջ երկարությամբ եւ դեռ շա-

րունակվում էին՝ արմանք-զարմանքի մեջ պահելով ողջ խորհրդային ժողովրդին: Տեսնվա՞ծ բան է, որ Խորհրդային Միության սահմանը ոտքի տակ տան որեւէ հանրապետության բնակիչները եւ մնան անպատիժ:

Պատմում էին, որ դեռեւս դեկտեմբերի 4-ին Նախիջեւանի ադրբեջանցիները սահմանի մոտ խարույկներ են վառել, գույներ ու միտինգներ արել, զրույցի մեջ մտել Իրանի կողմից իրենց «ազգակիցների» հետ: Սահմանապահ զորքի հրամանատարներն այնքան են հասկացել, որ սրանք ուզում են միավորվել եւ միավորել իրենց հարավային ու հյուսիսային Ադրբեջանները:

Նույնը կրկնվել է նաեւ դեկտեմբերի 12-ին: Հետո էլ Նախիջեւանի, այսպես կոչված, Ժողովրդական ճակատի ղեկավարությունը սահմանապահ զորամասի հրամանատարին ներկայացրել է վերջնագիր, որով հայտնել է, թե իրենք դեկտեմբերի 31-ին պետք է միանան հարավի ցեղակիցների հետ. անհրաժեշտ է սահմանի ցանկապատները հավաքել, ապա թե ոչ, այդ կանեն իրենք: Բախումից հեռու մնալու համար հրամանատարությունն ընդառաջել է ադրբեջանական կողմին (չէ՞ որ նրանց ամեն ինչ թույլատրելի է...), ցանկապատը հավաքել որոշ տեղերում... Սակայն Ժող. ճակատը որոշել էր Նախիջեւանի հարավային ամբողջ սահմանը վերացնել, եւ դեկտեմբերի 31-ին ու հետագա մի քանի օրվա ընթացքում դա իրականացվեց: Ավերվեց 164 կմ սահմանը, ջարդեցին սարքավորումները, քանդեցին-հողին հավասարեցրին հատուկ շինությունները:

Հետո էլ հայտնի դարձավ, որ, նախիջեւանցիների օրինակին հետեւելով, սահմանն ավերել են նաեւ Ադրբեջանի հարավ-արեւելյան մյուս շրջանները, եւ, այսպիսով, շուրջ ութ հարյուր կմ երկարությամբ սահմանագիծը ոչնչացված է, ազատ ու բաց:

**Հունվարի 5-ին** Նախիջեւանի՝ այլեւս գոյություն չունեցող սահմանն են հասել ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Գիրենկոն, ԳԽ-ի Ազգությունների խորհրդի նախագահ Նիշանովը, Ադրբեջանի ղեկավար Վեզիրովը եւ միութենական ու հանրապետական այլազան բազմաթիվ պաշտոնյաներ: Նրանք, իհարկե, հարգեցին նախիջեւանցիների ազնիվ մղումները՝ կապվելու անդրարաքսյան հարազատների հետ, ազատ երթեւեկ ունենալու եւ այն մշտական ու բնական դարձնելու: Նրանք էլ հո այն միամիտ արցախցիների խելքին չեն, որ վեր կենան, թե միանում ենք Խորհրդային Միության կազմի մեջ գտնվող ազգակից Հայաստանի հետ... Եւ, Նախիջեւանում հարցն այսպես ըմբռնողությամբ լուծելուց հետո, միութենական ղեկավարները որոշեցին լինել նաեւ ԼՂԻՄ-ում, այստեղ խոսել մարդկանց հետ, նրանց բան հասկացնել, ուղիղ ճամփի բերել...

**Հունվարի 9-ին** բարձրաստիճան, անկոչ հյուրերը պետք է ժամանեին Ստեփանակերտ: Վաղ առավոտյան քաղաքի կենտրոնական հրապարակից մինչեւ օդանավակայան ամբողջ ճանապարհը բռնված էր ՆԳՆ զորքով: Ժողովուրդն էլ, իմանալով, որ մոսկվացիների հետ պիտի ժամանի նաեւ Ադրբեջանի պատվիրակությունը՝ իր ստեղծած Կազմկոմիտեի հետ միասին, աշխատանքը թողեց, հորդաց քաղաքի փողոցները, փորձեց փակել օդանավակայանի ճանապարհը: Ավտոբազայի մոտ զինվորականները կրակ բացեցին ցուցարարների վրա եւ վիրավորեցին մի քանի հոգու: Դրանից հետո էր, որ քաղաքի ակտիվը հավաքվեց ժողովի եւ կուս. քաղկոմի առաջին քարտուղար Վ. Աղաջանյանին առաջարկեց հյուրերին ետ դարձնել, եթե նրանց նպատակն է նոյեմբերի 28-ի որոշումն ընդունել տալ եւ Պոլյանիչկոյի Կազմկոմիտեն տեղադրել մարզկենտրոնում: Այսքանն իմանալով՝ Գիրենկոն ու Նիշանովը ռազմական ուղղաթիռով Պոլյանիչկոյի խումբն ուղարկեցին Շուշի, իսկ իրենք թռան Բաքու՝ լրագրողներին հայտարարելով, որ, իհարկե, իրենք հասկանում են ղարաբաղցիների դժգոհությունը, բայց, միեւնույն է, ոչինչ չեն կարող անել, եւ մնում է, որ հակամարտող կողմերը լեզու գտնեն իրար հետ, լուծեն իրենց բարդացած հարցը:

**Հունվարի 9-ին** թուրքերը պատանդ վերցրին Շահումյանի շրջանի 19 ղեկավար աշխատողների (շրջկոմի առաջին քարտուղար Վ. Աղաջանյանի գլխավորությամբ), որոնք Շահումյան էին վերադառնում Գետաշենից, ուր նրանք մասնակցել էին թուրքերի կողմից դաժանորեն սպանված հայ երկու մարդկանց թաղմանը:



Նույն օրը Հայաստանի ԳԽ-ի նստաշրջանում քննարկվում էր հանրապետության 1990 թ. պետական բյուջեն, եւ որոշվեց ԼՂԻՄ-ի ժողովրդա-տնտեսական զարգացման խնդիրներն ու միջոցները եւս մտցնել նրա մեջ, քանի որ նախորդ տարվա դեկտ. 1-ի հայտնի որոշումով մարզը միացված էր Հայաստանին:

**Հունվարի 10-ին** ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությունը հատուկ որոշումով բեկանեց Հայկական ԽՍՀ ԳԽ-ի ու ԼՂԻՄ-ի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի միացյալ նստաշրջանի որոշումը՝ ԼՂԻՄ-ը Հայաստանին միացնելու վերաբերյալ եւ ս.թ. հունվարին Հայաստանի ԳԽ-ի նստաշրջանում ԼՂԻՄ-ի 1990 թ. ժողովրդատնտեսական զարգացման ծրագիրը Հայաստանի բյուջեի մեջ մտցնելու առթիվ ընդունված որոշումը, որոնք, իբր, հակաօրինական են եւ ոտնահարում են ինքնիշխան Ադրբ. ԽՍՀ իրավունքները:

Նախագահության նիստում ընդունվեց նաեւ որոշում այն մասին, որ Ադրբեջանը չի կատարել նոյեմբերի 28-ի որոշմամբ իրեն վերաբերող առաջադրանքները (չի վերականգնել մարզային ղեկավար մարմինները, մարզի կարգավիճակը բարձրացնող միջոցներ չի մշակել, չի ամրապնդել մարզի իրավունքները եւն, եւն, այսքանի կողքին էլ, դեկտեմբերի 4-ին Ադրբ. ԳԽ-ի նախագահությունն ընդունել է որոշում, որով համարյա չեղյալ, անընդունելի է համարվում նոյեմբերի 28-ի որոշման կետերի մեծամասնությունը: Սակայն այսքանից հետո անգամ չէր բեկանվում Ադրբ. ԳԽ-ի Նախագահության որոշումը:

**Նույն հունվարի 10-ին** ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի որոշումով էլ՝ նախորդ տարվա նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընդունած որոշման առկայությամբ, աննպատակահարմար համարվեց ԼՂԻՄ-ի Կառավարման հատուկ կոմիտեի գոյությունը:

**Հունվարի 11-ին** միութենական լրատվական մարմինները հաղորդեցին, որ այդ օրը Բաքվում ժողովրդական ճակատի նախաձեռնությամբ տեղի է ունեցել բազմահազարանոց հանրահավաք, որը պահանջել է «հանրապետության ղեկավարության հրաժարականը, քանի որ այն անկարող է լուծել Լեռնային Ղարաբաղի խնդիրը: Ելույթ ունեցողները նաեւ պահանջել են Բաքվից արտաքսել հայերին, կոչ են արել զանգվածաբար շարժվել ԼՂԻՄ-ի վրա, եթե կառավարությունը ձեռք չառնի անհետաձգելի միջոցներ»:

Հաղորդում էին, որ Լենքորանի ու Ջալալաբադի շրջաններում ԺՃ-ականներն ապստամբել, իշխանությունն իրենց ձեռքն են վերցրել, իսկ Շահումյանի ու Խանլարի շրջանների հայերի վրա շարունակվում են հարձակումներն ադրբեջանցիների կողմից:

**Հունվարի 12-ին** հաղորդեցին, որ Հադրութի շրջանի Հախուլլու գյուղում ադրբեջանցիները հարձակվել են կարգ պահպանող զինվորականների վրա, ծանր վիրավորել երկու հոգու, որոնցից մեկը մահացել է հիվանդանոցում:

Շահումյանի շրջանի Մանաշիդ գյուղի վրա հարձակվել են ադրբեջանցի զինված ավազակները եւ կռվի բռնվել գյուղը պահպանող ռուս զինվորության հետ: Սպանվել է զինվոր Ցիմբալյուկը, ծանր վիրավորվել են կրտսեր սերժանտ Սապֆիլովն ու կապիտան Վիկտոր Սպիրիդոնովը: Կապիտանը, որը, տեղափոխվեց Երեւան եւ բուժվում էր Վերականգնողական կենտրոնում, «Կոմունիստ» (Երեւան, ռուս.) թղթակցին պատմել է, որ դեկտեմբերին իր ջոկատը կռվել է Շուշից Կրկժանի հայերի դեմ հարձակման եկած թուրքերի հետ, ապա տեղափոխվել Շահումյանի շրջան, ուր եւ Մանաշիդի հայերի դեմ պարբերաբար ասպատակության եկող թուրք բանդաներին դիմադրություն ցույց տալիս ծանր վիրավորվել է հունվարի 12-ին (նույն «Կոմունիստ»ի հունվարի 15-ի համարը):

**Հունվարի 12-ին** Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահությունը, ելնելով ԽՍՀՄ ԳԽ-ի 1989 թ. նոյեմբերի 28-ին ընդունած եւ ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի ս.թ. հունվարի 10-ին ընդունած որոշումներից (երկուսն էլ ԼՂԻՄ-ին վերաբերող)՝ ստեղծեց Ադրբեջանի Կազմկոմիտե, որն, իբր, պիտի գործի ԼՂԻՄ-ում՝ նրա կուսակցական ու խորհրդային ղեկավար մարմինները վերականգնելու եւ տնտեսական ու վարչական կյանքը կարգավորելու ծրագրով:

**Հունվարի 13-ին** Հայկական ԽՍՀ ԳԽ-ի նստաշրջանի անունից Գորբաչովին հղվեց տագնապի նամակ-հեռագիր, որի մեջ գրված էր. «Ադրբեջանի ծայրահեղական ուժերի կողմից Բաքվում, Շահումյանի ու Խանլարի շրջաններում, Գետաշեն, Ազատ, Կա-

համեքենաների տակ ճզմված 14 հազար անմեղ ադրբեջանցիների արյունը։ Հենց միայն դրա համար Գորբաչով հրեշի գլուխը պիտի կտրել։

Այդ օրերին Բաքվում ադրբեջանցիների տված զոհերի մասին իրենք՝ ադրբեջանցիները առասպելական թվեր էին տարածել։ Օրինակ, Ռեյտեր գործակալության թղթակից Մ. Աղաեւը հաղորդել է, թե Բաքվի փողոցները լիքն են դիակներով, անմեղ արյամբ։ Զորքը կոտորում է խաղաղ բնակչությանը։ Իսկ ԽՍՀՄ Գլխավոր շտաբի պետի տեղակալ, գեներալ-գնդապետ Բ. Օմելիչեւը այդօրինակ զառանցանքները հերքում էր՝ հաստատելով, որ հունվարի 21-ի վրա, այսինքն՝ երբ հիմնականում ավարտված էին բախումները ադրբեջանցիների ու զինվորության միջեւ, սպանվել են 60 քաղաքացիներ (հասկացիր՝ ադրբեջանցիներ), 14 զինվորականներ, եւ վիրավորվել են 76 զինծառայողներ։

... Նույն օրն էլ քաղաք մտած, դրության տերը դարձած բանակային ու ՆԳՄ զորամասերի պաշտպանությամբ տեղի ունեցավ Ադր. կոմ. Կենտկոմի բյուրոյի նիստը, որը, Ա. Վեզիրովին Կենտկոմի առաջին քարտուղարի պարտականություններից ազատելով, բյուրոյի ղեկավարությունը հանձնեց նրա երկու անդամներին՝ Մինիստրների խորհրդի նախագահ Այազ Մութալիբովին ու Կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոյին։

Դարձյալ նույն օրը կենտրոնական հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Գորբաչովը եւ փորձեց խորհրդային ժողովրդին ու համայն մարդկությանը բացատրել տեղի ունեցածը՝ պատճառներով, իրական հանգամանքներով ու արդյունքով հանդերձ։ Իհարկե, ինչպես բնավորությունն ու նախասիրություններն էին պահանջում, նրա այս խոսքը եւս հեռու էր ճշմարտությունից ու ազնվամտությունից։ Համընդհանուր չարագործություններն ու հակապետական ապստամբությունը Բաքվում էին կատարվել, իսկ ինքը տակին-գլխին Հայաստանն ու հայերին էր հիշում, Հայաստանում իրականացված, իբր թե, հակամարդկային գործերը՝ նույնիսկ հենց այդ օրերի առումով (երբ այդ օրերին Հայաստանում ու ԼՂԻՄ-ում նման ոչ մի քայլ չի կատարվել, եւ հայ ժողովուրդը միայն բողոքել է իր հանդեպ գործադրվող բռնությունների դեմ)։

Երեկոյան ԽՄԿԿ Կենտկոմում տեղի ունեցավ երկրի վերին ղեկավարության հանդիպումը Ադրբեջանի ղեկավարների հետ, ծրագրվեց Ադրբեջանում կարգ ստեղծելու, կյանքը նորմալ հունի մեջ դնելու աշխատանքը, որի սահմաններում, պետք է կարծել, ամենամեծ տեղ պիտի բռներ արցախահայությանը խեղդելու, դրանով էլ ափերից ելած Ադրբեջանը զսպելու գործը։

**Հունվարի 21-ին** Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց Ադրբեջանից հանրապետություն հասած փախստականներին տեղավորելու եւ հետագա կենսապահովությունը հոգալու խնդիրների մասին։ Այն, ինչպես նշված էր, շարունակությունն էր ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի հունվարի 17-ին ընդունած որոշման, որը կոչվում էր «Ազգամիջյան հարաբերությունների սրման հետեւանքով Ադրբեջանական ԽՍՀ-ը թողած քաղաքացիներին անհետաձգելի օգնություն հասցնելու միջոցառումների մասին»։ Իրականության հետ ոչ մի առնչություն չունեցող ձեւակերպում, որի կեղծիքն ու ադրբեջանամետ բովանդակությունը բացահայտ է առաջին իսկ հայացքից։ Ավելի քան երկու հարյուր հազար հայերին կոտորել, կողոպտել, դուրս են արել Բաքվից, եւ դա համարվում էր «ազգամիջյան հարաբերությունների սրում», կոտորածից փրկվածներն էլ դարձել են «Ադրբեջանական ԽՍՀ-ը թողած քաղաքացիներ»։

Այդ օրերի թերթերն ու հեռուստատեսությունը շարունակում էին նախկին թութ ու անորոշ հրապարակումները այն չարագործության վերաբերյալ, որի իրականացնողները Բաքվի եւ առհասարակ Ադրբեջանի թուրքերն էին, զոհերը՝ ադրբեջանաբնակ հայերը։ Օրինակ, «Պրավդա»-ում. «Ժողովուրդներ, որոնք դարերով ապրել են բարեկամության ու համերաշխության մեջ, շարժվել են իրար վրա՝ հրով ու սրով։ ... Միայն խելակորույս մարդն իրեն թույլ կտա մտնել եղբայրասպանության արյունոտ շրջապտույտի մեջ»։ Ուրեմն, Բաքվի հայերն իրենք են իրենց նետել այն արյունոտ շրջապտույտը, կոտորել ու կոտորվել։



Ավելի բարվոք չէր դրությունը նաեւ միջազգային լրատվության, արտասահմանյան պետությունների կողմից, իբր, ցուցաբերվող ըմբռնողության ապարեզում։ Օրինակ, «Դեյլի միրոր»-ը հայտարարում էր, եթե Գորբաչովը հունվարի 20-ին զորքեր մտցրած չլիներ Բաքու, «իսկական պատերազմ կպայթեր ադրբեջանցիների ու հայերի միջեւ» («Իզվեստիա» հունվ. 22)։ Իսկ Իտալիայի արտգործնախարարը գտնում էր, թե «Ադրբեջանում գործադրվածը ոչ թե ճնշում է եղել, այլ կարգը վերականգնելուն ուղղված քայլեր, որոնք իրարից անջատում էին հակամարտող երկու կողմեր, որոնք ականջ չեն դնում բանականության ձայնին»(նույն թերթի հունվ. 23-ի համարը)։ Այստեղ երկու կողմեր ասելով նկատի ուներ հայերին ու ադրբեջանցիներին։

Սակայն այս մշուշոտ ու հիմար տեղեկատվության կողքին էլ հաճախ հնչում էր ճշմարտության ու բանականության ձայնը, իրականության խոսքը թափանցելու, ճշմարտությունն ասելու բացառիկ հմտությունը, որ մեծ մասամբ հատուկ էր ամերիկյան արծարծումներին, այդ էլ՝ հավանաբար այն պատճառով, որ այնտեղ գործում էր հայկական Սփյուռքը, հայրենիքի ողբերգությամբ այնպես ապրող, ամեն ժամ հետաքրքրվող ու շարժմանը քաջածանոթ գիտնականները, լրագրողները, առհասարակ բանիմաց հայ մարդիկ։ Նրանք ամեն ինչ անում էին, որպեսզի լուսավորեն մթնոլորտը, պետական ու հասարակական շրջաններին հասցնեն ճշմարտությունն Այսրկովկասի մասին։ Եւ պատահական չէ, որ հեռավոր ԱՄՆ-ի Սպիտակ տան մամուլի քարտուղար Մարլին Ֆիցուոտերը հայտարարեց, թե այստեղ հինավուրց էթնիկական անհանդուրժողության բարդույթն է։ Իսկ մեկ ուրիշը (Մարգարետ Թաքուայլեր) իրականությունը գնահատում էր մեկ նախադասությամբ. «Մեր առաջ է էթնիկական դարավոր բախումը»։

✧ ✧ ✧

Զորքի Բաքու մտնելով կարգ չհաստատվեց քաղաքում։ Հակառակը, կրքերն ավելի բորբոքվեցին, խոր պաշտպանության անցած ժողճակատայինները թաքստոցներից գնդակոծում էին փողոցներում հայտնվող զինվորականներին։ Սալյանի զորանոցների տարածքում իսկական ճակատամարտ էր։

Բանակի դեմ ընդվզեցին նաեւ պաշտոնական մարմինները. հունվարի 21-ին Ադրբ. կոմերիտմիության Կենտկոմը որոշում ընդունեց՝ պահանջելով, որ զորքը դուրս բերվի քաղաքից։

**Հունվարի 21-ի-լույս 22-ի** գիշերն էլ տեղի ունեցավ Ադրբեջանի ԳԽ-ի նստաշրջանը, որը խորհրդային զորքերի հրամանատարությունից վճռաբար պահանջեց մինչեւ հունվարի 24-ը բանակը հանել Բաքվից, հակառակ դեպքում հանրապետությունում կկազմակերպվի հանրաքվե եւ, անկասկած, Ադրբեջանը դուրս կգա ԽՍՀՄ-ից։

Իսկ կենտրոնական թերթի աշխատակիցը, արտահայտելով իր դասի խելահաս մարդկանց կարծիքը, գրում էր, թե «զորքերը պետք է մտցվեին հունվարի 13-15-ին, երբ քաղաքում տեղի ունեին հայ բնակչության ջարդերը», «հնարավորություն էր եղել,-այդ մասին խոսում էին նաեւ զինվորականները,-դրությունը հսկողության տակ առնել ավելի առաջ, ահավոր կոտորածի օրերին...»( «Комс. правда», հունվ. 25)։

✧ ✧ ✧

Արցախական աշխարհում տիրում էին բանակային ու ներքգործմինիստրության զորամիավորումները, սակայն դրանից ավելի էր ծանրացել դաժանորեն շրջափակված մարզի վիճակը, որովհետեւ եկածները հսկում էին միայն հայության վրա, իսկ ադրբեջանական կողմը հսկողությունից դուրս էր, ազատ էր շարունակելու այն վայրագությունները, որոնցում վաղուց արդեն բավական վարպետացած էր։ Օրինակ, եթե հայերի համար արգելված էին հրապարակային, հասարակական եւ նման ուրիշ միջոցառումները, եւ դրանց ամեն մի փորձ կարող էր պատժվել դաժանորեն, ապա Շուշիում հունվարի

Նախարարների այդ օրվա այցելությամբ վերջնականապես արգելվեց նաեւ Հայաստանի հեռուստա-ռադիոհաղորդումների ընդունումը նույն գոտում: Եւ քանի որ այսքանից բացի, ուրիշ ոչ մի հարցի չեն խառնվել երկու բարձրաստիճան անձերը, չի կարելի չեզրակացնել, որ նրանց գալստյան նպատակը մեկն է եղել՝ մարտնչող Արցախը հեղձուցիչ այնպիսի պայմանների մեջ դնել, որ նա ինքն իր միակ փրկության համար ձեռքը մեկնի օձին:

**Հունվարի 27-ին** Ստեփանակերտ հասավ Ադրբեջանի ԳԽ-ի նախագահության որոշմամբ (ն.թ. հունվարի 10-ի որոշմամբ) ստեղծված ղարաբաղյան կազմկոմիտեն՝ կուսակցության Ադրբեջանի Կենտկոմի երկրորդ քարտուղար Վ.Պ. Պոլյանիչկոյի նախագահությամբ (անդամները՝ Ռ. Ի.Ասադով, Ս.Մ.Վելիմամեդով, Ա.Ի. Գոլուբեւ, Շ.Ք. Քերիմով, Մ.Ռ. Ռադաեւ, Վ.Ա. Ջաֆարով եւ ո՛չ մի հայ):

Կազմկոմիտեն, իբր, ժամանել էր մարզի իշխանության մարմինները (մարզխորհուրդ, մարզգործկոմ) վերականգնելու համար եւ միակ գործակից ընտրեց ռազմական պարետ, գեներալ Վ. Սաֆոնովին: Պարզ է, որ գործի պիտի դրվեին զրահամեքենաներն ու բռնի ուժի մյուս միջոցները:

Կազմկոմիտեն տեղավորվեց կուսակցական մարզկոմի շենքում, եւ, ի նշան բողոքի, մարզկոմի՝ դեռեւս գոյություն ունեցող բաժինների աշխատակիցները լքեցին շենքը, հայտարարեցին, որ Ստեփանակերտում ոչ ոք չի գործակցելու Ադրբեջանի ստեղծած օտար մարմնի հետ:

**Հունվարի 28-ին** Հայաստանի հեռուստատեսությամբ հաղորդեցին, որ ԱՄՆ-ի սենատոր Լեյմանը եւ ուրիշ 25 սենատորներ Գորբաչովին հղել են նամակ, որով պահանջում են Լեռնային Ղարաբաղի հայությանը պաշտպանել Ադրբեջանի վայրագություններից եւ ինքնավար մարզը դուրս բերել օտար հանրապետությունից, ապահովել նրա իսկական անկախությունը:

Նման մի նամակ էլ Գորբաչովին են հղել ուրիշ 5 սենատորներ՝ Սեյմստոնի գլխավորությամբ եւ դարձյալ պահանջում են ԼՂԻՄ-ին տալ անկախություն՝ ընդառաջելով նրա ինքնորոշման վճռին:

Հունվարի վերջին «Բալթիական խորհուրդ» կազմակերպությունը, որի մեջ ներգրավված էին Լիտվայի, Լատվիայի ու Էստոնիայի երիտասարդ, անկախական ուժերը, որոշել էին միջամտել հայ-ադրբեջանական բարդույթին, հաշտեցնել նրանց հակամարտող ուժերին եւ Ադրբեջանի Ժողճակատին ու Հայաստանի ՀՀՇ-ականներին առաջարկել էին իրենց հետ հանդիպել Մերձբալթիկայում, նստել բանակցությունների սեղանի շուրջ: ՀՀՇ-ն անմիջապես արձագանքեց՝ Ա.Բլեյանի ստորագրությամբ ուղարկելով մի նամակ, որի մեջ ասվում էր՝ քննարկման կարելի է դնել հիմնականում Լեռնային Ղարաբաղի խնդիրը եւ մեկ էլ ինչ-որ կներկայացնի Ադրբեջանի Ժողճակատը:

**Փետրվարի 1-ին** մարզգործկոմի՝ դեռեւս գործող բաժինների աշխատողները թողեցին իրենց շենքը եւ տեղափոխվեցին Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի շենքը, որովհետեւ օտար կազմկոմիտեն, գեներալ Սաֆոնովի ռազմական աջակցությամբ, մարզգործկոմի շենքի գլխից հանել էր Հայկական ԽՍՀ դրոշը եւ այնտեղ տնկել ադրբեջանականը: «Մենք Ադրբեջանի դրոշի տակ երբեք չենք աշխատի»,-վճռաբար հայտարարել էին մարզգործկոմի աշխատակիցները:

Արդեն քանի օր է, մարզային «Խորհրդային Ղարաբաղ» թերթը լույս չի տեսնում, որովհետեւ վերեւների հրամանով այն ենթարկված էր ռազմական պարետ Սաֆոնովին, իսկ սա էլ կարգադրել էր թերթը տպել ու տարածել միայն մարզում, երբ ԽՍՀՄ 300 քաղաքներում այն ուներ 60 հազար բաժանորդներ, որոնց հասնող համարյա ամբողջ տպաքանակը տպագրվում էր Երեւանում, քանի որ մարզում տպագրական հնարավորությունները բացակայում էին՝ Բաքվի «ողորմածության» շնորհիվ:

**Փետրվարի 2-ին** Գորբաչովը հանդիպեց Գերմանիայի ղեկավարներից մեկի հետ եւ հայտարարեց, թե հիմա արդեն «Եվրոպական պրոցեսի շրջանակներում, Եվրոպայում ընդհանուր տան կառույցում կարող է իր լուծումը գտնել նաեւ գերման ժողովրդի ազգային միասնության խնդիրը» («Իզվեստիա», փետր. 4):



Շուրջ մեկ շաբաթ հետո նա նորից պիտի անդրադառնար այս հարցին եւ արդեն ամենայն որոշակիությամբ հայտարարեր, թե «Այժմ ԽՍՀՄ, ԳՖՀ եւ ԳԺՀ միջեւ չկան տարաձայնություններ այն առթիվ, որ գերման ազգի միասնության հարցը պետք է լուծեն իրենք՝ գերմանացիները եւ իրենք որոշեն իրենց ընտրությունը՝ ի՛նչ պետական ձեւերի մեջ, ի՛նչ ժամկետներում, ի՛նչ տեմպերով ու ինչպիսի պայմաններում են նրանք իրականացնելու այդ միասնությունը» (նույն թերթի փետր. 12-ի համարը):

Հետաքրքիր է, չէ՞, ասես այն մարդը չէ, որ հայերի միավորման ցանկության ու վճռի մասին թշնամանքով էր բերան շաղ տալիս երկու տարի շարունակ. գերման ազգի միավորման խնդիրը պետք է ինքը՝ գերման ազգը լուծի, իսկ հայ ազգինը՝ Ադրբեջանի թուրքը:

**Փետրվարի 4-ին** «Մոսքոու նյուզ» թերթը տպագրել էր իր հատուկ թղթակից Անդրեյ Պրալնիկովի ընդարձակ հոդվածը Ղարաբաղում եւ նրա շուրջը տիրող իրավիճակի մասին: Պատմում էր, թե գեներալ-մայոր Յուրի Կոսոլապովին իր զինվորները զեկուցել են, որ Խանլարի շրջանում տեսել են կախաղաններից կախված մարդկանց: Ուրեմն, Ադրբեջանի օմօնականներն այնտեղ արդեն հայերի հարցերն այսպես են լուծում, քանի որ տիրացել էին Գանձակն ու շրջականերն արտաքին աշխարհի հետ կապող ճամփաներին, ինչպես նաեւ Գանձակի օդանավակայանն էին շրջափակել:

Պրալնիկովն Ստեփանակերտում իր աչքով տեսածն էլ այսպես էր պատմում: Այդ թղթակցին ասում է՝ մարզի «պարետը որոշել էր զորավարժանք անցկացնել Ստեփանակերտում: Եւ հատուկ վաշտի մարդիկ գրավեցին շրջկոմի շենքը: Քողարկված զինվորները ավտոմատներով ցրվեցին շենքի բոլոր հարկերում եւ ներխուժեցին սենյակները: Աշխատակիցներին կանգնեցրին դեմքով դեպի պատը եւ խուզարկեցին: ԽՍՀՄ գլխավոր դատախազի ավագ օգնական Սլավգորոդսկուն նույնպես, չնայած նրա բողոքներին, ստիպեցին բարձրացնել ձեռքերը: Շրջանային կուսակցական կոմիտեի աշխատակիցները դիմում գրեցին, որտեղ նկարագրում էին կատարվածը որպես վիրավորանք իրենց պատվին ու արժանապատվությանը եւ որպես ոտնձգություն ողջ կուսակցության դեմ:

Պրալնիկովն ասում է՝ Շուշիում ադրբեջանցիները բռնագրավել են մարզի հեռուստատեսային ստուդիան եւ հաղորդում են հակահայկական զրպարտություններ, ընդհուպ մինչեւ հայերին կոտորելու կոչեր:

Մարզն արտակարգ դրություն մտցնելու պատճառով արգելվել են ուղղաթիռների թռիչքներն ու մուտքը ԼՂԻՄ: «Եւ, այնուամենայնիվ, օրական ավելի քան 70 վայրէջք է կատարվում Շուշիում եւ Ստեփանակերտին սահմանակից Խոջալու գյուղում: Ուղղաթիռներ, որոնք տարբերանշան չունեն: Ովքե՞ր են ուղեւորները, ի՞նչ բեռ են տանում: Զինվորականները միայն ասում են, որ իրենք ամեն ինչ նախապես չեն կարող ստուգել:

«Արտակարգ դրություն մտցնելը պատճառ դարձավ պարետային ժամի երկարացման, որոշ հասարակական կազմակերպությունների եւ նրանց հրատարակությունների արգելման եւ մի շարք այլ սահմանափակումների: «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթն այժմ հրատարակվում է կես ծավալով եւ հսկվում զինվորական գրաքննության կողմից: Թերթի խմբագրի տեղակալ Արկադի Ղուկասյանը, որը մի քանի օր առաջ տպագրել էր «Վերջապես բացե՛ք ձեր աչքերը» հոդվածը, ձերբակալվել է ադմինիստրացիայի կողմից: Իմ կարծիքով հոդվածն արդարացիորեն քննադատում է դեռեւս գոյություն ունեցող ձգտումը զուգակշռելու հայ-ադրբեջանական կոնֆլիկտի շուրջ եղած իրադարձությունների մասին ինֆորմացիան»:

**Փետրվարի 5-7-ը** տեղի ունեցավ ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը, որին ներկայացրած իր զեկուցման մեջ Գորբաչովը ծավալուն խոսք ասաց նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի մասին: Ծավալուն, սակայն նոր կամ առհասարակ տրամաբանական ոչինչ չասող: Իբր, ԽՄԿԿ Կենտկոմն ու խորհրդային կառավարությունը նրա լուծման համար երկու տարվա ընթացքում գործադրել են «խոշոր միջոցներ»: «Կարելի էր հուսալ, թե կբարելավվի վիճակը, կլուծվի այդ բարդ հանգույցը: Սակայն հենց այդպիսի հեռան-

հավասար իրավունքներ միութենական դաշնության մեջ։

Եւ այս մթնոլորտում էլ ադրբեջանական դեպուտատական խումբը ռազմաշունչ վճռականությամբ պահանջում էր դատապարտել Բաքվում արտակարգ դրություն հայտարարողներին ու քաղաքը բանակ մտցնողներին, որոնք, իբր, պատճառ են դարձել անհամար անմեղ ադրբեջանցիների մահվան, տառապանքի։

Ելույթ ունեցավ նաեւ Բորիս Դադամյանը՝ հայտարարելով, թե հանցանք է ոչ թե Բաքու բանակ մտցնելը, այլ ո՛ւշ մտցնելը, ուշ՝ ուղիղ մեկ շաբաթ, որի ընթացքում չարագործները հաշվեհարդար են տեսել քաղաքի ողջ հայ բնակչության հետ։ Ա՛յ, ա՛յս հաշիվը պիտի ներկայացնել ե՛ւ բանակային զորքերն ուշացումով քաղաք մտցնողներին, ե՛ւ հայոց նոր եղեռնը կազմակերպողներին ու իրականացնողներին։

Նույն օրը ԼՂԻՄ-ի մի շարք ղեկավար աշխատողներ (Օլեգ Եսայան, Մաքսիմ Միրզոյան, Սեդրակ Սեդրակյան եւլն), ինչպես նաեւ ԼՂ-ից միութենական դեպուտատները հանդիպում ունեցան ԽՍՀՄ ԳԽ-ի նախագահի տեղակալ Ա.Ի.Լուկյանովի հետ, հաղորդեցին արցախահայության մերժողական վերաբերմունքը 89-ի նոյեմբերի 28-ի որոշման նկատմամբ եւ բացատրեցին պատճառները, մանավանդ շրջափակումն ու Ադրբեջանի գործադրած նոր տնտեսական ճնշումները։ Լուկյանովը նրանց հասկացրեց, որ Կենտրոնը չի հրաժարվելու նոյեմբերի 28-ի որոշումից, իսկ մարզի բյուջեին առանձին տող հատկացնելու հարցը կարելի է լուծել։

Երկրի ֆինանսների մինիստր Պավլովն այդ «առանձին տողը» հատկացնելու խնդրով նամակ հղեց Ադրբեջան (ուրեմն, Ադրբեջանը պիտի առանձին տողով հատկացումներ անի ԼՂԻՄ-ին, արցախցիները կարող են ցնծություն ապրել)։

**Փետրվարի 19-ին** տեղի ունեցավ Գերագույն խորհրդի երկու պալատների միացյալ, սակայն փակ նիստը։ Փակ, որովհետեւ, ադրբեջանական պատվիրակության պահանջով, պիտի քններ հունվարի 20-ին Բաքու զորք մտցնելու եւ Ադրբեջանի դեմ չարագործություններ կատարելու համար մեղավորների հարցը։ Իսկ դա, ամենայն հավանականությամբ, ունենալու էր աղմկոտ ընթացք։

Իսկապես այն շատ էր աղմկոտ։ Այնչափ աղմկոտ եւ, մանավանդ, արդար, որ իրենց պահանջներով ներկայացած ադրբեջանցիներն ստիպված եղան դահլիճը թողնել եւ ադրբեջաներեն հայհոյելով ու անիծելով հեռանալ։

Ելույթ էին ունեցել 25 դեպուտատներ, եւ համարյա բոլորն էլ դատապարտեցին Ադրբեջանում տեղի ունեցած անմարդկային չարագործությունները հայերի, ռուսների, ռուսախոս մյուս ազգությունների հանդեպ։ Այս ոգով խոսք ասած համարյա բոլորն էլ համարում էին, որ Լեռնային Ղարաբաղի հայությունը գտնվում է գերու եւ պատանդի վիճակում։ Եւ սրանից էլ կատարում էին իրենց եզրակացությունը։ Այսպես, օրինակ, նույնիսկ զինվորական մի դեպուտատ՝ Մ. Ս. Պետրուշենկո, որը, հավանաբար, վկան էր եղել դեպքերի եւ տեղյակ էր հարցի խորքին, պահանջում էր «ժամանակավորապես (ընդգծում էր՝ ժամանակավորապե՛ս) Ղարաբաղը դուրս բերել Ադրբեջանի ենթակայությունից եւ ենթարկել կենտրոնին, այսինքն՝ Մոսկվայի՛ն, այնքան ժամանակ, քանի դեռ ադրբեջանական կողմը հայերի անվտանգության երաշխիքներ չի տալիս» («Ավանգարդ»)։

Եւ միայն ո՛չ անհայտ Պրիմակովն էր, որ իր խոսքի ամենասանձարձակ մասերը նվիրել էր հայերին ու Հայաստանին եւ, ինչպես հետագայում դեպուտատ Գր. Խանջյանն էր վկայում, առաջարկել էր Կենտրոնի հանձնարարությունները չընդունող ու չիրականացնող հանրապետությունները դուրս անել ԽՍՀՄ-ից, ուրիշ խոսքով՝ դուրս անել Հայաստանին, որի համար ԳԽ-ի անցյալ տարվա նոյեմբերի 28-ին Արցախի մասին ընդունած որոշումն անընդունելի է։

Գերագույն խորհրդի այս նիստը, չնայած փակ, բավական հարցեր բացեց ու պարզեց։ Նախ՝ որ Ադրբեջանը ո՛չ թե նպատակ ուներ ԼՂԻՄ-ը պահել իր կազմում, եւ կռիվը դրա համար էր գնում, այլ դա առհասարակ հարց էլ չէր համարում (այսինքն՝ Ղարաբաղը համարում էր իր գրպանում դրած) եւ միայն մեկ հոգս ուներ՝ այնտեղից վռնդել վերջին հային, ինչպես որ արեց Բաքվում։



Մինիստր Բակատինը, խոսելով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անցյալ տարվա նոյեմբերի 28-ի հայտնի որոշման մասին, բացատրում էր Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի բացասական վերաբերմունքը նրա նկատմամբ (չէ՞ որ այդ որոշմամբ ԼՂԻՄ-ը թողնվում էր Ադրբեջանի կազմում՝ փոխարենը որոշակի ոչ մի դրական քայլ չձեռնարկելով մարզի վարչա-քաղաքական վիճակը բավարարելու հարցում)։ Իսկ ահա Ադրբեջանը դժգոհ էր միայն որոշման 6-րդ կետից, ավելի ճիշտ՝ չէր ընդունում այն, քանի որ այդ կետով նախատեսվում էր, մինչեւ «հասարակական-քաղաքական դրության կարգավորումը, բնակչության անվտանգության պահպանման ու երաշխիքի նպատակով, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում պահել ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի համապատասխան քանակություն՝ Միութենական ստուգող-դիտորդ հանձնաժողովի ենթակայությամբ» («Ավանգարդի» նույն համարում)։

Բայց ինչո՞ւ էր դեմ, երբ այդ մարզը ոտով-գլխով իրեն էր հանձնված, եւ պահվող զորքը միայն մեկ դեր է ունենալու՝ պահպանել բնակչության անվտանգությունը։ Որպեսզի բացառվեր նաեւ այդ ապահովությո՞ւնը, եւ ադրբեջանական օմոնի մենաշնո՞րհը դառնար արցախահայության ճակատագրի տնօրինությունը։

Բակատինն առավել զարմացած էր նրանից, որ ԼՂԻՄ-ն իսկապես ոտով-գլխով Ադրբեջանին հանձնող այդ որոշումն իրականացնելու համար ոչ մի քայլ չի կատարվել Ադրբեջանում։ «Ինձ համար անհասկանալի է,-զանգատվում էր Բակատինը,-թե ինչու ո՛չ մի, նույնիսկ ձեւական, միջոց չի ձեռնարկվել, ասենք՝ թեկուզ մի որեւէ թղթի կտորի հրապարակում՝ ԽՍՀՄ ԳԽ-ի նոյեմբերի 28-ի որոշումն իրականացնելու համար։ Ընդհակառակը, խախտելով սահմանադրությունը, դեկտեմբերի 4-ի որոշմամբ այս որոշման գործողությունը դադարեցվել է...»։

Բոլորը զարմացած էին, թե ինչո՞ւ մի թղթի կտոր իսկ չի հրապարակում։ Չէին հասկանում, որ նա այդ ԼՂԻՄ-ի հարցը լուծված է համարում (չէ՞ որ Գորբաչովն էր՝ ասել), եւ մտածում էր միայն նրա դատարկման-հայաթափման մասին։

Բոլորը զարմացած էին, բացի Գորբաչովից, որը շատ լավ էր հասկանում իր հովանավորյալի վիճակն ու նպատակը եւ ինքն էլ իր հերթին հանգիստ էր դեպքերի զարգացման համար։

Բակատինը բացում էր մի գաղտնիք եւս. ասաց՝ իրենք առաջարկել էին Բաքու զորքեր մտցնել շատ առաջ, քան հունվարի 20-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ գազազած ամբոխները թափվել էին հայերի վրա, բարձրահարկերի պատուհաններից էին դուրս թափում, կոտորում էին, կողոպտում, կենդանի վառում Սաբունչիի կայարանի հրապարակում։ Ասում է. «Երբ ԽՍՀՄ ՆԳՆ-ն առաջարկություն մտցրեց Բաքվում անհապաղ արտակարգ դրություն մտցնելու մասին՝ շատ ավելի շուտ եւ ոչ թե ամսի 20-ին, ինչպես դա արվեց, ապա հենց Ադրբեջանի խնդրանքով այն մերժվեց...»։ Ադրբեջանը խնդրեց թույլ տալ, որ իրենք Բաքվում կարգ ստեղծեն... Այո՛, Ադրբեջանը խնդրեց, խոստացավ, եւ Գորբաչովն էլ հավատաց... Գորբաչո՛վը, որ Սումգայիթում ընդամենը երեք ժամ էր ուշացել, այստեղ էլ՝ միայն մի շաբաթ։ Գորբաչո՛վը, որ դեռեւս երկու տարի առաջ գիտեր Բաքվում բնակվող հայերի ճշգրիտ թիվը եւ, իբր, շատ էր մտահոգված նրանց ապահովության խնդրով...

Այս «պատմական» նիստում, որ փակ էր տարվում, ժողովրդի աչքից հեռու, եւ մասնակից ամեն մեկը կարող էր լինել այնպիսին, ինչպիսին է՛ կամ ինչպիսին ուզո՛ւմ է լինել, գորբաչովականներից ոմանք, այնուհանդերձ, մարդկային հատկանիշներ էլ ցուցադրեցին, իրենցից անկախ՝ մերկացրին խորքային երեւույթներ, որոնք շատ են անհրաժեշտ ժամանակը գոնե մոտավորապես պատկերացնելու համար։ Ինչպես հենց այս Բակատինը, նույնիսկ Յազովը, որի մի քանի մերկ խոսքերից (օրինակ, ասում էր Ադրբեջանի ղեկավարների նախաձեռնությամբ՝ 49 զոհված քաղաքացիների համար փորել են 150 գերեզման, ինֆարկտից մեռած մի պառավի ներկայացրել իբրեւ տանկի թրթուրների տակ ճզմվածի, ռուս զինվորականին կենդանի-կենդանի թաղել...)։

Ադրբեջանի դեպուտատները զայրացած հեռացան դահլիճից։

**Ապրիլի 22-ին** «Բակ. ռաբոչին» հաղորդում էր, թե նախորդ օրերին հանրապետության ԳԽ-ի Նախագահության նիստում քննարկվել է Լեռնային Ղարաբաղի վիճակի հարցը, եւ տեղացիներից (այսինքն՝ ղարաբաղցիներից) ելույթ են ունեցել ՆԳ վարչության պետ ինչ-որ Կովալեւ, մարզի դատախազ ինչ-որ Վասիլենկո, ռազմական պարետության ներկայացուցիչ ինչ-որ գնդապետ Բոգոդուխով։ Եւ արցախահայության այս «ներկայացուցիչների» գործուն մասնակցությամբ ընդունել են երկու կարեւոր որոշում, որոնցից մեկով արգելվում է մարզում Հայաստանի ԳԽ-ի դեպուտատներ ընտրելուն ուղղված ամեն տեսակ գործողություն՝ իբրեւ օրինախախտություն, իսկ երկրորդով մարզի վարչա-տարածքային բաժանման մեջ մտցվում են հետեւյալ փոփոխությունները.

Ասկերանի շրջանի տարածքում.

Ա) Խոջալու գյուղը հայտարարում են քաղաք՝ ստեղծելով Խոջալվի քաղխորհուրդ,

Բ) Ստեղծում են Մեշալիի գյուղխորհուրդ։

Հադրութի շրջանի Հախուլլու եւ Սալաքյաթին խղճուկ բնակավայրերն էին բաժանում Էդիլու եւ Ազոխ հայկական գյուղերի գյուղխորհուրդներից՝ երկուսին էլ տեր դարձնելով գյուղխորհուրդների։

Մարտակերտի շրջանում էլ նույն արտոնությանն են արժանացնում Բաշ-Գյունեփայա բնակավայրին։

Մարտունու շրջանում. Մարտունու քաղխորհրդից ազատագրվող Խոջավանդին, Ամիրանլարին, Մուղանլուին ու Կուրոպատկինոյին տալիս էին գյուղխորհուրդներ։

Եւ, վերջապես, Ստեփանակերտից առանձնացնում էին Կրկժանը (այն կոչելով Քիրքիջահան), նրան էլ պարգեւելով մի ավանային խորհուրդ։

Այս անգամ Ադրբեջանի ԳԽ-ի Նախգահությունը բավարարվեց միայն այսքանով։

**Ապրիլի 24-ին** տասնյակ հազարավոր ստեփանակերտցիներ ու մարզի շրջանների ներկայացուցիչներ հանդիսավոր շքերթով հավաքվեցին քաղաքի հուշահամալիրը՝ նշելու 1915-ի հայոց Մեծ եղեռնի տարելիցը։ Տարերայնորեն ստեղծված միտինգին ելույթ ունեցան բանաստեղծներ Գուրգեն Գաբրիելյանը, Սոկրատ Խանյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մանկավարժական ինստիտուտի անվանի դասախոսներ։ Հաջորդ օրն իսկ գեներալ Սաֆոնովը նրանց բոլորին բանտարկեց, ապա տուգանեց 1000-ական ռուբլով եւ տնային կալանք նշանակեց ապրիլի 30-ից մինչեւ մայիսի 10-ը։

Տուժածները վկայում էին, որ զինվորական պարետի այս վայրենի կամայականությունը կատարվել է ԽՍՀՄ ԳԽ-ի ստուգող-դիտորդ հանձնաժողովի նախագահի Վ. Ֆոտեեւի իմացությամբ, ուրեմն եւ համաձայնությամբ։

**Ապրիլի 25-ին** ԼՂԻՄ-ի մարզգործկոմի նախագահի ու շրջգործկոմների նախագահների ստորագրություններով մի բողոք ուղարկվեց Կենտրոն՝ ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահություն, Սահմանադրական վերահսկողության կոմիտե եւ Գերագույն դատախազություն։ Այնտեղ ցույց էր տրվում, որ Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահության՝ ապրիլի 22-ին ընդունած որոշումն անօրինական է, կամայականորեն անխելք, հակասում է խորհրդային օրենքներին, որ այն փաստորեն Մութալիբովի՝ կուս. Կենտկոմի պլենումում հրապարակած հրահանգն է իրականացնում մի եղանակով, որը վայրենի է ու անմարդկային... Ուստի դրանով հանրապետության ղեկավարությունն առավել խորացնում է մարզում տիրող ճգնաժամը եւ պատասխանատու է հետեւանքների համար։

Կատարվածը եւ համանման բազմաթիվ արարքներ նորից ոտքի էին հանել մարզի հայությանը, հավաքվում էին բողոքի ցույցերի, զայրալից հեռագրեր ուղարկում Կենտրոն՝ երկրի ղեկավարներին ու իրավապահ մարմիններին։ Այդ օրերին Գորբաչովի հասցեով ուղարկված բողոքի գրերը, որոնցում Լեռնային Ղարաբաղի նոր տեր ու բռնակալ կարգված Պոլյանիչկոյի չարագործություններն էին մերկացվում, հազարների էին հասնում։ Դրանցից մեկն էլ, որ ապրիլի 28-ին մարզի ու շրջանների ղեկավարներն էին ստորագրել, պատմում էր, թե Պոլյանիչկոյի ղեկավարությամբ սադրիչ գործողություններ են հրահրվում, ժողովրդին մղում հակակառավարական, հակառուսական քայլերի։ «Ամեն օր,- ասված էր այդ բողոքի նամակում,- տասնյակ անգամներ ռադիոբարձրախոսներով



հայ ժողովրդին են դիմում՝ պահանջելով ենթարկվել Ադրբեջանին կամ թողնել հայրենի օջախները եւ մաքրել Ղարաբաղը (այդպես էլ ասում են՝ «մաքրել Ղարաբաղը»)։ Վիրավորում են մեր ազգային ու մարդկային արժանապատվությունը։ Հայհոյում են մեր դեպուտատներին, հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներին։ Մեր երկաթգծի ու ավտոճանապարհների դաժան շրջափակման պայմաններում սահմանափակում են նաեւ ավիառեյսերը, արգելում բեռնատար ինքնաթիռների եւ ուղղաթիռների գործունեությունը նպատակ ունենալով մարզը խեղդամահ անել տնտեսապես ու բարոյապես։ Ռուս մարդկանց անուններից կեղծագրեր են տարածում՝ արցախահայությանը մեղադրելով Խորհրդային երկրում ստեղծված տնտեսական դժվարությունների եւ մանավանդ Բաքվի հունվարյան ջարդերի մեջ։ Ամեն ինչ անում են մեր բնակչությանը մղելու հակառուսական, հակակառավարական ելույթների, որպեսզի ազատ լինեն բանակն օգտագործելու իբրեւ պրովոկացիայի ու բռնության միջոց...»։

Ինչ հույսով մարդիկ սպասում էին, որ երկրի ղեկավարությունը կպատժի կամ գոնե կարգի կհրավիրի Պոլյանիչկո կոչված խառնակչին, կսանձահարի գեներալ Սաֆոնովին ու մյուս չարագործներին... Եւ, ահա՛, մայիսյան տոներին քաղաքի փողոցներում տիրություն անող զրահամեքենաների բարձրախոսներից երկու օր շարունակ հոսում-տարածվում էր Գորբաչովի ուղարկած հետեւյալ շնորհավորական հեռագիրը.

«Ստեփանակերտ, Ադր. ԽՍՀ ԼՂԻՄ, Ադր. ԿԿ մարզկոմ, ընկեր Վիկտոր Պետրովիչ Պոլյանիչկոյին,

Սրտագին շնորհավորում եմ ձեզ մայիսմեկյան տոնի առթիվ։ Հաջողություններ եմ մաղթում վերակառուցման պրակտիկ գործերում, տնտեսական վերակերտումներում, կուսակցության ու ժողովրդի ջանքերի միավորման մեջ՝ ԽՄԿԿ 28-րդ համագումարի նախապատրաստության համար։ Բարի առողջություն ձեզ, վստահ ու վճռական գործողություններ։ Խնդրում եմ տոնական շնորհավորանքներս հաղորդեք աշխատանքի ընկերներին։

*Մ.Ս. Գորբաչով*»։

Պարզ ու հստակ էր մի բան. նախընթացին Մոսկվա ուղարկված բողոքի նամակներն ու հեռագրերը Գորբաչովին համոզել էին, որ Պոլյանիչկոն այն է, ինչ իրեն անհրաժեշտ է Արցախում։ Ուստի եւ հրամայելու պես խորհուրդ տվեց՝ «վստահ ու վճռական գործողություններ»։

**Մայիսի 3-ին** Հայաստանի ԳԽ-ի նստաշրջանում քննարկվեց Լեռնային Ղարաբաղի վիճակի հարցը եւ ընդունվեցին երկու որոշում, մեկը՝ նախորդ տարվա հոկտեմբերի 10-ին Ստեփանակերտում խորհրդային զորքի կողմից անմեղ մարդկանց դեմ զենք գործադրելու եւ պատճառած վնասների մասին, մյուսը՝ մարզի վիճակի ու նրա կարգավորման խնդիրների։ Երկուսն էլ՝ շատ կարեւոր, գրված բավական խելոք, մանավանդ համարձա՜կ։ Օրինակ, այս երկրորդում գործնական միջոցառումներ են նշվում, հանձնարարություններ(այո՛, նույնիսկ հանձնարարություններ) ու առաջարկություններ՝ հասցեագրված Կենտրոնին, իսկ վերջում՝ «Սույն դիմումից բխող միջոցներ չձեռնարկելու դեպքում ամբողջ պատասխանատվությունն իրադրության հետագա բարդացման համար՝ դրվում է կենտրոնական մարմինների եւ անձամբ ԽՍՀՄ պրեզիդենտի վրա»։

Հետո՞։ Ի՞նչ պիտի լինի այդ պատասխանատվության գինը,- իրենք իրենց հա՞րց էին տալիս նման որոշում ընդունողներն ու ստորագրողները։ Չէ՞ կարեւորը ժողովրդի աչքին խիզախ երեւալն էր, որն ինքնին կարող էր դառնալ նոր մի չարիք ե՛ւ նման որոշում ընդունողների համար, ե՛ւ հատկապես խեղճ ու անզոր ժողովրդի։

Չէ՞ որ Գորբաչովն իր հրեշավոր կամակատարներին հրահանգել էր կատարել «վստահ ու վճռական գործողություններ», որոնց դիմակայելու այսօրինակ որոշումներն ու կոչերը պարզապես վտանգալից էին։

Մայիսի սկզբներին Հադրութի շրջանի Տող գյուղում, որը բնակեցված էր հայերով ու ադրբեջանցիներով, ազգամիջյան բախում տեղի ունեցավ, որովհետեւ զինվորականների

ուղեկցությամբ գյուղ էին խուժել նոր ադրբեջանցի (հարեւան շրջաններից եկած) ընտանիքներ եւ տներ էին կառուցում, ամբողջ մի թաղամաս: Այս բռնարարքին տեղեկացած շրջանային կազմակերպությունները անզոր եղան արգելել անօրեն շինարարությունը: Այն ժամանակ գործի դրվեց ինքնապաշտպանը, եւ Սաֆոնովի զինվորները յոթ հայի բանտարկեցին:

Մութալիբովի հանձնարարության արդյունքն էր սա, որ պիտի գործեր ամենուրեք:

Նույն օրերին Մութալիբովը, ԽՍՀՄ ներքին գործերի մինիստրի տեղակալ գեներալ-գնդապետ Շաշալինն ու Սաֆոնովը ժամանել էին Լաչինի շրջան, եղել հարեւան Զանգելանի ու Կուբաթլիի շրջաններում, հավանաբար տեղական ուժերին տվել հանձնարարություններ, ապա Շաշալինը, ամենայն հավանականությամբ՝ Մութալիբովի խորհրդով, մայիսի 11-ին Սաֆոնովին դարձրեց ԼՂԻՄ-ի մշտական պարետ:

**Մայիսի 19-ին** Սաֆոնովի կարգադրությամբ փակվեց Ստեփանակերտի օդանավակայանը, որ միայն մարդատար ինքնաթիռներ էր ընդունում Երեւանից եւ միակ պատուհանն էր դեպի արտաքին աշխարհ: Դադարեց հեռախոսային կապը Երեւանի հետ: Մարզում լռեց նաեւ Երեւանի ռադիոն: Չէ՞ որ հաջորդ օրը լինելու էին Հայաստանի ԳԽ-ի ընտրությունները, որոնց մասնակցելու էին նաեւ մարզի ընտրողները: Սաֆոնովն ու Պոլյանիչկոն այսպես էին նախապատրաստվում այդ կարեւոր միջոցառմանը:

**Մայիսի 20-ին** Արցախական աշխարհի 11 ընտրական տեղամասերը գործեցին, ընտրությունները տեղի ունեցան կանոնավոր, եւ դեպուտատության Արցախի 11 թեկնածուները ընտրվեցին Հայաստանի ԳԽ-ի դեպուտատներ: Չնայած Սաֆոնովը զինվորական նոր ջոկատներ էր մարզ մտցրել, ընտրական տեղամասերը պաշարել, իսկ զրահամեքենաներից էլ բարձրախոսներն սպառնալիքներ էին տեղում, ընտրողներին խոստանում ամենադաժան պատիժներ ու չարություններ:

**Մայիսի 24-ին**, գեներալ Շաշալինի Արցախ այցելելուց մի քանի օր հետո, մարզում զինվորականների ու բնակչության հարաբերությունները այնքան էին սրվել, բախումները այնքան հաճախացել, որ այս օրը, մանավանդ լույս 25-ի գիշերը համարյա չէին դադարում կրակոցները, եւ մարզի կենտրոնում երկկողմյա հրացանազարկերից սպանվեցին մեկ բնակիչ, մեկ զինվորական, վիրավորվեցին 4 զինվոր ու 9 քաղաքացի:

Շաշալինի այցելության հետ են կապում հայության այն ժամանակներին պատահած մի շարք դեպքեր՝ Գետաշենի ենթաշրջանի Կամո եւ Ազատ գյուղերի հայաթափումը հենց այդ տարվա ձմռանը, երբ նա այցելել էր այդ գյուղերը, եւ, իհարկե, Երեւանում մայիսի 27-ին տեղի ունեցած կոտորածը՝ այդ նույն գեներալի Երեւան ժամանելուն պես:

Իսկ Ստեփանակերտի այս նոր բախումը Շաշալինի կազմակերպածը կամ հրահրածն էր թե ոչ, այնքան էլ կարեւոր չէ: Կարեւորն այն էր, որ մայիսի 24-ին Արցախական աշխարհի տերը ռուս զինվոր սպանեց: Սպանեց, որ նշանակում է՝ պատժեց նրան՝ շուրջ երեք տարիներին կատարած ապօրինությունների, դաժան պատժարշավների, ադրբեջանական վայրագությունները հովանավորելու համար: Եւ կարեւոր չէ նաեւ, թե նա որքա՛ն իրավացի էր: Կարեւորն այն էր, որ նրան հասցրել էին այդ քայլին՝ նրա մեջ ատելություն բորբոքելով, թշնամանք հրահրելով, մղել էին մի քայլի, որ պարզապես անբնական, նույնիսկ աներեւակայելի էր մինչեւ 88-ը:

Այն օրերին Հայաստանում ու Արցախում տարածված էլ Սիլվա Կապուտիկյանի խոսքը, թե հայի մեջ ռուսատյացություն սերմանելու համար մարդ շատ հնարամիտ պիտի լիներ, ուղղակի հանճարեղ, եւ Գորբաչովը եղավ այդպիսին, կատարեց մեծատաղանդ հրեշագործություն:

Հիմա արցախահայն սպանել է իրեն տանջահարության ենթարկող, ստորացնող, իր ազատ ու անկախ ապրելու իրավունքն այնպես անխղճորեն ոտնահարող ռուս զինվորին: Հետո՞ ինչ պիտի լիներ: Գետաշենի ենթաշրջանում կատարված խարդավանքների ականատես ռուս մտավորականներն իրենք գուշակում էին մի տխուր վիճակ, որին կարող էին հանգել հայ-ռուս փոխհարաբերությունները: Եւ հիմա դա՞ էր սկսվում:



**Մայիսի 28-ին** գեներալ Սաֆոնովը հրապարակեց հրաման, որով իրեն ու իր ենթականերին իրավունք էր վերապահում, մարզում կարգ հաստատելու համար, անջատել ծայրահեղական ու սադրիչ գործողությունների մղող արցախցիների բնակարանային ու ծառայողական հեռախոսները: Եւ այս սանձարձակության արդյունքն այն եղավ, որ քաղաքի հայ բնակիչները զրկվեցին քաղաքակրթության այս մեկ նվաճումը վայելելու իրավունքից եւս:

**Հունիսի 1-ին**, ռազմական բազմամարդ պահակախմբերի ուղեկցությամբ, հայ մարդկանցից թաքուն, Ստեփանակերտ ժամանեց Ա. Մութալիբովը, նախկին կոմ. մարզկոմի շենքում պատվոգրեր հանձնեց Սաֆոնովին ու նրա մի քանի ենթակաների՝ Ադրբեջանին մատուցած գնահատելի ծառայությունների համար եւ ետ գնաց: Հետո միայն արցախահայությանը հայտնի դարձավ, որ վերադարձին նա եղել է նաեւ Խոջալու «քաղաքում», այնտեղ մասնակցել է նորակառույց գործվածքային ֆաբրիկայի բացմանը եւ արտասանել է ճառ՝ հայերին այսպես հիշելով. «Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հայերին, ապա նրանք մեր տնկեցներն են, մեր հյուրերը: Դրա համար էլ մենք, ըստ մեր ժողովրդական սովորության, պետք է մեր հյուրերին որոշ բաներ զիջենք: Ա՛յ, երբ մենք նրանց ղեկավարներից ոմանց հավաքենք, դրանից հետո ձեր ու նրանց միջեւ խաղաղություն կլինի...»:

Այդ օրերին Արցախի լրագրողներից մեկը (Գ. Բաղդասարյան) հոդված էր տպագրել եւ հիշում էր Ադրբեջանի թուրքի հին ու հայտնի խրատն իր ժառանգին. «Երբ մի տեղ հյուր գնաս, հիշիր, որ առաջին օրը հյուր ես, երկրորդ օրը՝ տան լիիրավ անդամը, երրորդ օրը՝ տանտեր» («Երեկոյան Երեւան», 1990, մայիսի 19):

Երրորդ օրը վաղուց է անցել, եւ շատ զարմանալի կլինի, եթե թուրքն իրեն չզգա ոչ միայն քո տան, այլեւ աշխարհի տերը:

**Հունիսի 4-ին** Մ. Գորբաչովը, երբ Ռայիսա Մաքսիմովնայի հետ շրջագայում էր ԱՄՆ-ում, Կալիֆորնիայի նահանգում, նահանգապետ Ջորջ Դուքմեջյանը Սան-Ֆրանցիսկոյում հետը զրուցելուց հետո նրան հանձնեց նամակ, որով խնդրում էր վերստին անդրադառնալ ԼՂ-ի խնդրին: «Պարոն Գորբաչով, ես հայ եմ... Հիմա հայկական ջարդեր են կազմակերպվում Արցախում: Դուք իմ տեղը լինեիք եւ իմ պաշտոնին, ի՞նչ դիրք կգրավեիք»,-ասել է նա՝ հանձնելով Արցախի հարցի լուծման իր պահանջների գիրը:

Վկաներն ասում են՝ Գորբաչովն ընդունել է գիրը, սակայն ոչինչ չի պատասխանել: Դուքմեջյանի շահախնդրությունն Արցախի հարցում հայտնի էր արդեն.

Գորբաչովը, եթե գոնե հիշողություն ուներ, պետք է մոռացած չլիներ, որ դեռեւս 88-ին, Արցախի շարժման սկզբնական շրջանում, ստացել է նրա հատուկ նամակը ողջ հայության մտահոգությունը դարձած այդ հարցի լուծման խնդրանքով:

Իսկ ամերիկյան շրջանակները հիշում են, որ նույն 88-ին, հենց Դուքմեջյանի նախաձեռնությամբ, ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի անդամները (Չարլզ Փաշայան, Մարտին Խաչատրյան, Պատ Օհանյան, Ռոբերտ Դոուլ եւ այլ սենատորներ) ամեն ջանք գործադրեցին, որպեսզի ստեղծվի հայտնի փաստաթուղթը:

**Հունիսի 7-ին** «Բակ. ռաբոչի» թերթը հրապարակեց իր թղթակցի հարցազրույցը ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարաբերությունների բաժնի վարիչի առաջին տեղակալ Վյաչեսլավ Միխայլովի հետ: Վերջինս Արցախի խնդրի բարդացման վերաբերյալ արտահայտեց իր հետեւյալ կարծիքը. «ԼՂԻՄ-ի շուրջ տեղի ունեցած դեպքերի հենց սկզբից էլ Կենտրոնն իր վրա չպետք է վերցներ հարցի լուծման ամբողջ պատասխանատվությունը, որը մեծ չափով Ադրբեջանական ԽՍՀ իրավասությունն է հանդիսանում»:

Սա այն Միխայլովն է, որ 88-ի փետրվարի առաջին կեսին Արցախի մտավորականների պատվիրակությանն ընդունել, ունկնդրել, ապա հուսադրել է եւ ճանապարհելիս էլ վստահեցրել, թե հանգիստ եղեք, ձեր հարցի առաջ ոչ մի բարդություն չի կարող լինել:

Հիմա դժվար է որոշել՝ նրա խոսքն ի՛նչ գին ուներ այն ժամանակ, եւ, ինչպես ժողովուրդն է ասում, Կենտկոմում ի՛նչ էին չափում նրա բերանով: Հայտնի է, որ արցախցիներն ու նրանց թիկունքում կանգնած Հայաստանը դեպքերի զարգացման ամբողջ ըն-

նաեւ հետագա բոլոր քայլերը՝ «հայրենի իշխանության ղեկավարությամբ» (միայն այսպե՛ս): Հասկանալի է, որ նորաստեղծ իշխանության ներկայացուցիչը հուշտ էր եղել նրանից, որ ասպարեզում հայտնվել էր մի այլ ուժ եւ փորձում էր խոսել սեփական ժողովրդի հետ, ա՛յն ժողովրդի, որը միայն նորաստեղծ իշխանություններից է սպասում «իրենց հուզող հարցերի լուծումները»:

Բայց չէ՞ որ արդեն պարզ էր եւ իր՝ Կտրիճ Սարդարյանի պարագային էլ չէր կարելի չտեսնել ու չհասկանալ, որ Արցախի հարց նրանք չունեն, այո՛, լավագույն դեպքում՝ չունեն:

**Սեպտեմբերի 7-ին** տեղի ունեցավ ներքին զորքերի ու ադրբեջանական օմօնի հերթական ավազակային գործողությունը Մարտունիում: Առավոտյան նրանք բացել էին կուս. շրջկոմի ու շրջգործկոմի շենքերի դռները, նրանցում տիրություն էին անում՝ որոշած լինելով այստեղ եւս կատարել այն բարբարոսությունը, որ հաջողությամբ իրականացրել են Հադրութում ու Շահումյանում:

Կատարվածի մասին անմիջապես իմացան ամբողջ շրջանում եւ, չնայած նախապես փակված էին գյուղերից շրջկենտրոն տանող ճանապարհները, ետմիջօրեին Մարտունի էին հավաքվել բոլոր գյուղերից ժամանած խմբերը, պաշարեցին շրջկոմի ու շրջգործկոմի շենքերը եւ պահանջեցին հրդեհել դրանք, եթե բռնազավթիչները դուրս չգան ու չհեռանան քաղաքից:

Գնդապետ Օվչիննիկովը՝ արտակարգ դրության շրջանի պարետի ժամանակավոր պաշտոնակատարը, տեղ հասավ երեկոյան դեմ եւ, խորհրդակցելով շենքերին տնօրինություն անողների՝ Բաքվի դրածոների հետ, ելավ դուրս եւ ժողովրդին հայտնեց, որ նրանք հիմա դուրս են գալիս, պիտի հեռանան, անհրաժեշտ է հանգստություն պահպանել:

Երեկոյան շենքերում էին նրանց օրինական տերերը, որոնք դրանից հետո ստիպված պիտի լինեին այլեւս ազատ չթողնել իրենց աթոռները:

✧ ✧ ✧

Սեպտեմբերի սկզբին ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Վլադիմիր Մովսիսյանը ԽՍՀՄ պրեզիդենտ, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին հղեց նամակ, որով պատմում էր Լեռնային Ղարաբաղում, Շահումյանի շրջանում ու Գետաշենում հայության դեմ հարդարվող չարությունները, որոնք իրականացվում են Ադրբեջանի ու նրա կամակատարը դարձած միութենական ուժերի կողմից, երկրի ղեկավարին կշտամբում էր ԼՂԻՄ-ում ղեկավար մարմինները վերականգնելու մասին քանի՜-քանի անգամ որոշումներ ընդունելու եւ դրանք չկատարելու համար, զգուշացնում էր, որ Ադրբեջանի ղեկավարության հրեշավոր ջանքերի հետեւանքով արդեն անխուսափելի է ազգամիջյան պատերազմը, որը երկու ժողովուրդների համար կլինի ճակատագրորեն կործանարար: Ապա պահանջում էր ամենակարճ ժամանակում կատարել վճռական քայլեր, որոնք անպայման լուծեն հարցերը, կարգավորվի իրավիճակը, որպեսզի ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի ու Գետաշենի հայության կյանքը մտնի նորմալ հունի մեջ: Ապա թե ոչ, «վերջնականապես կընկնի կոմկուսի հեղինակությունը, եւ ես, գիտակցելով իմ պատասխանատվությունն ու հանրապետության կոմկուսակցության պատասխանատվությունը հայ ժողովրդի առաջ, ստիպված կլինեմ հրաժարական տալ եւ դուրս գալ ԽՄԿԿ Կենտկոմի Քաղբյուրոյի կազմից»:

Գորբաչովը, եթե ունենար սովորական մարդկային արժանապատվություն, ղեկավարի, հանրության համար վստահելի անհատի ինքնասիրության պես մի բան, այս նամակը պետք է ընդուներ իբրեւ ամենաարդար մի ապտակ եւ անմիջապես էլ գործի լծվեր, որպեսզի վերանա ոչ միայն ապտակի ցավը, այլեւ շառաչը, որ փոխանցվելու է սերունդներին...

Սակայն ինչ կարելի է սպասել մի մարդուց, որ պարտված էր հիշյալ մարդկային արժանա..., ո՛չ, **մարդուն մարդ դարձնող հատկանիշներից**:



Վլ. Մովսիսյանի սույն նամակը ես մի տեղ կոչել եմ քաղաքական հացադուլ, որը եթե պատիվ է բերում կատարողին՝ իբրեւ ազգային ու հասարակական շահը պաշտպանելու համար պետական-քաղաքական բարձրագույն դիրքի վրա թքողի, ապա վարկաբեկիչ է հասարակարգի, տվյալ դեպքում խորհրդային կարգի եւ նրա կենտրոնական տխեղծ ղեկավարության համար:

Ուրեմն, Հայաստանի ղեկավարը քաղաքական հացադուլ էր հայտարարել:

Սակայն տեղի ունեցավ նաեւ սովորական բողոք-հացադուլը:

**Սեպտեմբերի 9-ին** ԽՍՀՄ ժող. դեպուտատ, գրող-հրապարակախոս Զորի Բալայանը «Մոսկվա» հյուրանոցի իր համարում հացադուլ արեց՝ նույն Գորբաչովին այդ առթիվ հղած նամակում կատարվածը համարելով ծայրահեղ միջոց իր ժողովրդի գլխին եկած եւ օրեցօր, ժամ առ ժամ ավելացող աղետների դեմ:

**Սեպտեմբերի 12-ին** հացադուլավոր Զ. Բալայանին միացավ նաեւ ժող. պատգամավոր, Հայաստանի ԳԱ-ի պրեզիդենտ, աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանը:

**Սեպտեմբերի 13-ին** նրանց միացան նաեւ դեպուտատներ, ժող. դերասան Սոս Սարգսյանը, Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ-ի մարզգործկոմի նախագահ Սիմոն Բաբայանը:

Հետագայում սրանց էլ հետեւեցին ուրիշները՝ Երեւանում, Ստեփանակերտում: Նույնիսկ այլազգի բարեկամներ, ինչպես ուզբեկ գիտնական Սուրաբ Շարաֆուտդինովը, տաջիկ գիտնական Ռուստամ Շուքուրովը:

**Սեպտեմբերի 18-ին** ԽՍՀՄ ԳԱ-ի պրեզիդենտ Գ. Մարչուկը, իր ակադեմիայի նախագահության անունից գրությամբ Վ. Համբարձումյանին դիմելով, հաղորդեց, որ իրենք երկրի ղեկավարությանն են դիմել ԼՂԻՄ-ում իրավական-վարչական մարմինները վերականգնելու եւ հարցը ժողովրդավարության հիմունքներով լուծելու առաջարկությամբ:

Նույն օրը Գորբաչովի ներկայացուցիչը (մամուլի ղեկավար) ներկայացավ Համբարձումյանին եւ պրեզիդենտի անունից շնորհավորեց հենց այդ օրը լրացած նրա 82-ամյակը: Եւ մեծ գիտնականն ասաց.

– Այս պահին ինձ համար ամենաթանկագին շնորհավորանքն այն կլիներ, որ հայտնեիք, թե Լեռնային Ղարաբաղում վերականգնված է օրինական իշխանությունը, եւ պրեզիդենտը ճանաչում է արցախահայության իրավունքները:

Ժողովրդական դեպուտատ եւ մշակույթի գործիչ մարդկանց մի խումբ էլ (Ֆ. Բուռլացկի, Ա. Գելման, Ա. Գոնչարով, Դ. Գրանին, Ա. Ժիգալին, Մ. Զախարով, Դ. Կուգուլտինով, Վ. Կուդրյավցեւ, Լ. Լավլինսկի, Ալ.Միխայլով, Վ. Ռասպուտին, Վ. Սոլոուխին, Մ. Շատրով, Ի. Շկլյարեւսկի), նամակով իրենց համերաշխությունն ու սրտակցությունը հայտնելով հացադուլավորներին, կշտամբում էին երկրի ղեկավարությանը՝ մարդու իրավունքները ոտնահարելու համար, պահանջում էին վերջ տալ անօրինությանը, առաջնորդվել մարդասիրությամբ եւ փրկել Լեռնային Ղարաբաղը («Лит. газета», սեպտ. 20):

Երբ արդեն հացադուլավորների առողջությանը լուրջ վտանգ էր սպառնում, գործին խառնվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը: Գնաց Մոսկվա, այցելեց հացադուլավորներին եւ հայրաբար խնդրեց, որ նրանք խնայեն իրենց շատ անհրաժեշտ կյանքը, չէ՞ որ պայքարը դեռեւս առջեւում է:

– Առանց ձեզ ես չեմ վերադառնա Սուրբ Էջմիածին,-վճռաբար հայտարարեց նա:

**Սեպտեմբերի 29-ին**, սկսելու օրից ուղիղ երեք շաբաթ անց, հացադուլը դադարեց: Նրա հերոսները հայտարարություն հրապարակեցին՝ երդվելով շարունակել պայքարը «հանուն Արցախի, հանուն Հայրենիքի ազատագրության, որի համար պատրաստ ենք ամեն տեսակ զոհաբերության»:

**Հոկտեմբերի 1-ին** «Լիտ. գազետա» թերթը տպագրել էր պաղատագին մի լրատվություն, որը խնդրում էր Ադրբեջանի բանասիրության դոկտոր ու բանաստեղծ Խալիլ Ռզայի մեղքերի թողություն եւ ազատումն կալանքից: Կենտրոնական հեռուստատեսությունը եւս ար-

էր մարզկենտրոնի բնակչությանը, հանրապետության կազմկոմիտեին դա էլ չի անհանգստացնում:

**Դեկտեմբերի 10-ին**, վերջապես, ԼՂԻՄ-ի արտակարգ դրության պարետի թողարկած թղթերի տակ Սաֆոնովի ստորագրությանը փոխարինում էր գնդապետ Շեւելյովի ստորագրությունը:

Սաֆոնովը... Երկու ու կես տարի առաջ, 88-ի կեսերին դեռեւս, Արցախ գալով ներքին գործերի Հյուսիս-Կովկասյան շտաբից, որի պետն էր եղել նա, «ծառայեց երեք իշխանությունների, առաջինի՝ Հենրիկ Պողոսյանի կողքին լրիվ չբացահայտելով իր գծուծ հոգին, դուրս չհանելով թունոտ եղջյուրները եւ հանդես գալով իբրեւ նախկին փառքից խելքը թռցրած մի ցավագար (բռնցքամարտի օլիմպիական չեմպիոն էր եղել), եւ միայն երկրորդ իշխանավորի՝ չարահոգի Պոլյանիչկոյի հետ բացվեց լիաբուռն, լիասիրտ, ամբողջապես պարզելով ներսի ամբողջ մաղձը, որովհետեւ, ինչպես եւ Պոլյանիչկոն, վաստակում էր ըստ ծառայության (Ադրբեջանը գիտե վարձատրել):

Գնդապետ Շեւելյովը նոր մարդ չէր Արցախում: Նա մինչ այդ էլ պարետության շտաբի պետն էր եղել եւ հաճախ, կարճ կամ երկար ժամանակով, փոխարինել էր Սաֆոնովին: Բայց փոխարինողը միշտ էլ փոխարինող է եւ պարտավոր է չունենալ իր պատկերը: Հիմա միայն, երբ թղթերն ստորագրում է իբրեւ պարետ, ցույց կտա իրեն, եւ արցախցին կտեսնի՝ ռուս արդար մա՞րդ է, թե՞ հերթական մի բռնավոր:



# 1991

**Փետրվարի 4-ին** ԼՂՀ ժողովրդական բոլոր մակարդակների պատգամավորները եւ բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկների տնօրեններ դիմել էին վերին ղեկավարությանը՝ Մ.Ս. Գորբաչովից մինչեւ ՆԳՄ պատասխանատու աշխատողներ, հաղորդելով, որ Ադրբեջանի ՆԳ նախարար Ասադովի գլխավորությամբ օմոնը չարագործական հարձակումներ է կատարում մարզի հայկական գյուղերի վրա, պայթեցրել է Ստեփանակերտի ջրմուղը, սպանել խաղաղ աշխատանքի բազմաթիվ մարդկանց: Պահանջում են կտրուկ միջոցներ ձեռնարկել այս ավազակային խժդժությունների դեմ, ապա թե ոչ, մարզի հայությունն ստիպված կլինի իր իրավունքները պաշտպանել սեփական ուժերով եւ արժանի պատժամիջոցներով:

**Փետրվարի 6-ին** Ստեփանակերտի ամբողջ բնակչությունը հուղարկավորեց ադրբեջանական օմոնի արյունոտ ձեռքերով նահատակված Լեոնտեր Օհանյանին ու Կամո Հարությունյանին: Սգո ցույցին ելույթ ունեցողները նշեցին, որ միայն անցած մեկ ամսվա ընթացքում մարզում նահատակվել են ավելի քան մեկ տասնյակ երիտասարդներ: Բայց մի՞թե ադրբեջանցի չարագործներն ու նրանց մոսկովյան հովանավորները մտածում էին, թե դրանով կկոտրեն իր ազատության ու անկախության համար ոտքի ելած ժողովրդի ոգին: Հայ նահատակներն առավել աներեր էին դարձնում ապրողների կամքը, վճռականությունն ու հաղթանակի հավատը:

**Փետրվարի 8-ին** մոսկովյան մի խումբ գրողներ՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Յուրի Չեռնիչենկոն, պահեստի կոնտր-ադմիրալ Թիմուր Գայդարը, Վալենտին Օսկոցկին եւ ամուսիններ Անդրեյ Նույկինն ու Գալինա Նույկինան, Երեւանից թռել էին Ստեփանակերտ՝ մարզի վիճակին ծանոթանալու եւ երկրի հասարակայնությանը ճշգրիտ ու հավաստի տեղեկություններ տանելու համար: Ստեփանակերտի օդանավակայանում Ադրբեջանի օմոնականները նրանց բռնեցին, ետ տվին եւ միայն Գայդարին ու Չեռնիչենկոյին ճանապարհը շարունակելու իրավունք շնորհեցին:

Փետրվարի 8-ին Չեռնիչենկոն ու Գայդարը Ստեփանակերտում կուսակցության քաղկոմի դահլիճում հանդիպում ունեցան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների հետ:

**Փետրվարի 9-ին** ռուս երկու գրողներն էլ ուղղաթիռով գնացին Լաչինի ու Կուբաթլիի շրջանները, հանդիպումներ ունեցան ոչ միայն զինվորական ու օմոնական խմբերի հետ, այլեւ լսեցին ադրբեջանցի բնակչության ներկայացուցիչներին, ծանոթացան նրանց տրամադրություններին ու պահանջներին:

**Փետրվարի 11-ին** Լենինգրադում հրապարակվեց ականատես լրագրող Լիխանովայի ընդարձակ հոդվածն այն մասին, որ Ստեփանակերտում եւ ԼՂԻՄ-ում խորհրդային բանակի զորամասերն ու ներքին զորքերի միավորումներն զբաղված են հրամանատարության ու Ադրբեջանի ղեկավարության հակահայկական հրամանների կատարմամբ: Իհարկե, կան եւ այդ անբարոյական հրամանները կատարելուց հրաժարվողներ: Բայց ի՞նչ իրավունքով եւ մինչեւ ե՞րբ: Լրագրողուհին այդ առթիվ հոդվածում հրապարակել էր նաեւ «Տղաները հանուն վերակառուցման» կոմիտեի հայտարարություն-դիմումի հետեւյալ հատվածը. «Անձնակազմի միջավայրում վերջերս հասունացել է այն գիտակցությունը, որ արտակարգ դրության շրջանի պարետատան գործողությունները հանցավոր են: Հաճախակի են դարձել դեպքերը, երբ զինվորներն ու սերժանտները հրաժարվում են իրականացնել ապօրինի հրամանները: Ա. Մութալիբովի՝ ինքնավար մարզը գալու օրը զինվորները հրաժարվեցին խաղաղ բնակիչներին քշել Ստեփանակերտի փողոցներից: Մի

… Եւ, այսուհանդերձ, մենք հայ բարեկամներից բաժանվում ենք մի համոզմունքով ու հույսով, որ Ղարաբաղը պետք է փրկվի, իսկ Հայաստանը կարող է եւ պետք է լինի նախաձեռնողը մարդկային ու պետական նոր, գեղեցիկ հարաբերությունների։

Փետրվարի 13-ին "Лит. газета" շաբաթաթերթում տպագրած իր ճամփորդական նոթերում հատուկ թղթակից Դմիտրի Բելովեցկին գեներալ Վ. Սաֆոնովի մասին իր լսածներն ամփոփել էր հետեւյալ թռուցիկ խոսքերով. «Ղարաբաղն այսօր՝ դա արտաքին աշխարհից համարյա լիակատար շրջափակված շրջան է։ Առաջվա պարետ գեներալ-մայոր Վ. Սաֆոնովը, ասում են, չափազանց չէր սիրում ո՛չ զինվորական մարդկանց։ Եթե լրագրողներին նույնիսկ աջողվում էր ինքնաթիռի տոմս գնել (Ադրբեջանի քաղաքացիական ավիացիայի վարչության կարգադրությամբ՝ չվերթերի թիվը խստորեն կրճատվել է, իսկ նրանք, ովքեր չունեն ԼՂԻՄ-ի գրանցում, պարզապես չեն սպասարկվում), ապա, միեւնույն է, իրենց գործուղումն ավարտում էին Ստեփանակերտի օդանավակայանում, ուր նրանց գործուղման թղթերը փութկոտորեն կնքվել են եւ ճանապարհվել ետ»։

**Փետրվարի 16-ին** ՀՀ հանրապետական մամուլում հրապարակվեց Զորի Բալայանի ընդարձակ նամակը՝ ուղղված ՌՍՖՍՀ ԳԽ-ի նախագահ Բ. Ելցինին։ Շա՜տ ընդարձակ, շուրջ մեկ ամբողջական էջ լայն-ֆորմատ թերթում։ Մեկ նամակ, որի մեջ իմ բարեկամը ջանում էր պարզել բոլոր հարցերը՝ «Ադրբեջան» հանրապետության կազմավորումից մինչեւ Լեռնային Ղարաբաղի նոր ողբերգության հիմքերը, հայ-ռուս բարեկամական փոխհարաբերությունների հաստատումից մինչեւ նոր բախումներն ու նրանց սադրիչ ադրբեջանցի գործիչների մեքենայությունները։ Բազմազան շատ ու շատ բաներ։ Ասես հեղինակն իր վրա էր վերցրել ընթերցողին լուսավորելու, պատմա-քաղաքական մի երկար ու լայն շրջանակի գիտակը դարձնելու պարտականություն։

Նախորդ տարիներին բարեկամս սովորություն ուներ Արցախի հարցն անմիջապես կապել պանթուրքիզմի ու պանիսլամիզմի հետ։ Պարզ ի պարզո ասում էր՝ ռուս քրիստոնյա մարդիկ, Միության ղեկավար այրե՛ր, տեսնո՞ւմ եք՝ այն որքան մեծ ու կարեւոր խնդիր է։ Լուծեք եւ դրանով դուք վճռական հարված կհասցնեք ռուս մեծ ժողովրդի ու նրա պետության թիվ մեկ թշնամու՝ պանիսլամիզմ-պանթուրքիզմի ողնաշարին... Իսկ նրանք, որ, իբր, այդ հարվածը պիտի հասցնեին, շշկլված էին մնում. մի՞թե մի աննշան ու հասարակ Արցախի համար արժե գրգռել, առավել թշնամացնել աշխարհի աչքում այնքան մեծ երեւույթ դարձած պանիսլամիզմ-պանթուրքիզմը...

Այս նամակում էլ նման մի ուրիշ զենք է՝ Արցախի ստրատեգիական դերը, որով պիտի շահագրգռի Ելցինին եւ ստիպի նամակը կարդալուն պես գործի անցնել եւ թրքության մեջքը ջարդել։ Արցախը, «Այդ հարցը,-գրում էր Զորին,-դա ո՛չ տարածքային, ո՛չ ազգամիջյան եւ, ինչպես համոզվեցիք, նույնիսկ ոչ էլ կրոնական, այլ, ինչպես ասվեց, ստրատեգիական հարց է»։ Եւ սա էլ քիչ համարելով՝ բարեկամս շարժվում է ավելի առաջ, ավելի հեռուն. Ղարաբաղը ռուսական միապետության կյանքի, ամբողջ երկրի գոյապահպանության խարիսխն է։ Եթե կողմ ենք այդ գոյապահպանության, ապա «ստիպված պիտի լինենք սկսել Ղարաբաղից, որի ճակատագրի հետ գոտու ստրատեգիական ճակատագիրն են կապել Ռուսական պետության բոլոր խոշոր մտածողները» ("ГА", փետրվարի 16)։

Ես չգիտեմ՝ Ելցինը կարդացել է այս նամակը։ Դժվար թե։

**Փետրվարի 20**.-Ավստրալիայի մայրաքաղաք Կանբերայում ավարտված Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 7-րդ համագումարն իր պաշտոնական դիրքորոշումն արտահայտող հայտարարության մեջ լայն տեղ տվեց Արցախի խնդրին՝ տագնապ հայտնելով այն մասին, որ տեղի հայ քրիստոնյա ժողովուրդը գտնվում է խտրականության ու բռնությունների տիրապետության ներքո, պայքարում է իր ազգային, մարդկային ու հոգեւոր-մշակութային ազատության համար։ Համագումարը Խորհրդային Միության ղեկավարությանը կոչ էր անում անմիջապես վճռական միջոցներ ձեռք առնել ապահովելու Արցախի հայ ժողովրդի ազատագրությունն ու ազգային զարգացման հնարավորությունները։ Կոչ էր ուղղվում նաեւ Խորհրդի անդամ եկեղեցիներին, որպեսզի աղոթեն իր ա-



զատության ու անկախության համար պայքարող մարզի հայ ժողովրդի բարօրության ու հաջողությունների համար։

**Փետրվարի 21-ին** ՀՀ Գերագույն խորհուրդը, հավանաբար ազատագրական շարժման 3-ամյակի կապակցությամբ, արցախահայությանը հղեց դիմում, որի մեջ մասնավորապես նշված է. «Երեք տարի առաջ, 1988 թ. փետրվարին, ձեր միասնական կամքով արտահայտված օրինական որոշումը՝ Արցախը մայր հայրենիքին վերամիավորելու մասին, սկզբնավորեց ողջ հայության ազգային զարթոնքը»։

Ապա նշելով շարժման դեմ ադրբեջանական կողմի սանձազերծած ապօրինություններն ու կենտրոնի հանցավոր թողտվական վերաբերմունքը՝ պատրաստակամություն է հայտնվում պայքարը հաղթական ավարտին հասցնելու համար գործադրել ամեն աջակցություն ու պաշտպանություն։

Դիմումն ավարտվում է այսպես. «Ստեղծված պայմաններում Հայաստանի հանրապետությունը ձգտում է Արցախի խնդրի քաղաքական լուծման, որի ճշմարիտ ուղին բռնության բացառումն է եւ Արցախի բնակչության ազատ ինքնորոշման իրավունքի իրագործումը։ Միեւնույն ժամանակ Հայաստանի հանրապետությունն ամենայն պատասխանատվությամբ հայտարարում է Արցախին զորավիգ կանգնելու, ձեր կյանքն ու կենսական շահերը բոլոր միջոցներով պաշտպանելու իր անփոփոխ վճռականությունը եւ ամեն ինչ կանի Արցախի վերամիավորումը մայր հայրենիքին ավարտին հասցնելու համար»։

**Փետրվարի 22-ին** հրապարակվեց Արցախի բոլոր իրավապահ մարմիններում քննարկված եւ ընդունված մի դիմում՝ սկսած պրեզիդենտ Գորբաչովից ու ԳԽ-ի նախագահ Լուկյանովից մինչեւ ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահ Սմոլենցեւը։ Դիմումը նկարագրում էր Ադրբեջանի ղեկավարության, հատկապես ՆԳՆ մարմինների կողմից մարզում կիրառվող բացահայտ ապօրինությունները, որոնք ծայրահեղ լարման են հասցրել հայ բնակչության հոգեկան վիճակը։ Հիշում են Ադրբեջանի ՆԳ նախարար Ասադովի ելույթը հեռուստատեսությամբ, որով այդ պաշտոնյան հայերին համարել է թշնամիներ, իսկ հայ մարդկանց՝ անհուսալի ու անվստահելի միլիցիայում ծառայելու համար։ Այդ նրա միայն մեկ հրամանով էր, որ մարզի ադրբեջանաբնակ գյուղերում նշանակվել էին 414 ադրբեջանցի միլիցիոներներ եւ ստեղծվել միլիցիայի 12 բաժանմունքներ, որոնք իրենց գործունեությունն սկսել են հայկական բնակավայրերի վրա հարձակումներով եւ զանգվածային կողոպուտներ գլխավորելով։ Իսկ Ստեփանակերտի օդանավակայանում նրանց սանձարձակությունները այլեւս չեն ճանաչում ոչ մի սահման. «Բռնությամբ մարզից վտարել են ՌՍՖՍՀ մի խումբ պատգամավորների, կալանավորել ու ստորացումների են ենթարկել ԽՍՀՄ ժող. պատգամավոր Բ. Դադամյանին, ՊԱԿ-ի մարզային բաժնի աշխատակից Է. Եսայանին... Այսքանից հետո դժվար չէ պատկերացնել այն բռնությունները ու կամայականությունները, որոնց ենթարկվում են շարքային անպաշտպան մարդիկ...»։

Եւ այս պայմաններում առնվազն տարօրինակ է զինվորական պարետության դիրքը. բնակչությունից զենք առգրավելու համար մարզում նրա իրականացրած 158 գործողություններից 156-ը եղել է հայկական բնակավայրերում։

Ստացվում է այնպես, որ զինված ադրբեջանցիներն ու օմօնը պարբերաբար հարձակվում են հայերի վրա, իսկ սրանք իրենց անձն ու սեփականությունը պաշտպանելու ոչ մի հնարավորություն չունեն։

Երկար շարադրելով օմօնի եւ ադրբեջանական ուրիշ պաշտոնյաների հակահայկական գործողությունները, մարզի իրավապահ մարմինները խնդրում են.

Ա) Դադարեցնել Ադրբեջանի անօրեն կազմավորումների ստեղծումը մարզի տարածքում, այնտեղից դուրս բերել տալ եղածները, որոնք միայն ոտնահարում են հայության իրավունքները։

Բ) ԼՂԻՄ ուղարկել երկրի իրավապահ մարմինների լիազոր ներկայացուցիչների հանձնաժողով՝ հարցը տեղում ուսումնասիրելու եւ մարզի բնակչության անվտանգու-

շանակ կտրուկ քայլերի կդիմի անկախության ու դեմոկրատացման ուղին բռնած հանրապետությունների դեմ: Այս հանգամանքը կարող է խիստ փոփոխել քաղաքական վիճակը մեր հանրապետությունում հանրաքվեի նախաշեմին եւ իր բացասական ազդեցությունն ունենալ անկախության հանրաքվեի արդյունքների վրա, առավել եւս` իմաստազրկել այն»:

**Սոս Գրիգորյան**.-«Առայժմ այս հարցը մեզ համար դեռ չի հասունացել: Մենք` հայերս ամեն ինչում առաջ ենք ընկնում: Դրա համար էլ մեզ ոչ ոք չի հասկանում:

Սեպտեմբերին կայանալիք հանրաքվեում ես պատասխանելու եմ, որ համաձայն չեմ: Որովհետեւ ճիշտ կլինի ԽՍՀՄ կազմից դուրս գալ սահմանադրական եղանակով: Եւ միայն այն ժամանակ, երբ համոզված կլինենք, որ Հայաստանը թե քաղաքականապես, թե տնտեսապես, թե միջազգային կապերով կկարողանա ինքնուրույն գոյատեւել: Իսկ այսօր այդ հնարավորությունները չունենք»:

**Մարգարիտ Մելիքյան**.-Եթե ունենանք անկախ պետություն, կարծում եմ, կենտրոնը կզրկվի մեզ ճնշելու, մեզ վրա վերահսկողություն սահմանելու հնարավորությունից: Թեկուզ 15-20 տարի զրկանքներ կրենք, բայց հույս ունեմ, որ հետո շատ լավ է լինելու: Ինչպես ժողովուրդն է ասում` չկա չարիք առանց բարիքի:

Մեկն էլ քիթը դեպի երկինք տնկած` ասում է. «Ձեր հարցը ինձ զարմացնում է եւ նույնիսկ վիրավորական է հնչում: Քանի որ անկախ պետականության պայմաններում է հնարավոր գոյատեւել եւ քայլ առ քայլ լուծել քաղաքական, տնտեսական, սոցիալական եւ մշակութային կյանքի այն բոլոր խնդիրները, որոնք ծառացած են մեր ժողովրդի առաջ»:

✧ ✧ ✧

Արցախը եւս ձեռնպահ մնաց ԽՍՀՄ-ը պահպանելուն ուղղված հանրաքվեից, բայց եւ բացատրեց, թե ինչու: Ահա այդ բացատրությունը.

«ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների խորհրդի անունից մենք լիազորված ենք հայտարարելու, որ միութենական մարմինների կողմից ինքնավար մարզի սահմանադրական իշխանության լիազորությունները չճանաչելու պատճառով 1991 թ. մարտի 17-ի հանրաքվեի անցկացումը ԼՂԻՄ-ի տարածքում տապալվում է:

ԽՍՀՄ պահպանման հարցին ԼՂԻՄ-ի հայ բնակչության վերաբերմունքն արտահայտելու նպատակով` խորհրդային իշխանությունների լիազորությունները ճանաչելուց հետո միայն հնարավոր ենք համարում անդրադառնալ հանրաքվեի անցկացման հարցին»:

✧ ✧ ✧

Մարտի առաջին օրերին շարունակվում էին ադրբեջանական օմոնի եւ ավազակային զորաջոկատների անպատիժ սադրանքները հայ բնակչության դեմ: Գողությունը, կոլխոզային տնտեսությանը հասցվող վնասները զանգվածային բնույթ էին ստացել: Ամսի 2-ին, օրինակ, 15 օմոնականներ հարձակվել էին Հաթերքի ֆերմայի վրա, պահակին սպանել եւ քշել-տարել 72 գլուխ խոշոր եղջերավոր անասուն: Եւ այդ կողմերում գտնվող ռուսական ներքին զորքերը ոչ միայն չեն օգնել բռնելու, պատժի ենթարկելու հանցավոր խումբը, այլեւ նրանց հրամանատարը բողոքող հայերին հանձնարարելու պես ասել է.

- Լավ չի՞ լինի ձեր այս գյուղերը թողնեք-հեռանաք, որպեսզի ե՛ւ դուք փրկվեք, ե՛ւ մեր գլուխները հանգստանան (մարտի 3-ի հեռուստատեսային «Լրաբեր» հաղորդումից):

**Մարտի 8-ին** հանրապետական թերթերը հրապարակեցին ԳԽ-ի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի խոսքը` արտասանված ԳԽ-ի առաջին գումարման առաջին նստաշրջանի ավարտին, որի մեջ երանության արտահայտություններ կան նստաշրջանում ստեղծված մթնոլորտի, մանավանդ բազմակուսակցության մասին: Ասում էր. «... Մեր խորհրդարանը դառնում է իսկապես բազմակուսակցական խորհրդարան»:



«Եւ, ի զարմանս մեզ, պարզվեց, որ բազմակուսակցականությունը ոչ թե անջատում, այլ հակառակը, միավորում է»:

«... Երբ հոսանքները հստակված են, ֆրակցիաները` զատորոշված, երբ խմբավորումները առաջնորդվում են ոչ թե խմբակային, կուսակցական, այլ համազգային շահերով»:

«... Եւ մենք կարող ենք մեզ շնորհավորել, չեմ ուզում ասել` հիանալ մեզանով, որ գտնվում ենք ճիշտ ուղու վրա»:

Այսպիսի խոսքեր էլի կարելի է բերել` ցույց տալու համար, որ ԳԽ-ի նախագահը բազմակուսակցականության կողմն է, դա համարում է առաջընթացի կարեւորագույն գործոն: Հետաքրքիր է, թե որքան պիտի մնա այդ կարծիքին, եւ ո՛ր կետից է նրա համար չարիք դառնալու բազմակուսակցություն-բազմակարծությունը:

✧ ✧ ✧

**Մարտի 14-ին** Թուրքիայի պրեզիդենտ Թուրգութ Օզալը ժամանեց Բաքու, ուրկից էլ պետք է գնար Մոսկվա` ԽՍՀՄ պրեզիդենտ Միխ. Գորբաչովի հետ բանակցություններ վարելու:

Ինչո՞ւ այս օրերին, երբ հայ-ադրբեջանական հակամարտությունը ծայրահեղորեն լարված էր, սրված, Հայաստանի ղեկավարությունը, հռչակելիք անկախության վրա գլուխը կորցրած, սպառնալիքներ էր տալիս Կենտրոնի հասցեին, իսկ Ադրբեջանը եւ մնացել էր Գորբաչովի հերյուրած նոր խմբակցության կազմում, նվիրված էր նրան, եւ պատեպատ էր զարկվում նրա միջոցով Լեռնային Ղարաբաղի հարցը վերջնականապես լուծելու համար: Իսկ կենտրոնը, չնայած Ադրբեջանի հակահայկական վայրագությունները խրախուսում, նույնիսկ դրանց մասնակցում էր իր բանակի ու ներքին զորքի խարդավալից ուժերով,-դեռ չէր ասել իր վճռական խոսքը, չէր որոշել, թե ինչո՞վ պիտի ավարտվի ավելի քան երեք տարի ձգված ստոր խաղը Լեռնային Ղարաբաղի շուրջ:

Քանի օր էր, Միության լրատվական մարմինները թմբկահարում էին սպասվող ամենաբարձր մակարդակի հանդիպումը, թուրք պրեզիդենտի քաղաքական կերպարն էին փառաբանում (նա է տնտեսապես հետամնաց Թուրքիան ամենակարճ ժամկետում բարձրացրել, հասցրել ամենազարգացած երկրներին, նրա հետ փոխշահավետ հարաբերությունների մեջ մտնելո՛վ է, որ հարեւանները հնարավորություն կունենան տնտեսապես զարգացման թռիչքներ կատարելու):

Այս ամենազոր թուրքն այսօր հասավ Բաքու...

Պարզ է, որ նախապատրաստական բանակցություններ էին եղել, հարցեր էին քննվել, համաձայնություններ էին կայացել... Եւ շատ հավանական է, այդ փոխհամաձայնեցված պայմաններից մեկը, թերեւս ամենակարեւորը, վերաբերել է Լեռնային Ղարաբաղին: Դրա համար էլ Գորբաչովը Թուրգութ Օզալի Բաքվում ոտք դնելը ողջունեց ու շնորհավորեց այդ խնդրին վերաբերող իր վճիռ-հայտարարությամբ. «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Ադրբեջանի անբաժանելի մասն է»:

Հիշեցի Ավետիք Իսահակյանի թղթերում պահպանված մի գրառում: Վարպետը Հայաստանի առաջին հանրապետության օրերին Արցախ գնացած է լինում, զրույցի է բռնվում մի ծեր գյուղացու հետ, նրան հարց է տալիս. «Ո՞նց եղավ, որ ձեր կողքին, չեղած տեղից հայտնվեց այդ Ադրբեջանը եւ ուզում է ձեր երկրի ու ձեր գլխի տերն էլ դառնալ»: Ասում է` ծերունին պատասխանել է, թե. «Քե մատաղ, ո՞նց պիտի լիներ, թուրքն ու ինգլիզը քոնթավ եկան, եւ դրանից էլ ծնվեց էս բիճ Ադրբեջանը» (Վարպետի արխիվից այս կտորն ինձ է տրամադրել նրա թոռ Ավիկը.- Բ. Ու.):

Թուրքի ու ինգլիզի սիրախաղերով, իհարկե, նորածին բիճը տեր չդարձավ Արցախական աշխարհին, որը երեք տարվա 1918-1921 թվականների, արյունալի գոյապայքարով

պաշտպանեց իր անկախությունը: Սակայն բիձն ու նրա հայրը, որ բիձից էլ բիձ էր, գիտեին՝ դրա համար ինչ հավելյալ սիրախաղերի դիմեն եւ հետո էլ ընկան նոր Ռուսաստանի գիրկը:

* * *

**Մարտի 14-ին**, ուրեմն, Թուրղութ Օզալը ոտք էր դրել ԽՍՀՄ-ում: Անկասկած է, որ նախօրյակին բանակցություններ էին եղել շատ հարցերի, քաղաքական ու տնտեսական ինչ-ինչ խնդիրներ քննելու եւ լուծելու համար: Եւ հիմնական հարցը Ղարաբաղն է եղել, նրա հանգույցը թուրքավարի քանդելն ու «կարգավորելը»: Ուստի եւ Գորբաչովը, Օզալի ԽՍՀՄ-ում ոտք դնելը նշեց մի հայտարարությամբ, որից ավելին թուրքը չէր էլ երազել: Ահա այդ «ողջույնի» խոսքը.

«Ադրբեջանի ժողովրդին,
Լեռնային Ղարաբաղի բնակիչներին,
Թանկագին ընկերներ,

Ես ձեզ եմ դիմում պատասխանատու եւ տագնապալից ժամանակ: մեր երկրում, այդ թվում եւ ազգամիջյան ոլորտում, տեղի ունեցող վերափոխությունները դժվար են առաջ գնում: Դժբախտաբար, չհաջողվեց խուսափել եւ ծանր բախումներից, որոնք հասցրին մարդկային զոհերի:

Ահա չորրորդ տարին է, որ խաղաղություն չկա Լեռնային Ղարաբաղի հողի վրա, որոտում են կրակոցները, մարդիկ են մեռնում, աճում է փոխադարձ օտարացումը:

Հետո՞ ինչ պիտի լինի: Ես գիտեմ, հեշտ չէ դադարեցնել վիրավորվածության, զայրույթի եւ փոխադարձ վրեժի շղթայական ռեակցիան: Բայց այն անհրաժեշտ է դադարեցնել:

Այստեղ կարեւոր է ելնել իրականությունից: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Ադրբեջանի անբաժանելի մասն է: Այստեղ գործում են ԽՍՀՄ եւ Ադրբեջանական հանրապետության սահմանադրությունները, միասին ապրում եւ աշխատում են հայերն ու ադրբեջանցիները: Պատմությունն այդպես է տնօրինել: Եւ դրանից ոչ մի տեղ չես փախչի: Իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ է, ինչքան կարելի է, կյանքն արագ վերադարձնել իր նորմալ հունը:

Թող ձեր աչքերը չվարագուրեն անցյալ ու ներկա դժգոհությունները, անարդարությունները, մոռացե՛ք կշտամբանքները: Սկսեցե՛ք խաղաղ զրույցը, ջանացե՛ք հասկանալ մեկդ մյուսին, ելք գտնել փակուղուց: Չէ՞ որ պարզ է, որ ձեր փոխարեն դա ոչ ոք չի կարող անել:

Շատ հուսով եմ, որ իմ խոսքերն արձագանք կգտնեն ձեր սրտերում:

Մաղթում եմ ձեզ խաղաղություն եւ երջանկություն:

1991 թ., մարտի 14:

*ԽՍՀՄ ՊՐԵԶԻԴԵՆՏ*
*Մ. ԳՈՐԲԱՉՈՎ»:*

Ուրեմն, Ադրբեջանինը ժողովուրդ է, Լեռնային Ղարաբաղինը՝ բնակիչներ:

Հետաքրքիր է, հայատյացի կարծիքով՝ բնակիչները ո՞ր թվից վեր են դառնում ժողովուրդ: Չէ՞ որ մեկ միլիարդը վաղուց ետեւ թողած չիներն էլ հանկարծ կարող են «ժողովուրդ» չճանաչել ընդամենը 150 միլիոնանոց ռուսներին:

Իսկ ամենակարեւորը՝ «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Ադրբեջանի անբաժանելի մասն է... Եւ դրանից ոչ մի տեղ չես փախչի»: Ապա, «Սկսեցե՛ք խաղաղ զրույցը... Ձեր փոխարեն դա ոչ ոք չի կարող անել»:

Վե՛րջ: Ամեն ինչ պարզ էր, հասկանալի, եւ ինչպես ասում են, անշրջելի:

Թուրղութ Օզալն այդ օրն էլ կարող էր Անկարա վերադառնալ: Սակայն պետք էր մնալ, իրար պետք է լպստոտեին:

Ռուս-թուրքական պայմանագրերի ամենակարեւորն այն մասն էր, որով Թուրքիան



խոստանում էր ԽՍՀՄ տնտեսական վերելքն իրականացնելու համար տրամադրել մեկ միլիարդ դոլար (որն, անշուշտ, Ղարաբաղի վարձն էր):

**Մարտի 18-ին** ՀՀ ԳԽ-ի Նախագահությունը կոչ հրապարակեց Մ. Գորբաչովի՝ ադրբեջանական ժողովրդին ու Լեռնային Ղարաբաղի բնակիչներին ուղղված դիմումի կապակցությամբ: Նախագահության խոսքի մեջ ասված էր. «Նկատի ունենալով, որ կոչն ուղղված է եղել հանրաքվեի ու Միութենական պայմանագրի քննարկման նախօրյակին, ԽՍՀՄ պրեզիդենտի մի շարք անհեռատես պնդումներն Ադրբեջանական ԽՍՀ-ում կարող են բերել այնպիսի հետեւանքների, որպիսին հանդիսացավ «Սումգայիթը»՝ իբրեւ հետեւանք 1988 թ. փետրվարի 26-ին Մ. Գորբաչովի Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդներին հղած կոչի»:

Ապա ցույց էր տրվում, թե ինչպես Գորբաչովի կոչի ընդգրկած բարձր խոսքերը մարդու իրավունքների պաշտպանության, ԽՍՀՄ Սահմանադրության կիրառության եւ ուրիշ նման բաների մասին, լոկ դատարկ ֆրազներ են, քանի որ մարզում վերացված են պետական իշխանության մարմինները եւ այնտեղ սանձազերծ գործում է կազմկոմիտե կոչված հակասահմանադրական-հակահայկական ջարդարարական ռեժիմը:

Ցույց տալով կենտրոնական ղեկավարության նախաձեռնությամբ մարզը գլխատելուն հաջորդած ապօրինությունները՝ կոչն ավարտվում է հետեւյալ խոսքով. «ՀՀ ԳԽ-ի Նախագահությունը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի հարցը կարող է լուծվել միայն միջազգային իրավունքին համապատասխան, ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա:

* * *

Շատ է պատահել, որ մենք մեղադրել ենք 1920–23 թվականների հայ ղեկավարներին, որոնք այնպես «անհոգորեն» թշնամիներին են զիջել մեր պատմական հայրենիքի վերջին թե նախավերջին հատվածները՝ Կարսն ու Արդահանը, Նախիջեւանն ու Արցախը: Իբր, նրանք իրավունք ունեին եւ կարող էին բողոքել, պահանջել, համառել եւ դրանով էլ տերը մնալ այդ անկապտելի սեփականությանը, մեր սրբազան հողին ու ջրին...

Եւ հիմա, 70 տարի հետո, նույնը կատարվում է մեր աչքի առաջ. Գորբաչովն աճուրդի է հանել Արցախը, վերավաճառում է թորքին ու թուրքին:

Այո՛, աճուրդի է հանել եւ այս երեք տարվա ընթացքում համոզվեց, որ մենք այն գնելու համար տալու ոչինչ չունենք: Ո՛չ միայն չունենք, այլեւ սպառնում ենք պատճառել քաղաքական ու «բարոյական» վնասներ, որոնք տանելն այս համատարած քաոսի պայմաններում պահանջում է նյութական եւ իսկական բարոյական վիթխարի զոհաբերություններ: Եւ, իսկապե՛ս, մենք ի՞նչ ունեինք տալու ի գին Արցախի: Մեր հրահրած ազգային ու քաղաքական զարթոնքը, որից, հպարտորեն ասում ենք, խարխլվեց զարհուրելի կայսերապետությունը, մեր վաստակած համաշխարհային հեղինակությունն ու նահատակի լուսապսակը, որոնց լույսից առավել մռայլ ու նողկալի են երեւում կայսերապետությանը կառչած դաժան կերպարները, եւ, վերջապես, մեր ցուցադրական հրաժարո՞ւմը, այսպես կոչված, Միության դաշնագրից, որ պիտի նշանակի թքել կայսերապետության փլատակների վրա, հրաժարվել նրա նողկալի բեկորներն իրար բերելով նույն բռնատունը վերականգնելուց...

Իսկ նրա՞նք, նույն Ադրբեջանն ու Թուրքիա՞ն: Առաջինը մնաց Միություն կոչված խառնաժողովում՝ երդվելով հավատարմորեն ծառայել բռնապետությանը, որովհետեւ հաստատ ու հաստատ համոզված է, որ միայն նրա սահմաններո՛ւմ տեր կմնա ճանկած անուշ պատառին: Իսկ երկրորդը, վերստին նվաճած լինելով տնտեսական ու ռազմական առաջավոր մի դիրք տերությունների շուկայական ժխորի մեջ, ոչ միայն խոստանում է նեցուկ լինել կործանվող կայսերապետությանը, այլեւ սրա պարզած ափի մեջ դրեց մեկ միլիարդ դոլար եւ խոստացավ կրկնապատիկը, եթե նա խելոք մնա եւ կատարի իր խրատներն ու խորհուրդները...

Հին արցախցին ասել էր՝ Ինգլիզն ու Օսմալուն քոնթի եկան եւ ցնկնեցին Ադրբե-

Ապրիլի վերջին, համենայն դեպս՝ 27-ից հետո, «Արգումենտի ի ֆակտի» շաբաթաթերթը տպագրեց Լեռնային Ղարաբաղում ստեղծված ծայրահեղ բարդ վիճակի մասին իր թղթակցի հարցազրույցը Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների՝ Լ.Տեր-Պետրոսյանի ու Ա. Մութալիբովի հետ:

Պատասխաններից պարզ երեւում էր, որ եթե հայ ղեկավարը հիշյալ վիճակից ելքը տեսնում էր բանակցությունների, փոխզիջումների ճանապարհով քաղաքական համաձայնության, ժողովրդի կամքը հարգելու մեջ, ապա Մութալիբովը, հավանաբար, թիկունքում զգալով Կենտրոնի հովանավորությունն ու պաշտպանությունը, փորձում էր սպառնալիքներով ու հարկադրանքով ընդդիմախոսին պարտադրել իր կամքը, որ պարզապես անհարիր էր ժողովրդավարության, մարդու եւ ազգության իրավունքների՝ միջազգային օրենքներով հաստատված նորմերի հետ:

Բավական երկար հարցազրույցի ընթացքում Ա. Մութալիբովը միայն մեկ անգամ ինչ-որ չափով ճշմարիտ էր՝ երբ ասում էր, որ «Ղարաբաղի խնդիրը Հայաստանում ձեռնտու դարձավ նրա՛նց, ովքեր այդ հանրապետությունում իշխանության էին ձգտում, եւ այդ պատճառով էլ անընդհատ բորբոքում էին այն: Հենց այդ խնդրի շնորհիվ Հայաստանում իշխանության գլուխն անցան «Ղարաբաղ» շարժման լիդերները»:

Իսկապես, շարժումը ձեռնտու էր, նաեւ մեծապես օգնեց «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարներին, որպեսզի նրանք իշխանության գլուխ անցնեն: Չնայած հնարավոր էր, որ նրանք հասնեին ղեկավարության, եթե շարժումն առհասարակ սկսված չլիներ: Բայց չէ՞ որ հայտնի է՝ շարժումն սկսվել է ո՛չ նրանց կողմից: Այն գլխավորել են ո՛չ միայն այդ կոմիտեի ղեկավարները, եւ վերջիններս իշխանության հասած լինեին թե ոչ, այն պետք է ապրեր իր զարգացումը, առաջընթացը, նույնիսկ գուցե ավելի՜ պակաս սայթաքումներով ու առավել շոշափելի արդյունքով...

**Մութալիբով.**-«Մենք պատրաստ ենք ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին Հայաստանի ԳԽ-ի հակասահմանադրական որոշումը չեղյալ հայտարարելուն...»: Հետո՞: Դրանով էլ իրենց ձեռքերն ազատ կլինեին ազատ ինքնորոշման հնարավորությո՞ւն շնորհելու մարզի հայությանը: Ո՛չ, որպեսզի նրանից հետո էլ ուրիշ պայմաններ դնի. «Մեր գլխավոր նպատակն է, որ Ղարաբաղում չլինեն ահաբեկիչներ: Եթե այդ ապահովվի, մենք այնտեղից դուրս կբերենք օմոնը»:

Բայց չէ՞ որ ձեր կողմից «ահաբեկիչներ» կոչված այդ սովորական ինքնապաշտպանական ուժերը կան, որովհետեւ դուք մարզն եք մտցրել ձեր օմոն կոչված ավազակներին: Ինքնավար կոչված ազգային մարզում ի՞նչ ունեին նրանք, ինչո՞ւ ոտնահարում են մարզի տիրոջ մարդկային իրավունքները եւ հիմա էլ՝ խորհրդային բանակի ու ներքին զորքերի դաժան համագործակցությամբ:

Այսպես կարելի է մեկ առ մեկ ջնջել Ադրբեջանի ղեկավարի անհիմն հայտարարությունները:

Տեր-Պետրոսյանի պատասխանները, ինչպես միշտ, պատճառաբանված են, տրամաբանված, անխոցելի..., եթե չլիներ վերջինը, որ նրա քաղաքականության ճակատագրական սխալն էր այն ժամանակահատվածում: Ասում էր՝ ադրբեջանական կողմը որոշած ունի Արցախի հայությանն իր հայրենիքից դուրս վանելով հարցը լուծել. «չկան հայեր, չկա եւ խնդիրը»: Դեռեւս ապրիլի 16-ի խորհրդակցությունում Ա. Մութալիբովն իրավապահ մարմիններին՝ ՊԱԿ-ին, ՆԳՆ-ին եւ դատախազությանը կոչ էր արել տեղահանել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի եւ Գետաշենի ենթաշրջանի բնակիչներին, եթե նրանք չենթարկվեն Ադրբեջանի սահմանադրությանը: Նա համարյա նույնը կրկնեց ապրիլի 27-ին՝ հանդես գալով Ադրբեջանի հեռուստատեսությամբ: Եւ սկսած ապրիլի 19-ից՝ տեղահանությունն արդեն սկսված էր խորհրդային զորքերի անմիջական մասնակցությամբ: Ինչի՞ կհանգեցնի նման քաղաքականությունը»:

Իսկապես, ինչի՞ կհանգեցներ: Տեր-Պետրոսյանն այս հարցը պիտի տար ո՛չ թղթակցին, ո՛չ Մութալիբովին, այլ իրե՛ն, միա՛յն իրեն: Որովհետեւ ինքն էր, որ Մութալիբովին յուրովսանն օգնեց եւ Գորբաչովին ու նրա նազիր-վեզիրներին էլ հրահրեց, որպեսզի



սկսեն ու «հաջողությամբ» վարեն «նման քաղաքականությունը»:

**Ապրիլի 16-ին** Մութալիբովն իսկապես կոչ էր արել բռնագաղթեցնել հայերին, իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը, փոխանակ հակակոչեր փնտրելու, փոխանակ Գորբաչովի ու նրա մատի շարժումով պտտվող ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի, դատախազության ղեկավարների հետ լեզու գտնելու եւ արցախահայությանը վերահաս աղետից հեռու պահելու, ճակատամարտի ելավ, ոչ ավել-ոչ պակաս, Գորբաչովի՜ հետ, գրչի մի շարժումով հրամանագիր հրապարակեց Հայաստանի կոմկուսի՝ ԽՄԿԿ այս մի հատվածի, սեփականությունն ազգայնացնելու մասին: Այսքանից հետո ի՞նչ էր սպասում: Որ Գորբաչովը գուրգուրե՞ր իրեն ու հայ ժողովրդին:

**Ապրիլի 29-ի** գիշերն սկսվեց Գետաշենի ու Մարտունաշենի հերթական, բայց աննախադեպ հրթիռակոծումը Ղուշչի-Արմավիր ու Սարիսու գյուղերում տեղակայված զորամիավորումների կողմից: Առավոտյան զրահամեքենաների ուղեկցությամբ զորքերը շարժվեցին երկու հայկական գյուղերի վրա: Ինքնապաշտպանության ուժերը Մարտունաշենից կրակ բացեցին՝ նպատակ ունենալով կասեցնել հակառակորդի առաջխաղացումը: Դրան հետեւեց գյուղի կրակակոծումը հրանոթներից ու գնդացիրներից:

Հենց այդ ժամանակ էլ, ներքին զորքերի ստորաբաժանման հետ միասին, Գետաշեն խուժեցին ադրբեջանական օմոնի եւ հարեւան թուրքի գյուղերի զինված ավազակախմբերը: Գյուղում սկսվեց ջարդ, որին զոհ գնացին 20 հոգի, շատերը վիրավորվեցին: Այս արյունահեղությունը շարունակվում էր մինչեւ օրվա կեսը: Հետո ավազակները 50 հոգու պատանդ վերցնելով եւ տները կողոպտելով՝ գյուղից հեռացան:

Գյուղի ինքնապաշտպաններն էլ հրոսակներից էին պատանդ վերցրել 13 հոգու, եւ սա պատճառ դարձավ, որ առժամանակ մարտը դադարի:

**Ապրիլի 30-ին** Գետաշենում կատարված վայրագության մասին ռուս ականատեսը հրապարակել է հետեւյալը. «Առավոտյան մոտավորապես ժամը 6-ին, հարյուրավոր տանկերով ու զրահամեքենաներով բանակը հարձակվեց Գետաշեն գյուղի վրա: Մարդիկ կարծեցին, թե դա արվում է իրենց պաշտպանելու նպատակով, սակայն զինվորները, 29 մարդ հավաքելով՝ նրանց տարան գյուղից դուրս, ստիպեցին բերանքսիվայր պառկել գետնին, եւ սկսեցին ոտքերով հարվածել նրանց: Այնուհետեւ ավագ լեյտենանտը մարդկանց հանձնեց ադրբեջանցի օմոնականներին, որոնք ծեծի ենթարկելուց հետո առաջարկեցին նրանց ստորագրել իրենց իսկ կազմած փաստաթղթերն այն մասին, որ, իբր, բնակչությունը համաձայն է կամովին թողնել սեփական տները եւ տեղափոխվել այլ հանրապետություն: Իսկ երբ ծեծված մարդիկ հրաժարվեցին ստորագրել, վերստին ծեծի ենթարկվեցին: Զինվորներն արգելափակեցին բոլոր ճանապարհները, մինչեւ անգամ անտառ տանող արահետները եւ սկսեցին կողոպտել տները...» («PA», մայիսի 4):

Ապրիլի 30-ի վաղ առավոտյան Մարտունաշենն արդեն պաշարված էր խորհրդային զորքերի եւ ադրբեջանական բաշիբոզուկների կողմից: Շրջակայքի բարձունքները նվաճած տանկերն սկսեցին կրակ տեղալ գյուղի վրա: Ուղղաթիռներն էլ երկնքից էին գնդակոծում: Այն ժամանակ գյուղի ինքնապաշտպանների «Արաբո» ջոկատի հրամանատար Սիմոն Աչիկգյոզյանը՝ ֆիդայիների սիրելի «Դեդը», զինվորներին կարգադրեց կազմակերպել բնակչության նահանջը դեպի Գետաշեն, իսկ ինքը, բարձրանալով տներից մեկի կտուրը, փորձեց գնդացրային կրակով ապահովել բնակչության նահանջը: Ասում են՝ կրակում էր ու երգում: Երեւի գիտեր, որ նահատակվելու է: Ուզում էր այնպես գեղեցիկ ապրած կյանքն ավարտել սիրած երգով ու արյունակիցների փրկությանը զոհաբերվելով... Հրանոթի մի արկ ընկավ կողքին, տունը փլցրեց: Խիզախ հրամանատարը մնաց փլատակների տակ:

Ականատեսները պատմում են, որ գյուղացիներին Գետաշեն փոխադրելու համար ջոկատի երիտասարդ մարտիկները պատրաստ էին վճարելու իրենց մատաղ կյանքերը: Իսկ գյուղ խուժած նվաճողները՝ զինվոր թե օմոնական, որոշել էին ստվերի տակ թողնել հին ու նոր ժամանակների բոլոր ասպատակիչների դաժանությունները:

Դեպքերի ականատեսը՝ վիրաբույժ Գեւորգ Գրիգորյանը, հետագայում գրել է, որ նոր

**Էմիլյա Ֆարաջյան** (Գետաշենի միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի). «Ապրիլի 16-ից գյուղը գտնվում էր չընդմիջվող հեռահար գնդակոծության տակ: Սակայն մենք չընդհատեցինք դասերը... Ապրիլի 29-ի երեկոյան ադրբեջանցիների գնդակոծությունն ուժեղացավ, գետաշենցիները մինչեւ ժամը 4-ը համառորեն պաշտպանվում էին, մինչեւ տանկերի գալը: Գյուղացիները մտածում էին, որ խորհրդային բանակն օգնության է եկել, սակայն երբ տանկերը շրջապատեցին գյուղը, արգելափակեցին գյուղից դուրս տանող բոլոր ճանապարհները եւ փողերն ուղղեցին մեր տների վրա, մենք հասկացանք, որ մի վատ բան է պատրաստվում... Տանը ես 70-ամյա մորս եւ 23-ամյա որդուս հետ էի, տուն մտան մի ռուս կապիտան եւ մոտավորապես 20 օմոնական: Կապիտանը պահանջեց մեր անձնագրերը, հետո սկսեց գոռալ. «Ենթարկվելո՞ւ եք Ադրբեջանի սահմանադրությանը, թե՞ ոչ: Սա ադրբեջանական հող է, եւ դուք պետք է հեռանաք այստեղից: Ուզում եք տները վաճառե՞լ: Այդ բանը երբեք չի լինի...»: Նա մեզ ստիպում էր ստորագրել իրենց կազմած փաստաթուղթը, թե, իբր, մենք կամավոր թողնում ենք Գետաշենը: Հետո սկսեցին տունը կողոպտել, ծեծեցին մորս եւ որդուս, ջարդուփշուր արեցին ամեն ինչ: Ինձ խուզարկեցին, խլեցին 1200 ռուբլի, որը տանն էի պահում: Հետո մեզ տարան այնտեղ, որտեղ հավաքվել էին տղամարդիկ: Նրանց ստիպեցին բերանքսիվայր պառկել հողին եւ սկսեցին նրանց վրա ման գալ: Ինձ էլ էին ստիպում պառկել, սակայն ես հրաժարվեցի: Օմոնականն ասաց, որ կկրակի ինձ վրա: Ես պատասխանեցի՝ թող սպանեն, միեւնույն է, ես չեմ ենթարկվի»:

**Արսեն Աբանեսյան** (գետաշենցի).-«Ապրիլի 30-ի առավոտյան ժամը 6-ն էր, երբ խճուղու վրա հրացոլք տեսանք: Զրահամեքենաների շարասյուն էր: Ադրբեջանական օմոնը նման քանակությամբ տանկեր, զրահամեքենաներ եւ մարտական տեխնիկա չունի, այդ պատճառով էլ մենք հանգիստ էինք՝ դեռեւս հավատում էինք միութենական բանակի օգնության հեռանկարին: Զրահամեքենաները շրջապատեցին Գետաշենը եւ այն օղակի մեջ առան: Զրահամեքենաների ետեւից հայտնվեցին ներքին զորքերի զինվորները եւ օմոնականները: Մենք 29 հոգի էինք: Լեյտենանտը պահանջեց մեր փաստաթղթերը: Մենք ներկայացրինք: Նա պատռեց մեր անձնագրերը եւ հրամայեց բերանքսիվայր պառկել գետնին: Մեզ ոչինչ չէր մնում անել, բացի հնազանդվելուց: Մեզ վրա հարձակվեցին զինվորները եւ սկսեցին ոտքերով հարվածել: Հետո եկավ բանակի կապիտանը եւ լեյտենանտին դիտողություն արեց. «Սրանով թող օմոնականնե՛րն զբաղվեն...»: Երկու ժամի չափ օմոնականները ծեծեցին մեզ, հետո ավտոբուսով տեղափոխեցին նախկին հայկական, այդ ժամանակ արդեն ադրբեջանցիների զբաղեցրած Կամո գյուղը: Մեզ նորից սկսեցին ծեծել, հետո առաջարկեցին ստորագրել ինչ-որ թղթեր, որոնցում գրված էր, որ մենք համաձայն ենք մեր կամքով թողնել սեփական տները...»:

Այն օրերի ողբերգական վիճակն էր ցույց տալիս մի հեռագիր, որ Երեւան, Մոսկվա եւ կենտրոններ էր հասել SOS-SOS տագնապի կանչով... Սակայն մնացել էր անպատասխան, անուշադրության մատնված, ինչպես մնացած բոլորը, որոնցից արյուն էր կաթում, որոնց մեջ հինավուրց հայկական հերոսական մի շրջանի սիրտը վերջին անգամն էր տրոփում: Ահա՛ այն.

«Հեռագիր Գետաշենից.

Մենք, Ադրբեջանի Գետաշեն եւ Մարտունաշեն երկու հայկական գյուղերի բնակիչներս, թախանձագին խնդրում ենք՝ փրկե՛ք մեր կյանքը: Խորհրդային բանակը ոչնչացնում է մեզ՝ խորհրդային քաղաքացիներիս: Մեզ վրա կրակում են թնդանոթներից, գնդացիրներից եւ ավտոմատներից, գնդակոծում են օդից: Տանկերով տրորում են մեզ՝ մեր տներում եւ բակերում: Ադրբեջանական օմոնականները երեխաներին, կանանց, ծերերին պատանդ են վերցնում, ջարդում են ձեռքերը, ոտքերը, կողերը, արյունլվա են անում դեմքերը, պատին հարվածելով վնասում են երիկամները, գանգամաշկում են, մերկ վիճակում վազեցնում են փողոցով, դանակներով ծակծկում են: Մենք երեք տարի դիմադրում էինք, սակայն բանակի առջեւ անզոր ենք:

Մեր ամուսիններն ի վիճակի չեն մեզ պաշտպանել որսորդական հրացաններով: Զորքը ոչնչացնում է մեզ եւ ստիպում ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, հակառակ դեպքում՝ թողնել հայրենի գյուղերը: Սակայն փախչել էլ չեն թողնում, կրակում են: Մեր տներն ավերված եւ այրված են: Մենք պատսպարվելու տեղ չունենք: Աշխարհի՛ մարդիկ, փրկե՛ք, գոնե երեխաների՛ն փրկե՛ք: Մենք զոհվում ենք տանկերի շրջապատման մեջ եւ արտաքին աշխարհից կտրված:

ՍՈ՛Ս, ՍՈ՛Ս, փրկե՛ք մեզ:

Մայիսի 3, 1991 թ.»:

**Մայիսի 1-ին** Գետաշենի ենթաշրջանի հայության դեմ ծրագրված գործը մտավ ամենավճռական փուլ. ռազմական գործողությունը, որ ստացել էր «Кольцо» («Օղակ») անունը, այդ օրն էլ սկսվեց: Մեր ձեռքին է գործողության ծածկագրի քսերոպատճենը: Ծածկագիրը կազմվել եւ կիրառման է դրվել մայիսի 1-ին: Այնտեղ գործողության ղեկավարը կոչվում է «Յախտա», գնդապետ Մաշկովը՝ «Զալիվ», գնդապետ Միշինը՝ «Կուրգան»... Ուրեմն, սրանք են հայ մարդկանց այն հոգեառները, որոնց երբեք չպետք է մոռանան գետաշենցի-մարտունաշենցիները:

Նույն օրը Խանլարի շրջգործկոմի նախագահ Ն. Մամեդովի ստորագրությամբ Գետաշենի ու Մարտունաշենի հայերին է ներկայացվել հետեւյալ վերջնագիր-կարգադրությունը.

«Ադրբեջանական հանրապետության Խանլարի շրջանի

Չայքենդ ու Մարտունաշեն գյուղերի բնակիչներին.

Համաձայն Չայքենդ ու Մարտունաշեն գյուղերի բնակիչների բազմիցս արած դիմումների՝ ուրիշ ռեգիոններում մշտական բնակության գնալու վերաբերյալ, Խանլարի շրջգործկոմը երաշխավորում է.

1. Օրենքին խստորեն համաձայն՝ ապահովել անձնական տների, սեփականության վաճառքի փաստաթղթերը եւ դրամական գումարների հանձնումը կազմակերպել առաջին երեք օրվա ընթացքում:

2. ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի միջոցով ապահովվելու է քաղաքացիների անվտանգությունը՝ Ադրբեջանի տարածքով տեղափոխվելիս:

3. Վերը շարադրվածը համաձայնեցված է հանրապետության եւ ԽՍՀՄ ՆԳՄ ղեկավարության հետ»:

Նույն օրը նույն հասցեով մի գրություն-վերջնագիր էլ տարածվել է հանրապետության ՆԳՄ եւ նրան ենթակա հատուկ շրջանի պարետության կողմից: Ահա՛ այն.

«Համաձայն Չայքենդ ու Մարտունաշեն գյուղերի բնակիչների խնդրանքների՝ Հատուկ շրջանի պարետատան ղեկավարությունը երաշխավորում է.

1. Մինչեւ 1991 թ. հունիսի 1-ն ապահովել Չայքենդ ու Մարտունաշեն գյուղերի բնակիչների անվտանգությունը սեփական տների ու սեփականության վաճառքի փաստաթղթերը ձեւակերպելու ընթացքում:

2. Այդ ժամկետներում էլ ապահովվելու է հիշյալ գյուղերի բնակիչների տեղաշարժերի անվտանգությունն Ադրբեջանի տարածքում:

3. Նշված կետերը համաձայնեցված են ԽՍՀՄ ՆԳՄ եւ հանրապետության ՆԳՄ ղեկավարության հետ:

*Հանրապետության ՆԳՄ*
*մինիստրի առաջին*
*տեղակալ Ռ. Մամեդով.*
*ԽՍՀՄ ՆԳՄ դիվիզիայի*
*հրամանատարի տեղակալ*
*Ե.Միշին»:*

Գետաշենի ու Մարտունաշենի հայ բնակիչները զենքը ձեռքներին կռվում էին հայրենի հողի վրա՝ սեփական օջախներում իրենց ապրելու իրավունքի համար, իսկ ԽՍՀՄ

քաղաքագետներ չենք: Իսկ եթե հասկանում էինք, գիտեինք եւ, այդուամենայնիվ, գնացինք ձեր այդ քայլի՞ն... Բայց չէ՞ որ սա էլ արկածախնդրություն է: Այդ ո՞նց է լինում, որ կառավարում եք ժողովրդի, տվյալ դեպքում՝ Արցախի, Շահումյանի շրջանի ու Գետաշենի հայության ճակատագիրը խաղասեղանի վրա դնել միայն նրա համար, որ ձեր մտքով անցել է օր առաջ տեր դառնալ Հայաստանի ամենահարմարավետ վարչական շենքին...

Հետաքրքիրն այն է, որ Կոմկուսի Կենտկոմը զարմանում էլ էր իր դեմ ելած ուժի վարք ու բարքից. հայտարարության վերջին մասն ասում է. «Հանրապետության իշխանության մարմինները մայիսի 1-ին Կոմկուսի Կենտկոմին, քաղկոմ-շրջկոմներին դուրս քշելով իրենց զբաղեցրած շենքերից, սպասվող աղետն ավելի անկասեցնելի դարձրին, եւ դա այն դեպքում, «Երբ Կոմկուսը պատրաստակամություն էր հայտնել բանակցություններ վարել եւ ժողովրդի համար ճակատագրական այս պահին խուսափել հանրապետությունում ավելորդ լարվածություն ստեղծելուց»:

Մի՞թե միայն «հանրապետությունու՛մ... լարվածություն ստեղծելուց»: Իսկ անուղղելի համառության մատաղ տալիք Գետաշենն ու Մարտունաշենը, Շահումյանի ու Հադրութի պարտվելիք գյուղե՞րը:

Հայաստանի նոր կառավարությունը Կոմկուսի հետ վարվում էր կոմկուսավարի: Վերջինս չէ՞ր հիշում, թե ինքն ինչպես էր զավթել ուրիշների ունեցվածքը, եղած-չեղածը եւ տերերին էլ ոչնչացրել... Եւ այն ե՞րբ է եղել, որ նա համաձայներ իր վարքը մեղմացնել՝ որեւէ մեկի բանակցություններին ընդառաջելով:

**Մայիսի 2-ին** հրապարակվեց ՀՀ ԳԽ-ի հայտարարությունը, որ պարունակում էր դժգոհություն ԽՍՀՄ ժող. պատգամավորների համագումարի արտահերթ նիստ գումարելու մասին իր առաջարկը մերժելու առթիվ, հաղորդում, որ Կենտրոնն ու Ադրբեջանը ագրեսիա են սկսել հայ ժողովրդի դեմ, ուստի ՀՀ ԳԽ-ը գտնում է, որ այս վիճակի համար պատասխանատու են «ԽՍՀՄ պրեզիդենտը, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը, ԽՍՀՄ Պաշտպանության եւ Ներքին գործերի նախարարությունները, ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեն»:

Հայտարարությունը փակվում էր տիեզերական մի կոչով՝ «աշխարհի ժողովուրդներին, պետությունների պառլամենտներին եւ կառավարություններին, միութենական հանրապետությունների Գերագույն խորհուրդներին, բարի կամքի տեր մարդկանց՝... բոլոր ջանքերը գործադրել հայ ժողովրդի դեմ ուղղված ագրեսիվ գործողությունները դադարեցնելու համար»:

◇ ◇ ◇

Այդօր հրապարակվեց նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ուղերձը Գորբաչովին: Այնտեղ հայոց հոգեւոր հայրը հիշեցնում էր, թե նա անցյալ տարվա հոկտեմբերի 2-ին անձամբ իրեն ընդունելով, հուսադրիչ վերաբերմունք է ցուցաբերել, սակայն այնպես էլ չվերահաստատվեցին տեղական իշխանություններն Արցախում, իսկ այսօր Գետաշենում ու հարեւան հայկական բնակավայրերում «հայերն իրենց բազմադարյան հայրենիքից բռնի տեղահանման ու բնաջնջման սպառնալիքի տակ են գտնվում»:

Վերստին շեշտելով իր խորին մտահոգությունն Արցախի, Շահումյանի շրջանի ու Գետաշենի համար, Վեհափառ հայրապետը դիմում էր չեղած բաների՝ Գորբաչովի խղճի ձայնին ու պրեզիդենտական արդար խոսքին:

Այդ օրը, երեւի ուշադրությունը հիմնականից՝ Գետաշենի ենթաշրջանում կատարվող հրեշավոր գործողություններից շեղելու համար, մեր հակառակորդները դրությունը լարել էին ամենուրեք. Խոջավենդից գնդակոծում էին Մարտունին, օմոնականները շրջափակել էին Սեյսուլանն ու Յարըմջան: Անհանգիստ էր դրությունը նաեւ Հադրութի շրջանում: Սակայն հայերը կրավորական դերում չէին այս խառնակչություններում: Ֆիզուլիից Տողի վրա գնացող երկու ադրբեջանցիներ սպանվեցին, մեկն էլ մահ գտավ Չլդրան գյուղի մոտ, երբ հարձակում էր եղել կաթնապրանքային ֆերմայի վրա:



Դրությունն անհանգիստ էր նաեւ ՀՀ սահմանային շրջաններում՝ Գորիսում, Կապանում, Նոյեմբերյանում ու Իջեւանում:

Եւ, այսքանի կողքին, արդեն հայտնի էր՝ ինչ է կատարվել Գետաշենում ու Մարտունաշենում, ու Հայաստանի կառավարության մարմինները միայն արձանագրում էին տեղի ունեցածը, ցավակցում սպանվածների ու վիրավորների հարազատներին, խոստանում գործադրել «ամեն ջանք Արցախի ու հարակից հայկական շրջանների հայ բնակչության իրավունքները պաշտպանելու համար» (ՀՀ ԳԽ-ի Նախագահություն, ՀՀ Նախարարների խորհրդի Նախագահություն):

Իսկ Կոմկուսը, նրա ակտիվը եւն դեռեւս ժողովներ էին գումարում: Դիմում հղեցին Գորբաչովին, նույնիսկ հանձնաժողով կազմեցին՝ ԿԿ առաջին քարտուղար Ս. Պողոսյանի գլխավորությամբ, որպեսզի այն Մոսկվա գնա, բանակցություններ վարի Գորբաչովի հետ՝ պահանջելով ապաշրջափակել Շահումյանի շրջանն ու Գետաշենի ենթաշրջանը, վերադարձնել Արցախի խաղաղությունը, այնտեղ վերականգնել իշխանության մարմինները:

Եւ կոմկուսի Կենտկոմը միաժամանակ չէր մոռանում դատապարտել իր սեփականության վրա պարզված կառավարական ձեռքը. ընդունեց որոշում այն մասին, որ չի ճանաչում ՀՀ ԳԽ-ի ու Մինիստրների խորհրդի որոշումները, խոստանալով այդ հարցին (կուս Կենտկոմի սեփականությունից ուրիշ մարմինների բաժին հանելուն) անդրադառնալ, երբ բեկանված կլինեն հիշյալ որոշումները:

Աղմկոտ ցույցեր ու ժողովներ էին գումարվում Երեւանում, հանրապետության մնացած բնակավայրերում: Դիմումներ, բողոքի նամակներ ու հեռագրեր էին հղվում Մոսկվա, երկրի ղեկավար Գորբաչովին, հայոց ողբերգության հետ առնչվող մյուս ղեկավարներին...

Օրվա վիճակն ամենից ցայտուն արտահայտվել է մի փաստի մեջ. երեկոյան Մոսկվայում ՀՀ մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյանին զանգել է ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերի հրամանատար գեներալ-գնդապետ Շատալինը եւ սպառնացել, թե հայերը պետք է դադարեցնեն իրենց բողոքներն ու ավելորդ աղմուկը՝ չմոռանալով, որ Հայաստանի ատոմակայանը գտնվում է ԽՍՀՄ ՆԳՄ հսկողության տակ:

Այսինքն՝ դուք բողոքելու իրավո՛ւնք անգամ չունեք:

Ոչինչ չէր ազդում պատերազմի սանձերն իրենց արյունոտ ձեռքերում պահող քուրմերի վրա, ո՛չ բողոքը, ո՛չ անեծքը, ո՛չ աղերսանքը: Մեռնող ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում Լյուդմիլա Հարությունյանը հենց նրանց էր դիմում. «Հենց այս րոպեներին հայկական Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերում մղվում են արյունահեղ մարտեր: Պլենումի դահլիճում նստած են մարդիկ, որոնք իրենց ձեռքերում են պահում դրանց կառավարման լծակները: Հենց այս պահին բռնագաղթի է ենթարկվում երկու հայկական գյուղերի բնակչությունը: Այդ ընթացքի լծակները նույնպես գտնվում են այս դահլիճում նստած մարդկանց ձեռքերում: ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը կարող է լիակատար իրավունքով նրանց հարցնել. «Ե՞րբ վերջապես կավարտվի պատերազմը եւ խաղաղություն կհաստատվի այդ տարածքում: Այդ հարցն այլեւս չի կարող մնալ անպատասխան: Սակայն կուսակցությունը նույնպես չի ուզում այդ հարցը տալ: Բայց ես չեմ կարող չհարցնել ղարաբաղյան դրամայի հերոսներին. «Ինչքա՞ն կյանքեր են անհրաժեշտ դեռեւս, որպեսզի կշտացնեք պատերազմի մողոքին ԼՂԻՄ-ում»:

**Մայիսի առաջին օրերին**, որքան էլ ցավալի, վերջնականապես լուծվում էր Գետաշենի ու Մարտունաշենի պարպումն իրենց հայ բնակիչներից, եւ տագնապը պաշարել էր ամբողջ հայ ժողովրդին, նրա ղեկավարներին, հասարակական ու քաղաքական բոլոր կազմակերպություններին: Բողոքի ու դատապարտումի, օգնության ու պաշտպան կանգնելու կոչեր, դիմումներ, ուղերձներ ու հայտարարություններ էին հղվում այս ու այնտեղ, դարձյալ ԽՍՀՄ ղեկավարությանը, «եղբայր» հանրապետություններին, աշխարհի պետությունների ու միջազգային տարբեր կազմակերպությունների ղեկավարներին... Այսպե՛ս.

բնակավայրերը, ապա այնտեղ վայր է իջնում ռազմական ուղղաթիռը, առաջարկում իր ծառայությունը. «Ո՞ւր կուզենաք փոխադրվել»։ Խոսք կար դեպի Զանգեզուրի գյուղերն այսպիսի բեռներով ուղերթ կատարած ուղղաթիռների մասին։

Այս օրվա ընթացքում Երևանի «Էրեբունի» օդանավակայանում ռազմական ուղղաթիռներով վայրէջք են կատարել դեսանտայիններ, իրենց իսկ հայտարարությամբ՝ ռազմական ուղղաթիռների պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով։ Իսկ գիշերը հայտնի դարձավ, որ ռազմական ուղղաթիռներով զինական մի շարք կազմավորումներ են իջել նաև հայ-ադրբեջանական սահմանի ամբողջ երկարությամբ։

4-ը բեկումնային օր էր ոչ միայն Արցախի, Շահումյանի ու Գետաշենի, այլև հայ-ադրբեջանական սահմանային ամբողջ գոտու համար։ Սահմանամերձ հայկական գյուղերը ռմբակոծվում էին, ենթարկվում տանկերի ու տարբեր զրահամեքենաների հարձակումներին։ Սովորական էր դարձել խաղաղ բնակիչների առևանգումը։

Գորիսից ստացված հաղորդման համաձայն՝ 4-5-ին Կոռնիձոր գյուղից առևանգվել են 11 մարդ, որոնցից 9-ը՝ միլիցիայի աշխատողներ, երկուսը՝ տեղական խորհրդի անդամներ։ Գերի են վերցվել նաև Գորիսի հեռուստատեսային աշտարակի մի քանի աշխատակիցներ։ Նոյեմբերյանի շրջանի Ոսկեպար գյուղը և գյուղամերձ ճանապարհները չդադարող ռմբակոծությունների ու գնդակոծությունների են ենթարկվել հարևան ադրբեջանական Ասկիպարա, Մազումլու և Խերըմլու գյուղերում տեղակայված խորհրդային զորքերի ու օմօնի ավազակախմբերի կողմից։ Ոսկեպարի ճանապարհի ռմբակոծությամբ կործանվել է մի ավտոբուս, որը գյուղ էր տանում միլիցիայի 11 աշխատողների։ Բոլոր տասնմեկն ու վարորդը զոհվել են ռմբակոծության, ապա և դրան հետևած ուղիղ գնդակոծության հետևանքով։

**Մայիսի 5-ին** Ինեսա Բուրկովան, ռուս գրողն ու հասարակական գործիչը, որ այս չորս տարիներին Արցախում էր եղել պարբերաբար, հատկապես նրա դժվար օրերին, Գետաշենի ողբերգության ականատեսն էր, ահա թե հեռագրով ինչպիսի խոսք հղեց իր հայրենակիցներին, աշխարհի բարի հոգիներին, մարդկության խղճին։

«... Խորհրդային բանակի զորամասերը, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումները, ադրբեջանական օմօնականները ոչնչացրին Մարտունաշեն գյուղը,- գրում էր Բուրկովան։- Վերակառուցման Խատընն է սա։ Փրկվել և առայժմ ողջ են շատ քիչ մարտունաշենցիներ։ Սրանք էլ փախել են Գետաշեն, որ դարձյալ պաշարված են դահիճների կողմից, կամ անտառում են պատսպարվել, որ օմօնականներն են որսի ելել և ավտոմատային կրակահերթերով սանրում են անտառը։ Մեկը կնոջն ու չորս երեխաներին է կորցրել, մյուսը՝ ամուսնուն, երրորդը՝ հարազատներին։ Բոլորն իրենց փոքր հայրենիքն են կորցրել։ Կորցրել են և սերը Մոսկվայի, Խորհրդային բանակի, ամեն խորհրդայինի հանդեպ։ Բոլորն անիծում են Գորբաչովին, նրանց հետ էլ՝ ի՛նքս։

Ես՝ ռուս գրողս, դիմում եմ բոլորին, ում խիղճը դեռ ողջ է, զարթնե՛ք։ Ես ձեզ դիմում եմ, Սվյատոսլավ Ֆյոդորով, Ֆյոդր Բուրլացկի, Դմիտրի Լիխաչով, Անատոլի Կարպով, Ալբերտ Լիխանով։ Մոռացե՛ք հեռուստամարաթոնների ու գովազդերի մասին, մարդու կյանքի պաշտպանության համար ոտքի հանեք ձեր՝ մարդու իրավունքների, խաղաղության, մշակույթի, մանկական ընկերություններն ու հիմնադրամները։ Ահեղորեն բախեք Կրեմլյան դռները։

Ես դիմում եմ զինվորների մայրերին՝ ձեր որդիներին արգելե՛ք կրակել բոլոր տարիքի երեխաների, նրանց հայրերի ու մայրերի, պապերի վրա։

Ես դիմում եմ բոլոր ժողովրդավարներին, արմատականներին, ազատականներին՝ վե՛րջ դրեք արյունալի բռնակալությանը։

Ես դիմում եմ հայ Սփյուռքին՝ անմիջապես բախեք Բուշի, Միտերանի, ՄԱԿ-ի, Եվրախորհրդարանի դռները։ Եթե չլսեն ձեզ, ձեր պատմական հայրենիքը ֆիդայիներ ու զենք ուղարկեցեք։ Այստեղ 15 թվականն է։ Սա ասում եմ ես՝ ո՛չ հայուհիս։

Ես չեմ դիմում ԽՍՀՄ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարին, պաշտպանության կոմիտեի նախագահին, խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր



Միխայիլ Գորբաչովին։ Չեմ դիմում Յազովին, Պուգոյին, Ասադովին։ Անօգուտ է։ Նրանք մարդկության թշնամիներն են, խուլ են, երկաթ հագած։

Խաղաղ բնակչության հանդեպ արյունալի հաշվեհարդարի կազմակերպիչների նկատմամբ ես միջազգային դատ եմ պահանջում։

*ԻՆԵՍԱ ԲՈՒՐԿՈՎԱ,*
*մայիսի 5-ի առավոտյան*
*ժ. 10,*
*հաղորդում եմ*
*իրադրության վայրից»։*

**Մայիսի 5-ին** Արտակարգ իրավիճակի հանրապետական խորհրդի նիստում Լ. Տեր-Պետրոսյանը հաղորդում արեց ամսի 3-ին Գորբաչովի հետ ունեցած մեկուկես ժամվա զրույցի մանրամասնությունների վերաբերյալ և նորից պատմեց, որ Բ. Ելցինի հետ էլ հեռախոսազրույց է ունեցել, և Ռուսաստանի ղեկավարը խոստացել է ուշադրությամբ հետևել ծավալվող իրադարձություններին ու, իբրև առաջին գործնական քայլ, Հայաստան ու Ադրբեջան գործուղել իր հանրապետության ԳԽ-ի մի հանձնաժողով՝ Ֆյոդոր Շելով-Կովեդյաևի գլխավորությամբ։

Նիստի վերջում հենց նոր Երևան ժամանած ՌԽՖՍՀ ԳԽ-ի պատգամավոր Անատոլի Շաբադը պատմեց Ռուսաստանի խորհրդարանի այդ հանձնաժողովի նպատակներն ու ծրագրերը։

✧ ✧ ✧

Նույն օրը հրապարակվեց նաև Հայաստանում ապրող ռուսների մի խումբ ներկայացուցիչների (36 ստորագրությամբ) դիմումը ռուս ժողովրդին։ Վկայակոչվում էին ականատեսների պատմածները ռուս զինվորության գործադրած բռնությունների ու չարագործությունների մասին, ապա կոչ էր արվում. «Ռուս մարդիկ, մենք առանձնակի պատասխանատվություն ենք կրում հայերի ցեղասպանության և տեղահանությունների համար։ Դրանք իրականացվում են ռուս զինվորների ձեռքով, զենքով, կազմակերպվում են ռուս քաղաքական գործիչների կողմից, ապա աղավաղ ձևով տարածվում երկրի ու աշխարհի հանրությանը ռուս լրագրողների միջոցով։ Ռուսաստանի յուրաքանչյուր քաղաքացի, յուրաքանչյուր մեծ կամ փոքր կոլեկտիվ պետք է բողոքի ձայն բարձրացնի այս ամենի դեմ, որպեսզի հաղթի արդարությունը»։

**Մայիսի 6-ին** ՀՀ ԳԽ-ը հրապարակեց հայտարարություն, որով ԽՍՀՄ Ներքին գործերի ու Պաշտպանության նախարարությունների ղեկավարների երկու օր առաջ (մայիսի 4-ին) արած համատեղ հայտարարությունը գնահատեց իբրև խոստովանություն, որ նրանք երկուսն էլ մասնակցություն ունեն հայության բռնի տեղահանություններին, զինվորականների ու ներքին զորքերի ջոկատները հենց իրենք են դրել Ադրբեջանի տրամադրության տակ, իսկ Հայաստանում տեղակայված զորամիավորումներին կարգադրել են կաշկանդած պահել հայ պաշտպանվողներին։

Հայտարարության վերջում էլ խրոխտ խոստումն էր «հայ ժողովրդի դեմ ձեռնարկվող ցանկացած ոտնձգությանը դիմակայելու իր վճռականության» մասին։

Նույն օրը ԳԽ-ը հրապարակեց նաև իր դիմումը հայ ժողովրդին, որով ներկայացվում էր դրության ամբողջ լրջությունը, այն հաղթահարելու համար անհրաժեշտ կազմակերպվածությունը, ջանքերի համատեղումն ու միասնությունը։ Նշվում էր նաև, որ «Այս ճգնաժամային պահին ներքին անկազմակերպվածությունը, խուճապը, խմբային ու կուսակցական եսակենտրոն նկրտումները կարող են ապակայունացնել իրադրությունը և հարվածել Հայաստանի պետականությանը»։

«Կուսակցական եսակենտրոն նկրտումնե՞րը»։ Ի՞նչ պետք էր հասկանալ այս ընդհա-

նուր խոսքի տակ: Արդյոք ո՞չ այն, ինչ երկու շաբաթ շարունակ իրենք էին գործադրում՝ կոմկուսը փողոց շպրտելու համար:

Հրապարակվեց նաեւ ԳԽ-ի դիմումը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովին: Այս փաստաթուղթը եւս ներկայացնում էր Հայաստանի ու Արցախի դեմ Կենտրոնի սանձազերծած լայնամասշտաբ պատերազմը, որին զոհ են գնում խաղաղ ու անմեղ մարդիկ, կործանվում են բնակավայրերը: Եւ այս անմարդկային չարագործությունների նպատակն է՝ իրենց բնաշխարհից բռնագաղթեցնել Արցախի ու հարեւան շրջանների հայերին, եւ տապալել Հայաստանում սկսված ու հաջողությամբ իրականացվող անկախության գործը:

«Գտնելով, որ դեպքերի նման զարգացումը թելադրում է ՄԱԿ-ի միջամտության անհրաժեշտությունը,-ասվում էր դիմումի վերջում,-ՀՀ ԳԽ-ը դիմում է ձեզ՝ խնդրանքով, որպեսզի ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի դիտորդներ ուղարկեք՝ իրադրությանը տեղում ծանոթանալու եւ համապատասխան հետեւություններ անելու նպատակով»:

✧ ✧ ✧

**Մայիսի 6-ին**, վերջապես, ԽՍՀՄ ԳԽ-ը բարեհաճեց զբաղվել Անդրկովկասում (ոչ թե հայ-ադրբեջանական գոտում, այլ Անդրկովկասում), տիրող լարված իրադրությամբ, եւ Ան. Լուկյանովը հայտարարությունների համար ձայն տվեց հայ պատգամավոր Ն.Ա. Գրիգորյանին ու թրքուհի Է. Կաֆարովային: Գրիգորյանը նկարագրեց վիճակը, արյունահեղությունն ու բռնագաղթը՝ այդ ամենի մեղքը բարդելով ԽՍՀՄ ներքին զորքերի ու ադրբեջանական օմոնի վրա: Կաֆարովան էլ, իրենց սովորության համաձայն, ստեղծված մթնոլորտը համարեց անօրինության տիրապետություն, որովհետեւ հայերն ու Կենտրոնը փաստորեն միջամտում են անկախ Ադրբեջանի ներքին գործերին:

Ապա ելույթ ունեցավ ՆԳ մինիստր Պուգոն եւ, չքմեղանալով ու իր զորքերը խաղաղության աղավնիներ ներկայացնելով, խորհուրդ տվեց գնալ միակ ու տրամաբանական ելքին՝ հայկական ու ադրբեջանական կողմերի երկխոսությանը, որը հնարավոր կլինի բոլոր ապօրինի ռազմականացված միավորումների զինաթափումից հետո: Եւ այսքանից հետո էլ Լուկյանովն առաջարկեց հարցի քննարկումը տեղափոխել Ազգությունների խորհրդի Ազգային քաղաքականության ու ազգամիջյան հարաբերությունների հանձնաժողով: Նրա կարծիքով, հարցը բարդանում է նրանով, «որ Հայաստանի տարածքում ԽՍՀՄ հիմնական օրենքը չի գործում» («Հ», 1991, մայիսի 8): Ուրեմն՝ այնտեղ կարելի է անպատիժ կերպով կոտորել ԽՍՀՄ սահմանադրության ազդեցության ոլորտից դուրս գտնվող ժողովրդին,-այսպես պիտի հասկանալ ԳԽ-ի նախագահ-մարդասպանի խոսքը:

**Մայիսի 6-ի-լույս 7-ի** գիշերը Ոսկեպար էին մեկնել ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորները: Նրանք փորձել էին ուղղաթիռով արագ հասնել Ոսկեպար: Սակայն զինվորները ռադիոկապով սպառնացել էին, թե ուղղաթիռը կպայթեցնեն (մտածել են, թե կխափանեն պատգամավորների այցելությունը Ոսկեպար, եւ չեն մերկացվի իրենց հրեշավոր գործողության մանրամասները): Բայց, այնուամենայնիվ, պատգամավորները Ոսկեպար գնացին շատ օգնության մեքենաներով եւ առաջին գործը, որ ձեռնարկեցին, նախորդ օրերին անհնարին եղածն էր. նրանց միջնորդությամբ էր, որ հնարավոր եղավ գյուղից դուրս բերել Նոյեմբերյանի ՆԳ բաժնի աշխատակիցների դիակները:

Ապա պատգամավոր Շաբադը ծանոթացավ պաշարված գյուղի պաշտպանների հետ, մնաց նրանց մոտ եւ զինվորականներին հայտարարեց, թե ինքը գյուղից դուրս կգա միայն այն ժամանակ, երբ զինվորությունը եւ հայ ինքնապաշտպանության խումբը խաղաղ կլուծեն իրենց հարցերը:



✧ ✧ ✧

Այդ օրը (մայիսի 6-ին) ՀՀ ԳԽ-ն ընդունեց դիմում՝ ուղղված հայ ժողովրդին, նամակ-հայտարարություններ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պերես Դե-Կուելյարին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնախմբին, Լ.Տեր-Պետրոսյանի անունից՝ Ուկրաինայի ԳԽ-ի նախագահ Կրավչուկին...

Բոլորն էլ նույն ցավն ու տագնապն էին արտահայտում, օգնելու, հայ ժողովուրդը նոր աղետից փրկելու, հարեհաս լինելու կոչը: Եւ բոլորի մեջ էլ կար ստեղծված դրության հիմնական պատճառի գիտակցությունը. «խորհրդային կայսրությունը փորձում է փակել մեր ճանապարհը դեպի անկախություն ու ազատություն. Ադրբեջանից հայերի բռնի գաղթեցման գործողություններով, ինչպես նաեւ Հայաստանի տարածքի մշտական գնդակոծություններով ԽՍՀՄ իշխանությունները փորձում են անկարգ վիճակ ստեղծել Հայաստանում հանրաքվեից առաջ, հիմք ստեղծել հանրապետության ներքին գործերին խառնվելու, դեմոկրատական ընթացքը խափանելու համար»:

Եւ այս բոլորի կողքին Լ. Տեր-Պետրոսյանը ԳԽ-ի նստաշրջանում այդ գործողությունները բնութագրում էր «որպես մշակված ծրագրով իրականացվող պետական տեռոր հայ ժողովրդի նկատմամբ: Խորհրդային Միությունն Ադրբեջանին օժանդակում է ոչ միայն քաղաքականապես, այլեւ ռազմական ուժով»: Այսքանից հետո էլ եզրակացնում է, թե «Ստեղծված վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ է շեշտը դնել միջազգային հասարակական կարծիք ստեղծելու, Մոսկվայի վրա քաղաքական ճնշում գործադրելու, Արցախին գործնական օգնություն ցույց տալու, ռուսական գործոնի վրա» («ГА», մայիսի 8):

Այսպես էլ մտածում էին, ասում ու գրում: Այսպե՛ս, ո՛չ ավել, ո՛չ պակաս: Եւ իրադրությանը, աշխարհի կարգին ու վարքին ծանոթ մարդն էլ պիտի մտածեր, թե՛ սրանք, այս Հայաստանի ղեկավարները՝ ԳԽ-ի նախագահից մինչեւ վերջին պատգամավորը, նույնիսկ նրանց գործերը տեսնող, նրանց լսող-ավելի ճիշտ՝ լռող մարդիկ երկնքից են կաթել, չգիտեն, թե ի՛նչ է կատարվում աշխարհում, ա՛յն աշխարհում, որ այդ բոլոր կոչերն ու հայտարարությունները լուրջ բանի տեղ չէր դնում:

✧ ✧ ✧

**Մայիսի 6-ին** Վաշինգտոնի Քենանի ինստիտուտում Ադրբեջանի ու Հայաստանի առճակատման հանգամանքների մասին զեկուցում էր կարդացել Ադրբեջանի Ազգային ճակատի ղեկավար Է. Մամեդովը՝ այդ առճակատումը համարելով Մոսկվայի հրահրածն ու ստեղծածը: Իսկ ունկնդիր հայերի հարցերին պատասխանելով էլ հայտարարեց, թե Հայաստանի շրջափակումների սկզբնավորողները հայերն են եղել, գնդակոծության են ենթարկել դեպի Նախիջեւան շարժվող գնացքները, եւ իրենք էլ ստիպված փակել են Հայաստանի ճանապարհները: Ինչ մնում է գազամատակարարման խափանումներին, այստեղ եւս նախաձեռնությունը հայերից է եղել. «Ղազախի շրջանի գյուղերի վրա հայ գրոհայինների հարձակումներից հետո բազմաթիվ գյուղեր այրվեցին: Ժամանակակից ինքնիշխան ցանկացած պետություն իրավունք ունի նման գործողություններին պատասխանել տնտեսական պատժամիջոցներով...»,-հպարտորեն բացատրել է ինքնիշխան Ադրբեջանի ներկայացուցիչը:

**Մայիսի 7-ին** ՀՀ ԳԽ-ի նախագահության շենքում տեղի ունեցավ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հարցազրույցն արտասահմանյան լրագրողների հետ: Այնտեղ ՀՀ ղեկավարը հայտարարեց, թե «Այն, ինչ տեղի ունեցավ Գետաշենում եւ Մարտունաշենում, մենք գնահատում ենք իբրեւ հայերի բռնի տեղահանություն, պետական ահաբեկչության գործողություն, որն իրականացվեց խորհրդային բանակի, ներքին զորքերի եւ ադրբեջանական միլիցիայի ուժերով, նախապես կազմված պլանով: Մենք այժմ լրացուցիչ փաստաթուղթ ունենք, որը վկայում է հենց այն, որ գործողությունը նախապես պլանա-

վորված է եղել: Այդ փաստաթուղթը մեր ձեռքն է ընկել Գետաշենում պատանդ վերցված գնդապետ Մաշկովի մոտից: Նա էր ղեկավարում գործողությունները: Այդ փաստաթղթերում նշված են գործողությանը մասնակցած բոլոր զորամիավորումների պայմանականչերը»:

(Մաշկովի ձեռքից վերցված փաստաթղթերից մեկը «Պաշտոնական անձերի պայմանականչերի աղյուսակն» է` «Զալիվ» կոչված ստոր գործողությունն իրականացնելու համար, ապա եւ ահաբեկչական պայմաններում բնակիչներից հավաքված «ստորագրությունների» հիման վրա Ադրբեջանի ՆԳՆ նախարարի առաջին տեղակալ Ռ. Մամեդովի, գնդապետ Միշինի, Խանլարի շրջգործկոմի նախագահ Ն. Մամեդովի սարքած հրամանները, որոնցով երեք օրվա ընթացքում, իբր, պետք է կազմակերպվեին դատարկվող գյուղերի հայ բնակիչների սեփականությունների առ եւ տուրը (Այս փաստաթղթերը հրապարակվել են «ՀՀ»-ի 1991 թ. մայիսի 8-ի համարում):

Ապա Ղարաբաղի հարցի միակ լուծում համարելով այնտեղ «օրինական իշխանության վերականգնումը», Տեր-Պետրոսյանը գտավ, որ ամեն ինչի ակունքում կանգնած է Մ. Գորբաչովը, որը ցանկանում է ահաբեկել հայ ժողովրդին եւ հնարավորության դեպքում տապալել Հայաստանի օրինական իշխանությունները: Այսինքն` այդ գործողություններով ուզում են ժողովրդին հասցնել հոգեբանական ճգնաժամի, ինչը Գորբաչովը հույս ունի ուղղել Հայաստանի օրինական իշխանությունների դեմ:

✧ ✧ ✧

Այդ օրը (մայիսի 7-ի) ժամը 17-ին արդեն Գետաշենն ու Մարտունաշենն իսպառ դատարկված էին: Երկու գյուղերի բնակիչները 24 ավտոբուսներով փոխադրվել էին Իջեւան, 2 ավտոբուսով` Տավուշ, 14 ավտոբուս էլ դեռ ճանապարհին էին: Բռնագաղթվածներին բերում, թափում էին սահմանի վրա եւ հեռանում:

✧ ✧ ✧

Գերագույն խորհուրդը (իհարկե, ԽՍՀՄ) նախորդ օրը մերժել էր ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի արտահերթ նիստ հրավիրելու մասին ՀՀ Գերագույն խորհրդի պահանջը: Արհամարհվել էր նաեւ նույն պահանջով Լենինգրադի քաղաքային ու մարզային խորհուրդների նախագահությունների համատեղ նիստի հայտարարությունը, որով օրինական էր համարվում ՀՀ ԳԽ-ի պահանջը, ապօրինի ու հակամարդկային` հայերի բռնի տեղահանությունն Ադրբեջանից, մանավանդ` զինծառայողների օգտագործումը նման բռնություններ կատարելիս:

Մերժումը հիմնավորելիս ԳԽ-ի նախագահ Լուկյանովը հրապարակ հանեց կենտրոնի նենգությունների հիմքը, ասաց` Ադրբեջանը գտնվում է ԽՍՀՄ կազմում, մասնակցում է ԽՄ նոր պայմանագրին, իսկ Հայաստանում, ինչպես հայտնի է, չի գործում ԽՍՀՄ սահմանադրությունը:

**Մայիսի 8-ին**. Գետաշենի ու Մարտունաշենի պարպումից հետո, խորհրդային զորքեր ու մարտական տեխնիկա էին կուտակվում Շահումյանի շրջանում, հայ-ադրբեջանական սահմանի երկարությամբ: Չէր կարելի կասկածել, որ օրակարգի հարց էր դառնում Շահումյանի շրջանի հայության բռնագաղթեցումը:

Հայաստանի Արտակարգ իրավիճակի հանրապետական ժամանակավոր խորհուրդը քննեց հանրապետության ու Արցախի տագնապալից վիճակը, եւ ԳԽ-ի Նախագահության հայտարարություն հրապարակելու որոշում ընդունվեց:

Հայտարարության մեջ մասնավորապես ասված է. «Գետաշենում եւ Մարտունաշենում կատարված արյունահեղ տեղահանություններին զուգընթաց, խորհրդային բանակը շարունակում է ագրեսիան Հայաստանի դեմ` բռնության եւ ավերածությունների ենթարկված գյուղերի ցանկն ավելացավ Ոսկեպար, Կիրանց, Տեղ, Կոռնիձոր, Շուռնուխ, Խոզնավար, Արծվաշեն եւ Հայաստանի այլ բնակավայրերով: ... Ժամանակակից մարտական տեխնիկայի եւ հրազենի օգտագործումը զավթած տարածքների խաղաղ բնակչության դեմ, կանանց ու երեխաների, ծերունիների եւ հաշմանդամների նկատմամբ գործած բռնությունները ու դաժան սպանությունները, իշխանությունների տեղական մարմինների ղեկավար ու շարքային աշխատողների, տնտեսական ղեկավարների, միլիցիայի աշխատողների ապօրինի ձերբակալումները առանց որեւէ սանկցիայի` դարձել են Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի առօրյան: Կան բազմաթիվ ապացույցներ, որ «պատանդ» կոչված հայազգի գերիները ենթարկվում են անմարդկային խոշտանգումների, որոնց միջոցով կորզվում են կեղծ ցուցմունքներ:

Նախագահությունը պահանջում էր անհապաղ վերջ տալ ագրեսիային, ազատ արձակել պատանդներին, գերվածներին ու ապօրինի ձերբակալվածներին եւ հույս էր հայտնում, որ Հայաստանի դեմ բարբարոսություններ հրահրողների ու կատարողների պատասխանատվության հարցը պիտի «դառնա միջազգային հանրության քննության առարկա»:

Աստվա՜ծ տա:

✧ ✧ ✧

«Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի հատուկ թղթակիցներին (Կուզնին, Մուրասով, Ֆիլին) ահա թե ի՛նչ է պատմել Գանձակի օդա-դեսանտային Ի-ն (անունը լրիվ չի բացել` վախենալով իր ընտանիքին սպառնող վրիժառությունից): Ասում էր, երբ ներքին զորքերի ու ադրբեջանական ՕՄՕՆ-ի միացյալ ուժերով Գետաշենի ինքնապաշտպանությունը վերացվել էր, «Ես տեսա, թե ինչպես ադրբեջանական գյուղերի բնակիչները եկան բեռնատար մեքենաներով եւ սկսեցին (գյուղի տների) իրերը բեռնել: Տեսա, թե ինչպես գանձակցի մի ղեկավար եկել, ամառանոցի համար տուն էր ընտրում: Տեսա, թե ինչպես օմօնականները դիակապտողների հետ գործարքներ են անում` կողոպուտն առած նրանց բաց թողնելով իրենց պոստերով: Երբ համբերությունս հատել էր, երբ գյուղը լքող բնակիչները մեր զինվորներին առաջարկում էին ձրի իրենց մեքենաները, միայն թե սրանք բաժին չդառնան մեռել պլոկողներին, թույլտվություն խնդրեցի ղեկավարությունից եւ կարգադրեցի կրակ բա՛ցել այդ մեռել պլոկողների խմբերի վրա» («Կոմսոմոլսկայա պրավդա», մայիսի 21):

Երեւի իսկապես նման մարդիկ էլ են եղել այն օրերի պղտոր ու կեղտոտ միջավայրում: Սակայն սրա՛նք չեն եղել դրության տերը: Սրա՛նք չէ, որ ներկայացրել են ռուս պաշտոնեության դեմքն ու բարոյականությունը:

✧ ✧ ✧

Մոսկվայում տեղի ունեցավ «Ժողովրդավարական Ռուսաստան» կոորդինացիոն խորհրդի հանդիպումը մոսկովյան հասարակայնության ներկայացուցիչների հետ: Այն նվիրված էր Գետաշենի ենթաշրջանի ողբերգությանն ու հայ-ադրբեջանական բախման մյուս կետերի իրավիճակին: Տեղեկություններ հաղորդեցին ՀՀ ԳԽ պատգամավոր Սուրեն Զոլյանն ու «Խորհրդային Ղարաբաղ» թերթի մոսկովյան թղթակից Արսեն Մելիք-Շահնազարյանը: Ապա հարցազրույցում եւ շատ ելույթներում դատապարտվեցին կենտրոնի ու թուրք ագրեսորի սանձազերծած վայրագությունները հայ ժողովրդի դեմ: Ելենա Բոններն անարգանքի սյունին գամեց հայության ապրելու իրավո՛ւնքն անգամ բացառող քաղաքականությունը: «Մենք աշխարհի առաջ պիտի ամաչենք այս պատերազմի համար, ինչպես Աֆղանստանի համար ենք ամաչում: Մենք պետք է ամաչենք մեր անտարբերության համար, մեր հակաքաղաքական քայլերի համար: Չէ՞ որ հարավում կոտորվում է մի ժողովուրդ, որ Ռուսաստանի միակ ավանդական ու ճշմարիտ բարեկամն է: Միակ բարեկամը, որի զավակներին այսօր ռուսական զինվորներն են սպանում...»:

Հավաքը որոշեց Արցախի ու հարակից շրջանների հայության պաշտպանության հա-

մար համաքաղաքային հանրահավաքներ անել մայիսի 12-ին եւ 18-ին կամ 19-ին։

* * *

Ուրեմն, այնտեղ, Գետաշենի ենթաշրջանում հայության վերջն է եղել, եւ հիմա էլ օրակարգի մեջ է Շահումյանի շրջանի, ԼՂԻՄ-ի, ինչպես նաեւ բուն Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի ճակատագիրը։ Մոսկվայի ժողովրդավարները, հասարակության ներկայացուցիչները վեր են կացել, ուզում են աշխարհը ոտքի կանգնեցնել...

Իսկ Հայաստանի կառավարությունը դեռեւս շարունակում է իր համար ամենաառաջնահերթ խնդիր համարել կոմունիստական կուսակցության ու երիտասարդական միության ունեցվածքների ազգայնացումը. միայն այսօր այդ առթիվ ՀՀ վարչապետ Վ. Մանուկյանի ստորագրությամբ երկու փաստաթուղթ հրապարակվեց (տես «ՀՀ», մայիսի 11)։

**Մայիսի 16-ին** Հայաստանի Գրողների միության ղեկավարությունը հավաքել էր վարչության անդամներին, համարյա բոլոր գրողներին, հանրապետության անվանի շատ մտավորականների, ուզում էր կարծիքներ լսել Հայաստանի, մանավանդ, Լեռնային Ղարաբաղի քաղաքական ու ռազմավարական ծանր վիճակի վերաբերյալ, վճռական եզրակացության հանգել եւ ձայն բարձրացնել, օգնել դուրս գալու այդ վիճակից։ Նման պարագաներում հայտնված ժողովրդի մեկ մշակութային անվանի գործիչը կամ գրողը բարձրացնում է իր ձայնը, եւ այն լսելի է լինում ողջ աշխարհում... Հիմա Գրողների մի ամբողջ միություն չի՞ կարող ձայն բարձրացնել, սեփական ժողովրդի փրկության գործին հասցնել պատշաճ օգնություն։

Փոթորկված էր հայ ժողովուրդը։ Համազգային տագնապով եռում էին նրա բոլոր հատվածները։ Հանրահավաքներ էին կազմակերպվում։ Ամենատարբեր կազմակերպություններ, հիմնարկներ ու հաստատություններ հավաքվում էին ժողովների եւ ընդունում էին որոշումներ՝ հանրապետության ղեկավարությունից պահանջելով վճռական քայլեր, մեծ ողբերգության առաջ կանգնած ազգի համար գնալ ամենաճակատագրական գործողության։

Այդօր էլ Գրողների միության փոքր դահլիճն ու միջանցքները պայթում էին մարդկային անզուսպ հուզումից։ Ո՛չ միայն գրողները, ստեղծագործական միությունների բազմաթիվ անդամներ, անվանի շատ մտավորականներ, հուզումից չէին կարողանում տեղները հանգիստ նստել։ Ամենից բարձր հնչում էր բոլորին համակած տագնապն Արցախի ճակատագրի համար։ Ինչո՞վ կարելի է մեծ ողբերգության դեմն առնել։ Մի՞թե անհնար պիտի լինի դադարեցնել օրը ցերեկով աշխարհի աչքի առաջ իրականացվող նոր ցեղասպանությունը։ Ելույթ ունեցողները զայրացած էին բացահայտ վայրագության շարժիչների եւ նրանցից մեկի՝ կաշառքի դեմ. Ադրբեջանը, ինչպես համանման ուրիշ պարագաներում, կաշառել է Կենտրոնին, նույն կաշառքով Արցախի ու հարակից հայկական շրջանների դեմ է քշել ռուս զինվորությանն ու նրա ծախու ղեկավարներին, եւ մեր ժողովուրդը կոտորվում է այս ահավոր աղետից։

– Է՜, ինչ կաշառք,–դահլիճից աղաղակեց ներկաներից մեկը,–մենք անկախ իշխանության խաղեր ենք անում, իսկ Ադրբեջանը մնացել է Միության մեջ եւ վայելում է նրա բազմակողմանի աջակցությունը։

– Ա՛յ, հենց դա էլ Ադրբեջանի կաշառքի նոր մի ձեւն է,–նրան պատասխանեց Կարպիս Սուրենյանը եւ սկսեց բացատրել ինչպես մյուս ձեւերը, այնպես էլ այդ նորահնար ձեւը՝ իր առավելություններով հանդերձ։

Հաջորդ ելույթ ունեցողը երիտասարդ բանաստեղծ Արմեն Շեկոյանն էր, որը խոսելով մեր իրականության մեջ կաշառքի հիմնավոր տարածման, բոլոր բնագավառները բռնած լինելու հանգամանքների մասին, զարմանքով հարց տվեց.

– Այդ ինչպե՞ս է, որ մեր ղեկավարները, հին ու նոր, մեծ ու փոքր, իրենց անձնական պետքերի համար, աստծու ամեն օրը կաշառք հա՛մ վերցնում են, համ էլ տալիս... Անձնական պետքերի համա՛ր, հա՜... Եւ հենց որ հարցը գալիս է երկրի շահերին, ազ-



գային ճակատագրական խնդիր լուծելու հարցին, դառնում են անմեղ հրեշտակներ եւ միայն ձեռքներն են թափ տալիս հնարամիտ կաշառատու հակառակորդի վրա։

Ժողովը լուրջ խնդրի շուրջն էր գումարվել, սակայն մեկ-մեկ այսօրինակ, արտաքուստ անլուրջ, ըստ էության բոլորովին էլ ո՛չ պակաս կարեւոր հարցերով էլ էր զբաղվում։ Վերջում էլ ընդունվեց նամակ ուղղված հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին։ Կենտրոնում, Մոսկվայում բնակվող եւ ի՛նչ-ի՛նչ բարձր պաշտոններ զբաղեցնող հայերին, ԽՍՀՄ մյուս հանրապետությունների Գրողների միություններին, միջազգային մշակութային կենտրոններին։ Այդ նամակում, ի միջի այլոց, ասվում էր.

«Հայաստանում ու Արցախում ստեղծված իրավիճակը մխիթարական ոչինչ չի խոստանում հայկական կողմին, եթե այն թողնվի ինքնահոսի, կամ նույնիսկ այն հակազդեցության հունին, որը ձեռնարկվել է մինչեւ այսօր։ Չի կարող պարզ չլինել, որ քաղաքական ու դիվանագիտական հմտություններից պարապ զրույցներով ու հայտարարություններով մենք հաճախ ենք, ինչպես ասում են, աչքը սարքելու փոխարեն, հոնք պատռել։ Դուք ամենից լավ գիտեք, թե ինչի՛ համար եւ ո՛ւմ գլխավորությամբ է սանձազերծվել հակահայկական այս մոլուցքը, որն ամեն օր մեր ազգից խլում է նորանոր զոհեր, հարցականի տակ դնում Արցախի խնդրի կարգավորումը, նույնիսկ մեր ազգային գոյի հեռանկարը։

Վստահ ենք, որ Ձեզ էլ չեն կարող խանդավառել մեր տաքգլուխ որոշ ընկերների կոչերը հակառակորդի սպառազեն բանակների դեմ մեր աշխարհազորով կռվելու եւ հաղթելու մասին։

Ուրեմն ի՞նչ է մնում։ Աշխարհի հզորների՞ն դիմել, ՄԱԿ-ի ու համաշխարհային հեղինակավոր այլեւայլ կենտրոնների զորակցության վրա՞ հույս դնել։ Բայց չէ՞ որ դրանք բոլորն էլ կանգնած են մեր ճանաչված գլխավոր հակառակորդի թիկունքում, ամեն օր վիթխարի գումարներ են տրամադրում, որպեսզի նա անսասան պահի իր ուժը եւ անխախտ՝ իր կայսրությունը։

Թանկագին ընկ. Տեր-Պետրոսյան, մենք ավելի քան համոզված ենք, որ այսօր Արցախի վրա ծանրացած ամպերը ցրել եւ մեր ազգը վերահաս աղետներից փրկել կարելի է միայն Խորհրդային Միության պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովի հետ լեզու գտնելու ճանապարհով։ Լեզու գտնելո՛ւ եւ ոչ թե առճակատման կամ զանազան մակարդակներում խոսքակռվի բռնվելու, նրան ու մերձավորներին մեր դեմ հանելու։ Իսկ դա էլ կարող եք անել դուք՝ Ձեր դիրքով, պաշտոնի պարտադրանքով եւ մանավանդ ձեռք բերած հեղինակությամբ, որը, կարծում ենք, ընդունվում է նաեւ Կենտրոնի կողմից։

Գրողների միության վարչության նիստի մասնակիցները գտնում են, որ այս անհետաձգելի խնդրի իրականացմանն անպայման պետք է լծել նաեւ Կենտրոնում գտնվող հայ բարձրապաշտոն ու հեղինակավոր անձանց ուժը»։

Գերագույն խորհրդի նախագահի վրա ի՞նչ ազդեցություն ունեցավ Հայաստանի գրողների միության գրությունը։ Ո՛չ մի։ Բայց այն հասե՞լ էր նրան։ Հավանաբար ո՛չ, քանի որ հետագայում պիտի պարզվեր, որ նոր իշխանությունների համար արժեք չունեին Գրողների միությունն ու մնացած միությունները, հայոց մշակույթն ու նրա գործիչները։ Իսկ Կենտրոնում գտնվող հայ բարձրապաշտոն ու հեղինակավոր անձանց ուժը... Հետագայում երկու-երեք տարվա դառը փորձը ճաշակելուց հետո, այդ «հեղինակավոր անձանցից» մեկը՝ դիվանագիտական խոր պատրաստականության ու բազմամյա փորձի տեր Յուրի Բարսեղովը, Երեւանի հեռուստատեսությամբ պիտի գանգատվեր, թե Մոսկվայում իր նման հայեր շատ կան, նրանք համարյա մատնված են անուշադրության, երբ Հայաստանի պետության նորաստեղծ դիվանագիտությունը գտնվում է մեծ մասամբ գործից անտեղյակ մարդկանց ձեռքում։

Նույն գանգատն անելու իրավունք ունեին նաեւ վիթխարի Ռուսաստանի շատ կենտրոններում, մանավանդ մայրաքաղաք Մոսկվայում բնակվող եւ պետական, տնտեսական ու այլազան բնագավառներում գործող այն համբավավոր հայերը, որոնք վերջապես գի-

տակցում են իրենց վիճակի անհեռանկարայնությունը եւ պատրաստ են գալ հայրենիք, ծառայել նրա այսօրվան ու վաղվան:

**Մայիսի 16-ին** գումարվեց ԼՂԻՄ-ի պատգամավորության լիազոր ներկայացուցիչների ժողով, որն ընդունեց հայտարարություն՝ պատմելով Արցախի եւ շրջակա շրջանների հայության դեմ ստեղծված սադրալից դրությունը, պատրաստակամություն հայտնելով մնալ «նորացված միութենական ֆեդերացիայի կազմում», մարզում եւ շրջակա գոտում՝ դրությունը կարգավորելու համար պատրաստակամություն հայտնելով գնալ բանակցությունների Ադրբեջանի իշխանության հետ:

Նույն օրը ՀՀ Գերագույն խորհուրդն էլ գումարեց իր արտակարգ նստաշրջանը՝ քննելու Արցախում ու Հայաստանում ստեղծված իրավիճակը եւ նշելու նրա կարգավորման ճանապարհ: Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, պատգամավորներ Իգոր Մուրադյանը, Խաչիկ Սաֆարյանը եւ ուրիշներ ավելի շատ խոսեցին ողբերգության ճակատագրական վիճակի մասին, սակայն վճռական ելք չգտան նրանից փրկվելու համար:

ԼՂԻՄ-ի պատգամավորության լիազոր ներկայացուցիչների ընդունած որոշմանը ՀՀ Գերագույն խորհուրդը պիտի արձագանքեր հուլիսի 15-ին, երկու ամիս հետո՝ զարմացնելով «օպերատիվության» իր նախանձելի տեմպով. չէ՞ որ առիթը եղել է մարզի աղետալից վիճակը, որը դեպի դժոխայինն էր ընթանում կայծակնային թափով, եւ անհրաժեշտ էր ելք գտնել, փրկության միջոց... Եւ Գերագույն խորհուրդը երկու ամիս շարունակ այդ ելքն էր փնտրում ու վերջապես գտավ այն. ընդունեց երկու կետով մի որոշում, որը կարող է ինքնատիպության օրինակ լինել. երկուսով էլ համաձայնություն էր հայտնում լիազոր ներկայացուցիչների երկու որոշումներին (ընդունված մայիսի 16-ին ու հունիսի 29-ին): Ահա ՀՀ ԳԽ-ի ընդունած որոշման այդ երկու կետերը.

«1. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատգամավորության լիազոր ներկայացուցիչների ս. թ. մայիսի 16-ի հայտարարությանը, որով մարզային իշխանության մարմինները պատրաստակամություն են հայտնում քաղաքական բանակցություններ սկսել ադրբեջանական իշխանությունների հետ եւ փոխզիջումային լուծումներ որոնել ԽՍՀՄ Սահմանադրության ու օրենքների շրջանակներում:

2. Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի պատգամավորության լիազոր ներկայացուցիչների ս.թ. հունիսի 29-ին՝ ԽՍՀՄ պրեզիդենտ Մ.Ս. Գորբաչովին ուղղված նամակին, որը ներկայացնում է մարզում սահմանադրական կարգի վերահաստատման հստակ ծրագիր (տե՛ս «Դրոշակ», 1992, N22, էջ 37):

**Մայիսի 18-ին** միայն ՀՀ Գերագույն խորհուրդն ընդունեց որոշում, որով ԽՍՀՄ պրեզիդենտին էր դիմում դրությունը կարգավորելու պահանջով եւ վճռում «Լեռնային Ղարաբաղում ու Շահումյանի շրջանում հայ բնակչության անվտանգության ապահովումը դնելու Արտակարգ դրության շրջանի պարետի վրա»:

Կարծես մինչ այդ նույն պարետի վրա չէր դրված եղել հայ բնակչության անվտանգության ապահովումը, եւ, ամենակարեւորը, իրենք նոր են հասկանում, որ Լեռնային Ղարաբաղում ու Հայաստանի սահմանային շրջաններում ամեն ինչ կատարվում է ԽՍՀՄ պրեզիդենտի կամքով եւ նրան պետք էր դիմել պահանջով կամ խնդրանքով, ամեն պարագայի նրա հե՛տ բանակցելով եւ ոչ թե սպառնալիքով:

**Մայիսի 21-ին** ԼՂԻՄ-ի մարզխորհրդի գործկոմը վերստին բարձրացրեց իր ձայնը՝ փորձելով այս անգամ էլ համայն հայությանը ոտքի կանգնեցնել՝ իր ողբերգությունը կանխելու, մնացորդաց փրկությունն ապահովելու համար: Համայն հայությանն ուղղված դիմումի մեջ հիշվում էր, որ արդեն միջազգային կազմակերպություններին եւ օտար պետություններին խնդրվել էր «քաղաքական ապաստան տալ Լեռնային Ղարաբաղի ողջ հայ բնակչությանը»: Սակայն հասցեատերերն անտարբեր մնացին, իսկ թշնամիները համառորեն շարունակում են հայոց նոր ցեղասպանությունը:

«Մենք սփյուռքահայությանն ենք դիմում՝ խնդրելով օգտագործել բոլոր հնարավոր միջոցները հայ բնակչությանը փրկելու համար»,-այսպես էր ավարտվում դիմումը («Դրոշակ», 1992, N22, էջ 30):



Որեւէ դրական արդյունք պիտի՞ տար գոնե այս դիմումը: Ո՛չ, իհարկե, քանի որ սփյուռքահայերի ձայնը եւս ոչ ոք չէր լսում, իսկ իրենք՝ արյունակիցների բախտով վառված այդ խեղճերը, չէին կարող գալ ու մտնել Արցախ, որովհետեւ այն գտնվում էր Ադրբեջանի կազմում, այսինքն՝ Հայաստանից դուրս, եւ նրա բախտի տերերն էին մնացել ադրբեջանական ավազակախմբերն ու խորհրդային ներքին գործերի զորաջոկատները:

Խորհրդային Միության կազմից պրծած եւ վաղահաս անկախությանը հետամուտ Հայաստանը կարող էր միայն դիտել, թե ի՛նչ տեսակ տառապանքների են ենթակա արցախահայերն ու շրջակա գավառներից արդեն դուրս քշված նրանց բախտակիցները:

**Մայիսի 25-ին Ռուսաստանի Խորհրդարանը** քննության առավ հայ-ադրբեջանական հակամարտության խնդիրը:

Քննարկման ամբողջ ընթացքում տիրապետող էին երկու պատգամավորների՝ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւի եւ Սերգեյ Կովալյովի ձայները՝ որոնք հնչել էին զեկուցման պես: Զեկուցում, որ տալիս էին երկու իրավապաշտպան ու արդարամիտ մարդիկ: Նրանց խոսքը հաճախ էր ընդմիջվում կայսերապաշտության կողմնակիցների կողմից: Սակայն խորհրդարանի նախագահ Բ.Ն. Ելցինի ջանքերով զեկույցները հասան դահլիճին, եւ վերջում ընդունվեց մի հայտարարություն, որի համար 1064 պատգամավորներից 720-ը մասնակցեցին քվեարկությանը, կողմ՝ 541 հոգի:

Հայտարարության մեջ մասնավորապես ասվում էր.

«Ա) ԽՍՀՄ նախագահը անհապաղ պետք է ԽՍՀՄ զինված ուժերին եւ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերին հեռու պահի հակամարտ կողմերին բաժանելուց զատ որեւէ այլ միջամտությունից:

«Բ) Համաձայն մարդու իրավունքների միջազգայնորեն ճանաչված նորմերի ու պայմանագրերի՝ անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել խաղաղ ազգաբնակչության բռնագաղթը, տեղահանվածների համար ստեղծել իրենց բնակավայրերը վերադառնալու պայմաններ, ազատել պատանդներին եւ զինված բախումների առնչությամբ կալանվածներին հանձնել ԽՍՀՄ դատախազության ենթակայությանը»:

**Մայիսի վերջերին** ակադ. Ա.Դ. Սախարովի հիշատակին նվիրված «Խաղաղություն, առաջադիմություն, մարդու իրավունքներ» միջազգային կոնգրեսը Լեռնային Ղարաբաղ էր ուղարկել ականավոր փորձագետների մի խումբ, որը, նույն ամսի 25-29-ին լինելով մարզում ու հայ-թուրքական սահմանային շրջաններում եւ հանգամանորեն ուսումնասիրելով հայ բնակչության դեմ իրականացված վայրագությունները, Կոնգրեսին եւ համաշխարհային հասարակայնությանն է ներկայացրել իր եզրակացությունները, որոնց շարքում գրված էր. «Մենք համոզվեցինք, որ վերջին ամսվա ընթացքում տեղի է ունեցել մի ամբողջ շարք գյուղերի բռնի տեղահանություն, որի հետեւանքով տուժել են հազարավոր հայեր: Ապրիլի 30-ին տեղահանվել են Գետաշենը, մայիսի 6-ին եւ 14-16-ին՝ համապատասխանաբար Բերդաձորի ու Հադրութի գյուղերը: Այդ տեղահանությունների իրականացման միջոցները միատեսակ են եղել: Գյուղերի բնակիչներին շրջապատել են տանկերով, ուղղաթիռներով եւ զրահափոխադրիչներով զինված խորհրդային ներքին զորքերը: Ըստ ականատեսների եւ տուժածների հաղորդումների՝ օմոնականների ջոկատները կոտորել, տանջանքների եւ տեռորի են ենթարկել հայերին: Օմոնը եւ ադրբեջանական ազգության տեղական բնակիչները զբաղվել են տների, մեքենաների, անասունների եւ այլ անձնական ունեցվածքի ապօրինի բռնագրավմամբ: Նրանք հաճախ նաեւ բեռնատարներ են բերել կողոպտածը բարձելու համար: Անկախ աղբյուրներից ստացված հաղորդումները հաստատում են, որ այդ օպերացիաներից մի քանիսին ներկա են եղել եւ ցուցումներ են տվել Ադրբեջանի ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ Մամեդովը, շրջգործկոմի նախագահը, շրջանային ՆԳ եւ ՊԱԿ-ի բաժինների պետերը: Պաշտպանության մասին բնակիչների խնդրանքներն արհամարհվել են, մասնավորապես, խորհրդային զինվորական պարետ, գնդապետ Ժուկովը հայտարարել է, որ ոչինչ չի կարող անել: Այդ գործողություններից առաջ եւ դրանց ընթացքում օմոնը բնակիչներին հարկադրել է դիմումներ ստորագրել «կամավոր» մեկնման մասին, ընդ որում, նրանց հա-

թյամբ մտավ «9+1» (նոր դաշնության) խաղի մեջ, իսկ Հայաստանը հենց միայն մի երեւութական անկախության համար զոհաբերեց Արցախը: Սակայն «ներկայումս մարզում ծնվում են նոր այնպիսի քաղաքական ուժեր,-ասել էր Պողոսյանը,-որոնք քննադատաբար են գնահատում ԼՂԻՄ-ի ղեկավարության (եւ ինչո՞ւ միայն ԼՂԻՄ-ի.-Բ.Ու.) նախկին քաղաքականությունը եւ գտնում են, որ հիմա էլ դեռ ուշ չէ բռնել կոնստրուկտիվ քաղաքական երկխոսության, Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ կենտրոնական մարմինների բոլոր որոշումների, մասնավորապես 1989թ. նոյեմբերի 28-ի որոշման պաշտպանության ուղին: Այս հայտնի փաստաթղթում կան ռացիոնալ հատիկներ,-շարունակել է դեպուտատը,-եւ դրանց հիման վրա կենտրոնի միջնորդությամբ ինչպես ինքնավար մարզի ու Ադրբեջանի, այնպես էլ, ըստ երեւույթին, Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ երկխոսություն ծավալելը եւ հարաբերությունների նորմալացումը կհամապատասխանեին երկու ժողովուրդների շահերին...»:

Պողոսյանն առանձնակի ուշադրություն էր հրավիրում մարզի օրինական իշխանության՝ մարզխորհրդի գործկոմի վրա, ցույց տալով, որ վերին իշխանությունների կողմից նրա անտեսումը հակաօրինական է, եւ պետք է հենց կենտրոնում գործող Սահմանադրական մարմիններին ստիպել, որպեսզի վերականգնվի մարզխորհուրդն իր գործադիր կոմիտեով եւ մյուս կառույցներով:

**Հունիսի 3-ին** ՀՀ ԳԽ-ի նիստում Լ. Տեր-Պետրոսյանը զեկուցեց Ֆրանսիա կատարած իր այցի մասին: Ապա նույնն արեց նրա հետ Ֆրանսիայում եղած Հրանտ Բագրատյանը՝ ՄԽ-ի նախագահի տեղակալը: Ապա Տեր-Պետրոսյանը համառոտ բնութագրեց Հայաստանի ու Արցախի վիճակը՝ ընդգծելով, որ կան երկու անհետաձգելի խնդիրներ՝ պատանդներին փրկելը եւ Բերդաձորից ու Հադրութի շրջանից բռնագաղթվածներին հայրենի բնակավայրերը վերադարձնելը:

Մինչդեռ տաք կետերից գալիս էին ուրիշ լուրեր, տագնապի, նոր բռնությունների մասին ուրիշ ահազանգեր ու օգնության կանչեր: Բերդաձորից բռնագաղթվածներին ինչպե՞ս պիտի հայրենի բնակավայրերը փոխադրել, երբ այնտեղ արդեն թուրքն էր տիրություն անում, եւ զրահամեքենաներով նրան պաշտպանում էին ներքին զորքերն ու բանակային զորամիավորումները: Հադրութցիների՞ն ինչպես պիտի վերադարձնել, երբ այնտեղ նոր գյուղեր էին դատարկվում, ու անպաշտպան էին գաղթեցվողները:

Եւ այս լուրերը կային հենց նույն ժամանակ: Արդեն հայտնի էր, որ Հադրութի շրջանում թշնամին նոր գյուղեր դատարկելու է ձեռնարկել, անպաշտպան բնակիչները դիմել են շրջանի պարետին, եւ նա էլ զինվորեն պատասխանել է, թե կարող է օգնել միայն փոխադրամիջոցներով, որպեսզի շուտ հեռանան սեփական տներից:

Այս պարագայում Հայաստանի առաջին ղեկավարը նախընթացին բռնագաղթեցված հադրութցիներին ինչպե՞ս պիտի վերադարձներ սեփական բնակավայրերը: Թե՞ լրատվական մարմիններն էին իրողությունը թաքցնում նրանից:

**Հունիսի 4-ին** մի խումբ արցախցիներ, վրդովված Հադրութի ու Շահումյանի շրջաններից ստացվող տագնապալից լուրերից, հավաքվել ԳԽ-ի նստաշրջանի շենքի առաջ, պահանջում էին հանդիպում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Հերթապահ ոստիկանների անըմբռնողությունը պատճառ դարձավ, որ շենքի մուտքի առաջ սկսվի քաշքշուկ, որից հետո բողոքավորներից մի քանիսին թույլ տրվեց ներս մտնել: Հիմա էլ ներսում սկսվեց անհանգստություն, որը մեղմելու նպատակով մի պատգամավոր նախագահ Բ. Արարքցյանին խնդրեց հաղորդել, թե ի՛նչ տեղեկություններ կան տաք կետերից: Արարքցյանը հրաժարվեց պատասխանել՝ պատճառաբանելով, թե տեղեկությունները դեռեւս վստահելի ու ամբողջական չեն:

Տասնհինգ րոպե տեւած վեճից հետո նիստը փակվեց:

Դահլիճում մնացած մի մեծ խումբ պատգամավորների տեղեկություններ հաղորդեց Արցախի հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը: Նրա ասածով՝ արդեն երկու օր է, ինչ հանվել են ներքին զորքերի պահակակետերը, եւ գյուղերի վրա են արշավում ադրբեջանական օմօնականներն ու հարեւան շրջաններից եկած զինյալ ուժերը:



Նա հաղորդեց նաեւ, թե գյուղերի ղեկավարները պահանջում են, որ Հայաստանի կառավարները հատուկ ուղղություն մատնանշեն հետագա գործողությունների համար:

**Հունիսի 5-ին** ՀՀ ԳԽ-ի պատգամավոր Սուրեն Զոլյանը նամակ էր գրել “ГА” օրաթերթի խմբագրությանը մի առիթով եւ, ի միջի այլոց, պատմեց, որ նախընթացին իրենց պատգամավորական խումբը գտնվել է Մոսկվայում, Արցախում եւ հատկապես Շահումյանի շրջանի ու Գետաշենի ենթաշրջանի հայության դառը վիճակը թեթեւացնելու ճանապարհներ էր որոնում: Ռուսաստանի ժող. պատգամավորների համագումարի օրերն էին, համագումարին եւ առհասարակ մայրաքաղաքի ժողովրդին անհրաժեշտ էր ճշգրիտ ու բազմազան լուրեր հասցնել դեպքերի վայրերից, մինչդեռ Հայաստանից ռուսերեն թերթերն անգամ չէին հասնում այնտեղ: «Մենք՝ այդ օրերին Մոսկվայում գտնվող պատգամավորներս,-գրում է Ս. Զոլյանը,-դիմեցինք ուղղակի Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ Կ. Սարդարյանին՝ իր ուժերի չափով օժանդակելու այդ հարցի լուծմանը: Բայց, ինչպես երեւում է, ծայրաստիճան սուր պայմաններում անգամ ինչ-որ մարդկանց ռուսերեն մամուլի լույս չտեսնելն ավելի կարեւոր է թվում, քան համազգային գործի շահերը»:

**Նույն օրը** ՀՀ ԳԽ-ի նիստում քննարկվում էր ՀՀ քաղաքական իրավիճակը: Եւ չնայած մի քանի օր շարունակ պատգամավորները պահանջում էին, որ այդ հարցի քննարկման սկզբում զեկուցեն (երեւի հաշիվ տան) ԳԽ-ի նախագահն ու վարչապետը, նրանք հրաժարվեցին այդպիսի սկզբից, եւ Տեր-Պետրոսյանը միայն հիշեցրեց, որ «վերջին իրադարձություններն ու դրանց առթիվ տարբեր կազմակերպությունների ու խմբավորումների եզրակացությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում չկա մի մարմին, որը գործնական քաղաքականություն վարի», եւ նշեց, որ «խոսակցությունները հիմնականում պտտվում են նման մի մարմին ստեղծելու շուրջ» («Ուրբաթ», հունիսի 7):

Տարօրինակ հայտարարությո՛ւն: Իսկ ի՞նչ գործի են ԳԽ-ը, Մինիստրների խորհուրդը, ընտրված ու նշանակված մյուս բոլոր կառավարական մարմինները:

Հասկանալի է, որ Լ.Տեր-Պետրոսյանի ստեղծելիք նոր մարմինը պրեզիդենտությունն է: Բայց Հայաստանի այս վիճակին հենց մի պրեզիդե՞նտ էր պակասում:

Հիշում եմ, որ ընկերներով նստում ու լսում էինք նիստի հեռուստահաղորդումը, եւ մեկն ասաց. «Այսօրվա մեր երկրին ու ժողովրդին պրեզիդենտ պետք չէ: Ում պետք է, նա է խոսում:

Եւ ո՞վ պիտի գործի ստեղծվելիք այդ մարմնի մեջ, ի՞նչ մի կախարդ, որ երկնքից կաթելով պիտի «գործնական քաղաքականություն վարի» դառնա հանրապետության փրկիչը: Չէ՞ որ այդ մարմինն էլ կազմված է լինելու այն մարդկանցից, որոնք զբաղեցնում են արդեն գոյություն ունեցող մարմինների բարձր աթոռները եւ փաստորեն անձեռներեց են, գուցե նաեւ անկարող...»:

Եղան նոր առաջարկություններ: Ոմանք (Մեխակ Գաբրիելյանը, Տիգրան Կյուրեղյանը) գտնում էին, որ առանց եղած վիճակը քննարկելու, այսինքն՝ առանց վերին ղեկավարների զեկուցումներն ու նրանց շուրջ ծավալվելիք իսկական վերլուծությունն անելու) անհնար է պարզել, թե ի՛նչ խնդիրներ գոյություն ունեն, եւ նրանք իրականացնելու համար ի՛նչ նոր մարմնի կարիքն ունենք:

Է. Եգորյանն առաջարկեց հրաժարվել միութենական պայմանագրի ստորագրումից, քանզի այն չի կարող ազդել Արցախի վիճակի վրա:

Խոսեց նաեւ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Արամ Սարգսյանը, որն էլ երեւի թե արեց պահի համար ամենաձեռնտու առաջարկությունը: «Այն խնդիրները, որոնք ծառացած են Հայաստանի առջեւ, պրեզիդենտական իշխանությունը չի կարող լուծել: Անհրաժեշտ է համախմբել հանրապետության քաղաքական այն բոլոր ուժերը, որոնք ունեն գործնական ծրագրեր, ստեղծել կոալիցիա եւ նրա ուժն ու եռանդը գործադրել դրությունից ելնելու համար»: Ապա նա շեշտեց, թե անհրաժեշտ է հասնել նրան, որ Արցախը դառնա ապագա միութենական դաշնագրի սուբյեկտ:

Եղան նաեւ ուրիշ առաջարկություններ: Օրինակ, Աշոտ Նավասարդյանը գտավ, որ

ու մյուսները, որոնցում հեշտ պիտի լիներ խաղաղ օրեր անցկացնել:

Ասում էին՝ Ֆոտեեւը կերուխումի սիրահար է:

**Հունիսի 11-ին** Ստեփանակերտի ղեկավարների խորհրդակցության էր հրավիրել Ադրբեջանի կազմկոմիտեի նախագահ Պոլյանիչկոն եւ հրահանգել, որպեսզի քաղաքի ու մարզի բոլոր մարմինները ընդունեն Ադրբեջանի համապատասխան մարմինների գերակայությունը, հակառակ դեպքում պետք է ազատեն մարզի տարածքը: Խոսել էր նաեւ Հայաստանի բռնած անկախության ճանապարհի մասին՝ հայտնելով իր տերերի հետեւյալ հրահանգը. եթե Հայաստանը դուրս է գալիս ԽՍՀՄ կազմից, նախապես պետք է Ադրբեջանին զիջի Զանգեզուրը, որովհետեւ այն միշտ էլ ադրբեջանական տարածք է եղել Ադրբեջանի կազմում:

Պոլյանիչկոյի շուքի ներքո առավել սանձարձակ էին դարձել օմօնականները ու նրանց հովանավորող խորհրդային ներքին զորքերի միավորումները:

**Հունիսի 11-ին** Վ. Պոլյանիչկոյի կարգադրությամբ պետք է մարզկենտրոնում խորհրդակցության հավաքվեին բոլոր շրջգործկոմների նախագահները ու կուսշրջկոմների քարտուղարները: Սակայն կարգադրությունն արհամարհել, չէին հավաքվել: Դրանից էլ կատաղած՝ նա հավաքեց մարզային իրավապահ մարմինների աշխատողներին, գազազած արեց հայտարարություններ, որոնցից մարդիկ ենթադրություններ արին Ադրբեջանի ղեկավարության կողմից կիրառվելիք նոր վայրագությունների մասին: Օրինակ, նա արհամարհանքով էր խոսել մարզի ղեկավարների առաջարկած բանակցությունների ու փոխըմբռնման պատրաստակամության մասին:

- Երկխոսություն տեղի կունենա միայն մի բանից հետո՝ երբ ԼՂ-ի բոլոր հիմնարկ-ձեռնարկությունները, ամբողջ հայությունը իրենց վրա ընդունեն Ադրբեջանի իշխանությունը, ենթարկվեն նրա մարմիններին:

Նա վերստին՝ ասել ու ընդգծել էր, որ, եթե Հայաստանը որոշել է դուրս գալ ԽՍՀՄ կազմից, ապա մինչեւ այդ պետք է լուծվի նաեւ Զանգեզուրի հարցը, «քանի որ այն հինավուրց ադրբեջանական տարածք է եւ պետք է, թեկուզեւ բռնակցման եղանակով, միացվի Ադրբեջանին»:

Ասում են՝ «Ստեփանակերտում կազմվել են ցուցակներ այն մարդկանց, որոնք պետք է արտաքսվեն մարզից, քանի որ այդպես է որոշել այստեղի իսկական տեր ադրբեջանական Կազմկոմիտեն: Այդ ցուցակները բաժանված էին զինվորական ու պետավտոտեսչական բոլոր հսկիչ կետերին, որպեսզի հրամանի դեպքում իսկույն սկսվեն ձերբակալությունները» («Հ», հունիսի 18):

Երեւում էր, որ Պոլյանիչկոն մեծ գործ է պատրաստում Արցախը ծնկի բերելու համար, եւ այս ծրագրի իրականացումը նրան այնքան դյուրին էր թվում, որ մտածում էր հավելման մասին՝ Զանգեզուրի բռնակցման:

**Հունիսի 13-20-ը** ՀՀ-ում էր գտնվում Եկեղեցիների համաշխարհային խորհրդի 5 հոգուց բաղկացած պատվիրակությունը, որը, ի կատարումն Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի ն.թ. մայիսին արած դիմում-խնդրանքի, եկել էր ուսումնասիրելու դրությունն Արցախում ու հարակից հայկական շրջաններում եւ առաջարկելու իր աջակցությունը՝ դրությունը բարելավելու համար:

Այցելության վերջում պատվիրակությունը հրապարակեց հայտարարություն, որից բերում ենք ուշագրավ հատվածները:

«ԵՀԽ-ի առաջին պատվիրակությունը Հայաստան էր ժամանել 1988-ի սեպտեմբերին, Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստանում տեղի ունեցած զանգվածային ցույցերից հետո: Այդ պատվիրակությունը խորհուրդ էր տվել ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարին, որ եկեղեցիների համաշխարհային խորհուրդը պաշտպանի հայերի օրինական շահերը Խորհրդային Միությունում, հատկապես վերակառուցման ընձեռած նոր հնարավորությունների պայմաններում:

«Ներկա այցելության ընթացքում մենք շատ շրջեցինք հանրապետությունում, հանդիպեցինք Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի սահմանամերձ հայկական գյուղերից բռ-



նագաղթեցվածներին: Նրանք արտահայտում են իրենց տառապանքները, նաեւ ձգտումը անվտանգության եւ ապահով կյանքի երաշխիքներ ունենալու, ըստ հնարավորի շուտ վերադառնալու իրենց բնակավայրերը, դարեր շարունակ իրենց նախնիների ապրած հողը: Մենք նաեւ Գերագույն խորհրդում ունկնդրեցինք վերջերս ազատված պատանդներին եւ այն մարդկանց, որոնց ընտանիքների անդամները իրենց գյուղերի վրա հարձակումների հետեւանքով կամ սպանվել են կամ շարունակում են գերի մնալ Ադրբեջանում:

Պատվիրակության անդամներս անչափ հուզված էինք լսած ողբերգական պատմություններից:

... Մենք կդիմենք կառավարություններին, որ օգտագործեն իրենց հեղինակությունը՝ որպես առաջնային խնդիր պատանդներին ազատելու, անմեղ գյուղացիների վրա հարձակումներին վերջ տալու, նրանց կյանքի անվտանգության, մարդու իրավունքների միջազգային օրենքների պահպանման երաշխիքներ հաստատելու, առաջացած բարդույթները լուծելու համար...»:

Վերջում համաշխարհային եկեղեցու մեծապատիվ սպասավորները հիշում էին, թե որքան ուժ ու հնարավորություն ունեն իրենք եւ ըստ այնմ պարտավորվում՝ խնդրանքով դիմել աշխարհի բոլոր անդամ-եկեղեցիներին, «որ նրանք իրենց աղոթքի ձայնը բարձրացնեն, միացնեն հայ ժողովրդի ձայնին, նրա համար այս դժվարին, բայց հույսերով լի ժամանակաշրջանում»:

Ահա այն որոշակի գործը, որ նրանք իսկապես կարող էին անել:

**Հունիսի 15-ին** մարզի ղեկավար աշխատողների խորհրդակցությունը որոշել էր բանակցություններ վարել Ադրբ. ԽՍՀ կազմկոմիտեի հետ՝ մարզի վիճակը տանելի դարձնելու համար: «Ժողովն ընտրել էր 5 հոգուց բաղկացած պատվիրակություն՝ հայտարարությունը կազմկոմիտեի նախագահ Պոլյանիչկոյին հանձնելու, նախնական բանակցություններ վարելու համար,-գրում է պատվիրակության անդամ Եղիշե Սարգսյանը, ապա վկայում, որ Պոլյանիչկոն իրենց չի ընդունել եւ տասնութ ժամ սպասել տալուց հետո մարզխորհրդի դիմացի հրապարակ ելած երկու զրահամեքենաների ռադիոսարքերից միայն ինչ-որ մեկը ոռնացել է. «Նրանք, ովքեր սպասում են կազմկոմիտեի ընդունելությանը, խորհուրդ ենք տալիս դիմել ձեր Լեւոն Տեր-Պետրոսյանին, Զորի Բալայանին, Արկադի Մանուչարովին» («Հ», հունիսի 16):

**Հունիսի 18-ին** ռուս մի խումբ նշանավոր մտավորականներ ( Կ. Ալեքսեեւսկի, Վ. Դանիլով, Վ. Կուզնեցովա, Գ. Կուլիկովա եւլն) հրապարակեցին «Կոչ Խորհրդային եւ համաշխարհային հասարակայնությանը», որի մեջ, Արցախյան ողբերգության նոր, աննախադեպ ընթացքի մանրամասների քննությունից հետո, հեղինակները հարց են տալիս. «Շատ վիրավորական ու անբացատրելի է, թե ինչո՞ւ խորհրդային բանակը, որի հիմքն են կազմում ռուս զինվորները ու սպաները, այժմ օգտագործվում է Լեռնային Ղարաբաղում՝ ադրբեջանական օմօնի բացահայտ ջարդարարների հետ միասին, ընդդեմ խաղաղ բնակչության, ընդ որում՝ կանանց, երեխաների ու ծերերի դեմ՝ լոկ այն պատճառով, որ նրանք ազգությամբ հայ են:-Ապա ցավով նշվում է դրա վտանգավոր հետեւանքը Գետաշենում:-Այսօր հայ-ռուսական բարեկամության դարավոր ավանդները Լեռնային Ղարաբաղում ենթարկվում են դաժան քննության: Այդ է վկայում թեկուզ այս մեկ փաստը. հեռագնա անմաքուր նպատակով ադրբեջանցիների կողմից Չայքենդ հորջորջված հայկական Գետաշեն գյուղում հայրենի օջախների պաշտպանները քաջությամբ ետ են մղել հանրապետական օմօնի գրոհները: Օմօնականներին օգնության են հասել խորհրդային բանակի զորամասերը: Գետաշենցիները չէին կարող կրակել ռուս զինվորների ու սպաների վրա, որոնք էլ տանկերով խուժել են գյուղ, ապա խաղաղ բնակիչներին հանձնել օմօնականների չարագործություններին, կազմակերպած արյունահեղությանը: Նրանց, ռուս այդ զինվորների ու սպաների հովանավոր պաշտպանության ներքո օմօնականները կատարել են հայկական տների ապօրինի խուզարկումները, կողոպուտն ու հրդեհի մատնելը: Ամբողջ այս աննկարագրելի արյունոտ աղետն ավարտվել է գյուղի ողջ բնակչության, այսպես կոչված, «կամավոր» բռնագաղթեցմամբ»:

պատին կախված նկարից, ծանր գոհունակությամբ նոր Իրանի աստված Խոմեյնին էր նայում:

Երբ անցած տարիների Ադրբեջանում հակահայկական խուժադուժ ցույցերի վրա բարձր տանում էին Խոմեյնիի դիմանկարներն ու իսլամական մոլեռանդ կոչերը, Խորհրդային Միությունում ծնված էին՝ ի՞նչ կապ ունեն միջնադարյան խավարն ու կրոնական հետամնացությունը մեր օրերի հետ, այդ մոլլայի նկարն ինչո՞ւ են պահում իրենց մթագնած գլուխների վրա: Պարզվում է, որ գլուխներն այնքան էլ մթագնած չեն եղել. Ադրբեջանի նոր առաջնորդները քաջ գիտակցում էին, որ խարխլվող Միության մեջ իրենց փրկությունն ու ծաղկումը պիտի ապահովեն իսլամի դրոշի տակ: Իսկ իսլամի դրոշակիրն ու առաջամարտիկը ժամանակակից աշխարհում՝ իսլամական պետություն Իրանն է, իրենց մերձավորագույն հարեւանը եւ դարձյալ մերձավորագույն հավատակիցը (երկու երկրների ժողովուրդներն էլ վերաբերում են իսլամի շիա թեւին): Այս գիտակցմամբ էր, որ Ադրբեջանցիները կործանեցին իրենց ու Իրանի միջեւ ձգված խորհրդային սահմանը քանի՜ հարյուր կիլոմետրերի վրա: Հետո էլ հասան նրան, որ այդ պետական համաժողովրդական հանցագործության քննությունն ու եզրակացությունը հանելու իրավունքը վստահվեց մի այլ շիա-մահմեդականի՝ ուզբեկ Ռաֆիկ Նիշանովին: Գիտենք նաեւ հետագա քայլերը. օրինակ, Ադրբեջանի հանրապետության Գերագույն խորհրդի այն նիստը, որ պետք է պրեզիդենտ ընտրեր կոմունիստ Մութալիբովին, բացվեց ու օրհնվեց հանրապետության շեյխ-ուլ-իսլամի կողմից: Անցյալ տարվա ընթացքում Ադրբեջանի մինիստրներն ու մյուս բարձրապաշտոն ղեկավարները քանի՜ անգամ եղան Իրանում, Իրանի գյուղատնտեսության, կապի, արդյունաբերության եւ այլ մինիստրները՝ Ադրբեջանում... Եւ ահա արդյունքը. կնքված են փոխշահավետ պայմանագրեր, որոնք ընդգրկում են երկու երկրների տնտեսական կյանքի բոլոր ու ամեն տեսակ բնագավառները:

Հայաստանի նոր կառավարությունը եւս, դատելով մինչեւ այսօր արված հայտարարություններից, ծրագրած ունի տնտեսական անսահմանափակ առնչություններ Պարսկաստանի՝ մեր մերձավոր սահմանակից այն երկրի հետ, որի հարեւանությունը վերջին մեկուկես հարյուրամյակում չի տվել բարդություններ եւ այսօր էլ չի մշուշված որեւէ տհաճ միջադեպով: Արված հայտարարությունները, ճիշտն ասած, շատ են խոստմնալից, այնքան, որ հաճախ թվում է, թե հենց միայն այս հարեւանի հետ ստեղծվելիք փոխհարաբերությունները բավական կլինեն իր անկախությանը տիրացած Հայաստանի կենսական ապահովության համար: Զանգվածային լրատվությամբ թմբկահարված փոխայցելություններից ու (հիմնականում) ցածր մակարդակների բանակցություններից արդյունքներից էլ առայժմ տեսանելի է միայն մեկ միջոցառում. աշխատանքներ են տարվում Երեւանում գտնվող մահմեդական միակ շինությունը՝ մզկիթը վերականգնելու եւ շքեղացնելու համար (Նկատի առնենք, որ շուրջ քսանութ դարու կենսագրություն ունեցող Երեւան հայկական մայրաքաղաքում այդ մզկիթը պահպանված հնագույն ճարտարապետական հուշարձանն է լինելու):

**Հունիսի 26-ին**, ՀՀ անկախության հանրաքվեի օգտին կատարվող քարոզչության ամենատաք շրջանում, «ՀՀ» պաշտոնական օրաթերթում ելույթ ունեցավ նաեւ արցախցի մեկը՝ Հրանտ Ալեքսանյան, որ արտահայտեց հետեւյալ ոչ անհետաքրքիր մտքերը.

«Երբ 1990 թ. օգոստոսին Հայաստանի խորհրդարանը հռչակագիր ընդունեց անկախության մասին, Արցախի ցավով տառապողների սիրտը կասկած մտավ. հանկարծ Հայաստանը Արցախը մտքից չհանի՞ հանուն իր անկախության»:

Աոյա հիշում էր, որ Գետաշեն-Մարտունաշենի ու Հադրութի գյուղերի ողբերգության մեղքը ոմանք բարդեցին Հայաստանի իշխանության վրա, որովհետեւ, իբր, կատարվածի համար պատասխանատուներ պիտի փնտրվեին եւ այդպիսին ճանաչեցին «հայոց իշխանությունը»:

Այս «սխալի» պատճառ են հայտարարվում քարոզչության անճկունությունը եւ «Անկախության ու Վերամիավորման գաղափարական զուգակցման» բացակայությունը:

Հեղինակը (թե՞ խմբագրությունը) հոդվածի աղը պահել էր վերջին. «ցավալիորեն



ակնհայտ է՝ անկախության գաղափարախոսությունը Արցախում արժանի պաշտպանություն չունի, եւ սա երեւացող խոց է մեր միասնականության վրա: Արցախցու իմ միտքն ու հոգին ուժգնորեն հուշում են՝ եսասիրությունն այս պարագայում մեզ ոչինչ չի կարող տալ, անիմաստ է սեփական ցավը վեր դասել ազգային փրկություն երաշխավորող ընդհանուր նպատակից, որն է՝ Հայաստանի անկախությունը.:

Հաստատ չգիտեմ՝ այս վերջին պարբերությունն իսկապե՞ս արցախցի Հրանտ Ալեքսանյանինն է, թե՞ նրա կարծիքին կարկատան են գցել խմբագրությունում: Երկու դեպքում էլ ցավալի է, որ

Ա) Արցախի իրատեսությունը (ազգի մի մասի ողբերգությունն առավել խորացնելու գնով թմբկահարել մի հռչակագիր, որն ըստ էության միայն այդպիսին է եւ ոչ ավելին) համարվում է խոց «մեր միասնության վրա», երբ որ պիտի այս միտքը գլխիվայր շուռ տրվեր:

Բ) Արցախի ցավը տվյալ պահին ազգը բուժելու խնդիր դարձնելը համարվում է եսասիրություն, որ առնվազն մոլորություն է:

Գ) Այդ «սեփական ցավը վեր դասել ազգային փրկություն երաշխավորող...», էլ չշարունակեմ, այլ հարց տամ. որ Արցախի ցավը միայն իր՝ Արցախի ցավը չէ, այսինքն՝ եսասիրության հետ կապ չունի, դա հասկանալի է, բայց հենց այդ պահին ժողովրդի՞ն ինչ է պատահել, որ «ազգային փրկություն երաշխավորող» միջոց էր պահանջվում եւ այն էլ այդպես շտապ կարգով Արցախը թշնամիների ոտքերի տակ փռելու գնով:

Արցախցիները,-ո՛չ բնաշխարհի տերերը, ո՛չ էլ հայաստանաբնակները, մի առանձին սրությամբ չէին դնում Հայաստանի հանրապետության կողմից Միության պայմանագիրն ստորագրելու հարցը: Եւ այդ՝ ո՛չ թե այն պատճառով, որ չեն հասկանում, թե չստորագրելն ինչպիսի հարված պիտի լինի իրենց փոքր հայրենիքի ճակատագրին, այլ որովհետեւ տեսնում էին թե հայության որոշ մասն ինչպիսի խանդավառությամբ է ընդունում Միությունից դուրս գալու, անկախությունն անմիջապես ապահովելու որոշումը, եւ ինչպես իրենց սպասվող ողբերգության խնդիրը կընկալվի որպես անկախությանը խանգարելու հանգամանք: Հիշում եմ, թե այդ օրերին Երեւանում արցախահայերի հանրահավաքի ղեկավարներն ու ելույթ ունեցողներն ինչպիսի զգուշությամբ էին խոսում, ինչպես համարյա դողում էին իրենց յուրաքանչյուր առաջարկության ու հանձնարարության վրա, որպեսզի չսպրդի հանրաքվեին կամ անկախության գործընթացին հակասող որեւէ արտահայտություն, այն օրերին իշխանությունների ծավալած անկախական միջոցառումները կասկածի տակ առնող որեւէ տրամադրություն:

Իսկ բնաշխարհի արցախյան տրամադրություններն արտահայտելու համար հրապարակ իջած մարդիկ միամտաբար նույնիսկ ջանում էին մահացու վերքերի ցավը բթացնել, թե ի՜նչ է, այդ ցավերից մռնչալը կարող է խանգարել անկախության գեղգեղանքին: Եւ այս Հրանտ Ալեքսանյանն էլ Ստեփանակերտից ուզում էր հավատացնել, թե անկախության համար սարքված համազգային աղմուկի մեջ տեղ չպետք է ունենա Արցախի տեղայնական ցավի մռմունջը: Ասում է. «եսասիրությունը այս պարագայում մեզ ոչինչ չի կարող տալ. անիմաստ է սեփական ցավը վեր դասել ազգային փրկություն երաշխավորող ընդհանուր նպատակից, որն է՝ Հայաստանի անկախությունը»:

Ահա այսպե՛ս. Արցախի այսօրվա ողբերգությունը սեփական-եսական ցավ է, անկախության շուրջը հրահրված խոտորնակ աղմուկը՝ ազգային փրկության միակ ճանապա՜րհը, եւ հարկ է, որ առաջինն ատամների տակ սեղմվի, բթացվի ու խլանա... Չնայած քաղաքականության երկնակամարը պարզից էլ պարզ էր, եւ աչք ու խելք ունեցողը տեսնում էր, որ ատելի խորհրդային երկիրը պիտի խորտակվի, միութենական հանրապետությունները պիտի անկախանան ձրի ու տարերայնորեն, եւ ոչ մի կարիք չկա նախապես տրորվել դեպի մահ տանող նրա քայլերի տակ...

✧ ✧ ✧

**Հուլիսի 3-ին** ԼՂ-ի մարզգործկոմը հեռագրերով դիմել էր Կենտրոնի ղեկավարներին (պրեզիդենտ, գործին խառնվող մինիստրներ եւն) եւ Մոսկվայում գտնվող՝ ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժող. պատգամավոր Հենրիկ Պողոսյանին՝ պատմելով, որ Ադրբեջանի ղեկավարության եւ ներքին զորքերի միավորումների իրականացրած վերջին գործողություններից (բռնություններ, գնդակոծություններ, հայկական բնակավայրերի կողոպուտներ) չի կարելի եզրակացնել, թե ադրբեջանական կողմն իսկապես նպատակ ունի խաղաղական ճանապարհով կարգավորելու իրադրությունն Արցախում ու Շահումյանում: Հեռագրերում խնդրվում էր միջամտել, որպեսզի կասեցվեն թշնամանքն ու բռնությունները եւ հիմքեր ստեղծվեն բանակցությունների ու փոխըմբռնումների համար:

Նույն օրվա լուսաբացին ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի ու ադրբեջանցի օմօնականների կողմից շրջապատվել էր Քարինտակ գյուղը: Պատանդ էին վերցվել 30 տղամարդ, 12-ը՝ ձերբակալվել: Բոլորը՝ մարզի ռուս դատախազի հրահանգով ու պարետ Ժուկովի գիտությամբ:

Քարինտակ խուժեցին հարեւան ադրբեջանական բնակավայրերի կողոպտիչները, ավերում էին գյուղի տները: Քշեցին-տարան ավելի քան 100 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:

Քարինտակցիները հավաքվեցին Ստեփանակերտ, պաշարեցին մարզային դատախազությունը՝ պահանջելով պատժել հանցագործներին:

Օմօնականներն ու իրենց «ռուս եղբայրները» շրջափակել էին նաեւ Մարտունու շրջանի Նոր-շեն, Աշան, Սպիտակաշեն, Մուշկապատ գյուղերը, Շահումյանի շրջանի սահմանամերձ բնակավայրերը:

Նույն օրը Հադրութի շրջանի Քարագլուխ, Հին Թաղեր եւ Դոլանլար գյուղերից հանվել էին ներքին զորքերի պահակակետերը, եւ դա ահազանգ էր դարձել, որ նույն գյուղերի վրա հարձակումներ սկսեն ադրբեջանցի օմօնականներն ու հարեւան ադրբեջանական շրջանի ասպատակիչները:

Կարելի՞ է կասկածել, որ մարզի բոլոր շրջաններում ռազմական լուրջ միջոցառում էր սկսվել, այն էլ կենտրոնի հանձնարարությամբ ու ծրագրով:

Նույն օրվա երեկոյան ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովն ընդունեց ԽՍՀՄ ԳԽ-ի դեպուտատներ Լ. Հարությունյանին ու Հ. Պողոսյանին, լսեց նրանց բողոքը Ղարաբաղի վիճակի դեմ (այնտեղ թուրքի օմօնն ու ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը, իբր, անձնագրային ռեժիմի ստուգման նպատակով, անօրինություններ են անում, բռնանում ու կողոպտում, կալանքի տակ առնում մարդկանց, քշում-տանում անասունները), խոստացավ անմիջապես դադարեցնել տալ հակասահմանադրական բոլոր արարքները Ղարաբաղում:

Նույն օրը թուրքերը վճռական գրոհ էին ձեռնարկել Մարտակերտ քաղաքի դեմ: Հարկ էր ցույց տալ, որ մենք թույլ ենք նույնիսկ միայնակ Ադրբեջանից, դրա համար էլ քաղաքի ինքնապաշտպաններին օգնություն չուղարկվեց...

**Հուլիսի 4-ին** մարտերը գնում էին արդեն Մարտակերտ քաղաքի ներսում: Այնտեղ շրջանի գլխավոր կեսի հարցն էր լուծվում, շրջանը պահել-չպահելու, այս մեծ ճակատամարտը շահելու կամ տանուլ տալու... Իսկ Հայաստանի հեռուստատեսությունը, այս ճակատագրականի առթիվ բերանը ջուր առած, նահատակների հին ու նոր թաղումներ էր ցուցադրում, ողբ ու կական, կռվի բերած աղետներն ու անդառնալի կորուստները:

Այդ նույն օրը ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Գորբաչովը հրամանագիր էր ստորագրել ադրբեջանցի 7 օմօնականների Կարմիր աստղի շքանշանով պարգեւատրելու մասին: Շքանշանի արժանի ծառայությունն էլ նշեց՝ «Մասնակցությունն Ադրբեջանի Խանլարի շրջանում գրոհայիններին զինաթափելու համար մղված մարտերին»: Խանլարի շրջանի այս գործողությունը «բարեկիրթ» անունն է այն վայրագությունների, որոնք ռազմական ծածկագրով կոչվում էին «Կոլցո» եւ անցկացվեցին Գետաշենում ու Մարտունաշենում՝ այդ գյուղերը հայաթափ անելու նպատակով: Կոտորել են մի քանի տասնյակ «գրոհայինների», իսկ իրականում իրենց գյուղերը պահող խաղաղ աշխատավորների եւ բռնա-



գաղթեցրել երկու գյուղերի հազարավոր հայերի:

Նույն օրը ԽՍՀՄ պրեզիդենտի հրամանագրով, «նկատի առնելով Գերանբոյի ու Ջեբրայիլի շրջանների իրադրության կայունացումը», վերացվեց Ադրբեջանի Շահումյանի շրջանի արտակարգ դրության ռեժիմը: Հրամանագրում ասված էր. «Ի գիտություն ընդունել Ադրբեջանի պրեզիդենտ Ա.Ն. Մութալիբովի հայտարարությունն այն մասին, որ ձեռնարկվելու են բոլոր միջոցները՝ ղարաբաղյան բարդույթի գոտում ապրող բնակչության պաշտպանության, տեղական բնակիչների անհիմն գաղթեցման դեմ, ԽՍՀՄ սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքներն ու ազատությունն պաշտպանվելու համար»:

**Հուլիսի 5-ին** թուրքերը լիովին բռնագրավեցին Մարտակերտը՝ շրջանի կենտրոնական մասում, եւ Հաթերքը՝ Քելբաջարի մատույցներում:

Նույն օրը Շահումյանի շրջանի Ջեյվա հայկական գյուղն էին թափվել թուրքի օմօնի նոր զորաջոկատներ:

**Հուլիսի 6-ին** Շահումյանի շրջանի հայկական գյուղերից շտապ դուրս բերվեցին ներքին զորքերի ջոկատները: Դրանից անմիջապես հետո թուրք օմօնականներն սկսեցին գնդակոծել Մանաշիդ, Էրքեջ ու Բուզլուխ գյուղերը՝ փորձելով մտնել նրանց ծայր թաղամասերը: Այս գործողությանը մասնակցում էին մի քանի հարյուր օմօնականներ եւ երկու զրահամեքենա: Միջոցառմանը մասնակցում էր Ադրբեջանի ՆԳ մինիստրի տեղակալ Մամեդովը՝ Գետաշենի ու Մարտունաշենի ջարդերի կազմակերպիչներից ու անմիջական մասնակիցներից մեկը: Այնտեղ էր նաեւ Գերանբոյի կուսշրջկոմի առաջին քարտուղար Արշադ Ալիեւը՝ ՆԳ գնդապետի համազգեստով: Հայերը ցույց տվին դիմադրություն: Երկու կողմերն էլ վնասներ կրեցին. հայերն ունեցան մեկ սպանված, 10 վիրավոր, թուրքերը՝ չորս սպանված, յոթ վիրավոր:

✧ ✧ ✧

Նույն օրը մարշալ Յազովը հրաման արձակեց՝ արգելել թռիչքները Շահումյանի շրջան: Ուրեմն, անհնար էր դառնում ծանր վիրավորներին Երեւան բուժման փոխադրելը:

Այդօր դեպուտատ Լ. Հարությունյանը ԽՍՀՄ ԳԽ-ի երկու պալատների միացյալ նիստում արեց հայտարարություն՝ դատապարտելով Գորբաչովի հրամանագրից հետո Շահումյանի շրջանում մոլեգնած բռնությունների ու սպանությունների քաղաքականությունը: Դեպուտատների հայկական խմբի անունից մամուլի ծառայություններին հանձնվեց դիմում Գորբաչովին, որի մեջ նշվում էր. «Ադրբեջանի Շահումյանի շրջանում արտակարգ դրությունը վերացնելու մասին հրամանագրից հետո դրությունն այնտեղ անտանելի է դարձել: Անսանձ բռնություններ ու տեռոր, մարդկային զոհեր՝ ահա այսպիսին են այդ հրամանագրի իրականացման առաջին քայլերը...

Բոլոր նշաններից երեւում է, որ Շահումյանի շրջանի բնակչությանն սպասում է Սումգայիթի հայերի բախտը: Դա չթույլատրելու համար մենք խնդրում ենք Ձեզ անհետաձգելիորեն հրավիրել անվտանգության խորհուրդ, ձեռք առնել գործնական միջոցներ Շահումյանի շրջանի հայության պաշտպանության համար, ինչպես նաեւ քննել ԼՂԻՄ-ի վիճակի հարցը, քանի որ այնտեղ, չնայած ձեր հավաստիացումներին, շարունակվում է հայ բնակչության բռնագաղթեցումը»:

**Հուլիսի 7-ին** Մանաշիդ գյուղի դիմաց կանգնել էին շուրջ 150 բեռնատար ավտոմեքենաներ՝ բնակիչներին ու նրանց ունեցվածքը տեղափոխելու համար:

Այդօր երեկոյան հրթիռակոծվեց Էրքեջ գյուղը: Իսկ Մանաշիդի ու Բուզլուխի վրա գրոհեցին թուրք օմօնականները: Կառաչինարն արդեն շրջապատված էր եւ բնակիչներին էր հասնում թուրքի սպառնալիքը՝ մինչեւ վերջինը կոտորելու մասին, եթե չթողնեն-չհեռանան գյուղից:

**Հուլիսի 8-ին** Մանաշիդն ու Էրքեջը ենթարկվեցին թուրքի Թողան գյուղից եկած ուղղաթիռների գնդակոծությանը:

**Հուլիսի 19-ի**-լույս 20-ի գիշերը թուրքը դուրս քշվեց Հաթերքից. ազատագրվեց Խաչենի համբավավոր իշխանանիստը: Թշնամին կռվի դաշտում թողել էր շուրջ 100 դիակ, երկու տանկ, մեծաքանակ զենք ու զինամթերք:

**Հուլիսի 21-ին** ազատագրվեցին Մաղավուզն ու Հոռթաղը: Երեւանի հեռուստատեսությունը նորից փայլեց իր «քաջատեղյակությամբ», հաղորդեց, որ պատերազմի ճակատից տասնյակ տեղեկություններ չկան:

**Հուլիսի 20-ին** ադրբեջանական լրատվական միջոցները, աղբյուր ունենալով արտակարգ դրության շրջանի պարետ Ժուկովից ստացած հաղորդումը, տարածել էին ստահոդ մի լուր, որի համաձայն՝ հայ գրոհայինները Շահումյանի շրջանում կալանավորել եւ անհայտ ուղղությամբ տարել են Ռուսաստանի ժողովրդական պատգամավոր Անատոլի Շաբադին եւ ռուսական մամուլի ներկայացուցիչ Կիրիլ Ալեքսեեւսկուն:

Կիրիլ Ալեքսեեւսկին հետագայում պիտի պատմեր, որ գնդապետն ու նրա ուղեկից մի մայոր նախօրյակին իրենց հանդիպել են Շահումյանում, ունկնդիր եղել Շաբադի կշտամբանքին՝ խաղաղ բնակչության դեմ ծավալած ռազմական գործողությունների համար:

«Սակայն հաջորդ առավոտյան գնդապետը զանգել է հեռախոսով,-հետագայում Ալեքսեեւսկին է գրել,-եւ շտապ կանչել իր մոտ, հայտնել, թե կենտրոնից ստացվել է հեռախոսագիր այն իմաստով, որ Մոսկվայի դեպուտատն ու թղթակիցը բռնված են «հայ գրոհայինների» կողմից: Իբր, գնդապետն էլ հրաման է ստացել ռազմերթով ազատել նրանց ("ГА", դեկտ. 24):

**Հուլիսի 21-ին** Անատոլի Շաբադն ինքը Ժուկովին ու նրա վերադասներին արեց դեպուտատական-պաշտոնական հետեւյալ հաղորդումը. «Հայտնում եմ, որ Շահումյանում եմ գտնվում սեփական նախաձեռնությամբ: Տեղի ղեկավարությունն ինձ ընդունել է հաճույքով: Ունեմ գործելու լիակատար ազատություն: Ներքին գործերի բոլոր փորձերն ինձ «ազատելու» գնահատում եմ որպես պրովոկացիա: Խնդրում եմ չարգելակել պատգամավորական պարտականությանս կատարմանը»:

Հետագա օրերին Կ. Շաբադը, Կ. Ալեքսեեւսկին ու չեխ լրագրող Յանեկը Շահումյանում շատ փաստերով պիտի համոզվեին, որ պարետ Ժուկովը, ադրբեջանական կողմի օգտին, ընդունակ է ոչ միայն ստեր հորինելու, այլեւ հեղել տալու խաղաղ հայ բնակիչների արյունը ("ГА", հուլիսի 27):

Այսքանից հետո էլ պահանջվել է, որ Շաբադը գնա Բաքու եւ բացատրություն տա իր խնդիրների մասին: Հասկանալի է, որ այս անգամ եւս հանձնարարություն տվողների խոփը քարին պիտի առներ. Շաբադը չգնաց եւ պահանջեց, որ իրեն հանգիստ թողնեն (նույն տեղում):

**Հուլիսի 21-22-ին** ազատագրվեցին Չափարը, Ջարդախաչը, Իմերեթ-Քերեւանդը: Ցած գցվեցին թուրքի երկու ռազմական ինքնաթիռներ: Սակայն թշնամին շարունակում էր հրետակոծել ու ռմբակոծել սահմանային համարյա բոլոր բնակավայրերը:

Ռուսաստանի արտգործնախարարությունը, «Ազատություն» ռադիոյի համաձայն, ինչ-որ Վլադիմիր Կազիմիրովի միջոցով ղարաբաղյան բարդույթի խաղաղ լուծման իր տարբերակն էր առաջարկել, եւ Ադրբեջանական կողմը, վարչապետ Իսա Գամբարովի բերանով, տվել էր իր համաձայնությունը (պատերազմական ձախողանքներն, իհարկե, կստիպեն համաձայնել):

**Հուլիսի 23-ին** Նովո-Օգարեւոյում տեղի ունեցած բարձր մակարդակի բանակցություններում Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը պաշտոնապես հայտարարեց, թե Արցախից եւ հարակից հայաբնակ գյուղերից անմիջապես դուրս կհանի իր հանրապետության օմոնականներին եւ դադարեցնել կտա, այսպես կոչված, անձնագրային ռեժիմի ստուգումները, միայն թե մարզից դուրս բերված լինեն հայկական գրոհայինները, այսինքն՝ Ղարաբաղը զինաթափված լինի:

Այնտեղ Միխ. Գորբաչովի մասնակցությամբ խոսք եղավ նաեւ այն մասին, որ անհրաժեշտ է վերջ տալ զինվորական կազմավորումների հակահայկական անօրինություններին:



**Հուլիսի 24-ի** ուշ երեկոյան ՌԽՖՍՀ ժողովրդական դեպուտատ Անատոլի Շաբադը Շահումյանի շրջանի Վերիշեն գյուղից իր հանրապետության նախագահ Բորիս Ելցինին հաղորդեց, թե ադրբեջանական օմոնականներն ու խորհրդային 4-րդ բանակի զորամասերը միասնաբար ամբողջ օրվա ընթացքում ռմբակոծել են գյուղն ու շրջակաները: Միայն երեք արկ պայթել է գյուղի կենտրոնում, այն գյուղի, որի վեց հազար բնակիչներն ու շրջանի ուրիշ գյուղերից բռնագաղթեցված հարյուրավոր հայեր հոգեբանական ծանր կացության մեջ են: Գանձակի 23-րդ դիվիզիայի զրահատեխնիկան ու զորամասերը գյուղի շուրջ իշխող դիրքեր են գրավել եւ պատրաստվում են գրոհի: Անհրաժեշտ է ձեր փրկարար օգնությունը,-տագնապի իր զեկույցն այսպես էր ավարտում Ռուսաստանի ԳԽ-ի պատգամավորը:

**Հուլիսի 24-ի** դեպքերի մասին Ռուսաստանի մի այլ ներկայացուցիչ՝ Մոսխորհրդի պատգամավոր Վյաչեսլավ Տիտովը գրել է. «Եթե ես վկան չլինեի այն դեպքերի, ապա դժվար թե նրանց հավատայի: Խորհրդային բանակը մասնակցում էր բարբարոսական գործողության՝ մասնակցում էր Ադրբեջանական ԽՍՀ Շահումյանի շրջանի գյուղերից հայ բնակչության բռնի գաղթեցմանը:

Ինձ համար դարձավ ակնհայտ, որ միութենական կառավարությունն անց է կացնում ձեւականորեն Ադրբեջանին պատկանող տարածքից բնաշխարհիկ հայերին դուրս մղելու ծրագրված քաղաքականությունը:

Այն, ինչ ես տեսա 1991 թ. հուլիսի 24-ին Վերիշեն ու Վերին Աղջաքենդ գյուղերում՝ այդ օրը նրանց բնակիչների հետ անցկացնելով գնդակոծությունների տակ, դժվար է նկարագրել: Առավոտյան ժամը ութից սկսած Վերիշենի շուրջ ինքնաթիռներ էին թռչում, իսկ 9-ին արդեն լեռների կողմից սկսվեցին հաուբիցների կրակոցները, որոնք համարյա առանց դադարի շարունակվեցին մինչեւ երեկո: Բնակիչները բռնված էին սարսափով: Մարդիկ թաքնվել էին նկուղներում եւ այլ ծածկերի տակ: Բոլոր տներից լսվում էին լացող մարդկանց ձայներ: Հրանոթային կրակոցների ահարկու թնդյուններին ուղեկցում էին ցածր, տների վրայով թռչող ուղղաթիռների եւ ավտոմատների կրակահերթերի սահմռկեցուցիչ ձայները:

Հորիզոնում տարբեր կողմերի կարեւորագույն բարձունքների վրա երեւում էին ԲՏՌ եւ ԲՄՊ տիպի մեծաքանակ մեքենաներ եւ զինվորական խմբեր: Ուղղաթիռներն իջնում էին այդ բարձունքների վրա՝ ցած բերելով զինվորների նորանոր խմբեր:

Կրակոցները դադարեցին ժամը 18-ի մոտ: Միայն երկարատեւ լռությունից հետո փողոցներում երեւացին մարդիկ՝ շտապով հավաքված իրերով:

Երբ մութն ընկել էր, մեքենաներով ինձ տարան Շահումյան: Ճանապարհի ամբողջ երկարությամբ շարժվում էին մարդկային խլյակները՝ երեխաներով, ամենաանհրաժեշտ իրերի կապոցները ձեռքներին: Կային եւ այնպիսիները, որոնք էշերով էին տանում իրերը:

Հանդիպում էին բեռնատար մեքենաներ, որոնց թափքերը լիքն էին մարդկանցով ու իրերով: Այդ մարդիկ նույնիսկ չգիտեին, թե ո՛ւր են փախչում: Տագնապահար է Շահումյանի շրջանի ամենամեծ գյուղերից մեկը՝ Վերիշենը, վեց հազար մարդ: Նրանց մեջ շատ են երեխաները: Նրանց հետ են հարեւան ավելի փոքր գյուղերից բռնագաղթի ենթարկվածները:

Երբ ես ղեկավարներից մեկին հարցրի, թե ինչո՞ւ մարդկանց փոխադրությունը չի կատարվում ավելի կազմակերպված, ի՞նչ է, բավական մեքենանե՞ր չկան: Նա պատասխանեց, թե մեքենաներ շատ կան, վառելիք չկա, որովհետեւ երկար ժամանակ է, ինչ շրջանը շրջափակման վիճակում է գտնվում:

Ապշեցուցիչ պատկեր է. մարդկային այդ շարժվող խմբերի մեջ այնքան ողբերգություն կա, որ չէի կարող չմտածել այդ աղետի իրական պատճառների, իսկական մեղսագործների մասին: Եւ ո՞վ է մեղավորը: Եւ ինչո՞ւ մեղավորները չեն վախենում պատժից: Գուցե նրա՞ համար, որ այս հանցագործությանն անտեղյակ է աշխարհը: Եթե սարսափի ու տառապանքի այս ամբողջ պատկերը, հայրենի եզերքները լքող այս մարդկանց

հուսալի հեռանկար:

Պատասխանն անմխիթարական էր. ադրբեջանական կողմը ոչ միայն ցույց չի տալիս ցանկություն որեւէ ձեւի ու մակարդակի բանակցության նստելու, այլեւ ամեն օր, ամեն ժամ ավելի բարդացնում է վիճակը՝ տարածքի բոլոր կետերում հրահրելով արյունահեղություն, հայ մարդկանց տարրական իրավունքների ոտնահարում, մեկ խոսքով՝ վիճակ, որի շարունակությունը միայն պատերազմն է:

– Կարո՞ղ եք պատկերացնել. Ադրբեջանի ԳԽ-ի նախագահի տեղակալ Թ. Կարաեւն ու ժող. պատգամավոր Թ. Ղասիմովը պաշտոնապես հայտարարել են, թե բանակցությունների մասին խոսելը հիմքում ավելորդ է, քանի դեռ ՀՀ ԳԽ-ը չի հրաժարվել Արցախի վերաբերյալ ընդունած իր որոշումներից (նկատի ունեն հատկապես 89-ի դեկտեմբերի 1-ի որոշումը), քանի դեռ Հայաստանը Ղարաբաղից չի հեռացրել իր գրոհայիններին, որոնք հակասահմանադրական գործողություններ են կատարում Ադրբեջանի դեմ: Տեսե՛ք, պարզվում է, որ ադրբեջանական միլիցիայի ավազակախմբերը կոտորում են արցախցիներին, կողոպտում նրանց բնակավայրերը, դա սահմանադրական է, իսկ հայերը, որ իրենց կյանքն են պաշտպանում, այս հողի վրա ազատ ու խաղաղ ապրելու իրենց իրավունքը, դա հակասահմանադրական է...

Ինչ-որ է, չդադարող պատերազմական վիճակն ու զուր կորսվող ժամանակը վկայում են, որ չի կարելի հույս դնել երկխոսության վրա, երբ զրուցակիցդ քեզ հետ ուզում է խոսել միայն իբրեւ տիրապետող եւ թելադրող:

**Օգոստոսի 9.**– Արդեն քանի օր է, մեր «Լրաբերը» մի առանձնակի խանդավառությամբ հաղորդումներ է անում Արցախում ծավալված, այսպես կոչվող, պարտիզանական գործողությունների մասին: Եւ, իբր, խորամանկում են, ո՛չ այդ պարտիզանական խոսքն են ասում, ո՛չ առհասարակ հայ երիտասարդ վրիժառուի անունն են տալիս... Այլ պարզապես՝ Հադրութի շրջանի Դոլանլար գյուղում սպանվել են մի տղամարդ ու մի կին, որոնք ազգությամբ ադրբեջանցի են: Կամ՝ Ծամձորի վրա կատարվել է հարձակում, սպանվել են չորս հոգի: Գյուղի բռնագրավման մասնակցած մյուս ադրբեջանցիները խուճապահար փախել են հարեւան Ֆիզուլու շրջանը:

Եւ ուրիշ այսօրինակ լուրեր...

Մենք էլ մխիթարվում ենք նրանով, որ, ահա՛, այսպես հայ վրիժառուները մեկ առ մեկ ազատագրում են հենց վերջերս ադրբեջանցի հրոսակախմբերի կողմից բռնագրավված հայկական գյուղերը, Հադրութի շրջանի ծայրամասային այն բնակավայրերը, որոնց կորուստը, նկատի առնելով Բերդաձորի ենթաշրջանի պարտման ողբերգությունը, Արցախական աշխարհը Հայաստանից հեռացնում էր մի քանի տասնյակ կիլոմետրով եւս:

Երեկ էլ գրող Վարդան Հակոբյանն էր զանգել Ստեփանակերտից: Տեղեկացնելով մի քանի օրվա անհասկանալի խաղաղության մասին, գալիք մեծ վտանգի նախանշան համարեց մերոնց համարյա անպատասխան հաջողությունները Հադրութի շրջանում: Ասաց՝ նրանք հաջող հարձակումներ են գործում, վերանվաճում կորցրած մանր բնակավայրերը: Նույնիսկ շրջկենտրոն ու Ստեփանակերտ փախած գյուղացիները վերադառնում են իրենց նախկին բնակավայրերը... Բայց անհասկանալի եւ մանավանդ շատ զարմանալի է, թե ադրբեջանական կողմն ինչո՞ւ այսքան կրավորական դիրք է բռնել:

Երկու օր առաջ էլ հաղորդեցին Շահումյանի շրջանի Վերիշենից բերած մի հեռուստառեպորտաժ, որի հեղինակներն ու գլխավոր գործող անձինք ռուս մարդիկ էին, լենինգրադցի ու մոսկվացի պատգամավորներ, Խորհրդային Միության ժողովրդական պատգամավորներ, գնդապետ Սմիռնովը եւ արդարության ուրիշ զինվորներ: Ավարտվեց ռուս մի կնոջ խոսքով: Վերիշեն հարս եկած, այնտեղ տասնամյակներ ապրած ու զավակներ ունեցած-մեծացրած մեկն էր, որ խոսքով մարտնչում էր շահումյանցի հայության իրավունքի համար: Այո՛, մարտնչում, որովհետեւ հիմա այնտեղ համառ կռի՛վը կարող էր պտուղ բերել շահումյանցի հային:



**Օգոստոսի 9-ին** էր դարձյալ, «Երեկոյան Երեւան» թերթը հրապարակեց ՀՀ ԳԽ-ի Անկախ պետականության եւ ազգային քաղաքականության հարցերի հանձնաժողովի նախագահի պաշտոնակատար Էդ. Եգորյանի մի հոդված-զեկուցումը, որը կարդացված պիտի լիներ ԳԽ-ի նստաշրջանում, այսպես կոչված, միութենական պայմանագրի քննարկման ժամանակ, սակայն քննարկումը տեղի չէր ունեցել, եւ հեղինակը սեփական մտորումները հասարակությանն էր ուղղել թերթի միջոցով:

Նկատի ունենալով, որ Եգորյանն այն ժամանակ (իսկ հետագայում հատկապես) իրեն ներկայացնում էր որպես ՀՀՇ գաղափարական առաջնորդներից մեկը, իսկ այս զեկուցումն էլ ըստ էության ՀՀՇ կազմակերպության ու նրա անդամների իշխանության սկզբունքներն է հանդիսանում տվյալ հարցում, հարկ եմ համարում ցույց տալ նրա մի քանի էական տեսակետները, որոնք եւ որոշում էին ժամանակի Հայաստանի վարած քաղաքականության պատկերը:

Ահա զեկուցման առաջին իսկ նախադասությունը. «ԽՍՀՄ քայքայման հիմնական պատճառը տնտեսական համակարգի անարդյունավետությունն է, որի հետեւանքում ապրանքային շուկայում առաջարկը բացարձակապես չէր ապահովում պահանջարկը»:

Սա այն ժամանակ եւ հետագա տարիներին էլ օդում շատ հնչող մի խոսք էր, որ, իբր, հորինել էին համաշխարհային տնտեսագիտության հմուտ գիտակները, սակայն նման խոսք բերանից թռցնելու իրավունք երբեք չուներ հա՛յ մարդը, որն իր հանրապետության փորձից պիտի իմանար, որ հայ ժողովրդի (նրա երկրի) պահանջարկն ամեն տեսակետից լիովին բավարարվում էր՝ անկախ նրանից, թե ի՛նչ առաջարկ էր արել կամ ինչպիսի՛ առաջարկի իրավունք ուներ:

Հաջորդ պարբերություններով «ապացուցվում էր», որ նոր պայմանագիրը ոչնչով չի տարբերվում ԽՍՀՄ Սահմանադրությունից եւ մնացած օրենքներից, այլ խոսքով՝ նոր միությունը եւս լինելու է ԽՍՀՄ շարունակությունը եւ խեղդելու է անկախ ու ինքնիշխան հանրապետություն կոչվածներին, վերացնելու է խոստացվող ինքնուրույնության ամենաաննշան հատկանիշները:

Ուրեմն որքան շուտ ու որքան հեռու փախչես Միությունից, այնքան լավ, որովհետեւ նոր Միության պայմանագիրը «Չստորագրած հանրապետությունները փաստորեն կստանան նոր կարգավիճակ եւ նորացված կենտրոնի համար կդառնան պարտնյորներ: Այս իմաստով պայմանագրի կայացումը ձեռնտու է չմիացածներին եւ քաղաքական տեսակետից նրանք շահում են»:

Սա ռեբուս է, իհարկե, եթե նկատի չառնենք միակ պարզ ակնարկը՝ Եգորյանն ուզում է Կենտրոնի պարտնյորը լինել (հիշենք, որ այդ տարվա մայիսի սկզբին էլ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր ասում՝ իր ընտրած ու առաջարկած փոխհարաբերություններում Գորբաչովն իր համար լոկ պարտնյոր է), եւ մենք ականատես եղանք այդ պարտնյորության արդյունքին՝ Գետաշենի ենթաշրջանի եւ Հադրութի շրջանի կեսի պարտությանը:

Իրատես քաղաքագետներն անվերջ զգուշացնում էին Հայաստանի աշխարհագրական, առավել եւս աշխարհաքաղաքական դիրքի պատճառով նրա գլխին գալիք մեծ ու փոքր աղետներից: Իսկ Եգորյանն այն համարում էր մի երանություն, որի շնորհիվ «Հայաստանը՝... Եվրոպա-Արեւելք-Ռուսաստան առանցքների վրա գտնվելով՝ կարող է միջնորդ պետության դեր կատարել, ինչը ճկուն քաղաքականության դեպքում կապիտալի մեծ հոսք եւ զարգացման էական խթաններ կստեղծի»:

«ԽՍՀՄ իշխանության եւ տնտեսական համակարգի խոր ճգնաժամի եւ այդ պատճառով արտաքին կապիտալից խիստ կախվածության պայմաններում բացառիկ հնարավորություն է ստեղծվել նվազագույն, անարյուն առճակատումներով հասնել հանրապետության կարգավիճակի բարձրացման եւ անկախության»,-պնդում էր Եգորյանը, եւ սա՝ Գետաշենից հետո, եթե Գետաշենը Հայաստանինը չի համարում, ապա, միեւնույն է, Արծվաշենի՞ց հետո:

Հաջորդ պարբերություններում եւս այսօրինակ տեսակետ-եսակետներ են. իբր, Հայաստանն անկախության ճանապարհին հաստատ ու աներեր է քայլում, դա տեսնում են եվ-

րոպական երկրները, տեսնում եւ տնտեսական ու քաղաքական կապեր հաստատում նրա հետ, որը եւ փակում է ԽՍՀՄ կամայականությունների ուղին:

Բայց, հետաքրքիր է, այդ ի՞նչ կապեր էին, որոնց տերը միայն Եգորյանը գիտեր: Եգորյանը, որ չի խորշում նաեւ բացահայտ ստից, ասում է. «... Գետաշենը, Մարտունաշենը նվեր էին Ադրբեջանին: Այդպիսի նվեր էին (էր) նաեւ Կամո եւ Ազատ գյուղերի տեղահանությունը խորհրդային զորքի միջոցով, երբ խոսք անգամ չկար անկախության կամ միութենական պայմանագրի մասին, եւ Հայաստանում իշխում էր Կենտրոնին հոգեհարազատ վարչակարգը»:

Այդպե՞ս էր արդյոք: Տեսնենք. Գետաշեն-Մարտունաշենի ողբերգությունը տեղի ունեցավ մայիսին, երբ Լ.Տեր-Պետրոսյանը ճակատ էր տալիս Գորբաչովի հետ՝ աշխարհին ցույց տալու համար, որ այդ Գորբաչովն իր համար ընդամենը պարտնյոր է:

Եգորյանը լավ գիտեր, որ Կենտրոնի համար կարեւոր է մշտական կապն Ադրբեջանի հետ («Ադրբեջանը Միության համար կարեւոր, գեոպոլիտիկ նշանակությամբ՝ նաեւ դեպի Անդրկովկաս մուտքի բանալին է».-իր շարադրանքն է, իր կետադրությունը.-Բ.Ու.):

Ի՞նչ պիտի անել հակառակորդի այս առավելությունը հաղթահարելու համար: «Դրան (այսինքն՝ ԽՍՀՄ-Ադրբեջան կամ Ռուսաստան-Ադրբեջան միությանը.-Բ.Ու.) կարելի է հակադրել անկախ Հայաստանը»: Հետեւապես եւ դրա ձգձգումը, նույնիսկ միութենական պայմանագրի վրա կատարվող աշխատանքներին մասնակցելը, վտանգավոր է ոչ միայն Հայաստանի, այլեւ Ղարաբաղի համար»:

Այսպե՛ս:

Իսկ եթե նույն Հայաստանը երբեւէ մտներ այդ Միության մեջ, այն ժամանա՞կ ինչ պիտի գրեր այս տեսաբանը:

**Օգոստոսի 10-ին** Ստեփանակերտի կենտրոնական փողոցներից մեկում սպանեցին կուսակցական մարզկոմի կազմբաժնի վարիչ Վալերի Գրիգորյանին: Կրակել էին փողոցով անցնող մեքենայից եւ չքացել:

Մարզկոմի ու մարզգործկոմի անդամները, ԼՂԻՄ-ի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ հեռագրեր հղեցին երկրի ղեկավարությանը՝ բացատրելով, որ սպանությունը Պոլյանիչկոյի ու նրա տմարդի կազմկոմիտեի գործն է, եւ նրանք էլ պետք է պատասխան տան իրենց դավադրության համար: Հեռագրերում բացատրում էին, որ Վ. Գրիգորյանը եղել է այն պատվիրակության կազմում, որը Բաքու էր գնացել Մութալիբովի ու Պոլյանիչկոյի հետ բանակցություններ վարելու համար: Դաս չառնելով պատվիրակության անդամների անհողդողդ պահվածքից՝ Պոլյանիչկոն հետո էլ Ստեփանակերտում Գրիգորյանին հարկադրել էր, որպեսզի նա օժանդակի Ղարաբաղի տարածքում սեպտեմբերի 8-ին, իբր թե, անցկացվելիք հանրապետական պրեզիդենտական ընտրություններին: Ստանալով կտրական մերժում՝ Պոլյանիչկոն կազմակերպել է այդ ստոր հաշվեհարդարը մարզի ղեկավար աշխատողի դեմ:

**Օգոստոսի 13-ին** Արցախում տեղի ունեցավ մի դեպք, որի լուրը ցնցեց Խորհրդային Միությունը, եթե չասեմ՝ ողջ աշխարհը. Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի կանայք, որ լծվել էին հայրենի լեռնաստանի գոյապայքարին («Փառանձեմ» անվամբ ազատագրական խմբակ), այդ օրը գերի վերցրին ռուսական մի զորաջոկատ իր զինամթերքով ու ռազմական մեքենաներով:

Այս խիզախ ձեռնարկումի հեղինակները դիմում էլ հղեցին Գորբաչովին, Ելցինին եւ ռուս ու հայ ժողովուրդներին: Ահա այն. «Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի մի խումբ կանայք ստիպված եղան, իբրեւ ծայրահեղ միջոց, պատանդ վերցնել ավելի քան երեսուն զինվորների ու սպաների ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերից:

Ադրբեջանական օմոնի բանդաները, օգտագործելով ԽՍՀՄ ՆԳՄ ներքին զորքերին, երկար ժամանակ պատանդ էին վերցնում հայերին, հանձնում ադրբեջանցիների տնօրինությանը: Այսպես, վերջին երեք ամսվա ընթացքում օմոնականները ներքին զորքերի աջակցությամբ, բռնագաղթեցրել են տասնյակ հայկական գյուղերի բնակիչներին, կալանքի տակ առել 500 մարդու: Ժողովրդի համբերության բաժակը լցվել էր: Այսօր պատանդ



դարձան նրանք, ովքեր բռնության գործիք էին օմոնականների ձեռքին:

Արցախի մայրերը մեկ պայման են դնում՝ վերադարձնե՛լ իրենց զավակներին, որոնք գտնվում են ադրբեջանական կալանատներում:

Մենք խոստանում ենք, որ մի մազն անգամ չի պակասի խորհրդային զինվորի, որը զենք է դարձել ադրբեջանական ղեկավարության հակահայկական անմարդկային քաղաքականության համար:

Մեզ համար հայտնի է դարձել, որ մեր մարզում վայրէջք է կատարել Աֆղանստանի ու Հայաստանի դահիճ Պոլյանիչկոն: Դա նշանակում է՝ կլինի նոր խառնակչություն՝ արյունահեղությամբ հանդերձ: Եթե զինվորները, պատանդներին փրկելու պատրվակով, ուժ կգործադրեն, ապա կանանց խումբը կպայթեցնի իրենց՝ պատանդների հետ միասին:

Իսկապես որ ժողովրդական համբերության բաժակը լցված է: Մեր ամբողջ հույսը Մոսկվայի ողջախոհության վրա է:

*Հաթերքի կանայք»:*

Հաթե՜րք: Պատմության խորքերին անծանոթ մարդուն ոչինչ չի ասում այս անունը: Իսկ ով շատ թե քիչ տեղեկություն ունի միջնադարյան Հայաստանի պատմությունից, նա չի կարող չիմանալ, որ 10-12-րդ դարերում այս բերդավանն է եղել Արցախի Առանշահիկ իշխանության գահերեց Վախտանգյան տան նստավայրը: Այստեղ է գահակալել սելջուկ թուրքերի դեմ տարած բազմաթիվ հաղթանակների հերոս Հասան Վախտանգյանը, որի վիմագիր արձանագրությունը Դադի վանքի մի խաչքարի վրա՝ պատմում է, թե 40 տարի Արցախի գահերեց իշխանն է եղել (1141-1181 թթ.), հաղթապանծ կռիվներ է մղել թշնամյաց դեմ եւ 1182-ին իշխանությունը հանձնելով վեց տղաներին՝ կրոնավոր է դարձել Դադի վանքում: Վեց տղաներից ավագը Վախտանգն էր, բարեկիրթ ու բարեսեր մի իշխան, որ իր անունն անմահացրեց ոչ միայն հայրենի եզերքի պաշտպանության համար մղած կռիվներով, այլեւ մեծ գրող ու գիտնական Մխիթար Գոշին հրավիրեց Հաթերքի իր ապարանքը, ամեն կերպ հովանավորեց, որ նա գրի Հայոց Դատաստանագիրքը: Գոշ վարդապետն իր այդ գրքի առաջին ձեռագիր օրինակը Վախտանգ Հաթերքցուն է նվիրել՝ ընծայագրելով՝ «զգիրքս Դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել»:

Դատաստանագրքի իմաստուն օրենքները, մարդու իրավունքներն ու ազատությունը միշտ էլ սրբություն են եղել Վախտանգ իշխան Հաթերքցու հաջորդների եւ առհասարակ բոլոր համերկրացիների համար: Եւ նորագույն ժամանակների հաթերքցինե՞րը պիտի դավաճանեին նախնյաց վարք ու բարքին, հանդուրժեին եկվոր բռնացողի անօրինությունը: Թեկուզ եւ այդ եկվորը լիներ ռուսա՜ց զինվոր:

Ի՞նչն էր առիթը, ի՞նչն էր արցախցի կանանց ստիպել հանկարծ գնալու այդքան հանդուգն ու միաժամանակ վտանգավոր քայլի: Անմիջական մղիչն այն էր, որ այդօր գյուղում իրենց սանձարձակ պահող զինվորները պատանդ էին վերցրել մի երիտասարդի՝ կուսակցության վարորդ Գեւորգ Պետրոսյանին եւ տանում էին, ինչպես գյուղացիներին էր հայտնի, Ադրբեջանի օմոնականներին հանձնելու: Իսկ հիմքը, բուն պատճառն էլ այն էր, որ նախընթացին այդ ռուս զորաջոկատը, ադրբեջանցի ավազակախմբերի հետ միասին, Թարթառի ափերի գյուղերում կատարել էր ամեն տեսակ վայրագություններ, ընդհուպ մինչեւ հայերին պատանդ վերցնելն ու թուրք հրոսակների վրա վաճառելը: Հաթերքցիների աչքի առաջ էր Արշավիր Իսկանդարյանը, որին մայիսի 15-ին էին տարել համագյուղացի ուրիշ 9 մարդկանց հետ միասին: Շուշվա բանտն անգամ թանկ մի արգելավայր էին համարել նրանց համար, պահել էին զորանոցի մի խցիկում, առանց հացի ու ջրի, վրա հասնողներն էլ ծեծել են եւ ծաղրուծանակի ենթարկել:

Իսկանդարյանին՝ Հայրենական մեծ պատերազմի վետերանին, համագյուղացիները գնել-ազատել են 32 հազար ռուբլով, հաշմված վիճակում: Գնել են նաեւ երկու կալանավորներին, իսկ ուրիշ երկուսի համար վճարել են, սակայն ազատել չեն կարողացել, քանի որ գինը բարձրացվել է, իսկ գյուղն այլեւս հնարավորություն չի ունեցել

ոչ ոքի չէին հեռացրել, չէին մեկուսացրել, Գորբաչովից բացի։ Իրենք էին ու իրենք ԳԽ-ի նախագահ Լուկյանովից, Մինիստրների Խորհրդի նախագահ Պավլովից մինչեւ մինիստրներ Յազովը, Պուգոն, Կրյուչկովը։ Եւ ձախողվեցին այն պատճառով, որ մեկը մյուսից բութ ու անձեռներեց էին եւ ոչ թե նրա համար, որ հակառակորդներն էին ուժեղ ու հնարամիտ։

Ռուսական մամուլում արդեն բազմիցս քննել են այս հարցը, եւ անաչառ դատողները եկել են այն եզրակացության, որ տարօրինակ ոչինչ չի եղել «հեղաշրջման» հեղինակների արարքի մեջ, տարօրինակն այն է միայն, որ նրանց կողքին, մեղադրյալի աթոռի վրա նստած չէ իրենց հովանավորը՝ Միխ. Գորբաչովը։ «Խունտայի» ծրագրի մեջ, ըստ էության, չի եղել որեւէ այնպիսի բան, որ տարանջատվեր պաշտոնական կամ անդրկուլիսյան քաղաքականությունից առհասարակ եւ Գորբաչովինից հատկապես,-գրել է Լեոնիդ Բատկինը։ -Չնայած այդ քաղաքականությունը պետք է հետո տրամաբանորեն ավելի առաջ գնար, դառնար ավելի բացահայտ, հետեւողական, անզիջում, դաժան։ Հետեւաբար, մենք կստանայինք ինչ-որ ավելի վատթարը, քան ունեցել էինք։ Բայց, դե, տանկերն Ալմա-Աթայի, Թբիլիսիի, Երեւանի, Բաքվի, Վիլնյուսի քաղաքային փողոցներում հայտնվել էին առանց որեւէ «պուտչի»։ Եւ մոսկովյան փողոցներն էլ նրանք մտցվել էին ոչ առաջին անգամ. օգոստոսի 19-ից առաջ եղել է մարտի 28-ը։ Եւ Կենտրոնական հեռուստատեսության ոճն էլ «պուտչի» օրերին, ճշմարիտն ասած, ոչնչով չէր տարբերվում նրանից, որ գորբաչովյան Կրավչենկոն էր մտցրել դրանից առաջ։ Օգոստոսին պարզապես լոկ բացվել, իր սուր հոտն է արձակել վաղուց հասունացած ճահճային ծաղիկը» («ЛГ», 1991, հոկտ. 16)։

Խելոք, արդար խոսքեր։

Բայց մենք՝ հայերս կծավալեինք, առավել հիմնավոր ու տարօրինակ կդարձնեինք այս խոսքերը, սրանց ընդգրկած ճշմարտությունը։ Հիշո՞ւմ եք, «Փորոսից» վերադառնալուց հետո Գորբաչովն ու իր կինն ի՜նչ նահատակների կերպարանք էին առել, ինչպե՜ս էին ներկայացնում երեք օրվա հեռախոսային (միայն հեռախոսային) շրջափակման ողբերգությունը։ Իսկ Հայաստանում ու Արցախում մի ամբողջ ժողովուրդ չորրորդ տարին է շրջափակված, չորրորդ տարին է ենթակա զրկանքների, զոհաբերությունների ու նահատակությունների։ Եւ դա էլ իր՝ այդ նորօրյա «նահատակի» ամենօրյա իմացությամբ, նրա ծրագրով ու հրահանգով։

Երբ վերադարձել էր «Փորոսից» եւ ճաք ու պատառ էր լինում շրջափակման-մեկուսացման ազդեցությունից, ես մտածում էի, թե, ահա՛, մարդ կամ կմարդանա, կհասկանա, վերջապես կզգա եւ մեր ազգի վիճակը, սիրտը կշարժվի, կդառնա գոնե մի փոքր կարեկից... Եւ գոնե կկարգադրի վերացնել այդ ահավոր շրջափակումը։ Բայց ո՛չ, պարզվում է, մենք ավելի լավ կարծիքի ենք եղել նրա մասին, քան նա կար, եղել էր իրականում։

Իսկ այդ ողորմելի խռովարարները կամ «հեղաշրջման» հեղինակները երբ թղթակիցներին ու դիվանագետներին հավաքել, բացատրում էին, թե ո՛րն է իրենց նպատակը եւ ո՛ւր են տանելու երկիրը, չէր կարելի չտեսնել, թե ինչ անուղեղ տիպեր են, ոչ միայն ղեկավարի արժանավորություններից, այլեւ սովորական մարդկային բարեկրթությունից, նույնիսկ արտաքին բարեմասնություններից զուրկ, արժանի միայն արհամարհանքի։ Եւ հենց դրան էլ արժանացան։ Դահլիճն ինչպե՜ս էր հռհռում նրանց հիմարավուն պատասխանների վրա, տալիս էր հարցեր, որոնց մեջ բացահայտ արհամարհանք էր ու հեգնանք։ «Ձեր այս գործն սկսելուց առաջ զանգ չե՞ք տվել Պինոչետին, չե՞ք խնդրել, որ ձեզ հաղորդի իր փորձը»,-սա հայտնի լրագրող-միջազգայնագետ Բովինի հարցն էր, որ դահլիճում պայթեց իբրեւ հրթիռ, եւ հեղաշրջողներն իրենց աթոռների վրա ավելի կուչ եկան, սակվեցին։

Հայտնի է, որ այս խեղկատակների ե՛ւ թունդ գործունեության օրերին, ե՛ւ թակարդ ընկնելուց հետո ԳԽ-ի նստաշրջաններում ու զանազան առիթներով բազմաթիվ անգամներ Գորբաչովին կշտամբել են նման կադրեր ջոկելու եւ համառորեն առաջ տալու համար։ Նույնիսկ իր մերձավորներն են խոսել, Ա. Վոլսկին, Միլաեւը, Շեւարդնաձեն... Իսկ մեր Հենրիկ Իգիթյանն ասում էր՝ նրանց մռութներին էր գրված, թե ի՛նչ տեսակ անուղեղ, անխիղճ ու անպատասխանատու արարածներ են։ Դու ի՞նքդ չէիր տեսնում։ Թե՞ տեսնում էիր, եւ քեզ հենց այդպիսինե՞րն էին ձեռնտու։



Վերը մեր վկայակոչած Բատկինն ասում է՝ երկու տարի առաջ Գորբաչովն իր համար արտակարգ ու անսովոր լիազորություններ պահանջեց եւ ստացավ։ Այն ե՞րբ էր, որ օգտագործեց այդ լիազորությունները, երբ երկիրը քանդվում էր անօրինություններից ու բացահայտ հանցագործություններից եւ այդ բոլորի տերերն էլ իր շրջապատի մարդիկ էին, իր կադրերը, նույն համառությամբ վերին գահերին իր բազմեցրած անարժանները։ Բայց լավ է խոսքը տանք իրեն՝ Բատկինին։ «Գորբաչովը երբեք լրիվ որշակիությամբ չդատապարտեց իր չինովնիկների ու սպաների գործողությունները, չհեռացրեց Պուգոյին ու Կրյուչկովին, թեկուզ եւ սարսափելի Պոլյանիչկոյին եւ չկարգադրեց դատի տալ այդ մարդասպաններից որեւէ մեկին, երբե՛ք, ո՛չ Սումգայիթում, ո՛չ Թբիլիսիում, ո՛չ Վիլնյուսում, ոչ...» (անդ)։

Եւ այսքանից հետո էլ ԽՍՀՄ ԳԽ-ի նստաշրջանում ելույթ ունենալով՝ մեր Հենրիկ Իգիթյանը դատապարտեց խռովության կազմակերպիչներին, որոնք չունեին ոչ մի մարդկային արժանիք, նույնիսկ տանելի մռութներ։ Նրանց մեղադրեց դավաճանության մեջ, որը մարդկային կերպարի դատապարտելի արարքներից ամենաքստմնելին է։ Ապա իրեն՝ Միխայիլ Գորբաչովի՛ն, որի աներես երեսին շպպացրեց. «մարդկային բոլոր թերություններից ամենավատը դավաճանությունն է։ Այո՛, Միխայիլ Սերգեեւիչ, Ձեզ դավաճանեցին մի բուռ սրիկաներ։ Իսկ քանի՞ մարդու եք դավաճանել դուք։ Դուք դավաճանեցիք շքանշանակիր ճակատայիններին, Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամներին, որոնց Լեռնային Ղարաբաղում երեխաների ու թոռների աչքերի առաջ դագանակներով ծեծում էին փառապանծ խորհրդային բանակի զինվորները, հիմար պատանյակներ, որոնց ղեկավարում էր Ձեր էմիսար կոմունիստ Պոլյանիչկոն, որը Աֆղանստանում հսկայական փորձ է ձեռք բերել, ինչը նրան օգնեց կրակ թափել խաղաղ գյուղերի վրա, այս անգամ արդեն՝ սեփական երկրում, ուր «Այնքա՜ն ազատ էր շնչում, մարդը»։ Դուք դավաճանեցիք հայ երեխաներին, լիտվական, թուրք-մեսխեթական, մոլդավական, տաջիկական, վրացական, ադրբեջանական, օսեթական, աբխազական, ուզբեկական, կիրգիզական, հրեական, ռուսական երեխաներին, որոնք որբ մնացին, դարձան փախստականներ երկրում, հավերժական թափառականներ։ Դուք դավաճանեցիք ամբողջ ժողովուրդների, որոնք միամտաբար ցույցի էին գնում ձեր դիմանկարներով...»։

Երբ Իգիթյանն ասում էր այս անասելի, այն բարձր ամբիոնից, այն վիթխարի դահլիճում դեռեւս չասված-չլսված խոսքը, որ հնչում էր որպես դատավճիռ, եւ տեսնում-ունկնդրում էր ամբողջ Խորհրդային երկիրը, ես մտածում էի, թե մեր ազգի սրտի խոսքն է դա, նրա տալիք պատասխանն այդ սադիստ չարագործին։ Դահլիճը քարացած լսում էր։ Չէր կարելի չտեսնել բավականությունից շողացող հազարավոր դեմքերը։ Իսկ ի՜նքը... Կուչ եկած, դեմքն ավելի կլորացրած՝ լսում էր, ինչպես այն անհամար հաճոյախոսությունները, քծնալից, լորձնաշուրթ խոստովանանքները, որոնցից միայն նողկանք կարող է զգալ բարոյական նորմեր դավանող մարդը... Եւ ո՛չ մի արդյունք, ո՛չ մի պատասխան։ Ասես իր երեսին չթքեցին արար աշխարհի առաջ։

Գերագույն խորհրդի բարձրագույն ամբիոնից Իգիթյանը Գորբաչովին հայտարարեց բոզ, մի բնութագրություն, որը շատ էր վայելում նրան, ուստի եւ դահլիճն ընդունեց գոհունակությամբ։

✧ ✧ ✧

**Օգոստոսի 23-ին** ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանը հեռագիր հղեց ԽՍՀՄ ԳԽ-ին ու ՌԽՍՖՀ ԳԽ-ին՝ պատմելով, որ խռովության ամենաթեժ պահին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի քարտուղար ու Ղարաբաղի, այսպես կոչված, կազմկոմիտեի ղեկավար Վ. Պոլյանիչկոն ռադիոյով ելույթ է ունեցել, ողջունել հեղաշրջումը, երկ-

կան, ընկերային եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի, քաղաքացիական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի սկզբունքներին,

- հույս դնելով միջազգային ընկերակցության ըմբռնումի ու պաշտպանության վրա,

Հռչակում ենք ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ներկայիս Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզի եւ իր սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում, կրճատ՝ ԼՂՀ:

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունն օգտվում է ԽՍՀՄ Սահմանադրությամբ եւ օրենքներով հանրապետություններին տրված լիազորություններից եւ իրեն իրավունք է վերապահում երկրի ու հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական խորհրդակցությունների եւ բանակցությունների հիման վրա ինքնուրույնաբար որոշել իր պետական-իրավական կարգավիճակը:

Լեռնային Ղարաբաղի հանրապետության տարածքում, մինչեւ ԼՂՀ Սահմանադրության եւ օրենքների ընդունումը, գործում են ԽՍՀՄ Սահմանադրությունն ու օրենսդրությունը, ինչպես նաեւ ներկայումս գործող մյուս օրենքները, որոնք չեն հակասում սույն Հռչակագրի նպատակներին, սկզբունքներին եւ Հանրապետության առանձնահատկություններին:

*Ք. Ստեփանակերտ, 1991 թ. սեպտեմբերի 2»:*

Տեղի ունեցավ նաեւ ԼՂԻՄ-ի մարզխորհրդի արտահերթ նիստը: Այն մարզխորհրդի գործկոմի նախագահ ընտրեց Լեոնարդ Պետրոսյանին, որը մինչ այդ աշխատում էր որպես մարզգործկոմի նախագահի պաշտոնակատար:

◇◇◇

Համայն հայությունը խանդավառությամբ ընդունեց մեր ազգային երկրորդ վարչաքաղաքական միավորի ծնունդը փոթորկի մեջ, ծանր երկունքից հետո: Մարզի ղեկավարները, աշխատավորության լիազոր ներկայացուցիչները կատարել էին տվյալ պահի համար ամենախելոք ու միակ ճիշտ քայլը. մարզը ձեռք էր բերում իր պետական ինքնուրույնությունը եւ լիակատար իրավունք պետք է ունենար պաշտպանելու իր ազատությունն ու անկախությունը: Չմոռանանք, որ այս կարեւորագույն վճիռը կատարվել էր այն ժամանակ, երբ ՀՀ ղեկավար շրջաններում դիրք ու որոշիչ ձայն ունեցողներից շատերը (Կ. Սարդարյան, Ա. Բլեյան, Է. Եգորյան եւ ուրիշներ, մանավանդ հասարակության մեջ կշիռ ու ձայն ունեցող մի շարք ուրիշ մտավորականներ) մթնոլորտը լցրել էին Արցախից ձեռք քաշելու, այն Ադրբեջանին նվիրաբերելու աղմկոտ կոչերով... Իսկ երեք ու կես տարվա իրականությունը ցույց էր տվել, որ Ադրբեջանում հայերին միայն սպանում են:

ԼՂՀ ստեղծման լուրը Մոսկվա Լեւոն Տեր-Պետրոսյանին էր հասել այն ժամանակ, երբ նա, ներկա գտնվելով ԽՍՀՄ ժող. պատգամավորների հինգերորդ արտահերթ համագումարին, ստորագրել էր, այսպես կոչված, «11-ի հայտարարությունը», որով պիտի ստեղծվեր անկախացած հանրապետությունների համադաշնակցություն: Նրան հարց էին տվել, թե ի՞նչ է եղել ու ի՞նչ է լինելու Լեռնային Ղարաբաղի հետ, եւ նա մի ուշացած ճշմարիտ խոսք է ասել. Խորհրդային Միությունը եւ նրա բանակը երբեք չեն եղել իսկական երաշխավորի դերում» (արցախահայության գոյապահպանության համար.-Բ.Ու.): Եւ դրա պատճառն էլ այսպես է բացատրել. «ԽՍՀՄ-ը չէր էլ կարող այդ դերում լինել, քանզի Ադրբեջանը նրա հավատարիմ դաշնակիցն էր» («Դրոշակ», 1992, N23, էջ 30): Ուրեմն այսքանն իմանալով է, որ տարեսկզբից ինքը Հայաստանը հանել էր ԽՍՀՄ դաշնակցի դերից եւ ամեն կերպ գրգռում էր նրան այդ հզոր դաշնակցի դեմ:

Ինչ մնում էր ընդունված որոշմանը, դրա մասին էլ ասել է.

«Այդ փաստաթուղթը իրական տեսակետից դժվար թե որեւէ բան փոխի, որովհետեւ երեք ու կես տարվա ընթացքում նման որոշումներ շատ են եղել: Սակայն երեկվա ղարաբաղյան նախաձեռնությունն ունի հստակ քաղաքական նշանակություն՝ Խորհրդային Միության հսկայական խնդիրների շարքում Արցախի հարցը նորից դառնում է այժմեական: Միտում կա ԼՂԻՄ-ի հարցում որեւէ, թեկուզ ժամանակավոր, լուծում գտնել, որն ընդունելի է բոլոր կողմերի համար: Չմոռանանք, որ հետաքրքիր նախաձեռնությամբ հանդես են եկել Ելցինը եւ Նազարբաեւը: Ի դեպ, կարծում եմ, Գորբաչովն էլ տրամադիր է վերացնել այն անբնական վիճակը, երբ Սահմանադրությունը կոպտորեն ոտնահարվում է Ղարաբաղում, իսկ երկիրը տոնում է ժողովրդավարության հաղթանակը:

Ես վստահ եմ, որ ապագայում Արցախում կվերականգնվի սահմանադրական կարգը: Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները, կարելի է ասել, որ ղարաբաղցիների վերջին քաղաքական որոշումը ունի դրական նշանակություն»: Իրական տեսակետից դժվար թե որեւէ բան փոխի», բայց եւ «ունի դրական նշանակություն»: Սրանք ո՞նց են կապվում իրար հետ, կարելի՞ է բացատրել:

**Սեպտեմբերի 3-ին** Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահությունն ընդունեց որոշում, որով Արցախում նախորդ օրը տեղի ունեցածը որակեց դավադրություն Ադրբեջանի ամբողջականության ու անկախության դեմ եւ «հանրապետության ՊԱԿ-ին, ՆԳ նախարարությանը եւ դատախազությանը կարգադրեց խափանել հռչակագրի իրականացման ցանկացած փորձ, իսկ հանրապետության գլխավոր դատախազին՝ պատասխանատվության կանչել դրա հեղինակներին»:

Հանրապետության Կազմկոմիտեին հանձնարարվում էր ԼՂԻՄ-ում իրավիճակը կայունացնելու եւ երկխոսությունը խորացնելու ուղղությամբ լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկել, արագացնել բնակչության զինաթափումը:

Որոշման վերջում Ադրբեջանի ԳԽ-ի Նախագահությունը ողջախոհության, միասնականության եւ լրջության կոչ էր անում ադրբեջանական ժողովրդին:

◇◇◇

Սեպտեմբերին Արցախի կյանքում տեղի ունեցած կարեւոր մեկ իրողությունն էլ Ժելեզնովոդսկյան միջպետական հայտարարությունն էր, որին պիտի հետեւեին հակամարտության կարգավորման լուրջ միջոցառումներ (Լ.Տեր-Պետրոսյանը մի առիթով հայտարարել էր, թե ապրիլ-մայիսյան տխրահուշ դեպքերից հետո ինքն է, որ մտածել է, թե Արցախի հարցի լուծման համար լավ կլինի մի երրորդ չեզոք կողմ գտնել, այդ նպատակով համապատասխան առաջարկ է արել Բորիս Ելցինին, որն էլ, բարեբախտաբար, «դրականորեն է ընդունել առաջարկը», եւ, ահա՛, հանդես գալով Ղազախստանի ղեկավարի հետ, Ելցինը դարձել է միջնորդ՝ Արցախի հարցը քննելու եւ փուլ առ փուլ կարգավորելու համար («Դրոշակ», 1991, N23, էջ 33):

**Ամսի 23-ին** ռուսաստանի պրեզիդենտ Բորիս Ելցինն ու Ղազախստանի պրեզիդենտ Նուրսուլթան Նազարբաեւը՝ իրենց պատվիրակությունների եւ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների հետ միասին, ղարաբաղյան հակամարտությունը կարգավորելու նպատակով, եղան Բաքվում, Գանձակում, Ստեփանակերտում ու Երեւանում, ապա Հյուսիսային Կովկասի Ժելեզնովոդսկ առողջարանային քաղաքում բանակցություններ վարեցին, վերջում էլ հրապարակեցին մի կոմյունիկե, որ հետեւյալն է.

«Չորրորդ տարին է, չի հանդարտվում տարբեր ազգությունների բազմաթիվ մարդկանց կյանքը խլած սուր բախումը Լեռնային Ղարաբաղի շրջանում: Զոհվում են խաղաղ քաղաքացիներ, զոհվում են բանակի եւ ներքին գործերի զինծառայողները: ԽՍՀՄ կենտրոնական մարմիններն անընդունակ գտնվեցին շրջանում իրավիճակը նորմալացնելու արդյունավետ միջոցառումներ մշակելու եւ իրականացնելու գործում: Թույլ են տրվել կոպիտ սխալներ, որոնք իրենց ետեւից բերեցին բախվող կողմերի հակամարտություն եւ անվստահության աճ միութենական մարմինների նկատմամբ:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտություն առաջացավ միջնորդական ջանքերի, որոնց նպատակն է՝ պայմաններ ստեղծել շրջանում իրավիճակը նորմալացնելու հիմքերը

ընդգրկած նոր խառնակչությունը, որ փոթորկվել է եւ գնում է դեպի իր անկանխատեսելի ու անսահմանելի բռնկումները: «Ես կարծում եմ, որ այսպիսի դեպքերում յուրաքանչյուր մեկը, իսկ թղթակից-լրագրողը հատկապես, պետք է հասկանա իր խոսքի արժեքը եւ պատասխանատու լինի հրապարակած յուրաքանչյուր բառի համար,-հայտարարեց Ստարովոյտովան:-Պատասխանատվության այդ զգացո՛ւմը միայն լրագրողին ետ կպահի ստահոդ լուրեր տարածելուց, ժողովրդի հետամնաց խավերին թունավորելով ահավոր քայլերի մղելուց»:

Ստարովոյտովան ուշադրություն հրավիրեց մի կարեւոր հանգամանքի վրա. դեպքին անմիջապես հաջորդած ժամերին հաղորդվել է, թե ուղղաթիռից ստացված վերջին խոսքն այն մասին է եղել, որ թանձր մառախուղ է, անձնակազմը ոչինչ չի տեսնում: Իսկ այսօր ադրբեջանական լրատվության նախաձեռնությամբ տարածված է այն կարծիքը, թե ուղղաթիռը գնդակոծվել է հայ գրոհայինների կողմից: «Ես հենց նոր հեռախոսազրույց ունեցա հետաքննող հանձնաժողովի նախագահի հետ,-հայտնեց նա,-եւ իմացա, որ ուղղաթիռն Աղդամի թռիչքադաշտից դուրս եկած է եղել աղետից ուղիղ երկու ժամ առաջ ու Լեռնային Ղարաբաղի տարածքում գտնվել է ընդամենը մի քանի վայրկյան: Ի՞նչ է կատարվել այդ երկու ժամվա ընթացքում, երբ Աղդամից մինչեւ Մարտունի թռիչքը պետք է տեւեր ընդամենը մի քանի րոպե (ավտոճանապարհի երկարությունն է 25 կմ.-Բ.Ու.):

Դեպուտատ Ստարովոյտովան բավական երկար կանգ առավ այս եւ համանման ուրիշ հարցերի վրա՝ իր ունկնդիրներին համոզելով, որ անհեթեթություն է աղետի մեջ հայ գրոհայիններին խառնելը, եւ ադրբեջանական շրջանները բավականաչափ տրամաբանական կվարվեին, եթե բացատրեին, թե ուրիշ է՛լ ինչ նպատակներ պիտի իրականացնեն Հայաստանի դեմ, երբ նրան զրկել են գազից, հաղորդակցության ճանապարհներից եւ համառորեն հրաժարվում են Ժելեզնովոդսկի հայտնի հուշագրի պահանջները կատարելուց:

Հաջորդ օրվա երեկոյան էլ համամիութենական հեռուստատեսությամբ ելույթ ունեցավ Ադրբեջանի ժող. դեպուտատ Ռաֆիկ Հուսեյնովը եւ, իր մաղձը թափելով Ստարովոյտովայի վրա, պահանջեց պարզել, թե նա ո՛ւմ անունից էր խոսում եւ ո՛ւմ կարծիքն էր արտահայտում, իր սեփակա՞նը, թե՞ Ռուսաստանի կառավարության: Եւ այս, իր կարծիքով, երեւի ոչնչացնող, հարցադրումից հետո էլ զարմանք արտահայտեց այն առթիվ, որ Լեռնային Ղարաբաղի իրադրությունների կապակցությամբ Կենտրոնն ու Հայաստանը զանազան միջնորդություններ են ձեռնարկում: Չէ՞ որ այդ ամենը մեկ անուն ունեն՝ միջազգային օրենքներով դատապարտելի միջամտություն անկախ ու ինքնիշխան Ադրբեջանի ներքին գործերին:

Այդ օրերին աշխարհի բոլոր ռադիոկայանների լրատվական ծրագրերում կարեւոր տեղ էր բռնում Արցախում կործանված ռազմական ուղղաթիռին վերաբերող լուրը: Նոյեմբերի 23-ին «Ազատությունը» հայտնեց, որ իր թղթակցի հետ ունեցած զրույցում հետաքննությամբ զբաղվող հանձնաժողովի նախագահը հայտնել է, թե աղետի պատճառների վերաբերյալ առկա են, ոչ ավել-ոչ պակաս, հիսուն վարկածներ, եւ առայժմ վաղ է նրանցից որեւէ մեկին նախապատվություն տալը: Իսկ ուրիշ ռադիոձայներն էլ վերին աստիճանի համոզիչ էին համարում Նախիջեւանի պրեզիդենտ Ալիեւի պաշտոնական հայտարարությունն այն մասին, որ աղետը կազմակերպվել է Մութալիբովի կարգադրությամբ. այդ նա է ընդառաջել Ադրբեջանի կատաղի ազգայնամոլների պահանջին եւ իր պրեզիդենտական աթոռն աներեր պահելու համար իրականացրել բացահայտ հակահայկական ու հակառուսական գործողությունը, որին էլ անպայման հետեւելու է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի դեմ ծրագրված վայրագությունների նոր մի ալիք: Իսկ ինքը՝ Հ. Ալիեւը, ահա՛, գործնական ծրագրեր ունի Հայաստանի կառավարության ու եղբայրական ժողովրդի հետ բարի-դրացիական հարաբերությունները վերականգնելու կապակցությամբ եւ, իբրեւ առաջին որոշակի քայլ, կատարում է պատանդների փոխանակություն:

Իսկապես, **նոյեմբերի 22-ին թե 23-ին հայտնի դարձավ, որ ազատ են արձակվել**



նախընթացին Նախիջեւանում պատանդ վերցված 14 հայ ուղեւորները:

**Նոյեմբերի 26-ին** էլ իրականացավ Ալիեւի կանխատեսած հակաարցախյան վայրագությունների նոր ալիքը. անկախ ու ինքնիշխան Ադրբեջանի ԳԽ-ի նստաշրջանը որոշեց վերացնել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ վարչաքաղաքական միավորը եւ մարզի մայրաքաղաք Ստեփանակերտի անունը:

Մութալիբովն ու իր Գերագույն խորհուրդը երեւի շատ խնամքով էին նախապատրաստել այս նախաձեռնությունը, որպեսզի, իբր, ամենայն իրավունք ունենան միայն աղետներ ու ազգամիջյան հարաբերությունների մշտաբորբոք լարում ստեղծող մարզը վերացնել իրենց վայել դաժանությամբ եւ հայտարարեն՝ մարզ չկա, նրա հարցն էլ չքացել է: Չէ՞ որ ցեղակից ու հավատակից թուրքերն այդպես վարվեցին Արեւմտահայաստանի հետ. այնտեղ այլեւս հայեր չկան, ուրեմն՝ չկան նաեւ Հայաստան ու հայկական հարց:

Մութալիբովին այս հակաօրինական, հիմար որոշումն ընդունելիս չէր կարող ոգեշնչած չլինել նախորդ համանման մի քայլը, որը փաստորեն ընդունելության էր արժանացել պրեզիդենտ Գորբաչովի կողմից, ուրեմն՝ խրախուսվել էին Մութալիբովի որոշմամբ Շահումյանի շրջանի վարչական միավորի վերացումն ու նրա հայկական գյուղերը հարեւան Գերանբոյի շրջանին հանձնելը: Դրան հետեւած իրադարձությունների կապակցությամբ Գորբաչովը հայտարարություն արեց՝ Շահումյանի շրջանի փոխարեն գործածելով Գերանբոյի շրջան:

Մութալիբովին չէր կարող ոգեւորած ու նոր, ավելի մեծ վայրագության մղած չլինել այս վերաբերմունքը: Ահա արդյունքը՝ «վերացված է» նաեւ չորս տարի շարունակ բովանդակ երկիրը գլխացավանքի մեջ պահած ինքնավար ու ինքնագլուխ մարզը...

Իսկ մարզի տե՞րը: Նրանք ուղիղ գծով դիտում էին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանը, որ ավելի շատ շախսեյ-վախսեյի էր նման, թեպետ հանած խելագար վճիռը վերաբերում էր Ղարաբաղի ինքնավար մարզին ու նրա մայրաքաղաքի անվանը: Նույն օրը եւեթ գումարվեց Արցախի հանրապետության ժողովրդական դեպուտատների խորհրդի նստաշրջան: Մութալիբովյան որոշումը հայտարարվեց մեծապետական ոտնձգություն ինքնավար վարչական միավորի հանդեպ: Այն, ամենից առաջ, ուղղված է Ժելեզնովոդսկի համաձայնագրի եւ նրա նախաձեռնող Ռուսաստանի ու Ղազախստանի կառավարությունների հեղինակության դեմ:

«Նստաշրջանը որոշեց 1991 թվականի դեկտեմբերին հանրաքվե անցկացնել Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում, որը պետք է դրսեւորի բնիկ բնակչության կամքը Լեռնային Ղարաբաղի ապագայի վերաբերյալ: Ընդունվեց ժամանակավոր կանոնադրություն Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի ընտրությունների մասին: Իր տարածքից ԽՍՀՄ ներքգործնախարարության զորքերը դուրս բերելու Ադրբեջանի խորհրդարանի պահանջի կապակցությամբ նստաշրջանը հայտարարեց, որ պատրաստ է այդ զորքերի մի մասը տեղաբաշխել Լեռնային Ղարաբաղում: Լեռնային Ղարաբաղի հանրապետության գործկոմին հանձնարարվեց 3-օրյա ժամկետում կազմել ԼՂՀ սահմանադրության եւ օրենքների մշակման աշխատանքային խումբ: Այսուհետեւ, նստաշրջանի որոշումների համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետության տարածքում, մինչեւ սահմանադրության ընդունումը կգործեն միայն ԽՍՀՄ օրենքները» («ՀՀ», 1991, նոյ. 28):

Նստաշրջանն ուժերից վեր ծանրությո՞ւն էր առնում իր ուսերին: Բայց չէ՞ որ այն իր օրինական, սահմանադրական իրավունքն էր պաշտպանում: Իսկ այս՝ շուրջ չորս տարիների ընթացքում, ի՛նչ-ի՛նչ, նա ողջ աշխարհին է ցույց տվել, թե ինքն ինչպես գիտե եւ կարողանում է պաշտպանվել ու պաշտպանել:

**Նոյեմբերի 26-ին** «Վրեմյան» հայտնեց, որ Բաքվում ադրբեջանցիները հարձակվել են խորհրդային զորամիավորումներից մեկի վրա՝ զենք ու զինամթերք հափշտակելու նպատակով (երեւի Ղարաբաղ պատժարշավի ուղարկելիք ավազակախմբերին պիտի պարտ ու պատշաճ զենք տրամադրեին): Զորամիավորումը դիմել է պատասխան գործողության, որի շնորհիվ էլ սպանվել են չորս ադրբեջանցիներ, եւ կան վիրավորներ:

Հակահայկական հիստերիան աննախադեպ ձեւեր էր ընդունել Բաքվում եւ հանրապետության շրջաններում: Բազմահազարանոց հանրահավաքներ ու ցույցեր էին անում՝ իրենց կառավարությունից պահանջելով հարձակվել-ոչնչացնել Արցախը եւ պատերազմ սկսել Հայաստանի դեմ: Այս պահանջը Բաքվում ամեն օր տեղի ունեցող մի քանի հարյուրհազարանոց միտինգների համարյա էական մասն էր կազմում իր ամբողջ կտրականությամբ. Մութալիբովն ու իր Գերագույն խորհուրդը կա՛մ պատերազմ պիտի սկսեն, կա՛մ հրաժարական տան...

Պատերազմ, որ Մութալիբովը վաղուց արդեն սկսել էր՝ փակելով Հայաստան եկող գազամուղը, երկաթուղային ու ավտո-ճանապարհները: Պատերազմ, որի մեջ, իբր, դեռեւս չգտնվող Հայաստանը կաթվածահար էր եղել. կտրված էր արտաքին աշխարհից, ոչինչ չէր ստանում, ոչինչ դուրս չէր առաքում: Գազից ու էներգիայի այլեւայլ տեսակներից զրկված արդյունաբերությունը շնչահեղձ էր լինում... Հայաստանի խստաշունչ ձմեռն ընդունող ժողովուրդը, մանավանդ Երեւանի մեկուկես միլիոնանոց բնակչությունը, ցրտից ու զանազան կարիքների դառը գիտակցությունից ատամները սեղմած սպասում էր նոր աղետների:

Անհնար էր մտածել, թե ստեղծված դրության եւ մանավանդ սպասելիքի ահավորությունը չէին հասկանում այն մարդիկ, որոնք տերն էին դրության, որոնք պարտավոր էին հասկանալ եւ փրկության ելք գտնել: Հանրապետության ղեկավարները, նրանցից յուրաքանչյուրն իրեն հանձնարարված բնագավառում, այդ ելքն էին փնտրում՝ ասես պատեպատ զարկվելով: Իսկ պրեզիդենտը, ամերիկյան՝ առավելապես դիվանագիտական-ցուցադրական ուղեւորությունից հետո, սթափ գնահատելով հայրենիքին պարտադրված աղետավոր վիճակը, անսաց բանականության ձայնին եւ նվիրվեց վտանգը կանխելու գործին:

✧ ✧ ✧

Հիմա դառնանք այն հարցին, թե ուղղաթիռի կործանումը որքանո՛վ կապ ունի հայ ազատամարտիկների գործունեության հետ, եւ ինչպես ադրբեջանական կողմը հրահրել է ստոր մի սադրանք՝ հեռու տրամաբանությունից, առավել եւս իրականությունից:

Իհարկե, հնարավոր է, որ իր հեռավոր Մոսկվայում նստած մի պաշտոնյա մտածի, թե, իրո՛ք, հայ գրոհայինները գնդակոծել են Աղդամից եկող ռազմական ուղղաթիռը: Գրոհել են ու կործանել: Ո՛վ-ո՛վ, մոսկվացի պաշտոնյան լավ գիտի, որ մինչեւ այսօր խորհրդային ռազմական ինքնաթիռները Ղարաբաղում լոկ հակահայկական գործողությունների են մասնակցել: Իսկ Աղդամից Ղարաբաղ կատարված թռիչքն էլ միայն աղետավոր պիտի լիներ, հատկապես եթե այդ ուղղաթիռի մեջ էր նաեւ չարահամբավ Ասադովը, որը դեռեւս 1988 թ. փետրվարին Ստեփանակերտում, նախ մարզի կուսակցական ակտիվի ժողովում, ապա մարզխորհրդի հայտնի նստաշրջանին հավաքված դեպուտատների առաջ խոստացել էր 100 հազար սպառազեն մուսուլմանների հարձակումն անհնազանդ Ղարաբաղի վրա եւ հետո էլ պաշտոնապես ավելի քան երեք տարի իր խոստումն էր կատարում:

Պիտի այսպես մտածեր եւ կատարեր համապատասխան վճիռ: Սակայն տեղանքը տեսած, շատից-քչից ռազմական գործ հասկացող մի մարդ չէր կարող մտածել, թե հայ գրոհայինները հենց Բերդաշեն-Կարաքենդի կողքի բաց տարածությունն են ընտրել ռազմական ուղղաթիռի հետ իրենց հաշիվը մաքրելու համար: Այնտեղ անտառ չկա: Մի թուփ էլ չկա, որտեղ գործողությունն իրականացնողը քողարկվի, թաքստոցից կատարի իր մարտական գործը: Իսկ այդ գործը լինելու էր ռազմական ուղղաթիռի հետ, որն օդից տեսնում է վարի բաց տարածության ամեն թիզը եւ կարող է գնդացրային ու ավտոմատային կրակահերթերով բնաջնջել այնտեղ հայտնված ամեն տեսակ թիրախ:

Այսքանը՝ առաջին հերթին, բայց եւ ընդհանրապես: Այսինքն, եթե նկատի էլ չառնենք, որ նախնական հաղորդման մեջ վթարի միակ պատճառ է համարվել մառախու-



ղը, մեքենավարների վերջին խոսքը («Մառախուղ է, մութ, ոչինչ չենք տեսնում»): Այս պատճառաբանությունն անառարկելի ճանաչելու համար հիշվում էր նաեւ Մարտունու օդակայանի հրաժարվելն ուղղաթիռն ընդունելուց («Մառախուղ է, չենք կարող ընդունել»):

Այս բոլորը հաղորդվել են պաշտոնական մարմինների կողմից: Աղբյուր են եղել պաշտոնյաներ, որոնք պատասխանատու պիտի լինեն իրենց յուրաքանչյուր խոսքի ու նրա ամեն մի մանրամասնի համար: Եւ նման պարագայում ինչպե՞ս է լինում, որ մեկ էլ հանկարծ ադրբեջանական մարմինների կողմից ի չիք են դարձվում նախորդ օրը հրապարակված այսքան ակնառու մանրամասները՝ հալած յուղի տեղ անցկացնելու համար մի նոր վարկած, որը սուտ է՝ ըստ առաջարկվող հանգամանքների եւ միանգամայն անհավանական ու անհնար՝ ինչպես քիչ հետո կտեսնենք, ըստ էության:

21-ի հեռուստահաղորդման ժամանակ ցույց էին տվել ուղղաթիռի բեկորների վրա ինչ-որ անցքեր՝ իբր հայ գրոհայինների արձակած գնդակների հետքերը: Ասել էին՝ ադրբեջանական պաշտոնական հետաքննողներն են հայտնաբերել նույն 21-ին, տեղ հասնելուն պես: Բայց ինչո՞ւ 21-ին, մի ամբողջ օր հետո: Աղետի վայրը հանրապետության ավտոմայրուղուց հեռու է 1-2 կմ: Մի՞թե աղետի ենթարկված ուղղաթիռի ուղեւորներն Ադրբեջանի պաշտոնեության համար չունեին այն արժեքը, որ հետաքննողներին ստիպեին աղետից անմիջապես հետո (ժ. 16 անց կես) տեղ հասնել, արձանագրել կատարվածը, տալ ստույգ եզրակացություններ: Թե՞ մեկ ամբողջ օր էր հարկավոր, որպեսզի շահագրգռված մարդիկ, իսկ իրականում՝ ադրբեջանական շառլատանները, ժամանակ ու հնարավորություն ստանային ուղղաթիռի բեկորները մշակել ըստ պատկերի եւ նպատակի յուրյանց:

Արդեն մամուլից հայտնի է, որ աղետի օրն Աղդամում է գտնվել չարահամբավ Վիկտոր Պոլյանիչկոն («ՀՀ», նոյ. 23): Ինչի՞ համար, ի՞նչ լիազորությամբ: Աֆղանստանում, իսկ վերջին ժամանակներին էլ Արցախում իրականացրած խարդավանալից գործողությունների նրա փո՞րձն էր անհրաժեշտ եղել Աղդամում տեղակայված օմօնին:

Ինչեւէ: Սրանք որքան էլ զորավոր ապացույցներ ադրբեջանական վարկածի անհեթեթությունը հաստատելու եւ հանցանքի սլաքն իրենց կողմն ուղղելու համար, սակայն հետաքննող անշահախնդիր պաշտոնյաները մի՞թե պիտի մոռացության տան ամենակարեւորը. հայ գրոհայինները որեւէ շահ ունեի՞ն ուղղաթիռի կործանումից: Ասադովի, թերեւս նաեւ գլխավոր դատախազ Գայիբովի մահը: Բայց չէ՞ որ նրանց հետ էին Արցախի արտակարգ դրության պարետ գեներալ-մայոր Ժինկինը, գեներալ-մայոր Կովալյովը, Ժելեզնովոդսկի հռչակագիրն իրականացնող ռուս եւ ղազախ պաշտոնյաները: 22-ին ես զանգել էի Ստեփանակերտ, հարազատներիս հետ էի խոսում, ասացին՝ ամբողջ մարզն է սգում Ժինկինի՝ այդ արդար ու բարեկիրթ զորականի մահը:

Բայց կա այսքանից առավել կարեւորը. ռուս եւ ղազախ գործիչների դեմ կատարված չարագործությունն ակնհայտորեն հարցականի տակ պիտի դներ Ժելեզնովոդսկի հռչակագրի կենսագործման հնարավորությունը: Սա արդեն կարիք չունի ոչ մի մեկնաբանության: Իսկ ո՞վ է դժգոհ Ժելեզնովոդսկի բանակցություններից, հռչակագրից եւ առհասարակ հայ-ադրբեջանական կնճիռն ու Արցախի խնդիրը լուծելու համար գործադրվող ջանքերից: Չէ՞ որ հենց ադրբեջանական կողմն էր, որ բանակցությունների օրերին ամեն կերպ ջանում էր խափանել ոչ միայն հաշտության, այլեւ փոխըմբռնողության փորձերը: Իսկ հետագա օրերին էլ առավել վայրագ հարձակումներով, Ստեփանակերտն ու Մարտունին, Մարտակերտի ու Հադրութի գյուղերը ռմբակոծելով հաստատում էր, որ ինքը ոչ մի կերպ չի հանդուրժի ձեռնարկվող միջոցառումները, որոնք ունեն մեկ նպատակ՝ լարվածության վերացումը, Արցախի խնդրի արդար, ժողովրդավարական լուծմամբ հանդերձ:

Իսկ եթե նկատի առնենք նաեւ խնդրի համահայկական կո՜ղմը... Նոյեմբերի 17-ին Ղազախում տեղի էին ունեցել Հայաստանի ու Ադրբեջանի լիազոր-ներկայացուցիչների այն բանակցությունները, որոնց շնորհիվ ադրբեջանական կողմը պարտավորվել էր մինչեւ 19-ի ժ. 24-ը լուծել «Հայաստանի գազամատակարարման հետ կապված հարցերը»,

որպեսզի հաջորդ օրվա ժ. 24-ին էլ բացվեր Հայաստան մտնող գազամուղը, հնարավորություն ստեղծվեր հայ ժողովրդի կենսագործունեության նորմալ ընթացքի համար: Ո՞վ չգիտեր, որ հայկական կողմի ամեն մի անհավասարակշիռ քայլ հարցականի տակ պիտի դներ այս դրական ծրագրի իրագործումը, խափանված պիտի թողնվեր հայ ժողովրդի այդ կենսագործունեությունը: Ո՞վ չէր հասկանում այսքանը, հայ գրոհայի՞նը: Ո՛չ, նա շատ լավ էր հասկանում եւ չէր անի որեւէ այնպիսի քայլ, որը կարող է խափանել ծրագրված բարի գործը, հայանպաստ ձեռնարկումը: Եւ հակառակը՝ ադրբեջանական կողմը, նրա սադրիչ ծայրահեղական թեւն էր, որ նախընթացին ոչ մի ստոր արարքի առաջ կանգ չէր առնում դրական տեղաշարժը խափանելու համար, իսկ ուղղաթիռի կործանումն էլ դարձրեց սկսած սադրանքը եզրափակող վերջին հարված: Նոյեմբերի 20-ի ժ.24-ի՞ն էիք ուզում Հայաստան ուղարկել գազը՝ նրա կենսապահովման ամենավճռական գործոնը: Ահա՛, ժամը 16 անց կեսին կկործանվի ռազմական ինքնաթիռը՝ իր ադրբեջանցի, ռուս ու ղազախ բարձրապաշտոն ուղեւորներով... Դե՛, դրանից հետո թող Հայաստանը գա՞զ ստանա:

✧ ✧ ✧

Ուղղաթիռի կործանումից անմիջապես հետո լուր էր տարածվել, թե ԽՍՀՄ պրեզիդենտ Գորբաչովը որոշած ունի Մոսկվա հրավիրել Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներին, բանակցել հետները՝ իր գլխավորած Պետխորհրդի նիստում եւ կանխել հասունացող ազգամիջյան պատերազմը: Հաջորդ օրերին նշվում էր նաեւ միջոցառման օրը՝ նոյեմբերի 27-ը:

Հայաստանում գիտեին, որ սա Գորբաչովի հերթական խաղն է՝ պաշտպանելու կամ գոնե ինչ-որ չափով փրկելու Ադրբեջանի չունեցած պատիվը: Չէ՞ որ աշխարհն էր տեսնում, որ այն հարեւան Հայաստանի վիզն էր գցել մահվան օղակը... Հիմա էլ այս վերջին խայտառակությունը, որը եթե իր ցանկացած պատկերով ընդունվեր հանրության կողմից, Հայաստանի դեմ պիտի լարվեին արդեն վերջին ժամանակները լոյալ դարձած խորհրդային զորքերը, ներքին գործերի նախարարության զորամիավորումները, Ռուսաստանի ու Ղազախստանի պետական վերին մարմինները:

Սակայն կատարվածն ու նրա ադրբեջանական մեկնաբանությունն այնքան հեռու էին իրարից, որ դրանք անհեթեթ էին երեւում նույնիսկ Գորբաչովի պես ամեն ինչ ծուռ տեսնող մեկի աչքում: Եւ նա շտապեց փրկել իր Ադրբեջանի «պատիվը»: Թե չէ, ի՞նչ էր պատահել, որ... Որքա՞ն ժամանակ է, Մութալիբովի ղաչաղները փակել են Հայաստանին գազ հասցնող խողովակը, կաթվածահար արել մի ամբողջ հանրապետություն, այդ ահավոր չարագործության դեմ աղաղակում են բոլոր արդար մարդիկ՝ Ռուսաստանի խորքերից մինչեւ Ամերիկայի ու Կանադայի կառավարական շրջանները... Ականջները բամբակ էր խցկել, ոչինչ չէր լսում: Հիմա ի՞նչ պատահեց, որ սիրտը փափկեց, ջերմացավ, վճռական քայլի պատրաստվեց:

Գորբաչովին անհանգստացրել էր Մութալիբովի ու նրա ավազակախմբերի հակառուսական, հակակենտրոնական սանձարձակ ընթացքը: Արցախի սահմանում կործանել են խորհրդային ռազմական ուղղաթիռը, Բաքվում ու մյուս շրջաններում հավակնում են տիրանալ խորհրդային բանակի եւ ներքին զորքերի զենքին ու զինամթերքին: Եւ, վերջապես, Ադրբեջանում դեռեւս Սումգայիթի օրերին էր սկսվել հակառուսական այն արյունոտ շարժումը, որի պատճառով Ռուսաստանից դուրս ապրող շուրջ 20 միլիոն ռուսներ կամ արդեն փախել են Ռուսաստան, կամ փախուստի ճանապարհին են, կամ էլ անճարորեն հաշտվել են իրենց սպասող աղետների հետ:

Չմոռանանք նաեւ, որ հենց իր՝ Գորբաչովի աջ ու ձախ կողմերից բարձրացել էին արդար մարդիկ, փորձում էին հանգցնել կրակը, կասեցնել թուրքի նախապատրաստված արյունահեղությունը: Հիշենք Ելցինի ու գործակիցների, ռուս դեպուտատների ու մտավորականների բարձրացրած աղմուկը: Վերջին իր բարձրապաշտոնական նժույգը ելած է-



դուրս Շեւարդնաձեի հայտարարած պատրաստակամությունը. «Այս դժվար ժամին ես եւ ժողովրդավարական բարեփոխումների շարժման իմ գործընկերները պատրաստ ենք ձեզ հետ միասին ելք փնտրել ճգնաժամից»:

**Նոյեմբերի 27-ին** Գորբաչովը Պետխորհրդի նիստի քննության դրեց «Ադրբեջանի եւ Հայաստանի փոխհարաբերություններում ստեղծված վիճակը»: Նիստը դռնփակ էր: Դժվար է կռահել, թե մասնակիցներն ի՛նչ են խոսել, ո՛ւմ են մեղադրել, ո՛ւմ դիրքը խրախուսել: «Ընդունված որոշմամբ երկու հանրապետությունների Գերագույն խորհուրդներին առաջարկվում է չեղյալ հայտարարել իրենց ընդունած հակասահմանադրական ակտերը՝ կապված Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ, բարդույթի գոտուց դուրս բերել բոլոր անօրինական ռազմական միավորումները: Պետխորհուրդը դիմեց նաեւ Ադրբեջանի ԳԽ-ին եւ ադրբեջանական ժողովրդին՝ առաջարկելով ձեռնպահ մնալ Հայաստանը շրջափակելու գործողություններից» («ՀՀ», նոյեմբ. 28):

Հետո, կարծում եմ՝ շատ կարճ ժամանակում կերեւա, թե որքան ծիծաղելի է այս որոշումն իր առաջարկությունների անսկզբունքայնությամբ, Ադրբեջանի գլուխը շոյելու եւ Հայաստանն ու Արցախը նոր աղետների ենթարկելու ակնհայտ միտումով:

**Նոյեմբերի 26-ին** Ադրբեջանի Գերագույն խորհրդի ընդունած որոշմամբ, ուրեմն, վերացվում էր Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Բայց չէ՞ որ Լեռնային Ղարաբաղն ինքնավար մարզ չէր այլեւս արդեն շուրջ երեք ամիս, այլ իրեն հռչակել էր հանրապետություն եւ ապրում էր որպես անկախ եւ ինքնուրույն պետական կազմավորում: Ո՛չ, դա հաշվի չէր առնվում, քանի որ ԼՂՀ ստեղծման վճիռն անմիջապես էլ անօրինական էր համարվել Ադրբեջանի կառավարական գերագույն մարմնի կողմից, ապա եւ ԳԽ-ն ընդունել էր իր սահմանադրության մի նոր կետը, որով իրեն իրավունք էր վերապահում հանրապետության տարածքում ստեղծել եւ վերացնել պետական իշխանության ամենատարբեր միավորներ: Ուրեմն, Ադրբեջանը վերացրեց ԼՂԻՄ-ը, եւ դա սահմանադրական միջոցառում էր համարվում:

Իրականում, սակայն, ընդունված որոշումը նույնքան հակասահմանադրական էր, որքան, ասենք, եթե մի այլ որոշմամբ էլ վերացրած լիներ Հայաստանի հանրապետությունը կամ նույնիսկ Ղրիմի մարզը:

Ավելորդ չէ հիշել նաեւ, որ Ադր. ԳԽ-ի որոշմամբ վերացվում էր նաեւ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի անունը՝ այն վերածելով Խանքենդու:

Վերը տեսանք, թե ԼՂՀ իշխանության մարմիններն ինչպես դիմավորեցին Ադր. ԳԽ-ի որոշումը, ինչ միջոցներ ձեռնարկեցին, մանավանդ՝ որոշումը հանրաքվե հրավիրելու մասին: Հրապարակվեց նաեւ մի դիմում, որով ԽՍՀՄ ԳԽ-ին ու Պետխորհրդին խնդրվում էր ճանաչել Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը:

Դարձյալ այդ օրն էր, որ ՀՀՇ կազմակերպությունը դիմում-հայտարարություն հրապարակեց՝ ուղղված Ադրբեջանի ժողովրդական ճակատին, նրան կոչ էր անում հարեւանային եւ միջազգային բարդույթները լուծել քաղաքական ու դիվանագիտական ուղիներով, մանավանդ, երբ միջպետական բանակցությունները դադարեցված են, եւ «երկխոսությունները պետք է շարունակել շարժումների մակարդակով, շուտափույթ եւ ցանկացած վայրում» («Դրոշակ», 1992, N23, էջ 42):

**Նոյեմբերի 27-ին** հրապարակվեց ԽՍՀՄ Պետական խորհրդի «Որոշումը ԼՂԻՄ-ում եւ Ադր. հանրապետության ու Հայ. հանրապետության սահմանամերձ շրջաններում իրադրության կայունացման միջոցառումների մասին»: Գորբաչովյան կառավարության վերջին փաստաթուղթը ղարաբաղյան խնդրի առթիվ: Նախորդների պես կիսատ-պռատ, անատամ, նախորդների պես չիրականանալիք: Իր հիմքում՝ նաեւ հակահայկական:

Առաջին կետով Ադրբեջանի ու Հայաստանի Գերագույն խորհուրդներին էր դիմում՝ չեղյալ հայտարարելու ԼՂԻՄ-ի մասին ընդունած բոլոր այն ակտերը, «որոնք փոխում են Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի՝ ԽՍՀՄ սահմանադրության մեջ արձանագրված կարգավիճակը» եւ ԼՂԻՄ-ի տարածքում վերականգնելու սահմանադրական կարգը:

Ի՞նչ ժամկետում, ինչպե՞ս, այս մասին ոչինչ չի ասվում, ուրեմն եւ կարելի է ձգել իրականացման ընթացքը:

Երկրորդ կեսը խորհուրդ էր տալիս կատարել Ժելեզնովոդսկի որոշումները: Այսինքն՝ վզներդ դրել եք Ելցինի ու Նազարբաեւի լծի տակ, ուրեմն եւ քաշեցեք...

Երրորդով երկու հանրապետությունների նախագահներին հանձնարարում էր կրակը դադարեցնել, բարդույթի գոտուց դուրս բերել բոլոր զինված ապօրինի կազմավորումները, «Կարգավորել երկու հանրապետությունների օդային հաղորդակցությունը, բացառելով չարտոնված թռիչքները» եւ այլ նման բաներ: Սակայն հենց այս երկու հանձնարարականներն էլ բավական էին հաստատելու, որ որոշումը թելադրված էր Մութալիբովի կողմից, քանի որ.

Ա) Նա Արցախից ոչ մի զինված կազմավորում էլ չէր հանի՝ պատճառաբանելով, թե իրենը օմօնն է, իր միլիցիան, եւ ապօրինի են հայկական ինքնապաշտպանական խմբերը, հետեւապես զինված հայերը պիտի հեռանան՝ իրենց անպաշտպան բնակչությունը հանձնելով ադրբեջանական սպառազեն ու ավազակաբարո հրոսակախմբերի ողորմածությանը:

Բ) Եթե մարզ մտնող երկաթգիծն ու ավտոճանապարհը չեն բացում, եւ հաղորդակցության միակ միջոց է մնում օդայինը, այն էլ պայմանով, որ բացառվեն «չարտոնված թռիչքները», ապա մի՞թե ադրբեջանական շառլատանների համար որեւէ դժվարություն է ներկայացնում ամեն տեսակ թռիչքներն էլ չարտոնված համարելը:

Չորրորդ ու վերջին կետով դիմում էր Ադրբեջանի ժողովրդին՝ վստահելով նրա մեծահոգությանը, որպեսզի նա մոռանա «կուտակված վիրավորանքները», բաց անի Հայաստան մտնող գազատարը եւ երկաթգիծը, որովհետեւ վերջինիս շրջափակումից տուժում է Ադր. ԽՍՀ Նախիջեւանի ինքնավար հանրապետությունը:

Չեմ հիշում, թե Հայաստանում որեւէ մեկը վրդովված լիներ Ադրբեջանի պաշտոնեության արյունոտ ձեռքերին մի ավելորդ անգամ եւս ազատություն պարգեւող այս որոշումից: Պարզապես մարդիկ ընտելացել էին Կենտրոնի հակահայկական քաղաքականությանը, որ վերջին տարվա համարյա ամբողջ ընթացքում դրսեւորվում էր սադիստական եղանակներով:

◇ ◇ ◇

Լեւոն Տեր-Պետրոսյանը մասնակցել էր ԽՍՀՄ Պետխորհրդի նիստին, որը՝ որոշում էր ընդունել ԼՂ-ի մասին եւ **նոյեմբերի 29-ին**, պատասխանելով լրագրողի հարցերին, ասաց. «Վերջին չորս տարիների ընթացքում դեռեւս չէինք կանգնել [«այսպիսի լարված իրավիճակի առաջ»], քանի որ գազամուղի փակմանը, երկաթուղու շրջափակմանը ավելացան նոր գործոններ. ես նկատի ունեմ առաջին հերթին ուղղաթիռի վթարի հետ կապված այդ մոլուցքը, որ նկատվում էր Ադրբեջանի հասարակական կյանքում, որին հետեւեց նաեւ Գերագույն Խորհրդի սադրիչ որոշումը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վերացման մասին. («Դրոշակ», 1992, N23, էջ 44):

Նա գտնում էր, որ Պետխորհրդի նիստում բավական խելոք ու օգտակար ելույթներ են եղել եւ ընդունված որոշմամբ վերականգնվել է ԼՂԻՄ-ը, այսինքն՝ «ինձ հաջողվեց հասնել այն բանին, որ այս փաստաթղթի առաջին իսկ հոդվածով նշվի Լեռնային Ղարաբաղում սահմանադրական կարգի վերականգնման անհրաժեշտությունը: Այսինքն՝ այս փաստաթղթով փաստորեն ընդունվում է, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը գոյություն ունի, եւ գոյություն ունի գործող Խորհրդային Միության Սահմանադրության շրջանակներում: Սա փաստորեն հաստատեց Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակը, որը նրա բնակչության պաշտպանության միակ երաշխիքն է այսօր, քանի որ, եթե չլիներ այս որոշումը, դժվար է ասել, թե ինչպես իրենց գործունեության մեջ պետք է ղեկավարվեին այսուհետեւ Լեռնային Ղարաբաղում տեղակայված ներքին զորքերը, նրա պարետը: Նրանք կարող էին շատ հեշտությամբ հաշտվել այն մտքի հետ, որ այլեւս ինքնավար մարզ գոյություն չունի, այլեւս նրա իշխանությունների հետ չպետք է հաշվի նստել, իսկ դրա հետեւանքները մենք պատկերացնում ենք, թե ինչ կլինեին: Այնպես որ այս փաստաթղթով փաստորեն պահպանվում է գոնե գոյություն ունեցող վիճակը»:



Նախագահը հանդիպման երկրորդ կարեւոր հաջողությունն էլ այն էր համարում, որ ձեռք է բերվել Ադրբեջանի ու Հայաստանի նախագահների համաձայնությունը «առաջիկա ընթացքում» հանդիպելու եւ երկկողմ բանակցություններ վարելու վերաբերյալ (ն.տ.):

**Դեկտեմբերի 3-ին** «ՀՀ» օրաթերթը «Ռուսսկայա մըսլ» (Փարիզ) պարբերականում լույս տեսած մի հոդվածից («Ղարաբաղյան պատերազմը») տպագրել էր քաղվածք, որի մեջ հոդվածի հեղինակը՝ դեպքերի վայրում եղած անկողմնակալ մի մարդ, ահա թե ի՛նչ է գրել. «Ես Շահումյանից ուղղաթիռով գնում էի Երեւան եւ հազիվ էի զսպում արցունքներս: Հարկավոր էր գրեթե 30 տարեկան դառնալ եւ այստեղ գալ հասկանալու համար, թե ի՛նչ է հայրենիքը, եւ ինչպե՛ս պետք է այն պաշտպանել: Այստեղ խորհրդային բանակի կողմից մինչեւ ատամները զինված Ադրբեջանի հատուկ ջոկատայիններն այդպես էլ ոչինչ չեն կարողանում անել խաղաղ գյուղացիների դեմ, որոնք զենք են վերցրել պաշտպանելու իրենց տները: Ընդսմին հարկ է նկատի ունենալ, որ Ղարաբաղը շրջափակված է, Ստեփանակերտի օդանավակայանը զավթել են Ադրբեջանի հատուկ ջոկատայինները:

Ես այստեղ եկա Ելցինի ու Նազարբաեւի այցից հետո: Իսկ ի՞նչ է տվել երկու նախագահների հաշտարարական առաքելությունն այս հողին: Առայժմ կարելի է հաստատ ասել՝ մեկ բան. կտրուկ ծավալվել է բռնությունը, ավելացել է զոհվածների թիվը: Կարելի է հասկանալ Ելցինի զգուշավորությունը. Ռուսաստանը բազմաթիվ սեփական ինքնավարություններ ունի: Այլապես ինչո՞ւ Բորիս Նիկոլաեւիչը չտեսավ, որ այստեղ ոչ թե ազգային բարդույթ է, այլ ազգային ազատագրական պատերազմ»:

**Դեկտեմբերի 6**. Ավելի քան երկու շաբաթ է անցել աղետի օրվանից: Հետաքննող հանձնաժողովը դեռեւս չի հրապարակել իր եզրակացությունը, որպեսզի օրինապահ մարմիններն առաջնորդվեն նրանով եւ փորձեն կարգ հաստատել այդ հազար անգամ դժբախտ Արցախում: Եզրակացությունը չկա, իսկ դա ձեռ է տալիս Մութալիբովի ավազակախմբին. չարագործություններն է շարունակում՝ նախօրոք ամենուր տարածելով անգիր արած հանկերգը հայ գրոհայինների մասին: Աղետյալ մարզն այնպես են կտրել արտաքին աշխարհից, որ հեռախոսով կամ ռադիոկապով անգամ հնարավոր չէ պարզել, թե ի՛նչ է կատարվում այնտեղ. Մութալիբովի բանդիտներն է՛լ ինչ ստոր խաղեր են անում անհնազանդ լեռնաստանի գլխին: Երեւանի ռադիոն, հեռուստատեսությունը բերանները ջուր են առել, նույնիսկ Արցախի եղանակի մասին ասելու ոչինչ չունեն: Եւ միայն հեռվից եկող ձայներից ենք իմանում ճշմարտությունը: Անցած գիշերը «Ազատությունը» պատմում էր Հայաստանի հանրապետության Արտաքին գործոց նախարար Րաֆֆի Հովհաննիսյանի հանդիպումները եվրոպական տերությունների ղեկավար գործիչների հետ եւ ի միջի այլոց հիշեց, որ նախարարը տագնապով հաղորդել է, թե Ադրբեջանն Արցախի շուրջ այնպիսի պատնեշ է ստեղծել, որ պաշարված ժողովուրդն արդեն վաղուց է՝ չի ստանում գազ, էլեկտրաէներգիա, ջուր, հաց... Ջո՜ւր, հա՜ց: Իր երկրի, իր հողից ելնող ջուրը, իր աճեցրած արտերի բերքը... Որովհետեւ պայթեցրել են Ստեփանակերտի ու մնացած խոշոր բնակավայրերը մտնող ջրմուղները: Իսկ հա՜ցը: Ամռանն են մարզին զրկել իր աճեցրած հացի բերքից. գիշերներին հրդեհել են արտերը, պայթեցրել հացահատիկի պահեստները: Հակառակորդին ծնկի բերելու դաժա՞ն եղանակ է: Բայց սա էլ հո նորությո՞ւն չէ Մութալիբովի ցեղակիցների համար: Արցախում ոտք դրած առաջին թուրքը՝ քոչվոր Փանահ-Ալին, որ հետո իրեն խան պիտի հռչակեր, երբ ասպատակում էր Խաչենն ու Ջրաբերդը եւ չէր կարողանում հաղթել այդ գավառների ըմբոստ մելիքներին, երբ չէր կարողանում հպատակեցնել, իր ոհմակներով տրորում էր նրանց արտերը, հրդեհի ճարակ դարձնում, հողին հավասարեցնում... Եւ ահա Փանահ-Ալու արժանավոր ժառանգները

նատվության ենթարկել «պաշտոնատար այն անձանց, ովքեր Ղարաբաղի լեռնային մասում կենսագործել են այդ հակասահմանադրական նախաձեռնությունը»։

Ինքը՝ թղթակիցը, սակայն, համոզված էր, որ նման հանձնարարությունն անհնար է իրականացնել, քանի «Գաղտնիք չէ, որ նախկին ԼՂԻՄ-ի մեծ մասը վերահսկվում է հայկական կազմավորումների կողմից եւ անմատչելի է Ադրբեջանի պաշտոնական անձանց այցելության համար»։

**Դեկտեմբերի 11-ին** ԼՂՀ ժող. պատգամավորների խորհուրդը, նախագահ Լեոնարդ Պետրոսյանի ստորագրությամբ, դիմում հղեց Բելառուսի ԳԽ-ի նախագահ Շուշկեւիչին, Ռուսաստանի նախագահ Ելցինին եւ Ուկրաինայի նախագահ Կրավչուկին։ Այնտեղ մասնավորապես ասված էր. «Արտահայտելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքը, մենք ձեզ ենք դիմում՝ իբրեւ անկախ պետությունների նոր ընկերակցության նախաձեռնողներին ու հիմնադիրներին։ Մեր ժողովուրդը լիովին պաշտպանում է նախկին ԽՍՀ Միությունը եւ հանրապետություններից յուրաքանչյուրին համակած երկարատեւ քաղաքական ու տնտեսական ճգնաժամից դուրս գալու ձեր սահմանած ուղին։ Մենք համամիտ ենք նոր համագործակցության կազմավորման հիմքում ընկած գաղափարներին, որտեղ բացառվում է ամբողջատիրության եւ մեկ ազգի նկատմամբ մյուսի թելադրանքի քաղաքականությունը։ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, որն առաջիններից մեկը պարզեց ժողովրդավարության պայքարի դրոշը, ահա արդեն չորս տարի չափազանց ծանր պայմաններում ձգտում է հասնել ինքնորոշման, իր հետագա ճակատագրի ինքնուրույն եւ ազատ տնօրինման։ Դեկտեմբերի 10-ին անցկացված հանրաքվեի ժամանակ Լեռնային Ղարաբաղի բնակչության գերակշիռ մեծամասնությունն արտահայտեց իր կամքը, պաշտպանելով ավելի վաղ հռչակված անկախ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, որն ինքնուրույնաբար է ընտրում մյուս պետությունների եւ դրանց ընկերակցությունների հետ համագործակցելու ձեւը։ Լեռնային Ղարաբաղի հանրապետության համար այդ հարցի միակ ընդունելի լուծումը ձեր ղեկավարած պետությունների համագործակցության կազմի մեջ մտնելն է՝ որպես դրա իրավահավասար անդամ։ Խնդրում ենք ձեզ անհապաղ քննության առնել համագործակցությանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անդամակցելու հարցը»։

**Դեկտեմբերի 12-ին** առավել բորբոքվեցին ԼՂՀ բնակավայրերի՝ նախորդ օրերին փոքրաթիվ դադարներով կատարված հրթիռակոծություններն ու հրետակոծությունները։ Ստեփանակերտում ավերվել են 20-ից ավել բնակելի տներ, կարի ֆաբրիկայի շենքը։ Զոհվել է մեկ մարդ, կան վիրավորներ։

Ամբողջ գիշեր անհանգիստ է եղել Կրկժանը։ Չնայած նախօրյակին կործանվել էին օմօնականների որջն ու ադրբեջանական դպրոցական շենքը, դեռ շարունակում էին գնդակոծել ադրբեջանական թաղամասի տարբեր մասերից։ Հայ ինքնապաշտպաններից մեկը վիրավորվել է։

Դրությունն ավելի բարդ էր Ասկերանում, որը հրթիռակոծվել էր, եւ Նորագյուղում, Խրամորթում ու Նախիջեւանիկում, որոնք անընդհատ գնդակոծվում էին։ Նախիջեւանիկի վրա նույնիսկ հարձակում է կատարվել, սակայն թուրքերն անմիջապես ետ են ճողոպրել հայ ինքնապաշտպանության մարտիկների հարվածներից։ Հարավ գյուղի մոտ թուրքերը հարձակվել են մի ավտոմեքենայի վրա, ուղեւորներից երկու հոգու սպանել, մեկին վիրավորել, չորրորդին տարել անհայտ ուղղությամբ։

Ստեփանակերտում տագնապով հայտնում էին, որ նախօրյակին արդեն սպառվել է ալյուրի պաշարը, ջուր ու էլեկտրաէներգիա չկան։

Հանրաքվեի դիտորդ, ԽՍՀՄ ժող. պատգամավոր Վ. Սմիրնովը լրատվության ներկայացուցիչներին հայտարարել է, որ ժամանակն է նախկին ԽՍՀՄ տարածքում ստեղծելու ՄԱԿ-ի «կապույտ սաղավարտավորների» տիպի զորքեր, եւ քանի դեռ այդպիսիք չկան ու չեն տեղակայված ԼՂՀ-ում, ապա անհրաժեշտ է այստեղ պահել ՆԳՆ ներքին զորքերը։

Ավելի վաղ պատանդ վերցված Շ. Ռզաեւը (Ադրբեջանի գլխավոր դատախազի օգ-



նական) այդ օրը փոխանակվեց Շուշիի բանտում պահվող վեց հայերի հետ։

**Դեկտեմբերի 12-ին** ԱՄՆ-ի պետական քարտուղարը, ԽՍՀՄ ուղեւորվելուց առաջ, Պրինսթոնի համալսարանում (Նյու-Ջերսի նահանգ) ունեցած հանդիպմանը հայտարարել է, թե իր երկրի մարդասիրական օգնությունից պիտի օգտվեն նախկին ԽՍՀՄ այն հանրապետությունները (նրանց թվում եւ Հայաստանը), որոնք արդեն ցույց են տվել իրենց հավատարմությունը ժողովրդավարական սկզբունքներին։ Իսկ ահա Ադրբեջանը չի արժանանա այդ օգնությանը, որովհետեւ վարում է առճակատման քաղաքականություն եւ եռանդագին զինվում է՝ հարեւան Հայաստանի դեմ պատերազմելու նպատակով։

Անդրադառնալով այս լուրին՝ Ադրինֆորմը վրդովված հայտարարել է, թե պաշտոնական Ամերիկայի հակաադրբեջանական քաղաքականության ձեւավորման մեջ վճռական դեր են խաղացել հայկական Սփյուռքն ու հայոց դիվանագիտությունը («ГА», 1991, դեկտ. 21)։

Նույն օրը Հայաստանում հրապարակվել է «Ազատություն» ռադիոկայանի աշխատակցի հարցազրույցը Անդրեյ Նույկինի ու Մոսկվայում Ադր. մշտական ներկայացուցչի տեղակալ Ռաֆայել Հուսեյնովի հետ։ Նույկինը, ինչպես եւ պետք է սպասել, պաշտպանում էր արցախահայության դատը եւ նրա թիկունքում կանգնած Հայաստանի հանրապետության նվազ ջանքերը։ Հուսեյնովն էլ, իհարկե, իր հանրապետությանը պիտի պաշտպաներ, բայց մի՞թե այդպես անարդար, զգաստության տարրական նորմերը մոռացած։ Ասում է՝ հայերն էքստրեմիստներ են եւ Արցախում կոտորում են ադրբեջանցիներին։ Բայց ո՞ր ադրբեջանցիներին, չէ՞ որ արցախցու ամենամարդկային երազանքները ոտնահարո՛ղ ադրբեջանցիներին։ Եթե նույնիսկ մտածենք, թե այնտեղ սպանվում են միայն ադրբեջանցիներ։

Հուսեյնովն ասում է՝ Հայաստանի հայերն են, որ գալիս են Ղարաբաղ եւ գործում...

– Պաշտպանելու իրենց արյունակիցների կյանքը,– լրացնում է լրագրողը։

– Նրանք խառնվում են մեր անկախ հանրապետության ներքին գործերին,– իբր նրան ուղղում է Հուսեյնովը։

Եւ թղթակիցը նորից պատին է սեղմում։ Ասում է.

– Երբ չեչեններն իրենց ինքնուրույնության համար կռվում էին, Ադրբեջանը ոտքի կանգնեց եւ առաջարկեց իր աջակցությունը։ Ես տեսել եմ Գրոզնիում ծածանվող ադրբեջանական դրոշը։

Այստեղ էլ աջ ու ձախ է ընկնում «արդարախոս» ադրբեջանցին, նույնիսկ սփյուռքահայերին է մեղադրում միջամտության մեջ, իբր զենք են ներս բերում։

Իսկ իրենք՝ ադրբեջանցիները, Թուրքիայից ու Իրանից ստանում են միայն խաղաղություն մաղթող բացիկնե՞ր...

**Դեկտեմբերի 13-ին** հրապարակվեցին հանրաքվեի արդյունքները, որոնք հայտնի էին դարձել նախորդ գիշեր։ ԼՂՀ (ներառյալ Շահումյանի շրջանը) 207.678 բնակիչներից 166.066-ը հայ են, 38737-ը՝ ադրբեջանցի, 2875-ը՝ ռուս։ Քվեարկության իրավունք ունեցող 119.169 հոգուց 108.614-ը (91,14 տոկոս) մասնակցել է հանրաքվեին։ «Այո» է պատասխանել քվեարկածների 99,89 տոկոսը (108.505 հոգի)։ «Ոչ» է պատասխանել 21 հոգի, իսկ 88 քվեաթերթիկ ճանաչվել է անվավեր։

Քվեարկությանը չմասնակցած 10.555 հոգին հիմնականում ադրբեջանցիներն են, որոնք ժամանակին ստացած են եղել իրենց լեզվով քվեաթերթիկներ ու այլ փաստաթղթեր։ Նրանք, օգնության եկած օմօնականների հետ միասին, այսօր էլ շարունակում են իրենց գործը՝ հայկական բնակավայրերի ռմբակոծություններն ու գնդակոծությունները։

**Դեկտեմբերի 16-ին** շարունակվում էր պատերազմը ԼՂՀ ամբողջ տարածքում։ Շուշիից, Աղդամից ու Խոջալուից անընդմեջ հրթիռակոծվում էին Ստեփանակերտն ու Ասկերանը, Աղդամի շրջանի Աբդալ ու Գյուլափլու գյուղերի թնդանոթներից՝ Ավդուռն ու Աղբուլաղը։

Հայկական ինքնապաշտպանության պատասխան հարվածներից մեծ վնասներ հասան Շուշիին (ավերվել են մի շարք տներ, կտրվել է էլեկտրաէներգիան, կան զոհեր), ա-

նը, իսկ ԼՂՀ համար՝ ողբերգականը. Ադրբեջանը պահանջում է, որպեսզի հեռացողները զենքը թողնեն իրեն, հակառակ դեպքում սպառնում է բռնությամբ խլել այն, ինչպես Աղդամում անցած շաբաթ զինաթափեց երկու զորամասերի, և ինչպես կլինի Գանձակում, ուր շրջափակված է օդանավակայանը:

Փոքրաքանակ ու սակավազեն հայերն ի՞նչ պիտի անեին այս արհավիրքի դեմ: Ահա նրանց ինքնապաշտպանական մի ջոկատը Ստեփանակերտում 22-ի կիրակի օրը խուժեց 81-րդ օպերատիվ գնդի զորանոցը, անձնակազմին արգելափակեց, ժամանակավորապես պատանդ վերցրեց այդ պահին վրա հասած պարետ գնդապետ Ժուկովին և առգրավեց գնդի հրազենն ու ռազմական տեխնիկան՝ շուրջ 1000 միավոր:

Նույն ինքնապաշտպանական ջոկատը մարզային կոմիսարիատից էլ բռնագրավեց ռադիոկայանով մի ինքնաշարժ:

ԼՂՀ գործկոմի նախագահ Լ. Պետրոսյանը հայտարարեց, թե քաղաքական չկարգավորված կացության պայմաններում ներքին զորքերի դուրսբերումը դավաճանություն է արցախահայության դեմ, որին մնում է կենաց ու մահվան կռվի պատրաստվել իր ազատ ու անկախ կյանքն ապահովելու համար:

**Դեկտեմբերի 23-ին** ԼՂՀ տարածքից եռանդորեն հեռանում էին ներքին զորքերի ստորաբաժանումները: Մնում էին միայն Պաշտպանության նախարարության զորամիավորումները: Արտակարգ շրջանի պարետությունն արդեն դադարեցրել էր իր գործունեությունը:

Մարտունու շրջանի վիճակը կտրուկ ծանրացավ ներքին զորքերի հեռանալուց հետո: Շրջկենտրոնի դիմաց փռված Ամիրանլար գյուղը, որ օմոնականների որջ էր եղել նախընթացին, ընդունեց զինվառ նոր ավազակախմբերի: Ավդուռ գյուղը ենթարկվեց հրթիռակոծման, որի հետևանքով զոհվեցին 6-14 տարեկան հինգ երեխաներ: Կան և վիրավորներ:

Մարտունում տեղի ունեցավ հիմնակ-ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարների հավաք, որն ի մի բերեց ինքնապաշտպանական ուժերը և ծրագրեց առաջիկա աշխատանքները:

ԼՂՀ գործկոմի նախագահ Լ. Պետրոսյանը հայտարարություն հղեց ԱՊՀ ղեկավարներին, խորհրդարաններին ու ժողովուրդներին՝ որերորդ անգամ նրանց ուշադրությանը ներկայացնելով Արցախի տագնապալից վիճակը: Հայտարարության մեջ ասված էր. «Ադրբեջանի հանրապետության չդադարող զինված գործողությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ներկա պահին, ինչպես բացեիբաց հայտարարում են Ադրբեջանի ղեկավարները, թևակոխել են Լեռնային Ղարաբաղը հայերից լիովին մաքրելու ծրագրերի իրագործման «վճռական, եզրափակիչ փուլ»: Սահմանի ամբողջ երկարությամբ, ԼՂՀ ադրբեջանական բնակավայրերում կենտրոնացվում են Ադրբեջանի ՆԳՆ, ինքնապաշտպանության ուժերի և ժողովրդական ճակատի՝ հարձակման պատրաստ կազմավորումները, որոնք զինված են տանկերով, զրահամեքենաներով, գնդացիրներով և ինքնաձիգ զենքով: ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության և ՆԳՆ ղեկավարության նկատմամբ գործադրվում են բոլոր միջոցները՝ պահանջելով լիովին դուրս բերել ԼՂՀ-ում գտնվող և դրությունը կայունացնող ու բաշխիչ պարտականություններ կատարող խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումները: Հաճախակի են դարձել ադրբեջանական կազմավորումների կողմից զինվորական պահակակետերի վրա հարձակումների, զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին պատանդ վերցնելու դեպքերը:

Այդ բոլորի մասին ԼՂՀ ղեկավարությունը բազմիցս տեղեկացրել է ԽՍՀՄ Պաշտպանության նախարարությանը, ՆԳՆ ղեկավարությանը, անկախ պետությունների ղեկավարներին ու հասարակայնությանը և անփոփոխ կերպով հավաստիացումներ է ստացել, որ ԼՂՀ-ից զորքերի դուրս բերման հարցը կլուծվի միայն նրա բնակչության անվտանգության երաշխիքների ապահովումից հետո:

Սակայն, իրականացնելով Ադրբեջանի պահանջները, ԼՂՀ-ից ներքին զորքերի ստո-



րաբաժանումների դուրսբերումն արդեն իրականացվում է: ԽՍՀՄ բանակի և ՆԳՆ կողմից ժամանակին զինաթափված հայ բնակչությունը մեն-մենակ է թողնվել զինված ադրբեջանական կազմավորումների դեմ: Ադրբեջանի տարածքում տեղակայված ԽՍՀՄ ՆԳ ներքին զորքերի ստորաբաժանումների ողջ սպառազինությունը, սարքավորումները և զինամթերքը հանձնվել են այդ հանրապետության ՆԳՆ-ին: Դրանով իսկ ոչ միայն հրահրվում, այլև պայմաններ են ստեղծվում ապահովելու Ադրբեջանի հանրապետության ռազմական ուղղակի ներխուժումը ԼՂՀ հանրապետություն:

ԼՂՀ ղեկավարությունը հայ բնակչության անունից հայտարարում է Ադրբեջանի կողմից ցանկացած հարձակում դիմագրավելու, զինված ուժերի բացահայտ անհավասարության պայմաններում իսկ պատմական հայրենիքում ապրելու իրավունքը պաշտպանելու իր պատրաստակամության մասին և ԱՊՀ ժողովուրդների ու նախագահների ուշադրությունն է հրավիրում այն բանին, որ Ադրբեջանի կողմից իրագործվող խոշորամասշտաբ հարձակման անողոք հետևանքների համար պատասխանատվությունն ընկնում է ոչ միայն նրա ղեկավարության, այլև բոլոր նրանց վրա, ովքեր անտարբեր մնացին ավելի քան երեք տարի տառապող Լեռնային Ղարաբաղի ժողովրդի բազմաթիվ դիմումների հանդեպ և ժամանակին գործուն միջոցներ չձեռնարկեցին հարձակվողներին կանգնեցնելու համար»:

**Դեկտեմբերի 23-ին** հարևան ադրբեջանական գյուղերից անընդմեջ ռմբակոծել են Շահումյանի շրջանի Ղարաչինար և Մարտունու շրջանի Ավդուռ գյուղերը: Աղդամում զոհվել են 6-14 տարեկան հինգ երեխաներ, և մեկ գյուղացի ծանր վիրավորվել է:

Նույն օրն էլ Մարտակերտի շրջանի Ումուդլու և Ասկերանի շրջանի Անտառային (Մեշալի) ադրբեջանաբնակ գյուղերից հարևան հայկական գյուղերի վրա կատարված հարձակումներին ի պատասխան հայ ինքնապաշտպանական խմբերը նվաճել են Ումուդլուն ու Անտառայինը: Վերջինս տվել է 27 զոհ և 30-ից ավել վիրավորներ: Հայկական կողմն ունի մեկ զոհ, մեկ վիրավոր:

Անտառային կոչված այդ որջը հետաքրքիր կենսագրություն ուներ: 60-ական թվականներին, հավանաբար, Ադրբեջանի ղեկավարության՝ հեռահար նպատակ հետապնդող կարգադրությամբ, Քելբաջարի ու Լաչինի շրջաններից մի քանի ընտանիքներ եկել, Ասկերանի շրջանի Պատարա գյուղին պատկանող անտառի ընդարձակ մի բացատում վրան էին զարկել և իրենց համար հիմնավորվում ու բազմանում էին: 70-ական թվականների սկզբին արդեն շրջանի ղեկավարությանը պահանջ ներկայացրին, որպեսզի իրենց բնակավայրը գյուղի կարգավիճակ և սոցիալական ու կուլտուրական զարգացման հնարավորություններ ստանա: Շրջանի ղեկավարությունը մերժեց նրանց անօրեն պահանջը՝ քոչվորներին առաջարկելով վերադառնալ այնտեղ, որտեղից եկել են: Սակայն «պահանջատերերն» իրենց նոր տեղում արդեն պինդ էին նստած, և 1975-ին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը ժամանեց Ստեփանակերտ: Առաջին անգամն էր, որ հանրապետության ամենամեծ ղեկավարը գործնական նպատակով ոտք էր դնում Ղարաբաղում: Մարդիկ մտածում էին, որ մարզի ցավերն ու հոգսերն են տիրել, ահա՛, եկել է աշխարհի ամենաինտերնացիոնալ հանրապետության տերը և հայկական մարզին կօգնի, հնարավորություններ կտա կենսական տանելի վիճակ ստեղծելու համար: Պաշտոնական դատարկաբանություններից հետո պարզվեց, որ Բաղիրովը եկել է քոչվորների բնակավայրին գյուղի կարգավիճակ և դրան համապատասխան պայմաններ շնորհելու համար: Ինչն էլ մարզկոմի առաջին քարտուղար Կևորկովի կողմից իրականացվել է անմիջապես:

Արդեն գյուղ դարձած և Անտառային-Լեսնայա-Մեշալի հորջորջվող բնակավայրի տերերն իրենց պահում էին որպես հինավուրց Պատարայի գաղութակալներ: Նույնիսկ հոխորտում էին պատարեցիների դեմ, թե շուտով պիտի թողնեք գյուղը, պիտի հեռանաք, որպեսզի մենք կարգին տեղ ունենանք օրեցօր ծավալվող մեր տնտեսության համար...

Ահա այս նվաճողներն էին, որ օմոնականների հետ միասին դեկտեմբերի 23-ին հարձակվել էին Պատարայի վրա, որպեսզի միանգամից իրականացնեն շուրջ երկու տաս-

նամյակ փայփայած իրենց ծրագիրը: Հարձակվել էին, բայց ջարդ կերան եւ երեւի թե ստիպված կլինեն վերադառնալ իրենց Լաչինն ու Քելբաջարը:

**Դեկտեմբերի 24-ի** առավոտյան «Ազատություն» ռադիոկայանն իր լուրերի վերջում, ասես ի միջի այլոց, տեղեկացրեց, որ Ստեփանակերտում շուրջ տաս հազար կին ու երեխա շրջապատել են տուն վերադառնալու պատրաստվող խորհրդային ներքին զորքերին եւ խլել շուրջ հազար միավոր զենք:

Ժամը 9-ին իմ ընկերներից մեկը եկավ եւ հայտնեց ճշգրտված զենքի թիվը՝ 6700:

Վերջապես մենք էլ սովորեցինք ճանաչել մեր շահը եւ նրա համար գործել: 1918 թ. հայերս Շուշուց տուն դարձող, այսինքն՝ մեզ բախտի քմահաճույքին թողնող ռուսական 532-րդ կամ Սիմբիրսկյան զորամասը կերուխումի ցույցերով, մեծ պատիվներով ճանապարհ էինք դրել, որ մարդիկ գնան իրենց Ռուսաստանում բարի հիշեն մեր մարդկային բարեմասնությունները: Իսկ ադրբեջանցիները, ավազակախմբերի բաժանված, Աղդամի մոտ, Եվլախում ու մյուս վայրերում կողոպտեցին նույն այդ Շուշվա գունդը, ապա կոտորեցին զինվորներին: Նրանք այդպես են վարվել նաեւ ուրիշ վայրերի զորամասերի հետ: Հետո էլ ռուսներից խլած զենքերով ու զինամթերքով կռվի են եկել մեզ վրա, կոտորել, ջնջել մեր Շուշին, ոչնչացրել մեր բնակավայրերը՝ ավելի քան հիսուն գյուղ: Եւ այսքանից հետո էլ խորհրդային ռուս ղեկավարությունը թուրքին է պաշտպանել մեզ հետ ունեցած հաշիվներում, թուրքի հետ է կապել իր հույսն ու ապագայի ծրագրերը:

Նույն օրը Արցախի ինքնապաշտպանության ուժերը նվաճեցին ադրբեջանական մեկ գյուղ եւս՝ Մարտակերտի շրջանի Սրխավենդը, ռազմավարական կարեւորագույն կետ:

**Դեկտեմբերի 25-ին** «Հայելի» (ռուս., Երեւան) շաբաթաթերթը տպագրեց իր աշխատակցի հարցազրույցը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ, որն այն հարցին, թե ԱՊՀ-ն ի՞նչ դիրք է բռնել Համագործակցության մեջ ընդունվելու մասին Լեռնային Ղարաբաղի հանրապետության դիմումի նկատմամբ, պատասխանել է հետեւյալ կերպ.

«Ռուսաստանի նախագահ Ելցինը հաղորդել էր, թե ԱՊՀ ընդունելու մասին խնդրանքով դիմումներ կան մի շարք նախկին ինքնավարություններից, հատկապես Գագաուզիայից ու Լեռնային Ղարաբաղից: Նա առանձնապես ընդգծել է, թե, հավանաբար, ապագայում անհրաժեշտ կլինի քննարկել այդ հարցը:

Ես չեմ կարծում, թե դա պատահաբար բերանից թռած խոսք լինի, որովհետեւ ինքնավարության կարգավիճակն այսպես թե այնպես պետք է ամրապնդվի համագործակցության փաստաթղթերում: Չէ՞ որ եթե ո՛չ այսօր, ապա վաղը նման հարցեր կբարձրանան նաեւ մյուս ինքնավարությունների կապակցությամբ»:

Ապա անդրադառնալով Արցախի՝ անցնող տարվա իրավիճակին, Տեր-Պետրոսյանն ասաց. «...ապրիլ-մայիսյան «նահանջից» հետո մեզ հաջողվեց ինչ-որ չափով վերականգնել հավասարակշռությունն Արցախում: Դրան հասել ենք շնորհիվ Արցախի ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, ինքնապաշտպանության զինվորների խիզախության, ինչպես եւ քաղաքական այն հարաբերությունների ու կապերի, որ մենք հաստատեցինք Ռուսաստանի հետ («ГА» 1991, դեկտ. 26.)

**Դեկտեմբերի 25-ին** Բաքվի աշխատավորության ներկայացուցիչների հետ հանդիպման ունեցած ելույթում Այազ Մութալիբովը կենտրոնական տեղ է հատկացրել Ղարաբաղի խնդրին՝ հավաստիացնելով, որ ԱՊՀ կազմավորման կարեւորագույն սկզբունքներից մեկն է անդամ պետությունների ներկայիս ամբողջականության եւ սահմանների անխախտելիության խնդիրը, ուրեմն եւ, Ղարաբաղի հարցը վերջնականապես լուծելու համար, միակ ճշմարիտ քայլն էր, որ իր անկախ պետությունն անդամագրվեց նոր կազմավորմանը:

Անդրադառնալով ադրբեջանա-հայկական հարաբերություններին՝ Ա. Մութալիբովը նշեց, որ համաձայնագրի կնքումը եւ հանրակցության մեջ երկու հանրապետությունների մտնելը թույլ են տալիս գտնել ներկայիս բարդույթի լուծումը: Նման լուծման հիմք կարող է դառնալ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնություններից Հայաստանի հրաժարվելը եւ Ադրբեջանի ներքին գործերին չմիջամտելու պարտավորությունը, ինչպես



նաեւ այստեղ հայ փոքրամասնության իրավունքների երաշխիքներ ապահովելու Ադրբեջանի պատրաստակամությունը:

**Դեկտեմբերի 26-ին** Ադրբեջանը դադարեցրել էր Ստեփանակերտի էլեկտրա եւ գազամատակարարումը: Իսկ երկու օր հետո (դեկտ. 28-ին) պիտի Աղդամի մոտ պայթեցնեին Ստեփանակերտ մտնող, այնտեղից էլ շրջաններ գնացող գազատարը, որպեսզի առաջիկայում այլեւս խոսք չլինի մարզին գազ մատակարարելու մասին:

«Ժողովրդավարական Ռուսաստան» համակարգիչ խորհուրդն ու Ռուսաստանի մտավորականության «Ղարաբաղ» («Ճիչ») կոմիտեն նախորդ օրն էին անկախ պետությունների համագործակցության անդամ երկրների ղեկավարներին հղել նամակ՝ արտահայտելով իրենց մեծ տագնապը Լեռնային Ղարաբաղի հանրապետության ճակատագրի հանդեպ: «Վերջին իրադարձությունները,-գրված էր դիմումի մեջ,-ներշնչում են երկյուղ, որ մոտ ժամանակներս Լեռնային Ղարաբաղում կլինի դաժան արյունահեղություն, որի համար, նրա անմիջական իրականացնողներից բացի, պատասխանատու կլինեն նոր կազմավորված Համագործակցության ղեկավարները»:

Դիմումն ԱՊՀ ղեկավարներից պահանջում էր ամենաառաջին իսկ խորհրդակցությունում քննության առնել խաղաղության պաշտպանության միասնական ուժեր ստեղծելու հարցը՝ նկատի առնելով, որ այդ ուժերը պիտի խաղաղարար առաքելություն ունենան, կանխեն հակառակ կողմերի ամեն մի բախում:

Պահանջում էր նաեւ ներքին զորքերն Արցախից դուրս չբերել, քանի դեռ չեն ստեղծվել հիշյալ ուժերը:

Դիմումի հեղինակների կարծիքով՝ ԱՊՀ շրջանակներում Ադրբեջանն ու Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը պետք է ունենան հավասար իրավունքներ: «ԼՂՀ-ը համագործակցության սուբյեկտ ճանաչելը կլիներ ոչ միայն արդարամտության, այլեւ ողջախոհության ակտ, որն արժանավորապես կգնահատվի առաջադեմ մարդկության կողմից»,-հույս էր հայտնում դիմումը:

**Դեկտեմբերի 27-ին** Գրողների միությունում հանդիպում էր Արցախից վերադարձած Վալենտին Օսկոցկու հետ: Այնտեղ նա 3-4 օր էր մնացել: Տեսել էր մարդկանց զրկանքները, հերոսական դիմադրությունն օմոնական ավազակախմբերի եւ ծախու զինվորության դեմ, անվերջ-անդադար ռմբակոծվող Ստեփանակերտի բնակիչների կացարանները համարյա անպաշտպան նկուղներում: Հիշեց իր մանկությունը պաշարված Լենինգրադում եւ ասաց.

– Ես այնտեղ վերստին ապրեցի պաշարման գեհենը:

Խոսքը փակելիս էլ հիշեց ադրբեջանական միլիցիայի կապիտան Հաջիեւին, որն անցյալ ձմռանն իրեն ու Նույկին ամուսիններին Ստեփանակերտի օդանավակայանից էր ետ տվել, իսկ հետո էլ տարբեր լառիքներով զազրախոսել, թե ինքը գիտի, որ դրանք հայերից կաշառված են եւ միայն ջուր պիտի պղտորեն: Ասաց.

– Այն ժամանակ ես չգիտեի՝ ի՛նչ պիտի պատասխանել զազրախոսությանը: Բայց՝ հիմա Մոսկվա հասնելուն պես, կգրեմ ու կպատմեմ աշխարհին, որ, այո՛, կաշառվա՛ծ եմ հայերից, Արցախ աշխարհի հայերի՛ց: Կաշառված եմ նրանց անօրինակ խիզախությամբ, պայքարի արդար ու անզիջում ոգով եւ ամեն սրբազանով, որ տեսա այն փոքրիկ աշխարհում իբրեւ մեծ, համամարդկային խորհուրդ:

Նույն օրվա «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը, հենվելով զորամասի հրամանատար, գեներալ-գնդապետ Վ. Սավինի տեղեկության վրա, հաղորդում էր, որ դեկտեմբերի 22-ին ստեփանակերտցիների կողմից 81-րդ գնդից բռնագրավված զենքը վերադարձվել է:

**Դեկտեմբերի 27-ի** երեկոյան հանրապետական ու մոսկովյան հեռուստակենտրոնները, արտաշխարհի ռադիոկայանները հաղորդեցին, որ ԼՂ-ի հանրապետության սահմաններից հեռացել է ԽՍՀՄ ներքին զորքերի վերջին զինվորականը, եւ արցախահայությունը մնացել է իր սեփական ուժերի հույսին: Հանրապետությունը պաշարման մեջ, շրջափակված, աշխարհից կտրված հաղորդակցության ամեն տեսակ ճանապարհով: Հաց չկա, լույս չկա, վառելիք չկա: Նույնիսկ ջուր չկա Ստեփանակերտում, որովհետեւ ջրմու-

դի ակունքի շինություններն ու սարքերն ավերել է ադրբեջանական օմոնը:

Նախորդ օրերին, զորքերի հեռանալուց առաջ, հանրապետության գործկոմը, ամեն մակարդակի ժողովրդական պատգամավորները, Արցախի պաշտպանությանն աջակցող զանազան կոմիտեներ ու կազմակերպություններ հեռագրեր էին հղել Երկրի եւ համագործակցության մեջ մտնող անկախ պետությունների ղեկավարներին՝ խնդրելով, որ ներքին զորքերի ջոկատներն առժամանակ թողնվեն Արցախում, քանի դեռ նրա ապահովության ոչ մի երաշխիք չկա եւ չեն գործում Ժելեզնովոդսկում ընդունված հռչակագրի պայմանները: Այս բոլորի պատասխանը եղավ քար լռությունը, ավելի ճիշտ՝ զորքերի արագ դուրսբերումը հանրապետությունից:

Այս առթիվ տրված հաղորդումներում ասվում էր, որ Գործոմի նախագահի տեղակալ Օլեգ Եսայանը հաղորդել է, թե հենց վերջին օրերին հանրապետության ադրբեջանաբնակ բնակավայրերում եւ հարեւան ադրբեջանական շրջաններում կուտակվել են սպառազեն նոր զորամասեր ու ավազակախմբեր, որոնք ռմբակոծում ու գնդակոծում են մարզը, եւ սպասվում են նոր բախումներ ու ճակատամարտեր, որոնք, հնարավոր է, ծանր կլինեն ուժասպառ ու անօգնական հանրապետության համար:

Այս ի՞նչ է, 1920 թ. զարհո՞ւրն էր կրկնվում ավելի վաղ, ձմեռային այս խստամբեր օրերին:

**Դեկտեմբերի 28-ին** «Երկիր» օրաթերթում տպագրված հարցազրույցում ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, այն հարցին, թե Հայաստանն ինչպե՞ս է պետականորեն զբաղվում Արցախի պաշտպանության խնդրով, երբ Ալմա-Աթայում ստորագրվել է համաձայնագիր, որի համաձայն պարտավոր է հարգել հարեւան պետության սահմանները, հակասություն չկա՞,-պատասխանել է (եւ լա՜վ է պատասխանել). «Ես հակասություն չեմ տեսնում այն իմաստով, որ Արցախի ժողովուրդն ինքն է կազմակերպում իր պաշտպանությունը, իսկ մենք նրան օգնում ենք, ինչով կարող ենք: Մյուս հանգամանքն այն է, որ մենք կարող ենք Արցախին օգնել որպես դաշնակից պետություն: Իմ անձնական տեսակետը հետեւյալն է. Արցախի ժողովուրդը մերն է, Արցախի հողը մերն է, եւ մենք իրավունք չունենք այս հարցում մի կողմ քաշվել: Ես արհամարհում եմ այս հարցում որեւէ պայմանականություն: Արցախը պետք է վերածենք հզոր ռազմական ամրոցի: Ադրբեջանը վաղ թե ուշ կհամակերպվի Արցախի (անկախ.-Բ.Ու.) գոյության հետ: Ճիշտ է, նրանք կռվում են, գուցե նաեւ հավատում, թե դա իրենց տարածքն է, բայց գոյություն ունեն գեներ: Ադրբեջանցիներն իրենց արմատները չունեն Արցախում եւ չեն ուզում նրա համար զոհվել: Նրանց զոռով քշում-բերում են մեր դեմ կռվելու: Ես սա նկատել եմ գերիների հետ ունեցածս հանդիպումների ժամանակ»:

Երանի՜ թե այսպես մտածեին նաեւ այս երիտասարդի բոլոր գործընկերները: Այն ժամանակ այլեւս հարց չէր մնա, եւ Արցախը այժմ ու հավիտյան կպաշտպաներ իր ավանդական դերը՝ Հայաստանն արեւելքից եկող հեղեղների դեմ պատնեշելու գործում:

Նույն հարցազրույցում Վազգեն Սարգսյանը մի դիտողություն էլ ուներ, որ արժանի էր ուշադրության եւ մանավանդ ուղեցույց լինելու մեր այսօրվա հասարակական կյանքում: Ասում էր՝ հայրենիքի ու Արցախի պաշտպանները մեր ազգի ներկայացուցիչներն են: Բայց տե՛ս, որ առանձին կուսակցություններ կուրծք են ծեծում, թե իրենք ավելի մեծ գործ են անում, մյուսները՝ պակաս կամ ոչինչ: «Չի կարելի կռվող տղաների մեջ կուսակցական տարբերություն դնել,-ասում է նախարարը:-Տղաների թափած արյունը չի կարող այս կամ այն կուսակցությանը պատկանել»: Առավել եւս՝ թափած արյունը չի կարող նվիրվել այս կամ այն կուսակցությանը, երբ կա մեծագույն սրբությունը՝ ազգը, որի զոհասեղանին էլ իրենց կյանքն են դրել նրա լավ զավակները»:

**Դեկտեմբերի 29-ին**, Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Ֆեդերացիայի բարեկամության, համագործակցության ու փոխադարձ անվտանգության պայմանագիրն ստորագրելուց հետո արտասանած իր ճառում Բորիս Ելցինն ի միջի այլոց նշել է, թե ցավալի է, որ իր ու Ղազախստանի պրեզիդենտ Նազարբաեւի՝ Արցախի իրավիճակը կարգավորելուն ուղղված նախաձեռնությունը ցանկալի արդյունքը չտվեց: Ապա հույս է



հայտնել, թե Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում հնարավոր կլինի այդ եւ նման բարդությունները խաղաղ կարգավորելու համար ջանքեր համադրել:

**Դեկտեմբերի 30-ին** Լեռնային Ղարաբաղի հանրապետության գործադիր կոմիտեն հեռագիր է հղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին՝ Եվրահամայնքի ղեկավարներին, Անկախ պետությունների համագործակցության ղեկավարներին, ԱՊՀ զորքերի գլխավոր հրամանատար, ավիացիայի մարշալ Ե. Շապոշնիկովին: Հեռագրում ի մասնավորի ասված է. «Ներկայումս մարտական, բանակային թնդանոթների կիրառմամբ իրականացվում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության հայերի ցեղասպանությունը: Մարդկության դեմ ուղղված այդ ահավոր հանցագործության համար, որը վճռականորեն դատապարտված է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի հռչակագրով, պատասխանատվությունը բացառապես ընկնում է Ադրբեջանական հանրապետության ղեկավարության վրա: Նոր տարվա նախօրեին շուրջօրյա հրետակոծման հետեւանքով ավերվել են հայկական տասնյակ բնակավայրեր, սպանվել ու վիրավորվել են հարյուրավոր խաղաղ բնակիչներ, այդ թվում՝ կանայք, երեխաներ, ծերունիներ»:

Իսկ նույն օրը Ստեփանակերտի վրա կատարված զանգվածային հրետակոծության հետեւանքով մեծ ավերածություններ են եղել: Սպանվել են 14 հոգի, որոնցից 4-ը՝ ինքնապաշտպանության մարտիկներ:

Ստեփանակերտի ՆԳ վարչության հաղորդմամբ՝ վերջին օրերին հանրապետության սահմաններն են բերվել ադրբեջանական 18 գումարտակ, յուրաքանչյուրը՝ 300 զինվորից: Հակառակորդը, հավանաբար, լրջորեն նախապատրաստվում է վճռական գրոհի համար:

Սակայն պարապ չէր եւ ինքնապաշտպանությունը, որի շարքերն ամեն օր համալրվում են երեկվա դպրոցականներով, բանվորների, գյուղացիների, մտավորականների թարմ ուժերով: Ինքնապաշտպանության մեջ ընդգրկված են նաեւ Արցախի բազմաթիվ խիզախ կանայք:

Շահումյանի շրջանում դեկտեմբերի լույս 30-ի գիշերը կռիվ է տեղի ունեցել Ղարաչինար գյուղի եւ ադրբեջանական Շեֆեկ գյուղի միջեւ, որը փոքր ընդհատումներով շարունակվում է մինչեւ այս ժամը:

Ժամը 11 անց կեսին Ստեփանակերտից հաղորդեցին, որ թուրքերը Կրկժանից տանկերով, Շուշիից հրթիռներով ռմբակոծության են ենթարկում հանրապետության մայրաքաղաքը:

Դրությունը ծա՞նր է: Թերեւս հարմար բառը հուսահատականն է: Այսուհանդերձ ազատամարտիկները, ամբողջ հանրապետությունն իր բոլոր բնակիչներով կռվում են հերոսաբար: Սակայն միայնակ, պատահաբար ու ինքնագործունեությամբ հավաքված, օգնության հասած ջոկատների հետ միասին դժվար հնարավոր լինի դիմակայել թշնամուն, որը ժամ առ ժամ ստվարանում, հզորանում է, որովհետեւ թիկունք ունի 7 միլիոնանոց, տնտեսապես ու ռազմական տեսակետից բավական հզոր մի Ադրբեջան:

Այսօր «Լրաբերը» ռազմաճակատի վիճակի մասին ոչինչ որոշակի չհաղորդեց, բացի բերանի մի անկյունով թռցրած խոսքից, թե թուրքերը Կրկժանում նորից տիրացել են իրենց դիրքերին: Մինչդեռ ցերեկվա ընթացքում Արցախից անընդհատ գալիս էին անմխիթարական լուրեր, եւ լրատվության հետ առնչվող մարդիկ գիտեին, որ վիճակը ծանր է հանրապետության բոլոր մասերում:

«Հայլուրին» եթե չէին տվել՝ հավանաբար համոզված լինելով, որ այն բերանը ջուր չէր առնելու, ինչպես «Լրաբերը»:

Իսկ ստացված հավաստի լուրերը շատ էին հուսահատական:

**Դեկտեմբերի 31-ին** ժողովրդական պատգամավորների Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմը դիմեց լրատվական բոլոր միջոցներին, համաշխարհային հանրությանը, աշխարհի բոլոր երկրների խորհրդարաններին ու կառավարություններին: Դիմումի մեջ ասված էր, թե նոր տարվա նախօրեին վերստին բորբոքվեց Ադրբեջանի զանգվածային ագրեսիան Լեռնային Ղարաբաղի հանրապետության ու նրա մայրաքաղաք Ստեփանակերտ-

տի դեմ։ Ստեփանակերտի մատույցները բռնված են ադրբեջանական տանկերով, զրահամեքենաներով, հետեւակի մարտական շարասյուներով։ Նրանց վայրագություններն աշխարհին են հայտնի՝ դեռեւս Գետաշենի, Մարտունաշենի, Բերդաձորի ու Շահումյանի շրջանի դեպքերից։

«Մենք դիմում ենք աշխարհի լրատվական բոլոր ծառայություններին՝ անսացե՛ք պաշարված Ղարաբաղի ձայնին։ Հենց այս եւ առաջիկա գիշերներին կարող է անհրաժեշտ լինել ձեր օգնությունը»։

✧ ✧ ✧

Տարվա այս վերջին օրը «ГА» թերթը հրապարակեց Արցախում ադրբեջանցիների կողմից տարածված մի թռուցիկ, որն ստորագրել է, այսպես կոչված, «Հանուն ազգային արժանապատվության» կոմիտեն։ Այն ռուսերեն է, փնթի լեզվով ու կցկտուր, բայց ճիշտ արտահայտում է այն տրամադրությունները, որոնք հատուկ են Ադրբեջանի մտավորականության եւ ղեկավարության մեծ մասին։ Ահա թռուցիկն ամբողջությամբ.

«Ռուսնե՛ր,

Ժամանակն է, որ կորչեք։ Քի՞չ էր, անցյալ ժամանակներում ռուսներն ադրբեջանցիների եւ ուրիշ ժողովուրդների հանդեպ վարել են գաղութակալական քաղաքականություն, հիմա էլ գնդակահարում եք անզեն ադրբեջանցիներին, զբաղվում հայամետ գործունեությամբ։ Ռուսները ոչնչացրել են կուլտուրան, գիրը, սովորույթները։ Պղծում են իսլամի ավանդները։ Հունվարի 20-ի դեպքերը ցույց տվին ռուս ֆաշիստների իսկական դեմքը։ Ուղղաթիռի պայթեցումը Ղարաբաղում, պետական գործիչների սպանությունները, զինվորների անցումը հայ բանդիտների կողմը, այս բոլորը խոսում են ռուսների թշնամանքի մասին Ադրբեջանի դեմ։ Եւ Բաքվում էլ ռուսներն իրենց պահում են գաղութարարների ու նվաճողների պես։ Մեր կոմիտեն նպատակ ունի ամենամոտ ժամանակներում սկսել գործողություններ «վրիժառություն» կարգախոսով։ Մենք չենք խանգարի, եթե դուք հեռանաք մինչեւ վրիժառությունը։ Բայց իմացե՛ք, այլեւս մենք չենք հանդուրժի»։

✧ ✧ ✧

Իրավասու մարմինները հաշվեկշիռ են բերել անցած տարվա (1991 թ.) ԼՂՀ տարածքում տեղի ունեցած մարտական գործողությունների արդյունքները։ Մխիթարվելու քիչ բան կար. կորսվել էին համարյա ամբողջ Շուշվա շրջանը (այնտեղ դեռեւս դիմանում էր մեկ հայկական գյուղ՝ Քարինտակը) եւ Հադրութի շրջանի լեռնային մասը։ Եթե առաջներում Հայաստանն Արցախից բաժանող գոտին (Լաչինի մոտ) 7-8 կմ լայնություն ուներ, այժմ այն քիչ է մնում հասնի 100 կմ-ի։ Մեկ տարվա ընթացքում մեր տված զոհերը 270 հոգի են (մեծ մասամբ խաղաղ բնակիչներ, ծերեր, կանայք ու երեխաներ), ադրբեջանցիները՝ 216, ասկյարները՝ 15։ Վիրավորվել են 400 հայեր, 180 ադրբեջանցիներ, 34 զինվորականներ։ Պատանդ են վերցվել 599 հայեր, որոնցից 226-ը դեռեւս չեն վերադարձվել։

Արցախյան ռազմաճակատում գործած «խիզախությունների» համար ադրբեջանական կառավարության «Կարմիր դրոշի» շքանշանով պարգեւատրվել են 6 օմօնականներ (ետմահու)։ Շքանշանները, 26-հազարական ռուբլու հետ միասին զոհվածների հարազատներին հանձնելով՝ իշխանությունը երեւի հավատացած էր, թե մեծ ոգեւորության ու շահախնդրական եռանդ է սրսկում կենդանի մնացածներին («ГА», 1991, հունվարի 21)։



# 1992

**Հունվարի 1-ին** ամանորյա ողջույնների, շնորհավորանքների, ծափի ու ծիծաղի, երգ ու պարի հետ այնպես հյուսված էին Արցախի բնակավայրերի ռմբակոծումներն ու գնդակոծությունները հաղորդող, մարդկանց վերքեր ստանա՛լն ու սպանվելը գուժող լուրերը, ասես այդ բոլորն այլեւս մեր հարազատներին չեն վերաբերում, մեր երկրի մի մասի՛ն, նրա համար արյուն տվող մեր եղբայրներին։

Ինչի՞ց է, ինչպե՞ս եղավ, ո՞նց հասանք այս օրվան, այս վիճակին ու այս պնդասրտությանը...

Իսկ արտասահմանյան ռադիոձայներն իրենց ունկնդիրներին էին հասցնում Լեռնային Ղարաբաղի հանրապետության ղեկավարի օգնության կանչը, ահազանգը, պաղատանքը։ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին դիմելով՝ Լեոնարդ Պետրոսյանը հայտնում էր. «ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի բարձր պաշտոնում ձեր աշխատանքի առաջին օրը պղտորվեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության հայ բնակչության նոր զոհերի արյամբ, հանրապետությա՛ն, որը վերջերս է հռչակվել՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի ընթացքում, ժողովրդի կամքի ազատ դրսեւորման շնորհիվ։

Ադրբեջանը, որ Ղարաբաղի բնակիչներին համարում է իր հպատակները, երկրամասի խաղաղ բնակավայրերի գնդակոծություններով ու ռմբակոծություններո՛վ ողջունեց Ծննդյան տոները...»։

Իր ազատության ու անկախության համար նահատակվող Արցախի ղեկավարը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին խնդրում էր՝ «հանուն երեխաների, կանանց, ծերունիների փրկության, նպաստել Լեռնային Ղարաբաղի հանրապետության պաշտոնական ճանաչմանը, միջնորդել Անվտանգության խորհրդի առջեւ՝ ՄԱԿ-ի զորքեր ուղարկելու սկսված աղետն ու ցեղասպանությունը կանխելու համար»։

**Հունվարի 2-ին** Ադրբեջանի պրեզիդենտ Ա. Մութալիբովի հրամանով պրեզիդենտական վարչություն մտցվեց, իր հորջորջմամբ, նախկին ԼՂԻՄ-ի ամբողջ տարածքն ու հարակից ադրբեջանական շրջանները, եւ սա էլ, ըստ էության, վերջնական վճիռ էր՝ այլեւս Արցախին վերաբերող քաղաքական, դիվանագիտական որեւէ համաձայնություն չկայացնելու, ուրեմն եւ արդեն ստեղծված ու իր նոր կյանքն սկսած Լեռնային Ղարաբաղի հանրապետության գոյությունն արհամարհելու։

Այդ որոշմամբ «վերացվում էին» նաեւ մարզի հայկական շրջանները, վերանվանվում, որ ճիշտ կլինի ասել՝ կեղծ անուններով «զարդարվում» շրջկենտրոններն ու Ստեփանակերտը։

Ստեփանակերտի կեղծանունը (Խանքենդի) նորություն չէր, եւ մոսկովյան հեռուստատեսությունը Ղարաբաղին վերաբերող լուրերը հաղորդում էր՝ անպայման ցուցադրելով մի քարտեզ, որի վրա Ստեփանակերտի տեղ «Խանքենդի» էր, մի խայտառակություն, որի դեմ երեւի թե օրական հարյուրավոր բողոքի նամակներ ու հեռագրեր էին ստացվում, սակայն, միեւնույնն է, ցուցադրում էին ու ցուցադրում, առանց ամաչելու, առանց խղճի խայթ զգալու։

✧ ✧ ✧

Հայկական հեռուստատեսության «Լրաբերն» այսօր «ուրախ լուր» հաղորդեց. ադրբեջանցիները Ղազախի կողմից եկող գազամուղը բացել են, եւ այնտեղից օրական մեկ միլիոն խորանարդ մետր գազ է մտնում Հայաստան։ Այդպես էլ ասաց՝ «ուրախ լուր»,

որպեսզի մեր վշտահար ժողովուրդն իրեն մի փոքր երջանիկ զգա:

Իսկ Արցախի մասին ասաց՝ ռմբակոծվում, գնդակոծվում, տարբեր կողմերից հարձակումների է ենթարկվում: Քիչ ավելի անդրադարձավ Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի վրա կատարված հարձակմանը, որին զոհ են գնացել հինգ ծերունիներ, եւ կան վիրավորներ ու կործանված, հրդեհի ճարակ դարձած տներ: Իհարկե, ազատամարտիկները վրա են հասել, գյուղը փրկել, սպանել մի քանի ասպատակիչի: Այդ գյուղի դաշտում գտնվել են նրանցից էլի մի քանիսի դիակները:

Հաղորդեց Արցախի հանրապետության գործկոմի նախագահ Լեոնարդ Պատրոսյանի դիմումը ՄԱԿ-ի նոր քարտուղար Բուտրոս Ղալիին ու մեծ ծանոթ պետությունների ղեկավարներին, որոնց խնդրվում է շտապ օգնություն հասցնել ադրբեջանական բռնագրավիչների դիվային չարություններին ենթակա Արցախին, ժողովուրդը փրկել ցեղասպանությունից, որ իրականանում է նախկին խորհրդային երկրի անմարդկային օրենքները ժառանգած սույն ժողովրդավար պետությունների աչքերի առաջ:

Մոսկվայից եւս հաղորդեցին Լեոնարդ Պետրոսյանի դիմումի մասին, եւ ա՛յն հրամանագրի, որով Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովն է «շնորհավորել» արցախահայությանը՝ նրան պարտադրելով իր, այսպես կոչված, պրեզիդենտական տիրապետությունը:

Նոր է պարզ դառնում, թե ինչո՛ւ Մութալիբովի սիրտը հանկարծ կակղել էր, եւ ինչու նրա երկրով անցնող գազամուղը մի փոքր բացվել է: Հայաստանին ասելո՛ւ համար՝ դու գազ կստանաս, եթե չխառնվես այն ամենին, ինչ ես կատարում եմ Արցախում: Իսկ եթե կփորձես խառնվել, ես էլ անմիջապես գազը կփակեմ: Դու հո գիտե՞ս, որ ես այսքան հնարամիտ եմ ու ամենազոր:

Այսինքն՝ Մութալիբովը պարզ ու ճշգրիտ հաշիվ անելու հնարավորություն է տալիս. ընտրիր կա՛մ Հայաստանիդ շահը, կա՛մ խառնվիր Արցախի գործին: Կա՛մ-կա՛մ. երկուսը միասին անհամատեղելի են: Ինչից էլ երեկ-մեկել օրը մեծահոգաբար թե նահապետի կեցվածքով զգուշացնում էր մեր Կտրիճ Սարդարյանը: Եւ դա՝ այնպես անհողդողդ ու անտեղիտալի, ասես խոսում էր Մութալիբովի կառավարության անունից՝ վերջնագիր ներկայացնելով:

✧ ✧ ✧

Արցախում ստացվել էր Հայաստանի Հանրապետության խորհրդարանի ամանորյա հետեւյալ բարձր պաշտոնական գրությունը.

«ՀՀ Գերագույն խորհրդի դիմումը

Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդին.

Ազատության համար արցախահայության պայքարը սկիզբ դրեց հայ ժողովրդի ազգային զարթոնքին:

Հենվելով միջազգային իրավունքի, մասնավորապես ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի վրա, արցախահայությունը միանական կամքով պայքարի ելավ հանուն իր անկախության, որին սատար կանգնեցին ողջ հայ ժողովուրդը եւ աշխարհի առաջադեմ մարդկությունը:

Ի պատասխան դրան, Խորհրդային Միության եւ Ադրբեջանի իշխանությունները գործի դրեցին ռազմական, քաղաքական, տնտեսական եւ հոգեբանական ճնշման միջոցներ, որոնք ուղեկցվեցին Ադրբեջանական Հանրապետությունում հայազգի բնակչության կոտորածներով, բռնագաղթով՝ նպատակ ունենալով ընկճել Արցախը եւ պահպանել գաղութատիրությունը:

Այժմ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թեւակոխել է նոր փուլ՝ դա պետականության հաստատումն է:

Հայաստանի հանրապետության Գերագույն խորհուրդը համոզված է, որ այն կընթանա միջազգային իրավունքի հանրաճանաչ ժողովրդավարական նորմերին համապատասխան, դրանով օրինական հիմքերի վրա դնելով Լեռնային Ղարաբաղի հանրապետության քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը:

Հայաստանի հանրապետության Գերագույն խորհուրդը ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդին, որ բոլոր միջոցներով զորավիգ կլինի Արցախի պետականության հաստատմանն ու ամրապնդմանը:

1992 թ. հունվարի 3, քաղ. Երեւան»:

Ստացվածը կարելի՞ էր ընդունել որպես մայր հայրենիքի պետական բարձրագույն մարմնի ճանաչումը հարեւան Արցախում ստեղծված անկախ իշխանության: Ուրիշ էլ ինչպե՞ս. չէ՞ որ փաստաթղթից ուրիշ որեւէ եզրակացություն անել անհնար էր:

**Հունվարի 3-ին** «Ազատություն» ռադիոկայանը հաղորդեց Սախարովի տիկին (ես «այրին» անպատշաճ եմ համարում այս իմաստուն ու խիզախ գործչի համար) եւ զինակից, Արցախի գոյապայքարի պաշտպան Ելենա Բոնների ամանորյա ուղերձը Ռուսաստանի պրեզիդենտ Բորիս Ելցինին: Դժբախտաբար, ես լսել եմ լոկ երկրորդ մասն այդ ուղերձի, որը հիմնականում վերաբերում էր Արցախի ճակատագրին՝ վերջին դեպքերի կապակցությամբ: Հույս ունեի, որ խոսքն ամբողջությամբ լույս կտեսներ որեւէ պարբերականում, եւ ես բախտ կունենայի նրա ամբողջության մասին խոսք ասելու այս քրոնիկոնում: Եւ, ահա՛, «ГА»-ն, մեր հմուտ բանասեր Ալբերտ Մուշեղյանի գրառմամբ, հրապարակեց Բոնների խոսքն սկզբից մինչեւ վերջ: Այն իսկապես ամբողջության մեջ Արցախին էր վերաբերում, չնայած արված էին նաեւ էքսկուրսներ: Ես այստեղ թարգմանաբար մեջ եմ բերում արցախականը, որ ավելին է, քան ուղերձի երկու-երրորդը:

«Հարգելի Բորիս Նիկոլաեւիչ: Դիմում եմ Ձեզ՝ որպես նախագահի եւ մի մարդու, որին խորապես հարգում եմ: Ձեր ո՛չ բոլոր գործողություններն եմ ընդունում, ո՛չ բոլոր խոսքերին եմ համաձայն: Սակայն երբեք չի խաթարել Ձեր հանդեպ տածած իմ վստահությունը, եւ այս նամակն էլ գրում եմ այն պատճառով, որ վստահում եմ Ձեզ եւ կարիք եմ զգում որոշ բաներ բարձրաձայն ասելու, որպեսզի տեղ չգտնի հերթական մի խաբեություն, որից այնքան հոգնել է մեր հասարակությունը: Թվում է, թե միայն այդ հարցո՛ւմ է բավարարվել նրա պահանջարկը:

«... Համագործակցությունը (նկատի ունի Անկախ պետությունների համագործակցությունը.-Բ. ՈՒ.) կազմելիս հաստատվել են նրա մեջ մտնող պետությունների սահմանների անխախտելիության իրավունքը եւ չխառնվելը ներքին գործերին: Սակայն սահմանների անխախտելիությունը չի նշանակում ժողովուրդներին զրկել ինքնորոշման իրավունքից, իսկ ներքին գործերին չխառնվելն էլ չի նշանակում, թե մարդու իրավունքների ու ժողովուրդների իրավունքների հարցերը կարող են դուրս թողնվել քննարկումների ոլորտից:

Ինքնորոշման իրավունքը հիմնաքար է դարձել ԽՍՀՄ տեղում Անկախ պետությունների համագործակցությունն օրինականորեն ստեղծելու համար: Սակայն այդպես փայլուն կերպով ինքնորոշված պետություններից ոչ մեկը նույնպիսի իրավունք չվերապահեց իր մեջ մտնող ինքնավարություններին եւ չպաշտպանեց նրանց այդպիսի իրավունքը: Ոչ մեկը չհայտարարեց, թե մարդու իրավունքների զանգվածային խախտումներն ու ժողովուրդների ինքնորոշման իրավունքն արհամարհելը անհամատեղելի են Համագործակցությանն անդամակցելուն: Համագործակցության կյանքի տասներորդ օրը նշանավորվեց Ադրբեջանի զինված ուժերի գրոհով Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի վրա: Ռուսաստանը, Համագործակցության մեջ մտնող ուրիշ երկրների հետ միասին, պատասխանատվություն չի՞ կրում նրա համար, ինչ որ տարեմուտի գիշերն է բերել այդ Հանրապետության բնակիչներին:

Երեք շաբաթ առաջ հանրաքվեի ճանապարհով նրանք հաստատել էին անկախ պետականության իրենց բաղձանքը: Ռուսաստանը որեւէ կերպ չարտահայտեց իր վերաբերմունքն այդ ժողովրդավարական գործողության նկատմամբ: Սակայն նախկին Միության զինված ուժերն այնտեղից դուրս բերելու մասին Ձեր կարգադրությունն ազդանշան դարձավ ադրբեջանական հարձակման համար: Եւ պետք չէր լինել մեծ քաղաքա-

գես՝ կանխատեսելու համար դեպքերի նման ընթացքը:

Ձեր պատասխանատվությունն առավել մեծանում է անցյալ տարվա հոկտեմբերին ձեռնարկված խաղաղարար առաքելության ձախողմամբ, երբ Դուք, Ղազախստանի նախագահի հետ միասին, եղաք Ադրբեջանում, Հայաստանում ու Ղարաբաղում: Այն ժամանակ այդ գոտում տեղի ունեցողը, արդեն ո՞րերորդ անգամ, ներկայացվեց իբրեւ հայ-ադրբեջանական բարդույթ: Սակայն այդպիսի բան չկա: Չկա՛ նման բարդույթ: Կա արհամարհանք Լեռնային Ղարաբաղի բնակչության մեծամասնությունը կազմող հայության ինքնորոշման իրավունքի նկատմամբ, եւ կան մարդու իրավունքների զանգվածային խախտումներ, կա հայ բնակչության բռնագաղթեցումն Ադրբեջան անկախ պետության կողմից:

Ժելեզնովոդսկի հռչակագիրը, դարձյալ ո՞րերորդ անգամ, քաղաքական կարգավորման կոչ էր անում: Բայց ի՞նչ է նշանակում այդ ծեծված բառային շաբլոնը:

Քաղաքական կարգավորման համար կա լոկ երկու տարբերակ. ժողովրդի կամքի արտահայտության վրա հենված ժողովրդավարական լուծում, կամ բռնակալական, անխուսափելիորեն հակաժողովրդական լուծում, որը ցուցադրվեց Գորբաչովյան շրջանում եւ ո՛չ միայն Ղարաբաղի օրինակով...

Քաղաքական ինչպիսի՞ կարգավորման էիք ձգտում Դուք, Բորիս Նիկոլաեւիչ եւ Նուրսուլթան Ակաեւիչ, երբ որոշեցիք ուղեւորվել Անդրկովկաս, եւ ապա ետ քաշվեցիք՝ ոչնչի չհասած: Բայց Ռուսաստանը չի կարող հեռու մնալ Ղարաբաղի խնդրից: Մերձդնեստրյան հանրապետության խնդրից, համագործակցության պետությունների ուրիշ այլօրինակ խնդիրներից, թեկուզ հենց այն պատճառով, որ նրան է այդպիսի ժառանգություն մնացել նախկին Միությունից:

... Ռուսաստանի համար մե՞ծ պատիվ է լինել Ադրբեջանի ու Մոլդովայի համագործակցության մեջ, եթե նրանցում, ի պատասխան ժողովուրդների կամքի դեմոկրատական արտահայտության, արյուն է հեղվում: Ռուսաստանը կարո՞ղ է մնալ չեզոք, եթե Հարավային Օսեթիայի ժողովրդի ցեղասպանություն է կատարվում, երբ Մոլդովայի օմոնը զանգվածաբար կոտորում է Մերձդնեստրյան (երկրի) միլիցիոներներին, երբ ադրբեջանական տանկերը շրջափակում են Ղարաբաղի հայկական քաղաքները եւ նրանց վրա թնդանոթային կրակ թափում, երբ Լեռնային Ղարաբաղի հանրապետության ղեկավար Լեոնարդ Պետրոսյանը ՄԱԿ-ին խնդրում է կասեցնել հայության հերթական ցեղասպանությունը:

Արեւմուտքում այս հարցերի պատասխաններն այժմ Ձեզնի՛ց են սպասում, Բորիս Նիկոլաեւիչ, եւ Ձեզ հետ միասին՝ ռուս խորհրդարանականների՛ց, Ռուսաստանի՛ց: Չեզոքությունը լավ բան է, բայց մի՞թե այն մի՛շտ է պատվաբեր:

Ղարաբաղը Գորբաչովի կողմից զոհաբերվել էր Միության պահպանությանը: Դո՞ւք ինչ գաղափարի համար եք այսօր չեզոքության քաղաքականություն վարում այնտեղ տեղի ունեցող դեպքերի հանդեպ. Ա. Մութալիբովի կամ ահա ուր-որ է նրան փոխարինելու եկողների իշխանությունն ամրապնդելո՞ւ համար: Իսկ արժե՞ դրանց համար դավել մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներին: Այդ սկզբունքները բարոյական այն սահմանն են, որը չի կարող ոտքի տակ տալ նույնիսկ ամենամոլի քաղաքագետը:

Այս նամակի յուրաքանչյուր բառը ես մտքով ստուգել եմ այն ամենի հետ, որ արել, գրել ու ասել է Անդրեյ Դմիտրիեւիչը: Ես հավատացած եմ, որ Նա էլ նույնը կգրեր: Եւ հիշում էի Ձեր դեմքը, երբ Դուք քայլում էիք նրա դագաղի ետեւից:

Շնորհավոր Ձեր ու Ձեր ընտանիքի Նոր տարին:

Հարգանքով՝ Ելենա Բոններ» (ГА, 1992, հունվարի 10):

**Հունվարի 4-ին** Ստեփանակերտ ժամանեցին Ռուսաստանի մի խումբ խորհրդարանականներ, ռուս ու արտասահմանյան լրագրողներ, «Միջազգային քրիստոնեական համերաշխություն» (ՄՔՀ) կազմակերպության պատվիրակությունը՝ Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի նախագահի տեղակալ բարոնուհի Քերոլայն Կոքսի գլխավորությամբ:

Բերվել էր մարդասիրական օգնություն՝ տաս հազար դոլար արժողությամբ, որի կեսը ՄՔՀ-ն էր տրամադրել, կեսը՝ Միջազգային Սախարովյան կոնգրեսը:



Պատվիրակության անդամները, խորհրդարանականներն ու լրագրողները եռանդագին ուսումնասիրում էին ԼՂՀ վիճակը, այս տարածքում մարդու եւ ազգային փոքրամասնության իրավունքների ոտնահարումների հին ու նոր փաստերը, Ադրբեջանի իշխանությունների կողմից արցախահայության դեմ գործվող վայրագությունները:

Հենց նախորդ օրն էր, որ Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի վրա հարձակվելով՝ ադրբեջանական մի ավազակախումբ այրեց քսան տուն, մորթոտեց վեց անօգնական ծերունիների: Հա՛յ ազատամարտիկները հակահարձակմամբ փախուստի մատնեցին ավազակներին, որոնք տվին չորս զոհ եւ մի քանի վիրավորներ: Մարտից հետո հայտնաբերվեցին եւս մի քանի թուրքերի դիակներ:

«ГА» օրաթերթի աշխատակից Ռ. Հակոբյանն այս լուրերի կողքին բարեխղճությամբ ներկայացրել էր նաեւ ԼՂ հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտի օրագիրը: Ահա դրա թարգմանությունը՝ չնչին կրճատումներով. «70 հազարանոց բնակչություն ունեցող Ստեփանակերտը երեկոյան ընկղմվում է խավարի մեջ: Շատ քիչ կպատահի, որ պատուհաններից առկայծեն նավթի ճրագի կամ մոմի լույսերը: Խավարը ցրում են միայն հրեղեն պոչերը քաղաքի վրա արձակող այն կործանիչ հրթիռները, որ ադրբեջանական ազգային բանակն ու օմոնականներն են ուղարկում ադրբեջանական կետերից: Իրենց տներում գիշերում են միայն ինքնապաշտպանության պահակակետերի հերթափոխից վերադարձած հասուն տղամարդիկ: Քաղաքի բնակչությունը, զգուշանալով հրթիռահրանոթային կրակակոծումից, գիշերում է տների գետնահարկերում: Քաղաքի հրետակոծությունն ու գնդակոծությունը փոքր-ինչ մեղմացել է, ինչպես կարծում են, դիտորդների եւ ուրիշ անվանի հյուրերի ներկայության պատճառով: Բայց եւ այդ ներկայությունը չի խանգարում, որ ադրբեջանական ավազակախմբերը չդադարող կրակի տակ պահեն Ստեփանակերտի արվարձանները:

Ջրմուղը պայթեցրել են, գազ չկա, տներում ջեռուցումը բացակայում է, եւ պաշտպանվողները կտրատում են փողոցների ու պուրակների ծառերը, որպեսզի վառեն ու տաքացնեն իրենց գետնահարկային ապաստարանները: Կտրված է հեռախոսային կապը ե՛ւ արտաքին աշխարհի հետ, ե՛ւ ԼՂՀ ներսում: Արդեն համարյա մեկ ամիս է, ինչ հաց չի թխվում: Հրթիռներով ավերվել են ծննդատունը, քաղաքային հիվանդանոցը, բնակելի բազմաթիվ տներ: Ծանր վիրավորներին, որոնց մեջ քիչ չեն պատանիները, ծերերը, կանայք, անհնար է քաղաքից դուրս տանել, քանի որ օդանավակայանի վրա առաջվա պես վերահսկում են ադրբեջանական օմոնականները:

Միայն ամանորյա գիշերը Ստեփանակերտի վրա արձակվել են շուրջ 200 մարտական հրթիռներ:

Այսպիսին են Գորբաչովի Կենտրոնի հեռատես ազգային քաղաքականության արդյունքները»,-եզրակացնում է աննկուն լեռնաստանի մայրաքաղաքի ողբերգության ականատեսն ու արձանագրողը («ГА», 1992, հունվ. 9):

**Հունվարի 5-ին** Ստեփանակերտում, լրագրողների հետ ունեցած հարցազրույցի ժամանակ, բարոնուհի Քերոլայն Կոքսը հայտարարեց, թե ինքը Մեծ Բրիտանիայի վարչապետին ու ՄԱԿ-ի անդամ երկրների պրեզիդենտներին կզեկուցի, որ այստեղ, Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում, առկա է հայ ժողովրդի դեմ սկսված ցեղասպանություն՝ իր բոլոր հատկանիշներով:

Նույն կարծիքին էր եւ նույնպես գործելու իր պատրաստակամությունը հայտնեց «Միջազգային քրիստոնեական կազմակերպության» ներկայացուցիչ Ջոն Էյբները:

Բարոնուհի Կոքսը սրանով արդեն չորրորդ անգամն է լինում Արցախում: Նա հայտարարեց, որ տաս շաբաթ առաջ կատարած նախորդ այցելությունից հետո դրությունն այստեղ կտրուկ փոխվել է դեպի աղետալին: Ադրբեջանի իշխանություններն ավելի դաժան ռազմական միջոցներ ու ճնշումներ են գործադրում խաղաղ բնակչության դեմ: Ամեն օր զոհվում են կանայք, երեխաներ, ծերեր: Ավազակային կազմավորումների համար արդեն սովորական է դարձել երեխաներին պատանդ վերցնելը: Շահումյանի շրջա-

նի Կարաչինար գյուղում ծանր վիրավորվել են մի քանի երեխաներ: Գտնվել են գլխատված այն վեց երեխաների դիակները, որոնք անհետ կորել էին Բուզլուխի վրա կատարված գրոհի ժամանակ:

Մանկահասակ երեխաների հետ կատարված այս չարագործությունները համաշխարհային հասարակությանը կհամոզեն, որ 20-րդ դարի վերջում կա մի պետություն, որի ներկայացուցիչները չեն խորշում մարդակերությունից ու նման ուրիշ վայրագություններից:

**Հունվարի 6-ի** առավոտյան Ստեփանակերտում բացվեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որի օրակարգում դրված էին ղեկավար մարմինների ընտրության եւ հանրապետության վիճակը բարելավելուն ուղղված հարցեր, ինչպես հանրապետության անկախության հռչակագրի ընդունումը, ինքնապաշտպանական ուժերի ստեղծումը:

Ընտրված 51 պատգամավորներից (ադրբեջանցի բնակչությունը չէր մասնակցել ընտրություններին) նստաշրջանին մասնակցում էին 48-ը: Երեք պատգամավորներ չէին մասնակցել, որովհետեւ փակ էին մայրաքաղաք տանող շատ ճանապարհներ:

Հարցի կարեւորության գիտակցությամբ ընդունվեց որոշում սեփական ռազմական ուժեր ստեղծելու մասին: «Սեփական սահմանները պաշտպանելու եւ բնակչության անվտանգությունն ապահովելու համար,-գրված է որոշման մեջ,-ԼՂՀ-ն ստեղծում է իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի ու պետական անվտանգության մարմիններ»: Հանրապետության քաղաքացիները զինվորական ծառայություն են կատարելու միայն սեփական տարածքում, իսկ ԼՂՀ սահմաններից դուրս ծառայություն կարող են անել միայն միջպետական պայմանագրերի ու համաձայնությունների հիման վրա:

Որոշումներ ընդունվեցին պետական լեզվի (հայերեն), ազգային փոքրամասնությունների մշակութային իրավունքների եւլ էական խնդիրների մասին:

Ընդունվեց ուղերձ ՄԱԿ-ին, պատճենները՝ ԱՊՀ ղեկավարներին, աշխարհի պետությունների խորհրդարաններին ու կառավարություններին, որպեսզի օգնեն ապահովելու ԼՂՀ հայության անվտանգությունը, ճանաչեն նրա նոր կարգավիճակը եւ դիվանագիտական հարաբերություններ հաստատեն նրա հետ:

Ուղերձում նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետության ճանաչումը եւ նրա հետ դիվանագիտական ու այլ կապեր հաստատելն առավելապես այսօ՛ր է անհրաժեշտ, քանզի էլ ե՞րբ պետք է գործնականորեն ապացուցվի, որ քաղաքակիրթ մարդկությունը կանգնած է մարդու եւ ազգերի պաշտպանության դիրքերում եւ պատրաստ է խաղաղ բնակչությանը փրկելու ֆիզիկական բնաջնջումից:

Հաջորդ օրերին (**հունվարի 7–8**) Գերագույն խորհուրդը կատարեց իր նախագահի ընտրությունները: Նախապես առաջադրված թեկնածուներից (Լեոնարդ Պետրոսյան, Օլեգ Եսայան, Ռոբերտ Քոչարյան, Արթուր Մկրտչյան, Լեւոն Մելիք-Շահնազարյան) վերջում քվեարկության էին թողնվել երկուսը՝ Լ. Պետրոսյանն ու Ա. Մկրտչյանը, որոնցից էլ երկրորդը՝ Հադրութի պատմա-երկրագիտական թանգարանի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Արթուր Մկրտչյանը, ստացավ 44 ձայն եւ դարձավ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին Գերագույն խորհրդի առաջին նախագահը:

Նույն օրն էլ (**հունվարի 8-ին**) ԼՂՀ վարչապետ նշանակվեց տնտեսագետ, մինչ այդ մարզգործկոմի նախագահ աշխատած Օլեգ Եսայանը:

Դեռ նստաշրջանը բացելիս Լեոնարդ Պետրոսյանը հայտարարել էր, թե Արցախի նոր կարգավիճակի ու իշխանության համապատասխան մարմինների ստեղծումը ժողովրդավարական ու քաղաքակիրթ եղանակներով՝ անպայման հիմք կդառնա, որպեսզի արտաքին աշխարհն ընդունի այն, ճանաչի նրա իրավունքները, մանավանդ իր հինավուրց-ավանդական հողի վրա եւ այս արեւի տակ բարգավաճելու անկապտելին: Սակայն հենց նույն օրն իսկ, ըստ Ստեփանակերտում տեղակայված զորամասի հաղորդած տեղեկության,



Ադրբեջանի ազգային բանակը հենց Ստեփանակերտի մատույցները տեղափոխեց մի քանի զորաջոկատներ եւ ծանր տանկեր:

Իսկ Շահումյանի շրջանին արժանի պատիժ հասցնելու համար, որ իր պատգամավորներն է ընտրել-ուղարկել Արցախի Գերագույն խորհրդի նստաշրջանին, ադրբեջանցիները նոր ահռելի հարձակում ձեռնարկեցին Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ գյուղերի վրա: Հայ ինքնապաշտպանության ջոկատների հակահարվածներից սպանվեցին 12 օմոնականներ: Կան բազմաթիվ վիրավորներ:

Նախորդ օրվա (կիրակի) երեկոյան ռուսական պատգամավորների խումբն այցելեց Ստեփանակերտի կալանատունը եւ զրուցեց այնտեղ գտնվող 9 գերի ադրբեջանցի զինվորականների հետ: Ահա թե նրանք ի՛նչ էին ասել ռուս պատգամավորներին. «Մենք բոլորս էլ հերթական զորահավաքի ենք կանչվել Բաքվի ու Սումգայիթի զինկոմիսարիատների կողմից եւ Ղարաբաղ ենք հասցվել առանց զգուշացվելու կամ մեր համաձայնության»: Նրանք բոլորն էլ միաբերան դատապարտում էին իրենց կառավարությանը, որն իրենց խաբել եւ բերել է այստեղ՝ իբրեւ թնդանոթի կերակուր:

Իսկ այդ նույն հանրապետության ղեկավարությունը, ինչպես թղթակիցն էր հաղորդում, շարունակում է հակահայկական վայնասունը, հանրահավաքներ է կազմակերպում ժողովրդին «հավատի պատերազմին» նախապատրաստելու համար: Նման մի հավաքում հրապարակվեց Ադրբեջանի պաշտպանության նախարարության ռազմատենչ հայտարարությունը, որի մեջ մասնավորապես ասված էր. «Հանրապետությունում ստեղծված ռազմա-քաղաքական այս դժվար իրադրության մեջ ադրբեջանական ժողովուրդը պետք է մոտեցնի իր հաղթանակն անագորույն թշնամու դեմ՝ օգտագործելով իր պատմական իմաստությունը, փորձություններից դուրս գա բաց ճակատով, գլուխը բարձր: Իսկ դրա համար անհրաժեշտ է ստեղծել հզոր բանակ եւ մեր ղարաբաղյան հողն ազատագրել հայ ավազակներից»:

Ի՞նչ խոսք, որ ռազմատենչ կառավարությանը կհաջողվի կազմել հզոր բանակ, նրան զինել ռուսական զորքից խլած ու Թուրքիայից ներմուծած նորագույն զենքով ու ռազմական տեխնիկայով: Սակայն այս բոլորն ի չիք կդառնան այն ամենազոր, ռազմիկին անխոցելի դարձնող զենքի դեմ, որ ունի Արցախի պաշտպան հայը՝ իր սեփական հողն ու հայրենիքը պաշտպանելու կամքը:

**Հունվարի 6-ի** երեկոյան արդեն ո՞ր ժամանակից լուռ ու խավարած հեռուստաէկրանները լուսավորվեցին Արցախում: Ադրբեջանի մեծավորների «մեծահոգությունը» բռնել է,-մտածեցին ԼՂՀ ԳԽ-ի առաջին նստաշրջանի դիտորդները, չէ՞ որ ոչ միայն էլեկտրական լույս կար, այլեւ հնարավորություն՝ հեռուստահաղորդում վայելելու: Կարծում էին՝ նստաշրջանի աշխատանքները կանոնավոր անցկացնելու համար է: Սակայն հեռուստացույցները կարող էին որսալ միայն Բաքվի ալիքը, որով ելույթ պիտի ունենար այդ հանրապետության հնագույն լրագրողներից մեկը՝ Մինիցին ազգանունով: Ահա թե արցախցիներին ու նրանց հյուրերին ի՛նչ կարեւորագույն խոսք ուներ ասելու Մինիցին կոչվածը: «Բրիտանական խորհրդարանի անդամ, բարոնուհի Կոքսը,-այսպես սկսեց նա,-թեկուզ եւ եղել է Ադրբեջանում, այսուհանդերձ չէր գտնում, որ Ղարաբաղում, սահմանի մոտ, ամենաիսկական պատերազմ է գնում տարածքը բաժանելու համար: Նա բացարձակապես հրաժարվում է ճանաչել Ադրբեջանի դեմ Հայաստանի ագրեսիայի իրողությունը: Բայց ահա բազմաթիվ հարցազրույցներում, ասուլիսներում, նույնիսկ այնպիսինում, որ տեղի է ունեցել ԱՄՆ-ի կոնգրեսում, բարոնուհին հայտարարեց, թե Ղարաբաղում իրականացվում է հայ բնակչության իրավունքների զանգվածային խախտում: Եւ բարոնուհին իրեն հատուկ կրքոտությամբ համաշխարհային ամբողջ հասարակայնությանը կոչ է անում չճանաչել Ադրբեջանի անկախությունը...

Քերոլայն Կոքսի ներկայությամբ իր, այսպես կոչված, Գերագույն խորհրդի նստաշրջանում հայկական կողմը ցանկանում է ճնշում գործադրել համաշխարհային հասարակայնության կարծիքի վրա՝ նպատակ ունենալով ճանաչել տալ Ղարաբաղյան հանրապետության անկախությունը: Ի՛նչ կա որ, սա էլ հերթական կեղտոտ մի խաղ է, որի

մեջ բրիտանական խորհրդարանի անդամի հեղինակությունն օգտագործվում է որպես խաղաթուղթ: Շա՜տ ափսոս...» («ГА», 1992, հունվարի 10):

Այս Սինիցինին ես թռուցիկ ճանաչում եմ (եթե, իհարկե, նա՛ է, որի հետ հանդիպելու բախտ եմ ունեցել 1954-ին, եւ ոչ թե որդին կամ ուրիշ որեւէ ազգանվանակիցը): Ինձ նշանակել էին «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր, եւ նա, իբրեւ «Բաք. ռաբոչի» ղեկավար թերթի աշխատակից, ուղանցաբար ընկել էր Ստեփանակերտ, փորձեց ինձ հրահանգավորել... Ես նրան լռեցրի անմիջապես՝ առաջարկելով, որ նման դերով այլեւս չերեւա մեր խմբագրատանը: Չերեւալը չերեւաց, սակայն լավ եմ հիշում, թե գրածներում ինչպես մաղձոտ էր հայերի հանդեպ եւ ինչպիսի «բարեխղճությամբ» էր ծառայում իր պատվիրատուներին:

50-ականների ռուսագիր հաճկատարներից ոչ մեկը չի երեւում այսօրվա ադրբեջանական մամուլում: Սինիցինը լավ է դիմացել:

✧ ✧ ✧

Այսօր (հունվարի 6-ին) Ղազախում տեղի էր ունեցել հայ եւ ադրբեջանցի ստեղծագործական ու գիտական մտավորականների ներկայացուցիչների հանդիպումը՝ երկու ժողովուրդների բախումները դադարեցնելու եւ բարիդրացիություն հաստատելու առաքելությամբ: Հայկական կողմից բանակցություններին մասնակցել են Անահիտ Բայանդուրը, Վահագն Գուրզադյանը, Հրանտ Մաթեւոսյանը, Գրետա Միրզոյանը, Լեւոն Մկրտչյանը, Արշալույս Փափազյանը, Վարդգես Պետրոսյանը:

Ադրբեջանի ներկայացուցիչներից երկուսը՝ Ռուստամխանլի Սաբիրը եւ Լեյլա Յունուսովան, որոնք այս չորս տարիների ընթացքում հայտնի են եղել միայն իրենց հակահայկական շառլատանություններով ու իրենց ազգը մոլի արարքների մղող կոչերով, ցույց են տալիս, թե բանակցությունները ի՛նչ մակարդակով կարող էին վարվել, մանավանդ՝ ի՛նչ արդյունք կարող էին ունենալ:

Հրապարակված հայտարարության մեջ խոսում կա հանդիպումները շարունակելու եւ նրանց մասնակիցների շրջանակներն ընդլայնելու մասին:

Այս հայտարարությանն արձագանքեց ռուս մտավորականների՝ գիտնականների, գրողների, հասարակական գործիչների մի խումբ, որի կոչը հրապարակվել է, կարդացվել արտասահմանյան ռադիոձայներով: Այնտեղ, ի միջի այլոց, գրված է. «Մենք պատրաստվում ենք համագործակցել Հայաստանի ու Ադրբեջանի մտավորականների հետ՝ շրջանում խաղաղության վերականգնման, բանակցությունների ճանապարհով բարիդրացիություն ստեղծելու համար» («Ավանգարդ», 1992, փետր. 4):

**Հունվարի 7-ին** Ադրբեջանի լրատվական մարմինները հրապարակեցին իրենց ՆԳՆ նոտան արտասահմանյան դիտորդների Ստեփանակերտ ժամանելու առթիվ: Վրդովված են, որ սրանք Արցախ են «թափանցում» Հայաստանի միջով ու միջոցով, «առանց ադրբեջանական իշխանությունների իմացության»: Խոստանում են ամեն ինչ անել, որպեսզի կանխվի ապագա ամեն մի այդպիսի ժամանում, ապա եւ դրանց համար «ամբողջ պատասխանատվությունը կրելու են Հայաստանի հանրապետության իշխանությունները», որոնք «խախտում են ԱՊՀ Ալմա-Աթայում ընդունված համաձայնությունները»:

Այստեղ նորից ու նորից հիշվում է Բերդաշենի մոտ տեղի ունեցած ուղղաթիռի աղետը: Իբր, երբ բացել են նրա «սեւ արկղը», այն եղել է դատարկ: Ուրեմն եւ «ճշմարիտ է այն հայտարարությունը, թե ուղղաթիռը կործանվել է 300 մետր հեռավորությունից» (բայց ինչո՞ւ 300 եւ ոչ թե 200 կամ 350) արձակված հրթիռով ու գնդակոծությամբ:

Երեւի ուղղաթիռի աղետի վրեժը դեռ երկար պիտի հանեին բերդաշենցիներից. լրատվական մարմինները հաղորդել են, որ հունվարի 6-ի գիշերը ավտոմատներով եւ գնդացիրներով զինված ավելի քան հարյուր ադրբեջանցիներ, զրահամեքենաների համագործակցությամբ, հարձակվել են Բերդաշենի կաթնապրանքային ֆերմայի վրա եւ քշել-տարել 266 գլուխ խոշոր եղջերավոր անասուն:



Բաքվի ռադիոն ու հեռուստատեսությունը չեն մոռանում դատապարտել եւ բարոնուհի Քերոլայն Կոքսին՝ հայտարարելով, թե «յուրաքանչյուր անգամ դժբախտ Ղարաբաղ ժամանելով նա այստեղ առավել բորբոքում է արյունահեղությունը» («ГА», 1992, հունվ. 9):

✧ ✧ ✧

Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանի եւ պետական մարմինների կազմավորման անդրանիկ քայլերի վկա-դիտորդների հետ էր Ռուսաստանի խորհրդարանի դեպուտատ Անատոլի Շաբադը: Նա ակնհայտ բարյացակամությամբ ու հիացումով դիտում էր այդ քայլերը, հաճախ իր ապրումներն արտահայտում՝ իբրեւ ճշմարիտ բարեկամ, չթաքցնելով նաեւ հոգսերը:

Ռուսաստանի հետ համերաշխության գաղափարը, ինչպես նաեւ Ռուսաստանի աշխարհաքաղաքական շահերը հիմա այնքան բարձր հարգանք չեն վայելում,-ասել է նա:-Սակայն բացառված չէ, որ նրանք վաղ թե ուշ կվերականգնվեն, կգրավեն իրենց արժանի տեղը... Իսկ այժմ կարեւորն է դիմանալ: Դիմանալ այսօր՝ հենվելով միայն սեփական ուժերի վրա: Իսկ դրանք, դատելով ամեն ինչից, կան եւ կբավականացնեն...

Անատոլի Շաբադը վկան է եղել Արցախի ծանրագույն օրերի, այն քննության, որ լեռնաստանը բռնում է դժոխային պայմաններում: Եթե այժմ էլ վստահ է, որ ուժերը կան եւ կբավականացնեն, չի կարելի չհավատալ:

**Հունվարի 8-ին** Հայաստանի հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի նախագահի տեղակալ Քերոլայն Կոքսին, որը հենց նոր վերադարձել էր Լեռնային Ղարաբաղի հանրապետությունից:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Ք. Կոքսը տեղեկացրեց նախորդ այցելությունից հետո անցած ժամանակահատվածում ղարաբաղյան խնդիրը միջազգային ասպարեզում բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Կանադայում եւ այլուր ունեցած հանդիպումների եւ կազմակերպված ունկնդրումների մասին, որոնց արդյունքում նշված երկրների պաշտոնական շրջանակները, ինչպես նաեւ միջազգային մի շարք կազմակերպություններ հանդես են եկել հայտարարություններով, ընդունել համապատասխան բանաձեւեր:

Այնուհետեւ անդրադառնալով վերջին այցելությունից ստացած տպավորություններին, տիկին Կոքսը ցավով նշեց, որ 10 շաբաթ առաջվա համեմատ իրավիճակը Լեռնային Ղարաբաղում կտրուկ սրվել է եւ ինքնապաշտպանության մարտիկներին հաջողվում է ադրբեջանական հրոսակների չդադարող հարձակումներին դիմագրավել անձնազոհության ու հայրենի օջախները մինչեւ վերջ պաշտպանելու վճռականության շնորհիվ:

Նա տեղեկացրեց նաեւ, որ իր եւ Քրիստոնյաների համերաշխության միջազգային կազմակերպության հանգանակած միջոցներով Լեռնային Ղարաբաղ են հասցվել դեղորայք եւ բուժմիջոցներ, վստահեցնելով, որ առաջիկայում եւս ամեն ինչ կարվի մարդասիրական օգնության ծավալները մեծացնելու, ինչպես նաեւ Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունների մասին միջազգային հանրությանը տեղյակ պահելու ուղղությամբ:

Լ. Տեր-Պետրոսյանը տիկին Ք. Կոքսին շնորհակալություն հայտնեց նրա գործադրած արցախանպաստ մեծ ջանքերի ու միջնորդումների համար, բացատրեց Արցախի խնդրի լուծման համար իր կառավարության արածն ու խնդիրները, ապա նշեց, որ ԼՂՀ-ից նախկին Միության ներքին զորքերը դուրս բերելուց հետո՛ հնարավոր կլինի կայունությունը պահպանել խաղաղարար այլ ուժերի միջոցով, լինեն դրանք Համագործակցության միջհանրապետական զինվորական կազմավորումներ թե ՄԱԿ-ի «կապույտ սաղավարտավորներ»:

Ընդգծվեց նաեւ, որ հարկ է խստացնել պատժամիջոցներն այն հանրապետությունների նկատմամբ, որոնցում կոպտորեն ոտնահարվում են մարդու եւ ազգային փոքրամաս-

նությունների տարրական իրավունքները:

Վերջում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը խորին գոհունակություն հայտնեց բարոնուհի Կոքսի հետեւողական գործունեության առթիվ, շեշտելով, որ հիմնականում նրա եւ ակադեմիկոս Ա. Սախարովի այրու՝ Ելենա Բոնների ջանքերի շնորհիվ էր, որ հաջողվեց միջազգայնացնել Ղարաբաղի հարցը:

**Հունվարի 9-ին** Ֆրանսիայի ազգային ժողովի մի խումբ պատգամավորներ, որոնք ներկայացնում են աջ ու կենտրոնական ընդդիմադիր կուսակցությունները, հատուկ նամակով Արտաքին գործերի նախարար Ռոլան Դյումային են դիմել՝ կոչ անելով պաշտոնապես աջակցելու Լեռնային Ղարաբաղի հանրապետության խնդրի լուծմանը, նրա բնակչության ծայրահեղ ծանր տնտեսական վիճակը կարգավորելու հարցին:

**Հունվարի 11-ին** ԼՂՀ ԳԽ-ի թափուր 11 տեղերի համար կազմակերպված լրացուցիչ ընտրություններով ընտրվեցին 9 պատգամավորներ: Այսպես թե այնպես ԳԽ-ը պատշաճ կազմ ուներ, կարելի էր սկսել աշխատանքը՝ իշխանության գործնական մարմինների ստեղծման, նրանց ծրագրված, սահուն աշխատանքի համար: Սակայն ադրբեջանական կողմին հենց այդ էր անհանգստացնում. ինչպե՞ս կարելի է թույլ տալ, որ ծնունդից առաջ աչքի փուշ դարձած իշխանությունը գործի: Բավական էր արտասահմանյան դիտորդներն ու անկախ պետությունների ներկայացուցիչները հեռանային մարզից, որպեսզի բնակավայրերի զանգվածային ռմբակոծություններն ու գնդակոծությունները, հարձակումներն ու կողոպուտ-ավերածությունները սաստկանային:

Տեղական մարմինները, նույնիսկ Ռուսաստանի պատգամավորներն ու արտասահմանյան դիտորդները քանիցս զգուշացրել էին միութենական ՆԳՆ ղեկավարներին, թե Ադրբեջանն ունի «Գրադ» կոչված ահավոր թնդանոթներից եւ, հենց որ հնարավոր լինի, անպատիժ կերպով օգտագործելու է Արցախի ու Հայաստանի խաղաղ բնակչության դեմ: Ուշադրություն չէին դարձրել: Միամտություն էլ կլինի մտածել, թե նրանք այդ «Գրադ» թնդանոթների տեղը չգիտեին, երբ իրենք էին վաճառել:

Եւ, ահա՛, **հունվարի 13-ին** այդ հրանոթներից Շահումյանի վրա կարկուտ թափեցին ադրբեջանական Շափաղ ու Ջեյվա գյուղերի կողմից: Շրջկենտրոնում ավերվեցին ոչ միայն բազմաթիվ բնակելի ու վարչական տներ, այլեւ սպանվեցին 18-19 տարեկան Ղահրամանյան Կարինեն իր 11-ամսական տղայի հետ միասին, 65-ամյա Սիմոն Դադայանը, 11-ամյա Վեներա Ներսիսյանը: Կային երկու տասնյակից ավելի վիրավորներ, որոնցից համեմատաբար ծանր վիճակում գտնվող վեց հոգու անմիջապես փոխադրեցին Երեւան:

**13-15-ին** նույնատիպ թնդանոթաձգության ենթարկվեց նաեւ Մարտունի քաղաք-շրջկենտրոնը, որի բազմաթիվ շենքեր ավերված են, եւ կան վիրավորներ խաղաղ բնակիչներից:

✧ ✧ ✧

Դեռեւս **հունվարի 10-ին** Ստեփանակերտ էր ժամանել Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետության հեռուստատեսության ներկայացուցիչների մի պատվիրակություն՝ Դիրկ Զագերի գլխավորությամբ: Նրա նպատակն էր անմիջական ճշմարիտ խոսք ասել Լեռնային Ղարաբաղի հանրապետության վիճակից, քանի որ, ինչպես ղեկավարն էր տեղեկացրել, ադրբեջանական լրատվական բազմաթիվ մարմիններ, մասնավորապես «Վաքան» կոչվածը, գերմանական հեռուստադիտողին, ռադիոլսողին ու ընթերցողին կշտացրել են ստահոդ տեղեկություններով այն ամենի մասին, որ այստեղ է կատարվում:

Հյուրերը տեսագրել են հարցազրույց ԼՂՀ ԳԽ-ի նորընտիր նախագահ Արթուր Մկրտչյանի եւ ուրիշների հետ... Եւ Գերմանիայի միլիոնավոր հեռուստադիտողներ երկու օր հետո, **հունվարի 12-ին**, արդեն առանց Բաքվի կեղծարար միջնորդության, տեսել են, թե ի՛նչ կա Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում, նրա ազատասեր ժողովուրդն ինչպես է պայքարում իր անկախության համար:



Այդ օրերին Արցախում լուր առան այն մասին, որ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության կոնգրեսի մշտական գործող միջազգային կազմկոմիտեն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին է հղել նամակ, որի մեջ շարադրված է, թե Կոնգրեսը մշտապես Ղարաբաղում գտնված իր դիտորդների ու քննախույզների միջոցով պարզել է, որ այնտեղ դաժանորեն ոտնահարվում են մարդու իրավունքները, հայ ազգաբնակչության դեմ գործադրվում է պետական տեռոր, եւ որ Ադրբեջանը ցանկանում է բռնի ուժի միջոցով լուծել չորս տարի շարունակ ձգձգված խնդիրը: Նշվում էր, որ միայն ՄԱԿ-ի կտրական միջամտությամբ հնարավոր կլինի կանխել անընդմեջ հառաջացող արյունալի հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի ու նրա վրա տիրելու մարմաջով տառապող Ադրբեջանի իշխանությունների միջեւ:

Կազմկոմիտեն համանման նամակ-կոչ էր հղել նաեւ Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինին:

**Հունվարի 13-ին**, Բաքվի հայության 1990 թ. ջարդի ու բռնագաղթեցման սկզբի տարելիցի օրը, Ադրբեջանը նշանավորեց Արցախի ու Շահումյանի շրջանի դեմ գործած նոր վայրագություններով: Շահումյանի գյուղերն ավերիչ ռմբակոծությունների եւ գնդակոծությունների ենթարկվեցին: Գործում էին հրանոթի զանազան տեսակները, տանկերն ու զրահամեքենաները: Զոհվեցին չորս մարդ, կային բազմաթիվ վիրավորներ:

Իսկ Արցախում, ուր ռմբակոծություններն ու հրթիռակոծությունները դեռ չէին դադարել, Մարտունու շրջանի Խնուշինակ գյուղի ծայրամասային տներից մեկն են մտել մի խումբ օմոնական ավազակներ, մորթել տան մորն ու երեք տղային, իսկ 6 ու 9 տարեկաններին եւ հորը տարել իրենց հետ, անկասկած ավելի երկարատեւ հոշոտումի եւ դրանից թրքական բավականություն ստանալու համար:

**14-ի առավոտյան** «Ազատություն» ռադիոն այս լուրը հաղորդելուց կես ժամ անց էլ տեղեկացրեց, թե, ահա՛, հենց նոր գերմանական լրատվական մի մարմին ստացել է նոր լուր Բաքվից, այնտեղի «Թուրան» (Թուրա՞ն) լրատվությունից, որը պնդում էր, թե Ղարաբաղում հայկական բնակավայրերից ադրբեջանցիների վրա տեղացող կրակը չի դադարում:

Այսպե՛ս, ազնիվ մարդիկ կարող են հավատալ, թե հայերն անվերջ կրակում են ադրբեջանցիների վրա, վերջիններս պարզապես դաս են տվել նրանց, որպեսզի իրենց չափն իմանան:

**Հունվարի 14-ին** Մախաչկալայում տեղի էր ունեցել ԱՊՀ (նախկին ԽՍՀՄ) ժողովուրդների ներկայացուցիչների թուրքական թե թրքագիտական կոնգրեսը, որի քննարկած հարցերից մեկը, Ադրբեջանի ներկայացուցիչների հարկադրանքով, վերաբերում էր Լեռնային Ղարաբաղին: Գիտաժողովը համարյա միաձայն հավանություն էր տվել Ղարաբաղի խնդրի լուծման առթիվ Ադրբեջանի բռնած դիրքին ու գործադրած միջոցառումներին: Այս քննարկումից հետո ընդունված բանաձեւում նշվել է, թե Հայաստանի կողմից Ղարաբաղն Ադրբեջանից պոկելու եւ «Ղարաբաղի լեռնային մասի» բնակչության արկածախնդրական խժդժությունների մղելու փորձերը դատապարտելի հանցագործություններ են:

Գիտաժողովը միաժամանակ կշտամբական խոսքեր էր արձանագրել Ադրբ. պրեզիդենտ Ա. Մութալիբովի հասցեին, որը, իբր, վճռական քայլեր չի կատարում Ղարաբաղի հարցին վերջ տալու համար:

Սակայն հաջորդ օրն իսկ, երբ գիտաժողովում լեզգիների ներկայացուցիչները հարց բարձրացրին ստեղծելու իրենց ազգային ինքնավարությունը՝ նրա մեջ առնելով Դաղստանի հարավային լեզգիաբնակ շրջաններն ու Ադրբեջանի դարձյալ լեզգիաբնակ հյուսիս-արեւելյան մասը, «տուժող-զրկվող» կողմերը խայտառակ աղմուկ բարձրացրին, բանը հասավ փոխադարձ ծանր վիրավորանքների ու ձեռնամարտի:

**Հունվարի 17-ին** ԼՂՀ ԳԽ-ի շարունակվող առաջին նստաշրջանում ընդունվեց հանրապետության պետական անկախության հռչակագիրը եւ օրենքը ԼՂՀ Գերագույն խորհրդի մասին: Շարունակվեցին ԳԽ-ի մշտական հանձնաժողովների եւ նրանց նա-

խագահների ընտրությունները: Քննարկվեցին նաեւ ԼՂՀ պետական դրոշի ու զինանշանի հարցերը...

✧ ✧ ✧

Իսկ Եվրոպայի սրտից բարի լուրեր էին գալիս: Ահա նրանցից մեկը. Հայաստան կատարած այցելությունից հետո հունվարի 17-ին մամուլի ասուլիս է ունեցել Ֆրանսիայի խորհրդարանի անդամ, գոլիստական կուսակցության մարդկային հարցերի գծով քարտուղար Ռ. Կազընավը, որը քննադատել է իր երկրի վեհերոտ դիրքը Հայաստանի ու Արցախի հանդեպ, պահանջել, որ այն գործնական քայլեր կատարի օգնության եւ դիվանագիտական-քաղաքական ասպարեզներում: Նա հաղորդեց նաեւ, որ շուտով (փետրվարի սկզբին) Հայաստան է ժամանելու Մարդասիրական հարցերի գծով Ֆրանսիայի կառավարության անդամ (նախարար) Բեռնար Քուշները, որին ինքը դիմել է կոչով. «որպեսզի հատուկ ուշադրություն դարձվի Արցախի հայության վիճակի վրա,... որ ֆրանսիական կառավարությունը հստակորեն դիրքորոշվի ի նպաստ այս բարեկամ ժողովրդի, որը ժողովրդավարության եւ մարդու իրավունքների նկատմամբ ունեցած իր հարգանքով արժանի է Ֆրանսիայի գնահատանքին, վստահությանն ու զորակցությանը» («Ազգ», 1992, հունվ. 25):

**Հունվարի 18-ին ու 19-ին** համեմատաբար խաղաղ էին լուրերը, եւ հաղորդավարները դա վերագրում էին ոչ միայն բարոնուհի Կոքսի նոր ժամանումին, այլեւ մեր ինքնապաշտպանության հզորությանը. իբր, թուրքերն արդեն համոզվել են, որ մեր պաշտպանական բոլոր կետերն էլ անառիկ են, եւ այլեւս չէին համարձակվում ստուգել:

Ես այդ կարծիքին չէի, եւ, դժբախտաբար, այդ է՛լ ապացուցվեց:

**Հունվարի 20-ի** առավոտյան մտել էի «Արցախ» կոմիտե, որպեսզի զանգահարեմ Ստեփանակերտ: Ասացին՝ արդեն քանի օր է, ոչ մի կապ չկա Արցախի հետ: Բայց եւ այնպես հայտնի է, որ անցած գիշերը մեծ անախորժություններ են եղել:

Մտա նոր նախագահ Շիրխանյանի մոտ: Ծանոթացանք, ու նրա առաջին խոսքն այն էր, թե ոչ ստույգ տվյալներով՝ գիշերը զանգվածաբար ռմբակոծել են Ստեփանակերտն ու Մարտունին: Առաջինում ունեցել ենք չորս թե հինգ զոհեր, որոնց հետ նաեւ Արցախից Հայաստանի ԳԽ-ի պատգամավոր Վիգեն Շիրինյանը: Իսկ Մարտունու կորուստներն ավելի մեծ են՝ ինն սպանված եւ մի քանի տասնյակ վիրավոր:

Երեկոյան «Լրաբերը» հենց այսքանն էլ հաղորդեց՝ ավելացնելով միայն, որ Վիգեն Շիրինյանը վեց զավակների հայր է, եւ Ստեփանակերտի ինքնապաշտպանները լրիվ տիրացել են Կրկժանի բարձունքներին, ուրկից էլ ռմբակոծումն էր կատարվել նախկինի պես:

**Հունվար 19-20-ին** Մարտունու դեմ կանգնած Ամիրանլար որջի կրակակետերը վերացնելու համար շրջանի ինքնապաշտպանական ուժերը դիմել են համարձակ հարձակումների, որոնց շնորհիվ սպանվել են ավելի քան  քսան օմոնականներ, մնացածները փախուստի են դիմել:

✧ ✧ ✧

**Հունվարի 20-ին** նախօրյակին Կրկժանի կողմից կատարված զանգվածային ռմբակոծության ու գնդակոծության զոհ դարձած Վիգեն Շիրինյանի կսկիծն էին ապրում Ստեփանակերտի պաշտպանները, երբ երեկոյան դեմ վերստին սկսվեց ռմբակոծությունը: Այս անգամ հայկական ինքնապաշտպանության ուժերը կտրուկ հարձակման անցան, ադրբեջանցի հրձիգներին դուրս մղեցին իրենց դիրքերից եւ գրավեցին բոլոր այն բարձունքները, որոնցից նրանք ռմբակոծում էին քաղաքը:

**Հունվարի 21-ին** «Նեզավիսիմայա գազետան» հրապարակեց Ռուսաստանի պրեզիդենտի խորհրդական Գալինա Ստարովոյտովայի կարծիքը Հարավային Օսեթիայի հանրաքվեի արդյունքների ու նրանց նկատմամբ Ռուսաստանի բռնելիք դիրքի մասին: Այնտեղ ազգային հարաբերությունների հմուտ մասնագետը հետաքրքիր մտքեր էր արտահայտում՝ Օսեթիայի հետ առնչելով նաեւ Արցախի խնդիրը: «Ո՞րն է գլխավորը միջազգային իրավունքի տեսակետից. այս կամ այն պետական ինքնիշխանությո՞ւնը, սահմանների անձեռնմխելիությո՞ւնը, թե՞ ազգերի ինքնորոշման իրավունքը: Չէ՞ որ այդ երկու գործոններն էլ արտացոլված ու վավերացված են միջազգային իրավական փաստաթղթերում: Ո՞ր սկզբունքն առաջնային կլինի,-հարցնում է Ստարովոյտովան եւ հարցին տալիս այն պատասխանը, որ իրենը լինելով՝ միակ տրամաբանականն ու ժողովրդավարականն է.-Ես կարծում եմ, երեք գործոնների՝ պատմականի, ազգագրականի եւ ազգի կամքի դրսեւորման զուգակցումը կարող է հուսալի հիմք ծառայել ինքնորոշման հարցի լուծման համար: Այնքան էլ հաճախ չի պատահում, որ այս երեք չափանիշները համընկնեն (Արցախի դեպքում տառացիորեն համընկնում են.-Բ.ՈՒ.), բայց եթե այդ գործոնները միաժամանակ միավորվում են մի տարածքում, ապա ժողովրդավարությունն այդ անտեսել չի կարող:

... Միջազգային հանրությունը վաղ թե ուշ պիտի գտնի նման խնդիրների լուծման ձեւերը: Հնարավոր է, որ դա կլինի Օսիայում, Լեռնային Ղարաբաղում:

... Եթե Ռուսաստանը ժողովուրդների պահանջներն անտեսի... Դա աններելի կլինի ինչպես մարդասիրական տեսակետից, այնպես էլ ժողովրդավարության դիրքերից: Գուցե հնարավոր կլինի խուսանավել, բայց չեմ կարծում, թե հենց դա՛ պետք է լինի Ռուսաստանի նպատակը»:

Ասվա՜ծ տա՝ Ռուսաստանը գործի այնպես, ինչպես նրա բարի ու խոհուն դուստրն է մտածում:

**Հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը** Ստեփանակերտի ինքնապաշտպանության ուժերը կործանեցին Կրկժանի բլուրների վրա ամրացած օմոնականների բոլոր դիրքերը եւ այնտեղից դուրս քշեցին ադրբեջանցիներին: Մեր քաջերի բախտն այս անգամ բանեց. ոչ մի զոհ չտվին: Սակայն առավոտյան, երբ ստուգում էին թշնամական որջերի ծակուծուկերը, գտան այն հինգ երիտասարդների դիակները, որոնք ծանր վիրավոր գերվել էին դեկտեմբերի 31-ին՝ Կրկժանի վրա գրոհելիս: Բզկտված, հոշոտված էին մարմինները, այլանդակված՝ անճանաչելի լինելու չափ: Ի՜նչ տառապանքներ են քաշել մարդիկ հրեշների ձեռքից («Ազգ», 1992, հունվ. 28): Եւ իրենց հարազատների հոշոտված մարմինները տեսնող ֆիդայիները հետո ի՜նչ լեզվով պիտի խոսեին հրեշների հետ:

**Հունվարի 23-ին** «Վաշինգտոն պոստ» թերթում հրապարակվել է նրա միջազգային բաժնի խմբագրի տեղակալ Ջեմս Ռուպերտի ռեպորտաժը ԼՂՀ-ում տեղի ունեցող դեպքերի մասին: Հեղինակը եղել է Ստեփանակերտում, Մարտակերտի ու Շահումյանի շրջաններում եւ մի քանի գյուղերում: Նա Երեւանում ունեցած հարցազրույցին ասել է. «Հինգ օրվա ընթացքում ես տեսա ու զգացի, թե ի՜նչ ծանր պայմաններում են ապրում ղարաբաղցիները... Լույս ու գազ չկա, հրթիռակոծումներն ու գնդակոծումներն անընդմեջ շարունակվում են: Նման պայմաններին դիմանալը ուղղակի հերոսություն է»:

Ապա, դառնալով իր երկրից սպասվող օգնությանը, նա ասել է. «Թե՛ կոնգրեսում, թե՛ Սպիտակ տանն ու պետքարտուղարությունում դժվար է Ղարաբաղի հարցի վրա ուշադրություն հրավիրել, քանի աշխարհում շատ են ավելի մեծ բարդույթները: Իհարկե, դա չի նշանակում, թե Ղարաբաղի հարցը կարեւոր չէ... Ինձ հայտնի է, որ ԱՄՆ-ի կոնգրեսում Ղարաբաղի հարցով որոշակի աշխատանք է տարվում: Վերջերս մի քանի սենատորներ, այդ թվում պարոնայք Դոուլն ու Սիմոնը, առաջարկել են պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի նկատմամբ: ...Որպես լրագրող համոզված եմ, որ իմ հաղորդած տեղեկությունները կօգնեն ամերիկացիներին ճիշտ կողմնորոշվելու եւ ճիշտ որոշում ընդունելու: Այլապես իմ աշխատանքը կհամարեի անօգուտ» («Ազգ», 1992, հունվ. 29):

Նույն օրն էլ ԱՄՆ-ի սենատի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ սենատոր Փելը, որ հունվարի սկզբին եղել էր Հայաստանում, մի գրությամբ դիմել է պրեզիդենտ Բուշին՝ առաջարկելով գործուն մասնակցություն ցույց տալ Հայաստանի

ու Ադրբեջանի բարդույթի պատճառ հանդիսացող Ղարաբաղի խնդրի լուծմանը: Նա նշել է նաեւ այդ մասնակցության հնարավոր ձեւերը՝ Ելցինի հետ ունենալիք հանդիպման ժամանակ նրա վրա հանձնարարություն դնել, ՄԱԿ-ի օղակների վրա ազդել եւ, վերջապես, հենց Ադրբեջանի վրա վճռական ճնշում գործադրել, օրինակ, որպեսզի նա, քանի շրջափակման մեջ է պահում Հայաստանը եւ խեղդում Լեռնային Ղարաբաղը, իրավունք չունենա ստանալու այն մեծ օգնությունը, որ ԱՄՆ-ն է հասցնում իրենց անկախությունը որդեգրած երկրներին:

**Հունվարի 22-23-ին** բարոնուհի Քերոլայն Կոքսը, իրեն ուղեկցող Զորի Բալայանի եւ Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազանի հետ միասին, Մոսկվայում այցելել է Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Կանադայի դեսպանատները, ինչպես նաեւ Մոսկվայի ու համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդին՝ հաղորդելով, որ Արցախի դեմ Ադրբեջանն օգտագործում է նախկին ԽՍՀՄ զինուժի հրանոթներ, «Գրադ» հրթիռակայաններ, որոնք ավերիչ զորություն ունեն: Բոլոր զրույցների ընթացքում բարոնուհին պնդել է, որ Լեռնային Ղարաբաղը պետք է աղետի գոտի հայտարարվի, եւ այնտեղ պետք է մտցվեն ՄԱԿ-ի խաղաղարար հատուկ զորքեր:

✧ ✧ ✧

**Հունվարի 23-ին** Մոսկվայում ՀՀ մշտական ներկայացուցչությունում տեղի ունեցած մամուլի ասուլիսում էլ բարոնուհի Ք. Կոքսը, անդրադառնալով ադրբեջանական բռնատիրության կատարած վայրագություններին ու կիրառած զինատեսակներին («Ալազան», «Գրադ», տանկեր, զրահամեքենաներ եւն), ասել է՝ այս բոլորը կհանգեցնի նրան, որ հայկական կողմն էլ ստիպված կլինի պատասխան միջոցներ գործադրել: Այն ժամանակ մենք ականատես կլինենք լայնամասշտաբ մի պատերազմի, որը կանխելը կդառնա անհնարին: Ուրեմն, այժմեւեթ անհրաժեշտ է դադարեցնել տալ Ադրբեջանի վայրագությունները, կանխել սկսվելիք պատերազմը: Իսկ այդ խաղաղարար գործին պետք է լծվեն բոլոր շահագրգռված երկրները՝ ԱՊՀ-ի պետությունները, Եվրոպայի երկրները եւ ՄԱԿ-ը:

**Հունվարի 26-ի** առավոտից ադրբեջանական մի զորամաս, շուրջ 250 զինվորով, հարձակվեց Քարինտակ գյուղի վրա: Նախապես գյուղը հրետակոծել էին:

Ինքնապաշտպանության ուժերն անձնազոհորեն ելան ընդդեմ թշնամու, կռվեցին ամբողջ օրը: Կռիվն ավարտվեց երեկոյան, երբ Ստեփանակերտից օգնական մի զորաջոկատ հասավ եւ, բռնագրավիչների թիկունքից հուժկու հարված հասցնելով, ստիպեց ճողոպրել: Գյուղի մոտերքում թշնամին թողել էր իր մի քանի տասնյակ սպանվածների ու 75 միավոր զենքը:

Հետագայում պիտի հաղորդվեր, որ այս ճակատամարտում քարինտակցիներից սպանվել են 18 զինվոր, ադրբեջանցիներից՝ ավելի քան 60-ը:

Նույն օրը Շուշիից հրետակոծել էին Ստեփանակերտը, որտեղ զոհվեցին երկու կին: Այս ռմբակոծությունը դադարեց միայն պատասխան կործանիչ հարվածներից հետո:

Տեղեկություններ կան, որ միայն 26-ին Շահումյանի շրջանի Կարաչինար գյուղի վրա ադրբեջանցիները նետել են հակակարկտային 15 արկ:

Այդօր ուշ երեկոյան, ժամը 23-ից ՀՀ հեռուստատեսությամբ ցուցադրեցին մի այնքան էլ ոչ մեծ տեսաժապավեն Արցախի իրադրությունների մասին (ամսիս 3-17): Կադրերն ու տեսարանները խիստ էին՝ իբրեւ դաժան մի կյանքի հարազատ պատկերներ: Զինված ինքնապաշտպանության խառնիխուռն ջոկատներն էին՝ քաջ երիտասարդներով, բայց եւ նրանց կողքին՝ տարբեր տարիքի երեխաներ, դեռատի աղջիկներ, ծերեր, տարեց կանայք: Ցույց էին տրվում խոր ինքնապաշտպանության անցած գյուղերն ու շրջկենտրոնները, կիսակործան, բայց համառորեն դիմադրող Ստեփանակերտը... Խոսեցնում էին ինքնապաշտպանության հերոսներին ու նրանց օգնության հասած արյունակիցներին, որոնք հպարտորեն բաժանում են չդադարող կրակի տակ գտնվող պաշարյալների դժնի ճակատագիրը...



Սկզբից ու վերջից անպաճույճ խոսքեր կային այս անհողդողդ մարտիրոսության մասին, մխիթարանքի, հուսադրության ու հավատի խոսքեր, որոնք հնչում էին բոլորովին անվարպետ նկարահանողի բերանից: Ի՞նչ է պետք կռվող Արցախը,-ասում էր նա,-դուք տեսա՞ք: Ինչո՞վ նրան կօգնի աշխարհը, անտարբե՛ր աշխարհը: Հայտնի չէ: Զարմանալի՞ է, որ այդ աշխարհը խոսքով, գոնե խոսքո՛վ, չի ընդունել իր ազատության համար արնաքամ դարձող երկրի անկախությունը, հանրաքվեն, կրակի տակ ստեղծած պետական իշխանությունը: Բայց ինչո՞ւ զարմանանք, երբ այն դեռեւս չի ընդունվել նույնիսկ մեր արյունակիցների անկախ հանրապետության կողմից: Ասում են՝ Հայաստանի հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանում երկար են վիճել՝ ընդունե՞նք թե՞ չընդունենք այդ Արցախի հանրապետությունը: Եւ այդպես էլ եզրակացության չեն եկել, սպասում են, տեսնեն ի՛նչ կասի կույր ու խուլ, մեզ համար՝ նաեւ համր աշխա՜րհը: Բայց մի՞թե կարեւոր է, թե ի՜նչ կասեն... Չէ՞ որ լեռնաստանը պատրաստ է մինչեւ վերջ կռվելու իր ազատության, անկախության, արժանապատիվ կյանքի համար:

Այդպիսի հերոսները մա՜հ չունեն: Աստվա՜ծ օգնական:

**Հունվարի 27-ին** Բաքվում, լրատվության աշխատողների հետ ունեցած ասուլիսում, Ադրբեջանի պրեզիդենտ Այազ Մութալիբովը, Թուրքիա կատարած իր պաշտոնական այցի արդյունքների մասին խոսելիս, հայտնել է, թե Թուրքիան կողմ է, որ Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծվի քաղաքական միջոցներով եւ պատրաստակամություն է հայտնել դառնալու միջնորդ: Ինքը՝ Մութալիբովը, իբր Թուրքիայի ղեկավարներին հասկացրել է, որ Ադրբեջանը հարցը կլուծի սեփական միջոցներով, քանի որ անձամբ դեմ է նրա միջազգայնացմանը, միայն հարկ է, որ Ղարաբաղից դուրս բերվեն այն զինված ստորաբաժանումները, որոնք «ենթակա չեն իր հանրապետության օրենքներն»:

Այսքա՛ն բան. այսինքն՝ ԼՂՀ հարցն ի՜նչ մի մեծ բան է, որ դրա համար էլ պետք լինի Թուրքիայի պես հզոր պետության միջնորդությունը: Բավական է՝ Ադրբեջանն ինքը որեւէ կերպ կարողանա այնտեղից դուրս բերել «օտար» զորամիավորումները...

Սակայն Թուրքիա մեկնելուց առաջ Մութալիբովը հյուրընկալ երկրի հեղինակավոր «Միլլիյեթ» լրագրի Բաքվի թղթակցի հարցերին տված պատասխաններում բավական ընդարձակ խոսք էր ասել առհասարակ հայ-ադրբեջանական հարաբերությունների եւ մասնավորապես Արցախի խնդրի մասին: «Հայաստանը,-ասել էր նա,-մեր դեմ նպատակային գործունեություն ու քարոզչություն է ծավալել: Ամերիկյան կառավարությունն աջակցում է Հայաստանի գործունեությանը: Մենք այս հարցում կարծես ետ ենք մնացել, եւ Թուրքիայի օգնությամբ մեր խնդիրները միջազգային հանրությանը ներկայացնելու հնարավորություն պիտի ստանանք».:

«Մաշալլա՜»,-կասեր ադրբեջանցի թուրքը՝ պատասխանելով, թե ի՛նչ է լսելու Արցախի մասին: Իսկ երբ թուրք թղթակիցը հարցրել է. «Ինչպե՞ս եք պատկերացնում Ղարաբաղի հարցի լուծումը, Մութալիբովը կարճ պատասխանել է. «Մեր գլխավոր նպատակը շրջանում խաղաղություն հաստատելն է: (Եւ դրա համար գիշեր-ցերեկ ռմբակոծության ու գնդակոծության է ենթարկել տալիս Արցախի հայկական բնակավայրերը, կոտորում բնակիչներին, բռնագաղթեցնում՝ երեւի մտածելով, թե այս գեհենային պայմաններին ինչքա՞ն կդիմանա մի 150-200 հազար հայ բնակչությունը.-Բ. ՈՒ.): Մենք կողմնակից ենք,-շարունակել է «խաղաղասեր» պրեզիդենտը,-այդ հարցը լուծելու հանգիստ, քաղաքական ուղիներով: Մենք միշտ գերադասել ենք խաղաղության ուղին: Այս պատերազմի շարունակումն օգուտ չի բերի ո՛չ Հայաստանին, ո՛չ Ադրբեջանին: Թուր ու թվանքով հարցեր լուծելու ժամանակներն արդեն անցել են: Հայաստանը միջազգային մեծ հնարավորություն ունի եւ մեր դեմ ուժեղ արշավ է ծավալել, իսկ արեւմտյան մամուլն Ադրբեջանին համարում է բռնագրավիչ պետություն՝ գործիք դառնալով սխալ ու խեղաթյուրված քարոզչության: Այնտեղ մարդիկ մեզ բռնագրավիչ պետություն են համարում՝ հաշվի չառնելով իրերի իսկական դրությունը:

Ղարաբաղյան հարցի պատճառով ծագած պատերազմի ընթացքում մենք շատ երկար ենք սպասել, որ Հայաստանը հրաժարվի Ղարաբաղն իրեն միացնելու սխալ որոշումից:

Բայց նոյեմբերի 20-ին տեղի ունեցած ուղղաթիռի աղետից հետո ժողովրդի, խորհրդարանի եւ կառավարության համբերության բաժակը լցված էր, եւ մենք վերացրինք Ղարաբաղի ինքնավար կարգավիճակը: Սակայն մենք, վերացնելով այդ մարզի ինքնավարությունը աշխարհագրական տեսակետից, չենք դիպել հայերի մշակութային ինքնավարությանը, հակառակ այս քայլին, Ղարաբաղը հայտարարեցին անկախ հանրապետություն եւ ինչ-որ հանրաքվե անցկացրին: Սա թե՛ Ադրբեջանի սահմանադրության, թե՛ միջազգային իրավունքի տեսանկյունից կեղծ հանրաքվե էր: Այս պահին իրադրությունը շրջանում շատ խառն է:

Բոլորի համար վտանգավոր է, որ Հայաստանը, օգտվելով այլ երկրներում հայերի առկայության հանգամանքից, միջամտում է Ղարաբաղի գործերին: Չէ՞ որ հայեր են ապրում նաեւ Իրանում ու Թուրքիայում: Հայեր են ապրում, ասենք, Ֆրանսիայում: Սակայն Հայաստանը չի խառնվում նրանց գործերին: Այժմ էլ Անկախ պետությունների համագործակցությունն սկսեց աջակցել հայերին եւ միջամտել մեր ներքին գործերին: Հայերը Ռուսաստանյան ֆեդերացիայի հետ լավ հարաբերությունների մեջ են: Այս առումով կարեւոր է հիշել, որ առաջները Թուրքիան Լեռնային Ղարաբաղի խնդիրը համարում էր նախկին ԽՍՀՄ ներքին գործը: Հետեւաբար դրսից այդ գործին միջամտելը սխալ էր համարում: Այս մոտեցումն այն ժամանակվա համար ճիշտ էր, սակայն հիմա Ադրբեջանն անկախ պետություն է եւ ԱՊՀ շրջանակներում որեւէ երկրի գերիշխանություն մյուսի նկատմամբ գոյություն չունի: Ստեղծված իրավիճակում Թուրքիան պետք է ընդունի, որ հարցը միջազգային որակ ունի եւ մեզ աջակցի («Ազգ», 1992, հունվարի 29):

Տեսա՞ք, ինչպես փոխվեց, ավելի ճիշտ՝ գլխիվայր շրջվեց պրեզիդենտի կարծիքը Ղարաբաղի հարցի միջազգայնացման վերաբերյալ. երբ Հայաստանի օժանդակությամբ նրա ժողովրդի օգտին էին խոսում, կտրականապես մերժում էր միջազգայնացումը, իսկ երբ Թուրքիայի օգնությամբ իր շահի հեռանկար պիտի բացվի, խնդրե՛մ, այն միջազգային որակ ունի»:

Թերեւս շան գլուխն ուրիշ տեղ է թաղված. Թուրքիա այցելելուց առաջ հույս է ունեցել ստանալու նրա ամեն տեսակ աջակցությունը, նույնիսկ ուժային միջամտությունը, իսկ այնտեղ ուրիշ բան է տեսել. Թուրքիան պատրաստ է ամեն ինչով օգնել, նույնիսկ մեկ միլիոն տոննա հաց տալ: Սակայն այդ Ղարաբաղի հարցո՜ւմ... խաղաղ կարգավորման կողմնակից է: Չէ՜, հեռո՜ւ պահեք: Այս դարասկզբին նրանց կոտորել ենք, փրկություն չունենք մինչեւ այսօր եւ հավիտյան... Խառնվենք նաեւ Ղարաբաղի հարցին, խառը ու խայտառակ կդառնանք աշխարհով մեկ:

Այսպես է եղել թե ոչ, ժամանակը կպարզի:

✧ ✧ ✧

Այդօր առավոտյան «Ազատություն» ռադիոկայանը հաղորդեց, որ ՄԱԿ-ի անդամ երկրները հավաքվել-քննում են անկախ պետություններ դարձած Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելառուսի ու Հայաստանի դիմումներն իրենց անկախությունը ճանաչելու եւ, կարծեմ, ՄԱԿ-ի կազմի մեջ ընդունելու մասին: Հարցն այսօր էլ պիտի պարզվի, պիտի որոշում ընդունվի: Բայց, ահա՛, Թուրքիան այդ անդամ պետություններին է դիմել բողոքով, որպեսզի Հայաստանին չընդունեն, քանի դեռ չեն ընդունել Ադրբեջանին:

✧ ✧ ✧

Այսօր (27-ին) ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Արթուր Մկրտչյանը Ռուսաստանի հեռուստա-ռադիոպետկոմի նախագահ Ե.Վ. Յակովլեւին է դիմել բողոքով այն առթիվ, որ նրա լրատվական հաղորդումներում Ղարաբաղի հետ կապված լուրերում ԼՂՀ մայրաքաղաքի «Ստեփանակերտ» անվանն ուղեկցում է նաեւ «Խանքենդին», որը պարզապես կեղծարարություն է, պաշտոնական դեմագոգիա, վիրավորակա՛ն ինքնավար հանրապետության



ու նրա ժողովրդի համար:

Իրավացիորեն բողոքելով այս, մեղմ ասած, կոպիտ սխալի դեմ, ԼՂՀ ղեկավարը հույս ուներ, թե այն կշտկվի, եւ հարգարժան լրատվական կենտրոնն այլեւս չէր կրկնի ադրբեջանական վայրենի կեղծարարությունը: Սակայն հետագա օրերին եւս այն շարունակվեց, այն էլ նոր ձեւով. քարտեզի հատված ցույց տալիս, քաղաքի նշան, վերեւը՝ Խանքենդի, տակն էլ փակագծում՝ «Ստեփանակերտ»:

Երեկոյան մեր հեռուստատեսությամբ հաղորդվեց հարցազրույց Ռուսաստանի ժողովրդական պատգամավոր Անատոլի Շաբադի հետ, որը նոր էր վերադարձել ԼՂՀ-ից: Նա ասաց.

- Հունվարի 4-ից Արցախում էի եւ հիմա էլ այստեղ եմ ժամանել Շահումյանից: Ի՞նչ կարող եմ ասել: Արցախի ինքնապաշտպանությունը կազմակերպված է եւ գործում է անձնազոհաբար: Հաջողությամբ ետ է վանում հակառակորդի գրոհները, պատճառում վնասներ, խլացնում նրա ռմբակոծությունների եւ հրթիռակոծությունների ակունքները: Բայց դա չի նշանակում, թե այսքանով բարդույթը կլուծվի կամ գրոհները շուտով կավարտվեն: Ո՛չ, նրանք պարբերաբար պայթելու են՝ մեկ այստեղ, մեկ այնտեղ, որովհետեւ Ադրբեջանը որոշել է տեռորի ու տագնապի միջոցով լուծել Ղարաբաղը հայաթափ անելու հարցը: Ամսիս 13-ին ես տեսել եմ Շահումյանի հրթիռակոծությունը, որ կատարվել է «Կարկուտ» («Գրադ») կոչված ահավոր մեքենայով: Այդ ապացույց է, որ հիմա թշնամու հետ է Ռուսաստանի բանակը, որը ոչ միայն մեքենա է տրամադրել, այլեւ դիպուկ կրակող մասնագետին, որպեսզի ոչ մի արկ իզուր չընկնի: Ձեզ ասեմ, թե ի՛նչ է նշանակում այդ մեքենան: Ես տեսել եմ վիրավորներից մեկին, որը վերք է ստացել արկի ընկած տեղից ավելի քան քառասուն մետր հեռավորության վրա: Դե՛, հիմա պատկերացրեք, թե այն ինչպիսի՛ ավերածությունների է ընդունակ...

Ցույց տվեց հրթիռի մի բեկոր, ավելի ճիշտ՝ խողովակի մի այլանդակված կտոր եւ բացատրեց, որ արկը 3 մետր երկարություն ունի, ռազմավարական զենք է, կործանարար...

Պատմեց Աղդամի շրջանին սահմանակցող Ղազանչի (Մարտակերտի շրջան) գյուղին ամեն օր պատուհասող աղետները, պատմեց իր ներկայությամբ կատարված տեղահանությունը կանանց, երեխաների, ծերերի: Ասաց.

- Փոխադրվում էին լուռ ու մունջ, ձյան ու ցրտի մեջ՝ առանց տրտունջների: Իսկ երբ տանջահար փոքրիկներից մեկը ձայն էր հանում, վախեցնում էին՝ «Լռի՛ր, թե չէ, թուրքը կլսի, կգա...»: Երեխան տեղն ու տեղը լռում էր, որովհետեւ շատ էր տեսել, թե ինչպիսին է թուրք կոչվածը եւ իր կյանքում երբեք չի մոռանալու:

Հետո էլ ասաց.

- Դուք տեսնո՞ւմ եք, թե շրջափակված Հայաստանն ի՛նչ զրկանքների է ենթարկվում: Դրա բազմապատիկը պատկերացրեք, եւ դա կլինի Ղարաբաղի վիճակը: Ղարաբաղի վիճակի բազմապատիկը պատկերացրե՛ք, դա էլ կլինի ադրբեջանական ռմբակներով շրջապատված Ղազանչիի վիճակը: Իսկ ո՞րն է մխիթարականը. որ այս պայմաններում իսկ մարդիկ իրենց մեջ ուժ են գտնում պայքարելու, հաղթելու:

Ես Ղազանչիից հեռագրեր եմ ղրկել պրեզիդենտներ Ելցինին ու Նազարբաեւին՝ առաջարկելով, որ իրենց կնքած համաձայնագրերն իրականացնելու համար պատասխանատու մարդկանց եւ ուժեր ուղարկեն, ապա թե ոչ, իրականացվող վայրագությունների համար իրենք պատասխանատու կլինեն աշխարհի առաջ:

- Մեր խնդիրն է,-շարունակեց Շաբադը,-Ղարաբաղն ու Շահումյանն աշխարհի իրավասու կազմակերպությունների կողմից ճանաչել տալ իբրեւ աղետի գոտի եւ կազմակերպել բոլոր տերությունների փրկարար օգնությունը:

- Իսկ Ձեր խորհրդարա՞նը,-հարցրեց լրագրողը:-Այն ի՞նչ պիտի անի Արցախին այդ վիճակից հանելու համար: Չէ՞ որ պրեզիդենտ Ելցինը նախաձեռնել էր մի առաքելություն, որից հետո մենք միայն նոր ավերածություններ տեսանք:

- Ես չգիտեմ, թե ի՛նչ է կատարվում այնտեղ, որ նույնիսկ Հայաստանի հետ կնքված պայմանագիրը չհաստատեցին: Կան, իհարկե, մակերեսային պատկերացումներով առաջնորդվող պատգամավորներ, որոնք բարբաջում են, թե Ղարաբաղի խնդրին խառնվելը

Եւ այս անտեղյակությունը կամ միամիտ կեցվածքը պետք է հիմք դառնա հարցի որեւէ լուծում առաջարկելու, այլ խոսքով՝ գործին խառնվելու համար:

✧ ✧ ✧

ՀՀ ԳԽ-ի պատգամավորների հետ հանդիպում ունեցավ ԼՂՀ ԳԽ-ի նորընծա նախագահ Արթուր Մկրտչյանը: Հարցազրույցից հրապարակվել են լոկ թռուցիկ նշումներ, որոնցից քիչ նյութ կարելի է քաղել: Եւ, այնուամենայնիվ, արժե նշել, որ Արցախի ղեկավարի կարծիքով՝ այնտեղ, մարտնչող երկրում, հիմա երկու կարեւորագույն խնդիր կա. ժողովրդի գոյության պահպանումը եւ թշնամուն դիմակայելը: Երկուսն էլ՝ անհնար միայն տեղի հայության ունեցած ուժերով եւ հնարավոր՝ համազգային ջանքերով, ամբողջ հայության բոլոր ուժերի մեկտեղումով:

Մկրտչյանը լրատվության ու քաղաքական բոլոր օղակների պարտքը համարեց աշխարհով մեկ ճանաչել տալ արցախյան խնդրի էությունը:

«Այս չորս տարիների ընթացքում սա ներկայացվել է որպես երկու հանրապետությունների միջեւ ազգամիջյան բարդույթ,-ասաց նա:-Նույնիսկ Ժելեզնովոդսկում առաջին պլանում դրված էր Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ բարդույթը, իսկ Արցախը ետին պլան էր մղված: Բարդությունն Արցախի ու Ադրբեջանի միջեւ է, եւ դա այդպես էլ պետք է ներկայացվի»:

Իրավացի էր Մկրտչյանի կշտամբանքը Հայաստանի հանրապետության որոշ ղեկավարների հասցեին: Ասաց՝ հաճախ վճռորոշ պայման են դարձնում ոչ թե իրական վիճակն ու նրանից անելիք խելահաս եզրահանգումը, այլ մի ուրիշ բան՝ թե ի՛նչ են մտածում բուն Արցախում: Եւ սա հաճախ հարցից, ասել է՝ ճակատից, ետ կանգնելու պատճառ է դառնում...

Վերջում Արցախի ղեկավարը վճռաբար հայտարարեց. «Թե Ադրբեջանն ստիպված կլինի ինչպիսին ընդունել մեզ՝ իբրեւ մա՛րզ թե հանրապետությո՛ւն, դա էական չէ: Կարեւոր է, որ նա հասկանա մի բան. Արցախը հայի երկիր է, եւ հայերն են այնտեղ ապրելու: Մենք դրան կհասնենք մեր հնարավորություններով, եւ մայր Հայաստանն էլ թող մեզ սատարի իր միջոցներով»:

Այսօր երեկոյան նախկին խորհրդային եւ արտասահմանյան մի շարք ռադիոկայաններ հաղորդեցին Լեռնային Ղարաբաղի հանրապետության ժողովրդական պատգամավոր Զորի Բալայանի հայտարարությունը, որը բերում եմ ամբողջությամբ.

«Ադրբեջանի պրեզիդենտ Մութալիբովը գտնում է, որ Լեռնային Ղարաբաղի հայերի դեմ իր կազմակերպած եղեռնը դա Ադրբեջանի ներքին գործն է: Ուրեմն եւ անհրաժեշտ է դիմակայել ղարաբաղյան հարցի ինտերնացիոնալացմանը,-հայտարարել է նա: -Մութալիբովը մեղադրում է հայերին, որ նրանք բողոքում են: Որ նրանք կրակին պատասխանում են կրակով, որ նրանք առհասարակ դիմադրում են, պաշտպանում են իրենց տները: Նա Հայաստանին մեղադրում է տարածքային հավակնությունների մեջ, չնայած աշխարհին է քաջ հայտնի, որ խոսքը ոչ թե տարածքային հավակնությունների մասին է, այլ հայերի դեմ գործվող զանգվածային բռնությունների եւ ԼՂՀ հայ բնակչության բռնագաղթեցման մասին: Խոսքն այն մասին է, որ Ադրբեջանի ղեկավարության կողմից անելիք Ղարաբաղի դաժան շրջափակման պայմաններում, քաղցի, ցրտահարության, տարափոխիկ հիվանդությունների պայմաններում ԼՂՀ խաղաղ բնակչությունը ենթարկվում է ցեղասպանության:

Եւ, վերջապես, խոսքն այն մասին է, որ լրատվական խուլ շրջափակման պայմաններում, երբ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը լրիվ կտրել են արտաքին աշխարհից, Ադրբեջանը փորձում է համաշխարհային հանրությունից ոչ միայն թաքցնել ահա չորս տարի շարունակվող իր զանգվածային հանցագործությունները, այլեւ ամեն ինչ շրջված ներկայացնել, ստեղծել այն տպավորությունը, թե պաշարման մեջ գտնվող 200 հազար անզեն, գոյատեւման տարրական պայմաններից զրկված հայերը կռվում են յոթ



միլիոնանոց Ադրբեջանի դեմ, որը ռազմական օգնություն է ստանում ոչ միայն նախկին Կարմիր բանակից, այլեւ Թուրքիայից: Որ իր ազատության համար պայքարող Ղարաբաղի հարցն ինտերնացիոնալացվելու է, կասկած չկա, քանի որ մարդու իրավունքների ոտնահարումը, ցեղասպանությունը եւ մարդկայնության դեմ գործվող մյուս չարագործությունները դատապարտելու համար չպետք է լինեն պետական սահմաններ, եւ Ադրբեջանը պետք է պատասխան տա համաշխարհային հասարակայնության առաջ՝ ըստ միջազգային օրենքների ու իրավական նորմերի:

*1992 թ. հունվարի 28.*
*Զորի Բալայան*
*ԼՂՀ ժողովրդական պատգամավոր»:*

✧ ✧ ✧

Երեկոյան մոսկովյան հեռուստատեսությունը, աղբյուր ունենալով բացառապես Ադրբեջանի ՆԳՆ լրատվական մարմինը, հայտնեց, որ Լեռնային Ղարաբաղում, Աղդամից Շուշի թռչելիս, ռմբակոծության է ենթարկվել Ադրբեջանի քաղաքացիական մի ուղղաթիռ, որի մեջ են եղել կանայք ու երեխաներ: Սպանվել են այդ քաղաքացիներից 18 հոգի: Ուղղաթիռի վարորդները (տրվեցին ավագի ռուսական եւ նրա երկու օգնականների ադրբեջանական ազգանունները), խիզախորեն շրջանցելով քաղաքը, որպեսզի չընկնի նրա վրա եւ ավերածություններ չանի (ինչպիսի՜ մարդասիրություն իրենց կողմից պաշարված եւ ամեն ժամ ռմբակոծվող հայերի հանդեպ), մեքենան տարել են վայրէջքի եւ փրկել մնացած ուղեւորների կյանքը:

Ադրբեջանական լրատվության տվյալներով՝ հայ գրոհայինները ջերմային հրթիռ էին արձակել ուղղաթիռի վրա,- հայտնեց մոսկովյան հեռուստատեսության խոսնակը,-եւ Ադրբեջանի կառավարությունն անմիջապես հետքննող հանձնաժողով է կազմել, ուղարկել դեպքի վայրը, որպեսզի պարզի բոլոր հանգամանքները:

Գիշերային արտասահմանյան ձայները նույն տեղեկությունը հաղորդում էին արդեն նոր, բոլորովին ուրիշ մանրամասներով. որ զոհերը 40-ն են, հայկական կողմի բացատրությամբ՝ ուղղաթիռում ոչ թե քաղաքացիական ուղեւորներ են եղել, այլ ռազմիկներ եւ զենք:

Եւ իսկապես էլ. կանայք ու երեխաներն ինչո՞ւ էին ուղղաթիռով Աղդամից Շուշի գնում, երբ այդ Շուշին, լինելով Ստեփանակերտի, Շոշի ու Քարինտակի վրա ամեն ժամ հրթիռներ ու ռումբեր ուղարկող զորակայանը, ինքն էլ ենթակա էր հայ ազատամարտիկների պատասխան հարվածներին:

Մի քանի օր առաջ, օրինակ, միութենական հեռուստատեսությունը ցույց էր տվել, որ այնտեղ ջուր չկա, լույս չկա, կենցաղային տարրական հարմարություններ չկան եւ, ենթարկվելով հայերի պատասխան կրակահերթերին, համարյա ամբողջ իր բնակիչներին հեռացրել է Ադրբեջանի այլ բնակավայրեր:

Հիմա ի՞նչ է, աղդամցի կանանց ու երեխաներին Շուշվա առողջարան-հանգստավա՞յրն էին փոխադրում:

✧ ✧ ✧

Այդ օրը հետաքրքիր մի դեպք էլ տեղի ունեցավ: Հադրութի շրջանի Տող գյուղից Ստեփանակերտ վերադարձող, «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի թղթակիցներ Դարյա Ասլամովան ու Օլեգ Ստարուխինը, իրենց ուղեկցող երկու հայերի՝ ինքնապաշտպանության ջոկատի հրամանատար Վիգեն Գրիգորյանի ու մարտիկ Սամվելի հետ միասին, գերվել էին Ֆիզուլիի ճանապարհին դարանակալած ադրբեջանցի զինյալ ավազակների մի խմբի կողմից: Հայ ազատամարտիկները կռվով փրկեցին նրանց: Հունվարի 31-ին, արդեն Մոսկվայում, «Վեստի» հեռուստածրագրին տված հարցազրույցում Ասլամովան հա-

ղորդեց, որ ադրբեջանցի ավազակներն իրենց, իբր թե, սուզելու նպատակով, լրիվ մերկացրել են, բռնաբարել, ապա զենքը տվել ձեռքը եւ ստիպել, որ կրակի հայ ուղեկիցների վրա:

Գերյալներին ազատելու համար մղված մարտում սպանվել են չորս թուրք ավազակներ («Ազգ», հունվ. 30):

Մոսկվա վերադառնալուց առաջ հայ թղթակցի հետ ունեցած հարցազրույցին Դարյա Ասլամովան այսպես էր բացատրել իրենց ազատագրումը Ֆիզուլիի ավազակախմբի գերությունից: Ասաց՝ նրանք որոշել էին գնդակահարել ինչպես երկու հայերին, այնպես էլ Ասլամովային ու Ստարուխինին: «Երբ արդեն կայացրել էին իրենց վճիռը եւ պիտի գործի անցնեին, պատուհանից այն կողմ ավտոմատային կրակահերթեր լսվեցին: Օգնության էին հասել Տող գյուղի ինքնապաշտպանության ջոկատի տղաները: Նրանք ընդամենը երեք հոգի էին, բայց գործում էին այնպիսի հմտությամբ, որ կարելի էր մտածել, թե տաս հոգուց ավելի են: Տղաները սպանեցին դրսում կանգնած երկու ավազակներին: Ելուզակներից երկուսը փախան-պրծան: Իսկ մենք, առանց ուրիշ փորձանքների ենթարկվելու, վերադարձանք Տող («Հայաստան», 1992, փետր. 7):

Ռուս թղթակիցներն իրենց հետ պատահած այս դեպքը հրապարակեցին նաեւ սեփական թերթում՝ «Կոմսոմոլսկայա պրավդայում» (տե՛ս 1992 թ. փետր. 1-ի համարը): Այնտեղ Ստարուխինն ու Ասլամովան իրենց գլխով եկածն են պատմում՝ ներկայացնելով նաեւ այսպիսի մանրամասներ:

«**Օ. Ստարուխին**. Ավազակներից մեկն «ինձ տարավ մի կողմի վրա, լիցքավորեց ավտոմատը եւ փողը մոտեցրեց ծնոտիս. «Բերանդ բաց, հա՛յ արիկա, որ գանգդ ցրեմ»: Ոտքերս եւ ձեռքերս կապած՝ մի կերպ հասցրի կես մետրի չափ մի կողմ ցատկել...»:

**Դ. Ասլամովա**.-«Ինձ դուրս բերեցին այդ սենյակից, ձեռքերիս կապը արձակեցին, մերկացրին եւ սկսեցին շոշափել: Առանձնապես ջանադրաբար էր գործում «Չաղը», որը թքում էր երեսիս, ավտոմատի փողը բերանս էր մտցնում ու ասում, որ ինձ, որպես հայերի պոռնիկի, հերթո՛վ բոլորը կբռնաբարեն»:

«Հետո ավազակներից մեկն ինձ համոզում էր կրակել ընկերներիս վրա, դրա փոխարեն խոստանալով կյանք եւ ազատություն»:

Վերջում, երեւի խմբագրությունը, թղթակիցների անունից, կատարել էր այսպիսի «խորիմաստ» եզրակացություն. «Մենք գիտակցում ենք, որ այսպիսի ողբերգություն կարող էր կատարվել պատերազմող կողմերից յուրաքանչյուրում: Սադիզմն ու ավազակությունն ազգային պատկանելություն չեն ճանաչում»:

Այսինքն՝ հայերն էլ կարող էին անել (իսկ ընթերցողը պիտի ենթադրի, որ նրանք արդեն անում են):

Էլի նախորդ տարիների չար խաղը, երբ ամեն կերպ ջանում էին հավասարեցնել երկու կողմերը, զոհին ու դահիճին չափել մեկ արշինով:

Նման դեպքերում է, որ արցախցիներն ասում են. մեր արածից քոռանան ձեր ծուռ տեսնող աչքերը:

**Հունվարի 29-ին** երեւանյան եւ մոսկովյան հեռուստահաղորդումներում քիչ նոր բան կար ուղղաթիռի կործանման մասին: Զոհվածների թիվը մեկ 40 էին ասում, մեկ 47: Ո՛չ մի խոսք Ադրբեջանի կազմած հետաքննող հանձնաժողովի մասին:

Հայկական լրատվական մարմինների ասելով՝ արցախյան ինքնապաշտպանները պնդում են, որ իրենք ոչ մի կապ չեն ունեցել ինքնաթիռի հետ:

Զոհերը 47-ն են եւ ոչ թե 18 կամ 40:

Իսկ Շուշի ինքնապաշտպանության ղեկավարներն էլ տեղեկացրել են, որ իրենք պարզ տեսել են, թե ինչպես նախ ուղղաթիռի պոչի կողմից հրդեհ է բռնկվել, ապա նրա միջից խոշոր կանաչ արկղներ են թափվել, որոնց մեջ սովորաբար զենք ու զինամթերք են փոխադրում:

Եւ այս ամենից բացի էլ, ԼՂՀ ինքնապաշտպանության ղեկավարները կտրականապես մերժել են ջերմային հրթիռի վարկածը, քանի որ ամբողջ Արցախի տարածքում այդպիսի հրթիռ գոյություն չունի:



Ադրբեջանական վարկածը հիմնավորապես հերքեցին նաեւ ՌԻԱ-ի (Ռուսաստանի լրատվական գործակալություն) սեփական թղթակից Մարինա Բեգիրովսկայան եւ ՌԻՏԱ-ի սեփական թղթակից Վ. Բըրկինը, որոնք, նախ, հաստատում էին ուղղաթիռի պոչամասում բռնկված հրդեհը, ապա եւ անհեթեթություն համարում Աղդամից Շուշի կանանց եւ երեխաների տեղափոխելու հորինվածքը:

Մնում էր սպասել նոր, ավելի ստույգ ու սպառիչ տեղեկությունների: Գուցե Ադրբեջանի կողմից կազմած քննող հանձնաժողո՛վը որեւէ հավաստի տեղեկություն հաղորդի: Չնայած Բերդաշենի կողքին կատարված աղետի «ուսումնասիրության» արդյունքներից հետո այլեւս չի կարելի հավատալ նրանց եւ ոչ մի խոսքին (պնդում էին, թե ինքնաթիռի կործանումը հետեւանք է եղել գնդակոծության: Իսկ բանակային փորձագետները պարզեցին, որ գնդակներն արձակված են եղել մեքենայի ներսից: Պարզ է, որ ծակերը հետո են բացվել եւ այն էլ տարրական տրամաբանությունից զուրկ մարդկանց կողմից):

Արտասահմանյան ռադիոձայները վստահորեն պնդում են, որ 28-ին, աղետի լուրն առնելուց անմիջապես Ա. Մութալիբովն իր հանրապետության անվտանգության խորհրդի արտակարգ նիստ է հրավիրել, պահանջել, որ տեղն ու տեղը «խիստ միջոցներ ձեռք առնվեն» ուղղաթիռի աղետի վրեժն արժանիորեն լուծելու համար:

Իսկ աղետի հանգամանքները, կարծես իրոք պարզվում են: Հաղորդվեց, որ հունվարի 28-ի ժամը 16-ին, երբ քարինտակցիներն իրենց զոհերին էին հանձնում հողին, Աղդամից Շուշի թռչող ՄԻ-8 ուղղաթիռի պոչամասում ճանկարծ հրդեհ է բռնկվել: Այդ մեքենան, Շուշին շրջանցելով, ընկել է Շոշ գյուղի կողքի ձորում: «Ինչպես հաղորդել է քարինտակցի զոհերի հուղարկավորությանը մասնակցած ՏԱՍՍ-ի թղթակիցը, ինքն անձամբ տեսել է, թե ինչպես է ուղղաթիռում հրդեհ բռնկվել, թե ինչպես է այն ընկել ձորը եւ պայթել... Հրդեհի բռնկվելուց անմիջապես հետո ուղղաթիռից սկսել էին ցած նետել մեծ արկղներ, որոնք, ըստ մասնագետների պնդման, օգտագործվում են միայն զինամթերք տեղափոխելու դեպքում... Եւ հրդեհն էլ առաջացել է ուղղաթիռում գտնված զինամթերքից» («Հայաստան», 1992, հունվարի 31):

Եւ, այսպես, Ադրբեջանի ղեկավարության լարած այս մի թակարդն էլ չգործեց: Բայց դա ի՞նչ նշանակություն ունի, երբ նա, առանց առիթի ու պատճառի, անվերջ ու անընդհատ վայրագություններ է անում արցախահայության դեմ՝ ունենալով մի հիմնավոր ու անուղղելի պատճառ՝ այդ հայության անկախության վճիռը:

✧ ✧ ✧

Այդօր հրապարակվեց Հայ օգնության միության կենտրոնական վարչության հայտարարությունը՝ մարտնչող Արցախին հասցնելիք իր օգնության մասին:

Հայտարարությունն արվել է ԼՂ-ի հանրապետության հռչակման կապակցությամբ եւ հայտնում էր, որ Արցախին օգնություն հասցնելու համար ստեղծված է հատուկ բյուջե, որով պետք է զորավիգ լինել «խիզախ արցախահայության շեների վերականգնման աշխատանքներին», «Արցախ առաքել տարբեր տեսակի էլեկտրածին մեքենաներ (գեներատորներ) եւ ջրաղացներ՝ ժողովրդի սննդամթերքի կարիքները մեղմելու նպատակով» («Երկիր», 1992, հունվ. 30):

✧ ✧ ✧

Այսօր մի հետաքրքիր ճակատամարտ եղավ: Ճակատամարտ մոսկովյան հեռուստաէկրանին: Նախ մարտադաշտ դուրս եկավ Ադրբեջանի թղթակիցը, տխրահռչակ Մամեդովը եւ սովորականի պես վայրահաչեց Հայաստանի, Արցախի հայության դեմ: Ապա էկրանը տվին Հայաստանի թղթակից Նազարյանին, եւ նա էլ այնպես ջրեց Մամեդովի ստերը, այնպես մերկացրեց ադրբեջանական վայրագություններն Արցախում ու Հայաստանի

ԼՂ-ում տեղադրել խաղաղարար ուժեր, իհարկե, ԱՊՀ անդամ երկրների միջնորդությամբ։ Կ. Ֆելն առաջարկում էր, որ Ջ. Բուշը Ելցինի հետ ունենալիք առաջիկա հանդիպմանը հանդես գա միջնորդի դերով, նրան հրահրի շարունակելու անցյալ տարի հանձն առած առաքելությունը։

ԼՂՀ վիճակի համար մտահոգված էին նաեւ Եվրոպական երկրների անվտանգության խորհրդի նախագահ Ստենի Խոերն ու նախագահի տեղակալ Դենիս դե Կոնսինին, որոնք նամակներ են հղել ԱՄՆ-ի պետ. քարտուղար Ջեյմս Բեյքերին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին եւ Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելին։

Ջ. Բեյքերին հասցեագրված նամակում տագնապ էր արտահայտվում այն կապակցությամբ, որ անդրկովկասյան փոքրիկ մի երկրում տագնապի ու կոտորածի են ենթարկվում նրա բնիկ տերերը, եւ դա հղի է ծավալվելու, ԱՊՀ պետությունների վերակառուցողական ընթացքը խափանելու վտանգով։ Պետ. քարտուղարին կոչ էր արվում Պրահայի ներկայացուցչական ժողովում բարձրացնելու նաեւ ԼՂՀ վիճակի ու նրան օգնություն հասցնելու հարցերը։

Բուտրոս Ղալիին ուղղված նամակում կոչ էր արվում անհապաղ զբաղվել ԼՂՀ հարցով, լուծելու ուղիներ փնտրել, քանի այն իրար դեմ պատերազմի չի հանել Հայաստանին ու Ադրբեջանին, ապա եւ առաջարկվում էր զբաղվել Ղարաբաղում ՄԱԿ-ի խաղաղարար զորամասեր տեղադրելու հարցով։

Թուրքիայի վարչապետին հասցեագրված նամակում էլ հույս էր հայտնվում, որ Թուրքիան ջանքեր կգործադրի ինչպես Հայաստանի հետ իր հարաբերությունները կարգավորելու, այնպես էլ Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ գոյացած բարդույթը խաղաղ բանակցությունների ճանապարհով լուծելու համար։

✧ ✧ ✧

Այսօր առավոտից ադրբեջանական զորամասերը, տանկերի, զրահամեքենաների ուղեկցությամբ եւ հրետանային կրակի ներքո, լայնահուն հարձակում սկսեցին Ասկերանի շրջանի ամբողջ արեւելյան սահմանի երկարությամբ, ուր Նախիջեւանիկ, Խանաբաղ, Խրամորթ ու Փառուխ գյուղերն են։ Հայ ինքնապաշտպանության ուժերին հաջողվեց նրանց ետ վանել Նախիջեւանիկից ու Խանաբաղից։ Իսկ Խրամորթը, ուր հարձակմանը մասնակցել են 2 տանկ, 7 զրահամեքենա, մի քանի հարյուր զինվոր, եւ ուրկից նախօրոք դուրս էին բերվել կանայք ու երեխաները, մինչեւ երեկո մնում էր ադրբեջանցիների հսկողության տակ։

Ըստ Ադրբեջանի պրեզիդենտի մամուլի ծառայության հաղորդման՝ Նախիջեւանիկի մարտերում սպանվել են 5 ադրբեջանցի, անհայտ կորել չորսը եւ վիրավորվել 52-ը։

Ադրբեջանցիները հիմնովին ավերել են Խաչենագետի աջ ափին կանգնած Փառուխ փոքրիկ գյուղը։

Ամբողջ օրվա ընթացքում Շուշիից ռմբակոծում էին Ստեփանակերտը, Աղդամից՝ Ասկերանն ու շրջակա գյուղերը, Ամիրանլարից՝ Մարտունին, Թարթառից՝ Կարմիրավանը։ Երեւում է, որ թշնամին հանգամանորեն պատրաստվել է այս արշավանքին, պատժելու համար նախօրեին հայերի կատարած հանդգնությունները եւ հարցը լուծելու մեկընդմիշտ։

ԼՂՀ ԳԽ-ը կոչ է հղել համաշխարհային հասարակայնությանը՝ կասեցնելու Արցախի դեմ Ադրբեջանի չդադարող ագրեսիայի նոր բորբոքումները։ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, խորհրդարաններին ու միջազգային հասարակական կազմակերպություններին «SOS» խորագրով հղված կոչում ասված է՝ հունվարի 31-ի վաղ առավոտից ԼՂՀ տարածքում մարդկային սպանդ են կազմակերպում Ադրբեջանի զորքերը՝ տանկերի, զրահամեքենաների ու ամեն տեսակի թնդանոթների ուղեկցությամբ։ «Այս ժամին,- ասված է կոչի մեջ,- ողջ աշխարհի աչքի առաջ իր հայրենի հողի վրա եղեռնի է ենթարկվում հայ ժողովրդի մի հատվածը։ Ղարաբաղի հայությունն աշխարհի հասարակայնությանը կոչ է անում անհապաղ ձայն բարձրացնել ընդդեմ ագրեսորի եւ եղեռնի անսանձ կազմակերպչի»։



Երեկոյան «Ազատություն» ռադիոկայանը հայտնեց, թե ցերեկով Երեւանից իրենք տեղեկություն էին ստացել այն մասին, որ ադրբեջանական զորամասերը մխրճվել են ԼՂՀ սահմանները, ջարդում են բնակչությանը։ Իրենք զանգել են Ադրբեջան, կապվել հանրապետության պաշտպանության նախարարի հետ, հարցրել՝ ի՞նչ է պատահել, ի՞նչ հարձակում է, ի՞նչ եք ուզում։ Եւ նա պատասխանել է. «Արտակարգ ոչինչ չկա, մեր զորամասերը Ղարաբաղ են մտել բնակչությանը պաշտպանելու նպատակով»։

Ռադիոկայանի հաղորդմամբ՝ դեռեւս առավոտյան տագնապով իրենց է զանգել «Արցախի բնակիչ» Զորի Բալայանը, հայտնել է ադրբեջանական զորքերի ասպատակությունների ու ավերածությունների մասին եւ խնդրել, որպեսզի եվրոպական տերություններին հաղորդվի Ադրբեջանի այս նոր վայրագության ու ծրագրած սպանդի մասին։

Այդ ռադիոյի հաղորդման մեջ կարեւոր էր նաեւ մի ուրիշ տեղեկություն. ԱՄՆ-ի սենատում երեք խումբ գործիչներ առանձին-առանձին դիմել են պրեզիդենտ Բուշին՝ խնդրելով օգնել Լեռնային Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորմանը, տնտեսական ու քաղաքական ճնշում գործադրել Ադրբեջանի վրա, որպեսզի նա հարգի Ղարաբաղի հայության մարդկային իրավունքները։

Մոսկվայից հաղորդեցին, թե Շվեյցարիայում անկախ պետությունների ղեկավարներն են հավաքվում՝ մասնակցելու համաշխարհային տնտեսական ամենամյա համաժողովին։ Ա. Մութալիբովը հրաժարվել է այնտեղ գնալուց՝ պատճառաբանելով, որ իր հանրապետության քաղաքական բարդ վիճակը թույլ չի տալիս։ Կարող էր ասել՝ Արցախի դեմ սկսել եմ ամենավճռական ճակատամարտը եւ այստեղից չեմ հեռանա, մինչեւ չավարտեմ այն։

Իսկ ՀՀ հեռուստատեսությամբ ուրախ-ուրախ հաղորդեցին, որ Լ. Տեր-Պետրոսյանը Շվեցարիա է թռել եւ համաժողովից անմիջապես հետո մամուլի ասուլիս պիտի ունենա արտասահմանյան 250 լրագրողների հետ...

✧ ✧ ✧

Հայտնի է, որ Եվրոպայի համագործակցության ու անվտանգության խորհուրդը սույն ամսի 30-ին իր շարքն էր ընդունել Հայաստանին ու Ադրբեջանին։ Մեկ օր հետո, 31-ին, Պրահայում գումարված նիստում նույն խորհուրդը որոշեց իր դիտորդներին ուղարկել Արցախ՝ նպատակ ունենալով օգնել վերջ տալու չորս տարի այնտեղ տիրող արյունալի մղձավանջին։

«Ազատություն» ռադիոն հաղորդեց, որ, ընդունելով այս լուրը՝ Ա. Մութալիբովն իրեն չի կորցրել եւ պատրաստակամություն է հայտնել ԵԱՀԽ-ի դիտորդներին պահել Ադրբեջանի տարածքում։ Հավանաբար, որպեսզի նրանք իսկական աղետի գոտին տեսնելու եւ իրենց արդար խոսքն ասելու հնարավորություն չունենան։ Ինչպես բոլոր այն դիտորդներն ու լրագրողները, որոնք մինչեւ այժմ փորձում էին Արցախ հասնել Բաքվի ճանապարհով։

Այսօր Պրահայում Հելսինկիի գործընթացին մասնակից երկրների արտգործնախարարների խորհրդակցության ժամանակ ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը պաշտոնապես հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը չպետք է պատկանի Հայաստանին կամ Ադրբեջանին, այլ պետք է ընդունվի որպես անկախ հանրապետություն, դա խաղաղության հասնելու միակ ուղին է, որով պետք է ընթանան շահագրգռված կողմերը, եւ նրանց էլ պետք է անպայման օժանդակեն ՄԱԿ-ն ու Եվրապառլամենտը։ Նա նպատակահարմար համարեց, որ այժմ ԼՂՀ գործուղվեն խաղաղարար դիտորդներ ՄԱԿ-ից կամ Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցությանը մասնակցող երկրների կողմից։

ՀՀ արտգործնախարարը համանման առաջարկություններ էր արել նաեւ նախընթա-

թյուններին դատապարտում են Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման գործում ցուցաբերած անվճռականության համար, կտրականապես պահանջում անմիջապես «միջոցներ ձեռնարկել Ադրբեջանի այդ անբաժանելի մասից հայ գրոհայիններին դուրս քշելու եւ նրանց հարձակումներից ադրբեջանական ժողովրդին մեկընդմիշտ ապահովելու համար»:

**Փետրվարի 8-ին** ամբողջ Արցախում, Հադրութից մինչեւ Շահումյանի շրջանի եզրը՝ Մանաշիդ, դարձյալ համեմատական անդորր է եղել, եթե չհաշվենք առանձին կետերում տեղի ունեցած փոխհրաձգությունները, որոնց հետեւանքով երկուստեք վիրավորներ կան, եւ այրվել են մի քանի տասնյակ շինություններ:

Սա մեր «Լրաբերի» ծամծմած լուրն է: Ծամծմած, որովհետեւ ռադիո-հեռուստատեսության կոմիտեն Արցախում չունի իր սեփական թղթակիցը, կամ վստահելի ուրիշ որեւէ լրատվական աղբյուր եւ այս ու այնտեղից քաղած տեղեկություններն է ի մի հավաքում, հաղորդում, այն էլ համարյա միշտ ուշացումով:

Իսկ Մոսկվայից Ադրբեջանի խոսքն ու լկված ձայնն էր բարբաջում՝ Մախս Մամեդովի բերանով, եւ դարձյալ վայնասուն էր առաջին բառից մինչեւ վերջինը. Հայաստանի բանակը լայնամասշտաբ պատերազմի է անցել ամենուրեք, Խանքենդիից ռմբակոծել է Շուշին ու հարեւան ադրբեջանական գյուղերը, Մարտունուց՝ Ամիրանլարը, Ասկերանից՝ Աղդամը, Շահումյանից՝ Գերանբոյի գյուղերը: Պատերազմ է գնում Ադրբեջանի հյուսիս արեւմտյան (Ղազախի կողմերում) եւ հարավ-արեւմտյան (Կապանի կողմերում) ամբողջ սահմանի ուղղությամբ: Ցույց է տալիս վիրավոր զինվորներին ու խաղաղ բնակիչներին, քանդված տները...

Ի՞նչ է լինելու այս ամենի վերջը:

Մամեդովից հետո էլ խոսքը տալիս են իրենց հանրապետության պրեզիդենտի օգնական թե խորհրդական Մուսաբեկովին, եւ սա էլ ամբաստանում է անարդար աշխարհը. այս ի՞նչ բան է, մենք հույս ունեինք, թե Ռուսաստանը կօգնի, որպեսզի կարգավորվի վիճակը, մեր հանրապետության համար հանգիստ ապրելու պայմաններ ստեղծվեն: Բայց սա էլ Հայաստանի հետ ռազմական համագործակցության պայմանագիր կնքեց, դարձավ նրա շահերը պաշտպանող կողմ, եւ հիմա Հայաստանի գրոհայինները մարտի են նետվել՝ իրենց թիկունքում ունենալով Ռուսաստանի հզորությունը...

Մտածում է, որ այս պայմաններում իրենց ոչինչ չի մնում, քան անմիջապես նստել բանակցությունների սեղանի շուրջ, հարցերը լուծել խաղաղ-քաղաքական միջոցներով:

Բայց ի՞նչ է կատարվում իրականում: Հայկական զորքերն իսկապե՞ս գրոհի են անցել Ղազախի ու Կապանի կողմերում: Թե՞ այս հեռատես խելկատակներն աղմուկ են հանում, որպեսզի Ռուսաստանը, որ հետաձգել էր Հայաստանի հետ պաշտպանական համաձայնության դաշնագրի կնքումը, հրաժարվի՞ նրանից եւ ձեռնպահ մնա ամեն տեսակ ռազմական օժանդակությունից:

**Փետրվարի 9-ին** ԼՂՀ մեծ մասում համեմատական անդորր է եղել (ըստ ՀՀ լրատվության), եթե չհաշվենք հասուկենտ փոխհրաձգությունը, որ տեղի է ունեցել Աղդամի ու Ասկերանի շրջանների սահմանում, մեկ էլ կարճատեւ մի մարտը, որ Սրխավենդն է բորբոքել Կիչանի դեմ, եւ Ստեփանակերտից կիչանցիներին օգնության հասած ինքնապաշտպանների ջոկատն ավազակներին հալածել է մինչեւ իրենց տները: Այս կռվի մեջ մերոնք տվել են չորս զոհ, թշնամին՝ 2-ը:

Եւ «Լրաբերի» խոսնակն այս լուրից առաջ հայտարարել էր, թե Արցախում օրն անցել է համեմատական անդորրի մեջ: Ինչպե՞ս ընտելացել ենք զոհեր տալուն, եւ մեր հողի պաշտպանների կյանքն ինչքա՞ն էժանացել է:

Մոսկովյան «Վեստին», որ վարում էր Յու. Ռոստովը, բողոքեց ադրբեջանական այն վայրահաչության դեմ, որ վերաբերում է Երեւանից Արցախ թռչող ուղղաթիռների բեռներին. իբր, նրանք զենք ու գրոհայիններ են տանում՝ առավել սրելով դրությունը: Իհարկե, դրա նպատակն է վերացնել մայր ժողովրդի հետ Արցախի ունեցած միակ այն կապը, որը նյութական ու բարոյական հեղձուկ շրջափակման մեջ գտնվող հանրապետությանը հասցնում է չնչին սնունդ, դեղորայք եւ առաջին անհրաժեշտության ուրիշ բեռներ:



«Վեստիի» ավելի ուշ տված հաղորդումը, որ մեկ ուրիշն էր վարում, արդեն կատարյալ շախսեյ-վախսեյ էր, որն, իբր, հայերն են կազմակերպում սահմանամերձ շրջաններում եւ բուն արցախյան ադրբեջանական գյուղերում: Ցույց տվին Աղդամում, մեջիդի կողքին, երկու հոգու հոշոտված մարմինների թաղումը: «Հայերն են այսպես վայրագորեն հոշոտում», - վնգստում էր մեկը: Ապա նույնատիպ մի պատկեր Շուշիից: Գառիների անհոդաբաշխ կոնչոցնե՞րը: Նրանցից մեկն իր ականջն էր ցույց տալիս, ապա դանակով գործողություն, եւ «մեկնաբանը» բացատրեց. «Ասում է՝ հայերը տղայիս բռնել, ականջներն են կտրել: Ցույց է տալիս տկլոր պառկած մեկին, որի կուրծքը ծայրից-ծայր անշնորհք կարված է, ոնց որ պարանով: «Սրան հայերն են այսօրին հասցրել. մարզի ադրբեջանական գյուղի բնակիչ է, այնտեղի բուֆետապանը»: Ո՛չ բզկտվածի անունը, ո՛չ գյուղի... Որտե՞ղ են սարքել այդ բուտաֆորիան...

Իսկ մեկնաբանը գանգատվում է. «Աշխարհում տարածված է մի սուտ, թե հայերը Ղարաբաղում իրենց հողն են պաշտպանում եւ ամեն տեսակ օգնության կարիք ունեն: Մինչդեռ նրանց գազանություններից փրկություն չունի իր մերձավորագույն հարեւանը՝ ադրբեջանական ժողովուրդը: Այդ գազանությունների անհամար տեսագրություններ ունենք եւ դեռ ցույց պիտի տանք, որպեսզի աշխարհն իմանա, որ նրանք ոչ մի հող էլ չունեն պաշտպանելու, այլ ուրիշի հողի վրա են աչք դրել եւ այդ հողը նվաճելու համար սանձազերծել են մի պատերազմ, որի մեջ են քաշում աշխարհը»:

**Փետրվարի 10-ին** գրի առածս բոլոր լուրերը լրատվական մարմինների հաղորդումներից են:

«Լրաբերը» հաղորդեց, որ Ստեփանակերտում շարունակվում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության ԳԽ-ի նստաշրջանը, որն զբաղված է խորհրդի մարմինների, գործադիր օղակների ստեղծմամբ, ինչպես նաեւ քննարկում է Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանի զեկուցումը:

Շրջանների ռազմական վիճակը տանելի է. Կիչանում շարունակվում է ընդհարումը Սրխավենդից եկող օմոնական ավազակախմբերի հետ: Ստեփանակերտը, որ ենթակվել էր Մալիբեյլվի ռմբակոծությանը, ոչնչացրել է նրա մի քանի կրակակետերը՝ մեծ վնասներ պատճառելով հակառակորդին:

Շահումյանի շրջանում վիճակը կարգավորված է, երեւի պիտի հասկանալ՝ հարձակում ու ռմբակոծություն չի եղել:

Հաղորդվեց նաեւ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի զեկուցումը, թե ելույթը հանրապետության ԳԽ-ի նստաշրջանում: Նախագահը ԼՂՀ-ում տիրող լարված դրամատիկական վիճակի համար մեղադրեց Ադրբեջանին, որը հաճախակի հրապարակելով իր խոստումներն ու պատրաստակամության երդումները Ղարաբաղի խնդիրը քաղաքական մակարդակով, բանակցությունների ու փոխզիջումների եղանակով լուծելու վերաբերյալ, գործնականում չի տալիս դրա ոչ մի ապացույցը, հակառակը, իր ռազմական ուժերն է ուղարկում խաղաղ բնակչության վրա՝ ըստ երեւույթին հուսալով, թե արցախահայությունը կընկրկի բռնի ուժի առաջ եւ ծնկի կգա:

Պետք է մտածել, որ Ադրբեջանն իր այս հակահայկական ու վտանգավոր քաղաքականությունից անպայման կհրաժարվի երկու կարեւոր գործոնի ճնշման տակ՝ արցախահայության ցույց տված լուրջ դիմադրության, որին նա հանդիպում է ու պիտի հանդիպի, մեկ էլ միջազգային հանրության դատապարտումի եւ քաղաքական ու տնտեսական ճնշումների, - եզրակացրեց ՀՀ նախագահը:

Իհարկե, ավելի լավն ու նախընտրելին այն կլիներ, որ ԱՊՀ սահմաններում գործադրվեին նախաձեռնություններ այս հարցը կարգավորելու եւ վերջնականապես լուծելու համար, մանավանդ, որ համագործակցության մեջ մտնող պետությունները եւս նման հարցերի կարոտ չեն զգում. համարյա ամեն մեկն էլ իր ներսում ունի ինքնավարության համար ըմբոստացած որեւէ այլազգի վարչական միավոր: Եւ, ապա, մինչեւ

այժմ տեղի ունեցած հավաքներում եղել են նման առաջարկություններ, մասնավորապես՝ խաղաղարար եւ համերաշխություն ապահովող ուժեր ստեղծելու եւ պահելու վերաբերյալ...

Ինչ վերաբերում է Արցախի հարցին, Ռուսաստանն ու մի քանի ուրիշները համաձայն են, որ ՄԱԿ-ն ու միջազգային ուրիշ կազմավորումներ միջամտեն, շոշափելի գործ կատարեն: Մեր հանրապետության արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ստեղծված է ՄԱԿ-ի մի հանձնաժողով, որը պիտի այցելի Հայաստան, Ադրբեջան ու Արցախ եւ վճռական քայլեր ձեռնարկի այս գոտու վիճակը կարգավորելու համար:

Նման աշխատանք է ծավալված նաեւ ԱՄՆ-ի կոնգրեսում, որը, հավանաբար, կտա սպասված արդյունքը, ընդհուպ մինչեւ Ադրբեջանի վրա գործադրվելիք ճնշումը...

✧ ✧ ✧

Մոսկովյան ծրագրի հաղորդման մեջ ավելի որոշակի ու նպաստավոր էին լուրերը ԼՂՀ մեկ օրվա մասին: Ադրբեջանի ՆԳՆ լրատվությունը հայտնել է, թե Մրխավենցիք ամբողջ օրվա ընթացքում կրակի տակ են պահել շրջակայքի հայ գյուղերի «գրոհայինները»: Գնդակոծության ու հրթիռակոծման է ենթարկվել նաեւ Շուշին:

Հայկական լրատվության համաձայն էլ՝ հարձակումների է ենթարկվել Կիչանը՝ «Մրխավենցի գլխավոր հակառակորդը», ռմբակոծվել է Ստեփանակերտը (Շուշիի մշտական թիրախը):

«Ազատություն» ռադիոկայանը, բավական մանրամասն անդրադառնալով ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի այդօրվա ելույթին եւ նրա պարունակած քննադատությանն Ադրբեջանի հասցեին, հաղորդեց նաեւ, որ Թեհրանում Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչներն են բանակցել Ղարաբաղի հարցով. Իրանի արտգործնախարարն էլ խոստացել է միջնորդի դեր ստանձնել եւ ամեն կերպ ջանալ, որպեսզի խաղաղություն հաստատվի Արցախում: Հայտնեց նաեւ, որ Հայաստանի արտգործնախարարը բարձր է գնահատել Իրանի միջնորդությունը:

«Ազատությունն» իր մյունխենյան հեռվից անմիջապես որսացել է Թեհրանից ու Արցախից սպասված այս լուրերը: Իսկ Երեւանի ռադիոյի ու հեռուստատեսության կենտրոնը, ուղղակի ականջում քնած, ոչ մի տեղեկություն չունի եւ հավանաբար չի էլ ունենալու կամ ուշադրություն չի դարձնելու:

Ինչո՞ւ: Մի՞թե ո՛չ այն պատճառով, որ անմիջական առնչություն էլ չունի Արցախի հետ: Ո՛չ սեփական թղթակից, ո՛չ նույնիսկ այնտեղ գործուղված որեւէ աշխատակից: Գուցե մտածում է, թե հայ ժողովուրդն այսօր ունի ավելի կարեւոր, կենսական ավելի մեծ նշանակություն ունեցող որեւէ կետ, քան Արցախն է, կենաց ու մահվան կռվի մեջ գտնվող նրա ժողովո՜ւրդը... Թե ռադիոհեռուստակենտրոնի ղեկավարները մտածում են, որ իրենց անհամար թղթակիցներն ու աշխատողները, Երեւանի դատարկ խանութներից ու անգործ գործարաններից ռեպորտաժներով, սառցակալած փողոցների այս կամ այն կետից սարքած անհասցե քննադատական ռեպլիկներով շատ ավելի անհրաժեշտ գործ են կատարում:

✧ ✧ ✧

Այսօր ԼՂՀ ԳԽ-ի նախագահության նիստում որոշվեց Ստեփանակերտի կենտրոնական (Լենինի) հրապարակը, ուր այս չորս տարիներին տեղի էին ունենում գոյապայքարի զանգվածային միջոցառումները, կոչել Ազատության հրապարակ:

**Փետրվար 11**: Արդեն սովորական է դարձել «հարաբերական անդորրը», որը վերջին օրերին հնչում է Արցախին վերաբերող լուրերում: Սակայն այսօրվա «հարաբերական անդորրին» էլ Շուշիից Ստեփանակերտի վրա ավելի քան 70 հրթիռ ու արկ է գցվել:



ջնջվել են յոթ ստեփանակերտցիներ: Չնայած երեկ էին պնդում, թե Մալիբեյլիի ու Ղուշչիլարի կրակետերը խափանված կամ խլացված են, եւ դա խրատ պիտի լինի Շուշիի համար:

Մոսկվայի խոսնակները, հավանաբար, Ադրբեջանի լրատվական մարմիններից առնելով, հաղորդեցին, որ հայերը ռմբակոծել են Շուշին, գրավել Մալիբեյլի ու Ղուշչիլար գյուղերը, եւ կան մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ:

Դեռ չեմ պարզել, թե ինչ բան է այդ Ղուշչիլարը, որպիսի գյուղ հին ժամանակներում Դիզակի մոտ է եղել եւ ոչ Ստեփանակերտի կամ Շուշիի: Իսկ Մալիբեյլի՞ն... Սա արդեն չարիքի որջ է Ստեփանակերտից դեպի Հարավ գյուղն ընկած ձորակի մեջ, Ստեփանակերտից-Մարտունի խճուղու վրա եւ այն չորս տարիներին ձգված ահաբեկումների ու չարագործությունների շարքի մեջ երեւի թե առաջնությունը չէր զիջի ոչ մի ուրիշ կետի: Այստեղից էր, որ առաջին անգամ հարձակվել էին հայի ավտոմեքենայի վրա, կանգնեցրել, դուրս բերել ուղեւորներին՝ բանակային ծառայությունից արձակուրդի գնացող քաղավարդցի գնդապետին, կնոջն ու երկու երեխային, այնքան ծեծել, որ սրանց ես էին տարել, պառկեցրել մարզային հիվանդանոցում: Եւ դրանից հետո եղած բախումների մասին խոսող լուրերում համարյա միշտ էլ կար Մալիբեյլի անունը, այնքան, որ փակվեց կողքով անցնող ավտոճանապարհը, Ստեփանակերտից դեպի շրջանի գյուղերն ու Մարտունու կողմերը գնացողների համար նոր ճանապարհ կառուցվեց, Մալիբեյլիի հեռավոր շուրջը շրջանցող ճանապարհ... Բացի այն զարհուրելի դերից, որ այդ գյուղը կատարում էր վերջին ամիսներին՝ դառնալով Ստեփանակերտի վրա արկ ու հրթիռ ուղարկող հիմնական հրօջախ:

Սակայն Մալիբեյլին ունի նաեւ մեկ ուրիշ պատմություն, որն այստեղ արժե հիշել: 1918-20 թթ. լինելով հայկական գավառներն իրար կապող ճանապարհի վրա, անհամար չարիքներ է գործել, հռչակվել իբրեւ հայ ճանապարհորդների հոգեառ, հարեւան գյուղերի վրա կողոպտչական հարձակումներ կատարելու խրախույս որջ... Եւ երբ 1920-ի գարնանն արդեն արցախահայերը կորցրել էին իրենց ավելի քան հինգ տասնյակ գյուղերը, իրենց Շուշին, իրենց ազատության հեռանկարը, կրակված սրտով հարձակվեցին Մալիբեյլիի վրա, այնտեղ կատարեցին այն, ինչ կատարվել էին իրենց ավելի քան հինգ տասնյակ գյուղերում, իրենց Շուշիում: Կոտորեցին բնակիչներին, կողոպտեցին հայերից փախցրած հարստությամբ տրաքվող տները, հետո էլ կրակ տվին... Հետագայում առածի խոսք պիտի դառնար «Մալիբեյլի» անունը, «Մալիբեյլիի նախճիրը», «Մալիբեյլիի բալանը»...

Լա՞վ էր, թե՞ վատ, որ մի անգամ էլ հայը թուրքի հետ վարվեց թուրքավարի...

Բայց խորհրդային իշխանության առաջին տարիներին հայ բոլշեւիկները մեծահոգությամբ բռնվեցին եւ, երեւի թե արյունակիցների «մեղքը» քավելու նպատակով, վերակառուցեցին հիմնիվեր ավերված Մալիբեյլին, նրա մազապուրծ փախած մնացորդներին հավաքեցին, թե՝ արեցե՛ք, շենացրե՛ք ձեր բնակավայրը:

Կենդանի լինեին, տեսնեին, թե իրենց մեծահոգության հանդեպ ինչպես հատուցեցին նոր Մալիբեյլիի տերերը: Գլխի ընկնեին, որ օձ են տաքացրել Արցախական աշխարհի կրծքի վրա:

✧ ✧ ✧

Մաքսիմ Հովհաննիսյանն ասում է. Ղուշչիլար գյուղակ վերջերս իսկապես կար Մալիբեյլիի կողքին, նրա ու Փարամաքիի միջեւ: Առաջները մի քանի վրան է եղել: Վերջին տարիներին վերաբնակեցումներով մեծացրել են, դարձրել գյուղ՝ երեւի որոշած լինելով Ստեփանակերտի դեմ ստեղծել թշնամական դիրքերի մի ամբողջ շարք: Իսկ անունը՝ Ղուշչիլար, նրանից է, որ շատ ղուշ էին պահում, հավաբուծական մեծ ֆերմա ունեին:

✧ ✧ ✧

Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը, ԱՄՆ-ի պրեզիդենտ Բուշի հետ բանակցություններ վարելիս, շատ լուրջ տոնով զգուշացրել է հայ-ադրբեջանական հարաբերություններին, մանավանդ Ղարաբաղի բարդույթին Արեւմուտքից ցույց տալիք միջամտությունից: Նա ասել է. հանձին Ղարաբաղի, Անդրկովկասում ստեղծվում է մի նոր Իսրայել, իսկ ձեզ, ինչպես աշխարհին է հայտնի, շատ գլխացավանք է պատճառում արդեն գոյություն ունեցող մեկ Իսրայելը:

Թե Բուշի կառավարությունը եւ նրա արտգործնախարար Բեյքերը ինչպե՞ս կվերաբերվեն Թուրքիայի վարչապետի դիտողությանը, կերեւա մոտ օրերում: Չէ՞ որ վաղն իսկ սկսվում են Բեյքերի բանակցությունները ԱՊՀ պետությունների, ուրեմն եւ Հայաստանի ու Ադրբեջանի հետ:

**Փետրվարի 12-ի** առավոտը բացվեց բարի լուրերով: Նախ «Ազատությունը» հաղորդեց, որ Եվրոպայի համագործակցության երկրների հանձնաժողովի պատվիրակությունն այսօր ճանապարհվեց Անդրկովկաս՝ Լեռնային Ղարաբաղի բարդույթը կարգավորելու նպատակով հանդիպելու ԼՂՀ, Հայաստանի ու Ադրբեջանի կառավարական ներկայացուցիչների հետ: Հանձնաժողովի ղեկավարն է Չեխոսլովակիայի պրեզիդենտի օգնական-դիվանագետ Կարել ֆոն Շվարցենբերգը: Եվրոպական 48 տերությունները ներկայացնող բարձրաստիճան պատվիրակությունը նպատակ ունի ուսումնասիրել բարդույթի պատճառները, երաշխավորել նրա լուծման եղանակներ: Այն իր եզրակացությունները կներկայացնի 48 երկրների ղեկավարներին եւ ամեն կերպ կօժանդակի անհապաղ սկսելու խաղաղարար բանակցությունները:

Երեկ էլ Ջեյմս Բեյքերի ու Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպման ժամանակ շոշափվել է Լեռնային Ղարաբաղում խաղաղություն հաստատելու հարցը:

«Ամերիկայի ձայնը» հանգամանորեն կանգ առավ նույն հանդիպման խնդիրների վրա: Ստացված հաղորդման համաձայն՝ Ջեյմս Բեյքերը բանակցության ընթացքում ասել է՝ իր երկիրն անհանգստացած է Լեռնային Ղարաբաղում տարիներ շարունակ ձգվող բախումների առթիվ եւ պաշտպանում է եվրոպական համագործակցության ու համերաշխության հանձնաժողովի, ինչպես նաեւ նախագահներ Ելցինի ու Նազարբաեւի նախաձեռնությունները, շահագրգռված է, որ բանակցությունների, փոխադարձ զիջումների ճանապարհով խաղաղություն ստեղծվի այդ երկրամասում:

Բեյքերը խոստացել է նույն ոգով խոսել նաեւ Բաքվում, ուր այսօր պետք է հանդիպի Ադրբեջանի նախագահի հետ:

«Ամերիկայի ձայնը», Ռուսաստանի լրատվությունից առնելով, հաղորդում էր, որ երեկ հայ գրոհայինները նվաճել են ադրբեջանական մեկ գյուղ (հասկանալի է, Մալիբեյլին.- Բ.Ու.): Սպանվել են մի քանի ադրբեջանցիներ,- վերջում ասաց անդրօվկիանոսյան խոսնակը:

Խոսեցին նաեւ այն մասին, որ Ադրբեջանը ՄԱԿ-ին է դիմել նրան անդամագրվելու համար, եւ, փաստորեն, դրան ոչինչ չի կարող խոչընդոտել, քանի որ նախկին ԽՍՀՄ-ից սերված թե ճեղքված-անջատված բոլոր հանրապետություններն էլ անկախացել են եւ, իբրեւ այդպիսիք, պետք է լինեն համաշխարհային պետական համակեցության կազմի մեջ:

Պրեզիդենտ Բուշն էլ ուղերձ է հղել Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելին, նրա պետությունը գնահատել որպես մի լուսավոր օրինակ Միջին Ասիայում եւ Կովկասում դրության տեր դարձող մուսուլմանական պետությունների համար: ԱՄՆ-ի ղեկավարը հույս ունի, որ Թուրքիայի դերը գնալով անընդհատ պետք է բարձրանա իր շրջապատի եւ համաշխարհային քաղաքական ոլորտներում:

Այսպիսի դեպքերում քուրդը կասեր՝ «Այ մաշալլա՜»:



✧ ✧ ✧

**Փետրվարի 12-ին**, ինչպես եւ օրեր առաջ, փետրվարի 8-ին, Երեւանի Ազատության հրապարակում տեղի ունեցավ մեծ համահավաք բոլոր կուսակցությունների ու հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Համահավաքի ալիքների վրա ծփում էին կարեւորագույն կոչի-«Չկա անկախություն առանց Արցախի»-պաստառները: Այդ կոչն էլ տոն էր տալիս հանրահավաքին:

✧ ✧ ✧

**Փետրվարի 12-ը** ԼՂՀ ԳԽ-ի կողմից հայտարարվել է Անկախության օր, քանի որ 1988 թ. այդ օրն էր Ստեփանակերտում տեղի ունեցել բազմահազարանոց համահավաք, որը հայտարարել էր Արցախը մայր Հայաստանին վերամիացնելու իր վճռական կամքը:

**Փետրվարի 12-ի** երեկոյան լուրերը. -Մալիբեյլվի վրեժը լուծելու համար, Շուշին ավելի քան 110 հրթիռներ ու քնդանոթային արկեր է ուղարկել Ստեփանակերտի վրա: Կան վիրավորներ եւ զոհեր: Զոհերի թիվն «Ազատություն» ռադիոն 2-ն է ասում (աղբյուր ունենալով ԼՂՀ Ներքին գործերի լրատվությունը), «Լրաբերը»՝ 1: Վերջինս խնայո՞ւմ է իր ունկնդիրներին:

«Ազատությունը» հաղորդեց, որ ԱՄՆ-ի սենատի նշանավոր գործիչ Քեմբլը (կարծեմ այդպես կարդացին անունը), համախոհների անունից, ուղերձ է հղել պրեզիդենտ Բուշին՝ առաջարկելով, որ նա աջակցի ՄԱԿ-ի զորքեր ուղարկելու ԼՂՀ, պաշտպանելու նրա ժողովրդին՝ օրեցօր ահագնացող ադրբեջանական չարագործություններից: Առաջարկում է նաեւ ձեռնպահ մնալ Ադրբեջանի անկախությունը ճանաչելուց եւ նրան նյութական օգնություն ցույց տալու խնդրից, քանի դեռ չի հրաժարվել ԼՂՀ-ում բռնություններ գործադրելուց, նրա անկախությունը չճանաչելուց եւ, մանավանդ, քանի նրա դեմ գործադրում է ժամանակակից ամենահրեշավոր զինատեսակները:

Այդ օրվա կարեւորագույն երեւույթը ԱՄՆ-ի պետական քարտուղար Ջեյմս Բեյքերի հարցազրույցն էր Երեւանում եւ հանդիպումը Ադրբեջանի նախագահի հետ:

Բաքվի հանդիպման մեջ մխիթարական քիչ բան կար, եթե չասենք ոչինչ չկար: Ուրիշ պարագաներում համարյա միշտ բարյացակամ «Ազատությունն» անգամ Լեռնային Ղարաբաղի համար նպաստավոր խոսք չգտավ, բացի նրանից, թե Բեյքերն առաջարկել է, որ Ադրբեջանը նրա հարցի լուծումը նորմալ հունի մեջ դնելու համար հենվի Ելցինի ու Նազարբաեւի միջնորդության սկզբունքների վրա: Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանի անկախությունն ընդունելուն եւ օգնություն հասցնելուն, ապա դրան ոչինչ չի խանգարի, եթե Ադրբեջանն իր նախագահ Մութալիբովի բերանով խոստանում է ենթարկվել միջազգային օրենքներին եւ իր հանրապետության սահմաններում հարգել ազգային փոքրամասնությունների եւ մարդու իրավունքները:

Ճիշտն ասած, դժվար էլ է ուրիշ վերաբերմունք սպասել, եթե հաշվի առնենք Ամերիկայի ու Թուրքիայի հարաբերությունները, նրանց ղեկավարների վերջին օրերի սիրի-բիրիները, առհասարակ դիվանագիտական-քաղաքական այն մթնոլորտը, որ այսօր կա մեր շրջապատում՝ ԱՄՆ-ի, Թուրքիայի, Ադրբեջանի ու մյուս մահմեդական հանրապետությունների՝ կազմավորվող խմբակցության եւ նրանց դեմ բարձրացող Իրանի, սլավոնական երկրների մրցակցությամբ հանդերձ:

✧ ✧ ✧

Մենք չեղած տեղն իսկ հույսի նշույլներ ենք տեսնում, ապա նրանցից լույս հյուսում՝ մեր անցնելիք ճանապարհը պարզորոշելու համար: Իսկ Եվրոպառլամենտի, Անգլիայի եւ ԱՄՆ-ի կոնգրեսների, զանազան կազմակերպությունների բարյացակամ խոսքը, օգնության ու պաշտպանության խոստումները... Հիմա էլ Եվրոպայի անվտանգության ու հա-

մագործակցության խորհրդի թե խորհրդակցության դիտորդների խո՞ւմբը...

Նրա ղեկավար, Չեխոսլովակիայի նախագահի օգնական Կարել ֆոն Շվարցենբերգը ԼՂՀ մեկնելիս, ս.թ. փետրվարի 12-ին, Պրահայի օդանավակայանում ազնվորեն խոստովանել էր, թե չի հավատում, որ իրենց առաքելությունը մեծ արդյունք պիտի տա: Չէ՞ որ իրենց խնդիրն է՝ միայն հաշվետվություն ներկայացնել սեփական «դիտումների ու բանակցությունների վերաբերյալ»:

Բայց միեւնույն է, մենք էլի հավատով ու վստահությամբ ենք սպասում նրանց, որովհետեւ սովոր ենք չեղած տեղից էլ հույս քամել եւ նրան փարած՝ ապրել, մաքառել, դիմանալ:

**Փետրվարի 13-ին**, ըստ «Լրաբերի», անդորր է եղել ԼՂՀ-ում, այն անդորրը, որը մեծ փոթորիկից առաջ է լինում: Որովհետեւ անհնար է, որ թուրքն այդպես հեշտ ու հանգիստ մարսի Մալիբեյլիի կորուստը: Մալիբեյլին, որն Արցախի թրքական ռազմավարական երեք կարեւորագույն կետերից (Շուշի, Մալիբեյլի, Խոջալու) մեկն է: Գուցե եւ Բեյքերին տված խոստումն է առժամապես ետ պահում Այազ Մութալիբովին: Ամեն պարագայի՝ մեր ինքնապաշտպանությունը չպիտի հանգիստ մարսի այս խաբուսիկ անդորրը:

Ցույց տվին հույն թղթակից Նիկոլաս Վաքյանիսին, որը նախորդ երեք օրերն անց է կացրել Արցախում եւ հիացած է հայ ազատամարտիկների խիզախությամբ:

- Ես տեսել եմ Մալիբեյլին,-ասաց նա:-Եւ համոզված եմ, որ հայկական ինքնապաշտպանությունն այն լեռնաստանում հրաշքներ է կատարելու:

Յու. Ռոստովը («Վեստի») հայտարարեց, որ Բեյքերը միջինասիական պետություններում ոտուձեռ է ընկնում Իրանի ազդեցությունը նախկին ԽՍՀՄ-ից ելած մահմեդական պետություններում չեզոքացնելու համար: Ամեն կերպ ուզում է համոզել, որ այս երկրներն իրենց տնտեսական ու քաղաքական հեռանկարները միայն ԱՄՆ-ի հետ կապեն:

ԱՄՆ-ին անհանգստացնում է նաեւ Իրանի միջամտությունը հայ-ադրբեջանական բարդույթին,-ասում է Ռոստովը:

Իսկ ես մտածում եմ, որ այստեղ էլ մեր ոտը պիտի քարին առնի, որովհետեւ Իրանը կարող է թուրքական տարբերակի առաջն առնել: Իսկ ԱՄՆ-ը Թուրքիային է համարում արեւելյան միջավայրի ամենալուսավոր օրինակ...

Ժամը 10-ի լրատվությամբ ցույց տվին Եվրոպառլամենտի՝ Արցախ գնացող հանձնաժողովը, որի ղեկավարի կողքին էր մեր Րաֆֆի Հովհաննիսյանը: Բայց այդպես էլ չիմացվեց՝ որտե՞ղ են նրանք՝ Մոսկվայո՞ւմ, թե՞ Երեւանում:

- Բարեբախտաբար, ցավալի տեղեկություններ չկան Լեռնային Ղարաբաղից,-ուրախությամբ տեղեկացրեց Տատյանա Կոմարովան:

«Ազատության» գիշերային հաղորդմամբ հայտնեցին Եվրոպառլամենտի ծրագրերի մասին (լինելու են ամենուրեք, զեկուցում են ներկայացնելու 48 տերությունների ղեկավարներին եւ, հարկ լինելու դեպքում, պիտի առաջարկեն, որպեսզի ՄԱԿ-ի զորք ուղարկվի Արցախ):

Հայտնվեց, որ ՄԱԿ-ի նիստում ելույթ է ունեցել բարոնուհի Կոքսը եւ նկարագրել Արցախի օրեցօր վատացող վիճակը, առաջարկել, որպեսզի բոլոր ուղիներով ճնշում գործադրվի Ադրբեջանի վրա՝ նրա ճիրաններից Արցախն ազատելու համար:

«Ազատությունը», չգիտես որտեղի՛ց, հաղորդեց նաեւ, որ նախորդ օրվա (փետրվ. 13-ի՞) մարտերում Արցախում զոհվել է 31 մարդ:

✧ ✧ ✧

Մալիբեյլիի վախճանն ադրբեջանական պաշտոնական շրջանների ու լրատվության կողմից հայտարարվում է իբրեւ հայ գրոհայինների ագրեսիա, եւ այդ բացատրության շորշոփներն են երեւում նաեւ ուրիշ լրատվական մարմինների հաղորդումներում:

ԼՂՀ ԳԽ-ի մամուլի կենտրոնն այս առթիվ հրապարակել է հայտարարություն, որի մեջ ասված է. «Հայտնի է, որ Արցախի մայրաքաղաքն այսօր խեղդվում է մահացու օղակի մեջ: Դա բազմիցս հաստատել են նախկին ԽՍՀՄ տարբեր վայրերից եւ արտա-



սահմանյան երկրներից Ղարաբաղում եղած անկախ դիտորդները: Ադրբեջանական բանակը պարբերաբար զանգվածային հրետանակոծման է ենթարկում Ստեփանակերտի մոտակա գյուղերից: Փաստորեն ամեն օր քաղաքում զոհվում են խաղաղ բնակիչներ, մեծանում է ավերածությունների թիվը: Հենց բնակչության անվտանգությունն ապահովելու համար էլ Արցախի ինքնապաշտպանության ուժերը ստիպված էին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ ճնշելու ադրբեջանական բանակի կրակակետերը, որոնք Լեռնային Ղարաբաղում ստեղծվել են նրա բնիկներին՝ հայերին, բնաջնջելու նպատակով: Այնպես որ, խոսքը կարող է գնալ միմիայն հայկական կողմի ինքնապաշտպանության մասին»:

✧ ✧ ✧

Այդօր հայտարարություն հրապարակեց նաեւ ԼՂՀ Նախարարների խորհուրդը՝ կապ առնելով Ադր. հանրապետության տարածքում զինվորական կետերից կատարվող զենքի ու զինամթերքի բռնագրավումներին, օմոնականների ու մյուս ավազակախմբերի ձեռք բերած զանգվածային ոչնչացման զինատեսակներին, որոնց կիրառման միակ վայրն Արցախն է՝ այդ հանրապետության հայ բնակիչների դեմ գործադրվող ցեղասպանության նպատակով: Հայտարարության վերջում ասված էր. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախարարների խորհուրդը դիմում է ԱՊՀ պետությունների, նախ եւ առաջ Ռուսաստանի դաշնության ղեկավարներին՝ հաստատակամորեն պահանջելով օգտագործել իրենց ողջ ազդեցությունը եւ անհապաղ միջոցներ ձեռնարկել՝ կասեցնելու Ադրբեջանի կողմից զանգվածային ոչնչացման զենքի ինքնագլուխ զավթման փաստերը: ԱՊՀ-ի մասնակից պետությունների կողմից որեւէ հակազդեցության բացակայությունը խրախուսում է Ադրբեջանի ագրեսիվ գործողությունների ակտիվացումը եւ նրանց վրա պատասխանատվություն դնում դրա ողբերգական հետեւանքների համար»:

✧ ✧ ✧

Հայտնի դարձավ ԱՄՆ-ի պետական քարտուղար Բեյքերի ու Մութալիբովի կարճատեւ հանդիպման ժամանակ Արցախի հարցի կարգավորման համար Մութալիբովի տված «խոստումը»: Իբր, կարգավորման երեք փուլ է իրականացնելու.

Ա) Զինադադարի կնքում, ճանապարհների ապաշրջափակում՝ օգնությունն ապահով տեղ հասցնելու համար, Բ) Հայաստանի ու Ադրբեջանի հարաբերությունների նորմալացում, պատանդների փոխանակում, գաղթածների վերադարձ իրենց օջախները (ո՞ր գաղթածների.-Բ. ՈՒ.), Գ), Ղարաբաղին տեղական իշխանություն եւ մշակութային ինքնավարություն շնորհելը:

Այս տեղեկությունը Մութալիբովի օգնական Մուսաբեկովն է հաղորդել Ինտերֆաքս գործակալությանը («Հ», 1992, փետր. 20):

✧ ✧ ✧

Այդօր Եվրոխորհրդարանը վերստին անդրադարձավ ԼՂՀ հարցին, ընդունեց բանաձեւ՝ այն ուղղելով միջազգային ամենահեղինակավոր կազմակերպություններին (ՄԱԿ, ԵԱՀԽ, ԱՊՀ եւն), անմիջապես բարդույթի լուծմանն ուղղված միջնորդությունների ու օգնության խնդրանքով (լրիվ բնագիրը տե՛ս «ՀՀ», 1992, փետր. 18):

**Փետրվարի 14-ին** «ГА» (ռուս.) թերթը հրապարակեց մի ընդարձակ, նաեւ հանգամանալից հարցազրույց ԼՂՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բորիս Առուշանյանի հետ: Այդ զրույցից իմանում ենք, որ Ստեփանակերտի եւ շրջանների բյուջետային հիմնարկներն աշխատավարձ չեն ստացել ամառվանից ի վեր, որովհետեւ հանրապետության բանկը՝ դրամ չունի առհասարակ եւ բնակչությանը պարտք է ավելի քան 70 միլիոն ռուբլի: Վերջերս ՀՀ Մինիստրների խորհուրդը խոստացել է Արցա-

քերի ցանկը. Գրիգոր Լուսավորչի փ. N40, Արզանյանի փ. N 1, Կիրովի փ.N33, Բաղրամյանի փ.N8, Կապի բաժանմունքի շենքը՝ նույն փողոցի վրա, Առաքելյանի փ. N1, Չկալովի փ. N10 եւ 10ա, Չկալովի փ. N19, N8 դպրոցը, N6 մանկապարտեզը, Մաշտոցի փ. N8 շենքը, լրիվ հրկիզվել են Պետմասի պահեստները, հանրապետության դատախազության, Գերագույն խորհրդի, դորոֆմիությունների, պետբանկի, հանրապետության արխիվի եւլ շենքերը:

Մի շարք ռադիոկայաններ հաղորդեցին ԼՂՀ Մինիստրների խորհրդի նախագահ Օլեգ Եսայանի տագնապալից դիմումը համաշխարհային հասարակայնությանն ու տարբեր երկրների կառավարություններին: Դիմումում հայտնվում էր, որ հանրապետության ղեկավարությունն օգնություն խնդրած է եղել Ստեփանակերտում գտնվող ռուսական զինվորական գնդի հրամանատարին, որպեսզի գոնե խլացվեն Շուշիից գործող «Գրադ» եւ «Փոքրիկ» կայանքները, քանի որ դրանց կիրառությունը խաղաղ բնակչության դեմ խստորեն դատապարտվում է միջազգային օրենքներով:

Գնդի հրամանատարը հրաժարվել, մի կողմ է քաշվել՝ պատճառաբանելով, թե վերեւից այդպիսի հրաման չկա:

Բայց չէ՞ որ նրա աչքերի առաջ կոտորում են խաղաղ բնակչությանը, ավերում են այն քաղաքը, որի մեջ իրենց զորամասն է տեղավորված իրենց անձնակազմի ընտանիքների հետ միասին:

Հրաման չկա՜: Բայց էլ ինչի՞ համար եք այդտեղ գտնվում: Իբրեւ ո՞վ կամ ի՞նչ: Դիտորդնե՞ր: Կամ ի՞նչ էր նշանակում պաշտպանության նախարար Շապոշնիկովի կտրական խոսքն այն մասին, թե զինվորական գունդն Ստեփանակերտում կմնա այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ համարվի... Որպեսզի անտարբեր դիտի՞ հայ ժողովրդի դեմ գործվող եղեռնը:

1915 թվակա՜նը: Արեւմտահայկական վիլայեթների վրա թուրք զորամասերի ու ավազակախմբերի հարձակումների եւ զանգվածային կոտորածների օրերին Ռուսաստանի բանակները, գեներալ Յուդենիչի գլխավորությամբ, շարժված են եղել Արաքսի ձախ ափով: Սրանք եւս անմասնակից դիտորդների դերում գտնվեցին այնքան ժամանակ, մինչեւ որ թուրքերը կատարեցին հայոց եղեռնի իրենց սեւ ծրագիրը: Հետո էլ նույն Յուդենիչը փոխարքա Վորոնցով-Դաշկովին հորդորում էր պետական մակարդակով արգելել փախստական հայերի վերադարձն իրենց հայրենի վիլայեթները, որպեսզի այս տեղերը բնակեցնեն Կուբանից ու Դոնից բերելիք կազակներով:

✧ ✧ ✧

Հեռուստաէկրանին Այազ Մութալիբովն էր՝ սուս խղճահարված, բողոքող: Իբր հայերն իրենց հանրապետությունից եկել, ոտնահարում են Ադրբեջանի պետության անկախությունը, կոտորում խաղաղ բնակչությանը, դուրս քշում իրենց հայրենի, ավանդական հողից:

- Մենք դրա դեմը կառնենք,-նա էր հայտարարում,-ինչ գնով էլ որ լինի, ինչ արյուն ու զրկանքներ էլ մեզ վրա նստի: Եւ աշխարհը կտեսնի, թե ինչպես հաղթում է արդարությունը:

Ուրեմն, թուրքն է՛լ ունի արդարություն:

**Փետրվարի 17-ին** ՀՀ ԳԽ-ի նստաշրջանն սկսվեց ԼՂՀ-ում տիրող դրամատիկական վիճակի մասին հաղորդումով: «Արցախ» կոմիտեի նախագահ Վ. Շիրխանյանն էր հաղորդողը, թվարկեց այն կետերը, որոնք նախորդ օրերին ենթարկվել էին ադրբեջանցիների աննախադեպ ռմբակոծություններին, ավերվել, տվել ավելի մեծ թվով զոհեր:

Պատգամավորներից մեկը պահանջեց խոսել նաեւ այն մասին, թե մերո՛նք ինչ են արել, ինչո՛վ են պատասխանել թշնամու վայրագություններին:

- Այդ կապակցությամբ տվյալներ չկան,-պատասխանեց Շիրխանյանը՝ արտացոլելով ՀՀ ղեկավարության անտարբերությունը հայրենակիցների օրհասական վիճակի հանդեպ:



Որոշեցին ԳԽ-ի անունից դիմում հղել համաշխարհային հանրությանը, պահանջել օժանդակություն Արցախի գոյապայքարին: Դրա համար կազմեցին հանձնաժողով, որպեսզի այն դիմում պատրաստի, ներկայացնի նստաշրջանի երեկոյան նիստին:

Բայց եթե նախապես այդ դիմումը գրված լիներ, այս նիստում հաստատվեր, անմիջապես էլ կուղարկվեր՝ ուր պետք է, հենց այսօ՛ր կկատարեր իր դերը: Իսկ երեկոյան նիստում ընդունելիք դիմում այսօր ոչինչ էլ չի անի, եւ, այդպիսով, մեկ օրը կկորչի:

Անտարբերությունն ու անձեռնհասությունը որքա՞ն պիտի շարունակվեն այս ապաբախտ Արցախի հանդեպ: Մի՞թե այս մարդիկ երբեւէ չպետք է հասկանան, որ Արցախի մեջ այսօր Հայաստան աշխարհի ճակատագիրն է, նրա ապագան:

Իրենք չեն հասկանում, իսկ հասկացնելու համար թշնամին աչք ու ականջ է մտնում:

Լրատվական միջոցները հայտնեցին, որ հարեւան ադրբեջանական շրջաններից ռմբակոծության են ենթարկել Գորիսի ու Կապանի շրջանները, եւ կան ավերածություններ, վիրավորներ: Իսկ Թուրքիան իր երրորդ բանակն է բերել, կանգնեցրել արեւելյան վիլայեթներում, Հայաստանի սահմանի երկարությամբ: Ի՞նչ է նշանակում, կարելի՞ է բացատրել: Հաղորդավարն ասում է՝ դա, իհարկե, Թուրքիայի ու Ադրբեջանի ղեկավարների վերջին հանդիպումների ու բանակցությունների արդյունքն է: Արվում է Արցախի վրա ճնշում գործադրելու նպատակով: Լավ է, գոնե այսքանը հասկանում են:

Եվրոպական համագործակցության հանձնաժողովի հինգ ներկայացուցիչներն Ստեփանակերտում են գտնվում, վախենում են նկուղներից ելնել: Նրանք իրենց եզրակացությունները կհրապարակեն փետրվարի վերջին:

Ռուսաստանի կառավարությունն էլ իր միջնորդությունն է առաջարկել ԼՂՀ բարդույթը կարգավորելու համար, եւ Տեր-Պետրոսյանն ու Մութալիբովը դրա համար Մոսկվա կգնան փետրվարի 19-ին:

Վերջում հայտնի դարձավ նաեւ, որ, այսպես կոչված, տնտեսական համագործակցության ծավալումների համար, Իրան-Թուրքիա-Պակիստան մուսուլմանական դաշնության մասնակիցները դառնալու նպատակով Թեհրան են հավաքվել Ադրբեջանի, Ուզբեկստանի եւ Տաջիկստանի ղեկավարները: Մուսուլմանական մնացած պետություններն էլ (ԱՊՀ) առայժմ այնտեղ դիտորդներ են...

ԱՄՆ-ի պետական քարտուղարի աչքը լո՜ւյս, եկել էր նախկին Խորհրդային Միության մուսուլմանական պետություններն իր երկրի ազդեցության ոլորտի մեջ առնելու եւ տուն էր դառնում իր առաքելության հաջողությանը վստահ ու խանդավառ:

✧ ✧ ✧

Այսուհանդերձ ՀՀ ԳԽ-ի «Դիմումը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի անդամ երկրներին, ԵԱՀԽ-ին, Եվրախորհրդարանին»՝ լույս տեսավ (տե՛ս հանրապետական թերթերի ս.թ. փետր. 18-ի համարները): Սովորական արտահայտություն տագնապի, օգնության աղերսանքի եւ առաջարկությունների, որպեսզի ԵԱՀԽ-ի պատվիրակության «աշխատանքը կենտրոնանա Լեռնային Ղարաբաղում եւ ստանա մշտական բնույթ»:

Իսկ այդ պատվիրակության նախագահն ի՛նքը չէր հավատում իրենց առաքելության նկատելի արդյունքին (տե՛ս ամսիս 12-ի օրագրությունը):

**Փետրվարի 18-ին**, ասում են, թուրքերը հանգիստ են թողել Ստեփանակերտը: Փոխարենը ծանր է եղել դրությունը Մարտունիում եւ Էրքեջում, ուր ամբողջ օրվա ընթացքում չի դադարել ռմբակոծությունը: Էրքեջից մանրամասներ չհաղորդեցին:

Ասկերանի շրջանի Նորագյուղ, Բերքաձոր ու Մեհթիշեն գյուղերը գնդակոծվել են երկու ռազմական ինքնաթիռներից (ՄԻ-24):

Նույն շրջանի Այգեստանի վրա Խոջալուից արձակվել են ասեղնածածկ ռումբեր, որոնք, ինչպես ռազմական փորձագետներն են հաստատում, արգելված են միջազգային կոնվենցիայով:

նիձորը, Կապանի ու Տավուշի շրջանները: Խնձորեսկում սպանվել է մի երեխա, կան վիրավորներ:

Մերոնք խլացրել են սահմանային մեկ կրակակետ, առգրավել մեկ զրահամեքենա...

Մարշալ Շապոշնիկովը դիմել է ԱՊՀ ղեկավարներին՝ առաջարկելով Ղարաբաղի խնդիրն անհետաձգելիորեն լուծելու քաղաքական եղանակներ գտնել, ապա եւ ստեղծել Համագործակցության խաղաղարար ռազմական ուժեր, որոնք կենթարկվեն միայն ԱՊՀ ղեկավարների խորհրդին եւ կօգտագործվեն Համագործակցության տարածքի բարդույթները վնասազերծելու, վերացնելու համար:

Մոսկվայից ցույց տվին Ադրբեջանում տեսագրած մի «թատրոն». ռուս պատանիներ են, իբր հայկական տարածքում ծառայած նախկին զինվորներ, որոնք, հրաժարվելով հայ գրոհայինների առաջարկը կատարել՝ կռվելու ադրբեջանցիների դեմ, նախ փախել են Նախիջեւան, ապա Բաքու հասել, որպեսզի խոստովանեն իրենց սերն ու նվիրվածությունը ադրբեջանական իշխանություններին: Իսկ թե ինչպիսին են անունները, ինչ զորամասերում են ծառայել, Մախս Մամեդովը գաղտնի է պահում՝ երեւի ՄԱԿ-ին զեկուցելու:

Մոսկվայի խոսնակն ասում է՝ Իրանի արտգործնախարարը շուտով կլինի Հայաստանում եւ Ադրբեջանում, որպեսզի առաջարկի Ղարաբաղի հարցի լուծման իր տարբերակը:

Ռուսաստանի միջնորդությամբ հարցի լուծման համար նախորոք հայտարարված բանակցություններին (ամսիս 20-ին) արդեն ժամանել է Լեւոն Տեր-Պետրոսյանը: Իսկ Մութալիբովը կգա՞: Եւ ի՞նչ արդյունքներ կտա այս նոր խոսքուզրույցը...

✧ ✧ ✧

Իրադրությանը քաջատեղյակ լրատվական մարմինները նախորդ օրերի անցուդարձին անդրադառնալով, նշում են հայկական կողմի կարեւորագույն ձեռքբերումը. Մալիբեյլվի ու Ղարադաղլվի նվաճումով ազատ ու անվտանգ է դարձել Ստեփանակերտ-Մարտունի մայրուղին՝ իր շուրջը ծվարած հայկական բնակավայրերի համար: Դա ռազմավարական խոշոր նվաճում է, եթե նկատի առնենք, որ ավելի վաղ էլ վնասազերծվել է Մարտունուն կպած Խոջավենդը: Բայց նույն նվաճումն իրավո՞ւնք է տալիս ինքնահանգստանալու, երբ ադրբեջանական կողմը եւս հասկանում է, թե ի՛նչ վիթխարի կորուստ է ունեցել եւ բոլոր ուժերը պիտի գործադրի վրեժ լուծելու, որեւէ ուրիշ կետում հակակշիռ ձեռք բերելու նպատակով: Դրա՞ ապացույցները չէին հայկական բոլոր մեծ բնակավայրերի զանգվածային ռմբակոծությունները, ռազմական ահեղ ուղղաթիռների ասպարեզ քաշելը, Շահումյանի ու Ասկերանի սահմանային գյուղերի վրա կատարած ավազակային հարձակումները:

Ուրեմն, տեղական որեւէ հաղթանակ ամրապնդելու համար նախապես պետք է պատրաստ լինել նախ այն պաշտպանելու, ապա եւ ամրապնդելու նոր հաղթանակներով:

✧ ✧ ✧

Այդ օրը ռուս հայտնի իրավապաշտպան, գրող, արցախահայության հրաշալի բարեկամ Ինեսսա Բուրկովան դաժանորեն պաշարված Ստեփանակերտում էր գտնվում եւ հրապարակեց իր դիմումն արյունակիցներին ու աշխարհի մարդկանց, դիմում, որ ավելի շատ տագնապի ճիչ է, փրկության աղաղակ: «Ուշադրությո՛ւն: Խոսում է մոսկովյան գրող Ինեսսա Բուրկովան: Ես պաշարված Ստեփանակերտից դուրս եմ ճեղքում հեռախոսով: Սա Լեռնային Ղարաբաղի միակ կապն է արտաքին աշխարհի հետ (հաջորդ օրերին այդ կապն էլ պիտի խզվեր.-Բ. ՈՒ.):

Ես դիմում եմ աշխարհի բոլոր կառավարություններին, հողագնդի բոլոր մարդկանց, ում խիղճն ապրում է դեռեւս. պաշտպա՛ն կանգնեցեք Լեռնային Ղարաբաղի հայությանը: Առա՛նց հապաղելու: Վաղն ուշ պիտի լինի: Նրանց բոլոր 180 հազարին կկոտորեն մինչեւ վերջինը: Ադրբեջանական բանակը, ոտնահարելով միջազգային իրավունքը, խաղաղ բնակչության դեմ գործի է դրել զանգվածային ոչնչացման զենքեր, «Գրադ» հրթիռային սարքեր: Եւ 40 փողանի այդ հրեշավոր հրազենը չորս օր շարունակ ռմբակոծում է Ստեփանակերտը: Չորրորդ ամիսն է բնակչությունը նկուղներում է փրկվում հրթիռներից ու ռումբերից: Ինքնապաշտպանության ուժերը խիզախորեն մաքառում են քաղաքի մատույցների խրամատներում, Ղարաբաղի բոլոր սահմաններում: Նրանք խլացնում են հրակետերը: Սակայն «Գրադի» դեմ անպաշտպան են նրանք: «Գրադը» շենքեր է բնաջնջում, վառում ու ավերում է հիմքից: Հիվանդանոցների նկուղներն ու միջանցքները լիքն են վիրավորներով ու սպանվածներով: Դրանք կանայք են, ծերունիներ, երեխաներ, նույնիսկ ծծկեր մանուկներ:

Փրկեցե՛ք հերոսական Ղարաբաղի հայությանը: Աղաչո՛ւմ եմ, փրկեցե՛ք»:

Ռուս կնոջ այս տագնապոտ աղաղակն ու օգնության աղերսանքը լսեցի՞ն նրանք, որ պետք է լսեին եւ պետք է հասցնեին իրենց օգնությունը: Նրանց սրտերում արթնացա՞վ խիղճը, շարժվե՞ց մարդկային գութը...

Հաջորդ օրերին Արցախը պետք է դիմակայեր թշնամու առավել ծանր հարձակումների մղձավանջը: Դիմակայեր եւ հաղթեր:

**Փետրվարի 20-ի** վաղ առավոտյան արտասահմանյան ռադիոձայները ցավով պատմում էին աղետալից նախօրյակի արցախյան ողբերգությունը եւ որպես դեղամիջոց հայտնում, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն առաջարկել է անհապաղ Արցախ ուղարկել ԱՊՀ խաղաղարար ռազմական ուժեր: Որ նույն առաջարկությամբ արդեն հանդես է եկել նաեւ մարշալ Շապոշնիկովը: Բայց, ահա՛, Ադրբեջանի տեր Այազ Մութալիբովը դեմ է այդ առաջարկներին եւ պահանջում է չխառնվել իր հանրապետության ներքին գործերին:

Իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտ Բուշը, լսելով Բեյքերի զեկույցը մուսուլմանական երկրներ կատարած իր ուղեւորության արդյունքների մասին, որոշել է անմիջապես ընդունել Ադրբեջանի, Թուրքմենստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի անկախությունը եւ դիվանագիտական հարաբերություններ սահմանել նրանց հետ: Ոչի՛նչ, որ Ադրբեջանը խախտել է Բեյքերի ներկայացրած 5 պահանջներից 3-ը: կարեւորն այն է, որ ԱՄՆ-ը ծրագրել է, ի հակակշիռ Իրանի, այս կողմերում տարածել իր ազդեցությունը, իսկ դրա համար անհրաժեշտ է շահել թրքության համակրանքը:

Նախօրյակին Մանաշիդում ու Կարաչինարում սկսված մարտերը շարունակվել են ամբողջ օրը: Երեկ միայն Մանաշիդի վրա ավելի քան 300 օմօնականներ են հարձակվել: Նրանց ուղեկցում էին տաս զրահամեքենա եւ մեկ տանկ: Սկզբում մերոնք նահանջել են՝ դաշտում թողնելով երկու ծանր վիրավոր: Բարբարոսները վիրավորներին վառել են: Վրիժառությամբ լեցուն ազատամարտիկները հակահարձակման են անցել, ետ շպրտել թշնամուն՝ պատճառելով մեծ վնասներ:

Խաղաղություն էր Հայաստանի ու Ադրբեջանի սահմաններում:

Ցերեկը Երեւանում տեղի ունեցավ մեծ համահավաք: Կազմակերպողն ԱԻՄ-ն էր, եւ հասկանալի է, թե ի՛նչ պահանջներ պիտի ներկայացներ. անմիջապես ձեռնարկել ազգային բանակ ստեղծելու գործին, սահմանադիր ժողով ստեղծել եւ, իհարկե, գործնական քայլեր անել, ամեն տեսակ օգնություն ցույց տալ Արցախին:

Մոսկովյան «Վեստին» (Յուրի Ռոստով) հաղորդեց, որ նախօրեին տեղի են ունեցել ահավոր ճակատամարտեր. միայն Ստեփանակերտի վրա ադրբեջանցիները նետել են ավելի քան 350 ռումբ ու հրթիռ, որից 20-ը «Գրադ» տիպի: Հայկական բնակավայրերի վրա քշված ռազմական ուղղաթիռներն ստիպեցին դիմել վճռական միջոցների:

Մոսկվա է ժամանել ՀՀ պրեզիդենտ Լեւոն Տեր-Պետրոսյանը, բայց ո՛չ թե Ադրբեջանի հետ բանակցություններ վարելու, ինչպես նախօրյակին էր հաղորդվել, այլ հանդիպումներ ունենալու պրեզիդենտ Ելցինի ու մարշալ Շապոշնիկովի հետ: Ելցինի հետ արդեն հանդիպել է, սակայն փակ դռների ետեւում, եւ հնարավոր չէ որեւէ բան ասել ար-

դյունքների մասին։

Տեղի են ունեցել Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարներ Րաֆֆի Հովհաննիսյանի ու Հուսեյն-աղա Սադըխովի բանակցությունները՝ Ռուսաստանի արտգործնախարար Կոզիրեւի միջնորդությամբ։ Բանակցությունները ձգվել են ութ ժամ։ Երեք կողմերն էլ գոհունակություն են արտահայտում։ Բայց ո՞ր արդյունքի համար, երբ չի ընդունվել եւ ոչ մի համաձայնագիր, եւ միայն հրապարակվել է հայտարարություն (կոմյունիկե), որով կոչ է արվում դադարեցնել պատերազմը, վերացնել շրջափակումները, օգնություն հասցնել տուժված բնակավայրերին եւն։

Բուն կոմյունիկեն՝ բաղկացած 4 կետերից (տե՛ս «Ազգ», 1992, փետր. 22) ավելի դժգույն ու հեղհեղուկ է, քան լրատվության մարմինների այս հայտարարությունը։ Բավական է ասել, որ նրա մեջ նույնիսկ Լեռնային Ղարաբաղի վարչական միավորի անունը չկա, որ նշանակում է՝ թուրքն այն խոպան վերացած է համարում եւ խնդիր ունի իր հարցերը կարգավորել միայն Հայաստանի հանրապետության հետ։ Այդ պատճառով էլ միանգամայն բնական ու բանական է Ռ. Հովհաննիսյանի պահանջը, որպեսզի բանակցությունների շարունակությանն անպայման մասնակցի ԼՂՀ ներկայացուցիչը իբրեւ շահագրգիռ եւ իրավազոր կողմ։ Ապա որպեսզի ԼՂՀ մտցվեն ՄԱԿ-ի կամ ԱՊՀ խաղաղարար զինվորական ուժեր։

Բանակցությունների ժամանակ Ռուսաստանի դաշնության մամուլի կենտրոնում նախագահի խորհրդական Գ.Վ. Ստարովոյտովան հանդիպում է ունեցել Ռուսաստանի ու արտասահմանյան լրագրողների հետ, պատասխանել մի շարք հարցերի, որոնք հույժ կարեւոր են Լեռնային Ղարաբաղի խնդրի կապակցությամբ։ Նա պնդել է, թե այստեղ անընդունելի է Ադրբեջանի շարունակական մեղադրանքը ինչ-որ տարածքային հավակնության վերաբերյալ։ Արցախում ստեղծված ժողովրդավարական հանրապետությունը կռվում է իր ազատության, իր բնակչության մարդկային իրավունքների համար։ «Սուտ են լուրերը կռվին, իբր, մասնակցող լիբանանցի կամավորների վերաբերյալ։ Սա ես պնդում եմ ամենայն պատասխանատվությամբ։ Եւ ամենից կարեւորը՝ այդ հանրապետության կողմից չի կատարվում ապօրինի եւ ո՛չ մի քայլ։ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը պահանջում է Ռուսաստանի հովանավորությունը։ Իսկ Ռուսաստանը պետք է քննի-պարզի՝ ինքն այստեղ ունի՞ որեւէ շահ, թե՞ պիտի թողնի-հեռանա, որպեսզի այնտեղ տիրություն անի մեկ ուրիշը, որն արդեն հայտնվել է եւ դրսեւորում է իր շահախնդրությունները»։

Արցախի խնդիրը կդառնա այն լակմուսի թուղթը,-վերջում ասաց Ստարովոյտովան,-որ ցույց կտա, թե ի՛նչ արժե եւ ինչի՛ է ընդունակ Անկախ պետությունների համագործակցությունը, որը մինչեւ այսօր միայն անտարբերություն է ցուցաբերել իր աչքի առաջ գործվող բռնությունների հանդեպ»։

Ռուսաստանի պրեզիդենտի խորհրդականը համոզված էր, որ Արցախ պիտի մտցվեն ՄԱԿ-ի «կապույտ գլխարկավորներ», այլեւ համանման կազմավորումներ ԱՊՀ զորքից։

Հարցրին նաեւ մարշալ Շապոշնիկովի կարծիքը, եւ նա զայրացած պատասխանեց. «Մութալիբովը Լեռնային Ղարաբաղի դեմ գործադրում է կոնվենցիաներով արգելված «Գրադ» հրեշավոր զենքը։-Ապա վճռաբար ավելացրեց.-Այսօր մենք անկախ պետությունների ողջ հեղինակությունը պետք է օգտագործենք իրականացնելու համար երեք խնդիր. քաղաքական ճանապարհով կարգավորել վիճակը Ղարաբաղի հողում, թույլ չտալ, որպեսզի Անդրկովկասի պետություններն առայժմ ստեղծեն ազգային բանակներ եւ ԱՊՀ զինական խաղաղարար ուժեր առանձնացնել նման բարդ ու տաք կետերում դրությունը կարգավորելու համար»։

Յու. Ռոստովը հերքեց ադրբեջանցիների տարածած լուրերը Ղարաբաղի կռիվներին Ստեփանակերտի գնդի, իբր թե, ունեցած մասնակցության մասին։ Ցուցադրեց նաեւ նախորդ օրը Բաքվո՛ւմ թե ո՛ւր հարցազրույցի քաշված վեց զինվորների նոր հարցաքննությունը Մոսկվայում։ Նրանք ասացին՝ իրենք ծառայել են Նախիջեւանում, Գանձակում եւ Ղարաբաղի համար չեն կռվել, այլ փախել են, որպեսզի չմասնակցեն ոչ մի անիմաստ պատերազմի։



✧ ✧ ✧

Թուրքիայի արտգործնախարարությունը, իրենց 3-րդ բանակի վերադասավորության առթիվ տարածված լուրերի կապակցությամբ, հայտարարում է, թե արտակարգ ոչինչ չկա, իրենք միայն ամենամյա զորավարժություններ են անցկացնում։ Մարշալ Շապոշնիկովն էլ այդ «հաստատեց», ասաց. «Թուրքիան այդ շրջաններում ամեն տարի զորավարժություններ է անցկացնում»։

✧ ✧ ✧

Շահումյանի շրջանի Էրքեջ, Մանաշիդ ու Բուզլուխ գյուղերը ետ նվաճելիս հայ պաշտպանական ջոկատները թշնամուց առգրավել են 3 զրահամեքենա, որոնց անձնակազմի անդամները ռուսական բանակից են։ «Ստեփանակերտի վրա արձակվող «Գրադի» համազարկերն իրագործվում են ռուսական զորամիավորման մասնագետների կողմից։ Իսկ հայաբնակ գյուղերի գնդակոծությունն իրագործել են Միջին Ասիայից ժամանած զինվորական ուղղաթիռները» («Ազգ», 1992, փետր. 22)։

✧ ✧ ✧

Բաքվում է գտնվում Ֆրանսիայի հանրապետության մարդասիրական օգնության գծով պետական քարտուղար Բեռնար Քուշները, նա, որ խոստանում էր Ղարաբաղի համար օգնության միջանցք ստեղծել։ Հիմա Բաքու է հասցրել 15 տոննա դեղորայք ու կաթի փոշի, հանդիպումներ ունեցել Ադրբեջանի ղեկավարների հետ՝ ցանկություն հայտնելով, Ղարաբաղի բարդույթի լուծմանն օգնելու նպատակով, այցելել նաեւ Եր[illegible] ու Լեռնային Ղարաբաղ։

Զրույցի ժամանակ, ասում են, Մութալիբովն այդ բարդույթի մեղքը գցել է Ս[illegible]ջի, մասամբ էլ Ստեփանակերտում տեղակայված ռուսական գնդի վրա։

✧ ✧ ✧

Երեւանից գիշերը հաղորդեցին, որ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի դիմումով Արցախի խնդրի լուծման համար Եվրոպառլամենտն ու Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը միջնորդություններ են արել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին։

Հարցազրույցի կանչեցին Ստեփանակերտից նոր ժամանած երեք լրագրողների, երկուսը (Ասկոլդ, Ջեյմս)՝ Եվրոպայից, մեկը՝ (Դմիտրի Նովիկով) Կիեւից։ Ցնցված են տեսածներից, ադրբեջանական վայրագություններից, ինքնապաշտպանների համառությունից ու խիզախությունից, մանավանդ տառապանքները հաղթահարելու արցախյան կամքից։ Շատ տեսագրություններ են արել եւ իսկայական տեղեկություններ են տանում, որպեսզի ցույց տան, պատմեն, եւ Եվրոպան իմանա, թե փոքրիկ մի երկիր ինչպես է մաքառում իր ազատության ու անկախության համար։

**Փետրվարի 21-ի** առավոտյան արտասահմանի ռադիոձայները մի բերան խոսում էին ԼՂՀ վիճակի, նրա շուրջ սկսված բանակցությունների ու սրանց հեռանկարների մասին։ Հետաքրքիր է «Ազատություն» ռադիոկայանի «Կլոր սեղանը», որի շուրջ նստած էին Լեւ Ռոյսմանը, Էդուարդ Հովհաննիսյանը եւ Վլադիմիր Մալենկովիչը։ Խոսք էր գնում մոսկովյան բանակցությունների, ընդունված հայտարարության եւ դրանցից անելիք հետեւությունների շուրջ։ Հովհաննիսյանը պնդում էր, թե հարցի լուծման ամենակարճ ուղին այն է, որ ճանաչվի Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, եւ զրուցակիցների թերահավատությանը պատասխանեց այսպես.

- Վերջին ժամանակներում անկախացած պետություններից ոչ մեկը չունի այնքան

Ելցինը պատրաստ է բռունցքը սեղանին զարկել, ասել՝ դո՛ւրս կորեք Ղարաբաղից: Ագրեսորի հետ միայն այսպես պիտի խոսել, ուրիշ լեզու նա չի հասկանում:

✧ ✧ ✧

Երեւանում է գտնվում Ֆրանսիայի կառավարության արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ղեկավար Բեռնար Քուշները, որն այսօր հանդիպում ունեցավ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ: Զրույցին արծարծվեց նաեւ Արցախի հարցը: Քուշները հաղորդեց, որ իր հետ մեկ ինքնաթիռ բեռ է բերել, հիմնականում դեղորայք, որի մեծ մասը պետք է ուղարկի Ղարաբաղ: Ասաց, որ մարդասիրական լայնածիր օգնությունն ու հարցի խաղաղ կարգավորումը իր երկրի եւ քաղաքակիրթ Եվրոպայի առաջնահերթ պարտքն է:

**Փետրվարի 24-ին** ելույթ ունենալով ՀՀ ԳԽ-ի նստաշրջանում՝ պատգամավոր Արկադի Մանուչարովը պատմեց, որ Արցախի նոր ղեկավարությունը, Արթուր Մկրտչյանի ու Օլեգ Եսայանի ղեկավարությամբ, անձնվեր աշխատանք է կատարում բնակչությանը թուրքական վայրագություններից փրկելու, երկիրը պաշտպանելու համար, եւ անհրաժեշտ է, որ Հայաստանի Հանրապետությունն իր օգնությունը բազմապատկի, իրականացնի ավելի մտածված ու ծրագրված: Նա պահանջեց, որ ՀՀ ղեկավարությունը ճանաչի ԼՂՀ անկախությունը:

Նստաշրջանում ելույթ ունեցավ նաեւ ՀՀԴ պատգամավորական ֆրակցիան եւ, իր զարմանքն ու տարակարծությունը հայտնելով ամսիս 21-ի հանրահավաքում ՀՀ նախագահի ու ԳԽ-ի նախագահի ելույթներում ընդդիմության հասցեին արված մեղադրական, ավելի ճիշտ՝ թշնամական հայտարարությունների առթիվ, եզրակացրեց, որ դրանց «նպատակը հանրապետությունում եւ Արցախում խորացող ճգնաժամի պայմաններում կանխավ, օր առաջ քավության նոխազ հայտնաբերելու միտում ունի»:

Կոչ ենք անում այս օրհասական պահին ձեռնպահ մնալ այնպիսի կարգախոսներից, որոնք կարող են պառակտիչ գործողություն ծավալելու պատճառ դառնալ» («Երկիր», 1992, փետր. 25),-ասաց ֆրակցիայի ներկայացուցիչը:

✧ ✧ ✧

ԱՊՀ զինված ուժերի մամուլի կենտրոնն այսօր հրապարակեց հայտարարություն, որով հանցագործություն է համարվում Ադրբեջանի իշխանությունների կողմից զինվորական միավորումների վրա ավազակային հարձակումներ խրախուսելը:

«Անդրկովկասյան զինվորական օկրուգի շտաբից ՏԱՍՍ-ի թղթակցին հաղորդել են, որ զինծառայողներին թույլատրվել է ճնշել զորքերին գնդակոծող հակառակորդ կողմի կրակակետերը («Երկիր» 1992, փետր. 25):

ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի եւ Ֆրանսիայի հանրապետության մարդասիրական հարցերի գծով պետական նախարար Բեռնար Քուշների շատ գործնական բանակցություններից ու ձեռք բերած համաձայնությունից հետո երկու երկրների միջեւ հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, տեղի ունեցավ ասուլիս, որի ընթացքում մեծ տեղ էր բռնում Արցախի հարցը:

Հովհաննիսյանը կրկին պնդեց իր արդար սկզբունքը, երբեք ու ոչ մի դեպքում Ղարաբաղ հարցը չպետք է քննվի-լուծվի առանց ԼՂՀ մարմինների մասնակցության: «Ղարաբաղի հարցը Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման խնդիրն է, եւ ցանկացած միջնորդություն, ցանկացած բանակցություն պետք է նկատի առնի Լեռնային Ղարաբաղի հանրապետության ազգընտիր ղեկավարության կարծիքը»: Նա հույս հայտնեց նաեւ, որ խաղաղարար միջնորդությունների մեծ փորձ, նաեւ ժողովրդավարության ավանդներ ունեցող Ֆրանսիայի դերը մեծ կլինի Արցախի հարցի կարգավորման գործում: Ուստի խնդրեց, որ պ-ն Քուշներն անձամբ այցելի Ստեփանակերտ, լայնորեն ծանոթանա վիճակին եւ իր կառավարության հետ ջանա պաշտպանել «մարդու իրավունքների եւ ինքնորոշման իրավունքի հարգումը ԼՀՂ տարածքում»:



Անդրադառնալով Բաքու եւ Երեւան կատարած այցելություններին, պ-ն Քուշները նշեց, որ երկու մայրաքաղաքներում էլ իր ուշադրության կենտրոնում է եղել Ղարաբաղի խնդիրը: Նա մեկ անգամ եւս հիշեցրեց, որ Ֆրանսիան անընդունելի է համարում հարցի ռազմական լուծումը եւ առաջարկում է քաղաքական միջոցներ: Պետական նախարարը նշեց, որ երկու երկրներում իրեն մատուցվել են խնդրի մասին երկու՝ միանգամայն հակադիր տեսակետներ, ուստի ինքը վերջնական կարծիք կազմելու համար անհրաժեշտ է համարում անպայման այցելել Լեռնային Ղարաբաղ:

✧ ✧ ✧

Նախորդ գիշերն Աղդամում բռնագրավվել են Անդրկովկասյան օկրուգի զորամասի պահեստները: 14-րդ բանակի հրամանատար, գեներալ Պոպովն «Իզվեստիայի» թղթակցին ասել է՝ ադրբեջանական գրոհայինների ձեռքն է անցել հազարավոր տոննաների ռազմամթերք: Պատանդ են վերցվել 7 զինծառայող՝ իրենց ընտանիքներով, որոնց տարել են անհայտ ուղղությամբ:

(Երկու օր անց Թբիլիսում Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատարի տեղակալը պիտի հաղորդեր, որ Աղդամից էվակուացվել են բոլոր զինծառայողների ընտանիքները):

**Փետրվարի 25.** Այս օրերին շատ են խոսում Իրանի կառավարության միջնորդության մասին: Արտգործնախարար Վելայեթին արդեն Բաքվում է գտնվում, հետո էլ Երեւան պիտի գա: Երկու կողմերի հետ նախ առանձին-առանձին է բանակցելու, պիտի տնտեսական համագործակցության հարցեր լուծի, հետո էլ սրանց իրար բերի, հաշտեցման հասնի՝ Արցախի խնդրի անարյուն լուծման հիմք դնելու համար:

Իրանի նախարարը Բաքվում թղթակիցներին հայտարարել է, թե սուտ է այն լուրը, որ վերաբերում է ադրբեջանական զորքի կազմում իրանցի զինվորների մասնակցությանն այս կռվին: (Իսկ Շահումյանից եկած հայ հրամանատար Շահեն Մեղրյանի եղբայրը, պատմում էր, որ սպանված հակառակորդների գրպաններից իրենք հաճախ են հանել փաստաթղթեր, որոնք հաստատում են սպանվածի իրանցի լինելը.-Ռ. Պետրոսյանի պատմածից):

Ինչ-որ է. Վելայեթին այսօրվա համար Ադրբեջանի ղեկավարների հետ պայմանավորվել էր, որպեսզի 24 ժամով կրակը դադարեցվի: Եւ հենց այդ 24 ժամվա ընթացքում էլ նրանք ռմբակոծությունն ավելի են բորբոքել, Ստեփանակերտի, Ասկերանի, Մարտունու, ինչպես նաեւ Շահումյանի սահմանային գյուղերի վրա թափել այնքան ռումբեր, որքան նախորդ օրերին: Ստեփանակերտում չորս հոգի սպանվել են, մեկը՝ զինվորական, որովհետեւ Մարշալ Շապոշնիկովի սպառնալիքներից հետո անգամ, դաժանաբար ռմբակոծել են նաեւ զորանոցը եւ այն էլ «Գրադ» կայանքից: Հանրապետության մայրաքաղաքը կրեց նաեւ նյութական մի նոր ծանր վնաս. «Գրադի» հրթիռներից մեկն ընկել է զինու կոմբինատի վրա՝ պատճառելով վիթխարի ավերածություն:

Հրթիռակոծությունը կատարվում է հիմնականում Շուշից ու Քյոսալարից (կործանված Մալիբեյլվի տեղ կանգնել է Քյոսալարը):

Հեռուստախոսնակն ասում է՝ Ստեփանակերտի զորամասի (366-րդ գունդ) հրամանատարությունը կարգադրություն է ստացել ռմբակոծությանը պատասխանել, թշնամու կրակակետերը ոչնչացնել: Բայց ինչո՞ւ դա չի արել հենց այսօր:

Ադրբեջանի կրակակետերն օրեցօր բազմանում են: «Գրադ» մի կայանք էլ տեղադրել են Քելբաջարի շրջանում եւ կրակում են սահմանամերձ հայկական գյուղերի վրա: Այսօր ադրբեջանցիները գնդակոծել են նաեւ Կապանի շրջմիլիցիայի ավտոմեքենան, սպանել մի ոստիկանի:

Երեւանում ցույց տվին Ստեփանակերտի գնդից դասալիք դարձած երեք ստահակի՝

Սա առաջին անգամն էր, որ միջազգային փաստաթղթում երկրներն ընդունում եւ ճանաչում են Արցախի ինքնորոշման իրավունքը» («ՀՀ», 1992, մարտի 4)։

**Մարտի 2-ին** պաշտպանը շարունակվում էր, ռմբակոծվում էին Աղդամը, Շուշին։ Ասկերանի ու Մարտակերտի շրջանների սահմաններում փոխհրաձգություն էր գնում. Սեյսուլանն ու Յարմջան լրիվ հրդեհի էին մատնվել, ավերվել, իսկ Շուշի գիշերային հրթիռակոծությունից հետո սպառվել էին կենսապահովության բոլոր միջոցները. ջուր չկար, հաց չկար, ջերմություն չկար...,-հայտնեցին դրսի հեռուստա-ռադիոձայները։ Այսքանից անտեղյակ էր միայն հայկական հեռուստատեսությունը։

Առավոտվանից Ստեփանակերտը թողնում էին 366-րդ գնդի անձնակազմը, տեխնիկան, եղած-չեղածը։ ԼՂՀ ղեկավարությունը դրան նայում էր սառն արհամարհանքով։ Իսկ բնակչությունը, մանավանդ կանայք ու երեխաները չորս կիլոմետր երկարությամբ շրջափակել էին ելքի ճանապարհը, կշտամբում էին, անիծում, ամոթանք տալիս։

Մարշալ Շապոշնիկովը, միայն մեկ շաբաթ լեզվակռիվ տալով Մութալիբովի հետ, վերջապես հանձնվեց, ենթարկվեց նրան, դավաճանեց արցախահայությանը՝ նրան թողնելով մեն-մենակ, մահմեդականության հետ ճակատ ճակատի զարկվելիս։

ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը գտնում էր, որ 366-րդ գնդի դուրսբերումն Արցախից չմտածված գործողություն է եւ անպայման կխախտի հավասարակշռությունը տարածքում, երբ չեն ձեռնարկվում ուրիշ միջոցներ։

Իսկ Ա. Մութալիբովը հայտարարեց (հաղթեց, չէ՞), մենք պատասխանատու ենք Ղարաբաղի ամբողջության ու ապահովության համար։ Եվ ովքեր կփորձեն խանգարել, կպատժվեն խստագույնս։ Այս անգամ էլ ադրբեջանական դիվանագիտությունը (կամ նրա բացակայությունը) հաղթեց։ Մութալիբովն իրավունք ուներ հոխորտալու։

Ասում են՝ Բաքվում Թուրքիայի արտգործնախարար Չեթինի հետ բանակցելիս Ադրբեջանի վարչապետ Հասանովը պատրաստակամություն է հայտնել ԼՂ-ի հարցը քննել, կարգավորել Հայաստանի, Իրանի ու Թուրքիայի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Հնարավոր էր համարել նաեւ Վրաստանի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի ներկայացուցիչների մասնակցությունը, եթե Հայաստանը կամենա։

Իսկ Ալի Աքբար Վելայաթին, Թեհրան հասնելով, գոհունակություն է հայտնել Բաքվում ու Երեւանում ունեցած իր բանակցությունների նկատմամբ, իբր, հույս ունի, թե հաջորդ անգամ, Բաքվում կամ Երեւանում համատեղ զրույցի նստեցնելով երկու կողմերի ներկայացուցիչներին, ինքը հնարավորություն կունենա Ղարաբաղի հարցում ձեռք բերել ցանկալի առաջընթաց։

366-րդ գունդը, դավաճանելով, հեռանում էր Արցախից։ Դա այլեւս չէր հետաքրքրում օտար թղթակիցներին, որոնք, Ադրբեջանի բարձրացրած միջազգային հարայ-հրոցով շլացած, Խոջալուի կործանման մանրամասներն էին ուսումնասիրում։ «Քաղաքի» տարածքում գտել են ադրբեջանական 30 դիակ (իսկ Մութալիբովի ազգականներն իրենցից զոհված են համարում հազար հոգու)։

Ինքնապաշտպաններն ասում են՝ այդ երեսունն էլ չէին սպանվի, եթե իրենց հրամանատարությունը նոր մեղքի մեջ մտած չլիներ։ Ինքնապաշտպանները Խոջալուի արեւելյան եզրին միջանցք էին ստեղծել եւ ռադիոբարձրախոսներով հայտնել, որ բնակիչները հեռանան։ Այն ժամանակ արդեն դուրս փախած օմոնականները հեռացողների վրա կրակ են բացել...

✧ ✧ ✧

Այսօր Հայաստանի հանրապետությունը, նախկին խորհրդային ուրիշ 7 հանրապետությունների հետ միասին, ՄԱԿ-ի անդամ ընդունվեց։ Խորհրդանշական է. արարողությանը ներկա ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը, շնորհակալություն հայտնելով Հայաստանը համաշխարհային պետական մեծ համաժողովի մեջ ընդունելու համար, իբրեւ ինքնուրույն, ՄԱԿ-ի անդամ երկրի պետության ներկայացուցիչ, իր



առաջին խոսքն ասաց, եւ այն վերաբերում էր Արցախին։ Խնդրեց, որ Անվտանգության խորհուրդն անմիջապես զբաղվի ԼՂՀ բարդույթը կարգավորելու խնդրով, քանի որ այնտեղ արյունահեղություն է եւ թողտվության դեպքում կծավալվի, կընդգրկի հարեւան երկրները, կհասնի ավելի հեռուն։

Օրվա կարեւորագույն, պարզապես ցնցող երեւույթը Ստեփանակերտի գնդի փախուստն էր։ Գիշերը մեծաքանակ դեսանտայիններ էին իջել Ստեփանակերտում ու Աղդամում, որպեսզի գործողությունը կատարվի անվտանգ։

Շապոշնիկովն ապացուցում էր, որ հայության դեմ ժառանգել է Յազովի քաղաքականությունը։

Հետաքրքիր է, որ Ռուսաստանի լրատվական մարմինները բուռն հետաքրքրությամբ հետեւում էին եւ հասարակությանը տեղյակ պահեցին 366-րդ գնդի ու նրա ունեցած տեխնիկայի, զենքի, զինամթերքի դուրս բերմանը, որ կատարվեց առանց որեւէ բարդության։ Սակայն նրանք շատ էին անտարբեր Ադրբեջանի տարածքում տեղակայված զորամասերին, Կասպից նավատորմիղին, ինչպես նաեւ ներքին զորքերին պատկանած տեխնիկայի ու սպառազինության կողոպուտին, որը նախընթացին էր կատարվում Ադրբեջանի կողմից՝ ինչպես ամեն տեսակ համաձայնությունների, կաշառքով ու սպառնալիքով կազմակերպված առեւտուր, այնպես էլ, իբր, չբացահայտված գողությունների եղանակով։ Եւ միայն զինվորականներից ոմանք, որ դեռեւս մնացել էին ազնվամտության մակարդակին ու ցավում էին հայրենիքի պաշտպանունակության թավալգլոր անկումով, գանգատվում էին զարմացած... Օրինակ, մի գնդապետ Վ. Սիմոնով, որ ծառայել էր Ադրբեջանում, գրեց. «Օկրուգը զրկվել է երկու վիթխարի զինապահեստներից... Հատկապես Աղդամ քաղաքի զինապահեստում ավելի քան 200 վագոն հրթիռային արկեր կային, 130-ի չափ վագոն հրաձգային զենքի փամփուշտներ։ Փաստորեն օկրուգը զրկվեց զինապաշարից։ Սակայն ոչ ոք չզրկվեց բազկաթոռից» (“Московские новости“)։

**Մարտի 3-ի** առավոտից հայ ինքնապաշտպանները ռմբակոծեցին Շուշին, Աղդամը։ Օգտագործվել էր «Գրադ» կայանքը, որի հարվածներից, Ադրբեջանի լրատվության տվյալներով, միայն Շուշիում ավերվել է 40 շենք։ Ավերածություններ են եղել նաեւ Աղդամում,-մղկտում էր Մախս Մամեդովը՝ լալով ու գանգատվելով «Գրադի» դեմ։ Սակայն չէր ասում, թե ինքն ի՛նչ էր զգում, երբ ամիսներ շարունակ մերոնք էին գանգատվում այդ զանգվածային ոչնչացման զենքից, որ մամեդների ձեռքին էր գործում։

Միայն Մոսկվայից հաղորդեցին, թե հայկական զորաջոկատները հարձակվել են Թարթառ քաղաքի վրա։ Դա Միր-Բաշիրն է՝ Սեյսուլանի ու Յարմջայի հարեւանությամբ։ Երեւի մերոնք հայրենի գյուղերի ողբերգության վրեժն էին հանում։

Մոսկվայից լայնորեն ցույց տվին Խոջալուի ավերակներն ու սպանվածների դիակները։ Ադրբեջանին մեծ հնարավորություն էր ընձեռվել ցուցադրելու հայերի «վայրագությունները»։ Հեռուստախցիկի աչքը երկար պահեցին մի դիակի ոտքերի վրա, որոնք կապոտված էին չվանով։ Երեւի այդպիսի կապանքն էլ իրենց արածն է (որ մեռելը չփախչի ու իրենց չզրկի նկարելու, ցուցադրելու վայելքից)։

Պարապ չէին նաեւ ադրբեջանական թնդանոթները. Ամիրանլարից գնդակոծեցին Մարտունին։

Իսկ 366-րդ գնդի կեսը փոխադրելուց հետո մնացորդները կանգ էին առել, որովհետեւ շրջափակված էին (հավանաբար դժգոհ հայերի կողմից),-հաղորդում էր Մոսկվան։

Երեւանում էլ ելույթ ունեցավ Անդրզինօկրուգի հրամանատարի տեղակալ, գեներալ Բեպպաեւը եւ «երդվեց», թե գնդի դուրս բերումը չի նշանակում անօգնական թողնել Ղարաբաղը, որի անվտանգության ու ամբողջության պահպանումն իրենց սրբազան պարտականությունն է։

✧ ✧ ✧

ՀՀ հեռուստատեսության լուրերի խոսնակը ցույց տվեց իր զրույցը երեկվա աղետից փրկված, այժմ հիվանդանոցում պառկած ռուս վարորդի հետ եւ, հավանաբար, ի պատասխան երեկ Սեյրան Բաղդասարյանի կողմից տրված քննադատության, բացատրեց, որ այդ ռուսի հետ զրուցելու համար իր հետ էր վերցրել Ամերիկայից եկած թղթակցին, այլապես իրեն թույլ չէին տալիս մտնելու: Ամերիկացին էլ հաստատեց այդ եւ բացատրեց, որ Հայաստանում լուրեր հավաքելու ոչ մի հնարավորություն չկա, եւ այս վիճակը եթե շարունակվի, հայ լրագրողն այլեւս ոչ մի դեր չի խաղա իր ժողովրդի կյանքում:

Հետո՞: Մի՞թե մենք չենք տեսնում: Բայց ի՞նչ է արվում այդ խայտառակությունից փրկվելու համար:

**Մարտի 5-ին ու 6-ին** ադրբեջանական մեծաքանակ զորամասերը, տանկերի մի վաշտի եւ զրահատեխնիկայի ուրիշ միավորների ուղեկցությամբ, լայնամասշտաբ արշավանք են ձեռնարկել երկու կողմերի վրա՝ Ասկերանի եւ Ղազանչի-Կիչանի: Իբր, մերոնք էլ հարձակվել են Ումուդլուի վրա, այն նվաճել:

Սակայն շուրջ երկու հազարանոց զորախումբը, որ Աղդամում էր վճռական ճակատամարտի պատրաստվել վերջին շաբաթներին, վերը նշված երկու ճակատներում ահռելի ավերածություններ է կատարել՝ չհանդիպելով լուրջ դիմադրության, որովհետեւ մերոնց զրահատեխնիկան անզոր է՝ վառելիք չունենալու պատճառով: Երեկոյան դեմ մարտերն Ասկերանի փողոցներում էին գնում, եւ տանկերը քարուքանդ էին անում ծայրամասերի տները: Իսկ Ղազանչին արդեն ընկել էր, հիմնովին ավերվել՝ տալով ավելի քան հիսուն զոհեր:

Թուրքաց արնածարավ զորախումբը, Կիչանի ու Ղազանչիի արյան բաղնիքից հետո, գիշերը ռմբակոծել է Մարտակերտ շրջկենտրոնը, Ջանյաթաղ գյուղը: Նախնական տվյալներով՝ միայն Մարտակերտում սպանվել են 10 հոգի:

Ամիրանլարից էլ «Գրադով» Մարտունին են հրթիռակոծել, եւ կան ավերածություններ:

Աստված իմ, մի՞թե կրկնվում է 1920 թվականի զարնանամուտը, երբ այստեղ, Ասկերանի ձորում, հայոց ինքնապաշտպանական անձնազոհ ուժերը, Ադրբեջանի ռազմական ամբողջ հզորության դեմ տվին իրենց վերջին խիզախ, բայց եւ անհուսալիորեն ապարդյուն ճակատամարտը, զանգվածաբար նահատակվեցին, որպեսզի այն առասպելական հրամանատար Դալի Ղազարն էլ հայրենի հողի պարտությունը չտեսնելու համար իր վերջին գնդակն ուղղի սեփական ճակատին:

Մի՞թե կրկնվում է այս դաժան վիճակը, եւ խաչ է քաշվում չորս տարիների անհավասար, բայց միշտ հույս ներշնչած պայքարի վրա:

Բաքվում, Ադրբեջանի ԳԽ-ի նստաշրջանին, ժողովրդական ճակատի ճնշման տակ, Մութալիբովը հրաժարական է տվել, եւ նստաշրջանը հարգել է նրա դիմումը, ուղարկել թոշակի՝ բարձր արտոնություններով: Արժանի էր. չէ՞ որ կարող է հպարտությամբ արձանագրել, որ վերջապես տեսավ իր զորամասերի հաղթական արշավանքը, երբ արդեն ծվատվում է Արցախը:

✧ ✧ ✧

Ասում են՝ Բաքվում ժողովուրդը ոտքի է ելել ժողովրդական ճակատի հրահրումով: Ուզում է ցրել ներկայիս ղեկավարությունը մինչեւ վերջինը, քանի որ ապիկար է, չի կարողանում Ղարաբաղի հարցը լուծել արագորեն, բարդացնում է միայն եւ տալիս զոհեր, որոնք չէին լինի, եթե հարցը լուծված լիներ, այսինքն՝ հայոց ինքնապաշտպանությունը ջախջախված լիներ ժամանակին:

Ամբոխը գազազած է հավատակից Նազարբաեւի դեմ, որի ելույթը ընկալվում է որպես ոտնձգություն Ադրբեջանի անկախության դեմ:

Երեկ էլ Ժընեւում, ՄԱԿ-ի ենթակոմիտեներից մեկում, պետք է քննության առնվեր



Ղարաբաղի իրավիճակի հարցը. Թուրքիայի ներկայացուցիչը վճռաբար դեմ արտահայտվեց՝ հարցը համարելով կոպիտ միջամտություն ինքնիշխան Ադրբեջանի ներքին գործերին ու տարածքային ամբողջականությանը, եւ հարցը հանվեց օրակարգից:

Թուրքիայի բարեկամությունը փնտրող մեր լարախաղացների ականջնե՜րը կանչեն. Թուրքիան վերջերս հաճախ է ցուցադրում իր «անհամաձայնությունը» մեր հարցերի նկատմամբ:

**Մարտի 7-ին** մերոնք, իբր, վերացրին իրենց անցյալ հաղորդումների անտեղյակությունները. աղդամցիներն Ասկերան չեն մտել, պատերազմը գնում է նրա մատույցներում,- հայտարարեց պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը: Իսկ Ղազանչիի զոհերը ոչ թե 50 են, ա՛յլ միայն 25-ը գյուղացիներից եւ երկու զինվոր:

Արցախի համար չարիք են դարձել 366-րդ գնդի ետեւից եկած դեսանտայինները, որոնք պաշարել են Ստեփանակերտը եւ արգելում են երթեւեկը: Օրվա ընթացքում լոկ Բալլուջայից մի գյուղացի իր մեքենայով պիտի Ստեփանակերտ գնար, նրանք ճանապարհին բռնել-գնդակահարել են: Ըստ երեւույթին սրանք եւս Արցախ են մտցվել Ադրբեջանին սիրաշահելու համար եւ ունեն պատժիչ ջոկատների դեր:

Աղդամից շարունակում են «Գրադով» ռմբակոծել Ասկերանը, Ամիրանլարից՝ Մարտունին, Ֆիզուլիից՝ Ճարտարը, Միր-Բաշիրի կողմերից՝ Կարաչինարը:

Իսկ ռուսական լրատվության համաձայն՝ մերոնք էլ Աղդամն են հրթիռակոծում:

ՄԱԿ-ի տնօրեն Բուտրոս Ղալին խիստ անհանգստացած է Ղարաբաղի բախումներով: Կոչ է արել, որ հենց նոր միջազգային հեղինակավոր կազմակերպության անդամներ դարձած Հայաստանն ու Ադրբեջանը խելքի գան, լեզու գտնեն իրար հետ:

Ղարաբաղի վիճակի համար իրարով են անցել Թուրքիայում: Ելույթ են ունեցել ե՛ւ պրեզիդենտ Օզալը, ե՛ւ վարչապետ Դեմիրելը: Առաջինն սպառնում է Հայաստանի դեմ փակել դեպի ծով ելնող նրա միակ ճանապարհը եւ գործադրել ուրիշ տեսակ ճնշումներ, եթե նա չդադարեցնի Ղարաբաղում իր հավատակից-արյունակիցների դեմ ծավալած արյունոտ դաժանությունները: Առհասարակ հայերին պիտի վախեցնել, ապա թե ոչ, շատ վնասներ կպատճառեն,- ասել է նա: Իսկ Դեմիրելը բավականությամբ նշել է, թե վերջին մարտերին ադրբեջանական կողմից մասնակցել են դեսանտայիններն իրենց հզոր տեխնիկայով: Ապա պատերազմի լավ ելքի համար խորհուրդ է տվել Ղարաբաղից մինչեւ վերջինը հանել ոչ միայն ռուսական զորքը, այլեւ նրան պատկանած զենքն ու զինամթերքը:

**Մարտի 8-ին** ադրբեջանցիներն ամենուրեք հրետակոծում էին Արցախի խոշոր բնակավայրերը՝ Շահումյանը, Կարմիրավանը, Դրախտիկը (Հադրութի շրջան): Աղդամից «Գրադով» հրթիռակոծում էին Ասկերանը: Մերոնք ոչնչացրին առաջ շարժվող 3 տանկ, եւ դադարեց Ասկերանի հրետակոծությունը: ԼՂՀ լրատվության համաձայն՝ Աղդամի կողմից առաջացող զորամասի մեջ եղել են ԱՊՀ 23-րդ դիվիզիայի զինջոկատներն ու զրահատեխնիկան: Շապոշնիկովը նրա համար էր 366-րդ գունդը դուրս բերում Ղարաբաղից, որպեսզի իր զորքերը ռազմի դաշտում չկռվեն իրար դեմ:

Ադրբեջանի վարչապետ Հասանովը հայտարարել է, թե հանրապետությունում նոր զորակոչ է հայտարարված, որպեսզի Ադրբեջանի ողջ հզորությունը հավաքվի եւ ուղարկվի Ղարաբաղ. թող այնտեղ կամ փրկեն իրենց հայրենիքի այդ սրբազան մասը, կամ կոտորվեն անփառունակ կերպով:

Ցույց տվին Ամերիկայից եկած կոնգրեսմենին, հասարակական գործիչ մեկին, որը հայտնեց, թե ինքը միշտ էլ բարձր կարծիքի է եղել հայ ժողովրդի բարոյական կերտվածքի մասին, համակիրն է նրա ազատագրական պայքարի: Բայց հիմա ամբողջ աշխարհում տարածվել են ադրբեջանցիներին դաժանաբար կոտորելու, Ղարաբաղում նրանց տունուտեղն ավերելու եւ բռնությունների մասին լուրեր, եւ ինքը եկել է սեփական աչքերով ամեն ինչ տեսնելու, համոզվելու համար, որպեսզի վերադառնա եւ ճշմարտությունը պատմի իր հայրենակիցներին:

**Մարտի 9-ին**, ինչպես ասում են, անփոփոխ վիճակ էր ամբողջ Արցախի տարած-

ինչի՞ եղածին էլ գումարվեցին ադրբեջանական կողմին զենքի ու զինամթերքի նոր նվիրաբերումները գեներալ Գրոմովի կողմից։ Թե՞ Ռուցկոյն ու Գրոմովը՝ աֆղանական սպանդի այս հերոսները, մահմեդականացել են եւ հիմա էլ քրքրվող Ղարաբաղի դեմ ասածներով պաշտպանո՞ւմ են մահմեդական Ադրբեջանին...

✧ ✧ ✧

Ղազանչիի ազատագրման համար մղած մարտերի ընթացքում հայ ազատամարտիկները ոչնչացրել են Մանիքլուի, Գյունեփայայի ու Օրթափայայի հրետակետերը՝ գրավելով մեկ տանկ, երկու զրահամեքենա եւ բազմատեսակ զենքեր ու զինամթերք։

Իսկ Ստեփանակերտը, Շոշը եւ հարեւան գյուղերը դեռեւս ռմբակոծվում են, ունենք զոհեր, տասնյակ ու տասնյակ վիրավորներ։ Ե՞րբ են լռեցվելու Շուշվա կրակակետերը։

Օրվա կարեւորագույն լուրերը.

Բաքվում բազմահազարանոց հանրահավաք է եղել Իրանի դեսպանության առաջ։ Ցուցարարները Իրանի կառավարությունից պահանջում էին դադարեցնել Հայաստանին զենք ու վառելիք մատակարարելը։

Ադրբեջանի, այսպես կոչված, ժողճակատականների մեջլիսը որոշել է շտապ կարգով բանակցություններ վարել ԼՂՀ ղեկավարության հետ բարդույթը կարգավորելու համար՝ նախապես հարց դնելով, որ ՀՀ ԳԽ-ը հրաժարվի 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումից, եւ հայկական կողմը ետ վերադարձնի նվաճած ադրբեջանական տարածքները (չի պարզվում, սակայն, թե խոսքն ի՞նչ տարածքների է վերաբերում)։

Ադրբեջանի վարչապետ Հասանովը հեռախոսով կապվել է Իրանի կառավարության ներկայացուցչի, ինչպես նաեւ Ղազախստանի առաջնորդ Նազարբաեւի հետ, խնդրել, որ նրանք Լեւոն Տեր-Պետրոսյանին համոզեն բանակցել եւ բարդույթը լուծել քաղաքական ճանապարհով։

Ըստ երեւույթին Հասանովը խոսել է նաեւ Թուրքիայի ղեկավարության հետ, քանի որ վարչապետ Դեմիրելն էլ հրապարակել է հայտարարություն, որով նշում է Ղարաբաղում, իբր թե, ստեղծված զինադադարը եւ համաշխարհային հանրությանը կոչ է անում գործադրել բոլոր միջոցները կայուն խաղաղություն ստեղծելու համար։

Ադրբեջանում պատանդ են վերցրել ինչ-որ գնդապետ Կալաշնիկովի եւ պայմաններ են թելադրում... Սակայն ո՛չ Ռուցկոյը, ո՛չ էլ նույնիսկ պաշտպանության մինիստրության որեւէ պաշտոնյա այդ առթիվ հանդես չի եկել սպառնալիքով, իրեն գրիվ չի տալիս, որպեսզի մարդ մտածի, թե Ադրբեջանում ծառայող ռուս զինվորականն էլ մտնում է ռուսական բանակի մեջ եւ որեւէ հետաքրքրություն է ներկայացնում նոր Ռուսաստանի ղեկավարության համար։

Հելսինկիի արտահերթ խորհրդակցությունը, որ պիտի քններ Ղարաբաղի բարդույթի հարցը, արդեն տեղի է ունեցել, սակայն փակ դռների ետեւ, եւ թղթակիցները դեռեւս ոչինչ չգիտեն արդյունքների մասին։

ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջորջ Բուշը նամակով դիմել է Հայաստանի ու Ադրբեջանի պրեզիդենտներին՝ առաջարկելով ցուցաբերել քաղաքական հեռատեսություն եւ վերջ տալ արյունահեղությանը, միաժամանակ արտահայտել է իր պատրաստակամությունն այդ բարդ հարցի լուծման համար գործադրելու անհրաժեշտ ամեն միջոց։

Ֆրանսիայի արտգործնախարար Դյուման ու Գերմանիայի նրա պաշտոնակից Գենշերը եւս հանդես են եկել նման դիմումով՝ արտահայտելով իրենց երկրների մտահոգությունը Ղարաբաղի ճակատագրի նկատմամբ։

Չնայած ԱՊՀ Անդրկովկասյան օկրուգի հրամանատարի տեղակալ Բեպպաեւը հայտարարել է, թե այս օկրուգի երեք պետություններից դեռեւս դուրս չեն բերվի իրենց բանակները, ՀՀ ԳԽ-ը որոշել է թույլ չտալ, որ Հայաստանի տարածքից հեռացվեն այնտեղ գտնվող զորքը, զենքն ու զինամթերքը, որոնց իրավական տերերից մեկն էլ հայ ժողովուրդն է՝ իր անկախ պետությամբ հանդերձ։



Այս որոշման մի տարբերակն էլ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրապարակած հայտարարությունն է Ադրբեջանի կողմից բռնագրավված եւ ամիսներ շարունակ Ղարաբաղի հայության դեմ գործադրվող զենքի, զինամթերքի, ռազմատեխնիկայի մասին։ Նա պահանջում է հենց սա էլ դարձնել ԱՊՀ ղեկավարների սույն ամսի 20-ին գումարելիք ժողովի առաջին իսկ հարցը եւ քննել ամենայն խստությամբ։

**Մարտի 14.** Ադրբեջանի նոր ղեկավար Մամեդովն ու ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Մկրտչյանը մարտի 12-ին պայմանավորվել էին կրակը դադարեցնելու մասին, սակայն այսօր էլ դեռեւս շարունակվում էին Ստեփանակերտի, Շոշի ու Ասկերանի ռմբակոծությունները, որոնց պատճառով կան զոհեր ու վիրավորներ։ Ասկերանի քաղաքացիական բնակիչները հեռացվել են անվտանգ վայրեր։

Հայկական կողմը ռմբակոծել է Աղդամն ու մերձակա գյուղերը, վերջնականապես ազատագրել Ղազանչին, ոչնչացրել Մանիքլվի, Բաշ-Գյունեփայայի ու Օրթափայայի կրակակետերը։ Լրագրող Մ. Մամեդովը խիստ գանգատ ուներ Շուշվա վիճակից։ Միութենական հեռուստատեսությամբ ասաց՝ հայերն ամեն օր պատճառում են ավերածություններ, հիմա էլ փակել են Շուշի-Լաչին ճանապարհը՝ Շուշին աշխարհի հետ կապող միակ գիծը, եւ նախկին մարզի այժմ դիմադրող միակ ադրբեջանական բնակավայրը, հնարավոր է, շնչահեղձ կլինի։

Բայց կրակն ինչո՞ւ չի դադարում։ Որովհետեւ,-բացատրում են ադրբեջանական խոսնակները,-հանրապետության ղեկավարությունը չի կարողանում վերահսկել պատերազմի ելած ուժերը։ Սրանք այլեւս ոչ ոքի չեն ենթարկվում։

Չե՞ն ենթարկվում։ Չորս տարի շարունակ գրգռել, թունավորել են կիսավայրենի մի հասարակություն, ոտքի հանել իր «հավատի ու հողի թշնամու» դեմ, հրահրել «ջիհաթ»... եւ հիմա կարծես չեն հասկանում, թե ինչի՞ չեն ենթարկվում։

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին իր ներկայացուցչին՝ ԱՄՆ-ի նախկին պետ.քարտուղար Սայրուս Վենսին, ուղարկում է Ղարաբաղի բարդույթն ուսումնասիրելու եւ կարգավորման ճանապարհներ գտնելու համար։ Վենսը պիտի այցելի Երեւան, Բաքու եւ Ղարաբաղ, վերջում էլ՝ Կիեւ, որպեսզի մասնակցի ԱՊՀ խորհրդակցությանը, ուր երեւի թե բարձրագույն մակարդակի զրույց կլինի Ղարաբաղի խնդրի վերաբերյալ։ Ս. Վենսն Անդրկովկասում կլինի առաջիկա երկուշաբթի օրը։

Հելսինկիի խորհրդաժողովում որոշվեց մոտ ժամանակներում անցկացնել Ղարաբաղի հարցին նվիրված մեծ գիտաժողով՝ շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ։

Թեհրանում Հայաստանի ու Ադրբեջանի կառավարական պատվիրակությունները՝ Իրանի արտգործնախարար Վելայեթիի եռանդուն միջնորդությամբ, ձեռք են բերել պայմանավորվածություն Ղարաբաղում կրակը դադարեցնելու մասին։ Հայաստանի պատվիրակության ղեկավարն է ՀՀ նախագահի խորհրդականը։

Մոսկովյան լրատվությունը հայտարարում է, թե Աղդամում, Գանձակում ու Բաքվի մոտ 4-րդ բանակի զինապահեստների կողոպուտները կատարվել են հրամանատարական առանձին օղակներ սողոսկած ադրբեջանցի սպաների գլխավորությամբ։

Ռուսաստանում Թուրքիայի դեսպանը հայտարարեց, թե Ղարաբաղի բարդույթի կարգավորման գործում ամենամեծ դեր ու պարտականություն ունի Ռուսաստանը, որը պետք է չմոռանա երկու կարեւոր խնդիր՝ Ղարաբաղին ազգային ու տնտեսական ինքնավարություն տալը եւ Ադրբեջանի սահմանների անձեռնմխելիությունը։

**Մարտի 15-ին**, իբր, խաղաղություն է տիրել ռազմաճակատի համարյա բոլոր կետերում, եթե հաշվի չառնվի Հադրութի ռմբակոծությունը Ֆիզուլիի կողմից, մեկ էլ Հայաստանի ու Ադրբեջանի սահմանային գոտու փոխհրաձգությունը։ Ցույց տվին Տավուշի շրջանի Այգեպար գյուղի պահածոյի ավերված գործարանը, որի դիրեկտորն աղեկտուր կոծում էր անգործ մնացած իր 500 բանվորների ողբերգական վիճակը։

Օրվա կարեւոր գործը պատանդների ու գերիների փոխանակությունն է, որի շնորհիվ հարազատների գիրկն են վերադարձել 40-ից ավելի հայ մարդիկ։

Թեհրանում տեղի ունեցած եռակողմ (Հայաստան-Ադրբեջան-Իրան) բանակցությունները, երկօրյա լարված ընթացքից հետո, ավարտվեցին մի համաձայնագրի ստորագրությամբ, որը, լրատվական միջոցների կցկտուր տեղեկությունների համաձայն, ըստ էության ունի այն բովանդակությունը, ինչ վերջին օրերին Ադրբեջանի ու Թուրքիայի ներկայացուցիչներն են հուշում (Արցախին տալիք մշակութային ինքնավարությունը Ադրբեջանի ամբողջականության պահպանումով): Համաձայնագիրն իրավական ուժ կստանա Հայաստանի ու Ադրբեջանի պրեզիդենտների հաստատումից հետո:

Բայց ի՞նչ եղավ կամ ո՞ւր մնաց Հայաստանի պրեզիդենտ Լեւոն Տեր-Պետրոսյանի, ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի եւ նրանց անուններից բարբառող մյուսների հավաստիացումներն Արցախի իրավունքը հարգելու եւ պաշտպանելու մասին: Չէ՞ որ նրանք վերջին ժամանակներն ամենուրեք երդվում էին, թե իրենց միակ նպատակն է Արցախի հանրապետությունը տեսնել իբրեւ իրեն վերաբերող բոլոր հարցերը լուծելուն մասնակցող իրավական կողմ, իսկ առավել կարեւորը՝ Արցախին վերաբերող բոլոր հարցերում իրենք կպաշտպանեն միայն ու միայն այնպիսի լուծումներ, որոնք թելադրված կլինեն արցախահայության ու նրա ընտրած իշխանությունների կողմից:

**Մարտի 16**. Կեսօրվա կողմ Հատուկ ծրագրերի կոմիտեի շենքում էի, եւ Զորին հաղորդեց, որ մերոնք արդեն ճեղքել են ճակատի գիծը, անցել Շուշվա թիկունքը, տիրացել Լիսագորին... Օրակարգի հարց է մեծ հարձակումը Շուշվա դեմ:

Ասում է՝ քրքրված Ստեփանակերտը Շուշիի վախճանն է երազում, եւ այսքան ժամանակ անմարդկային տառապանքների ենթակա ստեփանակերտցիները, մեծ ու փոքր, մեկ փափագ ունեն՝ տեսնել Արցախի քաղցկեղ Շուշին խորտակված, Քարագլխի տափարակի վրա հողին հավասարված:

Աստվա՜ծ օգնական:

✧ ✧ ✧

Երեկոյան ցույց տվին Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի հետ: Զրույցի առանցքը Ղարաբաղի հարցն էր, նպատակը՝ լուծման եղանակի որոնումը: Դեսպանի (իմա՝ իր կառավարության) կարծիքն այս է. անհրաժեշտ է դադարեցնել պատերազմը, Ղարաբաղին տալ ինքնավարություն Ադրբեջանի պետական սահմաններում՝ հարգելով վերջինիս անկախությունն ու ամբողջականությունը: Այս էլ պիտի նշանակի՝ չորս տարի իր ազատության համար արյուն թափած Արցախը նորից քաշել ադրբեջանական լծի տակ:

Ուրեմն, Թուրքիայի դեսպանն իր ոտքով Երեւան է եկել թելադրելու թուրք-ադրբեջանական վճիռը: Երեւի համոզված էլ է, որ թելադրանքը պիտի անցնի, քանի եղել է նաեւ նախապատրաստությունը՝ զորաշարժերը, Ամերիկայի, Եվրոպայի խորհրդարանի եւ այլ օղակների վրա ազդելու բացարձակ հաջողությունները (այսինքն՝ արդեն հայերին մի փոքր վախեցրել-պրծել են...):

Տեր-Պետրոսյանը զարմացած է Թուրքիայի դիրքից, մանավանդ, նախընթացին խոստացած չեզոքությունը դրժելուց... Կարծես մտածում է՝ ուրիշ տեսակ թուրք էլ է լինում:

Իբր թե, Արցախի ամբողջ տարածքում համեմատական անդորր է եղել: Սակայն Շուշվա կողմից ռմբակոծվել է Ստեփանակերտը, եւ կան սպանվածներ:

Ասկերանը վերստին հարձակման է ենթարկվել, ռմբակոծվել: Այստեղ ոչնչացվել են թշնամական տանկեր ու զրահամեքենաներ, որոնց անձնակազմերի փաստաթղթերից պարզ է դարձել, որ Գանձակում տեղակայված ռուսական զորամասից են եկել:

Հայկական ուժերը կործանիչ հարվածներ են հասցրել Աղդամին: Լաչին-Շուշի ճանապարհով առաջ են շարժվում: Ֆիզուլին մերոնք ուժեղ ռմբակոծել են, պատճառել մեծ վնասներ:

Ադրբեջանական լրատվական միջոցները ջանում են միջազգային հանրությանը հավատացնել, թե հայկական ուղղաթիռները Ֆիզուլիի, Աղդամի, Բարդայի, Թարթառի



եւ այլ խոշոր բնակավայրերի վրա թռուցիկներ են տարածել՝ առաջարկելով թողնել-փախչել, ապա թե ոչ, ենթարկվելու են Խոջալուի բախտին:

Ուկրաինայի ղեկավար Կրավչուկը նամակ է հղել Լեւոն Տեր-Պետրոսյանին, առաջարկում է ամեն ջանք գործադրել արյունահեղությունը դադարեցնելու, երկու հարեւան ժողովուրդների խաղաղ դրացիությունն ապահովելու համար: Տեր-Պետրոսյանն էլ պատասխանել է գոհունակությամբ, հույս հայտնելով, որ մարտի 20-ին ԱՊՀ Կիեւում տեղի ունենալիք հանդիպման ժամանակ օգտակար կլինի բոլոր անկախ պետությունների ջանքերի ու բարի կամեցողության դրսեւորումը:

Մոսկովյան հեռուստատեսության թղթակիցը զրուցել է բարոնուհի Քերոլայն Կոքսի հետ, որն ասել է՝ ինքը մարդասիրական օգնությամբ է եկել Արցախ, նորից բերել է դեղորայք ու սննդամթերք, որոնք, ըստ իր առաքելության, պետք է բաշխեր կռվող երկու կողմերին... Սակայն անձնապես միշտ էլ կանգնած է այն կողմի թիկունքում, որը պայքարում է իր մարդկային իրավունքների համար:

**Մարտի 17-ին** Շուշին ու Ստեփանակերտը ռմբակոծել են իրար: Հայ ազատամարտիկները հիմնավորվում են Լիսագորի կողմերում:

Ավերիչ ռմբակոծությունների են ենթարկվել Շահումյանի շրջանի ծայրամասային գյուղերը՝ Էրքեջը, Բուզլուխը, Մանաշիդը, Կարաչինարը:

ԼՂՀ ղեկավարությունը հրապարակել է հայտարարություն, որով հայտնում է, որ ինքը չի ընդունի ու իրավական չի համարի միջազգային մարմինների ո՛չ մի որոշում, պայմանագիր, որին ինքը չի ունեցել մասնակցություն կամ չի ստորագրել որպես իրավազոր կողմ: Հավանաբար այս հայտարարությունը պատասխան է Թեհրանում տեղի ունեցած հայ-իրանական սիլի-բիլիին:

Իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Թուրքիայի մոսկովյան դեսպանի հետ ունեցած զրույցից հետո լրագրողներին ասել է՝ Ղարաբաղի բարդույթը կարգավորելու գործում Հայաստանը կունենա միայն երկրորդական դեր եւ կընդունի այն որոշումները, որոնց տակ, իբրեւ իրավական սուբյեկտ, ստորագրած կլինի ԼՂ հանրապետությունը:

Եւ, այնուամենայնիվ, Թեհրան է ուղարկել իր պատվիրակությունը՝ համաձայնագիր ստորագրելու լիազորությամբ:

Տեր-Պետրոսյանը նորից է պնդում, թե մարտի 20-ին Կիեւում պետք է առաջին հերթին քննարկվի այն հարցը, թե Ադրբեջանն ինչպես է կողոպտում իր տարածքում գտնվող 4-րդ բանակին եւ նրա զենքով, զինամթերքով, ռազմական տեխնիկայով ավերում Արցախը, կոտորում նրա բնակչությանը:

Երեւի ի պատասխան այս առաջարկության, Անդրկովկասյան ռազմական օկրուգի հրամանատարի տեղակալ Բեպպաեւը հայտարարել է, թե ականապատված են 4-րդ բանակի զինապահեստները, եւ ապագա անախորժությունների համար հրամանատարությունը պատասխանատվություն չպիտի կրի:

Երեւի պահեստներում այլեւս գողանալու բան չկա:

Սայրուս Վենսը Բաքու հասնելուն պես զրույց է ունեցել Ադրբեջանի ղեկավարների հետ, ապա հայտարարել, թե ինքը եկել է դրությանը հանգամանորեն ծանոթանալու, ՄԱԿ զեկույց ներկայացնելու եւ նպատակ չունի միջնորդի կամ միջամտողի դեր կատարել: Ադրբեջանի պրեզիդենտի պաշտոնակատար Մամեդովն էլ ասել է՝ Ղարաբաղի բարդույթը լուծելու համար իրենք կարիք չեն զգում ո՛չ ՄԱԿ-ի, ո՛չ էլ ուրիշ որեւէ հեղինակավոր մարմնի միջնորդության: Ղարաբաղն իրենց ներքին հարցն է, իրենք էլ կլուծեն սեփական ուժերով:

Այդ օրը Մամեդովն իր հանրապետության նոր ռազմական մինիստր է նշանակել Ռահիմ Ղազիեւին, որպեսզի սեփական ուժերը հեշտ ու արագ լուծեն իրենց ներքին հարցը:

**Մարտի 18-ին** Շուշիից ռմբակոծել են Ստեփանակերտը, Ամիրանլարից՝ Մարտունին, Միր-Բաշիրի շրջանից՝ Շահումյանի հազար անգամ ծեծված գյուղերը: Սպանվածներ կան Ստեփանակերտում (երկու հոգի), Մարտունիում (3 հոգի), վիրավորներ՝ ամենուրեք:

Կարեւոր մի լուր. Ադրբեջանի կողմում կռվող ո՛չ ադրբեջանցի զինվորներ են հանձն-

վել Արցախի ինքնապաշտպաններին:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Արթուր Մկրտչյանն Ուկրաինայի պրեզիդենտ Լ. Կրավչուկին գրել է, թե շնորհակալ է Ղարաբաղի հարցի նկատմամբ ցուցաբերած մտահոգության համար, սակայն, ցավոք, տրված արդյունքը չի կարող տալ որեւէ խորհրդակցություն կամ ընդունված փաստաթուղթ, որին չի մասնակցում Ղարաբաղն ինքը՝ իբրեւ իրավազոր կողմ:

Մարշալ Շապոշնիկովը հայտարարել է, թե կարճ ժամանակում Անդրկովկասից դուրս կբերվեն իրենց բանակի զենքը, զինամթերքը եւ տեխնիկան, ինչ էլ որ դժվարություն հարուցի. կպայթեցնեն, կոչնչացնեն տեղում:

Իսկ Անդրկովկասյան զին.օկրուգի հրամանատարի տեղակալ Բեպպաեւն Ադրբեջանի պաշտպանության համար ասաց. Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը՝ Ադրբեջանի կողմից նախկին խորհրդային բանակի ունեցվածքի բռնագրավման մասին, զրպարտություն է, որի նպատակն է հասարակությանն ապակողմնորոշել, ուշադրությունը շեղել հայկական զորամասերի կատարած ապօրինություններից:

Ասում են՝ ասպարեզում երեւացել է Հեյդար Ալիեւը եւ պնդում է, որ ինքը հեռախոսազրույցներ է ունեցել Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարների հետ եւ պատրաստ է առաջարկելու իր միջնորդությունը Ղարաբաղի հարցի լուծման համար:

Հայաստանի արտգործնախարարությունը հրապարակեց հայտարարություն, որով աշխարհի ժողովուրդներին ու պետություններին հայտնում է, թե Ադրբեջանի կողմից Հայաստանի խուլ շրջափակումը հանրապետության տնտեսությունը հասցրել է քայքայման, մտցրել անելանելի փակուղի: Իսկ այդ անմարդկային վայրագության համար ամեն օր տարփողվող պատճառաբանությունները սուտ են ու անհիմն եւ միայն մեկ նպատակ ունեն՝ արդարացնել ԼՂ-ի հանրապետության դեմ գործվող անօրինությունները, ա՛յն հանրապետության, որի տարածքի, ուրեմն եւ Ադրբեջանի նկատմամբ ոչ մի հավակնություն չունի Հայաստանի հանրապետությունը:

Վերջին օրերին տեղի-անտեղի արվող այս հայտարարությունը, թե Հայաստանը տարածքային հավակնություն չունի Արցախի, ուրեմն եւ Ադրբեջանի նկատմամբ՝ անտրամաբանական է մի քանի կողմերով, բայց, ամենից առաջ, նրանով, որ դեռեւս կա 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը: Եւ երկրորդ՝ մի՞թե իսկապես էլ Հայաստանի ղեկավարությունը համաձայն է, որ Ղարաբաղը ոտով-գլխով հանձնվի Ադրբեջանին ի կեր: Ի կե՛ր, քանի որ Ադրբեջանն էլ չի հրաժարվել Ղարաբաղի ո՛չ միայն մարզային, այլեւ շրջանային ղեկավար մարմինները լուծարող իր որոշումներից:

Այսօր Սայրուս Վենսն իր գործը պիտի ավարտեր Բաքվում եւ ուղեւորվեր բարդույթի գոտի՝ Արցախ, սակայն Բաքվին հրաժեշտ տալը հետաձգվեց, եւ ահա թե դրա պատճառն ինչպես բացատրեց «Ազատություն» ռադիոկայանի Ադրբեջանի թղթակից Գուզար Խալիլովը: Ադրբեջանի ԳԽ-ի նախագահ Մամեդովն ու վարչապետ Հասանովը Սայրուս Վենսին մատուցել են վիթխարի քանակության նյութեր, որոնք ներկայացնում են հայերի վայրագությունները Ղարաբաղում, նրա եւ Հայաստանի սահմանակից ադրբեջանական բնակավայրերում: Խոջալվում գազանությունների ենթարկված, Բաքվի հիվանդանոցներում բուժվող ադրբեջանցիներին է այցելել բարձրաստիճան հյուրը, իմացել, թե Հայաստանի զավթիչներն ի՛նչ անմարդկային խոշտանգումների են ենթարկել այդ քաղաքի հազարավոր խաղաղ բնակիչներին: Վենսը նպատակ ունի զրույցներ ունենալ նաեւ Հայաստանից ու Ղարաբաղից փախստական դարձած ադրբեջանցիների հետ, ավելի հանգամանալից պատկերացում կազմել հայկական իշխանությունների կազմակերպած հակաադրբեջանական բռնությունների մասին:

Ս. Վենսին իրենց քաղաքական պահանջներով ներկայացել են նաեւ Զանգեզուրից եւ Գյոյչայից (Սեւանի ու նրա ափերի նախկին անունն է,-բացատրում է թղթակիցը) փախած այն ադրբեջանցիները, որոնք վտարանդիության մեջ ստեղծել են Զանգեզուր-Գյոյչայի ադրբեջանական հանրապետության կառավարություն եւ որոշել են դիմել ՄԱԿ ու համաշխարհային հանրությանը՝ պահանջելով ճանաչել իրենց հանրապետությունը, օգնել, որպեսզի իրենք տիրանան իրենց անկապտելի իրավունքներին:



Այս լուրն ունկնդրած ադրբեջանցիները երեւի «բարաքյալլահ» են կանչել իրենց արյունակցին եւ պատրաստվել, համաշխարհային հանրության հետ միասին, օգնելու, որ «վերականգնվի» «Գյոյչա-Զանգեզուրի ադրբեջանական հանրապետությունը»:

✧ ✧ ✧

Դեռեւս առավոտյան Ադրբեջանի ռադիոն դատապարտեց Աղդամի զորամասից փախած 22 դասալիքներին՝ կարդալով նրանց անունները: 5-ը՝ լեզգի, 2-ը՝ քուրդ, 1-ը թալիշ:

Երեւի չպետք է զարմանալ, որ բռնությամբ պատերազմի դաշտ քշված մարդիկ ո՛չ ուզում են անարդար կռվի մտնել, ո՛չ էլ, մանավանդ, էշի նահատակ դառնալ:

✧ ✧ ✧

Նախկին շուշեցիների երկու հազար հայ ներկայացուցիչներ ԼՂՀ ԳԽ-ին են ներկայացրել դիմում, որով պահանջում են, որպեսզի իրենց՝ 1988 թ. ամռանը հայրենի քաղաքից բռնությամբ դուրս քշվածներին եւ 1920 թ. զանգվածային կոտորածից փրկվածների ժառանգներին հնարավորություն տրվի վերադառնալու հայրենի քաղաքը՝ «Արցախի ավանդական մայրաքաղաքն ու զարդը» («Երկիր», մարտի 19):

**Մարտի 19-ի** ժամը 11-ին Երեւան ժամանեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Ղալիի հատուկ պատվիրակ Սայրուս Վենսը: Հանդիպում ունեցավ ՀՀ ղեկավարների հետ՝ զգուշացնելով, որ ինքը եկել է ոչ թե Ղարաբաղի հարցը լուծելու, այլ իրավիճակի բոլոր կողմերին ծանոթանալու եւ ՄԱԿ-ի ղեկավարին սպառիչ ու հանգամանալից զեկույց ներկայացնելու համար: Եւ, այսուամենայնիվ, քննության դրեց առաջարկությունների մի տարբերակ, որը ներկայացված է եղել Հարավսլավիայի բարդույթի կապակցությամբ ու բավականին օգնել է հարցը լուծելուն (Ուրեմն, Հարավսլավիայում հարցը լուծվա՛ծ է):

Այսօր էլ Վենսը թռավ Գանձակ՝ այնտեղից Ղարաբաղ գնալու համար:

Երեւանում է գտնվում Իրանի արտգործնախարարի տեղակալ Մահմուդ Վայեզին, որը երեկ է ժամանել Բաքվից եւ նպատակ ունի շարունակել ու հաջողության հասցնել իր նախարարի առաքելությամբ սկսված գործը: Լեւոն Տեր-Պետրոսյանը նրա հետ ունեցած զրույցում նորից պնդել է, որ «միջնորդություն նախաձեռնող ցանկացած կողմ պետք է հաշվի նստի ԼՂՀ ղեկավարության հետ՝ իբրեւ հավասարազոր կողմի», իսկ Հայաստանն իր կողմից ամեն կերպ կաջակցի, որպեսզի հաղթանակի բարյացակամությունը:

Շուշիից վերստին ռմբակոծել են Ստեփանակերտը, Շոշը, Կարմիր գյուղը, Ամիրանլարից՝ Մարտունին, Ֆիզուլու կողմից՝ Ճարտարը:

Արցախի ռուսախոս բնակչությունը նամակ է գրել Ելցինին, Ռուցկոյին ու Ստարովոյտովային, խնդրում է ճանաչել ԼՂՀ-ը եւ օգնել, որ ՄԱԿ-ն էլ ճանաչի: Իսկ Բ. Ելցինը Ղարաբաղի կապակցությամբ նորից հայտարարություն է արել՝ հարմար համարելով ստեղծել ԱՊՀ խաղաղարար ուժեր եւ նրանց միջոցով հասնել հարցի կարգավորման:

Ադրբեջանի նոր ղեկավար Յաղուբ Մամեդովն էլ իր հերթին է հայտարարել 20-40 տարեկան զինապարտների զորակոչ:

Վաղը Կիեւում, Կրավչուկի նախաձեռնությամբ, պիտի բանակցությունների նստեին Լ. Տեր-Պետրոսյանն ու Յ. Մամեդովը եւ պայմանավորվեին Ղարաբաղում խաղաղություն ստեղծելու համար: Տեր-Պետրոսյանը հրաժարվեց ընդառաջել այդ նախաձեռնությանը՝ հայտարարելով, թե ինքը չի կարող բանակցությունների նստել մեկի հետ, որի հանրապետությունը բոլոր կողմերից շրջափակել է Հայաստանը, նրա տնտեսությունն ու ժողովրդին հասցրել քայքայման: Թող բանակցությունների նստելուց առաջ վերացնի այդ անմարդկային, անխիղճ շրջափակումը եւ տա կայուն երաշխիքներ, որ մեկ էլ երկու օր

պատվիրակությունները,- այս էլ հաղորդեց Մոսկվայի հեռուստատեսությունը: Իսկ Հայաստանի լրատվությունն անտեղյակ է, կամ անտեղյակ է ձեւանում ամոթից. չէ՞ որ գիշեր-ցերեկ պտտում են, թե Արցախին վերաբերող ամեն մի հարցի քննությանն ու վճիռ հանելուն, իբրեւ իրավազոր կողմ, պետք է մասնակից լինի ԼՂՀ-ը:

Հետաքրքիր է, որ Երեւանի խոսնակ Ավետիսյանը «Գիշերային լուրերի» թողարկմանն առհասարակ ոչ մի խոսք չուներ Արցախի մասին, իսկ Սպիտակի ագրոտեխնիկայի տնօրենի փոխչ գանգատը հաղորդեց երրորդ անգամ (երեկ էլ էր հաղորդել, այն էլ երկու անգամ): Եւ այս Ավետիսյանն էր, որ նախորդ օրերին ըմբոստ բողոքում էր, թե ո՛չ մի որոշակի տվյալ չկա մաքառող Արցախի մասին եւ ո՛չ մի աղբյուր էլ չունեն, որ հարցնեն, իմանան: Բայց մի՞թե հնարավոր չէր տեղեկություններ քաղել Մոսկվայի կամ, ասենք, «Ազատություն» ռադիոկայանի լրատվությունից. չէ՞ որ նրանք ավելի մոտ են Արցախին:

✧ ✧ ✧

Այսօր Աղդամի կողմից Ստեփանակերտ է հասել ԵԱՀԽ-ի պատվիրակությունը՝ Չեխոսլովակիայի արտգործնախարար Իրժի Դինստբիրի գլխավորությամբ: Տեղի են ունեցել հանգամանալից զրույցներ ԼՂՀ ղեկավարության հետ: Պարզվել է, որ պատվիրակությունն իր հետ բերել է իրավիճակի կարգավորման մի կաղապար՝ կառուցված իրարամերժ երկու սկզբունքից՝ ազգային վարչական միավորների ինքնորոշման իրավունքը եւ սահմանների անձեռնմխելիությունը (անհամատեղելիների համատեղում):

ԼՂՀ ղեկավարները վճռաբար հայտարարել են, որ իրենց ժողովրդընտիր հանրապետությունը հանդիսանում է ինքնուրույն ու անկախ պետական կազմավորում, եւ նրան վերաբերող ամեն մի ձեռնարկ, որոշում կամ վճիռ ուժ կունենա միայն նրա՛ իսկ իրավազոր մասնակցությամբ ընդունվելուց հետո:

Հյուրերն այցելել են Շոշ գյուղը, դարձել ականատեսը Շուշիի կողմից կատարված ավերիչ հրետակոծությունների: Այնուհետեւ նրանք վերադարձել են Բաքու՝ այնտեղի՛ց միայն Երեւան գնալու նպատակով:

**Ապրիլի 2-ի** վաղ առավոտյան «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական խմբագրությունը «Ադրբեջանից եկող ձայներ» շարքից հաղորդեց, որ իրենց հանրապետության ղեկավարությունը պատրաստվում է Հայաստանից փախստական դարձած ավելի քան երկու հարյուր հազար հայրենակիցներին վերադարձնել նրանց բնակության նախկին-ավանդական վայրերը՝ միջազգային իրավասու կազմակերպությունների օժանդակությամբ նրանց համար ապահովելով վարչաքաղաքական ինքնուրույն միավոր: Իբր, այս առթիվ արդեն բանակցություններ էլ են վարում միջազգային այդ կազմակերպությունների ղեկավարների հետ:

Իջեւանի սահմանում տեղի ունեցած բանակցություններին Արցախի հարցը չի քննարկվել: Անդրադարձել են միայն Հայաստանին գազ բաց թողնելու եւ ճանապարհներն ու երթեւեկը անվտանգ դարձնելու հարցերին, իսկ թե արդյունքն ի՛նչ է լինելու, աստված գիտե:

Արցախում շարունակվում են մարտերը: Շուշիից «Գրադով» ռմբակոծել են Ստեփանակերտը: Մեծ հարձակում է եղել Մարտակերտի շրջանի Չափար գյուղի վրա:

Ադրբեջանական կողմում կռվող օսմանյան երեք ջոկերի եւ Նախիջեւանում տեղակայվածների մասին տեղեկությունները հերքում են իրենք՝ թուրքերն ու ադրբեջանցիները՝ դրանք համարելով Թեհրանի հետախուզության հերյուրանքներ:

Բաքվից (բայց ինչո՞ւ ո՛չ անմիջապես ԼՂՀ-ից) Երեւան ժամանեց ԵԱՀԽ պատվիրակությունը՝ Չեխոսլովակիայի արտգործնախարար Դինստբիրի գլխավորությամբ: Սա երեւանյան հանդիպումներին (նախագահի, վարչապետի եւլն հետ), գոհունակությամբ խոսեց Բաքվում ունեցած բանակցությունների վերաբերյալ: Իբր, փոխըմբռնման են հասել նախագահի պաշտոնակատար Մամեդովի հետ: Իսկ իրականում այդ Մամեդովը համաձայնել է միայն թույլ տալ, որ Ղարաբաղը հետագա բանակցություններին մասնակ-



ցի խորհրդակցական ձայնով, այն էլ «երկու համայնքների»՝ հայերի ու ադրբեջանցիների ներկայացուցիչներով:

Ի. Դինստբիրը, ինչպես պարզ երեւում է լրատվական միջոցների հրապարակումներից, իրեն վերին աստիճանի զուսպ է պահել հանդիպումների ու հարցազրույցների ժամանակ, մանավանդ խոստումներ տալիս: Բավական է հիշել, որ շուրջ երկու ամիս շարունակ մարտնչող Արցախի համար, «բարեգործական միջանցք» ստեղծելու մասին խոստումներ ու ծրագրեր հրապարակած մարդը բոլորովին մոռացել էր այդ մասին եւ թղթակիցների համառ հարցումին այն մասին, թե ԼՂՀ-ը Մինսկի խորհրդաժողովին պիտի՞ մասնակցի իբրեւ իրավազոր կողմ, հազիվ պատասխանել է՝ «նրա ներկայացուցիչները պետք է որ հրավիրվեն»: Իսկ ԵԱՀԽ-ում վճռական ուժ ու նախաձեռնություն տեսնող մարդը հիմա էլ գտնում է, որ բարդույթի լուծմանը պիտի ձեռնարկեն իրե՛նք՝ բարդույթի երկու կողմերը, «իսկ մենք (այսինքն՝ ԵԱՀԽ-ը.- Բ.Ու) կօժանդակենք դրան» («PA», ապրիլի 4):

Եւ զարմանալի չէ, որ մամուլի աշխատողների հետ ունեցած հանդիպման ժամանակ ՀՀ արտգործնախարարը, ասես կշտամբելով իր խոստումներից ետ կանգնած Դինստբիրին, վճռաբար արել է հետեւյալ հայտարարությունները.

«Բանակցությունների հաջողությունը, ամենից առաջ, կախված է լինելու ԼՂՀ ղեկավարության մասնակցությունից, եւ այն էլ՝ իրավազոր կողմի դերով»:

«Պետք է պայքարել ոչ միայն «մարդասիրական միջանցք» ստեղծելու, այլեւ հաղորդակցության բոլոր ուղիներն ապաշրջափակելու, մեկընդմիշտ բացելու եւ բաց պահելու համար»:

Ինչ վերաբերում է հարցի քաղաքական-դիվանագիտական կողմին, ապա «Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման առաջին քայլը կլինի հետեւյալը. միջազգային հանրությունը կա՛մ ԼՂՀ-ը կընդունի իբրեւ առանձին պետություն, կա՛մ ուղղակի բանակցություններ կվարի նրա հետ՝ իբրեւ լիիրավ գործակցի (պարտնյորի)» (նույն տեղում):

✧ ✧ ✧

Նախօրյակին ադրբեջանական լրատվական մարմինները հրապարակել էին հանրապետության դատախազության վճիռը՝ Լաչինի շրջանում 1990 թվականին թղթակցուհի Ս. Ասկերովայի սպանության մեջ մեղադրվող հինգ հայերի գնդակահարության մասին: Հաղորդված է եղել նաեւ, որ վճիռը բեկման բողոքի ենթակա չէ, արգելված է եղել լրատվական մարմինների ներկայացուցիչների առնչությունը դատական գործին:

Այս հակաօրինական վճիռը բորբոքել է միջազգային իրավապահ մարմինների ու իրավապաշտպան մարդկանց արդար զայրույթը: Ադրբեջանի կառավարությանն իրենց բողոքի ուղերձներն են հղել Ֆրանսիայի, Ամերիկայի, Մոսկվայի իրավաբանական մի շարք միություններ, կոմիտեներ, անհատ իրավաբաններ ու իրավապաշտպաններ՝ պահանջելով մեղադրյալներին հնարավորություն տալ բողոքարկելու, պաշտպանելու իրենց անկապտելի իրավունքները, մանավանդ թույլ տալ, որպեսզի անկողմնակալ մասնագետները հնարավորություն ունենան ծանոթանալու գործին եւ ցույց տալու իրենց աներկբայելի ու իրատես վերաբերմունքը:

Հայտնի է, որ վճիռը կասեցվել է: Իսկ թե վերջն ի՛նչ է լինելու, կերեւա ապագայում:

Ցույց տվին մի հեռուստաժապավեն՝ «Քսան օր Արցախում» (ս.թ. փետրվարի 25-մարտի 13)՝ մարտնչող երկրի մասին: Այստեղ էլ կործանված Ստեփանակերտ կա, բայց նկուղներում կռվում են ցավի, զրկանքների, մահվան դեմ, ընդունում են խոշտանգված պատանդներին, որոնց խելագար հայացքները, անկապ-սարսափի խոսքերը պատմում են քաշած անպատմելի տառապանքները, այն ահավոր անմարդկայինը, որ չի եղել աշխարհի երեսին: Մի տարեց մարդ, որ վայելել է ադրբեջանական համարյա բոլոր տանջարաննե-

վելի քան վեց հազար ռեակտիվ հրթիռներ: Էլ չեմ խոսում հրեշավոր զենքի մնացած տեսակների մասին («Ալազան», «Գրադ» եւն. եւն.), որոնց վերջերս ծանոթացանք՝ Արցախի գլխին թափվող մահաբեր իրողություններից: Հիմա այդ բոլորը միանգամից պայթոտում, հրավառվում են, տարածվում չորս կողմերի վրա: Հեռուստաաշխատողները նրանց բեկորներն են նկարել Երեւանի արվարձաններում, հարեւան բնակավայրերում՝ իրենց կատարած ավերածություններով հանդերձ: Կոտայքի շրջանի մի քանի տասնյակ հեկտար տարածությունը զբաղեցնող ջերմոցային տնտեսությունն ավերվել է՝ կրելով միլիարդի վնասներ, որոնց համար պիտի հատուցեն փնքի ծառայողները:

Հանրապետության ղեկավարությունն առանց ական թոթափելու ոտքի ելավ, կազմակերպեց աղետի տարածքի (Աբովյան քաղաք, Առինջ, Ավան եւն) բնակչության տեղափոխությունը Երեւան եւ այլ ապահով վայրեր, արեց, ինչ որ պետք էր աղետից փրկվելու համար: Սակայն պայթյունները շարունակվում են, եւ ասում են՝ այն կտեւի մի օր եւս...

«Մայակ» ռադիոկայանը, Կենտրոնի սովոր խարդավանքով, հայտարարել էր, թե հրդեհն սկսվել է հայ գրոհայինների կրակոցներից: Իսկ մեր «խիզախները» անմիջապես գտան իսկական պատճառը. Ռուցկոյի կարգադրությունն է կատարվում, չէ՞ որ հայտարարել էր, թե Հանրապետությունից դուրս են բերվելու զորքն ու նրա ամբողջ ունեցած-չունեցածը, ինչ էլ որ անհնար լինի դուրս բերել, պետք է ոչնչացվի: Եւ, ահա՛, ոչնչացնում են, թեկուզ հետն էլ հայ ժողովուրդը ոչնչանա: Փորձ ունեն, չէ՞. հրեշավոր երկրաշարժն իրենք են կազմակերպել,-այսպես էին մտածում մտածողները:

Հեռուստալրագրողը զրուցում է Հայաստանում տեղակայված 7-րդ բանակի հրամանատար, գեներալ-մայոր Ռեուտի ու շտաբի պետ Վլադիմիր Նեւերովի հետ: Սրանք այնքան հանգիստ են խոսում, ասես տեղի ունեցածը սովորական մի բան է, որի համար շատ էլ չի կարելի անհանգստանալ: Ինչ վերաբերում է «Մայակի» սադրիչ հայտարարությանը, ապա դրա աղբյուրն իրենք չեն, եւ առհասարակ անիմաստ է պատճառների մասին խոսել, քանի դեռ մասնագիտական ու իրավաբանական բազմակողմանի քննություն չի կատարվել: Հավանական է՝ բուն պատճառն անվտանգության կանոնների խախտումն է եղել...

Բայց չէ՞ որ անվտանգության կանոնների խախտում կարող էր լինել նաեւ միջուկային զենքի պահեստներում:

✧ ✧ ✧

Իսկ Արցախում շարունակվում է պատերազմը. Շուշիից դարձյալ ռմբակոծել են Շոշն ու Ստեփանակերտը, Շեֆեկից՝ Կարաչինարը, նույնիսկ Շահումյանը, Ֆիզուլիից՝ Հադրութը, Քոչբեկը:

Մի զորաջոկատ էր հարձակվել Հադրութի շրջանի Ծամձոր գյուղի վրա, ինքնապաշտպանական ուժերից ջարդ կերել ու ետ փախել: Հեռուստախոսնակները կարեւոր են համարում, որ Ռուսաստանի արտգործնախարարը Միջին Ասիայից է եկել ԼՂՀ եւ ոչ թե Բաքվից կամ Երեւանից, իբր, մարդը նպատակ ուներ Ղարաբաղը տեսնել ինչպես որ կա, առանց անկանխակալ տրամադրության կամ տեղեկացվածության:

✧ ✧ ✧

Բարոնուհի Կոքսը նորից իջավ «Զվարթնոց» օդանավակայանում՝ Արցախի համար բերելով մի ինքնաթիռ բեռ՝ պարեն, դեղորայք, բժշկական սարքավորում...

Իրանի արտգործնախարարի տեղակալ Մահմուդ Վայեզին նորից Երեւանում է, հանդիպում է ունեցել Րաֆֆի Հովհաննիսյանի եւ ուրիշ պաշտոնյաների հետ, եւ բոլոր զրույցները Ղարաբաղի խնդրի շուրջն են եղել, կռիվը մեկընդմիշտ դադարեցնելու, բարդույթի վերջնական լուծման բանալիները գտնելու շուրջ:



**Ապրիլի 10-ին** էական ոչինչ չի կատարվել ԼՂՀ տարածքում, չնայած «շարունակվում էր» Ստեփանակերտի ռմբակոծությունը Շուշիից, օմոնականները հարձակվել էին Կարաչինարի, Էրքեջի ու Խարխափուտի վրա, եւ ադրբեջանական կողմն էլ գանգատվում էր Հայաստանի գրոհայինների դեմ, որոնք, իբր, ռմբակոծել են Զանգելանի շրջանի գյուղերը:

Եթե այսքանը տեղի ունեցած էլ լինի, «համեմատական անդորր է», իսկ դա ինձ անհանգստացնում է, քանի որ նման պարագաներում մեր արյան ծարավ ադրբեջանցին նախապատրաստվում է նոր արյունահեղության, նա չի կարող մարսել խայտառակ պարտությունը Մալիբեյլիում ու Գյունեփայա-Օրթափայայի կողմերում, Ղարադաղլվում ու Խոջալվում: Մանավանդ Խոջալվում:

Վերջինի համար գործի դրին բոլոր հնարավորությունները, կիրառեցին լրատվական ստորությունների, մինչեւ այսօր չտեսնված խարդավանքի ու մեքենայությունների մի ամբողջ շտեմարան, սակայն ապարդյուն, որովհետեւ չստացան ծրագրած արդյունքը... Հակառակը, վերջապես պարզ դարձավ, թե հայ ինքնապաշտպաններին վարկաբեկելու, վայրագությունների մեջ իրենց հավասարեցնելու համար ի՜նչ խայտառակությունների են դիմել, սեփական քաղաքացիների դիակների հետ ի՜նչ խաղեր են կատարել... Մի՞թե բավական չէր չեխ լրագրողուհի Դ. Մազալովայի այն վկայությունը, որ փետրվարի 29-ին Աղդամի մոտ ադրբեջանցի դիակներ են նկարահանել սովորական տեսքով, իսկ «մարտի 2-ի նկարահանումների ժամանակ այդ դիակները զանգամաշկված էին: Ինչ-որ զարմանալի խաղ է...» («Նեզավիսիմայա գազետա», 1992, ապրիլի 2):

Թերթի այդ նույն համարում հրապարակվել է նաեւ հարցազրույց գահընկեց դարձած Այազ Մութալիբովի հետ, որն արդեն պարզորոշ հայտնում է, թե խոջալվեցիներին կոտորել ու հոշոտել են իր ազգակիցները՝ քաղաքական նպատակով, իրեն վարկաբեկելու, ժողովրդին իր դեմ հանելու համար (նույն տեղում):

Ուրեմն, ադրբեջանցի սադիստները սեփական ժողովրդի ներկայացուցիչներին կոտորեցին, հոշոտեցին՝ մեղքը հայերի վրա գցելու համար: Զարմանալ կարելի է, թե նրանք ինչո՞ւ այդ մեռելների միսն էլ չեն խորովել-կերել, որպեսզի հայտարարեն, թե դա եւս հայերի գործն է: Չէ՞ որ Սումգայիթում ու Բաքվում իրենք հայ օրիորդներին են խորովել-կերել: Այդ մասին արտասահմանյան վկա-թղթակիցներն էին գրում... Եւ հիմա իրենք պետք է ապացուցեին, թե հայերը հասել են իրենց մակարդակին:

**Ապրիլի 11.** Պարզվում է, որ երեկվա «համեմատական անդորրը» բոլորովին էլ անդորր չի եղել, եւ Մարտակերտի շրջանում տեղի է ունեցել թուրքական մի վայրագություն, որը երեւի թե ամենադաժաններից մեկն է պատերազմի ամբողջ ընթացքում: Կեսօրվա դեմ Միր-Բաշիրի (Թարթառ) կողմից ավելի քան հազար զինվորից բաղկացած մի զորամաս, 15 տանկերի ու մի քանի տասնյակ զրահամեքենաների ուղեկցությամբ, հարձակվել են Մարաղա գյուղի վրա, նվաճել նրա մի մեծ թաղամասը, սկսել իրենց սովորական արյան խրախճանքը, կոտորել են բնակիչներին, շատերին քշել-տարել իբրեւ պատանդների: Իսկ տները կողոպտել են, ապա հրդեհի մատնել եւ տանկերով քարուքանդ արել: Հայ ինքնապաշտպանները, իհարկե, հակահարձակումով ազատագրել են գյուղը:

Լրատվական մարմինները հետեւանքների մասին տարբեր, իրար հակասող տեղեկություններ են հաղորդում: Մոսկվայից ասում են՝ Մարաղայի տված զոհերը հարյուր մարդիկ են, կանայք ու երեխաներ: Իսկ մեր անտեղյակները հարյուր զոհեր են վերագրում թուրք ասպատակիչներին (հայերին՝ միայն 30 կորուստ), տեխնիկայի կորուստն էլ՝ հինգ զրահամեքենա:

Վերստին ռմբակոծության տակ են եղել Ստեփանակերտը (ավելի քան 60 հրթիռ է այնտեղ նետվել Շուշիի կողմից): Ֆիզուլիից, ասում են, ռմբակոծել են Կարմիր շուկան, Թաղավարդը...

Իսկ Ռուսաստանի արտգործնախարար Կոզիրեւը հայտարարել է, թե Ղարաբաղում խաղաղություն հաստատելու բոլոր հնարավորությունները կան, մնում է գործադրել նրանցից օգտվելու քաղաքական ու դիվանագիտական հմտություն:

**Ապրիլի 12**-ի լուրերը փոքր ինչ պարզություն մտցրին Մարաղային վերաբերող տվյալների մեջ: Ադրբեջանցի հարձակվողները կոտորել են մեծ թվով մարաղացիների (միայն 45 զոհեր ճանաչվել են), շատերին պատանդ վերցրել: Կան մի քանի տասնյակ անհետ կորածներ: Առայժմ հայտնի է, որ ազատամարտիկներից զոհվել են հինգը, կան նաեւ վիրավորներ...

Կարմիր-շուկան ու Թաղավարդը ռմբակոծվել են Ամիրանլարից,- հաղորդում է Երեւանյան խոսնակը: Բայց Ամիրանլարից մինչեւ Կարմիր-շուկա եւ Թաղավարդ շուրջ 15-20 կմ է, եւ արանքում էլ մի քանի ուրիշ գյուղեր են՝ Ճարտարը, Խնուշինակը, Գիշին, Մուշկապատը, Ծովատեղը, Խերխանը, Հերհերը... Այս ի՞նչ հայտնություն է:

Հայկական մի ռազմաջոկատ հարձակվել է՝ Ֆիզուլու շրջանի Ղաջար գյուղը (երեւի ավազակաորջ) նվաճելու համար, սակայն ձախողվել, վերադարձել ելման կետ:

Ստեփանակերտի հայ զորամասը կռիվ է տալիս Ղայբալիշենի վրա: Հայ ազատամարտիկները վայր են գցել թշնամական մեկ «Ս-24»:

Երեւանում ամերիկյան մի պատվիրակություն կա, որը ՀՀ ղեկավարների հետ ունեցած բանակցություններում «ջերմ վերաբերմունք է ցուցաբերել» արցախահայության ազատագրական պայքարի նկատմամբ... Աչքներս լո՜ւյս:

Իսկ անգլիացի բարոնուհի Կոքսը, Զորի Բալայանի ուղեկցությամբ, ամսիս 10-ից Արցախում է, բերած օգնությունն է տեղ հասցրել: Այցելել է Մարտունու հիվանդանոցը, տեսել նրա անտանելի վիճակը՝ խոստանալով նոր ամենաբազմազան օգնություն:

Հայաստանի հեռուստատեսության մեկնաբան Կոնստ. Հովհաննիսյանը պատմում է, որ Ռուսաստանի ներկայացուցիչ Անդրեյ Կոզիրեւը Ստեփանակերտ է հասել (ապրիլի 8-ին) Աղդամից, անմիջապես էլ վազել Շուշի, վերադարձին կես ժամի չափ զրույց ունեցել ԼՂՀ ղեկավար Արթուր Մկրտչյանի հետ, իհարկե, փակ դռների ետեւում, նաեւ հրաժարվել թղթակիցներին որեւէ խոսք ու կարծիք հայտնելուց...

**Ապրիլի 13**. Արդեն բացահայտ է ադրբեջանական ղեկավարության ռազմավարական ծրագիրը. Ստեփանակերտը կործանելուց հետո պիտի ավերեն գյուղերը, որոնցում ապաստանել է մայրաքաղաքի բնակչության մեծ մասը: Ռմբակոծում էին շրջանների ծայրամասային գյուղերը, հիմա էլ կենտրոնականները. արդեն անցել են Կարմիր-շուկային ու Թաղավարդին, Մարտակերտին, Հոռաթաղին...

Բաքվից ու Լենքորանից ռազմական էմիսարներ են եկել Ֆիզուլի, ասում են՝ իրենց են պատկանում Հադրութի այն շինությունները, որոնցում առաջները ԽՍՀՄ սահմանապահ զորքերն էին տեղակայված: Իրենց են պատկանում, ուրեմն, պետք է գան, տիրեն: Տեղական իշխանությունները բանի տեղ չեն դրել այս հավակնոտ ու հիմար հայտարարությունը եւ վաստակել են «արժանի պատիժ». «Գրադից» հենց այսօր տաս հրթիռ է ընկել Հադրութի կենտրոնում...

ՀՀ հեռուստատեսության աշխատակիցը նոր է վերադարձել Մարտակերտի շրջանից եւ ճշգրտում է Մարաղայի ճակատամարտի տվյալները. ադրբեջանցիները (շուրջ մեկ ու կես հազար զինվոր, երկու տասնյակ զրահամեքենաներ, բեռնատար բազմաթիվ մեքենաներ, որոնք պիտի կողոպուտը փոխադրեին) հարձակվել են ապրիլի 10-ի կեսօրվա դեմ եւ, լուրջ դիմադրության չհանդիպելով փոքրաքանակ ինքնապաշտպանների կողմից, մխրճվել են գյուղը, ավերել մեծ մասը, սպանել 55 հոգու, որոնցից 5-ը՝ ինքնապաշտպանության զինվորներ, մնացածը՝ բնակիչներ, կանայք ու երեխաներ: Շուրջ 100 բնակիչներ էլ անհայտ կորած են համարվում, երեւի պատանդ են տարվել:

Ինքնապաշտպանությունն օգնության են հասել միայն կեսօրից հետո, ջարդ տվել ու փախուստի մատնել ասպատակիչներին, որոնք գյուղում եւ շրջակայքում թողել են շուրջ 100 սպանված: Պարզվել է, որ զրահամեքենաները վարում են ԱՊՀ զինված ուժերից վարձված մասնագետները:

Բարոնուհի Կոքսը եղել է Մարաղայում: Տեսել է նվաճողների գործած վայրագությունների հետքերը, խոստանում է տեսագրած նյութերը տանել, աշխարհով մեկ տարածել: Այսօր, վերադառնալուց անմիջապես հետո, հայտարարեց, թե հիացած է հայ ինքնապաշտպանության խիզախությամբ, քաղաքացիական բնակիչների տոկունությամբ, բայց



եւ անհունորեն ցավում է այն ողբերգական վիճակի, զրկանքների ու տառապանքների համար, որոնց մեջ է գտնվում նորելուկ հանրապետությունը: Բերած սննդամթերքն ու դեղորայքը սեփական ձեռքով բաժանել է Մարտունիում ու Մարտակերտում՝ հովանավորյալներին խոստանալով, որ շուտով նորից կգա այս հերոսական լեռնաստանը, կբերի իր ու իր ազգակիցների օգնությունը, մաղթանքները եւ օրհնությունը:

Ուշ գիշերին «Ազատություն» ռադիոն հաղորդեց իր թղթակիցների՝ Լեւոն Մելիք-Շահնազարյանի ու Արմեն Դուլյանի ելույթները Ղարաբաղում տեղի ունեցած նոր դեպքերի մասին: Հայ թղթակիցներն անդրադարձան Խոջալուի շուրջ ստեղծված վայնասունին, ադրբեջանական բռնատիրության ծրագրերի դաժան իրականացումներին, որոնց շարքում Մարաղայի եղեռնը հատուկ տեղ է բռնում:

Ադրբեջանցի թղթակիցն էլ խոսեցրեց իրենց ԱԺՃ-ի «Ազատություն» թերթի խմբագիր Հիքմեթ Հաջիզադեին, որը միայն հռետորական փուչ հարցեր ուներ աշխարհին ներկայացնելու. «Հայերն ի՞նչ են ուզում մեզանից, եւ նրանց թիկունքում կանգնած խաղաղարարներն էլ ի՞նչ տեսակ խաղաղության են սպասում: Մի՞թե հնարավոր է պատերազմը դադարեցնել, երբ Հայաստանից եկել, մեր խաղաղ բնակչությանն են կոտորում մեր հինավուրց հողի վրա, թե ի՞նչ է, աչք են տնկել այդ հողին... Ինչո՞ւ մոռանում են, որ միջազգային բոլոր հեղինակավոր կազմակերպությունները, ՄԱԿ ու Եվրոպառլամենտ, դիվանագիտական ու քաղաքական փաստաթղթերում ամենակարեւոր տեղ են տալիս պետության սահմանների անձեռնմխելիությանը: Ինքնորոշո՞ւմ են ուզում, խնդրեմ, այդ սահմանների ներսում ինքնորոշվեն, մեր պետության ենթակայության տակ:

**Ապրիլի 14-ին** ՀՀ ԳԽ-ի նիստում նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն էր զեկուցում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վիճակի ու խնդիրների մասին: Խոսում էր հանգիստ, իր դիրքի անհասանելիության գիտակցությամբ, ասես աշխարհի անց ու դարձը բանի տեղ չդնող մի մարդ էր: Հակառակ դեպքում ամոթ պիտի զգար այդ «զարգացում» բառից, պիտի լրջանար այնպես վեհաշունչ խոստումներ տալուց առաջ, որոնց կենսունակությունն ու իրավացիությունն, իբր, ապացուցվել են «հանրապետության կենսոլորտի զարգացմամբ»:

Նրանից հետո խոսեց Անգլիայի լորդերի պալատի փոխնախագահ, բարոնուհի Քեռոլայն Կոքսը: Պատմեց Արցախ կատարած իր ութերորդ այցելության հանգամանքները (այս անգամ հիսուն տոննա սննդամթերք ու դեղորայք է հասցրել մարտնչող երկրամասին), հույս հայտնեց, որ կհաղթանակի արդարությունը, վերջապես կբարձրանա, իր արժանի տեղը կգրավի դաժանորեն ոտնահարված իրավունքը մարդու, ազգային փոքրամասնության: Այս անգամ իր հետ բերել է մեծ թվով լրագրողների, որոնք հավաքած հարուստ նյութը, օրինակ, Մարաղայում ադրբեջանական ավազակների վանդալիզմը, կտանեն, կտարածեն աշխարհով մեկ, եւ կփակվեն այն բերանները, որոնք վերջին ժամանակներս միահամուռ պոռում էին Խոջալուի, այսպես կոչված, հայկական դաժանությունների մասին:

Բարոնուհի Կոքսը զարմացած ու զայրացած էր, որ Ադրբեջանը պարբերաբար խախտում է իր իսկ պայմանավորվածությունը զինադադարի մասին, ոտնահարում միջազգային ամեն տեսակ բանակցությունների շնորհիվ ձեռք բերված համաձայնությունները: Եւ, ահա, վերջին գիշերն էլ դարձյալ «Գրադից» ռմբակոծել է Ստեփանակերտը, ավերել Մարտակերտի զինու կոմբինատը, ուրիշ բազմաթիվ բնակավայրեր ու ձեռնարկություններ:

◇ ◇ ◇

Օրվա ամենածանր, պարզապես ողբերգական լուրն է՛լ պիտի առնեինք. երեկոյան, մոտավորապես ժամը յոթ անց կեսին՝ իր բնակարանում սպանվել է ԼՂՀ ԳԽ-ի նախագահ Արթուր Մկրտչյանը: Սպանել են հրազենով, եւ հանցագործը դեռեւս չի հայտնաբերվել: Ցույց տվին բնակարանի պատուհանը՝ ծակոտած ապակիով՝ հրազենի օգտագործման ապացույցը:

Ես առել եմ այս լուրը եւ, առայժմ որեւէ սթափ ու լուրջ խնդիր քննելու անկարող, մտածում եմ՝ այս շրջանում կարո՞ղ էր լինել առավել նենգ ու ծանր հարված, քան այն, որ ստացավ մեր կռվող երկիրը:

Նոր տարվա շեմին նորընտիր Գերագույն խորհուրդը համարձակորեն իր նախագահը դարձրեց այդ իսկապես խելոք, պայծառատես, մեր լեռնաստանին անձնվիրաբար զինվորագրված երիտասարդին: Շատերն էին թերահավատ: Իսկ Հայաստանի նոր ղեկավարները, որքան հայտնի է, դժգոհությամբ ընդունեցին նրան, թերեւս միայն մեկ պատճառով՝ նա հայ հեղափոխական դաշնակցության անդամ է, երբ իրենք ամեն գնով իրենց ՀՀՇ-ական թեկնածուին պիտի դարձնեին Արցախի տեր:

Ինչ-որ է, նա է ընտրվել: Առաջին իսկ հրապարակային ելույթներով ու հարցազրույցներով, հատկապես քաղաքական ու դիվանագիտական քայլերով ցրեց անվստահության մշուշը, ցույց տվեց, որ արցախյան գոյապայքարն ունի իր արժանի ղեկավարը:

Մեր պատմությունն այսպիսի դեպքեր շատ է հիշում: Միահամուռ ու միակամ պայքարի են ելել ազգի բոլոր խավերը, հասարակական ու քաղաքական բոլոր ուժերը: Մոռացել են իրենց էական կամ անէական ամեն մի հակամարտություն, եւ ամենակարեւորը՝ ազգի ու հայրենիքի փրկությունը դարձել է գերագույն նպատակը, այն ամենանվիրականը, որ հերոսացրել է բոլորին: Սակայն ձգվել է պայքարը, միշտ մեզանից բազմամարդ ու հզոր թշնամին հյուծել է մեր ճակատը, ստեղծել ցավալի ճեղքեր, որոնցով էլ ներս են խուժել երկպառակությունը, հոռետեսությունը, նույնիսկ դավաճանությունը:

Երեւի թե սա է ճակատագիրն ամեն մի անհեռանկար պայքարի:

Բայց արդյո՞ք մեր պայքարն անհեռանկար է, եւ մի՞թե մենք այս անգամ էլ պետք է ճաշակենք պարտություն, որ երեւի թե հավասար պիտի լինի անփառունակ, ստոր մահի:

Իսկ մեր նոր նահատակն ընդամենը երեսուն ու երեք տարեկան էր, Հիսուս Քրիստոսի տարիքին: Հիսուսի նման էլ մաքուր, ազնիվ, մինչեւ վերջ նվիրված իր ժողովրդի փրկության գործին: Վերջերս հեռուստատեսությամբ զրույց ունեցավ: Ի՜նչ սրբազան երկյուղածություն ուներ Արցախի պայքարի հանդեպ, ինչպե՜ս հավատում էր նրա հաղթանակին եւ ի՜նչ անհողդողդ վճռականությամբ էր ընդունել իր նոր առաքելությունը:

Եւ հիմա չկա, նահատակված է: Ո՞ւմ մեղքով: Ո՞վ է նրա երիտասարդ, սուրբ արյան պատասխանատուն: Մի՞թե մեկը մեր ներսից, որ դավաճանեց գոյապայքարին՝ չվախենալով ազգի ատելավառ հաշվեհարդարից: Թե՞ հակառակ հոսանքի կամ կուսակցության ներկայացուցիչը, որ կատարել է հանձնարարություն, մեր օրերի ալիքներին բարձրացած հրեշավոր գործիչների պատվերը:

Եթե վերջին տարբերակն է գործել, որ, ըստ իս, ամենից հավանականն է, ապա նողկալի են այն շառլատանները, որոնք կուսակցական խառնակչություն տարան այնտեղ, սերմանեցին իրենց հողի ազատության համար մաքառումի ելած այն սրբազան շարքերի վրա: Երի՜ցս նողկալի, լինեն երեկ բուսած եւ խելահեղորեն մեր ամբողջ անդաստանին տիրացած որոմի ներկայացուցիչները, թե՞ հարյուրամյա մեր պայքարի առաջնորդները, որոնք հաճախ են սրբություններ մատաղ տալիս կուսակցական շահին:

✧ ✧ ✧

Վրաստանի Մառնեուլի շրջանի Սադախլո կայարանի շրջակա գյուղերից մեկում այսօր թաղել են Ղարաբաղի կռվում սպանված 6 ադրբեջանցիների: Ուրեմն, Մառնեուլի ադրբեջանցիները մեծ մասնակցություն ունեն ղարաբաղյան պատերազմին: Ականատեսը պատմում է, որ Մառնեուլի քաղաքային շուկայի մոտ իրականացվում է ադրբեջանցի կամավորների հավաքագրումը՝ Ղարաբաղ ուղարկելու համար («Երկիր», ապրիլի 24):

**Ապրիլի 15**. ԼՂՀ-ում եռօրյա սուգ է հայտարարվել ԳԽ-ի նախագահ Ա. Մկրտչյանի եղերական մահվան կապակցությամբ: Իսկ ՀՀ ԳԽ-ի նստաշրջանը, մեկ րոպե լռությամբ հարգելով նոր նահատակի հիշատակը, ուղարկել է պատվիրակություն՝ թաղմանը մասնակցելու, փորձագետների խումբ՝ սպանության հանգամանքները պարզելու:



Մինչ փորձագետների հանձնաժողովը գործի կլծվի, կպարզի հանգամանքները, դրանք կհրապարակի, Մոսկվայում ՀՀ կառավարության մշտական ներկայացուցչությունն արել է պաշտոնական հայտարարություն, որով մեղքը գցում է Ադրբեջանի ահաբեկչության վրա: Դրան պատասխանելով էլ՝ Ադրբեջանի ներկայացուցչությունը հայտարարել է, թե իրենք ո՛չ ահաբեկչություն ունեն, ո՛չ էլ որեւէ մասնակցություն «անօրեն ԼՂՀ ԳԽ-ի նախագահի» սպանության մեջ: Սպանությունը «Ղարաբաղի լեռնային մասում այժմ տիրող պառակտչական մթնոլորտի, այդ մթնոլորտում տիրող տարամետ խմբակցությունների պայքարի արդյունքն է»: Իբր, Ա. Մկրտչյանը չափավոր թեւի ներկայացուցիչն է, «ադրբեջանական համայնքի հետ լեզու գտնելու» եւ այդ միջոցով փոխըմբռնումի գնալու կողմնակից, որին չեն հանդուրժել ծայրահեղականները, եւ ահա հետեւանքը... Չէ՞ որ նախօրինակն էլ կա.-պնդում են ադրբեջանցի «հնարամիտները», ամիսներ առաջ էլ սպանեցին կուսմարզկոմի բաժնի վարիչ Վալերի Գրիգորյանին, որը համարձակվել էր համերաշխություն հաստատելու մասին խոսել:

Եւ այսքանից հետո էլ.-հաղորդեցին մոսկովյան լրատվական գործակալությունները.-ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունն ու Մինիստրների խորհուրդը հայտարարություն են հրապարակել այն մասին, որ Ա. Մկրտչյանի մահը դժբախտ դեպքի հետեւանք է:

Ինչպես էլ որ լինի իրականությունը, ի՛նչ եզրակացության էլ գալու լինեն փորձագետները, սույն լուրերը հաստատում են ցավալի մի ճշմարտություն, որ հայկական միջավայրում, բուն Հայաստանում ու Արցախում, դրության տեր են եւ լրատվության գործը գլխավորում են իրենց արածի ու ասածի հետեւանքները չպատկերացնող, պարզապես տհաս մարդիկ: Ի՞նչ դժբախտ դեպքի մասին է խոսքը: Արթուր Մկրտչյանը երեխա՞ է, չկարողացա՞վ զենքի հետ վարվել, եւ պատահաբար արձակված կրակահերթի զո՞հ դարձավ (նախօրյակին հայտարարել էին, թե ավտոմատի կրակահերթից է մահացել): Եւ դրա կողքին էլ՝ մոսկովյան ներկայացուցչության անհավասարակշիռ պնդումը...

ՀՀ նախագահը որոշել է համազգային սգո օր դարձնել Ա. Մկրտչյանի թաղման օրը՝ ապրիլի 17-ը:

Աշխարհի բազմաթիվ երկրների կառավարություններ, հասարակական ու քաղաքական կազմակերպություններ իրենց կսկիծն ու ցավակցությունն են հրապարակել իր ազատության համար մարտնչող ժողովրդի ղեկավարի ողբերգական մահվան առթիվ: Արդեն ստացվել են ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի կառավարությունների ցավակցական հեռագրերը, ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի ցավակցության ու ցասման գիրը, ուրիշ-ուրիշ բազմաթիվները:

Պաշտոնական պատվիրակություններ, լրատվական մարմինների ներկայացուցիչներ են ժամանում Ղարաբաղ, որպեսզի իմանան ցավալի ճշմարտությունը, կարեկցեն կենաց ու մահվան պայքար մղող ժողովրդին, սփոփանքի ու սրտապնդումի խոսքեր ասեն, օգնեն...

Իսկ Ադրբեջանը շարունակում է իր դիվային չարագործությունները: Ռմբակոծություններ են եղել Շահումյանի շրջանում (Շեֆեկից ու Զեյվայից հրետակոծել են Կարաչինարը), Արարատի շրջանում (Նախիջեւանի կողմից):

Ամենուրեք խոսում են ադրբեջանցի ինչ-որ ավագ լեյտենանտի փախցրած եւ Սանգաչալայում իջեցրած ռազմական-գերձայնային ինքնաթիռի մասին, որը, բոլորի կարծիքով, անմիջապես ուղարկվելու է կրակի գոտի, որպեսզի բազմապատկի արցախահայության գլխին թափվող աղետները:

**Ապրիլի 16**. Չնայած ԼՂՀ-ում եռօրյա սուգ է հայտարարված, ադրբեջանական ռազմակայանները շարունակում են ռմբակոծել Ստեփանակերտը, Մարտունին, Քաջավանը, Կարաչինարը, Հադրութը, ամբողջ հանրապետությունը՝ հյուսիսից հարավ: Կան զոհեր, վիրավորներ, ավերածություններ: Հայաստանի պաշտոնական շրջաններում կարծում են, որ Ադրբեջանը նախապատրաստում է լայնահուն ու վճռական հարձակում, որի ակնհայտ նախանշաններն են ամբողջ հանրապետության վրա տեղացող անդադրում ռմբակոծությունները, տեռորը եւ մանավանդ Յաղուբ Մամեդովի սանձարձակ սպառնա-

Ադրբեջանական լրատվությամբ էլ հայկական ռմբակոծություններն են նշում: Իբր, Ստեփանակերտից հրետակոծել են Շուշին, Հադրութից՝ Ֆիզուլին: Խիստ գանգատվում են Հադրութի սահմանամերձ զորամասի դեմ, որն, իբր, օգնում է հայերին, որովհետեւ ծառայողների մեծ մասը հայեր են:

Մինգեչաուրի մոտ ադրբեջանական օմոնը բռնագրավել է ռազմաօդային ինչ-որ միավոր եւ առաջին իսկ ժամերին երկու հրթիռ բաց թողել Արցախ սննդամթերք տանող մեր ինքնաթիռի վրա, սակայն հրթիռները պայթել են մինչեւ սավառնակին հասնելը: Ստեփանակերտում երեւի թե տնտեսական վիճակը շատ է ծանր: Շրջաններում գարնան դաշտային աշխատանքներ պիտի կատարվեն, իսկ ժողովուրդը կռվի մեջ է: Կռիվն էլ չլինի, միեւնույն է, վառելիք չկա, սերմացու ճարելն անհնար է: Ի՞նչ պիտի լինի այս ամենի վերջը:

Երեւի թե Ռուսաստանի արտգործնախարարությունը միջնորդություն է հանձն առել, որպեսզի ամսիս 24-ին Մին-Վոդիում բանակցությունների նստեն Հայաստանը, Ադրբեջանը եւ ԼՂՀ-ը: Ստեփանակերտից հաղորդում են, որ ԼՂՀ ղեկավարությունը չի կարող մասնակցել այդ բանակցություններին, այն էլ ապրիլի 24-ին, քանի որ ադրբեջանական կողմը դեռեւս չի կատարել նախընթացին վարած բանակցությունների իր որեւէ համաձայնությունը, ռմբակոծում է հայկական բնակավայրերը, պատանդներին չի վերադարձնում կամ վերադարձնում է այնպիսի խարդավանքով, ինչպես այն ականապատված դիակը...

Ելույթ ունեցավ ԼՂՀ դատախազի պաշտոնակատարը (Ռոբերտ Հայրապետյան) եւ սա էլ, Հայաստանի դատախազության ներկայացուցչի պես, լեզուն ծամծմեց, որպեսզի վերջում հասկացնի, թե Արթուր Մկրտչյանը համարյա ինքնասպան է եղել՝ ատրճանակի հետ անհմուտ վարվելու պատճառով: «Տվյալները Երեւան են տարվել հանգամանալից հետազոտության համար, սպասում ենք վերջնական-հիմնավոր եզրակացությանը»,-հայտարարեց նա: Իսկ դա ինքս հասկացա այսպես. նայած ի՞նչ կհանձնարարվի, այն էլ կընդունենք իբրեւ վերջնական եզրակացություն:

◇ ◇ ◇

**Ապրիլի 21-ին** Եվրոպական հանձնաժողովը որոշեց 500 հազար էկյու որպես օգնություն հատկացնել Լեռնային Ղարաբաղի հայ եւ ադրբեջանցի բնակչությանը: Օգնությունը տրված է դեղորայքին, բժշկական սարքավորումների եւ սննդամթերքի գնման, փոխադրության եւ բաշխման անմիջական կարիքների համար, որոնց իրագործումը կստանձնեն ֆրանսիական Կարմիր խաչը եւ «Բժիշկներն առանց սահմանի» կազմակերպությունը:

Հիշենք, որ 1992 թ. փետրվարի 13-ին ՀՀԴ Ֆրանսիայի Հայ դատի հանձնախմբի միջնորդությամբ Եվրոպական խորհրդարանը, հօգուտ Լեռնային Ղարաբաղի, մշակել էր բանաձեւ, որի երրորդ կետում ասվում էր. «Եվրոպական խորհրդարանը հանձնաժողովից խնդրում է արագորեն ընթացք տալ առողջապահական, սննդի եւ կենսական այլ մթերքների առաքմանը Լեռնային Ղարաբաղ»:

**Ապրիլի 22.** Երեկ ու այսօր Շուշիից «Գրադով» ու թնդանոթներով կրակի տակ են պահում Ստեփանակերտը: Կրակի տակ է նաեւ օդանավակայանը, թռիչքները դարձել են անհնար:

«Գրադ»-ից համարյա անդադար ռմբակոծվել են Շահումյանի շրջանի Կարաչինարը, Խարխափուտն ու Էրքեջը:

Այսօր Հադրութ գնացող ավտոբուսը Ճեխեր ու Դրախտիկ գյուղերի արանքում պայթել է ականի վրա: 13 ուղեւորներ զոհվել են, 21-ը՝ վիրավորվել: Հասկանալի է, որ ճանապարհն ականապատել են Ֆիզուլու շրջանից այստեղ թափանցած թուրք օմոնականները:

**Ապրիլի 23-ին** ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունն ընդունել է «ԼՂՀ



պաշտպանության խորհրդի մասին» կանոնադրություն: Ըստ որի՝ պաշտպանության խորհրդի կազմի մեջ ընդգրկվում են ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահը, որպես պաշտպանության խորհրդի նախագահ եւ ԼՂՀ պաշտպանության ուժերի գլխավոր հրամանատարը, Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալը, ԼՂՀ նախարարների խորհրդի նախագահը, պաշտպանության ուժերի հրամանատարը, ԼՂՀ պաշտպանության նախարարը, ԼՂՀ Գերագույն խորհրդի պաշտպանության գործերի հանձնաժողովի նախագահը: ԳԽ-ի նախագահին իրավունք է վերապահվում պաշտպանության խորհրդի մեջ ընդգրկել նաեւ այլ պաշտոնական անձանց:

**Ապրիլի 24.** Ստեփանակերտ ժամանած Եվրախորհրդարանի Զարգացման հանձնաժողովի նախագահի առաջին օգնական Վարուժան Գրիգորյանը Գերագույն խորհրդի Նախագահությանն է հանձնել 56 հազար դոլլար: Այդ գումարը հավաքվել է ֆրանսահայ համայնքի կողմից որպես նվեր եւ օգնություն նորաստեղծ Ղարաբաղի հանրապետությանը: Պրն. Վ. Գրիգորյանը հատուկ բեռնատար օդանավով Փարիզից Երեւան է հասցրել 40 տոննա բեռ, որը նույնպես պիտի տեղափոխվի Ստեփանակերտ: Բեռների մեջ կան հանրապետության համար շատ մեծ նշանակություն ունեցող 10 էլեկտրաշարժիչներ եւ այլ անհրաժեշտ սարքավորումներ:

◇ ◇ ◇

Երեկ բավական ակտիվացել էին ԼՂՀ տարածքում բնավորված թուրք ավազակախմբերը. Աղդամի շրջանի տարածքից Մարտունու շրջանի Ամիրանլար, Կուրոպատկինո եւ Մուղանլու գյուղ-կրակակետերն էին փոխադրվել մեծ քանակությամբ ռազմական տեխնիկա, զինամթերք ու զինուժ, որոնք եւ անմիջապես սկսեցին գործել Մարտունի քաղաքի եւ շրջակա բնակավայրերի դեմ: Հայ ազատամարտիկները պատասխան կրակով ոչնչացրին մեկ թնդանոթ, ավերեցին մի քանի տուն Ամիրանլարում:

Ստեփանակերտի վրա, Շուշիի հետ միասին, հիմա կրակ է տեղում նաեւ «Գրադ» կայանքներ ունեցող Ջանհասան գյուղից:

Հրետակոծությունից մեծապես տուժել են նաեւ Մարտակերտի ու Շահումյանի շրջանները:

◇ ◇ ◇

Պարզվել է, որ Հադրութ գնացող ավտոբուսի ուղեւորները ոչ թե ականի պայթյունից են տուժել, այլ Ֆիզուլիից եկած մի ավազակախմբի հարձակումից. չարագործները նախ նռնակներ են նետել մեքենայի վրա, ապա ավտոմատային կրակահերթերով վիրավորել ու կոտորել ուղեւորներին:

**Ապրիլի 25-ին ու 26-ին** թուրքերը Շուշիից ու Ջանհասանից շարունակ հրետակոծում էին Ստեփանակերտը, Շոշը, Աղդամից էլ՝ Ասկերան ավանն ու Բալուջա, Պլիշբաղ, Խանաբադ գյուղերը, Ֆիզուլիից՝ Հադրութը, Մելիքաշեն, Քոչբեկ, Դրախտիկ գյուղերը, նույնիսկ Մարտունու շրջանի խորքային Թաղավարդն ու Կարմիր-շուկան:

ՀՀ սահմանապահ ջոկատները թշնամական չորս կրակակետեր են ոչնչացրել, 2-ը՝ Կապանի դիմաց, Ղազանչի եւ Սեյվուլաղ գյուղերում, 2-ը Իջեւանի սահմանագլխին, Սոֆուլու եւ Բարխուդարլու գյուղերում:

ԵԱՀԽ-ը որոշել է հայ-ադրբեջանական առճակատման գոտիներում տեղադրել 150-200 դիտորդներ: Դիտորդների խմբի ղեկավար է նշանակված Շվեդիայի արտգործնախարարի տեղակալ Մոսբերգը, որը, ասում են, այժմ ուրիշ բանակցություններ է վարում Ադրբեջանի խորհրդարանի եւ կառավարության հետ («Երկիր», 1992, ապր. 28):

Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում ապրիլի 28-30-ը տեղի կունենա սեմինար-գիտաժողով, որը կքննի Լեռնային Ղարաբաղի հարցը՝ շահագրգիռ երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ:

զում են ճանաչել ԼՂՀ-ը, հաստատել նրա անկախությունը, օգնությունը դնել օրինական հիմքի վրա, հստակ պարտավորությունների սահմաններում: Եւ միայն ՀՀՇ-ն ու նրա պատգամավոր ներկայացուցիչները չեն ցանկանում: Ավելի ճիշտ՝ չեն ուզում խոստովանել իրենց չցանկանալը, բայց անշնորհք աճպարարի պես հարցի հետ զանազան խաղեր են անում, որպեսզի վերջում էլ պնդեն, թե իրենք ուզում էին, նույնիսկ շատ էին ուզում, բայց չստացվեց, որովհետեւ պահը հարմար չէր:

**Մայիսի 4-ին**, թուրքի զորամասերն ամենուրեք խուճապ գցող գործողություններ են ձեռնարկել՝ Հադրութի շրջանի ծայր արեւմտյան մասից մինչեւ Շահումյանի եզրը՝ Կարաչինար ու Էրքեջ, ինչպես նաեւ Հայաստանի սահմանների ամբողջ երկարությամբ: Ամենուրեք ռմբակոծություններ ու հրթիռակոծություններ են եղել, մանր զորաջոկատների հարձակումներ ու գրոհներ: Ըստ երեւույթին ուզում են ցրել հայկական զորամիավորումները, ապա վճռական ճակատամարտ ձեռնարկել որեւէ ուղղությամբ, իհարկե, առաջին հերթին Արցախում:

Լրատվական մարմինները տագնապով խոսում են Ստեփանակերտի վիճակի մասին: Այստեղ թուրքերն ամբողջ օրը ռմբակոծել են Շուշուց, ապա արվարձանից ետ մղված զորամասը համալրելով՝ նորից հարձակման անցել: Ինքնապաշտպանները այս անգամ ավելի կազմակերպված դիմադրություն են ցույց տվել, նորից ետ մղել եւ իրենց շարքերն են համալրում:

Զանգել էի Ստեփանակերտ, շատ էի անհանգստանում, հարցրի՝ ի՞նչ են անում Շուշվա խարդավանքների դեմ: Վարդան Հակոբյանը պատասխանեց հանգիստ եւ պաշտպանական ուժերի հնարավորությունների վրա վստահ: Ասաց.

– Ստեփանակերտում ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատարը (Կոմանդոսը) գիշեր-ցերեկ ինչ-որ կարեւորագույն քայլեր է մտմտում, արդյունքը հետո կերեւա: **Կոմանդոսը** հայրենակիցներիս անկեղծ սերն ու վստահությունը վայելող գեներալ Արկադի Տեր-Թադեւոսյանն է: Եթե նա է **մտմտում**, ուրեմն ամեն ինչ հաջող կլինի,- մտածեցի ես:

**Մայիսի 5-ը** բերեց նոր տագնապներ: Ստեփանակերտի վրա կատարած հարձակումների անհաջողությունից հետո թուրքերն անընդմեջ հրետակոծում են: Աղդամից Ասկերանն են քարուքանդ անում, Ամիրանլարից՝ Մարտունին, Թարթառից՝ Թալիշը: Կան շատ զոհեր ու վիրավորներ: Միայն Ստեփանակերտում մի քանի շենքեր են ավերվել, մեկում սպանվել են վեց հոգի, որից 2-ը՝ երեխա:

Թշնամին եւս ունի զոհեր ու կորուստներ: Սակայն ավելի դաժան ու կորստաբեր են դառնում նրա հարվածները:

Ի՞նչ եղավ Կոմանդոսի ծրագիրը, մի՞թե Վարդանն իզուր էր ինձ հանգստացնում:

Մոսկվայում երեկ Ռուսաստանի ԱԳՆ Կոզիրեւն ու ԵԱՀԽ-ի մինսկյան խորհրդաժողովը նախապատրաստող Մարիո Ռաֆայելին են բանակցություններ վարել, ի՞նչ են ծրագրել ԼՂՀ ճակատագրի համար:

Այսօր Ռաֆայելին Երեւանում է, զրուցում է ՀՀ ղեկավարների հետ: Ասում են՝ այստեղից էլ Բաքու պիտի գնա, գուցե նաեւ Ղարաբաղ, հետո էլ գործադրի ամեն տեսակ միջոցներ՝ կրակը դադարեցնելու, հարցը կարգավորելու համար:

**Մայիսի 6**. Այսօր Թեհրան գնաց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: Այնտեղ պիտի ժամանի նաեւ Ադրբեջանի ղեկավար Յաղուբ Մամեդովը եւ ԵԱՀԽ-ի ներկայացուցիչ Մարիո Ռաֆայելին:

Ստեփանակերտի արվարձաններում նորից ճակատամարտեր են գնում: Մեծ գրոհ է եղել Մարտակերտի շրջանի ծայրամասային Թալիշ գյուղի վրա, ուր մերոնք տվել են 7 զոհ, թշնամին՝ 20: Ռմբակոծվում են բոլոր մեծ ու փոքր բնակավայրերը: Միայն Կարմիր-շուկայի վրա «Գրադի» 160 արկ է ընկել:

Թուրքի լրատվությունը աշխարհի շատ ձայներով բարձրացրել է վայնասուն՝ իբր, Լեռնային Ղարաբաղում հայերի կողմից կիրառված քիմիական զենքի մասին:

Ռուսաստանի Պաշտպանության մինիստրությունից հերքում են այս զրպարտությունը՝



վճռաբար պնդելով, որ իրենք Անդրկովկասում քիմիական զենք չեն թողել, որ Ղարաբաղում օգտագործվի: Բայց ո՞ւմ ես ասել, զե՛նք չեն թողել, մի՞թե դրանով կարող ես փակել կեղտոտ բերանները... Հեռուստատեսությամբ ցուցադրում են իրենց վիրավորներին, ապա ոռնում՝ սրանք քիմիական զենքերի՛ց են այլանդակվել:

Թեհրանի բանակցություններից առաջին լուրն էլ ստացվեց, իբր, Ռաֆայելին ասել է՝ Ղարաբաղն այստեղ պիտի ներկայանա իր պատվիրակությամբ:

Մեղրու շրջանի Կարճեւան գյուղի մոտ բացվել է այն կամուրջը, որը Հայաստան-Իրան կապն է ապահովելու:

* * *

Այսօր Թեհրանում Լ. Տեր-Պետրոսյանի հետ զրույց է ունեցել Իրանի ղեկավար Ռաֆսանջանին: Խոսել են երկու երկրների փոխհարաբերությունների, ինչպես նաեւ Ղարաբաղի խնդրի կարգավորման միջոցառումների մասին: Ապա բանակցություններին մասնակցել է Յա. Մամեդովը:

Ուշ երեկոյան հաղորդեցին, որ կեսօրից հետո Ստեփանակերտը կատաղի հրետակոծության են ենթարկել Շուշիից, Ջանհասանից, Շոլանից...

Հեռուստատեսության աշխատակից Մավիսակալյանը զրուցում է ՀՀ Պաշտպանության ղեկավար Վազգեն Սարգսյանի հետ, որն իր զորամիավորումների մեծ ու փոքր հաջողություններն է թվարկում...

**Մայիսի 7-ի** երեկոյան ԼՂՀ կառավարությունը հավաքվել է ժողովի, քննարկել Ստեփանակերտի ու չդադարող ռմբակոծությունների ենթարկվող մյուս բնակավայրերի վիճակը, ընդունել որոշում Շուշիում ու հարեւան ադրբեջանական գյուղերում գործող ռազմակետերը ոչնչացնելու մասին: Որոշում, որը պետք է իրականացվեր անմիջապես, առանց ական թոթափելու, քանի որ կաթվածահար ու շնչահեղձ Ստեփանակերտն այդ էր պահանջում: Այդ էին պահանջում դիվային հրետակոծությունների ու պարբերական ավազակային հարձակումների ենթակա Շոշն ու Քարինտակը, Ասկերանն ու Դաշուշենը, մնացած հեռու-մոտիկ գյուղերը: Իսկ վերջին օրերին Ստեփանակերտի վրա կատարված ավազակային գրոհը, Կրկժանի ու Հայկավանի փողոցներում մղված կռիվները առավել եւս հուշում էին, որ թշնամին արդեն սանձարձակ է՝ ինչպես երբեք, եւ պատասխանը ճակատագրական պիտի լինի, տառացիորեն կործանարար:

Երեկ ետմիջօրեին թուրքաց զորամիավորումները մտել էին Ստեփանակերտի արեւմտյան արվարձանները: Ինքնապաշտպանության ուժերին հաջողվեց նրանց ետ մղել:

Սակայն ԼՂՀ մայրաքաղաքի բնակիչները, որ դուրս էին եկել նկուղներից, հերոսաբար մասնակցել ասպատակիչներին դաս տալուն, հետո էլ շարժվել էին դեպի ղեկավար հիմնարկները, կշտամբել նրանց տերերին, սպառնալից հարցրել, թե մինչեւ ե՞րբ պիտի հանդուրժեն Շուշիի ու Ջանհասանի աղետավոր գոյությունը: Մինչեւ ե՞րբ:

Որոշում ընդունվեց՝ հաջորդ օրը վաղ առավոտյան գործի անցնելու համար:

Եւ այսօրվա, մայիսի 8-ի, առավոտը բացվեց մահ սփռելու Ջանհասանի, Ղայբալիշենի, Քյոսալարի ու Նաբիլարի ռազմակայանների վրա: Դրան էլ պիտի հետեւեր կայծակնային արշավը դեպի Շուշի:

Երեւի թե կհայտնվեն ականատեսների ու ռազմական գործողությունների մասնակիցների վկայությունները եւ կհրապարակվեն այս խոշոր պատմական, ճակատագրորեն վճռական ճակատամարտի մանրամասները[1]: Այժմ լոկ այնքանն է հայտնի, որ կեսօրվա դեմ հայ ազատամարտիկները ոտք են դրել հին Քարագլուխ-Շոշի բերդի տափարակի վրա, եւ դա եղել է մեր սրբազան Արցախում բռնությամբ տնկված թուրքի տիրապետության վերջի սկիզբը: Ժամը 18-ին գրավված էր քաղաքի մեծ մասը: Իսկ կես ժամ անց հայտարարվում էր, որ ազատամարտիկներն առել են Շուշվա տխրահռչակ բանտը՝ ազատություն

*1. Արդեն լույս է տեսել Զորի Բալայանի «Դժոխք եւ դրախտ» գիրքը, որը բավական արժեքավոր նյութ է հաղորդում Շուշիի ազատագրման վերաբերյալ:*

հայ-ադրբեջանական հարցը լուծելու համար։ Հայաստանի ղեկավարը դիմել է, հասկանալի է ու բնական, նա նախընթացին էլ հա՜ դիմում էր... Ինքը դիմում էր, նախորդը դիմում էր, նախորդի նախորդը դիմում էր։ Դիմում էին բոլոր հայերը։ Իսկ ինչպե՞ս պատահեց, որ Ադրբեջանի ղեկավարն էլ զգաց դիմելու կարիքը։ Չէ՞ որ մինչ այդ ինքն էլ, իր նախորդն էլ, նախորդի նախորդն էլ շատ ու շատ էին համոզված, թե Ղարաբաղն իրենց ներքին խնդիրն է, բացառապես իրենց սեփական ցանկությամբ, սեփական խելքով ու մանավանդ սեփական միջոցներով լուծելու հարցը։

Արցախում հայությունը ցնծության մեջ է, քանի որ ազատագրվել է լեռնաստանի նոր ժամանակների (նախախորհրդային) կենտրոն Շուշին։ Ազատագրվել է արդար ու ազնիվ ճակատամարտով, առանց որեւէ վնաս հասցնելու քաղաքի ադրբեջանական մասի ճարտարապետական կերպարին։ Ճակատամարտի ականատես Զորի Բալայանը հետագայում հետեւյալ վկայությունը պիտի հրապարակեր. «Մայիսի 9-ի լուսաբացին ինքնապաշտպանության մարտիկների հետ ես մտա Շուշի եւ ուղիղ գնացի հրաշագեղ Ղազանչեցոց եկեղեցին։ Ամբողջ հայկական բարձրավանդակի ամենամեծ տաճարն ամբողջովին բառացիորեն լեփլեցուն էր մարտական արկերով, մեծ մասամբ «Գրադի» չարագույժ սիգարներով։ Եկեղեցու կողքին թափված էին «Գրադի» արկերի ավելի քան հազար հինգ հարյուր դատարկ արկղեր։ Դրանք բոլորը դատարկվել են ստեփանակերտցիների գլխներին։ Եւ առաջին բանը, որ արվեց, պահակախումբ ուղարկվեց թրքական մզկիթ, որպեսզի «սումգայիթ» կամ «բաքու» ապրած որեւէ վրիժառու պատահաբար վնաս չհասցնի շինությանը։ Ավա՜ղ, ադրբեջանցիներն իրոք իրենք, օգտագործելով Մի-24 մարտական ուղղաթիռներ, ՍՈՒ-25 կործանիչ-ռմբակոծիչ, երկու օր շարունակ հրթիռակոծման եւ ռմբակոծման միջոցով համատարած հրդեհ տարածեցին հայկական հինավուրց քաղաքում» («Ավանգարդ», 1992, մայիսի 28)։

**Մայիսի 10-ին**, ըստ մեր օրապակաս լրատվության, ավարտին հասավ Շուշիի նվաճման եւ հարակից ռազմական օջախների՝ Ջանհասանի, Քյոսալարի, Ջավադլարի ու Շոլանի զորակետերի վերացման գործը։

Գանձակից եկած ծախու մի ռազմական ինքնաթիռ, բավական ցած թռչելով, ռմբեր թափեց Շուշիում, Ստեփանակերտում ու Ասկերանում։

Այդօր թուրքերը վայր գցեցին Երեւանից Գորիս թռչող մի մարդատար ինքնաթիռ։

Լեյլա Յունուսովան՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնի ղեկավարը, մոսկովյան հեռուստատեսությամբ հայտարարեց, թե Լեւոն Տեր-Պետրոսյանը կեղծում է, ասելով՝ Ղարաբաղում դրությունն անկառավարելի է, իրականում այնտեղ ամեն ինչ կատարվում է Հայաստանի ղեկավարության կարգադրություններով։

Նորից հիշեցրին Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի հայտարարությունն այն մասին, թե իր պետությունը թույլ չի տա, որ Հայաստանը ռազմական ուժով տիրի Ղարաբաղին, որն Ադրբեջանի օրինական սեփականությունն է։

Նման մի հայտարարություն էլ հրապարակվեց Իրանի կառավարության անունից։

Սակայն օդում դեռ չէր մարել նախորդ օրերին Թեհրանում պատրաստված խաղաղարար ծրագիրը։ Վայեզին խոստանում էր այցելել Բաքու, Երեւան, Ղարաբաղ, մի շաբաթվա ընթացքում դադարեցնել կռիվը, բացել տալ բոլոր ճանապարհները, օգնել լուծելու տնտեսական ու դրացիական մյուս բոլոր խնդիրները։ Իսկ Ադրբեջանի ղեկավար Յաղուբ Մամեդովը գտնում էր, որ Ղարաբաղի խնդիրը միայն այսպիսի բանակցությունների միջոցով կարող է լուծվել՝ փոխզիջումների ճանապարհով (երեւի այս խոսքի տակ էլ հասկանալով միայն Հայաստանի զիջումները)։ Նաեւ Տեր-Պետրոսյանի հավաստիացումը, թե մեզ անհրաժեշտ է միայն Իրանի միջամտությունը՝ անկաշառ, անշահախնդիր, ազնիվ ու արդար։ Չէ՞ որ մեր բազմահազարամյա պատմությունը միայն այդպիսի հարաբերությունների, Իրանի եղբայրական բարեկամության անթիվ ապացույցներ էր տվել...

Դեռ թարմ էր Իրանի համայնքի հրապարակային ցույցերի տեսարանը, երբ Հայաստանի պրեզիդենտի տեքին արժանացած ու դրանով անսահման երջանիկ հայ համայնքը որոտընդոստ կոչեր ու ողջույններ էր վանկարկում, մանավանդ այս.



«Ազա՜տ, անկա՜խ Հայաստան,

Կեցցե՜ Լեւոն Պետրոսյան»։

Երեկոյան թուրքի լրատվական մարմինները Մոսկվայի միջոցով հաղորդեցին, թե հայերը նվաճել են 50 հազար բնակիչ ունեցող Շուշին, ամբողջ այդ բնակչությունը ոչնչացրել։

Հետաքրքիր էր, որ Բաքուն էլ ամեն ժամը մեկ իր ժողովրդի համար ե՛ւ այս լուրն էր հաղորդում՝ զանազան վայնասունների ու սպառնալիքների հետ միասին, ե՛ւ այն, որ իրենք արդեն ջարդել են հայկական դիմադրությունը, ետ նվաճել Շուշին՝ իրենց տնտեսական ու մշակութային, քաղաքական ու ռազմական հինավուրց կարեւորագույն կենտրոնը։

**Մայիսի 11**. Դժվար օր էր։ Համազգային չափանիշով ամենածանր օրերից մեկը։ Պետք է մարսել Շուշին, ու դա եւս զոհերի ու զրկանքների գնով։

Եթե նախորդ օրերին ադրբեջանական լրատվությունն աշխարհով մեկ էր արել, թե իրենց քաջարի զորքերը, հանկարծակիի գալով, Շուշին զիջել են հայերին, ապա անմիջապես ազատագրել եւ այժմ հերոսաբար իշխում են իրենց պատմական ու հարազատ քաղաքի ու շրջանների վրա, ապա այսօր պրեզիդենտի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովը Ռուսաստանի ղեկավար Ելցինին է դիմել, «տեղեկացնում է», որ հայերն ադրբեջանական Շուշին նվաճել են՝ օգտվելով ներսի դավաճանությունից, եւ այդ ներքին դավաճանությունը հետագա օրերին եւս գործել է՝ ստելով, թե, իբր, քաղաքը ետ է նվաճվել եւ գտնվում է իրենց հսկողության ներքո։

Այսքանից հետո դավաճանված կողմի առաջնորդը պահանջում է ԱՊՀ ղեկավարներին՝ առաջիկա հանդիպմանը քննել Շուշվա խնդիրը եւ, հավանաբար, դատ տալ նվաճող կողմին։

Իսկ թուրք թղթակից Մախս Մամեդովը հեռուստաէկրանից դարձյալ վնգստում է, այս անգամ էլ արդեն Լաչինի համար. տեսե՜ք-տեսե՜ք, հայերը թիկունքում Լիսագորն են նվաճել, այստեղ էլ Գորիսից են հրթիռակոծում Լաչինը, քաղաքն ավերակ են դարձրել, բնակիչներին կոտորել կամ աստանդական դարձրել, որպեսզի Հայաստանն իրեն միացնի «Ղարաբաղի լեռնային մասը»։

Արցախյան աշխարհի արեւելյան ու հյուսիսային շրջաններում իսկական լայնամասշտաբ կռիվ է. Աղդամ-Գյուլափլվի կողմից մեծ հարձակում է եղել երկու ուղղությամբ, դեպի Ասկերանի շրջան՝ Արանզամին-Դահրավ գծով, ապա եւ ուղղությամբ եւ Մարտունու շրջանի վրա՝ Ավդուռ-Մյուրիշեն-Նորշեն գծով։ Հարձակմանը մասնակցել են զրահատեխնիկայի ու տանկերի երկու վաշտեր։

Հայ ինքնապաշտպանական ջոկատները նրանց ետ են շպրտել՝ պատճառելով մեծ վնասներ եւ նվաճելով զրահամեքենաներ ու բավական զինամթերք։ Իրենք տվել են 8 զոհ, երկու տասնյակ վիրավորներ ունեն։

Ադրբեջանական մի հոծ զորամաս էլ ճեղքել-մտել է Մարտակերտի շրջանի արեւելյան մասը եւ փողոցային մարտեր է մղում Մարաղա ու Մարգուշավան գյուղերում։

Հրթիռակոծվել են Հադրութի, Մարտունու, Շահումյանի եւ Իջեւանի, Գորիսի ու Կապանի շրջանների շատ բնակավայրեր։ Հասկանալի է, որ այդ կողմերում այժմ անհնար է զբաղվել գյուղատնտեսական աշխատանքներով։

Հրապարակվեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի եւ Մինիստրների խորհրդի անտագնապ, առաջին անգամ լավատեսական հայտարարությունը. հինավուրց այս աշխարհը կռվում է իր ազատագրության համար եւ ունի ակնհայտ հաջողություններ՝ վկան Շուշիի հերոսական ճակատամարտը։ Պիտի անշեղորեն շարունակենք մեր պայքարը, բազմապատկենք նվաճումները, հասնենք վերջնական հաղթանակին։ Ուրեմն, լինենք միասնական, միակամ ու բռունցքված, հանուր ազգի օգնությանն ու զորակցությանը հենված։

Հայկական հեռուստատեսության մեկնաբանը խոսեց մի քանի օր առաջ Գորիս-Երեւան երթուղում մեր ՅԱԿ-40 ինքնաթիռի ռմբակոծության ենթարկվելու հանգամանքների մասին: Ասաց՝ կործանիչն է եղել ՍՈՒ-25 ինքնաթիռը, որ պատկանում է ԱՊՀ զինված ուժերին եւ միայն նրանց ռազմական օդանավակայանից է օդ բարձրանում: Ուրեմն, եկել է Գանձակի կողքի օդանավակայանից՝ իբրեւ վարձկան, ստոր օդաչուն:

Երեւանի հիվանդանոցներից մեկում վախճանվել է ուկրաինացի անվանի իրավապաշտպան, միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների անդամ Միկոլա Կուչմանը, որը Ստեփանակերտում, Շուշիից եկած «Գրադի» արկից էր ծանր վիրավորվել, երբ այնտեղ էր գտնվում խաղաղարար առաքելությամբ:

Ցույց տվին, խոսեցրին Երեւանի հիվանդանոցներում բուժվող վիրավոր արցախցի ինքնապաշտպաններին, որոնք, հայության իրավունքն ու ազատությունը պաշտպանելիս խիզախ ու ճարպիկ, հարցերին պատասխանում էին անհամարձակ, նույնիսկ երկչոտ, ասես խոսափողն օձի գլուխ է, որից միշտ հեռու էին մնում: Եւ նրանց հետ էր մի հետաքրքիր մարդ՝ Բյուրականի մանկական առողջարանի գլխավոր բժիշկ, նշանավոր բարերար Հովհաննես Հովհաննիսյանը: Ես նրա մասին լսել ու մանրամասներ էի իմացել անցած ամառ, երբ առողջարան էի գնացել՝ տեսնելու այնտեղ կազդուրվող ստեփանակերտցի երեխաներին եւ եղբորս թոռանը: Այնտեղ էին հարյուրի չափ երեխաներ՝ Ստեփանակերտի իրենց ուսուցիչների ղեկավարությամբ: Եւ սրանք, իրար հերթ չտալով, ինձ պատմում էին առողջարանի ղեկավարի անհուն հոգատարության, գորովի ու նվիրվածության, իր անձնական միջոցներով երեխաներին տված նվերների մասին: Հետո պիտի տեղեկանայի, որ մասնագիտական կարեւոր գրքերի հեղինակ է եւ իր գրքերի հոնորարներն ու ընտանիքի մյուս եկամուտները ծախսել է այդ երեխաների համար նվերներ հայթայթելու նպատակով: Այն օրն էլ Գյուլիստան-Շահումյանում էր գտնվում: Ասացին՝ սնունդ ու այլազան օգնություն է տարել եւ մնացել պաշտպանությանը մասնակցելու:

Եւ հիմա նա՝ վիրավոր ինքնապաշտպանների մեջ միակ լեզվանի համարձակ մարդը, պատմում է, թե ինչպես իրենց կռվող վաշտն Ստեփանակերտից հետիոտն հասել է Ջանհասան, այնտեղ ոչնչացրել թշնամական ռազմակայանը, ապա հասել Շուշի, կռվել նրա փողոցներում, նվաճել Արցախական աշխարհի այդ վերջին ադրբեջանական հենակետը: Եւ այստեղ էլ բժիշկ-զինվորը վիրավորվել է...

– Բուժվելուց հետո ի՞նչ պիտի անեք,– հարցնում է լրագրողը:

Եւ նա՝ տարեց մարդը, որ շատ պիտի հոգնած լիներ հանձն առած ահռելի ճակատագրից, առանց երկար-բարակ մտածելու, վճռաբար ասում է.

– Պիտի գնամ այնտեղ: Ես այնտեղ կլինեմ, ուր իմ ազգի կռիվն է իր ազատագրության համար:

Այսպիսի մարդկանց մասին են ասել, թե ազգը նրանցով է ապրում ու ծաղկում: Նաեւ հաղթանակում:

**Մայիսի 12**. Արցախյան ազատամարտիկների ռազմական հաջողություններից գլուխը կորցրած թուրքի ղեկավարությունը պատեպատ է զարկվում, այս ու այն կողմ է ընկնում, դիմում միջազգային կազմակերպություններին ու հարեւան տերությունների ղեկավարներին, որպեսզի մի ճար արվի, հարցը կարգավորվի, կասեցվեն հնարավոր նոր պարտությունները:

Եւ արդյունքը. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը քննեց Լեռնային Ղարաբաղի հարցը, որոշեց հատուկ պատվիրակություն ուղարկել, որպեսզի այն հանգամանորեն ուսումնասիրի վիճակը, եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացնի ՄԱԿ: Պատվիրակությանը հանձնարարվեց նաեւ պարզել բարդույթի շրջանին մարդասիրական օգնություն հասցնելու հնարավորություններն ու եղանակները:

Այս պատվիրակությունը հրահանգ ունի, որպեսզի տեղում հարցերը քննելիս մշտական կապ պաշտպանի եւ խորհրդակցի Իրանի ու Ռուսաստանի արտգործմինիստրությունների հետ (մոտ չպիտի՞ թողնեն հավակնոտ Թուրքիային):



Գումարված նիստում արձագանք չգտավ Հայաստանի ներկայացուցչի առաջարկը՝ Լեռնային Ղարաբաղ ՄԱԿ-ի խաղաղարար ուժեր ուղարկելու վերաբերյալ: Իսկ Ադրբեջանի ներկայացուցիչ Հասան Հասանովը հայտարարեց, թե հայերը Լեռնային Ղարաբաղից դուրս են քշել բոլոր իր ցեղակիցներին:

Իրանի արտգործնախարար Վայեզին, Բաքվում բանակցություններ վարելուց հետո, Երեւան է եկել, հանդիպումներ ունի ՀՀ ղեկավարության հետ, ղարաբաղյան բարդույթի լուծման ուղիներ է որոնում:

**Մայիսի 13**. Այսօր մեր ինքնապաշտպանական ուժերը վնասազերծել, ապա եւ նվաճել են Շուշիի շրջանի Զարըսլու գյուղը: Ամբողջ օրվա ընթացքում Աղդամից հրթիռակոծվել են Ասկերանի շրջանի արեւելյան մասի գյուղերը՝ մինչեւ Արանզամին, Նախիջեւանիկ, օդանավակայանն ու բուն Ասկերանը:

Նկատվում են նոր զորքի ու զրահատեխնիկայի կուտակումներ Արցախի ամբողջ արեւելյան սահմանի երկարությամբ եւ Լաչինում: Բայց ոչ միայն այստեղ. Բաքվից ու Գանձակից մեծ զորք ու զինամթերք են փոխադրվել Նախիջեւանի կողմերը եւ սպառնալիք են դարձել Արարատի շրջանի սահմանում:

Երեկոյան դեմ, ժամը 16-ից հետո, Լաչինից ռմբակոծել են Գորիսի շրջանը: Մերոնք լռեցրել են կրակակետերը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երեկվա նիստում, Ղարաբաղի վիճակի հանգամանալից քննարկումից հետո, որոշվել էր չորս մարդուց բաղկացած հատուկ փաստահավաք պատվիրակություն ուղարկել Արցախ, որպեսզի այն զեկույց պատրաստի, ներկայացնի ՄԱԿ: Որոշման մեջ ԵԱՀԽ կառույցներին խորհուրդ են տալիս շարունակել Ղարաբաղի հարցի քննարկումն ու կարգավորման ուղիների փնտրտուքը, քանի որ ՄԱԿ-ը շատ է զբաղված եւ ժամանակ չունի նման հարցերի վրա տեւական ժամանակ ծախսելու:

Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելը խոստանում է առաջիկայում Ելցինի հետ Մոսկվայում ունենալիք հանդիպմանը քննության առնել Ղարաբաղի բարդույթի լուծման հնարավորությունը եւ հայտարարում է, որ Թուրքիան ռազմական ուժով չի օգնի Ադրբեջանին, քանի որ հավատում է հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու հնարավորություններին:

Լեւոն Տեր-Պետրոսյանը հեռախոսազրույց է ունեցել Ֆրանսիայի պրեզիդենտ Միտերանի հետ, նրա ուշադրությունն է հրավիրել Ղարաբաղի օրեցօր բարդացող հարցի վրա եւ խնդրել, որպեսզի նա իր ու իր երկրի հեղինակությունն օգտագործի այս չարչրկված հարցը ընդունելի միջազգային կարգ ու կանոնով լուծելու համար:

Ադրբեջանի պրեզիդենտի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովն էլ հոխորտացել է, թե իր հանրապետությունը հնարավորություն ունի ստեղծելու բանակ, որը ոչ միայն ետ կխլի Խոջալուն ու Շուշին, այլեւ կնվաճի ամբողջ Հայաստանը, սակայն ինքը խաղաղության կողմնակից մարդ է եւ ջանում է, որ Ղարաբաղի հարցը լուծվի քաղաքական, դիվանագիտական ճանապարհով, եւ դրա համար էլ դիմել է Ամերիկայի պրեզիդենտ Բուշին, որպեսզի նա Ադրբեջանին օգնի ետ ստանալու իր երկու հարազատ քաղաքները Խոջալուն ու Շուշին, ապա թե ոչ, այնպես կստացվի, թե օրը ցերեկով համաշխարհային հասարակայնության աչքի առաջ հայերը նվաճել են այդ քաղաքները:

Ռուս մտավորականության «Ղարաբաղ» («Ճիչ») կոմիտեն հրապարակել է հայտարարություն, որով դատապարտվում են Ադրբեջանի լրատվության կեղծարարությունը, նրանց հավատացող եւ իրենց հերթին էլ ջուր պղտորող մյուս լրատվական մարմինները, ապա նորից ու նորից պնդում է, որ Ղարաբաղում տեղի ունեցող կռիվները ո՛չ կրոնական, ո՛չ էլ ազգային երանգ ունեն, այլ արցախահայության ազատագրությունն են հետապնդում, եւ աշխարհի բոլոր պետական ու դիվանագիտական շրջանները նրան առնչվելիս, պարտավոր են նախ եւ առաջ Ղարաբաղի հանրապետությունն ընդունել որպես իրավասու, վճռական կողմ:

ջարդել են դեպի Լաչին շարժվող մի զորամաս, գրավել մեկ թնդանոթ, մեկ «Ուրալ» մակնիշի ավտոմեքենա, գնդացիրներ, ավտոմատներ եւ մեծ քանակության զինամթերք:

Տաշքենդում, ԱՊՀ ղեկավարների նոր հանդիպմանը, վեց պետություններ ընդունել են ռազմական համաձայնության ու փոխօգնության պայմանագիր՝ նշելով, որ վեցից յուրաքանչյուրի վրա մեն մի հարձակում դիտվելու է որպես հարձակում ԱՊՀ ընդհանրության ու նրա բոլոր անդամների վրա: Եւ այդ վեցի մեջ է նաեւ Հայաստանը:

**Մայիսի 16-ին** ռազմաճակատում եւ առհասարակ արտակարգ վիճակի տարածքում զգալի ոչինչ տեղի չի ունեցել: Աղդամի ու Ֆիզուլու կողմերից ռմբակոծել են ԼՂՀ սահմանամերձ բնակավայրերը: Նկատվել են նոր զորամիավորումների կուտակումներ Գորիսի սահմաններում (շտապում են ամրացնել Լաչինը), եւ Մախս Մամեդովն էլ շարունակում է բողոքել, թե հայերը Շուշիից ու Գորիսից հրետակոծել են Լաչինը, որպեսզի ոչնչացնեն այն եւ Լեռնային (ինքն ասում է՝ «Լեռնային մաս») Ղարաբաղը միացնեն Հայաստանին:

Արտակարգը ԼՂՀ պաշտոնական շրջանների խոսքի տոնն է. ադրբեջանական իշխանություններին նորից զգուշացնում է, թե Ստեփանակերտի օդանավակայանի ռմբակոծության նոր դեպք լինելու դեպքում հայկական զորամիավորումներն ստիպված կլինեն ոչնչացնել հակառակորդի բոլոր կրակակետերը: Բաքվում կատարված քաղաքական փոփոխության կապակցությամբ էլ սպառնալիքի պես հայտարարում են, թե այս չորս տարիների ընթացքում նման բոլոր փոփոխությունները տեղի են ունեցել Լեռնային Ղարաբաղի իրավիճակի կապակցությամբ եւ այդ իրավիճակը հայության համար առավել անտանելի դարձնելու նպատակով: Եթե այս անգամ եւս կրկնվի, ապա ադրբեջանական կողմն ստիպված կլինի պատասխան տալ իր ամեն մի գործողության համար:

Մինչդեռ Բաքվում հակաարցախյան հիստերիան հասել է իր ծայր աստիճանին. առանց քաշվելու աղաղակում են, թե իրար ուտում են Ղարաբաղում ունեցած ձախողումների համար. Խոջալուի կորուստն ստիպեց Մութալիբովին հեռացնել պրեզիդենտությունից, Շուշվա պարտությունը հարկադրեց կենդանացնել այդ քաղաքական մեռելին ու կողմնակիցներին եւ հիմա էլ ի՜նչ տեսակ ծայրահեղ ու հիմար քայլերի գնում են՝ լոկ մի նպատակով, որպեսզի վերստանան իրենց սանձարձակ իրավունքներն ու բռնատիրական դիրքերը Ղարաբաղում:

Յաղուբ Մամեդովը, երեւի գուշակելով, որ այս խաղերից ոչինչ օգուտ չպիտի ստանա, այսօր հրաժարական տվեց, սակայն խորհրդարանը չընդունեց այն եւ ստիպեց պրեզիդենտի պաշտոնը վարել մինչեւ ընտրությունները, գործադրել բոլոր հնարավոր ու անհնար միջոցները՝ հանրապետության անկախությունն ու սահմանների ամբողջականությունը պահելու, Ղարաբաղում կտրուկ շրջադարձ կատարելու համար: Նա էլ անմիջապես վարչապետ նշանակեց ինչ-որ Ռահիմ Հուսեյնովի (արանո՞վ պիտի Ղարաբաղը վերանվաճի):

Մեր լրատվությունը հաղորդեց, որ երեկ Մարտունիում գցված ուղղաթիռի վարորդը պարաշյուտով իջնելիս է եղել, գետին է հասել սպանված: Ստուգումից պարզվել է, որ կապիտան Ալեքսեյ Շկիրյովն է, Ռուսաստանի խորքից, գրպանում էլ ունեցել է մեծ դրամագլուխ եւ 300 դոլար: Պարզ է, նախապես առատ վարձատրվել է Մարտունիում չարագործություններ անելու համար: Արդյո՞ւնքը...

Այսօր թերթերում հրապարակվեց մի լուր, որի համաձայն ամսիս 13-ին Զարըսլուն հանձնած ասկյարների դեմ թուրք պատժիչ ջոկատը կրակ է բացել եւ 35-ին սպանել («Երկիր», մայիսի 16):

**Մայիսի 18-ի** առավոտյան ԼՂՀ ինքնապաշտպանության զորաջոկատները տիրաբար մտել են Լիսագոր ու Բերդաձոր,-հայտարարեց հեռուստատեսության խոսնակը:

Այսքանը բավական էր, որ ես ամբողջ երեկոյի ընթացքում ուրիշ ոչնչի վրա ուշադրություն չդարձնեմ: Լիսագո՞րն ու Բերդաձո՞րը: Իսկ Ստեփանակերտ-Լաչին ճանապարհին ուրիշ որեւէ կարեւոր աշխարհագրական կետ այլեւս չկա: Ուրեմն, մեր նոր հանրապետությունը լիովին տիրում է իր արեւմտյան ամբողջ տարածքին, իսկ նրանից դեն, Գորիս տանող ճանապարհի վրա միայն Լաչինն է մնում: Վերջին այն կետը, որի տերերը վաղուց թողել-փախել են, իսկ օմօնական ավազակախումբն էլ պիտի փախչի, հենց որ առնի անմիջական հարձակման հոտը:

✧ ✧ ✧

**Մայիսի 18-ը** եւս արցախյան գոյապայքարի պատմության մեջ մտավ իբրեւ պայծառ, երջանիկ, ուղղակի բաղձանքների իրականացման օրերից մեկը: Առավոտյան Արցախի ինքնապաշտպանության ուժերը մտել են Լաչին, եւ դա, ասում են, տեղի է ունեցել շրջանի քրդության սրտաբաց ընդունելության, նաեւ նախապես ցույց տված օժանդակության պայմաններում (Սրանք հանգամանքներ են, որոնց ես անձամբ դժվար եմ հավատում): Մերոնք Լաչին են մտել՝ առանց որեւէ զոհի, որովհետեւ երեկ Լիսագորի ու Բերդաձորի ենթաշրջանի հաղթական արշավը Լաչինում ծվարած թուրք ասպատակիչներին համոզել է, որ իրենց համար կործանարար պիտի լինի ամեն մի դիմադրություն:

Հեռուստատեսությամբ ցույց տվին զորաշարժը՝ զորք ու ռազմական հզոր տեխնիկա, հաղթական, հայրենիքը փրկելու եւ պաշտպանելու համար ամեն խնդիր իրականացնելու պատրաստ մի բանակ, որի հետ էր Զորի Բալայանը՝ այս օրերի արցախյան գոյապայքարի անպաշտոն զորավար-կառավարն ու հերոսը:

Ես պատկերացնում եմ փրկված Արցախը մայր Հայաստանին կապողի նրա ցնծությունը, եւ սիրտս կրկնակի փառավորվում է:

Կեսօրվա դեմ Գորիսից Ստեփանակերտ է հասել Զաբուղ-Լաչին-Բերդաձոր-Լիսագոր-Շուշի ճանապարհն անցած առաջին ավտոշարասյունը, որ քառամյա շրջափակումից հյուծված, արնաքամ Արցախին է տարել բազմատեսակ սնունդ, դեղորայք, փրկության աղաղակ ու ավետիս:

Ասեմ, որ ճողոպրելուց առաջ թուրք ավազակները պայթեցրել են Զաբուղի կամուրջը, իսկ մերոնք պայթյունի ճեղքը ծածկել են՝ այնտեղ դնելով թուրքական տարբերանշանով՝ ավերված մի տանկ, եւ ճանապարհը երթեւեկելի է դարձել:

Խորհրդանշական է, չէ՞:

Իսկ «եղբայրական» Ադրբեջանում ողբ ու կական է: Ռադիոն ես միացնում, խառնամբոխի շախսեյ-վախսեյի վայնասունը ծածկում է Գերագույն խորհրդի նստաշրջանի ձայները: ԳԽ-ի նախագահ եւ պրեզիդենտի պաշտոնակատար Յաղուբ Մամեդովը հրաժարական է տվել: Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ եւ Ղարաբաղի գործերի պատասխանատու Ռաֆիկ Սաբիրովն իր աշխատասենյակում ինքնասպանության փորձ է կատարել, եւ մահամերձ վիճակում փոխադրել են հիվանդանոց: Անհետ կորած Այազ Մութալիբովը հայտնվել է մերձմոսկովյան ինչ-որ հիվանդանոցում. իբր, սրտի ծանր անհանգստություն է տարել:

Բաքվի ռադիոն, հազիվ զսպելով ողբը, հայտնում է, որ Ամիրանլարի ու Կուրոպատկինոյի իրենց զինակետերից փախուստ են տվել շուրջ երկու հարյուր զինվորներ ու սպաներ... Եւ այս պայմաններում Յաղուբ Մամեդովի անփառունակ աթոռին են դրել ԱԺՃ-ի նախագահի տեղակալ ինչ-որ երիտասարդի՝ 35 տ. Իսա Գամբարովին:

Ուրեմն, թուրք ժողովրդի հույսն այս Իսա-Հիսուսն է մնացել, կոմունիստ ու դեմոկրատ իր առաջնորդ ճիվաղներին փորձարկելուց հետո:

Իսկ կառավարության ամբողջ պարտականությունը, Գերագույն խորհրդի ներսում, իր վրա է վերցրել Ազգային խորհուրդ կոչված փոքրամասնությունը, որ այսուհետ պիտի կոչվի մեջլիս:

Մեջլիս եւ Հիսուս... Հետաքրքիր համաստեղություն է:

Նախիջեւանի կողմերում հայ ինքնապաշտպանների եռանդուն ռազմական գործողություններից սարսափած Հեյդար Ալիեւը դիմել է Թուրքիային՝ խնդրելով ռազմական օգնություն: Այնտեղ էլ Թուրղութ Օզալն ու Սուլեյման Դեմիրելն իրար են անցել՝ գտնելով, որ հայ-նախիջեւանյան բարդույթը պետք է լուծել քաղաքական եղանակով, խա-

✧ ✧ ✧

Արցախյան ինքնապաշտպանության երեկվա հաղթական երթը Շուշի-Լաչին-Գորիս, որքան էլ դժկամությամբ ընդունված Հայաստանի ԳԽ-ի Նախագահության եւ կառավարական վերին շրջանակների կողմից, մեծ խանդավառություն է առաջացրել ժողովրդական լայն զանգվածների շրջանում: Դա իր արտահայտությունը գտավ նաեւ ՀՀ արտգործնախարարության հայտարարության մեջ, որն ասում է. «Չորս տարի ծանր շրջափակման ենթարկված Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը Ստեփանակերտ-Շուշի-Լաչին-Գորիս մայրուղով կրկին կապվեց Հայաստանի հետ:

Սովամահության եւ համաճարակի տարածման վտանգի առջեւ կանգնած արցախահայությունը վերջին օրերին զրկվել էր նաեւ օդային կապից: Նման պայմաններում Արցախի ինքնապաշտպանական ուժերը ստիպված եղան առաջ շարժվել, եւ, չհանդիպելով դիմադրության, Լաչին քաղաքը շրջանցելով հասան Գորիս, իրենց հետ բերելով վերջին օրերին պատերազմական գործողությունների ժամանակ վիրավորված մարտիկներին: Հետադարձի ճանապարհին ավտոշարասյունը Ստեփանակերտ կհասցնի մարդասիրական օգնության բեռները»:

✧ ✧ ✧

Իսկ Անկարայում, Շուշիի ու Լաչինի անկման լուրն առնելուն պես, Թուրքիայի նախարարների դահլիճը շտապ նիստ էր գումարել, որպեսզի քննի տեղի ունեցածը, արտահայտի իր վճիռը:

«Վեստիի» հեռուստամեկնաբանը հաղորդեց, որ դահլիճի հրապարակած հայտարարության մեջ Հայաստանի (ո՛չ թե Լեռնային Ղարաբաղի, այլ Հայաստանի) քաղաքականությունը որակվել է որպես ագրեսիա, որի բոլոր հետեւանքների համար, իբր, Հայաստանն ստիպված կլինի պատասխան տալ:

**Մայիսի 20-ի** առավոտյան հաղորդված ռադիոլուրերի մեջ կային հետեւյալ կարեւորները.

Ա) ՄԱԿ-ում Ռուսաստանի ներկայացուցիչ Վորոնցովը հայտարարել է, թե իր կառավարությունը պաշտպանում է Լեռնային Ղարաբաղում տեւական ժամանակով ՄԱԿ-ի խաղաղարար ուժեր պահելու անհրաժեշտությունը:

Բ) Այսօր Աթենքից Ղարաբաղ է մեկնում ՄԱԿ-ի մի պատվիրակություն, որը նպատակ ունի քննել այնտեղ վերջին օրերին տեղի ունեցած դեպքերի հանգամանքները (երեկոյան պիտի հայտնի դառնար, որ այդ պատվիրակությունը նախապես, նույն հարցի շուրջ զրույցներ ունենալու համար, եղել է Ժնեւում ու Հռոմում):

Գ) Մոլդովայում ստեղծված խառնակչության առթիվ Ռուսաստանի փոխպրեզիդենտ Ռուցկոյը պահանջում է Մոլդովան դարձնել ֆեդերատիվ հանրապետություն, որպեսզի հնարավոր լինի Մերձդնեստրյան երկրամասի հանրապետության անկախությունը, ապա թե ոչ, Մոլդովան էլ կդառնա մի նոր Հարավսլավիա:

Այս ինքնին չի՞ խոսում այն մասին, թե Ռուսաստանն ինչ դիրք պիտի բռնի նման ուրիշ դեպքերում, ասենք, Հարավային Օսեթիայի, Լեռնային Ղարաբաղի եւ այլ այսպիսի հարցեր քննելիս:

Ցերեկվա ռադիոհաղորդումներում շատ էր հոլովվում «Հայաստանի ագրեսիան Նախիջեւանի ինքնավար հանրապետության դեմ» մեղքը, դա կանխելու համար առաջարկվում էին տարբեր միջոցներ, որոնցից կարեւորագույնը՝ ռազմական միջամտությունը: Ֆրանս-պրես գործակալությունը, օրինակ, կրկնեց Թուրքիայի պաշտոնական հեղինակավոր «Հուրրիեթ» թերթի տպագրած հարցազրույցը պրեզիդենտ Թուրգութ Օզալի հետ, որը խոստովանել է, թե պատրաստ է Նախիջեւան զորք մտցնել Հայաստանին զսպելու համար: Այս լուրը հաղորդող «Ռուսական ձայն» ռադիոյի մեկնաբանը հիշում էր, որ աշխարհին են հայտնի Թուրքիայի շահախնդրությունը Նախիջեւանի հարցում, ինչպես



նաեւ տվյալ պահին ադրբեջանական կողմի տարածած լուրի միտումնավորությունը (չէ՞ որ արդեն հաղորդվել է Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունն այն մասին, որ հայ-նախիջեւանյան սահմանը չի անցել եւ ոչ մի հայ զինվոր): Միաժամանակ նա զգուշացնում էր, թե Թուրքիային ձեռնտու չէ նման միջամտությունը, որովհետեւ առանց այդ էլ նրա վրա ծանրացած է արեւմտահայության եղեռնը եւ տեղահանությունը, որոնք պինդ նստած են քաղաքակիրթ մարդկության հիշողության մեջ:

Այսքանը ճամարտակության մարզից: Իսկ Արցախի արեւելյան սահմանային գյուղերից վերստին գալիս են տագնապոտ լուրեր: 'Ֆիզուլիից, օրինակ, ռմբակոծել են Ճարտարը, եւ կան երկու զոհ ու հինգ վիրավորներ: Մարտունու եւ Ասկերանի, Մարտակերտի ու Շահումյանի ռմբակոծությունները շարունակվում են:'

Հարյուր մեքենաներով բեռնատար շարասյունը հասել է Ստեփանակերտ, եւ միայն վառ երեւակայություն է պետք այնտեղի հայության ցնծությունը պատկերացնելու համար:

Մինսկում նորից հավաքվել են ԵԱՀԽ ներկայացուցիչները, որոնք ունեն նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հանձնարարականները Ղարաբաղի հարցի վերաբերյալ, եւ բոլոր խոսքերը, առաջարկները, հանձնառությունները տանում են դեպի մի հաստատ վճիռ՝ բարդույթի տարածքում իրենք որոշակի գործ կկատարեն միայն այնտեղ զինադադար ու կայուն խաղաղություն հաստատվելուց հետո:

Ադրբեջանի ԱԺՃ-ի նախագահ Էլչիբեյը, երեւի համոզված, որ պրեզիդենտական ընտրություններում իր հաղթանակն ապահովված է, աջ ու ձախ անում է բարձրագոչ հայտարարություններ, որոնցից մեկն էլ այս է. Ադրբեջանը չի մտնելու ԱՊՀ, ոչ մի կապ չի ունենալու այդ համակարգի հետ եւ այսօրվանից իսկ արհամարհում է Մութալիբովի ստորագրած ամեն մի պարտավորություն այդ համակարգի ոլորտում:

Ի՞նչ կա որ, սա մեր սրտով է, մեր շահերի համար ձեռնտու, եւ չհասկացող, չընդունող հայը հիմարի մեկը պիտի լինի:

ԼՂՀ ԳԽ-ի Նախագահությունը, հավանաբար, տեղյակ է Մինսկում գումարվելիք խորհրդակցության նախապատրաստության ինչ-ինչ մանրամասների եւ դժգոհ հանրապետության շահերի հնարավոր անտեսումից, արել է հայտարարություն, որով պահանջում է ԼՂՀ վիճակի եւ իրավունքների հանդեպ ցուցաբերել հարգանք ու օրինապահություն, հանրապետությանը վերաբերող հարցերը քննել եւ լուծել նրա՛ իսկ իրավասու մասնակցությամբ:

Օրվա կարեւորագույն դեպքերից է հայ, ԱՊՀ տերությունների եւ արտասահմանյան թղթակիցների համար Լ. Տեր-Պետրոսյանի տված հայտարարությունը, որն աննախապաշար ու անկողմնակալ մարդկանց աչքերն է բացում հայ-նախիջեւանյան բախումների եւ դրանց կապակցությամբ հրահրվող թուրքական ստոր քաղաքականության վրա:

Ըստ էության ոչ ոք այդ հայտարարության եւ արվելիք համապատասխան հետեւությունների կարիքն այնքան չունի, որքան ինքը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ համախոհ ժամանակավրեպ թրքասերները: Թող տեսնեն եւ հասկանան, թե որքա՜ն վստահելի հարեւան է թուրքը եւ ի՛նչ տեսակ հույսեր ու ծրագրեր կարելի է կապել նրա քաղաքակիրթ առօրյայի հետ:

**Մայիսի 21-ը** մեզ համար բավական տագնապալից օր էր: Ասում են՝ Թուրքիայի պառլամենտն ստիպում է, որ կառավարությունը բանակ շարժի Հայաստանի վրա եւ լավ դաս տա այդ ագրեսորին: «Ջումհուրիեթ» պաշտոնական թերթը հրապարակել է իր թղթակցի զրույցը երկրի վարչապետ Սուլեյման Դեմիրելի հետ, որը Հայաստանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղում ու Նախիջեւանում համարել է բռնազավթչական (ագրեսիվ) եւ հայտնել վճռաբար դիմակայելու որոշում: Եվրոպառլամենտում նույն հայտարարությունն է արել Թուրքիայի արտգործմինիստր Չեթինը՝ իհարկե, արտահայտելով իր կառավարության տեսակետը:

Տեղյակ աղբյուրներն էլ հաղորդում են, որ Թուրքիայի ռազմական ուժերը խոշոր տեղաշարժեր են կատարում, եւ տասհազարանոց մի զորամաս շտապ եկել է Նախիջեւանի մոտ, շարվել սահմանի երկարությամբ:

Ցավալիորեն նման լուրեր են գալիս նաեւ Իրանից, որի արտգործնախարարը դատապարտել է Լեռնային Ղարաբաղում վերջերս տեղի ունեցած դեպքերն ու «Հայաստանի հարձակումը Նախիջեւանի ինքնավար հանրապետության վրա» եւ պահանջել, որ Ղարաբաղն անմիջապես վերադարձվի այն վիճակին, որ կար Թեհրանում տեղի ունեցած եռակողմ բանակցությունների նախօրյակին։

Ադրբեջանում բորբոքված հակահայկական նոր վայնասունը դեպի աշխարհի չորս ծագերն է հորդում Մախս Մամեդովի, Բալախանովայի, Յունուսովայի եւ այլոց բերաններով։

Վերակենդանացել, ասես է աշխուժացել Հեյդար Ալիեւը, որ մոսկովյան հեռուստալրագրողին փորձում էր համոզել, թե Հայաստանը՝ ադրբեջանական հողերի վրա անզուսպ ախորժակ ունեցող այդ ագրեսորը, Ղարաբաղի լիակատար նվաճումով էլ չբավարարված, սուր է եկել խաղաղ Նախիջեւանի հանրապետության վրա, եւ ինքն ստիպված էր խնդրել Թուրքիայի ռազմական օգնությունը։ «Չէ՞ որ Թուրքիան 1921 թ. Կարսի թուրք-ռուսական պայմանագրի տված իրավունքով ոչ միայն երաշխիք կողմ է, այլեւ ունի ուղղակի պարտավորություն Նախիջեւանի պաշտպանության համար,-լպրծուն իր ասելիքն այսպես է արտահայտում Նախիջեւանի նոր խալիֆը։-Եւ, վերջապես, Թուրքիայի պառլամենտը, անսալով մեր արդար բողոքին ու պահանջին, որոշեց մի կողմ թողնել երկչոտությունը միջազգային ատյանների առաջ, փրկչական օգնություն հասցնել ազգակից ժողովրդին, որը կանգնած է մեծ աղետի առաջ»։

Բայց մի՞թե Հայաստանի ու Արցախի վրա կախված է համաթուրքական հարձակման նոր աղետը։

Ռուս մտավորականության «Ղարաբաղ»-«Ճիչ» կոմիտեն տագնապի դիմում է հղել միջազգային կազմակերպություններին ու մեծ տերությունների ղեկավարներին, մասնավորապես ԵԱՀԽ-ին։ Իրադրությունը ճիշտ ըմբռնելու եւ թուրքական աղետի դեմ առաջավոր մարդկությանը ոտքի կանգնեցնելու տեսակետից այն կարեւորագույն փաստաթուղթ է։ Այդ պատճառով էլ հարկ եմ համարում այստեղ մեջբերել ամբողջությամբ։

«Մոսկվա, մայիսի 21.

Զանգվածային լրատվության միջոցներում հայտնվել է Եվրոպական համագործակցության հայտարարությունը, որի մեջ նա Հայաստանին մեղադրում է Ադրբեջանի դեմ գործած ագրեսիայի մեջ։

Մենք բազմիցս համաշխարհային հասարակայնության ուշադրությունն ենք հրավիրել Լեռնային Ղարաբաղի հայության բացահայտ ոչնչացման վրա, որ Ադրբեջանն է կատարում չորս երկար տարիների ընթացքում։ Սակայն մարդկության ու մարդկայնության դեմ իրականացվող այդ հանցագործությունը Եվրոպական համագործակցության վրա ոչ մի ազդեցություն չգործեց։ Ղարաբաղի բնակչությանն ու ինքնապաշտպանական ուժերին մնում է ջարդվել ռմբակոծություններից, մեռնել քաղցից, կամ էլ սեփական ուժերով պատռել շրջափակումը։

Չկարողանալով ճնշել Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժումը՝ Ադրբեջանը հիմա էլ նախաձեռնել է լայնահուն ռազմական գործողություններ Հայաստանի, Ադրբեջանի ու Թուրքիայի սահմանների հատման կետում։ Միաժամանակ Ադրբեջանի ու Թուրքիայի զանգվածային լրատվական միջոցները, այսպես կոչված, հայկական ագրեսիայի մասին տարածել են կեղծ տեղեկատվություն, որի նպատակն է արդարացնել Թուրքիայի ռազմական ուղղակի միջամտությունը։

Դա վտանգավոր է, քանի որ կարող է դառնալ երրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը։

Եվրոպական համագործակցությանն ու ԵԱՀԽ-ի Ավագ պաշտոնական անձանց կոմիտեին խնդրում ենք բարդույթի շրջան գործուղել սեփական դիտորդների՝ Եվրոպական համագործակցության համար ստեղծելով հնարավորություն՝ ստանալու ճշմարիտ պատկերացում Հայաստանի ու Նախիջեւանի սահմանում տեղի ունեցող իրական դեպքերի մասին։



**Ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի համանախագահներ Ա. Նույկին, Վ. Օսկոցկի»։**

Եւ հենց այս պահին էր, որ Երեւան ժամանեց Ռուսաստանի կառավարական-դիվանագիտական պատվիրակությունը՝ պետական քարտուղար Գենադի Բուրբուլիսի գլխավորությամբ։

Պատվիրակության կազմում էին Ռուսաստանի պաշտպանության նոր մինիստր Գրաչովը, արտգործմինիստրի առաջին տեղակալ Շելով-Կովեդյաեւը եւ ուրիշ նշանավոր մարդիկ, որոնք առաջին իսկ հանդիպումներին ցույց տվին, թե այսօր իրենց Երեւան հասնելը պայմանավորված է Հայաստանի վիճակով եւ նրա վաղվա համար Ռուսաստանի եղբայրական մտահոգությամբ։

Հանդիպումները, բանակցությունները, տնտեսական ու պաշտպանական համաձայնագրերի ընդունումը տեղի ունեցան այնպիսի արագությամբ, ասես դրա համար բազմաժամանակյա նախապատրաստություն էր եղել, եւ հիմա մնում էր հաստատել եղածը։

Մեր թղթակիցը, առանց դիվանագիտական կամ գոնե հասարակ վարվեցողական նրբանկատության, Գ. Բուրբուլիսին ուղղեց այս մերկ հարցը.

- Ասացե՛ք, խնդրեմ, դուք Հայաստանին օգնելու նպատակո՞վ եք ժամանել Երեւան։

- Անպայմա՛ն,-բացարտորեն ասաց Ռուսաստանի ներկայացուցիչը եւ ավելացրեց.-Իհարկե, մենք այսպիսի պարտավորություններ վաղուց ունենք։ Տաշքենդում էլ դրանք նորից նոր հաստատեցինք, եւ հիմա թող ոչ ոք չկասկածի, որ Հայաստանի պաշտպանությունը ԱՊՀ միացյալ ուժերի սրբազան պարտքն է։

Մի ուրիշ լրագրող էլ տվեց ամենամերկ հարցը.

- Ուրեմն, Թուրքիայի ռազմական միջամտությունը չի՞ լինի։

- Դա չի՛ կարող լինել,-վճռաբար հայտարարեց Բուրբուլիսը եւ շտապեց հասնել պատվիրակությանը, որ Մոսկվա մեկնելուց առաջ, պիտի այցելեր Էջմիածին, սիրալիր հանդիպում ունենալու Ամենայն Հայոց վեհափառ հայրապետ Վազգեն Ա-ի հետ։

**Մայիսի 22-ին.** Վերջին երեք օրվա ընթացքում (բացված միջանցքով) Արցախ է հասել վիթխարի քանակության սննդամթերք (միայն ալյուրը՝ 350 տոննա), գյուղատնտեսական այլ մթերքներ, վառելիք, դեղորայք։ Տուն են դառնում աստանդական արցախցիները։ Լեռնաստանին ծառայելու են շտապում ուրիշ շատերը։ Մի խոսքով՝ Արցախը վերակենդանացնելու եւ ոտքի կանգնեցնելու համար արվում է ամեն ինչ։

Այսօր Զորիի մոտ էի, եւ նա պատմեց, որ նվաճված ադրբեջանական բնակավայրերից վիթխարի հարստություն է ավարվել, սննդեղեն ու շինանյութ, ռազմամթերք ու բազմատեսակ տեխնիկա։ Միայն Խոջալվից այնքան շինանյութ է գրավվել, որ կբավականացնի Ստեփանակերտի վերականգնմանը։ Միայն թե խաղաղություն լինի, հնարավորություն տրվի, որ մեր կառուցող, ստեղծող ձեռքը խաղաղ գործով զբաղվի։

Մենք մտահոգված ենք պաշտպանության, նվաճածն անաղարտ պահելու, արյամբ ձեռք բերած ազատությունը ոչ մի գնով այլեւս չզիջելու գործով, ծրագրերով ու նոր վճիռներ հանելով։ Իսկ օտարները շարունակում են սին խոստումներով, ձանձրալի ժողովների անորոշ որոշումներով մեզ կերակրել, օրինակ, չորսօրյա քննարկումից հետո անգամ Հելսինկիում ԵԱՀԽ Ավագների խորհուրդը Ղարաբաղի բարդույթի առթիվ ոչ մի եզրակացության չհանգեց, որովհետեւ ներկայացված նախագծի առթիվ իր բեկանող կարծիքն է հայտնել Հայաստանի պատվիրակությունը։ Ի՞նչ կարելի էր սպասել մի թղթից, որն իրերի այսօրվա դասավորության պայմաններում անգամ Ղարաբաղի բարդույթը համարում է Ադրբեջանի ու Հայաստանի միջեւ գոյացած խնդիր, ապա եւ պնդում է, թե խոսք չի կարող լինել Ադրբեջանի ամբողջականությունը խախտելու մասին, ընդ որում՝ ամբողջականության մեջ տեղադրում են Արցախը։

Բայց եւ այնպես շարունակվում է միջազգային կազմակերպությունների կարծեցյալ մարդասիրական գործունեությունը։ Երեւան է ժամանել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մի նոր պատվիրակություն՝ ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովի նախագահ Ֆրան-

սիսկո Վենդելի գլխավորությամբ: Հայաստանի ղեկավարները այսօր բախտ են ունեցել ընդունելու նրան, լսելու նրա նոր խոստումները այն մասին, որ ամեն ջանք գործադրվելու է իրադրությունների մասին ամենաստույգ ու ամենաստարիչ տվյալներ հասցնելու ՄԱԿ՝ համաշխարհային այդ ամենահեղինակավոր կազմակերպությանը, նկատի են առնվելու ոչ միայն երկու կողմերի, այլեւ շահագրգիռ բոլոր տերությունների, մանավանդ Իրանի կարծիքները ու առաջարկությունները (Իսկ Իրանը հիմա գտնում է, որ պետք է վերադառնալ Թեհրանի խորհրդակցությունից առաջ գոյություն ունեցած վիճակին, այսինքն՝ ազատագրված Արցախը նետել Ադրբեջանի ավազակախմբերի առաջ):

Ադրբեջանը Բաքվում, Մոսկվայում, արտասահմաններում կաշվից դուրս է գալիս ապացուցելու հայերի զավթողական քաղաքականությունը, իբր նա գերակշիռ ռազմուժով հաղթել է Ղարաբաղում, հիմա էլ հաղթում է Նախիջեւանում: Նախիջեւանը հրահրվել ու մեջտեղ է քաշվել Թուրքիայի ռազմական միջամտությունը տրամաբանական հունի մեջ դնելու համար (չէ՞ որ Կարսի պայմանագիրը գոյություն ունի, այսօր էլ՝ Թուրքիայի շահագրգռությունն այս երկրամասի ճակատագրի հարցում): Սակայն Ռուսաստանի պատվիրակության երեկվա երեւանյան գործունեությունն ու արված հայտարարությունները հօդս ցնդեցրին թուրքական միջամտության հեռանկարը, եւ հիմա Ադրբեջանի ղեկավար ու ղեկավարող ռիմակները փորձում են Ռուսաստանո՞ւմ կարգավորել իրենց հարցերը: Երեւի սպառնալիքներ են տվել լրատվության մարմինների ղեկավարներին, այսօր ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդումներում իրենց սերն ու հերյուրանքներն են հնչում: Մոսկվայում իրենց ներկայացուցչական մամուլի ասուլիս կոչված բամբասարանում այնքան կրծեցին Հայաստանի ու Արցախի ջիլերը, որ անտեղյակ ունկնդիրը կարող էր մտածել, թե այս հայերը ցնդած ավազակներ են, անհեռատես բախտախնդիրներ, որ դատարկ գլուխները դրել են միջազգային մեծ ճանապարհի վրա եւ վաղը-մյուս օրը կորցնելու են ամեն ինչ:

Իսկ ադրբեջանցինե՞րը... Արդարության մարտիկնե՞ր, նահատակվող սրբե՞ր, ի՞նչ զրկանքներ են կրել այդ հայ չարագործների երեսից: Հայերը Ղարաբաղը նվաճել են, այնտեղից դուրս վռնդել բնիկ տերերին՝ ադրբեջանցիներին եւ, դրանով չգոհացած, հիմա էլ Նախիջեւանն են նվաճում: Ռուսաստանն ինչպե՞ս է կանգնում նման բռնազավթիչների կողքին ու թիկունքում,-հարց է տալիս ԱԺՃ-ի նախագահի տեղակալ Թամերլան Կարաեւը:-Այն Ռուսաստանը, որի ազնիվ բարեկամները մենք ենք, ադրբեջանցինե՞րս, եւ վաղն էլ, հնարավոր է, նրա հետ կլինենք մեկ համագործակցության (ԱՊՀ) մեջ: Տեսնո՞ւմ եք, ո՞նց են փոխվում սկզբունքները, երեկ Էլչիբեյը պնդում էր, թե Ադրբեջանը երբեք էլ չի մտնի ԱՊՀ, այսօր նրա տեղակալ Կարաեւը խոստանում է ԱՊՀ տերություններին ու Ռուսաստանին պատվավոր զիջում անել՝ հնարավոր է համարում Ադրբեջանի մասնակցությունն այդ համագործակցությանը:

Լրագրողներից մեկը հարց է տալիս:

- Հնարավո՞ր է, որ դուք բանակցություններ նստեք Լեռնային Ղարաբաղի ղեկավարության հետ:

Եւ Ադրբեջանի ներկայացուցիչը խայթվածի պես վեր է թռչում տեղից.

- Ո՛չ մի դեպքում,-ասում է,-ամենից առաջ այն պատճառով, որ այդպիսի ղեկավարություն գոյություն չունի:

Հարց տվողն այնքան խելք չուներ, որ հարցներ նաեւ, թե բա ինչպե՞ս եղավ, որ այդ անղեկավար, անտեր երկրամասում դուք այնքան հիմնավոր ջարդ կերաք, գլուխներդ կորցրած ճողոպրեցիք, որ հիմա չեք էլ կարողանում հանգիստ նստել եւ ձեր կորցրած գլուխը ողբալ:

Ասուլիսում հայտարարություն եղավ նաեւ այն մասին, որ ինքնասպանության փորձ կատարած փոխմինիստր եւ Ղարաբաղի գործերի պատասխանատու Սադըխովը խոստովանել է, թե Պրիմակովն իրեն հանձնարարություն տված է եղել Մութալիբովի վերականգնման համար միջոցառումներ իրականացնել:



✧ ✧ ✧

Իմացանք նաեւ, որ **ամսի 25-ին** Մոսկվա է ժամանելու Թուրքիայի վարչապետ Դեմիրելը, որ, ամենայն հավանականությամբ, պիտի փորձի Ռուսաստանի ձեռքով ադրբեջանական տիրապետություն վերահաստատել Արցախում:

Տեսնենք՝ այս անգամ իրեն ինչպե՛ս կպահի հայկական հարցում միշտ էլ իր երկերեսանությունը ցուցադրած ռուս ղեկավարությունը:

**Մայիսի 23-ը** նոր ոչինչ չբերեց, բոլոր ճակատներում, ասում են, համեմատական անդորր է, չնայած ռմբակոծություններ են եղել Հադրութից մինչեւ Շահումյանի շրջանի Կարաչինարն ընկած ամբողջ տարածության շատ բնակավայրերի վրա, իսկ Ասկերանն ընդունել է «Գրադի» ուղիղ 60 արկ:

Ֆ. Վենդելի պատվիրակությունը, որ կոչվում է փաստահավաք, հանդիպումներ է ունենում Հայաստանի ղեկավարների հետ: Մեր վարչապետը նրան բացատրում է, թե արցախցիները Շուշին գրավել են, որովհետեւ թուրքերն այնտեղից չդադարող ռմբակոծություններով ավերում էին հայոց սեփական-պատմական մարզը, նրա մայրաքաղաք Ստեփանակերտը, կոտորում հայ խաղաղ բնակչությանը: Իսկ Ստեփանակերտից-Լաչին-Գորիս ճանապարհ-միջանցքն էլ բացել են, որովհետեւ ուրիշ ճար չունեին, չորս երկար ու ձիգ տարիների համատարած շրջափակումից հազիվ մի նեղ ելք էին գտել՝ օդային ճանապարհ էին ստեղծել, կապվել Երեւանի հետ, թուրքի աչքին դա էլ շատ մեծ ազատություն էր երեւում, ռմբակոծեցին, ավերեցին օդանավակայանը, ՅԱԿ-30 օդանավը վառեցին:

Փաստահավաքը լսում է, լսում, ապա թե իրենք կարծիք հայտնելու իրավունք չունեն եւ միայն «մաքուր փաստեր» պիտի տանեն ՄԱԿ:

Բաքվում բռնկված գլուխջարդոցը մի հետաքրքիր ալիք էլ ասպարեզ նետեց. ձերբակալել են Բորիս Կեւորկովին՝ իբր, մարզկոմի քարտուղար եղած ժամանակ տեսակ-տեսակ հետախուզական խմբերի հետ կապ ունեցած լինելու համար, ինչպես նաեւ Պոլյանիչկոյի կողմնակիցներից 18 հոգու (իսկ Պոլյանիչկոյի՞ն երբ են բռնելու):

Թուրք դիվանագետների մի մեծ խումբ է ժամանել Նախիջեւան, ծանոթանում է Սադարակի իրադրությանը, նյութեր է պատրաստում Դեմիրելի մոսկովյան հանդիպումների համար: Նրանց ցույց են տալիս հայերի ռմբակոծությունների արդյունքները, իբր, քիմիական զենքից այլանդակված ադրբեջանցի վիրավորներին են ցուցադրում, Հեյդար Ալիեւի մռմռուն բողոքն այն մասին, որ երկու օր առաջ Լեւոն Տեր-Պետրոսյանը կարգադրել էր դադարեցնել կրակը, բայց հայերը դեռ կրակում են ու ավերում...

Իսկ «Ազատություն» ռադիոկայանի թղթակից Լ. Բալախանովան արդեն երրորդ օրն է պնդում, թե Ռուսաստանն ուզում էր նորից կանգնեցնել Մութալիբովին, նրա միջոցով իրականացնել իր գաղութակալական քաղաքականությունը, չհաջողվեց, այդ պատճառով էլ, ահա՛, իր բանակներն է տրամադրել հայերին, որպեսզի նրանք վերջնականապես նվաճեն Ղարաբաղը, Լաչինով այն միացնեն Հայաստանին, ապա անցնեն Նախիջեւանի հարցի լուծմանը:

**Մայիսի 24-ի** կիրակին, իբր, համեմատաբար հանգիստ օր էր հայոց երկու հանրապետությունների համար: Այդպես է ասում լրատվությունը, երբ Աղդամից «Գրադի» 150 արկ է ընկել Ասկերանում, եւ պատերազմի ողջ ընթացքում առաջին անգամ թուրքերը «երկիր-երկինք» հրթիռներ են ուղարկել դեպի Շահումյան ու Կարաչինար:

Սակայն հաղորդեցին նաեւ, որ Լաչինն ու շրջակա գյուղերը լքած քրդերն իրենց տներն են վերադառնում եւ բավական բարյացակամ են «նվաճողների» հանդեպ: Սրա կողքին հետաքրքիր է նաեւ, որ հայաստանյան նրանց արյունակից (եզդի) մտավորական մի խումբ հենց այսօր քարոզչական աշխատանքի է գնացել Լաչին ու Քյալբաջար: Այս խումբը վաղուց էր նախապատրաստվում, եւ երկու օր առաջ էլ ղեկավարին՝ ԳՄ եզդիական բաժանմունքի վարիչին տեսա Ջորիի մոտ, եկել էր հանձնարարություններ ստանալու:

Մոսկովյան սովորական հաղորդումներից անհնար էր մեր օգտին որեւէ բան քաղել: Ամենուր տիրական էր այն տրամադրությունը, թե քաղաքական ու դիվանագիտական շրջանակներում Շուշիի գրավումն ու Ստեփանակերտ-Լաչին-Գորիս միջանցքի բացումը գոյացրել է տհաճ նստվածք, որը կարող է ցավագնորեն անդրադառնալ հարցի կարգավորման վրա:

Բայց մի՞թե «քաղաքականն» ու «դիվանագիտականն» այստեղ համազոր կամ նույնիմաստ են «անջրամաբանակի» հետ: Շրջափակումից, սովից, քաղցից, պատերազմական ամեն տեսակ տառապանքներից ճաք ու պատառ դարձող Ստեփանակերտի եւ հին Վարանդայի բնակավայրերի հայությունը չորս տարի շարունակ, վերջին երկու պատերազմական տարում հատկապես այդ քաղաքական ու դիվանագիտական շրջանակներից անվերջ-անդադար սպասում էր նրանց խոստացած օգնությունը: Դրա համար նախ եւ առաջ անհրաժեշտ էր լռեցնել Շուշիում տեղադրված թուրքի թնդանոթները, զանազան հրթիռարձակիչները եւ մանավանդ ահարկու «Գրադ» կայանքները: Խոստում չկա՞ր այդպիսի օգնության: Կար եւ այն էլ ամեն օր, ամեն տեղից, օգնության խոստում բարբառող ամեն բերանից... Սակայն այդպես էլ խոստացած օգնությունը չէր հասնում, իսկ Շուշից հայության դեմ ռումբեր, հրթիռներ եւ մահվան ուրիշ «խաղալիքներ» ուղարկող թուրքերը դարձել էին ավելի ու ավելի կատաղի, ավելի ու ավելի հնարամիտ: Ստեփանակերտին խմելու ջուր հասցնող խողովակները քանի՜-քանի անգամ են պայթեցրել, թույնով ու ամեն տեսակ աղտեղություններով լցրել...

Երբ մարդկանց հույսը վերջնականապես կտրվել էր օգնություն խոստացող, ադրբեջանցի չարագործի ձեռքը բռնելու պարտականություն ունեցող, բայց այդ պարտականությունը չկատարող շրջաններից, նաեւ այդ քաղաքական ու դիվանագիտական սուտ պոռոտախոսների ճամարտակություններից, երբ իրականում դանակը ոսկորին էր հասել, բարձրացավ պայքարի մարտիկը եւ ինքն իր ձեռքով լուծեց այս նոր գոյության հանգույցը: Եւ մի՞թե սա էլ խոտելի քայլ է, այնպիսի մի գործողություն, որի դեմ պետք է շուռ գար մարդկային բերանը՝ ասելու աննպաստ որեւէ խոսք:

Իսկ Ստեփանակերտ-Լաչին-Գորիս «մարդասիրական», թե՞ պարզապես փրկարարական միջանցքի բացո՞ւմը: Հիշեցե՛ք, թե քանի՜-քանի քաղաքական ու դիվանագիտական գործիչներ են այդ միջանցքը խոստացել ավելի քան չորս տարվա շրջափակման մեջ կործանվող ու մեռնող արցախահայությանը: Խոստացել ու մոռացել, խոստացել եւ հաճախ էլ կատարել վիճակն առավել ծանրացնող որեւէ ստորություն:

Ֆրանսիայի մարդասիրական հարաբերությունների գծով պետական քարտուղա՞րը չէր, որ կուրծք էր ծեծում, ամբողջ աշխարհին ի լուր հայտարարում իր պարտականությունը մարդասիրական միջանցք բացելու հենց նույն այդ Ստեփանակերտ-Լաչին-Գորիս կամ Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհով: Միջա՛նցք բացելու, որպեսզի ինքն իսկ Արցախի սովամահ եղող ժողովրդին հասցնի իր հավաքած հարյուրավոր տոննաներ սնունդն ու դեղորայքը եւ իր բացած, բանուկ դարձրած ճանապարհով ուրիշ մարդիկ, բարի մարդիկ, մարդ մարդիկ եւս հասցնեն նման փրկարար օգնություն... Իսկ իրականում ի՞նչ արեց այս բացահայտ ու բացբերան ֆրանսիացին: Հավաքած ամբողջ հարստությունը Բաքվով տարավ Աղդամ, կեսը նվիրեց արցախահայությանը խեղդամահ անող թուրքին, մյուս կեսն էլ մեծահոգաբար «կողոպուտի» տվեց նույն թուրքի օմօնականներին... երեւի համոզված լինելով, որ սրանք այդ ծանր ու մեծ պարգեւը Ստեփանակերտ չեն տանի, բայց Ստեփանակերտցիներին կոտորող շուշեցիներին անպայման կհասցնեն:

Եւ այսպիսի բարերարություններից, խոստումներից ու օգնություններից կշտացած արցախցին էլ ի՞նչ պիտի աներ, եթե իր զենքով չբացեր իր փրկության ճանապարհը, իր սեփական զորությամբ չջարդեր այդ ճանապարհի արգելքները:

Խոստումների հեղինակները գոնե շնորհակա՞լ պիտի լինեն, որ արցախցին ինքն է իրականացրել նրանց խոստացածը...

Այս մտորումների հետ ես հաճախ եմ հիշում շատ կարեւոր մի զրույց, որ տեղի է ու-



նեցել չորս տարի առաջ, Անդրեյ Սախարովի եւ Ադրբեջանի ղեկավար Վեզիրովի միջեւ: Երկրաշարժից աղետյալ Հայաստանը տեսնելուց հետո սրտաքանդ Սախարովը երեւի այդ մարդանման հրեշին ուզում էր մարդացնել, ասաց՝ այն կործանված Հայաստանին, հազարերորդ անգամ ջարդված հայ ժողովրդին հիմա ինչո՞վ կարելի է սփոփել, երեւի միայն մի բանով՝ եթե Ղարաբաղը տաք եւ դրանով էլ կատարեք ձեր մարդկային-մարդասիրական պարտքը: Վեզիրովը հեգնանքով լսեց մեծ մարդասերի այս պատվիրանը եւ, երեւի մտածելով, թե այդ Հայաստան ու հայ ժողովուրդ կոչվածներից լոկ անուններ են մնացել, նետեց իր քինոտ խոսքը. «Հողը չե՜ն տալիս, գիտնակա՜ն: Հողը նվաճում են եւ այն էլ արյունո՜վ»:

Հետաքրքիր է, հիմա ո՞ւր է այդ Վեզիրովը, ի՞նչ է մտածում, երբ հողը նվաճվել է, եւ, ամենակարեւորը, նվաճողը շատ ավելի պակաս արյուն է կորցրել, քան տվողը, որ ինքն էր ու իր ցեղակիցները: Շատ կուզենայի հանդիպեինք, իր խոսքն իր ականջը կոխեի: Հողի տակն է անցել նաեւ Վեզիրովի արժանավոր հաջորդը՝ Այազ Մութալիբովը: Վերջերս թղթակիցները նրան հարց էին տվել.

- Արդեն քանի տարի այդ Ղարաբաղում արյուն է թափվում, մի՞թե բավական չեք համարում եւ չեք մտածում, որ այնտեղի հայերն ունեն մարդկային ու քաղաքացիական իրավունքներ:

Եւ նա, առանց մի վայրկյան իսկ մտածելու, հայտարարեց.

- Ղարաբաղը մերն է եղել, մերն է եւ մերն էլ կմնա, դրա համար ինչքան էլ արյուն պահանջվի:

Արյուն, իհարկե, շատ պահանջվեց: Սակայն մութալիբովյան ավազակախմբերը ոչ թե տվին, այլ մազապուրծ փախան Մալիբեյլվից ու Խոջալվից, Շուշիից ու Լաչինից... Եւ հիմա Ադրբեջանի կառավարությունը հրամանը հրամանի ետեւից է հրապարակում՝ դասալիքներին տեղն ու տեղը գնդակահարելու մասին:

Կգնդակահարեն, թե որ կարողանան բռնել:

Նրանք ե՞րբ պիտի հասկանան, որ գաղտնիքն ուրիշ տեղ է. մարդ պիտի իր հողը պաշտպանի, իսկ ուրիշինի համար ոչ ոք արյուն ու կյանք չի տալիս:

**Մայիսի 25-ի** կարեւորագույն իրողությունը Թուրքիայի վարչապետի հանդիպումն էր Ռուսաստանի ղեկավարության հետ (բավական է հիշել, որ նրա հետ են նաեւ արտգործնախարար Հիքմեթ Չեթինը եւ 150 այլ պաշտոնյաներ): Հայտնի է, որ շարժառիթը Ղարաբաղի ու Նախիջեւանի հարցն էր ի սկզբանե: Արտասահմանյան ռադիոյի մեկնաբաններն էլ քանիցս հիշեցին, որ Սուլեյման Դեմիրելը Ռուսաստանից պահանջում է խստագույն միջոցներ գործադրել Հայաստանի հանդեպ, որին համարում է ագրեսոր:

Սակայն Ռուսաստանի պաշտոնական լրատվությունը բավարարվեց այսօր ընդունված պայմանագիրը բարեկամության ու համագործակցության փաստաթուղթ համարելով, ներկայացրեց Ելցինի արտասանած ճառի անուշ խոսքը («Այս ամենը հաստատում է, որ մենք ոչ միայն հարեւաններ ենք ու գործակիցներ, այլեւ բարեկամներ») եւ անմիջապես հաղորդեց օրվա հարցազրույցը Հեյդար Ալիեւի հետ: Այստեղ Նախիջեւանի նոր խալիֆը դարձյալ իրեն հատուկ լպրծուն շողոքորթությունն էր անում Թուրքիայի ղեկավարի հանդեպ, որն, իբր, բարդույթի շրջանի հարցերն ամենից լավ է հասկանում եւ ամեն ջանք պիտի գործադրի իրական ու դրական արդյունքների հասնելու համար:

Այս զրույցը ցուցադրող խոսնակ Տ. Կոմարովան ակնհայտ հեգնանքով ասաց. «Հետաքրքիր է, մի շաբաթ առաջ էլ նա նույն խոսքերը պարսիկներին էր ուղղում, ի՞նչ է պատահել, որ այստեղ Իրանին փոխարինեց Թուրքիան»:

Այս զրույցում Ալիեւը հայերին մեղադրում է ռուսների զենքով ու օգնությամբ իր հանրապետության դեմ գործած ռազմական պատահարների մեջ: Կոմարովան հաղորդեց համապատասխան զորքերի հրամանատար, գնդապետ Ալեքսանդր Սուվորովի հայտարարությունն այն մասին, որ իր զինվորության ու զենքի հետ հայերը ոչ մի առնչություն չեն ունեցել եւ Ալիեւի ասածն անխիղճ զրպարտություն է:

✧ ✧ ✧

Օրվա ընթացքում շարունակվել են ռմբակոծությունները Մարտունու, Մարտակերտի, Շահումյանի ու Կարաչինարի վրա: Թալիշը ռմբակոծվել է ռազմածովային հրետանիներով, իսկ Շահումյանի շրջանում ընկել են նոր տիպի հրթիռներ՝ «Երկիր-երկինք»: Կան զոհեր ու շատ վիրավորներ: Այստեղ ծանր վիրավորվել է նաեւ անկախ լրագրող Իգոր Պետրովը:

Կան նաեւ հուսադրող, մխիթարական լուրեր: Իրենց տներն են վերադառնում Բերդաձորի ենթաշրջանի փախստականները, ինչպես նաեւ վերակենդանանում են Հադրութի շրջանի լեռնային գյուղերը, որոնք մի տարի առաջ էին դատարկվել:

Բաքվից լեզգիների հայրենակցական միության ղեկավարը հայտարարել է, թե իրենք չեն կռվում ադրբեջանական իշխանությունների դեմ (իսկ այդ պարագայից ինչի՞ համար է հայտարարությունը): ԵԱՀԽ պաշտոնատար անձանց նոր հավաքում Ադրբեջանի ներկայացուցիչը հայտարարեց, թե Լեռնային Ղարաբաղում ագրեսիան դադարեցնելու միակ միջոցն այն է, որ այնտեղից դուրս բերվեն հայկական ռազմական բոլոր միավորումները: Սա կարող էր համարվել սրամիտ նկատողություն, եթե չլիներ այսքան տխմար. իսկ հայկական զորամիավորումները դուրս բերելուց հետո այնտեղի հայ բնակչությանն ո՞վ պիտի պաշտպանի Ադրբեջանի ռազմական ամեն տեսակ ավազակախմբերից: Երեւի ադրբեջանական օմօնը:

Դա եղել է, տեսել ենք նախընթաց տարիներին:

✧ ✧ ✧

Մեր կյանքում, հայ-ադրբեջանական փոխհարաբերություններում այս օրերի ամենախոշոր, պարզապես ցնցող երեւույթը պետք է լիներ Թուրքիայի վարչապետի եւ Ռուսաստանի ղեկավարության երկխոսությունը, որ տեղի ունի այսօր: Բայց դա անցավ այնպես անշուք, երկրորդական խնդիրների մակարդակով, որ այսօրվա հեռուստահաղորդումները նոր ոչինչ չունեին եւ վերացուցադրեցին երեկ ընդունած պայմանագիրն ստորագրելու տեսարանը, մեկ էլ կրկնեցին Ելցինի հավուր պատշաճի խոսքը. «Մենք ոչ միայն հարեւաններ ենք ու գործակիցներ, այլեւ բարեկամներ»:

Ինչ կա որ, նման հանդիպումներին ովքե՞ր չեն լինում կամ չեն դառնում բարեկամներ:

Այսօրվա լռությունը Դեմիրելի վերադարձի, Ելցինից հետո մնացած ղեկավարների (Խասբուլատով, Գայդար) հետ ունեցած հանդիպումների ու զրույցների մասին, աներկբայորեն հաստատում է, որ Դեմիրելը տուն է վերադառնում քոռ ու փոշման, չստացած այն, ինչի համար Մոսկվա էր վազել:

Իսկ ադրբեջանցիների երեկվա ու այսօրվա ճառահաս նոր քայլերն արդեն հրաշալի վկայում են, որ Ռուսաստանը տվել է քթներին: Նորից հիշենք. Հեյդար Ալիեւը, Թուրքիայից կշտացած, շուռ եկավ դեպի Իրան եւ այնպես լպստեց նրա անհարմար տեղերը, որ ռուս հաղորդավարուհին անգամ նկատեց ու հեգնեց: Այսօր էլ Ադրբեջանի ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Իսա Գամբարովը դիմեց ՄԱԿ, ՆԱՏՕ՝, Եվրոպառլամենտ ու միջազգային մյուս հեղինակավոր կազմակերպություններին, առաջարկում էր, որ նրանք շտապով լուծեն Լեռնային Ղարաբաղի հարցը, հայկական կողմին պատժեն իբրեւ ագրեսորի:

Ագրեսորն արցախահայությունն է, պատկերացնո՞ւմ եք: Իր ավանդական, հայրենի հողի վրա, իր տանն ու դռանը, իր նախկին ինքնավար մարզի տեղում ստեղծված ինքնավար հանրապետությունում փորձում է տիրոջ պես ապրել, եւ դրանով ագրեսոր է, իսկ Ադրբեջանը, որ կապոտել էր նրան, գցել ոտքերի տակ, ծեծում էր ու հոշոտում, ռմբակոծում էր բնակավայրերը, ժողովրդին քշում տարագրության, ագրեսոր չէր, խաղաղության աղավնի էր:



Մոսկվայից հաղորդեցին, որ այսօր ադրբեջանցիները Մարտակերտի վրա են ուղարկել երկու նոր, հրեշավոր ռումբեր՝ «Երկիր-երկինք», Կասպիական նավատորմից վերցրած հրանոթներով հրետակոծել են Թալիշը, Կարաչինարը: Ամիրանլարից եկած հրթիռներով Մարտունիում կործանվել են երկու տներ, մի կին է զոհվել, եւ կան նոր վիրավորներ:

Ա՛յ, սրանք որ ագրեսիա չեն, այլ արտահայտությունն են ադրբեջանական կողմի բարեկիրթ ու բարի-դրացիական վերաբերմունքի. չէ՞ որ այլեւս չեն մորթոտում, չեն հոշոտում, ծերերի ու մանուկների հարցը չեն լուծում հողակտոր անելով կամ կենդանի-կենդանի թաղելով, այլ հրետակոծում են նորագույն մեքենաներով եւ արցախահայության գլխին թափում են այնքան թարմ հրթիռներ, որոնց երեսն իսկ նա չի տեսել: Այսինքն՝ ջանում են ռազմագիտորեն լուսավորել նրան:

**Մայիսի 26-ին** «Ազատամարտ» (ռուս.) թերթը հրապարակել է Շուշիի գրավման ժամանակ Արցախի ինքնապաշտպանների կողմն անցած երեք լեզգիների զրույցը լրագրող Բակուր Կարապետյանի հետ: Նրանք պատմում են, որ իրենք, թաթերը, ինչպես եւ հին Աղվանքի բնակիչ մի շարք այլ ցեղախմբեր, որոնք տասնամյակներ շարունակ ադրբեջանական ձուլումի դառնությունն են վայելել, խորապես համակրում են արցախահայության ազգային-ազատագրական պայքարին եւ շուտով իրենք էլ, մանավանդ լեզգիները, ոտքի կկանգնեն եւ զենքով ձեռք կբերեն ազգայնորեն ազատ զարգանալու իրենց իրավունքը:

Խոսելով, այսպես կոչված, ադրբեջանական բանակի մասին, այն համարում են դիակողոպտիչների խառնամբոխ, որի ամեն մի ներկայացուցիչ միայն մեկ հոգս ունի՝ զոփել եւ հարստություն տուն տանել: Այդ բանակայինը «կողոպտում է նույնիսկ իր զոհված ընկերոջը,-պատմում է 3-րդ լեզգին:-Եթե զոհվածը ոսկե ատամներ ունի, գլուխը կտրում են, տանում թաքուն մի տեղ, խնամքով պոկոտում ատամները: Մեր դասակի աղդամցի մի զինվոր հաճույքով պատմում էր այսօրինակ իր քաջությունների մասին: Նա արդեն հավաքել էր կես կիլոգրամ ոսկի եւ նպատակ ուներ առնել ու փախչել տուն» («Ազատամարտ», ռուս., N3, էջ 4):

**Մայիսի 27-ին** շատ էին խոսում Ստեփանակերտ-Լաչին-Գորիս գծի մասին, որ բացվեց իբրեւ միջանցք, սակայն դարձավ փրկության ճանապարհ, իսկ հեռանկարում բոլոր հնարավորություններն ունի լինելու երկու հայկական հանրապետությունները միացնող շերտ կամ տարածք, որովհետեւ, ինչպես արդեն խոստովանում են մեր լրատուները, Լաչինի շրջանը դատարկված է, եւ այնտեղի քրդերը փոխադրվել են Քյալբաջարի ու Կուբաթլիի շրջանները...

Այսօր առաջին ավտոշարասյունը հասավ Շահումյանի շրջան: Այս տանջահար լեռնաստանի բնակիչները երջանկության արցունքներով դիմավորեցին բարերարներին: Բայց եւ չմոռացան ամենակարեւորը. մեր փրկությունը լրիվ ու լիակատար դարձնելու համար այստեղից էլ մեր արտադրած գյուղատնտեսական մթերքները պիտի Հայաստան հասցնենք, որպեսզի ե՛ւ ստանանք, ե՛ւ տանք, շարունակվի-ամրապնդվի մեր տնտեսական կյանքը: Սրա մեջ կլինի շրջանի եւ նոր հանրապետության կենսագործունեության հաղթանակը: Խոստացած գյուղատնտեսական մթերքներն էլ էին պատրաստել, բեռնեցին մեքենաները, ճանապարհեցին Երեւան:

Հեռուստալրագրողները ցույց տվին ճանապարհաշինարների մի մեծ խումբ, որը կարգավորում էր Լաչինը շրջանցող ուղեմասը, նահանջող թուրքերի արած ավերածությունները եւ առհասարակ լեռնոտ այդ շրջանի այն բոլոր ուղեհատվածները, որ չեն կարող պատիվ բերել փրկության ճանապարհին: Խմբի ղեկավարն է Ռոլես Աղաջանյանը՝ ՀՀ ԳԽ-ի պատգամավոր, ադրբեջանական ու պուգոյական բանտերի բոլոր տառապանքները վայելած, բայց լեռնաստանի նույն որդին ու շինարարը մնացած հսկան: Ասում է՝ ամեն ինչ անում ենք արագ, էժան, հավերժի համար, միայն թե բիտում հասցվի, որպեսզի ասֆալտն ամուր լինի: Այնտեղ է եւ Ռազմիկ Դանիելյանը, որի վերջին երկու տարվա ամբողջ գործունեությունը (չնայած ՀՀ առեւտրի մինիստրի պաշտոնակատար էլ էր)

կապված է մարտնչող հայրենիքին կենսանյութեր ու զինամթերք տանող գծերի հետ:

Հայաստանի ու Ադրբեջանի սահմաններում մեծ թվով արտասահմանյան հեռուստալրագրողներ են գործել, հավաքել հսկայական նյութեր՝ ճշմարիտ ու արդար, որոնց թողած առաջին տպավորությունները հուսալի են, արտասահմաններում կիմանան, թե կռվող երկու կողմերից յուրաքանչյուրն իրենից ինչ է ներկայացնում:

Իսկ ծավալված, ամբողջ Ադրբեջանն ու Հայաստանը բռնած կռիվը շարունակվում է. Թովուզից ռմբակոծել են Տավուշի շրջանը, Ամիրանլարից՝ Մարտունին ու շրջակաները... Ադրբեջանցի հրոսակները հիմա էլ «Գրադից» անցել են «Երկիր-երկինք» հրեշավոր հրթիռներին: Հեռահար հրետանիներով ավերածություններ անելու մեջ բավական հմուտ են (մանավանդ, եթե ԱՊՀ բանակներից կաշառքով վարձած մասնագետներ են ունենում), իսկ բաց ճակատամարտերում միայն փախչելով են պրծացնում իրենց դատարկ ու անարժեք գլուխները: Խելակորույս կառավարությունը վերջին օրերին քանի հրաման արձակեց դասալիքներին տեղում գնդակահարելու կամ տասնյակ-տասնյակ պատիժների ենթարկելու մասին, միեւնույն է, փախչելու սովոր ոտքերը փախչելու են:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատվիրակությունը եղել է ԼՂՀ-ում, սակայն չի տեսել Շուշին, ադրբեջանցիների լքած մյուս բնակավայրերը,-վնգստում է Մախս Մամեդովը: Բայց գուցե պատվիրակությունն ինքը չէր ցանկանում տեսնել: Չէ՞,-էլի բողոքում է նա:-Հայերը հնարավորություն չեն ստեղծել, եւ ճարահատյալ պատվիրակությունը գնացել է Նախիջեւան, զրույցի նստել Հեյդար Ալիեւի հետ:

✧ ✧ ✧

Քյուրդամիրում ադրբեջանցիները պատանդ են վերցրել փոխգնդապետ Ալեքսանդր Գորսկուն եւ ազատելու համար ռուսական բանակից զենք ու զինամթերք են պահանջում... Ռուսաստանի փոխպրեզիդենտ Ռուցկոյը մեռա՞ծ է, ինչո՞ւ սրա համար էլ սպառնալիք չի կարդում...

Իրանի արտգործնախարարությունն իր ներկայացուցիչներին է ուղարկել Նախիջեւանի սահման՝ ըստ Հայաստանի հանրապետության առաջարկ-խնդրանքի, թող տեսնեն՝ Սադարակի սադրանքի մեջ ով է մեղավոր:

Իսկ ըստ ԵԱՀԽ-ի կազմկոմիտեի մշտական հանձնաժողովի հայտարարության՝ Թուրքիան ու Նախիջեւանը շիկացնում են կրքերը՝ ունենալով լոկ մի նպատակ՝ Թուրքիայի զորքերի ներքաշումը ստեղծված բարդույթի մեջ,-հաղորդեց ռուս հեռուստամեկնաբանը:

**Մայիսի 28-ը**, որ Հայաստանի Հանրապետության ծննդյան օրն է, Հայոց նոր պետականության ստեղծման տարելիցը, հանրապետության եւ տիեզերաբնակ ողջ հայ ժողովրդի կողմից առաջին անգամ նշվում է համազգային ցնծությամբ, աննախադեպ երջանկության ծփանքով, որի մեջ, անկասկած, իր մեծ կշիռն ունի Արցախի հաղթական շքերթը վերջին ամսում:

Այո, ամբողջ ազգն առաջին անգամ է տոնում բացսիրտ, միահամուռ, միակամ: Իսկ ես 1950-ական թվականների վերջից ի վեր, Արցախում էի նշում ընկերների ու համակիրների նեղ շրջանակով, ապա Երեւանում, Եղվարդում... Վերջին 15 տարիների համարյա մեր նեղ շրջանակի մեջ էին նաեւ մեր սփյուռքահայ մի շարք եղբայրներ: Մի անգամ, օրինակ, նախապես պայմանավորվել էինք, որ մեր տոնական խանդավառությանը մասնակից անենք մեր հին բարեկամներ Անդրանիկ Ծառուկյանին ու Վահրամ Մավյանին... Սակայն նպատակը լրիվ իրականացնել հնարավոր չեղավ, որովհետեւ, ըստ երեւույթին, վերեւներից միջնորդություն էր եղել... եւ, այսուհանդերձ, մենք տոնական օրվա նախերգանքն արինք Ծառուկյանի հյուրանոցային սենյակում (վկան՝ Ռազմիկ Հայկի Պետրոսյանը):

Բուն Հայաստանում տոնախմբություն է, իսկ ադրբեջանական հրանոթներն ու հրթիռանետներն օրվա ընթացքում կրակ են թափել սահմանային բոլոր շրջաններում՝ Նոյեմբերյանում ու Իջեւանում, Տավուշում ու Գորիսում: Կարաչինարի ռմբակոծությունից



զոհվել են երկու երեխա: «Գրադի» 250 արկ է ընկել Մարտակերտի շրջանի բնակավայրերի վրա: Հադրութի շրջանի սահմանային գյուղերն ավերվում են: Փարաջանց գյուղի ռազմակետից անընդհատ ռմբակոծվում էր արդեն անբնակ դարձած Գորիսի շրջանի Կոռնիձորը: Գորիսի պաշտպանության ղեկավարն ասում է.

- Ապուշները զենք ու զինամթերք շատ ունեն: Հաճախ պարզապես ուզում են ցույց տալ իրենց առավելությունը եւ անընդհատ կրակում են: Մեկ էլ երեւի ուզում են ցույց տալ, թե, իբր, մեզնից չեն վախենում:

Զենք ու զինամթերք շատ ունեն եւ դեռ նոր էլ ստացել են ԱՊՀ Լենքորանի շրջանում տեղակայված երեք գնդերի ամբողջ սպառազինությունը,-հաղորդում են մոսկովյան լրատուները:

Բոսնիայի մայրաքաղաք Սարաեւոն միայն այսօր ռմբակոծվել է «Երկիր-երկինք» հրթիռով, եւ լրագրողը սա համարում է ամենասարսափելին հարավսլավական պատերազմում: Իսկ Արցախում ամեն օր բնակավայրերի վրա են թափվում այդ «Երկիր-երկինքը», «Գրադն» ու մնացած հրեշավոր զենքերը, եւ մի բողոքող չկա: Թուրքի թրքությունը դատապարտող բերանները ջուր են առել...

Ֆրանսիայի դեսպանուհին (ՀՀ-ում) գնացել է հայ-նախիջեւանյան բախումների շրջանը, ծանոթացել նախորդ օրերի մարտերի հանգամանքներին, զրույցներ ունեցել անկողմնակալ դիտորդների ու լրագրողների հետ եւ ասում է.

- Այնտեղ հայերը միայն պաշտպանել են իրենց հողը, եւ ոչ մի զինվոր ոտք չի դրել Նախիջեւանի տարածք:

Մեծարգո դեսպանուհու ասածի հաստատումն է այն փոխպայմանավորվածությունը, որն ադրբեջանական կողմին իրավունք է տվել իր ունեցած տասնյակ ու տասնյակ զոհերի դիակները հավաքել-տանել Արարատի շրջանից ու Երասխավանից:

Մեր հեռուստալրագրողն այս մասին է պատմում եւ հետն էլ չարախնդում՝ «Դե, թող հիմա էլ իրենց դիակները տանեն եւ ներկայացնեն որպես քիմիական զենքի զոհերի»: Իսկ ես մտածում եմ, թե սա որքան միամիտ է ու, թերեւս, ծույլ: Իսկ ինչո՞ւ հենց ինքն այդ դիահավաքը չի նկարում, խոսեցնում, ամենայն մեկնաբանություններում ցուցադրում նույն Մոսկվայից, ուրկից ամեն օր Մախս Մամեդովն ու կաշառված լրատուները մեզ են բամբասում... Էլ չեմ խոսում արտասահմանյան երկրների, նրանց հեռուստա-ռադիոկայանների մասին, որոնք մեր կռվի առթիվ պատկերացում են կազմում լոկ թրքական եւ թրքամետ լուրերով ու ժապավեններով:

Մոսկվայից հաղորդեցին, որ այսօր Նախիջեւան են ժամանել վարչապետ Սուլեյման Դեմիրելը, Բաքվից ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Իսա Գամբարովը: Երեւի լայնածավալ գործունեություն պիտի ծրագրեն Նախիջեւանի խալիֆ Հեյդար Ալիեւի հետ միասին (իսկ Ալիեւը նախորդ օրը շուռ էր եկել դեպի Իրան):

Քյուրդամիրի պատանդ Ալ. Գորսկին ազատվել է, չեն ասում, թե ի՛նչ գնով:

Ադր. ՆԳՄ տնօրեն Համիդովը հայտարարել է, թե Բաքվում ռուս 8 գործիչներ են կալանքի տակ առնվել հակաադրբեջանական գործունեության մեղադրանքով:

Իսա Գամբարովի նոր հրամաններով արգելվում են զանգվածային միջոցառումները, սահմանված է ռազմական գրաքննչություն լրատվական մարմիններում եւ, ամենակարեւորը, լայն գործունեություն է սկսված հանրապետությունում ռազմական ապօրինի կազմակերպությունները զինաթափելու եւ վերացնելու համար (առաջ այսպիսին համարում էին միայն Արցախում գործող ինքնապաշտպանական ուժերը, իսկ հիմա՞ ում պիտի վերացնեն):

**Մայիսի 29-ին** Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխնախագահ բարոնուհի Քերոլայն Կոքսը վերստին Հայաստանում է: 200 հազար դոլարի մարդասիրական օգնություն է բերել եւ պիտի Արցախ հասցնի: Արդեն մեծ փրկության ճանապարհով: Փառք ու պատիվ այն ժողովրդին, որն այսպիսի զավակ ունի: Երեւի լսել է, գիտի, թե 1918-20 թթ. արցախական աշխարհին ինչ մահացու հարվածներ են հասցրել իր երկրի ներկայացուցիչներ Շատելվորտը, Թոմսոնը եւ այն ժամանակի դիվանագիտական ուրիշ խեղ-

աշխատանքի, ինչպես պատերազմին մասնակցած աղջիկներն ու հարսերը նորից իրենց կանացի գործին են լծվել, եւ տներում ջերմանում է մայրական ու քույրական մթնոլորտը...

ՀՀ ԱԳ նախարարության աշխատակից Ժիրայր Լիպարիտյանն այսօր թռավ Հռոմ՝ մասնակցելու վաղն այնտեղ ԼՂ-ի հարցը քննելու համար բացվելիք խորհրդաժողովին: Առայժմ ոչ մի խոսք չկա ԼՂՀ պատվիրակության կամ ներկայացուցչի ժամանելու, ժողովին ունենալիք մասնակցության վերաբերյալ:

**Հունիսի 1-ի** հաղորդումների մեջ տիրապետողն Արցախի տնտեսության ու սոցիալական կյանքի վերականգնման առաջին խոստմնալից քայլերին վերաբերող լուրերն էին: Ստեփանակերտում լուծվել են էլեկտրաէներգիայի ու ջրի հարցերը: Եռանդագին նորոգվում են հիվանդանոցային ու դպրոցական շենքերը: Տեսագրել եւ Հայաստանի հեռուստատեսությամբ ցույց են տալիս այն համերգները, որ զանազան երաժշտախմբերի ուժերով հնչում են Ստեփանակերտի կիսավեր դահլիճներում եւ Շուշիի հրապարակում:

Բ. Արարքցյանի գլխավորությամբ ՀՀ կառավարական պատվիրակությունն է ժամանել Ստեփանակերտ՝ մասնակցելու վաղն այստեղ բացվելիք ԼՂՀ ԳԽ-ի շատ կարեւոր նստաշրջանին:

Այսօր պաշտոնապես բացվեց Երեւան-Գորիս Ստեփանակերտ ավտոճանապարհը, եւ իրենց առաջին երթը կատարեցին քաղաքացիական ավտոբուսները, որոնց ճանապարհը փակ էր 1988-ի դեկտեմբերից ի վեր:

Մոսկվայի հայկական ներկայացուցչությունից հաղորդել են, որ Շուշի են վերադարձել նրա նախկին հայ ու ռուս շատ բնակիչներ: Իսկ ադրբեջանցիները դարձյալ ռմբակոծել են հայկական բնակավայրերը, պատճառել մեծ ավերածություններ ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանի սահմանային շրջաններում: Նույնիսկ Քելբաջարի շրջանի ավազակախմբերն այնքան ակտիվացել են, որ գնդակոծել են Զոդի ոսկու հանքերի կոմբինատը: Իսկ Շահումյանի շրջանում պատասխան կրակով լռեցրել են Շեֆեկի կրակակետը, հայտնի չէ, որքա՛ն ժամանակով:

Բարոնուհի Կոքսի բարեգործական նվերներով բեռնավորված ավտոմեքենան, որ Ստեփանակերտից Մարտակերտ էր գնում, Կիչանի մոտ պայթել է ականից:

Հռոմում սկսվել է 11 տերությունների ներկայացուցիչների այն խորհրդաժողովը, որի քննարկման հիմնական հարցն է Լեռնային Ղարաբաղի բարդույթը: Այն որոշել է Մինսկի խմբի քննարկում անցկացնել հունիսի վերջին: Մասնակիցներն իրենց զարմանքն են արտահայտել այն առթիվ, որ ժողովին չի գնացել ԼՂՀ պատվիրակությունը, եւ ՀՀ ներկայացուցիչը բացատրել է, որ ԼՂՀ-ը նման ժողովին կմասնակցի միայն մի դեպքում՝ երբ իրեն ընդունեն իբրեւ իրավազոր կողմ, իր վճռական ձայնն ունեցող սուբյեկտ:

Դրա դեմ լրջորեն առարկել է Ադրբեջանի ներկայացուցիչ, ԱԺՃ-ի նախագահ Էլչիբեյը՝ հայտարարելով, որ իր երկիրը չի ճանաչում այդպիսի կողմ (ԼՂՀ), այլ համաձայն է Լեռնային Ղարաբաղ կոչված տարածքին տալ միայն մշակութային ինքնավարություն եւ ուրիշ ոչինչ:

Այս լուրը հաղորդող մոսկովյան հեռուստալրագրողն ասաց.

- Ղարաբաղի հայությունն էլ շատ լավ է հիշում այդ մշակութային ինքնուրույնություն կոչվածը, երբ Երեւանից մի դերասան հրավիրելու համար ստիպված էին լինում յոթ անգամ ադրբեջանական ղեկավարության ոտքը գնալ: Լավ են հիշում, դրա համար էլ այսքան տարիների պայքարի, իրենց արյան գնով ձեռք են բերել մի այնպիսի ինքնավարություն, որն այլեւս չեն զիջի ո՛չ մի պայմանով:-Լրագրողը հավանաբար վերջերս է եղել Արցախում, խոսում է նրա առատաբաշխ հողի վրա նորոգվող ժողովրդական կյանքի մասին՝ ափսոսալով, որ այսօր այնտեղի այգիների ու դաշտերի բերքասուն, կանաչ առատության փոխարեն անունների փարթամությունն է աչքի զարնվում:-Բայց կգա ժամանակը, եւ այստեղի ստեղծարար մարդն իր ազատ, ինքնիշխան գործունեությամբ դրախտ կդարձնի իր երկիրը, որ դրա համար ունի աստվածապարգեւ բոլոր պայմանները,-իր խոսքն այսպես է ավարտում քաջատեղյակ լրագրողը:



Հակասական լուրեր հաղորդվեցին ռուսական բանակները Հայաստանից ու Ադրբեջանից դուրս բերելու վերաբերյալ: Իբր, դա հենց հիմա՛ պիտի սկսվի եւ ավարտվի 1994-ի սկզբին: Հիմքն էլ այն է համարվում, որ այդ բանակների զենքն ու զինամթերքը կողոպտվում, օգտագործվում են ազգամիջյան բախումների համար: Սակայն մեկ էլ հիշում են, որ ԱՊՀ-ն պարտավորություններ ունի Հայաստանի նկատմամբ, եւ գտնում են, թե հնարավոր է, որ այստեղ պահվեն սահմանապահ ուժեր:

**Հունիսի 2-ին** սկսվեց ԼՂՀ ԳԽ-ի, դեռեւս ս.թ. հունվարից հետաձգված նստաշրջանը, որը պիտի քննի ու լուծի շուրջ մեկ ու կես տասնյակ կարեւորագույն հարցեր՝ ԳԽ-ի նախագահի ընտրությունից մինչեւ հանրապետության տնտեսական վիճակը կարգավորելու հրատապ խնդիրները, պաշտպանության ամրապնդումը եւն: Նստաշրջանի պատվավոր հյուրերն են՝ Անգլիայի Լորդերի պալատի փոխնախագահ բարոնուհի Քերոլայն Կոքսը, Հայաստանի ԳԽ-ի նախագահ Բաբկեն Արարքցյանը եւլք:

Սկզբից եւեթ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Լ. Հակոբյանը հայտարարեց, որ Հռոմում քննարկվում է ԼՂՀ-ին եւ տարածքին վերաբերող ամենակարեւոր հարցը, որին իրենց հրավիրել են իբրեւ դիտորդների, որոնք պիտի ներկայացնեին երկրամասի, այսպես կոչված, հայկական համայնքը: Դա բացահայտ արհամարհանք է իր պատմական հողի վրա բազում դարեր ապրած եւ այսօր էլ իր պատմական, քաղաքական ու մարդկային իրավունքների համար կենաց ու մահու պայքար մղող արցախահայության նկատմամբ: ԼՂՀ օրինական կառավարությունը հայտարարում է, որ ապարդյուն ու անհեռանկար կլինի այս տարածքին վերաբերող ամեն մի քննարկում, ինչ մակարդակ էլ այն ունենա, եթե նրան չի մասնակցի ԼՂՀ-ը՝ իբրեւ իրավահավասար, վճռական ձայն ունեցող կողմ:

Ապա Հակոբյանը նշեց, որ ԼՂՀ-ը վերջին հինգ ամսվա ընթացքում վերացրել է ապաշրջափակումը, բացել հանրապետությունն արտաքին աշխարհի, մանավանդ մայր Հայաստանի հետ կապող անհրաժեշտ ճանապարհները: Եւ, հասկանալի է, այժմ ամենառաջնահերթ խնդիրներն են՝ պաշտպանել ձեռք բերվածը, լծվել հանրապետության տնտեսական, քաղաքական ու մշակութային խնդիրների իրականացմանը, իսկ այս բոլորից առաջ եւ բոլորից վեր՝ ամրապնդել հանրապետության պաշտպանունակությունը, որը ոչ միայն արցախահայության, այլեւ հայ ամբողջ ժողովրդի պատվի խնդիրն է, գոյատեւումի առաջին պայմանը:

Հռոմում շարունակվող խորհրդաժողովը, որ քննարկում է հայ-ադրբեջանական բարդույթը ԼՂՀ տարածքում, որոշել է 11 տերությունների պատվիրակների մասնակցությամբ մեծ քննարկումն անցկացնել Մինսկում, հունիսի 23-ին: Խորհրդաժողովի ղեկավար Մարիո Ռաֆայելին, ասում են, գոհ է քննարկման ընթացքից, թեկուզ գտնում է, որ բուն ԼՂՀ ներկայացուցիչների բացակայությունը չի կարող չթողնել իր բացասական ազդեցությունը:

Ավստրիայի արտգործնախարարությունը հրապարակել է հայտարարություն, որով հայկական ու ադրբեջանական կողմերին առաջարկում է նստել բանակցությունների սեղանի շուրջ՝ կրակն անմիջապես դադարեցնելու եւ բարդույթը քաղաքական ճանապարհով կարգավորելու համար:

Հեյդար Ալիեւը հիմա էլ սուտ հարայ է գցել, թե հայերը հարձակվել են Օրդուբադի շրջանի վրա, եւ նորից վազել է Անկարա՝ երեւի նորոգելու Թուրքիայի ռազմական միջամտության խնդիրը:

Իսկ նրա ցեղակիցներն ամբողջ օրվա ընթացքում իսկապես ռմբակոծությունների են ենթարկել Ճարտարը, Մարտունին, Կարաչինարը, Հայաստանի տարածքից Կապանը, Կոռնիձորը, Խնձորեսկը: Կան սպանվածներ ու վիրավորներ:

Երկար ընդմիջումից հետո լույս տեսավ ԼՂՀ հին ու հեղինակավոր թերթը՝ «Արցախը» (առաջներում՝ «Խորհրդային Ղարաբաղ»): Խմբագիր Մաքսիմ Հովհաննիսյանը կոչ է անում ամբողջ հայությանը՝ հովանի եւ տեր լինել նրան:

Չեմ կարող չնշել նաեւ, որ տեղեկությունների այս հարստությանը, սովորականի պես,

անցյալ էր մեր հեռուստատեսային «Լրաբերը»: Այն կրկնեց միայն նախորդ օրերի պաշտոնական փոքր-ինչ մխիթարական տվյալները, հպարտությամբ ո՞րերորդ անգամ նշեց, որ թուրքն ասկյարների մեծ կորուստներ է տալիս, իսկ մեր զոհերը (800 զինվոր) ո՞վ ոփսի հաշվի: Բայց արդյո՞ք արդար է այս տոնը, երբ կողքին էլ անվերջ հիշում են, որ սահմանամերձ շրջաններում տեխնիկայի ու զորքի նորանոր կուտակումներ են կատարվում... Ի՞նչ է, թուրքը նորերին բերում, կուտակում է, որ սրանք նախորդ զոհերի վրա սգա՞ն:

**Հունիսի 3-ին** հաղորդվեց, որ այսօր ԼՂՀ-ում գործում են հեռուստատեսությունը, ռադիոն, որոնք Հայաստանից են հաղորդումներ ընդունում ու տարածում: Վերահաստատված է նաեւ հեռախոսակապը Հայաստանի հետ ու հանրապետության ներսում:

Վերադարձ դեպի Արցախ: Այս կոչով Լեռնային Ղարաբաղի քաղաքներում ու գյուղերում բնակվելու են գնում ոչ միայն նախկին արցախցիները եւ փախստականները, այլեւ շատ հայաստանցիներ, որոնք բուռն ցանկություն ունեն՝ ապրելու այնտեղ, օգնելու հայրենակիցներին վերականգնման ու բարգավաճման գործում:

Բայց շարունակվում են նաեւ սահմանային բնակավայրերի ռմբակոծություններն ու գնդակոծությունները: Հադրութի շրջանի Աղբուլաղ գյուղում զոհվել է մի կին: Կարաչինարում կան վիրավորներ:

Ասում են՝ ամբողջ օրը Քելբաջարում կրակահերթերի ձայներ են լսվել: Ենթադրվում է, որ թուրքի ներսի խմբավորումներն են կռվում մեկմեկու դեմ:

Մոսկվայից հաղորդեցին, թե Ադրբեջանի ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Իսա Գամբարովն ստորագրել է հրամանագիր, որով ՆԳՄ աշխատակիցներին իրավունք է տրվում իրենց չենթարկվողների նկատմամբ դիմելու խստագույն միջոցների, եւ սա էլ՝ հայկական ապօրինի զինվորական միավորումների դեմ պայքարելիս: Ուրիշ խոսքով՝ նոր թուրք ղեկավարն ուզում է վերականգնել իրենց օմոնի գործունեությունը Ղարաբաղում: Մեծ ու համբավավոր փորձ ունեն, չէ՞: Երեւի կարիք կունենան նոր պոլյանիչկոներ ու սաֆոնովներ էլ գործի լծելու: Միայն մոռանում է իր ազգի հին առածը՝ հայի ետի խելքն ի՜մը լիներ: Հիմա հայի ետի խելքն է գործում, եւ նա այլեւ թույլ չի տա, որ իր հողի վրա կարգադրելու իրավունք ստանա օտար որեւէ շառլատան:

«Ազատությունը» հաղորդեց տհաճ մի լուր: Հռոմի խորհրդաժողովը Ղարաբաղի վիճակը կարգավորելու առաջարկներ է ընդունել, եւ նրանցից կարեւորը հետեւյալն է. հայկական զորամիավորումները պետք է հեռանան Շուշիից ու Լաչին-Գորիս միջանցքից, որպեսզի երկու տեղն էլ վերահսկողությունն անցնի ԵԱՀԽ օրինապահ ուժերին:

Բայց ո՞ւր են այդ ուժերը: Չէ՞ որ նրանք այստեղ կարող են հայտնվել միայն կրակը դադարեցնելուց հետո, իսկ թուրքն անվերջ ու անընդհատ կրակում է: Թե՞ ուզում են հայոց Արցախը վերստին դնել թուրքի հարվածների տակ:

**Հունիսի 4-ի** կարեւոր իրադարձությունները մխիթարական չեն. ռմբակոծվել են ԼՂՀ սահմանները Հադրութից մինչեւ Շահումյան, կան զոհեր, վիրավորներ: Նույնն է նաեւ Կապանի ու Գորիսի շրջանների սահմանամերձ բնակավայրերում: Թուրքը ռմբակոծում է, հարձակումներ անում, սպանում ու վիրավորում, կատարում ավերածություններ: Իսկ մենք միայն ետ ենք մղում, լրատվական բնագավառում էլ մնում տարտամ ու համարյա անբան:

**Հունիսի 5-ին** Արցախի տարածքում պատերազմը շարունակվում է գլխավորապես Մարտունիում: Գիշերն Ամիրանլարից մեծաքանակ մի զորամաս, զրահատեխնիկայի օժանդակությամբ, հարձակվել է Մարտունի քաղաքի վրա, մտել արվարձանները: Ինքնապաշտպանները ետ են մղել, պատճառել զգալի վնասներ, սակայն կրել են նաեւ կորուստներ՝ երկու զոհ, մեկ վիրավոր, երկու զինվոր էլ անհետ կորել են:

Թշնամին ռմբակոծել է նաեւ Գորիսի, Կապանի ու Տավուշի շրջանները: Այստեղ էլ մեծ կորուստներ կան, շատ են ավերածությունները:

Իսկ դուրսը, միջազգային ատյաններում, ադրբեջանցի լաչառներն իրենք են հայերին ամբաստանում, նրանց վերագրում ագրեսիայի, կողոպուտի ու բարբարոսության մեղքեր:



Օսլոյում, օրինակ, ՆԱՏՕ-ի անդամ երկրների արտգործնախարարների խորհրդաժողովում անդրադարձել են ԼՂ-ի հարցին, ընդունել փաստաթուղթ, որով առաջարկություններ են արվում վիճակը կարգավորելու համար: Քննարկումից հետո Ադրբեջանի արտգործնախարարը հայտարարել է, թե իր հանրապետությունը թույլ չի տա, որ ոչ ՆԱՏՕ-ի, ոչ էլ որեւէ միջազգային կազմակերպության դիտորդ կամ խաղաղարար ուժեր մտնեն Լեռնային Ղարաբաղ, քանի դեռ այնտեղից դուրս չեն բերվել հայկական բռնազրավիչ զորամասերը: Նա արտահայտել է իր դժգոհությունը եզրափակիչ փաստաթղթի դեմ, որի մեջ բացակայում է Ղարաբաղի նկատմամբ Հայաստանի կիրառած ագրեսիայի գնահատականը:

Խորհրդաժողովին մասնակցած Րաֆֆի Հովհաննիսյանն էլ արտահայտել է իր գոհունակությունը քննարկման ընթացքի ու արդյունքների վերաբերյալ եւ լավատես է Մինսկում հունիսի 23-ին գումարվելիք մեծ ժողովի նկատմամբ, որը, հավատացած է, զգալիորեն առաջ կմղի ԼՂ-ի հարցի լուծման ընթացքը («Ազատություն» ռադիո):

Ադրբեջանի պրեզիդենտության հիմնական թեկնածու Էլչիբեյն օտարերկրյա լրատվական մարմինների ներկայացուցիչներին այս անգամ էլ հայտարարել է, թե Լեռնային Ղարաբաղի հարցի միակ տերերն իրենք են, որ պատրաստ են այդ «հայկական համայնքին» տալ միայն մշակութային ինքնավարություն: Ինչ վերաբերում է մինչեւ 1988-ը եղած կարգավիճակը վերականգնելուն, ապա իրենք այդ հարցը կքննարկեն այն ժամանակ, երբ արդեն Հայաստանը լուծած կլինի երկու հարց՝ Ա) բռնազրավված ադրբեջանական տարածքի ու բնակավայրերի վերադարձնելը, Բ) Հայաստանից վռնդված 200 հազար ադրբեջանցիներին իրենց նախկին բնակավայրերում տեղավորելը (մոսկովյան հեռուստատեսություն):

Ըստ երեւույթին միաչքանի է այս Էլչիբեյ կոչվածը. տեսնում է միայն Հայաստանից դուրս արված 165 հազար ադրբեջանցիներին (այն էլ 200 հազարի պատկերով) եւ քոռ է մնում Ադրբեջանից վռնդված կես միլիոն հայերի դիմաց: Նաեւ կիսախելք է. մինչեւ հիմա չի հասկացել, որ իրենք Ղարաբաղում պարտված կողմն են, իսկ պարտվողը վերջնագիր չի ներկայացնում, այլ պարտավոր է լինում ընդունել այդպիսին:

Լեռնային Ղարաբաղի խորհրդարանն այս անգամ էլ չկարողացավ ընտրել իր նախագահին. միակ թեկնածու մնացած Շահեն Մեղրյանը եւս բավարար ձայներ չստացավ, եւ ընտրությունը հետաձգեցին մինչեւ հունիսի վերջը, որպեսզի այդ ընթացքում անցկացնեն լրացուցիչ ընտրություններ դեպուտատական թափուր տեղերի համար եւ լրացնեն ու ամրապնդեն կառավարական կառույցները:

Իզմիրում (Թուրքիա) տեղի ունեցած տնտեսական մեծ խորհրդաժողովին ներկա է եղել նաեւ Հայաստանի պատվիրակությունը՝ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ: Վերջինս պրեզիդենտ Թուրգութ Օզալին է հանձնել Լ. Տեր-Պետրոսյանի ուղերձը, որի մեջ հույս է հայտնվում, թե կկարգավորվեն հայ-թուրքական փոխհարաբերությունները, եւ դա էլ հիմք կդառնա Արցախի հարցի լուծման համար: Ապա ներկայացվում է Հայաստանի ղեկավարության պատրաստակամությունը՝ դիվանագիտական, քաղաքական, առեւտրական ու մշակութային սերտ կապեր հաստատելու Թուրքիայի հետ («Ազատություն»):

Մեր պատվիրակությանն ընդունել է Սուլ. Դեմիրելը, արտահայտել իր երկրի մտահոգությունը Ղարաբաղի բարդույթի համար, ապա եւ «վստահեցրել», որ ինքն ու իր երկիրը թշնամանք չեն տածում Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ: Երեւի սա, որքան էլ դիվանագետ, միամիտ մարդ է. չէ՞ որ չեղած բանի մասին չեն խոսում...

**Հունիսի 6-ին**, իբր, ամենուրեք, մանավանդ Հայաստանի սահմանային շրջաններում, վիճակը տանելի է եղել, խաղաղ ու անկրակ: Բայց ահա Արցախի երկու կետում՝ Մարտունիում ու Կարաչինարում, դաժան ռմբակոծություններ են եղել, եւ առաջինում երեք ազատամարտիկ են զոհվել, երկրորդում՝ երկուսը, եւ կան շատ վիրավորներ, շենքերի ավերածություններ: Կարծես մեկ օրվա ընթացքում տրված հինգ զոհը քիչ է, եւ դրա համար կարելի է այնքան էլ չանհանգստանալ...

Բայց, նախ, մեկ օրում Արցախի, այդ փոքրիկ ու քրքրված աշխարհի հինգ երիտա-

սարդ կյանքի կորուստը շատ մեծ բան է. ապա. մի՞թե անառիկ Շուշին նվաճող ինքնապաշտպանությունը չի կարողանում խլացնել Մարտունիի դեմ բաց տարածության մեջ տնկված Ամիրանլարը: Այդպես էլ Կարաչինարի դիմացի Շեփեկը: Թե՞ ռազմավարական մեքենա՞ն չի գործում այնպես, որ իմանան, կարգավորեն բոլոր քայլերը եւ հասկանան, թե ո՛ւր եւ ինչպե՛ս են գնում:

✧ ✧ ✧

Ասում են՝ այսօր Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Ջինդորուքը խիստ կերպով զգուշացրել է (Հայաստանին) Ղարաբաղում, Լաչինում ու Աղդամում իրականացված ցեղասպանության համար», ասելով. «Եթե Հայաստանը չդադարեցնի արյունահեղությունը, ապա նոր բացված կամուրջով տանկեր կշարժվեն առաջ» («Հուրիեթ», հունիսի 8):

**Հունիսի 7-ին** Ադրբեջանի պրեզիդենտի ընտրություններն էին, եւ ինչպես այդ օրը, այնպես էլ նախորդ ու հաջորդ մի քանի օրերին ադրբեջանական զորամիավորումները շատ չէին անհանգստացնում Արցախի ինքնապաշտպաններին, Հայաստանի սահմանամերձ շրջանների բնակիչներին: Մերոնք էլ դրանից երեւի հետեւություն էին արել, թե թշնամին գիտակցում է իր թուլությունը, այլեւս չի ջանա ռազմական ուժով հարցեր լուծել, այլ կփորձի միջազգային ատյաններում, Թուրքիայի աջակցությամբ ու այլեւայլ քաղաքական-դիվանագիտական միջոցներով ձեռք ձգել կորցրածը, հասնել իր պատմական ու պետական «իրավունքների» վերականգնմանը: Իսկ այդ ատյաններում, հայտնի բան է, ոչ մի հարց էլ չի լուծվում:

Այս մտայնության, տխուր այս պատկերացումի արտահայտություններն էին անհոգ հանգստությունը Երեւանում եւ կուսակցական գզվռտոցը ԼՂՀ ԳԽ-ի նստաշրջանում: Անկասկած այս ամենի կծիկը ՀՀ ղեկավարության մեջ էր, նրա ձեռքում, նրա պարագլուխների ուղեղներում: Հակառակ դեպքում ո՞ր հանրապետության առաջին ղեկավարը կթողներ իր երկիրը եւ կթռչեր արտասահման՝ մի շաբաթից ավելի պտույտ տալու Հարավային Ամերիկայի երկրներում, թե ի՞նչ է, այդ ընթացքում նաեւ մասնակցելու է շրջակա միջավայրի պահպանության հարցերին նվիրված ինչ-որ գիտաժողովի: Մի՞թե այսօրվա Հայաստանի համար կա ավելի կրակված շրջակա միջավայր, քան ամեն օր ռմբակոծությունների ու հարձակումների ենթարկվող իր հանրապետության սահմանային շրջանները, օրհասի առաջ կանգնած Արցախը: Այո՛, օրհասի առաջ կանգնած, քանի որ Ադրբեջանի ղեկավարի ընտրություններում քվեարկվող բոլոր թեկնածուները՝ տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ եւ, իբր թե, ազգային ու քաղաքական տարբեր ծրագրերի հեղինակներ, միահամուռ էին մեկ հարցում՝ ամենակարճ ժամանակում Արցախը նվաճելու եւ իրենց տիրապետությունն այնտեղ վերահաստատելու վճռականության մեջ: Եւ դրա համար Արցախի ու Հայաստանի սահմանների մոտ կուտակում էին իրենց զինական բոլոր ուժերը, ռազմական ահռելի տեխնիկան, վարձկան ավազակախմբերը:

Այս պայմաններում շրջահայաց մի մարդ կզբաղվե՞ր ուրիշ որեւէ հարցով, քան նախապատրաստությունը գլխավոր, թերեւս Արցախի խնդրի համար ամենավճռական բախումին:

Ես կաթվածահարի պես էի, երբ ԳԽ-ի նախագահ Բաբկեն Արարքյանի գլխավորած հեղինակավոր պատվիրակությունը գնաց Ստեփանակերտ, տապալեց ԼՂՀ ԳԽ-ի նախագահի ընտրությունները եւ, իր պարտականությունը կիսով չափ կատարած համարելով, վերադարձավ: Կիսով չափ, քանի որ գնացել էր ապահովելու միայն իր ու յուրայինների (ՀՀՇ) թեկնածուի հաղթանակը: Եւ քանի որ իրենց թեկնածուն չի անցել, խանգարել է նաեւ, այսպես կոչված, հակառակ թեւերի թեկնածուների՝ Լեոնարդ Պետրոսյանի, Լեոնիդ Հակոբյանի ու Շահեն Մեղրյանի հաջողությանը:

**Հունիսի 7-ի** երեկոյան ՀՀ ԳԽ-ի ինչ-որ հանձնաժողովի նախագահ Բագրատ Ասատրյանը, որ Արարքյանի խմբի մեջ էր եղել, հեռուստատեսությամբ ունեցած հարցազրույցում իրենց առաքելության խնդիրն այսպես բացատրեց. ՀՀ ղեկավարությունը մտածում է, որ եթե դաշնակցության թեկնածուն դառնա ԼՂՀ ղեկավար, տեր լինի նորելուկ հայկական հանրապետությանը, վերջինս այլեւս չի ենթարկվի Հայաստանի ՀՀՇ-ական ղեկավարությանը, իսկ որ ավելի վատթարն ու կործանարարն է, կջանա նույնն անել, այսինքն ղեկավարությունը հանձնել դաշնակցությանը, նաեւ Հայաստանում: Ուրեմն, խնդիրն էր, նախ, թույլ չտալ, որ դաշնակցության թեկնածուն դառնա նախագահ, եւ ապահովել ՀՀՇ-ական թեկնածուի վերելքը:

Ժողովուրդն այնտեղ արյունահեղության գնով ձեռք է բերել իր նվազագույն հաղթանակը եւ պատրաստ է այն վայելելու համար մղել ամենավճռական ճակատամարտը, որն այլեւս անլուծելի չի թողնի եւ ոչ մի հարց... Իսկ սրանք իրենց թեկնածուի հաջողությամբ են մտահոգված, իրենց կասկածելի հեղինակության ապահովմամբ:

Անհրաժեշտ էր ընտրել նախագահ, այն ամենապատասխանատու ղեկավարը, որի կազմակերպչական կարողություններից ու գործադրած ջանքերից է կախված լինելու առաջիկա, շատ մոտիկ ու անխուսափելի ճակատագրական ելքը: Իսկ սրանք գնացել, անորոշություն են սերմանել, հետո էլ ընտրությունները հետաձգել, ապա նախագահի պաշտոնակատար թողել իրենց իսկ տապալած մարդուն, որը, հասկանալի է, ոչ թե կենաց ու մահու պայքարի մեջ մտածի վճռականությամբ է գործելու, այլ մի կերպ քաշելու է իր լուծը, լավագույն դեպքում՝ հերթապահողի պարտաճանաչությամբ աթոռ է պահելու՝ մեկ ամիս հետո ընտրվելիք նախագահին հանձնելու համար:

Բ. Ասատրյանն ակնարկեց (իսկ ուրիշները տագնապով պատմում էին), որ Արցախում ղեկավար մարմինները բաժանված են կուսակցական անհանդուրժող խմբերի, որոնք արդեն հաջողացրել են իրենց ազդեցությունները տարածել նաեւ ինքնապաշտպանության զորամիավորումների վրա:

Աչքներս լո՜ւյս, հիշյալ ամենաճակատագրականի շեմին մենք ունենք հակամարտ, իրենց տեր կուսակցությունների թայֆայական շահերի համար մեկմեկու դեմ լարված զորամիավորումներ: Դժվար չէ պատկերացնել վիճակը, եթե զորքի մասնիկներն էլ սկսեն գործել իրենց գլուխներին գտնվող կուսակցական թայֆաների թելադրանքով:

**Հունիսի 8-ին** էլ արդեն հայտնի էր, որ Ադրբեջանի պրեզիդենտ է ընտրվել ԱԺՃ-ի պարագլուխ Աբուլֆազ Էլչիբեյը: Լրատվության մարմինները հայտնում էին, որ ընտրողների կեսից ավելին իր ձայնն է տվել նրան, որ իր պայքարի դրոշի վրա գրած ունի «Թուրքիզմ, իսլամիզմ, ժողովրդավարություն»: Իսկ մրցակիցները հարայ են տալիս, թե ԱԺՃ-ի կամակատարները կեղծիքի ու խարդախումների միջոցով են հասել առավելության, դա պիտի բացեն, նույնիսկ արդեն ստեղծել են հատուկ կոմիտե, որը պետք է ճշմարտությունն արեւերես հանի: Բայց, միեւնույնն է, Էլչիբեյը հաղթել է եւ նա էլ իր առաջին խնդիրն է դարձրել Ղարաբաղի ազատագրումը հայերից:

Իսկ Արցախի ճակատում ու ՀՀ սահմանամերձ շրջաններում դրությունը ժամ առ ժամ բարդանում է. Շահումյանից մինչեւ Հադրութ, ամբողջ սահմանի երկարությամբ, սեւ ուժեր են կուտակվում: Չեն դադարում ռմբակոծությունները: Մարդկային զոհերն ու ավերածությունները զարհուրելի չափերի են հասնում: Միայն այսօրվա ընթացքում Աղդամի շրջանից Մարտակերտի վրա գցել են «Գրադի» ավելի քան 100 հրթիռ:

Թուրքիա-Նախիջեւան-Ադրբեջան սիրախաղերը, որքան էլ գաղտնի, ջրի երես են հանում ծայրերն այն եղջյուրների, որոնք վաղը Հայաստանի կողերն են խրվելու: Նախիջեւան-Թուրքիա խղճուկ կամրջի վրա մեծ գործեր են կատարվում, եւ դրանից հայկական կողմն անհանգստացած է, Սադարակն է ռմբակոծում,-հաղորդեց «Վեստի» թղթակիցը:

Երեւան է ժամանել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պատվիրակությունը՝ ինչ-որ Ֆիլիպ Մարուսիչի գլխավորությամբ, որը պիտի ուսումնասիրի Հայաստանի՝ ՄԱԿ-ի կառուցվածքներում գործելու հնարավորությունները:

**Հունիսի 9-ին** Լաչինում գումարվել է քրդական հասարակական-քաղաքական կազմակերպությունների համաժողով, որն ընդունել է հռչակագիր քրդական պետականու-

ջողվում է դիմադրել, սակայն հետախուզության տվյալներով՝ նոր հարված է պատրաստվում Թարթառի կողմից, որտեղ նկատվում են զրահատեխնիկայի խոշոր կուտակումներ» («Ազգ», նույն համարում):

**Հունիսի 13-ը** երեւի ամենաողբերգական օրերից մեկն էր այս պատերազմի ամբողջ ընթացքում. թուրքերն իսկական մեծ արշավանք են սկսել Շահումյանի շրջանը լրիվ նվաճելու եւ Ասկերանին ու Մարտակերտի հարավային մասին տիրանալու համար: Արշավանքը տեղի ունի մեծ քանակության տանկերի, զրահատեխնիկայի ու ծանր թնդանոթների ուղեկցությամբ, ահավոր ռմբակոծություններով ուժաթափ արված հայկական բնակավայրերի վրա: Արդեն նվաճված են բազմաչարչար Բուզլուխը, Մանաշիդը, Էրքեջը: Թշնամին շարժվում է դեպի Վերիշեն ու Շահումյան: Լրատվությունն այնպես է խոսում, որ կարելի է ենթադրել, թե Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւելյան մասում եւս եղել են կորուստներ: Իսկ Աղդամի կողմից գրոհող ավազակախմբերն արդեն մտել են Կիչան ու Սրխավենդ, Ասկերանի ձորում գրավել Նախիջեւանիկն ու Փիրջամալը:

Ռիո-Դեժանեյրոյում Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Րաֆֆի Հովհաննիսյանը տեղյակ են Արցախի ողբերգությանը եւ, ասում են, բանակցություններ են վարում այնտեղ գտնվող պետական նշանավոր գործիչների հետ: Երեւի հայության օրհնությունը պատճառելու համար:

Դաշնակցությունն Ազատության հրապարակում կազմակերպել էր հանրահավաք, որը կառավարությունից պահանջում էր ներկայանալ եւ բացատրություն տալ տեղի ունեցածի մասին, զեկուցել, թե ի՛նչ է արվում Արցախն աղետից փրկելու համար: Սպառնում են վաղն էլ հավաքվել եւ դարձյալ նույն պահանջը ներկայացնել:

Մոսկովյան լրատվությամբ թուրքերը մեղքը բարդում են հայկական կողմի վրա. իբր, նա է, որ մեծ ու լայն հարձակում է ձեռնարկել, եւ իրենք միայն պատասխանում են ու հայկական կրակակետերն են ոչնչացնում:

Հեռուստաելույթ ունեցավ ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, որն ստեղծված դրությունն անհուսալի չհամարելով, պատմեց, թե ի՛նչ մխիթարական մանրամասներ կան, եւ մերոնք ինչպես են նախապատրաստվում վճռական հակահարվածի: Ուրախալի է, ասաց, Ասկերանի մոտ քիչ առաջ խփվել է ՍՈՒ-25 կործանիչ մեկ ինքնաթիռ, որը թուրքերը գողացել, բերել էին Արցախ եւ ահռելի ավերածություններ էին գործում:

Մարդը ջանում էր լավատես երեւալ, սակայն շատ էր մռայլ այն վիճակը, որի փրկության միջոցներից էր խոսում:

◇ ◇ ◇

Այսօրվա Շահումյանի ողբերգության վկա ռուս մի լրագրող՝ Ալեքսեյ Ֆյոդորովը («Մեգապոլիս-էքսպրես» թերթի ֆոտո-թղթակից), այսպես է արձանագրել իր ցավագին տպավորությունները.

«Ամսի 13-ն է, չգիտեմ՝ ինչ օր է: Առավոտյան ժամը 5-ի մոտ: Ամեն ինչից դատելով՝ սկսվում է ադրբեջանցիների հակահարձակումը:

Առավոտյան ժամը 7-ին երեւաց ՍՈՒ-25 ինքնաթիռը, երկու ռումբ գցեց, որոնցից մեկն ընկավ հիվանդանոցի վրա:

Առավոտյան 8-ին Շահումյանի վրա արդեն շուրջ 200 արկ էր գցել, գործում էին 3 «Գրադներ»: Զարմանալի է, որ այդպիսի հզոր ռմբակոծությունից հետո հիվանդանոցում միայն մեկ վիրավոր կա: Առա՛յժմ...

Շահումյանն ապրում է իր ամենածանր օրը: Մարտեր են գնում բոլոր ուղղություններով Բուզլուխում, Կարաչինարում, Մանաշիդում, Էրքեջում, Հայ-Պարիսում: Կարծես ամեն ինչի վերջն է:

Ծանրագույն օր է: Հիվանդանոց են բերում վիրավորներին: Ես նստել, թելադրում եմ շտաբում, որն իրականում անդադար ռմբակոծվում է՝ «Գրադից» ու տանկերից: Դրությունը շատ լուրջ է...

Այսպիսի հակահարձակում ոչ ոք չէր սպասում, բայց այն եղավ, եւ վիճակը վայրկյան առ վայրկյան սաստկանում է: Արդեն շտաբն էլ է էվակուացվում: Քաղաքում հրդեհ է, ավերածություններ, չգիտեմ՝ կա՞ն սպանվածներ: Հրետանիներն ու տանկերը գնացել են առաջավոր դիրքեր՝ Բուզլուխի մոտ:

Ահա այս ամսի 13-ը, ահա եւ ծանր կանխազգացումիս արդյունքը: Լքում ենք Շահումյանը, ոտքով գնում ենք Գյուլիստան: Թիկունքում արկերի պայթյուններ են: Ժողովուրդը հեռանում է քաղաքից, որը դատարկ է, ավերված, սարսափելի: Նահանջը սովորական է, ճիշտ է, առանձնակի խուճապ չկա, բայց ամեն ինչ ծայրահեղորեն դաժան է:

Օրվա երկրորդ կեսը: Հենց նոր ինքնաթիռը ռմբակոծել է, 4 ռումբ՝ իր ամբողջ ունեցածը: Բայց ռմբակոծությունը շարունակվում է. ինքնաթիռը երկրորդ շրջանն է կատարում: Իսկ մենք Գյուլիստանի ճանապարհին ենք:

13-ի երեկոյան: Գյուլիստանում ենք: Բոլոր գյուղերից սարերով, կածաններով, անասուններն առած, եղած-չեղածով, մեքենաների վրա այստեղ են հավաքվում մարդիկ: Արդեն ժամը 9-ն է: Ուղղաթիռներով մարդկանց փոխադրելն էլ անհնար է. կարող են վայր գցել («ՀՀ» ռուս., 1992, հունիսի 26):

Այստեղ էլ ընդհատվում է լրագրողի օրագիրը: Իսկ թերթի աշխատակցուհու հետ ունեցած զրույցին ասել է, թե ինքն Աֆղանստանում է եղել, բայց չի տեսել այսպես դաժանորեն կազմակերպված, ամենայն բծախնդրությամբ ծրագրված ու անցկացված արշավանք: Նման բան չեն տեսել եւ իր հայ բարեկամները, որոնք արդեն քանի տարի կռիվ են տալիս օմոնի ու թուրք ուրիշ ավազակախմբերի հետ: Ուրեմն, այստեղ խառն է ռուսական բանակի վարպետացած մասը...

Ալ. Ֆյոդորովը բազմիցս եղել է Արցախյան պայքարի հորձանուտում, եւ ցավով նշում է, որ այնտեղ քիչ է հանդիպել հայ լրագրողների, իսկ դա... «Պատմությունը չի ների» (նույն տեղում):

**Հունիսի 14**. Երեկվա հանրահավաքը (ՀՀԴ կազմակերպած) ղեկավարությանը մեղադրեց երկու խնդրում.

Ա) Արցախի կառավարության ընտրություններին խառնվեց, խճճեց-մճճեց՝ թույլ չտալով, որ ազատորեն ասպարեզ գան նորածին հանրապետության տնօրենները, իրենց ուսերին առնեն մարտնչող ժողովրդի ղեկավարությունը, եւ հիմա, երբ եկել է ամենավճռական պահը գոյապայքարի ճանապարհին, երբ անհրաժեշտ են անձնազոհության պատրաստ կոչումնավորներ, կա միայն մեկ պաշտոնակատար (ԳԽ-ի նախագահի):

Բ) Նախընթացին Ադրբեջանը երբեք չէր թաքցնում, որ զորքի ու զենքի, մանավանդ հզոր տեխնիկայի նոր կուտակումներով նախապատրաստվում է մեծ ու ամենավճռական կռվի, Արցախի վերջնական նվաճման: Իսկ հայկական կողմը դիմադրություն չէր կազմակերպում ո՛չ Արցախում, ո՛չ էլ սահմանային գոտում: Ի՞նչ է սա, կամավոր հանձնվել թշնամու ողորմածությա՞նը, բացահայտ դավաճանությո՞ւն, թե՞ թշնամու գերազանց ուժերի նկատմամբ տածած արհամարհանք, որ միայն կույրը: Դատապարտելին այն է, որ ՀՀ Գերագույն խորհրդում ու վերին մյուս օղակներում իրատես մարդիկ անընդհատ էլ զգուշացնում էին թշնամու նոր ուժերի կուտակումներից, հուշում կատարել վճռական քայլեր... Այսքանի փոխարեն տեղի ուներ միայն Շուշիի ու Լաչինի հաջողությամբ արբած-մոլորվածների մի հանգստություն, որից հետո էլ հանրապետության նախագահն ու նրա կամքով առաջնորդվողները, հատկապես ՀՀՇ առավել ազդեցիկ ներկայացուցիչները, պատրաստվում էին խաղաղ բանակցությունների գնալ Ադրբեջանի հետ, Արցախը նրա տիրապետությանը ենթարկեցնել, այսպես կոչված, մշակութային ինքնավարության կարգավիճակով:

Հանրահավաքի այս ոգին վրդովեցրել էր պաշտպանության ղեկավար Վազգեն Սարգսյանին: Հենց երեկ ուշ երեկոյան նա հեռուստատեսային իր ելույթում դատապարտեց կազմակերպիչներին (իհարկե, դաշնակցությա՛նը), որոնք ճակատի հաջողություննե-

թյամբ. եւ տրամաբանական պիտի լիներ կամ անմիջապես, անհետաձգելիորեն վերապատրաստվել, կազմակերպել բազմակողմանիորեն, կամ, հետագա կործանարար ողբերգությունները կանխելու համար, գնալ հրադադարի (որի գինը, իհարկե, անհնար է որոշել):

Պատգամավոր Զահուկյանցը երեւի անմիջապես խառնեց ԳԽ-ի ղեկավարության հաշիվները, երբ, հանրապետության ղեկավարների խնդիրը համարելով ժողովրդի ու հասարակության բոլոր խավերի, քաղաքական բոլոր հոսանքների միասնությունը, անզիջում պայքարն Արցախի պաշտպանության համար, առաջարկեց հենց հիմա, տեղնուտեղը, հատուկ որոշմամբ ճանաչել Լեռնային Ղարաբաղի հանրապետության իրավասությունը:

Ասպարեզ նետվեց Աշոտ Բլեյանը՝ փորձելով փրկել Գերագույն խորհրդի ու Հայաստանի անկախ հանրապետության պատիվը:

- Մեր անկախության հռչակագրում մենք հրաժարվել ենք Արցախի պահանջատիրությունից, հիշո՞ւմ եք: Ուրեմն, պարզ է, որ հիմա էլ պատրաստ ենք հրաժարվել նրա համար կռվելուց: Ինչպե՞ս կարելի է ժողովրդի գոյությունը հարցականի տակ դնել անհաշվենկատ քայլերով, արյունահեղության ճանապարհով:

Զահուկյանցի առաջարկի պաշտպանությամբ հանդես եկան Ավետ Գրիգորյանը, Աշոտ Նավասարդյանը: Իսկ Կիմ Բալայանը Բլեյանի հայտարարությունը համարեց բարբաջանք՝ հաստատելով, որ, հակառակը, Հայաստանի անկախությունը հենվում է մի քանի սկզբունքային հարցերի վրա, եւ նրանցից մեկն է Արցախի միավորումը Հայաստանին:

Ամբիոնում հայտնված Ալբերտ Բաղդասարյանը Խորհրդարանին խորհուրդ էր տալիս լրջորեն գնահատել իրողությունները, ուշքի ու խելքի գալ եւ նոր միայն ծրագրել ձեռնարկելիքը:

- Մի րոպե նկատի՞ եք առնում մեր ուժը, հնարավորությունները: Չե՞ք տեսնում, որ մեր դեմ ելել է ոչ միայն Ադրբեջանը, այլեւ Թուրքիան, առավել եւս՝ Ռուսաստանը: Դուք հաշվի առնո՞ւմ եք, որ Ադրբեջանից մեր դեմ եկած տանկերի վրա ոչ թե վարձկան կամ ծախու ռուսներ են, այլ Ռուսաստանի բանակի լավագույն ծառայողները, որոնք իրենց հանրապետության ղեկավարության հանձնարարությունն են կատարում: Այն ղեկավարների, որոնք մեր բերանը մի բան են գցել՝ մեր մանր հաջողությունները, մտածելով, որ դրանցով կգոհանանք եւ հետո քարշ կտանք մեր խեղճ գոյությունը: Իսկ տեսնելով, որ մենք մեծ ախորժակ ունենք եւ հասանելիքից ավելին ենք ուզում, հարձակվել են մեզ վրա եւ դաս են տալիս...

Այս բարբաջանքից կարելի էր եզրակացնել, որ մանր ու մաղձոտ հոգին ուրախ է ստեղծված վիճակի համար. հնարավորություն ունի իր հակառուսական, հակաարցախյան զառանցանքները օրվա «փաստերով հաստատել» եւ, մանավանդ, իր անառարկելի խրատը հրամցնել. Արցախը հանձնեցե՛ք իր տիրոջը՝ Ադրբեջանին եւ բավարարվե՛ք այն պատառներով, որ այստեղ են գցել ձեր առաջը:

Խոսում են Սամվել Շահմուրադյանն ու Լեոնիդ Հակոբյանը եւ պահանջում, որ հայ ժողովրդի առաջ հայտնված այս ամենաճակատագրական պահին պատգամավորները մի կողմ թողնեն անլուրջ խոսքերն ու անմիտ խորհուրդները եւ գործ կատարեն, փրկեն Արցախը:

Եւ Բ. Արարքցյանն այստեղ էլ գործի դրեց իր լարած մյուս կարեւոր զենքը ձայն տվեց Էդվարդ Եգորյանին: Եգորյանը լուրջ-լուրջ ասաց.

- Հիշո՞ւմ եք, երբ Լեռնային Ղարաբաղը նվաճում, ոտքի տակ էր տալիս ադրբեջանական բնակավայրերը, Մարիո Ռաֆայելին եկավ, նրան դատապարտեց իբրեւ ագրեսորի: Մեզ էր խնդրում, որ ազդենք, ես կանգնեցնենք ագրեսիայից: Մենք ասացինք՝ Ղարաբաղի ղեկավարությունը մեզ չի լսում, չի ենթարկվում: Հիմա ի՞նչ ասենք այն նույն Ռաֆայելիին: Առհասարակ միակ ճիշտ քայլը կլինի՝ չափենք մեր հնարավորությունները, մեր ուժն ու հեռանկարը եւ նոր միայն գործի անցնենք: Դրա համար էլ առաջար-



կում եմ խորհրդարանի հանձնաժողովների ուժերով քաղաքական վիճակի բազմակողմանի քննարկումներ կազմակերպել, կատարել բարեխիղճ հետազոտություններ, այս բոլորը ներկայացնել խորհրդարան, որից հետո մտածել որոշման կամ ձեռնարկելիք որոշակի քայլերի մասին:

Ուրեմն, պետք է թույլ տալ, որ թուրքը տերը դառնա ամբողջ Արցախի, մտնի նաեւ Հայաստանի սահմանային շրջանները, այդ ընթացքում կատարել ուսումնասիրություններ ու հետազոտություններ:

Այս առաջարկը երեկոյան նիստում հեգնանքի ենթարկեց Դավիթ Վարդանյանը:

- Չգիտես՝ մարդիկ անտեղյակությունի՞ց են անիմաստ առաջարկություններ անում, թե՞ չկամությունից,-հայտնեց նա, ապա ջնջեց ԼՂՀ ղեկավարության դեմ հանած մեղադրանքը.-Մեզ չե՜ն լսում, չե՜ն ենթարկվում: Բայց քեզ ո՞նց լսեն, խոսքդ բանի տեղ դնեն, երբ այստեղ հայտարարում ես, թե մեզ համար ընդունելի են այն որոշումներն ու վիճակները, որ Ղարաբաղի հայությունն ու նրա ղեկավարությունն են ընդունում... Իսկ Եվրոխորհրդարանում ու ԱՊՀ խորհրդաժողովներում ստորագրում ես թղթեր, որոնցով այդ Ղարաբաղը մտցվում է Ադրբեջանի կազմի մեջ: Սա ի՞նչ բարոյականություն է եւ առհասարակ հնարավո՞ր է պատկերացնել այսօրինակ երկերեսանի քաղաքականություն:

- Այստեղ ՀՀՇ-ական պատգամավորներն առաջարկում են Ղարաբաղը զիջել Ադրբեջանին եւ փոխարենը Հայաստանին պարգեւել խաղաղություն: Լա՜վ հաջողություն կլինի, թուրքը հենց դրան էլ սպասում է, որ մեզ խաղաղություն պարգեւի... Էլ ի՜նչ կասեք,-դարձյալ նա է, Դավիթ Վարդանյանը:

Ինչ մնում է Ղարաբաղին, ապա լա՜վ հիշեցեք. նա մեզ ոտքի հանեց, պայքարի ճանապարհ ցույց տվեց, ամենակարեւորը՝ հասցրեց բարձր դիրքերի, եւ հիմա, երբ ինքն ունի մեր օգնության կարիքը, թիկունքից փախչում ենք... Ո՞վ պիտի պատասխան տա այս տեսակ ապերախտության եւ դավաճանության համար:

Այս ոգով խոսեց նաեւ խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի ներկայացուցիչ Գագիկ Հովհաննիսյանը:

- Այստեղ խոսք եղավ մշակութային ինքնավարությամբ Արցախն Ադրբեջանի կազմում թողնելու մասին: Այդ խոսքի տերն ու դասակիցները չեն կարող չիմանալ, համոզված չլինել, որ Արցախի հանձնումն Ադրբեջանին (ի՜նչ իրավասությամբ էլ դա զարդարված լինի) պիտի նշանակի լոկ մի բան՝ այդ հանրապետության հայաթափումն ամենակարճ ժամանակում: Ուրեմն, մենք այստեղ Արցախի մահավճի՞ռն ենք երաշխավորում: Սա ի՜նչ խարդավանք է սեփական ազգի դեմ:

Առաջարկում է պատերազմական դրության համապատասխան լծակներ ստեղծել հանրապետությունում, ռազմական օգնություն հասցնել Արցախին, փրկել նրա անկախությունը, իսկ ՀՀ ղեկավարությունը պիտի հրաժարական տալ, քանի որ այն ո՛չ ուզում է, ո՛չ էլ ի վիճակի է կատարել իր առաջ հենց այսօր ծառացած խնդիրները:

Բ. Արարքցյանը վերջին ելույթների ժամանակ չէր կարողանում տեղը հանգիստ նստած լսել: Ընդմիջում էր, անտեղի դիտողություններ անում, կոպտում, ամենից շատ խրախուսում դահլիճի ՀՀՇ-ական միջարկությունները:

- Ես չեմ կարող իմ վճռական վերաբերմունքը չարտահայտել վերջին երկու ելույթների դեմ,-նստաշրջան կոչված ժողովը փակելուց առաջ հայտարարեց նա:-Մարդ խոսելուց առաջ թող չափի մեր ուժերը, գնահատի հնարավորություններն ու միջոցները: Մենք պետք է ընդհատենք նստաշրջանը, ապա նախագահությունում որոշենք, թե ի՛նչ ենք անելու: Դրա համար անհրաժեշտ է լինել տեղերում, ուսումնասիրել վիճակը, որից հետո կհավաքվենք Նախագահության նիստի եւ կընդունենք անհրաժեշտ որոշումը: Իսկ այժմ այն պահն է, երբ պետք է լինենք տեղերում, տեղերո՜ւմ:

Դահլիճում իրարանցում էր: Լսվեցին նոր առաջարկություններ, անելիքի ճշգրտման պահանջ, խորհուրդ... Բայց նախագահն ու համախոհները փախան այդ բոլորից:

Պարզ էր, որ Արարքցյանը հանձնարարություն ուներ՝ չընդունել եւ ո՛չ մի որոշում, մինչեւ կգա-կհասնի հանրապետության միանձնյա տերը: Դրա համար էլ վերջին խոսքն

ջանի վայրագությունները դադարեցնելու համար, իսկ թշնամու գրաված շրջաններում կծավալվի պարտիզանական պատերազմ՝ գումարած այն սրբազան ճակատամարտերին, որ ամբողջ արցախահայությունն է մղում ռուսական ծախու զորամասերի օժանդակությամբ Արցախ խուժած թուրք ավազակախմբերի դեմ։

Չեխերը ԼՂՀ համար փրկարար օգնություն են բերել շուրջ 15 միլիոն արժողությամբ՝ սնունդ, դեղորայք, հագուստ-կապուստ։ Եւ դեռ տեղ չհասցրած՝ ադրբեջանական լրատվական միջոցները բերան պատռելով աշխարհին են հաղորդում, թե Չեխոսլովակիայից, մարդասիրական օգնության պատրվակով, Ղարաբաղ են հասել նորագույն ահավոր զենքեր, այն էլ մարդասիրական կոչված Լաչինի ճանապարհով։

Նարեշտարն ու Ղազանչին ազատագրելիս զոհվել են մեր 20 ազատամարտիկներ (իսկ նախորդ հաղորդմամբ 10-ն էին)։

Հեռուստաթղթակիցը ցույց է տալիս Արցախից Երեւանյան հիվանդանոց ընկած վիրավորներին։ Մարաղեցի Յուրա Սարգսյանին հարցնում են.

- Ի՞նչ կարծիքի ես մեր կռվի մասին։

- Երեւի դժգոհելու տեղ չկար... առաջ, իսկ հիմա ցավով պիտի ասեմ՝ շունը տիրոջը չի ճանաչում։ Են որ գալիս-ասում են՝ սա դաշնակցական է, նա՝ ՀՀՇ-ական, երրորդը՝ չգիտես ի՛նչ, ա՛յ, դա՛ արեց։ Մենք ռազմադաշտում այս տարբերությունները ոչ միայն չպետք է զգանք, այլեւ չպիտի դրանց գոյությունն իմանանք։ Մենք հզոր ենք այն ժամանակ, երբ միասնաբար կռվում ենք որպես հայ մարտիկներ, հայոց հողի փրկիչներ ու պաշտպաններ։ Չէ՞ որ թշնամին մեկն է միայն՝ թուրքը։

Իսկ աչքի բաժնում Գագիկ Մխիթարյանին են հարց տալիս.

- Ի՞նչ կուզես այժմ։

Երեւում է, որ նրա աջ աչքի վիրակապի տակ այլեւս ոչինչ չկա։

Բայց նա վճռաբար հայտարարում է.

- Դուրս գրեն, եւ գնամ կռիվ։

- Իսկ բժիշկները չե՞ն արգելում։

- Բժիշկները պիտի արգելեն։ Իսկ արգելողներ որտե՞ղ չկան։ Տուն չկա՞, որի մեծերն իրենց բալիկներին արգելում են։ Իսկ մենք, թե ոտքի վրա ենք եւ դեռ կարող ենք հրացան բռնել, պետք է շտապենք այնտեղ, որովհետեւ եթե այս անգամ կորցրինք, դա կլինի մեր իսկական վերջը։

**Հունիսի 19-ին** Երեւանը խաղաղորեն հրաժեշտ էր տալիս Մարտակերտի շրջանի մարտերում զոհված սեւանցի երիտասարդ գնդապետ (36 տ.) Վլադիմիր Կարապետյանին։ Ժամը 12-ի կողմ դագաղը հանեցին կենտրոնական հրապարակի Օպերայի տնից, զինվորական շարքերի ուղեկցությամբ բարձրացան Սախարովի հրապարակի կողմով, որպեսզի տանեն Սեւան քաղաք, հանձնեն հողին։ Հիմնավոր ռազմական կրթություն է ստացել, դիրք է ունեցել ԽՍՀՄ զորքերում, բայց լսելով, որ իր հայրենիքը սեփական զորք է ստեղծում, վեր է կացել, ընտանիքն առել, եկել այստեղ, լավ պաշտպանել է ՀՀ սահմանները, կռվել Արցախի համար՝ իբրեւ Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանության ղեկավար։ Հիմա՝ այսպիսի անշո՜ւք հուղարկավորություն։ Չնայած ռազմաշարքեր կան, Սեւանում էլ կրակահերթով են դին հանձնելու հողին, անշո՜ւք է, քանի որ ժողովուրդը չէ նրան ուղեկցում վերջին ճանապարհին։ Իսկ համաժողովրդական ուղեկցություն պետք էր, որպեսզի դաս լիներ մնացած զինվորության համար։

Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը եկել, եռանդուն գործի է անցել։ Հրապարակեց հայտարարություն, որով հաղորդում է, թե ինչպես Ադրբեջանը պետականորեն լայն հակահայկական ռազմական գործողություններ է ծավալել, հիմա էլ ամենահրեշավորի եռուզեռի մեջ է. Օրդուբադի շրջանում ու Զանգելանում ռազմական հզոր ուժեր է կուտակել (հանգամանորեն հիշում է նաեւ փաստերի քանակը), որպեսզի զավթի Մեղրու շրջանը, վերացնի հայ-իրանյան սահմանակցությունը։ Բայց չէ՞ որ սրանով կսկսվի մի պատերազմ, որին իր պայմանագրային պարտավորությամբ ներքաշված կլինի ԱՊՀ զինվորությունը։



Նախագահը հատուկ հրամանագրով երեք ամսվա ժամանակով արտակարգ դրություն ստեղծեց Մեղրու եւ Կապանի շրջաններում՝ արտակարգ դրության պարետ նշանակելով ԳԽ-ի պատգամավոր Ալբերտ Բաղդասարյանին։

ԳԽ-ի Նախագահությունն էլ որոշեց ամսիս 23-24-ին խորհրդի արտակարգ նստաշրջան անել Արցախի վիճակի ու պաշտպանության խնդիրը քննելու համար։

Կենտրոնական լրատվության մարմինների հաղորդածով՝ Սարսանգի բարձրլեռնային ջրամբարի պայթեցման վտանգը սարսափ է տարածել Ադրբեջանում, սակայն կա նաեւ հույսը, թե այդ սպառնալիքի հեղինակ ժողովրդական վրիժառուները չեն գնա մի քայլի, որն ավերելու է ոչ միայն Ադրբեջանի 3-4 շրջանները, այլեւ Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւելյան մասը։

Իսկ դրությունն Արցախում ծայրահեղորեն լարված է։ Թշնամին շարունակում է գնդակոծել շրջանների կենտրոններն ու խոշոր բնակավայրերը։ Չնայած Մարտակերտից արեւելք, Հասանղայա-Լենինավան գծի վրա կասեցված է հակառակորդի առաջխաղացումը, ռմբակոծվում-ավերվում է շրջանը։ Այնտեղ, ուր ոտք է դրել թշնամին, եղել է արյունահեղություն, անմեղ մարդիկ մահ են գտել սեփական տների ավերակներում, եւ այս վայրագություններին մասնակից են Ադրբեջանում տեղակայված ռուսական զորքերը։ Հաթերքում ու մնացած լեռնային գյուղերում կուտակված են շուրջ երկու տասնյակ հազար փախստականներ, որոնց ծայրն արդեն Երեւան է հասել։

Ամերիկայի կառավարությունը հրապարակել է հայտարարություն, որով դատապարտում է հայ-ադրբեջանական բախումը նորից բորբոքելու մեջ մեղավորներին, միջազգային իրավասու կազմակերպություններից պահանջում դադարեցնել արյունահեղությունը, հաստատել խաղաղություն։

Ռուսաստանի արտգործնախարարությունը դիմում է հղել Ադրբեջանի արտգործնախարարությանը՝ դատապարտելով արյունալի գործարքն Ադրբեջանում տեղակայված զորամասերի հետ։

Ադրբեջանի պաշտպանության նախարար Համիդովն էլ իր հայտարարությունն է հրապարակել՝ պնդելով, թե Հայաստանը մեծ զորք ու զրահատեխնիկա է կուտակել Մեղրու կողմերում, իսկ իրենք հենց հիմա էլ կարող են վերանվաճել Լաչինը, սակայն դա հետաձգում են, որ բաց ճանապարհով հայկական ռազմական ուժերը հեռանան «Ղարաբաղի լեռնային մասից»։

Շահումյանի շրջանից վերադարձել է ՀՀ ԳԽ-ի պատգամավոր Խաչիկ Սաֆարյանը, որը լեռնաստանի պարտության համար նշում է տարօրինակ պատճառներ.

Ա) Ամենակարեւորը՝ Թուրքիան ու Ռուսաստանը շահագրգռված են Ադրբեջանի ամբողջության պահպանումով, եւ դա էլ օգնեց, որ մենք թողնենք Շահումյանը։

Բ) Ժողովուրդը խիստ դժգոհ է տեղական ղեկավարությունից, հատկապես գործկոմի նախագահ Շահեն Մեղրյանից, որը նախապես իր ու շրջանի մյուս ղեկավարների հարազատներին ուղարկել է Հայաստան, ապա պաշտպանությունը թուլացրել։

Գ) Նույնիսկ շրջկենտրոնի ականապատումը հանձնումից երեք օր առաջ վերացրած են եղել, որպեսզի թշնամին անվնաս ներս մտնի։

Ստուգման ու հաստատման կարիք ունեցող այս պատճառների կողքին նա հիշում է նաեւ մեկ աներկբայելին՝ մեր ինքնահանգստացման փաստը, մեծ բախմանը նախապատրաստված չլինելու հանգամանքը։ Իսկ դրա համար մեղավոր են ոչ միայն շրջանի պաշտպանության ղեկավարները, այլեւ ԼՂՀ եւ առավել եւս, ՀՀ ղեկավարները։

✧ ✧ ✧

Երեւանում «Աֆղանստանցիների» կոչը հայրենասիրական մեծ խանդավառություն է առաջացրել։ Հավաքվել են շուրջ երեք հազար երիտասարդներ՝ պատրաստ մասնակցելու վտանգված հայրենիքի սահմանների, Արցախի շրջանների պաշտպանությանը։

**Հունիսի 20-ին** ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերն ազատագրեցին Մարտակերտի

շրջանի Լենինավան գյուղը: Զգալի հարվածներ հասցրին նաեւ շրջանի մյուս բնակավայրերում եւ Ասկերանի ու Մարտունու շրջանների սահմաններում կուտակված թշնամական զորքերին՝ կասեցնելով առաջխաղացման ամեն մի փորձ: Նախիջեւանիկի ու Փիրջամալի համար մղված մարտերում խփել են ադրբեջանական 3 տանկ, այլեւայլ տեխնիկա:

Հաղորդում են, որ Ադրբեջանում ապրող տարբեր ազգերի ներկայացուցիչների կոչերով իրենց ազգակիցներից զորամիավորումներ են կազմակերպում Լեռնային Ղարաբաղում կռվելու եւ «հայրենիքի» անվտանգ ամբողջականությունն ապահովելու համար: Այդպիսի մի զորաջոկատ, բաղկացած 600 հոգուց, արդեն մասնակցում է պատերազմին: Իսկ Մրխավենդի վերանվաճման ժամանակ հակառակորդի տված զոհերի մեջ մեծ թիվ են կազմում ռուսները (չհայտնեցին՝ զինվորականնե՞ր են թե՞ աշխարհազորայիններ):

Այսօրվա լրատվության մեջ շատ են կոչերը, որոնցից մեկը ԼՂՀ կառավարության դիմումն է հայրենի ժողովրդին: Այնտեղ խոսվում է վտանգված հայրենի եզերքի ողբերգության, ժողովրդական վրիժառուների վճռականության, հաղթանակի հավատի մասին, ապա եւ այն անհանգստությանը, որ հարուցել են Երեւանում ու առհասարակ Հայաստանում պտտվող ասեկոսեների, անհանդուրժողական խառնակչության եւ Արցախը խաղաքարի վրա դնելու ապիկար փորձերի լուրերը:

ԼՂՀ կառավարությունը հայտարարում է նաեւ, որ Արցախից բնակչության դուրս գալը խստիվ արգելվում է, բացի այն դեպքերից, որոնց համար կլինեն հիմնավոր պատճառներ: Մանավանդ շահումյանցիները, որոնց ծերերը, կանայք ու երեխաները պետք է տեղավորվեն միայն մնացած շրջանների ապահով բնակավայրերում, իսկ զենք բռնելու ընդունակ ամբողջ բնակչությունը պետք է մասնակցի պարտիզանական պատերազմին, որպեսզի վառվի ու վառի թշնամու ոտքի տակի հողը:

Ադրբեջանի լրատվության ղեկավար Լեյլա Յունուսովան Մոսկվայի հեռուստատեսության աշխատակցին տված հայտարարության մեջ գազազած էր ԼՂՀ-ում հայտարարված պարտիզանական պատերազմի դեմ, իբր, դա եղանակ է քողարկելու եւ արդարացնելու իրենց զինվորության դեմ գործվելիք դաժանությունները: Եւ այն մոսկվացին էլ չի հարցնում, թե «Օրինապահ» դանջղն է՞լ ինչպես է պատկերացնում իր տուն ու տեղը կորցրած, նրանց ազատագրության համար պայքարող տառապյալների վերաբերմունքը. քեֆով-խնդությա՞մբ պիտի դիմավորի, թե՞ պիտի ընդառաջ գնա՝ բացականչելով՝ «Խո՜շ գյալմիսինիզ, ա՛յ ազիզ գարդաշլար»:

Հայաստանում Ռուսաստանի դեսպան նշանակված պատմ. գիտ. դոկտոր Վլադիմիր Ստուպիշինն իր հավատարմագրերը հանձնեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին, որը զարմանալիորեն, շատ ջերմ խոսքեր ասաց հայ-ռուսական փոխհարաբերությունների, պետական-քաղաքական ու մշակութային կապերի մասին: «Մեր պատմության ամբողջ ընթացքում մեր երկու ժողովուրդները երբեք չեն հայտնվել հակառակ ճամբարներում»,-ասաց նա՝ հավանաբար մոռացած Փարիզում ամսիս 4-ին, նաեւ հետագայում իր անհավասարակշիռ, անհեռատես հայտարարությունը «Դաշնակցային Ռուսաստանի» քաղաքականության վերաբերյալ:

**Հունիսի 21-ին**, կիրակի օրը, մեր լրատվությունը հաղորդելու ոչ մի նորություն չուներ, եւ դա ո՛չ թե նրա համար, որ այդպիսիք չկային, այլ որովհետեւ Արմենպրեսը՝ սրանց միակ ստնտուն, կիրակի օրերին չի աշխատում: Իսկ Մոսկովյան հեռուստատեսությամբ ադրբեջանցիները խրոխտորեն խոսում էին Ղարաբաղում իրենց ազատագրած 21 գյուղերի մասին: 21 հայկական գյուղ են ազատագրել հայերից: Սրամի՞տ են, չէ՞: Մերոնք էլ են հպարտանում... իրենց նվաճած Լենինավանով: Այդպես էլ ասում են՝ նվաճել ենք:

Ասկերանի կողմերում կռիվը գնում է Նախիջեւանիկ, Փիրջամալ, Վարազաբույն եւ Դահրավ գյուղերի համար: Այսօր թուրքերը Նախիջեւանիկի մոտ մեծ կորուստներ են տվել, այդ թվում՝ մեկ տանկ:

ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվելու են ՆԳՆ ներքին զորքեր, որոնք, հավանաբար, օմօնի դեր պիտի կատարեն: Թե չէ, էլ ինչի՞ համար են, եթե կարգին երկրում սահմանները բանակն է պաշտպանում, ներքին կարգ ու կանոնը՝ միլիցիան:

Շատ է աղմուկը Ռուցկոյի երեկվա հայտարարության շուրջ: Մոլդովայի ու Վրաստանի ղեկավարները դա համարում են ագրեսիա, նախկին ռուսական ինքնակալության բռնակալական վարքի ռեցիդիվ, իսկ ինքը՝ Ռուցկոյը, ինչպես եւ համախոհները շատ ջանքեր են թափում ապացուցելու համար, որ առաջնորդվում են միայն հասարակ մարդասիրության սկզբունքներով. ինչպե՞ս կարող են կողմնակի ու անտարբեր դիտորդի կեցվածք ընդունել, երբ իրենց աչքի առաջ Հարավային Օսեթիայում ցեղասպանություն է կատարվում, իսկ Մոլդովայի Մերձդնեստրյան երկրամասում էլ ոտնահարվում են մարդկանց, առաջին հերթին ազգային փոքրամասնության իրավունքները: Մեկն էլ չկա հարցնի, թե այդ ինչի՞ այս չորս ու կես տարվա ընթացքում գոնե մի անգամ էլ հանդես չեկաք Լեռնային Ղարաբաղի օգտին: Թե՞ մտածում էիք, որ այստեղ ադրբեջանական ավազակախմբերի ու խորհրդային զորամասերի կոտորած մարդիկ իսկակա՜ն մարդիկ չեն, որպեսզի նրանց զանգվածային սպանությունները համարեք ցեղասպանություն, կամ երբ Ադրբեջանը Ղարաբաղում վայրագություններ է անում, անում է ի շահ մարդու իրավունքների՞, ազգային փոքրամասնության ոտնահարված շահերի պաշտպանությա՞ն:

**Հունիսի 22-ին**, տեղի տալով ժողովրդական հոծ զանգվածների ցույցերի միահամուռ պահանջին, նորից ՀՀ ԳԽ-ի արտակարգ նստաշրջան հրավիրեցին, պետք է շարունակեին Արցախի հարցի քննարկումը: Այս մի նստաշրջանի արտասովորն այն էր, որ անցնում էր ԼՂՀ ԳԽ-ի Նախագահության անդամների մասնակցությամբ:

Խոսեց Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ կշտամբելով ԼՂՀ ղեկավարությանը, որն, իբր, ինքնագլուխ վճիռներ ու որոշումներ է հանում, անտեսում ՀՀ կառավարության ու տարբեր մարմինների վերաբերմունքը, տեսակետները: Ա՛յ, օրինակ, չի ուղարկել իր պատվիրակությունը Եվրախորհրդի Հռոմի խորհրդաժողովին, որը հրավիրված է բացառապես Արցախի բարդույթի քննարկման համար:

Այն տպավորությունն է ստացվում, թե նախորդ բոլոր ձախողանքների պատճառն այդ Հռոմ չգնալն է եղել, ավելի ճիշտ՝ փնտրվում էին պատճառներ, մեղավորներն էլ պիտի հայտնաբերվեին՝ համաժողովրդական դատաստան անելու համար, եւ ԼՂՀ ԳԽ-ի ղեկավարությունը նետվեց առաջ, հրաժարվեց Հռոմի խորհրդակցությանը գնալուց..., որպեսզի Հայաստանի ղեկավարներն անմիջապես հայտարարեին, թե հայ ժողովրդի գլխին եկած բոլոր աղետների պատճառն այդ չգնալն է... Նույնիսկ չգնալուց առաջ պատահածների: Անտարակույս այս հայտնության հեղինակը Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, եւ այդ մասին ամենից շատ նա էր խոսում: Սպառնում էր, թե հայ ժողովուրդն իր ողբերգական վիճակի համար դատաստան կտեսնի միակ պատճառի՝ միջազգային օրենքների արհամարհման (Հռոմի բանակցություններից հրաժարվելու) համար...

Նման ուրիշ բաներ էլ ասաց Տեր-Պետրոսյանը: Կարելի էր հաստատ եզրակացնել, թե երկու հանրապետությունների ղեկավարների հարաբերությունները լարված են այն աստիճան, որ կթելադրեն ծայրահեղ մի առճակատում, իսկ սա, ի՜նչ խոսք, կլինի ճակատագրական Արցախի վիճակի համար:

Շատ պիտի հետաքրքիր լիներ Արցախի առաջին ղեկավարի ելույթը, որ, թվում էր, պետք է ետ տաներ վարագույրը երեւույթների վրայից, նշեր մարտնչող երկրամասի այսօրվա հոգսերը եւ նրանց վրա ուղղեր բոլորի ուշադրությունը: Ճիշտ է, մի քանի օր առաջ տեղի ունեցած ընտրությունները չէին պարզել, թե ո՛վ է այսօրվա Արցախի առաջնորդը (ՀՀՇ-ական Ռոբերտ Քոչարյանը չէր անցել, բայց, հավանաբար, նստաշրջանին մասնակցած Բ. Արարքցյանի պատվիրակության ջանքերո՞վ՝ չէ՞ր անցել նաեւ դաշնակցության ներկայացուցիչ Գեորգի Պետրոսյանի թեկնածությունը): Եւ այժմ ՀՀ ԳԽ-ի նստաշրջանում Գ. Պետրոսյանը պիտի խոսի որպես ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար: Սակայն մի՞թե սա էլ կարող է որեւէ նշանակություն ունենալ, երբ նա ներկայացնում է իր կենաց ու մահու կռիվն անող Արցախը եւ առաջին անգամ ՀՀ ԳԽ-ում, Հայաստանի ղե-

րը մեզնից պահանջում էր միակողմանի ու անմռունչ ենթարկվել ՀՀ ղեկավարությանը։ Բայց նաեւ ա՞յն ժամանակ, երբ մեզ հանձնում են Ադրբեջանի մարդակերների տնօրինությանը եւ մեզ չեն էլ հարցնում՝ կդիմանա՞նք թե՞ ոչ։

Առհասարակ լավ կլինի մեկմեկու չդատափետենք բույլ տված սխալների համար։ Թե չէ, ես էլ հարց կտամ, թե այդ ինչպե՞ս է լինում, որ Հայաստանն անվտանգության պայմանագիր է ստորագրել Ալմա-Աթայում, իսկ այսօր իր աչքերի առաջ ԱՊՀ տանկերն ու տանկիստները կռվում են հայ ժողովրդի դեմ...

Մեզ կփրկի միայն միասնությունը։

Գրիգոր Ավագյանն առաջարկեց զորակոչ իրականացնել՝ այդ միջոցառման խստագույն եղանակով։

Արկադի Մանուչարովը գտնում էր, որ ՀՀ ԳԽ-ն անհապաղ պիտի ճանաչի ԼՂՀ-ը, նրա պաշտպանության աջակցությունը դարձնի իր գերագույն խնդիրներից մեկը։

Աշոտ Բլեյանը, համաձայնելով իրենց (ՀՀՇ) պատգամավորական խմբի հետ, կոչ արեց հաշվի նստել մեզնից դուրս գոյություն ունեցող իրողությունների հետ, մեր շրջապատի հետ եւ նոր միայն գործի անցնել։ Զայրացած էր նրանց դեմ, ովքեր կարծում են, թե պետք է ապավինել սեփական ուժերին, իսկ իրականում վզները ծուռ սպասում են, թե իրենց ինչ կտան ռուցկոյները։ «Եւ մեր հարցը միջազգայնացնելով էլ խաղալիք կդառնանք մեծ տերությունների ձեռքին։ Իսկ ի՞նչ էր այդ Շուշիի ու Լաչինի նվաճումը։ Մեր վճռական սխալը, որի համար անընդհատ պիտի վճարենք։

Վայրենության հավասար բան է չհասկանալն այն սխալի, որ է՛ Արցախին անկախություն տալը։ Մեր խնդիրը պիտի լինի արցախցուն պահել Արցախում (մեռած թե ողջ՝ միեւնո՞ւյն է-Բ.Ու.)։ Իսկ նրանից հետո կարգավորել հարաբերությունները հարեւանների հետ, մանավանդ, երբ գիտենք Թուրքիայի տրամադրությունն ու հնարավորությունները...

Այս, մեղմ ասած, ողորմելի, անձնատվական բարբաջանքից հետո ամբիոնին հայտնվեց Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը եւ, հանրապետության իրադրությունը համարելով ծայրահեղ ողբերգադրամատիկական, պահանջեց երեք բան՝ Ա) Սահմանամերձ շրջաններում սահմանել ռազմական դրություն, Բ) Պատերազմի ընթացքում դադարեցնել բոլոր կուսակցությունների գործունեությունը եւ Գ) Գրաքննություն սահմանել եւ խստորեն վերահսկել հրապարակվող գրավոր ու բանավոր խոսքը։

Այս առաջարկությունը դահլիճում պայթեց իբրեւ շշմեցնող ռումբ, նիստը փակվեց։

Հունիսի 23-ի նիստը ոչնչով չպետք է տարբերվեր նախորդից։ Նույն հաջող ու անհաջող ելույթները՝ ըստ էության անհեռանկար, որովհետեւ որոշում չպետք է ընդունվեր, եւ դա գիտեին, որոշել էին միայն երեք նախագահները, թերեւս միայն Լ. Տեր-Պետրոսյանն ու Բ. Արարքցյանը, իսկ խորհրդարան կոչվածը կարծում էր, թե դեռ հնարավոր պիտի լինի խորհրդի գալ, համերաշխվել, չէ՞ որ այնտեղ, Արցախում հայ ժողովրդի մի մասն է քրքրվում, արյուն տալիս։

Ելույթներից այստեղ պիտի հիշեմ էականները, նրանք, որոնք թելադրված էին մեծ անհանգստությունից եւ խոսողի նշանակալից անհատականությունից։ Թե չէ, հիմա սովոր են ամբիոն զբաղեցնելու, որպեսզի ընտրողներն ու տանեցիները տեսնեն, որ իրենք էլ կան այն մեծ ու կարեւոր ժողովում։

Վարդգես Պետրոսյան.-Մենք խաբեցինք, դավաճանեցինք Արցախի հերոս ժողովրդին։ Մենք պետք է ճանաչենք ԼՂՀ-ը, նրա հետ մեր հարաբերությունները կազմակերպենք իբրեւ անկախ ու ինքնուրույն պետության հետ։ Դրա համար երեւի անհրաժեշտ կլինի ստեղծել մի արտակարգ խորհուրդ, փրկության կոմիտե, որը հանրապետության նախագահի հետ կծրագրի, կիրականացնի առաջադիր խնդիրները։ Դա կբացառի դիկտատուրան, կապահովի նախագահի ու ընդդիմության համագործակցությունը, իսկ սա էլ կնշանակի՝ քաղաքական կյանքին մասնակից դարձնել մեր ժողովրդի բոլոր կենսունակ ուժերը։

Հայաստանի կառավարությունը, ԼՂՀ-ը ճանաչելով, արդեն պիտի լայն գործունեություն ծավալի՝ միջազգային ասպարեզներում եւս նրա իրավասությունը ճանաչման ար-



ժանացնելու համար։

Գալով Շահումյանի շրջանի ողբերգությանը՝ ես եւս կարծում եմ, որ այն հետեւանք էր, չգիտեմ ո՛ւմ կողմից, նախապես ծրագրված մի խարդավանքի, որ կարող է կրկնվել նաեւ ուրիշ վայրերում, եթե մենք չզգաստանանք։

Հրաչիկ Սիմոնյանի խոսքը, որ բազմիցս ընդհատվեց ՀՀՇ-ականների, ՀՀ նախագահի կողմնակիցների եւ մանավանդ նիստին նախագահող Արարքցյանի կողմից, մի հիմնավոր մեղադրական էր նախագահի ու նրա կառավարության արած-չարածի դեմ։

- Մենք գտնվում ենք տերմիդորյան հեղաշրջման նախօրյակին,-ասաց նա։-Այս իշխանությունն իրեն ցույց տվեց իբրեւ մի անճարակ ու անգործունյա մարմին, որը չի կարողանում ապահովել երկրի ղեկավարությունը, որեւէ առաջքայլ կատարել տնտեսական, քաղաքական, մշակութային բնագավառներում։ Ամենուրեք անհուսալի ճգնաժամ է։ Խորհրդարանը պարզապես չի կատարում իր դերը, իսկ նախագահական այս կարգը... պարզապես ցույց տվեց, որ ավելորդ մի բեռ է մեր խղճուկ հանրապետության ուսերին։ Սա առավել ցայտուն դարձավ մեր նախագահի սխալաշատ գործունեության պայմաններում, երբ ի ցավ մեզ, հայտնի դարձավ նաեւ, որ մարդը տառապում է անսխալականության սինդրոմով։

Մենք սկզբում մոլորություն ունեինք մտածելու, թե ինքնորոշվող Արցախի հարցը կլուծվի մեր տարփողած կոչերի ու հանրահայտ օրենքների հիման վրա։ Հիմա համոզված ենք, որ այն պիտի լուծվի միայն զինական դիմադրությամբ, հետեւապես եւ անցանք նրա ինքնապաշտպանության կողմը։ Բայց մեր կողքին, նախորդից ո՛չ պակաս ապիկարությամբ, հեղհեղուկ մի քաղաքականության է փարվել մեր ղեկավարությունը, անվերջ տատանվում է ու սայթաքում։ Ո՞ւմ էին պետք նրա հոխորտանքները ռուսական կայսրության դեմ, եթե պիտի գնար, մասնակցեր Ժելեզնովոդսկյան կատակերգության եւ հետագա շրջանի անլուրջ խաղերին։ Չէ՞ որ այս ամենն առնվազն անլուրջ է։

Մեր հանրապետության նախագահը երեկ իր ու իր ղեկավարած իշխանության ճակատագրական սխալների համար մեղավոր ճանաչեց ընդդիմությանը։ Ապա աշխարհով մեկ հայտարարեց, թե հրաժարվում է Արցախի խնդրից, որովհետեւ, իբր, այն տանում է դեպի մեծ պատերազմ, իսկ դա պիտի լինի հայ ժողովրդի վերջը։ Իսկ նրա՝ մինչեւ վերջ պայքարելու կոչերի, Ազատության հրապարակում խաղացած դերի, ժողովրդին հեղափոխական էքստազի մղելու համար ո՞վ պիտի պատասխան տա։

Ամենուրեք հայտարարում է, թե ինքը կանգնած է ՀՀՇ դիրքերում եւ անշեղորեն իրականացնում է նրա որդեգրած նպատակները։ Բայց որո՞նք են նրա նպատակները՝ ձեռք ձգած իշխանությունը ձեռքում պահելուց բացի։ Եւ առհասարակ այն ե՞րբ է եղել, որ պետության պրեզիդենտը կանչի մեկ հոսանքից, կուսակցությունից՝ թշնամություն տածելով մյուսների դեմ, արհամարհելով ժողովրդի առաջավոր ուժերին ու ամբողջ մտավորականությանը։

Մեր խորհրդարանի, մեր ամբողջ այսօրվա ամենակարեւոր խնդիրն է՝ պաշտպանել Արցախի պայքարը, նրա իրավունքները, մեր հանրապետության սահմանները։

Ես համոզված եմ, որ Գերագույն խորհուրդը վճռաբար «ո՛չ» կասի նախագահի պարտվողական քաղաքականությանը, կմերժի նրա հակահայկական ծրագրերը։

Ռոբերտ Քոչարյանը (Արցախի ՀՀՇ ղեկավարը) ասում է՝ ինքը կարծել է, թե Արցախի այսօրվա վիճակն է իշխելու բոլորի մտքերի վրա, Արցախի խնդիրը բացառելու է տարաձայնությունները, միավորելու է բոլոր ուժերը։ Ուրեմն՝ սխալմունքի մեջ է եղել։

Շահումյանի պարտությունն ինչի՞ հետեւանք է, հատկապես երբ նկատի առնենք Շուշվա ու Լաչինի մեր աննախադեպ հաջողությունը։ Իհարկե, ադրբեջանական ուժի արթնացման ու բազմապատկման։ Մենք պետք է հակաուժ ստեղծենք, իսկ այստեղ բանակռվով ենք զբաղված։

Ես կարծում եմ՝ ՀՀ նախագահի ու ընդդիմության տեսակետները (Արցախի վերաբերյալ) իրար չեն մերժում (սխալվում է. -Բ.Ու.), այլ լրացնում են եւ կարելի է հաշտության գալ, իրար լրացնելով ամբողջացնել։ Այստեղ շատ խոսեցին հեռու-մոտիկ հարե-

վտանգի տակ դնելով ապագան: Սա, ըստ էության, սահմանադրական ուղիների մերժում է (դարձյա՛լ սահմանադրական.-Բ. Ու.): Իսկ ես գործում եմ հարազատ մնալով սահմանադրության ոգուն, միջազգային կարգապահությանը: Դուք մերժում եք այդ: Կտեսնենք, թե ով է իրավացի:

✧ ✧ ✧

Առանց ծանոթ լինելու ստորջրյա կամ, այսպես կոչված, անդրկուլիսյան խաղերին ու գործարքներին, կարող եմ ասել, որ նախագահներին հաջողվեց ընդդիմությունը մղել փակուղի, խլացնել: Բայց երկա՞ր ժամանակով: Հիմա մնում էր փակել հաշիվը որոշման հետ: Նախագծի տարբերակները կարդացին, դարձան առաջարկություններին ու ավելացում-պակասեցումներին: Ջուրը պղտորեցին ու նիստը համարեցին փակված:

Լեւոն Տեր-Պետրոսյանը Թուրքիայում Անկարայի նախաձեռնությամբ հրավիրված խորհրդաժողովին էր գնում եւ ամենայն հավանականությամբ, համոզված էր, իրենց ուզածն ստացել է. ընդդիմության նախագծով որոշում չի ընդունվի:

Հաջորդ օրը, հունիսի 24-ին, Աշոտ Բլեյանը հետեւյալ դասը պիտի տար խորհրդարանին (անպայման սա եւս նախատեսված էր).

- Ես այնքան անբարոյական չեմ (այսինքն՝ անբարոյական է, բայց ո՛չ այնքան.-Բ.Ու.), որպեսզի, չլինելով զինվոր, մարդկանց կոչեմ կռվի՝ Արցախը պաշտպանելու համար: Հետո էլ, ի՞նչ երաշխիք, թե Ադրբեջանն ինչ-որ տեղ կկանգնի եւ կասի՝ բա՛վ է, ապրեցե՛ք, հայե՛ր:

Ազգային դաշինքը (հիմա արդեն այսպես է կոչվում 7 կուսակցությունների պատգամավոր-ներկայացուցիչների խմբակցությունը) ներկայացրեց նախագիծ, որը պահանջում է ճանաչել ԼՂՀ-ը, ամեն կերպ օգնել նրա պայքարին, անկախության գործին եւ չընդունել միջազգային որեւէ փաստաթուղթ, որի մեջ ԼՂՀ-ը նշված կլինի Ադրբեջանի կազմում:

ՀՀՇ նախագահ-քահանան հայտարարեց, որ իր կազմակերպությունը դեմ է նման որոշմանը, քանի որ այն հայ ժողովրդին կմղի վտանգավոր քայլերի, կհասցնի ծանր վտանգներով հղի վիճակի:

Ելույթ ունեցավ ՀՀՇ գաղափարախոս, երեւի այդ կազմակերպության «ծանր հրետանու» դերակատար Էդվարդ Եգորյանը եւ ասաց մոտավորապես այս խոսքը.

- Մեր ֆրակցիայի համար բարդը Դաշինքի երկրորդ կետն է: Այն, որ ասում է՝ «անօրինական համարել միջազգային ամեն մի փաստաթուղթ, որի մեջ ԼՂՀ-ը նշված կլինի Ադրբեջանի կազմում»: Եկեք նախապես չխանգարենք առաջիկա միջազգային խորհրդաժողովների ու բանակցությունների ընթացքը: Մենք դեռ չգիտենք, թե ի՛նչ է կատարվել Լաչինի միջանցքի հետ: Հետո էլ մենք այդ կետով կգրգռենք Ադրբեջանին (ինչպե՜ս ուշադիր է թշնամու նկատմամբ, եւ երբեք այդպիսի ուշադրություն չի նվիրել Արցախի իր հայրենակիցներին):

Դահլիճի տարբեր կողմերից էլ դասակիցները բացականչություններով լցրին մթնոլորտը՝ «Կգրգռվի՜ Ադրբեջանը», որի տակ անշուշտ, հասկանում էին նաեւ Թուրքիան:

Այսքանից հետո արդեն Բաբկեն Արարքցյանը հանդիսավորապես հայտնեց, որ նման պայմաններում որեւէ որոշում ընդունելն անիմաստ է:

- Սպասենք,-ասաց,- նախագահը վերադառնա, նրա ղեկավարությամբ մեծ ու կարեւոր խորհրդակցություն անցկացնենք եւ այնտեղ ընդունենք մեր հիմնական որոշումը:

Դավիթ Վարդանյանը մերժեց այդ առաջարկությունը: Ասաց.

- Նման խորհրդակցությունները միայն բարդացնում են մեր խնդիրը եւ ոչ մի որոշում էլ չեն ընդունում:

Երեւի դրա հետ համաձայն էր նաեւ Արշակ Սադոյանը. «Եթե հիմա ընդունենք մեր



որոշումը, այն անպայման կողմնորոշիչ նշանակություն կունենար սպասող ամեն տեսակ ժողովների համար»:

Հրանտ Խաչատրյան.-Դուք հետաձգում եք որոշման ընդունումը՝ դրության ամբողջ ծանրությունը թողնելով ԼՂՀ ղեկավարության եւ ժողովրդի ուսերին: Մի՞թե մեզ չպիտի անհանգստացնի այն վիճակը, որին զոհ գնաց մի նախագահ, հիմա էլ վտանգված է ամբողջ Արցախը:

**Հակոբ Սանասարյան**.-Ամո՜թ է, խայտառակությո՜ւն, երբ այսքան ժամանակ արտակարգ նստաշրջան էինք անում եւ հիմա էլ հանգիստ ուզում ենք հետաձգել նրա եզրակացություն-որոշումը:

Ես նստած եմ չորրորդ շարքում եւ անընդհատ ձեզ էի դիտում, պարոն Արարքցյան: Դիտում էի եւ թվում էր, թե դուք 1945 թ. մայիսի 9-ի տոնահանդեսն եք ընդունում՝ ուրախ, կատակելով, խնդմնդալով: Դա խայտառակություն է, ամոթալի մի բան: Մի՞թե դուք այդպես էլ չհասկացաք, թե նստաշրջանն ի՛նչ հարցի է նվիրված: Արցախի ողբերգությանը մինչեւ վերջ էլ անհաղո՞րդ պիտի մնաք:

ՀՀՇ-ականներից մեկը, երեւի մթնոլորտը լիցքաթափելու համար, ասաց. եթե այսպես՝ հրապարակավ որոշում ընդունենք, կնշանակի մեր գաղտնիքն աշխարհով մեկ անել: Լավ է գնանք փակ դռների ետեւ որոշում ընդունենք:

Կիմ Բալայան.-Ըստ էության մեր եւ ՀՀՇ կարծիքները նախագծի երկրորդ կետի մասին՝ նույնն են. մենք ասում ենք՝ չընդունել որեւէ թուղթ, որի մեջ Արցախն Ադրբեջանի կազմում կլինի նշված, դուք էլ ասում եք՝ ճանաչենք այն թղթերը, որոնք ընդունելի կլինեն ԼՂՀ եւ նրա բնակչության կողմից: Սրանք նույն բաներն են, եւ ոմանք իզուր են մուկ ու կատու խաղում:

Ալեքսան Հակոբյան.-Մենք իրավունք չունենք ազգը կործանման տանող որոշում ընդունելու, պարտավոր ենք հետեւել մեր ղեկավարության ճկուն քաղաքականությանը:

Ինչ-որ մեկը.-Եթե մենք այսօր որոշում չընդունենք, կնշանակի կողմ ենք, որ Արցախը հանձնվի Ադրբեջանին: Մենք մեր որոշումն ենք առաջարկում, թող անվանական քվեարկության դնեն, որպեսզի պարզվի, թե ով ո՛վ է:

Սրան շատերն են կողմ: Իսկ Հրանտ Խաչատրյանն ասում է.

- Տեսա՞ք՝ Արցախի ներկայացուցիչներն ասպետորեն դուրս եկան, որպեսզի մենք, առանց որեւէ ճնշման ու անհարմարության, ընդունենք մեր ուզած որոշումը: Եթե նրանք էլ այստեղ լինեին, 7 հոգի, պարզ է, որ Դաշինքի նախագիծը կանցներ առանց այլեւայլության:

Բ. Արարքցյան.-Առաջարկում եմ թողնել հաջորդ երկուշաբթի օրվան, որպեսզի կազմակերպենք լայն քննարկում (ուրեմն, այս երեք թե երկու շաբաթներին նեղ քննարկում է եղել.-Բ. Ու.):

Այս առաջարկությունն իրար է խառնում դահլիճը, եւ հեռուստատեսությունը ձեռ է քաշում ժողովրդի արյունը պղտորող այն խաղից, որի մեջ է իր ընտրած խորհրդարանը:

Անխորհո՜ւրդ խորհրդարանը:

**Հունիսի 25-ին** Մոսկվայից, վերջին ամիսներին այս էլ ո՜րերորդ անգամ, ցույց տվին Հեյդար Ալիեւի լպրծուն մռութը: Դժգոհում էր Հայաստանի ղեկավարների դեմ, իսկ «երաժշտական» ֆոնը Մահիտ Մամեդովի վնգստոցն էր Նախիջեւանի շրջափակման մասին: Տեսե՜ք,-ասում է,-հայերն այս ինքնավար հանրապետության ավտոճանապարհն ու երկաթգիծը փակել են եւ թույլ չեն տալիս, որ անխափան գործեն, զարգացնեն տնտեսությունը...

Եւ աստված, եթե այն իսկապե՛ս կա, նրա բերանը վառվող ձյութ չի լցնում, որպեսզի ավազակների թմբկահարը հասկանա, թե ինչպե՛ս տարիներ շարունակ Արցախն ու Հայաստանը շրջափակումների մեջ պահողը գոնե այդ մասին ձեն չպիտի հաներ:

Ալիեւի դժգոհությունը հաստատելու համար մեկ էլ ցույց տվին Նախիջեւանի ինչ-որ

դաշտ, ուր վրանների տակ ծվարել են, իբր, «Սադարակի շրջանից փախած տասնյակ հազարավոր աշխատավոր անմեղ մարդիկ»: Տեսե՞ք-տեսե՞ք, առաջն ամառ է գալիս, եւ այս դաշտում, վրանների տակ շուտով կբնակվեն համաճարակները...

– Հայերը պահանջում են, որ այս շրջանում խաղաղություն հաստատելու համար դիտորդներ գան Իրանից,-Ալիեւն է բարբաջում:-Սակայն քանի որ խոսք է տրվում, թե Իրանը ռազմական օգնություն է հասցնում Հայաստանին (Իրա՞նը... ռազմական օգնությո՞ւն... Հայաստանի՞ն), մենք էլ առաջարկեցինք, որ դիտորդներ ուղարկի նաեւ Թուրքիան: Հայերն ընդդիմացան դրան: Առաջարկեցինք Ռուսաստանի դիտորդների հարց, դրան եւս չհամաձայնեցին... Հիմա ի՞նչ պիտի լինի, նրանց ի՞նչ առաջարկություն անենք, որ համաձայնության գան եւ մեզ չհալածեն մեր տնուտեղից,-գանգատվում է Նախիջեւանի մեջլիսի սադր Հեյդար աղան:

✧ ✧ ✧

Թուրքերը, ռազմական ծանր տեխնիկայի ուղեկցությամբ, փորձում էին Մարտակերտի շրջանում առաջ շարժվել, մեր ինքնապաշտպանները հակահարված տվին, վերագրավեցին Մարգուշավանը:

Վերականգնվեց Ստեփանակերտ-Երեւան հեռախոսակապը, այսօր տրվեց առաջին հաղորդումն Ստեփանակերտի հեռուստակենտրոնից: Էկրանին փախստականներն են: Ցավալի տեսարան, հուսահատեցնող պատկերներ:

Մոսկվայից հաղորդում են թուրքի հրամցրած լուրը՝ կռվում են Մարտակերտ քաղաքից մեկ կիլոմետրի վրա, պաշարած ունեն Ասկերանը, իսկ հայերն Աղդամն են հրետակոծում:

Ասում են՝ Կուբաթլիի շրջանում խփվել են հայկական երկու ինքնաթիռներ, որոնց անձնակազմերը փրկվել են:

**Հունիսի 26-ին** Լեւոն Տեր-Պետրոսյանը վերադարձավ Ստամբուլից, սեւծովյան շրջանի տնտեսական գոտու գործունեությանը վերաբերող թղթեր ստորագրելուց բացի, հանդիպումներ ունեցած Սուլեյման Դեմիրելի, Ելցինի ու Կրավչուկի հետ (Սրանց մանրամասներն ու արդյունքները հետո կտեսնենք):

Ասում են՝ ադրբեջանական զորամասերը նոր հարձակումներ են ձեռնարկել Մարտակերտի ու Ասկերանի ուղղությամբ: Առաջինում մերոնք կենտրոնում ետ են քաշվել, ապա աքցանի մեջ առել եւ պատճառել մեծ վնասներ. օրինակ, վեց տանկ են գրավել, երեքը ջարդած, երեքն անվնաս: Թշնամին տվել է սպանված 50 ասկյար, մերոնք՝ լոկ երկու վիրավոր: Մատաղիսն ազատագրել ենք:

Ասկերանի ուղղությամբ թշնամին կորցրել է շուրջ 140 սպանված, տանուլ է տվել չորս զրահամեքենա, 2 տանկ եւ նահանջում է: Իբր, սպանվածների մեջ մեծ թիվ են կազմում այլազգիները:

Ադրբեջանցիները հայտարարել են, թե կցանկանային Շահումյանի շրջանի գրավման ժամանակ գերի վերցրած 21 հայ զինվորներին փոխանակել Խոջալվում պատանդ տված թուրքերի հետ:

ՀՀ սահմանային շրջանները, հատկապես Իջեւանն ու Կրասնոսելսկը, ռմբակոծության են ենթարկվում:

Մոսկվայից հաղորդեցին, որ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունն Ադրբեջանին բողոք է ներկայացրել Կասպիական նավատորմի զորամիավորումների դեմ տեղացիների ամենօրյա հարձակումների ու ստորացումների համար: Եւ, ըստ երեւույթին, արդեն մոռացել են այն իսկական ինքնաստորացումը, որ իրենք էին իրենց հասցրել՝ սեփական զինամթերքն ու ռազմական տեխնիկան նվիրաբերելով այդ ավազակախմբերին:



✧ ✧ ✧

**Հունիսի 28-ին** Հռոմ էր հասել ԼՂՀ ԳԽ-ի նախագահության ուղերձը մեկ օր հետո սկսվելիք համաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելիին ու համաժողովի մասնակից երկրների ներկայացուցիչներին: Այն ներկայացնում ու բացատրում էր այն հանգամանքերը, որոնք ԼՂՀ պատվիրակությանը թույլ չտվին մասնակցելու համաժողովին: Ուղերձում ասված է. «Ամեն անգամ կոնկրետ բանակցությունների կամ մեր մասնակցության վերաբերյալ որոշումների ընդունման նախաշեմին ադրբեջանական կողմը լայնածավալ հարձակում է սկսում բոլոր ճակատներով, ինչը, օրինակ, տեղի ունեցավ հունիսի 12-ին... եւ հերթական անգամ հունիսի 28-ին՝ Հռոմի հանդիպման նախօրեին: Նմանօրինակ հարձակողական գործողությունների հետեւանքով մենք ունենք տասնյակ գրավված եւ ավերված բնակավայրեր եւ մի քանի տասնյակ հազար փախստականներ:

Մեզ ուղարկված հաղորդման մեջ, ինչպես նաեւ ընդունելիք փաստաթղթերում՝ օրինականորեն ընտրված ԼՂՀ իշխանությունների կարգավիճակն իջեցվում է մինչեւ «հայկական համայնքի ներկայացուցիչների» կամ նույնիսկ «Ստեփանակերտի ներկայացուցիչների» կարգավիճակի: Դրանով իսկ հանրապետության բնակչության 90 տոկոսի կողմից օրինականորեն ընտրված իշխանությունների ներկայացուցչությունը հավասարեցվում է ադրբեջանական համայնքի ներկայացուցիչների հետ, ինչը բացարձակապես անընդունելի է:

Մեր կարծիքով՝ Հռոմի նախապատրաստական հանդիպման գործունեության ուղղվածությունը միակողմանի մոտեցում է ենթադրում այդ հարցի լուծմանը՝ հօգուտ Ադրբեջանի, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղի պահպանումն Ադրբեջանական հանրապետության կազմում: Դրա հետեւանքով լիովին տնտեսվում է ժողովրդի ինքնորոշման օրինական իրավունքը, որն արտահայտվել ու հաստատվել է 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով»:

Այս պատճառաբանություններով էլ բացատրվում է ԳԽ-ի նախագահության որոշումը ԼՂՀ պատվիրակության՝ Հռոմի նախապատրաստական խորհրդակցությանը չմասնակցելու հանգամանքին՝ միաժամանակ հիշեցնելով, որ «Այդ որոշման վրա լրջորեն ազդել է ԼՂ-ի հանրապետության դեմ Ադրբեջանի ագրեսիայի հերթական սաստկացումը եւ այդ կապակցությամբ մեր մտահոգությունը»:

Մեզ հայտնի չէ՝ ուղերձը հանդիպման ընթացքի ու ընդունած (հիմնականում անդտող) փաստաթղթերի վրա որեւէ ազդեցություն թողե՞լ է թե՞ ոչ: Սակայն, որ այստեղ, Հայաստանում, փոթորիկ է առաջացրել, դա կտեսնենք:

✧ ✧ ✧

**Հունիսի 29-ին** Հռոմում բացվեց ԵԱՀԽ ժողովի 4-րդ նիստը, որը նորից պետք է զբաղվեր Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու խնդրով: Հայտնի չէ՝ ի՞նչ պիտի որոշվեր, կամ հավաքվածներն առհասարակ տրամադրվա՞ծ էին որոշում ընդունելու: Նախօրյակին, երեւի այս անորոշությունը լավ հասկանալով, Ելենա Բոններն իր կարծիք-առաջարկությունն էր հրապարակել «Ռուսկայա մըսլ» թերթի հունիսյան համարում: Այն արտատպել է մեր «ՌԱ» թերթի այսօրվա համարը: Ասում է. «Այս օրերին կսկսվի Ղարաբաղում խաղաղ կարգավորման ԵԱՀԽ-ի Հռոմի հանդիպումը: Միամտություն է կարծել, թե բանակցությունները թեթեւ կլինեն, բայց ոչ պակաս միամտություն է մտածել, թե կան ուժեր, որոնք կկարողանան Ղարաբաղը վերադարձնել նախկին կարգավիճակին...»: Եւ ի՞նչ է առաջարկում հանճարեղ Սախարովի գործի արժանավոր շարունակողը: Ասում է՝ անհրաժեշտ է ստեղծել հովանավորչություն (պրոտեկտորատ): Այսպես. հարցը կարգավորելուն լծվում են երեք ոչ շահագրգիռ տերություններ (մեկը մուսուլմանական, մեկը՝ ԱՊՀ անդամ, մեկն էլ՝ եվրոպական), որոնք եւ ապահովում են հրադադարը, ինքնորոշվող կողմի պահանջներին անդրադառնում ամենայն բծախնդրությամբ, չնայած սա շատ ծանր պարտականություն է, քանի որ կա սահմանների ան-

ԼՂՀ պատվիրակության չմասնակցելուն՝ այն դատապարտելով, քանի որ, իբր, այդ ԵԱՀԽ-ի միջնորդումներին մասնակցելը «Դա մեր միակ շանսն էր, մեր միակ հնարավորությունը ... պահպանելու Լեռնային Ղարաբաղը»:

**Հունիսի 30-ի** ԳԽ-ի նստաշրջանում դարձյալ գզվռտոց էր ԼՂՀ-ն ընդունել-չընդունելու համար: Նախագահի երեկվա ելույթն ուղղակի խլրտում էր առաջացրել, եւ խոսողներն այլեւս ոչինչ չունեին թաքցնելու: ՀՀՇ-ները դաշինքի դիրքը համարում էին արկածախնդրական, որն, իբր, տանի դեպի մեծ պատերազմ (իսկ պատերազմ չկա՞), որի համար պետք է պատասխան տա ոչ թե ինքը, այլ կառավարությունը՝ ժողովրդի հետ միասին: Եւ պահանջում էին բռնել միայն հարցի քաղաքական լուծման ճանապարհը, Հռոմի ու Մինսկի խորհրդաժողովներին գնալ Արցախյան հարցի 0 (զրո) մակարդակով:

Իսկ դաշինքն այս դիրքորոշումը համարում էր դավաճանություն եւ ազգային շահերի ոտնահարում, պահանջում էր կառավարության հրաժարականը:

Մոսկվայից Լ. Տեր-Պետրոսյանի ելույթը գնահատում են որպես սկզբունքային պայքար Հայաստանում ծայր առած խառնակչության դեմ, որը պիտի վեր ածվեր քաղաքացիական պատերազմի, իսկ խառնակիչներն իրենց հաղթանակն այնքան իրական ու շոշափելի էին պատկերացրել, որ, Լ. Տեր-Պետրոսյանի հայտարարության համաձայն, մինիստրական պորտֆելներ էին առաջարկել նույնիսկ նրա մի շարք մտերիմներին:

Իսկ պատերազմի դաշտից գալիս էին հակասական լուրեր. իբր, Մարտունու եւ Հադրութի շրջաններում թուրքը տվել է ավելի քան 300 զոհ, սակայն շարունակում է ռմբակոծել հայկական բնակավայրերը, եւ մեծ ավերածություններ են եղել Էդիլլվում ու Ճարտարում:

Ասում են՝ Էդիլլվի համար մղված մարտերում սպանվել է մի ոմն Հաբիբուլլա Մամեդով, որը Չեչնիայի ԳԽ-ի պատգամավոր է: Ուրեմն, թուրքի ոչ միայն թիկունքում, այլեւ կողքին կանգնած են խորհրդային մուսուլմանները եւ արդեն գործի են անցել:

Մթնոլորտը լիքն է Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի ստեղծած աղմուկով: Ասում են՝ Հրայր Մարուխյանը հայտարարել է, թե նա՝ Տեր-Պետրոսյանը, չի կարող ցույց տալ որեւէ ճշմարիտ փաստաթուղթ, որը հաստատի, թե իրենք ու ինքը համագործակցել են ՊԱԿ-ի հետ, դա զրպարտություն է:

Իսկ Հայաստանի հեռուստատեսությամբ ելույթ ունեցան Երեւանի կեղծ դաշնակցության կենտրոնի ղեկավարներ Հարություն Առիստակեսյանն ու Ռուբեն Տիտանյանը, որոնք շատ հարմար համարեցին «մերկացնել» իսկական դաշնակցության ու նրա ղեկավար Հրայր Մարուխյանի «հակահայկական էությունը, վարքը, գործը»: Նրանք խոստացան, հարկ լինելու դեպքում, Լեւոն Տեր-Պետրոսյանին տրամադրել Մոսկվա-Բաքու ուղերթի տոմսեր՝ Մարուխյանի ու նրա գործակիցների անուններով՝ իբրեւ իրեղեն ապացույց, որ նրանք իրենց հակահայկական գործունեությամբ սերտորեն կապված են Բաքվի թրքության հետ...

Ի՜նչ խոսք, որ այս տեսարանը հորինելու եւ ցուցադրելու համար մարդիկ պետք է պարտված լինեն մարդկային այնպիսի հասարակ բաներից, ինչպիսիք են խիղճն ու ամոթը:

Լեւոն Տեր-Պետրոսյանն այս պահին երեւի խիստ զգում է այսօրինակ ստահակների օգնության կարիքը, եւ հեռուստատեսության պնակալեզ կազմակերպիչներն էլ ժամանակին հասցրել են այդ օգնությունը:

Նախագահի հեռուստաելույթը փոթորկել է ամբողջ հայությանը: Խոսում են բորբոքված, անզուսպ, դատավճիռ կարդում՝ մեծ մասամբ նախագահի դեմ:

Ես էլ գրի առա այդ օրերի իմ ապրումները, որ բավական ուշացած էլ հրապարակվեցին «Ավանգարդում» (1992, օգոստ. 14):

**Հուլիսի 1-ին** ՀՀ ԳԽ-ի նստաշրջանում Լեւոն Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե ԼՂՀ վերաբերյալ եղած հարցը խորհրդարանում երեկ լուծում չստացավ, այսօր էլ ինքը թույլ չի տա, որ շարունակվի քննարկումը, քանի որ նման հարցերին վճիռ տալու իրավունք միայն ինքն ունի՝ որպես հանրապետության նախագահ, բայց երբե՛ք Գերագույն խորհուրդը:



Որպես նախագա՞հ: Բայց ինչո՞ւ այսքանն էլ պարզվեց հարցը խորհրդարանում երեք շաբաթ քննարկելուց հետո:

Լեւոն Տեր-Պետրոսյանը խորհրդարանի այս նիստում եւս ունեցավ մի ելույթ: Ասաց՝ Ազգային դաշինքը հայ ժողովրդին տանում է ստույգ կործանման, որովհետեւ ԼՂՀ-ը ճանաչել՝ պիտի նշանակի պատերազմ հայտարարել մեր երկու հարեւաններին՝ Ադրբեջանին ու Թուրքիային: Իսկ մենք թույլ ենք նույնիսկ միայնակ Ադրբեջանից.- հայտարարեց ափերից ելած նախագահը:- Ես վայելում եմ հայ ժողովրդի լիակատար վստահությունը, այն ինձ է տվել իր քվեն ու մանդատը: Ականջներիդ օղ արեք. ես թույլ չեմ տա, որ դուք երկիրը մղեք պատերազմի: Ես ժողովրդին հանրահավաքի կհրավիրեմ: 100-200 հազար մարդ կգա իմ ձայնին... Եթե այդքան չհավաքվի, ինքս հրաժարական կտամ...

Այսքանն այսպես ասաց, ապա գնաց, նստեց դահլիճի վերջին շարքում, հասարակ պատգամավորների հետ միասին...

Դրությանը վայել մի ելույթ էլ ունեցավ ԳԽ-ի նախագահ Բ. Արարքցյանը: «ԼՂՀ ճանաչումը հակաօրինական էր, այդ պատճառով էլ այն պետք է հանվեր օրակարգից եւ հանվեց ու վե՛րջ.- արդեն հանգիստ ու խաղաղված հաղորդեց նա (բայց ի՜նչ լավ էր՝ ժամանակին հասկացան եւ երեք շաբաթ ծամծմելուց հետո օրակարգից հանեցին): -Որեւէ երկրի ճանաչումը տեղի է ունենում մի այլ երկրի պրեզիդենտի եւ ոչ թե պառլամենտի կողմից:

Սակայն հիմա այսքան համեստ ու նախագահապաշտ դերի մեջ մտած մեր խորհրդարանականը հունվարին, հենց այս տարվա ծնունդի կապակցությամբ, վեր էր կացել պաշտոնապես, իբրեւ Գերագույն խորհրդի նախագահ, ընդունել Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, նրա բռնած պետականության ուղին, հայտարարում էր, թե «Հայաստանի հանրապետության Գերագույն խորհուրդը ողջ հայ ժողովրդի անունից հավաստիացնում է Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդին, որ բոլոր միջոցներով զորավիգ կլինի...» (տե՛ս այս տարվա հունվարի 3-ի գրառումը):

ՀՀ ԳԽ-ի նախագահն այն ժամանակ հանրապետության պրեզիդենտից ստացա՞ծ էր եղել այսպիսի հայտարարությամբ հանդես գալու իրավունք: Թե՞ հիմա ուրիշ պայմաններ են, եւ ինքը պրեզիդենտից ուրի՞շ իրավունք է ստացել՝ իր պարտականությունները մոռանալու եւ պրեզիդենտի անդեմ կցորդը դառնալու, իր տնօրինության տակ դրված խորհրդարանը եւս այդպիսին դարձնելու իրավունքը:

Խորհրդարանի նախագահի այս քայլից հետո էլ գտնվեցին պատգամավորներ, որոնք առաջարկում էին զգաստ լինել, չդավել արդարությանն ու սեփական ժողովրդի ճակատագրին: Սակայն իզո՜ւր եւ ապարդյո՜ւն:

Երեկոյան հեռուստատեսային հարցազրույց էր դաշնակցական Գ. Հովհաննիսյանի, ՀՀՇ-ական Բագրատ Ասատրյանի ու ռամկավար Մելս Սահակյանի հետ: Բ. Ասատրյանն ասաց, իրենք՝ ՀՀՇ-ականները, այլեւս փոքրամասնություն են խորհրդարանում, ուստի ինքը պարտավոր պիտի լինի առաջիկա նստաշրջանում առաջարկել, որպեսզի խորհրդարանը լուծարեն եւ նորն ընտրեն:

Ուրեմն, մնացած կուսակցությունները հենց ամեն օր էլ կարող էին առաջարկել, որ խորհրդարանը ցրվի, որովհետեւ նրանք առանձին-առանձին, միշտ էլ փոքրամասնություն են կազմում: Եւ այս դեպքում ժողովուրդն էլ ուրիշ բան ու գործ չպետք է ունենա, հենց մի գլուխ պիտի լուծարի խորհրդարանը եւ նորն ընտրի: Նո՛րը, որ պիտի լինի ՀՀՇ-ականների ուզածը...

Հայտնի դարձավ, որ ԼՂՀ-ը պատվիրակություն է ուղարկում Հռոմի խորհրդակցությանը: ԳԽ-ի նախագահությունը նախապես դեմ է եղել նրան որեւէ մասնակցություն բերելուն: Սակայն հասարակական կազմակերպությունների եւ ողջ ժողովրդի ճնշման տակ տեղի է տվել, պատվիրակներ ընտրել եւ, ահա՛, ուղարկում է: Պարոն Լ. Տեր-Պետրոսյանը հիմա՛ ինչ մեղք է գտնելու, որպեսզի նրանով պարուրի ԼՂՀ ղեկավարությանը:

Հռոմում 11 երկրների ներկայացուցիչներ ապագա որոշման նախագիծ են պատրաստել, որը նախագահող Մարիո Ռաֆայելիի կարծիքով՝ լայն հնարավորություններ է ըն-

մաձայնությունը։ Արա եւ գազազած են նախորդ օրը, հուլիսի 8-ին, ՀՀ ԳԽ-ում ընդունված որոշմամբ, որն, իբր, «ավելի է դժվարացնում Ղարաբաղի հարցի լուծումը»։

**Հուլիսի 10-ին** եւս ադրբեջանական զորամիավորումները ռմբակոծում էին ԼՂՀ խաղաղ բնակավայրերը։ Նույն պատերազմական վիճակն էր Հադրութից մինչեւ Մարտակերտի շրջանի գյուղերը։ Ֆիզուլիում զորքի ու ռազմական տեխնիկայի մեծ կուտակումներ կան, եւ դեռ նորերն են բերվում։

ՀՀ նախագահի մամուլի կենտրոնը հերքում է ադրբեջանական լրատվության հերյուրած եւ Մոսկվայից հաղորդված այն լուրը, որի համաձայն՝ հայերն են շարունակում պատերազմական գործողությունները եւ այն էլ՝ որովհետեւ Հռոմի խորհրդակցությունը լքել-հեռացել են եւ հիմա իրենց ազատ են զգում Եվրախորհրդակցության որոշումն արհամարհելու։ Մինչդեռ զինադադարի պայմանավորվածությունը եղել է լքել-հեռանալուց առաջ, եւ հիմա էլ այն բարեխղճությամբ իրականացվում է հայ ինքնապաշտպանության կողմից։

ՀՀ նախագահը դիմել է ԼՂՀ ղեկավարությանը՝ խորհուրդ տալով իրականացնել ԵԱՀԽ հանձնարարականը եւ հակառակորդին ոչ մի առիթ չտալ զրպարտություններ տարածելու։ Կարծես ադրբեջանական զրպարտիչներն առիթի են սպասում, որ տարածեն իրենց հերյուրած ստերը։

Ինչ-որ Պետրոս Քացախյանի գլխավորությամբ ՀՀ ԳԽ-ի պատգամավորների մի խումբ է ուղարկվել Ստեփանակերտ՝ ԼՂՀ-ում Հայաստանի կառավարության մշտական ներկայացուցչություն իրականացնելու համար։ Երեւի դեսպանության նման մի բան է։ Բայց ո՞վ է Քացախյանը, որ պիտի Արցախում ներկայացնի ամենայն հայոց կառավարությունը, վճռական դեր խաղա, հեղինակություն լինի մարտնչող երկրի աչքում։

**Հուլիսի 11-ը** եւս եկավ իբրեւ խառնիխուռն մի օր, երբ հայկական կողմը, հավատարիմ զինադադարի պայմանին, ռազմական ոչ մի քայլ չէր կատարում, իսկ ավազակաբարո թուրքը շարունակում էր ռմբակոծել հայկական բնակավայրերը, հարձակումներ գործել ինքնապաշտպանական ջոկատների վրա, զբաղվել կողոպուտով։ Սակայն Կուսապատում ու Մոխրաթաղում տիրություն անող թուրքերը, երբ նորից ռմբակոծեցին հայկական դիրքերը, այստեղից պատասխան ահեղ կրակ բացվեց, հակառակորդը գլխակորույս դիմեց փախուստի՝ դաշտում թողնելով ջարդված հինգ տանկ եւ սպանված ավելի քան քսան ասկյար։

Դրսերում լրատվական մարմինները հաղորդում են, որ չեն դադարում մարտական գործողությունները հայ-ադրբեջանական ճակատներում, թե՛ ԼՂՀ-ում, թե՛ այլ վայրերում։ Չեն դադարում եւ փոխադարձ մեղադրանքները՝ կռիվը շարունակելու վերաբերյալ։

Ի՞նչ է լինելու այս ամենի վերջը։ Մի՞թե այդպես էլ թուրքը նստած պիտի մնա Մարտակերտի դաշտում, Արցախի այդ ամենաբերրի, ամենահուռթի գյուղատնտեսական տարածքում։

**Հուլիսի 12.** Երեկ առավոտյան Ադրբեջանի ռադիոն հրապարակել էր հարցազրույց իրենց Արտգործնախարարության լրատվական կենտրոնի ղեկավարի հետ։ Այն հարցին, թե ե՞րբ է նշվելու Լեռնային Ղարաբաղում ձեռք բերած իրենց հաղթանակը, կենտրոնի ղեկավարը պատասխանեց այսպես. «Մեր հաղթանակը կնշենք եւ հանգիստ կառնենք լոկ այն ժամանակ, երբ հայերից լրիվ ազատագրած կլինենք ոչ միայն Ղարաբաղի լեռնային մասը, այլեւ Զանգեզուրն ու Գյոյչայի ավազանը»։

Գյոյչան Սեւանն է՝ իրենց հորջորջմամբ։ Գյոյչայի ու Զանգեզուրի համար նրանք կառավարություն էլ են ստեղծել, որը, իբր, վտարանդի է Բաքվում։ Արտասահմանյան որեւէ հեղինակավոր հյուր ունենալիս ներկայացնում են այդ «կառավարությունը», վնգստում, տեսեք՝ հայերն ինչպե՜ս են դաղարգյուն դարձրել։

Այսօր լրատվական բոլոր մարմինները, ռադիո թե հեռուստատեսական, հաղորդում են, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետության ինքնապաշտպան ուժերը, բարեխղճորեն ենթարկվելով ԵԱՀԽ Հռոմի խորհրդաժողովի որոշմանը, դադարեցրել էին կրակը եւ 48 ժամվա ընթացքում դեպի հակառակորդը ոչ մի գնդակ չէին ուղարկել։ 48 ժամ, այ-



սինքն՝ ամսիս 9-ին ու 10-ին։ Սակայն տեսնելով, որ հակառակորդը ոչ մի տրամադրություն չունի ենթարկվելու նույն որոշմանը եւ գիշեր-ցերեկ ռմբակոծում է հայկական բնակավայրերը, սպանություններ կատարում, պատրաստվում նոր լայնահուն հարձակումների, ամսիս 11-ի առավոտից ԼՂՀ ինքնապաշտպանությունը պատասխան կրակով լռեցրել է թշնամական կրակակետերը, Մարտակերտի շրջանում անցել հարձակման, բռնագրավիչներին դուրս քշել շրջկենտրոնին հարող հինգ խոշոր գյուղերից, որոնք են Կուսապատը, Մեհմանան, Ջանյաթաղը, Գյուլաթաղը, Մոխրաթաղը։ Այս գործողության ընթացքում թուրքերը զրահատեխնիկայի մեծ վնաս են կրել՝ տալով նաեւ ավելի քան 30 ասկյարի կորուստ։ Ինքնապաշտպաններից միայն երկու զինվոր է զոհվել։

Ուրեմն, հայկական կողմն ազատագրել է մեկ ամիս առաջ կորցրած գյուղերից հինգը։ Եւ չի կարելի կասկածել, որ թուրքի հաղթանակի տոնը պիտի հետաձգվի անորոշ ժամանակով։ Գուցե եւ առհասարակ մեջտեղից վերանա, քանի որ հենց նոր նույն Բաքվից հաղորդեցին, թե հայերը Հայաստանում տեղակայված ԱՊՀ զինված ուժերի ամբողջ երկու դիվիզիայի զենք ու տեխնիկա են ստացել, եւ Լաչինի միջանցքով արդեն 102 տանկ հասցրել են ԼՂՀ։ Եւ որ հասցրել են, պիտի գործի դնեն։ Իսկ թե տանկերն ինչպես են գործում հայ ազատամարտիկների տակ, թուրք գյադագլուխները դրան էլ ծանոթ են։

Հաղորդում են, որ թուրքերը շարունակում են ռմբակոծել Մարտունին, Ճարտարը, Հադրութը եւ սահմանային ուրիշ շատ բնակավայրեր։ Սակայն կա եւ ամենագոտեպնդիչը. Մարտակերտի կողմերի հաջողությանն անմիջապես արձագանքել են Ստեփանակերտում ապաստանած շատ ընտանիքներ եւ վերադառնում են իրենց լքած գյուղերը՝ Վանք, Ծմակահող, Շահմասուր...

**Հուլիսի 13-ին** թուրքերի մի խոշոր զորամաս հարձակվել է Ասկերանի շրջանի Պատարա ծայրամասային գյուղի վրա, լուրջ դիմադրության հանդիպելով՝ տաս զոհ տվել եւ ետ փախել։Հավանաբար հարձակումը եղել է Լաչինի շրջանից, բայց այս անճանապարհ, անտառային շրջանով ի՞նչ զորություն պիտի հասցնեին։ Թե՞ ավազակախումբ է եղել եւ նպատակ է ունեցել կողոպուտ ու ավերածություն անել։

ՀՀ վարչապետի տեղակալ Հրանտ Բագրատյանը ԼՂՀ ղեկավարության հետ միասին քննել է փախստականների հարցը, եւ նրանց տեղաբաշխման ու օգնության ծրագիր ընդունել։

ԼՂՀ կառավարության անունից դեռ 11-ին էր հրապարակվել որոշում, որով արգելվում էր արցախցիների արտագաղթը, փախածները բնակության էին հրավիրվում ազատագրված գյուղերում եւ Շուշիում։

Հեռուստատեսությամբ խոսեցրին ԳԽ-ի նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանին, որը հպարտությամբ նշեց, որ 8-ին ընդունված որոշմանն ինքը դեմ է քվեարկել, որովհետեւ անձնապես կարեւոր է համարում գործը եւ ոչ թե որոշումը, իսկ գործնականում ամեն ինչ արվում է Արցախի պաշտպանության համար։

Բայց կխոստովանե՞ր, եթե քվեարկությունն անվանական չլիներ։ Եւ մեկ էլ՝ մի՞թե վատ կլիներ, եթե գործի հետ համերաշխ լիներ նաեւ խոսքը (որոշումը)։

✧ ✧ ✧

Հայտնի է դարձել, որ այսօր Հռոմում Լեռնային Ղարաբաղի հարցի առթիվ կայանալիք նախապատրաստական հանդիպմանը չեն գնացել ՀՀ ու ԼՂՀ պատվիրակությունները, իսկ թուրքերը գնացել են՝ հայտարարելով, թե իրենք նախընտրում են հակամարտության կարգավորումը ԵԱՀԽ-ի շրջանակներում, մանավանդ որ այնտեղ աջողացրել են որպեսզի ընդունվի նախագիծ «հայկական զինված կազմավորումները Շուշիից ու Լաչինից հանելու մասին»։

**Հուլիսի 14.** Քանի օր է, սպասում ենք ինքնապաշտպանության ղեկավարների խոստացած կտրուկ շրջադարձին։ Այսօր առավոտյանից էլ բարեկամներն էին զանգում, շնոր-

հավորում, իբր, Մարտակերտն արդեն մերոնց ձեռքում է, եւ թուրքերը գլխապատառ փախչում են:

Սակայն երեկոյան միայն իմացանք, որ ազատամարտիկները կռվում են Դամիրլվի համար, որը բավական հեռու է Մարտակերտից: Իսկ ռմբակոծությունները շարունակվում են Մարտունում, Ճարտարում, Հադրութում, Հայաստանի սահմանային շրջաններում՝ Սոդքից մինչեւ Այրարատ: Ադրբեջանի ղեկավարներն այնքան վստահ են Արցախում ունենալիք իրենց վաղվան, որ Շահումյանի ու Աղդարայի (այսպես են խճողել Մարտակերտի անունը) շրջաններում ապրելու ցանկություն ունեցողներին են ցուցակագրում,-հաղորդեց մեր լրատվությունը: Երեւի այդ նպատակն իրականացնելու համար է, որ զորքի ու տեխնիկայի նոր կուտակումներ են կատարում Ֆիզուլու եւ Աղդամի շրջանների բազմաթիվ կետերում:

Հետագայում իմացանք, որ 14-ին ազատագրվել է Չափար գյուղը: Բայց ինչպե՞ս, երբ այն վերանվաճելու համար արդեն պետք է ունենալ Գետավանն ու Հաթերքը: Ըստ երեւույթին շրջանցում են կատարել, թիկունքից մտել Չափար:

Համենայն դեպս, եւ՛ Չափարը, եւ՛ Հաթերքն ու Գետավանը, թուրքի նվաճած բոլոր գյուղերը կվերադարձվեն, բայց ի՞նչ մնացած կլինի նրանցից, ինչպե՞ս պիտի վերականգնենք, մանավանդ՝ ի՞նչ գնով պիտի վերակենդանացնենք, տուն դարձնենք այն բնակիչներին, որոնք այսօր ցրված են ոչ միայն Հայաստանում, այլեւ լոկ իրենց հայտնի ուրիշ-ուրիշ օտար վայրերում:

**Հուլիսի 15-ին** Մարտակերտի շրջանի ազատամարտիկները տիրացել են Սարսանգի հիդրոհանգույցին, որը, ինչպես հայտնում են, բարեբախտաբար, վնասներ չի կրել, չի աղարտվել: Երեւի ավերող թուրքն այս անգամ զգուշացել է վրիժառությունից. չէ՞ որ վաղուց մերոնք հայտարարել էին, թե ջրամբարն ականապատել են եւ թշնամու որեւէ արտակարգ սրիկայության պատասխանը կլինի պայթեցում: Իսկ փլված ջրամբարի ջուրը (600 միլիոն խմ) կքշի, Կասպից ծովը կթափի ճանապարհին եղած բոլոր բնակավայրերը:

Ասում են՝ ազատագրվել է նաեւ Գետավանը (հին Մոսը): Ուրեմն, Հաթերքում թուրքը չի կարող մնալ:

Ազատագրվել է Ասկերանի Նախիջեւանիկը, որի տարածքում թշնամին թողած է եղել մեծաքանակ զինամթերք:

ԼՂՀ կառավարությունը հրաման է արձակել, արգելելով արտագաղթն ու մթերքների դուրսբերումը:

ԼՂՀ վարչապետ Օլեգ Եսայանը երախտագիտությամբ պատմում է, որ Հայաստանից ժամանած դեպուտատական խումբն իրենց հետ համերաշխ ու ջանասիրությամբ գործում է, հարթվել են մի շարք բարդություններ, ներմուծվող օգնությունը տեղ է հասնում, բաշխվում ըստ կարիքների, եւ հանրապետության ոտքի կանգնող տնտեսությունը կենդանանում է:

**Հուլիսի 16-17-ին** արտակարգ մի նորություն տեղի չունեցավ: Ազատամարտիկները Գետավան-Չափար-Հաթերք-Ումուդլու գծի վրա կուտակած ուժերի վերադասավորություններ էին կատարում: Պարզ է, որ անցել են Թարթառի ձախափնյակը, եւ ռազմավարական կարեւորագույն նախաձեռնումներ են սպասվում:

Թուրքերը, Թարթառի հովտում կորուստներ տալով, փորձում են գերակշռություն ձեռք բերել ճակատի մյուս մասերում: Գիշեր-ցերեկ ռմբակոծում են Ասկերանի, Մարտունու եւ Հադրութի շրջանները (այսօր ռմբակոծվել են նույնիսկ Գիշին, Մաճկալաշենը, Տողը): Ֆիզուլիում նոր ռազմական կուտակումներ են արվում:

Շատ են ԼՂՀ կյանքին վերաբերող անդրադարձները դրսում. Ադրբեջանի Ազգային մեջլիսը 16-ին քննել է ՀՀ ԳԽ-ի վերջին որոշումը (հուլիսի 8-ի), այն համարել հակաօրինական, Ադրբեջանի ամբողջության դեմ գործված ագրեսիա:

Տաշքենդում տեղի ունեցած մեծ խորհրդակցությունում, ուր հավաքվել էին ԱՊՀ տերությունների արտգործնախարարներն ու պաշտպանության նախարարները որոշել են



բարդույթի գոտիները խաղաղարար ուժեր ուղարկել, եթե խնդրեն բարդույթին մասնակցող երկու կողմերը: Ադրբեջանն էլ, ինչպե՞ս չէ, կխնդրի՜:

Մարիո Ռաֆայելին խոստովանել է, որ Հռոմի խորհրդաժողովը փակուղի է մտել, եւ հույս ունի, թե Մինսկում հնարավոր պիտի լինի հասնել որոշակի հաջողության: Իսկ Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Կասիմովը, այսուհանդերձ, հույսը դնում է միայն ԵԱՀԽ-ի վրա եւ գտնում է, որ իր հանրապետությունն այսուհետ չի դիմի արտաքին որեւէ ուժի, որեւէ պետության օժանդակությանը՝ ԼՂ-ում վիճակը կարգավորելու համար: Այս հարցում միակ վստահելի ուժը ԵԱՀԽ-ն է, որը հարգում է Ադրբեջանի ամբողջականությունը,-Մոսկվայի ռադիոյի թղթակցին ասել է Կասիմովը:

Լ. Տեր-Պետրոսյանն արտակարգ դրություն է հայտարարել Գորիսում եւ այնտեղի պարետ է նշանակել Պարույր Հայրիկյանին: Երեւի դարձյալ նրա հրամանով՝ Գեւորգ Վարդանյանի գլխավորությամբ ՀՀ ներկայացուցչությունը մշտապես կմնա ԼՂՀ-ում, կօգնի օրինականորեն կազմակերպելու տնտեսական ու ռազմական գործերը (սրանք՝ հուլիսի 16-ից):

17-ին Էդուարդ Շեւարդնաձեն Թուրքիայի լրատվության ներկայացուցիչների հետ ունեցած զրույցում խոստացավ միջնորդ լինել ԼՂ-ի բարդույթի լուծմանը: Վրաստանում շուրջ մեկ միլիոն հայեր ու ադրբեջանցիներ են բնակվում, շատ ցավալի կլինի, եթե Լեռնային Ղարաբաղում բռնկված կրակի կայծերը փոխանցվեին նրանց,-բացատրել է Վրաստանի ղեկավարը:

ՀՀ արտգործնախարարության աշխատակիցն ասում է՝ հնարավոր է, որ մոտ ժամանակում ԼՂՀ-ը ճանաչեն Արգենտինան, Բրազիլիան եւ Ուրուգվայը: Հետո՞ ինչ: Բացի դրանից էլ, չէ՞ որ նախորդ օրերին հայտարարեցին, թե Արգենտինան շատ է մտահոգված ԼՂ-ում ստեղծված դրությամբ եւ միաժամանակ պաշտպանում է սահմաններն անխախտ պահող միջազգային օրենքները (տե՛ս «Երկիր», 1992, հուլ. 15):

**18-ին** հաղորդեցին, որ թուրքերը մեծ ուժերով արշավի են եկել Ղազանչիի վրա, ջարդ կերել ու ետ շպրտվել: Շատ են ռմբակոծությունները Ղարաբաղում ու ՀՀ սահմանային շրջաններում: Հասկանալի է, որ ձախողանքներ կրելով ռազմի դաշտում՝ թուրքը հեռահար հրանոթներով է վրեժ լուծում:

**Հուլիսի 19-ին** դաժան կռիվ է եղել Հաթերք-Ումուդլու-Մաղավուզ-Մեծ շեն-Մոխրաթաղ երկար գծի վրա: Ազատամարտիկները նպատակ ունեին ոչնչացնել հակառակորդի կրակակետերը, նոր միայն գրոհի անցնել: Ըստ երեւույթին նախորդ շրջանը դաս է դարձել, եւ հիմա ուզում են նվաճումների հասնել նվազագույն զոհերով, իսկ եթե հնարավոր լինի, նույնիսկ առանց զոհերի:

**19-ի լույս 20-ի** գիշերը թուրքը դուրս շպրտվեց Հաթերքից, ազատագրվեց Թարթառի հովտի այդ հինավուրց կենտրոնը, Արցախական աշխարհի տերերի աթոռանիստը, որ իր կենսագրության փառավոր էջը գրեց նաեւ այս պատերազմում, 1991-ի ամռանը:

Ոչնչացվել են թշնամու դիրքերը նաեւ Մեծ-շեն-Մաղավուզ-Հոռաթաղ-Դամիրլու գծի վրա, եւ հաջորդը Մարտակերտ քաղաքը կլինի:

20-ի մարտերում, Հաթերքի հաղթանակից հետո, ազատամարտիկների կորուստներն են՝ 4 զոհ, 30 վիրավոր: Թշնամին կռվի դաշտում թողել է շուրջ 100 դիակ, ավերված երկու տանկ եւ մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

Ասում են՝ երբ գիշերը Հաթերքն էին թողնում, Ասկերանի կողմերում երեւացել է ՄիԳ-25 գերձայնային կործանիչ մի ինքնաթիռ: Ինչի՞ համար, որպեսզի սարսա՞փ տարածի թուրքի կրած պարտությունից հետո: Բայց, միեւնույն է, այդ սարսափը կա ամենուրեք, որովհետեւ այս երկու օրվա ընթացքում անվերջ ռմբակոծվել են Ասկերանը, Մարտունին, Ճարտարը, Հադրութի շրջանի մի շարք գյուղեր: Ճարտարում զոհեր կան:

Մոսկվայի հեռուստամեկնաբանը հաղորդեց, թե Գորիս-Լաչին-Ստեփանակերտ միջանցքով վիթխարի քանակության զենք ու ռազմական տեխնիկա է փոխադրվել, եւ ա-

մտել են Մարտակերտի արվարձանները:

Թուրքերը նահանջելիս շատ զոհեր ու կորուստներ են տվել: Նրանք ռմբակոծել են Մարտունին, Հադրութը, Հայաստանի սահմանային մի շարք բնակավայրեր: Մեծ վնաս են հասցրել, օրինակ, Արարատի շրջանի Արմաշի դպրոցին:

Իսկ մեր ղեկավարությունը հանգիստ է, օտար տերությունների ներկայացուցիչների հետ շատ գործեր ունի եւ ջանում է նրանց հետ լուծել Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցերը: Ուրիշ անգամ կարող էր ծիծաղելի լինել, իսկ հիմա մարդու լաց է գալիս, լրաբերն ասում է՝ կառավարությունում հանդիպում է եղել Բոլիվիայի (Հարավային Ամերիկա) պետական գործչի հետ: Բոլիվիան որտե՞ղ է, նրան ի՞նչ պիտի հետաքրքրի քո Արցախի հարցը: Բայց պատմել են, թե դա ի՜նչ կենսական հարց է, ինչպե՜ս խափանում է ՀՀ տնտեսական զարգացումը, ճգնաժամի քաոսում ժողովրդի կյանքը... Եւ այն խեղճ բոլիվիացին, գանգատի դեմ պարզապես անզոր, արել է այսպիսի խոստովանություն. «Ախր, պատկերացնո՞ւմ եք, Բոլիվիան այն երկիրը չէ, որ ձեզ կարող է որեւէ օգնություն ցույց տալ Լեռնային Ղարաբաղի հարցում»:

**Հուլիսի 29-ին**, հիմնավորապես տիրելով Ներքին Հոռաթաղին ու շրջականներին, ազատամարտիկները մեծ արշավ ձեռնարկեցին Մարտակերտի վրա: Ասում են՝ նախորդ մի քանի օրվա մարտերում կոտորվել են շուրջ 100 ասկյար, մեր զոհերը 6-ն են:

Օրակարգում է Մարտակերտի ազատագրումը, իսկ ես մտածում եմ Սեյսուլանի՝ շրջանի ծայրամասային գյուղի մասին, որը քոչվորների համար արոտավայր է դարձել, սակայն առաջներում այն Մարտակերտի շրջանի վահանն էր, իսկական բերդապարիսպը՝ դաշտի կողմից եկող հեղեղների դեմ:

Հիսունական թվականներին այս եւ հարեւան գյուղերի դեպուտատն էի ԼՂ մարզխորհրդում, հանգիստ չունեի հարեւան վեց թուրք ու քուրդ գյուղերի պատվիրակությունների գանգատներից: «Մեզ փրկիր այդ Սեյսուլանի ղաչաղներից,-ամեն անգամ այսպե էին սկսում իրենց լալագին բողոքը:-Արդուշին հո ջանաչո՜ւմ ես, էն ազդուն-արնախումին...»:

Արտուշ-Արտաշես Հարությունյանը Սեյսուլանի կոլխոզի նախագահն էր, Սեյսուլանի ու Մարտակերտի դաշտի պաշտպանության առաջնորդը: Զինավառ, մարտական վիճակում էր պահում գյուղը եւ, թեկուզ մեկ անասունի կորուստ ունենալուց, պատժարշավի էր տանում իր զինված ջոկատը, գողի գյուղից քշում-բերում մի ամբողջ հոտ կամ նախիր: Իսկ գողի մասին անմիջապես իմանում էր, որովհետեւ վարձկան գործակալներ կային բոլոր գյուղերում...

Մեզ փրկի՜ր այդ սեյսուլանցիներից,-կողկողաձայն բողոքում էին քրդերն ու թուրքերը: Եւ դա նման էր մեր Քաջ Նազարի վեպի բողոքավորների խոսքին. նրանք չեն թողնում՝ գողանանք ազատ, համարձակ. ծնկի չեն գալիս մեր առաջ, որ վզները կտրենք անպատիժ...

Արտաշես Հարությունյանը՝ 50-60 թվականների մեր Նիկոլ Դումանը, վաղ հեռացավ այս աշխարհից, ապա թե ոչ, նրա գյուղերում թուրքը ոտք դրած չէր լինի...

Նախորդ օրերի պես ռմբակոծության են ենթարկվել Մարտունին, Ճարտարը, Հադրութի գյուղերը: Ամենուրեք էլ կան զոհեր, վիրավորներ, ավերածություններ: Ասում են՝ դարձյալ թշնամական ինքնաթիռներ են ծվատում Արցախի երկինքը, ռումբեր նետում այս ու այնտեղ, առայժմ անկանոն, երեւի այն պատճառով, որ դեռեւս վարձու վարպետ սավառնորդներ չեն գտել:

Մարտակերտի մոտ մերոնց են հանձնվել չեչեն, թաթ եւ ռուս մի քանի զինվորներ, որոնք բողոքում են իրենց վարձած թուրքի ապերախտությունից. իրենց թողնում են ճակատի վտանգավոր տեղը, ճողոպրում դեպի խոր թիկունք:

Ասում են՝ Գանձակում եղած ռուսական զորքի ամբողջ զենքը, զինամթերքն ու ռազմական տեխնիկան մի քանի ժամվա ընթացքում անցել է թուրքին եւ, հավանաբար, շուտով կհայտնվի Արցախում:

Թուրքի լրատվությամբ հաղորդել են, թե հայերն ուժեղ գրոհ են ձեռնարկել Աղդամի



ու հարեւան գյուղերի վրա: Եւ, չնայած ետ են մղվել, պատճառել են մեծամեծ վնաս ու կորուստներ: Նրանց «Թուրան» լրատվական մարմնի ասելով՝ Թիֆլիս են ուղարկել (ինքնաթիռով) Մարտակերտի կողմերից տարված 20 հայ պատանդներ, որոնք ազատ կլինեն իրենց տները վերադառնալու: Տեսնո՞ւմ եք՝ թուրքը միակողմանի ի՜նչ մարդասիրական քայլի է դիմում. հույս ունեն, թե իրենց ընդօրինակելով՝ հայերն այնքան մարդասեր կդառնան, որ մի քանի տասնյակ թուրք պատանդ էլ իրենք բաց կթողնեն:

Ռուսաստանի Արտգործնախարարության ներկայացուցիչ Վլ. Կազիմիրովը Ստեփանակերտում ԼՂՀ ղեկավարությանը պատմել է իր առաքելության մանրամասները՝ հուսալով, թե փոխըմբռնողության ու երախտագիտության կարժանանա իր տերությունը, որովհետեւ ավելի քան չորս տարի փարիսեցիորեն դիտելով Արցախի արյունահեղությանը, որոշել է վճռական քայլեր կատարել: Բայց կկատարի՞:

Արցախի ու ՀՀ պատվիրակություններն ուղեւորվեցին Հռոմ՝ մասնակցելու ԵԱՀԽ դիվանագիտական ժողովներին, քանի որ, ինչպես Սուրեն Զոլյանն է ասում, Մարիո Ռաֆայելին նախապես խոստացել է աջակցել, որպեսզի Շահումյանի ու Մարտակերտի շրջանների բռնագրավումը գնահատվի իբրեւ թուրքի ագրեսիա եւ հանվի համապատասխան վճիռ:

**Հուլիսի 30-ը** կարող էր նշանավորվել Մարտակերտի ազատագրմամբ, սակայն դրա համար անհրաժեշտ պիտի լիներ նախ ռմբակոծել քաղաքի կրակակետերը, կործանել, ավերել... Ազատամարտիկները խնայեցին իրենց տները, հայրենի քաղաքը, չնայած գիտեին, որ թուրքն ավերել է իր կարեցածի չափով... Եւ առայժմ գրոհով առել են քաղաքը եզերող բարձունքները, թշնամուն հարկադրում են, որ թողնի-հեռանա:

Մարտակերտի շրջանում ձախողված թուրքը հերսոտված ռմբակոծում է Ճարտարը, Ավդուռն ու Մյուրիշենը: Հուլիսի 29-ի երեկոյան գնդակոծել էին նաեւ Լաչինի միջանցքը, սպանել մի քանի ազատամարտիկների: Գնալով առավել անտանելի են դառնում նաեւ ՀՀ սահմանային բնակավայրերի դեմ թուրքի ձեռնարկած վայրագությունները, դաշտում աշխատելն անհնար է, իսկ չաշխատելը պիտի նշանակի սոված մնալ առաջիկա տարին...

Պարույր Հայրիկյանը մի զորաջոկատ է ուղարկում Գորիսի շրջան, ուր ինքը պարետ է նշանակված: Հարցնում են.

- Արդյոք սա չի՞ նշանակում, թե ընդդիմությունը ցրում են:

- Հակառակը,-պատասխանում է նա,-մենք դժգոհ էինք, որ ընդդիմության ուժերին հեռու էին պահում հանրապետության գործերից, հիմա առաջին անգամ գործի են ընդգրկել, պետք է ցույց տանք, թե ինչի՛ ենք ընդունակ: Ա՛յ, Լաչինի միջանցքն արդեն վտանգավոր գիծ է դարձել, պե՞տք է անվտանգ դարձնել...

Արցախյան կռվին չեչենների մասնակցությունը հաստատված է,-Չեչնիայից հաղորդում է ռուս թղթակիցը.-Նրանք գործում են եւ ադրբեջանցիների կողմից, եւ հայերի: Հիմա կառավարությունը նրանց կոչ է արել՝ վերադառնալ տները. չէ՞ որ նույնիսկ բարձր վարձը կյանք չի դառնում, իսկ ամեն օր գալիս են սպանությունների տխուր լուրեր...

✧ ✧ ✧

Բարոնուհի Կոքսը նորից ժամանել է Երեւան, պիտի Արցախ գնա, հանդիպումներ է ունենում Հայաստանի ղեկավարների հետ, արտգործնախարարությունում հայտարարեց, թե ինքը մարտնչող լեռնաստանի համար կանի ամեն ինչ. «Ես նրա հետ եմ ամենուրեք, որովհետեւ այն դարձել է իմ ճակատագիրը»:

Հայաստանի ու ԼՂՀ պատվիրակություններն ուղեւորվեցին Հռոմ՝ նախապես ստացած լինելով Մարիո Ռաֆայելիի հավաստիացումը, որ խորհրդաժողովը պիտի դատապարտի Շահումյանի ու Մարտակերտի բռնազավթումը Ադրբեջանի կողմից, եւ ԼՂՀ պատվիրակությունը ժողովին պիտի մասնակցի որպես ժողովրդի կողմից օրինական կարգով ընտրված իշխանության ներկայացուցիչ:

րութը:

Մոսկվայից հաղորդեցին, թե հավանական է, որ ԼՂՀ-ը ճանաչեն Լատինական Ամերիկայի վեց երկրներ: Հեռուստատեսությամբ ցույց տվին Արցախի հրաշալի բարեկամ Կիրիլ Ալեքսեևսկուն, որն իր Պետերբուրգից այս անգամ էլ Արցախ էր եկել ականատեսը լինելու հայության անհաշտ գոյապայքարի, իր ներկայությամբ ոգեւորելու ազատամարտիկներին: Կինոնկար է պատրաստել, այն արտացոլում է լեռնաստանի հերոս պաշտպանների սխրագործությունը: Հեղինակը հույս ունի, որ նկարը լրիվ կցուցադրվի Պ-բուրգում ու արտասահմաններում: Գուցե հաջողվի մի փոքր տարբերակ էլ ցույց տալ Մոսկվայում, որպեսզի Ելցինը տեսնի, թե ինչպես իր կողմնապահ օգնությամբ զորացած թուրքը կոտորում է եւ հային, եւ ռուսին...

Երեւանում մտավորականության ներկայացուցիչների հետ հանդիպում ունեցան պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը եւ տեղակալներ Վ. Շիրխանյանն ու Ա. Տեր-Թադեւոսյանը (ԼՂՀ զորքերի նախկին հրամանատարը): Տաք վեճեր եղան, եւ Սարգսյանը թողեց-հեռացավ:

**Օգոստոսի 9-ին** արդեն հայտնի դարձավ, որ նախորդ օրը թուրքերը նվաճել են Արծվաշենը: Պաշտպանները, կանխավ տեղյակ իրենց վրա եկող թշնամու գերազանցությանը, գյուղը թողել-հեռացել են: Այնտեղ մնացել են մի քանի տասնյակ մարդիկ, երեւի տեղացիներ, որոնց մի մասն էլ հետագայում թշնամու պաշարումը ճեղքել է, փրկվել, իսկ մյուսները, երկու տասնյակի չափ, հայտնի չէ, ի՛նչ են եղել:

Նոր միայն հանրապետության ղեկավարությունը ակտիվացել է. արտգործնախարարությունն Ադրբեջանին նոտա է հղել՝ սպառնալիք տալով, թե Հայաստանը պատասխան գործողություններ կձեռնարկի, իսկ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն էլ դիմել է ԱՊՀ պետությունների ղեկավարներին, թե, ահա՛, այսպես՝ Ադրբեջանն ագրեսիա է արել կոլեկտիվ անվտանգության պայմանագիր կնքած Հայաստանի դեմ, բռնագրավել նրա 47 կմ (երեւի քառ.) տարածքը, գործադրեցե՛ք ձեր քաղաքական, ռազմական եւ ուրիշ ամեն տեսակ ազդեցությունը, որպեսզի ագրեսորը պատժվի:

Ադրբեջանն այս առթիվ նոր սանձարձակ հիմարություն է տարածել. իբր, ոչ մի Արծվաշեն էլ չկա, դա հին ադրբեջանական Բաշքենդն է, հայերը ձեռք են ձգել, անունը դրել Արծվաշեն, եւ հիմա իրենք վերանվաճեցին իրենց պատկանած գյուղը:

Արցախում դրությունը համարյա անփոփոխ է: Թուրքը մեծ զորաջոկատով ու զրահատեխնիկայով գրոհել է Մաղավուզի ու Մոխրաթաղի վրա: Ազատամարտիկները դժվարությամբ են ետ մղել՝ ոչնչացնելով թշնամու մեկ տանկ: Երկու ինքնաթիռ մտել են հայկական հսկողության տակ գտնվող տարածքը եւ ռմբակոծել Հաթերքն ու Լաչինի միջանցքը:

Այսօրվա հեռուստահաղորդումներում հետաքրքիր շատ բան կար: Նրանցից նշեմ մի երկուսը:

Ռուսները հպարտությամբ հիշում են իրենց պրեզիդենտ Ելցինի արդարամտությունը. Բուլղարիայում ճանաչեց Հարավսլավիայից բաժանված ու իր ինքնավարությունը հռչակած Մակեդոնիայի հանրապետությունը: Երեւի գիտեր, որ դրան դեմ է մի հին ու ազնիվ պետություն՝ Հունաստանը, որն ասում է՝ Մակեդոնիա անունն ի՞նչ կապ ունի հյուսիսի հետ, դա մերն է, մեր պետության ավանդական անուններից մեկը: Այս առթիվ էլ Ելցինը ժողովրդին է վերապահում անուն դնելու իրավունքը. կարեւորն ինքնորոշումն է, իսկ անո՜ւն... թող ժողովուրդն ընտրի:

Իսկ արցախի ինքնորոշում-ինքնավարությունն ինչո՞ւ չի ընդունում, չէ՞ որ այստեղ անունն անգամ չի խանգարում:

Մի հեռուստանկարն էր նվիրված վերջերս Լաչինի շրջանում զոհված երիտասարդ Ալվարդ Վարդումյանին: Հայոց լեզու էր դասավանդում Երեւանի Չեխովի անվան դպրոցում: Շարժման սկզբից ի վեր հայրենասիրական միջոցառումների է մասնակցել, գրել է բանաստեղծություններ, որոնցում ոչ միայն տրոփում է հայրենիքի ճակատագրի համար վառվող մի սիրտ, այլեւ անվերջ արթուն է այն գիտակցությունը, որ հայ-



րենիքի փրկությունը զոհեր է պահանջում: Կարծես պատրաստ էր, ավելի ճիշտ՝ պատրաստվում էր այս նահատակությանը... Բայց մի՞թե այս էլ անխուսափելին էր: Ասում են՝ միշտ առաջ ընկնող մեր առաջնորդը (Հայրիկյան) որոշած է եղել Լաչինը վերաբնակեցնել, այնտեղ հայկական դպրոց բացել... Իբր, առաջինն էլ հայոց լեզվի ուսուցչի հարցը պիտի լուծվեր, եւ այնտեղ էլ գնալու կոչին արձագանքել է հայրենասեր Ալվարդը:

Գոնե լավ է, որ հեռուստալրագրողներն այսքան բան են արել՝ հայրենանվեր աղջկա կյանքի արդար մասն անմահացնելու համար:

✧ ✧ ✧

Ցույց տվին Ճարտարում տեսագրված մի զրույց այնտեղի ջոկատի հրամանատար Յուրայի հետ: Ճարտարյան կենսասիրության եւ արամտության տեր մարդ է երեւում: Լրագրողն ասում է.

- Շա՞տ չեն նեղություն պատճառում այս թուրքերի գրոհներն ու ռմբակոծությունները:

- Ռմբակոծությունե՜րը, հա՜, տներ են քանդում,-պատասխանում է քթի տակ,-կվերականգնենք... Իսկ գրոհներն ի՜նչ, մեզ նվերներ են բերում: Գիտեն, որ զենքի ու զինամթերքի պակասություն ենք զգում եւ բերում են: Երեկ չէր, մեկել օրը, երկու տանկ ողջ-առողջ թողին մեզ, երկուսն էլ ջարդել էինք: Տասներկու ավտոմատ, չորս-հինգ ականանետ, փամփուշտին որ համա՜ր չկա:

Այս ընթացքում ավտոմատը ձեռքին մի երեխա, երեւի տաս-տասնմեկ տարեկան, պտտվում էր զրուցողների շուրջը: Լրագրողը դարձավ նրան.

- Այդ ավտոմատն ինչի՞դ է:

Եւ երեխան մեծավարի պատասխանեց.

- Բա էստեղ առանց զենքի ո՞նց կլինի:

- Իսկ կրակել գիտե՞ս, կրակո՞ւմ ես:

- Բա թուրքեն աչքն էլ չո՞ւմ հանում: Ես ամեն զենք էլ բանեցնում եմ՛ Ա՛յ, հարգրո՛ւ,-գլխով Յուրային է ցույց տալիս,-էնոր Վեյսալուի կողմից եկող թուրքին ի՜նչ տարածության վրա չոքեցրի... Ասաց՝ կեցցե՜ս, ոչ մի սնայպեր չէր կարողանա:

**Օգոստոսի 10-ին** Ռուսաստանի «Վեստին» հաղորդեց Մախս Մամեդովի վնգստոցն այն մասին, որ Լ. Տեր-Պետրոսյանի երեկվա հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Արծվաշեն (իսկական անունը՝ Բաշքենդ) գյուղը գտնվում է ո՛չ Հայաստանի, այլ Ադրբեջանի տարածքում եւ մինչեւ այժմ եղել է հայ գրոհայինների նստավայր, որտեղից նրանք անընդհատ հարձակումներ են գործել Գետաբեկի ադրբեջանական եւ ռուսական գյուղերի վրա: Ցույց տվին նաեւ ռուսական երկու գյուղերի գանգատավոր ռուս բնակիչներին, որոնք, իբր, փախստական են եղել եւ նոր միայն հնարավորություն են ստանում վերադառնալու հարազատ օջախները:

Լ.Տեր-Պետրոսյանի դիմումի նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտեց նաեւ ԱՊՀ ռազմական ղեկավարությունը: «Ազատություն» ռադիոյի ուշգիշերային հաղորդման համաձայն՝ կենտրոնական զինվորական շտաբի պետի տեղակալ, գեներալ Մանիլովն ասել է՝ Հայաստանն, իհարկե, իրավունք ունի նման դիմումով հանդես գալու, քանի որ պետական անվտանգության վրա ագրեսիվ հարձակում է կատարվել: Սակայն, ինչպես հայտնի է, ԱՊՀ համապատասխան որոշումը դեռեւս հաստատված չէ համագործակցության մեջ մտնող բոլոր պետությունների կողմից, ապա եւ, ամենակարեւորը, ռազմական միջամտությունից առաջ, անհրաժեշտ է հարցը լուծելու համար իրականացնել քաղաքական, դիվանագիտական ու տնտեսական միջոցառումներ:

Իսկ արծվաշենցի երեք հազար փախստականները Կրասնոսելսկում ու հանրապետության մյուս բնակավայրերում սփռված, համառորեն սպասում են, որ իրենց գյուղն ազատագրվի, եւ իրենք վերադառնան հարազատ օջախները:

սա խելագար մոլորություն է, որովհետեւ ինքնապաշտպանությունը կգտնի նաեւ օդահենության դեմ կռվելու արդյունավետ եղանակը, եւ այն ժամանակ թուրքի բոլոր ուրուները կարժանանան այն բախտին, որ հայտնի է Դրմբոնի երկնքում հայտնված ուկրաինացի վարձկանին:

Լրատվական մարմինները Նազարբաեւի նախաձեռնության մանրամասներն են հաղորդում (սեպտեմբերի 1-ից կրակը պիտի դադարեցվի), կատարում քննարկումներ: Մերոնք աչքները փակած քայլողի դերում են, օդն են շոշափում՝ բան չհասկանալով: Իբր, մեր ղեկավարությունը գոհ է սպասվող արդյունքներից, չնայած դարձյալ որոշումներ են ընդունվում՝ առանց ԼՂՀ օրինական ներկայացուցչության: Սակայն չեն մտածում, որ եթե այսօրեւեթ կրակը դադարեցվի, սկսեն բանակցությունները, ապա, լավագույն դեպքում, կարող են համաձայնել, որ սահմաններ գծեն այն կետերով, ուր այսօր կանգնած են հակառակորդ կողմերը: Իսկ դա պիտի նշանակի՝ Մարտակերտի ու Մարտունու ամենաարգավանդ մասերը եւ Շահումյանը մնում են թուրքին, իսկ հայությանը՝ պոկված մի Լաչինի շրջան, որը միայն միջանցքի դեր պիտի խաղա:

Սակայն այս տարբերակին էլ համաձայն չէ Ադրբեջանի ղեկավարությունը: Այն իր Մախս Մամեդովի բերանով Մոսկվայի հեռուստատեսությամբ հարայ է տալիս, թե ո՞նց կլինի, որ կրակը դադարեցվի, խաղաղ բանակցություններ սկսվեն, երբ դեռ Վերին Ղարաբաղում (ամեն օր մի նոր անուն են սարքում՝ իրենց դատարկ գլուխներին սազական) կան զինված հայկական խմբեր: Ուրեմն, նրանք բանակցության կարող են նստել միայն զինաթափ ու իրենց առաջ նեստված հայերի հետ: Լա՜վ ախորժակ է...

Իսկ Ադրբեջանի պրեզիդենտի լրատվական կենտրոնի ղեկավար Լեյլա Յունուսովան, նոր բարբաջանքներ է տարածում հայ ինքնապաշտպանության մասին: Ըստ դրանց՝ հայերը փունջ-փունջ են բնաջնջվում իրենց (թուրքի) քաջարի զորամասերի հարվածներից, եւ շուտով իրենք պիտի հասնեն Զանգեզուր ու Գյոգչա-Սեւան: Նրա թվերին հավատացողը պիտի մտածի, թե Հայաստանում ու Արցախում այլեւս հայ չկա, թուրքի դեմ կռվող վարձկաններն են մնացել:

**Օգոստոսի 29-ին** կատաղի մարտեր էին գնում Դրմբոն-Մեհմանա-Վերին Հոռաթաղ գյուղերի ուղղությամբ: Թշնամին հեռահար հրանոթներից ռմբակոծում էր այդ ու հարեւան գյուղերը: Ինքնապաշտպաններն ստիպված եղան թողնել Հարությունագոմերը՝ նախօրոք այնտեղից հեռացրած լինելով բնակիչներին:

Շահումյանի շրջանի պարտիզանական մի ջոկատ, անզիջում կռվի բռնվելով Գյուլիստան գյուղում բուն դրած թուրք զինվորության հետ, վեց ասկյարի սպանել է, մնացածներին էլ դուրս քշել գյուղից:

Մարտունու շրջանում սաստիկ ռմբակոծության է ենթարկվել Բերդաշենը: Երեկ ԼՂՀ ղեկավարությունն իր պաշտոնական համաձայնությունն էր հրապարակել՝ ի պատասխան Մարիո Ռաֆայելիի կոչի: Այսօր էլ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հրապարակեց նման բովանդակության իր հայտարարությունը՝ համաձայնելով, որ հենց սեպտեմբերի 1-ն էլ հարմար է հրադադարի սկզբի համար: Ադրբեջանի ղեկավարությունը դեռեւս լուռ է, չնայած հայտնի է, որ առանց նրա խոսքի անհնար է որեւէ վճռական քայլ սպասել բարդույթի լուծման ուղղությամբ:

Լրատվական մարմինները հաղորդեցին, թե Ադրբեջանի մոսկովյան ներկայացուցիչն է հայտնել բերահավատություն (ի՞ր անունից, թե՞ իր կառավարության), թե իբր, Լեւոն Տեր-Պետրոսյանի վերահսկողությունը չի տարածվում Լեռնային Ղարաբաղում գործող զորամասերի վրա: Ուստի եւ նկատելի արդյունք սպասել արվող հայտարարությունից, պարզապես չափազանց լավատեսական է:

Սակայն մինչեւ այժմ եւ հենց այս օրերին էլ այդ թուրք աղբյուրներն առիթը բաց չէին թողնում պնդելու, թե հիշյալ զորամասերը հենց Հայաստանի ղեկավարության բերածներն են, ագրեսիվ նպատակների իրականացնողները: Այդ ինչպե՞ս եղավ, որ հիմա էլ դարձան նրա վերահսկողությանը չենթարկվող:

Հետո էլ, չէ՞ որ այժմ, եթե այնտեղ կա կարգե դուրս մի իրողություն, դա այն է, որ



Ադրբեջանը նույնիսկ պատերազմի օրենքներո՛վ անհանդուրժելի կործանիչ ռմբակոծություններ է կատարում:

✧ ✧ ✧

Պատահաբար ձեռքս ընկավ «Նեզավիսիմայա գազետայի» (Մոսկվա) 1992 թ. օգոստ. 12-ի համարը, որի տպագրած մի հոդվածը պատմում է խորհրդային, ապա ռուսական բանակից Ադրբեջանին անցած զինամթերքի ու զենքերի մասին, եւ պարզվում է, որ այս հանրապետությունն արդեն «սեփականացրել է» 295-րդ ու 23-րդ մոտոհրաձգային դիվիզիաների բոլոր զորամասերը, 23-րդ նավանորոգման ռազմական գործարանը, 60-րդ մոտոհրաձգային դիվիզիայի 14-րդ մոտոհրաձգային գունդը, ինչպես նաեւ 4-րդ ընդհանուր-ռազմական բանակի բոլոր ռազմաօդակայանները, հոսպիտալները, ռազմական ու թիկունքային բոլոր կազմավորումներն իրենց նյութական ռեսուրսներով ու ռազմա-տեխնիկական սարքավորումներով: Ադրբեջանի Պաշտպանության մինիստրությանն են հանձնել 230 տանկ, շուրջ 300 ԲՏՌ, 330 ԲՄՊ, 175 հրետանի, շուրջ 130 ականանետ, «Գրադի» 33 սարք եւ շուրջ 2000 գնդացիր:

Ասում է՝ այս ամենն ապացույց է, որ ԱՊՀ՝ Տաշքենդում ընդունված որոշումից Ադրբեջանն օգտվել է կրկնակի ու քառակի, բայց արի ու տես, որ Լեռնային Ղարաբաղում սանձազերծած պատերազմն առավել բորբոքելու նպատակով Ադրբեջանի ղեկավարությունն ու ազգային բանակը պահանջում են, որ իրենց հանձնվեն Ադրբեջանի տարածքում գտնվող ամբողջ ռազմական տեխնիկան ու զորամիավորումները նույնպես, եւ, հավանաբար, շուտով կհասնեն նրան, որ տանան նաեւ 75-րդ ու 60-րդ մոտոհրաձգային դիվիզիաները եւս, քանի որ այս դիվիզիաները, որոնք հիմնականում բաղկացած են ռուս զինվորներից ու սպաներից, չեն կարող ապահով հեռանալ իրենց հայրենիքը, ադրբեջանցի գրոհայինների սպառնալից պահանջներով ստիպված են կամ ընտանիքները վերցնել, փախչել, կամ էլ մնալ եւ ստորացուցիչ պայմանագրերով առայժմ ժամանակավորապես ծառայել տեղում, թերեւս «մեկ շաբաթով վարձակալվել, գնալ կռվել ԼՂԻՄ-ում՝ իբրեւ տանկային դիպուկահար... «Ռոճիկը» ամսական 50 հազար է: Դրան էլ գումարած, եթե պայմանագիրն ստորագրված է մարտական գործողություններին մասնակցելու համար՝ մեկ տարուց ավել ժամանակով, ապա սպային խոստանում են բնակարանով ապահովել ոչ միայն Ադրբեջանում, այլեւ ԱՊՀ ուրիշ հանրապետությունների տարածքներում:

«Ահա թե այդ իրավիճակն ինչպես է բացատրել 4-րդ բանակի անձնակազմի հետ տարվող աշխատանքի օգնական, գնդապետ Յու. Խվոստիկովը,- գրում է հոդվածի հեղինակ Վլադիմիր Մուխինը եւ բերում գնդապետի բացատրությունը.- «Մարդիկ գտնվում են անհուսալի վիճակում: Եթե նրանց այստեղ երկար պահեն, ապա սպաներին սպառնալիքով, կաշառքով, խոստումներով եւ ուրիշ միջոցներով ստիպելու են կռվել Ղարաբաղում: Եւ նրանք կդառնան օտարվածներ Ռուսաստանի ու անհարազատներ այստեղի համար»: Այդպես էլ, դեռեւս մայիսի 13-ին Բաքվի մոտ ռուսական զորքերի դիրքերը լքած, ամբողջ տանկային պատրաստականությունը վերցրած հետախուզական վաշտի հրամանատար, լեյտենանտ Ա. Երմակովն է կամավոր հեռացել: Թե դրա համար ինչքան դոլար է ստացել, դժվար է ասել, բայց որ Լեռնային Ղարաբաղի մարտերում մահացու վերք է ստացել, դա հայտնի է: Այդպիսի բախտ է վիճակվել նաեւ ավագ լեյտենանտ Լեւկովիչին ու մայոր Ա. Էլկինին: Անտեր են մնացել այդ երկուսի մանկահասակ երեխաներով ընտանիքները: Եւ ռուսական զինված ուժերից էլ այդ ընտանիքներին չի հասնում ոչ մի արտոնություն: Չէ՞ որ նրանց զոհված հայրիկներն այլեւս ռուսական բանակի զինվորներ չեն:

«Միայն վերջին 5 ամիսներին 4-րդ բանակը թողել են 153 սպաներ... Նկատի առնելով, որ մնացած սպաներից շատերն էլ Ռուսաստանում չունեն նույնիսկ ժամանակավոր անկյուն, որտեղ հնարավոր լինի կանգ առնել կամ թեկուզ իրերը պահել, ապա դժ-

վար չէ ենթադրել, թե ադրբեջանական բանակն ի՛նչ հնարավորություն ունի ընտրելու իր համար բարձրորակ ռազմական մասնագետներ, իսկ գուցե եւ թնդանոթի միս. նայած ո՛վ ի՛նչ բախտի կարժանանա»,-իր հոդվածն այսպես է ավարտում Վ. Մուխինը:

**Օգոստոսի 30-ին** հայ ինքնապաշտպանները Ներքին Հոռաթաղի մոտ շրջապատման մեջ են առել ու ջարդել թուրք մի զորաջոկատ, որը տվել է 30 զոհ:

Մեհմանայի վրա գրոհի եկածներին ետ են մղել՝ պատճառելով կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ:

Գյուլիստանի նվաճման մասին տվյալները ճշգրտվել են. պարտիզանները կոտորել են 40 ասկյար, ոչնչացրել զրահատեխնիկայի ինն միավոր:

ՀՀ սահմանային շրջաններում եւս կռիվները չեն դադարում: Կրասնոսելսկի շրջանում մերոնք թշնամուն են զիջել Վահան գյուղը:

Լրատվական միջոցները զբաղված են Ալմա-Աթայի բանակցությունների արդյունքների քննությամբ: Այն որեւէ բան կտա՞ հարցի կարգավորմանը, թե՞ կմնա նախորդ անարդյունք ժողովների ու այլեւայլ միջնորդումների մակարդակին: Չէ՞ որ Ադրբեջանի պատվիրակությունը խորհրդաժողովում, կառավարությունն էլ այստեղ՝ ցուցաբերում են քաղաքականություն, որից դժվար է սպասել որեւէ խելամիտ բան:

Խորհրդաժողովի մասնակից Դավիթ Շահնազարյանն ասում է՝ Ալմա-Աթայում Ադրբեջանի պատվիրակությունը կտրականապես դեմ է եղել կրակի դադարեցման վերաբերյալ փաստաթուղթ ստորագրելուն, եւ միայն Նազարբաեւի՝ Էլչիբեյի ու Տեր-Պետրոսյանի հետ ունեցած հեռախոսազրույցից հետո է, որ գործը գլուխ է եկել: Եւ առհասարակ խորհրդաժողովից առաջ, ընթացքում ու հետո Ադրբեջանի պաշտոնական շրջանները մի երգ գիտեն եւ միշտ այն են լարում, որ իրենք հայկական կողմի հետ զրույցի սեղանի շուրջ կնստեն լոկ այն ժամանակ, երբ Արցախից դուրս եկած կլինի վերջին զինված հայը: Ապա՝ ամենակարեւորն ու ամենաբարդը. նրանք գտնում են, որ իրենք Լեռնային Ղարաբաղի հետ հարց չունեն, հարցն ու պարզելիքը Հայաստանի հետ իրենց շլնքին փաթաթված տարածքային բարդույթն է: Իսկ ամենացավալին էլ այն է, որ սա դարձել է նաեւ գործին առնչվող բոլոր երկրների ու նրանց պաշտոնեության համոզմունքը: Ընդունում են հայ-ադրբեջանական բարդույթ, մոռանում, որ Ադրբեջանը խնդիր ունի միայն իր ազատության ու ինքնավարության համար կռվող արցախահայության հետ:

**Օգոստոսի 31**. Թուրքը Մեհմանան էլ նվաճեց: Մեր ապիկարները հաղորդեցին, թե մեծ ճնշում էր, եւ իրենք ստիպված եղան զիջել: Իսկ այսպես որ գնա, շուտով կհասնեն Ստեփանակերտ, այն էլ կզիջեն, կմնա «Լաչինի միջանցքը», որն արդեն քանի՜ օր թուրքն իր հսկողության տակ առած է համարում:

Նախորդ օրը, այս գիշեր եւ ամբողջ այսօրվա ընթացքում ռմբակոծվել են Ավդուռը, Մյուրիշենը եւ Նորշենը: Այս էլ որ հանձնենք, նախկին մարզից միայն ծվեններ կմնան, անբնակ ու անկենդան ծվեններ, որովհետեւ Մարտակերտի ու մնացած շրջանների փախստականների հոծ խմբերը եկել, սփռվել են Հայաստանի տարբեր մասերում եւ մշտական բնակության հնարավորություններ են փնտրում:

Ստեփանակերտի վրա այսօր ռումբեր են նետել թուրքի ՍՈՒ-25 3 ինքնաթիռներ, որոնցից մեկը վայր են գցել Շուշվա մոտ, մյուսին էլ լուրջ վնաս պատճառել:

Շահումյանի շրջանի պարտիզանական կռվի ղեկավարությունը, Գյուլիստանն ազատագրելուց հետո, թուրքերին պահանջ է ներկայացրել, որպեսզի նրանք գյուղերից դուրս բերեն ներմուծած թուրք խաղաղ բնակչությանը, որպեսզի իրենք ստիպված չլինեն գործ ունենալ անմեղ ու անպաշտպան մարդկանց հետ:

ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը համաշխարհային հանրությանն է դիմել՝ հայտնելով, որ Ադրբեջանն արհամարհում է բարդույթի կարգավորմամբ զբաղվող միջազգային եւ ուրիշ հեղինակավոր մարմինների միջնորդություններն ու առաջարկությունները, արցախահայության ցեղասպանությունն է իրականացնում, մի՞թե նրան չպետք է սանձահարեն:

Մոսկվան ցույց տվեց ինքնագոհությունից պայթող թուրքերի մռութները, որոնք միայն



անհեթեթություններ էին դուրս տալիս:

Մախս Մամեդով.-Ադրբեջանական զորամիավորումներն ազատագրեցին Մեհմանան (ումի՞ց, իր հույն ու հայ բնիկների՞ց:):

Իսկ երիտասարդ մի բացբերան հուսավառ մրթմրթաց.-Քի՛չ է մնացել, որ Ղարաբաղի լեռնային մասը լրիվ ազատագրենք: Այ, նրանից հետո մենք Հայաստանի հետ բանակցությունների՛ կնստենք...

Հայաստանի տերերը ե՞րբ պիտի ոտքի հանեն ողջ ժողովրդին, ձեր օձի մռութները ջարդեն, ցույց տան, թե դուք ի՛նչ տեսակ ազատարարներ եք: Վերջերս նրանք չամաչեցին հայտարարել, թե Կրասնոսելսկի շրջանում երեկ թշնամուն հանձնված Վահան գյուղի համար ծանր մարտեր ենք մղել, սակայն չկարողացանք պահել... Արծվաշենից հետո էլ Վահա՜նը:

Հանձնելով նահանջո՜ւմ ենք:

**Սեպտեմբերի 2**. Երեկ ու այսօր, ըստ Ալմա-Աթայում ընդունված հայտարարության, կրակը դադարեցված պիտի լիներ, սակայն շարունակվում է, հատկապես ԼՂՀ-ում, ուր կան նոր զոհեր ու վիրավորներ, ավերածություններ: Մեծ ու կատաղի հարձակում է եղել Չլդրանի վրա, մերոնք արժանի հակահարված են հասցրել, թշնամու 30 ասկյարներ են սպանվել, 2 տանկ է ոչնչացվել: Եւ, այնուամենայնիվ, Նազարբաեւի ներկայացուցիչ Գանի Կասումովը, Բաքվում նստած, Մոսկվայի հեռուստատեսությամբ հայտնում է, որ իր շեֆի նախաձեռնությունը բարի արդյունքներ է տալիս, խաղաղություն է ամենուր: Եւ պատահական չէ, որ ռուս խոսնակը, այս փչոցը բաց թողնելով՝ ասում է.

- Բայց ի՜նչ խաղաղություն, երբ Մարտակերտի շրջանի շուրջ 50 գյուղերն ադրբեջանցիների ձեռքին են, հայերի հսկողության տակ մնացել են տասը, նրանք էլ անընդհատ ռմբակոծվում ու գնդակոծվում են:

Եւ զարմանա՞նք, որ Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհին խումբ-խումբ փախստականներ են, որ այլեւս չեն դիմանում երկնքից թափվող կրակին, փախչում են, ուզում են փրկել իրենց փոքրիկներին ու անճարներին:

Հայ ազգի մի մասի օրհասն է, մարդիկ փրթվում են թուրքի բերած աղետից, իսկ Հայաստանի նախագահը նոր ուղեւորությունների է պատրաստվում. այս ամսի կեսերին ԱՄՆ պիտի գնա, որ ելույթներ ունենա ՄԱԿ-ի ժողովներում, եւ աշխարհն իմանա, որ հայ ժողովուրդը պերճախոս ղեկավար ունի:

**Սեպտեմբերի 3-ին** Իջեւանի ու Ղազախի սահմանագլխին, հայկական Կայեն ավանում, հանդիպել են Հայաստանի ու Ադրբեջանի պրեզիդենտների ներկայացուցիչները՝ նպատակ ունենալով, Ալմա-Աթայի ծրագիրն իրականացնելու համար, առաջիկայում որոշակի մանրամասներ նախատեսնել: Պայմանավորվել են հրադադար անել ամսիս 15-ից: Ոչ մի խոսք չի եղել Լեռնային Ղարաբաղի մասին:

Հայաստանի նախագահին ներկայացրել է ԳԽ-ի պատգամավոր Դավիթ Շահնազարյանը, Ադրբեջանի նախագահ Էլչիբեյին՝ ինչ-որ Սալամով, որը, ըստ զանազան լրատվական տեղեկությունների, քանի՜ անգամ հայտարարել է, թե ինքն օժտված չէ իր նախագահի որոշակի հանձնարարականներով: Այս դեպքում հարց է առաջանում, իսկ հանդիպման ինչի՞ եւ ինչպե՞ս է եկել: Մի՞թե Դավիթ Շահնազարյանի բարեւն առնելու համա՛ր միայն:

Առաջանում են նաեւ ուրիշ հարցեր. այսպես, օրինակ, ի՞նչ հանձնարարությամբ է հանդիպման գնացել Դավիթ Շահնազարյանը, որ ներկայացնում է Հայաստանի պրեզիդենտին: Սա անցյալ տարի գնաց Քիշնեւ, ի՛նչ-ի՛նչ հակառուս խմբերի ներկայացուցիչների հետ ստորագրեց մի կոչ, որով խորհրդային զորքերը դուրս էին հրավիրվում Արցախից, հետո էլ եկավ, Երեւանի հեռուստատեսությամբ ռուսներին հայհոյեց, թքոտեց-մրոտեց՝ երազելով այն օրը, երբ հայ ժողովուրդն ապրելու է՝ նրանց «բարեկամությունը» թոթափած:

Դրանից հետո էր, որ կաշառված ներքին զորքերի հրամանատարության ու ադրբեջանական օմոնի տնօրինությանը հանձնվեց արցախահայությունը, որպեսզի ցույց տրվի,

մար նախապես պայմանավորվե՞լ էք, ունե՞ք մեր կառավարական մարմինների թույլտվությունը,- հարցրել է «Զվարթնոցի» դիսպետչերը: Այս հարցին թուրքերը չեն պատասխանել, եւ մերոնք նրանց կարգադրել են դուրս գալ Հայաստանի սահմաններից, քանի չեն կիրառվել նման դեպքերում օրենքով սահմանված միջոցներ...

Հիմա մերոնք տարակուսանքի մեջ են. ի՞նչ մարդիկ են, ինչի՞ են դիմել նման հիմար քայլի: Չե՞ն մտածում, որ դա կարող է լինել վարչապետ Խոսրով Հարությունյանի աղերսանքի պատասխանը. մեզանից հա՞ց էք մուրում, ուրեմն ձեր երկիրը փռե՞ք մեր ոտքերի տակ... Թե՞ եկել են ստուգելու՝ իսկապե՞ս մենք այնպես ու այնքան քաղցած ենք, որ գնացել ենք մեր հավիտենական թշնամու ոտքը:

Օրվա շատ կարեւոր իրադարձություններից մեկը՝ Անգլիայի նախկին ղեկավար Մարգրետ Թետչերը, իբրեւ Բրիտիշ-Պետրոլիում նավթային ընկերության ներկայացուցիչ, ժամանել է Բաքու, բարեկամության ու համագործակցության երդում է տալիս, եւ թուրքերը խանդավառված են. տեսե՞ք, ասում են, նույնիսկ Ղարաբաղի բարդույթի շուրջ իր նոր վերաբերմունքն է ցուցաբերում. առաջ դատապարտում էր մարդու իրավունքի ոտնահարումն այդ մարզում, իսկ Շուշիի ու Լաչինի դեպքից հետո աչքերը բացվել են, եւ հիմա տեսնում է, թե ով ո՛վ է,- էլի գնծում է Մահիր Մամեդովը եւ ավելացնում.- 70 տարի հետո Անգլիան նորից ոտք է դնում Ադրբեջանում, եւ սկսվում է մեր հին բարեկամության ու համագործակցության նոր փուլը:

70 տարի հետո՝: Նկատի ունի անգլիական ռազմադիվանագիտական պատվիրակության խարդավալից ներկայությունն Ադրբեջանում ու Այսրկովկասում 1918-20 թվականներին, կաշառված թոմսոնների ու շատելվորտների հակահայկական մեքենայությունները...

Իսկ եթե այդ Մարգրետ Թետչերն էլ, իր հայրենակցուհի ազնվաբարո եւ անձնազոհ Կոքսի պես գնա իրողությունների վայրը, սեփական աչքերով տեսնի՜ ինչն ինչո՛ց է եւ ով ո՛վ ... Մի՞թե նա էլ չի դառնա Կոքսի նման մի Ֆիդայուհի...

ՀՀՇ վարչությունը հրապարակեց կոչ, որով պահանջում է, որ բոլոր զինապարտները պարտադիր կերպով ներկայանան զինկոմատներ եւ գնան մասնակցելու Արցախի փրկությանը:

«Ստեղծված իրավիճակը ողջ ժողովրդից պահանջում է վեր կանգնել քաղաքական ու գաղափարական տարաձայնություններից, մոռանալ վեճ ու վիրավորանք, լարել բոլոր ուժերը եւ ազգովին զինվորագրվել Արցախի ինքնապաշտպանության գործին»,- ՀՀՇ-ական կոչի խոսքն է:

Բայց մեկ-երկու ամիս առաջ նույն այս ՀՀՇ ղեկավար ներկայացուցիչնե՞րը չէին, որ Արցախի փրկության վրա խաչ էին քաշել եւ առաջարկում էին համաձայնել թուրքի լուծն ընդունելու: Ուշացա՞ծ չէ կոչը: Ո՞ւշ չեն ուշքի ու խելքի գալիս ՀՀՇ-ները...

✧ ✧ ✧

Հեռուստատեսությամբ ելույթի լսափողը դեմ տվին մի արցախցի երիտասարդ տիկնոջ, որը վիրավոր պառկած է հիվանդանոցում: Նրա խոսքը բավական խելոք ու բանաստեղծական կոչ էր՝ ուղղված արցախցի եւ առհասարակ հայ զինապարտ երիտասարդությանը: Սիրելի՜ եղբայրներ ու զավակներ,- պահի ողջ ողբերգականությունը վայելող արտիստիկ ձայնով ասում է նա,- ելե՛ք, զե՛նք առեք, գնացեք արցախյան սուրբ հողի ազատագրության անհետաձգելի գործի՛ն: Ինձ միշտ թվացել է, թե նման կոչի կարիքը չպետք է լինի: Բայց այսօր, մանավանդ նրա՛նց համար, որ ճակատը թողած՝ Երեւանում ու հայաստանյան ուրիշ վայրերում են գտնվում, թող իմանան, որ ճակատ վերադառնալով կկատարեն մեծ փրկագործություն: Կփրկեն ո՛չ թե Արցախը, որ, միեւնույն է, առանց իրենց էլ փրկվելու է, այլ իրենց պատի՜վը, ա՜յր-մարդու հայկական անունը...

Հայտնեցին, որ այնտեղ, Արցախյան հողում ննջում են այս խելոք տիկնոջ երիտասարդ ամուսնու եւ այլ հարազատների մարմինները:



Ո՞վ պետք է անտարբեր մնա այս կոչի նկատմամբ:

✧ ✧ ✧

Բուտրոս Ղալին Մոսկվայից հրաժեշտ տալուց առաջ հարցազրույց ունեցավ եւ նախկին ԽՍՀՄ տարածքում բռնկված ազգամիջյան բարդույթների առթիվ նորից հիշեցրեց իր ՄԱԿ-ի դիրքորոշումը. ազգի ինքնորոշման եւ պետական սահմանների անձեռնմխելիության խնդիրները կարող են լուծվել միայն երկկողմ համաձայնությամբ, ապա՝ մարդու իրավունքների պաշտպանությունը միջազգային բարձրագույն օրենքն է: Բայց չէ՞ որ առաջինը հօդս է ցնդում, դարձնում դատարկ խոսք ամեն մի բարձրագույն օրենք: Ուրեմն, երկու կողմերից մեկը՝ Ադրբեջանը, պետք է հարգի մեր ինքնորոշումը, բարձրագույն օրենք ընդունի Արցախի հայ մարդու իրավունքը... Ի՜նչ ցնդաբանություն:

**Սեպտեմբերի 8-ին** արցախյան ճակատում էական փոփոխություններ տեղի չունեցան: Թուրքը դարձյալ ռմբակոծել էր Մարտունին, Հադրութը, Սոսը, Ճարտարը, Կարմիր շուկան, Մելիքաշենը: Ապա հարձակումներ է ձեռնարկել Մելիքաշենի վրա Հադրութի, Մեհմանայի վրա Մարտակերտի շրջաններում: Երկուսում էլ մեծ կորուստներ կրելով՝ ետ է փախել: Մելիքաշենի մոտ, օրինակ, մի քանի տասնյակ ասկյարներ են կոտորվել, իսկ Մեհմանայի մոտ հանձնել են մի քանի ռազմակետեր:

Հայ-ադրբեջանական սահմաններում, չնայած պայմանավորվածությանը, բախումները շարունակվել են:

Օրվա նորություններից կարեւորները.

Մոսկվայից հաղորդեցին, որ լեզգիների ինքնավարական շարժումն օրեցօր լայն ծավալներ է ընդունում: Գումարվել է մեծ համագումար, որն ընդունել է կոչ՝ հարգելու իրենց անկախության ու ինքնավարության ձգտումը: Առայժմ սահմանների կամ առհասարակ տարածքային հարց չի դրվում: Բայց չէ՞ որ նրանք միաձույլ կերպով ապրում են Դաղստանում ու Ադրբեջանում, եւ ինքնավարությունը տրամաբանորեն պիտի տանի նրանց տարածքային ամբողջության եւ սահմանների խնդրին,- եզրակացրեց ռուս մեկնաբանը:

Հռոմում Ղարաբաղի հարցին նվիրվելիք համաժողովին գնացած պատվիրակություններից Հայաստանինը, ԼՂՀ-ինը, Ադրբեջանինն ու Թուրքիայինը ոչ պաշտոնական հանդիպումներ են ունեցել եւ չեն հասել որեւէ լուրջ պայմանավորվածության: Իսկ համաժողովի ղեկավար Մարիո Ռաֆայելին ցավով է հայտնել, որ ցարդ Ադրբեջանը չի պատասխանել իր ներկայացրած առաջարկությանը, եւ Ալմա-Աթայի պայմանագիրն էլ ոչ մի արդյունք չի տվել Լեռնային Ղարաբաղում, երբ փաստորեն ու հիմնականում նվիրված է եղել այնտեղ խաղաղություն հաստատելու խնդրին:

✧ ✧ ✧

Մոտ օրերը Ստեփանակերտում կսկսի աշխատել հացի գործարանը, որը, հանրապետության կենտրոնի բնակչության հացի նվազագույն պահանջները բավարարելու համար, պիտի կլանի օրական 15 տոննա ալյուր: Այդ ալյուրը կանոնավոր տեղ է հասնում Լաչինի միջանցքով, չնայած թուրքի չդադարող ռմբակոծություններին:

Այսօր երկու հանրապետությունների ղեկավարներ Լեւոն Տեր-Պետրոսյանն ու Գեորգի Պետրոսյանը Երեւանում պաշտոնական հանդիպում են ունեցել, քննարկել բազմակողմանի համագործակցության հարցերը եւ ընդունել գործունեության կոնկրետ ծրագիր:

ՀՀ շրջանների զինկոմիսարիատներից հաղորդում են, որ կամավորները

խումբ-խումբ ներկայանում են՝ ճակատ մեկնելու եւ առհասարակ Հայաստանի կազմավորվող բանակի շարքերը համալրելու համար:

Լիտվայի հանրածանոթ լրագրողուհի Մարիետե Կոնտրիմայտեն է հզոր ինքնաթիռով մեծ քանակությամբ սնունդ, դեղորայք ու հագուստեղեն բերել Արցախում կռվողների եւ թուրքի վայրագություններից փախստական դարձածների համար:

Բաքվում պրեզիդենտի նստավայրի մոտ մեծ հանրահավաք է եղել: Ցուցարարները հրապարակ են տարել Արցախի ճակատում կոտորված ասկյարների դիակները, հայհոյել Էլչիբեյին եւ քարկոծել նրա նստավայրը...

**Սեպտեմբերի 9**. Այսօր Մարտակերտի շրջանում ազատամարտիկները գրոհել են թուրքի գրաված դիրքերի վրա եւ լրիվ ազատագրել Դրմբոնն ու Մեհմանան:

Մարտունու եւ Հադրութի շրջանների շատ բնակավայրեր ռմբակոծվել են: Ռազմական մեծ կուտակումներ են նկատվում Մարտունու եւ Ասկերանի ուղղությամբ:

Իսկ Մախս Մամեդովը կենտրոնական հեռուստատեսությամբ նորից վայնասուն է բարձրացրել. հայերը Կրասնոսելսկից ռմբակոծեցին Գետաբեկի շրջանի Նովոիվանովկա ռուսական գյուղը, եւ ցույց են տալիս մոլոկանների լաց ու շիվանի կադրեր, որոնք էկրանին երեւացել էին դեռեւս այս ամառնամուտին:

Լրատվական մարմինները նորից խոսում են Բաքվում պրեզիդենտ Էլչիբեյի դեմ արվող ցույցերի մասին: Տեղեկացնում են, որ այնտեղ, հրապարակում, ցուցադրում են իրենց մեռելներին, որոնք մի չնչին մասն են միայն զանգվածային այն կոտորածների, որոնց ենթարկվում է թմրադեղերով կամ հրացանի փողով ճակատ քշված ասկերական խառնամբոխը: Երբ Ասկերանի ու Մարտունու ճակատներում այժմ էլ նրանցից հարյուրներով թափված են, եւ Էլչիբեյի հրամանակատարները չեն տանում, որպեսզի առավել չբորբոքեն սեփական ժողովրդի զայրույթը:

ԼՂՀ ԳԽ-ի Նախագահությունը կոչ է հղել Մինսկի խորհրդաժողովը նախապատրաստելու համար Հռոմ հավաքված պատվիրակություններին՝ պահանջելով գլխավոր ուշադրությունը դարձնել Ադրբեջանի կողմից խաղաղ բնակչությանը զանգվածաբար կոտորելու հրեշավոր ընթացքի վրա եւ ստիպել, որ դադարեցվի կրակը: Իսկ այնտեղ (Հռոմում), ասում է՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի պատվիրակությունները խստորեն դատապարտել են ԼՂՀ տարածքի խաղաղ բնակչության դեմ ադրբեջանական բանակի գործած վայրագությունները:

ՀՀ պրեզիդենտի լրատվական կենտրոնից հաղորդում են, թե հանրապետության ղեկավարությունը ԱՊՀ Բիշքեկի առաջիկա հանդիպման կազմակերպիչներին հղել է գրություն, որով զգուշացնում է, թե Ադրբեջանն ԱՊՀ կազմի մեջ ընդունելու դեպքում Հայաստանն ստիպված կլինի վերանայել համագործակցության մեջ իր հետագա մնալու հարցը, քանի որ անհնար է նույն քաղաքական միավորի մեջ լինել ագրեսորի, մարդու իրավունքները ոտնահարող պետության հետ:

ՀՀՇ վարչությունը կոչ է հրապարակել «բոլոր արցախցիներին եւ հայրենի հողի համար կռվելու պատրաստ յուրաքանչյուր հայ քաջորդու՝ արցախյան մարտադաշտ մեկնելու, մեր երկիրն ու ազգային արժանապատվությունը պաշտպանելու համար ներկայանալ զորահավաքի նորաստեղծ շտաբ...»: «Պահն է սթափվելու... Պետք է լարել բոլոր ուժերը եւ ազգովին զինվորագրվել Արցախի ինքնապաշտպանության սրբազան գործին» («ՀՀ», 1992, սեպտ. 8):

Թե ինչպես կիրականացվի այս կոչը, շատ կարեւոր է: Բայց մեզ համար կարեւոր են նաեւ մի երկու ամիս առաջ նույն վարչության, նրա կազմակերպությունը ներկայացնող պատգամավորների եւ կառավարության անդամների կոչերն ու երդումները կռիվը դադարեցնելու, Արցախը թուրքի ողորմածությանը հանձնելու, համազգային նոր ողբերգության պատճառ չստեղծելու համար: Մի՞թե Շահումյանն ու Մարտակերտը պիտի կորցնեինք, որպեսզի ՀՀՇ-ականներն ուշքի ու խելքի գային...



**Սեպտեմբեր 10**. Այսօր պատերազմ էր գնում Մեհմանա-Վաղուհաս գծի դիմաց-չլինի՞, թե մերոնք նորից դիրքերը զիջեն):

Թուրքերը հրթիռակոծել են Մարտունու եւ Հադրութի շրջանների բազմաթիվ բնակավայրեր: Շատ են տուժել Մարտունին ու Խնուշինակը: Ֆիզուլուց մի ջոկատ գրոհել է Ցորի վրա, յոթ ասկյար այնտեղ թողնելով՝ ետ փախել: Մերոնք ոչ մի վնաս չեն կրել:

Թուրքը Լաչինի միջանցքն էլ է ռմբակոծել... Եւ այս պայմաններում իսկ Երեւանից Արցախ են վերադառնում շատերը, որ առաջ լքել էին իրենց ավերված ու բռնագրավված բնակավայրերը: Համոզվել են, որ փախստական թափառելն ավելի վատ է, քան հայրենի հնավանդ օջախի ավեր քարերը մինչեւ վերջին շունչ պաշտպանելը:

Ասում են՝ Ադրբեջանը Ղարաբաղում կորցրել է ԱՊՀ-ից ստացած ռազմական իր բոլոր ինքնաթիռները եւ հիմա գործի պիտի դնի Չեխիայից ինչ-որ ճանապարհով ձեռք բերած (երեւի վառելիքով փոխանակած) ինքնաթիռներ... Ոչի՜նչ, սրանք էլ իրենց վերջը կգտնեն ԼՂՀ տարածքում, այնտեղ լավ սովորել են ինքնաթիռ որսալը:

ԼՂՀ արտգործղեկավար Լեւոն Մելիք-Շահնազարյանն ասում է՝ Ադրբջեանի ղեկավար Էլչիբեյը հիմա լիակատար իրավունք ունի ինքնասպանություն գործելու, քանի որ պրեզիդենտի գահն ընդունելիս խոստացել էր մինչեւ սեպտեմբերի սկիզբը լրիվ «ազատագրել Ղարաբաղը», հակառակ դեպքում ինքնասպանություն կգործի:

Ինքնասպանության հարցը հստակեցված է նաեւ այն առումով, որ ասկյարների դիերն են հասնում իր գահանիստի պատերի տակ, եւ նրանց տերերը հանրահավաքներ են անում, արյան գին են պահանջում, քարկոծում են գահանիստը:

Այսօր Ստամբուլում, Եվրոպական խորհրդի անդամ երկրների արտգործնախարարների հանդիպմանը, Րաֆֆի Հովհաննիսյանը քննադատեց Թուրքիայի վտանգավոր դերը Լեռնային Ղարաբաղի խնդրում: Նա ասաց՝ Ադրբեջանում գործում են Թուրքիայի ռազմական խորհրդականներն ու սպաները, խոսք կա այն մասին, որ Ադրբեջանը զենք էլ է ստանում Թուրքիայից: Էլ չենք խոսում այն մասին, որ Թուրքիայի ընդդիմության պատճառով Հայաստանը չի ընդգրկվում Եվրոպական խորհրդի մեջ՝ գոնե դիտորդի կարգավիճակով:

Երեւանում կամավորական-մահապարտների գունդ են կազմակերպում: Մի գնդապետ (Գեւորգ Պետրոսյան), որ հատուկ այդ գործով է զբաղված, հաղորդեց, որ միայն այս մեկ օրում ավելի քան հարյուր կամավոր է ցուցակագրվել.... Եւ այս գունդը լինելու է Հայաստանի կանոնավոր բանակի հիմքը:

Իսկ մենք էլ կարծում էինք՝ Պաշտպանության մինիստր Վազգեն Մանուկյանն իր հեռուստաելույթին շատ էր հուզված, խոսք էր՝ ասաց մահապարտների գնդի մասին... Հիմա ես տարակուսած եմ. այս ի՞նչ կանոնավոր բանակ է լինելու, որի հիմքը կամավորությունն է: Մենք մինչեւ ե՞րբ պիտի պետություն խաղանք ինքնագործ խմբերով:

Մոսկվայից էլ հաղորդեցին Հայաստանի ղեկավարության սպառնալիքը՝ Բիշքեկում Ադրբեջանին ԱՊՀ ընդունելու դեպքում իր այնտեղից դուրս գալու հնարավորության մասին: Իսկ որ ասեն՝ ուզո՞ւմ ես, դո՛ւրս եկ: Դո՛ւրս եկ, ապրիր մեկուսի: Ինչո՞ւ չես ապրի, հրեն Թուրքիային ես դիմել, հաց ես ուզում... Դուրս եկ եւ այդ հույսով էլ ապրիր:

Թե՞ ինքնագործունեությունը ենթադրում է նաեւ անհեռատեսությո՞ւն:

Օրվա կարեւոր իրողություններից.

Բուտրոս Ղալին, ԱՊՀ կատարած շրջագայությունից վերադառնալով՝ հայտարարել է, թե ՄԱԿ-ն աշխարհի մի շարք տաք կետերում պետք է խաղաղարար դեր կատարի, գործադրի ամեն տեսակ ջանքեր: Դա չի վերաբերում, իհարկե, ԱՊՀ սահմաններից ներս բորբոքված կետերին, որոնցում որեւէ ձեռնարկում անելու համար իր գլխավորած միջազգային կազմակերպությունը ո՛չ բավարար միջոցներ ունի, ո՛չ էլ նույնիսկ ռազմական ուժ: Ուրի՞շ բան, որ կարող է դիտորդներ ուղարկել, ինչպես այդ արել է Մերձդնեստրի

ու Ղարաբաղի պարագայում:

Ուրեմն, մենք այդ ՄԱԿ կոչված միջազգային մարմնից կարող ենք սպասել միայն թամաշաչիներ: Իսկ մեր հարցը կլուծենք մե՛նք, բացառապես մե՛ր ուժերով ու հնարավորություններով:

Այսօր, Ստամբուլում, Եվրախորհրդարանի՝ Թուրքիայի նախաձեռնությամբ կազմակերպված մեծ ժողովում ՀՀ արտգործնախարար Ր. Հովհաննիսյանը քննադատեց Թուրքիայի հակահայկական գործողությունները, մանավանդ ԼՂՀ դեմ միջազգային զանազան միջոցառումներում ձեռնարկած սադրանքները եւ Հայաստան մտնող բեռների դեմ դրած արգելակները: Ապա նա առաջարկեց, որ Հայաստանն ընդունեն ԵԱՀԽ-ի մեջ:

Հեռուստատեսությամբ տված հարցազրույցում ԳԽ-ի պատգամավոր Դավիթ Շահնազարյանը շեշտեց իտալացի դիվանագետ Մարիո Ռաֆայելիի դիրքորոշումը ԼՂՀ հարցի կարգավորման կապակցությամբ: Նա պահանջում է կրակը դադարեցնել՝ առանց նախապես դրա համար պայմաններ դնելու: Դադարեցնել ու դրանից հետո միայն անցնել հարցերի քննարկմանը (Էլչիբեյը պահանջում է, նախ, վերադարձնել Շուշին ու Լաչինը, ԼՂ-ից դուրս բերել հայ ամբողջ զինվորությունը... Որպեսզի այսքանից հետո ինքը որոշի, թե ի՞նչ է անելու):

Շահնազարյանը նկատեց նաեւ Արցախ մուծված պառակտողական (ուրիշ խոսքով՝ կուսակցական) քաղաքականության վտանգավորությունը: Գտավ, որ Արցախում պետք է գործի միայն մեկ միասնական գաղափար՝ հողը պաշտպանելու եւ հաղթելու կամքը: Իսկ կուսակցական տարաձայնությունները միայն պիտի խանգարեն, գործը տապալեն: Իհարկե, սա նաեւ իր ՀՀՇ քաղաքական համոզմունքն է: Մի՞թե: Բայց ինչո՞ւ այսպես ուշ ենք իմանում, մանավանդ նրանից հետո, երբ այդ ՀՀՇ-ն Արցախում կորցրել է իր դիրքերը:

**Սեպտեմբերի 11.** Դեռեւս ցերեկով Մոսկվայից (ադրբեջանական լրատվության անունից) հաղորդեցին, թե թուրքերը Մարտակերտի շրջանում գրավել են Չլդրան գյուղն ու հարեւան, ռազմական կարեւորություն ունեցող բարձունքները, ինչպես նաեւ ջախջախիչ հրետակոծության են ենթարկել Լաչինի միջանցքով Երեւանից Ղարաբաղ ռազմամթերք փոխադրող մի ավտոշարասյուն:

Երեկոյան հաղորդումներում այս երկու տեղեկությունները հաստատող ոչինչ չկար: Հակառակը, մերոնք պնդում էին, որ Մարտակերտի շրջանում ինքնապաշտպանները ոչ միայն վստահորեն հսկում են Մեհմանա-Դրմբոն գիծը, այլեւ հաջող կռվում են մոտակա, ռազմավարական կարեւորություն ունեցող բարձունքներին տիրանալու համար:

Թուրքերը Հադրութի կողմերում են ակտիվացել. երեկ ռմբակոծել են Հախուլլուն, այսօր՝ Էդիլլուն: Կան ավերածություններ: Ռմբակոծել են նաեւ ոչ միայն Գորիսի Կոռնիձորը, այլեւ Հայաստանի ոչ այնքան սահմանային այնպիսի բնակավայրեր, ինչպիսիք Բռնակոթն ու Շաղատը (Նախիջեւանի ու Կուբաթլուի կողմերից):

Հռոմում ԼՂՀ հարցի քննարկմանը նվիրված խորհրդաժողովն ավարտվեց՝ առանց որեւէ վճիռ հանելու, եւ հայտնի է, որ Մինսկում էլ ժողով չի լինի: Այս անարդյունք ավարտը մտահոգություն է պատճառել հարցի լուծմամբ շահագրգռված բոլոր կողմերին, բացի Ադրբեջանից, որը ոչ մի կերպ չուզեց ճանաչել ԼՂՀ իրավունքը, եւ միջազգային հեղինակավոր մարմնի բոլոր ջանքերն ի դերեւ ելան:

ՀՀ կառավարությունը մոտ օրերին կդիմի ՄԱԿ-ին՝ խնդրելով լծվել ԼՂՀ խնդրի կարգավորմանը, քանի որ ԵԱՀԽ-ը պարզապես սպառել է իր հնարավորությունները,- հայտնեցին ՀՀ պրեզիդենտի լրատվական կենտրոնից:

Այսօր առավոտյան Ստեփանակերտ է ժամանել ՀՀ կառավարական պատվիրակությունը՝ պետական նախարար Ռ. Չիֆթալարյանի գլխավորությամբ: Այն պետք է ծանոթանա հանրապետության սոցիալ-տնտեսական ու ռազմական վիճակին եւ ԼՂՀ իշխանությունների հետ ծրագրի նրա կարգավորման ու հետագա զարգացման խնդիրները: Անմիջապես տեղի է ունեցել հանդիպում Պաշտպանության կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ (սրանից էլ կարելի է եզրակացնել, որ Հայաստանի համար նա՛ է Արցախի առաջին ղեկավարը):



◇ ◇ ◇

ՀՀ արտգործնախարար Ր. Հովհաննիսյանի՝ Ստամբուլում ունեցած ելույթը դժկամությամբ ընդունվեց Հայաստանի իշխանությունների կողմից: ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Ռ. Շուգարյանը, օրինակ, անմիջապես հայտարարեց, թե այն զգացմունքային է եւ շատ խիստ... Այդպիսի ելույթ կարելի է ունենալ Սփյուռքի որեւէ հավաքում եւ ոչ թե Թուրքիայում, այն էլ՝ Թուրքիայի արտգործնախարարի ներկայությամբ»:

Ապա Շուգարյանը հայտնեց, որ Հովհաննիսյանի ելույթում կան մտքեր, որոնք «հակասում են Հայաստանի քաղաքականության ընդհանուր ուղեգծին» («Ազատամարտ», 1992, սեպտեմբեր, N 38):

Ամենայն հավանականությամբ՝ Շուգարյանն արտահայտում է իր նախագահի կարծիքը, որը չի կարող անհետեւանք մնալ: Դժբախտաբա՞ր...

◇ ◇ ◇

Թուրք պաշտոնեությունը վերջին ամիսներին ամեն ինչ նվիրել էր ռազմաճակատին եւ հաղթանակը, ինչպես ասում են, իր գրպանում դրած էր համարում: Այնպես որ կարելի է հասկանալ պրեզիդենտ Էլչիբեյին, որը հանդիսավորապես հայտարարել էր, թե սեպտեմբերի սկզբին իրենք կտոնեն այդ հաղթանակը: Իսկ եթե չկարողանա՞ն: Եթե չկարողանան, կնշանակի՝ իրենք ոչ մի բանի պետք չեն, եւ այս դեպքում պրեզիդենտը խոստանում էր ինքնասպան լինել...

«Ազատություն» ռադիոկայանն էլ, մոսկովյան մի թերթից առնելով, սեպտեմբերի 11-ին հաղորդեց, թե Էլչիբեյի ընդդիմադիր ուժերի ղեկավար Էթիբար Մամեդովը պրեզիդենտի թիմին մեղադրել է ժողովրդի շահերը ոտնահարելու, պետական միջոցները ցաքուցրիվ անելու մեջ, հիշել, օրինակ, Ներքին գործերի մինիստրին, որը մի գործարանի հաշվից 500 հազար դոլար դրամ է գողել: Եւ այս մինիստրը, արդարանալու համար, հայտարարել է, թե 500 հազարի կեսը Ղարաբաղի ճակատի համար է ծախսել, մյուս կեսն էլ պահում է, որպեսզի այնտեղ ամենամոտ ժամանակները տոնելիք հաղթանակը հանդիսավորապես նշի:

Ասում են՝ իրենց խորհրդարանը միանգամայն արդարացի է համարել այս բացատրությունը, եւ ինքն էլ իր հերթին միջոցներ է փնտրում հաղթանակն ըստ արժանվույն տոնելու համար:

Էլչիբեյը հաղթանակ չտոնեց: Դրած պայմանն էլ, որքան հայտնի է, չի կատարվել: Մենք գիտենք, որ ուղղափառ մահմեդականը կմեռնի, բայց չի հրաժարվի տված խոսքից ու խոստումից: Ուրեմն, սպասենք նրա ինքնասպանությանը:

Ինչ վերաբերում է տոնախմբության համար պահված տարադրամին, ապա այն էլ ծախսելու տեղ կգտնվի. չէ՞ որ Լեռնային Ղարաբաղի ճակատներում ասկյարները փունջ-փունջ են կոտորվել, եւ հենց միայն նրանց թաղման ծախսերը բավական շատ պիտի լինեն:

**Սեպտեմբերի 12.** Մարտակերտի շրջանում մարտերը տեղի ունեն Վաղուհաս-Դրմբոն-Մեհմանա գծի վրա: Մերոնք ազատագրել են Պողոսագոմերը եւ Վաղուհասի դիմացի ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող մեկ բարձունք:

Տեղի է ունեցել մեծ դժբախտություն. Վաղուհասի մոտ թշնամու գնդակից զոհվել է ՀՀ ԳԽ-ի պատգամավոր, Արցախի հանձնաժողովի անդամ Սամվել Շահմուրադյանը, որ հայրենասեր ու եռանդուն երիտասարդ էր, խոստմնալից գրականագետ, «Սումգայիթ» շատ օգտակար գրքի հեղինակը:

Մերոնք այս լուրը գուժեցին եւ դրանով էլ երեւի թե կբավարարվեն, չեն մտածի, թե անհրաժեշտ է աշխարհի ականջի մեջ գոռալ, թմբկահարել, ցույց տալ, թե ինչպես նվաճող թուրքը եկել, մեր հողում նրա տեր պառլամենտականին սպանում է...

Մարտերը չեն դադարել նաեւ հայ-թուրք սահմաններում: Կուբաթլիի կողմերից ան-

ռուցին ասաց Հովհաննիսյանը։-Նախագահը կհետապնդի ԼՂՀ ճանաչման խնդիրը, որպեսզի ՄԱԿ-ն էլ իր ներդրումն ունենա այդ խրթին հարցի կարգավորման գործում»։

Բայց Լեւոն Տեր-Պետրոսյանը ե՞րբ է ասել, թե ինքը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, որպեսզի ուրիշներին էլ ճանաչել տա։

**Սեպտեմբերի 18**. Այսօր, ուրբաթ, օդերեւութաբանական բարենպաստ պայմաններում, հեռախոսի, հեռագրի եւ կապի նորագույն ուրիշ միջոցների առկայությամբ՝ Հայաստանի հեռուստատեսությունը թարմ, այսինքն՝ օրվա, նորություններ չուներ Արցախի մարտերից եւ որոճաց երեկ հաղորդածները (Բերդաձորի կռվի ու Դրմբոն-Պողոսագոմեր գծի վերահսկման մասին) եւ դրանով էլ համարեց իր պարտականությունները կատարած (հաղորդումների խոսնակներ էին Ավետիսյանը եւ Մելյանը)։ (Ի դեպ, այս լուրերը՝ շատ ավելի ընդարձակ, այսօր հրապարակված են եղել թերթերում)։

Երեկ ՄԱԿ-ի կենտրոնատեղիում ստորագրվել է փաստաթուղթ, որով նրա ներկայացուցչությունն է ստեղծվում Հայաստանում։

Առհասարակ հիմա շատ են տալիս այս ՄԱԿ-ի անունը։ Հատկապես Լեւոն Տեր-Պետրոսյանի առաջիկա ուղեւորության առիթով։ Գնում է, պիտի ելույթ ունենա, ԼՂՀ հարցը պիտի բարձրացնի... Խորհրդական Ժիրայր Լիպարիտյանն ասում է՝ ՄԱԿ-ի շատ գործիչներ սրտատրոփ սպասում են այդ ելույթին... Բայց չեն էլ ասում՝ ՄԱ՞Կ-ն է պաշտոնապես նրան հրավիրել, թե ի՞նքն է գնում եւ որոշել է ելույթ ունենալ, գոհացում տալ Անվտանգության խորհրդի բարձր պաշտոնյաներին։

Հայաստանի հեռուստատեսությամբ հերքեցին երեկ Մոսկվայից հաղորդած լուրը մեր՝ Քյալբաջար ուղարկած դիվերսանտների մասին, այդպիսի անուն-ազգանուններով ռուս զինվորներ ծանոթ էլ չեն մեր զորամասերին, կեղծված էր նրանց խոսքը, որ չէր էլ լսվում, եւ միայն թուրք լրագրողն էր վայրահաչում...

Բայց այս բոլորը՝ այստե՛ղ, միայն հայ ունկնդրի՛ համար։ Իսկ նրանք իրենց սուտը տարածել են Մոսկվայի միջոցով, ամբողջ աշխարհի համար։

Մախս Մամեդովն այսօր էլ էր վնգստում Մոսկվայի հեռուստատեսությամբ. «Հայկական էքսպեդիցիոն կորպուսը ռմբակոծել է Աղդամն ու շրջանի գյուղերը, բնակչությունը փրկություն չունի, բնակավայրերն ավերվում են...»։

Այս հիմարությունը եթե տվողները չեն հարցնում՝ իսկ որ ձեր ռմբակները Մարտակերտի շրջանն են տակնուվրա արել, եւ որ ռմբակոծում եք Ասկերանը, Մարտունին, Ճարտարը, Հադրութը... Մի՞թե անում եք շինարարական նպատակներով, այդ բնակավայրերի բարեկարգման համար։

Պավել Գրաչովը Տեր-Պետրոսյանի, ապա եւ Վազգեն Սարգսյանի հետ միասին քննարկել է 7-րդ բանակի Հայաստանում մնալու, հայկական ու ռուսական զորամասերի փոխհարաբերությունների հարցերը։ Երկու կողմերն էլ գոհ են արդյունքներից։

Ադրբեջանի «Թուրան» լրատվության հաղորդմամբ՝ Էլչիբեյը ՄԱԿ-ի ժողովին չի գնա՝ ԼՂՀ-ում իրենց համար ստեղծված անբարենպաստ իրավիճակի պատճառով։

Արդյոք նոր ահավոր գրոհ չի՞ պատրաստում, ինչպես անցյալ անգամ, երբ Տեր-Պետրոսյանն Ամերիկայում շրջագայելու գնաց, ու ինքն էլ արշավասույր եկավ, նվաճեց Շահումյանն ու Մարտակերտի մեծագույն մասը։

**Սեպտեմբերի 19**. Այսօր Լեւոն Տեր-Պետրոսյանը մեկնեց Նյու-Յորք՝ մասնակցելու ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի ամսիս 21-ին սկսվելիք նստաշրջանին։ Օդակայանում, ինչպես միշտ, հանդիսավոր երդումի պես, ներկայացրեց այնտեղ իր անելիքը։ Եւ դա էլ՝ այնպիսի բարձր ու հանդիսավոր գիտակցությամբ, ասես հենց դրանից է կախված աշխարհի բախտը։ Ո՛չ միայն հայ ազգի, այլեւ աշխարհի։

– Ելույթը (որ ինքն ունենալու է աշխարհի ամենահեղինակավոր այն մարմնի նստաշրջանում.-Բ.Ու.) նվիրված կլինի Հայաստանի հանրապետության ներքին ու արտաքին քաղաքականության խնդիրներին,-ասաց նա։-Իհարկե նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրին։ Ես կհանդիպեմ ԱՄՆ-ի ղեկավարների, անկասկած, նաեւ հայկական համայնքի եւ «Հայաստան» հիմնադրամի ներկայացուցիչների հետ։



Հեռուստատեսության խոսնակը թվարկեց նրա հետ գնացողների անունները, եւ ստացվեց մի պատկառելի շքախումբ։ Եւ քանի գիտենք, թե մեր հանրապետության վրա ի՛նչ գումար է նստում յուրաքանչյուրի Ամերիկա գնալ-գալը, ապա դժվար չէ եզրակացնել, որ հենց միայն այս շքախմբի ծախսած դրամը բավական կլիներ փախստական բոլոր հայերի ամեն տեսակ հոգսերը քաշելու համար։

Ինչ-որ է, հանրապետության նախագահն այսօր մեկնեց ԱՄՆ, եւ այդ էլ նշանավորեց ԼՂՀ բոլոր շրջանների վրա թուրքերի կատաղի գրոհներով։ Երեկ մերոնք Մարտակերտի լեռնային մասում հարձակվել, ազատագրել էին Վաղուհասը, իսկ այսօր թշնամին գրոհել է Չլդրանի ու Մեհմանայի դիրքերից, եւ կատաղի կռիվ է գնում։ Մարտունու շրջանում թշնամու հեռահար հրանոթները կրակ են տեղացել Մարտունու, Ճարտարի, Գիշու եւ Մուշկապատի վրա, խաղաղ բնակիչներ են զոհվել, վիրավորվել... Ապա մեծաթիվ մի զորաջոկատ, տանկերի ուղեկցությամբ գրոհել է Ճարտարի վրա, եւ հիմա ծանր ճակատամարտ է գնում։

Ռմբակոծության է ենթարկվել նաեւ Լաչինի միջանցքը։ Հետո էլ թշնամին ձեռնարկել է գրոհ, որը դիմակայում են մեր ազատամարտիկները։ Այսօր ետմիջօրեին էլ մերոնք դեռեւս դիմադրում էին։

Ադրբեջանի «Թուրան» լրատվական գործակալությունը Մոսկվային հաղորդել է, թե իրենց ուժերը մեծ արշավանք են ձեռնարկել «Խոջալուի շրջանի» վրա եւ Փառուխ գյուղի ուղղությամբ մխրճվել ներս։ Նրանց բարբաջանքների համաձայն՝ Լաչինի միջանցքն էլ արդեն նվաճել են եւ Ղարաբաղի մնացորդները կտրել Հայաստանից,-թերահավատությամբ հաղորդում է «Նովոստի»-ի խելահաս հաղորդավարուհին։

Իսկ ռուս լրագրողն ուշադրություն էր հրավիրում Քյալբաջարի կողմից Լաչինի միջանցքի վրա թուրքի ձեռնարկած գրոհի, ռմբակոծությունների եւ այնտեղ բորբոքված մարտի վրա։

Ասում են՝ Ադրբեջանի պրեզիդենտ Էլչիբեյը հավաք է արել, հայտարարել, որ ինքը ոչ մի կարեւորություն չի տալիս Ալմա-Աթայի (Նազարբաեւի) նախաձեռնությանը, քանի որ դա Կենտրոնը վերականգնելու եւ նրա վարկաբեկված քաղաքականությունը փրկելու մի տարբերակ է։ Ինքը գտնում է, որ Ղարաբաղի խնդիրն իրենց մեջլիսի լուծելու բանն է, եւ հենց այն էլ շուտով կձեռնարկի լուծմանը։

Հայաստանի լրատվական գործակալությունները, որպես մխիթարական մի երեւույթ, հայտարարում են, թե ԼՂՀ հիմնարկներում, որոնք մի տարուց ավել աշխատավարձի երես չեն տեսել, այսօր աշխատավարձ բաժանեցին այն 100 միլիոնից, որ մայր Հայաստանն էր ուղարկել եւ էլի պիտի ուղարկի։

✧ ✧ ✧

Իմացանք, որ երեկ երեկոյան դեմ մերոնք ազատագրել են Վաղուհասը եւ մեծ հարձակում սկսել Վաղուհաս-Դրմբոն-Մեհմանա ուղղությամբ։ Թշնամին նահանջել է՝ դաշտում թողնելով իր զոհերին, ջարդված զրահատեխնիկան, զինամթերքը։

**Սեպտեմբերի 20-ին** ռադիոն հաղորդեց, թե առավոտից թուրքի զորաջոկատները կատաղի գրոհներ են կատարել Մարտունու շրջանի Բերդաշենի, Մաճկալաշենի ու Ճարտարի, Ասկերանի շրջանի Փառուխ ու Քարագլուխ գյուղերի, ինչպես նաեւ Լաչինի միջանցքի ուղղություններով։ Կռիվը շարունակվել է մինչեւ ուշ երեկո, եւ բոլոր ուղղություններում էլ հակառակորդը ջարդ է կերել, ետ նահանջել՝ տալով մարդկային ուժի եւ տեխնիկայի մեծ կորուստներ։ Բավական է հիշել, որ վերջին երկու օրվա ընթացքում թուրքը կորցրել է 275 ասկյար, մեկ տասնյակ տանկ եւ զրահատեխնիկայի այլ միավորներ։

Այս պայմաններում զառանցանքի պես է հնչում Բաքվի լրատվության բարբաջանքն այն մասին, թե, իբր, Լաչինի միջանցքի տերն իրենք են արդեն, նոր նվաճել են հայկական 15 գյուղ, եւ մարտական գործողությունները տեղի են ունենում Շուշիի ու Ստեփանակերտի մատույցներում (թե՞ նույնիսկ փողոցներում)։

✧ ✧ ✧

Վերջերս պետական նախարար նշանակված Վազգեն Մանուկյանը ՀՀ ԳԽ-ի նիստերի դահլիճում հարցազրույց ուներ, իր գործունեության կարեւորագույն խնդիրը համարեց Արցախը՝ «մեր ազգի ապագայի բանալին»: Պետական գործի վերադառնալու իր մեծագույն դրդիչն էլ դա՛ համարեց, քանի որ «դրված է Արցախի լինել-չլինելու հարցը»:

Ասվա՛ծ տա, որ մարդն իրականացնի իր կյանքի եւ պատվի խնդիրը, որ Արցախի հետ է կապում:

✧ ✧ ✧

Այս օրերին «Իզվեստիա» թերթը հրապարակել է իր աշխատակցի հարցազրույցը Մոսկվայում Ադրբեջանի լիազոր ներկայացուցիչ Հիքմեթ Հաջի-զադեի հետ, որն էլ փորձել է բացատրել, թե իր կառավարությունն ի՛նչ է հասկանում մշակութային ինքնավարություն ասելով, երբ խոստանում է այն շնորհել իրեն «հպատակված» արցախահայությանը: Նա ասել է. «Մենք գտնում ենք, որ լուծումը պետք է լինի ԵԱՀԽ-ի եւ ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքներին համապատասխան, որոնք հռչակում են սահմանների անխախտելիությունը եւ ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնավարություն ունենալու իրավունքը: Մենք պատրաստ ենք Ղարաբաղում մեր հայ քաղաքացիների հետ միասին քննարկել այդ իրավունքների վերաբերյալ ցանկացած խնդիրները՝ ստեղծելու հայկական դպրոցներ, բուհ: Իհարկե՛: Թող տեղական ղեկավարություն ընտրեն, միլիցիա նշանակեն տեղի բնակիչներից: Սահմանը ազատ կտրել-անցնել են ուզում, խնդրե՛մ, այս ամենը կարելի է կարգավորել ընդհանուր ժողովրդավարական ընթացքի շրջանակներում, համաձայն միջազգային պրակտիկայի: Մենք պատրաստ ենք Ղարաբաղ հրավիրել ցանկացած փորձագետների, դիմել միջազգային կազմակերպությունների փորձի եւ ընդունել նրանց երաշխավորությունները» («Ազգ», 1992, սեպտ. 19):

Հաջի-զադեի կարծիքով՝ այս ամենը հնարավոր եւ անհրաժեշտ է իրականացնել Ռուսաստանի նախաձեռնությամբ, որովհետեւ ամեն պարագայի այն է մնում այս տարածքի վրա գոյություն ունեցող ուժերի հանդեպ իրավունք եւ իրական հեղինակություն ունեցող քաղաքական ուժը:

**Սեպտեմբերի 21-ը** Հայաստանի հանրապետության անկախության առաջին տարելիցի օրն է, այդ պատճառով էլ լրատվական մարմինները, ժողովրդին հետաքրքրող տեղեկատվական տվյալները թողած, ամբողջ օրը, մինչեւ ուշ գիշեր, զբաղված էին միայն այդ անկախություն կոչված երանության փառաբանությամբ: Փողոցներն ընկած լրագրողները հավաքել էին անհամար «հարցազրույցներ», որոնցում այս անկախությունը, այսինքն՝ այսօրվա քաղցած, ընչազուրկ, իրավազուրկ ու անհեռանկար վիճակը «եղել է» հայ ժողովրդի բազմադարյան երազանքը: Եւ միայն հատուկենտ պատասխանների մեջ է, որ ճշմարիտ խոսք է հնչում, բողոք, իրական գնահատական, ընդվզում, որոնց էլ հետեւում է տրամաբանական եզրակացությունը. մեր այս անկարող ու անընդունակ իշխանությունները մեկ տարվա ընթացքում հասցրին վարկաբեկել անկախություն կոչվածը, եւ եթե նրանց խոստացածն էլ այս էր, ապա մի՞թե չէր կարելի հենց այս գլխից հրաժարվել եւ շարունակել մեր կանոնավոր ու մարդավայել կյանքը, որ ապրել ենք յոթանասուն տարի:

✧ ✧ ✧

Թուրքը, անկասկած, մեծ ու վճռական գրոհ է ձեռնարկել ԼՂՀ բոլոր մասերի վրա. համարյա ամենուրեք աննախադեպ ծանր ու ավերիչ ռմբակոծություններ են եղել: Ապա ռազմական չորս ինքնաթիռներ գնդիկավոր ռումբեր են նետել Ստեփանակերտի, Շոշի ու Բալլուջայի վրա: Կան երկու սպանվածներ, շատ վիրավորներ: Մերոնք վայր են



գցել ինքնաթիռներից մեկը:

Մարտունու շրջանում լայնահուն գրոհ էր Մաճկալաշեն գյուղի ուղղությամբ: Ճակատամարտը տեւեց երկար ժամանակ, եւ 21-ի առավոտյան թուրքերն ստիպված եղան ետ նահանջել՝ ռազմի դաշտում թողնելով 70-ից ավել կոտորված ասկյար, ջարդված երկու տանկ ու երկու զրահամեքենա:

Բաքվի լրատվությունը բավական կտրական հայտարարում է, թե իրենց ուժերն արդեն շրջափակել են Լաչինի միջանցքին, եւ հայերի վերջը եկել է: Իսկ Մոսկվան, մերոնցից առնելով, հայտնում է, թե ԼՂՀ ինքնապաշտպանությունը վստահորեն հսկում է այդ միջանցքը, եւ հենց այսօր էլ բանուկ կենսական ճանապարհով բազմաթիվ մեքենաներ են անցել՝ Հայաստանից կենսամթերք տանելով մաքառողներին:

«Ազատություն» ռադիոն հաղորդեց, թե Լեւոն Տեր-Պետրոսյանն ասել է՝ հնարավոր է իր բանակցությունն Էլչիբեյի հետ (իհարկե, Լեռնային Ղարաբաղում վիճակը կարգավորելու նպատակով), եթե այն լավ նախապատրաստվի: Իսկ Ադրբեջանի կառավարությունը հրապարակել է հայտարարություն, որով «Վերին Ղարաբաղում» գործող բոլոր ռազմական կազմավորումներից պահանջում է զինաթափվել:

Նույն ռադիոյի հաղորդմամբ՝ Իրանի արտգործնախարար Վելայեթին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մեծ թերությունն է համարել անուշադիր վերաբերմունքը Ղարաբաղում տեղի ունեցող մարտերի ու արյունահեղության նկատմամբ, պահանջել, որ այնտեղ ձեռնարկվեն խաղաղարար միջոցներ, որպեսզի դադարի պատերազմը, ձեռք բերվեն հետագա խաղաղության երաշխիքներ եւ երկու հանրապետությունների տարածքային ամբողջականության վերականգնում:

Մերոնք վերջապես գտնություն ունեցան հայ ժողովրդին հաղորդելու, որ ստացվել է Թուրքիայի վարչապետ Սուլեյման Դեմիրելի պատասխանը Հայաստանի վարչապետին: Դեմիրելը շնորհակալություն է հայտնում ստացած բարի մաղթանքների համար, պատրաստ է բաց թողնել խնդրված հացահատիկը եւ իր հերթին հաղորդում է խորին հարգանքի հավաստիքներ:

**Սեպտեմբերի 22**. Այսօր առավոտ թուրքի «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռները նորից գրոհել են ԼՂՀ մայրաքաղաքը եւ գնդիկավոր ռումբեր նետել նրա բնակելի թաղամասերի վրա:

Ռմբակոծել են նաեւ Մարտունու շրջանի Հաղորտի եւ Հադրութի շրջանի Աղբուլաղ գյուղերը:

Հաղորտին շրջանի խորքում է գտնվում: Ուրեմն, այն էլ ռմբակոծել են, որպեսզի բոլոր բնակավայրերում սարսափով մտածեն, որ փրկություն չկա:

Երեկ թուրքի մի խոշոր զորախումբ հարձակման է դիմել Հադրութի շրջանի Էդիլլու գյուղի վրա, հանդիպել լուրջ դիմադրության, ետ նահանջել:

Այսօր մերոնք վստահորեն վերահսկում են Վաղուհասն ու շրջակաները, Մարտակերտ-Քյալբաջար մայրուղու մի զգալի մասը:

Հայաստանի սահմանային շրջաններում անհանգիստ է դրությունը, ռմբակոծության են ենթարկվել Գորիսի ու Կապանի շրջանների մի շարք բնակավայրեր, կան զոհեր ու վիրավորներ:

Լաչինի միջանցքի համար տաք մարտեր են եղել Ղոչազ գյուղի մոտ: Թուրքերը պարտվել են եւ նահանջել՝ մարտադաշտում թողնելով շուրջ երեսուն ասկյարի դիակ:

Ռուս թղթակիցը Մոսկվայի «Վեստի» հեռուստածրագրով հայտարարեց, թե ադրբեջանական լրատվությունը ստում էր, երբ, քանի օր է, իր ժողովրդին փորձում էր համոզել, թե Լաչինի միջանցքն իրենց հսկողության տակ է գտնվում, եւ վերանվաճված են էլի 15 գյուղեր (երեւի խոսքը Լաչինի շրջանի գյուղերին է վերաբերում): Եւ լրագրողի այս հայտարարությունը հաստատելու համար տարեց մի հայուհի ասաց, «Ես առավոտյան եմ ավտոմեքենայով դուրս եկել Ստեփանակերտից եւ առանց որեւէ դժվարության եկել-հասել եմ Հայաստան»:

Հայտնեցին, որ մի քանի օր առաջ կործանված «ՄԻԳ-24» ինքնաթիռի փշրանքնե-

րը գտել են Շոշ գյուղի մոտերքում։

Այսօրվա ժամը 12-ից պիտի գործի դրվեր երեկ ընդունված հայ-նախիջեւանյան պայմանադրությունը հրադադարի, գազի, էլեկտրաէներգիայի ու հաղորդակցության ուղիների շրջափակումը վերացնելու մասին։

**Սեպտեմբերի 23**. Առավոտ վաղ «Ազատություն» ռադիոն հաղորդեց, թե «Կրասնայա զվեզդա» թերթը գրել է, որ դեռեւս անցյալ շաբաթ օրը հավաքվել են Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի պաշտպանության նախարարները եւ ընդունել որոշում Լեռնային Ղարաբաղի վիճակը կարգավորելու մասին։ Որոշման համաձայն՝ կրակը պիտի դադարեցվի ամսիս 23-ից, ապա Հայաստանը պիտի ետ քաշի իր զորամիավորումները։ Կարծեմ խոսք կար նաեւ զինաթափման մասին, որ կարող է վերաբերել լոկ հայերին։

Ղարաբաղի մասին որոշում են հանել՝ առանց նրա օրինական իշխանության ներկայացուցչի։ Իսկ Հայաստանի հանրապետության ղեկավարները գիշեր-ցերեկ հայտարարում են, թե Ղարաբաղին վերաբերող ցանկացած որոշում կարող է ընդունել միայն նրա ազգընտիր իշխանությունը, եւ Հայաստանն էլ կճանաչի այն վճիռները, որոնք ընդունված կլինեն Ղարաբաղի իշխանության ու նրա բնակչության կամքով։ Առավել հետաքրքիր է հայ ազատամարտիկներին Ղարաբաղից դուրս բերելու պայմանը, որ պիտի նշանակի՝ ԼՂՀ-ը թողնել թուրք դահիճների կամքին։

Զարմանալի չէ, որ Հայաստանում այս խայտառակության մասին ոչ մի խոսք չեն ասում, եւ մենք իմանում ենք այսքան ուշ, այն էլ դրսի լրատվական կենտրոնից։ Ըստ երեւույթին ամոթը ծածկած պահելու համար պայմանավորված են եղել, որ առայժմ լուռ մնան։

✧ ✧ ✧

Ասում են՝ Ֆիզուլու շրջանում, Ճարտարի դիմաց, Մարտունու հանդեպ՝ Ամիրանլարում, Լաչինի շրջանի Ղոչազ գյուղի շուրջը թուրքի նոր կուտակումներ են նկատվում։ Ռմբակոծել են Հադրութը, Մարտունին, Չլդրանը, կան զոհեր ու վիրավորներ։

Ստեփանակերտի երեկվա ռմբակոծությունից զոհված է եղել 2 մարդ, վիրավորված՝ տասնմեկը։ Օդանավից ռմբակոծել են նաեւ այսօր։

Մոսկվայից ադրբեջանական լրատվությունը հաղորդում է, թե իրենք արդեն գրավել են Մարտունի քաղաքը։ Քիչ անց մեր գիշերային լրաբերն է հայտարարում, թե զանգել են Ստեփանակերտ, պարզել, որ դա թուրքի հերթական բարբաջանքն է, եւ Մարտունին հակահարված է տալիս Ամիրանլարում տեղակայված ավազակներին։

Հայաստանի սահմանամերձ շրջաններում լոկ Նախիջեւանից է, որ չեն անհանգստացնում, մնացած տեղերում ծանր վիճակ է, խիստ ռմբակոծության են ենթարկվել, կրել մեծ վնասներ Տեղն ու Խնձորեսկը։

ՀՀ լրատվությունը գնծությամբ հաղորդումներ է անում Լեւոն Տեր-Պետրոսյանի ամերիկյան գործունեության մասին։ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանում ունեցած ելույթը երկու անգամ ցուցադրեց։ Մեր ղեկավարը հանդիպել է Բուտրոս Ղալիի, Իրանի ու Իսրայելի արտգործնախարարների, Կիպրոսի նախագահի հետ։ Բոլոր դեպքերում խոսք է լինում նաեւ Լեռնային Ղարաբաղի մասին, եւ դրանից թուրքը «դառնում է» ուժաթափ։

Ուշ գիշերին Մոսկվայից ցուցադրեցին այն, ինչի մասին լսել էի առավոտյան՝ «Ազատություն» ռադիոյով։ Ամենայն հավանականությամբ Ռուսաստանի պաշտպանության մինիստր Գրաչովն է կազմակերպել։ Մի քանի օր առաջ Երեւան էր եկել, զրույց ունեցավ Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ։ Պարզ է, որ նույնն այս միջոցառումն է եղել։ Հավանաբար նման հանդիպում է եղել նաեւ Էլչիբեյի հետ։ Եւ, ահա՛. Սոչիի մոտ են հավաքվել իրենք՝ Գրաչովը, թուրք Ղազիեւը, վրացի Կետովանին եւ հայ Վազգեն Սարգսյանը, ընդունել են որոշում, որով պետք է կրակը դադարեցվի ամսիս 25-ի ժամը 24-ին, այսինքն՝ 26-ից, ապա հինգ ամսվա ընթացքում պետք է Լեռնային Ղարաբաղից դուրս բերվեն բոլոր զորքերը։



Գրաչովն ասում է.

- Այդ ընթացքում Ղարաբաղում կլինեն խաղաղարար ուժեր Ուկրաինայից, Ղազախստանից, Ռուսաստանից...

Ղազիեւն անմիջապես վրա է տալիս.

- Ի՞նչ խաղաղարար ուժեր, դրանց կարիքը բոլորովին չկա։ Կուզեք, թող դիտորդներ գան...

Այսինքն՝ թամաշիչներ, որ տեսնեն՝ թուրքն ինչի՛ է ընդունակ, երբ դեմն այլեւս զինված հայ չկա։

Այսպես էլ կտրեցին նրա խոսքի կեսը՝ թողնելով, որ մարդիկ մտածեն, թե արդարությունը հաղթանակեց, եւ «թնդանոթները կլռեն կեսգիշերին»։

**Սեպտեմբերի 24**. Երեկ ամբողջ օրը թուրքերը գրոհել են Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղի վրա՝ տանկերի ուղեկցությամբ։ Գրոհը ետ է մղվել։ Նրանք կորցրել են երկու տանկ եւ 42 ասկյար։ Մերոնք ունեն ընդամենը 4 վիրավոր։

Նման մի ճակատամարտ էլ տեղի է ունեցել Ասկերանի շրջանի Փիրջամալ-Նախիջեւանիկ ուղղությամբ։ Մերոնք ոչնչացրել են երկու տանկ։ Այստեղ թշնամին հարձակման է եկել նաեւ այսօր, կորցրել վեց տանկ, կռվի դաշտում թողել բազմաթիվ դիակներ (մոսկովյան հեռուստատեսությամբ թուրքի լրատուն ասաց՝ երկուստեք մեծ զոհեր են եղել։ Եթե խոստովանում է, որ երկուստեք է, այսինքն՝ իրենք եւս զոհեր են տվել, կնշանակի՝ շատ ու շատ են տվել)։

Լաչինի միջանցքի վրա գրոհները չեն դադարում։ Այստեղ եւս մերոնք հաջողությամբ դիմակայում են թշնամուն, եւ այժմ լրիվ անվնաս ու անվտանգ են դարձել ճանապարհը։

ՀՀ սահմանային շրջաններում օրն անցել է հանգիստ, առանց հրաձգության։

Մոսկվան ստիպված եղավ հերքել երեկ թուրքի տված տեղեկությունը Մարտունի քաղաքի գրավման մասին։

Ստեփանակերտում կյանքն աստիճանաբար կարգավորվում է. քարտերով յուրաքանչյուր բնակիչ կստանա ամսական 400 գրամ շաքար, այդքան էլ կարագ։ Հացի հարցն էլ է լուծվում. այսօր Ստեփանակերտ է հասել հացահատիկ տանող մի մեծ ավտոշարասյուն։

Մոսկվայից հաղորդեցին, որ իրենց մոտ են գտնվում ռազմական գործի ղեկավարներ Երեւանից ու Բաքվից եւ Ռուսաստանի պաշտպանության նախարարությունում պայմանավորվում են Լեռնային Ղարաբաղում կրակը դադարեցնելու պայմանների մասին։

✧ ✧ ✧

Երեկ Լեւոն Տեր-Պետրոսյանը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ունեցած ելույթում ասել է. «Հայաստանը,որ տարածքային պահանջներ չունի Ադրբեջանից, միաժամանակ պնդում է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը չի կարող վերածվել էթնիկական փոքրամասնության, չի կարելի նրան զրկել ինքնորոշման իրավունքից, եւ այս ժողովուրդը չի կարող զոհ գնալ տարածքային ամբողջության սկզբունքին»։

**Սեպտեմբերի 25**. Հայաստանի հեռուստատեսությունն էլի հաղորդում է երեկվա լուրերը Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող պատերազմական գործողությունների մասին. Նախիջեւանիկի ուղղությամբ թուրքերը մեծ գրոհ են կազմակերպել, ջարդ կերած ետ նահանջել՝ պատերազմի դաշտում թողնելով 5 տանկ ու 40-ից ավել ասկյարների դիակներ։ Քարագլխի ուղղությամբ եւս, Ասկերանի հյուսիսային մասում, մերոնք դիմագրավել են նման մի հարձակում։

Մարտունու շրջանում ռմբակոծության է ենթարկվել Գիշին, ուր 5 տուն է ավերվել։ Ստեփանակերտն էլ է ռմբակոծվել օդից։

✧ ✧ ✧

Լեռնային Ղարաբաղի կառավարության անունից Սերժ Սարգսյանն ուղերձ է հղել Ռուսաստանի պաշտպանության նախարար Գրաչովին՝ հայտնելով իր կառավարության համաձայնությունը՝ մի քանի օր առաջ հրադադարի առթիվ ընդունված համաձայնության պայմաններին։

Իսկ ԱՊՀ միացյալ զորքերի գլխավոր հրամանատար, մարշալ Շապոշնիկովը հայտարարել է, թե ինքն այնքան էլ չի հավատում ընդունված համաձայնագրի իրականացման հնարավորություններին, քանի որ հայկական ու ադրբեջանական կողմերը դրանից հետո ավելի տաքացրել են կռիվը եւ զբաղված են միայն իրար մեղադրելով։ Ուստի ԱՊՀ ղեկավարությունն ստիպված կլինի բարդույթի գոտի մտցնել իր խաղաղարար ուժերը։

Գիշերն «Ազատություն» ռադիոն հաղորդեց, թե Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինն է ելույթ ունեցել ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նստաշրջանում, Հայաստանին մեղադրել Ադրբեջանի դեմ կատարած ագրեսիայի մեջ, պահանջել, որ այն անմիջապես Ղարաբաղից ետ քաշի իր զորքերը՝ ապահովելով Ադրբջեանի տարածքային ամբողջականությունը։ «Կովկասն այն տեղը չէ,-ասել նա,-ուր կարելի լինի զբաղվել քաղաքական արկածախնդրությամբ եւ մնալ անպատիժ»։

Նման բովանդակությամբ մի ուղերձ էլ Հայաստանի կառավարությանն է հղել Իսլամական պետությունների միությունը՝ քննադատելով նրա «ագրեսիան» եւ Ադրբեջանի ամբողջականության՝ միջազգային օրենքներով պաշտպանվող իրավունքի դեմ գործադրվող անօրինությունները։

Այսպիսի պատռնալիքները, եթե ոչ մի էական նշանակություն էլ չունենան հարցի կարգավորման համար (չնայած բացահայտ է, որ պիտի ունենան), ամենից առաջ ցույց են տալիս, թե ինչպես անխոնջ եւ նպատակասլաց գործում են թուրքերի ղեկավարները, նրանց գործակալները։

«Ազատությունը» խոսեց նաեւ այն մասին, որ ԼՂՀ կառավարության ներկայացուցիչ Ս. Սարգսյանն ասել է՝ ընդունված համաձայնագիրը (զինադադարի մասին) դատապարտված է անհաջողության՝ թեկուզ միայն այն պատճառով, որ ընդունվել է առանց ԼՂՀ օրինական իշխանության ներկայացուցիչի։

Եւ հիմա հարց է, թե այս հայտարարության առթիվ որի՛ հաղորդածին հավատա Հայաստանի հեռուստատեսությա՞ն, թե՞ «Ազատության» լրատուի։

**Սեպտեմբերի 26**. Անցած գիշեր, 00 ժամից պետք է կրակը դադարած լիներ ռազմաճակատում, սակայն նրա զանազան կետերում խախտվել է դաշնագիրը, եւ դրա համար երեւի թե մեղավոր են ե՛ւ թուրքերը, ե՛ւ մերոնք։

Իհարկե, Հայաստանի հեռուստատեսությունը ոչ մի տեղեկություն չունի այսօրվա իրողություններից, «Լրաբերն» այսօր առհասարակ էկրանին չերեւաց, իսկ «Մայրաքաղաքը», երեկվա լուրեր (հիմնականում առնված թերթերից) հաղորդելով, գանգատվեց, թե բենզին չունեն, այդ պատճառով էլ չեն կարողանում տեսագրող խմբեր ուղարկել տեղերը։ Իսկ մենք փորձից գիտենք, որ նրանց համար «տեղեր» են Երեւանի փողոցները, մանավանդ դատարկ կամ փակ խանութները, պուրակներն ու ծառուղիները, ուրկից հաղորդում են զրույցներ տարբեր կոոպերատորների եւ առատաձեռն բարերարների հետ։

Մոսկվայից մեկը լավ բնութագրեց ընդունված պայմանագիրն ադրբեջանական կողմի համար. ասում էր՝ նրանցից ինչպե՞ս խաղաղություն սպասես. մի ձեռքով հրադադարի պայմանագիրն են ստորագրել, մյուսով ավտոմատի փականքն են սեղմում։

Ռուսաստանի պաշտպանության մինիստր Պավել Գրաչովը, ճերմակ-կարմիր մարտական հագուստով, հայտնում է, որ Հայաստանի ու Ադրբեջանի գործընկերները ժամ առ ժամ իրեն հայտնում են ռազմաճակատի վիճակի մասին, արդեն կրակը մարում է, եւ հույս ունի, որ այս որոշումը կլռեցնի հրանոթները։

Իսկ հետո պետք է հայտնի դառնար, որ հենց նախորդ օրը, ամսիս 25-ին, ռազմաճակատի բոլոր կետերում էլ թուրքերը բազմաշերտ գրոհներ են ձեռնարկել՝ նախապես գործի դրած լինելով «Գրադն» ու մյուս հրեշավոր զենքերը, որոնցից 5 սպանված ու 18 վիրավորներ կան Ստեփանակերտում, 5 սպանված ու շուրջ 10 վիրավոր Խնձրիստանում...

Հասկանալի է, որ նրանք ուզում են հրադադարից առաջ մի քանի քայլով էլ խորանալ մեր երկրի մեջ, երբ գիտեն, որ մերոնք իրականում տրամադրված են դադարեցնել մարտը...

**Սեպտեմբերի 27**. Հայաստանի հեռուստատեսությունն այսօր էլ թարմ լուրեր չուներ ռազմաճակատից եւ առհասարակ հանրապետության վիճակից։ «Սնարք» լրատվական կենտրոնի մեկնաբանը հեռուստատեսությամբ խոսեց դրա պատճառի մասին։ Ասաց՝ դեպի սահմանային շրջաններ թռիչքի պատրաստվող ուղղաթիռի մեջ, պետական պաշտոնյաների հետ միասին, տեղավորվել էին նաեւ իրենք՝ լրատվական մարմինների ներկայացուցիչները։ Մեկ էլ թռիչքից առաջ ներս մտավ ԳԽ-ի նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանը, իրենց կոպտորեն դուրս արեց, թե գնացե՛ք, սա ձեր տեղը չէ։ «Սնարքի» աշխատակիցը հայտնեց նաեւ, որ դա առաջին անգամը չէր, նման դեպքեր իրենց հետ հաճախ են պատահել։ Դե՛, իրենք էլ սեփական ուժերով տեղից շարժվել չեն կարող, որովհետեւ, ինչպես հայտնի է, բենզին չունեն։

Իսկ հեռախո՞սը։ Չէ՞ որ այն էլ բենզինով չի աշխատում, եւ իրենք հեռախոսով կարող էին իմանալ, թե ի՛նչ կա արցախյան գոյամարտի շրջանում, ի՛նչ արդյունքներ է տվել ընդունված դաշնագիրը։

Այսուամենայնիվ, հայտնի դարձավ, որ կռիվը շարունակվում է, երկու կողմերն էլ իրար են մեղադրում հրադադարի պայմանագիրը խախտելու մեջ։ Իրար են մեղադրում, իսկ իրողությունն այն է, որ թուրքը գրավել է Չլդրանը, օդից ռմբակոծել Ստեփանակերտը, Մարտունին, Հադրութը եւ բազմաթիվ գյուղեր։

Արտաշխարհի ռադիոկայաններն էլ հաղորդում են Ռուսաստանի պաշտպանության մինիստր Գրաչովի երեկվա ինքնագոհ զրույցն այն մասին, որ Հայաստանի ու Ադրբեջանի գործընկերները պարբերաբար իրեն են զեկուցում կարգավորվող վիճակի, իրականացվող հրադադարի մասին։

**Սեպտեմբերի 28**. Երեկ էր դեռեւս, որ հաղորդեցին, թե հայ ազատամարտիկները ստիպված եղան թուրքին հանձնել Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղը, եւ այսօր արդեն նվաճողի թղթակիցը մոսկովյան հեռուստատեսությամբ վկայում է, թե բա չէ՞ս ասի, հայերն այսօր, խախտելով Սոչիի պայմանագիրը, ռմբակոծել են Աղդարայի շրջանի Չլդրան ադրբեջանական գյուղը։ Ադրբեջանակա՞ն։ Միշտ այսպես է եղել, հիմա էլ կա. թուրքն ուր որ ոտք դրեց, իրենն է համարում։ Իսկ մեր հեռուստատեսությամբ մորուքավոր մեկը հայհոյում է արցախահայերից ոմանց, որոնք չեն կարողանում եւ ի վիճակի չեն պաշտպանելու իրենց հողը։ Ո՛չ հայկական, այլ արցախցու՛ հողը։ Ուրեմն, Արցախը միայն արցախցունն է, ո՛չ ընդհանուր-հայկական, ո՛չ Հայաստանինը։ Չնայած հինգ հազար տարի Հայաստանինն է եղել, այնտեղ հայ է ապրել, այն էլ հայավայե՞լ, հայավարի՞։

✧ ✧ ✧

Այսօր Բաքու են ժամանել Ռուսաստանի դիտորդները, որոնք, իբր, պիտի տեղավորվեն ԼՂ-ի հինգ գոտիներում եւ հայ-ադրբեջանական սահմանային շրջաններում։ Տեսնենք արդյո՞ւնքն ինչ պիտի լինի։

Ադրբեջանի պաշտպանության նախարար Համիդովն էլ, լսած լինելով Պ. Գրաչովի հայտարարությունն այն մասին, թե հնարավոր է, որ ԱՊՀ զորքեր մտցվեն հակամարտության գոտի, գազազած իր ընդդիմությունն է արտահայտել. «Ռուսաստանի զորքը, ինչպես պատմությունն է ցույց տալիս, երբեք էլ խաղաղարար գործունեությամբ չի զբաղվել»,-ասել է նա։

* * *

Հայաստանում դարձյալ զբաղված են համաշխարհային ճանաչման, մեր անկախությունը տիեզերական մասշտաբներով ցուցադրելու խնդիրների աղմուկ-աղաղակով։

Հանրապետության նախագահի ավագ խորհրդական Լիպարիտյանը հեռուստատեսությամբ հպարտորեն արձանագրեց, որ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի նիստում նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ունեցած ելույթը բարձր է գնահատվել ունկնդիրների կողմից, ուստի եւ մեր երկրի արտաքին ու ներքին քաղաքականությունը՝ իբրեւ միջազգային օրինականության պահպանման տիպար, ամենուրեք արժանանում է խրախուսանքի։

Փակագծում ասեմ, որ ընկ. Լիպարիտյանը դժգոհ է հեռուստատեսությունից, որը, նրա ասելով, սովորաբար իր հետ ունեցած զրույցները խմբագրած է ներկայացնում ժողովրդին։

**Սեպտեմբերի 29**. Երեկ ամբողջ օրը Չլդրանից թուրքերը ռմբակոծում էին Կիչանն ու Վաղուհասը։ Ապա ձեռնարկել են կատաղի գրոհ երկու կողմի վրա, ծանր տեխնիկայի ուղեկցությամբ։ Ճակատամարտը շարունակվել է մինչեւ այսօրվա կեսը, որից հետո թուրքերը ետ են նահանջել՝ ռազմադաշտում թողնելով ասկյարների 30 դիակ։ Մեր զոհերը 8-ն են, վիրավորները՝ 15։

Ռմբակոծվել է նաեւ Լաչինի միջանցքը։ Սակայն երթեւեկն անխափան շարունակվում է, որովհետեւ ազատամարտիկները հուսալիորեն պաշտպանում են ճանապարհը։

Հայաստանի սահմանամերձ շրջանների մեծ մասում շարունակվում է փոխհրաձգությունը (ռմբակոծվել են Կապանը, Մեղրու շրջանի Նյուվադի գյուղը, Գորիսի Կոռնիձորը եւն)։

ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը գտնում է, որ Սոչիի պայմանավորվածությունը ձախողվել է, եւ դա այն պատճառով, որ փոքրաթիվ դիտորդները (3-ը՝ Երեւանում, 3-ն էլ՝ Բաքվում) չեն գնում ճակատի շրջանները, միայն լրահավաքի դեր են կատարում։ Ա՛յ, շուտով կժամանեն ավելի շատ դիտորդներ, կներկայացնեն բարդույթի լուծմամբ շահագրգռված բոլոր պետությունները՝ Ուկրաինայից մինչեւ Ղազախստան, եւ այն ժամանակ թերեւս իրականություն դառնա պայմանագիրը։ Ամեն պարագայի Ռուսաստանը պիտի շարունակի խաղաղարար իր դերը, իհարկե ավելի մեծ շահագրգռությամբ ու վճռական կամքով։ Իսկ մինչ այդ Էլչիբեյի զորքերը ոչ միայն տրամադրություն չունեն հրադադար անելու, այլեւ ջանում են ձեռք ձգել նոր բնակավայրեր ու տարածքներ, քանի դեռ դիտորդները չեն եկել ու չեն խափանել իրենց առաջխաղացումը։

Այսօր Էլչիբեյը հրապարակել է հրամանագիր, որով մեկ ամիս եւս երկարաձգում է արտակարգ դրությունը Ղարաբաղի սահմանամերձ շրջաններում, քանի որ այդ տարածքներում դեռեւս չի հաստատել իր ուզած կարգը։

Նյու-Յորքում հանդիպել են Հայաստանի ու Ադրբեջանի արտգործնախարարները, պայմանավորվել երկու երկրների փոխհարաբերություններին վերաբերող հարցերի մասին։ Ապա Ր. Հովհաննիսյանն արել է հայտարարություն՝ քննադատելով ԱՄՆ-ի բարձր պաշտոնյաներին, որոնք սանկցիաներ չեն կիրառում Լեռնային Ղարաբաղում բնիկ հայությունը ոչնչացնող Ադրբեջանի դեմ, հակառակը, միջազգային ատյաններում պաշտպանում են Ադրբեջանի շահերը։

**Սեպտեմբերի 30-ին** ավելի էին բորբոքվել մարտերը Մարտակերտի շրջանի հարավ-արեւմտյան մասում։ Երեկ թուրքերը կատաղի հարձակման էին անցել Կիչանի կողմերում, ինքնապաշտպանության ուժերը նրանց դիմավորեցին կազմ ու պատրաստ, արժանի ջարդ տվին, ետ շպրտեցին՝ պատճառելով մարդկային ուժի եւ տեխնիկայի զգալի վնաս։ Միայն Կիչանի շրջակայքը թշնամուց մաքրելիս մերոնք թշնամուն ստիպել են դաշտից հեռանալ՝ թողնելով 50 ասկյարի դիակ։ Իսկ Վաղուհասի մոտ ինքնապաշտպան ուժերի հարվածներից ընկել են 25 ասկյարներ։

**30-ին** բոլոր ճակատներում համեմատական անդորր է տիրել, սակայն ռազմական մի ինքնաթիռ երեք անգամ հետախուզական թռիչք է կատարել Ասկերանի, Ստեփանակերտի,



Մարտունու եւ Հադրութի վրա («Երկիր», հոկտ. 1)։

Շարունակվում էր Լաչինի միջանցքի ռմբակոծությունը։ Այստեղ 29-ի գիշերը եւ 30-ի առավոտյան ռազմական ինքնաթիռները խիստ ռմբակոծության են ենթարկել Գորիս-Լաչին ուղեհատվածը, Գորիսի շրջանի Կոռնիձոր գյուղը։ Իսկ Գորիսի վրա «Գրադ» կայանքից նետել են 40-ից ավել արկեր։ Կատաղի կռիվ էր գնում Ղոչազ եւ Սաֆյան գյուղերի մոտակայքում։ Չնայած դրան, ճանապարհը գործում է անխափան։ Ռմբակոծության են ենթարկվել նաեւ Հայաստանի սահմանային Երասխավանը եւ Մեղրու շրջանի մի շարք գյուղեր։

Երեւան են ժամանել ռուս 17 դիտորդներ, եւ այստեղ գտնվող 3-ի հետ միասին կայցելեն սահմանամերձ շրջանները, առաջարկություններ կներկայացնեն դրության կարգավորման խնդիրների մասին։

Ռուսաստանի վարչապետի պաշտոնակատար Գայդարն այսօր եղել էր Բաքվում, եկավ նաեւ Երեւան, երկու տեղն էլ տնտեսական համագործակցության պայմանագրեր կնքեց պրեզիդենտների ու վարչապետների հետ։ Էլչիբեյը հենց այսօր էլ Ելցինին նամակ է հղել՝ հավաստիացնելով, որ սկսվում է ադրբեջանա-ռուսական հավասարիրավ փոխհարաբերությունների նոր փուլ։ Իսկ ՀՀ վարչապետը խնդրել է, որպեսզի Ռուսաստանը Հայաստանի տարածքում կազմակերպի հակաօդային պաշտպանության համակարգ։

Վերջին լուրն առաջինը հայտարարեց «Ազատություն» ռադիոն, իսկ ուրիշ տերություններ ջանում են նման տվյալները պահել ըստ հնարավորին գաղտնի։

Գայդարի ու Խ. Հարությունյանի կնքած պայմանագրերը վերաբերում են 1993 թ. երկու երկրների «առեւտրա-տնտեսական համագործակցության, ազատ առեւտրի, միասնական դրամական համակարգի..., միջպետական տնտեսական կառուցվածքներ ստեղծելու եւ առեւտրական ներկայացուցիչների փոխանակման խնդիրներին։ Ստորագրվեց առանձին համաձայնագիր Հայաստանում տեղակայված ռուսական սահմանապահ զորքերի կարգավիճակի եւ գործունեության վերաբերյալ» («Երկիր», հոկտ. 1)։

Ձեռք բերված համաձայնությունների իրականացման հնարավորության առթիվ էլ Գայդարը հավաստիացրեց, որ նրանք կատարելապես կգործեն միայն երկաթուղու բացումից հետո։ Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի խնդրին, ապա Գայդարն ասաց, որ այնտեղ պետք է անմիջապես զինադադար պահպանվել, քաղաքական լուծումները թողնելով հետագային (այդպես է եղել Մերձդնեստրում եւ Հարավային Օսիայում։

Այս օրերին Ռուսաստանի պաշտպանության մինիստր Գրաչովը, Ելցինի հանձնարարությամբ, Մերձմոսկովյան հանգստավայրում թղթակիցներին հրավիրել էր զրույցի, որպեսզի տեղեկացնի, թե ի՛նչ է տեղի ունենում Անդրկովկասում՝ իբրեւ Սոչիի հանդիպման արդյունք։ Եւ ստիպված եղավ խոստովանել, որ մխիթարական քիչ բան կա։ Սակայն գոհացուցիչ համարեց այն, որ հայ եւ ադրբեջանցի կռվողները երկուստեք հոգնել են, զենքն ու զինամթերքն էլ մի կողմից է սպառվում («Հայաստանում մնացել է 40-50 տոկոս տեխնիկա, Ադրբեջանում՝ 20-30։ Եւս երկու-երեք ամիս, երկուսն էլ կկանգնեն զրոյի վրա եւ կհայտնվեն Ռուսաստանում՝ պահեստամասերի խնդրանքով»,-հայտարարել է ամենազոր մատակարարը)։

* * *

Հրապարակվեց առավել վաղ (սեպտ. 25-ին) ՀՀ նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանի հետ տեղի ունեցած մի հարցազրույց։ Այնտեղ խորհրդականը հաղորդում էր, որ չի հավատում, թե միջազգային ատյաններում ղարաբաղյան բարդույթը ցանկալի (կամ որեւէ) լուծում կստանա։ Բայց համոզված էր, թե «երկու գործոն Ադրբեջանին կարող են ստիպել, որ համաձայնի երկխոսության՝ ռազմական խոշոր պարտությունները եւ միջազգային հանրության ճնշումը։ Այս տեսակետից էլ դրական տեղաշարժեր կան, ուրեմն կարելի է հույս ունենալ («Ազգ», 1992, սեպտ. 30)։

* * *

**Հոկտեմբերի 1.** Երեկ երեկոյան, երկու օրվա համառ մարտերից հետո, հայ ազատամարտիկներին հաջողվեց Չլդրանի մի քանի դիրքերից քշել թուրքերին՝ ոչնչացնելով նրանց երկու տանկը։ Երկուստեք զոհեր կան։

Ուրիշ ճակատներում շարունակվում են մարտերը, ռմբակոծության են ենթարկվում շատ բնակավայրեր, մանավանդ Լաչինի միջանցքը, վերջինում ինքնաթիռից նետվել է չորս ռումբ։ Եւ, այդուամենայնիվ, ճանապարհը գործում է անխափան։

Ռուսաստանի դիտորդները լրիվ կազմով ժամանել են Բաքու եւ Երեւան (17-ական հոգի), եւ երկու տեղն էլ «համոզված են», թե զինադադարը հակառակ կողմում են խախտում։ Այսօր հեռուստատեսությամբ խոսեցրին երեւանյան խմբի ղեկավար գեներալին, եւ նա ասաց՝ արդեն իրենց մեջ աշխատանքի բաժանում են կատարել, մի խումբ Լաչինի միջանցքի գոտի պիտի գնա, մյուսը՝ Ստեփանակերտ, որպեսզի հնարավոր լինի կրակը դադարեցնել ամենուրեք։

Սոչիի պայմանագրի համաձայն՝ դիտորդներ պիտի գային հինգ պետություններից, սակայն այսօր այստեղ են միայն ռուսները։ Մնացածներն ինչո՞ւ խախտում են պայմանագրի կետը եւ ինչպե՞ս պիտի կարողանան մեղադրել զինադադարի մյուս պայմանները խախտողին։

Երեկ երեկոյան, հայ-ռուս պետական բանակցությունների ավարտին, Գայդարը խոսել էր իր ու ՀՀ վարչապետի կնքած պայմանագրերի հեռանկարի մասին եւ կարեւորագույն տեղ էր հատկացրել Հայաստան մտնող ճանապարհների, մանավանդ երկաթգծի ապաշրջափակման խնդրին։ Արդյոք կտեսնե՞նք այդ ծրագրի իրականություն դարձած։

Ադրբեջանի կառավարությունն ընդունել է օրենք իրենց փախստականների մասին, որոնք, իբր, կազմում են կես միլիոն, որից 200 հազարից ավելին՝ Հայաստանից (Հայաստանում բնակված 165 հազարի՞ց 200 հազարը փախել են։ Բայց 300 հազարի՞ն որտեղից են հրավիրել)։ Այդ օրենքով փախստականը հինգ տարվա ժամկետով ազատվում է հարկերից ու հանրային ծառայությունների համար գանձվող վճարներից, պետությունը պարտավորվում է կարճ ժամանակում իրականացնել բնակարանային ապահովությունը։

Իսկ Հայաստան հասած փախստականները թողնված են անօրեն պաշտոնյաների կամքին եւ, իրենց պահանջների նվազագույն բավարարությունը չստանալով, գրվում են աշխարհով մեկ, լավագույն դեպքում՝ ուծացող Սփյուռքն են ուռճացնում։

**Հոկտեմբեր 2.** Երեկ ամբողջ օրը եւ անցյալ գիշերը թուրքերը հրետակոծել ու գնդակոծել էին ռազմաճակատի ամբողջ երկարությամբ ընկած մեր խոշոր բնակավայրերը՝ Էդիլլուն, Հադրութը, Մարտունին, Կարմիր-շուկան, Ասկերանը, նույնիսկ ճակատից բավական հեռու գտնվող Սեյտիշենը։ Իսկ Մարտակերտի շրջանի վերջին գյուղերը պարզապես հանգիստ չունեին։ Այստեղ հայ ազատամարտիկներն ստիպված եղան ոչ միայն պատասխանել կրակով, այլեւ հարձակման անցնել եւ ազատագրել մի քանի դիրքեր Չլդրանի ու Կիչանի մոտերքում։

Նույն ժամանակ կատաղի կռիվներ են եղել Լաչինի միջանցքի երկու կողմերին, հատկապես ինչ-որ Տիգիկ գյուղի մոտակայքում։ Մերոնք տվել են 7 զոհ։ Թշնամին եւս կորուստներ ունի։ Կարեւորը՝ ավտոխճուղին գործում է անխափան։

Օրվա ամենաուրախալի լուրը. Մարտունու վրա վերջին օրերին կատարված դաժան ռմբակոծություններից (ինքնաթիռներով) ու հրետակոծություններից («Գրադ» կայանքներով) հետո էլ թուրքերը սանձարձակություն ունեցան այսօր առավոտյան գրոհով մտնել Մարտունի քաղաքի հարավային թաղամասը։ Հայկական ինքնապաշտպան զորամասը հակահարձակման անցավ, դուրս քշեց նրանց, հալածեց դեպի իրենց՝ ռազմաճակատների վերածված գյուղերը՝ Ամիրանլար, Կուրոպատկինո, Մուղանլու, այստեղ էլ ջարդը շարունակելով՝ դուրս քշեց ու նորից հալածեց, եւ օրվա վերջում գրավված էին թշնամու վերջին այս երեք հենակետերը,-հաղորդում է ԼՂՀ լրատվական կենտրոնը։-Կոտորվել



են 50-ից ավել ասկյարներ։

Այս լուրն առնելով, իհարկե, ես ապրեցի մեծ ուրախություն։ Սակայն չեմ կարող չարտահայտել նաեւ այն ծանր ապրումները, որ ունեցել եմ վերջին համարյա թե մի ամբողջ տարվա լուրերից, որոնցում թուրքերն անվերջ ու անպատիժ Մարտունի քաղաքի ու թիկունքի գյուղերի վրա կրակ էին թափում, ավերում եւ պատճառում ահավոր ցավեր ու զրկանքներ։ Ինչո՞ւ մերոնք սկզբից եւեթ չէին վերացնում չարիքի այդ օջախը, այդ ի՞նչ արտոնություն էր, որ նրանց էին պարգեւել, չէ՞ որ այստեղ չի կարելի տեսնել, նույնիսկ հնարավոր համարել ռազմավարական որեւէ բարդություն։

Եւ, այնուամենայնիվ, Մարտունու շրջանի ինքնապաշտպանները լուծել են իրենց շարունակաբար ցավ ու անհանգստություն պատճառած ամենակարեւոր խնդիրը։ Այսպիսի դեպքերի համար են ասել՝ լավ է ուշ, քան երբեք։

Իսկ Ռուսաստանի դիտորդները, որոնց էլ այսօր գումարվել են Վրաստանից եկած մի քանիսը, օրվա լուրերի մեջ չկային, զգացնել չէին տալիս իրենց գոյությունը, չնայած նրանց ղեկավարը երեկ խոստանում էր անմիջապես խմբեր ուղարկել Լաչինի միջանցք ու Ստեփանակերտ։ Գուցե գիշերը, ռուսական սովորությամբ, իրենց խմելուն են տվել եւ այսօր էլ պետք է խումարաթողո՞վ զբաղվեն։

Մեր հեռուստատեսությունը յուրովի զարթնել է, ուշի անդրադարձավ փախստականների հարցին։ Ասում են՝ Ադրբեջանից փախածների մեծ մասը հեռացել է Հայաստանից, սրա մի զգալի տոկոսն են կազմում ԱՄՆ գաղթածները, որոնք այնտեղ են փոխադրվել փախստականի կարգավիճակ ստանալու, որպիսի արտոնություն Հայաստանում ոչ ստանում էին, ոչ էլ հույս ունեին, թե երբեւէ կստանան։ Հետո էլ, չէ՞ որ նրանք այստեղ, պատահական ու չծրագրված օգնություններից բացի, չէին արժանանում որեւէ այնպիսի ուշադրության, որին պիտի հետեւեին բնակարանային, աշխատանքային եւ ապահովություններ։

Իսկ Ադրբեջանը փախստականների մասին օրենք է ընդունել։ Ադրբեջանը, որ դուրս քշածների կեսից էլ պակաս փախստականների է ընդունել, եւ նրանց բնակարանով ապահովելու, աշխատանքի ու համանման ուրիշ հարցեր լուծելու հոգսեր չպետք է ունենա։

**Սեպտեմբերի 30.** Ճշտվել են մարտունեցիների տված ճակատամարտի արդյունքները. թուրքերը, երեք գյուղ-հրակետերից փախչելով, կորցրել են 3 տանկ, 2 զրահամեքենա, հրետանիներ, այլ տեխնիկա, 58 ասկյար։

Մարտունին հարավից ու արեւելքից ապահով է այլեւս, հնարավոր կլինի մշակել շրջանի լավագույն հողամասերը։ Սակայն շրջանի բնակավայրեր այսօր ռմբակոծության են ենթարկվել Ֆիզուլու շրջանի Ղաջար որջից եւ Աղդամի կողմերից։ Այսօր Մարտունում զոհվել են 4 բնակիչներ, շատ են վիրավորները։ ՍՈՒ-25 ինքնաթիռներն էլ ռմբակոծել են Ասկերանը, Ստեփանակերտը։

Այսօր, իբր, դիտորդները պիտի ժամանեին Ստեփանակերտ, սակայն չկան, եւ հանրապետության մամուլի կենտրոնի ղեկավար Գեղամ Բաղդասարյանը հայտարարել է, թե եկած էլ լինեին, ոչինչ չէր փոխվի (եթե դրությունն ավելի չվատանար), որովհետեւ նրանց ճանապարհն անցնում է Բաքվով, որտեղ լավ սովորում են, թե իրենց ինչպես պիտի պահեն Արցախում։

Երեւանում գտնվող ռուս շուրջ 90 դիտորդներ այսօր ճանապարհվել են սահմանային շրջանները (ուրեմն, սուտ էր գեներալի երեկվա հայտարարությունը, թե գնալու են Լաչին ու Ստեփանակերտ)։

Հեռուստատեսությամբ ցույց տվին Մարտակերտի շրջանի մի զորաջոկատ, որի հրամանատարն է Ռազմիկ Պետրոսյանը՝ նախկին ֆուտբոլիստ, մարզիչ, Ստեփանակերտի մարզադաշտի տնօրեն, շարժման առաջին օրերից էլ՝ գոյապայքարի կազմակերպիչների առաջին շարքում։ Ոգեւորությամբ խոսեց իրենց խնդիրների մասին, ցավով՝ ձախողանքներից։ Լրիվ ճերմակել է, իսկ երկու տարի առաջ մեր տուն էր եկել, ոչ մի ճերմակ մազ չուներ։ Ճերմակել է, բայց նույն պինդ ու կրակոտ երիտասարդն է։ Տղան իր զորաջոկա-

տում է կռվում՝ գեղեցիկ, ամուր ու ջլապինդ, ինչպես հայրը։ Հարցնում եմ՝ ի՞նչ կարծիք ես հրամանատար հորդ մասին։ «Լա՛վ,-ասում է,-փորձառու է, միշտ ճիշտ է մտածում, հարաբերությունները զինվորների հետ՝ հարգալից, պահանջկոտ։-Սպա կատակում է.-Լավ է, որ հրամանատար է, թե չէ, որ շարքային լիներ, ինձ պես չէր կարող կռվել։ Դե՛, տարեց մա՛րդ է, հիսունն անց...»։

Ուրեմն, տղան հորն ուրիշ կերպ չի պատկերացնում, քան կռվի դաշտում, բայց լավ է, որ հրամանատար է...

✧ ✧ ✧

Դրությունը շատ է բարդացել Աբխազիայում։ Ելցինը հայտարարություն է արել՝ Վրաստանին զգուշացնելով, որ եթե այդպես շարունակվի, եւ Շեւարդնաձեն կտրական միջոցներ չձեռնարկի խաղաղությունն ապահովելու, ապա Ռուսաստանն ստիպված կլինի իր ազգակիցներին պաշտպանել ռազմական ուժով։

Շեւարդնաձեն էլ պարտք չի մնացել. նրա հայտարարության համաձայն՝ Աբխազիայում անհնար է որեւէ կերպ խաղաղություն հաստատել, բացի ռազմական եղանակից։ Դրա համար էլ կարգադրել է, որպեսզի իր երկրում զորակոչի ենթարկվեն 40 հազար պահեստայիններ, եւ հանրապետությունում տեղակայված ռուսական զորքի ամբողջ ունեցվածքն անցնի իրենց։

Վերջին լուրի մասին դեռեւս իր կարծիքը չի հայտնել Ռուսաստանի կառավարությունը։ Պարզ է մի բան. դրությունն ստիպել է, որ ունեցած եղջյուրները ցուցադրեն Ռուսաստանն ու Վրաստանը։

✧ ✧ ✧

Ցույց տվին նաեւ մեր հանրապետության այսօրվա համար շատ բնորոշ մի իրողություն. մոսկվահայ բարերարները հսկա «Ռուսլան» ինքնաթիռով 110 տոննա ալյուր են բերել քաղցած Երեւանի համար։ Ժամեր են անցել, իսկ բեռնաթափումը չի կատարվել։ Հայտնվում են բեռնաթափողներ եւ բեռնատար մեքենաների վարորդներ, որոնք բացատրում են, թե օդանավակայանի աշխատողներն իրենց ներս չեն թողնում։ Բարերարը ցավով հայտնում է, թե լավ կլիներ, որ «Ռուսլանը» Հայաստանից բեռ էլ տեղափոխեր Մոսկվա (չէ՞ որ այդպիսի բեռներ չէին կարող չլինել), որպեսզի ծախսն ինչ-ինչ չափով թեթեւանար։ Իսկ այդպիսի բեռան մասին խոսք չկա, ոչ ոք չի պայմանավորվել։

Բայց չէ՞ որ «Ռուսլանը» «Զվարթնոցում» գողեգող չի հայտնվել, նրա մասին նախապես տեղեկացած է եղել հանրապետության բարձր պաշտոնեությունը, եղել է պայմանավորվածություն... Թե՞ սրանք ամեն օր անճարակության ռեկորդնե՞ր պիտի սահմանեն։

**Հոկտեմբերի 5-ի** երեկոյան ՀՀ հանրապետության խոսնակները ոչինչ չհաղորդեցին արցախյան ռազմաճակտի. նույնիսկ Հայաստանի սահմանային շրջանների վիճակի մասին՝ իրենց այդ դատապարտելի անտեղյակությունը բացատրելով լրատվական մարմինների անգործությամբ (կիրակի է, չէ՞, պետք է անգործ լինեն)։ Ռադիոհաղորդումներում եւս ոչինչ չկար։

Ռուսական ու արտասահմանյան ուրիշ ձայները վերջին օրերին կամ մեր մասին ոչինչ չեն հաղորդում, կամ կրկնում են ադրբեջանական բամբասանքները։ Օրինակ, թուրքի «Թուրանի» պնդմամբ՝ իրենք Լաչինի միջանցքը նվաճել են, Լաչինում բարձրացրել Ադրբեջանի դրոշը եւ հիմա կռիվ են տալիս Լաչինից արեւելք ընկած տարածքների ազատագրության համար։

Թուրքի լրատվական մարմինները երեւի իրենց տեղեկությունները ստանում են ոչ թե ճակատից, այլ Բաքվի չայխանաներից։

Մոսկովյան հեռուստատեսությամբ տեղեկացրին, թե ադրբեջանա-իրանա-հայկական



եռակողմ բանակցությունները, որոնց նպատակն է Ջուլֆայի երկաթգծի, նրա շրջակայքի ավտոճանապարհների ապաշրջափակումը եւ ինչ-ինչ փոխհարաբերությունների հաստատումը, տապալվել են, որովհետեւ հայկական կողմը հրաժարվեց ստորագրել նախապես պատրաստված պայմանագիրը։

Բայց ի՞նչ բանակցություններ էին դրանք, որտե՞ղ են կատարվել, ինչո՞ւ այդ հայկական կողմը հրաժարվեց ստորագրել մի պայմանագիր, որը նախօրոք պատրաստված է եղել, եւ որի պատրաստմանը, հավանաբար, ինքը եւս մասնակցություն է ունեցել։

Հետո ՀՀ հեռուստատեսության «Մայրաքաղաք» ծրագրով կցկտուր հայտնեցին, որ Երեւանում է գտնվում Իրանի տրանսպորտի նախարարության պատվիրակությունը, որի մասնակցությամբ էլ իսկապես եռակողմ բանակցություններ են տեղի ունեցել (ո՛չ մի խոսք «եռակողմի» երրորդ՝ ադրբեջանական պատվիրակության մասին, երեւի մտածում են, թե հայ վրիժառուները նրանց տեղը կիմանան ու կահաբեկեն)։ Իբր, այդ բանակցություններում քննարկվել է հարցերի լայն շրջանակ (երկաթգծի ու ավտոճանապարհի հարցերը, Մեղրու շրջանում Արաքսի վրա կառուցվող կամուրջը, կարծեմ նաեւ տնտեսական ու առեւտրական փոխհարաբերություններ), ընդունվել են (թե՞ պիտի ընդունվեն) համապատասխան պայմանագրեր...

Բայց Երեւանում տեղի ունեցած եռակողմ բանակցությունների մասին ինչո՞ւ Երեւանից չեն Մոսկվային տեղեկացրել (չէ՞ որ այսօր էլ կիրակի չէր), որպեսզի ադրբեջանցի ծուռբերանները չխեղաթյուրեն։

**Ամսիս 6-ի** հաղորդումներից իմացանք, որ Ֆիզուլու շրջանի Ղաջար ռազմակետից 80 արկ են գցել Մարտունու վրա, պատճառել նոր ավերածություններ...

Առավոտից Երեւանում պտտվող լուրերի համաձայն՝ թուրքերը Լաչինի շրջանում նվաճել են հայկական հսկողության տակ գտնվող երեք գյուղ եւ առաջ են շարժվում։ Երեկոյան մեր միշտ ուշացած լրատվական մարմինները հաղորդեցին, թե թշնամական մի զորաջոկատ գրոհել է Լիսագորի ուղղությամբ (թե՞ Լիսագորի վրա), հանդիպել համառ դիմադրության, տվել զգալի կորուստներ եւ ետ նահանջել։ Բայց Լիսագորը բավական խոր խորքում գտնվող բնակավայր է, որպեսզի թուրքը, նրան կամ նրա ուղղությանը հասած, առաջ գնա եւ իսկապես ոտքի տակ տա ուրիշները, այսինքն՝ բավական տարածք Շուշվա շրջանից։

Լաչինի միջանցքի գոտում թուրքի մի ՍՈՒ-25 ինքնաթիռ երեկ 4 ռումբ է գցել (հրետակոծությունն էլ սովորական երեւույթ է)։ Մարտերի ընթացքում մերոնք ոչնչացրել են 1 տանկ եւ մեկ զրահամեքենա։ Մի խոսքով՝ այս միջանցք համարվածը լուրջ բախումների տակ է, եւ առաջիկա օրերին դրությունն ավելի կսրվի։

Քանի գնում, Սոչիի պայմանագրի իրականացմանը մասնակից դիտորդների մասին հաղորդվող լուրերն ավելի մշուշոտ են դառնում։ Դեռ չեն եկել Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի ու Վրաստանի ներկայացուցիչները։ Ռուսներն էլ գնալով շատանում են, իսկ թե ի՛նչ են անում, իրենց գաղտնիքն է, որ մեզ համար պարզից էլ պարզ է, որովհետեւ նրանց գալուց հետո էր, որ թուրքն ավելի կատաղի դարձավ Լաչինի միջանցքի երկու կողմերին, Ֆիզուլիում, Աղդամում, Մարտակերտում եւ մանավանդ Մարտունիի դեմ, ուր հայ ազատամարտիկներն ստիպված եղան դիմել վճռական քայլերի եւ ոչնչացնել երեք այն հրեշավոր ռազմական հենակետերը, որոնցից փրկություն չունեին Մարտունին ու նրա թիկունքում շարված բնակավայրերը։

**Հոկտեմբերի 6-ին** լրատվական մարմինները պատերազմական գործողությունների մասին խոսում էին հիմնականում անցյալ ժամանակով՝ երեկ երեկոյան, 5-ի լույս 6-ի գիշերը։ Իսկ 6-ի մասին՝ հարաբերական անդորր է, որը խախտվում է միայն հատուկենտ հրացանազարկերով։

Մոսկովյան հեռուստատեսությամբ Մախս Մամեդովի հետ խոսում էր ինչ-որ գեներալ Վիտալի Լուշչուկ (երեւի Ադրբեջան ժամանած դիտորդների ղեկավարը), որը ջանում էր ունկնդիրներին համոզել, թե վերջին օրերին ադրբեջանական ռազմական ինքնաթիռները չեն մասնակցել մարտերին, որովհետեւ օդանավակայաններում դիտորդներին զեկուցել

այսօր միակն էր, որ ռմբակոծության չենթարկվեց Ստեփանակերտը: Երեկ, ասացին, Աղդամից հրետակոծել են, ավերել մի շարք շինություններ, կան շատ սպանվածներ ու վիրավորներ: Իբր, գործում են Կասպիական նավատորմից բերած նորագույն ահեղ թնդանոթները, որոնց համար Աղդամից Ստեփանակերտ ձգվող 30 կիլոմետրը ոչինչ է:

Սա ցավալի է, իհարկե: Բայց պակաս ցավալի չէ այն համարյա անտարբեր տոնը, որով հայտնեցին շատ զոհերի ու վիրավորների մասին: Այստեղ, Երեւանում էլ ճակատամարտերում տված զոհերին, նահատակներին վերաբերող լուրերը տալիս-առնում են մի այնպիսի անհոգությամբ, որ պարզապես անհարմար է: Բայց մի՞թե Ստեփանակերտում եւս, այդ նահատակությունների կողքին, արյան ու մահվան միջավայրում...

**Հոկտեմբերի 16-ի** հաղորդումների մեջ ճակատի հարաբերական խաղաղությունը խանգարող երկու կետեր կային. Մարտակերտի շրջանի վերջին գյուղերից մեկը՝ Ղազանչին, որ հրետակոծության է ենթարկվել Աղդամի շրջանի կրակակետերից, եւ Լաչինի շրջանի Ղոչազ գյուղը, որի վրա գրոհներ են ձեռնարկել թուրքերը, ջարդ կերել, ետ փախել:

Մոսկովյան լրատվական մարմինները Ադրբեջանի անունից հաղորդում են, թե Հայաստանը ռազմաճակատում շուտով լուրջ շրջադարձ կկատարի, սփյուռքահայերի օժանդակությամբ Ֆրանսիայից գնել է «Միրաժ» տիպի, իսկ ԱՄՆ-ից՝ «Ֆանտոմ» տիպի 6-ական կործանիչ ինքնաթիռներ:

◇ ◇ ◇

Օրվա կարեւորագույն իրողությունը ՀՀ արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականն էր: Մեզ հաղորդեցին՝ առանց խոսելու պատճառների մասին: Միայն իր՝ Հովհաննիսյանի մտահոգ հայտարարությունը, թե պաշտոնից հեռանում է չկատարած պարտքի, ավարտին չհասցրած նախաձեռնությունների գիտակցությամբ, բայց եւ միշտ պատրաստ ծառայելու հայրենի ժողովրդին, նրա սուրբ գործին:

Իսկ Մոսկվայից հայտնեցին նաեւ պատճառները՝ արտաքին քաղաքականության վճռական հարցերում հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանից տարբեր տեսակետներ ունենալը, ավելի ուղղակի՝ դիվանագիտության մեջ կոշտ քաղաքականության դավանելը, որ իր արտահայտությունն է գտել վերջերս ԱՄՆ-ում եւ Թուրքիայում ունեցած բանակցություններում ու ելույթներում, ապա երեւի թե ամենագլխավոր հարցում. ինքը կողմնակից է, որ ՀՀ-ը ճանաչի Լեռնային Ղարաբաղի հանրապետության անկախությունը եւ դրա վրա կառուցի իր քաղաքականությունը...

Եւ, ահա՛, այս պատճառով Լ. Տեր-Պետրոսյանը խնդրել է, որ Ռ. Հովհաննիսյանը՝ Հայաստանի կառավարության կազմում սեփական ու ազդեցիկ դեմք ունեցող երեւի թե բացառիկ մարդկանցից մեկը, հրաժարական տա: Խնդրե՜լ է: Մի գործարք, որի մեջ ինչքան վեհանձն է Հովհաննիսյանը, սկզբունքային, հայրենասեր, անանձնական գործիչ, նույնքան էլ դատապարտելի է նախագահի դիրքը:

Ես մտածում եմ եւ վստահ եմ, որ Հովհաննիսյանի՝ Թուրքիայում ունեցած ելույթի դեմ բողոքել են այդ երկրի ղեկավարները, եւ այս էլ դարձել է հրահանգ... Կամ նախագահը մտածում է, թե նրանք անպայման դժգոհ են, եւ հաճոյության գործարք է անում...

Հետաքրքիր է, որ Լ. Տեր-Պետրոսյանն այս անվայել քայլը կատարեց իր նախագահ ընտրվելու տարելիցի օրը: Արժանավայե՜լ նվեր: Րաֆֆի Հովհաննիսյանի հրապարակած հայտարարությունն էլ վայել է իր ազնիվ ու հայրենանվեր կեցվածքին: Ահա հայտարարությունը. «Այսօր նախագահ Լեւոն Տեր- Պետրոսյանի խնդրանքով ես իմ հրաժարականն եմ տալիս Հայաստանի հանրապետության արտաքին գործոց նախարարի պաշտոնից: Այս կոչումից ես հեռանում եմ անավարտ աշխատանքի զգացումով, սակայն պարտավոր եմ Ձեզ հաղորդելու, որ ես նախընտրեցի մնալ հավատարիմ իմ սկզբունքներին եւ այն ուղուն, որը, հավատացած եմ, էական է Հայաստանի համար:

Ինչ էլ լինեն այն դրդապատճառները, որոնք բերեցին նախագահի սույն որոշմանը, իմ խիղճը հանգիստ է»:



Ահա այսպես. իմ խիղճը հանգիստ է, իսկ նախագահը թող ինքը մտածի իր խղճի մասին:

Ինքնավայել ու շատ խոսուն է նաեւ հրաժարականի երկրորդ մասը. «Իսկ ինչ կվերաբերի ինձ եւ հայ ժողովրդի ապագային՝ Ձեզ ծառայելն իմ մեծագույն պատիվն է եղել: Ես կհավաստիացնեմ, թե այնքան ժամանակ, որ մեր պայքարը դեռ կիսավարտ է, ես կմնամ հայ ժողովրդի մշտական ծառայության մեջ»:

**Հոկտեմբերի 17-ից** մինչեւ 31-ն ընկած ժամանակամիջոցում ռազմաճակատն էական փոփոխություններ չի կրել: Ամեն օր նույն լուրերն էին պտտվում, որ թուրքերն Աղդամի ու Ֆիզուլու շրջաններից հրետակոծում են Հադրութի, Մարտունու, Ասկերանի շրջանների սահմանամերձ ու ոչ սահմանամերձ գյուղերը: Մարտակերտի շրջանի վերջին գյուղերում ծվարած հայ ինքնապաշտպանները համառորեն դիմադրում են թուրքերին, ետ մղում նրանց նորանոր հարձակումները: Ստեփանակերտը համարյա օրընդմեջ ռմբակոծվում է թուրքի ռազմական ինքնաթիռներից: Բարեբախտությունն այն է, որ վերջիններս վախենալով մերոնց հակաօդային սարքերից, որոնք հինգ կիլոմետր բարձրությամբ կործանում են նպատակակետը, թռչում են դրանից ավելի բարձր եւ այդ պատճառով էլ չեն կարողանում դիպուկ ռմբակոծել. ռումբերն ընկնում են քաղաքից հեռու կամ նրա ծայր ծայրամասերում, ուր բնակիչներ կամ չկան, կամ էլ շատ են նոսր:

Զորիին ասում եմ.

- Մի՞թե հնարավոր չէ ավելի հեռահար սարքեր դնել, որպեսզի բացառվի այդ ինքնաթիռների մուտքը պաշտպանվող տարածք: Թե չունե՞նք այդպիսի սարքեր:

- Ունենք, ինչպե՞ս չէ,-նա է պատասխանում վրդովված:-Դրանցից էլ ունենք, ավելի զարհուրելիներից էլ: Ղեկավարները չեն ուզում կանգնեցնել...

Մեր լրատվական մարմիններն ամեն օր նույն տեղեկություններն են հաղորդում, տառացիորեն նույնը, ինչպես վերը նշեցի: Առանձին դեպքերում նշվում է նաեւ, որ Լաչինի միջանցքի վրա եղել են հարձակումներ հարավից (Կուբաթլիի շրջանից) եւ հյուսիսից (Քելբաջարից), հարձակվողները ջարդ են կերել, ետ փախել՝ ռազմադաշտում թողնելով մի քանի տասնյակ ասկյարների դիակներ (օրինակ, հոկտեմբերի 23-ի լրատվությամբ՝ թուրքերը միայն Լաչինի միջանցքի հյուսիսում տվել են 120 զոհ): Մերոնք միշտ տալիս են մեկ-երկու զոհ, գրեթե նույնքան էլ վիրավոր:

Ինչ-որ չափով սրտապնդիչ են պատերազմական գործողություններին վերաբերող հանրագումարները: Հոկտեմբերի 17-ին հրապարակվել է ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի մի հաշվեկշիռը, որն ասում է. «Հունիսի 12-ից սկսած Ադրբեջանի ազգային բանակը կորցրել է առնվազն 104 տանկ, որը Ադրբեջանի տրամադրության տակ գտնվող բոլոր տանկերի մեկ-երրորդն է: Այս թվի մեջ չեն մտնում վնասված այն տանկերը, որոնք ադրբեջանցիներին հաջողվել է դուրս բերել ռազմաճակատից: Եթե սրան գումարենք նաեւ մոտ 4000 սպանված զինվորներ, խփված ռազմական առնվազն 7 ինքնաթիռներ եւ 10 ուղղաթիռներ, ապա կտեսնենք, որ Ադրբեջանի ազգային բանակի կրած կորուստները անհամեմատելի են հայկական կողմի կորուստների հետ» («Երկիր», 1992, հոկտ. 17»):

◇ ◇ ◇

Հայաստանում ու Արցախում այս օրերին բոլոր խոսակցություններն սկսվում կամ ավարտվում են Րաֆֆի Հովհաննիսյանի հրաժարականով: Թղթակիցը նրա մասին հարցրել էլ ԼՂՀ ԳԽ-ի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանի կարծիքը եւ սա ասել է.

- Հովհաննիսյանը միակ խելոք ու խիզախ մարդն էր, որ Լեռնային Ղարաբաղի հանրապետության իրավունքն էր պաշտպանում միջազգային բոլոր ատյաններում: Այսուհետ ով էլ որ նրա տեղը լինի, չի անելու եւ չի էլ կարող կատարել նրա արածը: Նրա նմանները բացառիկ են...

✧ ✧ ✧

**Հոկտեմբերի 22-ին** Ստեփանակերտ է ժամանել Մեծ Բրիտանիայի խիղճը՝ Քերոլայն Կոքսը, որն այս էլ 10-րդ իր այցով հովանավորյալներին տարավ մարդասիրական օգնություն (շուրջ 50 տոննա բեռ)՝ սննդամթերք, բուժպարագաներ, դեղորայք, իր սրտակցության ջերմագին խոսքերը: Թղթակցին ասաց. «Ես այնտեղ եմ, ուր մարդկային ցավն է, օգնության կարիքը: Բայց Արցախում՝ նաեւ հարազատացած այս ազատամարտիկ ժողովրդի նկատմամբ՝ իմ հիացմունքն ու սերը»:

Կոքսն ամեն անգամ իր հետ բերում է տարբեր երկրների դիվանագիտական ու լրատվական ներկայացուցիչների, որոնք տեսնում են թարմ, ճշմարիտ տվյալներ, տեղեկություններ հինգ տարի շարունակ զարհուրելի շրջափակման մեջ գտնվող արցախահայության պայքարի, դիմադրության ու տոկունության մասին, բողոքում են միջազգային ատյաններին, տերություններից պահանջում են ցույց տալ գործուն օգնություն, սանձ դնել թուրք նվաճողի մոլուցքին: Կոքսի ու նրա ուղեկիցների մեղքը չէ, որ աշխարհն այսպես անտարբեր է, այսքան շահամոլ: Այս անգամ բարոնուհին բողոքի խոսքեր էլ ասաց բարձրապաշտոն, համբավավոր իր հայրենակցուհու՝ Անգլիայի նախկին վարչապետ Մարգրետ Թետչերի Բաքու կատարած այցի, արած թրքամոլական հայտարարությունների դեմ: «Ես չեմ կարծել, թե Անգլիայում կհայտնվեն մարդիկ, որոնց համար նավթն ավելի թանկ կլինի, քան մարդկային արյունը, խիղճն ու բարոյական մյուս վեհությունները»,-ասաց Կոքսը:

Հոկտեմբերի 25-ին, Ստեփանակերտից Երեւան վերադարձավ Կոքսը եւ հենց օդանավակայանում հայտարարեց.

- Այս անգամ վերջնականապես համոզվեցի, որ Արցախն անընկճելի է: Անցյալ անգամ Շուշիում ներկա էի եղել մի հարսանիքի, իսկ այս անգամ դպրոցներ այցելեցի եւ տեսա, թե պատերազմի պայմաններում, կենսական ամենասուղ միջոցներով այդ ուսումնական հաստատություններում գործն ավելի լավ է գնում, քան իմ հայրենի Անգլիայի անկարիք միջավայրում:

✧ ✧ ✧

**Հոկտեմբերի 22-ի** հաղորդումներում կարեւոր էր նաեւ թուրքի լրատվության հայտարարությունը մոսկովյան հեռուստատեսությամբ. իբր, հայերը երկու ինքնաթիռով Սարսանգի մոտերքում դեսանտ են իջեցրել դիվերսանտների մի խումբ, որը պիտի պայթեցնի հիդրոհանգույցը եւ կատարի այլեւայլ դիվերսիաներ: Այս դիվերսիոն ծրագրերի մասին էլ, իբր, հայտնել է գերի բռնված երկու հայ դիվերսանտներից մեկը, իսկ խմբի մյուս անդամները շարժվել են դեպի ջրամբարի խոցելի տեղը:

✧ ✧ ✧

Հոկտեմբերի կեսերին հաղորդումներ եղան թուրքի կողմից բռնագրավված Շահումյանի շրջանում գործող հայդուկային խմբերի հաջող գործողությունների մասին: Նրանք իսպառ ոչնչացրել են Շահումյանի ավանից դեպի Վերիշեն տանող ճանապարհի վրա գտնվող Սպիտակ աղբյուրի ուղեկալը, սպանել տաս ասկյար, ոչնչացրել ռազմական երեք մեքենա: Մի քանի օր հետո նոր տարածքում սպանել են 17 ասկյար, ոչնչացրել հինգ զրահամեքենա: Հոկտեմբերի 21-ին Սարսանգ-Հաթերք ճանապարհի վրա ոչնչացրել են վառելիք փոխադրող չորս բեռնատար մեքենա, սպանել 9 ասկյար:

Հայկական խմբերը շարունակում են պայքարը Գյուլիստան գավառը զավթած անօրենների դեմ, եւ այս տարօրինակ պայքարը գլխավորում է հայրենանվեր Շահեն Մեղրյանը, որի դեմ ամիսներ առաջ Գերագույն խորհրդի նստաշրջանում բարբաջում էր մի ծուռբերան:



**Հոկտեմբերի 26**. Բարոնուհի Կոքսը երեկ էր վերադարձել Ստեփանակերտից, հանդիպումներ է ունենում ՀՀ պաշտոնյաների հետ: Այսօր այցելեց մեր կաթողիկոս Վազգեն Ա-ին, որը բարձր գնահատելով նրա առաքելությունն ու ծառայությունները Հայաստանին ու Արցախին, ասաց. «Դուք մի հրեշտակ եք՝ իջած մեր ազգի համար»:

**Հոկտեմբերի 27**. Հայաստանի նախագահը մեկ շաբաթ առաջ դիմել էր ՄԱԿ՝ առաջարկելով քննել Լեռնային Ղարաբաղում ստեղծված եւ օրեցօր վատթարացող վիճակը: Հույս կար, թե քննարկումն իսկապես կլինի, եւ այդ միջազգային կարեւորագույն մարմնի միջամտությունը կտա որեւէ դրական արդյունք: Եւ, ահա՛, ս.թ. հոկտեմբերի 27-ի առավոտյան «Ազատություն» ռադիոն հաղորդեց, թե ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում տեղի է ունեցել Լեռնային Ղարաբաղի վիճակի քննարկումը, վճռվել է այնտեղ ուղարկել ներկայացուցիչ, որը տեղեկություններ պիտի հավաքի եւ ներկայացնի իր ղեկավարությանը: Իսկ այսօր ժամը 18-ին էլ Անվտանգության խորհուրդը փակ դռների ետեւում ավելի հանգամանորեն կքննարկի հարցը եւ կորոշի իր անելիքը,-հայտարարել է խորհրդի նախագահ Մերիմեն:

**Հոկտեմբերի 27-ին** Անվտանգության խորհրդի խոստացած քննարկումը տեղի է ունեցել, եւ ընդունվել է հայտարարություն, որը մեջ եմ բերում «Երկիր» թերթից (հոկտ. 30).

«Անվտանգության խորհուրդը մտահոգված է Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ շարունակվող ծանր իրավիճակի համար:

Չնայած Սոչիում ընդունված կրակի դադարեցման համաձայնագրին (1992 թ. սեպտեմբերի 21), տարածքում շարունակվում են ավերածությունները եւ մարդկային կյանքի կորուստները:

Անվտանգության խորհուրդը կրկին հաստատում է սույն թվականի օգոստոսի 26-ին Լեռնային Ղարաբաղի իրավիճակի շուրջ իր ընդունած որոշման դրույթները (Վ-24493) եւ մասնավորապես պաշտպանում է Մինսկի խորհրդաժողովի ջանքերը Լեռնային Ղարաբաղի հարցը ԵԱՀԽ-ի շրջանակներում կարգավորելու ուղղությամբ»:

Հայտարարության մեջ մասնակից ու շահագրգիռ երկրներին կոչ էր արվում անհապաղ իրականացնել կռվի դադարեցումը եւ նպաստել բոլոր տեսակի շրջափակումների վերացմանը: Ասում է՝ պետք է անհապաղ հրավիրել Մինսկի համաժողովը եւ վերսկսել խաղաղական բանակցությունները ըստ նախագահի կողմից սահմանված արարողակարգի: Բոլոր մասնակից եւ շահագրգիռ կողմերից պահանջվում է սերտորեն համագործակցել ԵԱՀԽ-ի հետ եւ դրական մասնակցություն ունենալ՝ արագորեն հասնելու տարաձայնությունների համընդհանուր կարգավորմանը:

Անվտանգության խորհուրդը նաեւ գոհունակություն է հայտնում, որ գլխավոր քարտուղարը մտադիր է ներկայացուցիչ ուղարկել տարածք՝ պարզելու, թե ինչպես կարող է ՄԱԿ-ն աջակցել ԵԱՀԽ-ին եւ ճշգրտել մարդասիրական օգնություն ցուցաբերելու հարցը:

Հայաստանի նախագահի թիմում ոգեւորություն են ապրում (ոգեւորված են նաեւ ազգի շատ շերտեր) ՄԱԿ-ի վերաբերմունքով եւ ընդունված հայտարարությամբ: Ամսիս 30-ին արտգործնախարարի տեղակալ Արման Նավասարդյանը հեռուստատեսությամբ հայտարարեց, թե մեր նախագահի պահանջով կազմակերպված այդ քննարկումն ու ընդունված-արված հայտարարությունը լուրջ քայլ են ղարաբաղյան բարդույթի լուծման ճանապարհին:

**Նոյեմբերի 1-ին** էլ նախագահի դիվանագիտական խորհրդական Ժիրայր Լիպարիտյանն էր, որ, դարձյալ հեռուստատեսությամբ, երեւույթը գնահատեց իբրեւ կարգե դուրս մի առաջքայլ արցախյան խնդրի կարգավորման հարցում: Նշեց նրա կարեւորությունը երեք կետով, որոնցից մեկն էլ՝ որ ՄԱԿ-ն ընդառաջեց մեր առաջարկին եւ զբաղվեց մեր հարցով:

Իհարկե, այս մարդկանց գործն է, կարող են բարձր գնահատել կատարվածը, փառաբանել խոսքը:

Սակայն քննարկումն ու արված հայտարարությունը, նույնիսկ անդրկուլիսյան խաղերից

անտեղյակ մարդուն ցույց են տալիս, որ կատարվածը դատարկ ու անպտուղ բան է, քանի որ ՄԱԿ-ի կամ նրա քարտուղարի ներկայացուցչի այցը բարդույթի տարածք նորություն չէ և չի տալու ավելին, քան նախորդների այցերը: Իսկ «պարզելը, թե ՄԱԿ-ն ինչպես կարող է աջակցել ԵԱՀԽ-ին...», հաստատումն է ցավալի այն իրողության, որ ոչ միայն ԵԱՀԽ-ը, այլև ՄԱԿ-ը պարում են թուրք-ադրբեջանական նվագով... Իբր ԵԱՀԽ-ը որևէ բան անում էր, որպեսզի ՄԱԿ-ն էլ պարզի (պարզի՞), թե ինչո՞վ կարող է նրան օգնել:

Այսքանը պարզապես մի բան է նշանակում. որ ՄԱԿ-ն ընդառաջել է Ադրբեջանի պրեզիդենտի առաջարկին՝ հարցի լուծման «պասիվը» վերապահելով ԵԱՀԽ-ին: Իսկ թե սա ինչպե՛ս է լուծում Լեռնային Ղարաբաղի խնդիրը, դրան էլ ծանոթ ենք վերջին մեկ-երկու տարվա անպատկառ խաղերով, որ նա էր անում չարչրկված խնդրի շուրջ:

**Նոյեմբերի 1**. Վերջին օրերին թուրքերը խստացրել են ճնշումը Առաջաձոր-Կիչան-Սրխավենդ գծի վրա: Հոկտեմբերի 31-ին և նոյեմբերի 1-ին Առաջաձորի վրա կատարված երկու հարձակումը դժվարությամբ կասեցնելով՝ մեր ազատամարտիկները ոչնչացրել են թշնամու մեկ վաշտ, Ս-72 տիպի երկու տանկ և 3 ռազմական ինքնաթիռ (2 ՄԻԳ-25 և մեկ Լ-29):

**Նոյեմբերի 2**. Չլդրան գյուղի մատույցներում գցվել է թշնամու մեկ ուղղաթիռ:

Օրվա ընթացքում ուժեղ հրետակոծության են ենթարկվել Ասկերանը, Մաճկալաշենը, Հադրութն ու Էդիլլուն:

Ադրբեջանի լրատվությունը, նրանից առնելով էլ՝ «Մայակը», հաղորդել են, թե վերջին օրերին Խոջալուի օդանավակայանում թուրքերը ոչնչացրել են երկու ռազմական ինքնաթիռ («Միրաժ» տիպի):

ՀՀ պաշտպանության լրատվական գործակալությունն ասում է՝ թուրքերը գլուխներն են կորցրել և իրենց գերձայնային ինքնաթիռներն են վերագրում հակառակորդին:

Թուրքի մի ինքնաթիռ այսօր խորացել է Մարտունու շրջանի տարածքում և երկու կասետային ռումբ է նետել Նգի գյուղի վրա:

Այսօր մամուլի ասուլիսում ՀՀ պետական նախարար Վ. Մանուկյանն ասաց. «Քաղաքական տեսակետից Արցախի խնդիրը պատերազմ է Ղարաբաղի հանրապետության և Ադրբեջանի միջև: Մինչդեռ զուտ ազգային տեսակետից այն մե՛ր հարցն է, և մենք ամեն ինչ կանենք մեր ազգակիցների իրավունքների պաշտպանության համար»:

**Նոյեմբերի 3**. Չնայած նախորդ օրերին ունեցած օդուժի մեծ կորուստներին՝ թուրքը շարունակում է ռազմական ինքնաթիռներ ուղարկել դեպի ԼՂՀ բնակավայրերը: Այսօր գերձայնային մի օդահեն ռմբակոծել է Ասկերանի շրջանի Խաչմաչ գյուղը:

Հեռահար հրետանիներն Աղդամից կրակ են տեղացել Ստեփանակերտի, Ֆիզուլիից՝ Էդիլլուի վրա:

Այսօր թուրքերը հարձակվել են Վանք գյուղի վրա (այս ո՞ւր են հասել: Վանքը Գանձասարա վանքի գյուղն է), ջարդ կերել, ետ փախել:

**Նոյեմբերի 4-ին** ինքնապաշտպանության ուժերը գրավել են Չլդրան և Առաջաձոր գյուղերի արանքի երկու կարևոր բարձունքներ՝ ետ մղելով թշնամուն:

Առաջաձորի մոտ բռնկված մարտերում երկու կողմերն էլ տվել են զոհեր, որոնք հասնում են մեկ տասնյակի:

Աղդամի կողմից դարձյալ հրետակոծության է ենթարկվել Ստեփանակերտը: Կան նոր ավերածություններ:

Հրետակոծվել են նաև Մարտունին, Հադրութը, Էդիլլուն, Լաչինի միջանցքը:

**Նոյեմբերի 5-ին** թուրքերը կատաղի գրոհ են ձեռնարկել Ղազանչիի ու Առաջաձորի վրա: Մերոնք դժվարությամբ ետ են մղել՝ պատճառելով մեծ վնաս. սպանվել է 20 ասկյար, մերոնց զոհերը՝ 5 և վիրավորները՝ 10:

Լրատվական մարմինները շատ են խոսում Աշոտ Բլեյանի կազմակերպած պատգամավորական համախոսականի մասին, որն, իբր, հասել է Ադրբեջանի Գերագույն խորհուրդ, այնտեղ բավական մեծ աշխուժացում առաջացրել:



**Նոյեմբերի 6**. Երեկ ամբողջ օրը Աղդամից հրետակոծում էին Ստեփանակերտը:

Այսօր թուրքերի մի մեծ զորախումբ, ծանր տեխնիկայի ուղեկցությամբ, գրոհել է Ճարտարի վրա և, երեք տանկ կորցնելով, ետ նահանջել:

ՀՀ սահմանային շրջաններում ծանր դրություն է, քանի որ գյուղերը հեռահար հրետանիների կրակի տակ են գիշեր-ցերեկ: Կապանը մեծ վնասներ է կրել վերջին օրերին:

Երևան է հասել Ռուսաստանի դեսպան Վլադիմիր Ստուպիշինը՝ պատմական գիտությունների դոկտոր, որը, ճանաչողների վկայությամբ, խելոք մարդ է, հայ ժողովրդի պատմության քաջատեղյակ մասնագետ:

ՀՀ խորհրդարանում շատ վեճեր են գնում Բլեյանի արկածախնդրական նախաձեռնության շուրջ: Մեծ մասամբ դատապարտում են՝ գտնելով, որ, չնայած Ադրբեջան ուղարկված նրա դիմումի տակ ստորագրել են 55 թե 56 դեպուտատներ, արվածը լոկ կազմակերպչի սադրանքն է:

**Նոյեմբերի 7-ին** շատ մարտեր են եղել ԼՂՀ բոլոր շրջաններում. Ղաչանչիի մոտ մերոնք ետ են մղել թուրքի նոր հարձակումը: Թշնամին այստեղ տվել է 40 զոհ, ինքնապաշտպանները՝ 2:

Մերոնք հաջողությամբ ետ են վանել թշնամու հարձակումները նաև Ճարտար-Մաճկալաշեն գծի վրա և Ղոչազի մոտ: Ճարտարի կռվում թուրքերը կորցրել են երկու տանկ և մեկ զրահամեքենա:

Այսօր թուրքի հետևակը, մեծաքանակ զրահատեխնիկայի օժանդակությամբ, լայնածավալ գրոհ էր ձեռնարկել Աբդալ-Գյուլափլիի վրա (Աղդամի շրջանում, որի վրա հսկում են հայ ինքնապաշտպանները): Մերոնք հաջողությամբ դիմակայեցին, երկու տանկ ոչնչացրին և ստիպեցին, որ թշնամին նահանջի:

Թուրքերը երկու տանկ էլ կորցրել են Ուրհան բլրի մոտ (Մարտունու արևելյան մասում) ձեռնարկած անհաջող գրոհի ժամանակ:

ՀՀ ԱԳՆ-ում ընդունեցին Ռուսաստանի դեսպան Ստուպիշինին, որը հայտնեց, որ ինքը Հայաստան է եկել ոչ միայն այստեղ աշխատելու՝ իբրև Ռուսաց երկրի պաշտոնական ներկայացուցիչ, այլև ապրելու հայ ժողովրդի հետ:

**Նոյեմբերի 8-11-ին** ռազմաճակատում էական փոփոխություններ չեն կատարվել: Այս ընթացքում թուրքի ռազմական ինքնաթիռներն են մի քանի անգամ ռմբակոծել Ստեփանակերտը՝ կասետային ռումբեր նետելով նրա բնակելի թաղամասերի վրա: Ասում են՝ կան վիրավորներ քաղաքացիներից:

ՀՀ նախկին արտգործնախարար Ռ. Հովհաննիսյանը գտնվում է ԼՂՀ-ում, հանդիպումներ է ունենում հանրապետության ղեկավարների, շարքային մարդկանց ու կռվողների հետ: Նա լրատվության մարմինների ներկայացուցիչներին հայտարարել է, թե «Հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը որոշվում է Արցախում: Ով դա չի հասկանում, բութ է և կույր: Ուրեմն, ամբողջ հայ ազգի պարտքն է բոլոր ուժերով սատարել այս պայքարին, որպեսզի ռազմաճակատի հաղթանակի շնորհիվ հնարավոր դառնա հակամարտության քաղաքական լուծումը»:

✧ ✧ ✧

Գալինա Ստարովոյտովան ազատվել է Ռուսաստանի նախագահի ազգային հարցերի գծով խորհրդականի պաշտոնից: Ինքը՝ Ստարովոյտովան, ասում է՝ դա միանգամայն անսպասելի էր իր համար: Կատարվածը չես կարող կոչել այլ կերպ, քան ընդառաջում ադրբեջանցիների հակահայկական բարբաջանքներին: Չէ՞ որ Հայաստանի ու ԼՂՀ արդար շահերը նա պաշտպանում էր բացահայտորեն, և դա չէր կարող չգնահատվել իր-

րեւ անզգուշություն (առնվազն) պետական պաշտոնյայի համար:

Ըստ երեւույթին նույն բախտին պիտի արժանանա նաեւ Ռուսաստանի ԱԳՆ-ի առաջին տեղակալ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւը, որի հայկական արդար կողմնորոշումը հայտնի էր Գորբաչովի ժամանակներից:

**Նոյեմբերի 12**. Մարտակերտի շրջանում, Վաղուհաս, Կոճղոտ եւ Հարությունագոմեր գյուղերն ազատագրելուց հետո, հայ ինքնապաշտպանները մաքրում են Չլդրանի ու Պողոսագոմերի ռազմական կետերը:

**Նոյեմբերի 14-ին** Լ. Տեր-Պետրոսյանը ելույթ ունեցավ՝ դարձյալ փառաբանելով իր կառավարության գործունեությունը, կայուն հասարակական-քաղաքական վիճակ ստեղծելու հմտությունը: Գտնում է, որ մեծ հաղթանակի նշանակություն ունի իր ջանքերի շնորհիվ Ղարաբաղի հանրապետության ճանաչման խափանումը Գերագույն խորհրդում, հակառակ դեպքում Հայաստանը կներքաշվեր պատերազմի մեջ (իբր, հիմա պատերազմի մեջ չէ):

Նրա կարծիքով՝ Հայաստանի խորհրդարանը վեր է ածվել մեռյալ մարմնի. օրենքներ չի ընդունում (իբր, ընդունածներն արդեն կիրառվելով մաշել են, նորերի կարիքն է զգացվում):

«Շուշիից ու Լաչինից հետո Ադրբեջանը հակված էր նստելու խաղաղ բանակցությունների, մենք շրջահայեցություն չցուցաբերեցինք եւ պահը կորցրինք»:

«Ես սխալ եմ համարում Գերագույն խորհրդի հուլիսյան որոշումը (Ղարաբաղի մասին), որը ՀՀ իշխանությունների գործունեությունը սահմանափակում է, զրկում մանյովրելու հնարավորությունից, ԵԱՀԽ-ի առաջ մեզ ներկայացնում իբրեւ անզիջում կողմ» (երեք «գործոն», երեքն էլ սայթաքուն ու սխալ):

**Նոյեմբերի 15-ին** Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանությունը լրիվ ազատագրեց Չլդրանն ու Պողոսագոմերը՝ ռազմագիտական այդ կարեւոր կետերը, որոնք հնարավորություն են ստեղծում մոտենալու Միր-Բաշիր-Մարտակերտ-Քալբաջար մայրուղին: Այստեղ մերոնք գրավել են մեկ տանկ, երկուսը ոչնչացրել: Թուրքերը տվել են 70 սպանված, մերոնք՝ 7:

Իսկ Շահումյանի շրջանում հայ ֆիդայիները նեղում են թուրք բռնագրավիչներին:

✧ ✧ ✧

Նախորդ օրերին Երեւան ժամանած ռուս պառլամենտական խումբը, որ մասնակցում է ՀՀ ԳԽ-ի աշխատանքներին, լրջորեն զբաղված է նաեւ ղարաբաղյան բարդույթի լուծման ուղիներ փնտրելով: Խմբի մեջ գտնվող պատմաբան թե տնտեսագետ Վիկտոր Շեյնիսն այդ հարցի առթիվ ներկայացրել է իր ծրագիրը, որ աչքի է ընկնում քաղաքական լրջությամբ: Ահա այն.

«Ինձ թվում է, որ իրատեսական լուծում կլինի նախեւառաջ միահյուսել ջանքերը կրակի դադարեցման ուղղությամբ: Դա այսօր ամենահրատապն ու ամենաանհրաժեշտն է: Երբ կրակը դադարեցվի, հաջորդ քայլը պետք է լինի զինադադարի վրա վերահսկողության սահմանումը: Ես կարծում եմ, որ խաղաղարար ուժերը պետք է տեղաբաշխել ոչ թե Հայաստանի ու Ադրբեջանի սահմանագծում, այլ Լեռնային Ղարաբաղի եւ Ադրբեջանի սահմանների իրական բաժանման գծում: Դա չի նշանակում Ադրբեջանից Լեռնային Ղարաբաղի դուրս գալու իրավական ճանաչում, բայց դե ֆակտո ճանաչվում է այն իրավիճակը, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության կողմից ընտրված որոշակի մարմիններ վերահսկում են Ղարաբաղը: Սրանից հետո կգա Լաչինի միջանցքի հարցը: Այդ հարցը, իմ կարծիքով, պետք է կարգավորվի հետեւյալ կերպ. այնտեղ պետք է տեղաբաշխվեն միջազգային խաղաղարար ուժեր, որոնք կերաշխավորեն բեռնափոխադրումների մարդասիրական բնույթը՝ տարածքը թողնելով Ադրբեջանի վարչական ենթակայության տակ, պայմանով, որ վերջ տրվի Լեռնային Ղարաբաղի վրա ադրբեջանական բանակի հարձակումներին: Հնարավոր է նաեւ հարցի լուծման երկրորդ՝ տարածքային փո-



խանակումների տարբերակը, որը Լաչինի միջանցքի տարածքը, թեկուզ որոշ ժամանակով, կհանձնի Հայաստանին»:

**Նոյեմբերի 16-ը** Բլեյանի օրն էր. դարձյալ հեռուստաէկրան բարձրացրին, թույլ տվին, որ հիմարություններ դուրս տա: Չէ՞ որ հրապարակել է Բաքու կատարած իր երթուդարձի մանրամասները, եւ հիմա չկա խելքը գլխին մի հայ, որ չթքի այդ ծախու հիմարի վրա: Զայրացած են հատկապես Արցախում: Ասում են՝ մենք այստեղ մեր ազատության համար կռվում ենք, մեր արյունն ենք տալիս, իսկ Աշոտ Բլեյանը գնացել, մեզ նորից ուզում է թուրքի ստրկության դատապարտել...

Եւ հիմա բարբաջում է...

- Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունն ինչո՞ւ պիտի կարծիք հայտնի իմ Բաքու կատարած այցի մասին, երբ ես նրանց անունից չեմ խոսել, որպեսզի քայլը ես անբարոյականություն կհամարեի:

Եւ մեկ էլ.

- Ես Ղարաբաղի հայ բնակչության շահերն եմ արտահայտել Բաքվում, քանի որ նպատակս մեկն է՝ ղարաբաղցու իրավունքը՝ ապրելու իր հողի վրա:

Նոյեմբերի 17-ին մեր ինքնապաշտպանները հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ նահանջել են Կիչան-Սրխավենդ գյուղերի դիրքերից:

Երկու օր հետո, սակայն, նոյեմբերի 20-ին, հայ կազմավորումների առաջ տեղի տալով, թուրքերը փախել են՝ զիջելով Կիչանն ու Սրխավենդը՝ դաշտում թողնելով մի քանի տասնյակ ասկյարի դիակ:

Այդ օր Ստեփանակերտի մոտ խփվել ու վայր են գցվել ռազմական երկու ինքնաթիռներ, որոնք փորձում էին ռմբակոծել ԼՂՀ մայրաքաղաքը: Օդաչուներից մեկը դուրս է թռել կործանված ինքնաթիռից, մյուսի ճակատագիրը դեռեւս անհայտ է:

✧ ✧ ✧

Մեկ տարի առաջ Մարտունու շրջանի Բերդաշեն (Ղզղալա) գյուղի մոտ աղետի ենթարկված ՄԻԳ-8 ուղղաթիռի հարցը դեռեւս արծարծվում է Ադրբեջանի կառավարական շրջաններում: Հայտնի է, որ նրա ուղեւորները՝ Ադրբեջանի, Ռուսաստանի ու Ղազախստանի պաշտոնյաներ, բոլորն էլ զոհվել են, եւ կործանման շուրջ տարբեր կարծիքներ էին տարածված:

Ինչպես դեռեւս պնդում է Ադրբջեանի Գերագույն խորհրդի քննչական հանձնաժողովը, ուղղաթիռը գնդակոծվել է հայկական Ղզղալա գյուղի կողմից, կորցրել կառավարումը եւ մոտ 500 մետր բարձրությունից վայր ընկնելով պայթել: Աղետի պատճառները հետաքննող հանձնաժողովի նախագահ Թամերլան Կարաեւը հաղորդեց, թե հետաքննությանը հայտնի են այն երեք հայերի անունները, որոնց վրա կասկածում են այդ հանցագործության մեջ: Սակայն շրջանում շարունակվող պատերազմը թույլ չի տալիս նրանց պատասխանատվության կանչել» («Ազգ», 1992, նոյեմբերի 21):

**Նոյեմբերի 19-ին** ՀՀ ԳԽ-ի նստաշրջանում, Ս. Զոլյանի առաջարկությամբ, քննության առնվեց Բլեյանի գլխավորությամբ կազմակերպված 56 պատգամավորների համախոսականի հարցը: Դատապարտում են այդ դավաճանությունը: Ստորագրողներից շատերը հրաժարվում են իրենց մասնակցությունից՝ հայտարարելով, որ իրենց անունները դիմումի տակ են դրվել նույնիսկ առանց իրենց հայտնելու:

Հեռուստատեսությամբ հայտնեցին, որ Բլեյանին ու նրա չարաշուք հանցակիցներին դատապարտում են ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանն ու «Արցախ» թերթի խմբագիր Մ. Հովհաննիսյանը՝ պահանջելով ԼՂՀ ու նրա մաքառող ժողովրդի իրավունքները ոտնահարողներին, մեր ազգային արժանապատվությամբ խաղացողներին ենթարկել համազգային պարսավանքի:

**Նոյեմբերի 20**. Մաքառող Արցախը վերակառուցվում է: Սրտապնդիչ լուրեր են գա-

այստեղ խաղաղ բնակիչներ չկան: Երբ ինձ խփել էին, մինչեւ Ստեփանակերտ բերին աչքերս կապած: Իսկ երբ բացեցին, տեսա՝ քայլում են պայուսակներով երեխաները, կանայք ու ծերունիներ են փողոցներում: Հարցնում եմ՝ սա ի՞նչ քաղաք է: Ինձ ասում են՝ ի՞նչ է, կոգյոլ, Ստեփանակե՞րտը չես ճանաչում...»:

Իսկապե՛ս կոգյոլ, եթե ո՛չ իշի քուռակ, որը հինգ տարի ծառայել է Ադրբեջանում, հինգ տարին էլ անվերջ կապված Ղարաբաղում ու նրա շուրջ ծավալվող դեպքերի հետ եւ հիմա չգիտի, թե ինչ երկիր է ռմբակոծում ու որտե՛ղ է ընկել՝ իբրեւ թուրք ստոր խաբեբաների ողորմելի վարձկան: Եւ սա կարծում էլ է, թե կատարվածի համար ոչ թե ի՛նքն է մեղավոր, մեկ էլ իրեն վարձած թուրքը, այլ վերեւները, որոնք տասնյակ հազարավոր սպաների թողել են անգործ, անտուն, զորանոցներում թափված՝ իբրեւ անբան անասունների...

Երեւի թուրքի նկատմամբ երախտագիտություն էլ ունի. չէ՞ որ հաց գործ է տվել, հաց էլ բնակարան խոստացել...

Հետաքրքիր է վերջը. «Ադրբեջանում խոստացել էին... որեւէ բան պատահելուց օգնել ընտանիքիս: Բայց ահա այստեղ թույլ տվին զանգել տուն, եւ պարզվեց, որ ոչ ոք չի էլ հայտնել, թե ես որտե՛ղ եմ, եւ ի՛նչ է պատահել ինձ հետ: Ոչ ոք չի նախապատրաստվում ինձ փոխանակել կամ գնել...»:

Ահա այսպե՛ս: Եւ այս իսկական կոգյոլն իր վիճակն անբնական կամ անտրամաբանական է համարում:

Այսօր Մոսկվայում տեղի ունեցավ Հայաստանի ու Ադրբեջանի Խաղաղության հիմնադրամների ղեկավարների հանդիպում-խորհրդակցությունը, որ ձեռնարկել էր Ա. Կարպովը: Վերջում կոչ հղվեց մարտնչող կողմերին՝ ունկնդրել բանականության ձայնին եւ դադարեցնել արյունահեղությունը, կայացնել փոխհամաձայնություն, որն ամենաերազելի քայլն է ամեն մի պատերազմի ժամանակ:

**Նոյեմբերի 29-ին** Լաչինի միջանցքի հյուսիսային մասում հայ ինքնապաշտպանները թշնամուն դուրս են քշել Հայի բազար, Լուլիդուզ, Ղոզլու եւ Ղարաջանլի գյուղերից եւ ամրապնդվել նրանցում:

**Նոյեմբերի 30-ին** հաղորդեցին, որ ճգնաժամի դժոխային վիճակի պատճառով ՀՀ Գերագույն խորհուրդը չի կարողանում իր նիստը գումարել, քանի որ պատգամավորները հնարավորություն չունեն տեղերից մայրաքաղաք գալու: Դպրոցները վաղվանից չպիտի գործեն, երկարատեւ դադար են տալու անհաղթահարելի ցրտի պատճառով: Խանութներում հաց չի վաճառվում նույնիսկ կտրոնների դիմաց: Զինակոչն իրականացնել հնարավոր չէ, որովհետեւ նախկին դասալիքներն ամեն փողոցում ինստիտուտ են ստեղծել, նրանցում ընդգրկել զինակոչի տարիքի երիտասարդներին:

Իսկ Արցախից լուր չկա, որովհետեւ այստեղինները գլուխներն են կորցրել, նրանց ի՞նչ ցավն է Արցախը:

◇ ◇ ◇

Այս ամսին շատ շոշափվեցին նաեւ ԼՂՀ տարածքում հրադադար անելու եւ մարզի ապագա ճակատագրին (վարչական իրավասության) վերաբերող հարցերը:

Առաջինի վերաբերյալ խոսակցությունները միշտ էլ անտրամաբանորեն հանգում էին նրան, թե երկկողմ բանակցություններ պիտի լինեն, եւ դրանց ընթացքում էլ պատերազմող կողմերը պետք է վերջնականապես կտրական վճիռ հանեն կրակը դադարեցնելու մասին: Երկկողմ, այսինքն՝ Ադրբեջանի եւ ԼՂՀ միջեւ: Այս առթիվ, Եվրոպայում շրջագայելիս, մեր արտգործնախարարության մի աշխատակից էլ պատահաբար սրամտել է, թե զինադադարի համար ԼՂՀ ղեկավարության ինչ-որ բան պարտադրելն անիմաստ է, քանի որ այն հարձակման ենթարկված կողմն է, որ լոկ պաշտպանվում է, թող Ադրբեջանը միակողմանի որոշում հանի ու իրականացնի, եւ այս տեսակետից այլեւս ոչ մի հարց չի մնա: Իրականում Ադրբեջանն անվերջ նոր հարձակումներ է գործում, մարտադաշտ



նետում ռազմական տեխնիկայի ու զինվորության նոր ուժեր: Եւ, վերջապես, չէ՞ որ կռիվը գնում է ԼՂՀ տարածքում, նրա կեսը նվաճած թուրքերի հետ:

Երկրորդ հարցը՝ որքան էլ վաղվան վերաբերող, այսօր իսկ պատասխան է ուզում: ինչի՞ համար է կռվում արցախահայությունը, եւ ի՞նչ է ուզում Ադրբեջանի պաշտոնեությունը:

Առաջինը պարզ է ինքնին եւ հինգ տարի շարունակ կախված է օդում. Արցախի տեր հայությունը ձգտում է անկախ, ինքնուրույն կյանքի: Այն ժողովրդավարական սկզբունք-եղանակով ընտրել է իր պետական մարմինները, կառավարվում է նրանց կողմից եւ պայքարում է, որ այդ վիճակն ընդունվի աշխարհի, հատկապես նախկին գաղութակալ Ադրբեջանի կողմից:

Ադրբեջանի ղեկավարությունը վերջերս շատ է անդրադառնում այս հարցին: Ուշադրության արժանի է պրեզիդենտ Էլչիբեյի՝ մի քանի անգամ կրկնված հայտարարությունն այն մասին, թե իրենք պատրաստ են Լեռնային Ղարաբաղին տալ մշակութային ինքնավարություն, միայն թե այն ընդունի իրենց տիրակալությունը, ենթարկվի իրենց սահմանադրությանը:

Ահա՛, վերջերս, նոյեմբերի 18-ին, նույն Էլչիբեյը, պատասխանելով «Էքսպրես-խրոնիկա» թերթի թղթակցի հարցին, վերստին անդրադառնալով ղարաբաղյան խնդրի լուծման ուղիներին, նշել է. «Մենք համաձայն ենք մշակութային ինքնավարության ցանկացած ձեւին: Դիմենք միջազգային փորձին եւ միջազգային իրավունքին, այդ հիման վրա քննության առնենք վարչական ինքնավարության տարբերակները»: Նա կտրականապես դեմ է արտահայտվել Լեռնային Ղարաբաղի բնակչության ինքնորոշմանը եւ ինքնիշխան Լեռնային Ղարաբաղի հանրապետության ստեղծմանը, ընդգծելով, թե որեւէ պետություն չի հանդուրժի իր ներսում մեկ այլ պետության գոյությունը: Ըստ նրա, Ղարաբաղի կորստով Ադրբեջանն այլեւս Ադրբեջան չէր լինի եւ կփլուզվեր: Էլչիբեյի կարծիքով՝ այդ ծրագրի հետեւորդների միակ նպատակն էլ հենց Ադրբեջանը քայքայելն է:

Այս Էլչիբեյը, թեկուզ ասում են՝ գիտնական է, իրենց գիտության կարկառուն ներկայացուցիչը, երեւում է, այնքան էլ հաշտ չէ գիտական տրամաբանության հետ: Նախ, մոռանում է, որ Արցախի պայքարը նրա համար է, որ այլեւս խոսք չլինի Ադրբեջանի կազմում գտնվելու մասին: Ապա, հայտնի է, որ Ադրբեջանի կազմում 1923 թվականից ի վեր եղել է մի ինքնավար հանրապետություն՝ Նախիջեւանը, որ այսօր էլ կա եւ չպետք է վերանա: Եւ, այդուհանդերձ, Ադրբեջանը չի փլուզվել իբրեւ հանրապետություն, հիմա էլ, բարեբախտաբար, թե դժբախտաբար, փլուզվելու վտանգ չունի: Այդ ինչպե՞ս է, որ Ղարաբաղի ինքնավար հանրապետությունից պիտի փլուզվի:

Ի դեպ, այս հարցազրույցին Էլչիբեյը գովեստի խոսք է ասել Ա. Բլեյանի մասին, որը Բաքու էր գնացել՝ Ղարաբաղը ոտով-գլխով նրան նվիրաբերելու պատրաստակամությամբ: Նրա այդ արարքը գնահատել, համարել է «խիզախ քայլ»՝ լրագրողներին պաղատելով, որ պաշտպան կանգնեն այդ «խիզախին», թույլ չտան նրան համարելու սեփական ազգի թշնամի («Երկիր», 1992, նոյ. 27):

Բայց ինչպե՞ս էլ գիտե, թե ի՞նչ պիտի համարեն սեփական ազգի շահերը հակառակորդի ոտքերի տակ փռող ստահակին:

**Դեկտեմբերի 1-ին** Աղդամի շրջանում վերջերս տեղադրած նոր հեռահար թնդանոթներից թուրքերը նախ հրետակոծել էին Ասկերանն ու Խանաբաղը, ապա հինգ արկ գցել Ստեփանակերտի վրա:

Ազատամարտիկները փորձում էին ոչնչացնել այդ կրակակետերը եւ, ըստ Պաշտպանության կոմիտեի լրատվական մարմնի՝ Աղդամի կեսն արդեն ոչնչացվել է:

Փոխհրաձգություն է եղել նաեւ Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղի մոտերքում եւ Լաչինի Տիգիկ գյուղի մոտ: Ըստ Ադրբեջանի լրատվության՝ «Լաչինի միջանցքի հյուսիսային մատույցներում հայկական կազմավորումների մարտական հաջող գործողությունների հետեւանքով ադրբեջանական զորքերն ստիպված զիջել են Տիգիկը եւ մի շարք այլ բնակավայրեր» («Ազգ», դեկտ. 3):

ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հայտարարության համաձայն՝ սխալ է տարածված այն կարծիքը, թե Արցախում երկիշխանություն է՝ Պաշտպանության պետական կոմիտեի առկայությամբ: Վերջինս,- ասաց նա,- պատերազմական վիճակի թելադրանքն է եւ կատարում է իր անմիջական պարտականությունները (անդ):

✧ ✧ ✧

Այսօր Ախուրյանի վրա հանդիպեցին ՀՀ վարչապետ Խոսրով Հարությունյանն ու Ղարսի թուրք նահանգապետը եւ բացեցին նոր կառամատույցը, որի համար նախընթացին երկաթգծում աննշան փոփոխություններ էին կատարվել: Սա հնարավորություն կտա երկուստեք բեռնափոխադրությունները կատարել առանց դանդաղելու, արագ եւ ծավալել տնտեսական կապերը:

**Դեկտեմբերի 2-ի** վաղ առավոտյան «Ազատություն» ռադիոն հայության վերաբերող երկու լուր հաղորդեց.

Առաջինը՝ որ ՄԱԿ-ը որոշել է մարդասիրական օգնություն հասցնել Լեռնային Ղարաբաղի՝ փախստական դարձած հարյուր հազարավոր բնակիչներին, որոնք գտնվում են Երեւանում, Բաքվում եւ երկու հանրապետությունների մյուս բնակավայրերում:

Երկրորդ՝ Երեւանում եւ Հայաստանի մյուս բոլոր քաղաքներում ու գյուղերում երեկվանից դպրոցականների եռամսյա արձակուրդ է հայտարարված՝ վառելիքի բացակայության պատճառով: Վիճակը ծանր է նաեւ ԲՈՒՀ-երում, մշակույթի օջախներում եւ մանկական հիմնարկներում, որոնք, հանրապետության շրջափակման եւ հեղուկ վառելիքի մուտք չգործելու պատճառով հայտնվել են ծայրահեղ անմխիթար վիճակում...

Երեկոյան մոսկովյան լրատվության մարմինները այս երկրորդ լուրի համար հետաքրքիր մեկնաբանություն հաղորդեցին: Ասում են՝ Ադրբեջանի իշխանությունները ոչ միայն շարունակում են խուլ ու անմարդկային շրջափակման մեջ պահել Հայաստանը, արգելել իրենց երկրով այնտեղ մուտք գործելու համար նախատեսված ամեն տեսակ բեռների տեղափոխությունը, որեւէ շարժում՝ գետնի վրա լինի այն, երկնքով թե գետնի տակով (գազը, օրինակ), այլեւ Վրաստանի ղեկավարության հետ վճռական պայմանավորվածություն են ձեռք բերել, որպեսզի նա եւս փակի Թուրքմենիայից իրենց տարածքով անցնող գազամուղը, թույլ չտա, որ Հայաստանը գազ ստանա Թուրքմենիայից: Վրաստանն էլ գնացել է այս քայլին, որովհետեւ գազ ու նավթամթերք է ստանում Ադրբեջանից, կենսական կախում ունի, չի ուզում ու չի կարող հակադրվել, որպեսզի չհայտնվի այն վիճակում, որպիսին Հայաստանինն է:

Իսկ թեթեւամիտ Աշոտ Բլեյանն ուզում է իր հայրենակիցներին հավատացնել, թե ինքը Բաքվում, Ադրբեջանի պաշտոնական շրջաններում չարություն չի տեսել Հայաստանի ու հայության հանդեպ: Չի տեսել այն չարությունը, որ Ադրբեջանը հեղեղած՝ լափում է տալիս, լցվում նաեւ Վրաստանը...

Մոսկովյան լրատուները հաղորդեցին, թե, իբր, Ադրբեջանից ինչ-որ Ջալիլով՝ ղեկավարը մի պատվիրակության, որը պիտի Նախիջեւան-Հայաստան սահմանագլխին հանդիպեր հայերի հետ՝ նախապես պայմանավորված տեղում ու ժամին, որպեսզի բանակցություններ վարեն Մեղրի-Նախիջեւան երկաթգծի երթեւեկը կանոնավորելու համար, գնացել է, զուր սպասել, եւ հայկական պատվիրակությունը ինչ-որ պատճառով չի ժամանել, ու բանակցությունը չի կայացել:

Ինչ-որ պատճառը երեւի շատ է հասկանալի. տեղ պիտի հասներ մեքենայով, իսկ մեքենան բենզին չի ունեցել: Չէ՞ որ այս օրերին ադրբեջանական ռադիոն է մի քանի անգամ հիշեցրել իրենց Էլչիբեյի պրեզիդենտական սպառնալիք-խոսումը՝ այնպես անելու, որ Հայաստանի իր կոլեգան գործի գնա ոտքով..., որովհետեւ քայլելն առողջարար է:

Իսկ ԼՂՀ-ից պատերազմական լուրեր են գալիս: Ինքնապաշտպանները հերոսաբար պաշտպանում են իրենց դիրքերը: Թուրքի ռազմական ինքնաթիռները, Ստեփանակերտի ու մյուս խոշոր բնակավայրերի պաշտպաններից սարսափահար, տարել-իրենց մահաբեր ռումբերը թափել են Լաչինի մարդասիրական միջանցքի վրա:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ուղարկած պատվիրակությունը՝ Օմար Խալիմի գլխավորությամբ, Երեւանում է գտնվում, հանդիպել է Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ, խոսում են շատ բաներից, բայց նաեւ նրանից, թե Հայաստանն ու ԼՂՀ-ն ինչպես կարելի է փրկել Ադրբեջանի «բարությունից», որ նրա ռումբերն են ու հրետանային արկերը:

Այս հանդիպմանը, որին մասնակցում էր նաեւ մյուս ներկայացուցիչ Հորսըթ Հայթմանը, Լ. Տեր-Պետրոսյանը ջանաց համոզել, որ ՀՀ ու Ղարաբաղի իշխանությունները լիովին վերահսկում են իրենց զինված ուժերի գործողությունները եւ պատրաստ են ցանկացած ժամին դադարեցնել կրակը: Նա համաձայն է, որ Ղարաբաղի կարգավիճակի հարցը քննարկվի մարտական գործողությունները դադարեցնելուց հետո:

✧ ✧ ✧

ԼՂՀ ԳԽ-ի նախագահի խորհրդական Արկադի Ղուկասյանը լրատվական մարմինների համար հայտարարել է, թե ժամանակն է, որպեսզի Ադրբեջանի ղեկավարությունը գիտակցի իրենց ռազմական ուժի ոչ գերազանց լինելը, հասկանա, որ պատերազմում չեն կարող հասնել իրենց նպատակին եւ ցանկություն հայտնեն քաղաքական եղանակով հասնելու բարդույթի կարգավորմանը: Իսկ այս դեպքում, նախ, պետք կլինի ներկայացուցիչների բանակցություն, որն էլ կնախապատրաստի առաջին ղեկավարների հանդիպումը:

**Դեկտեմբերի 4–6-ը** թուրքերի օդուժի ակտիվացման օրերն էին. 4-ին մի կործանիչ ինքնաթիռ շատ բարձրերում պտույտներ գործելով Ստեփանակերտի վրա, գնացել-ռումբեր է թափել Շոլան գյուղի մոտերքում:

Այսօր հայկական ինքնապաշտպանական ուժերը գրոհով մտել են Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղը, այնտեղից դուրս քշել թուրքերին՝ ավարտելով ամբողջ Ասկերանի շրջանի ազատագրությունը:

Մարտունու կողմերից էլ ինքնապաշտպանական ջոկատներն ուժգին գրոհով նվաճել են Աղդամի շրջանի Մարզիլի գյուղը, վերացրել թշնամու այդ խոշոր ռազմական հենակետը: Այս մարտի ընթացքում ոչնչացվել է թուրքերի մեկ տանկ, առգրավվել են երկու հրանոթ եւ չորս զենիթային կայանքներ: Կան մի քանի տասնյակ ասկյարների դիակներ: Հայկական կողմը տվել է միայն վեց զոհ:

Հաջորդ օրը, **դեկտեմբերի 5-ին**, թուրքերը միայն հեռահար հրետանիով էին ջանում պահել պատերազմի թափը. Ֆիզուլուց հրետակոծեցին Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղը, Աղդամից՝ Ստեփանակերտը:

**Իսկ 6-ին** թշնամական ինքնաթիռներ են երեւացել Մարտունու շրջանում եւ ուղղաթիռներ՝ Մարտակերտի կողմերում: Մարտունու մոտ մեր ինքնապաշտպանները ոչնչացրել են մեկ ռազմական ինքնաթիռ, Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ էլ՝ մեկ ՄԻ-24 ռազմական ուղղաթիռ:

«Ազգի» դեկտ. 5-ի համարում վերաշարադրված է «Նովոյե վրեմյա»-ի N46-ում Այազ Մութալիբովի հրապարակած հոդվածը հայ-ադրբեջանական հակամարտության եւ ղարաբաղյան խնդրի վերաբերյալ: Այնտեղ Մութալիբովը Հայաստանի եւ Ադրբեջանի պատասխանատու քաղաքագետներին կոչ էր անում նստել բանակցությունների սեղանի շուրջ, իսկ երկու երկրների մտավորականներին՝ բարձրացնել իրենց ձայնը՝ հօգուտ փոխզիջման: Դրա համար Մութալիբովը նախ նշում էր կրակի դադարեցման անհրաժեշտությունը՝ չեզոք ուժերի մասնակցությամբ:

Ողջունելով միջնորդական նոր առաքելությունները, Մութալիբովը գրում էր, թե կարեւորագույն դերը պատկանում է Երեւանին ու Բաքվին, եւ ոչ մի արգելք չի տեսնում այդ բանակցություններին Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցության համար:

Շունը պաշտոնանկ պիտի դառնար, որ խելքի գա՞ր: Իսկ երբ ինքն էր Ադրբեջանի տերը, դիվոտվում էր որեւէ միջնորդության մասին լսելուց, գտնում էր, որ Ղարաբաղի խն-

դիրն իր հանրապետության ներքին գործն է, եւ այն լուծելու համար իրենք չեն խնայի ո՛չ արյուն, ո՛չ միջոց, ո՛չ էլ ժամանակ:

✧ ✧ ✧

Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի դիվանագետներն իրենց անհանգստությունն են արտահայտել Ղարաբաղում շարունակվող պատերազմական գործողությունների համար եւ առաջարկել են, որ կրակը դադարեցնելու նպատակով ԵԱՀԽ-ը ձեռնարկի ամենավճռական քայլեր:

**Դեկտեմբերի 9-ին** Գրողների միությունում հանդիպեցի «Արցախ» թերթի խմբագիր, իմ հին բարեկամ Մաքսիմ Հովհաննիսյանին: Խոսեց հայրենիքի վիճակի, կռիվների ու հեռանկարների մասին, վերջում էլ թե.

- Ադրբեջանը 1000 թարմ զինվոր ստանա՞ր, այսօ՛ր, միանգամի՛ց, մի քանի օրվա ընթացքում բոլոր հարցերը կլուծվեին. նախ թուրքից կմաքրեին Մարտակերտն ու Շահումյանը, ապա Էլչիբեյը ոտ ու ձեռ կընկներ պայմանագիր կնքելու համար, որպեսզի իր սեփական շրջաններից էլ չզրկվի:

- Իսկ ինչո՞ւ չի ստանում:

- Երեւի վախենում են մեծ տերությունների աղմուկից... Կարծես որ կարգապահություն խաղան, նրանց աչքի լույսն են դառնալու: ... Իսկ այնտեղ օրըստօրե տիրական են դառնում երկպառակությունը, քաոսը, մանավանդ հոգնածությունը: Չի կարելի պատկերացնել այս ամենի վերջը:

**Դեկտեմբերի 10-ին**, ԼՂՀ առաջին տարեդարձի օրը, ոչինչ տոնական չկար: Պատերազմի, արյան ու ցավի, ցրտի ու կարիքների մեջ գտնվող հանրապետությունը դաժան անսանձ հարձակումների էր ենթարկվում թշնամու ավազակախմբերի կողմից: Որքա՞ն ժամանակ է, նույն բոթն է մեր ականջներում՝ Աղդամից Ասկերանի սահմանային բնակավայրերն են հրետակոծում, Ֆիզուլիից՝ Էդիլլուն, Քելբաջարի ու Կուբաթլիի կողմերից՝ Գորիս-Լաչին-Ստեփանակերտ միջանցքը:

Այսօր ԱՄՆ հասավ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը, հանդիպումներ պիտի ունենա այդ երկրի մեծավորների, լրատվական կենտրոնների, հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Ազգային խորհրդի տնօրեն Վիգեն Սոնենց-Փափազյանը հայտնել է, թե «Գ. Պետրոսյանի այցը Մ. Նահանգներ բացառիկ առիթ է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի հարցն ուղղակի ճանապարհով եւ ժողովրդավարորեն ընտրված բազմաստիճան ներկայացուցչի միջոցով Մ. Նահանգների արտգործնախարարության եւ զանգվածային լրատվական միջոցներին ներկայացնելու համար»:

✧ ✧ ✧

Այսօր իսկ, անկախության տարելիցի առթիվ, ԼՂՀ ԳԽ-ը համագործակցության երկրներին ու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին հղել է դիմում, որի մեջ նշվում է, որ Ադրբեջանի ագրեսիան ԼՂՀ դեմ պետք է դատապարտվի: Փաստաթղթերում նշվում է նաեւ ԼՂՀ ճանաչման անհրաժեշտությունը, քանի որ նրա անկախության հռչակումը համապատասխանում է միջազգային բոլոր չափանիշներին:

Լրատվական մարմինները այսօր հաղորդեցին նաեւ երջանիկ մի լուր. Անգլիայի կառավարությունը որոշել է 250 հազար ֆունտ ստեռլինգ (շուրջ 350 հազար դոլար) հատկացնել Արցախին՝ ձմռանը բնակչության կենսական կարիքները հոգալու համար: Օգնությունն իրականացնելու է Միջազգային Կարմիր խաչը, որը սննդամթերք եւ հագուստ է մատակարարելու: Անգլիայում Հայաստանի դեսպան Արմեն Սարգսյանին հղած նամակում արտգործնախարար Դագլաս Հոգը ճշտել է, որ օգնությունն առաքվելու է Լաչինի միջանցքով, որով անուղղակիորեն Անգլիան ընդունած կլինի միջանցքի մարդասիրական լինելը:



Անգլիան պիտի՞ ապացուցի, որ Քերոլայն Կոքսն իր դուստրն է, եւ ինքն արժանի է նրան:

✧ ✧ ✧

ԼՂՀ տարելիցի առթիվ ԳԽ-ի նախագահի խորհրդական Մաքսիմ Միրզոյանը լրատվությանը բացատրել է, թե ինչո՛ւ հանրաքվեն դեկտեմբերի 10-ին են անցկացրել: Ասում է՝ նախօրյակին արդեն պարզ երեւում էր, որ ԽՍՀՄ-ը փլուզվում է: Բայց պետք էր հանրաքվեն անցկացնել նրա օրենքներով եւ ձգձգելու դեպքում այն այլեւս գոյություն չէր ունենա, ու ամեն մի նման միջոցառում էլ կլինի օրենքից դուրս (կային ուժեր, որոնք պահանջում էին հանրաքվեն ուշ անցկացնել):

Հետաքրքիր է, որ հանրաքվեն անց է կացվել դեկտեմբերի 10-ին, իսկ 11-ին Ռուսաստանը, Ուկրաինան ու Բելառուսը Մինսկում ցրել են ԽՍՀՄ-ը:

**Դեկտեմբերի 11-ին** Մոսկվայում հեռուստատեսությամբ հաղորդում եղավ այն մասին, որ, ըստ Ադրբեջանից ստացված տվյալների՝ հայկական զորքերը բռնագրավել են Ադրբեջանի Զանգելանի ու Կուբաթլիի շրջանների 10 գյուղեր եւ խորանում են դեպի երկրի ներսը:

Հաղորդվեց նաեւ ՀՀ արտգործնախարարության նոտան Ադրբեջանի համապատասխան մարմնին, եւ այստեղ էլ ասվում էր՝ ադրբեջանական զինուժերն ագրեսիա են ծավալում սահմանային բոլոր շրջաններում, ապա պատասխան հարվածներ ստանալուց, այսինքն՝ իրենց ագրեսիայի ակունքների դեմ ձեռնարկած մեր միջոցները գնահատում որպես կրակի բորբոքում, հայ նվաճողական քաղաքականության ծավալում:

Հետագայում հրապարակվեց ադրբեջանական լրատվության հաղորդումը, եւ դրությունը մասամբ հասկանալի դարձավ: Ահա՛ այն.

«Դեկտեմբերի 10-ի վաղ առավոտյան զինված ուժերը, կոպտորեն խախտելով Ադրբեջանի սահմանը, հարձակվել են Զանգելանի եւ Ղուբաթլիի շրջանների վրա,-ասվում էր այդ հայտարարության մեջ:-Գրավվել եւ հրկիզվել են Զանգելանի շրջանի Սեիդլար, Աղբենդ, Ղազանչի, Դարալի, Գյունըշլաղ, Սաաթլի գյուղերը, իսկ Ղուբաթլուի շրջանի Ալիմլի, Չարդախլու, Յուխարի եւ Աշաղի Ջիվիքլի գյուղերը ենթարկվել են զանգվածային հրետակոծման: Ներկայումս հայկական կազմավորումները շարունակում են գրոհել այդ բնակավայրերը, կան բազմաթիվ զոհեր եւ ավերածություններ:

Ստոկհոլմում կայանալիք Եվրախորհրդի նստաշրջանի նախօրեին ագրեսիայի այդ քայլը ցույց է տալիս, որ Հայաստանը շահագրգռված չէ հակամարտության խաղաղ կարգավորմամբ եւ մտադիր է այն ընդլայնել զենքի ուժով»,-այնուհետեւ շարունակում է հայտարարությունը:

Դրանից ելնելով, Ադրբեջանը Եվրախորհրդին եւ մյուս միջազգային կազմակերպություններին կոչ է անում «Հայաստանի դեմ կիրառել այդ կազմակերպությունների կանոնադրություններով նախատեսված պատժամիջոցներ»:

Նույն օրն Ադրբեջանի արտգործնախարարի առաջին տեղակալ Սալամովը հանրապետության արտգործնախարարություն է հրավիրել Բաքվում հավատարմագրված երկրների դեսպաններին: Նրանց համար ընթերցվել է «Ադրբեջանի ԱԳՆ հայտարարությունը դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի Զանգելանի եւ Ղուբաթլիի շրջանների վրա հայկական բանակի սկսած հարձակման կապակցությամբ» («Ազգ», 1992 թ. դեկտ. 12):

Հետաքրքիր է, որ այս առթիվ Թուրքիայի ԱԳՆ-ը եւս համապատասխան գործ է կատարում, եւ դրա արտահայտություններից մեկը. Անթալիա քաղաքում անցկացվող Սեւ-ծովյան ավազանի երկրների արտգործնախարարների խորհրդաժողովում Հիքմեթ Չեթինը մեր ԱԳՆ պաշտոնյային իր դժգոհությունն է արտահայտել «Ադրբեջանի դեմ սկսված նոր ագրեսիայի կապակցությամբ», զգուշացրել, որ Թուրքիան ամեն միջոց կգործադրի այն խափանելու համար, ապա եւ հաղորդել, որ այդ առթիվ արդեն իր երկիրը նոտա է

հղել ԱՄՆ-ի կառավարությանը («Ազգ», նույն տեղում):

Նույն 11-ին Ստեփանակերտի մոտերքում մերոնք խոցել եւ վայր են գցել ադրբեջանական ՄԻԳ-25 ռազմական մի ինքնաթիռ, որը Կապանը ռմբակոծելուց հետո տուն դառնալիս է եղել:

✧ ✧ ✧

«Ազգի» դեկտ. 11-ի համարում լույս է տեսել աշխատակցի (երեւի գլխ. խմբագիր Հ. Ավետիքյանի) հարցազրույցը պատգամավոր, ՀՌԱԿ պատգամավորական խմբի ղեկավար Վիգեն Խաչատրյանի հետ:

Այս ընկերը վերջին մեկ տարվա ընթացքում իմ արած հայտնություններից մեկն էր: ԳԽ-ի նիստերում ունենում էր խելոք ելույթներ, կատարում գործնական ու հավասարակշիռ առաջարկություններ: Գիտե մտքերն արտահայտել ճշգրիտ, համոզիչ: Այս տեսակետից երեւի թե զգալի չափով տարբերվում է մյուսներից: Բայց երբ այս կարծիքն էի հայտնում նրան մոտիկից ճանաչողներին, անմիջապես զգուշացնում էին՝ «Սուրբ մարդ չէ»: Այս գնահատականը մասամբ արժեք ստացավ, երբ նա, համարյա իրար բերելով, գլխավորելով «Ազգային դաշինքը», հետո էլ նրան գրեթե լքեց ամենավճռական պահին, երբ հավաքվել էին ՀՀ նախագահի մոտ եւ պիտի ասեին իրենց վճռական խոսքը...

Ինչ-որ է, ես, այնպես անվերապահորեն գնահատելով իբրեւ մտածող, դատող, ասելիք ունեցող եւ այն պատշաճ մակարդակով ասել կարողացող մարդու, մի տեսակ թերահավատ դարձա նրա բարոյական, հատկապես գործչի արժանիքների վերաբերյալ:

Եւ ահա նա այս հարցազրույցում վերստին իր բարձրության վրա է. լավ է հասկանում հանրապետության ղեկավար մակարդակի վրա դրսեւորվող բոլոր վայրիվերումները, նրանց մասին ասում իր դիպուկ ու բնութագրական խոսքերը, որոնք անհասանելի պիտի լինեին ուրիշների համար:

Ես այստեղ քաղում եմ այդ խոսքերից մի քանիսը:

«Ժողովուրդը կուսակցություններին տարբերակելու է ոչ միայն անուններով ու պատմական անցյալով, այլեւ, ամենից առաջ, կուսակցությունը ներկայացնող կոնկրետ անձերով ու գործերով»:

Սա շատ տեղին խոսք է մեր ամենահեղինակավոր կուսակցության նորաթուխ այն անդամների հասցեին, որոնք հանդես են գալիս այնպիսի ապլոմբով, ասես 102 տարվա կուսակցական ստաժ ունեն, եւ անցյալ բոլոր արժանավոր գործերն էլ կատարվել են իրենց ղեկավարությամբ կամ, առնվազն, մասնակցությամբ:

Գարնան գյուղատնտեսական աշխատանքները նախապատրաստելու եւ օգտակար անցկացնելու գործին ԳԽ-ը եւս պիտի լծվեր, սակայն «ԳԽ-ի նիստը վարողներն իրենց բնորոշ «հմտությամբ» եւ անտեղի հումորի առատությամբ այս կարեւորագույն հարցը ձգձգեցին մինչեւ... աշուն»:

Եւ մարդիկ զարմանում էլ են, թե ինչպես հանրապետությունը սովին դեմ առավ հենց բերքահավաքից անմիջապես հետո:

«Իշխանության կառույցները կոչված են լուծելու հանրապետության կյանքում ծագող հակասությունները, մինչդեռ գնալով իրենք են դառնում հակասության աղբյուր»:

ՀՀՇ «խմբավորումը ղեկավարվում է տարօրինակ մի սկզբունքով. վճիռները պիտի կայացվեն համաձայն իրենց կամքի, իսկ պատասխանատվությունը կրեն բոլորը: Ինքնին դա դատապարտված քաղաքականություն է, առավել եւս, որ այդ խմբավորման մեծամասնությունը կարճ ժամկետում վառ ձեւով ցուցադրեց իր մասնագիտական ցածր կարողությունները, անհանդուրժողականությունը, երկխոսության գնալու չկամությունը, մենաշնորհային հավակնությունները՝ դրանով իսկ կորցնելով հավատն ու վստահությունն իր նկատմամբ:

ԳԽ-ի ղեկը վերցնելով իր ձեռքը՝ ՀՀՇ խմբավորումը իր հեղինակության անկման զուգահեռ, զգալիորեն նպաստեց նաեւ ԳԽ-ի հեղինակության անկմանը»:



ՀՅԴ-ը «ըստ երեւույթին գերագնահատում է ՀՀՇ բացասական, այնպես էլ իր դրական դերը»:

Ներկայացնում է ամբողջ հասարակության տնտեսական քայքայման ամբողջ պատկերը՝ դրա մեջ մեղադրելով միայն իշխանություններին, որոնց մեջ ոչինչ չի փոխվում, այսինքն՝ նրանց ոչ ոք դեն չի շպրտում, երբ «կյանքը հիմնովին վատացել է» (մեղմ է ասված):

Նախագահի թիմի, միայն նրան նվիրվածների այդ խմբի, անճարակությունն է նկարագրում՝ անելով շատ մեղմ եզրակացություն. «Իր իմացությամբ, փորձով, պատասխանատվության զգացումով կարծես նա պատրաստ չէ լուծելու ծառացած դժվարագույն խնդիրները»: Կարծե՞ս...

Այս ամենի պատճառը տեսնում է նրանում, «որ կայացող պետության ղեկավարը համառորեն չի ցանկանում վեր կանգնել իր կուսակցական պատկանելությունից, իր շուրջը համախմբել ազգի կարող ուժերին, նպաստել հավասար պայմանների ստեղծմանը բոլոր քաղաքական ուժերի ձեւավորման ու գործունեության համար, հաշվի նստել հասարակական կարծիքի հետ եւ աշխատել բաց»:

Համենայն դեպս, մարդը դիտե՝ որտեղ է թաղված շան գլուխը:

✧ ✧ ✧

Ռուսաստանի դեսպանը Հայաստանում ոտք դնելու առաջին իսկ օրից իրեն դրսեւորել է որպես արդարամիտ ու դիվանագիտական խաղերից հեռու մի մարդ, որն ամենից առաջ ներկայացնում է գիտնական պատմաբանի իր արժանավորությունները:

Վլադիմիր Պետրովիչ Ստուպիշինը համոզված է, որ Արցախի ու Ադրբեջանի հակամարտությունը լուծելու համար նախ պետք է ապահովել զինադադարը, նոր միայն անցնել բանակցությունների՝ անպայման պատրաստ լինելով փոխզիջումների, առանց որոնց արտաքին ոչ մի օգնություն, ոչ մի միջնորդություն օգուտ չի տա:

Նա իբրեւ քաղաքագետ ու պատմաբան մերժում է «ազգային համախումբ պետական միավորումը, ինչպիսին ԼՂՀ-ն է», «հայկական համայնք» հորջորջելու տգեղ սովորությունը: Ասում է. «Ըստ իս, դա նույնն է, թե ռուսներին Ռուսաստանում անվանենք «ռուսական համայնք», կամ ֆրանսիացիներին Ֆրանսիայում՝ «ֆրանսիական համայնք»: Սակայն եթե անգամ տերմինաբանությունը մի կողմ թողնենք, ինչպե՞ս կարելի է անտեսել այն բացահայտ փաստը, որ Լեռնային Ղարաբաղի դեմ նետված օդուժն ու հրետանին մահ են սփռում այդ ազգային-պետական կազմավորման մեջ, ինչպես էլ այժմ անվանելու լինենք, հետեւաբար առկա է Ադրբեջանի եւ նրանց միջեւ բացահայտ հակամարտությունը, ում նրանք փորձում են հնազանդեցնել» («Ազգ», դեկտ. 12):

✧ ✧ ✧

Լոս Անջելեսի հայ տիկնայք այսօր տարադրամ հանձնեցին Հայաստանի ԼՂՀ ներկայացուցիչ Մ. Սարգսյանին:

- Թող մեր այս փոքրիկ գումարը մի քար դառնա ձեր հողի պաշտպանության ամրոցի պատին,-ասացին նրանք:

Լ. Տեր-Պետրոսյանն այսօր, դեկտեմբերի 12-ին, դիմումով կոչ է արել Ադրբեջանի ղեկավար Էլչիբեյին՝ ընդառաջելու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների խաղաղարար միջոցառումներին, որպեսզի կրակը դադարի, եւ մեր երկու ժողովուրդները հասնեն երազելի խաղաղության:

**Դեկտեմբերի 13-ին**, նախորդ օրերի նման, մեր լրատվական մարմինները նույն «տվյալներն» են հաղորդում, ըստ երեւույթին դատարկ տեղ լրացնող, անտեղյակությունից հորինված նույն հանկերգը. իբր. Ֆիզուլիից հրետակոծել են Հադրութի շրջանի Էդիլլուն, Աղդամի կողմից՝ Մարտունու եւ Ասկերանի շրջանների սահմանային գյուղերը: Իսկ Լա-

չինի միջանցքը հենց մի գլուխ հրթիռակոծվում է, բայց եւ միաժամանակ գործում է անխափան, որովհետեւ լիովին վերահսկվում է հայ ինքնապաշտպանների կողմից։

Եւ այսքանից հետո ՀՀ արտգործնախարարությունն Ադրբեջանի իր նմանին հղել է նոտա՝ շարադրելով իր մեղադրականը վերջին օրերին ադրբեջանական զորամիավորումների սանձազերծած ագրեսիվ ծրագրերի առթիվ՝ զգուշացնելով նրանց իրականացման դեմ հայկական ինքնապաշտպանության վճռական դիրքից»։

Իսկ թերթերը, այնուամենայնիվ, որոշակի լուրեր են հաղորդում այն մասին, թե Հայաստանին ծնկի բերելու համար ինչպես միասնաբար պատեպատ են զարկվում երկու երկրների թուրքերը։ Ահա դրանցից մեկը.

Ստամբուլում լույս տեսնող թերթերի համաձայն՝ Թուրքիայի փոխվարչապետ Էրդալ Ինոնյուն դեկտեմբերի սկզբին Բաքու կատարած այցելության ժամանակ հայտարարել է, թե իր երկիրն էլ էլեկտրականություն ու վառելիք չի տալու Հայաստանին, մինչեւ որ Բաքուն համաձայն չլինի դրան։

Ինոնյուն ասել է, թե Թուրքիան Հայաստանին տալիք «իր» օգնությունը հետայսու պիտի պայմանավորի Լեռնային Ղարաբաղից հայ մարտիկների հեռացման պահանջի կատարմամբ։

Մյուս կողմից, 47 վագոններ, որոնք Հայաստան էին փոխադրելու մոտ 1300 տոննա կաթի փոշի երեխաների համար, անշարժացել են արեւմտյան Թուրքիայում՝ տուգանքների պատրվակով։ Թրքական աղբյուրների համաձայն՝ թուրք մաքսային պաշտոնյաներն ու սահմանապահները վագոնից վագոն զենք են փնտրում։ Այդ կաթը նվերն է ֆրանսիական բարեսիրական տարբեր կազմակերպությունների։ Ըստ թուրքական թերթերի, Թուրքիայի՝ Հայաստանին տալիք ու դեռեւս չտված էլեկտրականության հարցը մեծ իրարանցում է գցել թուրքական եւ ադրբեջանական շրջաններում։ Արտգործնախարար Չեթինը Անկարայում Ադրբեջանի դեսպանին բացատրել է Հայաստանին էլեկտրականություն վաճառելու դրդապատճառները։ Առաջին՝ Թուրքիան ուզում է զորավիգ կանգնել նախագահ Տեր-Պետրոսյանի չափավոր քաղաքականությանը, որ ըստ նրա, դեմ է «ծայրահեղական Դաշնակցությանը» («Ազգ», դեկտ. 12)։

Իսկ Հայաստանի պաշտոնական շրջաններում անհասկանալի այնպիսի մի պատրաստակամություն կա Թուրքիայի գիրկն ընկնելու, որ պատրաստ են դրան գնալ գլխաբաց ու ոտաբոբիկ։ Բլեյանի գործով առավել բացվեց նրանց դիմագիծը, չնայած դրանից առաջ վարչապետի խնդրանքն ասել էր ամեն ինչ ու մինչեւ վերջ։

**Դեկտեմբերի 15–16-ին** Մոսկվայում, Խաղաղության պաշտպանության կոմիտեի շենքում, տեղի է ունեցել գիտաժողով «Ղարաբաղյան սինդրոմը ռուսական դիվանագիտության մեջ» (սինդրոմ-ախտանիշերի համակցություն)։ Մասնակցել են Հայաստանի ու Ադրբեջանի հասարակայնության, Մոսկվայի հայկական ու ադրբեջանական համայնքների ներկայացուցիչներ, Ադրբեջանի ու Հայաստանի ռուսական համայնքների ներկայացուցիչներ, Ռուսաստանի խորհրդարանի, ԱԳՆ, կառավարության եւ քաղաքական կուսակցությունների ու շարժումների անդամներ։ Հայկական կողմից զեկուցումով հանդես է եկել ՀՀ քաղաքագետների ասոցիացիայի պրեզիդենտ Հմայակ Հովհաննիսյանը, Ադրբեջանի կողմից՝ Ադր. քաղաքացիական ասոցիացիայի պրեզիդենտ Զահիդ Հաջիեւը։

Գիտաժողովում ստեղծվել է մշտական գործող Համաձայնության հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրի հակամարտությունը, նրա կարգավորման խնդիրներն ու հնարավորությունները, դրանք ներկայացնի ռուսական կողմին, ՀՀ եւ Ադր. ղեկավարներին, ամեն կերպ աջակցի փոխըմբռնմանը ու մթնոլորտի մեղմացմանը։ Նաեւ հանձնարարվել է, որպեսզի քաղաքագետ Հմ. Հովհաննիսյանն ու գրող Չինգիզ Հուսեյնովը ներկայացնեն երկու հանրապետությունների դիրքորոշումների վերաբերյալ զեկույցներ՝ Ռուսաստանի ղեկավարության հետ ունենալիք հանդիպման համար։

Գիտաժողովի մասին ընդարձակ հանգամանալից հաղորդում չի հրապարակվել, մասնակիցներից ոչ ոքի հետ անձնական զրույց չեմ ունեցել, ուստի եւ նրանում դրսեւորված դիրքորոշումների, առհասարակ ողջ ընթացքի առթիվ քաղվածքներ եմ անում այն



ծավալուն հարցազրույցից, որ Հմ. Հովհաննիսյանի հետ ունեցել է «Հայաստանի ձայն» թերթի թղթակիցը եւ հրապարակել է թերթի ս.թ. (93) հունվարի 14-ի ու 15-ի համարներում։

Գիտաժողովում կենտրոնական-սկզբունքային հարց է եղել Այսրկովկասյան գոտում Ռուսաստանի ունեցած եւ ունենալիք դերի խնդիրը ու այս ոլորտում էլ՝ նրա ազդեցությունը ղարաբաղյան բարդույթի կարգավորման գործում։

Ռուսաստանի ԱԳՆ աշխատակից, ԵԱՀԽ-ում ղարաբաղյան հարցի գծով Ռուսաստանի դեսպան Վ. Կազիմիրովն արտահայտել է իր հայտնի կարծիքը՝ դարձյալ պնդելով, թե հարցը պիտի լուծվի միայն ԵԱՀԽ-ի սկզբունքներով, որոնցից կարեւորն է պետությունների սահմանների անձեռնմխելիությունը։

Հակադրվելով Կազիմիրովի ու ադրբեջանական կողմի այս տեսակետին՝ Հմ. Հովհաննիսյանը հայտարարել է, թե պետությունների ամբողջության ու սահմանների անձեռնմխելիության սկզբունքն ամրագրվել է Հելսինկիում 1975-ին, եւ այդ պայմանագրի տակ ստորագրել է Խորհրդային Միությունը։

Հիմա ո՞ւր է այդ Միությունը, ինչո՞ւ օրենքը որեւէ դեր չխաղաց, երբ նրա սահմանները պատառոտվեցին, եւ ստեղծվեցին 15 անկախ, ինքնիշխան նոր պետություններ իրենց նոր սահմաններով՝ իբրեւ նոր ամբողջություններ։

Ինչպե՞ս է, որ նախկին ԽՍՀՄ-ից բաժանվողների համար ոչ մի արգելք չդարձավ Հելսինկիի պայմանագիրը, իսկ ամենաժողովրդավարական օրենքներով ստեղծված ԼՂ-ի հանրապետության դեմ այն դառնում է անանցանելի պատնեշ։

Այս տեսակետն է պաշտպանել նաեւ Ռուսաստանի փոխպրեզիդենտ Ռուցկոյի խորհրդական Ա.Վ. Ֆյոդորովը՝ գտնելով, որ ԼՂ-ի հարցը լուծելիս անպայման պետք է հիմք ընդունել պատմական հանգամանքները։

Ռուս-ամերիկյան ինստիտուտի աշխատակից Ալեքսեյ Կովալենկոն, գիտաքաղաքական ուսումնասիրությունների կենտրոնի դիրեկտոր Ե. Լ. Չերնիկովը եւ ուրիշներ կոչ են արել հրաժարվել խաղաղ գոյակցության մասին սովորական դարձած կոչերից, ամեն փաստ քննել ու լուծել պատմական հանգամանքների հաշվառումով եւ չմոռանալ Ռուսաստանի վճռական դերը Կովկասի տարածքի ազգամիջյան հարաբերությունների կարգավորման խնդրում։

Ամենահետաքրքիրը Ռուսաստանի ֆեդերացիայի ԳԽ-ի Նախագահության անդամ եւ միջհանրապետական հարաբերությունների, ռեգիոնալ քաղաքականության ու համագործակցության կոմիտեի նախագահ Վ.Ն. Պոդոպրիգորայի ելույթն էր,-ասում է Հմ. Հովհաննիսյանը։-Նա միանգամայն որոշակի արտահայտվել է հանուն ԼՂՀ ճանաչման եւ նրա օրինական ներկայացուցիչների՝ մասնակցության բարդույթի կարգավորմանը նվիրված բոլոր բանակցություններին։ Նա ընդգծել է, թե պետք է իրավաբանորեն ընդգծել այն, ինչ արդեն ստեղծված է կյանքում եւ ապրում է ու զարգանում։

«Պարոն Պոդոպրիգորան չի թաքցրել, որ դա լոկ իր անձնական դիրքը չէ,-շարունակում է Հովհաննիսյանը,-այլեւ դիրքորոշումն է Ռուսաստանի ԳԽ-ի խորհրդարանի ու Նախագահության բավական ազդեցիկ ուժերի։ Առանձնապես նա վկայակոչել է ԳԽ-ի Ազգամիջյան հարաբերությունների կոմիտեի նախագահ Աբդուլաթիպովին եւ նշել, որ կոմիտեի կարծիքով՝ Ռուսաստանը չի կարող անտարբեր մնալ արդեն սահմանադրաբար անկախացած նախկին ինքնավարությունների ձգտումների հանդեպ, հաշվի չառնելով նրանց եւ Ռուսաստանի ճակատագրերի ընդհանրությունը, չպահպանել իր մասնակցությունը նրանց քաղաքական, տնտեսական ու մշակութային գործունեության մեջ։ Նա պարզորոշ հասկացրել է նաեւ, որ Ռուսաստանի ու այդ նորաստեղծ հանրապետությունների միջեւ սերտ կապերի ստեղծման բանալին պիտի հանդիսանա նրանց ճանաչումը Ռուսաստանի կողմից»։

Պատասխանելով այն հարցին, թե որքան իրավացի է «Երկիր» թերթում տպագրված հայտարարությունը, որով Պոդոպրիգորային վերագրվում է «Ղարաբաղը Ռուսաստանի պատկանող հող է» արտահայտությունը, Հովհաննիսյանն ասում է, նա այդպիսի միտք ի-

րեն թույլ չի տա եւ թույլ չի տվել, որովհետեւ մարդը պահանջում է ճանաչել ԼՂՀ անկախությունը եւ դա՝ ոչ միայն Բաքվից, այլեւ Երեւանից ու Մոսկվայից:

Հովհաննիսյանը գտնում է, որ այս պրովոկացիոն հայտարարությունը ձեռնտու է միայն Հայաստանի այսօրվա ղեկավարությանը, որպեսզի ասի՝ Ղարաբաղը ռուսական հող է, դե, թող նա էլ տնօրինի եւ լուծի հարցը, իսկ մենք հրաժեշտ կտանք նրան: Եւ պատահական չէ, որ ՀՀ ղեկավարությունն ու նրա մոսկովյան ներկայացուցչությունը ոչ միայն ոչինչ չեն անում ԼՂՀ-ն ճանաչելու եւ այլ պետությունների կողմից ճանաչել տալու համար, այլեւ «կանգնած են բարիկադի մյուս կողմին, եւ կոզըրեւյան ԱԳՆ-ի, Բաքվի ու Անկարայի հետ միասին, մարտնչում է Ռուսաստանն Այսրկովկասից հեռացնելու, Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի «անբաժանելի մասը ճանաչելու համար»:

Հ. Հովհաննիսյանն այս քաղաքականության պաշտպան հայ ղեկավարության եռանդուն զինակիցներ է համարում «բլեյաններին, բայանդուրներին, սարդարյաններին՝ «խաղաղարության» բնագավառի այդ շուլերներին, որոնց գործունեությունը Մոսկվայում երախտագիտությամբ ու շատ բարձր է գնահատել Ադրբեջանի փոխվարչապետ Ջալուբեյ Ալիեւը»:

Տեղեկություն է հաղորդում նաեւ այն մասին, որ Ադրբեջանի կառավարողներն այժմ պատրաստակամություն են հայտնում բանակցություններին նստել ԼՂՀ օրինական ղեկավարության հետ, երբ մինչեւ այսօր նրանք այդպիսին չէին ճանաչում: Իսկ ԵԱՀԽ միայն համաձայն է, որ նման հավաքներին մասնակցեն, այսպես կոչված «ղարաբաղյան զույգ համայնքների ներկայացուցիչները»:

Իբր, իրենք Ադրբաջանի պատվիրակության հետ համաձայնություն են կայացրել, որպեսզի Համաձայնողական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցեն նաեւ ԼՂՀ ներկայացուցիչները:

Գտնում է, որ կա գայթակղիչ հեռանկար, թե ղարաբաղյան հարցի նկատմամբ լուրջ հետաքրքրություններ ու նախաձեռնություններ կցուցադրեն մեծապետական շահախնդրություն ունեցող Ռուցկոյը, Վոլսկին, Տրավկինը եւլն, ինչպես նաեւ «Ռուսաստանի միասնություն» կոչվող խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչները:

Սրանք եւ համանման այլ բազմաթիվ հանգամանքներ լայն հնարավորություն են բացում Ղարաբաղյան խնդիրը լավագույնս լուծելու, նորելուկ հանրապետության բաղձանքներին բավարարություն տալու համար: Սակայն Հայաստանի ղեկավարությունը հազիվ թե ընդունակ լինի, ավելի ճիշտ՝ ցանկություն ունենա միանգամայն ձեռնտու հանգամանքներն օգտագործել:

Հ. Հովհաննիսյանի հարցազրույցում լուրջ դիտողություններ կան նաեւ նույն օրերին տեղի ունեցած Ռուսաստանի ժող. դեպուտատների 7-րդ համագումարում Հայաստանից ուղարկված պատվիրակության հասցեին: Այն, ներկայացնելով հայ բոլոր խոշոր կուսակցությունները, համագումարում էական ոչ մի քայլով չի ցուցադրել իր ներկայությունը, թեկուզ, ասենք, ԼՂՀ-ը ճանաչելու առաջարկ անող փաստաթուղթ հրապարակելով, ինչպես այդ արել են Աբխազիայի, Հարավային Օսեթիայի ու Մերձդնեստրովյեի շահերը ներկայացնող դեպուտատական լոբբիները: Համագումարի վերջին մոտ լուր է տարածվել այն մասին, թե «ՀՀ ԳԽ-ի նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանը խորհրդարանական ամբիոնից Վիկտոր Չեռնոմիրդինին համարել է ռուսական պառլամենտի «հետադիմական ուժերի ներկայացուցիչ»:

Ո՛չ ավել, ո՛չ պակաս: Մարդիկ պիտի՞ ապացուցեն, որ դոնքիխոտությունը դեռեւս կենդանի երեւույթ է եւ Հայաստանում իր ծաղկումն է ապրում:

Հաղորդվում է նաեւ, որ խորհրդաժողովին մասնակցել են մոսկվահայության լավագույն ներկայացուցիչները (ակադեմիկոսներ Լեւոն Չայլախյանն ու Վիլեն Ազատյանը, պրոֆեսորներ Յուրի Բարսեղովն ու Հրանտ Եպիսկոպոսովը, դիվանագետներ-քաղաքագետներ Աշոտ Մելիք-Շահնազարովն ու Վահան Գեւորգյանը եւլն: Զարմանալին այն է, որ չի ասվում, թե ինչպես է պատահել, որ բացարձակապես ԼՂ-ի բարդույթին վերաբերող այս խորհրդաժողովին, որի կազմակերպմանն էլ այնպես եռանդուն աջակցու-



թյուն է ցուցաբերել Արցախյան կոմիտեի (Հատուկ ծրագրերի վարչության) ղեկավար, «իսկական հայրենասեր» Լեոնարդ Պետրոսյանը, ներկա չի եղել ԼՂՀ-ը ներկայացնող եւ ոչ մի մարդ:

Դեկտեմբերի երկրորդ տասնօրյակում թուրքը հիմնականում գործել է հեռահար հրետանիով: Համարյա ամեն օր հրետակոծության են ենթարկվել ոչ միայն սահմանամերձ բնակավայրերը, այլեւ Ստեփանակերտը, Շուշը, Ասկերանը, Հադրութը, Մարտունին, Ճարտարը եւն, ՀՀ շրջաններից՝ Կրասնոսելսկը, Գորիսն ու Կապանը, Իջեւանն ու Տավուշը:

ՀՀ մարտական ուժերին վերջապես հաջողվեց ոչնչացնել Գորիսը ռմբակոծող մեկ ինքնաթիռ (ՍՈՒ-25):

◇ ◇ ◇

Թերթերը հաղորդում են, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր քարտուղար Էմիլիո Կաստրոն Ամենայն հայոց վեհափառ հայրապետ Վազգեն Ա-ին ու Անդրկովկասի մուսուլմանների առաջնորդ Շեյխ-Ուլ-իսլամ Ալլահ-շուքյուր Փաշա-զադեին առաջարկել է հանդիպել ու ճանապարհներ փնտրել հայ-ադրբջեանական բարդույթի լուծման համար: Երկու հոգեւոր վեհապետները տվել են իրենց համաձայնությունը, եւ հանդիպումը տեղի պիտի ունենա հաջորդ տարվա սկզբին՝ Եվրոպական եկեղեցիների խորհրդաժողովի մասնակցությամբ:

**Դեկտեմբերի 16-ին** Լեւոն Տեր-Պետրոսյանը ՀՀ ԳԽ-ի նստաշրջանում զեկուցում կարդաց հանրապետության վիճակի եւ այն բարելավելու միջոցառումների մասին: Փաստորեն սա նախագահական տարելիցի առթիվ արված հաշվետվության պես մի բան է, յուրահատուկ մի քննություն, որ, ամենայն հավանականությամբ, աչքաբաց ու բանիմաց մարդկանց կողմից կգնահատվի ավելի իրատես. վիճակի նկարագրությունը կարծես ոչ մի կապ չունի իրականության հետ, լի է անճիշտ, պարզապես անհավանական հայտարարություններով, դրությունը վերլուծելու, թերիներն ու նրանց պատճառները քննելու անկարողությամբ: Դրությունը փրկելու, ավելի ճիշտ հանրապետությունը ողբերգական վիճակից հանելու ելքն այդպես էլ չկա զեկուցման մեջ, նախագահն այն չի տեսնում... Իսկ խոսքը. դա զանազան խրթին տերմինների, ժամանակակից աշխարհում շատ գործածական, բայց մեր իրականության հետ չխոսող բառակապակցությունների մի խառնուրդ է, որն, ասես, նպատակ ունի ցույց տալու հեղինակի ծանոթությունը արտահայաստանյան տնտեսական ու քաղաքական կյանքին:

Կարելի՞ է հավատալ, օրինակ, որ նախագահը, թերեւս առանց հիմքեր ունենալու, հասկանալու, հայտարարեց, թե այս տարի մեր գյուղացին արտադրել է 320 հազար տոննա հացահատիկ:

Իսկ 320 հազար տոննա հացահատիկ ունեցող այս փոքրիկ հանրապետությունը քաղցած էր բերքահավաքի օրերին եւ նրանց շարունակության ընթացքում...

Հրապարակված տեղեկության համաձայն՝ նախագահի այս զեկուցումը («Հայաստանի Հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին»), որ պետք է խորհրդարանի հավանությանն արժանանար, չարժանացավ: «ԳԽ-ի նախագահ Բ. Արարքցյանը քվեարկության դրեց նախագահի հաղորդումը ի գիտություն ընդունելու առաջարկը: Ամբողջ օրը տեւած քննարկումներից հետո խորհրդարանը մերժեց ՀՀ նախագահի հաղորդումն ընդունել... ի գիտություն» («Երկիր», դեկտ. 17):

◇ ◇ ◇

Ադրբեջանի նախագահ Էլչիբեյն արտակարգ դրություն է հայտարարել Զանգելանի շրջանում, որովհետեւ վերջին օրերին, ըստ իրենց լրատվության, հայերն այնտեղ մեկ տասնյակի չափ գյուղեր էին նվաճել եւ իրենց զորքերը մեծ ջանքեր են գործադրում դրանք

ազատագրելու համար:

«Ադրբեջանի պաշտպանության նախարարության լրատվական-վերլուծական կենտրոնի հայտարարության համաձայն՝ դեկտեմբերի 16-ին մարտական գործողություններ են ծավալվել Ադրբեջանի 16 շրջաններում: Դրանցից 4-ը՝ Շուշի, Ասկերանի, Լաչինի եւ Մարտունու շրջանները «ամբողջությամբ զավթված են հայկական էքսպեդիցիոն կորպուսի կողմից»: Ըստ նույն հաղորդագրության՝ ներկայումս Ադրբեջանի ամբողջ տարածքի ավելի քան 5 տոկոսը գտնվում է հայկական ուժերի հսկողության տակ: Զանգելանի ուղղությամբ ձեռնարկած անսպասելի հարձակման հետեւանքով, ըստ նախնական տվյալների, զոհվել է 22 եւ անհետ կորել 50 մարդ:

Հայկական կազմավորումները առաջվա պես շարունակում են իրենց հսկողության տակ պահել ավելի վաղ գրաված 7 գյուղերը եւ այնտեղից զենքի տարբեր տեսակներից, այդ թվում նաեւ «Գրադ» կայանքներից հրետակոծել շրջանի մյուս բնակավայրերն ու շրջկենտրոնը» («Ազգ», դեկտ. 18):

**Դեկտեմբերի 17-ին**. 2-3 օր հետո, այն էլ «Ազատություն» ռադիոյից առնելով, մենք հայտնեցինք, որ ԵԱՀԽ Ստոկհոլմի ժողովում ԼՂ-ի բարդույթի հարցի քննարկումը տապալվել է Ադրբեջանի ու Հայաստանի արտգործնախարարների բախման պատճառով. Հայաստանի նախարարն Ադրբեջանին մեղադրել էր շրջափակման, անվերջ զրկանքներ պատճառելու եւ անօրինությունների մեջ: Ադրբեջանի ներկայացուցիչն էլ անվայել պատասխան է տվել... եւ քննարկումը խափանվել է:

Այսօր Բաքվում ԳԽ-ի փակ նիստում քննում են Զանգելանի, Կուբաթլուի, Քելբաջարի վիճակը, որովհետեւ, իբր, հայկական զորքերը դրանցում արդեն մեծ ավերածություններ են արել:

Իսկ մեր լրատվության տվյալներով՝ թուրքերն են անընդմեջ հրետակոծում Գորիսի շրջանը (Տեղ ու Արավուս գյուղերը), Իջեւանի, Տավուշի ու Նոյեմբերյանի շրջանների սահմանամերձ գյուղերը:

Ադրբեջանի պաշտպանության փոխնախարար, գեներալ-մայոր Բաբա Նազարլին Անդրզինօկրուգի հրամանատարությանը մեղադրել է հայերին զինամթերքով, զենքով ու վառելանյութով օգնելու մեջ: Նրա ասելով՝ դա ապացուցվում է նաեւ Վրաստանի պաշտպանության նախարարության մի հայտարարությամբ, որը հաստատում է, թե «հայերին է վաճառվել Վրաստանի զինված ուժերի համար նախատեսված զենքը» («Ազգ», դեկտ. 18):

**Դեկտեմբերի 18-ը** ճակատի բոլոր հատվածներում խաղաղ է անցել:

Իսկ Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում տեղի ունեցած Եվրոպայի պետությունների արտգործնախարարների խորհրդակցությունում քննության է առնվել նաեւ ԼՂ-ի բարդույթի հարցը,- հայտարարում է մեր լրատվությունը:- Եւ ընդունվել է ԼՂՀ եւ ՀՀ շահերին համապատասխանող որոշում:

ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարել է, թե վերջին օրերի հարաբերական անդորրը ռազմաճակատում ոչ միայն խիստ ձմռան արդյունքն է, այլեւ կռվող երկու կողմերի կայուն հավասարակշռության հետեւանքը, որի գիտակցումը հակառակորդի կողմից կարող է հիմք դառնալ հարցի քաղաքական լուծման համար:

✧ ✧ ✧

**Դեկտեմբերի 19-ին**, վերջապես, Ստոկհոլմի խորհրդակցությանը մասնակցած Դավիթ Շահնազարյանը (ՀՀ նախագահի լիազոր ներկայացուցիչ) պատմեց հանդիպման մանրամասները, եւ պարզվեց, որ այնտեղ եւս տեղի է ունեցել ԵԱՀԽ պարապ զրույցների նման մի խոսակցություն եւ նոր կամ էական որեւէ բան սպասելը զուր է:

Այնտեղ նախ քննել են Ադրբեջանի նախագահ Էլչիբեյի ուղարկած Ղարաբաղյան բարդույթի լուծման մի տարբերակ, որը մերժվել է:

Ապա ընդունվել է ոչինչ չտվող մի հայտարարություն:



Ահա մի հատված Նստաշրջանի՝ Ղարաբաղին վերաբերող որոշումից. «Կետ 14. Մենք խորապես մտահոգված ենք Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջը շարունակվող հակամարտությամբ: Հակամարտող կողմերին կոչ ենք անում հրադադար հաստատել: Մենք ամբողջությամբ պաշտպանում ենք ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի սկզբունքները, ինչպես նաեւ ԵԱՀԽ-ի ձեռնարկումներն ու որոշումները: Հավատում ենք, որ ԵԱՀԽ-ի խորհրդակցությունն անմիջական հնարավորություն կստեղծի հակամարտության խաղաղ կարգավորման համար, եւ սատար ենք կանգնում Հռոմի հանդիպման շրջանակներում սկսված աշխատանքները շարունակելու ջանքերին»:

**Դեկտեմբերի 22-ին** Ադրբեջանի նախագահ Էլչիբեյը պիտի ուղեւորվեր Ղազախստան, սակայն այցը հետաձգվեց, քանի որ իր հանրապետության գործերը վատ են Զանգելանի ու Կուբաթլիի շրջաններում: Զանգելանում մի շարք գյուղեր դեռեւս հայերի ձեռքում են գտնվում, եւ հնարավոր է, որ նոր բնակավայրեր եւս կորսվեն:

Իսկ ԼՂՀ լրատվությունը հաղորդում է, որ շուրջ մեկշաբաթյա անդորրից հետո ամսի 22-ին նորից դրությունը սրվել է հանրապետության սահմաններում. հրետակոծության են ենթարկվել Հադրութի շրջանի Էդիլլուն, Մարտունու շրջանի Բերդաշենն ու Աշանը, Ասկերանն ու շրջանի Ոսկեվազը եւ Խրամորթը: Կան սպանվածներ ու վիրավորներ:

Այսօր ՀՀ արտգործնախարարությունը բողոքի նոտա է հղել Ադրբեջանի արտգործնախարարությանը՝ անցած գիշերվա ընթացքում տանկերի ուղեկցությամբ Կրասնոսելսկի շրջան ներխուժած եւ 3,5 կմ այնտեղ խորացած թուրք ստորաբաժանման բռնարարքների կապակցությամբ:

✧ ✧ ✧

Մի խումբ հայեր Դոնեցկի շուկայում տեսել են թուրքերի կողմից վաճառքի հանված Շուշիի եկեղեցիներից մեկի զանգը եւ 3 միլիոն ռուբլի փրկագնով տեղափոխել Հայաստան:

✧ ✧ ✧

ԼՂՀ «Նորություններ» գործակալությունը հաղորդում է, որ հանրապետության տղամարդկանց 70 տոկոսը գտնվում է ռազմաճակատում: Իսկ բազմաթիվ բնակավայրերում այդ տոկոսը մոտենում է 100-ի:

Դեկտեմբերի 22-24-ին թուրքերի կողմից, հավանաբար, ծրագրված է եղել խարխլել հայկական դիրքերը ՀՀ սահմանային երկու գոտում. Հարավում՝ Կապանի կողմերում եւ Հյուսիսում՝ Կրասնոսելսկի շրջանում:

22-ին զինվորական մեծ ուժով ու հզոր տեխնիկայի ուղեկցությամբ թուրքերը գրոհ են ձեռնարկել Կրասնոսելսկի շրջանի վրա, նվաճել Վահան գյուղի դիմացի բարձունքը եւ պիտի բավական խորանային շրջանի տարածքում: Սակայն օրվա երկրորդ կեսին սթափված հայկական ուժերը թշնամու գրոհը ետ են մղել: Թուրքերը նահանջել են՝ մարտադաշտում թողնելով մի քանի տասնյակ դիակներ, 5 զրահամեքենա, 2 խփված տանկ: Թշնամուց առգրավվել է մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

Հայկական ուժերն ունեն միայն 6 վիրավոր:

**23-ին** ռազմաճակատում էական տեղաշարժեր չկային: Հեռուստատեսային էկրանին միայն մեկ նշանակալից բան կար. Ազգային դաշինք կազմող կուսակցությունների ներկայացուցիչներին՝ Աշոտ Նավասարդյանին, Հրանտ Խաչատրյանին, Վարդան Խաչատրյանին, Արամ Սարգսյանին ու Պարույր Հայրիկյանին կես ժամ խոսելու իրավունք էին տվել, սրանք էլ խոսում էին հանրապետության աղետալի վիճակի, ժողովրդի թշվառության, իշխանությունների՝ Արցախը մատաղ անելու գնով գլուխ պահելու աններելի քաղաքականության մասին, ասում էին՝ վերջապես հասկացել են, թե որքան կարեւոր եւ անհրաժեշտ է սահմանադրություն ունենալը, սակայն փորձում են սահմանադրության

փոխարեն ընդունել տալ կցկտուր թղթերի մի հավաքածու (իբր. նախագիծ է ներկայացվել, որն օրենքներից անփութորեն արված քաղվածքների մի փունջ է):

Բոլորն էլ միահամուռ էին այն կարծիքի մեջ, որ իշխանությունները ոչ միայն անկարող ու անձեռներեց են, այլեւ գործելու ցանկություն ու տրամադրություն չունեցող մարդիկ, որոնք այս երկիրը քարուքանդ են արել եւ դրանով էլ չեն գոհանում...

Հեռուստակենտրոնի ներկայացուցիչը, որ նրանց խոսեցնողն էր, մի քանի անգամ հարցրեց՝ ո՞վ է այս կես ժամի համար վճարելու: Իսկ որ իրենք ժամերով ցածրորակ հաղորդումներ են անում կամ Բլեյանի ու նրա տիպի ստահակներին են էկրան տրամադրում, կարծես այն ժամանակ նախապես վճարված է լինում:

**24-ին** էլ թուրքերը զինուժի ու տեխնիկայի մեծ կուտակումներով Զանգելանի շրջանից կատաղի գրոհ են ձեռնարկել Կապանի շրջանի Ագարակ-Եղվարդ գծի վրա: Այստեղ եւս մեր ինքնապաշտպանները արժանի հակահարված են տվել, դուրս քշել հիշյալ գյուղերի մոտակայքում հայտնված թուրքերին եւ, մեծ վնասներ պատճառելով, հեռու մղել մեր սահմաններից:

Երկու հարձակումների առիթով էլ ՀՀ ԱԳՆ-ը նոտա է հղել Ադր. ԱԳ նախարարությանը՝ կտրուկ զգուշացնելով, որ այդպիսի քայլերը միշտ էլ ստանալու են արժանի պատասխան, ուստի թուրքի կողմը խելոք կգտնվի, եթե հրաժարվի նման ավազակային վարքից եւ ջանա հակամարտության խնդիրը լուծել բանակցությունների ճանապարհով, խաղաղական միջոցներով:

Այս օրերին դրությունը բարդ է եղել նաեւ Լաչինի միջանցքի շրջանում: ԼՂՀ տարածքում առայժմ մարտական ակտիվ գործողություններ չձեռնարկելով, բացի նրանից, որ համարյա ամեն օր հրետակոծության է ենթարկվում Հադրութի շրջանի Էդիլլու գյուղը, Կուբաթլվի շրջանից թուրքերը մի քանի անգամ հարձակվել են հայոց պաշտպանական դիրքերի վրա եւ, հակահարվածների ենթարկվելով, ետ ճողոպրել: Իսկ դեկտ. 23-ի գիշերը ինքնապաշտպանության ուժերը Լաչինի մոտերքում վնասազերծել են թշնամու դիվերսիոն մի ջոկատ՝ բաղկացած 15 հոգուց, որը նպատակ ուներ ոչնչացնել էլեկտրագիծը, ԼՂՀ զրկել կենարար հոսանքից: Ջոկատի 13 հրոսակները սպանվել են, 2-ը գերի բռնվել: Գերյալները վկայում էին, թե ջոկատը հիմնականում կազմված է եղել ռուսական հատուկ նշանակության զորքերի մարտիկներից («Ազգ», դեկտ. 24):

Ադրբեջանի լրատվական մարմինները այս օրերին այն մասին են խոսում, որ հայերն անվերջ ռմբակոծում ու հրետակոծում են իրենց Աղդամն ու Ֆիզուլին, սահմանամերձ մյուս բնակավայրերը: Այս օրերին շատ են դիվանագիտական քաղաքական զրույցները ղարաբաղյան բարդույթի շուրջ: Հայաստանի կառավարական պատվիրակությունը՝ փիցեպրեզիդենտ Գ. Հարությունյանի գլխավորությամբ, Իրան է գնացել, եւ այդ երկրի առաջնորդ Ռաֆսանջանին, նրան ընդունելով դեկտ. 24-ին, կշտամբել է, թե ինչի՞ եք քաշքշում այդ Ղարաբաղի կռիվը, մի՞թե չեք հասկանում, որ դա միայն նոր զոհեր է կլանելու, ձեր ժողովրդին պատճառելու է անտանելի հարվածներ: Երեւի ասել է նաեւ, որ Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին ու դուք պիտի ձեռ քաշեք: Այդպես պիտի ասեր, որովհետեւ հակառակ դեպքում իրեն էլ կասեին՝ իսկ ինչո՞ւ դուք Ադրբեջանին չեք զիջում Ատրպատականը, երբ նա այդ երկրամասն իրենն է համարում, քանի որ այնտեղ ապրում են, այսպես կոչված, ադրբեջանցիներ:

ՀՀ արտգործնախարարի պաշտոնակատարն է վերադարձել Թուրքիա, Շվեդիա, Բելգիա կատարած ուղեւորությունից եւ մամուլի ասուլիսում պատմում է, որ երեք երկրներում ունեցած դիվանագիտական ժողովներում էլ ղարաբաղյան բարդույթը դիտվում է ոչ այնպես, ինչպես պահանջում է մեր շահը, ավելի ճիշտ՝ արդարությունը, նախ, որովհետեւ Ադրբեջանն ու իր մեծ եղբայր Թուրքիան են իրենց պահում ամենակատաղի ագրեսորի դերում, ապա՝ լրատվական մարմինները խուլ ու համր են ամենուրեք եւ արտաշխարհն այլեւս չունի ճշմարիտ տեղեկություններ իրավիճակի մասին, ընդունում է թուրք-ադրբեջանական հորդացող տեղեկությունը, ըստ այնմ էլ տրամադրվում (տե՛ս, օրինակ, «Երկիր» դեկտ. 25):



Ամերիկայում կատարած երկշաբաթյա ուղեւորությունից վերադարձել է ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը եւ նա էլ պատմում է, որ ԱՄՆ-ի քաղաքական մակարդակներում իրեն հրավիրած «Հայ դատ» կազմակերպության եռանդուն գործունեության շնորհիվ գիտեն ղարաբաղյան բարդույթի հանգամանքները, պատրաստ են օժանդակել նրա արդարացի լուծմանը, խոստանում են մարդասիրական բազմատեսակ օգնություն մարտնչող արցախահայությանը: Ինչ վերաբերում է ամերիկահայկական գաղութին, ապա այն ամենայն սրտացավությամբ հետեւում է Արցախի պայքարին, ամեն կերպ օժանդակում ռազմաճակատին եւ զորավիգ կանգնում նրա միջազգային արծարծումներին: Հետաքրքիր է, որ հինգ տարի շարունակ Արցախը միավորող ուժ է, ինչպես բոլոր սփյուռքահայերի, այնպես էլ հատկապես ամերիկահայ գաղութի համար («Ազգ», դեկտ. 25, «Երկիր», դեկտ. 25):

**Դեկտեմբերի 25-ի** լուրերի մեջ.

Զանգելանից թուրքերը երեկ գրոհ էին ձեռնարկել Եղվարդ-Ագարակ (Կապանի շրջան) ուղղությամբ: Մերոնք ուժգին հակահարվածով ետ են մղել:

Ասում են՝ ԵԱՀԽ-ի Ստոկհոլմում գումարված խորհրդաժողովում հայկական պատվիրակությունն զգալի հաջողությունների է հասել. ԵԱՀԽ-ը կունենա իր ներկայացուցչությունը Ստեփանակերտում, կարգելվեն ռազմական թռիչքները ԼՂՀ տարածքի վրա, ԼՂՀ պատվիրակությունը ճանաչվում է որպես առանձին կողմ (չնայած Թուրքիայի եւ Ադրբեջանի պատվիրակների աղմուկին):

Ստոկհոլմի բանակցություններին Հայաստանը ներկայացրել են Ս. Զոլյանն ու Ա. Բայանդուրը, ԼՂՀ-ը՝ ՀՀ ԳԽ-ի աշխատակցուհի Լարիսա Ալավերդյանը:

«Ազգը», հենվելով անգլիական «Ինդիպենդընթ» թերթի տեղեկության վրա, հրապարակել է լուր, ըստ որի Ժնեւում հայ, ադրբեջանցի, թուրք, ամերիկացի եւ ռուս դիվանագիտական թե ինչ ներկրայացուցիչներ հավաքվել, գաղտնի բանակցություններ են վարում Ղարաբաղի շուրջ («Ազգ», դեկտ. 25):

Ըստ թերթի նույն համարի՝ Ադրբեջանի նախագահի ռազմական խորհրդականներն են թուրք մի բարձրակարգ հրամանատար՝ Յաշար Դեմիրբուլաքը եւ 10 այլ սպաներ: Բաքվում օրըստօրե ծավալվում է համաթուրանականության գաղափարախոսությունը, որի առաջնորդ Ալփարսլան Թյուրքեշի աշակերտ, Ադր. ԱԳ նախարար Համիդովի ղեկավարությամբ այստեղ տպագրվում է «Բոզ քուրդ» («Գորշ գայլ») թերթը:

**Դեկտեմբերի 26-ին** Ադրբեջանի «Արազ» լրատվական գործակալությունը թուրքերեն եւ հայերեն հայտարարություն է հրապարակել՝ հայկական կողմին առաջարկելով զինադադար անել եւ սկսել բանակցություններ Ղարաբաղի բարդույթը լուծելու համար:

**Դեկտեմբերի 27-ին** մերոնք ճշգրտել են նախորդ օրն արած առաջարկությունը զինադադարի մասին, այն պիտի լինի մինչեւ 29-ը եւ բանակցությունները պիտի վարվեն թուրքերի ու ԼՂՀ ներկայացուցիչների միջեւ, առանց ՀՀ պատվիրակության:

Վերջապես թուրքը հասկանում է, որ իր դեմ կանգնած է արցախյան իրավական-վարչական միավորը: Ընդունեց, բայց մինչեւ ե՞րբ...

**Դեկտեմբերի 28-ին** հաղորդեցին, որ Ադրբջեջանի կառավարությունը 1 միլիոն ռուբլի է հատկացրել Մարտակերտը վերականգնելու, հատկապես նրա կոնյակի գործարանը գործի գցելու համար: Թող վերականգնեն իրենց ավերած գործարանը, շուտով դա մերոնց պետք է լինելու:

Ադրբեջանն Իրանի հետ պայմանավորվել է, որպեսզի նրա տարածքով, Արաքսի ափի երկարությամբ, երկաթուղի եւ ավտոճանապարհ անցկացնի՝ Նախիջեւանի հանրապետությունը շրջափակումից փրկելու նպատակով:

Իսկ ռազմաճակատում կասկածելի անդորր է:

**Դեկտեմբերի 29-ին** թեժ մարտեր են եղել Հայաստանի սահմանային շրջաններում, իսկ ԼՂՀ-ի տարածքում տիրել է համեմատական անդորր: Միայն մեկ հարձակում է գրանցվել Լաչինի միջանցքի շրջանում, ուր Արցախի ինքնապաշտպանները ետ են մղել թշնամուն, պատճառելով տեխնիկայի ու կենդանի ուժի մեծ կորուստներ: Թուրքերն էլ հա-

սան, մտածեցին, որ արդեն կատարել են գերխնդիրը, եւ իրենցից առաջ գոյություն ունեցած պետությունը քանդվեց, որովհետեւ հայտնվեց ոչ թե անկախության, այլ անտիրության մեջ։

Այսօր, իբր թե, գոյություն ունեցող պետության մասին են այս ցավագին դատողությունները։ Սակայն աստիճանաբար հայացքը պարզվում է, եւ դառնորեն գոչում է. «Պետությո՜ւն լիներ, պետության շահը պաշտպանողնե՜ր լինեին... Ազգային-ազատագրական պայքարի ելած Հայաստանն այսօր նման է առք ու վաճառքի մի հսկայական բազարի»։

Ուրեմն, պետություն չկա, պետության շահը պաշտպանողներ չկան։ Իսկ նրանք, որ բարձր ու բարձրագույն աթոռներ են զբաղեցնում, գոնե ունենայի՜ն վերջին անհրաժեշտ բանը՝ խիղճը, քաշվեին մի կողմ, գուցե թե փրկարարներ հայտնվեին եւ աղետյալ ազգի համար գտնեին փրկության ճանապարհ...

Կար ժամանակ, որ շատերի բերաններին թեւավոր խոսք կար՝ քաղցած լինենք, բայց անկախ։ Խաբվողներ էլ կային, որ մտածում էին, թե սա անկախության ուխտյալ զինվորի խոսք է։ Երբ իրականում անուղղա ստրկամիտներն էին ստեղծել, նրա՛նք, որ անպայման մի բանի առաջ պիտի կռանան մինչեւ գետին եւ այդ ժամանակ էլ դատարկ խոսքի առաջ էին ցուցադրում իրենց ողորմելիությունը։ Իսկ անկախության իսկական զինվորը մաքառումով է հասնում իր ուզածին, խելոք ու հիմնավոր քայլերով, իր կորցրած հողը վերադարձնելով (ոչ թե ցաք ու ցրիվ անելով), իր ունեցած հարստությունը բազմապատկելով եւ ոչ թե քարուքանդ անելով։

Ամեն պարագայի՝ «Եթե այսպես պետք է արվեր, անկախությունը մեր ինչի՞ն էր պետք»։ Ո՛չ թե անկախությունը, այլ այսպիսի՛ անկախությունը։

Բայց ինձ խոսել ստիպողը Ղարաբաղի խնդիրն էր։

Այստեղ էլ Սարդարյանը ցույց է տալիս որոշ քայլերի ճշմարիտ ըմբռնողություն։ 1989-ի դեկտեմբերի 1-ի անիրական ու անիմաստ որոշումը՝ մինչեւ այսօր չմերժված լոկ այն պատճառով, որ ընդունվել է բացառապես Լեւոն Տեր-Պետրոսյանի նախաձեռնությամբ։ Այս տարվա հուլիսի 8-ի իսկապես անսկզբունք, երեսպաշտական որոշումը, որի ինչ նշանակելն իրոք առեղծված պիտի մնա։

Իսկ ո՞րն է իր եւ «Նոր ուղի» կազմակերպության դեղատոմսը, ի՞նչ փրկություն են առաջարկում արցախահայության համար։ Ներկայացված է ութ կետից բաղկացած, ընդհանուր առմամբ բարետես մի ծրագիր։ Բարետես, որովհետեւ կազմված է առհասարակ ընդունելի, միջազգային օրենքների, ազգամիջյան մարդասիրական հարաբերությունների ոգու հետ համերաշխ բառերով ու կապակցություններով։ Ի՜նչ արժե հենց առաջին կետը. «Հայաստան-Ադրբեջան դրացիական հարաբերությունների, ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորումը, Հայաստան-Ադրբեջան տնտեսական ու քաղաքական փոխշահավետ համագործակցության վերականգնումը, դրա հետագա զարգացումն ու ծավալումը երկու պետությունների գոյատեւման ու հետագա զարգացման անհրաժեշտ նախապայմանն է»։

Եւ մնացածն էլ՝ այս ընդունելի, բարեկիրթ, հանրամատչելի օրենսդրական ոգով։ Սակայն այնպես է կարծվում, թե մեր այս «Նոր ուղու» դեմ ոչ թե Ադրբեջանն է կանգնած, այլ մի նոր Շվեցարիա, որի հետ հարցերդ լուծելու համար բավական է լինես օրինապահ եւ ցանկություններդ շարադրես հասկանալի ձեւով։

Կետերի մեծ մասում Ղարաբաղի հարցի խաղաղ կարգավորման պահանջն է, որ պիտի իրականացնեն Հայաստանն ու Ադրբեջանը, թող որ «Լեռնային Ղարաբաղի իշխանությունների անմիջական մասնակցությամբ», «առանց նախապայմանների»։

Բայց չէ՞ որ Ադրբեջանը մի անփոփոխ նախապայման ունի եւ միշտ դեմ է տալիս Հայաստանի քթին. որպեսզի սա, բանակցությունների սեղանի մոտ նստելուց առաջ, մոռացած լինի Ղարաբաղի անունը։ Չէ՞ որ նա իր հին ու նոր, մեծ ու փոքր բոլոր ղեկավարների բերաններով մռնչացել է, թե Ղարաբաղն իր ներքին հարցն է, ինչպես ուզենա, այնպես էլ պիտի լուծի եւ երբեք ու ոչ մի գնով թույլ չի տա, որ արտաքին որեւէ ուժ



խառնվի իր անկախ, ինքնիշխան պետության ներքին գործին։

Իսկ Ղարաբաղի հետ, կարծում եք, ուզո՞ւմ է բանակցություններ վարել։ Մի շաբաթ շարունակ մանվածապատ հաղորդումներ էին լինում, թե այսպես ու այսպես, կխոսեն, կպայմանավորվեն՝ առանց խառնակիչ Հայաստանի... Մեկ էլ հանկարծ հայտնի դարձավ, որ ղարաբաղցիների հետ հանդիպման գնացած իրենց խաղաղության աղավնուն ու անգլիացի կվակերներին Ֆիզուլիում ձերբակալել եւ քաշ են տվել Բաքու (տե՛ս «Ազգի» նույն համարը)։

**Դեկտեմբերի 31.** Վերջին մեկ տարվա ընթացքում մեր թերթերն ու մյուս լրատվական մարմինները շատ են խոսում ամերիկացի Պոլ Գոբլի մասին, որը մի հրապարակմամբ անցյալ ամռանը փորձեց իր մասնակցությունը բերել ղարաբաղյան բարդույթի լուծմանը (Թաֆթս համալսարանի Ֆլեչըր դիվանագիտական դպրոցի հանդեսի 1992 թ. ամառային համարի էջ 18-26)։

Գոբլն անցյալում «Ազատություն» ռադիոյի ուսումնասիրական բաժնի վարիչի տեղակալն է եղել, ապա աշխատել է ԱՄՆ-ի պետական քարտուղարությունում, հիմա էլ ոչ պետական Կարնեգի հիմնարկի անդամ է (տե՛ս «Երկիր», 1992, դեկտ. 31)։

Ինչո՞ւ այս մարդը հանձն է առել այնքան իր գործից հեռու մի հարցի լուծման խնդիր, եւ որքա՞ն իրավասու է նրա հանձնառությունը, մանավանդ՝ ի՞նչ է առաջարկում իբրեւ հարցի լուծում։

Անմիջապես դառնանք նրա առաջարկի հիմնական մասին. ասում է՝ պետք է Լեռնային Ղարաբաղի մի մասը՝ Լաչինի միջանցքով հանդերձ՝ տալ Հայաստանին, իսկ «Նախիջեւանի ու Ադրբեջանի միջեւ հողային կամուրջը» (Զանգեզուրը՝ Կապանով ու Մեղրիով) տալ Ադրբեջանին։ Այսինքն, հայկական մեծ հողը տալ՝ հայկական մի փոքր հող ձեռք բերելու համար։

Կարելի էր այս քաղաքական հիմարությանն ուշադրություն էլ չդարձնել, հատկապես նկատի առնելով հավակնոտ մարդու կատարյալ անտեղյակությունը նույնիսկ քննարկվող հարցի աշխարհագրական վիճակից (օրինակ, գտնում է, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի համար ունի ամենակենսական նշանակություն, քանի որ նրա գետերով է ապրում հանրապետության մայրաքաղաք Բաքուն)։ Կարծում եմ՝ չենք խոսի միջազգային օրենքների, պարզապես մարդկային տրամաբանության այնպիսի ոտնահարումներից, որպիսին ցայտուն օրինակը՝ «Ժողովրդավարական կամ ազգային ինքնորոշման իրավունքի սկզբունքի վրա հիմնված լուծումի մասին խոսելն անգամ ավելորդ է» (տես «Երկրի» հիշյալ համարը)։

Բարդույթը լուծողի «տեղյակության» աստիճանը որոշելու համար բավակա՞ն չէ հիշել թեկուզ այս մեկը։ Ասում է. Ղարաբաղի հայության թշնամանքն Ադրբեջանի դեմ սկսվել է նրանից, որ Գորբաչովյան հակաալկոհոլային արշավանքի ժամանակ մարզի խաղողի այգիները եւս ոչնչացվել են։ Եւ սա էլ միակ պատճառ է դարձել, որ սկիզբ առնի ու բորբոքվի ազգամիջյան գժտությունը։

Ճիշտն ասած, այսօրինակ հրապարակումներին անդրադառնալը միանգամայն անիմաստ ու անօգտակար բան է, եւ դրանք որքան շուտ մոռացվեն, այնքան ավելի լավ։ Սակայն ես հիշում եմ, թե ինչպես մեզնում ոմանք Գոբլի «ծրագիրը» ոչ միայն շատ մի կարեւոր բանի տեղ էին դնում, այլեւ այն կապում էին մեր լավ բարեկամ Գալինա Ստարովոյտովայի, նույնիսկ Անդրեյ Սախարովի անվան հետ («Մունետիկ» շաբաթաթերթ, «Ազգ», 1992, նոյեմբ. 10 եւն)։

Ստարովոյտովան այս առթիվ արդեն լայն բացատրություն է տվել՝ հերքելով իր որեւէ առնչությունը Գոբլի անմիտ ծրագրին, ցույց տալով, որ այն խորթ է արցախահայության դատին բերած իր տեւական մասնակցության ոգուն։ Նա միաժամանակ տեղեկացրել է, թե, անձամբ հանդիպելով Գոբլի հետ, նրան եւս հաղորդել է իր կարծիքը, վիճել հետը, ապացուցել, որ այդ ծրագիրը հակասում է միջազգային օրենքներին, ոտնահարում է հայ ժողովրդի արդար իրավունքը, ընդունելի չէ նաեւ Իրանի համար, քանի որ վերացնում է Իրան-Հայաստան սահմանակցությունը (տե՛ս «Ազգի» հիշյալ համարը)։

⟡ ⟡ ⟡

Ռազմաճակատի առումով հաջող ու ձախողակ, իսկ կյանքում համարյա բոլոր կողմերով անհաջող ու տնանկ այս տարին փակելիս դառնությամբ պիտի արձանագրենք մի երեւույթ, որ մեր համազգային խայտառակությունն է եւ, եթե նոր տարվա առաջին իսկ ամիսներին չվերացվի, ահռելի աղետ, ցավ եւ կործանում կբերի Արցախին, հինգ տարվա տառապանքով, զրկանքներով ու հերոսական ոգորումով ընթացած նրա գոյապայքարին:

Մի երկու շաբաթ առաջ մեր երիտասարդ շնորհալի լրագրող Վարդան Դեւրիկյանն էր տագնապով ազդարարել, երեկ էլ Վարդգես Օվյանը գրեց («Երկիր», 1992, դեկտ. 30), թե Հայաստանից Արցախ տանող Լաչինի միջանցքը դարձել է մաքառող լեռնաստանը կողոպտելու, նրան կենսական վերջին միջոցներից զրկելու, կռվողներին բարոյալքելու, նրանց թիկունքը ոչնչացնելու ճանապարհ: Երեւանից եւ հանրապետության մյուս վայրերից Արցախ հասած տասնյակ ու տասնյակ բեռնատար մեքենաների տեր, նոր ժամանակի ձեռներեցները չնչին գներով առնում են արցախյան գյուղի եղած-չեղածը, որպեսզի տանեն, ուրիշ տեղերում տասնապատիկ թանկ վաճառեն, հարստանան, ուռճանան: Այս ճանապարհով Արցախ է մտնում Երեւանում արդեն տիրապետող ազգակործան չարչիությունը, եւ Վարդգես Օվյանը դրանից սարսափած՝ փրկության ուրիշ ճանապարհ չգիտե, քան ողջ ազգին դիմելը. «Զարթնի՛ր, Հայաստա՛ն»:



# 1993

1993 թ. առաջին օրը խաղաղ անցավ Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում:

Նույնն էր նաեւ երկրորդ օրվա վիճակը:

**Հունվարի 3-ին** արդեն Արցախում, իբր, «համեմատական անդորր էր», իսկ Հայաստանի սահմանային երկու շրջաններ՝ Իջեւանն ու Տաշիրը, ենթարկվեցին հրետակոծության:

Թուրքերն էլ հաղորդում էին (մոսկովյան հեռուստատեսությամբ), թե հայերն են հրետակոծել իրենց շրջանները, եւ ընդգծում էին երկու կարեւոր կետ՝ Գետաբեկի շրջանի Նովոսարատովկա եւ Նովոիվանովկա ռուսաբնակ գյուղերը: Իհարկե, Ղարաբաղի կողմերում էլ՝ Աղդամն ու Ֆիզուլին:

Մոսկվայից հաղորդեցին, որ Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի պրեզիդենտներ Ելցինն ու Բուշը համատեղ հայտարարություն են հրապարակել՝ առաջարկելով գտնել ղարաբաղյան բարդույթի կարգավորման ուղիներ: Երեւի հերթական մի աչքակապություն, որը, մեծ տերությունների ղեկավարների «խաղաղասիրական ու մարդասիրական զգացմունքների» վկայությունները հանդիսանալով, հարցը լուծելուն չպիտի օգնի ոչ մի չափով:

Հաջորդ օրերին եղան այս հայտարարության արձագանքները. նախ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը ողջունեց այն՝ արձանագրելով, որ ԵԱՀԽ-ի համապատասխան փորձերը ձախողվել են, ուրեմն ժամանակն է, որ հզոր տերություններն իրենց ձեռքը վերցնեն տարիներ շարունակ կրակի բերանում գտնվող ղարաբաղյան հողին խաղաղություն բերելու նախաձեռնությունը... Ապա Ադրբեջանի ու Հայաստանի կառավարություններն արձագանքեցին՝ հայտնելով իրենց պատրաստակամությունը խաղաղ բանակցությունների գնալու:

**Հունվարի 4**. Մեր հեռուստատեսության լրատուները մի մաշված ու անվտանգ արտահայտություն են սերտել իրենց անբան ծուլությունը քողարկելու համար. ասում են՝ ԼՂՀ-ում եւ Հայաստանի սահմաններում հարաբերական անդորր է:

Իսկ մոսկովյան հեռուստատեսության հաղորդավարը հայտնեց, որ հենց այսօրվա համար Ադրբեջանի պաշտպանության մինիստրության լրատվությունից զանգատվում են, թե հայերը Ֆիզուլու վրա ձեռնարկել են մեծ հարձակում՝ օդուժի ուղեկցությամբ: Եվ հայերն էլ հայտնել են, թե թուրքերը Գետաբեկի շրջանից հրետակոծել են Կրասնոսելսկի շրջանի բնակավայրերը:

Ուրեմն, հայերն Արցախում արդեն ռազմական օդուժ ունեն եւ նրանով են իրականացնում իրենց նոր հարձակումը: Այս դեպքում թուրքերն ու՞ր պիտի թաքցնեն իրենց Աղդամը, Ֆիզուլին, Բարդան ու Եվլախը: Էլ չեմ խոսում Սարսանգի մասին, որի մի ծանր ռմբակոծությունը կարող է քշել-Կասպից ծովը լցնել ամբողջ հարավ-արեւելյան Ադրբեջանը:

⟡ ⟡ ⟡

Այսօր ԼՂՀ իրավապահ մարմինները Ստեփանակերտ-Լաչին -Գորիս ճանապարհին բռնել են Գորիսի շրջանի մի շարք բնակիչների, որոնք Ղարաբաղից դուրս էին տանում 150 տոննա կոնյակ ու սպիրտ: Կոնյակ ու սպիրտ, որոնք շրջափակման պայմաններում կաթվածահար դարձած Արցախի համար ունեն բացառիկ կենսական նշանակություն. «Ռուսաստանում եւ ԱՊՀ ուրիշ երկրներում մենք դրանք փոխանակում ենք վառելիքի ու

րին կարգադրությամբ նախապես վերացվել էր Շահումյանի շրջանի ռազմագիտական կարեւոր կետերի ականապատումը, որպեսզի թշնամին այնտեղ ոչ մի վնաս չկրի, եւ Մարտակերտն ու շրջակա խոշոր բնակավայրերն էլ նախապես դատարկվել են իրենց տերերից, որպեսզի պաշտպաններն զբաղված լինեն հիմնականում հարազատների գաղթով ու տեղափոխման հոգսերով.... Եւ թշնամին էլ այստեղ առաջ գա սրընթաց երթով, առանց որեւէ դիմադրության հանդիպելու...

Բայց ո՞րն էր պատճառը: Արցախն ի՞նչ մի ճակատագրական հանցանք էր գործել, որ ենթարկվեց այսքան դաժան պատժի, ունեցավ մի կորուստ, որը, ինչպես կարելի էր դատել նույնիսկ այն օրերին, լինելու էր անդառնալի: Արցախը նախընթացին, ի հակակշիռ ՀՀ պրեզիդենտ Լեւոն Տեր-Պետրոսյանի ու նրա կամակատարների ցանկության, անկախացել էր, հայտարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, այդ առթիվ ընդունել ու հրապարակել հռչակագիր, հետագայում էլ համարձակություն էր ունեցել իր Գերագույն խորհրդի նախագահ ընտրելու ոչ թե Տեր-Պետրոսյանի երաշխավորածին, այլ Արթուր Մկրտչյանին, որ դաշնակցության համակիրներից էր եւ ոչ թե Տեր-Պետրոսյանի ՀՀՇ-ներից: Եվ, այսքանով էլ չգոհացած, պատերազմի դաշտում կատարել էր ինքնուրույն-ինքնագլուխ այնպիսի քայլ, ինչպիսին Շուշիի գրավումն ու Լաչինի միջանցքի բացումը՝ մի այնպիսի պահի, երբ ինքը՝ Լեւոն Տեր-Պետրոսյանը, Անկարայի տերերին վստահեցրել էր, թե Հայաստանն Ադրբեջանից ոչինչ չի ուզում, Ղարաբաղը կմնա այդ Ադրբեջանի կազմում, իսկ Թեհրանում էլ այդ նույն ոգով բանակցություններ էր վարում Պարսկաստանի ու Ադրբեջանի ղեկավարների հետ:

Այս էր Արցախի, նրա կողքահաս ժողովրդի ու սրա արժանավոր ղեկավարության հանցանքների փունջը, եւ այսքանի համար էր, որ Լեւոն Տեր-Պետրոսյանն ու նրա ամենավստահելի Բաբկեն Արարքցյանը հասցրին ամենադաժան պատիժը: Պատժեցին, որպեսզի անուղղելիները հասկանան, որ իրենք ներել չգիտեն, հանդուրժել չեն կարող, եթե նույնիսկ հարցը վերաբերում է համազգային շահերին ու արժեքներին:

Արարքցյանն այսօրվա ասուլիսին եւս չմոռացավ Շուշիի գրավման փաստը: Այն համարեց «մեր քաղաքականության դեմ կատարված արկածախնդրություն»: «Թեհրանում Հայաստանի Հանրապետության նախագահն էր խաղաղության ու փոխըմբռնումի բանակցության նստած, իսկ այստեղ մերոնք բռնագրավումներ էին անում»: Ստացվում էր, որ Արցախի ինքնապաշտպանները նենգավոր հարված են հասցրել Լեւոն Տեր-Պետրոսյանի թիկունքին: Իսկ որ նա այդպիսի բանակցություններ էր վարում Մոսկվայում ու Փարիզում, Նյու Յորքում ու Կիսլովոդսկում, իսկ Շուշին անընդհատ հրետակոծում ու ռմբակոծում էր Ստեփանակերտը... Ամեն օր, աստծու ամեն օրը կործանվում էին լեռնաստանի մայրաքաղաքի շենքերը, վիրավորվում ու մեռնում էին բնակիչները, իսկ նրանք, որ դեռեւս կենդանի էին ամիսներով արեւի լույս չէին տեսնում, որովհետեւ քաղցի, ցրտի ու խավարի գերին էին խուլ ապաստաններում... Լեւոն Տեր-Պետրոսյանն ու բանակցությունների նրա զրուցակիցները, Բաբկեն Արարքցյանն ու մյուս իրավապաշտպանները երբեւէ պիտի՞ ընդունեն, որ սրանք եւս մարդկային իրավունքներ ունեն, նաեւ դրանք ներկայացնելու, պաշտպանելու իրավունք...

Այստեղ ես չպետք է քննության առնեմ հարցազրույցի ժամանակ Արարքցյանի տված բոլոր պատասխանները, նրանցում եղած, իր դիրքին չվայելող հայտարարություններն ու պնդումները: Օրինակ, արժե՞ հակաճառել, երբ մարդը համոզված է, թե Լեռնային Ղարաբաղի բարդույթի առթիվ Ռուսաստանի ու ԱՄՆ-ի պրեզիդենտների երեկ-մեկել օրն արած կոչը (ըստ էության ո՛չ մի հարց չլուծող, ո՛չ ոքի նույնիսկ ոչինչ չպարտադրող այդ կոչը) Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության խոշոր հաղթանակն է: Կամ ընդդիմության ներկայացուցիչներն իրենց մասին քննադատական խոսքեր են ասել, եւ ինքը գտնում է, որ կոմունիստներն ու նախկին քաղբանտարկյալները հիմա խոսքները մեկ են արել (երեւի արդեն մոռացած, որ ինքն ու դասակիցները եւս քաղբանտարկյալներ են եղել):

Սրանք եւ սրանց նման ուրիշ պնդումները թողնենք իր խղճին: Բայց ի՞նչ ասենք



իր Գերագույն խորհրդի գործունեության եւ մանավանդ ընդունած որոշումների ու օրենքների փառաբանության մասին: Իբր, ուրիշ պետությունների խորհրդարանները հենց մի գլուխ շտապեցնում են, որ մեր Գերագույն խորհուրդն իր ընդունած օրենքներն անմիջապես ուղարկի, որպեսզի նրանք ունենան ձեռքի տակ, ընդօրինակեն: Իսկ թե մեր այդ որոշումներն ու օրենքները, այդ ի ծնե մեռյալ թղթերը, ի՞նչ դեր են ունեցել այս հանրապետության համար, որի ժողովուրդը խեղդվում է ապօրինությունների ու պետական կարգի իսպառ բացակայության պայմաններում, այդ մասին ո՛չ մի խոսք:

Թղթակիցը խոսում է անհատի անպաշտպան վիճակից, մամուլի դերի ու ներգործության բացակայությունից, իսկ պ-ն Արարքցյանը կշտամբում է, թե ոմանց հիշողությունը կարճ է, մոռանում են, թե ինչպես մամուլում թույլ տված անմեղ մի դիտողության համար մարդկանց կալանքի էին ենթարկում, քշում բանտ ու աքսոր: Իսկ այսօր սիրտդ ինչ ուզի, տպում են եւ դեռ կարող ես դժգոհ է՞լ լինել:

Սրանք այսպես: Բայց եղան խոսքեր էլ, որոնցից հետո արդեն դժվար էր որոշել՝ ծիծաղե՞ս թե՞ լաս:

Նոր իշխանությունների ակնառու վաստակը նշելու եւ շեշտելու համար ասաց՝ դուք երբեւէ համեմատո՞ւմ եք մեր մշակույթի մակարդակը՝ այսօրվա՛ եւ, թեկուզ, մի քանի տարի առաջ եղածի՛:

Սկզբում մի պահ մտքովս անցավ, թե երեւի մեր ԳԽ-ի նախագահը մշակույթ ասելիս հասկանում է միանգամայն ուրիշ բան, քան մեր՝ հասարակ մահկանացուներիս պատկերացրածն է: Որովհետեւ, եթե ինքն էլ մշակույթ ասելիս իսկական մշակույթը նկատի ունենար, ապա պիտի խոստովաներ, որ վերջին երկու-երեք տարում իրենք կատարելապես աջողացրին այն սպանել կամ հասցնել մի վիճակի, որը բժշկության մեջ կոչվում է կլինիկական մահ, եւ որից, կարծես, հազվադեպ է փրկություն լինում:

Հետաքրքիր էին մեր հանրապետության անկախության վերաբերյալ արտահայտած պատկերացումները: Նախ, մոլորության մեջ են այն մարդիկ, որոնք մտածում են, թե մեզ անկախությունը պատրաստի տրվել է, եւ ոչ թե մենք նվաճել ենք այն: Այսպես հայտարարեց, եւ հարց տվողն էլ գոհացավ, առանց ստիպելու, որ բացատրվի, թե ումնից ենք նվաճել, ինչպե՛ս, եւ հիմա այն ինչպիսի՞ ձեւ, տեսք, բովանդակություն ունի: Այդ ի՞նչ պետական անկախություն է, որի տեր պետությունը դռնեդուռ ընկած մուրում է հաց, էլեկտրաէներգիա, գազ, նավթամթերք, ամեն-ամեն ինչ, իսկ ենթակա ժողովուրդն էլ տանջվում է քաղցից, ամեն ինչի բացակայությունից, հարազատների բերած բարոյական, տնտեսական ու քաղաքական աղետներից:

Ի դեպ, մեծահոգության ապացույց էլ տվեց պ-ն Արարքցյանը, ասաց՝ ժողովուրդը եթե չի հավանում ձեռք բերված անկախությունը, կարող է նոր հանրաքվե անել, հրաժարվել նրանից:

Այո, այսպե՛ս, բայց կարեւոր էր նաեւ բացահայտ զգուշացումը, թե անկախությունը, որին մենք որդեգրվել ենք, պարտադրաբար ուղեկցվում է զրկանքներով: Հնարավոր է, որ մենք հայտնվենք ավելի վատ վիճակներում, քան այժմ կանք...

Ուրեմն, երբ պետականորեն ձեռքներս մեկնած հաց ենք մուրում հեռու-մոտիկ արտասահմաններում՝ Թուրքիայից մինչեւ Չինաստան, քաղաքներում ու գյուղերում կանգ են առել արտադրությունը, եւ գործազուրկ է ամբողջ ժողովուրդը, բացի փողոցի չարչիներից, որոնք անխղճորեն կողոպտում են արյունակիցներին, երբ ձմռան այս դաժան ցրտին ու ընչազրկությանը փորձում ենք դիմանալ՝ գործադրելով վերջին ջանքե՜րը... Սա դեռ վերջին սահմանը չէ, հնարավոր է եւ առավել վատթա՜րը:

Պետական այրերը խոսքը քամուն տալու սովորություն չունեն: Երեւի սա էլ ճշմարտություն է, եւ մենք պարտավոր պիտի լինենք դիմանալ ու հաղթահարել նաեւ գալիք այդ առավել վատթար վիճակները: Պատահակա՞ն է, որ մեր այսօրինակ անկախության հեղինակները նաեւ պետական հիմն ընդունեցին մի երգ, որի խոսքի առաջին տողն է՝ «Մեր հայրենիք թշվառ, անտեր»:

վային Ադրբեջան։ Գնացել էր հայկական շարժման դեմ ադրբեջանական գործոնը բորբոքելու, զորացնելու։ Վերադարձավ ու իրենց թերթերում խոստովանեց, որ Հարավային Ադրբեջանը բոլորովին էլ Ադրբեջան չէ, եւ նրա բնակիչներն իրենց ադրբեջանցիներ չեն ճանաչում։ Ասում էր՝ ես նրանց բացատրում էի մեր ազգակցությունը, միավորման ծրագրից էի խոսում, միասնաբար գործելու խնդիրներից, իսկ իրենք այդ ամենի դեմ խուլ ու համր էին, ոչինչ չէին ընդունում...

Հիմա Աբուլֆազ Էլչիբեյի խոսքը սրանց է վերաբերում, այս «խուլ-համրերի» Ատրպատականի ու իր Ադրբեջանի միավորմանը, որ համարում է անխուսափելի։ Իսկ մի ուրիշ հարցազրույցում՝ տեղի ունեցած ռուսական «Նովոյե վրեմյա» հանդեսի թղթակցի հետ, նույն Էլչիբեյն Արցախ-Ղարաբաղի ոչ թե միավորումն իր մայր Հայաստանին, այլ վարչական ինքնավարություն ստանալն անգամ համարում էր անիրականալի, որովհետեւ, իբր, դա հակասում է Ադրբեջան հանրապետության շահերին, խախտում է նրա ամբողջականությունը։ Ատրպատականի բաժանումն Իրանից ու միացումը նրա հետ ոչ մի առնչություն չունեցող Ադրբեջանին՝ անհրաժեշտ ու անխուսափելի է, իսկ միջազգային իրավական նորմերով Ադրբեջանից բաժանված եւ արդեն հինգ տարի իր ինքնուրույնությունը հնարավոր ու անհնար միջոցներով պաշտպանած Ղարաբաղի համար դա ոչ միայն անհնար, այլեւ դատապարտելի է։

ԵՎ այսպիսի «տրամաբանությունը» հրապարակում են, թմբկահարում՝ առանց ամոթ զգալու, առանց վախենալու ծիծաղի առարկա դառնալուց։

**Հունվարի 14-ը**, հին տոմարով նոր տարվա առաջին օրը, ցույց տվեց, թե թուրքն ինչ էր անում՝ նախորդ շուրջ մեկ ամսվա ընթացքում «համեմատական անդորր» խաղալով։ Դեռ գիշերն սկսելով սահմանային ամբողջ գոտու ռմբակոծությունը «Գրադ» կայանքներից, այն շարունակեց նաեւ առավոտյան՝ կրակի թիրախ դարձած հատկապես Հադրութի շրջանի Էդիլլուն, Մելիքաշենը, Մարտունու շրջանի Կարմիր շուկան, Ասկերանի շրջանի Խանաբաղը, Քառագլուխն ու Սարդարաշենը, Մարտունու եւ Ասկերանի սահմանապահ դիրքերը։ Աղդամի հեռահար հրետանիներն այդ ընթացքում կրակի տակ էին պահում հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը։ Այստեղ զոհվել է մեկ խաղաղ բնակիչ, կան ավերածություններ։

Մի քանի օր առաջ լիովին ազատագրված Գեւորգավանի կողմերում, Ուրյան բլրի ուղղությամբ, 13-ին թուրքերը կատաղի հարձակման էին անցել, նվաճել մի քանի դիրք։ 14-ին մերոնք հակահարձակմամբ վերանվաճեցին այդ դիրքերը՝ թշնամուն պատճառելով զինուժի եւ տեխնիկայի մեծ կորուստներ։

Թուրքերն այս անգամ եւս գործի են դրել ռազմական օդուժը. այսօր իսկ մի քանի ինքնաթիռներ պարբերաբար խախտել են հանրապետության սահմանները, հետախուզական թռիչքներ կատարել Ստեփանակերտի ու Մարտունու վրա։ Կեսօրից հետո նրանք արդեն կասետային ռումբեր են գցել Խնձրիստան գյուղի տարածքում։

Բուռն մարտեր են գնում Լաչինի միջանցքի շրջանում։ Այսօր առավոտյան սկսված բախումը շարունակվում է, մերոնք համառորեն դիմակայում են թշնամու ճնշմանը։ Թշնամին այստեղ մեծաթիվ կորուստներ ունի։ Մերոնցից երեք զինվոր զոհվել են, հինգը վիրավորվել։

Մարտեր են եղել նաեւ Մարտակերտի շրջանի Ղազանչի ու Կիչան գյուղերի մոտակայքում, ուր մերոնք հաջողությամբ ետ են մղել հակառակորդի հարձակումը։

Իջեւանի շրջանում եւս, երկար ժամանակ լռելուց հետո, թշնամին շարժվել է. երեկ ասկյարների մի խումբ փորձում էր մտնել Բերքաբեր գյուղը, ինքնապաշտպանության ուժերի հարվածներից ետ է ճողոպրել՝ դաշտում թողնելով 7 սպանված եւ 3 վիրավոր։

Ադրբեջանական լրատվությունն այսօր հաղորդեց, թե, իբր, իրենց զորամասերին հաջողվել է հայերին դուրս մղել Ֆիզուլու շրջանում գրաված մի քանի բնակավայրերից։

Այս եւ ուրիշ ռազմաճակատային լուրերին տեղեկանալուց հետո դժվար չէ եզրակացնել, թե Ադրբեջանի կառավարներն ինչպես են արձագանքում Բուշի ու Ելցինի կոչին՝ հրապարակորեն այն ողջունելով, իսկ ճակատում նոր կատաղի մարտեր ձեռնարկելով։



◇ ◇ ◇

Հունվարի 14-ի-լույս 15-ի գիշերը Ստեփանակերտում ձերբակալել են «Ազգի» սեփական թղթակից Վահրամ Աղաջանյանին՝ նրան մեղադրելով նորաստեղծ հանրապետության իշխանության մարմինները վարկաբեկելու մեջ, որի համար, իբր, հասնում է 30 օրվա բանտարկություն։

Բայց կոնկրետ ո՞րն է երիտասարդ լրագրողի մեղքը, եւ նա ինչպե՞ս համարձակվեց վարկաբեկել իր հայրենի իշխանությանը։

Աղաջանյանը պարզապես կրկնել է Հայաստանից Արցախ գնացած ազնվամիտ մտավորականների եւ հատկապես Վարդան Դեւրիկյանի այն տագնապի ահազանգը, որ վերաբերում է կովի մեջ արնաքամ դարձած հանրապետության վերջին կենսահյութերը կողոպտելու չարագործությանը։ «Ազգը» ս. թ. հունվարի 14-ի համարում հանդես էր եկել մի հաղորդումով, որն ասում է. ԼՂՀ պարետ Մուրադ Ապրեսյանի հավաստմամբ անցած տարվա հոկտեմբերին մի շարք ստոր վաճառական խմբեր Ստեփանակերտ-Լաչին-Գորիս ճանապարհով Ղարաբաղից դուրս են տարել 90 տոննա կոնյակի սպիրտ, նոյեմբերին ու դեկտեմբերին՝ 200 տոննա, եւ իր՝ Ապրեսյանի կազմակերպությանը հաջողվել է, այդքանից դուրս, բռնագրավել ու պարետատուն հանձնել 100 տոննա կոնյակ ու սպիրտ։

Այնքանից հետո էլ թղթակիցն ավելորդ չի համարում կրկնել Ապրեսյանի այն հայտարարությունը, թե «Լեռնային Ղարաբաղից ապօրինի կերպով արտահանվում են նաեւ մեծ քանակությամբ տավարի եւ խոզի միս, ձեռագործ գորգեր, ինչպես նաեւ հնամյա արծաթե գոտիներ ու այլ իրեր... Մենք փաստեր ունենք, որ անօրեն արտահանումների գործում խառնված են Հայաստանի եւ Ղարաբաղի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ... նրանք սպառնում են ֆիզիկական հաշվեհարդար տեսնել ինձ հետ»։

Իհարկե, 15-ի առավոտյան ազատել են Վ. Աղաջանյանին՝ խիստ հանձնարարելով, որ նա այլեւս չհամարձակվի նման լուրեր հրապարակել, երեւի նաեւ սպառնալով, թե, հակառակ դեպքում, իր հետ եւս ֆիզիկական հաշվեհարդար կտեսնեն...

Բայց, հետաքրքիր է, այս ո՞ւր ենք հասել, որ Արցախում, իր ազատության ու արժանապատվության համար մաքառող մարզում էլ ազգակործան ավազակությունները պետական մակարդակ են բարձրացել, դարձել ոչ միայն անպատժելի, այլեւ հովանավորվող ու խրախուսվող...

◇ ◇ ◇

Հետագայում, իհարկե, Աղաջանյանն ստիպված եղավ խոստովանել իր «մեղքը», սպիրտին ու մյուս ապրանքներին վերաբերող թվերի մեջ անճշտություն է թույլ տվել... Հավանական է՝ նա այլեւս նման փաստերի մասին չի գրի։ Գուցե ուրիշներն է՞լ չգրեն։ Հետո՞։ Դրանով էլ կվերանա՞ չարիքը։

«Ազգի» թղթակիցը (Ա. Հ.) հունվարի 16-ի համարում գրել էր, թե «Արցախի գյուղերում շրջում են Հայաստանից գնացած մեքենաները եւ Ղարաբաղի համար համեմատաբար թանկ գներով ձեռք են բերում միս, պանիր, լոբի, կարտոֆիլ... Մարդիկ, օգտագործելով հատուկ թույլտվության թերթիկները եւ երբեմն էլ կաշառելով, դուրս են բերում հսկայական չափի խմիչք եւ մթերք» («Ազգ» 1993, հունվ. 16)։

**Հունվարի 16-ի** երեկոյան լուրերով հաստատվեց, որ երեկ Մարտունու շրջանի սահմաններում թշնամու ձեռնարկած բոլոր հարձակումները հաջողությամբ խափանվել են։ Եվ այստեղ ձախողվելով՝ թուրքն անմիջապես կատաղի մարտեր է ձեռնարկել Մարտակերտի շրջանի հարավ-արեւելյան մասերում, մանավանդ Կիչան-Ուրխավենդ գծի վրա։ Այստեղ եւս ինքնապաշտպանները հմտորեն կազմակերպել են դիմադրությունը, հակահարվածներով ստիպել, որ հարձակվողները ետ ճողոպրեն։

Թուրքերի հարձակումներն ուղեկցվում էին մարտական ինքնաթիռների հախուռն գրոհով, որն էլ ավարտվեց նրանով, որ խփվեցին 2 ինքնաթիռ եւս, եւ երկու օրվա ընթաց-

քում հակառակորդի օդուժը ստեց 4 ինքնաթիռի (2 ՄԻԳ-25, 2 ՍՈՒ-21) կորուստ: Նրանք վայր են գցվել Կիչանի, Սրխավենդի, Առաջաձորի ու Ասկերանի շրջանի Նորագյուղի մոտերքում: Օդաչուներից երկուսը գերված են, երրորդն օդում է սպանվել, չորրորդի ճակատագիրն անհայտ է:

Սրխավենդի մոտ վիրավորվել է ֆրանսիական հեռուստատեսության թղթակից Լիո Նիկոլյանը, որը փոխադրվել է Ստեփանակերտի հիվանդանոց եւ բուժվում է:

ՀՀ պաշտպանության լրատու մարմնի ղեկավարի ասածով՝ հակամարտության սկզբից ի վեր Ադրբեջանը ԼՂՀ ճակատում կորցրել է ռազմական 16 ինքնաթիռ եւ 20 ուղղաթիռ:

✧ ✧ ✧

Լրատվական վերջին հաղորդումներում համարյա միշտ նշվում է Գորիսի շրջանի եւ Գորիս քաղաքի աղետալի վիճակը թուրքի չդադարող հրետակոծությունների պատճառով: Աշոտ Բլեյանը գնացել-տեսել է այդ վիճակը, եկել-ասում է՝ այս հանրապետության ղեկավարությանը պիտի կանգնեցնել դատարանի առաջ՝ թեկուզ եւ միայն Գորիսի համար:

Այսօր հրապարակվել է Գորիսի քաղխորհրդի նախագահ Սամվել Հարությունյանի հեռագիրը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին: Այնտեղ, ի միջի այլոց, ասված է. «Գորիսցիների անունից հորդորում եմ  այցելել Գորիս, համոզվել կատարվածում (ավերածություններ եւլն.- Բ. ՈՒ) եւ կտրուկ միջոցառումներով, ինչպես երդվել եք ժողովրդին, ապահովել նրանց անվտանգությունը» («Երկիր, 1993, հունվ. 16):

Ուրեմն, երկրի ղեկավարի ականջին պիտի ասել, որպեսզի նա հաճախի աղետի ենթակա երկրամասը եւ փորձի մի ճար  անել նրա ծանր վիճակին:

**Հունվարի 18-ի ու 19-ի** լուրերում գերակշռում էր հանգստությունը ճակատի վիճակի համար. ՀՀ սահմանային շրջաններում էական ոչ մի փոփոխություն չի կատարվել: Իսկ Արցախում թուրքի տանկային նոր հարձակումներ են եղել Կիչան-Սրխավենդ ուղղությամբ, ռազմական ինքնաթիռները բավական ակտիվացել են, մխրճվել հանրապետության խորքերը, ռմբակոծել, օրինակ, Վանքն ու Առաջաձորը՝ երկրորդի հիվանդանոցին պատճառելով զգալի վնաս (կան 5 սպանվածներ ու մի քանի վիրավորներ): Մերոնք հաջողությամբ ետ են մղել հարձակումները, վայր գցել երկու ինքնաթիռ, Սրխավենդի մոտ առգրավել մեկ «Գրադ» կայանք եւ գրողի ծոցն ուղարկել շուրջ 100 ասկյարների:

Ստեփանակերտի պաշտոնական տվյալներով՝ միայն հունվարյան այս վերջին երկու շաբաթվա ընթացքում թուրքերը կորցրել են ութ ինքնաթիռ եւ սեփական ժողովրդին հանգստացնելու համար աղմկում են իրենց «վայր գցած» հայկական ինքնաթիռների մասին, երբ հայկական կողմից պատերազմին չի մասնակցում եւ ոչ մի ինքնաթիռ կամ ուղղաթիռ:

Վերջին օրերին թուրքերը մի քանի անգամ հրետակոծել են Ստեփանակերտը, հարավից ու հյուսիսից հարձակումներ գործել Լաչինի միջանցքի վրա: Սակայն, բարեբախտաբար, մայրաքաղաքը շարունակում է իր եռուն առօրյան, իսկ միջանցքը գործում է անխափան:

«Երկիրը» (ս.թ. հունվ. 20) հաղորդում է, որ միայն երեկ ԼՂՀ ինքնապաշտպանները Մարտակերտի շրջանում ոչնչացրել են 4 մարտական ինքնաթիռներ (առաջինը՝ կեսօրին, երեքը՝ ժամը 17-ին), որոնց մակնիշների եւ օդաչուների ճակատագրերի մասին տեղեկություններ չկան:

✧ ✧ ✧

**Փետրվարի 20-ին** Ադրբեջանի պրեզիդենտը հրապարակել է հրամանագիր, որով պահանջվում է զորակոչի ենթարկել Լաչինի բնակչության 18-40 տարեկան բոլոր անձանց, որոնք զինապարտ են: Հրամանագրի իրականացման պատասխանատվությունն էլ դրվում է Լաչինի շրջանի գործադիր իշխանության ղեկավարի վրա ( «Երկիր», 1993, հունվ. 27):



Նման դեպքերում իրենք կասեին՝ ա՜յ քարաքյալլա՜:

**Հունվարի 20-ը** ծանր օր էր ռազմաճակատում. թուրքի 9 ինքնաթիռներ Մարտակերտի ճակատի տարբեր կետերում գնդիկավոր ռումբեր են թափել: Մերոնք նրանցից երեքը վայր են գցել: Ասում են՝ բոլոր այս ինքնաթիռներում էլ անսարք են եղել ինքնանետիչները (կատապուլտ), եւ սավառնորդները կոտորվել են (մի բան, որ բոլորովին էլ ցավալի չէ):

Այսօր Վարդենիսից 10 կմ հեռու վայր է գցվել թուրքի մեկ ռազմական ինքնաթիռ (փառք աստծո, Հայաստանի սահմանային շրջանում եւս ինքնաթիռ են ոչնչացնում):

✧ ✧ ✧

Ալմա-Աթայից վերադարձող Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց, թե Նազարբաեւը խոստանում է շարունակել ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված իր ջանքերը՝ այս անգամ արդեն ԵԱՀԽ-ի ոլորտում, օգտագործելով իր երկրի ու սեփական հեղինակությունը (Աստվա՜ծ օգնական):

**Հունվարի 23.** Նախորդ երկու օրերին համեմատաբար հանգիստ է եղել ռազմաճակատում, եթե չհաշվենք 21-ին Վանք գյուղի ռմբակոծությունը թուրք ռազմական ինքնաթիռների կողմից:

Այսօր թշնամին ուժեղ գրոհներ է ձեռնարկել Լաչինի միջանցքի հյուսիսային ու հարավային կողմերում: Մերոնք երկու ճակատում էլ արժանի հակահարված են տվել՝ Ղոչազի մոտ ոչնչացնելով մի խոշոր զորաջոկատ:

✧ ✧ ✧

**Հունվարի 15-ին** վայր գցված ինքնաթիռներից մեկի սավառնորդ, ուֆացի 40-ամյա մայոր Անատոլի Չիստյակովը դիմել է Ելցինին, որպեսզի նա իրեն փրկի մահապատժից: Իսկ զոհված Ալեքսանդր Պլոտնիկովի հարազատները խնդրում են նրա դին...

**Հունվարի 25-ին** կատաղի մարտեր տեղի ունեցան Ասկերանի շրջանի Քարագլուխ գյուղի մոտ: Հրետանային նախապատրաստությունից հետո զրահատեխնիկայի ուղեկցությամբ բավական մեծ մի զորաջոկատ գրոհեց Քարագլուխ եւ Փառուխ գյուղերի վրա: Ինքնապաշտպանները մարտի են նետվել կազմ ու պատրաստ, արժանի ջարդ տվել եւ ետ մղել թշնամուն՝ ոչնչացնելով շուրջ 60 ասկյար:

Թուրքերը ուժեղ հարձակում են գործել նաեւ Ղազանչի-Առաջաձոր-Կիչան ուղղությամբ: Այստեղ եւս աներեր են մնացել ինքնապաշտպանների դիրքերը:

Ասում են՝ Աղդամում զորքի ու զրահատեխնիկայի վիթխարի կուտակումներ են տեղի ունենում:

**Հունվարի 26-ին**, սկսած վաղ առավոտից, թեժ մարտեր են եղել ԼՂՀ բոլոր սահմաններում: Դաս չառնելով նախորդ օրվա խայտառակ պարտությունից՝ թուրքերն Աղդամի կողմից նոր արշավանք են կազմակերպել Խրամորթ-Քարագլուխ ուղղությամբ, պարտություն կրելով եւ դաշտում թողնելով շուրջ մեկ տասնյակ ասկյարի դիակ, վերադարձել ելման կետերը:

Ֆիզուլիի կողմից թուրքերը հրետակոծել են Հադրութ ավանը, Էդիլլուն, Ճարտարը:

Հաջորդ օրերին էական իրողություններ չկային ռազմաճակատում, բացի նրանից, որ թուրքերը պարբերաբար հրետակոծում, հարձակումներ էին գործում Լաչինի մարդասիրական միջանցքի վրա՝ միշտ էլ ձախողվելով:

27-28-ին Աղդամից եւ հարավից ռազմական կետերից «Գրադ» կայանքները մի քանի տասնյակ արկ են գցել Ստեփանակերտի արվարձաններում եւ Շուշիում:

Այս առթիվ ոչինչ չհաղորդեցին Հայաստանի լրատվական մարմինները, որոնք հիմա իրենց անբան անճարակությունը քողարկելու «հիմնավոր պատճառաբանություն» ունեն. հանրապետությունը բազմատեսակ շրջափակման մեջ էր գտնվում, հիմա էլ հեռախոսային կապը լրիվ խափարվեց, եւ Երեւանում անգամ անհնար է մի տեղից մի այլ տեղ զանգել:

**Հունվարի 30-ին** ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ցավակցությամբ իր վերաբերմունքն արտահայտեց Նախիջեւանի ԻԽՀ շրջափակված լինելու պատճառով կրած զրկանքների եւ տառապանքների նկատմամբ (մոսկովյան հեռուստատեսություն)։

Իսկ ԼՂՀ-ը հինգ տարի է այդ վիճակում, նույն խորհուրդը քոռ ու խուլ է ձեւանում հինգ տարի...

✧ ✧ ✧

Հունվարի երրորդ տասնօրյակի էական իրողություններից պիտի համարել Մ. Ռաֆայելիի աղմկոտ այցը Այսրկովկաս եւ բանակցությունների, ամենայն հավանականությամբ, անորոշ ավարտը։ Նա Հայաստանում, Լ. Տեր-Պետրոսյանի հետ ունեցած զրույցին, ասել է՝ ինքը կողմ է, որ Լեռնային Ղարաբաղում հրադադար արվի առանց որեւէ նախապայմանի, որպեսզի դրանից հետո կողմերը նստեն բանակցությունների։ Տեր-Պետրոսյանը տվել է իր համաձայնությունն այդ պայմանին, միաժամանակ հասկացնելով, որ եթե ադրբեջանական կողմը կառաջարկի որեւէ կանխապայման, այն ժամանակ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղն էլ կառաջարկեն իրենց պայմանները, որոնք կլինեն ոչ պակաս կարեւոր։

ԼՂՀ ղեկավարությունը եւս անմիջապես տվել է իր համաձայնությունը՝ կրակը դադարեցնելու առանց որեւէ նախապայմանի եւ միաժամանակ Մինսկի խորհրդաժողովի ղեկավարին խնդրել է կատարել իր նախնական խոստումը՝ այցելել Ղարաբաղ, ծանոթանալ իրավիճակին, դրա համար խոստանալով ապահովել անվտանգությունը։

Սակայն այդպես էլ Ռաֆայելին Այսրկովկասից հեռացավ, առանց բարդույթի գոտին այցելելու, տրված հայտարարությունների մեջ սարքելով մշուշոտ տպավորություն, թե իր այցելության անվտանգությունը չէր լինելու երաշխավորված։

✧ ✧ ✧

Կարեւոր էր, իհարկե, նաեւ **հունվարի 24-ին** մեր հանրապետության ղեկավարների «թատերական շոուն»։ Հանրապետության երեկոն կեսժամյա էլեկտրական լույս ունեցավ, որպեսզի բնակչությունը հեռուստատեսությամբ տեղեկանա Խոսրով Հարությունյանի գործնական կարգադրություններին, մեկ էլ դիտի պրեզիդենտի սելեկտորային խորհրդակցություն-ներկայացումը.

– Կապա՞ն։ Ինչպե՞ս է քաղաքի վիճակը։ Ամեն ինչ կա, հացից բացի՜։ Հիմա ես կխնդրեմ, եւ առավոտ ձեզ հաց կհասցնեն։ Իջեւա՞ն։ Հացի հարցը լուծվա՞ծ է։ Վառելի՞ք։ Հիմա ես կխնդրեմ, եւ կես ժամից այստեղ կուղեւորվի վառելիք բերող շարժակա՜զմը։ Մեղրի՜...

Սա, անկասկած ոչ մեզ համար է, ոչ էլ մեծարգո պրեզիդենտի պաշտոնյա զրուցակիցների... Եթե նրանց պահանջները հնարավոր է կատարել մի խնդրելով, ինչո՞ւ է պահել այս երեկոյին... Այս ներկայացումը տեսագրվել է ապագայի, սերունդների համար, թող իմանան, թե ի՜նչ ղեկավար ենք ունեցել, աղետի ենթարկված ժողովրդի համար այրվող-փոթոթվող, բոլոր հարցերը մի խնդրելով լուծող...

✧ ✧ ✧

Հաղորդեցին նաեւ (ընդ որում՝ շատ խորհրդավոր ու խորհիմաստ), որ Լ. Տեր-Պետրոսյանն այսօր 15 րոպե (ամբողջ 15 րոպե) հեռախոսազրույց է ունեցել Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հետ։ Եվ նյութն էլ եղել են Ղարաբաղի բարդույթի լուծման հնարավորությունները։

Բայց սրանից տաս օր առաջ մեր մամուլը հաղորդել էր, թե Թուրքիայի լրատվության տվյալներով՝ Դեմիրելն ինքը Թուրքիայում ծննդյան տոներն անցկացրած Ֆրանսուա Մի-



տերանին խնդրած է եղել, որպեսզի նա «գործի դնի իր անձնական ազդեցությունը՝ Լեռնային Ղարաբաղում զինադադար հաստատելու համար» («Երկիր», 1993. հունվ. 16)։

✧ ✧ ✧

Հիմա արդեն բոլորն էլ գիտեն, նույնիսկ դեռահաս երեխաները, որ Արցախի գոյապայքարի գերագույն խնդիրը՝ ազատության ու անկախության նվաճումը կա եւ լինելու է ռազմի դաշտում։ Դրա համար էլ այնտեղ, լեռնաստանում, կռվում են բոլորը, ծեր ու ջահել, կին ու երեխա, ով կարող է զենք բռնել, ով կարող է կռվողին որեւէ, թեկուզ չնչին, օգնություն հասցնել։ «Ազգը» հաղորդել է, որ մինչեւ 15 տարեկան 150 զինվոր կա Ղարաբաղում, 14 տարեկան տանկի հրամանատար։ Միայն Մաճկալաշենի մարտում մեկ ժամվա ընթացքում 7 տանկ են խփել։

... Մարտունու շրջանում, հունիս ամսից սկսած 57 տանկ է ոչնչացվել («Ազգ», 1993. հունվ. 16)։

✧ ✧ ✧

**Հունվարի 27-ին** Աթենքում գիտաժողովի պես մի բան պիտի լինի,- հաղորդում է «Երկիր»-ի հունվարի 23-ի համարը։ – Կարդացվելու են զեկուցումներ.

1. «Լեռնային Ղարաբաղը եւ մարդու իրավունքները» (բարոնուհի Քերոլայն Կոքս),
2. «Ռուսաստանի Հանրապետությունը եւ Լեռնային Ղարաբաղը» (Կոնստանտին Վոյեվոդսկի),
3. «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը» (Սեյրան Բաղդասարյան, ՀՀ ԳԽ-ի Արցախի հանձնաժողովի նախագահ),
4. «Լեռնային Ղարաբաղը՝ պանթուրքիզմի տարածման դեմ» (դ-ր Հրիստոս Սլորիս, պաշտ. եւ արտ. քաղ. հելլենական ֆոնդի անդամ)։

Իհարկե, լավ բան է. մեր իսկական բարեկամ հունաց մայրաքաղաքում նման միջոցառում։ Հասկանալի է, որ կազմակերպիչները զեկուցումներով չեն բավարարվի, կկազմակերպեն այլեւայլ միջոցառումներ, հանդիպումներ, ելույթներ, գործին կխառնվեն ռադիոն, հեռուստատեսությունը, մամուլը։ Բայց ժողովուրդը չի՞ ասի, թե ո՞ւր է մաքառող ժողովրդի ներկայացուցիչը, ինչո՞ւ չեք բերել մեկին, որ տեսնենք՝ ինչպիսի՛ն է թրքության դեմ իր ազատ ապրելու իրավունքը պաշտպանող այդ փոքրաթիվ ժողովուրդը։

Հայաստանից էլ Ղարաբաղին նվիրված եվրոպական եւ միջազգային մի շարք միջոցառումների իրենց աշխատակիցներին են ուղարկում։

Հետո էլ ասում են՝ օտարները չեն ճանաչում Արցախի իրավունքները։

**Հունվարի 31**.- Առավոտյան զանգեցի Ստեփանակերտ՝ մերոնց։ Լավ են, ինչ էլ որ լինի, հավատում են վաղվա հաջողություններին..., չնայած ամենաքիչն օրընդմեջ քաղաքը հրետակոծվում է Աղդամի կողմից։ Նախորդ օրվա հրետակոծությունից իրենց էլ է բաժին հասել, մի արկ ընկել է ցախանոցը, «ամեն ինչ շներոց արել,- ինչպես հաղորդեց եղբորս կինը։ – Աշոտի արհեստի գործիքներ, թթու-կծու, զանազան մթերքներ ու հոգեպահուստ...»։

Առաջները, երբ հրետանին գործում էր Շուշիից, մերոնց կողմերին ոչ մի վնաս չէր լինում, տունը գտնվում է քաղաքի հարավ-արեւմտյան եզրին, զորանոցի կողքին։ Այս զորանոցն էլ՝ կառուցված դեռեւս 1847 թ., անընդմեջ ռուսական զորք է տեղավորել, ինչպես ցարի ժամանակ, այնպես էլ խորհուրդների օրոք։ Վերջին չորս տարիներին հնաբնակ 366-րդ գունդն էր այստեղ։ Թեկուզ վերին կարգադրությամբ՝ ոչնչի չէր խառնվում, Շուշիի ավազակներն զգուշանում էին նրա զայրույթից եւ ռումբ ու հրթիռ չէին գցում

ոչ միայն զորանոցի, այլեւ շրջակայքի թաղերի վրա:

Բայց որքան էլ ասենք՝ գունդը չէր խառնվում, երեւի մի բան անում էր. նրա զինվորության մեծ մասն այստեղ էր եղել տասնյակ տարիներ, հրամանատարությունը՝ համարյա լուծված քաղաքի ու մարզի ղեկավարության հետ: Եվ պատահական չէր, որ Ադրբեջանի մեծերն անվերջ-անդադար հաչում էին գնդի դեմ, վերջն էլ այնպես արին, որ Կենտրոնն ստիպված եղավ այն հանել-գրել Այսրկովկասով մեկ:

Հիմա, այս մեկ տարվա վերանորոգչական աշխատանքներից հետո, զորանոցում տեղավորված է ինքնապաշտպանության գնդերից մեկը: Եղբայրս ասում է. «Հավանաբար թուրքի հետախուզությունը պարզել է, որ զորանոցն էլի զորանոց է, դրա համար էլ սկսեցին այն հրետակոծել... Բայց որովհետեւ հրետանավորը թուրք ապաշնորհն է, այնպես արկերը գցում է աջ ու ձախ, որ ավելի շատ մերձակա անտառն է քանդուքարափ անում»:

**Փետրվարի 1-ին** Արցախում եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում դրությունը խաղաղ էր, իսկ քաղաքական ոլորտներում պայքարը ստորջրյա խլրտումներ էր ցուցադրում: Մի քանի օր առաջ իմացել էինք, որ ՀՀ պատվիրակությունը (պրեզիդենտի խորհրդական Ժիրայր Լիպարիտյան եւ ԳԽ-ի պատգամավոր Դավիթ Շահնազարյան) ինչ-որ առաքելությամբ Թուրքիա է մեկնել: Այսօր **բերնի մի կողմով** հայտնեցին, որ այն հանդիպում է ունեցել վարչապետ Սուլեյման Դեմիրելի հետ, եւ սա, լսելով իր կառավարության ներկայացվող պահանջները թե խնդիրները, ասել է՝ Թուրքիայի տարածքով Հայաստանին ուղարկվող մարդասիրական օգնություն կարող է անցնել միայն Ղարաբաղի խնդիրն Ադրբեջանի հետ լուծվելուց հետո (այսպես են ասում, բայց, ամենայն հավանականությամբ, հարցը կտրուկ է դրել, այսինքն՝ Ղարաբաղից ձեր հեռանալուց հետո, այնտեղից բոլոր հայ զինական ուժերը դուրս բերելուց հետո, այսինքն՝ ինչպես Ադրբեջանն է ուզում), օգնությունն էլ՝ այդպե՛ս: Իսկ էլեկտրաէներգիան, որն այսօր թթվածնի պես անհրաժեշտ է շնչահեղձ եղող Հայաստանին, հրաժարվում է տալ...

Դեմիրելը չի ասել, թե դա իր ցեղակից Ադրբեջանի պահանջն է: Բայց մի՞թե հասկանալի չէ:

**Փետրվարի 2-ին** ռազմաճակատում հանգիստ էր, խռովք էր միայն ԳԽ-ի նստաշրջանում. ցերեկով արդեն հայտնի էր, որ կառավարությունը հրաժարական է տվել, եւ երեկոյան դրա հանգամանքների մասին խոսելու, ժողովրդին կատարվածի էությունը բացատրելու փոխարեն, հաղորդեցին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթի տեսագրությունը: 1993 թ. համար կառավարության ներկայացրած, իբր, հեղափոխիչ ծրագիրը չի ընդունվել, որովհետեւ, ինչպես երեւում է, այն եղել է կիսատ-պռատ, բացահայտ թերություններով ու անմիտ կետերով խճողված, մի խոսքով՝ այնքան պակասավոր, որ նույնիսկ Մինիստրների խորհրդի նախագահ Խոսրով Հարությունյանը չի հավանել եւ խոստովանել է, թե իրեն եւս դուր չի գալիս, բայց ստիպված է ներկայացնել հաստատման:

Իհարկե, նման դեպքում նա կարող էր եւ պետք է չներկայացներ, պահեր-գլխավորեր մշակումը, կատարելագործումը եւ ավարտելուց հետո միայն ԳԽ հանձներ, ասեր՝ քննեցե՛ք, հաստատեցե՛ք:

Բայց, հավանաբար, ստիպված է եղել տեղի տալ, ներկայացնել, եւ հիմա, իբրեւ կարգին մարդ, չի կարող, թեկուզ կես-բերան, չարտահայտել իր վերաբերմունքը: Եվ դա էլ հավասարակշռությունից հանել է հանրապետության նախագահին:

...Երեկ երեկոյան տեղի ունեցավ մի դեպք (դա Խ. Հարությունյանի անկեղծ խոստովանության մասին.- Բ. Ու.), որն աննախադեպ էր համաշխարհային պատմության մեջ... Պատկերացնո՞ւմ եք, մեր վարչապետը կարող էր արտահայտել իր անհամաձայնությունը, դիտողությունները, մերժել այդ ծրագիրը կամ ներկայանալ ինձ, խնդրել, որ պայմանավորվենք... Չէ, թողել է, որ չորս օր անիմաստ ու աննպատակ քննարկենք, որպեսզի հետո վեր կենա, կարծիք ասի... Եվ հիմա ես ստիպված եմ պահանջել նրա



կաբինետի հրաժարականը: Մի շաբաթից ես կներկայացնեմ նոր կառավարությունը, որն ամեն ինչ կսկսի սկզբից,- սա նախագահի խոսքն էր:

Խոսրով Հարությունյանը խոսեց մեղավոր, անորոշ, ոչինչ չբացատրելով, չպարզելով հրաժարականի բուն պատճառը...

Գուցե էլի թուրքե՞րն են պահանջել:

Տվին նաեւ ԳԽ-ի նախագահ Բաբկեն Արարքցյանի խոսքը՝ սովորականի պես ծանծաղ... Ա՛յ, սրա վրա որ երբեք չի կախվի հրաժարականի սպառնալիքը, քանի առայժմ հանրապետության նախագահի միակ ամենավստահելին է...

**Փետրվարի 3-ին** ճակատում էական տեղաշարժեր չեն եղել, բացի նրանից, որ Աղդամից կրակ են թափել Ասկերանի պաշտպանական՝ դիրքերի վրա եւ լռել՝ միայն մերոնց պատասխան հրետազարկերից հետո:

Հեռուստատեսությամբ ՀՀ նախագահի խորհրդական Լիպարիտյանը զրույց ունեցավ իրենց Թուրքիա գնալ-վերադառնալու շուրջ եւ, նախագահի դիրքը պաշտպանելու համար, ստիպված էր խղճի դեմ բաներ խոսել, հաճախ նույնիսկ միամիտ բաներ: Ասում է՝ Թուրքիայի կառավարությունն ամեն պատրաստակամություն ունի ոչ միայն իր երկրով մեր հանրապետություն եկող մարդասիրական օգնությանն ազատ ճանապարհ տալու, այլեւ իր սեփական միջոցներով ու հնարավորություններով օգնելու, որպեսզի մեր կյանքը կարգավորվի: Իբր, Դեմիրելն ասել է՝ մենք չենք կարող անտարբեր լինել, երբ մեր հարեւան Հայաստանը ծանր վիճակում է:

Հետո՞ ինչ: Մի՞թե այս մարդը կարծում է՝ Դեմիրելն իր պատվիրակության երեսին կարող էր եւ թշնամության բացահայտ խոստովանություններ անել: Թե այս ամբողջ դատարկաբանությունը պետք է ընդունենք եւ մոռանանք, որ այդ բարյացակամ Թուրքիան խոստացել էր էլեկտրաէներգիա տալ իր ցեղակցի կողմից կաթվածահար դարձած մեր տնտեսությունը կենդանացնելու համար, եւ մեկ էլ պատահաբար հրաժարվեց: Որ ուրիշ երկրներից եկող ցորենն ու ալյուրը լկտիաբար սեփականում է եւ փոխարենը մեզ ուղարկում կեղտոտ կուտ կամ պարզապես ոչինչ (այս էլ՝ Ջորջ Քենեդու հանձնաժողովի եզրակացություններից):

Ասում է՝ Թուրքիայում հակառակ ուժեր կան, մանավանդ՝ Ադրբեջանի դեսպանը: Իբր, միայն սրանք են հակահայկական գործարքների պատճառը: Դեմիրելն ու նրա կառավարությունը չեն կարողանում այդ հակառակ ուժերին հաղթել, որ պետական-միջազգային հարաբերություններում մարդկային տարրական օրենքներն է՛լ պետք է դեր ունենան...

**Փետրվարի 4-ին** համարյա բոլոր ռազմակետերից սկսված հրետակոծություններով թուրքերը ցույց տվին, որ նախորդ օրերի «համեմատական անդորրը» հարաբերական բան է եղել, նախապատրաստություն նոր, կատաղի ռազմարշավի: Այսօր նրանք Ֆիզուլու շրջանից «Գրադ» կայանքներով հրետակոծել են Սոսն ու Մաճկալաշենը, Աղդամի կողմից՝ Կուրապատկինոյի պաշտպանական դիրքերը, իսկ բուն Աղդամից՝ Ասկերանն ու շրջանի սահմանամերձ գյուղերը:

Սակայն օրվա երկրորդ կեսին պարզվեց, որ թուրքի այս հրետակոծությունները ռազմագիտական ծուղակ են եղել. Մարտունու եւ Ասկերանի շրջանները հրետակոծելով՝ գրոհներ է ձեռնարկել Մարտակերտի հարավային մասում, Սրխավենդի ու Վաղուհասի կողմերում: Երկու տեղում էլ ինքնապաշտպանները եղել են զգաստ ու զգոն եւ անմիջապես հակահարձակման են անցել՝ իրենք հանկարծակիի բերելով այդպիսի պատասխան չնախատեսած թշնամուն:

**Փետրվարի 5-ին**, ծանր մարտերից հետո, Մարտակերտի շրջանի ինքնապաշտպաններն ազատագրեցին Չլդրան եւ Կոճղոտ գյուղերը՝ թուրքին պատճառելով մեծ կորուստներ (կոտորվել են շուրջ 100 ասկյարներ) եւ տալով միայն 7 զոհ: Այդօր ազատամարտիկները, որոնց առաջ թուրքերը խուճապահար փախչում էին, հասել են Մեհմանայի ու Դրմբոնի մատույցները:

շնորհների բացակայության մեջ:

Հավանաբար, էկրան են տրամադրել, որպեսզի արցախական իր խոսքն ասի Պարույր Հայրիկյանի ու նրա երեկվա հակալեւոնական բազմահազարանոց հանրահավաքի դեմ, կոչ անի միասնության ու համազգային համերաշխության: Այս հանձնարարությունը հաջողությամբ կատարեց՝ շեշտելով հանրահավաքի անլրջությունը: Հարց է տալիս՝ ո՞վ է նա, ի՞նչ է արել, ի՞նչ է անում եւ ի՞նչ կարող է անել: Նշանակել էին Գորիսի տեր ու պաշտպան, այն թողեց թշնամու կրակի տակ, վեր կացավ, գնաց Ամերիկյան կիսագնդում հակակառավարական ու հակահայկական քարոզներ կարդաց: Այո, հակահայկակա՛ն, որովհետեւ ստիպում էր, որ սփյուռքահայերն օգնություն չանեն աղետյալի վիճակում հայտնված հայրենիքին, որովհետեւ նրա ղեկավարներն ապիկար են: Վերջերս էլ կոչ է արել, որ իր կուսակցության անդամ-մարտիկները, որ կռվում են Արցախի ճակատում, զենքերն առած գան Երեւան: Եվ նրանք այդպես էլ արել են՝ մերկացնելով ճակատի այն կետերը, որտեղ իրենք են եղել: Հիմա նրանք իրենց զենքերով եկել, Երեւանում ի՞նչ են անում: Ձայնակցում են Հայրիկյանի պառակտողական կոչերին: Սա՞ է Հայրիկյանի՝ հայրենիք պաշտպանելու եղանակը:

Իհարկե, Հայաստանի այսօրվա իշխանությունները եւ նրանց ղեկավարներն ունեն մեծ թերություններ: Բայց մի՞թե դրանց ուղղելը կամ շարքից հանելն էլ պետք է կատարվի Հայրիկյանի առաջարկած եղանակով:

Այսօր մեր խնդիրն է եւ պիտի մնա համազգային համերաշխության ու միասնության ամրապնդումը: Մենք Արցախի կռիվն ունենք, մենք՝ ամբո՛ղջ ազգով: Ամեն մի հայ, ով էլ որ այն կա, պիտի գիտակցի, որ Արցախը միայն հայկական բնակավայր չէ, այլեւ (սա առաջին հերթին) Հայաստանի դարպասն ու զրահն է: Հիշո՞ւմ եք, Ադրբեջանի ղեկավարը մի քանի օր առաջ Զանգեզուր էր պահանջում: Ուրեմն, նա Արցախով բավարարվողը չէ: Իսկ Արցախն ու Զանգեզուրը կորցնելուց հետո էլ ի՞նչ Հայաստան պիտի մնա:

- Ես համոզված եմ, որ այս պատերազմը մենք շահելու ենք, միայն թե ամեն մի հայ, իսկ մայր հայրենիքի հայությունը՝ հատկապես, իմանա, գիտակցի, որ սա ի՛ր պատերազմն է, մեր համազգային ու ամեն ինչ վճռող գոյապայքա՛րը:

✧ ✧ ✧

Հաղորդեցին, որ Վրաստանի ղեկավար Շեւարդնաձեն վերջերս Բաքվում ունեցած իր բանակցություններում պատրաստակամություն է հայտնել լինելու միջնորդ հայ-ադրբեջանական բարդույթի կարգավորման գործում: Ըստ երեւույթին որոշել է դառնալ համաանդրկովկասյան, նույնիսկ համակովկասյան «ընտանիքի» մեծ հայրը: Բայց ո՞նց պիտի լուծի Արցախի խնդիրը, երբ նա ինքը տերն է Հարավային Օսեթիայի ու Աբխազիայի ցավերի: Թե՞ մտածում է, որ ընդհանուր կաթսայի մեջ ամեն ինչ կարելի է խառնել, շիլաշփոթ շինել:

✧ ✧ ✧

Մի երկու օր հետո էլ հաղորդեցին, թե Երեւանում հայտնվել է Չեչնիայի պրեզիդենտ Դուդաեւը, որն, իբր, առաքելություն ունի կազմակերպելու Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի ղեկավարների ու իր հանդիպումը եւ մեծ զրույց նախաձեռնելու, որպեսզի հանուր Կովկասում վերջ տրվի եղբայրասպան կռիվներին, ստեղծվի համերաշխություն ապագա «Համակովկասյան տան» ստեղծելու համար:

Ուրեմն, հիմա էլ մտածենք, թե մեր փրկությունը լինելու է լեռնային ավազակ Դուդաեւից:



✧ ✧ ✧

**Փետրվարի 7-ին** Լոս Անջելեսում շուրջ 1500 հանդիսատեսի մասնակցությամբ նշվել է Արցախյան գոյապայքարի 5-ամյակը, որին ներկա են եղել ՀՀԴ ղեկավար Հրայր Մարուխյանը, օրվա բանախոս Վահան Հովհաննիսյանը (Երեւանից) եւ նշանավոր գործիչներ:

Հ. Մարուխյանի ելույթից հրապարակվել են քաղվածքներ, որոնք կարող են բնորոշ կարգախոսներ դառնալ այս օրերի հայկական մտայնության ու առաջնորդող գաղափարախոսության համար: Ահա դրանցից մի քանիսը.

«Հայ հեղափոխական դաշնակցության համար Արցախը Հայաստանով է Արցախ եւ Հայաստանը Արցախով է Հայաստան»:

«Մենք իրավունք չունենք Արցախում պարտվելու: Եթե պարտվենք, ապա պարտված կլինի հայությունը Հայաստանով եւ Սփյուռքով»:

«Արցախը հայ ժողովրդի ապագա նվաճումների ու Հայաստանի ժողովրդավարական հանրապետության կայացման հիմնական բանալին է»:

«Մենք պարտավոր ենք (ազգովին) ձեռք ձեռքի տալ եւ սեւ ամպերը ցրել Ղարաբաղի հորիզոնից, Հայաստանի հորիզոնից, որպեսզի առաջիկա 5-10 տարիների ընթացքում կարողանանք քայլ առ քայլ մոտենալ այն պանծալի օրվան, որին այնքան երազում էինք 75 տարի շարունակ» («Երկիր», 1993, փետր. 16):

✧ ✧ ✧

Հետագա օրերին, շուրջ մեկ շաբաթ, դանդաղորեն ձեռք բերվող հաջողություններն էին ճակատում եւ հրեշավոր ցուրտն ու սրտամաշ տառապանքները հայաստանյան մեր տներում: Լույս ու ջերմություն չկար: Մեր քակորանման 200-250 գրամ հացն անգամ ձեռք բերելը դարձել էր անհնար: Համաժողովրդական ցավի ու դժգոհության մթնոլորտն էր տիրում ամենուր: Իսկ անճարակ ու անխիղճ ղեկավարությունը շարունակում էր անտարբեր նայել, թե այս ամենն ո՛ւր կտանի, ամեն ինչ համբերող ու հանդուրժող դարձած այս ազգն է՛լ որքան կդիմանա ու կգոյատեւի...

Ուզում եք իմանալ՝ ի՞նչ ցայտուն բան կար այս օրերին, խնդրեմ. Կտրիճ Սարդարյանը, դարձյալ իր անունը եւ գոյությունն արդարացնելու վճռականությամբ, ասպարեզ է նետվել ու դարձյալ իր սովոր երգը զլել: Ասում է՝ ռազմաշունչ երգեր է երգում ամբողջ ազգը: Ռազմաշունչ, անշուշտ, տնաքանդ երգեր. «Երգում ենք այսօր ու դատարկում Լեռնային Ղարաբաղը», «Հասկանում եմ, որ ազգային առասպելին դիպչելը շնորհակալ գործ չէ: Բայց չէ՞ որ քաղաքականության անվան տակ առասպելն ու ցանկությունը քանդում-ավերում են Լեռնային Ղարաբաղն ու ահագնացած թափով մոտենում Հայաստանին» («Ազգ», 1993, փետր. 12):

Ահա այսպե՛ս: Իսկ մինչեւ այս չարախնդալու արարողությունը հիշել էր նաեւ 1920 թ. աշունը, երբ Հայաստանի հանրապետությունը, իբր, խելացնոր պատերազմի էր ելել Թուրքիայի դեմ, գլխովին ջախջախվել եւ նոր միայն հասկացել, որ անհրաժեշտ է հարեւանի հետ «խաղաղ համակեցություն» ստեղծել: Եվ այստեղ էլ, «Պարտությունից հետո հիշեցին նաեւ «թրքամետ» Հովհաննես Քաջազնունուն եւ նրան առաջարկեցին գլխավորել կառավարությունը» (անդ):

«Թրքամետ» Քաջազնունի՛ն: Կարեւոր չէ՝ որոշիչը չակերտներում է, թե առանց չակերտների: Այլ այն է էական, որ բառը կպցված է մի մարդու, որը հատուկ ուսումնասիրություն է գրել հայոց կողմնորոշման մասին՝ «Թուրքիա՞ թե՞ Ռուսաստան» եւ մերժել Թուրքիան, հայոց բախտը մեկընդմիշտ կապել Ռուսաստանի հետ... Եվ, առհասարակ, միշտ էլ իր գրավոր աշխատանքներում, տպագիր ու անտիպ, այն կարծիքին է եղել, որ Հայաստանի համար անընդունելի ու վտանգավոր է Թուրքիայի հետ ունենալիք փոխհարաբերությունը:

գործել նրա ձեռքի շարժումով... Բայց չէ՞ որ այդ անփորձ ու անձեռներեց նորակոչիկները ուրիշ բան էլ չեն կարող անել։ Չէ՞ որ ամեն տեղ փորձ ու հմտություն է պետք, մասնագիտական հմտություն։ Իսկ սրանք ոչնչով չեն ապացուցել, թե ունեն կամ պիտի ունենան դրանցից մեկը կամ մյուսը։

✧ ✧ ✧

Ճակատում առաջխաղացումը դանդաղ է կատարվում. մերոնք ազատագրել են Ջարդախաչը եւ կռվում են Չափարի ու Հաթերքի համար։

Ասկերանի կողմերին, ըստ երեւույթին, նախորդ օրերին ձախողանքներ ենք ունեցել. տեղեկացվում է, որ այս գիշեր ազատամարտիկները թուրքերին դուրս են քշել Խրամորթից, երբ այն հանձնելու մասին խոսք առհասարակ չէր եղել։ Ցերեկով Աղդամից հրետակոծել են Ասկերանը։

ՀՀ ու Ադրբեջանի սահմաններում խաղաղ է անցել ամբողջ օրը։

**Փետրվարի 16-ի** երեկոյան եւ լույս 17-ի գիշերը մերոնք գրավել էին Դրմբոնից հյուսիս գտնվող բարձունքները՝ ընդհուպ մոտենալով Սարսանգի ջրամբարին։

Ասկերանի շրջանում էլ վճռական քայլեր էին ձեռնարկում ոչնչացնելու Աղդամի Շելլի գյուղի ռազմական հենակետերը, որոնցից միշտ հրետակոծում են Ստեփանակերտն ու մյուս բնակավայրերը։

✧ ✧ ✧

Հաղորդվեց, որ Մոսկվայում Իտալիայի դեսպանությունը Լեռնային Ղարաբաղի հանրապետության ներկայացուցիչներին հրավիրել է փետրվարի 26-ին Հռոմում սկսվելիք հանդիպմանը։ ԼՂՀ Գ.Խ-ը կազմել է 4 հոգուց բաղկացած պատվիրակություն՝ Արտաքին քաղաքականության հանձնաժողովի ղեկավար Լեւոն Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ։

Երեւանում տագնապած խոսում են ԼՂՀ ղեկավարությունում գլուխ բարձրացրած անհամերաշխության մասին։ Այսօրվա թերթերն էլ («Ազգ», «Երկիր») գրում են Պաշտպանության կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանի ու Գ.Խ-ի բախման մասին՝ հակված լինելով եզրակացնել, թե Քոչարյանն իրեն վեր է դնում ամբողջ ղեկավարությունից (չի ուզում ենթակա լինել, հաշվետվություն տալ Գ.Խ-ին)։

Ընդդիմության ներկայացուցիչները Քոչարյանին նշանակալից ծառայություն են վերագրում Վոլսկու կոմիտեն ցրելու գործում եւ տխուր շարունակություն են գուշակում։ Ես, սակայն, անձամբ ծանոթ չլինելով նրան, սպասում եմ, որ ուշքի գա, պատվով կատարի իրեն վստահված դերը. չէ՞ որ նա մարզի նախկին վաստակաշատ ղեկավարներից մեկի, խելոք ու շրջահայաց Սեդրակ Քոչարյանի որդին է, իմ հին ու հավատարիմ բարեկամի։

**Փետրվարի 18-ին** ցերեկով Մոսկվայի ռադիոն («Մայակ»), պատմելով ԼՂՀ ազատամարտիկների վերջին երկու շաբաթվա ռազմական հաջողությունների մասին, տեղեկացրեց նաեւ, թե ադրբեջանական լրատվական մարմինները դա բացատրում են նրանով, որ ԼՂՀ բանակի կազմում իրենց դեմ կռվում են ռուս, ուկրաինացի եւլ ազգերի զինվորականներ։ «Սակայն մեր թղթակիցը նոր է վերադարձել այնտեղից,- տեղեկացրեց խոսնակը,- եւ վստահորեն կարող ենք հաստատել, որ դա անհիմն զրպարտություն է. ԼՂՀ ազատամարտիկների հետ այլազգի զինվորություն չկա։ Կան միայն տեղաբնիկ ռուս, ուկրաինացի կամավորներ, այո՛, կամավորնե՛ր, որոնք, ի պատասխան իրենց նկատմամբ ցուցաբերված հոգատարության ու անկաշառ բարեկամության, օգնում են իրենց հայ եղբայրներին»։

Իսկ երեկոյան իմացանք, որ ռազմաճակատներում դեռեւս էական փոփոխություններ չկան՝ ո՛չ ԼՂՀ-ում, ո՛չ սահմանային շրջաններում։ Մարտակերտի, Ասկերանի շրջաններում



ու Լաչինի միջանցքում ազատամարտիկները հուսալիորեն վերահսկում են նախորդ օրերին նվաճված դիրքերը. Հաթերքի ու Չափարի ազատագրմանն ուղղված հարվածներ հասցնում եւ մեկ էլ Սարսանգի մատույցներում են նախապատրաստում վճռական գրոհը։

ԼՂՀ Գ.Խ-ը հրապարակել է կոչ, որով կռվողներին ու թիկունքի ամբողջ բնակչությանը հրավիրում է համերաշխության ու անխառն միասնության, ապա հերքում մամուլում տարածված այն լուրը, որի համաձայն ԼՂՀ Գ.Խ-ի եւ գործադիր մարմինների միջեւ վերջին օրերին անհամաձայնություն է եղել։

Սակայն չի կարող չանհանգստացնել այն հանգամանքը, որ Գ.Խ-ի այս ջանքը չի արժանանա պատշաճ արձագանքի. երեկ երեկոյան Ստեփանակերտի ռադիոյով հրապարակվել է Արցախի ժողովրդական ճակատի հայտարարությունը, որով սուր քննադատության է ենթարկում Գ.Խ-ը, պահանջվում «Պաշտպանության պետական կոմիտեն վերակազմել Պետական խորհրդի՝ նրան տրամադրելով լրացուցիչ լիազորություններ, եւ հրավիրել Սահմանադիր ժողով՝ վերջինիս հանձնելով օրենսդրական իշխանությունը» («Երկիր», 1993, փետր. 19)։ Ստացվում է այն տպավորությունը, թե ԼՂՀ դեմ ստեղծվել է մի ճակատ, որը համախմբում է ՀՀՇ-ն ու Հայրիկյանի ԱԻՄ-ը։ Աշխարհին հայտնի է, որ օրենսդիր մարմինը Գերագույն խորհուրդն է։ Էլ ի՞նչ նոր Պետական խորհուրդ, որը պիտի բռնի նրա տեղը։ Կամ Սահմանադիր ժողո՞վս որն է կռվող երկրի կյանքում։

Այս առթիվ ՀՀ Գ.Խ-ի 35 պատգամավորներ հրապարակել են հայտարարություն, որով արտահայտում են իրենց մտահոգությունը ցավալի միջադեպի առթիվ՝ կատարվածը համարում Հայաստանի ղեկավարության կողմից միջամտության արդյունք, պահանջում վերջ տալ ժողովրդավարական եղանակով ստեղծված մարմնի հեղինակության հետ կատարվող խաղին, միասնական ու համերաշխ գործողություն ծավալել ԼՂՀ օրինական պետական մարմնի ղեկավարության ներքո («Երկիր», նույն համարը)։

Ասկերանի շրջանից հաղորդեցին, թե այդ օրերին ազատագրված Քյաթուկ, Փրջամալ, Սառնաղբյուր գյուղերն են վերադառնում նրանց տարհանված բնակիչները, նորոգում են թշնամու ավերած տները, նոր կյանք սկսում հայրենի օջախներում։

**Փետրվարի 19-ին** լույս չունեինք, լուր չէինք կարող ստանալ ոչ մի տեղից։ Առավոտյան (20-ի) միայն մեր ներքին-հոռաթաղցի փախստական Գաբրիել Բալայանը զանգեց, թե բա չես ասի, Մարտակերտի ճակատում մերոնք առաջ են գնացել, նվաճել Հաթերքը, Չափարը եւ շրջակաները։

Կեցցե՛ն մեր հերոսները. գոյապայքարի 5-րդ տարելիցը չէին կարող նշանավորել ավելի մեծ հաղթանակով, քան այս է, որ ազատագրեց մեր միջնադարյան իշխանանիստ Հաթերքը՝ Խաչենի իշխանության մշակութային ու քաղաքական փառավոր կենտրոնը։

✧ ✧ ✧

Օրվա թերթերը բուն Արցախից էական տպավորություններ չունեին։ Միայն «Երկիրն» էր տպագրել իր երկու թղթակիցների՝ Գրիգոր Բաբայանի ու Վարդան Դեւրիկյանի ռեպորտաժները՝ տոգորված պատերազմող արցախահայության նկատմամբ ջերմագին սիրով, կարեկցանքով, նաեւ մեծ հույսով։

Բաբայանը խոսում է հոգեմաշ, մարմին քրքրող, տառապալից պատերազմի մասին եւ ցավագնորեն վկայում, որ «Արցախում այսօր կռվում են միայն ղարաբաղցիները։ Եվ եթե նրանք դա կարող են հայտարարել հպարտությամբ, մենք՝ երեւանցիներս կամ առհասարակ «հայաստանցիներս» այդ մասին հետո պիտի հիշենք ամոթով։ Արցախում այսօր հայաստանցիներիցս կռվում են լոկ դաշնակցական գումարտակն ու էջմիածինցիների ջոկատը»։ Եվ այն էլ համայն ազգությամբ «այսքան Ղարաբաղ գնալ-պահանջելուց հետո... իրենց՝ հայրենակիցներին միայնակ թողած յոթ միլիոնանոց եւ Թուրքիայից ամեն օժանդակություն ստացող Ադրբեջանի դեմ» ... Եվ այսքանից հետո հասկանալի ու շատ բնական է հնչեցրած տագնապը. «Եթե մոտ ժամանակներս Հայաստանի հանրապետությունից Արցախ չգնա օժանդակ ուժ (զինուժ, մարդ, մարդ-արարած, հայ տղա-

մարդ, կռվող զինվոր), ապա անհնարինության չափ դժվար է լինելու ոչ միայն թուրքի զավթած հողերն ազատագրելը, այլեւ եղածը պահպանելն անգամ»:

Ահա այսպես արդարորեն դաժան ու անզիջում:

Եվ որքա՜ն լավ է իրենց՝ ազատամարտիկների արձագանքն այս տագնապին՝ Հաքերի ու Չափարի ազատագրությունը:

Վարդան Դեւրիկյանը սովորաբար խոսում է այնտեղից, որտեղ ուրիշները կամ չեն լինում կամ լինելիս չեն տեսնում ամենակարեւորը: Եվ այս անգամ էլ Հադրութի վիճակն է պատմում, նախկին մարզի այն ամենանվազ շրջանի, որի վրա էլ հինգ տարիների մենածանր փորձություններն էին ծանրացել: Եվ հիմա այնտեղ ստեղծված մի բանակ, «ուր ընդգրկված են մինչեւ 45 տարեկան գրեթե բոլոր տղամարդիկ եւ ապրում են զորանոցային կյանքով»:

Դեւրիկյանը հիացմունքով ընթերցողին է ներկայացնում երկու հադրութցիների գործը՝ շրջխորհրդի նախագահ Գրիշա Հայրապետյանի եւ Երեւանից այնտեղ փոխադրված Իգոր Մուրադյանի:

Մուրադյանի «գլխավորած «Թեւան» հայրենակցական-բարեգործական միության ջանքերով շրջանի Մեծ Թաղլար գյուղում բացվել է գորգագործական արհեստանոց, իսկ շրջկենտրոնում գործվածքային արտադրամաս»... ԵՎ սրանք կյանք են ներարկում տնտեսապես հյուծված, ուժասպառ շրջանին:

Իգոր Մուրադյանի՝ շարժման առաջին շրջանի այդ եռանդուն կազմակերպչի, շատ գործակիցներ կա՛մ տիրացել են բարձր պաշտոնների եւ մոռացել շարժումը (եթե ո՛չ դարձել նրա հակառակորդը), կա՛մ էլ դեռ աղմկոտ ցուցարարների հետ են, իսկ նա կոնկրետ գործի մեջ է, կենսավորում է այն փոքրիկ տարածքը, որ իր շուրջն է, իր ազդեցության ներքո:

Իսկ Գրիշա Հայրապետյանը՝ համեստ ու ժողովրդանվեր մի երիտասարդ, գլխավորում է շրջանի պայքարը, աշխատանքը, գոյատեւման ջանքերը: Վերջերս նրա մի հեռուստաելույթի, երեւի խաբուսիկ տպավորության տակ, ես նրա մասին աննպաստ խոսք եմ գրել: Ցավում եմ ակամա գործած սխալիս համար:

✧ ✧ ✧

Այսօր, **փետրվարի 19-ին**, տեղի է ունեցել «Արցախի խնդիրը եւ Հայաստանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների դիրքորոշումը» թեմայով «կլոր սեղան», որը հրապարակել է ընդարձակ հայտարարություն՝ հանրապետությունում գործող բազմաթիվ կազմակերպությունների, միությունների ստորագրություններով:

Հայտարարության մեջ հրատապ խնդիր է համարվում ԼՂՀ ճանաչումը ՄԱԿ-ի անդամ պետությունների եւ, առաջին հերթին, Հայաստանի կողմից: Շեշտը դրվում է Հայաստանի կողմից ճանաչելու վրա, քանի որ դրա բացակայության պատճառով Ադրբեջանն Արցախի հարցը տարփողում է իբրեւ Հայաստանի տարածքային հավակնությունը հարեւան ինքնավար պետության հանդեպ. ՀՀ-ը չի կարողանում լիովին պաշտպան կանգնել ԼՂՀ իրավունքներին՝ ինչպես ՄԱԿ-ում, այնպես էլ միջազգային ուրիշ ատյաններում... Ուստի եւ հայտարարության մեջ կոչ է արվում ՀՀ ԳԽ-ում ճանաչել ԼՂՀ իրավասությունը, ապա հանրապետության դիվանագիտական բոլոր ուժերն ու հնարավորությունը գործադրել աշխարհի պետությունների ու ՄԱԿ-ի կողմից ԼՂՀ-ը ճանաչել տալու համար:

✧ ✧ ✧

Ռազմաճակատում էական փոփոխություն չի կատարվել: Հեռուստատեսության խոսնակն ասաց. «Ջարդախաչի ու Չափարի ուղղությամբ մարտը շարունակվում է փոփոխակի հաջողությամբ»: Հետաքրքիր է՝ հասկանո՞ւմ է իր ասածը. ի՞նչ է նշանակում փոփոխակի հաջողությամբ՝ մեկ օրվա ընթացքում: Մնացած հատվածներում ու հայ-ադրբեջանական սահմաններում սովորական վիճակ է՝ «հարաբերական անդորր»:



Նախորդ օրերին, ըստ երեւույթին, մեր լրատվական մարմինները խոսել էին ԱՄՆ-ի կառավարության այն դեմարշի կամ հայտարարության մասին, որի մեջ կշտամբանքի խոսք է ասվում Մարտակերտի շրջանում հայ ազատամարտիկների հաջողությունների առթիվ եւ արտահայտել էին հայության դժգոհությունը: ԱՄՆ-ի Հայաստանյան դեսպանությունն այս առթիվ հրապարակել է իր դժկամ բացատրությունը՝ հասկացնել տալով, որ ԱՄՆ-ը դեմ է առհասարակ պատերազմին ու նրա ամեն մի բորբոքմանը եւ գտնում է, որ բարդույթը պետք է լուծվի քաղաքական ճանապարհով՝ առանց նախապես պայմաններ առաջադրելու:

Սակայն, զարմանալի է, ԱՄՆ-ը դեմարշ է արել, երբ Մարտակերտի շրջանում հայերն ազատագրում էին իրենց սեփական բնակավայրերը, իսկ ո՞ւր էր, երբ այդ նույն գյուղերը նվաճում էին թուրքերը եւ բնակչությունն էլ բռնագաղթեցվում, փախստական էր դառնում: Մի՞թե մեծ ու արդար պետությանը վայել է այսպիսի դիրքը:

✧ ✧ ✧

Անցած գիշերվա ժ. 4-ին թուրքերը Մառնեուլի շրջանում, վերջին երկու-երեք ամիսների ընթացքում այս էլ ո՛ր երորդ անգամ, պայթեցրին այն գազատարը, որը վառելիք է հասցնում շրջափակումից խեղդվող Հայաստանին: ՀՀ կառավարական մարմինները, ժողովներ են անում, պատեպատ զարկվում, որպեսզի արագորեն վերացնեն վթարը, եւ թուրքն էլ ավելի մեծ արագությամբ նոր վթար ստեղծի...

✧ ✧ ✧

Հաղորդեցին, թե ՀՀ պրեզիդենտը հրամանագրով միջազգային տնտեսական կապերի գծով իրեն խորհրդական է դարձրել Արտյոմ Աբալյանցին՝ Ռուսաստանի այն ամենախոշոր բիզնեսմեններից մեկին, որի մասին այնքան շատ խոսում ու գրում էին Գորբաչովի ժամանակներում: Ո՞նց է համաձայնել, ի՞նչ պիտի անի եւ հատկապես ո՞նց պիտի կարողանա օգնել այս քանդված երկրի տնտեսության կարգավորմանը... Որքան գիտեմ՝ Գիշու Աբալյաններից է: Հետաքրքիր է՝ հիշո՞ւմ է իր ծննդավայրը, սիրտը ցավո՞ւմ է նրա եղերական վիճակի համար...

**Փետրվարի 20-ը** չգիտեմ ինչո՛վ կնշանավորվի ռազմաճակատում, ազատամարտիկներն ինչո՛վ կփառավորեն այն, ինչպիսի՛ նոր սխրանքով, կարեւոր է, որ նախօրյակը նշել են՝ փրկելով Հաքերքը, որի համար իմ սիրտը տրոփում է մի արտասովոր խանդով:

Ամբողջ գիշեր անլույս, անքուն մտածում էի այս հաղթանակի մասին, հինգ երկար ու ձիգ տարիների, նրանց հերոսականության, հաղթանակի, պարտությունների, մեր տառապալից երջանկության՝ հինգ տարի ձգված շարքի մասին:

Մեր ազգի պատմությունը չի հիշում այսպիսի բան, որպեսզի մեր ազատության ու անկախության համար մղված պայքարը, մեր գոյապայքարը անընդմեջ ձգվի հինգ տարի՝ աշխարհին ներկայացնելով այսքան հաջողություններ, հաղթանակների այնպիսի օրինակներ, ինչպիսիք են Շուշիի ազատագրությունը, Լաչինի բացումը, մեր հայրենի եզերքներում գոյացած այնպիսի ավազակաորջերի ոչնչացումը, ինչպես Մալիբեյլին, Ղարադաղլուն, Ամիրանլարը եւ սրանց կողերին տնկոտվածներն էին: Այն ե՞րբ է եղել, որ մեկ էլ մենք աշխարհին ցույց տայինք արդար ու սուրբ գոյապայքարի մեր անհողդողդ կամքը, եւ շատ ու շատ ազգեր աշխարհի բոլոր ծագերում տեսնեին, բարձր գնահատեին, համարեին դաս եւ ուղեցույց արդարության ու ազատության համար մաքառող ժողովուրդներին ի տես...

Հիշում եմ եւ երբեք էլ չեմ մոռանա. 1988 թ. աշնանը, արցախյան գոյապայքարի առաջին ցնցող, համազգային ոգեւորության ստեղծած ամիսներից հետո Արեւելյան Ամերիկայի ու Կանադայի Հայոց եկեղեցու առաջնորդությունն ու Ազգային երեսփոխա-

ԼՂՀ-ում անհանգստացած են Հայաստանի քաղաքական վիճակով, մտածում են, որ Արցախի խնդիրը կարող է լուծվել միայն խաղաղ ու ինքնատիրապետող Հայաստանի միջոցով: Իսկ եթե այստեղ փոթորիկ է (այսօր տասնհազարանոց մի հանրահավաք նորից պահանջել է Լեւոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը), ապա դա առաջին հերթին կատանի Արցախի վաղվա հեռանկարը: Մոսկվայից եւս մտահոգությամբ են խոսում Հայաստանում բարձրացող ուժերի գործունեության մասին: Մի խոսքով՝ ամենուրեք անհանգստացած են, տագնապում են, բացի Հայաստանի ղեկավարությունից, որը տեսանելի ու շոշափելի ոչ մի քայլ չի անում վիճակը պարզելու եւ բարելավելու համար. ո՛չ գործնական խոսակցություն ընդդիմության հետ, ո՛չ դրությունը կարգավորող, ժողովրդի աղետալից վիճակը թեթեւացնող որեւէ միջոցառում:

ԳԽ-ի նախագահի առաջին տեղակալ Արա Սահակյանը հեռուստատեսության ներկայացուցչին գանգատվեց Գերագույն խորհրդում ստեղծված քաոսի համար. քաղաքական այնպիսի մթնոլորտ է այնտեղ, որ ոչ մի հարց չի լուծվում իր բնականոն, տրամաբանական ընթացքով: Եվ սա՝ Արցախյան գոյապայքարի մի այնպիսի շրջանում, որ վճռական է ու ճակատագրական: Նման իրավիճակում քաղաքական խաղերով զբաղվելը արդեն դավաճանություն է Արցախի հանդեպ,- այսպես է մտածում Թուրքիայում բանակցությունների գնացած Արարքցյանի տեղակալը, եւ դժվար չէ տեսնել, թե ինչպես վերստին եւ այս էլ որերորդ անգամ շահարկվում է Արցախը: Կարծես իրենք են այնտեղ թուրքին հալածողը, եւ այստեղից էլ իրենց խանգարողներ են հայտնվել, թիկունքից հարվածում են:

Մեր խորհրդարանի երկրորդ ղեկավարը բավական լավ հասկանում է, թե ո՛րն է դավաճանությունն Արցախի հանդեպ: Իսկ անցյալ ամառը, երբ այնտեղ թուրքը գյուղ գյուղի ետեւից էր գրավում, եւ իրենք, հարցը նստաշրջանում մի ամբողջ ամիս ծամծմելուց հետո, մի կողմ դրին, թե «Արցախի ճանաչման խնդիրը մեր պարտականությունների մեջ չի մտնում», դավաճանությո՞ւն չէր, այլ Արցախի կռվին օժանդակելու լավագույն եղանակն էր, որ իրենք գտել էին Լեւոն Տեր-Պետրոսյանի հրահանգով:

Եվ այսքանից հետո էլ՝ «Ո՞ւր են մեր մտավորականները, ինչո՞վ են զբաղված, անտարբերությունից ե՞րբ են արթնանալու»,- սա էր Սահակյանի վերջին խոսքը:

Չգիտե՞, որ հայ մտավորականները ցրտից կուչ եկած դիմադրում են կարիքի հարվածներին, հացի հերթերում են, գոյություն քարշ տալու, յուրայիններին գարուն հանելու տանջալից հոգսերի մեջ: Ո՞նց էլ հիշում են մտավորականներին, հենց որ ճակատները զարկում են իրենց իսկ ստեղծած պատնեշներին:

◇ ◇ ◇

Նորից, արդեն 12-րդ անգամը, Երեւան է հասել մեր հրաշալի բարեկամ անգլուհի Քերոլայն Կոքսը եւ բերել է դեղորայք ու այլազան օգնություն: Ասում է՝ իմ հարազատ Հայաստանն ու Արցախը ծանր կացության մեջ են, ես ինչպե՞ս կարող եմ անտարբեր մնալ:

◇ ◇ ◇

Այսօր Ադրբեջանում նշում են «Խոջալվի ողբերգությունը»՝ նոր մի շախսեյ-վախսեյ: Լավ է. մի ժողովուրդ, որ ողբերգություն չունեցավ, խելքի չի գա, ուրիշի ցավը չի հասկանա... Բայց շատ են աղմկում, ասես հայերն էլ, իրենց պես, Խոջալվում մարդակերությամբ են զբաղվել:

Իսկ Բաքվում գնդակահարության են դատապարտել առաջները գերի ընկած 11 հայ ազատամարտիկներին, եւ ՀՀ ԳԽ-ի Մարդու իրավունքի հանձնաժողովի նախագահ Ռ. Պապայանը հույս ունի, թե միջազգային իրավապահ ու մարդասիրական մարմիններին ոտքի հանելով հնարավոր կլինի փրկել նրանց կյանքը:



◇ ◇ ◇

Այսօր Ռուսաստանի խորհրդարանը հաստատեց Հայաստանի տարածքում ռուսական զորքերի կարգավիճակի վերաբերյալ Ռուսաստանի դաշնության ու Հայաստանի Հանրապետության միջեւ կնքված պայմանագիրը (հիշում եմ, թե մեր իշխանության տերերը ինչպիսի ցնծություն էին ապրում ռուս զորքերի՝ Հայաստանից հեռանալով, ինչպես դա համարում էին Հայաստանի անկախությունն ապահովելու միակ պայմանը):

◇ ◇ ◇

Նուրսուլթան Նազարբաեւն այսօր, ընդունելով Ալմա-Աթայում գտնվող ադրբեջանական կառավարական պատվիրակությանը, իր անհանգստությունն է արտահայտել Լեռնային Ղարաբաղում սաստկացած ռազմական իրադրության առթիվ, պնդել, որ ինքն անթույլատրելի է համարում Ադրբեջանի տարածքային որեւէ փոփոխություն. «Ինչ մնում է վիճելի հարցերին, ապա դրանք էլ պետք է լուծել բանակցությունների սեղանի շուրջ»:

Իսկ մեր կառավարական շրջաններում դեռ չի նստել ոգեւորությունը Ելցինի ու Նազարբաեւի նախաձեռնությունների համար եւ հույս ունեն, թե հենց Նազարբաեւն էլ պիտի ԼՂՀ հարցը լուծի մեր ուզածի պես:

◇ ◇ ◇

Եվ, վերջապես, կնկնվեց ուրախարար լուրը. Մոսկվայում, հնգօրյա դատավարությունից հետո, այսպես կոչված «Ժողովրդական ատյանը» Միխայիլ Գորբաչովին մեղադրեց պետությունը քայքայելու եւ ժողովուրդներին տեւական տառապանքների ենթարկելու (մի խոսքով՝ հայրենիքին դավաճանելու) համար, նրան դատապարտեց «հավերժական նզովքի ու ամոթանքի») պահանջելով, որ դադարեցվի ամեն մի առնչություն նրա եւ նրա անունը կրող հիմնադրամի հետ, նրանից խլվեն բոլոր պարգեւները, այդ թվում՝ Նոբելյան մրցանակը:

Ռուս ժողովուրդն արդեն ուշքի է գալիս այս չարագործի սրսկած թմրադեղի ազդեցությունից եւ անպայման կգիտակցի, թե ինչպես իրեն ու իր հետ իրենց բախտը կապած ազգերին անելանելի դժոխք նետեց Գորբաչով կոչված նոր Ներոն, նրան կենթարկի այն պատժին, որին նա իսկապես արժանի է:

**Փետրվարի 26-ին** պարզվեցին երեկվա մարտի մանրամասները. Մեծշենի ազատագրման համար մերոնք կորցրել են երկու զինվոր, ունեն 10 վիրավոր: Թշնամու սպանվածները 50-ն են, տվել է նաեւ զրահատեխնիկայի մեծ կորուստ: Այս 50-ը, ասում են, հիմնականում 17-18 տարեկաններ են, Բաքվի իրենց ռազմական ուսումնարանի կուրսանտներ (երեւի ուսումնական փորձառության բերած են եղել):

Այսօր կռիվը գնում էր Կուսապատի վրա, որը բավական վերեւ է Մեծշենից: Ուրեմն, կնշանակի՝ Մեծշենը, որ գտնվում է ավտոմայրուղու եզրին, ազատագրվել է Սարսանգի ու մայրուղու կողմից առաջացած զորախմբերի ուժերով, եւ հիմա Կուսապատն ու Հոռաթաղը, թերեւս նաեւ Մարտակերտը ձեռք գցելու համար մերոնք թշնամուն շրջափակման մեջ են առնում:

◇ ◇ ◇

Ասում են՝ ԼՂՀ պաշտպանության մինիստրի տեղակալ Սամվել Բաբայանն ասել է՝ հանրապետության բանակն արդեն կազմավորվել է, օրեցօր զորանում է եւ շուտով ազատագրված կլինեն մարզի նախկին 5 շրջանները՝ ինչպես ձեռքի 5 մատերը, որոնք բոլորն էլ հավասարապես մերն են ու հարազատ, բռունցք անելիս անհրաժեշտ (իսկ Շահումյա՞նը, մի՞թե այն մերը չէ եւ չպետք է ազատագրվի):

Ադրբեջանն աղմկոտ վայնասունով նշեց Խոջալվի տարելիցը՝ իբրեւ «բռնության,

մարդկային իրավունքի դեմ գործված մեծ վայրագության» ցուցադրություն: Ադրբեջանը՝ հասկանալի է... Բայց չէ՞ որ Մոսկվան էլ ձայնակցում էր՝ մոռացած Սումգայիթը, որի 5-րդ տարելիցն էր լրանում, եւ դեռ նրա համար ոչ ոք պատասխան չէր տվել, որպեսզի 4 տարի հետո էլ հենց նույն պատասխանատուները չկազմակերպեին այդ նենգապատիր Խոջալուն:

✧ ✧ ✧

Երեկ Ժնեւում Ռուսաստանի ու ԱՄՆ-ի ներկայացուցիչները համատեղ հրապարակել են հայտարարություն, որով հայտնում են իրենց անհանգստությունը Ղարաբաղի հակամարտության, նրա նոր ծավալումների առթիվ, մտածում են, որ այսպես շարունակվելու դեպքում այն կարող է ընդգրկել Անդրկովկասը, ամբողջ Կովկասը եւ առավել մեծ տարածքներ. երկու կողմերին առաջարկում են դադարեցնել կրակը եւ նստել խաղաղ բանակցությունների սեղանի շուրջ:

«Սնարք» անկախ լրատվական գործակալությունը Բաքվում ունի իր ներկայացուցիչը, որն արդեն հաղորդել է, թե Բլեյան-Սարդարյան «Նոր ուղին» ու նրա թուրք ձայնակիցն, իբր, որոշել են Թբիլիսիում բանակցությունների նստել եւ հայ-ադրբեջանական բարդույթի հարցը լուծել: Այդ առթիվ հարցրել են ԼՂՀ լրատվական գործակալության ղեկավար Մարսել Պետրոսյանի կարծիքը, եւ նա ասել է՝ ոչ մի հայ-ադրբեջանական բարդույթ էլ չկա, ամեն ինչ պտտվում է Արցախի շուրջ, եւ Արցախի օրինական իշխանություններն էլ այդ հարցը պիտի լուծեն հակառակորդ կողմի հետ, որը Բաքուն է:

✧ ✧ ✧

Երկու օր առաջ լույս տեսավ «Նոր ուղի» թերթի առաջին համարը՝ ըստ էության երկու ծնողների (Վ. Սարդարյանի եւ Ա. Բլեյանի) զավակ, որովհետեւ բոլոր նյութերը հիմնականում այդ երկուսի ստորագրությամբ են «փայլում», եւ երկուսի արդեն հանրահայտ տեսակետի վրա են հենվում հիմնականում Ղարաբաղի բարդույթին վերաբերող բոլոր ութ էջերի զառանցանքները: Ադրբեջանի տարածքային ամբողջության այս ջատագովները, նորից ասպարեզ նետելով Լեռնային Ղարաբաղն իրենց հարազատ թուրք եղբայրներին պարգեւելու պատրաստակամությունը, կոչ են անում երկխոսության, երեւի հույս ունենալով, թե միայն այսպես կարող են հանգիստ առնել բոլոր այն դատարկ գլուխները, որոնք պիտի կլլացնեն իրենց հայադավ քարոզները:

Սրանից հետո էլ, ինչպես հաղորդում են Բաքվի լրատվական մարմինները, Աշոտ Բլեյանը զանգել է Ադրբեջանի Ազգային անկախության կուսակցության նախագահ Էթիբար Մամեդովին (ԱԺՃ-ի նախկին ղեկավարներից) պայմանավորվել, որպեսզի Ղարաբաղի խնդրով տեղի ունենա իրենց բարձր հանդիպումը Թբիլիսիում: Արդեն համաձայնությունը կայացել է: Հանդիպման հետ կապված կազմակերպչական հոգսերն էլ իր վրա է վերցրել Վրաստանի ազգային անվտանգության կուսակցությունը («Երկիր», 1993, փետր. 26):

✧ ✧ ✧

Այսօր Հռոմում բացվել է ԵԱՀԽ աշխատանքային խմբի հերթական հանդիպումը Լեռնային Ղարաբաղում հակամարտությունը կարգավորելու համար: Նրան մասնակցում են ՀՀ ու ԼՂՀ պատվիրակությունները (երկրորդը, հայտնի չէ, ի՛նչ կարգավիճակով): Հանդիպումն ի՞նչ արդյունք կտա, հայտնի չէ, նույնիսկ անհնար էլ է գուշակել, որովհետեւ նախընթացին Ռաֆայելին Այսրկովկաս էր ժամանել, սակայն Երեւանում մնաց (ուրիշ խոսքով՝ իրեն ցույց տվեց) միայն 4 ժամ, Ղարաբաղում առհասարակ չեղավ, իսկ թե ի՛նչ արեց Բաքվում, միայն ինքն ու թուրքերը գիտեն:



ՀՀ ԳԽ-ի Արցախի հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը եւս թերահավատ է հանդիպման արդյունքների վերաբերյալ, որովհետեւ Հայաստանի ղեկավարները ջանացել են գործից հեռու պահել շահագրգիռ մարդկանց ու մարմինները եւ Հռոմ են ուղարկել նախագահի խորհրդական Ժիրայր Լիպարիտյանին (հետագայում պարզվեց, որ նա նշանակված է ԱԳՆ-ի առաջին տեղակալ) եւ պատգամավոր Խաչատուր Բեզիրջյանին, որոնք, հավանական է, պետք է ներկայացնեն նախագահի տեսակետը, եւ արցախահայությունը դարձյալ պիտի հայտնվի սահմանների անձեռնմխելիության ու ինքնորոշման իրարամերժ սկզբունքների» գերին («Երկիր», 1993, փետր. 25):

Հանդիպումը վճռական բեկում չի կարող խոստանալ նաեւ այն պարզ պատճառով, որ, ինչպես Ռաֆայելին է հայտարարել, հայ ու թուրք կողմերը ծայրահեղ ու իրարամերժ դիրքեր են զբաղեցնում եւ չեն ձգտում փոխզիջումի:

Համենայն դեպս սպասենք եւ հուսանք, թե չսպասած տեղից էլ կարող է լույս ծագել:

**Փետրվարի 27-ին ու 28-ին** ռազմաճակատից կարեւոր լուր չհաղորդեցին, բացի նրանից, որ Սարսանգի շրջակայքում 28-ի առավոտյան թուրքերը մեծ գրոհ են ձեռնարկել, ջարդ կերել ու նահանջել:

Դրսերից եւս էական բան չունեն լրաբեր-լրատուները: Նույնիսկ չգիտեն էլ՝ ի՛նչ է կատարվել Հռոմում, չէ՞ որ 26-ին պիտի սկսվեր այն մեծ խորհրդաժողովը, որի քննության միակ թեման Ղարաբաղի բարդույթն էր: Այստեղ էլ, իբր, Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչները դռնփակ նիստում պայմանավորվել են երկկողմ բանակցություններով նախապատրաստել ապագա քննարկումները: Բայց չէ՞ որ բուն Ղարաբաղի ներկայացուցիչներն էլ այնտեղ են: Ինչպե՞ս նրանց թիկունքում նման գործ են անում:

✧ ✧ ✧

Քեռոլայն Կոքսը գտնվում է Ստեփանակերտում, դարձյալ իր մարդասիրական ու բարոյական օգնությունն էր ցույց տալիս, իսկ հանրապետության արվեստի վարպետներն իրենց երախտագիտությունն են արտահայտում մեծ համերգով, այսինքն՝ ինչով որ կարող են:

**Մարտի 1-ը** ռազմաճակատում էական փոփոխություն չմտցրեց: Կռիվը գնում էր Կուսապատի համար, որը կլինի դուռ դեպի Մարտակերտ:

Իսկ Հայաստանի սահմանային շրջաններում դրությունն ամեն օր ավելի ծանր է. հրետակոծվում ու ռմբակոծվում են բնակավայրերը, ավերվում, տալիս մեծաթիվ զոհեր ու նյութական վնասներ, եւ մխիթարվելու համար էլ ասում են՝ մերոնք հակառակորդին պատասխանել են կրակով, այդպես լռեցրել նրա կրակակետերը:

Մոսկվայում Ռուսաստանի արտգործնախարար Կոզիրեւն ու Թուրքիայի նրա գործակից Հիքմեթ Չեթինը քննել են Եվր-Ասիայի ամենատաք երկու կետերի՝ Ղարաբաղի ու Բոսնիա-Հերցեգովինայի վիճակները, որոշել Ադրբեջանի ու Հայաստանի այդ մեծ ու ծանր բարդույթը լուծելու նպատակով կատարել ամենավճռական քայլեր:

Հետագայում պիտի պարզվեր, որ երկու արտգործնախարարները, ղարաբաղյան հակամարտությունը լուծելու նպատակով, որոշել են այցելել Երեւան ու Բաքու եւ բանակցություններ վարել երկու հակառակորդ հանրապետությունների ղեկավարների հետ («Երկիր», 1993, մարտի 19):

✧ ✧ ✧

Հռոմում Մինսկի խորհրդաժողովը նախապատրաստող խմբի անդամների հանդիպումը, որ ձգվել էր փետրվարի 26-ից մինչեւ այսօր, վերջում ընդունել է «Լիազորությունների պայմաններ» կոչվող մի փաստաթուղթ, որը սահմանում է ԼՂՀ ժամանելիք դիտորդների առաջադրանքները: Ըստ այդ փաստաթղթի՝ միջազգային դիտորդները տեղեկացվելու են հակամարտության շրջանում՝ մի քանի հատուկ ռազմական քայլեր վերահսկելու նպա-

սակով, որն էլ պետք է հանգեցնի զինված ընդհարումը դադարեցնելուն, ինչպես եւ շրջափակումների վերացմանը, մարդասիրական օգնության անխափան մատակարարմանը (տե՛ս «ՀՀ», մարտի 6)։

**Մարտի 2-ին** Ասկերանի շրջանի Խրամորթի ազատագրումից հետո, գյուղի դպրոցի ներքնահարկում խրամատավորված տասը թուրք սպաներ գերի են հանձնվել հայ ինքնապաշտպանության ուժերին։

✧ ✧ ✧

**Փետրվարի 26-ից** մինչեւ **մարտի 1-ը** ԵԱՀԽ-ի գծով հանձնաժողովի Հռոմում տեղի ունեցած նիստը, որ նվիրված էր Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդրին, եւ որին մասնակցել էին ՀՀ ու ԼՂՀ պատվիրակությունները, ըստ երեւույթին դարձյալ եղել է անոյտուղ ջուր ծեծելու գործողություն, որովհետեւ, նախ, ԼՂՀ-ն չի ընդունվել որպես հակամարտող կողմ, նրա պատվիրակության մեջ ճանաչվել են երկու համայնքները՝ հավասար իրավունքներով (թե՞ առանց իրավունքների, համենայն դեպս՝ իբրեւ իրար հավասար արժեցող խմբեր) եւ որ դարձյալ վտանգավոր է, հակամարտող կողմեր են համարվել Հայաստանն ու Ադրբեջանը։ Իսկ վերջինն ապացույց է, որ ամեն ինչ պիտի ծառայեցվի Ադրբեջանի ամբողջության պահպանման սկզբունքին։

**Մարտի 5-ին** «Ազգը» տպագրեց հարցազրույց ԼՂՀ լուսավորության եւ մամուլի դեպարտամենտի ղեկավար Մարսել Պետրոսյանի հետ, որն ամեն կերպ ջանում էր ապացուցել, թե ԼՂՀ ԳԽ-ը, իսկ ավելի կոնկրետ՝ նրա Նախագահությունը, անկարող էր գլխավորել պատերազմի մեջ գտնվող արցախահայությանը, այդ պատճառով էլ ստեղծվել է «Պաշտպանության պետական կոմիտեն, որն անցյալ տարվա աշնանամուտին հիմնովին փոխել է վիճակը, դարձել դրության տերը եւ այժմ իրականացնում է տնտեսության, պատերազմի, օրինապահության եւ մյուս բոլոր ոլորտների ղեկավարությունը։

Այս ֆոնի վրա էլ բավական ցցուն է դառնում արհամարհական վերաբերմունքը Գերագույն խորհրդի ու նրա Նախագահության հանդեպ։

Ասում է. «Մենք անկեղծ հարգանքով ենք լցված մեր իսկ կամքով ստեղծված Գերագույն խորհրդի հանդեպ։ Խոսքը նրա Նախագահության մասին է, որը շարունակում է գործել իներտ, ոչ բեղմնավոր, եւ ամբողջ այդ «գործունեության» տեմպը չի համապատասխանում ժամանակի հրամայականին։ Գաղտնիքը սա է։ Ի՞նչ կարելի է ասել մի Նախագահության մասին, որը յոթ ամսից ավել չի հրավիրում իր հերթական նիստը, չի ընդունում նոր օրենքներ։ Նույն անխոհեմությամբ որոշում է ընդունել նաեւ ռազմական դրությունը երեք ամսով երկարաձգելու մասին։ ԳԽ-ի Նախագահության կազմում բավական լուրջ, մտավորական անձնավորություններ են հավաքվել, եւ մնում ես ապշած, երբ նրանք թելադրում են իրենց կամքը՝ փորձելով փոխարինել ամբողջ Գերագույն խորհրդին»։

Իհարկե, այս խոսքից չի կարելի չեզրակացնել, որ Նախագահությանը մերժելով ԳԽ-ին փոխարինելու դերը, այն վերապահվում է ՊՊԿ-ին։

Բայց մի՞թե այդ է ուղիղ ճանապարհը եւ ոչ թե Նախագահությանը կենդանացնելը եւ խորհուրդը գործի դնելը։ Չէ՞ որ սրանք են հանրապետության իշխանության գերագույն մարմինը, եւ մյուս բոլորը պիտի ենթարկվեն սրանց, կատարեն սրանց ղեկավար ցուցումները։

Հուսանք, որ այս ճեղքն ավելի չի խորանա եւ հանրապետության ղեկավարները լեզու կգտնեն իրար հետ։

**Մարտի 6-ին** ռազմաճակատից էական լուր չստացանք։ Այլ ոլորտներում արցախյան հակամարտության վերաբերյալ որեւէ միջոցառում էլ չկար։ Եվ, հավանաբար, այս պարապը լցնելու համար, Բլեյան-Սարդարյան զույգը կազմակերպեց իր, այսպես կոչված, կուսակցության հիմնադիր ժողովը, որն, իհարկե, անդրադարձավ Արցախի հարցին, եւ ահա թե ի՛նչ որոշվեց ըստ ժողովին մասնակցած թղթակցի։ «... Որոշեցին,- ասում է,-



խորհրդարանին առաջարկել դադարեցնել Լեռնային Ղարաբաղից ՀՀ ԳԽ ընտրված պատգամավորների լիազորությունները եւ ՀՀ անկախության հռչակագրից դուրս թողնել Ղարաբաղին վերաբերող մասը։

Անկեղծ ասած, ավելի իրատեսական մոտեցում հնարավոր չէր ակնկալել, քանի որ իր ներկայության մասին ստեղ-ստեղ հիշեցնող մի ոմն առաջարկեց Ադրբեջանի՝ փոխզիջման չգնալու դեպքում նույնիսկ որդեգրել միակողմանի զիջումային քաղաքականություն։ Պատկերացրեք հետեւեց փոխըմբռնումը։

Նշենք նաեւ, որ ռեպլիկներով հանդես եկող յուրաքանչյուր ոք հարկ էր համարում մի քանի անգամ կրկնել, որ ինքը հայ է, որ հավաքվածները հայեր են։ Եվ, տպավորություն էր ստեղծվում, թե միմյանց հավատում էլ էին...» («Երկիր», 1993, մարտի 9)։

**Մարտի 7.** Ալբերտ Ղազարյանը նշանակվել է ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի ներկայացուցիչը Հայաստանի հանրապետությունում,- հաղորդեցին՝ առանց բացատրելու, թե սա՞ ինչ է նշանակում, մի՞թե կոմիտեներն իրենց դեսպանություններն են ունենում, այն էլ օրինական կառավարության ներկայացուցչի (Մանվել Սարգսյան) կողքին։ Թե՞ երկիշխանությունն Արցախում այնքան հիմնավոր տարածվել է, որ չէր կարող այսպիսի հետեւանք չունենալ։

✧ ✧ ✧

Ադրբեջանի հյուսիսում, Կուսարի շրջանում կառավարության դեմ ապստամբել են լեզգիները, ներկայացրել ինքնավարության եւ Ադրբեջանից բաժանվելու իրենց պահանջները։ Իշխանությունները դաժանորեն ճնշել են ապստամբությունը։ Կան մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ։ Մոսկվայից այս լուրը հաղորդեցին՝ ավելացնելով, թե Ադրբեջանի ԱԳ նախարարն ասել է, դա ահավոր սուտ է, որ տարածել են մեր թշնամիները՝ Ադրբեջանի հավասարակշռության հակառակորդները։

✧ ✧ ✧

Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Իսա Գամբարովը երեկ, ընդունելով Թուրքիայի արտգործնախարար Հ. Չեթինին, նրա հետ պայմանավորվել է, թե երկու երկրների ներկայացուցիչները ԵԱՀԽ-ի Մինսկի խորհրդաժողովում ինչպես պիտի մասնակցեն ղարաբաղյան բարդույթի լուծմանը։

Իսկ արտգործնախարար Թոֆիկ Ղասումովն ու Չեթինն էլ եկել են այն եզրակացության, որ վճռական կլինի հինգ երկրների՝ ԱՄՆ-ի, Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների միացյալ վճիռը, միայն դա կլինի որոշիչ, որպեսզի «դադարեցվի կրակը, վերացվեն բոլոր շրջափակումները, ապա բոլոր զորքերը՝ տեխնիկայի հետ միասին դուրս բերվեն Ադրբեջանի տարածքից»։ Իհարկե, նրանք «Ադրբեջանի տարածք» ասելով, տվյալ դեպքում, հասկանում են Ղարաբաղը։ Եվ այնտեղ հայությանը զինաթափելով՝ արդեն ազատ կլինեն հարցը լուծելու թուրքավարի։

**Մարտի 8-ը** ջնջեց նախորդ օրվա հարուցած հարցերը. նախ՝ Մոսկվայից հաղորդեցին, թե երեկ Մոսկվայում, Ադրբեջանի ներկայացուցչության առաջ բազմամարդ ցույց են արել լեզգիները՝ ներկայացնելով իրենց ինքնավարության պահանջը եւ վճռականորեն բողոքելով այն իրողության դեմ, որ Ադրբեջանում լեզգի երիտասարդներին քշում-տանում են ղարաբաղյան կռվին։

Ուրեմն, Կուսարի շրջանում տեղի ունեցածը ոչ թե սուտ է եղել, ինչպես պնդում էր Ադրբեջանի արտգործնախարարը, այլ մի մասը, ամենայն հավանականությամբ, լայնորեն ծրագրված այն միջոցառման, որ լեզգիներն են կազմակերպել իրենց բուն հայրենիքում՝ Կուսարում, եւ Մոսկվայում, աշխարհի աչքի առաջ։

Լեզգիների «Սադվալ» ազգային-ազատագրական շարժման նախագահ Սելիմխանո-

վը ՌԻԱ-ի թղթակցին հաղորդել է, թե Կուսարի շրջանում «իսկը ահաբեկչություն է իրականացվում 95 տոկոսը կազմող նրա լեզգի բնակչության դեմ»։ Նրա ասածով՝ Ադրբեջանի ՆԳՆ աշխատակիցները, որ հանդես են գալիս «Գորշ գայլեր» անունով, գիշերները խուժում են լեզգիների տները, զորակոչային տարիքի պատանիներին իրենց հետ տանում՝ Ղարաբաղի կռվին ուղարկելու նպատակով («Երկիր», 1993, մարտի 9)։

Եվ, ամենակարեւորը, ինչպես մոսկովյան հեռուստատեսության երկու ծրագրերը, այնպես էլ նույնիսկ մեր թմրած լրատուները ոգեւորությամբ հայտարարեցին, որ նախորդ երկու-երեք օրերի մարտական եռանդուն գործողությունների շնորհիվ Մարտակերտի շրջանում ազատագրվել են եւս մի շարք գյուղեր՝ Կուսապատը, Հոռաթաղը, Մոխրաթաղը, Ջանյաթաղը, Դամիրլուն, եւ այսօր ազատամարտիկները կռվում են Մարտակերտ քաղաքի մատույցներում։

Մոսկվայի խոսնակի ասածն այս էր. վերջին մի քանի շաբաթվա ընթացքում ԼՂՀ մարտիկներն ազատագրել են մոտ 25 գյուղ,- եւ ցավելու պես,- Սակայն շրջանի տարածքի կեսը դեռեւս գտնվում է ադրբեջանական զորամիավորումների հսկողության ներքո։

Իսկ Ադրբեջանի ղեկավարները պատեպատ են զարկվում կրակը դադարեցնելու համար։ Այդ խնդրին են լծել նաեւ Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինին, որը վերջին ժամանակներս Ռուսաստանի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի արտգործնախարարների հետ ունեցած բանակցություններում ամեն ջանք գործ է դրել ղարաբաղյան բարդույթի լուծման գործին ներգրավելու նաեւ նրանց հեղինակավոր միջամտությունները։ Այսօր Բաքվում այդ մասին է եղել նրա խոսքը պրեզիդենտ Էլչիբեյի հետ, որն արդեն մտածում է, թե հարցը միայն ու միայն մեծ տերությունների վճռական միջամտությամբ կարող է լուծվել։ Բայց ո՞ւր է վերջը։ Չէ՞ որ, ինչպես մոսկովյան հեռուստատեսության խոսնակն էր ասում, հենց միայն վերջերս տարածվեցին Ռուսաստանի ու ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Ֆրանսիայի, այսինքն՝ այդ հզոր ու հեղինակավոր տերությունների արտգործնախարարների կոչերը կրակը դադարեցնելու, արյունահեղությանը վերջ տալու եւ բարդույթի լուծման համար քաղաքական ըմբռնողության հասնելու մասին։ Ինչո՞ւ կռիվը շարունակվում է, ինչո՞ւ Ադրբեջանը հենց այսօր էլ ռմբակոծում է Գորիսի շրջանի Տեղն ու Կոռնիձորը, Տավուշի շրջանը... Չէ՞ որ դրանք էլ Ղարաբաղում չեն գտնվում, եւ Ադրբեջանն ինքն է ղարաբաղյան հակամարտությունը ծավալել, տարածել Հայաստանի ամբողջ սահմանով մեկ...

**Մարտի 9-ին** թուրքերը համառորեն դիմադրում էին Մարտակերտի վրա գրոհած մեր ինքնապաշտպաններին։ Պարզ է, գիտեն, թե իրենց համար ճակատագրական ի՛նչ նշանակություն պիտի ունենա շրջկենտրոնի կորուստը, եւ գործադրում են վերջին ուժերը։ Բայց, միեւնույն է, ազատամարտիկները լի են վճռականությամբ՝ ազատագրելու հայրենի հողն ու օջախները եւ կանգ չեն առնի, մինչեւ չհասնեն հին Ջրաբերդի ու Գյուլիստանի վերջին սահմաններին։

Տեսնողներ են եղել, թե ինչպես Մարտակերտում թուրքերն ավերում են տները եւ շինանյութերը փախցնում, կործանում են արտադրական հզորությունները, որոնց գործարկման համար վերջերս Էլչիբեյն ահագին գումարներ էր հատկացրել (միայն կոնյակի գործարանը վերականգնելուն՝ մեկ միլիոն)։ Հիմա, ըստ երեւույթին, այլեւս ոչ մի հույս չունեն եւ «աշխարհի վերջն» են անում...

Ասում են՝ թուրքերը կատաղի հարձակում են ձեռնարկել Լաչինի միջանցքի հյուսիսում, Կուչուլարի ու Սիրասիլի կողմերում (ինձ բոլորովին անծանոթ անուններ են, չկան քարտեզներում)։ Մերոնք դիմավորել են ըստ արժանվույն եւ ջարդ տալով ստիպել, որ ետ փախչեն։

Հռոմի հանդիպումից վերադարձած մեր պատվիրակները հիացած չեն կատարվածի համար (պայմանավորվել են, որ ապրիլին գումարվի Մինսկի մեծ խորհրդաժողով, ապա եւ ջանքեր գործադրվեն հրադադարն ապահովելու համար, բարդույթի գոտի գան դիտորդներ՝ իհարկե, հրադադարից հետո,- համարյա այսքան բան), սակայն արդեն համաձայնեցված գործունեություն եւ դիվանագիտական քայլեր անել են սովորում մեր երկու պատվիրակությունները։ Այսօր Լ. Տեր-Պետրոսյանն ընդունել է ԼՂՀ պատվիրակությանը՝ Բորիս Առուշանյանի գլխավորությամբ, երեւի պայմանավորվել են հետագա միջոցառումների վերաբերյալ։



Բաքվում էլ մեծ աղմուկ է եղել։ Արտգործնախարարը հաղորդել է հանդիպման մանրամասները, պատմել է, որ իր ու ՀՀ պատվիրակության առանձին բանակցություններ են եղել, որոնց ընթացքում հայերը համաձայնել են, որ ԼՂՀ-ը չմտնի Հայաստանի կազմի մեջ, սակայն ունենա անկախ ինքնավարություն, իրենք էլ դրան դեմ են կանգնել, քանի որ Ադրբեջանը բազմազգ պետություն է եւ չի կարող յուրաքանչյուր ազգային փոքրամասնության տալ անկախ ինքնավարություն եւ ասել՝ արեք, ինչ որ ուզում եք, բաժան-բաժան արեք մեր հանրապետության ամբողջականությունը։ Մենք միայն համաձայն ենք, որ Ղարաբաղի հայությանը տրվի մշակութային ինքնավարություն, իսկ նրանց դա չի բավարարում։ Այդպես էլ բանակցությունները վերջնական վճռի չեն հանգել...

✧ ✧ ✧

Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը Բաքվում է գտնվում, ինչպես միշտ, երբ Արցախում գործերը բարդանում են եւ կարիք է լինում, որ Թուրքիան ցույց տա իր խառնակիչ դերը միջազգային մակարդակներում, ոտքի հանի Ռուսաստանի ու մյուս մեծ տերությունների ղեկավարներին։

Չեթինն ու Էլչիբեյը խորհրդակցել են ղարաբաղյան բարդույթի շուրջ, իբր, եկել են այն եզրակացության, որ այն անհնար է լուծել պատերազմի դաշտում, անհրաժեշտ են քաղաքական ուղիներ։

Լավ է՝ խելքի են եկել, բայց որո՞նք են նրանց քաղաքական ուղիները. Էլչիբեյի մշակութային ինքնավարության առաջա՞րկը եւ այն էլ պայմանով, որպեսզի Հայաստանը եւս Զանգեզուրի 200 հազար թուրքերին շնորհի նման ինքնավարությո՞ւն։

Չեթինը դեռ մի քանի օր առաջ, մարտի 6-ին, Բաքվի լրատվությանը տված իր հայտարարության մեջ բացել է իր քարտերը, որոնցից երեւում է, թե ինքն ի՛նչ տեսակ քաղաքական լուծման կողմնակից է։ Ահա նրա այդ ծրագիրը. «Ղարաբաղում խաղաղության հաստատման հիմքը պետք է դառնան անհապաղ հրադադարը, Ադրբեջանի տարածքից օտարերկրյա զորքերի եւ անօրինական զինված կազմավորումների դուրս բերումը, հակամարտության գոտում միջազգային դիտորդների տեղաբաշխումը։ Նախարարի կարծիքով՝ միայն «հակամարտության ռազմական մասի» դադարեցումից հետո կողմերը կկարողանան ձեռնամուխ լինել քաղաքական խորհրդակցությունների ու բանակցությունների, որպեսզի այնուհետեւ ԵԱՀԽ հովանու ներքո բանակցեն Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի շուրջ» («Ազգ», մարտի 9)։

Չեթինը, ինչպես հայտնի է, Ադրբեջանի տարածք ասելով հասկանում է նաեւ ԼՂՀ-ը։ Ուրեմն, այնտեղից պիտի հանվեն «օտարերկրյա զորքերն ու անօրինական զինված կազմավորումները», իսկ սրանք էլ հասկանալի է, հայ ինքնապաշտպաններն են, որ պիտի հեռանան, որպեսզի թուրքը բանակցությունների նստի անզեն, անպաշտպան, վիզը դեմի իրեն մեկնած արցախահայի հետ...

Կրկին դիմենք իրենց հարմար խոսքին՝ ա՜յ բարաքյալլա...

**Մարտի 10-ին** ԼՂՀ լրատվությունից տեղեկացանք, որ հանրապետության ողջ տարածքում նախորդ օրերի հարաբերական հանգստի պայմաններում, Գյուլիստանի կողմերում գործող հայդուկային ջոկատներն անակնկալ հարձակման են անցել Մարտակերտի հյուսիսում իշխող թուրք զորամասերի դեմ եւ, առանց որեւէ կորուստ տալու, ազատագրել Դաստակերտ, Տոնաշեն ու Գետիգոմեր գյուղերը։ Թշնամին տվել է մարդկային ուժի եւ զինտեխնիկայի մեծ կորուստներ։

◇ ◇ ◇

Երեկ Հռոմից տուն դարձած պատվիրակությունն այսօր հաշվետվությամբ հանդես եկավ ԼՂՀ ԳԽ-ի Նախագահությունում. փոխվարչապետ, պատվիրակության ղեկավար Բ. Առուստամյանն այդ հանդիպումը որակեց իբրեւ մի ժողով, ուր նախապես ծրագրված էր խոսակցությունը տանել Ադրբեջանի շահին համապատասխան հունով: Իսկ Լ. Մելիք-Շահնազարյանն ասաց. «Հռոմում ստորագրված փաստաթուղթը պարտվողական է Լեռնային Ղարաբաղի հանրապետության համար եւ չի համապատասխանում նրա բնակչության ակնկալիքներին: Կարծում եմ, որ հանրապետության Գերագույն խորհրդի առաջիկա նստաշրջանում այդ փաստաթուղթը չի վավերացվի»:

Իսկ Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասումովը, մամուլի ասուլիսում տված իր զրույցում, գոհություն հայտնելով Հռոմի հանդիպման արդյունքների առթիվ, հայտարարել է, թե նախ զինադադար կլինի, ապա հակամարտության գոտում դիտորդներ կտեղավորվեն: Այս փուլը հաջողությամբ իրականացնելուց հետո,- ասել է Ղասիմովը,- հնարավոր կլինի, որ Մինսկի խորհրդաժողովում քննարկվի ԼՂ-ի կարգավիճակի հարցը, որի համար մենք պատրաստ ենք Ղարաբաղի հայերին առաջարկել մշակութային ինքնավարություն: Սա էլ՝ պայմանով, որ համաձայնություն ձեռք բերվի փախստականներին իրենց բնակավայրերը վերադարձնելու եւ արտաքին զինված կազմավորումները դուրս բերելու համար:

Անդրադառնալով Հայկական հանրապետության պատվիրակության հետ իրենց ունեցած բանակցություններին՝ Ղասիմովը հայտնել է, որ հայերը, հրաժարվելով տարածքային պահանջից, պնդում են վերականգնել Լեռնային Ղարաբաղի վարչական ինքնավարությունը, տարբերակ, որն ընդունելի չէ Ադրբեջանի համար:

Այսպես, ուրեմն, «Եղբայրական Ադրբեջանը» չի էլ հանդուրժի, որ հայկական Ղարաբաղն ստանա այն, ինչ ունեցել է մինչեւ պայքարի սկիզբը:

◇ ◇ ◇

Նույն օրվա «Երկիր»-ում տպագրված է թրքական զրույցը Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Վոլքան Վուրալի հետ, որը, երդում-հավատ անելով Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ իր երկրի ամենաբարի վերաբերմունքի ու տրամադրությունների վերաբերյալ, գտնում է, որ հայ ժողովուրդը պարտավոր է մոռանալ անցյալը, ապրել ապագայի խնդիրներով: Օրինակ, եթե Հայաստանը հիշում է 1915-ը եւ դեռ ջանքեր էլ է թափում, որպեսզի ՄԱԿ-ը ճանաչի այն իբրեւ հայոց գենոցիդ, ապա դա ոչ միայն ապարդյուն, այլեւ վտանգավոր է («չի կարելի ապրել սպառնալով եւ մեղադրելով հարեւաններին»): Իր ինքն ու յուրայինները չգիտեն էլ՝ 1915-ին ու հետագա տարիներին ի՞նչ է տեղի ունեցել եւ ինչպես: Ուստի եւ Հայաստանին առաջարկում են հարցն ուսումնասիրելու համար «ստեղծել միջազգային հանձնաժողով: Մենք պատրաստ ենք բացել բոլոր արխիվները»:

Դեսպանը գտնում էր, որ Թուրքիայի ու Հայաստանի նորմալ հարաբերություններ կստեղծվեն, երբ Հայաստանն ու Ադրբեջանը կդադարեցնեն պատերազմը, կապրեն որպես բարի հարեւաններ: Նա ոչ մի կերպ չի ուզում հասկանալ, որ պատերազմը Ղարաբաղի ու Ադրբեջանի միջեւ է: Եվ չնայած զրույցի սկզբին հայտարարել էր, թե «Այսօր առաջնային են մարդու իրավունքների, ժողովրդավարության խնդիրները», չի պատկերացնում, թե այդ խոսքը կարելի է կիրառել նաեւ Ղարաբաղի տեր հայության վերաբերմամբ: Իսկ ղարաբաղյան հակամարտությունը գոյություն ունի եւ դեռ կարող է շարունակվել, որովհետեւ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում, հատկապես Ղարաբաղում կան ուժեր, որոնց ձեռնտու է պատերազմը: Բայց լավ է խոսքը տանք իրեն: Ասում է. «Մենք հակամարտության կարգավորման վերջին քաղաքական ճիգերն ենք գործադրում: Անտարակույս, Ադրբեջանում կան պատերազմի կողմնակիցներ, հավանաբար այդպիսիք կան



նաեւ Հայաստանում եւ հատկապես Լեռնային Ղարաբաղում, որոնք անձնապես շահագրգռված են դրանով, քանզի կամ հարստություն են դիզում այդ հակամարտության շնորհիվ կամ քաղաքական կապիտալ, ժողովրդականություն շահում»:

Դեսպանը չի բացատրում, թե Թուրքիան ի՞նչ դեր է խաղացել ՀՀ նախկին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանին պաշտոնանկ անելու գործում: Սակայն գտնում է, որ նա լոկ սփյուռքահայերի, հատկապես ամերիկահայերի բացահայտ հակաթուրքական տրամադրություններն էր արտահայտում եւ ոչ թե բնիկ հայաստանցիների շահերը:

**Մարտի 11-ին** ռազմաճակատում էական տեղաշարժեր չեն եղել: Մերոնք վստահորեն տիրում էին ազատագրված բնակավայրերին ու դիրքերին՝ անկասկած նախապատրաստվելով Մարտակերտի վրա ձեռնարկելիք վճռական գրոհին, որը չի կարող ուշանալ (ասում են՝ տեղաշարժ չի իրականացվել՝ դիրքերի վրա իջած թանձր մառախուղի պատճառով):

Խնդրի շուրջ եղած խոսք ու զրույցից հետաքրքիր էր «Ազգի» մի հաղորդումը Բլեյան-Սարդարյան ջոկատի նոր աղմուկի մասին: Ըստ երեւույթին այն ՀՀ գլխավոր դատախազությանն է դիմել իր կուսակցության գրանցման համար, եւ գլխավոր դատախազի տեղակալ Վլադիմիր Հովհաննիսյանը լրատվության ներկայացուցիչներին այդ առթիվ ասել է, թե ինքն առհասարակ դեմ է ամեն մի պատերազմի, մանավանդ նրա երկարելու եւ կողմ է Ղարաբաղյան պատերազմին վերջ տալու համար իրականացվող ջանքերին: Սակայն, դեմ է ջոկատի գործադրած եռանդի միակողմանիությանը (ուզում են կռիվը դադարեցնել՝ Ղարաբաղի հայությանն Ադրբեջանին հանձնելու գնով), որ շատ վտանգավոր է, պարզապես ազգադավություն:

«Այսօր, երբ միջազգային հանրությունը գործնական լուրջ քայլեր է իրականացնում Լեռնային Ղարաբաղի հարցն արդարացի եւ երկուստեք ընդունելի պայմաններով լուծելու համար,- ասել է իրավաբանը,- առնվազն տարօրինակ են Ա. Բլեյանի եւ Կ. Սարդարյանի կոչերը՝ պայքարից հրաժարվելով գնալու միակողմանի զիջումների:

Մեր ժամանակներում այլակարծությունը եւ դրան համապատասխան գործունեության յուրաքանչյուր դրսեւորում գովելի է: Սակայն Ղարաբաղի հարցում եւ հատկապես պայքարի այս փուլում դրսեւորվող նման այլակարծությունը, կարծում եմ, վտանգավոր է եւ շատ վնասաբեր:

Ինչ վերաբերում է ստեղծվող նոր կուսակցությանը, ես հանձնարարել եմ ՀՀ դատախազության համապատասխան բաժնին՝ ստուգել Ա. Բլեյանի եւ Կ. Սարդարյանի կողմից «Նոր ուղի» կուսակցության հիմնադրման հետ առնչվող բոլոր հանգամանքները» («Ազգ», 1993, մարտի 11):

Հետաքրքիր է, թե արցախյան հարցում իր խոտոր ուղուց հրաժարվելուց հետո, այս ջոկատն ուրիշ ինչո՞վ է զբաղվելու, որպեսզի արդարացնի իր «Նոր ուղի» կոչումը:

**Մարտի 12-ին** թուրքերը զինուժի ու տեխնիկայի մեծ կուտակումներ էին անում Լաչինի միջանցքի հարավում եւ հյուսիսում: Այստեղ օրվա ընթացքում հրետակոծություններ էլ են եղել:

Երկու օր առաջ, մարտի 10-ին, Թուրքիայի պաշտոնական թերթերը տպագրել էին հաղորդում այն մասին, որ ԱՄՆ-ի կառավարությունը խոստացել ու պատրաստ է որոշակի քայլեր կատարել ղարաբաղյան բարդույթի լուծման համար:

«Արցախ» հայրենակցական միության նախագահ Յ. Հովհաննիսյանը հայտնեց, որ զանգվածաբար հայրենի օջախներն են վերադառնում Մարտակերտի շրջանում ազատագրված գյուղերի նախկին բնակիչները:

**Մարտի 13-ին** Լաչինի միջանցքը հրետակոծվում էր հյուսիսից ու հարավից եւ Մանիքլուի ու Մեծշենի դեմ գրոհում էին թուրքերը, որոնք ետ մղվեցին մեր ինքնապաշտպանների կողմից:

Վերջին ձեռնարկների միջոցով թուրքը, հավանաբար, խնդիր է ունեցել այս գարնանամուտին կորցրածը գոնե մասամբ վերադարձնել, որը նախորդ օրերին Բաքվից հայտարարվել էր իբրեւ իրողություն: Թուրքին վայե՜լ լրատվություն:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորումը մնում է շահագրգիռ տերություննե-

րի ու պետական գործիչների ուշադրության կենտրոնում: Սուլեյման Դեմիրելը, վերջերս ընդունելով Ադրբեջանի վարչապետի տեղակալ Աբասովին, հայտարարել է, թե Ղարաբաղի խնդրի կարգավորման ձգձգումը կքայքայի Ադրբեջանի տնտեսական ու քաղաքական մարմինը, ուստի պետք է ամեն միջոց գործադրել, որպեսզի օր առաջ այն լուծվի քաղաքական եղանակով, փոխզիջումների ճանապարհով:

Փարիզում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հանդիպումների մասին արդեն տեղեկություններ են գալիս: Նախագահ Միտերանի հետ ունեցած հանդիպմանը նա խնդրել է, որ Ֆրանսիայի ղեկավարն իր երկրի ու սեփական հեղինակությամբ ազդի ղարաբաղյան հարցի լուծման վրա՝ հատկապես ԵԱՀԽ-ի շրջանակներում եւ այդ քաղաքական կազմակերպության մաս կազմող երկրների արտգործնախարարների միջոցով:

Բայց մի՞թե Տեր-Պետրոսյանը, որ ականատեսն ու ականջալուրն է եղել վերջին տարիներին այդ ԵԱՀԽ կոչվածի կողմից ղարաբաղյան բարդույթի հետ կատարված խաղերին, որեւէ հույս է կապում նրա հետ: Համոզված լինելով, որ ԵԱՀԽ-ն այժմ խաղալիք է Թուրքիայի ու Ադրբեջանի ձեռքին... Իսկ եթե ուրիշ ոչ մի բան էլ հաշվի չառնենք, այն ունի մի անխախտ սկզբունք. ճանաչում է միայն պետության ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը եւ մնացած բոլոր հանգամանքները համարում է երկրորդական, այդ ամենակարեւորին ստորադասվող:

Այս դեպքում Տեր-Պետրոսյանն ինչ հույս է կապում ԵԱՀԽ-ի հետ, թեկուզ եւ Միտերանի պես մի հեղինակավոր գործչի միջնորդությամբ:

✧ ✧ ✧

«Ազատություն» ռադիոյի ադրբեջանական խմբագրությունն արեց մի կարեւոր հաղորդում: Ասում է՝ մոսկովյան իր ուղեւորությունից Բաքու է վերադարձել Նախիջեւանի տեր Հեյդար Ալիեւը եւ Էլչիբեյի հետ ունեցած վեցժամյա զրույցի ընթացքում մեծ մասամբ խոսել է Ղարաբաղի մասին, որն արդեն ձեռքից գնում է («Հիշիր, որ նույնիսկ երկու տարի առաջ այնտեղ մեր օրենքները գործում էին, - երեւի նկատի ունի Պոլյանիչկոյի ոհմակի գործունեությունը: - Իսկ այսօր մենք այնտեղ ոչինչ չունենք եւ օրըստօրե նոր հողամասեր ենք կորցնում»): Այս զրույցին Ադրբեջանի երկու ղեկավարները ծրագրել են իրենց համատեղ ու միասնական այն միջոցառումները, որոնց իրականացմամբ պետք է լուծեն Ղարաբաղի խնդիրը:

**Մարտի 15-ին** ցերեկով ասում էին՝ հաստատ ու վստահելի տեղեկություն կա, որ վերջին օրերին Շահումյանի ֆիդայիներն արդեն ազատագրել են Թալիշը եւ շարժվում են դեպի Մատաղիս, իսկ Մոխրաթաղ-Հոռաթաղ գծի ինքնապաշտպաններն արդեն Մարտակերտ են մտել եւ քաղաքի մեծ մասի վրա տիրություն են անում:

Հեռուստատեսության մեր անբաններից մեկն առհասարակ Արցախի անուն չտվեց, մյուսն էլ հայտարարեց, թե ռազմաճակատում մարտական գործողություններ չեն գրանցվել:

Իջեւանի եւ Ղազախի սահմանում երկու շրջանների ներկայացուցիչները (մեր կողմից Ջ. Անանյանի գլխավորած պատվիրակությունը) բանակցություններ են վարել, պայմանավորվել, որպեսզի կրակը դադարեցնեն, եւ հնարավոր լինի գարնան դաշտային աշխատանքներ կատարել:

Փարիզից վերադարձած Լ. Տեր-Պետրոսյանը հպարտությամբ նշում է, որ իր ու Միտերանի զրույցում կարեւոր տեղ է բռնել ղարաբաղյան խնդիրը, պայմանավորվել են, որ ջանքերն ուղղվեն ԵԱՀԽ-ի մակարդակով այն քննելու եւ արդար վճիռ հանելու համար:

Մենք, իհարկե, գիտենք, երկու տարվա փորձն էլ ցույց է տվել, թե իրենից ինչ է ներկայացնում այդ ԵԱՀԽ կոչված կաթվածահար մարմինը, մանավանդ ո՞րն է նրա սկզբունքը մեր հարցի համար: Այս պարագայում Լ. Տեր-Պետրոսյանն ինչո՞ւ է այս ժողովրդին մոլորեցնում: Որպեսզի վերջում էլ ասի՝ ես ինձնից կախված բոլոր միջոցները գործադրեցի՞:



**Մարտի 16-ին**, վերջին մի քանի օրվա, այսպես կոչված, հարաբերական դադարից հետո, Արցախի ինքնապաշտպանության ուժերը Մարտակերտի շրջանում նոր գրոհ են ձեռնարկել, ազատագրել Տոնաշեն գյուղը, ապա գրավել Մատաղիսի դիմացի ռազմավարական բարձունքները եւ վստահորեն առաջ են շարժվում: Քարտեզին նայելով, չի կարելի չմտածել, որ նրանք Մարտակերտի դիմաց կանգ են առել եւ Մատաղիսի կողմից ուզում են կտրել-հանել Մարաղա ու Լենինավան, շրջապատման մեջ առնել թշնամու զորությունը: Ինչ-որ է, Աստվա՜ծ օգնական:

Կարեւորը եւ ուրախալին այն է, որ «Արցախ» կոմիտեի մոտից ու Սախարովի հրապարակից (Փախստականների վարչության բակից) վիթխարի մարդատարները տուն են վերադարձնում Մարտակերտի շրջանից աստանդական դարձած հարյուրավոր մարդկանց, եւ ավտոբուսները տրամադրողները չեն հասցնում բոլոր ցանկացողներին միանգամից փոխադրել:

Օրվա մյուս էական լուրերից.

Ա) Թուրքիայի եւ Ռուսաստանի արտգործնախարարները շուտով կհանդիպեն Ժնեւում, կհրապարակեն իրենց առաջարկությունները ղարաբաղյան բարդույթի կարգավորման վերաբերյալ, եւ դրանք են՝ անմիջապես հրադադար, պետական ամբողջության պահպանում, իրար (Հայաստանի ու Ադրբեջանի) ներքին գործերին չխառնվել, զորքերի դուրս բերումը բարդույթի գոտուց, փախստականների վերադարձն իրենց նախկին բնակավայրերը եւ դիտորդների ներկայությունը բարդույթի տարածքում (միջոցառումներ, որոնցից ավելի վատն արցախահայության համար անհնար է պատկերացնել):

Բ) Ֆրանսիայի պրեզիդենտ Միտերանն է մեկօրյա այցով եկել Մոսկվա եւ Ռուսաստանի ղեկավար Ելցինի հետ ունեցած բանակցությունների մեջ շոշափել է նաեւ ղարաբաղյան հակամարտության խնդիրը: Վերջում էլ այդ առթիվ երկուսով արել են հայտարարություն, որի էությունն այս է՝ անմիջապես հրադադար անել, վիճելի հարցերը քննել եւ լուծել խաղաղ ճանապարհով՝ անպայման հենված ԵԱՀԽ-ի նախաձեռնությունների ու սկզբունքների վրա (որոնց հիմքում սահմանների անխախտության փուչ տարբերակն է):

Գ) Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելն էլ լրատվական մարմինների համար արել է հայտարարություն, որի սկիզբը եթե Ղարաբաղի ճակատում կրակը դադարեցնելու առաջարկն է, ապա վերջն սպառնալիքի պես մի բան է՝ արված Հայաստանին. ասում է՝ Հայաստանը խաղաղ ու բարեկեցիկ կյանք կարող է ունենալ միայն մի դեպքում՝ եթե կարգավորի իր հարաբերություններն Ադրբեջանի հետ:

Սա մեղմ տարբերակն էր այն հայտարարության, որ այն օրերին Բաքվում արել էր պրեզիդենտ Թուրգութ Օզալը՝ սպառնալով «ատամ ցույց տալ հայերին»: Ատա՜մ ցույց տալ: Բայց չէ՞ որ ցուցադրած ատամը ջարդելու գործն էլ հեշտանում է: Մանավանդ, որ հայերը լավ են հիշում իրենց թագավոր Արշակ Բ-ի (4-դ դար)՝ նման դեպքերի համար տված պատվիրանը. «Քարինք եւ մեր շատ կան ի թափել զատամանս ձեր» («մենք էլ քարեր շատ ունենք ձեր ատամները թափելու համար»):

Դ) ԵԱՀԽ-ի պետությունների ներկայացուցիչներն այսօր Բելգիայի մայրաքաղաքում հրապարակել են հայտարարություն՝ առաջարկելով դադարեցնել կրակը եւ վերջ տալ արյունահեղությանը Լեռնային Ղարաբաղում:

Պարզից էլ պարզ է, հայ ինքնապաշտպանության հաջողություններն Ադրբեջանի ու Թուրքիայի տերերին, ինչպես նաեւ նրանց թիկունքում կանգնած ուժերին ստիպեցին կրակը դադարեցնելու համար ոտ ու ձեռ ընկնել, բայց, տեսե՛ք, նրանք ի՜նչ միջոցներով ու հետեւանքների ի՜նչ հեռանկարով են ուզում հասնել դրան (եթե նույնիսկ անտես առնենք այն հանգամանքը, որ ղարաբաղյան բարդույթ կամ հակամարտություն են ասում, սակայն երբեք էլ Ղարաբաղը չեն տեսնում նրա կազմում, նրան չեն դիմում՝ հարցը լուծելու համար):

**Մարտի 17-ին**, ըստ պաշտոնական լուրերի, ռազմաճակատում տեղաշարժ չի եղել: Սակայն պաշտոնական լրատուների հույսին մնալը նշանակում է կյանքից ետ մնալ առն-

նվաճած պիտի լիներ։

Իսկ «Լրաբերի» հաղորդման համաձայն՝ Մարտակերտի շրջանի ազատամարտիկները վստահորեն վերահսկում են վերջին շրջանում ազատագրած բնակավայրերը եւ ոչ մի նահանջի կամ ձախողանքի խոսք չի կարող լինել։ Միայն Ներքին Հոռաթաղի վրա վերջին հարձակման են եկել ասպատակիչները, մեծ կորուստներ տալով, նահանջել ելման դիրքերը։

Հաղորդեցին, որ այս անգամ լեդի Քերոլայն Կոքսի ԼՂՀ բերած մարդասիրական օգնության մեջ եղել են նաեւ «Շտապ օգնության» երկու մեքենաներ՝ իրենց այնպիսի սարքավորումներով, որոնց առկայությամբ մեքենան պարզապես շարժական բուժարանի դեր է կատարում։

**Մարտի 30**. Երեկ ուժեղ մարտեր են եղել Մարտակերտի հարավ-արեւմտյան հատվածում թուրքի ձեռքին մնացած վերջին բնակավայրի՝ Չարեքտարի համար։ Մերոնք փորձում էին ոչնչացնել նրանց կրակակետերը։

Ադրբեջանական լրատվական մարմինները տագնապով հայտարարել են հայ «գրոհայինների» կողմից ձեռնարկված լայնամասշտաբ հարձակման մասին՝ Քելբաջարի շրջանի վրա։ Իբր, երկու օր է, ինչ Վարդենիսի ու Մարտակերտի շրջաններից միաժամանակ հայերն ուժեղ գրոհ են կազմակերպել ծանր հրետանիների ու ռազմական ուղղաթիռների օգտագործումով եւ նույնիսկ մխրճվել են Քելբաջարի շրջանի տարածք։ Երկու օրվա մարտերի ընթացքում, իբր, իրենք էլ ոչնչացրել են երկու տանկ, հետեւակային երկու մեքենա եւ մեկ «Գրադ» կայանք։

Իրականությունն այն է, որ ինքնապաշտպանությունը նվաճել-ազատագրել է եւս հինգ գյուղ՝ Չարեքտար, Նարեշտար, Աղդաբան, Թազաքենդ, Չայղուշան, թշնամուն պատճառելով զինուժի (40 ասկյար) եւ տեխնիկայի մեծ կորուստներ։

**Մարտի 31-ի** լուրերը բավական ուրախալի էին, երեկ Շահումյանի շրջանում գործող հայդուկային խումբը լրիվ ազատագրել է հինավուրց Գյուլիստանը եւ այժմ թեժ մարտեր է մղում Վերիշենի համար։

Ի պատասխան Լաչինի մարդասիրական միջանցքի դեմ թուրքերի ձեռնարկած սադրանքների, արցախյան ինքնապաշտպանությունը հզոր հակագրոհներ է ձեռնարկել ոչ միայն բուն միջանցքի կողմից, այնպես էլ Մարտակերտի շրջանի հարավ-արեւմտյան տարածքից։ Հետեւանքն այն է եղել, որ ոչնչացվել են Քելբաջարի շրջանի Աղջաքենդ, Եղնիքենդ ու Նաղդալի գյուղերում տեղադրված հրակետերը։ Այստեղ մերոնք թշնամուց առգրավել են երկու տանկ, երեք ԲՄՊ, բազմատեսակ զենք ու զինամթերք։ Այս մարտերում թուրքերը կորցրել են 17 ասկյար, մեր զոհերը 3-ն են։

Ադրբեջանի ռազմական գերատեսչությունը մեծ աղմուկ է հանել՝ պնդելով, թե հայերի կողմից արդեն օկուպացված է Քելբաջարի տարածքի մի մասը, եւ կոտորվում են այս շրջանի ու Լաչինի խաղաղ բնակիչները։

ԼՂՀ լրատվական մարմինները հաղորդում են, որ թուրք խաղաղ բնակիչներին վերաբերող լուրերը սուտ են, քանի որ ինքնապաշտպանները, փակելով զենքի ու զինամթերքների փոխադրումների ուղիները, նույնիսկ զինվորների հեռանալու համար հատուկ միջանցք են թողել, իսկ խաղաղ բնակչություն այստեղ վաղուց չկա։

Կարեւոր է նաեւ ԼՂՀ Պետական պաշտպանույթյան կոմիտեի նախագահ Ռ. Քոչարյանի հենց այսօր հրապարակած հայտարարույթունը, որ մեջ եմ բերում ամբողջությամբ.

«1993 թ. մարտի 27-ին Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության պետական կոմիտեն հանրապետության զինված ուժերին հրամայել էր ադրբեջանական բանակի վերսկսած գրոհներից Լեռնային Ղարաբաղի ժողովրդի եւ սահմանների պաշտպանությունն ապահովելու համար ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները։

Սկսած մարտի 20-ից, Ադրբեջանը սաստկացրեց Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմը՝ հաստատելով խնդրի ռազմական լուծում որոնելու իր քաղաքականությունը։ Ադրբեջանը գործողություններ նախաձեռնեց Մարտակերտի շրջանի, ինչպես նաեւ Լաչինի



մարդասիրական միջանցքի երկու կողմերում՝ հակառակ մարտի 1-ին Հռոմում համաձայնեցված ԵԱՀԽ փաստաթղթի ոգուն։

Գործելով օրինական ինքնապաշտպանության շրջանակներում՝ Լեռնային Ղարաբաղի բանակը ագրեսորներին ետ է շպրտել իր սահմաններից եւ պետք է ապահով լինի, որ ադրբեջանական բանակը հետագայում մեր հանրապետության արեւմտյան սահմանների ավերման պատճառ չի դառնա։

Պաշտպանության պետական կոմիտեն իր դաշտային հրամանատարներից տեղեկացել է, որ ադրբեջանական բանակը դիմադրելու սկզբնական փորձից հետո նահանջել է, եւ որ այդ տարածքը հիմնականում բնակեցված չէր։ Լեռնային Ղարաբաղի բանակը տարածքում գտնվող քաղաքացիների կյանքը պաշտպանելու եւ այդ տարածքից հեռանալ ցանկացողների անվտանգ ելքն ապահովելու խիստ հրաման էր ստացել։

Դաշտային հրամանատարները հաղորդել են նաեւ, որ անցած տարի Լեռնային Ղարաբաղի հյուսիսային մասը զավթելու ընթացքում գյուղերից ադրբեջանցիների կողմից գողացված տնային իրերի մեծ մասը հայտնաբերվել է այդ տարածքում։

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը ցավում է պատերազմի այս նոր բորբոքման համար եւ ողջ պատասխանատվությունը դնում է Ադրբեջանի վրա, որը մերժել է բանակցությունների միջոցով լուծում գտնելու ուղին եւ որին մինչեւ այժմ հաջողվել է փակուղի մտցնել ԵԱՀԽ-ի շրջանակներում զինադադարի բոլոր ջանքերը։

Լեռնային Ղարաբաղի իշխանություններն ամեն ինչից վեր են դասում ժողովրդի անվտանգությունը եւ ողջունում են յուրաքանչյուր քայլ, որը կարող է հանգեցնել անհապաղ եւ առանց նախապայմանների զինադադարի, որը չի վտանգում հանրապետության ժողովրդի անվտանգությունն ու կյանքը»։

✧ ✧ ✧

Լաչինի ու Քելբաջարի շրջաններում Ադրբեջանի զորամիավորումների կրած նոր պարտությունների առթիվ Թուրքիայի արտգործնախարարությունը ռադիոյով բողոք է ներկայացրել Հայաստանին՝ առաջարկելով անմիջապես դադարեցնել ագրեսիան սուվերեն Ադրբեջանի դեմ։ Բողոքի այդ հայտարարության մեջ նշվում է, թե «Ադրբեջանի դեմ վարվող ագրեսիվ քաղաքականությունը Թուրքիային մեծապես անհանգստացնում է եւ առճակատումը կարգավորելու ճանապարհին արգելքներ հարուցում։ Փաստաթղթի հեղինակները դատապարտում են Երեւանի անպատասխանատու գործողությունները՝ այն պահին, երբ, ինչպես նշվում է հայտարարության մեջ, առաջ են քաշված տարբեր խաղաղարար առաջարկություններ, եւ զարգանում է խաղաղ կարգավորման մինսկյան գործընթացը («Ազգ», ապրիլի 1)։

**Ապրիլի 1.** Երեկ, **մարտի 31-ին**, Ադրբեջանի պրեզիդենտի արտաքին քաղաքականության գծով խորհրդական Վաֆա Գուլուզադեն Իրանի, Ռուսաստանի, Թուրքիայի ու ԱՄՆ-ի դեսպաններին եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի Ադրբեջանում գտնվող ներկայացուցչին հաղորդել է Քելբաջարի շրջանում ստեղծված ահավոր կացության մասին։ Ըստ այդ հաղորդման՝ հայկական ուժերը մարտի 27-ին շրջանի վրա ձեռնարկել են լայնամասշտաբ հարձակում, որը զարգանալով՝ կարճ ժամանակում հասցրել է նրան, որ 31-ին արդեն հայերի տիրապետության տակ է դրել 13 գյուղ եւ վտանգավոր օղակի մեջ առել Լաչինի շրջանի հյուսիսային մասը, ուր, իբր, բնակվում էր 60 հազար մարդ։ Գուլուզադեն Քելբաջարում հայերի գործած դաժանությունները համարում է ավելի աղետալից, քան Խոջալվինը, զգուշացնում է հետագա գործողություններից, որոնք կարող են ճակատագրական լինել Ադրբեջանի ու շրջապատի համար։ Վերջում նա դեսպաններին խնդրել է այս ամենի մասին անհապաղ հաղորդել իրենց պետությունների ղեկավարներին, որպեսզի նրանք միջոցներ ձեռնարկեն ագրեսորին զսպելու համար։

Իր պատմության մեջ հայը երկրորդ անգամ համարվում է ագրեսոր (առաջինը՝ Տիգրան Մեծի ժամանակ)։ Պարզվում է, որ կարող է լինել եւ արդար ագրեսոր, իր հայրե-

նիքի ու սեփական կյանքի անվտանգությունն ապահովելու կարիքից դրդված թշնամուն իր հողից քշող ագրեսոր:

Ադրբեջանի իշխանություններն այսօր դիմել են ՄԱԿ, ԵԱՀԽ, Իսլամական համաժողովի կազմակերպությանը՝ հայտնելով, որ հայ ագրեսորները Քելբաջարի շրջանում բռնագրավել են 30 գյուղ, որ զսպեն ագրեսորին, հասցնեն արժանի պատիժ:

✧ ✧ ✧

Նախորդ օրերին ինքնապաշտպանները գրոհով առաջ են շարժվել Թարթառի հովիտն ի վեր, ոչնչացրել Չորման, Ղլղայա եւ Վանք (Դադիվանքի շրջակայքում վերջերս գոյացած բնակավայր) գյուղերում տեղակայված ռազմակետերը, ազատագրեցին եւ բոլոր կողմերից իրենց հսկողության տակ առան Դադիվանքը՝ վաղմիջնադարյան Արցախի հոգեւոր-ճարտարապետական ամենակարեւոր կենտրոններից մեկը, Հաթերքի իշխանության տոհմական տապանատունն ու գլխավոր սրբավայրը: Վերջապես հնարավոր կլինի փրկել կործանումից ու քայքայումից վանական համալիրը, նրա եկեղեցիները, երկու հոյակապ մեծադիր խաչքարերը, որոնք (13-րդ դ.) բացառիկ են իրենց տեսակի մեջ եւ խնամքի ու մասնագիտական պահպանության կարիք ունեն:

**Ապրիլի 2-ին** ճշտվեցին նախորդ օրերին տարածված լուրերը Քելբաջարից գրաված գյուղերի մասին, դրան էլ գումարած մերոնց հաղթական առաջխաղացումը Լաչինի միջանցքի շրջանի տարածքով դեպի հյուսիս: Այստեղ մերոնք նվաճել են չորս գյուղ, որոնց մեջ է վասանուն Ղոչազը:

Դեռեւս մարտի 31-ին ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ինչպես վերը տեսանք, արել էր հայտարարություն հետեւյալի մասին. նկատի առնելով Ադրբեջանի համառությունը՝ կռվով լուծելու Ղարաբաղյան հակամարտության խնդիրը, չնայած ԵԱՀԽ-ը մարտի 1-ին Հռոմում որոշել էր դադարեցնել պատերազմը, մենք մեր զորաջոկատներին կարգադրեցինք ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետության ու նրա ժողովրդի պաշտպանությունն ապահովելու համար: Եվ այդ միջոցառումներն առայժմ իրականացվում են Մարտակերտի շրջանում ու Լաչինի միջանցքի տարածքում, իսկ թշնամին առաջին անհաջող դիմադրությունից հետո գլխապատառ փախչում է՝ զիջելով իր դիրքերը:

**Ապրիլի 5-ին** ցերեկով հայտնի էր, որ ԼՂՀ ինքնապաշտպաններն ամսիս 4-ին մի շարք կրակակետեր են ոչնչացրել Ղուբաթլիի ու Ֆիզուլու շրջաններում, իսկ Կուրոպատկինոյի վրա եկած թուրքի գրոհն էլ կասեցնելով՝ սպանել են ավելի քան երկու տասնյակ ասկյար, ոչնչացրել մեկ տանկ, առգրավել բավական զենք ու զինամթերք:

ԼՂՀ Պաշտպանության ղեկավար Սերժ Սարգսյանը հայտարարել էր, թե թուրքի լրատվությունը հարայ-հրոց է բարձրացրել Ֆիզուլին նվաճելու մեր վճռի մասին, սակայն մենք պարզապես պետք է ոչնչացնեինք նրա ռազմական բազան, որից հանգիստ չունեն մեր Մարտունու եւ Հադրութի շրջանները, ապա թե ոչ, մենք իրենց տարածքի վրա աչք չունենք: Ամեն պարագայի՝ մեր նպատակն է Ֆիզուլին վնասազերծել:

✧ ✧ ✧

Թուրքերը մի ուժեղ գրոհ էլ ձեռնարկել էին Հոռաթաղի ուղղությամբ, որոշ տարածություն խորացել դեպի գյուղի մասույցները: Մերոնք ետ են մղել՝ թշնամուն զգալի վնաս պատճառելով:

Մոսկվայի հեռուստամեկնաբանը («Նորություններ») բավական երկար անդրադարձավ ղարաբաղյան մարտերին, ասաց՝ վերջին ժամանակներն այստեղ կրակը թեժացել է, որ ԼՂՀ մարտական դիրքերն առավել ամրապնդվել են, որ ԼՂՀ ինքնապաշտպանությունը դրության տերն է եւ անպայման կթելադրի իր կամքը եւն (միայն այսպես ԼՂՀ եւ ոչ թե հայկական կամ Հայաստանի զինական կողմ): Ապա՝ ահա՛ նաեւ Ադրբեջա-



նից ստացված տվյալները հակամարտության մասին: Եվ անմիջապես վնգստում է Մահիս Մամեդովը՝ ցուցադրելով Ֆիզուլիի ծխացող ավերակները, Քելբաջարից փախած գերդաստանները: Իբր, վերջինիս շրջանի 60 հազար բնակիչներից 55 հազարն արդեն փախստական են, տանջանք-տառապանքի ենթակա: Մի թուրք զինվորական քարտեզի վրա Քելբաջարի իրենց ողբերգությունն է ցուցադրում՝ պնդելով, թե գրոհ-ավերն սկսվել է Հայաստանի Վարդենիսի շրջանից, իսկ Ղարաբաղի կողմից, իբր, հարձակում չի եղել:

Ուրեմն, կռիվը հայ-ադրբեջանական է, Ղարաբաղն էլ՝ Հայաստանի ագրեսիայի օբյեկտ:

Հետո հաղորդվում է Հայաստանի նախագահի հայտարարությունն այն մասին, որ իր հանրապետությունը բացարձակապես ոչ մի մասնակցություն չունի պատերազմին, եւ ինքն արդեն առաջարկել է, որպեսզի կռվող երկու կողմը՝ Ադրբեջանն ու Լեռնային Ղարաբաղը, ձեռ քաշեն անմիտ պատերազմից, հրադադար անեն եւ նստեն բանակցությունների սեղանի շուրջ:

✧ ✧ ✧

Այսօր Տաշքենդում բանակցություններ անող եւ Ուզբեկստանի հետ ինչ-ինչ պայմանագրեր կնքող Թուրքիայի պրեզիդենտ Թուրղութ Օզալը զրույց է ունեցել նաեւ Ղարաբաղյան բարդույթի մասին եւ գտել է, որ պատերազմով ոչ մի հարց օրինական լուծում չի տանա, անհրաժեշտ է քաղաքական, խաղաղ միջոցների դիմել եւ անպայման լուծել բարդույթը, թեկուզ եւ փոխզիջումներով:

Ուրեմն, թուրքը եւս ետի խելք է ունենում, որ կարող է լինել օգտակար:

Երեւանում է գտնվում ԱՄՆ-ի սենատորների մի մեծ խումբ-պատվիրակություն՝ Ռիչարդ Լեհմանի գլխավորությամբ: Այն Բաքվից է գալիս, հետո էլ պիտի Անկարա գնա: Ըստ երեւույթին ԼՂ-ի վիճակն ու հարցի խորքն են ուսումնասիրում՝ սենատին ու իրենց պրեզիդենտին զեկուցելու համար: Ոչ մի կարծիք առայժմ չեն արտահայտում: Սակայն սենատոր Ջեյմս Բիլբրեյը Երեւանում հայտարարել է, թե Բաքվի ղեկավարների աչքերում ինքը տեսել է ընկճվածություն, պատերազմին վերջ տալու ցանկություն...

Իսկ պատվիրակությունն ընդունած Լ. Տեր-Պետրոսյանը, Բ. Արարքցյանն ու Հ. Բագրատյանն առանձին-առանձին հիմնավորել են Հայաստանի դիրքը, դատապարտել Ադրբեջանի մեքենայությունները միջազգային կազմակերպությունների որոշումների ու խաղաղարար միջոցառումների դեմ:

«Պատասխանելով կոնգրեսականներից մեկի այն հարցին, թե արդյոք Հայաստանը օգնո՞ւմ է Ղարաբաղին եւ ունի՞ նրա վրա ազդելու լծակներ, ՀՀ վարչապետը պատասխանել է, որ Հայաստանը Լեռնային Ղարաբաղին հիմնականում օգնում է սննդամթերքով եւ էլեկտրաէներգիայով: Ինչ վերաբերում է ռազմական օգնությանը, ապա իր ունեցած զենքի հիմնական մասը Լեռնային Ղարաբաղի զինված ուժերին բաժին է հասել ռուսական բանակից, իսկ մնացյալն ուղղակի ռազմական ավար է, որ ղարաբաղցիները պատերազմական գործողությունների ընթացքում խլել են հակառակորդից: Անդրադառնալով ղարաբաղցիների վրա ազդելու Հայաստանի լծակներին, վարչապետն ասել է, թե այդպիսի լծակներ կան, բայց դրանք չեն կարող գործադրվել ի վնաս Լեռնային Ղարաբաղի ժողովրդի» («Ազգ», ապրիլի 7):

✧ ✧ ✧

**Ապրիլի 6-ին** Ադրբեջանի ազգային մեջլիսը փակ նիստ էր արել ռազմաճակատում իրենց ունեցած անհաջողությունները քննելու, մի ելք գտնելու համար: Լրատվությունն ասում է՝ ղեկավարները գլուխները կորցրած են եւ չգիտեն՝ միայն սեփական ուժերով ի՞նչ կարող են անել, երբ Թուրքիան հրաժարվել է ռազմական միջամտությունից, իսկ Ռուսաստանը մի կողմ է կանգնել, թե՝ գնացե՛ք, իրար հետ լեզու՜ գտեք:

սությունների (խոսքն, իհարկե, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի, հավանաբար նաեւ Աջարիայի մասին էր.- Բ. Ու.), ապա կհանդիպեինք անպայման եւ գործի կծվեինք»:

Ուրեմն, Ելցինը գտնում է, որ Վրաստանն իր զորքերը պետք է հեռացնի իր իսկ կազմի մեջ մտնող վարչական կազմավորումներից: Իսկ Ադրբեջանի զորքն էլ՝ Լեռնային Ղարաբաղի՞ց: Այս է՞լ պիտի արվի: Եթե այս քաղաքական սկզբունքն է դավանում Ռուսաստանի ղեկավարը (իսկ դրա ապացույցը կարող է լինել խառնարկչության մասնված Չեչնիայում անգամ ռուսական զորքի բացակայությունը), ապա մի՞թե մեզ համար կարող է լինել դրանից ավելի լավ տարբերակ, եթե նույնիսկ այն կոչվի ֆեդերացիա, կոնֆեդերացիա, միություն կամ մի ուրիշ պայմանական անունով...

Ռազմաճակատից ստացված կարեւոր լուրերը սրանք են.

Երեկ Աղդամի ու հարեւան ռազմական կետերից Մարտունու վրա ձեռնարկված լայնամասշտաբ հարձակումը ետ է մղվել: Թշնամին կորցրել է մեկ տանկ, 60 ասկյար: Մերոնք ունեն միայն չորս վիրավոր:

Այսօր եւս հարձակում է եղել նույն ուղղությամբ: Ապա թուրքը հրետակոծել ու ինքնաթիռից ռմբակոծել է Հադրութը, ինչպես նաեւ սահմանային մի շարք բնակավայրեր:

ՀՀ սահմանային շրջաններում եւս հանգիստ չկա. հրետակոծվել են Կապանի ու Գորիսի շրջանների սահմանային մի քանի բնակավայրեր:

Իսկ Բաքվից հարայ են տալիս՝ հենց այդ շրջաններից, իբր թե, կազմակերպված գրոհների մասին, որոնց շնորհիվ իրենք կորցրել են Կուբաթլիի ու Զանգելանի շատ գյուղեր, տեղ ու դադար չունեն իրենց իսկ հողի վրա:

✧ ✧ ✧

Օրվա ամենակարեւոր իրողությունը Թուրղութ Օզալի հանդիպումն է պաշտոնական ու մուսուլմանական Բաքվի հետ: Մոսկվայից ցուցադրեցին նրա ելույթն Ադրբեջանի միլլի մեջլիսում: Իսկապես ցուցադրելու՞ բան էր, թամաշա՞: Ինչպես է հասնում ամբիոն: Չի քայլում, գլորվում է: Դահլիճն այնպես փոթորկված է, ասես ալլահի փեղամբարն է իջել եւ իրենց պետք է ուղեկցի փրկության ափ: Եվ նա լեզվի մտրակն է թափ տալիս հայության վրա: Դու՞ն տեսեք, ասում է, որոշել է իր երազած Մեծ Հայքն ստեղծել եւ հարձակվել է հարեւանի վրա, նրա հողն ու հայրենիքն է նվաճում, Ադրբեջանի խաղաղասեր ժողովրդին բերում նորանոր դժբախտություններ: Այդ հայ ժողովուրդը ցույց կտա, որ ինքը խելք էլ ունի, եթե իր ղեկավարներից պահանջի, որ նրանք զսպեն իրենց ագրեսիվ ախորժակը... Հակառակ դեպքում մենք չենք կարող հանգիստ նայել ու տեսնել, թե ինչպես քրքրվում է մեր ցեղակից ու հավատակից, միջազգային օրենքներով դաշնակից դարձած ազգը...

Այսպե՞ս:

Ասում են՝ ամսիս 8-ին Տաշքենդում հայտարարել է, թե իր երկրի 800 ընտիր զինվոր ու սպա արդեն պատրաստ են ժամանելու Ադրբեջան, որպեսզի մասնակցեն նրա սրբազան պատերազմին:

Ի՞նչ կա որ. կասեն 800, կուղարկեն 8000 կամ 80 հազար, թուրքի ու թուրքի վարքը միայն այսպիսի հրաշքնե՞ր է հանդուրժում:

Նախիջեւանի ամիրա Հեյդար Ալիեւն էլ, Իրանի լրատվության վկայությամբ, հայտարարել է, թե բավական է Հայաստանն իր հանրապետության դեմ լուրջ ոտնձգություն անի, ինքն արդեն կդիմի Թուրքիայի ռազմական աջակցությանը եւ կստանա այն պահանջված չափով, քանի որ դրա համար, նախ, կա պայմանավորվածություն, ապա եւ Թուրքիան ինքն ունի բարձր պարտավորություն՝ իբրեւ հովանավոր կողմ, ըստ 1921 թ. մարտյան հայտնի դաշնագրի:

Այս էլ այսպե՞ս:



✧ ✧ ✧

Իրանի ղեկավար Ռաֆսանջանին եւս անտարբեր չի մնում իր երկրի հարեւանությամբ կատարվող ազգամիջյան բախումների հանդեպ. օրերս պաշտոնապես դատապարտել է Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի դեմ՝ միաժամանակ հայտարարելով, թե այդ անում է որպես անկողմնակալ տերության ղեկավար եւ պահանջում է, որպեսզի «հակադիր կողմերը... վերադառնան 1992-ի մայիսին Թեհրանի եռակողմ բանակցության նախօրյակի դիրքերին, այսինքն՝ հայերը հանձնեն Լաչինը, Շուշին ու Քարավաճառ-Քելբաջարը եւ փոխարենը ստանան Մարտակերտն ու Շահումյանը, տարածք, որի մեծ մասն ազատամարտիկները ետ են վերցրել» («Ազգ», ապրիլի 16):

Երեկ Թեհրանում Հայաստանի դեսպանատան առաջ ցույց են արել տեղի համալսարանի ադրբեջանցի ուսանողները եւ, մինչ ոստիկանությունը կարգ կստեղծեր, քարկոծել են դեսպանատան շենքը, պատուհանները ջարդոտել:

Դեսպան Բայբուրդցյանը Երեւան է թռել պայմանավորվելու իր անելիքի մանրամասների վերաբերյալ: .

**Ապրիլի 15-ի** ողջ գիշերն անհանգիստ էի: Առավոտից ծանոթ-բարեկամների հետ մեր տագնապներն ու մտահոգություններն էինք փոխանակում. ի՞նչ կլինի, ո՞նց կմարսենք վերջին շաբաթների մեր հաջողությունները, ինչպե՞ս կդիմակայենք թշնամու եւ նրա թիկունքում կանգնած հին հրեշի սպառնալիքներին... Եվ եկավ մեր ընկերներից մեկը, հանգստացնող տոնով հաղորդեց, որ գիշերը մինչեւ լույս Ռուսաստանի ռազմական ծանր ինքնաթիռներ են ժամանել Երեւան ու Գյումրի: Իսկ ժամը 12-ի կողմ հենց մեր Եղվարդի վրա իրենց ահեղ դղիրղներով երկինքն սկսեցին պատառոտել ռազմական ինքնաթիռները: Զույգ-զույգ, շուրջանակի պտույտներ գործելով, վեր խոյանալով ու վար սուրալով... Երեւի իբրեւ զգուշացում Թուրղութ Օզալի սպառնալիքի եւ, այս մեկն անպայման, ի պատասխան մեզ տանջող հարցերի...

✧ ✧ ✧

Ռազմաճակատում էական փոփոխություններ չեն եղել: Թուրքերը նախ հրետակոծել են Էդիլլու գյուղը, ապա գրոհի եկել եւ ջարդ կերած ետ փախել: Կա երկու սպանված (գյուղացիներից), չորս վիրավոր: Փոխհրաձգություններ են եղել Գորիսի ու Վայքի շրջանների սահմաններում:

Թուրքի լրատվությունն ասում է՝ արդեն խափանված է հայերի առաջխաղացումը Քելբաջարի շրջանում, եւ դրա համար իրենք գործադրել են բոլոր ջանքերը, քանի որ վտանգված էր նաեւ Քարհատ-Դաշքեսանի ու Խանլարի շրջանների ճակատագիրը:

Թուրքի լրատվական մարմինների հաղորդման համաձայն՝ հայկական մեծ գրոհներ են եղել Ֆիզուլու եւ Աղդամի վրա: Իբր, Աղդամի ուղղությամբ իրենք ոչնչացրել են հակառակորդի 3 տանկ:

✧ ✧ ✧

Վաղը ԱՊՀ երկրների ղեկավարները պիտի հավաքվեն Մինսկում՝ առաջիկայում գումարելիք մեծ համաժողովը նախապատրաստելու համար, եւ Մոսկվայից հաղորդեցին, որ Ուզբեկստանի ու Թուրքմենիայի նախագահները որոշել են Մինսկ չգնալ, իսկ Ղրղզստանի ղեկավարությունն էլ երկմտության մեջ է: Ուզբեկստանի նախագահը պարզ հայտարարել է, թե այդ ԱՊՀ-ը չի ստեղծվել, գոյություն չունեցող մի բան է, եւ ինքը ոչ մի իմաստ չի տեսնում նրա միջոցառումներին մասնակցելու մեջ:

Երեւի մեր ռուս բարեկամները կհասկանան, որ Թ. Օզալի շրջագայությունից եւ ցեղակից տարածքների (նախկին խորհրդային) արյունը համաթրքական զառանցանքներով պղտորելուց հետո այսօրինակ շատ բաներ պիտի լինեն:

✧ ✧ ✧

Մամուլում տեղեկություններ են հրապարակվում ամսիս 14-ին Թ. Օզալի՝ Բաքվում արած հայտարարությունների ու հոխորտանքների վերաբերյալ: Հասկանալի է, որ Քելբաջարը գնահատել է որպես հայոց «ահաբեկչական-զավթողական քաղաքականության» դրսեւորում եւ նշել դրա դեմն առնելու միջոցները, որոնց էլ Թուրքիայի ռազմական օգնության համար ասել՝ «Թուրքիան ամեն կերպ կաջակցի Ադրբեջանին, չնայած ռազմական միջամտությունն արտակարգ միջոցառում է, ինչը կարող է հանգեցնել շրջանում գլոբալ դիմակայության: Սակայն, ծայրահեղ դեպքում, մենք կդիմենք այդ քայլին: Դրա հետ մեկտեղ մենք գտնում ենք, որ այդ հարցը պետք է լուծվի խաղաղ բանակցությունների միջոցով ԵԱՀԽ եւ ՄԱԿ-ի շրջանակներում»:

Իհարկե, Թուրքիայի ու Ադրբեջանի ռազմական դաշինքի հարցը դեռ օդում կախված է, բայց ի՞նչ անել, երբ գործին խառնված է երրորդ կողմը: Օզալը նշել է, թե Քելբաջարի զավթման նախօրեին ԻԼ-76 օդանավերը մոտ 60 չվերթ են կատարել Սոչիից Գյումրի: «Ես չեմ կարծում, որ Ռուսաստանից Հայաստան են տեղափոխվել մարդասիրական բեռներ»:

Ռուսաստանի ռազմական միջամտության մասին առավել սանձարձակ բարբաջել է Ադրբեջանի նախագահ Էլչիբեյը՝ իր ու Օզալի մամուլի ասուլիսին ուղղակի հայտարարելով, թե Ռուսաստանն իրենց դեմ կռվում է Հայաստանի կողքին: Իբր, դրա ապացույցն անցյալ տարի Ղարաբաղում 15 ռուսաստանցի զինծառայողների ձերբակալումն է: Նրանք կռվում էին հայերի կողմից: Քելբաջարի շրջանի գրավման ժամանակ հայկական կողմն օգտագործել է 5 տեսակի ռազմական օդանավ, ինժեներային զորքերի ստորաբաժանումներ, Հայաստանում տեղակայված ռուսաստանյան դիվիզիաներից մեկի հատուկ նշանակության լեռնային ստորաբաժանումները: Վերջապես ռադիոհետախուզության տվյալները վկայում են, որ ռազմական գործողությունները ղեկավարում էին ռուս սպաները Հայաստանի տարածքից: Ա. Էլչիբեյը գտնում է, որ Քելբաջարի ու Ֆիզուլիի վրա հայերի հարձակման նպատակն էր տապալել Ադրբեջանի ներկա ղեկավարությանը («Ազգ», ապր. 16):

Էլչիբեյն իր տարակուսանքն է արտահայտել այն առթիվ, որ նախկին Միության թուրքալեզու հանրապետություններն այդպես էլ իրենց միահամուռ դատապարտող կարծիքը չարտահայտեցին Քելբաջարի մասին, երբ «համաշխարհային հանրությունն արդեն հստակ դրսեւորել է իր դիրքն այդ հարցում»:

✧ ✧ ✧

«Իզվեստիա» ռուսական թերթն այսօրվա իր համարում տպագրել է Կոնստանտին Էգգերտի հոդվածը հայ-ադրբեջանական հակամարտության վերջին օրերի վիճակի մասին, որի հատկապես մեկ հայացքը (այդ հակամարտության մեջ Ռուսաստանի դերի այսօրվա ու վաղվա վերաբերյալ) արժե ցուցադրել: Ասում է՝ Ադրբեջանը Ռուսաստանին մեղադրում է հայերի վերջին հաջողություններին մասնակցելու մեջ, Ռուսաստանն էլ պարտքի տակ չի մնում. « կառավարական շրջանակներում հոլովում է Ադրբեջանի հետ սահմանը փակելու միտքը»:

Ապա հոդվածում հետեւյալ շարունակությունն ունի այս գաղափարը. «Օբյեկտիվորեն իրադրությունը Ռուսաստանին դրդում է Հայաստանի հետ մերձեցման: Վրաստանի հետ խզումից եւ Ադրբեջանի՝ դեպի Թուրքիա միանշանակ կողմնորոշումից հետո (ինչը միանգամայն բնական էր ու կանխատեսելի), Երեւանից բացի Մոսկվան Անդրկովկասում այլեւս դաշնակից չունի: Հայկական ղեկավարությունը պատրաստ է Ռուսաստանի հետ հաստատել սերտ դաշնակցային հարաբերություններ, որոնցում իր դերն ունի թեկուզ եւ վերջին տարիներին խարխլված, բայց եւ այնպես բավականաչափ զորեղ պատմական համակրանքը:

Բացի այդ, ե՛ւ Հայաստանը, ե՛ւ Ռուսաստանը ԱՊՀ կազմում են եւ մի քանի նախ-



կին խորհրդային հանրապետությունների հետ կոլեկտիվ անվտանգության պայմանագիր են ստորագրել: Փաստաթուղթն առայժմ վավերացված չէ, բայց Հայաստանի համար, այնուամենայնիվ, որոշակի առավելություն կստեղծվի»:

Կարեւոր չէ եզրակացությունը (ուրեմն, Մոսկվային ու Անկարային է մնում զբաղվել բարդույթով եւ այն լուծելու ուղիներ հայթայթել), կարեւորն այս դիտարկումն է, որ կարծում եմ, իրատեսական է եւ, մանավանդ, պերճախոս:

✧ ✧ ✧

Իրանի խորհրդարանի 270 պատգամավորներից 150-ը հատուկ գրությամբ իրենց արտգործնախարարությանն են դիմել՝ պահանջելով վերանայել Իրան-Հայաստան հարաբերությունները, որովհետեւ այդ Հայաստանն ագրեսոր է եւ հարձակվել է հարեւան տերության վրա, մահմեդականներ կոտորել: Երեկվա խորհրդարանական նիստում ելույթ է ունեցել դեպուտատ Արտավազդ Բաղումյանը, երեւի մեղա գալով, դրվատել Իրանի միջնորդական դերը եւ հավաստացրել, թե հայ-ադրբեջանական հակամարտությունը խաղաղ լուծում կստանա («Երկիր», ապրիլի 15):

✧ ✧ ✧

«Երկիրն» այսօրվա իր համարում նշել է ԼՂՀ ԳԽ-ի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանի ողբերգական ու առեղծվածային մահվան տարելիցը՝ նրան վերաբերող ջերմ խոսքերով, որոնց շարքում սպրդել է նաեւ այսպիսի մի անհամ արտառոցը. «Այսօր Արթուր Մկրտչյանի **ուղենշած ճանապարհով** արցախահայությունը շարունակում է իր սուրբ ազատամարտը...»:

Բայց չէ՞ որ կողմնակալությունն անգամ չափ ու սահման պիտի ճանաչի:

**Ապրիլի 16-ին** Ադրբեջանից առած լուրեր էին հաղորդում Մոսկվայում, իբր հայկական ռազմական ինքնաթիռները ռմբակոծել են Աղդամն ու Ֆիզուլին, ապա զորքերն են հարձակման անցել եւ առաջ են շարժվում:

ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը, այս լուրերին ծանոթ լինելով Ադրբեջանի տարածած լրատվությունից, հայտարարեց, թե դրանք սուտ են, հայ ազատամարտիկների գործողությունները լոկ ինքնապաշտպանական բնույթ ունեն: Այսպես, Ֆիզուլիից հրետակոծել են Էդիլլուն, հարձակվել Հին Թաղերի վրա, եւ, պարզ է, հայերը պիտի ջանային լռեցնել Ֆիզուլու հրետակետերը, ետ մղել գրոհի եկածներին:

Ըստ երեւույթին Ադրբեջանն իր սուտ լուրերն աշխարհով մեկ էր արել: Այդ պատճառով էլ ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի ներկայացուցիչը տարածեց հայտարարություն, որով ԼՂՀ ղեկավարներին կոչ էր անում ձեռնպահ մնալ նոր գրոհներից եւ կատարել ԵԱՀԽ-ի հանձնարարականները:

Իսկ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին էլ արձանագրել է, որ ԼՂՀ մարտական գործողություններն արտակարգ վտանգավոր վիճակ են ստեղծել եւ նոր բարդույթներ են բորբոքում, երբ միայն պետք է նստել բանակցությունների սեղանի շուրջ, դադարեցնել մարտերն ու արյունահեղությունը:

✧ ✧ ✧

«Երկիրը» երեկվա իր համարում ապրիլի «Լոս-Անջելես»-ից (ապրիլի 5-ի) արտատպել է Ելենա Բոնների հոդվածը («Մեռնող ժողովուրդը շատ օգնության կարիք ունի»), որով մեր լավ բարեկամն ու արդարության քարոզիչ-մարտիկը դարձյալ աշխարհի հզորների ուշադրությունն է հրավիրում իր ազատության ու անկախության համար մաքառող Արցախի վրա: Դեռեւս ուշ չէ,- զգաստության է կոչում Բոններ-Ալիխանյանը,- փրկեցե՛ք Ղարաբաղի հայությանը, եթե հարգում եք «Մարդու իրավունքների սկզբունքը»:

* * *

Լեռնային Ղարաբաղի հանրապետության լրատվության եւ մամուլի դեպարտամենտն արել է հետեւյալ հայտարարությունը. «Վերջերս նախկին Խ. Միության հանրապետությունների տարածքում ադրբեջանական կողմը սկսել է առեւանգել ազգությամբ հայ քաղաքացիների: Նրանց հետագայում փոխանակում են գերի ընկած ադրբեջանցի զինվորների հետ: Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը չի կարող անտարբեր մնալ անմեղ հայրենակիցների ճակատագրի նկատմամբ: Եթե վերոհիշյալ գործողությունները շարունակվեն, ապա ԼՂՀ-ը ստիպված կլինի դիմել համազոր քայլերի («Ազգ», ապրիլի 15):

**Ապրիլի 17-ին** նախկին Խորհրդային Միության թրքական հանրապետություններ կատարած իր շրջագայությունից եւ Հայաստանի դեմ ամենուր սպառնալիքներ տալուց հետո Անկարա վերադարձավ Թուրղութ Օզալ պրեզիդենտը եւ հանկարծամահ եղավ: Ասում են՝ պատճառը սրտի անբավարարությունն է եղել, որից էլ երեկ ծանր ինֆարկտ է ստացել եւ հրաժեշտ տվել այս աշխարհին:

Ասում են, իսկ ես մտածում եմ, իմ կարծիքով, իսկական պատճառի մասին, նախորդ օրվա ռուսական ինքնաթիռների արտասովոր սպառնալից զինավարժության ու դրիրդների մասին: Օզալի սպառնալիքների, սահմանի մոտ քշած թուրք դիվիզիաների դեմ ռուսական ռազմական ուժի այդ ահեղ ցուցադրանքի մասին: Չէր կարող պատահել, որ թուրք սպառնացողն իր անզորության գիտակցությունից չպայթեր...

Նման դեպքերում ասում են՝ քա՛րը փորին:

* * *

Երեւանում այսօր համաժողովրդական հանրահավաք է եղել, որի կազմակերպիչ կոմունիստական կուսակցության հրապարակած երեք կարեւորագույն պահանջներն են եղել՝ ԼՂՀ ճանաչումը ՀՀ կողմից, ՀՀ եւ Ռուսաստանի ամեն տեսակ կապերի ու փոխհարաբերությունների սերտացման խնդիրը եւ ՀՀ ներկայիս օրենսդիր ու գործադիր մարմինների հրաժարականը:

* * *

Ֆիզուլու կողմից դարձյալ հրետակոծել են Հադրութի շրջանի մի շարք բնակավայրեր: Նոր ավերածություններ կան հատկապես Հադրութում ու Հին Թաղերում:

Թուրքի լրատվությունն աղմկում է ռազմաճակատի իրենց գոտում հայկական ռազմական ինքնաթիռների թռիչքների ու կատարած ավերածությունների մասին, իսկ ԼՂՀ-ից դրան պատասխանում են, որ իրենք ռազմական ինքնաթիռներ չունեն, եւ իրենց վերջին հաղթական քայլերից սարսափած թուրքի աչքին են նման ահավոր բաներ երեւում:

Ասում են՝ ԵԱՀԽ ռազմական դիտորդները ԼՂՀ ղեկավարության հետ պայմանավորվել են հրադադարի վերաբերյալ, որն, իբր, պետք է սկսվի վաղվանից: Ասվա՛ծ տա:

**Ապրիլի 18-ին** հաղորդեցին, որ երեկ ԼՂՀ ազատագրության համար զոհվել են պարտիզանական-ֆիդայական զորախմբի ղեկավար, մայոր Շահեն Մեղրյանն ու իր զինվորներից յոթ հոգի:

Անմիջապես չկարողացա կողմնորոշվել, մոլորեցնող էր «մայոր» կոչումը, որ առնչություն չունի Շահեն Մեղրյան երեւույթի հետ: Նրա նմանների անունները հիշելիս որեւէ բան ասելու համար պարտադիր չէ կապել կոչումների, տարբերանշան-տիտղոսների հետ:

Ուրեմն, նահատակվեց նաեւ նոր օրերի այս հերոսը, որ լուռ արհամարհելով շուրջը տարածված թշնամական ասեկոսեներն ու հիմար բամբասանքները, իր կռիվն էր անում, հայրենի եզերքի փրկության կռիվը...

**Ապրիլի 19-ին** ՀՀ նախագահը Թուրքիայի կառավարությանը ցավակցական հեռագիր է հղել Թ. Օզալի մահվան առթիվ:



* * *

ԼՂՀ ղեկավարությունը, արձագանքելով Ռուսաստանի խաղաղարար միջնորդությանը, կարգադրություն է արել միակողմանի հրադադար անելու ռազմաճակատի ամբողջ երկարությամբ:

ԱԳՆ Ղասըմովը հայտարարել է, թե Ադրբեջանը եւս համաձայն է հրադադարին՝ պայմանով միայն, որպեսզի հայերն իրենց բոլոր զորքերը դուրս բերեն սուվերեն Ադրբեջանի տարածքներից, ապա թե ոչ, իրենք կդիմեն կտրուկ միջոցների պատերազմի ելքն իրենց օգտին լուծելու համար:

Ռազմաճակատում երեկ բավական անհանգիստ է եղել դրությունը: Հադրութի շրջանում ռմբակոծության են ենթարկվել Էդիլլուն ու Աղբուլաղը: Մարտակերտի հյուսիս-արեւմտյան մասում մարտեր էին գնում Մռավի փեշերին, Օմարի լեռնանցքի շրջանում, որը թուրքերի վերջին կապն էր ապահովում Քելբաջարի հետ եւ, հավանաբար, դրա համար էլ դարձել էր լուրջ բախումների կետ:

* * *

Ադրբեջանի նախագահի լրատվական կենտրոնի հաղորդման համաձայն՝ այսօր Արտաքին քաղաքականության հարցերի գծով պետական խորհրդական Վ. Գուլուզադեն ԵԱՀԽ-ի ռազմական փորձագետների պատվիրակության ղեկավարի հետ ստորագրել է համաձայնագիր կրակի եռօրյա դադարի վերաբերյալ: Ասվել է, որ նման համաձայնագիր է ստորագրվել նաեւ հայկական կողմի հետ:

* * *

Այսօր ԼՂՀ ԳԽ-ի Նախագահությունը հրապարակեց հայտարարություն, որով հաղորդում է հանրապետության պատրաստակամությունը պատերազմը դադարեցնելու եւ հարցը քաղաքական եղանակով կարգավորելու համար, ողջունում միջազգային կազմակերպությունների ու մեծ տերությունների խաղաղասիրական միջամտությունը՝ միաժամանակ պնդելով, որ դրանք բոլորն էլ լավ են, սակայն ամեն ինչ չեն, քանի որ վերջ ի վերջո հարցը պետք է լուծվի կռվող երկու կողմերի համաձայնությամբ, ուրեմն՝ հենց նրանք էլ պետք է նստեն բանակցությունների սեղանի շուրջ՝ իբրեւ հավասարազոր կողմեր, համաձայնություն կայացնեն եւ հանեն վերջնական վճիռը: Սրա համար պահանջվում է հասարակ մի բան՝ որպեսզի Ադրբեջանը ճանաչի ԼՂՀ-ը, հաշվի նստի նրա հետ:

**Ապրիլի 20-ին** Եռաբլուրը, որ հայոց ինքնապաշտպան նահատակների պանթեոնն է, ընդունեց իր նոր անմեռներին՝ Շահումյանի հերոս Շահեն Մեղրյանին եւ նրա հետ երեք օր առաջ զոհված Հայկ Մեղրյանին, Արմեն Բաղյանին, Պողոս Սիմոնյանին, Ռաֆիկ Բաղալյանին, Արտակ Խաչատրյանին, Սեդրակ Սեդրակյանին, Գրիգոր Գրիգորյանին, ինչպես նաեւ կործանված ուղղաթիռի երեք վարորդներին՝ Ջանփոլադ Մուրադյանին, Արամ Գրիգորյանին, Իոսիֆ Միքայելյանին:

Թաղման թափորն Սպայի տնից ելավ, հրապարակում ծովացավ, ապա շարժվեց դեպի Եռաբլուր՝ իր հետ տանելով ողջ Երեւանի ցավն ու ափսոսանքը: Իհարկե, ամենից շատ՝ Շ. Մեղրյանի համար, որի շուրջ բամբասանք ու զրպարտություններ շատ էին տարածել ՀՀՇ-ները, իսկ նա, այդ բոլորը քամուն տալով, իր անձնվեր ֆիդայիների գլուխն անցած՝ թուրքի հոգին էր առնում Գյուլիստանում ու Շահումյանի շրջանի մյուս բնակավայրերում, սահմանակից Մարտակերտի շրջանում:

Ինչ-որ է, նա հանգիստ, ճակատը բաց, հայրենի հողի համար կյանքը տված գնում է՝ խառնվելու մեր պատմության հին ու նոր անմահներին: Իսկ հակառակորդները դեռ

պիտի ապրեն եւ լեղի դարձնեն ապրողների կյանքը, Հայաստան աշխարհը:

Նահատակության լուրը հասել է աշխարհասփյուռ հայերին, հայոց բոլոր բարեկամներին, ցավակցության հեռագրեր են ստացվել շատ ու շատ տեղերից: «Ցնցված ենք ղարաբաղյան ազատագրական շարժման լեգենդար ազգային հերոս Շահեն Մեղրյանի, ուղղաթիռի անձնակազմի, Ղարաբաղի ազատության համար մաքառող զինակիցների նահատակության լուրով»,- այսպես է սկսվում ռուս մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեի հեռագիրը, որն ստորագրել են Ալեքսեեւսկին, Բաբանովը, Բուրկովան, Վերմիշեւան, Նույկինան, Նույկինը, Օսկոցկին, Գայդարը, Դաշկեւիչը եւ ուրիշներ...

✧ ✧ ✧

Երեկ ԼՂՀ ԳԽ-ի Նախագահությունը քննարկել է Ռուսաստանի միջնորդությամբ Մոսկվայում Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչների անցկացրած բանակցությունների արդյունքները: Սակայն, ասում են, հայտնի չեն այդ արդյունքների մանրամասները (լուրեր են պտտվում, թե համաձայնագրում լուրջ զիջումներ են արվել հայկական կողմից), հայտնի չեն նաեւ քննարկման իսկ արդյունքները (քննարկմանը լրագրողներ չեն մասնակցել): Միայն ենթադրվում է, որ համաձայնագիրը նախատեսում է խաղաղարար զորքեր մտցնել ԼՂՀ:

✧ ✧ ✧

Թերթերը տպագրել են Հադրութի շրջանի ղեկավարության հայտարարությունները, որոնցից իմանում ենք, որ շրջկենտրոնում պետական ու գերատեսչական բնակարանները վերաբաշխվել են այժմ այնտեղ ապրողներին, իսկ անհատական անբնակ առանձնատները, որոնք անտեր կմնան մինչեւ մայիսի 10-ը, կհանձնվեն ներկայումս շրջանում բնակվողներին: Սրա նպատակը մեկն է՝ տուն վերադարձնել շրջանը լքածներին, միջոցառում, որ ուրիշ շրջաններում կատարվում է առանց ծայրահեղությունների:

✧ ✧ ✧

Հեռուստատեսությամբ ցույց տվին հինավուրց Դադիվանքում (Քելբաջարի շրջան) կատարված առաջին ժամերգությունը, որ գլխավորում էր Արցախի հոգեւոր առաջնորդ Պարգեւ սրբազան Մարտիրոսյանը:

✧ ✧ ✧

Ասում են՝ Թուրքիան սահմանամերձ շրջաններում վիթխարի զենք ու տեխնիկա է կուտակել, հիմա էլ ցուցադրական զինավարժություններ է անում, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք է փոխադրում Նախիջեւան:

**Ապրիլի 21.** Երեկ Քելբաջարի շրջանի հյուսիսում, Օմարի լեռնանցքի շրջանում, տեղի են ունեցել կատաղի մարտեր: Երկու կողմերն էլ զոհեր են տվել (մեր սպանվածները երեքն են, վիրավորները՝ տաս, թուրքերինը՝ մի քանի անգամ շատ): Ստրատեգիական կարեւոր այս կետը՝ լեռնանցքը, որից հետո բացվում են Քարհատի ու Խանլարի շրջանների ճամփաները, վերջին օրերին ձեռքից ձեռք է անցել:

Ասում են՝ ԵԱՀԽ-ի դիտորդների պատվիրակությունն արդեն Ադրբեջանի ու ՀՀ կառավարությունների ներկայացուցիչների հետ համաձայնություններ են կայացրել եռօրյա զինադադարի մասին: Իսկ ԼՂՀ զինուժը կրակը դադարեցրել է՝ առանց պայմանավորվելու:



✧ ✧ ✧

Էլչիբեյը հայտարարել է, թե ինքը դատապարտում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որն, իբր, լրջորեն չի վերաբերվել Ադրբեջանի դեմ հայերի ձեռնարկած ագրեսիային: Պահանջել է, որ նա նոր, արդար դիտորդներ ուղարկի հակամարտության գոտի, որպեսզի սրանք դրությունը հանգամանորեն ուսումնասիրեն, զեկուցեն ՄԱԿ-ի համապատասխան օղակներին:

**Ապրիլի 22-ին** ռազմաճակատում էական տեղաշարժեր չեն եղել, միայն Մռավի փեշերին, Օմարի լեռնանցքի մոտերքում, նկատվել են թուրքերի զինուժի ու տեխնիկայի նոր կուտակումներ:

Դիտորդներն էլ բանակցություններ են վարել ԼՂՀ ղեկավարների հետ, ապա շարժվել դեպի Աղդամ:

✧ ✧ ✧

Լեւոն Տեր-Պետրոսյանը վերադարձավ Թուրքիայից, ուր մասնակցել էր նրանց պրեզիդենտ Թ. Օզալի թաղմանը: այնտեղ նա հանդիպումներ ու զրույցներ է ունեցել մի շարք երկրների ղեկավարների եւ Թուրքիայի վարչապետ Դեմիրելի հետ: Բոլոր զրույցներում կարեւորագույն տեղ է բռնել Լեռնային Ղարաբաղի վիճակի կարգավորման խնդիրը: Էլչիբեյի հետ տեղի ունեցած զրույցին համաձայնության են եկել զինադադարի վերաբերյալ՝ առանց նախնական որեւէ պայմանի, որից հետո էլ պետք է խաղաղ կարգավորման խնդիրը դրվի՝ ԵԱՀԽ-ի կարգուկանոնի շրջանակներում: Այդ էր մնացել, որ Էլչիբեյը համաձայն չլինի ԵԱՀԽ-ի որդեգրած հիմար պայմաններին, թեկուզ հենց միայն պետության ամբողջության անձեռնմխելիությանը:

Այս զրույցից հետո Էլչիբեյն ունեցել է մամուլի ասուլիս եւ հայտարարել է, թե ինքն ու Հայաստանի ղեկավարը համոզված են, որ ուրիշ լուծում չկա, բացի ԵԱՀԽ-ի շրջանակներից, ուր առաջին անխախտելին սահմանների անձեռնմխելիությունն է: Նա ասել է. «Տեր-Պետրոսյանը խոստացավ հարգել եւ գործադրել Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԽ-ի ցանկացած որոշում»: Ապա՝ իբր, պայմանավորվել են հեռախոսային կապ պահպանել եւ շարունակել բանակցությունները:

Էլչիբեյն ու Տեր-Պետրոսյանն Անկարայում երկրորդ անգամ հանդիպել էին այսօր: Հանդիպմանը մասնակցում էին նաեւ Թուրքիայի ԱԳ նախարար Հիքմեթ Չեթինը, Նախիջեւանի էմիր Հ. Ալիեւը: Այս մասին հաղորդում արած Վոլֆան Վուրալն ասել է. «Այս բոլոր քաղաքական շփումների նպատակն է ապահովել վերջերս գրավված շրջաններից հայկական ուժերի հեռացումը, զինադադարի հաստատումը եւ խաղաղության ապահովումը»: Իբր, իրենց հասած տեղեկությունների համաձայն էլ՝ «Հայաստանը չի ուզում մնալ Քալբաջարում» («Երկիր», ապրիլի 23):

Դեմիրելի ու Տեր-Պետրոսյանի հանդիպումը եւս նույն ոգով է ընթացել: Դեմիրելը պնդել է, թե հայկական ուժերն անմիջապես պետք է հեռանան Քալբաջարից, ապա, անդրադառնալով մարդասիրական օգնության խնդրին, արել այսպիսի կշտամբանք. «մենք զարմանում ենք, որ կռիվ մղող երկիրը միաժամանակ մարդասիրական օգնություն է ուզում» (անդ): Ըստ երեւույթին կալմեչ են արել եւ թուրքավարի շան լափ թափել գլխին:

**Ապրիլի 23-ին** Լ. Տեր-Պետրոսյանն ընդունեց Հայաստանում տեղակայված արտասահմանյան դեսպանատների ղեկավարներին, նրանց բացատրեց իր Թուրքիա կատարած ուղեւորության եւ վարած բանակցությունների հանգամանքները, առաջարկեց, որ նրանք օգնեն այդ ամենն իրենց երկրների ղեկավարներին հասցնելու եւ ձեռք բերված համաձայնությունների իրականացման համար ապահովելու նրանց օժանդակությունը:

ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը քննարկել է Բ. Ելցինի միջնորդության պատ-

րաստակամությունը ղարաբաղյան բարդույթի կարգավորման համար, հավանություն տվել նշելով, որ Ադրբեջանը, Հայաստանն ու ԼՂՀ-ը միահամուռ համաձայն են այդ միջնորդությանը:

ԵԱՀԽ-ի 10-հոգիանոց դիտորդական խումբը Աղդամից վերադարձել է Ասկերանի շրջան եւ գոհունակությամբ խոսել ձեռք բերված համաձայնության մասին: Ասում են՝ իրենց խնդիրն է նշել-պլանավորել այն վայրերը, որոնցում տեղադրվելու են ժամանելիք դիտորդական խմբերը:

Մոսկովյան հեռուստատեսությամբ տեղեկացրին Թուրքիայում Դեմիրելի եւ Էլչիբեյի բանակցությունների էությունը. իբր, վարչապետը խոստացել է ամենայն օժանդակություն ղարաբաղյան հակամարտությանը վերջ տալու գործում՝ միաժամանակ հիշեցնելով, որ Թուրքիան միշտ էլ կողմնակից է, որ բոլոր բարդույթները լուծվեն առանց արյունահեղության, խաղաղ-քաղաքական միջոցներով... Սակայն միեւնույն Թուրքիան չի կարող հանգիստ լինել, քանի Հայաստանի ձեռքում է գտնվում Ադրբեջանից բռնագրավված Քալբաջարը...

✧ ✧ ✧

Բայց ինչպե՞ս հասկանալ այս անհանգստությունը, որ միայն Քալբաջարի համար է, իսկ «սուվերեն Ադրբեջանի անբաժանելի մաս կազմող Ղարաբա՞ղը»: Թե՞ արդեն հաշտվել են այն ձեռքից տալու հետ, եւ հիմա միայն Քալբաջարն է վառում-անհանգստացնում:

Լրագրողների հետ ունեցած այսօրվա ասուլիսում Արմեն Դուլյանը ցույց տվեց Ադրբեջանի ռազմական մի քարտեզ, որը մերոնք դուրս են բերել Քալբաջարի պարտված զորամասի կացարանից: Այնտեղ Ադրբեջանի մեջ են առնված այսօրվա Հայաստանի արեւելյան ու հարավային մասերը՝ Սեւանի ավազանից մինչեւ Զանգեզուր, Կապան, Մեղրի եւ Իրանի մի զգալի մասը՝ Ադրբեջանի երեք չափից ավելի...

Այս քարտեզի զառանցող հեղինակներն են, որ, Լեռնային Ղարաբաղը բերաններն առած, անհեթեթ փչոցներ են տարածում Մեծ Հայք-Հայաստանի ստեղծման հայկական պաշտոնական ծրագրերի մասին:

✧ ✧ ✧

Այսօրվա «Երկիրը» երեկվա «Իզվեստիայից» թարգմանել-արտատպել է լրագրող Վադիմ Բելիխի ռեպորտաժն Ադրբեջանից՝ վերնագրված «Թիկունքում եւ ռազմաճակատում»: Այնտեղ ներկայացված է մեր հակառակորդի կռվող բանակի ու նրա թիկունքի ողբերգական վիճակը:

Մարդը մեծ դժվարությամբ է ընկել Ֆիզուլու գոտի: Ասում է՝ այս դժվարությունը վերեւներում բացատրում են «օրավուր լայն թափ առնող հայկական լրտեսության դեմ ինչ-որ կերպ պայքարելու անհրաժեշտությամբ: Իսկ ադրբեջանցի լրագրողների կարծիքով՝ ամեն ինչ անհամեմատ պարզ բացատրություն ունի. բանակը թշվառ վիճակում է, պարտությունն այնքան ակնառու է, որ այդպիսի բանակն օտարներին չեն ուզում ցույց տալ: Ամո՜թ է»:

Ասում է՝ ռադիոն, հեռուստատեսությունը ճակատից կոնկրետ լուրեր ու տվյալներ չեն հաղորդում, գիշեր-ցերեկ երկու հատ ուսումնական ժապավեն են պտտեցնում. ինչպես առաջին օգնություն ցույց տալ վիրավորներին եւ ինչպես վարվել ռազմագերիների հետ: Եթե առաջինը շատ անհրաժեշտ է, ապա երկրորդի գիտելիքները այսօրվա ադրբեջանական բանակին պետք չի գալիս:

Բացսիրտ մի սպա լրագրողին զարմանքով պատմել է անառիկ Շուշիի անկումը: Ասում է. «Քաղաքը ետ գրավելու համար Լաչինում կուտակվել էր մեծ քանակությամբ զորք: Բայց երբ հայերն սկսեցին այսպես կոչված «հումանիտար միջանցք» բանալու հարձակումը, մեր զորքն ինչ-որ տեղ անհետացավ: Իսկ Քալբաջարի շրջանի անկո՞ւմը: Հետախուզությունը դեռ երկու ամիս առաջ էր տեղեկացրել նախապատրաստվող հարձակման մասին: Եվ ի՞նչ: Քալբաջարը՝ բնության կողմից էր անառիկությամբ օժտված, ռեկորդային կարճ ժամկետում հանձնեցինք: Սակայն այնպիսի տպավորություն է, որ դա հանրապետությունում քչերին է անհանգստացնում:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունում երկար նստելուց հետո իմ բախտը բերեց. ռազմաճակատի ամենալարված տեղամասերից մեկը՝ Ֆիզուլի էին մեկնում երկու սպա, որոնք համաձայնեցին ինձ տանել իրենց հետ:

Վերջապես հասանք Ջաբրայիլ: Նախկին դպրոց-ինտերնատի բակում երեւում էին ժամապահներ, մի քանի զրահամեքենա, 2 ՀՄՄ, մի հնամաշ Տ-72 տանկ: Այստեղ տեղավորված էր եւ կռվող, եւ միաժամանակ նոր կազմավորվող ադրբեջանական մի գունդ:

Բանակ, բառիս բուն իմաստով, առայժմ չկա: Մինչեւ վերջերս Ղարաբաղում պատերազմում էին ամենաբազմազան զինված խմբեր ու ջոկատներ, տեղացիներ, կամավորներ, որոնք տարբեր ղեկավարների էին ենթարկվում, քաղաքական կուսակցությունների, ՆԳՆ-ին, նոր ձեւավորվող պաշտպանության նախարարությանը... Նրանց ղեկավարելը գործնականում անհնար էր: Շատ հրամանատարներ կռվում էին իրենց հայեցողությամբ՝ չկամենալով ենթարկվել որեւէ մեկին: Հիմա կամավորներին ցրել են: Բոլոր ուժերը ենթարկվում են միասնական հրամանատարությանը, իսկ բանակը ձեւավորվում է միմիայն զինակոչիկների հաշվին:

Ադրբեջանցի կադրային սպաներ բանակում քիչ են: Հրավիրում են տեղի ռուսներին: Պաշտպանության նախարարությունում այդպիսիք շատ են: Զորակոչում են նաեւ պահեստայիններին, Բաքվի նախկին զինվորական ուսումնարանում շտապ կարգով լեյտենանտներ են թխում»:

Հետո էլ լրագրողը պատմում է Ֆիզուլիի խայտառակ վիճակը («հայերը մտադիր չեն գրավել, թե չէ, այն մի քանի րոպեի կերակուր է»): Զորակոչիկների փախուստներն է ցույց տալիս... Ոչ ոք չի ուզում կռվել:

Բայց ինչո՞ւ եւ ինչպե՞ս կռվեն, երբ դեմներն իրենց տուն ու տեղը մինչեւ վերջ պաշտպանող երդվյալներն են:

**Մայիսի 1-ին** ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ապրիլի 30-ին ԼՂ-ի վիճակի կարգավորման համար ընդունած որոշման առթիվ ՀՀ ԱԳՆ-ը հրապարակել է հայտարարություն, որով, համաձայնելով որոշման հիմնական պահանջների հետ, իր տարակարծությունն է հայտնում մի շարք դրույթների առթիվ: Նման հայտարարությամբ հանդես է եկել նաեւ ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը, որն էլ, ողջունելով ՄԱԿ-ի մտահոգությունը ԼՂ-ի վիճակի համար, զարմացած է, թե ինչպես Ադրբեջանն իր ձեռքին անդեմ գործիք է դարձրել ԵԱՀԽ-ը եւ շարունակ պատճառ է որոնում նրա որոշումների տապալման կամ անպտուղ որոշումների ընդունման համար եւ այժմ էլ հասել է նրան, որ միջազգային կազմակերպությունները հակված են արցախահայության ճակատագիրը հանձնել նրան, շարունակել ու ավարտին հասցնել այս լեռնաստանի ազատաբաղձ տերերի ցեղասպանությունը:

✧ ✧ ✧

Ռուսաստանի ԱԳՆ-ը այսօր պաշտոնապես հերքեց Ադրբեջանի ԱԳ նախարարի՝ Կարաչիում, Մուսուլմանական համագործակցության ժողովում արած այն հայտարարությունը, որի համաձայն՝ իբր Ռուսաստանը տեխնիկայով ու զինամթերքով օգնում է իր դաշնակից Հայաստանին, ինչի շնորհիվ էլ վերջին շրջանում հայերն ունեցել են ակնհայտ հաջողություններ Ադրբեջանի դեմ:

✧ ✧ ✧

Ցույց են տալիս Ստեփանակերտի ռազմական տեխնիկայի վերանորոգման գործարանը, ուր նորոգվում, նորից գործի են դրվում թուրքի զորամասերից առգրավված տանկերը եւ այլ զրահամեքենաներ: Նրանց թիվն առ այսօր անցնում է հարյուրից: Հմուտ մեխանիկ-վարպետներ են աշխատում այստեղ, նրանց ձեռքի տակ կենդանանում են բոլոր կիսամեռ, նույնիսկ մեռած մեքենաները:

Գործարանում երգիծական պատմություններ էլ են հյուսվում, մեկի համաձայն՝ ԼՂՀ ղեկավարությունը հատուկ շնորհակալագիր է հղել Ադրբեջանի ղեկավարությանը, որ ռազմաճակատ հայ ինքնապաշտպաններին այսքան շատ եւ այսքան բազմատիպ տեխնիկա է տրամադրում:

✧ ✧ ✧

Ադրբեջանի պաշտպանության նախկին մինիստր Մեհթիեւը Բաքվում դատական պատասխանատվության է ենթարկվում 1992 թ. հունվարին թույլ տված անփութության ու դավաճանության հասնող անպատասխանատվության համար, որի պատճառով էլ Քարինտակի ճակատում կորսվել է մի ամբողջ գումարտակ թուրքի ասկյար:

✧ ✧ ✧

Այսօր առավոտյան թուրքերը, Դաշքեսանի կողմից, հարձակում են գործել Քալբաջարի հյուսիսային մասում գտնվող արցախցի զինվորության վրա: Մերոնք հարձակումը կասեցրել են, ոչնչացրել երկու տանկ եւ զրահատեխնիկա:

Թուրքերը հրետակոծության են ենթարկել ՀՀ Իջեւանի ու Նոյեմբերյանի շրջանների սահմանային բնակավայրերը:

✧ ✧ ✧

Հեռուստատեսային հարցազրույցի էր կանչված բուլղար հայտնի լրագրողուհի ու կինոռեժիսոր Ցվետանա Պասկալեւան:

Ադրբեջանի կառավարությունը, ասում են, նոտա է ուղարկել Բուլղարիայի կառավարությանը՝ բողոքելով Պասկալեւայի հակաադրբեջանական գործողությունների դեմ, մասնավորապես նշելով, որ նա զենքը ձեռքին լուսանկարվել է հայ մարտիկների հետ միասին:

- Ես իմ ամբողջ կյանքում միայն մեկ զենք եմ ունեցել, նրան եմ սիրահետում եւ նրանից է, որ անբաժան եմ,- ժպտալով բացատրում է լրագրողուհի-կինոաշխատողը: - Դա իմ կինոխցիկն է: Հիմա ես շատ ուրախ եմ, որ այն զենքի տեղ է ընդունվում հակառակորդիս կողմից: Կարելի է մտածել, որ դա նաեւ լավագույն գնահատականն է, որովհետեւ այդ զենքով եմ կռվում արդարության համար, ամեն տեսակ բռնության դեմ:

- Ես Արցախ ոտք եմ դրել 1991-ի մայիսին, երբ իմացել եմ Գետաշենում ու Մարտունաշենում սկսված անմարդկային վայրագությունների մասին,- շարունակում է Պասկալեւան: - Այն ժամանակ էլ ֆրանսիական մի ամսագրից իմացա հայ երիտասարդ լրագրող Վարդան Հովհաննիսյանին վիճակված դժբախտության մասին, համառությամբ հասա նրան, որ ինձ հնարավորություն տրվեց 15 րոպե խոսել-զրուցել Գանձակի կալանատանը տանջվող գործընկերոջս հետ, հետո նաեւ տեսագրել: Հպարտությամբ կարող եմ ասել, որ սա որոշակի նշանակություն է ունեցել Հովհաննիսյանին այդ տանջարանից ազատելու գործում: Ես ականատեսն ու ցավակիցն եմ եղել հունիս-հուլիսյան Շահումյանի: Տեսել ու նկարել եմ բռնագաղթը, ժողովրդի պայքարն ու տառապանքը: Հետագա շուրջ երկու տարին այս ամենն ինձ հետ է՝ իբրեւ իմ ճակատագիրը, եւ այս մասին էլ հպարտությամբ եմ խոսում: Անպայմա՛ն հպարտությամբ, որովհետեւ Արցախը, որ դարձել է իմ եւ՛ ցավը, եւ՛ սերը, աշխարհին ցույց է տալիս, թե ի՛նչ աստվածային ուժ է իրենից ներկայացնում ազատասիրությունը, որ հաղթանակով է նշանավորում իր յուրաքանչյուր օրը:

Ասեմ նաեւ, որ ես միայնակ եմ տանում իմ ճակատագրական ծանր բեռը. ես եւ՛ լրագրող-հեղինակ եմ, եւ՛ ռեժիսոր, եւ՛ օպերատոր, այս ամենը կանացի մի փխրուն մարմնի մեջ: Բայց գիտեմ, որ ամենուր հաջողությունն է ուղեկցելու, քանի որ ինձ ուղեկցում է աստծո ձեռքը...

Ա՛յ, տեսեք, արժանացել եմ Լեռնային Ղարաբաղի հանրապետության պետական առաջին մրցանակին, որ Եղիշեի անունն է կրում: Սա իր ազատության ու արդարության համար մաքառող երկրի պարգեւն է, որ ես համարում եմ ամենաբարձրը երկրային բոլոր պարգեւներից եւ միշտ պետք է ջանամ արժանի լինել նրան...

Ես,- միշտ էլ համոզված եմ եղել, որ մարդ այլազգի հանրության բախտի համար պայքարի ելնելիս անպայման ունենում է անձնազոհություն կոչված մեծ առաքինություն: Հայի ճակատագրի համար պայքարի մեջ մտնողն անպայման պետք է ունենա այդ առաքինության կրկնապատիկը կամ անձնազոհություն եւ էլի մի նման բան, որովհետեւ նա այդ պահից արդեն վասակած է լինում եւ դիմագրավում է նաեւ ողջ թրքության՝ աշխարհի այդ մեծագույն չարիքի թշնամանքը:

✧ ✧ ✧

**Մայիսի 2-ին ու 3-ին** ռազմաճակատում էական տեղաշարժեր չկային, բացի այն ավազակային հարձակումներից, որ թուրքերն էին կատարում Արցախում՝ Հադրութի, Մարտունու, Մարտակերտի շրջանների ծայրամասային գյուղերի, ինչպես նաեւ ՀՀ Իջեւանի, Նոյեմբերյանի, նաեւ հարավում՝ Կապանի ու Մեղրու սահմանային բնակավայրերի վրա: Այդ պատճառով էլ ՀՀ ԱԳՆ-ը հրապարակեց հայտարարություն, որով շեշտվում էր, որ կարճատեւ հրադադարից ու հարաբերական խաղաղությունից հետո, Ադրբեջանը վերստին բորբոքել է պատերազմը՝ ցանկանալով նրա մեջ քաշել Հայաստանը եւ մեկ անգամ եւս հաստատել, որ նրա ձգտումն է Ղարաբաղյան բարդույթը լուծել բացառապես կռվի միջոցով, իր տիրապետության վերահաստատման ծրագրով: Բայց մի՞թե այդ կռվի նոր դրսեւորումները նրան ոչինչ չհասկացրին, եւ միջազգային համապատասխան մարմիններն էլ չպետք է ստիպեն, որ նա հասկանա:

✧ ✧ ✧

Ամսիս երկուսի հաղորդումներում լայն տեղ ուներ այն լուրը, որի համաձայն՝ Թուրքիան Իրանի տարածքով Ադրբեջան է հասցրել մեծ քանակությամբ զենք ու զինամթերք, որոնց փոխադրությունը կազմակերպել են բարձրաստիճան բազմաթիվ զինվորականներ՝ յոթ գեներալների գլխավորությամբ:

✧ ✧ ✧

Այսօր ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին հղել է նամակ, որով իր անհանգստությունն է արտահայտում ԼՂ-ի իրադրության վերաբերյալ ապրիլի 30-ին ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթի առթիվ, որը ԼՂՀ ղեկավարության կարծիքով՝ հաշվի չի առնում քաղաքական իրականությունը, այն է՝ Ղարաբաղի հանրապետության գոյության փաստը, ԼՂՀ բնակչության անվտանգության ապահովման հետ կապված նրա շահերը:

«ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի յուրաքանչյուր տեղաշարժը նպատակ ունի կանխել կամ չեզոքացնել Ադրբեջանի զինված ուժերի հարձակումը ԼՂՀ տարածքի

ակնհայտ հաջողությունների եւ քաղաքական ու դիվանագիտական մարզերում չորեքթաթ եկող ու ամեն պահի քիթն անհարմար տեղերի զարկող մեր հանրապետությանը կօգնի ճիշտ կողմնորոշվելու եւ ըստ հնարավորին անսխալ կատարելու իր առաջընթացը... Եթե, իհարկե, հանրապետության ղեկավարությունն էլ վերջապես դառնա ունկնդիրը բանականության ձայնին:

**Մարտի 4-ին ու 5-ին** էական տեղաշարժեր չեն եղել ռազմաճակատում, եթե նկատի չունենանք Լաչինի միջանցքի հարավային մասում տեղավորված հայկական կրակակետերի հրետակոծությունը թուրքի կողմից, որին էլ, հավանաբար, հետեւել են ԼՂՀ զորամիավորումների այն պատասխանները, որոնք թուրքի լրտեսության միջոցներով ներկայացվել են որպես Ղուբաթլիի, Ֆիզուլու եւ Աղդամի ռմբակոծություն ու հրետակոծություն (նրանք միշտ էլ այս երեքը միասին են հիշում):

Հաղորդվում էր նաեւ, որ 4-ին թուրքի ռազմական երեք ինքնաթիռներ մտել են Մարտունու շրջանի օդային տարածք, պտույտներ գործել Կուրոպատկինո գյուղի վրա, սակայն մեկ էլ երեւի վախենալով մեր հակաօդային պաշտպանության միջոցներից, թողել-հեռացել:

Այսօր «Ազգը» տպել է ԼՂ-ի խնդրին վերաբերող երկու հոդված, որոնք հետաքրքիր են իրենց հոգեբանական ուղղվածությամբ եւ կարեւորություն են ներկայացնում: Առաջինն իր լրագրող Ա. Արղությանի զրույցն է դանիացի բժիշկ «Միսիա Արեւելք» բարեգործական ընկ. անդամ Կիմ Հարգների հետ, որը նոր է Արցախից Երեւան վերադարձել եւ խոսում է իր ազատության ու անկախության համար մղվող պայքարի մեջ այնքան տառապանքներ քաշող հայության մասին, իսկ երկրորդը «Թյուրքիյե» թերթում նրա աշխատակից Մուստաֆա Նեջաթի Օզֆաթուրանի թունոտ հակահայկական հոդվածի վերաշարադրանքն է:

Դանիացի բժիշկը հիշում է Հայաստանին, հատկապես Ղարաբաղին իր երկրի հասցրած մարդասիրական օգնությունը, որ բավականին պատկառելի մի ծավալ է կազմում, ապա խոստովանում, որ սկզբնապես որոշած էին օգնություն հասցնել նաեւ պատերազմի մեջ գտնվող Ադրբեջանին, սակայն լինելով տեղերում, համոզվել են, որ պատերազմից տուժողները հիմնականում հայերն են եւ, բացի դրանից, Թուրքիան Ադրբեջանին շատ է օգնում, այն էլ ամեն ինչով: Ապա Կիմ Հարգներն ասում է. «Այնուամենայնիվ, իմ կարծիքով, կարեւոր է ոչ միայն մարդասիրական օգնությունը, այլեւ քարոզչական աշխատանքը: Ադրբեջանը հայտարարում է, թե հայերը գրավել են իրենց տարածքի 10 տոկոսը, եւ աշխարհը դա միանշանակ է ընկալում: Մինչդեռ ոչ ոք չգիտե, որ այդ տարածքի 10 տոկոսի վրա արդեն մի քանի հազար տարի է, ինչ հայեր են ապրում, եւ այդ տարածքները վաղուց են վերահսկվում հայերի կողմից: Ադրբեջանը հայտարարում է, թե հայերը փորձում են գրավել Ֆիզուլին եւ հասնել Իրանի սահմանին, մինչդեռ ոչ ոք չգիտե, որ Ֆիզուլին ոչ թե Իրանի սահմանին է կպած, այլ Ղարաբաղի: Մի խոսքով՝ Արեւմուտքում ադրբեջանամետ քարոզչությունը բավականին ուժեղ է, եւ շատ կարեւոր է ճշմարտությունն ասելը»:

Կիմ Հարգները Ղարաբաղում հանդիպել է բազմաթիվ մարդկանց եւ համոզվել, որ նրանց մեջ ադրբեջանցիների նկատմամբ ատելություն չկա, նրանք բոլորն էլ խաղաղություն են ուզում: «Ես կարծում էի, թե Ղարաբաղում ամիսներ շարունակ նկուղներում պատսպարված, ամեն օր հրետակոծության տակ գտնվող մարդկանց հոգին դարձած կլինի չար, ջղային, հուսահատ, բայց տեսա վերին աստիճանի հյուրասեր ու կենսախինդ մի ժողովուրդ: Ռազմաճակատի երկու կողմերում ամենաշատը խաղաղ բնակչությունն է տուժում: Ճիշտ է, ես եղա ռազմաճակատի միայն հայկական կողմում (անկեղծ ասած, վախեցա մյուս կողմն անցնել), բայց համոզված եմ, որ այնտեղ նույնպես վիճակն ահավոր է: Արեւմուտքը խիստ մտահոգված է հակամարտության այսպիսի տեղական օջախներով, որոնք կարող են վերածվել մեծ պատերազմի, ուստի պետք է ամեն ինչ անել հարցի կարգավորման համար: Եւ Հայաստանի, եւ Ղարաբաղի իշխանությունների մոտ ես նման պատրաստակամություն տեսա»:



Մուստաֆա Օզֆաթուրանի հոդվածի ոգին այն է, որ հայերը միշտ էլ, սկսած 1853 թվականից (երեւի նկատի ունի հայկական առաջին զինված ընդհարումները թրքական բռնությունների դեմ, որ տեղի են ունեցել դրանից շուրջ մեկ տասնամյակ հետո Վանում ու Զեյթունում) դավաճանել են իրենց գլխի տեր Թուրքիային, եւ ահա արդյունքը. անվերջ կրճատվել են քանակապես, հիմա էլ անվերջ պետք է կրճատվեն, կազմեն թանգարանային մի թիվ, եթե նույնիսկ այսօր գրավեն էլ Ադրբեջանը:

Նորից ոռնոց հայերի «Մեծ Հայաստան» ստեղծելու երազի մասին, հայհոյանք Արեւմուտքի եւ հատկապես Ֆրանսիայի հասցեին, որոնք, իբր, վերջին երկու ամիսներին 300 տոննա զենք են ուղարկել հայերին, եւ Ռուսաստանին, որն իր բանակում ադրբեջանցիներին օգտագործել է որպես կարտոֆիլ կլպողների եւ հնարավորություն չի տվել, որ կռվել ու կոտորել սովորեն, թե չէ, հիմա նրանք արդեն առանց դժվարության իրականացրած կլինեին թրքության մեծագույն երազանքը՝ հայերի թիվը կրճատած, թանգարանային մի տարբերակ թողած կլինեին:

**Մայիսի 6-ին**, վերջապես, հնարավոր դարձավ թեկուզ մոտավորապես պատկերացում կազմել ՄԱԿ-ի՝ նախորդ օրերին այնպես թմբկահարված եւ, սակայն, բոլորի կողմից ցուցադրական անտեղյակության օբյեկտ եղած N 822 բանաձեւի մասին, առաջին նշանակալից թղթի, որ միջազգային այդ ամենահեղինակավոր մարմինն է ընդունել, ավելի քան հինգ տարի իր մարդկային ու վարչական իրավունքների համար պայքարող փոքրիկ Արցախի՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետության վիճակի կարգավորման մասին:

Ահա այստեղ էլ պահանջվում է, որ բռնագրավիչ ուժերը դուրս բերվեն Քելբաջարից: Բայց ո՛չ միայն Քելբաջարից, այլեւ առհասարակ «Ադրբեջանի գրավված տարածքներից»: Իսկ սրանք որտե՞ղ են, Լեռնային Ղարաբաղո՞ւմ: Բայց չէ՞ որ Ղարաբաղում, կոնկրետ՝ Մարտակերտի շրջանի մի զգալի մասում եւ ամբողջ Շահումյանի շրջանում, նստած են Ադրբեջան ագրեսորի զորքերը: Սրա՞նց է վերաբերում երկրորդ խոսքը: Այս դեպքում ինչո՞ւ փաստաթղթում Ադրբեջանը ոչ մի դեպքում չի երեւում իրեն վայել անունով: Ո՛չ, բոլորովին էլ այդպիսի բովանդակություն չունի փաստաթղթի խոսքը: Այնտեղ ագրեսոր է միայն Հայաստանը, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանից պոկելու համար պատերազմ է մղում, եւ նա է, որ պետք է ենթարկվի ՄԱԿ-ի ու ԵԱՀԽ-ի թուրքամետ որոշումներին: Հակառակ դեպքում, հավանաբար, կենթարկվի պատժամիջոցների, որոնք կկիրառվեն ԱՄՆ-ի, Թուրքիայի եւ սրանց թելադրանքով շարժվող մնացած տերությունների կողմից...

Մնում է հարց տալ, թե այս բանաձեւի համար ի՞նչ պատասխան կտան ՄԱԿ-ում ու ԱՄՆ-ում աշխատող հայ դիվանագետները, ո՞րն է եղել նրանց դերն այս բանաձեւի ստեղծման գործում, մի բանաձեւի, որն այսօրվանից արդեն հզոր զենք պիտի լինի Ադրբեջանի ձեռքում, եւ որի դեմ մենք այսուհետեւ, հայտնի չէ, ի՞նչ զենք պիտի հայթայթենք, ինչպե՞ս պիտի դիմագրավենք...

ՄԱԿ-ի բանաձեւից ոչնչով չէր տարբերվում նաեւ Երեքի միջնորդագիրը, որ, հակառակ շահագրգռված կողմերի ու հայ-արցախյան ղեկավարների խորհրդավոր գաղտնապահության, «Իզվեստիան» երեկվա համարում հրապարակել է՝ քողազերծ անելով այս մեկ քաղաքական միակողմանիությունն ու թուրքամետ ծրագիրը եւս: Ահա այդ միջնորդագիրն իր կետերով.

Պետք է մինչեւ մայիսի 9–14-ը հայկական ուժերը դուրս բերվեն Քելբաջարից, մայիսի 12-ից սկսած կրակի դադարեցում եւ զորքերի փոխադրում, Ռուսաստանի, Թուրքիայի եւ ԱՄՆ-ի հովանավորությամբ մայիսի 17–22-ը Ժընեւում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախնական բանակցությունների անցկացում, մայիսի 24–25-ը՝ Հռոմում ԵԱՀԽ Մինսկի խմբի շրջանակների սահմաններում բանակցությունների վերսկսում եւ մինչեւ հուլիսի 1-ը խնդրի կարգավորման համընդհանուր ծրագրի պատրաստում: Կողմերը կա՛մ պետք է ընդունեն ծրագիրն ամբողջությամբ, կա՛մ հրաժարվեն նրանից:

Դժվար է պատկերացնել առավել կրավորական դեր, քան այն, որ մեր դիվանագիտությունն է կատարում վերջին ժամանակները, մանավանդ այս երկու փաստաթղթերի

ստեղծման ու շրջանառության մեջ դրվելու ժամանակներում: Սա, ավելի ճիշտ, դիվանագիտության կամ քաղաքական կյանքի այս բացակայությունն է, որի պայմաններում երկիրն ապրում է ինքնահոսի կամ կուրորեն տարերքին հանձնվելու վիճակը: Եւ պատահական չէ, որ Ադրբեջանը վերջին օրերին վերստին ձեռք է բերել վերեւից խոսելու իր հին ոճը, բազմիցս հայտարարել, թե կարող է բանակցություններ վարել «Ղարաբաղի հայ համայնքի հետ», բայց ո՛չ մի անգամ վարչական որեւէ միավորի, որպիսին ինքը Ղարաբաղում չի տեսնում:

✧ ✧ ✧

**Մայիսի 6-ի** երեկոյան հաղորդումների համաձայն՝ ռազմաճակատի մի շարք կետերում (Ֆիզուլու եւ Աղդամի շրջաններ, Քիրսի ստորոտ՝ Քալբաջարի հյուսիս) դարձյալ նկատվել են թուրքի ռազմական տեխնիկայի ու զորամասերի տեղաշարժեր եւ կուտակումներ: Բոլոր նշաններից երեւում է, որ լայնամասշտաբ գրոհ է նախապատրաստվում:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալին Հայաստան ու Ադրբեջան է ուղարկել մի ուղերձ, որով նորից արտահայտում է իր անհանգստությունը ԼՂ-ի վիճակի համար, ապա, հավանաբար, պատասխանելով ԼՂՀ կառավարության բազմաթիվ դիմումներին, հայտնում է, որ եթե Ադրբեջանն ու Հայաստանը ՄԱԿ դիմեն՝ ԼՂՀ-ը ճանաչելու առաջարկությամբ, ՄԱԿ-ն անպայման կքննարկի այդ առաջարկությունը եւ ԼՂՀ-ը կընդունի իր շարքերը: Իսկ այդպիսի առաջարկության բացակայությունը միշտ էլ պիտի ստիպի նկատի ունենալ միայն պատմական իրողությունը, այն, որ ԼՂ-ը համարվում է Ադրբեջանի անբաժանելի մասը:

Այո, այսպես, քանի որ այս հինգ տարիների երկար միջոցին Հայաստանի ու ԼՂ-ի ղեկավարները չկարողացան ՄԱԿ-ին ու մնացած հետաքրքրվող մարմիններին բացատրել, որ Լեռնային Ղարաբաղը պատմականորեն, իրավունքի ու դիվանագիտության միջազգային օրենքների համաձայն՝ հայկական մարզ է, 1923 թ. բռնությամբ Ադրբեջանի կազմի մեջ խցկելիս անգամ այն ապօրինի որոշման մեջ նշվել է, որ «Ղարաբաղի հայկական մասն է»: Հայկակա՛ն: Սա նշանակե՞լ է որեւէ բան, մանավանդ՝ գրված թուրքի ձեռքով:

✧ ✧ ✧

Այսօր ՀՀ-ում ԼՂՀ լիազոր ներկայացուցիչ Մանվել Սարգսյանը Ռուսաստանի ու ԱՄՆ-ի դեսպանություններին հանձնեց իր կառավարության նամակն այն մասին, որ եռակողմ միջնորդությունը շնորհակալությամբ է ընդունում, սակայն Քալբաջարից արցախյան զորքի դուրսբերումը կարող է լինել միայն ԵԱՀԽ-ի խաղաղարար դիտորդների ժամանումից հետո:

Երեւի թե այս հանգամանքը նկատի ունեին նաեւ Ժիրայր Լիպարիտյանն ու Դավիթ Շահնազարյանը, երբ լրագրողների հետ ունեցած զրույցին հայտարարում էին, թե երեքի միջնորդությունն ունի կետեր, որոնք չեն կարող անվերապահորեն ընդունվել հայերի կողմից, թվում է դրանք ստեղծվել են ոչ թե հարցը կարգավորելու, այլ ադրբեջանական կողմին բավականություն պատճառելու նպատակով:

✧ ✧ ✧

Այսօր Մոսկվայում Ռուսաստանի հոգեւոր առաջնորդ Ալեքսիյ Ա-ն ընդունել է Կովկասի մուսուլմանության ղեկավար, շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեին, եւ երկուսով, իբր, քննել, պարզել են Ղարաբաղյան բարդույթի լուծման ճանապարհները: Հանդիպումը մոսկովյան հեռուստատեսությամբ ներկայացնում էր հանրահայտ Մախս Մամեդովը, որ այս անգամ էլ վնգստում էր՝ կեղծաջուր թափելով հայերի վրա, որոնք,



իբր թե, ռուսների բարեկամ են խաղում, սակայն իրականում հակառակ դիրքերում են. տեսե՛ք,- ասում է, - Ելցինը ղարաբաղյան հակամարտության լուծման իր առաջարկներն է ներկայացրել, մենք դրանք ընդունել ենք անվերապահորեն, ուզում ենք առաջ գնալ, հարցը կարգավորել, իսկ նրանք ոչ միայն չեն ընդունել, այլեւ նոր խարդավանքի են անցել՝ իրենց զորքերը մտցնելով Քալբաջար եւ այնտեղ կազմակերպելով ադրբեջանական ժողովրդի նոր գենոցիդ...

✧ ✧ ✧

Ցույց տվին հրաշալի բուլղարուհի Ցվետանա Պասկալեւային, որը բուժվում է Երեւանի Միքայելյանի անվան սրտաբանության ինստիտուտում: Նրան այցելում են երախտագետ անհամար հայ մարդիկ՝ ղեկավարներից մինչեւ բանվոր ու դպրոցական... Իր արցախական ֆիլմերից հետո էլ հիմա թղթին է տալիս տեսածներն ու լսածները: Իսկ առաջիկա անելիքների մասին՝ «Պիտի անեմ այն, ինչ մինչեւ այսօր: Ի՞նչ է պատահել, մի փոքր գործողության եմ ենթարկվել եւ մի տասն օրից կհագնեմ ճամփորդի կոշիկներս եւ կուղեւորվեմ այնտեղ, Ղարաբաղ, որտեղ ինձ են սպասում, համոզվա՛ծ եմ՝ սպասում են»:

✧ ✧ ✧

«Օստանկինո» հեռուստակենտրոնի «Կրասնի կվադրատ» հաղորդաշարով վերջերս հաղորդել էին ԼՂ-ին վերաբերող մի խոսակցություն: Մերոնք վերահաղորդեցին: Հայտնի հաղորդավարը հայտնում է, որ ինքը հրավիրած է եղել մոսկովյան երկու հայի (ՀՀ մշտական ներկայացուցիչ Ֆելիքս Մամիկոնյան, քաղաքագետ Անդրանիկ Միհրանյան) եւ երկու թուրքի: Թուրքերը հրաժարվել են մասնակցել, եւ ահա զրույցն անց է կցնում միայն հայերի հետ:

Երեւի դրանից էլ երկու հայերից մեկը՝ Միհրանյանը, հանդես է գալիս թուրքի դերով, որպեսզի պատկերն ամբողջանա: Քալբաջարի նվաճման մասին խոսելիս, Մամիկոնյանն ասում է՝ այնտեղ կռվում էին միայն ղարաբաղցիները եւ առհասարակ Ղարաբաղում ադրբեջանցիների դեմ կռվում են լոկ տեղական ինքնապաշտպանության միավորումները: Եւ Միհրանյանն անմիջապես վրա է տալիս. «Իսկ Ղարաբաղին որտեղի՞ց այնքան զենք ու զինամթերք, վառելիք ու սնունդ...»:

Մամիկոնյանն իհարկե տեղն է բերում՝ «Այնտեղի՛ց, որտեղից որ Ադրբեջանինը»: Բայց մի՞թե իրեն աշխարհի տակուգլխին ծանոթ համարող Միհրանյանը չի լսել ու չի իմանում, որ միայն թուրքից խլած պաշարներով Ղարաբաղը կարող է կռվել եւս հինգ տարի: Կամ՝ այդ ո՞ր օրվանից է, որ Հայաստանը կռվող իր ցեղակիցներին օգնություն հասցնելու իրավունք էլ չունի:

Վերջում Միհրանյանն ասում է նաեւ ինչ-որ մանվածապատ խոսք, որից կարելի է եզրակացնել, թե լավ կլինի Ռուսաստանն այստեղ վճռական խոսք ասի՝ նկատի ունենալով իր պատմական դերն ու այսօրվա քաղաքական շահերը:

**Մայիսի 7-ին** ռազմաճակատից որեւէ կարեւոր լուր չհաղորդեցին, որ նշանակում է՝ հարաբերական անդորր է: Սակայն Արցախի խնդրին վերաբերող մի քանի էական տեղեկություններ եղան: Դրանք են.

Ա) Ադրբեջանական լրատվական մարմինները ՄԱԿ-ի 822-րդ բանաձեւն իրենց խոշոր հաղթանակն են համարում եւ վստահ են, որ այն հարցը լուծելու է իրենց օգտին:

Բ) Մոսկվայում Ադրբեջանի մշտական ներկայացուցչությունում Կովկասի մուսուլմանության առաջնորդ, շեյխ-ուլ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն հանդես է եկել լրագրողների ու դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչների առաջ, հայտարարել, թե ինքն ու իր հավատակիցները (Կովկասի մուսուլմանները) հանգիստ շունչ կառնեն միայն այն ժամանակ, երբ ազատագրված կլինեն իր հայրենիքի բռնագրավված բոլոր

հողերը։

Գ) Լայնորեն թմբկահարվում է Լեռնային Ղարաբաղի բարդույթը լուծելու համար Ռուսաստանի ու Թուրքիայի ռազմական գերատեսչությունների ծրագրած մեծ հանդիպում-բանակցությունը, որը տեղի պիտի ունենա սույն ամսի 10–14-ը, Անկարայում։ Ռուսաստանի պատվիրակությունը գլխավորելու է Պաշտպանության նախարար Գրաչովը։

Հետաքրքիր է, ի՞նչ պիտի տա ռուսի ու թուրքի այս մեկ սիրաբանությունը։

✧ ✧ ✧

«Ազգի» **մայիսի 7-ի** համարում տպագրված հարցազրույցում Եվրախորհրդարանի աշխատակից Վարուժան Կիրկորյանը հաստատել է այն տեղեկությունը, որ ՄԱԿ-ի բանաձեւում ղարաբաղ-ադրբեջանական հակամարտությանը վերաբերող խոսքում «տեղական հայկական ուժեր» արտահայտությունը, որով Հայաստանը, տրամաբանորեն չի ընկալվում իբրեւ մարտնչող կողմ, եւ հակամարտությունը դիտվում է իբրեւ Ադրբեջանի ու Ղարաբաղի (տեղական) ուժերի բախում, բնագրի մեջ է մտցվել Ֆրանսիայի պատվիրակության առաջարկությամբ, իսկ դա էլ արդեն Հայաստանում Ֆրանսիայի դեսպան Ֆրանս դը Արսինգի ծառայության արդյունքն է, մի գործչի, որն ուշի ուշով հետեւում է ղարաբաղյան իրադարձություններին, քանիցս զրույց է ունեցել ԼՂՀ ղեկավարների հետ եւ խորապես գիտակցում է, թե բարդույթն ինչպիսի՛ն է ու ի՛նչ տեսակ խոչ ու խութերով է անցնում։

**Մայիսի 8-ին** Իրանի դեսպանատունը հերքեց իր երկրի տարածքով Թուրքիայի կողմից Ադրբեջան զենք ու զինամթերք տեղափոխելու մասին ավելի վաղ հաղորդված լուրերը՝ նորից վստահեցնելով, որ Իրանի կառավարությունը ձգտում է ամեն հակառակության խաղաղ կարգավորելուն եւ երբեք ոչ մի պայմանով թույլ չի տա, որ իր տարածքը դառնա կռիվը բորբոքելու, նոր արյունահեղություն անելու օժանդակ։

✧ ✧ ✧

Շուշիի ազատագրության տարելիցին ԼՂՀ ԳԽ-ի նախագահությունը ժողովրդին ուղղել է դիմում՝ մեկ տարի առաջ ձեռք բերված հաջողությունը համարելով շատ կարեւոր քայլ իր ազատագրության ու անկախության համար մղվող արցախահայության կյանքում։ Ստեղծվել է Շուշիի ազատագրության մեդալ, որով պարգեւատրվում են գրոհին մասնակցած եւ առհասարակ նրա հաջողությանն աջակցած բոլոր մարդիկ, առաջին հերթին (հետմահու) նրանք, որ զոհվել են։

Մոսկվայում Ռուսաստանի ԱԳՆ լրատվությունը հրապարակել է հայտարարություն, որով նախարարության համերաշխությունն է հայտնվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822-րդ բանաձեւի հետ, միաժամանակ վստահեցվում, թե նա ամեն կերպ կաջակցի, որպեսզի բանաձեւի բոլոր կետերն իրականացվեն։

**Մայիսի 9–11-ը** ԼՂՀ ճակատներում եւ ՀՀ սահմանամերձ շրջաններում անդորր է եղել, ռազմական գործողություններ տեղի չեն ունեցել։ Սակայն քաղաքական կյանքում եղել են մի քանի էական փաստեր, որոնք առնչվում են Արցախի գոյապայքարին ու նրա միջազգային արծարծումներին։

9-ին ամբողջ Հայաստանն ու Արցախը նշում էին Շուշիի ազատագրման առաջին տարելիցը։ Ճիշտ է, անցյալ տարվա մայիսի 8-ին էր, որ ազատամարտիկները մտան Հայոց արեւելից կողմանց այդ նոր մայրաքաղաքը եւ վերջ տվին թուրքի վայրագ տիրապետությանը։ Սակայն տարելիցի տոնախմբությունները կատարվեցին 9-ին, կիրակի օրը, որպեսզի ազատ լինեն ամեն մի հոգսից, մանավանդ աշխատանքից, որով լիքն է ու լարված վերակառուցվող, ոտքի կանգնող Արցախի յուրաքանչյուր օրը։

Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանը եւս յուրովի նշեց նոր տոնը։ Կազմակերպել էր Շուշիի պատմության, ճարտարապետության ու մշակույթի բավական հարուստ ցուցահանդես։ Նրա բացմանն էլ նախորդեց գիտաժողով, որին, թան-



գարանի տնօրեն Հ. Բախչինյանի բացման խոսքից հետո, ես կարդացի զեկուցում Շուշիի կենսագրության վերաբերյալ, Շ. Մկրտչյանը խոսեց ճարտարապետության, Բ. Հովակիմյանը թատրոնի մասին։ Ապա ջերմ խոսքեր ասացին երաժշտագետներ Ռ. Աթայանն ու Ց. Խաչատրյանը։

Դահլիճն ու հարակից միջանցքները լիքն էին արվեստասեր ու արցախասեր մարդկանցով։ Հենց այդ միջանցքներում էլ հնչեցին արցախյան մեղեդիներ, որ հնչում էին մեներգիչների ու բավական մշակված խմբերի կատարումներով։ Ցուցահանդեսը պերճախոս ու ոգեշնչող էր։

10-ին դեռեւս ցերեկը տարածված էր ՀՀ ԳԽ-ի այսօրվա վիճակին վայել մի խայտառակություն. Պ. Հայրիկյանն առաջարկել է, որ Արցախյան գոյապայքարի այս թեժ շրջանում, երբ միջազգային ասպարեզում նրա հաջողությունները տարբեր կերպ են ընկալվում եւ անհրաժեշտ է համազգային միասնական ու համառ դիրքորոշում՝ ամրապնդելու ձեռքբերումները, ձեռքից չտալու եւ ոչ մի առաջքայլ, որպեսզի Գերագույն խորհրդի նստաշրջանը ճանաչի Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը։ Առաջարկել է, եւ վերստին բորբոքվել են ծանոթ կրքերը... Եւ երբ առաջարկը դրվել է քվեարկության, նրա օգտին ձայն են տվել ընդամենը 80 պատգամավորներ։

Կրկին գործել է ղեկավարների ճարպիկ մեքենան, որն ահա մի ամբողջ տարի ու կես կանգնած է Արցախի՝ ամենաօրինական ճանապարհով ստեղծված պետական անկախության դեմ եւ անզիջում վարում է հակաազգային իր քաղաքականությունը։

✧ ✧ ✧

Ռուսաստանի պաշտպանության մինիստր Գրաչովն այսօր Թուրքիա է ժամանել եւ հենց Անկարայի օդանավակայանում էլ հայտարարել, թե իր կառավարությունը պատրաստ է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ տաք կետերում խաղաղություն ստեղծելու համար։ Իսկ, ինչպես հայտնի է, Թուրքիայի ու Ռուսաստանի համար ամենամերձավոր տաք կետը Ղարաբաղն է, որի շուրջն էլ պետք է վարվեն բանակցությունները։

✧ ✧ ✧

Մոսկովյան հեռուստատեսությամբ հաղորդվեց, որ Բաքվում ավարտին է մոտենում Հայաստանում տեղակայված 7-րդ բանակի 6 զինվոր-վարձկանների դատավարությունը։ Նրանք կռվել են Արցախում, թուրքի դեմ եւ, ըստ Բաքվի հաղորդած տվյալների, դատապարտվելու են գնդակահարության։

✧ ✧ ✧

Շաբաթ օրը, **մայիսի 8-ին**, Ստեփանակերտ է ժամանել Ռուսաստանի ԱԳՆ արտակարգ ներկայացուցիչ Կազիմիրովը, որը մինչեւ այդ էլ եղել էր Բաքվում ու Երեւանում եւ, իբր, հարցի մանրամասներն էր ուսումնասիրում՝ Երեքի բանակցություններին զեկուցելու համար։

**Մայիսի 10-ին** տեղի ունեցած մամուլի ասուլիսում ՀՀ նախագահի լրատվության ղեկավար Աբրահամյանը դրական գնահատական տվեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի 822-րդ բանաձեւին՝ գտնելով, որ այնտեղ ղարաբաղյան հակամարտության կարգավորումը դիտվում է իբրեւ մեկ «ամբողջական համակարգ եւ Քալբաջարից զորքերի դուրսբերումը դիտվում է հենց այդ համակարգում»։

Իսկ սա «թույլ է տալիս շարունակելու բանակցություններն ու խորհրդակցությունները ԵԱՀԽ-ի շրջանակներում։ Ուստի եւ կտրականապես մերժեց օտարերկրյա ու տեղական մամուլի պնդումն այն մասին, «թե ՄԱԿ-ի 822-րդ բանաձեւը Հայաստանի դիվանագիտական անհաջողությունն է» («Ազգ», մայիսի 13)։

Արահամյանը հաղորդեց, որ ԼՂՀ ղեկավարությունը եւս դրականորեն է տրամադրված այդ բանաձեւի նկատմամբ (անդ), եւ հույս հայտնեց, թե առաջիկայում ԱՄՆ-ը, Թուրքիան ու Ռուսաստանը նորից նոր կհավաքվեն, կքննարկեն, առավել կճշգրտեն իրենց սկզբունքները, կընդհանրացնեն դրանք եւ կներկայացնեն կատարյալ ու հավասարակշիռ փաստաթղթեր (որանից կարելի՞ է եզրակացնել, թե այդ երեք տերությունները ոչ միայն Երեքի միջնորդական ծրագրի հեղինակներն են, այլեւ ՄԱԿ-ի հիշյալ բանաձեւի):

**11-ին** հաղորդված լուրերի մեջ միակ լուրջն այն էր (Երեւանի ու Մոսկվայի հաղորդումներում լայնորեն արտացոլված), որ Հայաստանի ու ԼՂՀ Գերագույն խորհուրդները միանգամայն դրական վերաբերմունք ունեն ՄԱԿ-ի 822-րդ բանաձեւի նկատմամբ, միայն թե իրենց դիտողություններն են ներկայացրել նրա մի քանի կետերի նկատմամբ, որոնք եւ, ըստ համապատասխան խոսման, պիտի քննարկվեն, գտնվեն փոխզիջումների տարբերակներ իրական-դրական արդյունքների հասնելու համար: Հույս է հայտնվում, որ բանաձեւը վերջնական չէ, եւ նոր բանակցություններից հետո է, որ արվելու են վճռական քայլերի առաջարկությունները:

Այս տեսակետից էլ հետաքրքիր է ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահի արտաքին քաղաքականության հարցերի գծով խորհրդական Արկադի Ղուկասյանի՝ լրագրողներին տված մի շարք պատասխանները 822-րդ բանաձեւի ու Եռակողմ նախաձեռնության վերաբերյալ: Նա գտնում է, որ «Եռակողմ համաձայնությունը մի շարք անհամաձայնություններ ունի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822-րդ բանաձեւի հետ: Ուստի այդ երկրների (ԱՄՆ, Թուրքիա, Ռուսաստան.-Բ. Ու.) առաջարկած միջոցառումների գրաֆիկը կարոտ է լուրջ ճշգրտման»: Մասնավորապես նշվում է հետեւյալը. Երեքի ներկայացրած փաստաթղթում Քալբաջարից արցախական զորքերի դուրսբերումը դիտվում է որպես բանակցություններ սկսելու նախապայման, իսկ ՄԱԿ-ի բանաձեւում այն ընդունված է համապարփակ հրադադարի ապահովման համատեքստի մեջ: Եւ պատահական չէ, որ Ադրբեջանի ղեկավարությունն էլ անմիջապես կառչել է իրեն ձեռնտու պահանջից եւ հայտարարել՝ եթե հայկական զորքերը նախապես դուրս չբերվեն Քալբաջարի շրջանից, Ադրբեջանը չի մասնակցի բանակցություններին (Էլչիբեյի մամուլի ծառայության ղեկավար Արիֆ Ալիեւ):

Ղուկասյանի կարծիքով՝ դա ոչ այլ ինչ է, քան վերջնագիր, որը չի կարող ընդունել իրեն հարգող որեւէ պետություն, այդ թվում նաեւ Լեռնային Ղարաբաղը:

Չմերժելով խաղաղասիրական նախաձեռնություններից որեւէ մեկը, Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը դրա հետ մեկտեղ գտնում է, որ այդ նախաձեռնությունները պետք է հավասար չափով հաշվի առնեն բոլոր կողմերի շահերը.- ասել է Ղուկասյանը:- ԼՂՀ-ի համար այժմ գլխավորն է ստանալ Լեռնային Ղարաբաղի եւ իր ժողովրդի անվտանգության հստակ երաշխիքներ: Ինչ վերաբերում է բանակցություններին, դրանք պետք է սկսվեն առանց որեւէ նախապայմանի, որի օգտին հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, եւ որը լիովին համապատասխանում է ԵԱՀԽ սկզբունքներին («Ազգ», մայիսի 12):

Հետաքրքիր է, որ, մինչդեռ Եռակողմ նախաձեռնության առաջարկություններում ոչինչ չի խոսվում ԼՂՀ շահերի պաշտպանության եւ բանակցություններում՝ իբրեւ հավասարիրավ կողմի՝ նրա մասնակցության մասին, երեք կողմերից մեկի՝ Ռուսաստանի Պաշտպանության նախարարը Թուրքիայի նախարարի հետ զրուցելիս (Անկարայում, մայիսի 10-ին) նախ պնդել է, թե ԼՂՀ կարգավիճակի հարցը պիտի քննվի-պարզվի համատեղ բանակցություններում, որոնց մեջ էլ պիտի մասնակցի Լեռնային Ղարաբաղը՝ Հայաստանի ու Ադրբեջանի կողքին, ապա արտահայտել է իր անհանգստությունն այն առթիվ, որ որոշ երկրներ Ադրբեջանին մատակարարում են ռազմական տեխնիկա ու զինամթերք (անդ):

Հաղորդվում է նաեւ (անդ), թե Գրաչովի բանակցությունների օրերին Թուրքիայի վարչապետ Դեմիրելը հեռախոսազրույց է ունեցել Լ. Տեր-Պետրոսյանի ու Էլչիբեյի հետ,



որ նշանակում է՝ Ռուսաստանի հետ որեւէ հարցում պայմանավորվելուց առաջ Թուրքիան խորհրդակցում է Հայաստանի հետ:

**Մայիսի 11-ին** ՀՀ արտգործնախարարությունը հղել է ուղերձ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, որում մասնավորապես ասվում է. «Հայաստանը աջակցում է Անվտանգության խորհրդի պահանջներին՝ 822-րդ բանաձեւում ներկայացված կարգով եւ պատրաստ է ստանձնել Հայաստանին վերաբերող բոլոր գործողությունների պատասխանատվությունը:

Ցավոք, Ադրբեջանի կառավարությունը մերժեց 822-րդ բանաձեւի ոգին՝ հրաժարվելով վերադառնալ բանակցությունների ընթացքին ԵԱՀԽ-ի շրջանակներում: Բանակցությունների բացակայության պայմաններում անհնարին է ստեղծել մի համաձայնագիր, որը հնարավորություն կտար Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին՝ համաձայնելու Անվտանգության խորհրդի բանական պահանջներին:

Ադրբեջանը, շարունակելով Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի շրջափակումը, ինչպես նաեւ սաստկացնելով հոգեբանական պատերազմը Հայաստանի ու հայ ժողովրդի դեմ, հրաժարվում է ընդունել նաեւ բանաձեւի՝ «թշնամական գործողություններին» վերջ դնելու պահանջը:

Ի վերջո, Հայաստանն ափսոսանքով հայտնում է, որ հակառակ նույն բանաձեւի պահանջների, Թուրքիայի հանրապետությունը շարունակում է մերժել Հայաստանին իր տարածքով մարդասիրական օգնության առաքումը: Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից, Դուք հավանաբար օգտակար կհամարեիք նշանակել հատուկ ներկայացուցիչ այդ տարածքում, որը կկարողանար գլխավոր քարտուղարին ստույգ տեղեկություններ տրամադրել տարբեր կողմերի գործով 822 (1993) բանաձեւի բոլոր դրույթների իրագործման վերաբերյալ: Հայաստանը համոզված է, որ ՄԱԿ-ի հատուկ ներկայացուցչի կանոնավոր զեկույցները արդյունավետ լծակ կհանդիսանան երկարատեւ հրադադարի հաստատման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը բանակցությունների միջոցով լուծելու համար («Ազգ», մայիսի 14):

**Մայիսի 12-ին** Բաքվի ռադիոն հաղորդել է իրենց պաշտպանության նախարարի հայտարարությունը Թուրքիայում Ռուսաստանի պաշտպանության նախարարի ելույթների դեմ. իբր, Գրաչովն այնտեղ անստույգ եւ հերյուրածո պնդումներ է արել՝ ծածկելու համար այն իրականությունը, որ իր երկիրն է ԼՂ-ին օգնում զենքով ու օդուժով:

Ասում են՝ Էլչիբեյը հրապարակել է հայտարարություն, թե, իբր, իր կառավարությունը պատրաստ է Լեռնային Ղարաբաղին շնորհելու մշակութային ինքնավարություն, եթե նախապես հայ զորքը դուրս բերվի ոչ միայն Քալբաջարից ու Լաչինից, այլեւ ամբողջ Ղարաբաղից, որպեսզի այնտեղ մնան տեղական ուժեր՝ կարգ ու կանոն պաշտպանելու համար:

**Մայիսի 13-ին** Արցախում շարունակվում էր նախորդ օրերի համեմատական հանգստությունը:

Օրվա ընթացքում կարեւոր իրադարձություններ չկային, բացի նրանից, որ Երեքից մեկի՝ ԱՄՆ-ի դիվանագիտական նշանավոր գործիչ Ստրոբ Թալբոտը ժամանել է Երեւան, ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրների կապակցությամբ զրույցներ է ունենում ՀՀ ղեկավարների հետ, եւ վերջիններս էլ ձեւացնում են, թե իրենք չէին, որ գիշեր-ցերեկ պոռոտախոսում էին Ղարաբաղի խնդիրը ղարաբաղցիների հետ եւ նրանց միջոցով լուծելու անհրաժեշտության վերաբերյալ:

◇ ◇ ◇

Վաղը Մոսկվայում Եռակողմ միջամտության ներկայացուցիչները՝ Վլադիմիր Կազիմիրովը, Ջոն Մարեսկան ու Վոլֆան Վուրալը պիտի քննարկեն հայկական կողմի դիտողությունները: Թուրքիայի արտգործնախարարությունից հայտնել են, որ դրանից ծրագրի էությունը չի փոխվելու, թերեւս վերանայվեն միայն հրադադարի ու դիտորդների՝ բար-

✧ ✧ ✧

Բարոնուհի Քերոլայն Կոքսն այսօր արդեն Արցախում էր. բերած մեծաքանակ դեղամիջոցներն ու օգնության մյուս պարագաները տեղ հասցնելուց անմիջապես շտապել է «տաք» կետերը. եղել է Քալբաջարում, Մարտակերտի շրջանի ազատագրված գյուղերում, ուր հարազատի իր երջանկությունն է արտահայտել հայրենի օջախներում վերստին բնավորվող, շենացնող գյուղացիների համար: Ստեփանակերտում լրագրողներին հայտարարել է, թե Քալբաջարում ինքը Հայաստանի հանրապետության զինվորներ չի տեսել: Իսկ Ղարաբաղում իր լինելու այս հաճախականությո՞ւնը... «Չէ՞ որ ես այս վիրավոր երկրի մայրաքաղաքի պատվավոր քաղաքացին եմ, երկիր, ուր կոպտորեն ոտնահարվում են հայ ժողովրդի իրավունքները»:

✧ ✧ ✧

Ավարտվեց Ռուսաստանի պաշտպանության նախարար Գրաչովի հնգօրյա այցը Թուրքիա, որի ղեկավարների հետ ունեցած բանակցությունների մեջ կարեւոր տեղ է բռնել ղարաբաղյան հակամարտությունը: Լրատվական մարմինները, նաեւ թուրքինն ու թուրքինը, այս առթիվ քիչ բան են ասում, միայն այնքանը, որ նա, Ռուսաստանի կառավարության դիրքն արտահայտելով, գտնում է, թե ղարաբաղյան բարդույթը պիտի լուծել ԵԱՀԽ-ի շրջանակում, հենց իր՝ Լեռնային Ղարաբաղի մասնակցությամբ: Չի կարելի կասկածել, որ մանրամասներն այնքան էլ ձեռնտու չեն մեր հակառակորդներին, թե չէ, շատ պիտի ծամծմեին:

✧ ✧ ✧

Ասում են՝ ԱՄՆ-ի պրեզիդենտն է նամակ գրել Էլչիբեյին՝ առաջարկելով գործնական քայլեր կատարել խաղաղության հասնելու համար, նաեւ հուսալով, որ Քալբաջարից դուրս կբերվեն հայկական զորքերը:

Ուրեմն, սա էլ նախապես զորքերի դուրսբերման պայման է դնում: Իսկ մեր դիվանագիտությունն անդրօվկիանոսյան այն դոդոշին ինչո՞ւ չի հասկացնում, որ հայկական Մարտակերտում ու Շահումյանում էլ թուրքի զորքեր կան, եւ Քալբաջարից հայոց զորքերի դուրս բերելու առաջարկ անողը սրանց մասին եւս պիտի խոսի, հակառակ դեպքում արդարամիտ մարդիկ պիտի մտածեն, թե առաջարկողը մի աչքանի է, մի կողմը տեսնում է, մյուսը՝ ոչ:

✧ ✧ ✧

Մոսկվայում **մայիսի 14–45-ին** կայացել է Ռուսաստանի պրեզիդենտի անձնական ներկայացուցչի եւ ԱՄՆ-ի ու Թուրքիայի հատուկ ներկայացուցիչների նոր հանդիպումը, որին մասնակցել է ԵԱՀԽ-ի՝ ԼՂ-ին վերաբերող համաժողովի նախագահի ներկայացուցիչը: Քննարկվել են բախվող կողմերի առաջարկներն ու պատասխանները, ապա ընդունվել է քառակողմ համաձայնություն (3+1), որը Երեւանում ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Դավիթ Շահնազարյանին ու ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Մանվել Սարգսյանին պիտի հանձներ Ռուսաստանի դեսպան Վ. Ստուպիշինը (տե՛ս ամսիս 18-ի հիշատակարանը):

**Մայիսի 17**. Սովորական է դառնում «հարաբերական անդորր» արտահայտությունը ԼՂՀ ռազմաճակատների ու Հայաստանի սահմանային շրջանների համար: Փոխարենը տիրական են տեղեկությունները պատանդների ու գերիների փոխանակության մասին, ազատագրված բնակավայրերի բնակեցման, տնտեսության բնագավառները կենդանացնելու վերաբերյալ:



ԼՂՀ ՆԳ նախարարի տեղակալ Ալ. Աղասարյանը, որ նաեւ պատանդների ու գերիների հանձնաժողովի նախագահն է, հայտնում է, որ վերջին ժամանակներն իրենք բավական եռանդուն գործ են արել, իսկ նախորդ ամբողջ տարվա ընթացքում փոխանակել են ավելի քան 200 մարդ:

✧ ✧ ✧

Հեռուստատեսությամբ հաղորդեցին Հադրութի շրջխորհրդի նախագահ Հայրապետյանի հայտարարությունը. Հադրութում պետական ազատ բնակարաններում կապրեն նրանք, ովքեր կժամանեն եւ մշտական բնակություն կհաստատեն այնտեղ: Հունիսի 1-ին նույն սկզբունքով կբնակեցվեն նաեւ անհատական առանձնատները:

Սկսեցին գործել Շուշիի մի շարք հին ու նոր ձեռնարկներ, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի շրջանային բաժանմունքը եւ այլ ձեռնարկներ:

ՀՀ նախագահի լրատվության ղեկավար Ա. Աբրահամյանը մամուլի ասուլիս է հրավիրել, ուր հայտարարել է, թե ԱՊՀ հավաքին գնացած մեր ղեկավարները Ռուսաստանի ղեկավարության հետ ունեցած բանակցությունների ժամանակ լայն քննության են ենթարկել նաեւ Արցախի խնդիրը, եւ դրսեւորվել են լիակատար փոխըմբռնում ու սկզբունքների համապատասխանություն: Այնքանը կարելի էր ենթադրել թերեւս երկու այլ հաղորդումներից, որոնք վերաբերում էին հարակից հարցերի: Դրանցից մեկը Ռուսաստանի պաշտպանության մինիստր Գրաչովի խոսքն էր ուղղված թուրքի քաղաքական ու դիվանագիտական սանձարձակություններին: Հայտնեցին, թե Ադրբեջանի դատախազությունը, որ վճռել էր 7-րդ բանակի 5 զինվորների դատապարտել գնդակահարության, 1-ին՝ 15 տարվա ազատազրկման, մերժում է Ռուսաստանի ղեկավար մարմինների միջնորդությունը մարդասիրական վերաբերմունք ցուցաբերելու համար.. Եւ Գրաչովն այս գնահատում է որպես քաղաքական նոր հիստերիա՝ կազմակերպված Ադրբեջանի կողմից: Հայաստանն էլ ունի անառարկելի ապացույցներ այն իրողության,- ասում է նա,- որ Ադրբեջանին զենք, զինամթերք եւ ռազմական ուրիշ օգնություններ են հասցնում մերձավոր մի քանի երկրներից: Իսկ նա որ դրանց փաստերը միջազգային հասարակայնության սեփականությունը դարձնի՞...

Այնինչ՝ նա ինքը ոչ մի վատ կամ դատապարտելի բան չի տեսնում, երբ Ռուսաստանի 7-րդ բանակի մի քանի զինվորներ կռվել են Ղարաբաղի ճակատում հայերի կողմից՝ թեկուզ եւ իբրեւ վարձկաններ:

Հրապարակվեց ԱՊՀ զինված ուժերի ղեկավար Շապոշնիկովի տեսակետը կոլեկտիվ անվտանգության եւ միասնական պաշտպանական սիստեմի ստեղծման մասին: Գտնում է, որ սիստեմի կատարելությունն ապահովելու համար անհրաժեշտ է ազգային օրենսգրքերից հանել այն կետերը, որոնք կարող են խանգարել կոլեկտիվ անվտանգության կուռ հյուսվածքը:

✧ ✧ ✧

Այսօր ինձ բերին անցած շաբաթվա վերջին թերթերը, եւ ինձ համար որոշ բաց կետեր լրացրեց «Երկրի» «Անկարա-Մոսկվա» խմբագրականը, որն առավել ծավալում է պատկերացումները Լեռնային Ղարաբաղի խնդրի նկատմամբ Ռուսաստանի պաշտոնական դիրքորոշման առթիվ: Ասում է, ապրիլի 12-ին թուրքերի «Միլլիեթ» թերթը հրապարակել է Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ալբերտ Չերնիշեւի հետ ունեցած մի հարցազրույցը, որում այն հարցին, թե Ռուսաստանն ինչպե՞ս կգնահատի հայ-ադրբեջանական հակամարտությունը դադարեցնելու համար Թուրքիայի կատարելիք ռազմական միջամտությունը, պատասխանել էր այսպես. «Շատ զգույշ պետք է լինել ռազմական միջամտության մասին խոսելիս: Ես զարմանում եմ, որ այնքան շատ մարդ է խոսում զենք վերցնելու մասին: Իմ տպավորությամբ՝ Թուրքիան խաղաղասեր երկիր է: Երկար ժամա-

նակ այն պատերազմ չի տեսել: Ուստի չեմ հասկանում, թե ինչո՞ւ այս մարդիկ այսքան ռազմատենչ են: Իսկ ձեր զինվորները գիտե՞ն, թե ի՛նչ է պատերազմը: Գեներալ Գյուրեշն իրավացի է, երբ ասում է՝ չի կարելի թույլ տալ ռուսական ռազմական միջամտություն: Մենք՝ ռուսներս, լավ գիտենք, թե ի՛նչ է նշանակում պատերազմը եւ ոչ մի ռազմական միջամտություն երբեք միակողմանի չի մնա («Երկիր», մայիսի 15):

Պարզ է, եթե Թուրքիան միջամտի, դրան էլ կհետեւի Ռուսաստանի միջամտությունը՝ հակառակ կողմից:

✧ ✧ ✧

Հազիվ երկու շաբաթ անց ԱՊՀ զինված ուժերի գլխավոր հրամանատար Ե. Շապոշնիկովը հայտարարեց, թե ինքը Ղարաբաղի հարցի լուծման երկու ելք է տեսնում. մեկ՝ անմիջապես հրադադար անել եւ բանակցությունների նստել Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը որոշելու համար, երկրորդը՝ Լեռնային Ղարաբաղը դնել Ռուսաստանի ենթակայության տակ, ստեղծել նրա կառավարությունը, որի մեջ կարող են լինել Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչներ:

Երկրորդ տարբերակի դեմ անմիջապես վայնասուն բարձրացրին Ադրբեջանի ու Թուրքիայի պաշտոնական շրջանները՝ այն համարելով ինքնավար Ադրբեջանի ամբողջության դեմ Ռուսաստանի ոտնձգություն, որն էլ, իբր, իր արտահայտությունն է գտնում հայերին մատուցվող ռազմական օգնությամբ:

Անկասկած, թուրք-թրքական կողմը սպասելիքներ ունեցել է Գրաչովի այցելությունից. երեւի հույս է եղել ղարաբաղյան հարցում նրան զիջումներ պարտադրելու: Սակայն դա տեղի չունեցավ, եւ, հակառակը, Գրաչովը, հերքելով հայերին Ռուսաստանի կողմից հասցվող ռազմական օգնության պնդումները, քանիցս շեշտեց, որ Թուրքիան է օգնում Ադրբեջանին, իսկ դա կարող է առավել բարդացնել դրությունը:

Եւ հիմա էլ՝ այսօրվա հայտարարությունը, ինչպես նաեւ դատապարտված ռուս զինվորների շուրջ ծավալված խոսքուզրույցը, որոնք չեն կարող կասկածի տեղ թողնել Թուրքիայի ծավալապաշտությանը ներքաշված Ադրբեջանի դեմ Ռուսաստանի կողմից վարվող վճռական քաղաքականության մեջ:

✧ ✧ ✧

**Մայիսի 18-ին** Անգլիայի Լորդերի պալատի փոխնախագահ բարոնուհի Քերոլայն Կոքսը վերադարձել է Արցախից եւ ՀՀ հեռուստատեսության համար տված հայտարարության մեջ ասում է՝ ճիշտ է, որ իր 14-րդ այցն է Ղարաբաղ, սակայն, առաջին այցելությունից ի վեր, այն ե՞րբ է եղել, որ ինքը բաժանված լինի մաքառող այդ երկրից: Այս անգամ էլ վերստին շրջելով այնտեղ՝ Քալբաջարում, Գանձասարում, Մարտակերտի ազատագրված գյուղերում, Ստեփանակերտում եւ մնացած մեծ ու փոքր բնակավայրերում, տեսել է, թե ինչպես վերակառուցվում է Լեռնաստանը, ինչպես իր վերքերն է բուժում ու գարնան հետ ժպտում աշխարհին... Եւ այսքանից հետո նա միայն մեկ տենչ ունի. որպեսզի այդ լեռնաստանում ծվարած փոքրիկ, հեղհեղուկ խաղաղությունը հիմնավորվի, դառնա տիրական, հնարավորություն տա, որ արցախահայությունը խաղաղ պայմաններում վայելի արյամբ ու տառապանքով ձեռք բերած իր անկախությունը:

✧ ✧ ✧

Միքայելյանի անվան հիվանդանոցում Երեւանի Պռոշյանի անվան դպրոցի սաները տեսակցել են լրագրողուհի Ցվետանա Պասկալեւայի հետ, եւ նա հուզված ու խանդավառ խոստովանում էր, որ դա իր կյանքի ամենաերջանիկ, միաժամանակ ամենապատասխանատու օրն է, որովհետեւ այդ մանչուկները համոզվեցին, որ ինքը կատարել է



ժողովրդանվեր սուրբ գործ՝ մարտնչող Արցախի մասին ստեղծելով երեք ֆիլմ, եւ միաժամանակ՝ որ ինքը սրբազան պարտականություն ունի նույն գործը շարունակելու, քանի որ սիրտն այնտեղ է, իր ազատ ու անկախ ապագայի համար կռվող արցախահայության հետ:

✧ ✧ ✧

Հայաստանում Ռուսաստանի դեսպան Վլ. Ստուպիշինը ՀՀ դիվանագիտական աշխատող Դ. Շահնազարյանին եւ ԼՂՀ Երեւանյան ներկայացուցչին է հանձնել Երեքի (այժմ արդեն Չորսի) միջամտության ծրագրի ու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822-րդ բանաձեւի մշակված, վերջնական բնագիրն է...

Նախաբանում նշվում է, որ փաստաթուղթը հիմնված է ՌԴ պրեզիդենտ Բ. Ելցինի միջնորդական նախաձեռնության եւ Անկարայում իրենց առաջին հանդիպման ժամանակ Ադրբեջանի Հանրապետության պրեզիդենտ Ա. Էլչիբեյի ու Հայաստանի Հանրապետության պրեզիդենտ Լ. Տեր-Պետրոսյանի բարի կամքի վրա («Երկիր», մայիսի 19):

Նշվում էր նաեւ, որ փաստաթղթի ընդունումն ու ստորագրումը հակամարտ կողմերի (Ադրբեջան, Հայաստան, ԼՂ) ներկայացուցիչները պետք է կատարեն մինչեւ ս. ամսի 26-ը եւ այդ օրվա կեսին վերադարձնեն:

Ահա կոնկրետ առաջարկների մասը, որ կոչվում է «Անհետա4գելի միջոցառումների գրաֆիկ»

«Մայիսի 26.

Կողմերը՝ յուրաքանչյուրն առանձին, ստորագրում են սույն գրաֆիկը եւ տեղական ժամանակով մինչեւ կեսօր վերադարձնում են այն նրանց, ովքեր ներկայացրել են տվյալ առաջարկությունը:

Մայիսի 27.

Հայտարարություն «մայիսի 28-ից սկսած «Քալբաջարից լիովին հեռանալու մտադրության» մասին:

Մայիսի 28.

Հայտարարություն այն մասին, որ «զսպվածություն կցուցաբերվի անվտանգությունն ապահովող անձնակազմի՝ Քալբաջարի շրջան վերադառնալիս»:

Մայիսի 29.

Տեղական ժամանակով ժամը 00.01-ին սկսվում է Քալբաջարից հեռացումը:

Տեղական ժամանակով ժամը 00.01-ից իրականացվում է նաեւ հակամարտության բոլոր գոտիներում մարտական գործողությունների մեղմացում (հրաժարում հարձակողական գործողություններից, ծանր զինատեսակների, ռազմական օդուժը ներառյալ, գործածությունից):

Հունիսի 1.

Տեղական ժամանակով 00.01-ից 60 օրով դադարեցնում են մարտական գործողությունները հակամարտության բոլոր գոտիներում:

Հունիսի 3.

Մինչեւ տեղական ժամանակով 23.59-ը ավարտվում է Քալբաջարից հեռացումը, ինչը հաստատում են հեղինակավոր միջազգային ներկայացուցիչներ:

Հունիսի 6.

Ժնեւում վերսկսվում են ոչ պաշտոնական խորհրդակցությունները (5+1») կրակի վերջնական դադարեցման օրացույցի աշխատանքները ավարտելու, դիտորդների տեղակայման, կապի ու տրանսպորտային հաղորդակցության նորմալ գործունեության արգելքների վերացման, այդ միջոցառումներն իրականացնելու նպատակով Մինսկի խորհրդակցությունը՝ ոչ ուշ, քան 1993 թ. հուլիսի 21-ը բացելու համար:

Հունիսի 10.

Ոչ պաշտոնական խորհրդակցությունների ավարտը:

միայն հայոց ինքնապաշտպանության քթին է տալիս, ահա այդպիսի մի փաստաթուղթ հայի գրածի տեղ պիտի դնենք եւ անվերապահորեն ընդունենք՝ անպատասխանատու եւ անբարոյական չկոչվելու համար։

Պրն Լիպարիտյանի ու նրանից վերը նստած հայ ղեկավարների խղճին թողնենք այս դիվանագիտական տրամաբանությունը եւ ուշադրություն դարձնենք հարցի մյուս կողմի վրա, որ արդեն սովորական տրամաբանությունն է՝ հենված դարձյալ սովորական բարոյական նորմերի վրա։ Հայաստանի հանրապետության պատասխանից ու նախագահի հայտարարությունից պիտի ենթադրել, թե այստեղ ոչինչ չեն իմացել ԼՂՀ ղեկավարության դիրքորոշման վերաբերյալ, առավել եւս՝ ոչինչ չեն պայմանավորվել։ Բայց չէ՞ որ Հայաստանի հանրապետությունն էր, որ մեկ տարի առաջ որոշում ընդունեց եւ մինչեւ այսօր էլ աշխարհով մեկ թմբկահարում է, թե իր համար ընդունելի եւ օրինական կլինեն միջազգային ատյանների լոկ այն փաստաթղթերը, որոնք արժանացած կլինեն ԼՂ-ի իշխանության եւ ժողովրդի հավանությանը։

**Մայիսի 26-ին** «Ազգը» տպագրեց հարցազրույց ՀՀ նախկին արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանի հետ, որը հետաքրքիր տեղեկություններ հաղորդելով իր ընտանեկան դաստիարակության, սեփական հոգեբանության եւ հայրենիքին, ազգին բոլորանվեր ծառայելու պատրաստակամության մասին, տեղեկացնում է նաեւ հետեւյալ միջադեպի մասին։ Ասում է. «ԵԱՀԽ հայտնի ժողովն էր, անցյալ հունվարի 30-ին։ Հայաստանը նոր-նոր էր ճանաչված աշխարհի պետությունների կողմից, ու շատ-շատերին, հատկապես Թուրքիային, թվում էր, թե հաշվողական, պարտվողական ցանկացած քայլի պիտի գնանք, միայն թե ընդունվենք միջազգային հանրության մեջ։ Թուրքիան բացահայտ խոչընդոտներ հարուցեց՝ որպես մուտքի նախապայման դնելով Հայաստանի գրավոր հայտարարություն- հրաժարումը բոլոր տեսակի պահանջներից, այդ թվում Եղեռնի եւ Ղարաբաղի խնդիրներից, Ղարսի պայմանագրի վավերացումը եւ այլն։ Դժվար է ասել, թե ի՛նչ կլիներ, եթե մեկ այլ նախարարություն լիներ բանակցությունների սեղանի շուրջ, բայց մեր արածն արդեն պատմություն է, ենթադրություններով չտարվենք։ Մեր համաձայնությունը չէր, այլ հակահարված։ Դիվանագիտորեն պատճառաբանված դիրքորոշում, որից հետո Թուրքիան նահանջեց, եւ Հայաստանը ԵԱՀԽ մտավ, առանց նախապայմանի»։

Հովհաննիսյանը խոսք է ասում նաեւ դիվանագիտության բարոյա-քաղաքական ոլորտի վերաբերյալ, անկասկած նկատի առնելով իրենից հետո արտգործնախարարության եւ առհասարակ դիվանագիտության հետ առնչվող հայ այրերի վարքուբարքի ինչ-ինչ քայլեր, որոնք հաճախ են ջրի երես ելնում՝ ստեղծելով այն տպավորությունը, թե մարդիկ, մեղմ ասած, այն չեն անում, ինչ կարող են եւ պարտավոր են։ Այն թյուր կարծիքը կա,- ասում է Հովհաննիսյանը, - թե դիվանագիտությունն անպայման պիտի խարսխվի խարդավանքների, անսկզբունքայնության, անբարոյականության վրա։ Մանավանդ ու առավելապես Հայաստանի պես մի երկրի համար, որը շատ ավելի կարող է շահել, միջազգային հանրությանը ներկայանալով որպես շիտակ, անկաշառ ու աներեր միավոր։ Ճկունություն դրսեւորելով աշխարհաքաղաքական նկատառումներով՝ Հայաստանի դիվանագիտությունը հաջողել կարող է միայն մաքուր, անկեղծ դիմանկարով, ազգային ավանդական շահերի ու ճշմարտությունների համակողմանի ներկայացմամբ եւ հետեւողականությամբ։ Վերջին շրջանի քաղաքականությունն ահա փաստեց, որ մտնելով այլեւայլ ինտրիգների, ուրիշ երկրների, խոշոր տերությունների մեծ ծրագրերի, մութ խաղերի մեջ ոչ մի հանգրվանի չհասանք...» («Ազգ», մայիսի 26)։

Այս տեսակ «մաքուր, անկեղծ...» դիվանագիտություն է պահանջում ԼՂՀ շուրջ գործադրվող քաղաքականությունը, որ հաճախ է դառնում աննպատակ խաղ, անվարպետ ձեռնածություն։

**Մայիսի 27.** Ստորագրված եւ շրջանառության մեջ դրված գրաֆիկի համաձայն՝ այդ օրվա 00 ժամից պետք է սկսված լիներ հրադադարը, սակայն թուրքերը շարունակում են ԼՂՀ բնակավայրերի հրետակոծությունները։ Դա բացատրվում էր նրանով, թե, իբր, Ադր-



բեջանի զորքը չի ենթարկվում Էլչիբեյին։

Հաջորդ օրերին շարունակվում էին ադրբեջանական ուժերի նոր կուտակումները ԼՂՀ սահմաններում, նրանց մարտական գործողությունները ԼՂՀ ռազմական կետերի դեմ։ Հաղորդեցին, որ մայիսի 26-27-28-ին Դաշքեսան-Քարհատից ռմբակոծել են հայկական դիրքերը Մռավ սարի փեշերին (Քալբաջարում), ինչպես նաեւ գրոհներ են ձեռնարկել Մարտակերտ քաղաքից հյուսիս գտնվող պաշտպանական դիրքերի վրա։

Սակայն անգործ չէին նաեւ ԼՂՀ ուժերը, որոնք հենց այդ օրերին ստանում էին նոր ռազմական տեխնիկա եւ կենդանի թարմ ուժ։ Այդ մասին լավ գիտեին Ադրբեջանի թուրքերը, որոնք հայտարարեցին, թե միայն մի գիշերում ստացվել է զրահատեխնիկայի 20 միավոր (10 տանկ, հետեւակային մարտական 5 մեքենա եւ 5 զրահամեքենա), որոնք անմիջապես էլ տեղափոխվել են Մարտակերտի ու Աղդամի տեղամասեր, ամրացել Աղդամի շուրջ գրաված բոլոր գյուղերում, տեր դարձել Աղդամ-Մարտակերտ մայրուղուն («Ազգ», մայիսի 30)։

**Մայիսի 30-ին** ՀՀ-ը հրապարակեց հայտարարություն, որով պահանջվում էր պարտաճանաչություն ցուցաբերել՝ կատարելու միջնորդության բոլոր պահանջները։ Սակայն, ինչպես հայտնի է, այնտեղ միայն մեկ պահանջ կար. որպեսզի ԼՂՀ-ն իր զորքը դուրս բերի Քալբաջարից։ Ուրեմն, դա՞ էր պահանջում։

Հեռուստատեսության աշխատակիցը Ժ. Լիպարիտյանին հարց տվեց.

- Եթե Ղարաբաղը չկատարի այդ պահանջը, ի՞նչ կլինի։

Նա թե.

- Շատ ծանր բաներ. նախ՝ աշխարհին չենք կարող համոզել, որ մենք խաղաղության կողմ ենք։ Ապա՝ կկորցնենք այն վճռական քայլով կայուն հրադադարի հասնելու կարելիությանը, սակայն... ուրիշ ելք չունենք։

Այսինքն, համոզված չեն՝ հայկական զորքը Քալբաջարից դուրս բերելուց հետո նա այնտեղից ինչ քայլերի կդիմի... Սակայն պահանջում ենք դուրս բերել, քանի որ 3 հզորներին խոսք ենք տվել։

Այս զրույցին մասնակցող Դավիթ Շահնազարյանն ասաց.

- Երեկն էլ այսօր արձագանքեցին մեր վերաբերմունքին. Չեթինը դժգոհ է Հայաստանից, որովհետեւ սա ԼՂ-ին չի ստիպում ենթարկվել, ապա եւ ԼՂ-ը հակամարտող, ուրեմն եւ պայմանավորվող կողմ չի ընդունվի։

Զրույցի ընթացքում, սակայն, պարզվեց (Շահնազարյանն ասաց), որ Թուրքիայի պատվիրակությունը չի ընդունում եւ երբեք չի ընդունի ԼՂ-ի այդօրինակ դերը. ԱՄՆ-ինը համարյա ընդունում է, իսկ Ռուսաստանինը ոչ միայն ընդունում է, այլեւ պատրաստ է պնդել դրա վրա։

Եվ զարմանալի՞ է, որ ԼՂՀ կառավարությունն էլ դեմ է ամեն մի բանակցության կամ ընդունած պայմանի, որի մեջ դեր կունենա Թուրքիան՝ հայ ժողովրդի դեմ իր մեղքն ունեցող եւ այսօր Ադրբեջանին ամեն ինչով օգնող տերությունը։

**Մայիսի 31-ին** ԼՂՀ պաշտպանության նախարարության արտաքին հարաբերությունների ղեկավար Ղուկասյանն արտահայտել է իր (երեւի նաեւ ԼՂՀ իշխանությունների) անհանգստությունը, որ ՀՀ-ն իր անվերապահ համաձայնությունն է տվել Եռակողմ առաջարկության առթիվ, երբ կա նույն Հայաստանի ԳԽ-ի որոշումը նման դեպքերում համերաշխ լինելու ԼՂՀ իշխանության եւ արցախահայության կարծիքների հետ։

Ճեպազրույցն անցկացնող Ա. Աբրահամյանն ասաց.

- Հայաստանը, չնայած ներքին դժգոհությանը, համաձայնեց Եռյակի հետ՝ փորձելով ստեղծել հավասարակշռություն, նաեւ հարգել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված կարգերը։

Բայց այնպես էլ չպարզվեց, թե դրանք ինչ կարգեր են, որոնց համար դարձյալ պիտի զոհաբերել արցախահայության շահերը։

**Հունիսի 1.** Վերջին օրերին լրատվական տեղեկություններում իշխող «հարաբերական հանգիստն» ինձ լրջորեն անհանգստացնում է, մանավանդ երբ դրա կողքին էլ պարտա-

դիր հնչում է Ֆիզուլու շրջանից Հադրութի ու Մարտունու շրջանների պաշտպանական դիրքերի վրա տարտամ տեղացող կրակին վերաբերող լուրը: Սա չի՞ նշանակում, թե այս կողմերում մեր պաշտպանության ուժերի ուշադրությունը բեւեռած պահելով՝ թուրքը մի ուրիշ տեղ մեծ զոհ է նախապատրաստում:

Ասում են՝ Լոնդոնում գտնվող մեր կառավարական պատվիրակությունը (վարչապետ Հրանտ Բագրատյանի գլխավորությամբ) հանդիպում է ունեցել Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Մարգրետ Թետչերի հետ, եւ սա, ի միջի այլոց, խոստացել է օգնել Լեռնային Ղարաբաղի բարդույթի կարգավորմանը, որպեսզի այնտեղ խաղաղություն հաստատվի:

Աչքներս լո՜ւյս: Բաքվում մեզ է քարկոծում, մեր կործանվող երկրին իր անձնազոհ օգնությունը բերող բրիտանուհի Քերոլայն Կոքսին բամբասում, իսկ հիմա պատրաստակամություն է հայտնում օգնել, որպեսզի Ղարաբաղում խաղաղություն հաստատվի: Մենք ծանոթ ենք այն խաղաղությանը, որ Ադրբեջանի նավթով եւ ուրիշ միջոցներով կաշառված անգլիական պաշտոնյաներն են բերում: 1918-20 թթ. Թետչերի տղամարդ տեսակի ներկայացուցիչները՝ Թոմսոնը, Շատելվորտը եւ մյուս ծախու հրեշներն էին, որ խափանեցին Արցախի միացումն իր մայր Հայաստանին:

Բայց Հայաստանի պատվիրակությունն ի՞նչ կարիք ուներ այդ Թետչերի հետ հանդիպելու: Մի՞թե հաշվետվության մեջ մեկ հանդիպում **եւս** գրանցելն է կարեւոր:

✧ ✧ ✧

Այսօր մոսկովյան հեռուստատեսության «Թեմա» շարքը հետաքրքիր հաղորդում ուներ. հարցերին պատասխանում էին դրամատուրգ Վիկտոր Ռոզովն ու հրապարակախոս Ստանիսլավ Գովորուխինը: Ամեն ինչ այնպես էր, կարծես խոսեցնում էին իրենց քանդված ու վերջնականապես խորտակվող երկրի համար կրակված երկու հայ մարդու, եւ սրանք էլ իրենց Հայաստանին վիճակված ողբերգությունն են ներկայացնում՝ անելանելիորեն դժվարանալով ելքի որեւէ ճանապարհ նշել, ցույց տալ, գոնե հուսալ...

Խոսում են մեծ, հզոր, երբեմնի հարուստ Ռուսաստանի այժմյան մուրացիկի վիճակից, ստացած վերքերից, ահռելի պարտքերից..., եւ Ռոզովն ասում է. ես չգիտեմ առավել ծանր ողբերգություն, քան երբ մեկի որդին ու թոռը պիտի պարտավոր լինեն մարել նրա պարտքերը:

Հարցնում են՝ ինչպե՞ս եք նայում ռուս զանգվածային արտագաղթին, դուք հայրենիքը կլքեի՞ք: Համարյա երկուսով, պարզապես իրար լրացնելով հայտնում են, որ առաջ դրան ուրիշ տեսակ էին վերաբերվում, հիմա՜... Ի՞նչ անեն ո՛չ իրենց մեղքով դժբախտացած եւ փրկության ուրիշ ճանապարհ չունեցող մարդիկ: Իսկ մե՞նք. "Остаться не мыслимо, уехать не возможно".

✧ ✧ ✧

Երեկ Թիֆլիսում, Վրաստանի «Արդարություն» կուսակցության նախաձեռնությամբ հրավիրված է եղել իրենց, Ադրբեջանի ու Հայաստանի մի շարք կուսակցությունների ներկայացուցիչների համաժողով, որը Թիֆլիս հասած հայերին անմիջապես առաջարկել է ստորագրել վրացիների ու ադրբեջանցիների կողմից նախապես պատրաստած նույն փաստաթուղթը, որը «Կովկասյան տուն» համերաշխության կենսավայր ստեղծելու ծրագիր է տարփողում: Հայերը, ծանոթանալով թղթին, տեսնելով նրա խորքը, հրաժարվեցին ստորագրել: Հետագայում դա այսպես պիտի բացատրեին չստորագրողները. «Կովկասյան տան» առաջարկվող հիմնավորումը ընդգծված հակառուսական բովանդակություն ուներ: Փորձ էր արվում այսրկովկասյան բոլոր պրոբլեմները պատճառաբանել սոսկ Ռուսաստանի կայսերապաշտ ուժերի միջամտությամբ: Դրան ՀՀԴ պատվիրակության կողմից անհապաղ տրվեց համապատասխան հակահարված եւ գնահա-



տական այն իմաստով, որ այդ կնճիռներն ու կոնֆլիկտները ո՛չ միայն եւ ո՛չ այնքան դրսից են հրահրված, որքան ունեն պատմական ու իրավական խոր հիմքեր, որոնք պետք է փնտրել բուն այս տարածքում, եթե ցանկանում ենք լուծել եղած եւ առկա հակասությունները: Հատկապես շեշտեցինք այն հանգամանքը, որ եթե խոսում ենք օտար միջամտության մասին, չի կարելի սահմանափակվել Ռուսաստանով՝ բացառելով Թուրքիան, որը ամենաեռանդուն կերպով մասնակցում է հակամարտություններին՝ որոշակի կողմերի օժանդակելով ու աջակցելով: Նշեցինք, որ սա մեր ժողովրդին խիստ անհանգստացնող փաստ է, եւ եթե մենք վրացիների ու ադրբեջանցիների հետ համատեղ ստորագրենք մի փաստաթուղթ, որով պահանջենք Ռուսաստանի անհապաղ հեռացում, Այսրկովկասում նրա ռազմական ու քաղաքական ներկայության բացառում, ապա, եթե նույնիսկ կարողանանք դրան հասնել, կառաջանա մի դատարկություն, որը հետո անպայման կլցվի թուրքական ներկայությամբ, իսկ ցեղասպանություն տեսած ու իր հարեւանին լավ ճանաչող հայ ժողովուրդը չի կարող եւ չի ցանկանա նման դիրքորոշում որդեգրել («Երկիր», հունիսի 5):

Վերջում ստորագրվել է մի հեղհեղուկ փաստաթուղթ, որով կոչ է արվում Կովկասում խաղաղություն ստեղծելու համար կյանքի կոչել քաղաքական ուժերը եւ առաջիկայում Թիֆլիսը դարձնել նման հանդիպումների վայր:

Վրացի մեր եղբայրները սեփական ցավերը վերացնելու համար երեւի պատրաստ են Հայաստանի գլխին կապել ամեն տեսակ խայտառակություն:

✧ ✧ ✧

Այս օրերին ԼՂՀ-ում շատ է խոսվում Երեքի միջնորդության մասին: Արկադի Ղուկասյանը հրապարակել է հայտարարություն, որով կշտամբում է այն ոտով-ձեռով ընդունող դիվանագետներին: Նա ասել է՝ ԼՂՀ կառավարությունն ըմբռնումով է վերաբերվում Հայաստանի խնդիրներին ու դժվարություններին, սակայն եւ գտնում է, որ «յուրաքանչյուր որոշում ընդունելու պահին հիմնական գործոնը պիտի լինի մեր ժողովրդի անվտանգության երաշխիքների ապահովումը»: Նշել է, որ միջնորդություն կոչվածը, Թուրքիայի պահանջով, միանգամայն հեռացել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N 822 բանաձեւից եւ դարձել ԼՂՀ-ն անկյուն քշելու միջոց («Ազգ», հունիսի 1): ԱՄՆ-ի պետքարտուղարության ղեկավար Բաուչերը հայտարարել է, թե ինքը հասկանում է Ղարաբաղի մտահոգությունն իր ազգաբնակչության անվտանգության համար երաշխիքներ ապահովելու խնդրում, եւ հասկանում է նաեւ Թուրքիայի դիրքը, որով փորձեր են արվում «խառնել» Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի հաշիվները» (նույն տեղում):

Թուրքիայի արտգործնախարար Չեթինը ԼՂՀ դիրքը (միջնորդությունը կատարելուց հրաժարվելը) բացատրում է որպես Հայաստանի խորամանկ խաղի արդյունք: Լեռնային Ղարաբաղը, - հայտարարել է Հ. Չեթինը, - չի կարող լինել բանակցող կողմ, քանի որ Ղարաբաղն ադրբեջանական տարածք է: Եվ այս ամենը սոսկ խաղ է: Հայերի պատասխանը երաշխիքներ չի պարունակում: Մենք չենք ուզում, որ Երեւանի կառավարությունը Ղարաբաղում կատարի այն դերը, ինչ Բելգրադն է խաղում Բոսնիայում եւ Հերցեգովինայում» («Երկիր», հունիսի 1):

Այս գնահատականն ու տոնը կատարյալ թուրքական են եւ հուշում են, թե ինչպես իրավացի են արցախցիները, երբ կտրականապես դեմ են Թուրքիայի մասնակցությանը իրենց վերաբերող որեւէ հարցի քննությանը (ավելորդ է ասել՝ վճիռ ընդունելուն):

**Հունիսի 4-ին**, ինչպես ԼՂՀ ճակատներում, այնպես էլ Հայաստանի սահմանային շրջաններում, հրադադար է եղել, սակայն թուրքերը մի շարք վայրերում (Մարտակերտի, Մարտունու եւ Հադրութի շրջաններում) գնդակոծել են մեր ինքնապաշտպանության դիրքերը, իսկ ՀՀ Տավուշի շրջանում հրթիռակոծել են մի շարք գյուղեր՝ արդյունքում Մովսես գյուղն ունի 2 զոհ, Այգեպարը՝ 1, Բերդը՝ 5 վիրավոր:

ԼՂՀ-ում չեն պատասխանում գնդակոծություններին, քանի որ որոշել են հաստատ

մնալ հրապարակի որոշմանը: Ամենուրեք նկատում ու հաստատում են թուրքի զորագնդերի ու զինտեխնիկայի նոր կուտակումներ, իսկ թե իրենք ի՞նչ են անում, այդ առթիվ լռում են:

✧ ✧ ✧

Հունաստանի կառավարական պատվիրակության ղեկավար, արտգործնախարարի տեղակալ Վերժինիա Ցուդերուն այսօր լրագրողների հետ ունեցած ասուլիսում խոսեց այն մասին, որ Հայաստանն ու Հունաստանը պատմությամբ, ճակատագրով, մշակույթով, մանավանդ քաղաքական շահերով կազմում են մի այնպիսի զույգ, որ պետք է սերտ բարեկամություն, համերաշխություն ու համագործակցություն որդեգրեն: Խոստանում է (իհարկե, իր նախարարության անունից), որ Հունաստանը միջազգային ատյաններում միշտ էլ կպաշտպանի Հայաստանի արդար շահերը:

✧ ✧ ✧

Մոսկվայի հեռուստատեսությունը ցուցադրեց բարձր մտավորականության մի ասուլիս, որի մասնակից ռեժիսոր Գուբենկոն (կարծեմ նախկին մշակույթի մինիստրը) ասաց. «Արաբական ամիրայություններում հողի տերն աբորիգենն է (տեղաբնիկը), որն էլ 100-տոկոսյա սեփականատերն է դառնում երկրի այդ մեծագույն հարստության: Այդպես պիտի լինի նաեւ մեր երկրում. հողին պիտի տեր լինի աբորիգենը, եւ մյուսները պետք է դիտվեն որպես նվաճողներ...»:

Ես լսել էի այս խոսքը եւ շշմած էի, իսկ ինչո՞ւ ռուս ժողովուրդն այսօր այնպես փոթորկված է նորանկախ հանրապետություններում իր դեմ բորբոքված կրքերից. չէ՞ որ նրանք էլ ռուս մի քանի տասնյակ միլիոն ներկայացուցիչներին են ո՛չ աբորիգեն ու նվաճող համարում: Թե՞ ռեժիսոր Գուբենկոն այս վայրենության դե՛մ է վայրենի դիմադրություն հակադրում: Եվ ո՛չ երկրորդական մի հարց էլ. այդ երբվանի՞ց Արաբական ամիրայությունները դարձան քաղաքակրթություն սերմանող եւ ազգերի բարի հարաբերությունների օրինակ:

**Հունիսի 5-ի** առավոտյան «Ազատություն» ռադիոն հաղորդեց, որ Ադրբեջանից գալիս են սահմռկեցուցիչ լուրեր. այնտեղ պրեզիդենտ Էլչիբեյի հռչակած արտակարգ դրությունը վեր է ածվել խառնակչության ու քաոսի (թղթակից Իլյա Դադաշիձե): Նախկին արտգործնախարարը, որ հանրահավաք էր հայտարարել ամսիս 5-ին իրականացնելու համար, որպեսզի ժողովրդի լեզվից պահանջի պատասխանատվության կանչել հանրապետությունում իրենց տիրապետությունը հաստատած կաշառակերներին, հովանավորիչներին ու մնացած տեսակ-տեսակ շառլատաններին, հրաժարվել է իր ծրագրից: Բաքվի փողոցներում իշխում են ռազմական տեխնիկայի մեքենաները, զրահակիր զինվորները՝ հրաման ստացած լինելով դաժանորեն պատժել «հասարակական կարգը» խախտողներին: Չէ՞ որ Էլչիբեյը հանրապետության արտակարգ դրությունը երկարացրել է եւս երկու ամսով: Իսկ այս պահին Գանձակից գալիս են սահմռկեցուցիչ լուրեր. այնտեղ հակադիր ուժերը շարունակում են զինված բախումներ, կան բազմաթիվ զոհեր, վիրավորներ: Մի խոսքով՝ թուրքերը կոտորում են իրար:

Կոտորում են: Միշտ այդպես է եղել թուրքերի վարքը՝ մեզ են կոտորել... Շուշիում, Բաքվում, Գանձակի կողմերում, վերջին շրջանում էլ՝ ամենուրեք, ուր հայ են տեսել: Եվ եթե դեռեւս շարունակում են կոտորել, լավ է, որ կոտորեն իրար, քան, իհարկե, մեզ:

**Հունիսի 6-ին** Հայաստանի թղթակիցը զրույց ունեցավ Ռուսաստանի պրեզիդենտի աշխատակազմի ղեկավար Սերգեյ Ֆիլատովի հետ, որը, ի միջի այլոց, բարյացակամորեն խոսեց Ղարաբաղի բարդույթի մասին՝ շեշտելով, որ իրենք շատ են շահագրգռված նրա արագ ու արդար լուծմամբ եւ պատրաստ են գործադրելու ամենաեռանդուն ջանքեր, քանի որ, ինչպես Հարավսլավիայում, այնպես էլ այստեղ Ռուսաստանն ունի իր շահերը եւ ըստ այդմ էլ պիտի վարի հատուկ քաղաքականություն: Ինչ վերաբերում է հայ-ռուսական տնտեսական ու քաղաքական, դիվանագիտական փոխհարաբերություններին, ապա այստեղ էլ մենք ոչ միայն ստեղծել ենք ամենասերտ բարեկամական մթնոլորտ, այլեւ այն զարգացնելու եւ ամրապնդելու ամենաբարենպաստ պայմաններ: Հիշենք թեկուզ այն, որ մեր կողմից Ռուսաստանի վարչապետի առաջին տեղակալ Օլեգ Լոբովն է այդ հարաբերությունների կազմակերպիչ-վերահսկողը (куратор): Ձեր կողմից եւս ձեռներեց ու հարմարագույն մարդ է նշանակված: Ուրեմն ջանանք անել ամենայն հնարավորը:

Նման պարագաներում պաշտոնյան չի ասում ամեն ինչ, բայց սա ասաց, եւ թող անհասկացողն անգամ հասկանա:

**Հունիսի 7-ին** ՀՀ նախագահի՝ արտակարգ գործերի դեսպան Դավիթ Շահնազարյանը հեռուստատեսությամբ հայտարարեց, թե ԵԱՀԽ-ի ղարաբաղյան նախաձեռնություններին գումարվեց եւս մեկ փաստաթուղթ. դա Մինսկի խմբի ղեկավար Մարիո Ռաֆայելիի գիրն է՝ Մինսկի խորհրդաժողովի անդամ ինն երկրների ներկայացուցիչների անունից: Այն, իբր, հիմնված է ՄԱԿ-ի N 822 թղթի սկզբունքների վրա, էապես տարբերվում է նախորդ՝ 3+1 նախաձեռնությունից: Իբրեւ շատ կարեւոր տարբերություն նշեց այն, որ այստեղ պահանջվում է, որպեսզի Քալբաջարից հայ զորքի դուրսբերելուն հետեւող դիտորդները հսկեն նաեւ հաջորդ շրջանի վրա՝ չլինի՞ թուրքն այնտեղ իր ձեռքը մտցնի: Կարեւոր է նաեւ ապաշրջափակման պահանջը՝ շրջափակման պայմաններում գտնվող բոլոր կետերի ու շրջանների համար:

- Եթե Հայաստանի կառավարությունը Երեքի նախաձեռնության նկատմամբ չցուցաբերեր իր ճկուն ու միակ հնարավոր քաղաքականությունը, ապա դժվար թե մենք արժանանայինք այս շատ ավելի ձեռնտու փաստաթղթին,- զրույցի վերջում եզրակացրեց Դ. Շահնազարյանը:

Սակայն հայտնի է, որ Հայաստանի կառավարությունը պարզապես ընդունել է Երեքի (ավելի ճիշտ 3+1-ի) նախաձեռնությունը: Այս դեպքում ինչո՞ւ այն նորոգված ու փոփոխված ներկայացնելու պատիվը վերագրվում է Հայաստանի կառավարության անմռունչ ընդունումին եւ ոչ թե ԼՂՀ մերժումին: Եվ ապա, ի՞նչ մի հայանպաստ տարբերություն կա նոր թղթի՝ իր շարադրած կետերում...

Ամեն պարագայի սպասենք-տեսնենք:

✧ ✧ ✧

Այսօր երկար խոսեցին Հրանտ Բագրատյանի պատվիրակության եվրոպական երթուդարձի «փայլուն արդյունքների» մասին: Պետք է ենթադրել, մանավանդ հերոսների անձնական խոսքերից, որ այդ արդյունքների փայլը տարածվում է նաեւ ղարաբաղյան բարդույթի լուծման հեռանկարների վրա: Իսկ երբ մեկն էլ իր խոսքը կոնկրետացրեց, պարզվեց, որ Մեծ Բրիտանիայի կառավարությունն, օրինակ, համառորեն պնդում է իր հայտնի տեսակետը՝ Ադրբեջանի ամբողջականության պահպանում՝ ԼՂ-ի վարչական ինքնավարությամբ հանդերձ: Վերջինս էլ, իբր, որպեսզի գտնվի միջազգային հսկողության ներքո:

Բայց եթե սա է «փայլուն արդյունքը», ինչո՞ւ նորից ղարաբաղյան խնդիրը ծամծմվում է, շահարկվում բոլոր մակարդակներում:

Աշխարհի լրատվական բոլոր բերանները Բաքվի ու Գանձակի խառնակչությունների մասին են խոսում: Ասում են՝ միայն Գանձակում զոհերի ու վիրավորների թիվը հասնում է 300-ի: Սպանվածների մեջ է նաեւ Էլչիբեյի պահապան զորախմբի հրամանատարը: Կալանքի տակ, ինչպես նաեւ պատանդ են հանրապետության մի շարք ղեկավարներ: Ստեղծված է հաշտարար հանձնաժողով՝ ակադեմիկոս Իմամ Մուստաֆաեւի ղեկավարությամբ: Սա կոմկուսի նախկին (1950-ական թվականների) առաջին քարտուղարն

վարել պրեզիդենտ Դեմիրելի հետ: Նկատի առնելով, որ անպայման խոսք է գնացել, այն էլ շատ կարեւոր եւ հիմնական խոսք Ղարաբաղի ու Ադրբեջանի վիճակի մասին, զարմանում ես, թե ինչպես այս Թուրքիան, առանց մի վայրկյան իսկ կորցնելու, Ադրբեջանի համար պատեպաս է զարկվում, մանավանդ ԱՄՆ-ի եւ Ռուսաստանի ղեկավարների հետ պայմանավորվում անելիքը, երբ Արցախի համար նրա թիկունքում կանգնած Հայաստանը քնում, ժամանակ է անցկացնում, որպեսզի արթնանա ու գործի կոչի, երբ դրա կարիքն այլեւս չկա կամ անհնար է որեւէ օգնություն հասցնել...

**Հունիսի 13**. Ասում են՝ այսօր Ադրբեջանի խորհրդարանի նախագահ Իսա Գամբարը հրաժարական է տվել, եւ հրաժարականն էլ անմիջապես ընդունվել է: Իսկ Սուրաթ Հուսեյնովի ապստամբ զորաբանակը մոտենում է Բաքվին եւ պահանջում է ապիկար ամբողջ կառավարության հրաժարականը:

Նաեւ ասում են՝ Բաքվում պայթեցվել է Թուրքիայի դեսպանատունը: Իբր, Էլչիբեյի կատաղի հակառակորդներն են արել եւ դա պատճառաբանում են նրանով, որ պրեզիդենտն ու այդ դեսպանատունն իրենց պանթուրքիստական ցնդաբանություններով եւ բացահայտ հակաիրանյան ու հակառուսական քաղաքականությամբ Ադրբեջանը քանդում են:

Թվում էր, թե այսօր էլ Հեյդար Ալիեւը կընդունի վարչապետի կամ խորհրդարանի նախագահի գահը: Սակայն նա այդքան էժան քայլի չի գնա, այլ գործերն այնպես կկազմակերպի, որպեսզի դառնա հանրապետության առաջին դեմքը: Եվ մեծահոգաբար հայտարարել է, թե ինքը Բաքու է հասել ոչ թե որեւէ պաշտոնի (մանավանդ երկրորդական պաշտոնի) տեր դառնալու, այլ ազգը վերահաս կործանումից փրկելու համար...

✧ ✧ ✧

Թուրքի լրատվական մարմինների տեղեկատվության համաձայն՝ վերջին օրերին հայ ինքնապաշտպաններն իրենց դեմ նոր գրոհներ են ձեռնարկել, համարյա շրջապատել Աղդամ քաղաքը, իսկ Մարտակերտի կողմից առաջ շարժվելով՝ բավական խորացել Աղդամի շրջանի տարածքում, գրավել 8 գյուղ՝ Խաչենստրոյը, Չինլին, Ալիաղալին, Ահմեդաղալին, Ալիմադաթլին, Մոլլալարը, Քյուրդլարը, Գալայչիլարը:

Թվարկված գյուղերը գտնվում են Խաչենագետի վրա կառուցված ջրամբարի շրջապատում եւ բավական մեծ տարածություն են զբաղեցնում (Գալայչըլարը մեր Ջանյաթաղի հարեւանն է, իսկ Չինլին՝ ջրամբարից արեւելք, դեպի Աղդամ ընկած ափի տեր: Այսպես որ գնա, հեռու չէ նաեւ Աղդամ շահարը):

✧ ✧ ✧

**Հունիսի 14-ի** առավոտյան հրապարակվել էր Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունը «Լռնային Ղարաբաղի իշխանությունների»՝ ԵԱՀԽ-ի առաջարկության նկատմամբ ունեցած դիրքի դատապարտմամբ: Գտնում էր, որ դա քաղաքական անհեռատեսություն է՝ հայ ժողովրդին ճակատագրական աղետի առաջ կանգնեցնելու վտանգով, ապացույց, որ այդ իշխանություններն անկարող են վճռական պահին ընդունելու ճիշտ ու շահավետ որոշումներ: Այսքանից հետո էլ նա վեր կացավ, գնաց Ստեփանակերտ, որպեսզի ընդունել տա այդ ճիշտ ու շահավետ որոշումը: Եվ, ինչպես, երեկոյան արդեն հաղորդեցին, թե ԼՂՀ ԳԽ-ի Նախագահությունը, հանրապետության ղեկավար մարմինների հետ միասին, երկար ու աղմկոտ քննարկել է հարցը, եւ վերջում ճարահատյալ ընդունել որոշում ԵԱՀԽ-ի առաջարկությանը ենթարկվելու վերաբերյալ: Ճարահատյալ ու համարյա անօրինական որոշում. բավական է ասել, որ որոշմանը կողմ քվեարկել է հինգ հոգի, դեմ՝ եւս հինգ: Բայց որովհետեւ ընդունելու հեռանկարն ստիպել է, որ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը հրաժարական տա, եւ նրա փոխարեն որոշումն ստորագրելու պատրաստ Կարեն Բաբուրյանը (նախագահի առաջին տեղակալ) կողմ քվեարկողների մեջ է եղել, նրա ձայնն առավելություն է տվել կողմերի խմբին:



Սակայն այսպիսի պայմաններում, որքան հայտնի է, բոլոր ձայները հավասարազոր են ու հավասարիրավ:

Ինչ-որ է. Լեւոն Տեր-Պետրոսյանն այս անգամ էլ Արցախը մղեց մի քայլի, որի աղետավորությունը բացահայտ ու աղաղակող է հենց այսօր. որոշման համաձայն՝ հենց վաղը, հունիսի 12-ին պիտի սկսվի ինքնապաշտպանության զորքի դուրսբերումը Քալբաջարի շրջանից: Առաջարկության հրապարակված տարբերակում նշված է միայն Քալբաջարի շրջանը, իսկ «Ազատություն» ռադիոն այս առթիվ տված հաղորդման մեջ ասում էր՝ «Լեռնային Ղարաբաղի ղեկավարները համաձայնեցին իրենց զորքերը դուրս բերել վերջերս բռնագրաված տարածքներից», եւ սա էլ վերջին օրերին թմբկահարվում էր Ադրբեջանի ու Թուրքիայի լրատվության կողմից:

✧ ✧ ✧

Այսօրվա հաղորդումներում առկա էր նաեւ տխուր մի գույժ. զոհվել է Մոնթե Մելքոնյանը (Ավոն)՝ Քալբաջարի ազատագրության նախաձեռնողն ու հերոսը: Ապրիլի վերջին Ստեփանակերտում խոսում էի հետը, եւ նա, ինչպես վայել է պատմությանը քաջածանոթ հրամանատարին, բացատրում էր Քալբաջար-Քարվաճառի հայկական ակունքները, նրա հայկական արյամբ ու քրտինքով ներծծված, հինավուրց սրբազան հուշարձաններով կնքված-հաստատված լինելը: Եվ մեկ էլ գտնում էր, որ ինքնապաշտպանության համար կատարված ամեն մի քայլ օրինական է ու անկասելի: «Իմ զինվորների գիտակցության մեջ անջնջելի գրված է այս օրենքը. հակառակն անձնասպանություն է», – ասաց նա:

Թե որ ողջ լիներ, ինչպե՞ս կընդուներ այս պարտվողական, անձնասպանական որոշումը: Գուցե ինքնասպանությո՛ւն գործեր:

✧ ✧ ✧

Իսկ ԼՂՀ ամբողջ արեւելյան ռազմաճակատում կատաղի պատերազմ էր գնում: ԵԱՀԽ-ի առաջարկությունն ընդունած Ադրբեջանն ուզում էր ապացուցել իր նկատառումների «ազնվությունը»: Հայ ազատամարտիկները քթներին տվել, ետ էին դարձրել գրոհի եկածներին: Առայժմ այն է հայտնի, որ թուրքը ռազմաճակատում թողել է երեք ջարդված տանկ:

✧ ✧ ✧

Ադրբեջանի ռազմական ընդդիմության զորքն այսօր Հաջիկաբուլն ու Ալիբայրամլին էլ է ոտքի տակ տվել, եւ առաջապահներին երեւում են Բաքվի աշտարակները:

Ասում են Ալիեւն ու Էթիբար Մամեդովը չկարողացան կոտրել Սուրաթ Հուսեյնովի համառությունը. սա ճանաչում է միայն ամբողջ ղեկավարության հրաժարականը եւ վերջնական ժամկետ էլ է նշանակել՝ ամսիս 15-ի կեսօրը: Իսկ մեջլիսում առաջարկություն է եղել, որպեսզի Ալիեւը դառնա ԳԽ-ի նախագահ, Մամեդովը՝ վարչապետ, եւ ահա Ալիեւի հարցը քննելիս վճռել են վերջնական լուծումը թողնել երեքշաբթի օրվա նիստին:

✧ ✧ ✧

Հաջորդ օրն իսկ պարզվեցին ԼՂՀ ԳԽ-ի Նախագահության այսօրվա նիստի մանրամասները. Իննի առաջարկությանը (իմա՝ Լ. Տեր-Պետրոսյանի վերջնագրին) դեմ են քվեարկել Գեորգի Պետրոսյանը, Վալերի Բալայանը, Վալերի Ղազարյանը, Լեւոն Մելիք-Շահնազարյանը (ՀՀԴ անդամներ) եւ անկուսակցական Համլետ Գրիգորյանը: Կողմ քվեարկել են ՊՊԿ-ի անդամները՝ Ռ. Քոչարյանի գլխավորությամբ: Իսկ բանակի հրամանատարությունը հայտարարել է, թե կճանաչի իշխանությունների ընդունած որոշումը:

✧ ✧ ✧

Նույն օրն էլ (**հունիսի 14-ին**) ԼՂՀ ԳԽ-ի նախագահի նոր պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի ղեկավար Մարիո Ռաֆայելիին հղել է հետեւյալ նամակը. «Նախ եւ առաջ կցանկանայի մեկ անգամ եւս հավաստել ԼՂՀ ղեկավարության խաղաղության ձգտումը եւ հավատարմությունը միջազգային ընկերակցության խաղաղարար նախաձեռնությանը: Հաշվի առնելով 9 երկրների նախաձեռնության առնչությամբ ԼՂՀ-ում սրված իրավիճակը, ինչպես նաեւ դրանով թելադրված իշխանության փոփոխումը հանրապետությունում, որի հետեւանքով մի քանի ստորաբաժանումներ դուրս են եկել վերահսկողությունից, առաջարկում ենք միջոցառումների ներկայացված ժամանակացույցի ժամկետները երկարաձգել մեկ ամսով: Այդ երկարաձգումը մեզ հնարավորություն կտա կայունացնել իրավիճակը եւ ապահովել ստանձնած պարտավորությունների կատարումը: Դրա հետ մեկտեղ, մտահոգության տեղիք է տալիս խիստ պայթունավտանգ իրադրությունը, որը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների: Նկատի առնելով, որ ԼՂՀ հարակից Ադրբեջանի շրջանները վերահսկվում են զինված ընդդիմության կողմից, որը մարտական գործողություններ է վարում կառավարական զորքերի դեմ, խնդրում եմ ԵԱՀԽ-ի հավաստումը, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստ է եւ ի զորու է ապահովել Մինսկի խմբի 9 երկրների նախաձեռնության իրականացման ուղղությամբ իր ստանձնած պարտավորությունների կատարումը: Հուսով եմ, որ համատեղ ջանքերով մենք կհասնենք երկար սպասված խաղաղությանը» («Հայլուր»):

**Հունիսի 15-ին** թուրքերը կատաղի գրոհներ ձեռնարկեցին Մարտակերտի ու Ասկերանի շրջանների դեմ: Սակայն իրենք հայտարարում էին, թե հայերն են, որ ոչ միայն գրոհել, այլեւ մխրճվել են Աղդամի շրջանը՝ հյուսիսից 8, իսկ հարավից 15 կմ երկարությամբ, գրավել 8 գյուղ (դրանցից հիշում են Ջինլին ու Ջուբարլին, որոնք գտնվում են Խաչենագետի ստորին հոսանքի վրա կառուցված ջրանցքի հարեւանությամբ եւ կարեւոր կետեր չեն հանդիսանում հյուսիս-արեւմտքից Աղդամ քաղաքի վրա շարժվելու համար): Եվ այս գործողություններն էլ բացատրում են նրանով, որ Ղարաբաղում գործում են Լեւոն Տեր-Պետրոսյանի հակառակորդները:

Նույն օրը վաղ առավոտից արդեն լրատվական մարմինները ծամծմում էին ԼՂՀ ԳԽ-ի Նախագահության որոշումը: Նախագահի նոր պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը նամակ է հղել ԵԱՀԽ-ի Մինսկի անպտուղ խորհրդաժողովի ղեկավար Մարիո Ռաֆայելիին՝ հաղորդելով նրա (ԵԱՀԽ-ի 9 տերությունների ներկայացուցիչների) առաջարկությունն ընդունելու վերաբերյալ իրենց որոշումը, նաեւ խնդրելով, որպեսզի գրաֆիկի իրականացումը հետաձգվի մեկ ամսով...

Այսպիսի բանե՜ր... Կարծես «Առաջարկությամբ» Ադրբեջանին որեւէ լուրջ հայանպաստ քայլ է պարտադրվում, եւ նա էլ կարող է ուխտազանց լինել...

Իսկ այդ առաջարկությամբ լոկ ԼՂ Հանրապետությանն է հարկադրվում իր զորքերը դուրս բերել «Քալբաջարի շրջանից ու Ադրբեջանից վերջերս գրավված այլ տարածքներից» (տե՛ս Ռաֆայելիի նամակի ներածական մասը):

Լեւոն Տեր-Պետրոսյանը բարձր գնահատեց «Լեռնային Ղարաբաղի ղեկավարության դրական պատասխանը ԵԱՀԽ-ի Իննի առաջարկությանը,- հաղորդում էին լրատվական մարմինները: Այդ պատասխանը բացարձակ հնարավորություն է տալիս կարգավորելու հակամարտությունը: Եվ պատասխանի մեջ գրաֆիկի իրականացումը մեկ ամսով հետաձգելու մասին խնդրանքն էլ հիմնավորված է եւ անպայման կհարգվի Իննի կողմից:

Հայաստանի նախագահը համեստորեն լռում եւ գաղտնի էր պահում ԼՂՀ ղեկավարության վրա գործադրած իր հարկադրանքը՝ նման պատասխան սարքելու համար:

Լ. Տեր-Պետրոսյանը նաեւ շնորհավորանքի գիր է հղել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի նոր պաշտոնակատար Կարեն Բաբուրյանին՝ ըստ արժանվույն գնահատելով նրա ստորագրությամբ աշխարհ եկած առաջին փաստաթուղթը՝ այսքան բախտորոշ արցախահայության կյանքի համար («Հետաքրքիր է «ԼՂՀ»-ի տեղ ի՞նչ է գրել):



Վերջում էլ Բաբուրյանին հրավիրում է Երեւան՝ բանակցությունների եւ պայմանադրության...

✧ ✧ ✧

Ադրբեջանում ապստամբ գործողություններն ընդգրկել են հանրապետության բոլոր շրջանները՝ արեւմուտքում մինչեւ Շաքի, հյուսիս-արեւելքում՝ Քյուրդամիր ու Հաջիկաբուլ: Եվ դեռ այս պայմաններում էլ թուրքի զորքը հարձակումներ է ձեռնարկում արցախյան ճակատում, հրետակոծում խաղաղ բնակավայրերը: Նման մի գրոհ ետ է մղվել Հակոբ Կամարի (Լյուլասազ) գյուղի մոտ՝ թուրքի համար մեծ վնասներով: Ազատագրվել են Հակոբ Կամարի եւ Տոնաշեն գյուղերը:

✧ ✧ ✧

Բաքվում բազմահազարանոց հանրահավաքներ են եղել ԳԽ-ի ու պրեզիդենտի շենքերի առաջ: Աբուլֆազ Էլչիբեյին են մեղավոր համարում հանրապետության բոլոր աղետների համար, պահանջում են նրա հրաժարականը: Իսկ նա ելույթ ունենալով հանրահավաքում, հայտնում է, որ ինքը հրաժարական կտա միայն հանրաքվեի որոշմամբ:

Իսկ Սուրաթ Հուսեյնովի ապստամբ զորամիավորումները, էլչիբեյականների թույլ դիմադրությունը հաղթահարելով, իր հաղթական ճանապարհին, Բաքվի մոտերքում է, մայրաքաղաքից ընդամենը 100 կմ հեռու, եւ պահանջում են նոր կառավարության ընդունում:

Ահա այս մթնոլորտում էլ տեղի ունեցավ Ադրբեջանի խորհրդարանի ընդլայնված նիստը, որն իր նախագահ ընտրեց Հեյդար Ալիեւին:

Այս լուրը հաղորդող բոլոր աղբյուրները նշում էին, որ նրան տվել են լրացուցիչ լիազորություններ, որոնցով նա դարձել է Ադրբեջանի միահեծան տերը: Հասկանալի է, որ նրա կողքին, այսպես կոչված, պրեզիդենտ Էլչիբեյը կլինի միայն խրտվիլակ, որպիսի պատվին նա միանգամայն արժանի է:

Պաշտոնական Մոսկվան անմիջապես արձագանքեց Ալիեւի թագադրությանը. Ելցինի գրասենյակի մամուլի քարտուղար Կոստիկովը Ռուսաստանի ռադիոյի թղթակցին հայտնեց ռուս պաշտոնեության դրական կարծիքը բազմափորձ ու ճկուն ղեկավար Ալիեւի մասին, որի հետ իրենք մեծ հույսեր են կապում, մանավանդ իր երկրում կայուն կարգուկանոն հաստատելու եւ ռուս-ադրբեջանական գործուն հարաբերությունները վերականգնելու ասպարեզում:

**Հունիսի 16-ը** նշանավորվեց երկու հանդիպումով, որոնցում մի կողմում ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանն էր, մյուսում՝ իրար ետեւից ՀՌԱԿ հանրապետական վարչության անդամները (ժ. 12-ից), ապա ՀՀԴ Հայաստանի կազմակերպության բյուրոյի չորս անդամները՝ Ռուբեն Հակոբյան, Վարդան Հակոբյան, Տիգրան Ջիմբաշյան եւ Ոստանիկ Մարուխյան:

Պատճառն, ըստ երեւույթին, լրատվության մեջ եւ հասարակական լայն շրջաններում նախագահի համառ ջանքերով ԼՂՀ ղեկավարության՝ ԵԱՀԽ-ի փաստաթղթին համաձայնություն տալու շուրջ բորբոքված կարծիքների, վեճերի, մեծ մասամբ նախագահի միահեծան դերի քննադատության իրողությունն էր: Երեւի նախագահը գտնում էր, որ դրանից կարող է գոյանալ համաժողովրդական դժգոհություն, որն էլ քայքայումի, ավերածությունների, ժողովրդի ողբերգական վիճակի առկա պայմաններում կստեղծի մի գլխացավ, որից փրկություն չի լինի:

Առաջին հանդիպման վերաբերյալ «Ազգի» (հունիսի 17) խմբագրական հրապարակումը բավական հարմար ու սպառիչ է: Դրա համար էլ այստեղ համարյա ամբողջությամբ մեջ եմ բերում: Ահա այն. «Շուրջ մեկ ժամ տեւած զրույցի ընթացքում, որն ավելի մենախոսության էր նման եւ որի առաջին բաժնում, առանց նախնական պայմա-

նավորվածության, ներկա էր նաեւ նկարահանող խումբը, հանրապետության նախագահը շարադրեց իր տեսակետները ԵԱՀԽ կողմից արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորմանը նպատակաուղղված առաջարկության շուրջ ՀՀ եւ այնուհետեւ ԼՂՀ ստորագրությունների ապահովումից հետո նոր հանգրվանի «պատերազմական փուլից խաղաղության փուլ» անցնելու մասին, շեշտելով, թե «հայ ժողովուրդն իր ամբողջությամբ պատվով դուրս եկավ պատերազմի փուլից» եւ այժմ «մեզանից է կախված, թե ինչպես կգործենք խաղաղության փուլում»: Այնուհետեւ, ըստ երեւույթին, անցնելով հրավերի բուն նպատակին, հանրապետության նախագահն ընդգծեց. «Այսօր պահն է յուրաքանչյուր կուսակցության համար պարզելու իր դիրքորոշումը»: Անկախ այն բանից, դուք կօգնե՞ն, թե՞ կխանգարեն, մենք հասնելու ենք մեր նպատակին՝ կայացնելու ենք այս պետությունը».- հաստատակամ ասաց նախագահը, կարծես ներկաների մեջ հակառակը պնդող կար: Այնուհետեւ վերջնագրային շեշտ տալով իր խոսքին, նախագահը թելադրեց. «Ես չէի ցանկանա, որ ձեր կուսակցությունը պատմության մեջ արձանագրվի որպես դիտորդ, առավել եւս որպես խանգարող: Կոչ եմ անում չուշանալ եւ այսօրեւեթ ձեր վերաբերմունքն արտահայտել: Ակնկալում եմ, որ դուք զորավիգ եք կանգնելու Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի դրական պատասխանին»: «Դուք պետք է հստակեցնեք ձեր դիրքորոշումը, այլապես ես ստիպված կլինեմ իմ դիրքորոշումը հստակեցնել», – ասաց նախագահը, ներկաների մեջ առաջացնելով տարակուսանք՝ սպառնալի՞ք էր դա, թե՞... դիրքային պայքարի հրավեր:

Հանրապետության նախագահը խոսեց նաեւ այն մասին, որը հայտնի էր նաեւ պաշտոնական աղբյուրներից՝ Գորիսում եւ Ստեփանակերտում ինքը ճնշում չի բանեցրել ԼՂՀ ԳԽ-ի նախագահի նախկին պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանի եւ ՊՊԿ նախագահ Ռոբերտ Քոչարյանի վրա՝ ստորագրելու առաջարկը, այլ պարզապես, ինչպես ինքն ասաց, բացատրել է իրավիճակն իր ամբողջ խորությամբ, շեշտելով այլընտրանքի բացակայությունը եւ փաստաթուղթը մերժելու դեպքում դրա ակնհայտ հետեւանքները: Ընդհակառակը, նախագահը մեծ գովեստով արտահայտվեց խաղաղարար ծրագրին դրական պատասխան տալու ուղղությամբ Գ. Պետրոսյանի «սխրանքի», «վճռական պայքար» տանելու մասին, ավելացնելով, որ վերջինս շարունակ գտնվել է ՀՀԴ-ի ժխտական կամ, այլ դեպքերում, խուսափողական ճնշման տակ:

Հակիրճ խոսքով հանդես եկավ ՀՌԱԿ հանրապետական վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը: Հրավերի համար շնորհակալություն հայտնելուց հետո նա շատ ամփոփ շարադրեց արծարծված հարցի նկատմամբ ՌԱԿ-ի սկզբունքային դիրքորոշումը՝ Արցախի անվտանգության լավագույն երաշխիքը կուսակցությունը գտնում է ԼՂՀ ճանաչման մեջ, ինչը հանդիպեց նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի արդեն հայտնի առարկությանը՝ ԼՂՀ ճանաչումը համազոր է պատերազմ հայտարարելուն:

Հարցադրումով հանդես եկավ վարչության անդամ Հակոբ Ավետիքյանը, խնդրելով լուսաբանել «խաղաղության փուլի» իրական երաշխիքների մասին, քանի որ հանրապետության նախագահն իր խոսքում վկայակոչել էր և՛ միջազգային պետական ղեկավարների տված երաշխիքների, և՛, միաժամանակ, խաղաղարար ծրագրում առկա ռիսկի մասին:

Այստեղ հանրապետության նախագահը, հայտարարելով, թե հանդիպման հրապարակային բաժինն ավարտված է, նկարահանող խմբին դուրս հրավիրեց եւ երկարորեն շարադրեց «գաղտնիքներ», որոնք ծանոթ էին ներկաներին տարբեր աղբյուրներից, Հայաստանում թե Արցախում ունեցած բազմաթիվ շփումներից: Նախագահը նաեւ գնահատականներ տվեց արցախյան շարժման հնգամյա ուղու մասին՝ «պատմության համար»: Վերջում, ավարտելով հանդիպումը, նա թույլ չտվեց հավելյալ հարցեր տալ, առավել եւս՝ լսել կուսակցության տեսակետները:

Միով բանիվ, հանդիպումը կարող էր օգտակար լինել, եթե այն կայացած լիներ 1-2 շաբաթ առաջ, այն օրերին, երբ ՀՀ եւ ԼՂՀ-ն դեռեւս չէին ստորագրել ԵԱՀԽ-ի փաստաթուղթը եւ հարցի աշխույժ քննարկում էր գնում բոլոր մակարդակներով»:



✧ ✧ ✧

Հաջորդ օրը՝ հունիսի 17-ին, ՀՌԱԿ Վարչությունն իր հատուկ նիստում քննարկելով նախորդ օրվա հանդիպման արդյունքները՝ գտավ, որ «Ազգի» հունիսի 17-ի համարում տրված լուսաբանություններն ու գնահատականներն արդեն բավարար չափով մեկնաբանում են այն: Միայն ցավ արտահայտվեց, որ հերթական անգամ նախագահը խուսափեց գործնական երկխոսությունից, իրեն զրկեց նախքան կարեւորագույն որոշումներ ընդունելը կուսակցությունների հետ աշխատելու հնարավորությունից՝ ընդամենը բավարարվելով քարոզչական բնույթի դրսեւորումներով:

Ինչ վերաբերում է Ղարաբաղի հարցի նկատմամբ ՀՌԱԿ-ի դիրքորոշմանը, ապա դարձյալ ընդգծվեց, որ այն մնում է անփոփոխ, որի մասին հստակորեն ասվել էր ՀՀ նախագահին նույն հանդիպման ընթացքում. ՀՀ իշխանությունները պարտավոր են ստանձնել արցախահայության ինքնապաշտպանության եւ անվտանգության ապահովումը, հետամուտ լինել քաղաքական եղանակներով ԼՂՀ հարցի լուծմանը, ընդունել եւ բոլոր բանակցությունների հիմքում դնել ԼՂՀ ճանաչման անհրաժեշտությունը:

Ինչ վերաբերում է ԵԱՀԽ վերջին նախաձեռնության մեջ բավարար երաշխիքների բացակայությանը եւ մեծ ռիսկի առկայությանը, որն ընդունել էր ՀՀ նախագահը հիշյալ հանդիպման ընթացքում, հանրապետական վարչությունը, մանավանդ Ադրբեջանում տիրող խառնաշփոթության լույսի ներքո, խոր մտահոգությամբ արձանագրեց այդ փաստը եւ որոշեց ԵԱՀԽ անդամ գլխավոր տերությունների ներկայացուցիչների հետ ձեռնարկել քաղաքական շփումներ՝ բավարար լուսաբանություններ ստանալու ակնկալությամբ:

Այդ նպատակով արդեն երեկ առաջին հանդիպումը կայացավ Հայաստանում Դաշնակցային Ռուսաստանի դեսպան պրն. Վլադիմիր Ստուպիշինի հետ, որի մասին զեկուցեց վարչության ատենապետ Ռուբեն Միրզախանյանը («Ազգ», հունիսի 18):

✧ ✧ ✧

ՀՀԴ բյուրոյի ներկայացուցիչների հետ ունեցած իր հանդիպումը ՀՀ նախագահն անցկացրեց մի մթնոլորտում, որն սկզբից մինչեւ վերջ ամորոպային էր, թշնամական լիցքերով տոգորված: Հաղորդելով, որ նույն հարցով մեկ անգամ եւս ինքը հանդիպել է դաշնակցության ներկայացուցիչների (Վահան Հովհաննիսյան, Գառնիկ Իսագուլյան) հետ, նախագահն ասում է՝ այն ժամանակ ինքը ներկայացրել է իր (յուրայինների) կարծիքն այսպես. «Հայաստանը պնդում էր, որ պետք է համաձայնել այդ նախաձեռնությանը՝ իր բոլոր թերություններով հանդերձ, որոնք հնարավոր էր շտկել, եւ անցած մեկ ամիսը ցույց տվեց, որ մեզ հաջողվեց բավականին բարելավել այս փաստաթուղթը» (Սա, իհարկե, միայն հայտարարություն էր. փաստաթուղթը՝ միեւնույն բովանդակությամբ՝ սկզբում ստորագրել են երեքը, ապա դրան գումարվել է մեկը, վերջում հրապարակվել է իննի ստորագրությամբ, եւ սա էլ համարվում է «բավականին բարելավել»):

«Հայաստանը հասել է այն բանին, որ Լեռնային Ղարաբաղը նույնպես պետք է դրական պատասխան տա», – հաղթապանծ հաղորդում է նախագահը՝ այստեղ, հավանաբար՝ իրավացիորեն Հայաստան ներկայացնում լոկ իրեն, քանի որ ինքը հասավ «այն բանին», ապա համառորեն «Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը» գոնե բանավոր ճանաչելու փոխարեն, այն համարելով «Լեռնային Ղարաբաղ», ինչպես մեր հակառակորդները:

Հետաքրքիր է նախագահի խոսքն իր այս ձեռքբերումներից սպասվող արդյունքի վերաբերյալ. «... Մեզ հաջողվեց հասնել մեր նպատակին: Բայց սա դեռ ճանապարհի կեսն է, բուն գործընթացն սկսվելու է այս պատասխանից հետո: Եվ այսօր ես ձեզ ուղղում եմ նույն կոչը՝ մի խանգարեք, միեւնույն է, դա իրականանալու է, եւ դրա արդյունքում Հայաստանը եւ Լեռնային Ղարաբաղը դուրս են գալու շահած... Ես կոչ եմ ա-

անհրաժեշտ ուղղում կայացնել ի շահ Լեռնային Ղարաբաղի անվտանգության ու խաղաղության գիտակցելով սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ ու պատմության առջեւ իրենց պատասխանատվությունը:

Հունիսի 14, 1993 թ., Երեւան»:

Ուրիշ ոչինչ էլ որ չլիներ, հենց միայն այս հայտարարությունը՝ ընդդիմության թերթի կողմից համարված «վերջնագիր՝ հայերեն», «դավաճանական, ական», Էլչիբեյի գրչին վայել սրտառնալիք («Երկիր», հունիսի 15), հարցը պիտի լուծեր: Բայց Տեր-Պետրոսյանը, այսօրինակ սրտառնալից ու վերջնագրային հայտարարությամբ էլ չբավարարվելով, թռավ Ստեփանակերտ, ժողովեց «Լեռնային Ղարաբաղի իշխանությունների» ներկայացուցիչներին, ձեռքը սեղանին զարկեց: Այսքանը՝ հրապարակորեն, ժողովրդի աչքի առաջ: Իսկ անդրկուլիսյան շրջանակներում ձեռնարկած միջոցառումների մասին ԼՂՀ ԳԽ-ի մամուլի քարտուղար Գեղամ Բաղդասարյանն է վկայել, թե «ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործել են այնպիսի ձեւեր, որոնք դուրս են դիվանագիտության եւ բանավեճերի ընդունված սահմաններից» (անդ):

✧ ✧ ✧

**Հունիսի 17-ին** թուրքերը նոր դաժան գրոհներ էին ձեռնարկել ԼՂՀ ճակատում՝ գործի դնելով հիմնականում օդուժը եւ հեռահար հրետանին: Այսպես, նրանք ռմբակոծել են Ստեփանակերտը, Ասկերանի շրջանի մի շարք բնակավայրեր: Մարտակերտի շրջանում, ըստ երեւույթին, նրանք խուժել էին Լյուլասազ (Հ. Կամարի), Աղաբեկալենջ, Ներքին Հոռաթաղ եւ Մատաղիս գյուղերը, սակայն չկարողացան դիրքավորվել, որովհետեւ ինքնապաշտպանության զորաջոկատները կրակ էին թափում նրանց գլխներին:

✧ ✧ ✧

Այսօր Մոսկվայի հայ համայնքը, Ռուսաստանի ԳԱ-ի թղթակից-անդամ Սամվել Գրիգորյանի ու համայնքի խորհրդի անդամ Կիրիլ Ալեքսեեւսկու գլխավորությամբ, բողոքի գիր է հղել Ռուսաստանի արտգործնախարար Կոզըրեւին՝ Երեքի անարդար, ԼՂՀ հարցն անարդարորեն քրքրող առաջարկության կապակցությամբ, երբ նրա հեղինակներն ու սրանց պահանջին իր համերաշխությունը հայտնած Հայաստանն իրենց աչքերն են փակել Շահումյանի ու Գետաշենի, Մարտակերտի շրջանի մի մասի բռնազավթված վիճակի դեմ («Երկիր», հունիսի 18):

✧ ✧ ✧

Վիեննայում ՄԱԿ-ի կազմակերպած Մարդու իրավունքների երկրորդ միջազգային խորհրդաժողովում Ելենա Բոնները հանդես է եկել արցախահայության իրավունքների պաշտպանությամբ, պահանջել, որպեսզի Արցախ-Ղարաբաղում անցկացվի հանրաքվե, դրանով իսկ օգնելով այնտեղ խաղաղություն հաստատելուն (անդ):

«Նեզավիսիմայա գազետան» երեկ (հունիսի 16-ին) հրապարակել է իր թղթակցի զրույցը Ռուսաստանում Թուրքիայի նոր դեսպան Ալթան Քամելի հետ: Դեսպանն այնտեղ իր երկրի հին ու հիմար սկզբունքներն է պաշտպանում հայության մասին խոսելիս, բայց հետաքրքիր է մի տեսակետ, որ մեջ եմ բերում: Թղթակցի այն հարցին, թե դեսպանն ինչպե՞ս է վերաբերվում Լաչինի խնդրին, ԼՂ-ի զորքե՞րն են գրավել, թե՞ Հայաստանի, ասում է. «Միամտություն կլիներ ենթադրել, թե Լեռնային Ղարաբաղը, որի բնակչությունը չի հասնում նույնիսկ հարյուր հազարի, ընդունակ կլիներ զավթել յոթ միլիոնանոց Ադրբեջանի տարածքի մի մասը: Չպետք է մոռանալ, որ Ղարաբաղի կենսապահովումը, այդ թվում նաեւ զենքով, Ղարաբաղ է գալիս Հայաստանից: Ահա թե ինչու մեզ անհամոզիչ է թվում պաշտոնական Երեւանի պնդումն այն մասին, թե Հայաստանն ընդու-



նել է ԱՄՆ-ի, Ռուսաստանի ու Թուրքիայի ծրագիրը, իսկ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը՝ այն մերժել: Ես կարծում եմ, որ ցանկության դեպքում պարոն Լեւոն Տեր-Պետրոսյանը կարող է Ղարաբաղի հայերին համոզել եռակողմ ծրագրի ընդունման անհրաժեշտությունը»:

Թուրքը ԼՂՀ ավելի քան 200 հազար բնակիչը հաշվում է հարյուր հազարից էլ պակաս: Բայց չէ որ, եթե թվաքանակով որոշվեր պատերազմի ելքը, Հայաստանն էլ չունի Ադրբեջանի բնակչության քանակը: Հետո էլ, այդ ինչպե՞ս է, որ Թուրքիան կարող է եւ պետք է մասնակցի Ադրբեջանի կռվին, իսկ հայն իրավունք չպետք է ունենա: Չէ՞ որ Թուրքիան մասնակցում է ոչ միայն զենք ու զինամթերքով, զինվոր ու սպա, այսպես կոչված, կամավորներով, այլեւ այն խայտառակ շրջափակումով, որի պատճառով համաշխարհային հանրության մարդասիրական օգնությունը չի հասնում թշվառության մեջ գտնվող հայ ժողովրդին՝ Հայաստանում ու Արցախում:

✧ ✧ ✧

ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանն այսօր եւս նամակ է հղել ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի ղեկավար Մ. Ռաֆայելլիին՝ իր անհանգստությունն ու անվստահությունն արտահայտելով գլուխը կորցրած Ադրբեջանի իշխանությունների գործողությունների նկատմամբ եւ խնդրելով, որպեսզի ԵԱՀԽ-ը վճռական քայլերի դիմի հարցի կարգավորման համար, անպայման մեկ ամսով հետաձգելու գրաֆիկի կատարումը:

✧ ✧ ✧

Երեկ ու երեկոյան նորից Ստեփանակերտ էր ժամանել պարոնուհի Քերոլայն Կոքսը՝ այս անգամ էլ իր հետ արցախահայությանը հասցնելով մեծ քանակությամբ բժշկական սարքավորումներ, դեղորայք, մանկական սնունդ:

✧ ✧ ✧

**Հունիսի 18-ին** ԼՂՀ ԳԽ-ի նախագահի նոր պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը ԵԱՀԽ-ի Մինսկի (ղարաբաղյան հարցի լուծման համար ստեղծված) խմբի նախագահ Մարիո Ռաֆայելլիին հղել է նամակ, որի մեջ մասնավորապես գրված է. «Հակառակ մեր տարածքում արյունահեղությունը դադարեցնելու համաշխարհային ընկերակցության լուրջ ջանքերին, Ադրբեջանը հերթական անգամ խախտեց պայմանավորվածությունները եւ հունիսի 17-ի առավոտյան լայնածավալ հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղի հանրապետության Հադրութի եւ Մարտակերտի շրջանների վրա՝ օգտագործելով ծանր սպառազինություն եւ մարտական օդուժ: Դրան նախորդել է ծավալուն քարոզչական արշավը, որը ձեռնարկվել է զանգվածային լրատվության միջոցներով՝ բնակչության շրջանում ստահոդ լուրեր տարածելով այն մասին, թե ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերն իբր գրոհել են ու գրավել Աղդամ քաղաքը:

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունն ընդգծում է, որ միայն ադրբեջանական բանակի կողմից ռազմական գործողությունների անհապաղ դադարեցումը կարող է փրկել խաղաղարար գործը, որի սկիզբը դրվեց մեծագույն դժվարությամբ: Ռազմական դիմակայության շարունակումը կհանգեցնի սոսկ կողմերի միջեւ անվստահության աճին: Իրադարձությունների նման զարգացման դեպքում ԼՂՀ-ը հարկադրված կլինի իրենից հանել խաղաղարար գործի կոնկրետ, ԵԱՀԽ-ի 9 երկրների վերջին նախաձեռնության ձախողման համար պատասխանատվությունը:

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը հայտարարում է, որ հետեւանքների համար ամբողջ պատասխանատվությունը լիովին ընկնում է Ադրբեջանի վրա, անկախ այդ հանրապետության ղեկավարության պաշտոնական արձագանքներից»:

**Հունիսի 19-ի** առավոտյան թուրքերը, խախտելով հրադադարի ու ռազմական գործողություններ չձեռնարկելու պայմանավորվածությունը, արշավեցին Մոխրաթաղ գյուղի վրա, արժանի ջարդ կրելով՝ ետ մղվեցին: Մերոնք ոչ մի կորուստ չունեցան:

✧ ✧ ✧

Բարի նոր լուրեր են գալիս վերականգնվող Արցախական աշխարհից. կապի աշխատողները զեկուցել են, թե արդեն մայրաքաղաքի հետ կապված է Հադրութի ամբողջ շրջանը, միասնական սիստեմի մեջ են առնված նույնիսկ հեռավոր ու մոլոր գյուղերը: Երիտասարդ հանրապետությունում կան ընդամենը 2500 գործազուրկներ, դրանք էլ հիմնականում փախստականներ են, որոնց այդ վիճակը ժամանակավոր է: Մնացած ամբողջ բնակչությունն զբաղված է իր գործով, արտադրության մեջ է, երկրամասի կյանքի վերականգնման եռուզեռի մեջ:

✧ ✧ ✧

Մոսկվայում հավաքվել են նույնակրոն (քրիստոնյա) տասը տերությունների պատվիրակություններ (Ռուսաստան, Լեհաստան, Հունաստան..., Հայաստան, ԼՂՀ), պայմանավորվել իրենց ճակատագրի ապահովության խնդիրների մասին: Խոսք է եղել նույն շարժման պետական մարմինների մասնակցությունն ինչ-որ ձևով ապահովելու մասին:

Սա հակակշի՞ռը չէ մուսուլմանական աշխարհի նույնատիպ մոլեռանդ միջոցառումների՝ ... շա՜տ ուշ ձեռնարկված:

✧ ✧ ✧

Նույն օրվա առավոտից լրատվական մարմինները մի գլուխ Ադրբեջանում տեղի ունեցող խառնակչության մանրամասներն էին հաղորդում, որ Սուրաթ Հուսեյնովի զորքերը Բաքվի մոտերքն են հասել, 50–60 կմ է մնացել մտնեն մայրաքաղաք: Որ Էլչիբեյի հրավունքներին տիրացած Ալիևը փորձում է դրության տերը դառնալ և բանակցություններ է վարում ապստամբի հետ: Որ ԱՄՆ-ի պետական ինչ-որ մարմնի հայտարարությամբ՝ Ադրբեջանի ղեկավար միայն ընդունվում է ժողովրդի կողմից ընտրված Էլչիբեյը: Որ Թուրքիան ևս հայտարարել է, թե պաշտպանում է Էլչիբեյի ղեկավարությունը, սակայն ձեռնպահ կմնա այստեղ կատարվող իրադարձությունների լուծմանը մասնակցելուց:

ՀՀ ԳԽ-ի նախագահ Բ. Արարքցյանն էլ այսօր վերադարձել է Ստամբուլ կատարած ուղևորությունից և անմիջապես հեռախոսով կապվել է Ադրբեջանի տեր Ալիևի հետ, շնորհավորել նրա նոր պաշտոնը, մաղթել հաջողություններ (հավանաբար՝ նաև ԼՂ-ի հարցի նրա ուզած տարբերակով լուծում):

✧ ✧ ✧

Հայ ժողովուրդն այսօր Եռաբլուրի հուշահամալիրում հողին հանձնեց Արցախի ինքնապաշտպանության քաջ ու իմաստուն հերոս, Մարտունու շրջանի զինվորության քաջարի հրամանատար Մոնթե Մելքոնյանին:

✧ ✧ ✧

Քեռլայն Կոքսը՝ մեր հրաշալի բարեկամը, Իննյակի ղեկավարներին նամակներ հղելով, բողոքել է, որ ինքը տեսավ ԼՂՀ մայրաքաղաք Ստեփանակերտի ռմբակոծումն Ադրբեջանի ռազմական ինքնաթիռների կողմից: Եվ դա էլ այն դեպքում, երբ ԵԱՀԽ-ն այդքան պատասխանատու փաստաթուղթ է հրապարակել, որին իր համաձայնությունն է տվել



ԼՂՀ ղեկավարությունը: «Իմացեք, որ Ադրբեջանն է խախտում հաշտության պայմանագիրը»,- գրել է նա:

✧ ✧ ✧

Այսօ՛ր միայն հայտնի դարձավ, որ երեկ թուրքի ռազմական ինքնաթիռները հայտնվել են Արցախի երկնքում, խորացել մինչև Ստեփանակերտ: Ինքնապաշտպաններն Ասկերանի մոտ վայր են գցել նրանցից մեկին, և մյուսները ետ են փախել: Սա ո՛րերորդն է: Ձորի Բալայանն իր աշխատասենյակի պատին մի թել է կապել, թուրքի կործանված յուրաքանչյուր ինքնաթիռի դիմաց թելից մի հատ մեկռուբլիանոց է կախում: Երևի այնտեղ արդեն 25-րդը կամ 26-րդը կախվեց:

**Հունիսի 20-ի** առավոտյան «Ազատություն» ռադիոն հաղորդեց, թե Էլչիբեյը գտնվում է Նախիջևանում և պնդում է, թե այնտեղից կղեկավարի իր երկիրը, մինչև որ անդորր հաստատվի: Իսկ Ալիևը հայտարարել է, թե ինքը հեռախոսային կապ է պահպանում և՛ Էլչիբեյի, և՛ Ս. Հուսեյնովի հետ, որ վերջինս էլ, թեկուզ վճռել է պատերազմական գործողությունները չշարունակել, բայց և այնպես, ընդվզումը չի դադարեցնի, քանի Էլչիբեյը չի տվել իր հրաժարականը:

Ադրբեջանից տեղեկացրել են նաև, թե իրենք արդեն կասեցրել են հայերի հարձակումները Լեռնային Ղարաբաղի արևելյան մասում, Աղդամի մոտ: Օրվա վերջին հաղորդումներում Ս. Հուսեյնովն իր զորամասի մի գունդն ուղարկել է, որպեսզի ետ խլի Աղդամը՝ արդեն այն գրաված հայերից, և դա, իբր, հաջողվել է:

Հաղորդում են (Ալիևի լեզվից), թե Սուրաթ Հուսեյնովը նպատակ ունի, Էլչիբեյի հաշիվը մաքրելուց հետո, ստանձնել հանրապետության բարձրագույն պաշտոններից մեկը, ասենք՝ վարչապետ: Իսկ նրա սեփական անունից ասում են՝ նա ուրիշ ոչ մի նպատակ էլ չունի, բացի նրանից, որ իր հայրենի Ադրբեջանը փրկի հայերից:

Բայց մի՞թե դրա համար անհրաժեշտ էր զորքը քշել Բաքվի վրա (ասում են՝ այսօր ետմիջօրեին արդեն գտնվում էին Բաքվի մատույցներում):

Իսկ հայկական աղբյուրները գտնում են, որ սուտ է Աղդամը նվաճելու լուրը. հայ ինքնապաշտպաններն Աղդամը նվաճելու տրամադրություն իսկ չեն ունեցել, նրանք պարզապես ոչնչացնում են նրա կրակակետերը, որոնցից անընդհատ կրակ էր տեղում Մարտակերտի, Ասկերանի ու Մարտունու շրջանների բնակավայրերի վրա:

✧ ✧ ✧

Հեյդար Ալիևը որոշել է 21-ին, երկուշաբթի, գումարել իր հանրապետության ԳԽ-ի արտահերթ նստաշրջան, որին հրավիրել է նաև Էլչիբեյին՝ գտնելով, որ նրա ներկայությունը պարտադիր է: Իսկ Մոսկվայի հեռուստատեսությամբ էլ մշակեց նրան («Նախիջևան է տեղափոխվել իր անձի անվտանգությունն ապահովելու. ուրեմն՝ այդ մարդու համար մնացածների անվտանգությունը ոչ մի կարևորություն չի ներկայացնում: Կամ չի ուզում, որ իր ներկայությամբ ապստամբները Բաքու մտնեն և գործեն անօրինություններ: Իսկ եթե իր բացակայությամբ մտնեն ու գործեն, ոչի՞նչ»: Իրոք որ Քաջ Նազարի վարքին հատուկ վիճակ է ստեղծվել. թուրքի Քաջ Նազարը փախել, ծվարել է հայրենի Նախիջևանում և իր գյուղերին ասում է՝ դուք այդ ապստամբների հաշիվը մաքրեք, ես իմ գործը կտեսնեմ:

✧ ✧ ✧

Օրվա խոսք ու զրույցի մեծ մասի կենտրոնում է մնում Լևոն Տեր-Պետրոսյանի հարկադրանքով ԼՂՀ ղեկավարության տված համաձայնությունը ԵԱՀԽ-ի գրաֆիկ կոչված կարգադրությունը կատարելուն: Հեռուստատեսության մեկնաբան Արայիկ Մանուկյանն

այն գնահատում է որպես ՀՀ ղեկավարի քաղաքական իմաստնության ապացույցը, պնդում, որ արցախցիների համաձայնությունն ստանալու համար ոչ մի հարկադրանք կամ ճնշում չի գործադրվել, այդպիսիք գործել, ինչպես նաեւ ֆիզիկական հաշվեհարդարի սպառնալիք է տվել հակառակ թեւը: Մոտավորապես այս ոգով խոսեց նաեւ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով դեսպան Դ. Շահնազարյանը, որն անդրադառնալով նաեւ Հ. Ալիեւի քաղաքական բեմելին՝ ասաց, որ նա եւս կարժանանա նախորդների անփառունակ վախճանին, եթե փորձի ղարաբաղյան բարդույթը լուծել ուժի դիրքերից եւ հաշվի չնստի ԼՂՀ օրինական իշխանության հետ:

Հայաստանի հայ ղեկավարությունը հաշվի չի նստում ԼՂՀ օրինական իշխանության հետ, ուզում են, որ թուրքը, այն էլ Հեյդար Ալիեւը նստի:

✧ ✧ ✧

Մոսկովյան ռադիոն եւ «Ազատությունը» այս գիշեր շատ էին խոսում վրաց-աբխազական բարդույթի վերաբերյալ ռուսական վճռի մասին, որը հրապարակվել է Ելցինի հավատարիմ կամակատար Շախրայի անունից: Ասում է՝ Վրաստանը պետք է Աբխազիային ու Հարավային Օսիային շնորհի ամենաբարձր ինքնավարություն, որի համար պետք է երաշխավոր դառնան Ռուսաստանն ու շահագրգիռ մյուս մեծ տերությունները: Այսպիսով եւ Վրաստանի ամբողջությունը կպահպանվի դաշնակցային հիմունքներով, եւ ազգային փոքրամասնությունները կունենան իրենց օրինական պետական կազմավորումները:

ԼՂ-ի հարցում է՞լ այս սկզբունքը պետք է պաշտպանեն՝ հաշվի չառնելով թուրքի մարդկային (ավելի ճիշտ՝ հակամարդկային) կերպը, արդեն վաղուց աշխարհին հայտնի դարձած հայ-թուրքական հակամարտության միանգամայն անսովոր բնույթը:

✧ ✧ ✧

Հետագա օրերին պարզվեցին հայ-թուրք բախումների հետեւյալ մանրամասները.

Ա) Ալիեւը մշտական կապ է պահպանում Հայաստանի ղեկավարության հետ, վերջին օրերին չորս անգամ հեռախոսազրույց է ունեցել, հավանաբար խնդրել է, որ ճակատում անդորրը պահպանելուն օգնեն, եւ նրան «պատասխանել են, թե ղարաբաղյան զինջոկատներն իրենց չեն ենթարկվում» («Երկիր», հունիսի 22):

Բ) Հայոց ինքնապաշտպանության ճնշումից նեղված թուրքերը Ս. Հուսեյնովին խնդրել են, որպեսզի զենքով եւ զինուժով օգնի՝ դիմակայելու հայերին: Սա անմիջապես կատարել է նրանց խնդրանքը, եւ շաբաթ ու կիրակի օրերին (հունիսի 19–20) թուրքի զորքերը 5–6 կմ ետ են մղել հայկական զորքերին ու ազատագրել շաբաթվա սկզբին հայերի կողմից գրավված Բայահմեդլի գյուղը» (անդ):

**Հունիսի 21-ին** թուրքերը բորբոքել էին կռիվը՝ համարյա ամենուրեք կռվի մեջ մտցնելով օդուժը, որը կասետային ռումբեր էր գցում ԼՂՀ խորքային բնակավայրերի վրա: Այսպիսով նրանք հասել են Գիշի եւ Մուշկապատ՝ Մարտունու շրջանի կենտրոնական մասը, ռմբակոծել այդ գյուղերը: Բայց որովհետեւ վախից թռչում են շատ բարձր, ռումբերն ընկել են գյուղամերձ դաշտերում եւ էական վնաս չեն հասցրել:

Այսպես է ծավալվում Լեւոն Տեր-Պետրոսյանի ջանքերով հայությանը պարգեւված «խաղաղության փուլը»:

✧ ✧ ✧

Երեւանում Հրանտ Բագրատյանի հետ ունեցած հանդիպմանը, ապա եւ մամուլի ասուլիսում լեդի Քերոլայն Կոքսը վկայում էր, որ Արցախի բոլոր մասերում թուրքերը գրոհներ եւ ավազակային հարձակումներ են գործում հայկական դիրքերի վրա՝ առաջինը խախտելով իրենց ստորագրած պայմանադրությունը: Եւ, այսուամենայնիվ, – պատմում էր նա, – մաքառող ժողովուրդը դիմանում-պաշտպանվում է: Ո՛չ միայն պաշտպանվում, այլեւ խաղաղ գործով է զբաղված՝ հող է մշակում, վերականգնում ավերված շենքերն ու արտադրական օբյեկտները: Արցունքն աչքերին պատմեց իր տեսած ամենահուզիչ տեսարաններից մեկը՝ ջրաղացի վերագործարկման արարողությունը Մարտունու շրջանում:

✧ ✧ ✧

Ստամբուլից վերադարձած Բ. Արարքցյանը, մանկական պարզամտության մակարդակով, թվարկեց բոլոր այն միջոցառումները, որոնց ներկա էր եղել: Խոսքի տակուգլխին հիշեց, որ ամենուրեք, ամեն զրուցակցի հետ խոսել է «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի մասին»: Իսկ թե ինչ է խոսել, ինչպես ներկայացրել այդ հիմնախնդիր կոչվածը, ինչ արձագանք է ունեցել իր խոսքը..., այս մասին ոչի՜նչ:

✧ ✧ ✧

Էդուարդ Շեւարդնաձեն, երեւի պատասխանելով Ռուսաստանի պաշտոնական շրջանների՝ Աբխազիային ու Հարավային Օսիային ինքնավարություն տալու առաջարկներին, հայտարարեց, թե Վրաստանը չի կարող ինքնավարություն շնորհել Հարավային Օսիային, որովհետեւ դա կբարդացնի հենց վրաց-ռուսական հարաբերությունները:

✧ ✧ ✧

Դրությունը բարդ ու զարմանալի էր Ադրբեջանում. Սուրաթ Հուսեյնովի առաջապահ ջոկատները մտել են Բաքու եւ ջերմ ընդունելության արժանացել կառավարական զորքերի ու հրամանատարության կողմից: Տեղի է ունեցել միլլի մեջլիսի արտակարգ նստաշրջանը, որին այնպես էլ չի մասնակցել Էլչիբեյը, չնայած Ալիեւի համառ հորդորներին: Նստաշրջանն այսօր էլ ավարտվել է՝ կոչեր ուղղելով Էլչիբեյի՛ն, որպեսզի նա վերադառնա Բաքու եւ շարունակի իր պարտականությունների կատարումը, Սուրաթ Հուսեյնովի՛ն, որպեսզի նա դադարեցնի զորաշարժերը եւ բանակցություններով լուծի իրեն անհանգստացնող հարցերը, կանխի նոր արյունահեղության վտանգը, եւ Ադրբեջանի ժողովրդի՛ն, որպեսզի միասնականանա, համերաշխությամբ զորանա, բոլոր ուժերն ուղղի արտաքին թշնամու դեմ:

Գիշերային ռադիոհաղորդումներում տիրական էր այն հաղորդումը, որի համաձայն՝ Գանձակում նստած Հուսեյնովը հաշտության տրամադրություն իսկ չի արտահայտում, պնդում է Էլչիբեյի ու նրա կառավարության հրաժարականի վրա եւ նպատակ ունի դառնալ հանրապետության առաջին ղեկավարը:

Ո՞ւր է, թե սա ճիշտ ու հաստատ լինի, եւ հիմա էլ բախվեն Ալիեւի ու այս նոր բռնատիրոջ ուժերը:

**Հունիսի 22-ին** թուրքերը շարունակում էին հրետակոծել ու ռազմական ինքնաթիռներից ռմբակոծել ԼՂՀ սահմանամերձ բնակավայրերը: Կան զոհեր ու վիրավորներ: Վաղ առավոտյան Աղդամի կողմից բավական խոշոր մի զորամաս գրոհի է դիմել դեպի Ասկերան: Ինքնապաշտպանները հակահարված տալով ետ են մղել:

✧ ✧ ✧

Երեւան է ժամանել ԼՂՀ ԳԽ-ի նախագահի նոր պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, որին ընդունել են ՀՀ ղեկավարներից ոմանք: Թե ի՛նչ են խոսում, պայմանավորվում, առայժմ հայտնի չէ:

✧ ✧ ✧

Բ. Արարքցյանն այսօր մամուլի ասուլիսում հայտնեց, թե Ստամբուլում առանձին հանդիպում է ունեցել Թուրքիայի պրեզիդենտ Դեմիրելի հետ, խոսել են Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԵԱՀԽ-ի վերջին առաջարկությունների մասին։ Սակայն հենց այստեղ էլ կտրեցին նրա խոսքը, եւ չիմացանք, թե ինչպես է ներկայացրել իրենց անձնատվությունը։

✧ ✧ ✧

Ադրբեջանի վիճակը մնում է միջազգային հասարակայնության ուշադրության կենտրոնում։ Էլչիբեյն իր հայրենի Նախիջեւանում է եւ Բաքու վերադառնալու համար պահանջում է, որպեսզի այնտեղից դուրս քշեն խռովարարներին։ Իսկ եւ իսկ քաջնազարավարի, երբ ինքն է հանրապետության զինված ուժերի գլխավոր հրամանատարը, եւ եթե իր ժողովուրդը ռազմական որեւէ գործողության մեջ է, ինքը պիտի լինի նրան ղեկավարողը։

Իսկ Սուրաթ Հուսեյնովը Գանձակից հաղորդել է, թե սուտ է իր համաձայնության լուրը՝ Ալիեւի հետ գործակցելու վերաբերյալ, ինքը նպատակ ունի ասպարեզից դուրս մղել Էլչիբեյին, իսկ ժողովուրդը եթե իրեն պրեզիդենտ կընտրի, ինքը չի հրաժարվի այդ պարտականությունից։

Շատ է խոսվում Ադրբեջանի ռազմական նոր պատրաստությունների, ծավալուն արշավանքների նախապատրաստվելու մասին։ Ռուսաստանի ԳԽ-ի պատգամավոր Սերգեյ Բաբուրինը հայտարարել է, թե իր կառավարությունը մեծաքանակ զենք ու զինամթերք է տրամադրել Ադրբեջանին, եւ մոսկովյան լրատվական մարմինները մի գլուխ այդ լուրն են մեկնում՝ եզրակացնելով, որ Ռուսաստանը հարազատ է մնում հավասարակշռելու քաղաքականությանը. Լեռնային Ղարաբաղը նեղում է Ադրբեջանին, հիմա էլ սրան պիտի օգնել։

✧ ✧ ✧

**Հունիսի 23-ին** ռազմաճակատի բոլոր ուղղություններում՝ արցախյան ու հայաստանյան, անդորր է եղել։

Դե՛, հասկանալի է, կռիվը սովորաբար թուրքն է բորբոքում, իսկ նրա գործերը հիմա այնպես խառնաշփոթ են, որ գլուխն է կորցրել։ Ասում են՝ Բաքվում հիմա տիրություն են անում եւ՛ կառավարական զորքերը, եւ՛ ապստամբները։ Վերջիններս մայրաքաղաքի շրջաններից մեկում արդեն պետական-պաշտոնական փոփոխություններ են կատարել։ Սուրաթ Հուսեյնովը հայտարարել է, թե ինքը պատրաստ է ստանձնելու հանրապետության ղեկավարությունը, իսկ Ալիեւն այդ հայտարարությունը համարել է վտանգավոր։

ԱՄՆ-ի պետքարտուղարը հեռագրով Էլչիբեյին հայտնել է իր մտահոգությունը եւ պատրաստակամությունը՝ ճանաչելու միայն ժողովրդի ընտրած պրեզիդենտին։ Էլչիբեյն ինքն էլ Օրդուբադի շրջանի իր հայրենի գյուղում, Բաքվից ժամանած մշակութային պատվիրակությունն ընդունելով, վճռաբար հայտնել է, թե ինքը պաշտոնից կհրաժարվի միայն հանրաքվեից հետո։ Իսկ՝ Հուսեյնովի, հավանաբար նաեւ Ալիեւի, հետ բանակցելու առաջարկը մերժել է («Այդ էր մնացել, որ ես բանակցության նստեմ ինչ-որ գնդապետի հետ»)։ Միլլի մեջլիսի հերթական արտակարգ նիստում ընդդիմության ղեկավար Էթիբար Մամեդովն առաջարկել է պրեզիդենտական պարտականությունները հանձնարարել Հեյդար Ալիեւին, քանի որ Էլչիբեյն իրեն լրիվ սպառել է՝ նախապես էլ անարժան լինելով այդ պաշտոնին։



✧ ✧ ✧

Այսօր հաղորդում եղավ մի քանի օր առաջ Մոսկվայում, Էստրադայի թատրոնի դահլիճում տեղի ունեցած մեծ խորհրդաժողովի մասին, որը Ռուսաստանի մայրաքաղաքի հայկական համայնքն է կազմակերպել՝ ստեղծելու համայնքի ղեկավար կորիզը- ասամբլեա՝ նշանավոր բարերար ու ձեռներեց Սերգեյ Ջիլավյանի ղեկավարությամբ։ Ասամբլեան պիտի համախմբի Մոսկվայի եւ Ռուսաստանի հայության ուժերը, սերտացնի կապերը Հայաստանի հետ, բոլոր միջոցներն ուղղի համազգային խնդիրների լուծմանը։

✧ ✧ ✧

Ռուսաստանի Գրողների միության մեծ դահլիճում էլ երեկ բարոնուհի Քեռոլայն Կոքսի հանդիպումն է եղել մայրաքաղաքի մտավորականության ներկայացուցիչների հետ։ Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխնախագահը պատմել է 16-րդ անգամ ԼՂՀ այցելելու հանգամանքները, իր տպավորությունները ազատության եւ անկախության համար մաքառող արցախահայության այսօրվա գործերի մասին, պատմել Քալբաջարից գերի եւ պատանդ վերցվածների մարդկային-արժանապատիվ վիճակն Ստեփանակերտում, դրա հետ համեմատել այն տառապանքները, որ իր տեսած հայ գերիներն էին քաշում Բաքվի ու Գանձակի տանջարաններում։ Անդրադառնալով շարունակվող պատերազմին՝ նա ասել է. դատեցեք ինքնե՛րդ՝ այսօր աշխարհում լոկ մի պետություն է օգտագործում «Երկիր-երկինք» հրեշավոր հրթիռը, եւ դա փոքրիկ ու ազնվական Արցախի դեմ կռվող, նրա վրա իր բռնատիրությունը վերահաստատելու մարմաջով տառապող Ադրբեջանն է։

Բարոնուհին խոստացավ հատուկ նամակով իր տպավորություններն ու մտահոգությունը հաղորդել ԵԱՀԽ-ի ինն տերությունների ղեկավարներին, որոնք հակամարտության կողմերից մեկից պահանջում են ամեն տեսակ զիջում՝ փոխարենը չտալով ոչինչ։

Բարոնուհու կարծիքով՝ համաշխարհային հանրությունը բավարար չափով պատկերացում չունի այս շրջանում տիրող իրավիճակի մասին։

Այսպես, լեդի Կոքսի խոսքերով, բրիտանական հեռուստատեսության վերջին ծրագրերից մեկում ղարաբաղյան հայերի ինքնապաշտպանությունը համեմատվում էր բոսնիացի սերբերի գործողությունների հետ։ «Դա աբսուրդ է, քանզի 160 հազարանոց հանրապետությունը չի կարող բռնության ենթարկել 7 միլիոնանոց պետությանը», ասաց բարոնուհին։

✧ ✧ ✧

Երեւան ժամանած Կարեն Բաբուրյանը, որ երեկ ու այսօր հանդիպումներ է ունեցել ՀՀ համարյա բոլոր բարձր ղեկավարների հետ, այսօր մամուլի աշխատողների հրավիրած ասուլիսին զրույց ունեցավ, բացատրեց ԼՂՀ-ում տիրող վիճակը, ԵԱՀԽ-ի առաջարկությանն իր տված դրական պատասխանի հանգամանքները պատմեց, վստահեցրեց, որ Արցախը կշարունակի իր ինքնավայել պայքարը, կհասնի հաղթանակի։

Հայաստանի ղեկավարության հետ հարաբերությունների մասին հարցին Կ. Բաբուրյանը պատասխանեց, որ Հայաստանի ղեկավարության եւ իրենց փոխհարաբերությունների լրիվ փոխըմբռնման փուլում են, ինչի վկայությունն է իր այս այցելությունը։

«Հնարավոր համարո՞ւմ եք որեւէ փաստաթուղթ, ըստ որի Լեռնային Ղարաբաղը կմնա Ադրբեջանի կազմում» հարցին Կարեն Բաբուրյանը պատասխանեց առանց մտորելու՝ «Անհնար է»։ Նա նշեց, որ կա ժողովրդի՝ հանրաքվեով արտահայտած կամքը, եւ Ղարաբաղի որեւէ իշխանություն չի կարող դրան դեմ գնալ, եթե չկա նոր հանրաքվեի արդյունքը։ «Այսօր դրա միակ երաշխավորը մեր բանակն է»,- ավելացրեց ԳԽ-ի նախագահի պաշտոնակատարը։

«Ես չգիտեմ, ո՛վ առաջինը կճանաչի ԼՂՀ-ը, բայց մենք կպարտադրենք, եւ այդ ճա-

նաչումը, այնուամենայնիվ, կկայանա», – հայտարարեց Բաբուրյանը։

Նաեւ հայտարարեց, որ եվրոպական երկրների եւ այլոց կողմից թելադրված միակողմանի զիջումներ, տարածքային զիջում, կամ այլ պարտադրանք ԼՂՀ-ը չի ընդունի («Երկիր», հունիսի 24)։

✧ ✧ ✧

**Հունիսի 24-ին** թերթերը հրապարակեցին ԵԱՀԽ-ի ԼՂ-ի հարցով հանձնաժողովի նախագահ Մարիո Ռաֆայելիի հեռագիրն Ադրբեջանի խորհրդարանի նախագահ ընտրված Հեյդար Ալիեւին։ Այնտեղ ասվում էր. «Թույլ տվեք ամբողջ սրտով շնորհավորել Ձեզ Ձեր հանրապետության համար այս դժվարին ժամանակներում Ադրբեջանի ԳԽ-ի նախագահ ընտրվելու կապակցությամբ։ Այժմ ես պատրաստվում եմ այցելել Ձեր երկիրը Լեռնային Ղարաբաղի բարդույթի խաղաղ կարգավորման աշխատանքների շրջանակներում։ Ադրբեջանն այս խնդրում բավականին կառուցողական դիրքորոշում ունի։ Ինձ հաճելի է նշել, որ Ձեր Հայտարարությունում Դուք ամբողջությամբ համաձայն եք ԵԱՀԽ-ի նախաձեռնություններին։ Տեղյակ եմ Ձեր մեծ փորձի մասին եւ հույս ունեմ կհանդիպենք Բաքվում։

Պատասխան հեռագրում Ալիեւն իրեն երջանիկ էր համարում, որ հնարավորություն պիտի ունենա Մ. Ռաֆայելիին դիմավորել Բաքվում (իսկ մենք նրա հին ու հայտնի փորձից գիտենք, թե ինչպե՛ս է ընդունում, կաշառում, իր հարցերը լուծում)։

✧ ✧ ✧

**Հունիսի 25-ին** շարունակվում էր ադրբեջանական խառնակչությունը. միլլի մեջլիսն Էլչիբեյին զրկեց հանրապետության պրեզիդենտի դիրքից՝ նրա պարտականությունները հանձնելով խորհրդարանի նախագահ Ալիեւին։ Էլչիբեյն ընդվզեց սրա դեմ, կատարածը համարելով ապօրինություն, խոստանալով վերադառնալ Բաքու եւ ստանձնել ժողովրդընտիր պրեզիդենտի դերը։ Իր Նախիջեւանյան Քելեքի գյուղից սպառնում էր մինչեւ վերջ պայքարել հարազատ ազգի տված մանդատի համար։

Սուրաթ Հուսեյնովը գրգռված էր իր ընդվզումի դեմ կառավարական մարմինների ձեռնարկած միջոցներից. սպանել են Գանձակի իր երեք համախոհներին՝ սրանց վրեժը կհանի, մեկի դեմ՝ տասը։

Հեյդար Ալիեւը մեջլիսում հայտարարեց, թե Լենքորանի կողմերում թալիշները կազմել են իրենց Մուղանի Թալիշական հանրապետությունը։

Սա շատ հետաքրքիր նորություն էր։ Իսկ լեզգիների անկախության պայքարն ու հայտարարելիքը միշտ էլ խափանում էին։

✧ ✧ ✧

Թուրքի լրտեսության համաձայն՝ անցած շաբաթ հայ ինքնապաշտպանությունը կորցրել է 50 զինվոր, մեկ տանկ ու հետեւակի մեկ մարտական մեքենա։ Իսկ մերոնց տվյալների համաձայն՝ թուրքերը 70 ասկյար են կորցրել միայն Մարտակերտի մոտերքում, ուր նրանք լքել են իրենց դիրքերը, վերջում էլ հանձնել իրենց համար կենսական նշանակություն ունեցող Մատաղիսը, որի մոտ է գտնվում Սարսանգի ջրամբարի ջրաբաշխիչ կայանը։

**Հունիսի 26-ին** Մարտակերտի շրջանում մարտերը խիստ թեժացել էին՝ նախապես բորբոքված լինելով թուրքի մեծաթիվ օդուժի օժանդակությամբ։ Ապա բուռն գրոհներ էին ձեռնարկվել Մոխրաթաղ, Մաղավուզ ու Ջանյաթաղ գյուղերի վրա։

Մեր ինքնապաշտպանները հակագրոհի ելած, համառորեն դիմադրում էին, եւ թերեւս միակ մխիթարական բանն այն է եղել, որ վայր են գցել թշնամու երկու ինքնաթիռ։



ԼՂՀ կառավարությունը հրապարակեց հայտարարություն, որով միջազգային հեղինակավոր մարմիններին ու համաշխարհային հանրությանը հաղորդվում էր, որ Ադրբեջանի ասպատակիչները նորից թեժացրել են պատերազմը՝ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի միջնորդություններին տված դրական պատասխաններից անմիջապես հետո։ Հետաքրքիրն այն էր, որ սա կատարվում էր Հ. Ալիեւի կառավարության գլուխ գալուն պես, մի մարդու, որն իր բեմելի առթիվ հրապարակած առաջին իսկ կոչերում հանդես էր գալիս որպես բարդույթը քաղաքական եղանակով լուծելու կողմնակից։

✧ ✧ ✧

Մոսկովյան «Իզվեստիան» հրապարակեց իր թղթակցի հարցազրույցը Ադրբեջանի ապստամբության ղեկավար Սուրաթ Հուսեյնովի հետ։ Եվ այս գնդապետը, 34 տարեկան, որն անցյալ տարի ղարաբաղյան ճակատում ձեռք բերած հաջողությունների համար պրեզիդենտ Էլչիբեյից ստացել էր Ազգային հերոսի կոչում, այստեղ շատ խաղաղասեր ու հանդուրժող կեցվածքով էր հանդես գալիս։ Ահա զրույցի այն մասը, որ վերաբերում է այդ խնդրին։ «Ինչպե՞ս եք տեսնում ղարաբաղյան խնդրի լուծումը» հարցին պատասխանել է այսպես.

Ադրբեջանն ու Հայաստանը միշտ հարեւաններ են եղել եւ կլինեն։ Ղարաբաղի պատերազմը միանշանակորեն ղեկավարվում է արտասահմանից, այն օտարերկրյա մաֆիոզ խմբերի կամակատարությունն է։ Այն, ինչ կատարվում է հիմա, ոչ ոքի հարկավոր չէ՝ ո՛չ ադրբեջանցիներին, ո՛չ հայերին։ Այդ խնդիրը պետք է լուծեն ոչ թե հայերն ու ադրբեջանցիները, այլ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը։ Բոլորս պետք է ուշքի գանք։ Չպետք է մոռանանք, որ Միության փլուզումն սկսվեց հենց Ղարաբաղից։ Օվկիանոսից այն կողմ ցանկանում էին փլուզել Միությունը։ Դա սկսվեց Ղարաբաղից։ Երկու հանրապետությունները, որոնք մեկ ընտանիք էին, պետք է դա իմանան եւ ամեն ինչ չբարդեն «օբյեկտիվ պրոցեսների» վրա։ Մեզ քշել են ճահիճը, եւ մենք բոլորս միասին պետք է այնտեղից դուրս գանք եւ հետո նոր որոշենք, թե ով ի՛նչ ճանապարհով է գնալու։

– Ինչո՞վ են պայմանավորված ադրբեջանական բանակի անհաջողությունները Ղարաբաղում։ Ինչի՞ շնորհիվ էին, ձեր կարծիքով, Ղարաբաղում հաջողությամբ կռվում ձեզ ենթակա ստորաբաժանումները։

– Եթե հաջողություններ եղել են, եղել են ինձ հետ կռվող մարդկանց անձնուրացության շնորհիվ։ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Աբուլֆազ Էլչիբեյի թիմերը ղեկավարվել են մեկ կենտրոնից, թող դա իմանան եւ ադրբեջանցիները, եւ հայերը։ Մենք չպետք է վատ հարեւաններ դառնանք թեկուզ այն պատճառով, որ տասը-քսան տարի հետո մեր երկու ժողովուրդները, միեւնույն է, կհաշտվեն։

Հանրապետության նոր ղեկավարությունը պետք է ընթանա բարոյական ճանապարհով։ Բավական է ժողովրդին խաբել, ծախել սեփական հողը։ Մենք որպես հարեւաններ, պետք է պայմանավորվենք քաղաքական ճանապարհով լուծել ղարաբաղյան հարցը։ Այլապես տասը տարի հետո երիտասարդ սերունդը մեզ չի ների»։

Ուրեմն, Ադրբեջանում հրով ու սրով դեպի իշխանության գահերից մեկն առաջացող «Ազգային հերոսը» գտնում է, որ պետք է «քաղաքական ճանապարհով լուծել» Ղարաբաղի հարցը, ապա թե չէ, սերունդները չեն ների...

✧ ✧ ✧

**Հունիսի 26–27-ին** թուրքերը նոր կատաղի հարձակումներ էին սկսել Մարտակերտի շրջանի տարածքում, հատկապես շրջկենտրոնի կողմերում։ Մարտերին մասնակցում էր նաեւ շտապ այստեղ ուղարկված սուրաթովյան զորամասը։ Ինքնապաշտպանները ոչ միայն ետ մղեցին թշնամուն, այլեւ առաջ անցնելով՝ տիրեցին Մարտակերտ քաղաքի եւ Մատաղիս ու Լեւոնարխ գյուղերի մերձակա բարձունքներին, վերջնականապես փակեցին Մարտա-

Հարցի քննարկմանը մասնակցում էին հանձնաժողովի անդամներ. ՀՀ ԳԽ-ի Նախագահության անդամ եւ հանձնաժողովի նախագահ Ս. Բաղդասարյանը, ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը, ԼՂՀ ԳԽ-ի Նախագահության անդամ Հ. Գրիգորյանը եւն: Քննարկվող հարցի վերաբերյալ առաջարկվեց ՀՀ ԳԽ-ի որոշման նախագծի մի տարբերակ, համաձայն որի Հայաստանի հանրապետությունը պետք է ճանաչի ԼՂՀ անկախությունը եւ հռչակագիրը: Առաջարկվեց նշված տարբերակը ներկայացնել ՀՀ Գերագույն խորհրդի հանձնաժողովների քննարկմանը, այն առաջիկա նստաշրջանի օրակարգ մտցնելու համար:

Հանձնաժողովի արտագնա նիստին մասնակցում էին եւ ելույթներով հանդես եկան ՀՀ ԳԽ-ի նախագահի տեղակալ Բաբուրյանը եւ ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահի խորհրդական Ա. Ղուկասյանը» («Երկիր», հուլիսի 1):

Աշխարհն էլ ոտքի կանգնի, Լ. Տեր-Պետրոսյանն այս հարցում իր մերժողական դիրքից հրաժարվողը չէր: Առհասարակ այն ե՞րբ է եղել, որ նա իր, թեկուզ բացահայտորեն սխալ ու վտանգավոր-վնասակար դիրքից հրաժարվեր... Բայց հետաքրքիր է, որ խելամիտ մարդիկ պարզամտորեն մտածում են, թե չդադարող կաթիլը միշտ էլ քար կծակի:

**Հուլիսի 1**. Երեկ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին է ներկայացրել իր բողոքը՝ հայերի Մարտակերտի շրջանում կատարած նոր ռազմական ոտնձգությունների դեմ, որոնց արդյունքում «բռնագրավվել են Աղդամ քաղաքն ու ադրբեջանական 20 գյուղեր»:

Ուրեմն, Մարտակերտի եւ նույն շրջանի գյուղերի ազատագրումն էր համարվում «բռնագրավում»:

Մոսկվան Ադրբեջանից առնելով, հաղորդում է, թե ԼՂ-ի ռազմաճակատում թուրքերը կասեցրել են Հայաստանից նոր ժամանած զորամիավորումների առաջխաղացումը Մարտակերտի շրջանում, իսկ Աղդամի համար կռիվ է գնում երեք ուղղությամբ՝ Ասկերանից, Մարտունուց ու Մարտակերտից, քաղաքից ընդամենը 2-3 կմ հեռավորությամբ:

Հեյդար Ալիեւը հայտարարել է, թե ինքը վերջին օրերին Հայաստանի ղեկավարների հետ մի քանի հեռախոսազրույց է ունեցալ Ղարաբաղի վերաբերյալ (Երեւի պայմանավորվել են, թե ինչպես հարգեն Ադրբեջանի ամբողջականությունը՝ նրան մատաղ անելով արցախահայության շահերը):

**Հուլիսի 2-ին** իմ կանխազգացումը կատարվեց. առավոտյան թուրքերը լայնածավալ գրոհներ էին ձեռնարկել Մարտակերտի ու Հադրութի շրջաններում: Հադրութի շրջանում նրանք գրավեցին Բլութան, Ցոր, Մելիքաշեն ու Ծամձոր գյուղերը, Մարտակերտի շրջանում՝ Փափրավենդը: Այժմ նրանց գլխավոր հարվածն ուղղված է Հադրութի շրջկենտրոնի վրա: Մեր ինքնապաշտպանները հակահարձակման են անցել, ետ մղել թշնամուն, սակայն կռիվը շարունակվում է, եւ թուրքերը նոր ուժեր են բերում ճակատի գոտի: ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանն այս առթիվ հրապարակել է հայտարարություն՝ նշելով, որ թուրքը, սույն հարձակողական քայլերը ձեռնարկելով, միաժամանակ համաշխարհային հասարակայնությանը մոլորության մեջ է գցել հայկական նոր արշավանքի շուրջ սարքած իր ստերով ու հիստերիկ քարոզներով:

Նման մի հայտարարությամբ էլ ՀՀ ԱԳՆ-ն է հանդես եկել:

Այս հայտարարությունները կարդացին միայն Հայաստանի ռադիոյով ու հեռուստատեսությամբ: Իսկ թուրքի ստերն ու քարոզները հնչում են Մոսկվայից, արտասահմանյան ռադիոձայներից:

✧ ✧ ✧

«Վաշինգտոն փոստ» թերթը վերջերս (հունիսի 30-ին) տպել էր խմբագրական մի հոդված, որով Ադրբեջանում կատարվող պետական մեքենայությունների համար մեղադրում էր Ռուսաստանին: Այնտեղ ասված էր. «Ժողովրդավարականորեն ընտրված նախագահը դիմել է փախուստի՝ ենթարկվելով վարկաբեկված հին կոմունիստի ճնշմանը եւ երիտա-



սարդ, սակայն արդեն նույնպես վարկաբեկված արկածախնդրի զինվորական հետապնդումներին... Ընտրյալ նախագահի դեմ պայքարը մղվել է ռուսական զենքի մասնակցությամբ, ինչը պետք է լուրջ նախազգուշացում հանդիսանար թե՛ Ադրբեջանի, թե՛ նախկին Խ. Միության այլ շրջանների համար», - զգուշացնում էր խմբագրականը, ապա շարունակում. «տագնապը ծագեց տեղի հայերի կողմից Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանից անջատելու դեմ ադրբեջանցիների մղած պայքարի հետեւանքով»:

«Ընդհուպ մինչեւ Բաքվի վերջին իրադարձությունները, Եվրոպայի եւ ԱՄՆ-ի դիվանագետները փորձում էին Ադրբեջանին ու Հայաստանին, ինչպես նաեւ Ղարաբաղի հայերին նստեցնել բանակցությունների սեղանի շուրջ: Այդ ջանքերն անհրաժեշտ է շարունակել, սակայն անհրաժեշտ է նաեւ վերադարձնել Ադրբեջանի օրինական կարգով ընտրված ղեկավարներին, եւ, հասկանալով հանդերձ Ելցինի կառավարության դժվարությունները, նրա անկասելի պարտականությունը համարել նաեւ թույլ չտալ, որ ռուսական բանակի որոշ տարրեր նպաստեն ստեղծված քաոսին»:

Հայտնի էր, թե Բորիս Ելցինն ինչպիսի՜ զզվանքով էր խոսում «վարկաբեկված հին կոմունիստ» Ալիեւի մասին եւ Գորբաչովին ի՛նչ թուքումուր էր տալիս՝ նրա հետ նույն Քաղբյուրոյում լինելու, նրա հետ հաշվի նստելու համար: Հիմա այդ քառակի վարկաբեկված կոմունիստն էր Ադրբեջանի տերն ու առաջնորդը: Հետաքրքիր է, թե ինքը՝ Ելցինը, ինչպես է վարվելու նրա հետ, ինչպես է արդարացնելու մարդկային բարոյական նորմերի դիրքերից հոխորտացած Բորիս Ելցինը:

**Հուլիսի 3-ին** հաղորդեցին երեկվա մարտերի մանրամասները. Հադրութի մարտերի հետեւանքով մերոնք ունեն 10 վիրավոր: Թուրքը կորցրել է 30 ասկյար, մի տանկ, մեկ գրահամեքենա, մեծաքանակ զենք ու զինամթերք:

Այսօր Աղդամի շրջանից հրետակոծել են Ասկերանի ու Մարտակերտի մի շարք բնակավայրեր: Մերոնք պատասխան հարվածներով լռեցրել են թշնամու կրակակետերը:

✧ ✧ ✧

Բաքվում այսօր մեծ հանրահավաք է եղել՝ ի պաշտպանություն պրեզիդենտ Էլչիբեյի: Կառավարական զորաջոկատները ցրել են ցուցարարներին՝ ծեծի ու զանազան կտտանքների ենթարկելով մարդկանց, որոնցից շատերը կանայք են եղել,- հաղորդեցին մոսկովյան հեռուստատեսությամբ:

Ադրբեջանի միլլի մեջլիսում ռազմաճակատային հարց են քննարկում, եւ Ալիեւը (հեռուստատեսության թղթակցին) պատմում է, որ, օգտվելով իրենց երկրում տիրող քաղաքական անբարենպաստ վիճակից, հարեւան հանրապետությունը պատերազմն առավել թեժացրել է, մի քանի ճակատներում (օրինակ Ֆիզուլու եւ Կուբաթլիի շրջանների դեմ) ձեռնարկել այնպիսի գրոհներ, որոնց հետեւանքով ավերվում են բնակավայրերը, կոտորվում են խաղաղ բնակիչները: Այդ նշան է, որ Հայաստանն արհամարհում է ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի, «3»-ի, «9»-ի հեղինակավոր միջնորդությունները, եւ հարկ է, որ համաշխարհային հանրությունն օգնի Ադրբեջանին՝ փրկվելու Հայաստանի ինտերվենցիայից,- հեռուստատեսությամբ այսպես էլ ասաց վերջին օրերին հեռուստաաստղ դարձած Հեյդար Ալիեւը:

**Հուլիսի 4-ի** ժամը 15:20-ից մինչեւ 16-ը Մոսկվայի հեռուստատեսությամբ հաղորդեցին հարցազրույց Ադրբեջանի նոր խալիֆ դարձած Հեյդար Ալիեւի հետ: Առաջին իսկ հարցին, որ վերաբերում էր Ադրբեջանի այսօրվա վիճակին ու հեռանկարին, տվեց մի պատասխան, որի երկրորդ մասում հայերն էին, նրանց բռնագրավչական ձգտումներն ինքնիշխան ու անկախ Ադրբեջանի դեմ, մանավանդ «հայկական ինտերվենցիան՝ առավել բորբոքված վերջին երեք օրերի ընթացքում»:

Իսկ հինգերորդ հարցին, որ այսպիսին էր՝ «Ինչպե՞ս եք նայում Ղարաբաղի խնդրին, լուծման ի՞նչ եղանակ ու ճանապարհ եք տեսնում», պատասխանեց այսպես. «Դա շատ բարդ հարց է եւ բարդացել է այն պատճառով, որ ժամանակին չի լուծվել. հինգ

տարի անընդհատ խճճվել է՝ ստանալով արյունալի բնույթ: Հիմա մենք փորձում ենք գոնե կրակը դադարեցնել, չի ստացվում: Հակառակը, հայկական զորամիավորումները, չբավարարվելով բռնագրաված տարածքներով, նոր հողամասեր ու բնակավայրեր են գրավում: Երեկ Բաքվում տեղակայված դեսպաններին հրավիրել, ցույց եմ տվել ինտերվենցիայի այդ նոր դրսեւորումները, եւ նրանք տեսել են, թե հայերը ինչպես են նորանոր գոտիներ ձեռնարկում, կոտորում խաղաղ բնակչությանը, ավերում բնակավայրերը... Խնդրել եմ, որ նրանք դիմեն իրենց երկրների կառավարություններին, ոտքի հանեն աշխարհի խաղաղասեր ուժերին: Երեկ հեռախոսով կապվել եմ Հայաստանի ղեկավարության հետ, խնդրել, որ զսպեն իրենց զորքերին: Մի քանի օր առաջ ԵԱՀԽ-ի ղարաբաղյան խմբի նախագահ մեծապատիվ Մարիո Ռաֆայելին է պատրաստակամություն հայտնել գալու մեզ մոտ, լինելու Բաքվում, Երեւանում, Խանքենդիում ու Աղդամում, գործադրելու բոլոր ջանքերը... Վաղը պիտի ժամաներ... Բայց նա խնդրեց հաղորդել, թե ի՞նչ երաշխիքներ կան իր խմբի ապահովության համար... Եվ այսօր հայերը կատաղի հարձակում են գործել Աղդամի ուղղությամբ..., այո՛, ժամ առաջ ինձ զեկուցեցին, թե հայերն արդեն բռնագրավել են Բոյահմեդլի գյուղը (դա գտնվում է Մարտակերտ-Աղդամ ճանապարհի վրա, Փափրավանդանից հարավ-արեւելք.- Բ.ՈՒ.): Ի՞նչ անուն տամ այս ամենին: Ես կարծում եմ՝ հիմա արդեն ամբողջ պատասխանատվությունն իր վրա պիտի վերցնի Հայաստանի ղեկավարությունը, որպեսզի շահագրգիռ մյուս պետությունների հետ միասին կարողանանք ելք գտնել, փոխըմբռնումի հասնել»:

Ի՞նչ կարելի է ասել այս ամենից հետո: Նախ, չի կարելի չնկատել, որ այս հարցազրույցը հենց Ալիեւի հրահրումով է կազմակերպվել: Վերջին օրերին իրենց ռազմական ուժերի հարձակումներն ու ձախողումները պետք է թաքցներ, Հայաստանը ներկայացներ իբրեւ միջազգային պայմանագրի ու օրենքների չենթարկվողի, որպեսզի սա ետ քաշեր իր ուժերը, եւ Ադրբեջանը հնարավորություն ստանար նախապատրաստվելու նոր ու կործանիչ հարվածների:

Այդ, թե հեռուստադիտողն ի՛նչ եզրակացություն կհանի Ալիեւի քաղաքական ու բարոյական կերպարի, իր ներկայացրած հանրապետության, նրա այսօրվա ու վաղվա մասին, սա միանգամայն բարդ խնդիր է եւ այս պահին ինձ չի էլ հետաքրքրում:

Բայց որ իրականության խորքին ու լայնքին անծանոթ մարդկանց ցույց տվեց ղարաբաղյան բարդույթի մեջ իր դիրքի «արդարությունը», բացատրեց, թե իրենց դեմ կռվող, իրենց նորանոր տարածքները նվաճող հայերը (ո՛չ թե ղարաբաղցիները, ո՛չ թե ղարաբաղի հայերը, որպեսզի տարբերակիչ չգիտե եւ չի էլ ընդունում), այո՛, հայերը, հենց Հայաստանից եկած անկուշտ նվաճողները, դաժան ու անօրեն այդ ասպատակիչները, խախտում են միջազգային օրենքներ ու պարտավորություններ,- իր այս խնդիրը նա իրականացրեց հաջողությամբ, իրեն հատուկ խորամանկությամբ:

Սրանից հետո ի՛նչ պիտի անի Հայաստանի ղեկավարությունը: Բավական քաջություն, խելք ու հմտություն կունենա՞ մերկացնելու նրա սուտն ու խարդավանքը, տալու այն պատասխանը, որին արժանի է իր դիվային ծրագրերն իրականացնելու ճանապարհին ոչ մի ստորության առաջ կանգ չառնող Ալիեւը... Ա՛յ, այստե՛ղ է, որ ես կասկածում եմ: Համենայն դեպս կապրենք-կտեսնենք:

* * *

Այսօր երեկոյան «Ազատություն» ռադիոն հաղորդեց, թե ԼՂ-ի զորամիավորումները գրավել են Աղդամի շրջանի ինն գյուղեր եւ այժմ կռվում են Աղդամի ներսում՝ նպատակ ունենալով ոչնչացնել թուրքի այդ ռազմական կենտրոնը, որտեղից սկսվում են հրետակոծություններն ու հարձակումները ԼՂՀ հյուսիս-արեւելյան ամբողջ ճակատի ուղղությամբ:

Սուրաթ Հուսեյնովը հեռուստատեսությամբ ելույթ է ունեցել, պահանջել, որ հայրենիքը ծանր կացությունից փրկելու համար զորակոչի ենթարկվեն հանրապետության զորակոչային հասակի բոլոր տղամարդիկ: Սպառնացել է խստագույն պատժի ենթարկել այն ասկյարներին, որոնք փախել են Աղդամից՝ հայկական հարձակման դեմ ճակատը մերկ թողնելով:

Հեյդար Ալիեւը հեռախոսով կապվել է Լ. Տեր-Պետրոսյանի հետ, խնդրել, որ սա օգնի Ղարաբաղում դրությունը կարգավորելու եւ մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, թե ԼՂ-ի զորքերն այլեւս չեն կառավարվում:

**Հուլիսի 5-ին** ցերեկով տարածված լրատվական հաղորդումների համաձայն՝ ԼՂՀ ինքնապաշտպանները գրավել են Աղդամի շրջանի հինգ գյուղեր (Ալիեւը երեկվա «հեռուստահամերգում» հայտնել էր միայն մեկի՝ Բոյահմեդլիի գրավումը). Մտել Աղդամ քաղաքը, եւ այժմ կռիվ է գնում այդ քաղաքի փողոցներում:

Այսօր ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը պաշտոնական հայտարարությամբ հերքեց այդ լուրերը՝ հաստատելով միայն հայ ինքնապաշտպանների պատասխան հարվածները թուրքի օդուժի ու ծանր զինատեսակների կիրառության դեմ: ԼՂՀ ինքնապաշտպանները ոչ թե գրավել են Աղդամը, այլ լռեցրել են նրա կրակակետերը, որոնցից վերջին օրերին անդադար հրետակոծվում ու ռմբակոծվում էին Ասկերանի շրջանն ու հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը,- հայտարարեց Բաբուրյանը:

Ի հաստատումն ԼՂՀ ԳԽ-ի հայտարարության՝ լրատվական մարմինները տեղեկացրին, որ օրվա ընթացքում ռազմական մի քանի ինքնաթիռներ շուրջ մեկ տասնյակ ռումբեր են նետել Ստեփանակերտի վրա: Ինքնապաշտպանները վայր են գցել նրանցից մեկը:

Մոսկվայի հեռուստատեսության հաղորդածից. «Հայ ինքնապաշտպաններն ազատագրել են ամբողջ Լեռնային Ղարաբաղը եւ այսօր նրա սահմանների մոտ ետ մղեցին ադրբեջանական զորքերի նոր հարձակումները»:

Ուրեմն, նա ընդունում է, որ կա Լեռնային Ղարաբաղի պետական միավոր, որի սահմաններից այն կողմ են Ադրբեջանն ու նրա զորքերը:

Ապա միացնում է Մախս Մամեդովի լրատվությունը, եւ սա էլ խոսքը տալիս է Ալիեւին, որը հարձակվում է Հայաստանի վրա, թե այն չի ենթարկվում միջազգային հեղինակավոր մարմինների գործող օրենքներին, չի հարգում հեղինակավոր տերությունների միջնորդությունները, այլ իր բռնագրավումներն է շարունակում եւ վերջին երկու օրերի ընթացքում արդեն նվաճել է բազմաթիվ գյուղեր Աղդամի ու Ֆիզուլու շրջաններում: Իսկ համաշխարհային հանրությունը նրան չի ճանաչում որպես բռնագրավիչի, որն իր տիրապետության տակ է առել անկախ ու ինքնիշխան Ադրբեջան հանրապետության տարածքները:

Հայկական լրատվական մարմինների հաշվով՝ վերջին երկու օրերի մարտերում հայ ինքնապաշտպանները հաջողությամբ կասեցրել են թուրքերի հարձակումները, ոչնչացրել են թշնամական մեկ ՏՈՒ-25 ինքնաթիռ, մեկ «Գրադ» կայանք, 100 ասկյար, առգրավել մեծ քանակությամբ զենք ու զինամթերք:

**Հուլիսի 7-ին**, իբր, ռազմաճակատում կարեւոր տեղաշարժեր չեն եղել. թուրքերն Աղդամի շրջանից Ասկերանի շրջանի մի քանի բնակավայրեր են հրետակոծել, Ֆիզուլուց՝ Հադրութի շրջանը:

Մոսկվան՝ Բաքվից փոխառած լուրերի համաձայն, հաղորդում է, թե Աղդամի շրջանում թուրքերն ազատագրել են իրենց բռնագրաված գյուղերից երկուսը: Այս «հերոսական» ազգային-ազատագրական մարտերի ղեկավարն էլ հանրապետության վարչապետ, ռազմական ու ներքին գործերի, անվտանգության մարմինների տնօրեն Սուրաթ Հուսեյնովն է: Կառավարության այդքան մեծ դեմքը եկել է Ադրբեջանի վտանգված անկախությունն ու ամբողջականությունը փրկելու:

Իսկ ինձ համար ամենակարեւորն այն է, որ, ինչպես այսօր Մոսկվայի հեռուստատեսությամբ հաղորդավարուհին էր ասում, Լեռնային Ղարաբաղի հանրապետության պաշտպաններն իրենց կռիվն են անում Աղդամի շրջանում, սեփական հայրենիքի սահմաններից դուրս:

Խոսում են նաեւ, որ Մանուկյանի հաջողությունները վերջին շրջանի պատերազմներում, նրա շուրջ ստեղծվող բարձր հեղինակությունը հանգիստ չեն տալիս նախագահին:

Իսկ ես մտածում եմ, որ նախագահը պարզապես չի համատեղվում սեփական կարծիք ունեցող եւ հատկապես այն արտահայտելու եւ պաշտպանելու համարձակության տեր մարդկանց հետ:

✧ ✧ ✧

**Հուլիսի 13-ին** Մարիո Ռաֆայելին, Մինսկի խմբի 7 անդամների հետ Թբիլիսիից հասավ Ստեփանակերտ, բանակցություններ ունեցավ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանի եւ նախագահության անդամների հետ (մոտ երկու ժամ), ինչպես նաեւ ՊՊԿ-ի նախագահի հետ՝ այս անգամ արդեն փակ դռների ետեւում: Խոսակցությունները եղել են հիմնականում ընդհանուր հարցերի շուրջ, սովորական-ընդհանուր բնույթի: Երեւի միակ որոշակի խոսքն այն է եղել, որ մեծապատիվ հյուրն է ասել Ադրբեջանի նոր ղեկավարության մասին՝ նրանք լա՞վ են եւ հուսալի՞, քան նախորդները:

**Հուլիսի 14-ին** Բաքու հասնելով՝ Մ. Ռաֆայելին Ադրբեջանի ղեկավար Հեյդար Ալիեւին հայտնել է, որ գրաֆիկի իրականացումը հետաձգվում է անորոշ ժամանակով, վճիռ, որ կարելի է բացատրել եւ ԼՂ-ի ղեկավարության խնդրանքով, եւ Ադրբեջանի ղեկավարության անկայուն վիճակով («Ազգ», հուլիսի 16):

«Երկիր» թերթը **հուլիսի 16-ի** իր համարում խմբագրական հոդված էր տպագրել, որով հայտնում էր, թե Մ. Ռաֆայելին արել է այսպիսի հայտարարություն՝ «ԵԱՀԽ-ն չի ճանաչում ԼՂ-ի հանրապետությունը եւ չի ընդունում սահմանների վերաձեւում»:

Այսքան պարզ ու վճռական մի հայտարարությունից հետո ՀՀ ղեկավարությունն ինչպե՞ս էր տանում պատերազմի փուլից խաղաղության փուլ թեւակոխած լինելը:

Նույն օրը թուրքերը զանգվածային հրետակոծության ենթարկեցին Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղը: Մեկ գյուղացի զոհվել է, մեկը վիրավորվել:

**Հուլիսի 16-ին** ադրբեջանական աղբյուրները, հատկապես ռադիոն եւ հեռուստատեսությունը , հաղորդում էին, որ Աղդամի, Թարթառի, Ջաբրայիլի ու Գետաբեկի շրջանների սահմանային բնակավայրերը զանգվածային հրետակոծության են ենթարկել հայերը, եւ կան սպանվածներ, վիրավորներ, ավերածություններ:

ՀՀ լրատվական աղբյուրներն էլ նշում էին, թե այդ օրը թուրքերն են հրետակոծել հայկական դիրքերը եւ հակահարված ստանալով՝ դադարեցրել կրակը:

**Հուլիսի 17-ին** «Երկիրը» հրապարակեց ընդարձակ հարցազրույց ՀՀ-ում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վլադիմիր Ստուպիշինի հետ, որը վճռականորեն պնդում էր, թե «ԼՂՀ դե ֆակտո ճանաչման իրողություն է»:

Պետությունների ամբողջականության եւ ազգի ինքնորոշման սկզբունքների փոխհարաբերությունների մասին դեսպանն ասել է. «Տարածքային ամբողջականության սկզբունքի էությունը հենց այն է, որ պետությունները հարգում են միմյանց տարածքների ամբողջականությունը: Եվ դրանք միջպետական հարաբերություններ են: Իսկ ինքնորոշումը վերաբերում է ոչ թե պետություններին, այլ ժողովուրդներին: Պետություններն ինքնորոշվելու կարիք չունեն: Նրանք վաղուց այս կամ այն ազգի եւ ժողովրդի ինքնորոշման արդյունք են: Հետեւաբար՝ ինքնորոշվում են ժողովուրդները: Եվ բոլորովին էլ պարտադիր չէ ինքնորոշումը հանգեցնել միայն անջատվելուն եւ ինքնուրույն պետություն ստեղծելուն: Կարելի է նաեւ չանջատվել, կարելի է նաեւ ստեղծել ինքնուրույն պետություն, կարելի է նաեւ միավորվել: Հրեն երկու Գերմանիաները միավորվեցին, չէ՞ որ դա եւս ինքնորոշում է, կամ, ասենք, մեր Միությունը մասնատվեց առանձին անկախ պետական կազմավորումների, որոնց հիմքն այսպես թե այնպես որոշակի ազգեր ու ժողովուրդներ են: Դարձյալ ինքնորոշում է: Եթե մենք համադաշնակցություն ենք ստեղծել, ապա դա միջազգային ընկերակցություն է: Իսկ եթե անկախ պետություններից որեւէ մեկը որոշի իր ճակատագիրն առավել սերտորեն կապել մեկ ուրիշ նույնպիսի պետության հետ եւ ստեղծել



արդեն դաշնակցային տիպի պետական կազմավորում, ապա դա եւս ինքնորոշում կլինի: Նախկին մեր կայսրության ինչ-որ մասեր, որոնք իրենց կոչում են հանրապետություններ կամ ինքնավար մարզեր, կցանկանան մնալ դաշնակցային կազմավորման ներսում եւ համաձայնության գալ իրենց իրավունքների, մյուսների հետ իրենց փոխհարաբերությունների եւ համատեղ ստեղծվող կենտրոնական մարմինների շուրջ: Ինքնորոշման բազմաթիվ ձեւեր կարող են լինել:

«Ղարաբաղի ժողովուրդը քվեարկել է հօգուտ ԼՂՀ ստեղծման: ԼՂՀ-ը տակավին, իրոք, իրավաբանորեն չի ճանաչվել որեւէ պետության կողմից: Բայց ճանաչումը, ճանաչման փաստն ինքը ոչ թե առանձին անձանց, այլ պետության գործն է:

Լեռնային Ղարաբաղի հանրապետության դե ֆակտո ճանաչումն անխուսափելի է, որովհետեւ բոլորը հասկանում են, որ Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է: Եվ պետական բարձրաստիճան գործիչների հայտարարություններում, հավանաբար, պատահական չեն «շահագրգիռ» եւ «հակամարտության անմիջականորեն մասնակցող կողմեր» խոսքերը: Որովհետեւ Լեռնային Ղարաբաղն, իրոք, ունի իր բանակը: Եթե ուզում ես նրա հետ համաձայնության գալ, ուրեմն պետք է ընդունես, որ այդ մարդիկ՝ Լեռնային Ղարաբաղի ղեկավարները, պատասխանատու մարդիկ են: Այլապես անիմաստ է բանակցություններ վարելը: Սակայն տակավին բոլոր երկրները խուսափում են դե յուրե ճանաչել Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, իսկ դե ֆակտո, կարծում եմ, այդ ճանաչումն առկա է: Եթե Ղարաբաղը մասնակցում է բանակցություններին, դա արդեն իսկ փաստական ճանաչում է: Դա իմ՝ իբրեւ գիտնականի, անձնական տեսակետն է»:

✧ ✧ ✧

Հուլիսի 18-ին «Նեզավիսիմայա գազետան» տպագրեց հարցազրույց ԼՂ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ եղած, իսկ այդ ժամանակ արդեն Ռուսաստանի Արդյունաբերողների միության նախագահ Արկադի Վոլսկու հետ: Կոմիտեից առաջ էլ բավական ժամանակ Վոլսկին Արցախում գործել էր որպես Կենտրոնի ներկայացուցիչ: Նախնական այս շրջանի մասին նա գոհունակությամբ էր խոսում, քանի որ այն ժամանակ գոյություն ունեին իշխանության տեղական մարմիններ, որոնց հետ համագործակցում էր, եւ ամեն ինչ համարյա նորմալ էր գնում: Սակայն մեկ էլ «Հանկարծ Մոսկվայում ինչ-որ մեկը, ակնհայտորեն հանրապետությունների (Ադրբեջանի ու Հայաստանի.- Բ. Ու.) ղեկավարության դրդմամբ, մտահղացավ, թե տեղական կառավարման մարմինները պետք է ցրել: Դա էլ մտցրին թե՛ Քաղբյուրոյի, թե՛ Գորբաչովի գլուխը»: Եվ, ահա՛, Կուս. Կենտկոմում հավաքվում են, «ելույթ են ունենում մարդիկ՝ առաջարկելով ամենուրեք (ԼՂԻՄ-ում) կառավարման մարմինները ցրել եւ ստեղծել Լեռնային Ղարաբաղի Հատուկ կառավարման կոմիտեն: Ես երեք անգամ դեմ արտահայտվեցի, փորձեցի հասկացնել, որ ժողովուրդը չի սիրում լինել ղեկավարման օբյեկտ, որ յուրաքանչյուր ժողովուրդ ուզում է լինել ղեկավարման սուբյեկտ, եւ այդ որոշումը սխալ է:

Բայց, ցավոք, ինձ չլսեցին, առաջարկությունս չընդունեցին: Այն ժամանակ մեր տեսակետի դեմ կտրուկ ելույթ ունեցավ Նիկոլայ Իվանովիչ Ռըժկովը: Գերագույն խորհրդի Նախագահության որոշմամբ կազմավորվեց Հատուկ կառավարման կոմիտե...

Սրանից հետո գործ կատարելը դժվարացավ, դժգոհության լծվեցին երկու համայնքները (համայնքնե՞ր), «Մոսկվան էլ իր հերթին սկսեց օյիններ խաղալ»: «Այդ պայմաններում իրեն շատ անհասկանալի պահեց Լուկյանովը, անհասկանալի պահեց եւ Չեբրիկովը...»:

Այսինքն՝ նրա՛նք, որոնց գնել էին (պարզապես գնել էին) Ադրբեջանի ղեկավարները:

Իհարկե, այստեղ կա ճշմարտություն: Եվ դրա աղն էլ այն է, որ նոր է բացվում. Կենտրոնի ղեկավար Վոլսկին աստիճանաբար փոխվեց, դարձավ Կենտրոնի ներկայացուցիչը ոչ թե հայկական մարզում, այլ մի տարածքում, ուր կան երկու համայնքներ՝ հայկական ու ադրբեջանական:

քարտուղար, խնդրելով՝ ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ ուղարկել Լեռնային Ղարաբաղ, որպեսզի նա տեղում ծանոթանա իրադրությանը եւ կարողանա այս տարածքի իրադարձությունների մասին անկողմնակալ տեղեկություններ տալ Անվտանգության խորհրդին՝ հիմք ընդունելով սեփական դիտարկումների վրա արված հավաստի տեղեկությունները։ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը վստահություն է հայտնում, որ միջազգային հանրության կողմից Լեռնային Ղարաբաղի հանրապետության անկախության ճանաչումը կարագացներ մեր տարածաշրջանում ռազմական հակամարտության քաղաքական կարգավորումը։ Այն, միաժամանակ, եւս մեկ անգամ կընդգծեր համաշխարհային հանրության եւ կոնստրուկտիվ, եւ չեզոք դիրք զբաղեցրած երկրների ակտիվ մասնակցությամբ Ադրբեջանի ու Լեռնային Ղարաբաղի հանրապետությունների միջեւ բոլոր խնդիրների խաղաղ կարգավորման գործին ունեցած իր հավատարմությունը» («Երկիր», օգոստոսի 6)։

✧ ✧ ✧

ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը գնաց Հռոմ՝ մասնակցելու Մինսկի խմբի խորհրդաժողովին, որ քննելու էր ղարաբաղյան հակամարտության խնդիրը։ Այդ մասնակցության առթիվ խոսել են ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը եւ ԳԽ-ի նախագահի տեղակալ Կ. Բաբուրյանը՝ արտահայտելով իրենց դժգոհությունը ինչպես Մինսկի խմբի վերջին ձեռնարկումի, այնպես էլ N 853 բանաձեւի դեմ։ Նրանք ասել են՝ իրենք պատրաստ են ամեն մի քայլի՝ արցախահայության իրավունքների եւ անվտանգության պաշտպանության, ԼՂՀ պետական միավորը ճանաչելու համար։

**Օգոստոսի 10-ին** ԼՂՀ ԳԽ-ի Նախագահությունը 14 ազատամարտիկների հետմահու պարգեւատրեց «Մարտական խաչի» առաջին աստիճանի շքանշանով։

**Օգոստոսի 10-11-ին** թուրքերն ակտիվացրել էին իրենց գործողությունները Մարտունու եւ Հադրութի շրջանների դեմ, որոնք համարյա անդադար գտնվում էին հրետակոծության ու օդային հարվածների տակ։ Բնականաբար ԼՂՀ մարտական ուժերն այս կողմերում ամրապնդում էին իրենց դիրքերը, պատրաստվում արժանի հակահարվածի։ Երեւի քաջատեղյակ լինելով այդ ամենին՝ Իրանում շատ էին անհանգստանում, քանի որ մտածում էին, թե այդ հայ քաջավարժ ուժերն այլեւս չեն հանդուրժի հակառակորդի խարդախ քայլերը, կանցնեն վճռական գրոհի եւ կգրավեն ոչ միայն Ֆիզուլին, այլեւ նրա թիկունքի՝ Իրանի սահմանակից շրջանները։ Այն ժամանակ հասկանալի է, կսկսվի փախստականների ահռելի հոսքը դեպի Իրան («Ազգ», օգոստ. 11)։

Ֆիզուլու խնդիրը բարդացել է ԼՂՀ զորքի համար, որը քաղաքից ընդամենը 7 կմ էր հեռու, գիտեր, որ հանրապետության հարավը փրկելու եւ անդորր ապահովելու համար անհրաժեշտ է խողան վնասազերծել, գրավել այդ քաղաքը... Սակայն տրամադրություն չկար նորից արժանանալու միջազգային մարմինների դժգոհությանը, նորից արժանանալու ագրեսորի անվան։

Խնդիրը բարդանում էր նրանով, որ այդ օրերին ադրբեջանական լրատվությունը մի քանի անգամ հայտարարել էր, թե հայերը գրավել են Ֆիզուլին կամ պատրաստվում են այն գրավել։ Եվ սրա հետ միասին, այնտեղից ռմբակոծում էին հայկական դիրքերը, գրգռում ազատամարտիկներին, հարկադրում պատժարշավի ելնել...

ԼՂՀ ԳԽ-ի նախագահի տեղակալ Կ. Բաբուրյանն այս ամենի մասին օգոստոսի 11-ին նամակ էր հղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, ինչպես նաեւ հրապարակել հայտարարություն, որով զգուշացնում էր սպասվող նոր բարդություններից ու աղետներից։

Իսկ Ֆիզուլում թուրքի նոր ուժեր էին կուտակվում, Ֆիզուլուց վերստին նոր կրակ էր թափվում Մարտունու շրջանի արեւելյան դիրքերի, Հադրութի շրջանի սահմանային գյուղերի, շրջկենտրոնի վրա։

**Օգոստոսի 13-ին** էլ թուրքերը մեծ հարձակման անցան Մարտակերտի ու Խանլարի շրջանների սահմանային գոտում, գրոհեցին Օմարի լեռնանցքի վրա։ Իհարկե, ջարդ կերան, 20 ասկյար, 1 տանկ, հետեւակի 2 զրահամեքենա կորցնելով՝ վերադարձան ելման կետեր։ Բայց չէ՞ որ կորուստներ են ունեցել նաեւ այդպիսի խարդավանքի սպասող եւ մարտի պատրաստ ԼՂՀ ուժերը («Ազգ», օգոստ. 14)։

**Օգոստոսի 14-15-ին** կասկած չկար, որ թուրքի ռազմական գործողությունները ճակատային բոլոր գոտիներում լուրջ վտանգ էին ստեղծել ԼՂՀ համարյա բոլոր շրջանների համար եւ անհնար էր, որ չարժանանային պատասխան քայլերի։ Վերջիններից կարեւորագույնն այն էր, ինչ տեղի ուներ Ֆիզուլի եւ Ջաբրայիլ շրջկենտրոնների գոտում։ Այստեղ բնակչությունն արդեն համոզված էր, որ հակառակորդն այլեւս անպատասխան չի թողնի իրենց ուժերի ավազակային հարձակումները, եւ սկսեցին զանգվածային տեղաշարժն ու փախուստը դեպի հարավ, դեպի Իրանի սահման...

Փախչում էին նաեւ թուրք զորաջոկատները։

Եվ այս ժամանակ էր, որ Ադրբեջանի ղեկավարները նախաձեռնող դարձան Ադրբեջան-ԼՂՀ անմիջնորդ բանակցությունների. Ադրբեջանի պաշտպանության նախարարի տեղակալ Սաֆար Աբիեւը հեռախոսով փնտրեց-գտավ ԼՂՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին, իսկ պրեզիդենտի տեղակալ Հեյդար Ալիեւի հանձնարարությամբ նրա տեղակալ Ռասուլ Գուլիեւը կապվեց ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ։ Սկսվեցին բանակցությունները, որոնց նպատակն էր ուղիներ գտնել հրադադարի եւ Ադրբեջանական հարավ-արեւմտյան շրջաններին սպասվող մեծ աղետը կանխելու համար։

Այս օրերին Ադրբեջանի լրատվության մարմինները քանի՜ անգամ հաղորդեցին, թե գրավված են իրենց Ֆիզուլին ու Ջաբրայիլը։

✧ ✧ ✧

Հռոմի բանակցություններն ավարտվել էին դեռեւս օգոստոսի 13-14-ի հավաքներով։ Նրանց մասնակցել էր նաեւ ԼՂՀ ներկայացուցիչը, որը դժգոհ էր արդյունքներից եւ ամսի 18-ին տված հարցազրույցում ասաց՝ ընդունված եզրակացություն-բանաձեւում նկատի չեն առնվել ղարաբաղյան պատվիրակության առաջարկությունները, ապա եւ հանձնարարականներն այնպես ճապաղ ու երկիմաստ են, որ հակամարտող յուրաքանչյուր կողմ կարող է ընդունել իր համար ձեռնտու ձեւով («Ազգ», օգոստ. 19)։

Միայն ՀՀ պատվիրակության ղեկավար Ժ. Լիպարիտյանն էր գոհ, որովհետեւ, իբր, Հայաստանը կարողացավ [փաստաթղթերի մեջ] մտցնել ապաշրջափակման հարցը» (նույն տեղ)։ Երեւի թե մե՜ծ հաղթանակ է։

✧ ✧ ✧

**Օգոստոսի 16-ին** Բաքվից Լեռնային Ղարաբաղի հանրապետության ԳԽ-ի նախագահի տեղակալ Կարեն Բաբուրյանի հասցեով նամակներ էին ստացվել՝ Հեյդար Ալիեւի, Պաշտպանության նախարար Աբիեւի, փոխվարչապետ Գուլիեւի ստորագրությամբ. փոխվարչապետ Գուլիեւը լիազորվում էր 5 օրվա ընթացքում բանակցություններ վարել Ադրբեջանի եւ ԼՂՀ բարձրագույն ղեկավարների հանդիպում կազմակերպելու համար եւ այդ ընթացքում խնդրվում էր հնգօրյա զինադադար» («Ազգ», օգոստ. 19)։

ԼՂՀ արտգործնախարարն ասել է՝ ուշացել եք։ Իսկ պաշտպանության նախարար Ս. Սարգսյանն այս առաջարկություն-խնդրանքի մասին արտահայտել է իր հետեւյալ կարծիքը. «Ես կասկածամտորեն եմ վերաբերվում Ադրբեջանի նոր առաջարկներին, քանի որ զինադադարի մասին նախկին պայմանավորվածությունների փորձը վկայում է, որ հարեւան հանրապետության ղեկավարությունը շահագրգռված չէ հակամարտության խաղաղ կարգավորմամբ եւ ժամանակավոր զինադադարներն օգտագործում է ռազմական կարողությունն ուռճացնելու եւ Լեռնային Ղարաբաղի դեմ նոր հարձակողական գոր-

ռենց նոր շրջաններն են կորսվում: «Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հաղորդում էր, թե Ղուբաթլիի շրջանում իրադրությունը ծայրաստիճան սրված է, եւ հայկական կազմավորումները, չնայած ադրբեջանական բանակի եւ տեղի բնակչության դիմադրությանը, երեք ուղղություններով խորացել են շրջանի տարածք, մոտենում են շրջկենտրոնին: Ըստ սույն աղբյուրների՝ հայկական ուժերը ջանում են փակել Ղուբաթլի-Զանգելան ճանապարհը եւ դրանով իսկ Ղուբաթլիի շրջանը ամբողջապես կտրել Ադրբեջանից: Ինչ վերաբերում է Զանգելանի շրջանին, ապա ադրբեջանական աղբյուրների համաձայն, օգոստոսի 29-ի երեկոյան հայկական ուժերը, իբր, գրոհ են ձեռնարկել Սոբու լեռան ուղղությամբ, որտեղից կարելի է հրետակոծել շրջկենտրոնն ու այնտեղ տանող ճանապարհը» («Ազգ», օգոստ. 31):

✧ ✧ ✧

Ցուցական նաեւ այս վիճակին հետեւելիք դեպքերը. չնայած մեր լրատվության հաղորդումներում այս օրերին թուրքի ուժերը մեծ վնասներ էին հասցնում ինչպես ԼՂՀ, այնպես էլ ՀՀ սահմանային բնակավայրերին, իբրեւ ամսավերջի համագումարային տեղեկատվություն՝ Ադրբեջանից հաղորդում էին, թե «օգոստոսի 30-ի երեկոյան հայկական ուժերը գրավել են Զաբրայիլ շրջկենտրոնը եւ 18 տանկերի աջակցությամբ գրոհում են Ղուբաթլիի ուղղությամբ: Միաժամանակ Ղուբաթլիի ուղղությամբ գրոհ է ձեռնարկվում նաեւ հյուսիսից՝ մի քանի օր առաջ գրավված Գյուլեբերդի կողմից: Ըստ նույն աղբյուրների՝ երեկ առավոտյան հայկական ուժերն* արդեն գրավել էին Հագարի գետի ձախափնյա բոլոր գյուղերը եւ շարժվում էին Զանգելանի ուղղությամբ: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հաղորդում էր, թե հայերը Զաբրայիլի շրջանում գրավել են 38, իսկ Ղուբաթլիի շրջանում՝ 18 գյուղ» («Ազգ», սեպտ. 1):

Հետաքրքիրն այն եղավ, որ ՀՀ-ում օտար երկրների բոլոր դեսպաններն իրենց պետությունների բողոքը, նույնիսկ սպառնալիքները հայտնեցին հայկական կողմի հասցեին: Նրանք կտրուկ հայտարարեցին, թե նոր բռնագրավումները կարող են պատճառ դառնալ, որ իրենց երկրները դադարեցնեն Հայաստանին տրվող երկարաժամկետ վարկերն ու այլազան օգնությունները:

Սպասվում էր, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը նոր փաստաթուղթ կընդունի ղարաբաղյան խնդրի առթիվ (նույն տեղում):

Եվ, այսուամենայնիվ, ամիսը փակվեց կարեւոր մի նախաձեռնությամբ. Ռուսաստանի ԱԳՆ միջնորդությամբ՝ օգոստոսի 31-ի հետմիջօրեին ԼՂՀ եւ Ադրբեջանի պատվիրակությունների միջեւ ստորագրվեց հրադադարի համաձայնագիր, որը պետք է գործեր մինչեւ սեպտեմբերի 10-ը ներառյալ, եւ այդ ընթացքում պետք է կազմակերպվեր երկու հանրապետությունների ղեկավարների հանդիպումը:

Համաձայնագիրն ստորագրել են. ԼՂՀ կողմից՝ ԱԳՆ Արկադի Ղուկասյանն ու ԼՂՀ պաշտպանական բանակի ընդհանուր հրամանատար Սամվել Բաբայանը, Ադրբեջանի կողմից՝ Միլլի մեջլիսի նախագահի տեղակալ Ա. Ջալիլովը եւ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Ս. Աբիեւը:

✧ ✧ ✧

**Սեպտեմբերի 1-ին** ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հանդես եկավ մի հայտարարությամբ, որը շատ բարձր էր գնահատում Ադրբեջանի ու ԼՂՀ միջեւ կնքված համաձայնագիրը եւ նախատեսվող բարձր հանդիպման հեռանկարները: Այն միաժամանակ կոչ էր անում, որպեսզի ԼՂՀ ղեկավարությունը, իբրեւ բարի կամքի դրսեւորում, իր զորքերն անհապաղ ետ քաշի ավելի վաղ ձեւավորված անջատման գիծ:

Այս կոչին դրականորեն արձագանքելով՝ ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանը պատրաստակամություն հայտնեց զինված ուժերը Խոջիկ-Խանլիկ-Չերեքի գծից անհապաղ ետ քաշելու եւ նախկինում զբաղեցրած դիրքերում կանգնելու համար: Այդպիսով ԼՂՀ զորքերն ազատ էին թողնում Ղուբաթլին եւ 30 գյուղեր («Ազգ», դեկտ. 2):

✧ ✧ ✧

Նույն օրվա ադրբեջանական լրատվական տվյալներով՝ առավոտյան արդեն պարպվել էր նաեւ Ղուբաթլի շրջկենտրոնը, որ 6-րդն էր վերջին ժամանակներում հայերի կողմից գրավված շրջկենտրոնների շարքում (Լաչին, Քելբաջար, Աղդամ, Ֆիզուլի, Զաբրայիլ):

Հաղորդվում էր նաեւ, որ ռազմական խառը վիճակի թելադրությամբ, Իրանի մեկ զորամաս Արաքսն անցել է, իր հսկողության տակ առել Արաքսի վրա կառուցված այն ջրամբարը, որ առաջներն օգտագործում էին Իրանն ու ԽՍՀՄ-ը (նույն տեղում, նաեւ «Երկիր», սեպտ. 2):

**Սեպտեմբերի 2-ին** նշվեց ԼՂՀ երկրորդ տարելիցը: Այդ առթիվ հրապարակվել են նորելուկ հանրապետության ղեկավարների կոչերն ու ողջույնի խոսքերը՝ ուղղված հայրենի ժողովրդին: Ստացվել էր ՀՀ ԳԽ-ի ողջույնի հեռագիրը, որում ասված էր. «Ընդունեք մեր անկեղծ շնորհավորանքները Լեռնային Ղարաբաղի հանրապետության հռչակման տարելիցի առթիվ: Գոյատեւման պայքարի ելած Ղարաբաղի հերոսական ժողովուրդը, դրսեւորելով կամք ու տոկունություն, կարողացավ իր լինելիությանը սպառնացող իրական վտանգը դիմագրավելուն զուգընթաց ստեղծել կառավարման եւ ինքնապաշտպանության համալիր համակարգեր...»:

Այս հեռագրի հեղինակն այն Գերագույն խորհուրդն էր, որ չէր ընդունում ԼՂ-ի հանրապետությունը, գտնում էր, թե դրանով պատերազմ կհայտարարի Ադրբեջանին..., նաեւ Թուրքիային: Իսկ հիմա ընդունում, տարփողում էր՝ մոռացած իր որոշումը, իր չհանդուրժող դիրքը:

✧ ✧ ✧

Այդ օրը ԼՂՀ արտգործնախարարությունն ստացավ Ադրբեջանի նախագահի պաշտոնակատար Հեյդար Ալիեւի ստորագրությամբ մի փաստաթուղթ (ֆաքս), որով բառացիորեն առաջարկվում էր «Ադրբեջանի եւ ԼՂՀ լիազոր ներկայացուցիչների հանդիպում» Մոսկվայում: Սա առաջին անգամն էր, որ Ալիեւն ընդունում (ուրեմն եւ ճանաչում) էր ԼՂՀ-ը՝ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը («Ազգ», սեպտ. 4):

**Սեպտեմբերի 3-ին** «Երկիրն» արտատպեց Թուրքիայում Ադրբեջանի դեսպան Մուհամեդ Նովրուզ օղլի Ալիեւի մի հարցազրույցը, որում դեսպանը հարազատ միջավայրում իրեն ազատ էր զգում՝ անկեղծորեն ներկայացնելու իր երկրի կարծիքը Հայաստանի ու հայության, Արցախի ու նրա ապագայի մասին: Ահա նրա խոսքի այդ մասը. «Ողջ աշխարհի հայ ահաբեկիչներն ու վարձկանները Լեռնային Ղարաբաղում են: Նրանք մեր հողում սպանում են մեր կանանց ու երեխաներին: Մյուս կողմից՝ աշխարհում ութ միլիոն ադրբեջանցի կա: Մինչեւ օրս մենք չենք կանչել նրանց: Որովհետեւ մենք խաղաղասեր ազգ ենք: Ադրբեջանցիներն ապրում են Թուրքիայում, Իրանում, նույնիսկ Ռուսաստանում: Եթե մենք ռազմատենչ ազգ լինեինք, կդիմեինք նրանց օգնությանը: Գուցե այդ էր մեր սխալը: Եթե հայերը կարող են աշխարհի բոլոր վարձկաններին ու ԱՍԱԼԱ-ի ահաբեկիչներին Լեռնային Ղարաբաղ բերել՝ միասին կռվելու, մենք էլ իրավունք ունենք բոլոր ադրբեջանցիներին կանչել՝ մեր սահմանները պաշտպանելու: Խոսքը կամավորների մասին է, մենք երբեք թուրքական բանակին Ադրբեջան չենք հրավիրել: Խնդրում եմ հիշել այդ հանգամանքը: Թուրքական մամուլը վկայում է հակառակը, դա ճիշտ չէ՞ (ուրեմն, թուրքական մամուլը տեղեկացնում էր, թե Ադրբեջանն օգտվում է իր երկրի զինական ուժից, դա ճիշտ չէ: Թուրքական մամուլը չգիտե, թե ինչո՞վ է զբաղված իր երկիրը.-Բ. Ու.):

իրավացիորեն նկատել էր, թե դրանք չի կարելի հայկական դիվանագիտության հաղթանակը համարել, քանի որ Մոսկվայում այն եղել է միայն զիջող կողմ: Գուցե այդ էլ արտաքին ճնշումների պատճառով (հիշենք, որ Ալիեւին հղած նամակում Ռ. Քոչարյանը բացեիբաց ասում էր, թե ԱՄՆ-ը Հայաստանի կառավարության վրա մեծապես ճնշում է գործադրում՝ ԼՂ-ին հարկադրելու, որպեսզի այն կատարի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կարգադրությունները: Սակայն այս պայմաններում անգամ Հայաստանի ներկայացուցիչները պետք է Ադրբեջանի հետ ունեցած ամեն տեսակ բանակցություններում հակապահանջներ հրապարակ հանեին «Շահումյանի շրջանից եւ Մարտակերտի շրջանի գրավյալ մասից Ադրբեջանի զորքերի դուրս բերման վերաբերյալ» («Ազգ», սեպտ. 18):

Միանգամայն իրավացի դիտողություն, որի անտեսումը հետագայում կարող է մեծ զոհողությունների առաջ կանգնեցնել Արցախին:

✧ ✧ ✧

**Սեպտեմբերի 15-ին** Իրանի ղեկավար Ռաֆսանջանին հեռախոսազրույց է ունեցել Բ. Ելցինի հետ՝ հատուկ տեղ տալով ղարաբաղյան հակամարտության կարգավորելու խնդրին: Պայմանավորվել են, որպեսզի ամեն միջոց գործադրեն այն հարթելու եւ շրջանում խաղաղություն ստեղծելու համար

Լեւոն Տեր-Պետրոսյանն էլ Մոսկվայում հանդիպել է Ելցինի հետ: 45 րոպե տեւած զրույցը հիմնականում վերաբերել է Ղարաբաղին: Դարձյալ քննվել են նրա խնդրի կարգավորման ուղիներ («Երկիր», սեպտ. 18):

Սեպտեմբերի 17-ին Բաքվում Հ. Ալիեւն ընդունել է Թուրքիայի արտգործնախարար Չեթինին, քննվել է ղարաբաղյան խնդիրը, ծրագրել են երկու երկրների համատեղ իրականացնելիք միջոցառումներն այդ բնագավառում:

✧ ✧ ✧

Այս օրերին ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլ Քլինթոնը նամակ էր հղել Հ. Ալիեւին, արտահայտում էր իր անհանգստությունն Ադրբեջանի տարածքները ԼՂՀ զորքերի կողմից գրավված լինելու առթիվ, հայտնում, որ ինքը Հայաստանից պահանջել է ազդել ԼՂՀ վրա, որպեսզի այն զորքերը ետ քաշի, հայտնում էր իր գոհունակությունը Ադրբեջան-ԼՂՀ անմիջական բանակցությունների համար, առաջարկում դրանք շարունակել եւ հասնել կայուն խաղաղության (տե՛ս «Երկիր», սեպտ. 16):

✧ ✧ ✧

Արդեն մի քանի օր է, ռազմաճակատի բոլոր կետերում դրությունն անփոփոխ է, հանգիստ, եւ դա ինձ լրջորեն անհանգստացնում է: Ուրիշ պարագաներում կարելի է ուրախանալ, մտածել, թե տարիների աղետալից ու դաժան պատերազմից հետո ժամանակավոր խաղաղություն է, պետք է այն դարձնել տեւական, ապա պայքարել հաստատուն վիճակի համար, եւ այն ժամանակ ու հետո կլինի երանություն: Սակայն հիմա, երբ թուրքին է ձեռնտու այդ ժամանակավոր, միայն ժամանակավոր խաղաղությունը, եւ նա է, որ օգտվելու է դրանից, դա այդ ինձ ոչ թե անհանգստացնում, պարզապես լուրջ տագնապ է պատճառում:

Իսկ թո՛ւրքը: Հեյդար Ալիեւը հասավ իր նպատակին՝ դարձավ իր հանրապետության միահեծան խալիֆը, Ազգային մեջլիսի նախագահն է, պրեզիդենտի պաշտոնակատարը, որ կնշանակի պրեզիդենտը (մի քանի օր հետո նաեւ հանրաքվեով կընտրվի, անպայման կընտրվի) եւ ազատ է այդ հանրապետությունը քշելու իր ուզած ուղղությամբ: Իսկ այսօր նրա ուզածը Ղարաբաղի վերանվաճումն է, որի համար, նախորդների պես, պատրաստ է տալ ամեն ինչ՝ ե՛ւ արյուն, ե՛ւ զոհեր, ե՛ւ իր երկրի ամբողջ հարստությունը: Տալ ամեն-ա-



մեն ինչ, նույնիսկ Ադրբեջանի անկախությունը, որ դարձյալ նախորդների պես, մինչեւ այսօր պատկերացնում էր հյուսիսի հարեւանի լծից ազատ լինելու մեջ, իսկ վերջին օրերին զգաց, նրան ենթակա լինելու պատրաստակամություն հայտնեց, լորձնաշուրթ ճառեր արտասանեց իր հավատարմության վերաբերյալ, վերադարձավ, իբր, դժվարությամբ էլ դա դարձրեց միլլի մեջլիսի որոշում: Դժվարության տպավորությունն անհրաժեշտ էր հյուսիսի ազգի աչքին թոզ փչելու համար, որպեսզի այն միամիտը մտածի, թե գարդաշ Ալիեւն ի՜նչ բարդություններ լուծեց, ինչպիսի՜ ծանր գնով, որոնց դիմաց մենք էլ պետք է պատրաստ լինենք զիջումների:

Եվ, այսքանի հետ միասին, անկասկած, նա կարգուկանոնի տակ դրեց իր Ադրբեջանի խախտված հավասարակշռությունը, զորությունն է միավորում եւ փոխադրում ղարաբաղյան ճակատ: Նույնիսկ Ադրբեջանում, հատկապես հակամարտության գոտում, ռուսական զորք տեղադրելու խոստում էլ է տվել: Իսկ մենք լավ ենք ճանաչում Ադրբեջանում տեղադրված ռուսական զորքին, ամենակարճ ժամանակում կաշառքով «թուրքացած», ոնց որ թլփատված լինի:

Այս՝ ներօրյա խաղաղության ենթաբեմը ղարաբաղյան ճակատում: Իսկ մերոնք ի՞նչ են անում այդ ժամանակավոր խաղաղությունից առավելագույն օգուտը քաղելու համար: Տեսանելի ու շոշափելի ոչինչ: Մենք էլ քաջ գիտենք, որ մեր քաղաքական առաջնորդները տեսանելիից այն կողմ ոչինչ ոչ անում են, ոչ էլ կարող են անել:

Ալիեւի մոսկովյան շռնդալից հաջողություններից հետո Լեւոն Տեր-Պետրոսյանն շտապեց Մոսկվա՝ երեւի թե հակամարտության ասպարեզում իր ու թուրքի հավասարակշռություն ստեղծելու... Եվ Ռուսաստանի ղեկավարներին համոզեց, թե այդ հակամարտություն կոչված գոտում Հայաստանը ոչ որեւէ մասնակցություն ունի, ոչ շահ կամ հետաքրքրություն, դա մեն ու միայն Ղարաբաղ-ադրբեջանական երեւույթ է, եւ եթե հիմա Բաքուն ու Ստեփանակերտն արդեն փորձում են իրար հետ լեզու գտնել, հենց դա էլ բարդույթի լուծման միակ ելքն է, միակ ճանապարհը:

Ալիեւն աշխարհին ապացուցել է, թե Ադրբեջանի հետ գործ ունեցողը պարտադիր կերպով գործ ունի Իրանի ու Թուրքիայի, նույնիսկ նրանցից հարավ գտնվող մուսուլմանական աշխարհի հետ, գործ ունի նաեւ Միջին Ասիայի, Ղազախստանի, առհասարակ, այսպես կոչված, ԱՊՀ սահմաններում գտնվող բոլոր մուսուլմանական երկրների հետ: Թե չէ, այդ հին աղվեսի մոսկովյան բանակցությունների առաջին իսկ օրը Մոսկվայում ի՞նչ գործ ուներ արդի մուսուլմանության՝ ռուսի համար ամենաազդեցիկ առաջնորդներից մեկը՝ Նուրսուլթան Նազարբաեւը: Արտաքուստ ոչ մի, եւ նրա ու Ելցինի հանդիպմանը վերաբերող հաղորդումների մեջ ծանծաղ բաներ ավելացին միայն: Իսկ խորքում Ելցին-Ալիեւ հանդիպման նախապատրաստությունն էր, Նազարբաեւի՝ այդ հանդիպմանն ուղղություն տվող, հանձնարարության պես հնչած տեսակետը:

Այսպե՛ս, ուրեմն, Ալիեւը Ռուսաստանին՝ մեր գոտու բոլոր հարցերը լուծող միակ ուժին, ցույց է տալիս, ապացուցում, համոզում, որ իր թիկունքում կանգնած են այսքան ուժեր: Իսկ Լեւոն Տեր-Պետրոսյանն աշխարհին հասկացրեց, թե Ադրբեջանի դեմ, իբրեւ հակառակորդ կողմ կամ մարտնչող ուժ մի խեղճ ու կրակ Լեռնային Ղարաբաղ է, վերջերս էլ աշխարհի համար ագրեսոր դարձած փախստականների մի խումբ, որը միայն ջուր ու արյուն է պղտորում այս Անդրկովկաս կոչված տարածքում:

✧ ✧ ✧

Սեպտեմբերի կեսին Կիպրոսի հայկական փոքրաթիվ գաղութի ներկայացուցիչներն Արցախ հասցրին բարեգործական իրենց օգնությունը, եւ այստեղ խմբի ղեկավար տեր Բարթողը հայտարարեց. «Մեզ համար Արցախի ժողովուրդը միշտ պիտի մնա օրինակը քաջ հայուն, որ այսօր կկռվի, որպեսզի Սփյուռքի եւ Հայրենիքի հայությունը կարողանա գոյություն ունենալ, ապրիլ ազատ ու հպարտ,- ապա նա ավելացրեց.- Արցախցիներն իրենց պայքարով մեկընդմիշտ փարատեցին այն տարածված կարծիքը, թե հայը տկար է ու թուլամորթ: ... Մենք հպարտ զգացինք, որ կպատկանինք այս ժողովրդին: Շա՜տ հպարտ: Անանկ

**Հակամարտության գոտու սահմանումը**

Սույն հավելվածի դրույթները չեն ենթադրում որեւէ դիվանագիտական կամ քաղաքական կարգավիճակի ճանաչում ըստ տեղական կամ միջազգային օրենքի։

Հակամարտության գոտին ընդգրկում է հետեւյալ տարածքները.

Ա) Հայաստանից դեպի արեւելք, Վրաստանի սահմանից, Քուռ գետի եւ Մինգեչաուրի ջրամբարի հարավային ափից հարավ, Արաքս գետի հյուսիսային ափից հյուսիս ընկած ողջ տարածքը՝ առանց 48-րդ հորիզոնականից արեւելք գտնվող հողերի։

Բ) Հայաստանի եւ Նախիջեւանի սահմանագծի երկայնքով երկու կողմից 5 կմ լայնությամբ շերտը։

Գ) Հայաստանի եւ Ադրբեջանի մնացած սահմանների երկայնքով երկու կողմից 20 կմ լայնությամբ շերտը։

Եթե սահմանման մեջ որոշ տարածքներ հատվում են, հակամարտության գոտին դրանից չի մեծանում։

Անհրաժեշտության դեպքում Մինսկի խորհրդաժողովը կամ նրա աշխատախմբերը կարող են վերանայել սույն ուղեցույցը» («Երկիր», սեպտ. 30)։

Գրաֆիկը հրապարակած թերթը չակերտների մեջ չի առել այն, չի էլ տեղեկացրել, թե ի՛նչ միջամտություն է արել... Իսկ տպագրված տարբերակով այն շատ անկատար, տեխնիկապես էլ թափթփված է. այնտեղ Լեռնային Ղարաբաղի բախտի մասին ոչ մի բառ չկա, ԼՂՀ ասելու փոխարեն գրվում է «Լեռնային Ղարաբաղի ղեկավարություն», զորքերի դուրսբերումը չի պարտադրվում Շահումյանի շրջանից եւ նման ուրիշ բաներ։

Ի՞նչ կտա այս նոր փաստաթուղթը, նախորդների պես կընդունեն-կքրքրեն-կդնեն մի կո՞ղմ, թե՞ կենթարկվեն նրա անդեմ-հակահայկական ոգուն եւ գործի՞ կանցնեն։

Ապրենք, այս մեկի վերջն էլ տեսնենք։

**Հոկտեմբերի 7-ին** երեք կողմերը (Հայաստան, Ադրբեջան, ԼՂՀ) պետք է ներկայացնեին իրենց վերջնական դիրքորոշումները Փարիզում ընդունված նոր գրաֆիկի առթիվ։ ԼՂՀ-ը, չնայած գոհ չէր նրանից, ուներ վերապահումներ ու սկզբունքային դիտողություններ, համաձայնեց ներկայացնել։ Հայաստանը՝ եւս։ Իսկ Ադրբեջանը ոչ մի նշան ցույց չէր տալիս, թե այն իրեն էլ է վերաբերում, հակառակը, շարունակում էր մարտական գործողությունները ճակատային գծերում (ռմբակոծում էր ՀՀ սահմանային գյուղերը, նոր պատանդներ էր տարել Գորիսի կողմերում)։ Ասում էին՝ ԵԱՀԽ անդամ երկրներն էլ դեռեւս պատրաստ չեն Լեռնային Ղարաբաղ ուղարկել 500 այն դիտորդներին, որոնք պետք է վերահսկեին գրաֆիկի իրականացմանը («Ազգ», հոկտեմբերի 6)։

Հոկտեմբերի սկզբներին (հոկտ. 3-ին) Ադրբեջանում պրեզիդենտ էր ընտրվել Հ. Ալիեւը, որին հեռագրով շնորհավորեց Լ. Տեր-Պետրոսյանը («Երկիր», հոկտ. 7)։

◇ ◇ ◇

Հրադադարը ԼՂՀ-ում խաղաղ-վերականգնողական աշխատանքների հնարավորություններ էր ընձեռնել աշխատավորությանը, որի մի զգալի մասը զինվորությունն է։ Գյուղերում վերականգնվում էին ավերված բնակարաններն ու տնտեսական շինությունները։

Կարմիր-շուկայի գինու գործարանը ոտքի էր կանգնում եւ, որպես հետաքրքիր նորույթ, հոկտեմբերի 15-ից այստեղ կգործի շաքարահյութի արտադրության բաժանմունք, որի հիմքի վրա հետագային նախատեսվում է արտադրել չոր շաքար, որի համար Արցախն անսահման հնարավորություններ ունի, նկատի է առնվում շաքարի ճակնդեղի մեծ բերքը, որ ստացվում է այստեղ («Ազգ», հոկտ.7)։

◇ ◇ ◇

Ադրբեջանի ԱԳ նախարար Հասան Հասանովն «Ազատություն» ռադիոյի թղթակցին հայտարարել է, թե նոր գրաֆիկը, որ Մարիո Ռաֆայելիի ստեղծածն է, Ադրբեջանի համար անընդունելի է, որովհետեւ հայկական զորքերի դուրսբերումն Ադրբեջանի տարածքից պայմանավորված է Ադրբեջանի կողմից շրջափակումների վերացման հետ, ապա Ադրբեջանին պարտադրվում է վերականգնել Ղազախ-Իջեւան երկաթգծի վնասված տեղամասերը, իսկ ոչ մի խոսք չի ասվում Նախիջեւանի ապաշրջափակման վերաբերյալ («Երկիր», հոկտ. 9)։

**Հոկտեմբերի 8-ին** Մոսկվայում տեղի ունեցավ Բ. Ելցինի հանդիպումը Այսրկովկասի հանրապետությունների ղեկավարների հետ։ Քննության առնվեցին այս տարածքում տիրող հակամարտությունները վերացնելու, կայուն խաղաղություն ստեղծելու հարցերը։ Ելցինը պատրաստակամություն հայտնեց՝ իր երկրի հնարավորությունները գործադրելու, որպեսզի լուծվեն դրանք։

**Հոկտեմբերի 8-ին** ժամը 16.00-ին պետք է կայանար Տեր-Պետրոսյան-Ալիեւ հանդիպումը Մոսկվայում, սակայն Ադրբեջանի նախագահն անսպասելիորեն վերադարձավ Բաքու՝ պատճառաբանելով, որ այնտեղ իրավիճակը լարված է։ «Հայլուրի» թղթակիցը կապվել էր Բաքվի աղբյուրների հետ. ադրբեջանի մայրաքաղաքում հանգիստ է։ Մոսկովյան դիտորդների կարծիքով՝ Հեյդար Ալիեւն ուղղակիորեն խուսափել է Հայաստանի նախագահի հետ առանձին հանդիպումից, ինչը հիմքեր է տալիս կասկածի տակ առնել Լեւոն Տեր-Պետրոսյանի այն հայտարարությունը, թե ղարաբաղյան հակամարտության երկու կողմերը հասկացել են, որ ռազմական ճանապարհով հարցի լուծումն անհնարին է» («Երկիր», հոկտ. 9)։

**Հոկտեմբերի 10-ին** Զաքրայիլի շրջանի ադրբեջանական դիրքերից լայնածավալ հարձակումներ են սկսվել հայկական դիրքերի վրա։ Երկուստեք կորուստներ կան։ Մերոնք կորցրել են 5 զինվոր։

Մեկօրյա ընդմիջումից հետո պատերազմը նորոգվել է 12-ին։ Թուրքերն այս անգամ էլ հրթիռակոծության են ենթարկել Հադրութի շրջանի ողջ հարավային մասը։ Բորբոքված մարտերով ԼՂՀ զորքերը կասեցրել են թուրքերի առաջխաղացումը՝ տալով 9 զոհ։ Սակայն մերոնք ոչնչացրել են հակառակորդի երկու հենակետ, մեկը՝ Զաքրայիլի շրջանի Շեյբեյ գյուղում, մյուսը՝ Ֆիզուլու շրջանի Նյուզգերում։

Շահումյանի շրջանի հայ ֆիդայիները ոչնչացրել են զինվորներ տեղափոխող մեկ ավտոբուս։

Թուրքերը գրոհների էին դիմում ռազմաճակատի բոլոր հատվածներում։ Իրականանում են հայկական կողմի զգուշացման սթափ խոսքերը, երբ ասում էին՝ թուրքը հրադադար է պահանջում նոր գրոհների պատրաստվելու համար։

◇ ◇ ◇

Հակամարտության գոտի է այցելել ԵԱՀԽ-ի պատվիրակությունը՝ Շվեդիայի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Մարիաս Մոսբերգի գլխավորությամբ։ Ասում են՝ այն ստացել է Ադրբեջանի դիտողությունները նոր գրաֆիկի վերաբերյալ։

◇ ◇ ◇

Թուրքական «Հուրիեթ» թերթի հաղորդման համաձայն՝ Ադրբեջան են ժամանել ռուս 200 սպաներ, որոնք պետք է տեղավորվեն Կաբալայի ռադարային հայտնի կայանում, որով հիմք կդրվի ռուս-ադրբեջանական ռազմական համագործակցության («Ազգ», հոկտ. 13)։

**Հոկտեմբերի 7-ին** ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հրապարակել էր նոր որոշում (N 874), որը կոչ էր անում իրականացնել նախորդ գրաֆիկը։ Ադրբեջանական կողմը հիմա էլ ընդդիմանում էր՝ պատճառ համարելով այն, որ գրաֆիկում նախնական քայլերից մեկը չի ճանաչվում ԼՂՀ-ից փախած 50 հազար ադրբեջանցիների վերադարձն իրենց նախկին բնակավայրերը («Երկիր», հոկտ. 19)։

Սակայն հենց միայն մի հանգամանք՝ որ այս փաստաթղթով ԼՂ-ն համարվում էր Ադրբեջանի մաս, պետք է, որ նրանից հեռու պահեր հայկական կողմերին: Մինչդեռ Ժ. Լիպարիտյանի հայտարարությունում այդ փաստաթուղթը համարվում էր մի առաջքայլ նախորդների համեմատությամբ (տես, օրինակ, «Ազգ», հոկտ. 20-ին նրա մամուլի ասուլիսին վերաբերող հաղորդումը):

✧ ✧ ✧

«Ըստ ՀՀ բռնագաղթածների վարչության տվյալների՝ իրենց նախկին բնակավայրերն են վերադարձել Հայաստանում գրանցված 44.500 բռնագաղթածներից 30 հազարը: Նրանք հիմնականում վերադառնում են Մարտակերտի, Ասկերանի շրջանների իրենց գյուղերը, որոնք մեծ մասամբ այրվել ու ավերվել են թշնամու կողմից: Ըստ նույն աղբյուրի՝ միայն Ղարաբաղի տարածքում ավերվել է 13 հազար տուն: Այժմ ՀՀ կառավարության հանձնարարությամբ բռնագաղթածների վարչությունը իրականացնում է Մարտակերտի շրջանի 7 եւ Ասկերանի շրջանի 4 գյուղերի վերականգնումը: Առայժմ կվերանորոգվի յուրաքանչյուր վնասված տան միայն մեկ սենյակը՝ հնարավորություն ընձեռելով վերադարձող ընտանիքներին ձմեռել հարազատ գյուղերում: Նշված ծավալով վերանորոգման աշխատանքները նախատեսվում է ավարտել մինչեւ նոյեմբերի 15-ը» («Երկիր», հոկտ. 19):

✧ ✧ ✧

**Հոկտեմբերի 14-ին** Ֆրանսիայի Միջազգային դիվանագիտական ակադեմիայի հրավերով Փարիզ ժամանած ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հայտարարել է, թե հակամարտության հարցը քննելիս ԼՂՀ անկախ պետականության պահանջները հաշվի չառնելու դեպքում շատ ավելի բարդ խնդիրներ են ստեղծվելու:

**Հոկտեմբերի 15-ին** ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահը ելույթ է ունեցել դիվանագիտական ակադեմիայի դահլիճում, իսկ հաջորդ օրը նրա պատվին տրվել է մեծ հյուրասիրություն Փարիզի շքեղ հյուրանոցներից մեկում: Պաշտոնական հաղորդագրություններում ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահը ներկայացվում էր որպես Լեռնային Ղարաբաղի նախագահ: Կիրակի օրը Քոչարյանը մեկնել է Բիլֆիյա, ուր նախատեսվում են նրա հանդիպումները ՆԱՏՕ-յի, Եվրախորհրդարանի եւ արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ» («Ազգ», հոկտ. 20):

**Հոկտեմբերի 18-19-ին** էլ Ռ. Քոչարյանը եղել է Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում, ուր պաշտոնական հանդիպումներ է ունեցել ՆԱՏՕ-յի գրասենյակում, Եվրախորհրդում, քննարկել ԼՂՀ վիճակի կարգավորման հարցը:

**Հոկտեմբերի 21-ին** «Ազգը» տպագրել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 874-րդ փաստաթղթի շուրջ ԱԳՆ-ի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանի հարցազրույցը: Այստեղ բանախոսը փորձում էր ցույց տալ, թե 874-ը լավն է նախորդներից եւ ընդունելի (բայց ինքն ընդունելի է համարել նաեւ նախորդները): Գիտե, որ իր կառավարությունն ընդունել է որոշումը, որով անընդունելի պետք է ճանաչվեն բոլոր այն փաստաթղթերը, որոնցում ԼՂ-ն կհամարվի Ադրբեջանի մաս: Հիմա այստեղ դա արված է կոպտորեն, եւ ինքն ընդունում է:

**Իբր, հոկտեմբերի 19-ին** Հռոմում պետք է սկսվեր Մինսկի խմբի 9-յակի ոչ պաշտոնական խորհրդաժողով, որում հնարավոր պիտի լինի որոշ հարցերում առաջխաղացում անել, քանի որ 874-րդի մասին Բուտրոս Ղալիին ու Մարիո Ռաֆայելիին իրենց կտրական դիտողություններն ու պահանջներն են ուղարկել ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը եւ ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը (տե՛ս «Ազգ», հոկտեմ. 21):

**Հոկտեմբերի 21-22-ին** ծանր մարտեր են եղել Ջաբրայիլի շրջանում: ԼՂՀ զորքերը, թուրքերի համառ եւ տեւական ճնշման տակ զիջել են շրջանի չորս հենակետեր (Կույջակ, Չափարշա, Շեյբեյ, Նյուզգեր):

Պատերազմական օջախներ կային նաեւ այլ վայրերում՝ ինչպես ԼՂՀ հարավում, այնպես էլ հյուսիսում:

Ըստ երեւույթին հայկական լրատվության աղբյուրները ստույգ չէին ճակատին վերաբերող իրենց տեղեկություններում, պարզ ասած՝ թաքցնում էին իրական պատկերը... Քանի որ Ռուսաստանի արտգործնախարարությունը հոկտեմբերի 25-ին հրապարակեց հայտարարություն, որով նշում էր ղարաբաղյան ուժերի նոր ակտիվ գործողությունների ու գրավումների մասին՝ առաջարկելով ետ կանգնել նման քայլերից: Ահա այդ հայտարարության էական մասը եւ արվող վճռական առաջարկը. «Սկսվել է Ղարաբաղի հայերի հարձակումը Ադրբեջանի հարավարեւմտյան շրջաններում, Լեռնային Ղարաբաղի տարածքի սահմաններից դուրս: Դա նշանակում է հակամարտության հետագա տարածում, որը ձմռան շեմին առանձնապես աղետալի հետեւանքներ ունի տասնյակ հազարավոր ադրբեջանցի նոր փախստականների համար: Կենսապահովման աղբյուրներից կտրվել են Ադրբեջանի խիտ բնակեցված շրջաններ, բռնագաղթվել են խաղաղ գյուղեր, որոնք նույնպես կարող են կողոպուտի ու ավերումի օբյեկտներ դառնալ:

Ռուսաստանի դաշնության ԱԳ նախարարությունը Ղարաբաղի զինված կազմավորումներին կոչ է անում դադարեցնել հարձակումը, իրենց ուժերը ետ քաշել ելման դիրքեր» («Երկիր», հոկտ. 27):

Լրատվության մեր աղբյուրները ռազմաճակատի բոլոր գոտիներում անդորր են արձանագրում: Իսկ ադրբեջանցիների պնդումներով՝ մեր զորքերը նոր գրոհներ են ձեռնարկել: Թվում է՝ սա մոտ է ճշմարտության, քանի որ հոկտեմբերի 27-ի ժամը 18-ից հարավ-արեւմտյան ուղղությամբ գործող ղարաբաղյան զորամիավորումները բանակի հրամանատարության հրամանով դադարեցրել են մարտական գործողությունները՝ հնարավորություն տալով Զանգելանի շրջանի խաղաղ բնակչությանը դուրս գալու ռազմական գործողությունների տարածքից: Հետախուզության տվյալներով՝ քաղաքացիական բնակչության հետ միասին Զանգելանի շրջանից հեռանում էին նաեւ ադրբեջանական զինված կազմավորումները:

Հետախուզության մի այլ տեղեկության համաձայն՝ շարունակվում են հակառակորդի կենդանի ուժի եւ տեխնիկայի ակտիվ տեղաշարժեր Ասկերանի եւ Մարտակերտի պաշտպանական գոտիների հայկական դիրքերի ուղղությամբ:

**Հոկտեմբերի լույս 28-ի** գիշերը թշնամին հրետակոծության է ենթարկել Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղի մոտ տեղակայված հայկական պաշտպանական դիրքերը» («Երկիր», հոկտ. 29):

✧ ✧ ✧

Ադրբեջանական ուժերը, ռազմաճակատի հիմնական հանգույցներում անհաջողության մատնվելով, անհանգիստ էին, հայկական դիրքերը կրակի տակ էին առնում առանձին կետերում: Այդպես եղավ նաեւ Աղդամից հյուսիս ընկած Շահբուլաղում (հին Տիգրանակերտ), ուր դիրքավորված արցախցիների վրա հոկտեմբերի 29-ին կրակ տեղացին, սակայն եւ սարսափահար ճողոպրեցին, երբ ճաշակեցին պատասխան միջոցառման դառնությունը:

**Նույն 29-ին** Ֆիզուլու շրջանի արեւելյան մասում, նախորդ օրերին նախապատրաստական զորաշարժերից հետո, Բոյուք-Բահմանլի գյուղի ուղղությամբ թուրքերը մեծ գրոհ ձեռնարկեցին՝ գործի դնելով ռազմական 4 ուղղաթիռներ, որոնցից մեկը վայր գցվեց հենց գրոհի սկզբին:

Իսկ հարավում, Զանգելանի շրջանի տարածքից, թուրքերի Իրան փախչելն այլեւս դարձել էր անհաղթահարելի («Ազգ», հոկտ. 30):

մասին։ Բաքվի բարձրագույն ռազմական ուսումնարանի ղեկավար գեներալ Իվան Կովալյովը, նրա մի ոգեշունչ ելույթից հետո, հավաստիացրել է, որ 14 օրվա ընթացքում զինվորները պատրաստ կլինեն մարտական գործողություններ վարելու ամենուրեք («Երկիր», նոյեմբ. 9)։ Եվ պրեզիդենտը հայտարարել է նոր զորահավաք ու պահանջել ռազմական բազմակողմանի պատրաստություն («Երկիր», նոյեմբ. 12)։

**Նոյեմբերի 10-ին** լրատվական մարմինները հաղորդեցին, որ ավարտվել է Մինսկի խմբի Վիեննայում տեղի ունեցած խորհրդակցությունը, ուր լայն քննարկման է ենթարկվել ղարաբաղյան հակամարտության խնդիրը եւ կտրական որոշում է ընդունվել, որպեսզի հակամարտող կողմերը վերադառնան մինչեւ հոկտեմբերի 21-ն զբաղեցրած դիրքերը («Երկիր», նոյեմբ. 10)։

Վստահորեն կարելի է ասել, որ այս որոշման հեղինակները չեն հավատացել, թե դրանով որեւէ քայլ առաջ են մղում հարցի լուծումը։

✧ ✧ ✧

Հաղորդումներ էին լսվում, թե ադրբեջանցի կամավորներն արդեն հասել են ռազմաճակատ, եւ նրանք են, որ հրետակոծում են ԼՂՀ պաշտպանական դիրքերը, ՀՀ Արարատի շրջանի Երասխավանն ու Սեւակավանը։

Նույն օրն ադրբեջանի վարչապետ Սուրաթ Հուսեյնովը հանդես էր եկել հայտարարությամբ, որով խոստանում էր ամենակարճ ժամանակում ոչ միայն ազատագրել գրաված շրջանը, այլեւ «Ղարաբաղի հյուսիսային մասը՝ Շուշի քաղաքով հանդերձ» («Ազգ», նոյեմբ. 12)։

Խեղճն այնքան էլ չգիտեր, որ Շուշին ԼՂՀ հյուսիսային մասում չի գտնվում։

✧ ✧ ✧

Ադրբեջանի պաշտոնական լրատվությունը վերջին օրերին մի բերան այն մասին էր խոսում, թե հայերը լայնահուն հարձակում են պատրաստում ինչպես հարավային ռազմաճակատում, ուր ավելի քան 120 կմ երկարությամբ սահմանակից են Իրանին, այնպես էլ հյուսիսում՝ Թարթառի ու Շահումյանի կողմերում («Ազգ», նոյեմբ. 13)։

Սա անկասկած միջոց էր նախապատրաստվող սեփական հարձակումն արդարացնելու համար։

✧ ✧ ✧

Վերջապես խոսք հրապարակվեց Մինսկի խմբի Վիեննայում (նոյեմբերի 2-8-ին) խորհրդակցության ընդունած 884-րդ բանաձեւի մասին։ Ուրեմն, այն կրկին ԼՂ-ն առնում է Ադրբեջանի կազմի մեջ, Հայաստանին հանձնարարում իրականացնել ՄԱԿ-ի 822-րդ, 853-րդ եւ 884-րդ բանաձեւերը։

**Նոյեմբերի 15-ին** տեղի ունեցած մամուլի ասուլիսում ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը հաղորդեց, որ Վիեննայից առաջ Փարիզում տեղի էր ունեցել մի խորհրդաժողով, որի ընդունած «Անհապաղ միջոցառումների ժամանակացույցն» այնքան էլ ընդունելի չեղավ Ադրբեջանի համար։ Դրան հետեւեց այս 884-ը (Վիեննայինը՝ ոնց որ ադրբեջանցիների թելադրանքով գրված)։ Սա էլ ընդունելի չէ Ղարաբաղի համար։ Սակայն ԵԱՀԽ-ի Մինսկի խումբը պահանջ է դրել, որ այս վերջինի պատասխանը տրվի մինչեւ նոյեմբերի 22-ը, եւ ԼՂ-ը պարտավորվի իր զորքերը դուրս բերել Ֆիզուլիի, Աղդամի, Կուբաթլիի, Ջաբրայիլի ու Քալբաջարի շրջաններից։

Ղուկասյանը պատմեց, թե խորհրդաժողովում ի՜նչ ակտիվ դեր էին կատարում իննյակի «անկողմնակալ» անդամ Թուրքիայի պատվիրակությունը եւ նրա ներկայացուցիչ Ջհանդան Նազին («Երկիր», նոյեմբ. 16)։



✧ ✧ ✧

Դեռ **նոյեմբերի 11-ին** էր, որ Ռուսաստանի արտգործնախարար Անդրեյ Կոզըրեւը հայտնել էր, թե իր կողմը համաձայն է 884-րդ բանաձեւին, այսինքն՝ ԼՂ-ի զորքերը պետք է ետ քաշվեն եւ զբաղեցնեն հոկտեմբերի 21-ից առաջ ունեցած դիրքերը։ Նա ճիշտ էր համարում բանաձեւի այն պնդումը, թե Ղարաբաղն Ադրբեջանի մասն է կազմում («Ազգ», նոյեմբ. 17)։

Իսկ հեռավոր Ամերիկայում չեն բաժանում այդ կարծիքը։ «Վերջին շաբաթվա ընթացքում ամերիկյան երկու խոշորագույն թերթեր՝ «Քրիսչըն սայնս մոնիթորը» եւ «Չիկագո տրիբյունը», խախտելով նախկին կաղապարները, առաջին անգամ Լեռնային Ղարաբաղը հայկական տարածք են անվանել։ «Չիկագո տրիբյունի» հրապարակած հոդվածում շեշտվում է, որ շրջափակված ու ցրտահար Հայաստանը շարունակում է աջակցել Լեռնային Ղարաբաղին, որը հաղթում է Ադրբեջանի վիթխարի, բայց անճարակ բանակին։ Նկարագրելով Հայաստանի չտաքացվող դպրոցները, ծննդատներն ու բնակարանները, թերթը մեջբերում է Երեւանում անցորդների խոսքերը, որոնք պատրաստ են վերապրել եւս մեկ ձմեռ առանց ջերմության ու լույսի՝ հանուն Ղարաբաղի ազատագրման» («Երկիր», նոյեմբ. 19)։

Վաշինգտոնում Հայ դատի գրասենյակից էլ հաղորդել են, ԱՄՆ-ի կոնգրեսական Ջոն Քենեդին նոյեմբերի 12-ին նամակ է ուղղել ԱՄՆ-ի պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերին, որը ներկայացրել է կոնգրեսականներին՝ ստորագրություններ հավաքելու համար։ Նամակում պահանջվում է, որ Միացյալ Նահանգները «հնարավորին՝ չափ խիստ մտահոգություն հայտնի Ադրբեջանի եւ Աֆղանստանի կառավարություններին՝ Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի զինված արշավում ավելի քան 1000 աֆղան մոջահեդներ ներգրավելու» առնչությամբ։ «ԱՄՆ-ը պետք է պահանջի աֆղան զինվորականներին անհապաղ եւ ամբողջական դուրս բերումը, քանի որ նրանք սպառնում են շրջանի խաղաղությանը, անվտանգությանը եւ կայունությանը»,- ասված է Ջ. Քենեդիի նամակում («Երկիր», նոյեմբ. 18)։

✧ ✧ ✧

**Նոյեմբերի 20-ին** Իջեւանի մոտ գնդակոծեցին Ռուսաստանի պրեզիդենտի հատուկ դեսպան Կազիմիրովի ու նրան ուղեկցող մարդկանց մեքենաները, ինչի պատճառով էլ դեսպանը հրաժարվեց այցելել Երեւան ու Ստեփանակերտ։ Ադրբեջանն այս դեպքը բացատրեց նրանով, թե հայերն Իջեւանի շրջանում մեծ քանակության ռազմական տեխնիկա են կուտակել, ձեռնտու չէ, որ դեսպանն այն տեսնի («Ազգ», նոյեմբ. 23)։ Իսկ հայերը գտնում էին, որ դեպքն իրենք՝ ադրբեջանցիներն են կազմակերպել՝ Կազիմիրովին լարելու հայերի դեմ, ուղերթն են փոխել եւ սահման հասցրել ոչ նախօրոք պայմանավորված ուղերթով («Երկիր», նոյեմբ. 23)։

Դեսպանն անձամբ, հեռանալով դեպքի վայրից եւ գնալով Մոսկվա՝ խոստացավ շուտով այցելել Երեւան եւ Ստեփանակերտ, ապա հայտարարեց, թե ինքը չէր ցանկանա, որ տհաճ դեպքը վատ ազդեցություն ունենա բանակցությունների վրա («Երկիր. նոյեմբ. 23)։

Ռուսաստանի Նախարարների խորհուրդը, սակայն, այդ առթիվ Հայաստան հղեց մեղադրական մի հայտարարություն, որի մեջ ասվում էր. «ՌԴ կառավարությունը վճռականորեն դատապարտում է միջազգային իրավունքի նորմերը ոտնահարող այն աննախադեպ գործողությունը եւ Հայաստանի բարձրագույն ղեկավարությունից պահանջում է անհապաղ հրապարակավ ներողություն հայտնել կատարվածի համար ու երաշխավորելով հետագայում ռուսական ներկայացուցիչների պաշտոնական առաքելությունների անվտանգության անշեղ ապահովումը։ ՌԴ կառավարությունը հաստատապես համարում է, որ այդ չարագործության մեղավորները պետք է դատի տրվեն, եւ իրավունք է վերապահում նման միջադեպերի կրկնությունը բացառելու համար ամենավճռական միջոցա-

ումներ ձեռնարկել» («Երկիր», նոյեմբ. 24):

**Նոյեմբերի 22-ին** Ադրբեջանը, Հայաստանը եւ ԼՂ-ը պետք է ներկայացնեին իրենց պատասխանները ԵԱՀԽ Մինսկի խմբի վերջին ժամանակացույցի առթիվ: Հայաստանը ժամանակին ներկայացրեց իր համաձայնությունը: Ադրբեջանը պատասխանի փոխարեն ներկայացրեց մի ընդհանուր մեղադրական հայերի դեմ: Այնտեղ նշվում էր, թե «Հայաստանի զինված ուժերի կողմից գրավվել է հանրապետության տարածքի 20 տոկոսը, հայկական ագրեսիայի ընթացքում զոհվել են ավելի քան 16 հազար, վիրավորվել 22 հազար, հաշմանդամ դարձել ավելի քան 22 հազար ադրբեջանցիներ»: Ադրբեջանի տարածքում պատերազմի ընթացքում ավերվել են ավելի քան 700 բնակավայր, 6 հազար արդյունաբերական եւ գյուղատնտեսական օբյեկտներ, 107 հազար բնակելի տուն, սոցիալմշակութային 3 հազար օբյեկտ, 541 միջնակարգ դպրոց, 200 բուժհիմնարկներ եւն: Նշվում է նաեւ, որ «Ադրբեջանը բարձր է գնահատում եւ պատշաճ երախտագիտությամբ ընդունում է ՄԱԿ-ի պետությունների, միջազգային մյուս կազմակերպությունների, բարեկամ երկրների, նախեւառաջ Թուրքիայի ու Իրանի ցույց տված մարդասիրական օգնությունը» («Երկիր», նոյեմբ. 24):

ԼՂՀ արտգործնախարարությունը ձգձգում էր պատասխանը, քանի որ ժամանակացույցի քննարկումը կատարվում էր ԳԽ-ի նստաշրջանում, ուր սուր վեճեր էին գնում, եւ անհնար էր միանշանակ եզրակացության հանգել: Դրա թելադրանքով էլ վերստին Գորիսում տեղի ունեցավ (նոյեմբերի 24-ին) ՀՀ ու ԼՂՀ ղեկավարների խորհրդակցություն եւ, հավանաբար, այն գլխավորող Լ. Տեր-Պետրոսյանն արցախցիներին հարկադրեց ստորագրել:

**Նոյեմբերի 25-ին** ԼՂՀ-ն իսկապես տվեց իր համաձայնությունը. ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Կ. Բաբուրյանը Մարիո Ռաֆայելիին ուղարկեց ժամանակացույցի տարբերակը՝ նրա հետ ուղարկելով իր դիտողություններն ու առաջարկությունները («Երկիր», նոյեմբ. 26):

Ռուս մի խումբ նշանավոր մտավորականներ (Կ. Ալեքսեեւսկի, Ի. Բուրկովա, Վ. Միկուշեւիչ եւ այլք) հրապարակեցին հայտարարություն, որով անիրավացի էին համարվում Վ. Կազիմիրովի դեմ սարքված դիպվածի համար հայկական կողմին մեղադրելը՝ պահանջելով «միջադեպի մանրակրկիտ քննությունը» (նույն տեղում):

✧ ✧ ✧

Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂ-ի հանրապետության բարձրագույն պարգեւի՝ առաջին աստիճանի «Մարտական խաչի» շքանշանների հանձնման անդրանիկ արարողությունը. նրանցով նշվել էին ռազմաճակատներում զոհված 14 հրամանատար-մարտիկների անօրինակ սխրանքները: Շքանշանները հանդիսավոր պայմաններում հանձնեցին զոհվածների հարազատներին:

✧ ✧ ✧

Ադրբեջանում Ռուսաստանի դեսպան Վալտեր Շոնիան (անկասկած վրացի) «Թուրան» լրատվական գործակալությամբ ելույթ է ունեցել՝ իբր, Կազիմիրովի հետ պատահածի առթիվ («Ռուսաստանի համբերությունը հատեց...»), սակայն հիմնականում դառնալով Արցախի խնդրին, ցույց տալով, որ այստեղ ինքն ավելի անհանդուրժող է, քան թուրքերը: Ասում էր. «Չի կարելի ինքնորոշվել 25 անգամ. հայ ժողովուրդն արդեն ունի իր պետությունը՝ ի դեմս Հայաստանի հանրապետության»: Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքը հայկական կողմի մեկնաբանության մեջ ծաղրուծանակի է հասցվել,- ասել է նա: Ապա նշել է, թե «հայերի, այսպես կոչված, ինքնորոշման իրավունքի արդյունքը Լեռնային Ղարաբաղից զատ Ադրբեջանի 6 շրջանների բռնագրավումն է, մեկ միլիոնից ավելի ադրբեջանցի փախստականները»: Ինչ վերաբերում է անդրկովկասյան տարածաշրջանում ՌԴ ռազմավարական



դաշնակիցներին, ապա, ըստ Վ. Շոնիայի, «Ռուսաստանի ամենակարեւոր ռազմավարական դաշնակիցը տարածաշրջանի բոլոր ոլորտներում հենց Ադրբեջանն է»:

Ուրեմն, Վրաստանը՝ այս Շոնիայի հայրենիքն էլ հեչ: Ճիշտ են ասել, թե ծախված հոգին իր մորն էլ կուրանա ու կծախի:

✧ ✧ ✧

Անկարայում տեղի էր ունենալու «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» նիստը, որին պետք է մասնակցեին նաեւ ԼՂՀ ներկայացուցիչները: Մոսկվայում Թուրքիայի դեսպանատունը մերժեց նրանց մուտքի վիզա տալ՝ դա պատճառաբանելով, թե գոյություն չունի ԼՂ-ի հանրապետություն, որպեսզի նրա ներկայացուցիչներն էլ մասնակցեն ի՞նչ-ինչ ժողովների:

Հելսինկյան կազմակերպությունում ԼՂՀ-ը ներկայացնող Կարեն Օհանջանյանն ասել է. «Եվ այդ տեսակ մտածող երկիրն էլ հանդես է գալիս իբրեւ ղարաբաղյան հակամարտությունը կարգավորող ԵԱՀԽ միջնորդ խմբի անդամ: Պարզապես զավեշտական է» («Ազգ», նոյեմբ. 30):

✧ ✧ ✧

Ամսվա վերջին հայտնի դարձավ, որ Ադրբեջանը մերժել է Մինսկի խմբի ժամանակացույցը («Ազգ», նոյեմբ. 30): Հետաքրքիր է ի՞նչ պատճառաբանությամբ, երբ այնպես էր թվում, թե այդ փաստաթուղթը գրվել է նրա համար կամ նրա ձեռքով: Գուցե անընդունելի էր Լեռնային Ղարաբաղը հակամարտող ու շահագրգիռ կողմ ճանաչելո՞ւ փաստը: Բայց չէ՞ որ նախընթացին հենց ինքն էր բանակցություններ վարում այդ հանրապետության ներկայացուցիչների հետ՝ հենց իր պրեզիդենտ Հ. Ալիեւի ստորագրած գրության համաձայն: «Մեկնաբանելով Ադրբեջանի մերժումը՝ Հայաստանի արտգործնախարարի առաջին տեղակալ Ժիրայր Լիպարիտյանը երեկ (նոյեմբերի 30-ին.- Բ. ՌԻ.) կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց, թե Ադրբեջանն ամենայն հավանականությամբ հույս ունի առաջիկայում ռազմական հաջողությունների հասնել եւ դրանով իսկ պարտադրել իր դիրքորոշումը, եւ հավելել է (ըստ պրն. Լիպարիտյանի՝ ոչ սխալ), որ շրջափակման միջոցով Հայաստանը եւ Ղարաբաղը թուլացնելուց հետո կարող է հույսը դնել ռազմական հաղթանակների վրա: Արտգործնախարարի տեղակալը չբացառեց նաեւ երկրորդ բացատրությունը, ըստ որի Ադրբեջանում առայժմ պարզապես լիովին չեն կողմնորոշվել եւ հույս ունեն, թե մերժումից հետո հաջորդ ժամանակացույցն ավելի նպաստավոր կլինի իրենց համար: Ընդ որում պրն. Լիպարիտյանը շեշտեց, որ Հայաստանի իշխանություններն ու անձամբ նախագահը մեծ ջանքերի գնով ապահովեցին Ղարաբաղի ղեկավարության համաձայնությունը, թեեւ դա ռիսկ էր պարունակում. ժամանակացույցն այնքան էլ ընդունելի չէր Ղարաբաղի համար» («Ազգ», դեկտ. 1):

✧ ✧ ✧

**Դեկտեմբերի 2-ին** Բայլականից թուրքերը լայնածավալ, կատաղի գրոհ են ձեռնարկել ԼՂՀ դիրքերի վրա՝ օգտագործելով ծանր տեխնիկա, «Գրադ» կայանքները: Ինքնապաշտպանները դիմակայում են թշնամուն: Երկու կողմերն ունեցան կորուստներ («Երկիր», դեկտ. 3): Նույն օրը կատաղի մարտեր եղան նաեւ Ֆիզուլու կողմերում, Մարտակերտի շրջանի հյուսիսային եզերքին: Վերջինում անընդհատ կուտակվում էին նոր զենքեր ու տեխնիկա:

Համարյա բոլոր ճակատներում էլ թուրքերի կողմից կռվում են աֆղան մոջահեդներ.- հաստատում են հայ հետախույզները («Ազգ», դեկ. 3):

**Դեկտեմբերի 1-ին** Հռոմում ավարտված ԵԱՀԽ արտգործնախարարների խորհրդաժողովում համաձայնություն չի կայացել ղարաբաղյան հակամարտության առթիվ, քանի որ Ադրբեջանը պաշտպանել է տարածքների անձեռնմխելիության սկզբունքը, Հայաստանը՝ ինքնավարության:

Սակայն այդ ժողովում լուրջ խոսակցություն է եղել նախկին ԽՍՀՄ տարածքում, ուրեմն եւ Այսրկովկասում, Ռուսաստանին խաղաղարար ուժի դեր հատկացնելու եւ դրա համար նույնիսկ միջազգային ֆինանսական հնարավորություններ տալու մասին: Դա իրական ուժ է ստանում, երբ նկատի է առնվում ԱՄՆ-ի դրական կարծիքը («Պետքարտուղարության ներկայացուցիչ Շեյլին... հայտարարել է , թե Ռուսաստանի կողմից իրագործվող խաղաղապահ գործողությունները չպետք է հակասեն նախկին ԽՍՀՄ երկրների անկախությանը»): Ռուսաստանի այս դերի քննարկումն ու որոշման հարցը հետաձգվել է մինչեւ հաջորդ տարվա մարտը («Ազգ», դեկ. 3):

**Դեկտեմբերի 3-ին** ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանը հրապարակել է հայտարարություն, որի մեջ նշվում է, թե հակամարտության կարգավորմանն ուղղված բազմակողմանի ջանքերն արհամարհելով՝ Ադրբեջանի իշխանությունները գերադասեցին այլ ուղի՝ մերժեցին ոչ միայն ԵՍՀԽ-ի եւ ՄԱԿ-ի կողմից հավանություն ստացած ժամանակացույցը, այլեւ Մինսկի խորհրդաժողովի գաղափարն ընդհանրապես, որի նպատակը ղարաբաղյան հակամարտության քաղաքական կարգավորումն է: Պրն. Քոչարյանը հայտարարել է նաեւ, որ թեեւ ՄԱԿ-ը կոչ է արել հակամարտության կողմերին զենք եւ զինամթերք չմատակարարել, այնուամենայնիվ Ադրբեջանը ցուցադրաբար գնում է տանկեր եւ ռազմական ինքնաթիռներ, ներգրավում վարձկաններ: Ռազմաճակատի գծի ողջ երկայնքով նկատվում են ադրբեջանական բանակի ռազմական ուժի մեծ կուտակումներ, այնտեղ են տեղափոխվում զինված կազմավորումներ եւ զինամթերք տեղափոխող տանկային շարասյուներ: Ըստ հայտարարության՝ նախապատրաստվելով լայնածավալ գրոհի, Ադրբեջանը միաժամանակ փորձում է միջնորդներից զիջումներ կորզել:

Ցավոք, աշխարհը չի շտապում արձագանքել նման վտանգավոր նախանշաններին, որոնք սպառնում են ռազմական գործողությունների հերթական ակտիվացմամբ: Մենք մեր պարտքն ենք համարում մեկ անգամ եւս համաշխարհային հանրության ուշադրությունը հրավիրել այն փաստի վրա, որ Ադրբեջանի ղեկավարներն արդեն ավելի քան մեկ տարի մտացածին պատրվակներով տապալում են բոլոր միջնորդական առաքելությունները, մերժում ԼՂՀ իշխանությունների հետ հետագա երկկողմ շփումների հնարավորությունը եւ առաջվա պես հույսը դնում են պատերազմի վրա:

Ստեղծված իրավիճակում ԼՂՀ կառավարությունը կձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով»,- վերջում ասվում էր հայտարարության մեջ («Ազգ», դեկտ. 4):

**Դեկտեմբերի 5-7-ը** թուրքերը հարձակողական գործողություններ են ձեռնարկել Մարտակերտի եւ Աղդամի շրջաններում՝ հրետակոծելով ու գնդակոծելով ԼՂՀ դիրքերը Մատաղիսում, Շահբուլաղում: Խաղաղ չի եղել նաեւ Բայլականը: Հայ ինքնապաշտպանները ստիպված էին լռեցնել կրակակետերը:

Շատ էին խոսում այն մասին, որ Ադրբեջանում օտար վարձկաններին գումարվել են ամերիկյան սպաներն ու խորհրդականները («Ազգ», դեկտեմբ. 9): Պարբերական հրակոծություններ ու սահմանագծի խախտումներ են տեղի ունեցել նաեւ հաջորդ օրերին: Հատկապես դաժան են եղել մարտերը Բայլականի կողմերում, չնայած ոչ պակաս բախումներ էին առկա նաեւ ՀՀ Նոյեմբերյանի ու Իջեւանի շրջանների սահմաններում: Բոլոր դեպքերում հայկական ուժերը հաջողությամբ ետ են մղել թշնամուն:

Ադրբեջանական լրատվական մարմիններն այս օրերին պարբերաբար հայտարարում էին, թե այս բախումները հայերն են սկսում, հայերն են, որ շարունակում են անկախ ու ինքնիշխան Ադրբեջանի տարածքների ծվատումը:

**Դեկտեմբերի 17-ի** 00 ժամից հաստատվեց զինադադար մինչեւ դեկտեմբերի 26-ը: Ասում են՝ այն հաստատվել է Ադրբեջանի խնդրանքով ու Ռուսաստանի միջնորդությամբ: Իսկական հրադադար:

Իսկ ադրբեջանական լրատվությունը շարունակում էր վայնասունը, թե հայկական ուժերը հա՜ գրոհում են, եւ իրենց քաջազուն զորքերն էլ կոտորում են նրանց («Երկիր», դեկ. 18):

Նույն օրը ՀՀ, Ադրբեջանի ու ԼՂՀ պատվիրակությունները մեկնեցին Ֆինլանդիա՝



մասնակցելու Ալանդյան կղզիներում կազմակերպվելիք բանակցություններին:

Իսկ ինչո՞ւ Ալանդյան կղզիներում: Որովհետեւ, իբր մի արտակարգ նմանություն կա Ալանդյան կղզիների ու Արցախի ճակատագրերում: Այդ կղզիները, որոնք մի քանի հազար են Բալթիական ծովում, ունեն մեկ ու կես հազար քառ. կմ տարածություն եւ շուրջ երկու ու կես հազար բնակիչ: Մինչեւ 1809 թ. գտնվել են Շվեդիայի տիրապետության ներքո, ապա մինչեւ 1917-ը՝ Ռուսաստանի: 1921 թ. հունիսի 24-ին Ազգերի Լիգայի խորհուրդը ճանաչել է Ֆինլանդիայի իշխանությունն այդ կղզիների վրա: Դա էլ վիճելի լուծում է համարվել, նույն 1921-ի հոկտեմբերի 20-ին Ժընեւում Ալանդյան կղզիներն ապառազմականացվել եւ հայտարարվել են չեզոք: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, 1947 թ., Փարիզի խաղաղության պայմանագրով այս որոշումը նորից է հաստատվել:

Եւ մեր դիվանագետներն այս կղզիների ու Արցախի ճակատագրերն են համարում իրար նման, կամ, թերեւս Արցախի համա՞ր են պատրաստում այսպիսի լուծում՝ ապառազմականացում ու չեզոք գոտու կարգավիճակ:

Կանոնավոր մարդկային տրամաբանությամբ՝ ցնդաբանությու՛ն, իսկ դիվանագետների համար՝ ա՛յն, ինչ պետք է երազի արցախցին:

**Դեկտեմբերի 23-ին** հանրահայտ «Իզվեստիա» թերթը փորձեց պատասխանել այս հարցին՝ վճռաբար հայտարարելով Մարտա Զուբկոյի հոդվածը՝ «Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը որոշում են Ալանդյան կղզիներում»: Հոդվածում հաղորդված է հետեւյալը (մոռանալով Լեռնային Ղարաբաղի պատվիրակների ներկայությունը). Ֆինլանդիային պատկանող Ալանդյան կղզիներում հանդիպում են անցկացնում Ադրբեջանի ու Հայաստանի ներկայացուցիչները, որոնք այդ կղզիների շուրջ Ֆինլանդիայի ու Շվեդիայի միջեւ լուծման պատմական փորձի հիման վրա քննարկում են Լեռնային Ղարաբաղում հակամարտության խաղաղ կարգավորման հնարավորությունները:

Ալանդները ժամանակին պատկանել են Շվեդիային, սակայն 1808-1809 թթ. ռուս-շվեդական պատերազմից հետո Ֆինլանդիայի հետ միասին մտան Ռուսաստանյան կայսրության կազմի մեջ:

Այն բանից հետո, երբ 1917 թ. դեկտեմբերի 6-ին Ֆինլանդիան անկախություն հռչակեց, Ալանդներում ուժեղացավ Շվեդիային միանալու շարժումը: Կղզիների բնակիչները կազմեցին Գուստավ 5-րդին ուղղված մի դիմում, որի ներքո հավաքեցին հազարավոր ստորագրություններ եւ տարան Ստոկհոլմ:

Սակայն Գուստավ 5-րդը դրսեւորեց իմաստնություն եւ զգուշավորություն: Նա զենքի չդիմեց, որպեսզի պաշտպանի ալանդցիների շահերը, այլ հայտարարեց, որ նրանք Շվեդիային կարող են միանալ միայն Ֆինլանդիայի համաձայնության դեպքում: Բայց վեճը շարունակվում էր: Նրա մասնակիցները կազմեցին եռանկյունի (ներկայիս ղարաբաղյան հակամարտության օրինակով)՝ Շվեդիան, Ֆինլանդիան, Ալանդները, որտեղ այդ ժամանակ դեռեւս տեղակայված էր նաեւ ռուսական կայազորը:

Վերջապես գումարվեց Ազգերի լիգան: Շվեդները պահանջում էին, որ հակամարտությունը լուծվի հանրաքվեի հիման վրա, իսկ ֆինները կտրականապես հանդես էին գալիս իրենց ներքին գործերին միջամտելու դեմ:

Վերջիվերջո Ազգերի լիգան ստեղծեց իրավաբանների միջազգային հանձնաժողով, որը վճռեց կղզիները թողնել Ֆինլանդիայի կազմում, բայց ֆիննական կառավարությունը պետք է ապառազմականացներ դրանք, բնակչությանը երաշխավորեր ինքնակառավարում եւ մայրենի լեզվով ուսուցում:

Ահա այսպես էլ լուծվեց այդ հին հակամարտությունը:

Ալանդները, որոնց բնակչության մեծամասնությունն առաջվա պես շվեդներ են, այսօր էլ մտնում են Ֆինլանդիայի կազմի մեջ: Նրանք օգտվում են լայն ինքնավարությունից, ունեն իշխանության իրենց մարմինները՝ խորհրդարան եւ կառավարություն» («Երկիր», դեկտ. 24):

Ինչպես ասում են՝ արցախցու ա՜չքը լույս:

Եւ պատահական չէ, որ բանակցություններին մասնակցած Կ. Բաբուրյանը հետագայում վճռաբար հայտարարել է, թե «Ազգային խնդիրների լուծում այս (Ալանդյան) տարբերակով մեզ համար անընդունելի է» («Երկիր», դեկտ. 28):

**Դեկտեմբերի 24-ին** ադրբեջանական բանակը բազմազան տեխնիկայի ուղեկցությամբ լայնածավալ հարձակման էր անցել Մարդակերտի շրջանում՝ Թալիշ–Մարտակերտ գծով, եւ Մարտունու, ինչպես նաեւ Հադրութի ուղղություններով: ԼՂՀ զորքերը հաջողությամբ պաշտպանում էին իրենց դիրքերը, սակայն, ինչպես արտգործնախարար Ա. Ղուկասյանն է հայտարարել, եթե պատերազմը դադարեցնելու համար չձեռնարկվեն կտրական միջոցներ, այս նոր բորբոքումը նոր որակ կստանա՝ վերածվելով մեծ ողբերգության («Երկիր», դեկտ. 25):

Այս գործողություններին զուգահեռ ադրբեջանական պաշտոնական լրատվությունն էլ առասպելական տվյալներ էր հաղորդում Արցախում իրենց՝ ադրբեջանցիների դեմ կռվող արտասահմանյան բազմահազար վարձկանների մասին: Այդ տվյալների անմտությունը պատկերացնելու համար բավական է հիշել, որ նրանց ասելով՝ «Ռազմական գործողություններին մեկ օր մասնակցելու վարձված զինվորներին վճարում են 400 դոլար...» («Երկիր», դեկտ. 25):

Այս փչոցի հեղինակը գլխի չէր էլ ընկնում, որ իրեն հավատացած թուրք ասկյարը կգար եւ կկռվեր յուրայինների դեմ:

**Դեկտեմբերի 23-ից** Աշգաբադում ԱՊՀ երկրների ու կառավարությունների գագաթաժողովն էր ընթանում: Նրանում կենտրոնական տեղերից մեկն էր գրավում ղարաբաղյան խնդիրը, որին Հ. Ալիեւը, հավանաբար, հույս ուներ հաղթական քայլեր անել: Նրա խոսքն այսպես էր ներկայացրել «Երկիր»-ի թղթակիցը. «Այն պահից, երբ ստանձնել է Ադրբեջանի ղեկավարի պաշտոնը, ղարաբաղյան հարցը միշտ պահել է ուշադրության կենտրոնում, միշտ եղել է հարցի խաղաղ լուծման կողմնակից, ընդհուպ նույնիսկ գնացել է ԼՂ-ի ղեկավար շրջանակների հետ Ադրբեջանի նախկին ղեկավարների կողմից նախադեպը չունեցած շփումների, պայմանավորվածություններ է ձեռք բերվել Տեր-Պետրոսյանի հետ, բայց իր բոլոր ջանքերը եւ նրանց արդյունքում ծնված պայմանավորվածությունները հայկական կողմից խախտվել են, եւ օկուպացվել է Ադրբեջանի զգալի մասը»: Ավելացնելով, նա նշեց, այնուհանդերձ, որ ինքը չի կորցնում լավատեսությունը: Այստեղ Ս. Նիյազովը միջամտեց, թե Լ. Տեր-Պետրոսյանը նույնպես ուժային միջոցների հակառակորդ է: Բացի այդ, ըստ Նիյազովի, Միջազգային վալյուտային ֆոնդի ներկայացուցիչների հետ մի քանի օր առաջ տեղի ունեցած իր հանդիպման ընթացքում իրեն հայտնի է դարձել, որ այդ կազմակերպությունը Հայաստանին ու Ադրբեջանին միջոցներ կտրամադրի միայն պատերազմի ավարտից հետո: Դրանից զատ, նրան տեղեկացրել են, որ Ադրբեջանը անհատույց օգնության կարգով պատերազմի ավարտից հետո այդ հիմնադրամից միջոցներ կստանա ներկայումս գրավյալ տարածքները վերականգնելու համար: Այստեղ արդեն Ալիեւի նյարդերը տեղի տվեցին, եւ նա ընդմիջելով շարունակեց. «Բայց որպեսզի մենք կարողանանք վերականգնել այդ շրջանները, դրա համար նախապես անհրաժեշտ է, որ Լեւոն Հակոբիչը հանի՜ այդտեղից իր զորքերը»:

Ահա Տեր-Պետրոսյանն էր ջնջում նրա մեղադրանքները: Հրապարակվել է ՀՀ նախագահի հայտարարությունը, ուր ասված է՝ Ալիեւը հրաժարվել է իր հետ նախօրոք ծրագրված հանդիպումից, մերժել է ԵԱՀԽ գրաֆիկը, Ռուսաստանի միջնորդությունը եւն, եւն, որից հետո բանակցությունները տարվում են այլ մթնոլորտում: Հարցը միանգամայն այլ բնույթ է ստացել, երբ Ռուսաստանի արտգործնախարար Կոզըրեւը ներկայացրել է իր կառավարության միջնորդությունը՝ հակամարտությունը լուծելու համար:

Բանակցությունների ժամանակ, ըստ երեւույթին, այդ միջնորդությունը լրիվ պատրաստ չի եղել: Սակայն Կոզըրեւը խոստանում էր մի քանի օրից ներկայացնել շահագրգիռ կողմերին:



**Դեկտեմբերի 31-ին** «Ազգը» հրապարակեց հարցազրույց ԼՂՀ ԳԽ-ի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանի հետ: Այստեղ երիտասարդ դիվանագետը հաղորդում էր հետեւյալ տեղեկությունները Հայաստանի ու Ադրբեջանի սպառազինությունների մասին. «Ըստ ԵՍՍ (Եվրոպայի սովորական սպառազինության) պայմանագրի, Ադրբեջանին, ի դեպ նաեւ Հայաստանին, թույլատրվում էր ունենալ միայն 220 տանկ, 220 զրահամեքենա եւ 285 հրետանային կայանք: Սակայն Ադրբեջանի արտգործնախարարության 1993 թ. նոյեմբերի 3-ի նամակում (N 174) ասվում է, որ 93 թ. սեպտեմբերի 27-ին հանրապետությունը, օրինակ, Ուկրաինայից ստացել է 50 տանկ: Նույն թվականի մայիսին Ադրբեջանը Ռուսաստանից լրացուցիչ ստացել է նաեւ 105 զրահամեքենա եւ 42 միավոր հրետանային կայանք: Չմոռանանք Ադրբեջանի ԱԳՆ նոյեմբերի 6-ի (N 175) նամակը, որտեղ ասվում է, որ 1992 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ադրբեջանի իրավասության տակ են անցել ռուսական 286 տանկ, 842 զրահամեքենա, 345 հրետանային կայանք, 53 ռազմական ինքնաթիռ եւ 48 ռազմական ուղղաթիռ: Ինչպես տեսնում եք, սպառազինության քվոտը խիստ գերազանցված է: Դա նույնպես ռուս-ադրբեջանական հարաբերությունների եւ Մոսկվայի հետ ադրբեջանական ղեկավարների սիրախաղի հետեւանք է: Թեպետ այս թվերը չպետք է վախեցնեն մեր ընթերցողներին՝ չնայած դրանց պատկառելիությանը: Հիշենք 1991-92 թթ. ձմեռը, երբ ղարաբաղյան կազմավորումների տրամադրության տակ կար ընդամենը 6 տանկ, իսկ ադրբեջանական զորքերի՝ 339» («Ազգ», դեկտ. 31):

# 1994

**Հունվարյան առաջին օրերի** տեղեկություններում մեծ տեղ էին բռնում դաժան մարտերը Մարտակերտի հյուսիսում, Օմարի լեռնանցքի վրա, Մարտունուց արեւելք՝ Աղբուլաղում: Ամենուրեք ԼՂՀ ինքնապաշտպանները թշնամուն դիմակայում էին հաջողությամբ: Բայլականի ուղղությամբ հունվարի 1-3-ին թուրքերը կորցրել էին 59 ասկյար, երկու տանկ, մեկ բեռնատար: **Հունվարի 3-ին** Թալիշ ու Մատաղիս գյուղերի համար մղված մարտերում թուրքերն արդեն կորցրին 90 ասկյար, մեկ տանկ, հետեւակի մեկ մարտական մեքենա եւ ստիպված եղան նահանջել:

Կուրոպատկինոյի ուղղությամբ **հունվարի 4-ին** թուրքերը տվին 20 ասկյարի կորուստ, հանձնեցին, այո՛, հանձնեցին չորս տանկ եւ մեծ քանակությամբ զինամթերք:

Այս օրերին հաճախակի էին դարձել թշնամու ասկյարների գերի հանձնվելու դեպքերը, որովհետեւ նրանց թիկունքում կանգնած էին պատժիչ ջոկատներ, որոնք կրակում էին նահանջող յուրայինների վրա:

ԼՂՀ բանակի հրամանատարի տեղակալ Մուրադ Պետրոսյանը տեղեկացրել է, որ **դեկտեմբերի 18-ից մինչեւ հունվարի 3-ը** թուրքերը կորցրել են 700 ասկյար, 6 տանկ, հետեւակի մարտական չորս մեքենա: Մերոնք առգրավել են 5 տանկ, վերանորոգել, գործի դրել («Ազգ», հունվ. 6):

Հաջորդ օրերին եւս մարտերը նույն ծրագրով էին ընթանում: Թուրքերի անփորձ (իբր թարմ) զորաջոկատները հախուռն հարձակումներ էին ձեռնարկում ռազմաճակատի տարբեր հատվածներում՝ Օմարի կողմերից մինչեւ Ֆիզուլու շրջան եւ ամենուր ունենում ծանր կորուստներ: Մատաղիս-Լուլասազ գծի վրա **հունվարի 9-ին** սպանվել են 50 ասկյարներ, հունվարի 10-ին Մատաղիսի մոտ շրջափակման ենթարկվելով՝ 350 ասկյար: Համարյա նույն օրերին Աղդամի Փափրավանդ գյուղի համար կոտորվել են 120-ից ավելի թուրքեր... Հարավային ճակատում մերոնք առաջ էին գնում, եւ 12 կմ էր մնացել մինչեւ Հորադիզ կայարանը:

✧ ✧ ✧

Գերի հանձնված օսմանյան թուրք (Սիվաս քաղաքի բնակիչ) Աքիլ Յումախը պատմում է, որ այժմ Ադրբեջանի գործակալները գտնվում են Տրապիզոնում, Իզմիրում, Սիվասում, իհարկե, նաեւ Անկարայում եւ ջոկատներ են հավաքագրում՝ հիմնականում գործազուրկներից («Ազգ», հունվ. 11):

**Հունվարի 7-8-ին** մերոնք նվաճեցին Հորադիզ քաղաք-կայարանը: Այս մարտերում սպանված ասկյարների դիակների զանգվածային թաղումները ԼՂՀ զորքերն էին անում, քանի որ հակառակորդն իր զոհերի դիակները չէր տանում՝ ժողովրդի «տրամադրությունը չգցելու» համար: Օրինակ, Մարտունու եւ Աղդամի սահմանագծում փորվել է մի «եղբայրական» գերեզմանափոս, որի մեջ լցվել են 200-ից ավելի սպանված, բոլորն էլ Մինգեչաուրից: Մատաղիսի մոտ թաղված 750-800 ասկյարների մեծ մասը եղել են բաքվեցիներ ու սումգայիթցիներ: Ինչ վերաբերում է նրանց զոհերի ընդհանուր թվին, ապա դեկտեմբերի 18-ից ի վեր արդեն այն «ամենահամեստ հաշվիներով հասնում էր 3900-ի»,- տեղեկացնում է «Ազգ»-ի թղթակիցը ԼՂՀ-ից («Ազգ»«, հունվ. 12):



✧ ✧ ✧

**Հունվարի առաջին օրերին** հայկական շրջանակներում լուրջ հետաքրքրություն կար Ռուսաստանի պրեզիդենտի խորհրդական Անդրանիկ Միհրանյանի ներկայացրած այն նախագծի մասին, որ վերաբերում էր Արցախի ճակատագրին: Այն, իհարկե, չէր կարող ուրիշ բան լինել, քան բազմաթիվ ինքնավարություններ իր մեջ պահող Ռուսաստանի իշխանությունների շահն էր պահանջում. լայն ու բազմակողմանի ինքնավարություն՝ Ադրբեջանի կազմում, միաժամանակ երկու միջանցքով՝ Լաչինով ու Քալբաջարով կապ Հայաստանի հետ: Եվ, ընդհանրապես, խելոք ու շրջահայաց հայ գիտնական-քաղաքագետը, որ, երեւի, չի ճանաչում Ադրբեջանն ու նրա ղեկավարությանը, մտածում է, թե այսքանը բավական է Արցախի ապագան փրկելու համար: Ադրբեջան չի ճանաչում, ուրեմն եւ չի հասկանում, թե ինչպես այսքանը կվերածվի զրոյի՝ նման որոշում հրապարակելուց հետո, հենց հաջորդ իսկ օրը: Այդ պատճառով էլ միանգամայն իրավացի էր ՀՀ ԳԽ-ի Արցախի հարցերի հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը, որն ասում էր. «Հարցի լուծման նման տարբերակը բխում է իր (Միհրանյանի ներկայացրած Ռուսաստանի.- Բ. Ու.) վարած պետական քաղաքականությունից, այն է՝ սահմանների անփոփոխելիություն եւ լայն ինքնավարություն: Իմ անձնական կարծիքն է՝ ոչ մի քաղաքական գործիչ, միջազգային կազմակերպություն, քաղաքական փորձագետ, նույնիսկ ազգությամբ հայ, չի կարող որոշել արցախահայության ճակատագիրը. դրա իրավունքը վերապահված է միմիայն Արցախի ժողովրդին» («Երկիր», հունվարի 12):

**Հունվարի 10-ին** Մոսկվայի հեռուստատեսությամբ հաղորդվեց Անդրեյ Կարաուլովի հարցազրույցը ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ:

Կարաուլովն առհասարակ հայտնի է իբրեւ փշոտ լրագրող, իսկ հայկական հարցերում՝ նույնիսկ չարակամ: Այս անգամ եւս նրա հարցերի մեջ ընդգծված երեւում էին նրա երկու հատկանիշները: Այդ պատճառով էլ Քոչարյանի պատասխանները կրկնակի բարձրանում էին ունկնդրի աչքում՝ առաջին անգամ ցույց տալով, որ մարտնչող, քաջարի ու ամեն զոհաբերության պատրաստ Արցախն ունի արժանավոր ղեկավար, որի պատասխաններից յուրաքանչյուրը հնչում է սպանիչ, արժանապատիվ, մանավանդ այնպես դիպուկ, որ քիչ է լինում նման զրույցներում:

Այստեղ ներկայացնում եմ հարցազրույցը՝ աննշան հապավումներով:

«- Այսօր Ադրբեջանի տարածքի մի մասը գտնվում է ձեր կառավարման տակ:

- Դրանք հիմա էլ Ադրբեջանի տարածքներն են, բայց ներկա պահին մեր ռազմական հսկողության տակ են:

- Այսինքն՝ Լեռնային Ղարաբաղից զատ, ձեր ռազմական հսկողության տակ է Ադրբեջանի տարածքի 17 տոկոսը:

- Թիվն ուռճացված է: Ադրբեջանական կողմը խոսում էր 20, 25 տոկոսի մասին, ի վերջո կանգ առավ 17-ի վրա: Իրականում այն 9-10 տոկոսը չի գերազանցում: Դա շատ հեշտ է հաշվել քարտեզի վրա:

- Դե ինչ, այդ դեպքում կտամ առաջին հարցը: Որքան գիտեմ, Ադրբեջանի նախկին նախագահ Էլչիբեյը մի անգամ ասել էր, որ չկա Իրան պետություն, կա Հարավային Ադրբեջան եւ կա Ադրբեջան՝ Բաքու մայրաքաղաքով: Որքան հասկանում եմ, Լեռնային Ղարաբաղի հայերին այս կամ այն կերպ աջակցում է հսկայական հայկական սփյուռքը: Բնականաբար, թուրքերը պաշտպանում են Ադրբեջանին: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է: Այսինքն, ինչքան ես եմ հասկանում, երրորդ համաշխարհային պատերազմի հնարավոր ծագումը Լեռնային Ղարաբաղի պատճառով բացարձակապես ռեալ է: Ճիշտ չե՞մ:

- Որոշ հետազոտական կենտրոններ նման զուգակցություններ իսկապես անում են: Կարծում եմ՝ տվյալ փուլում դա այնքան էլ չի համապատասխանում իրականությանը՝ չնայած շահերի խաչաձեւումը այնքան ուժեղ է, որ եթե իսկապես բախումը շարունակվի ինտերնացիոնալացվել, դրա տարածման հավանականությունը կմեծանա: Ինչի կբե-

կի թողած զենքով: Մեր բախտը բերեց այնքանով, որ Ղարաբաղի տարածքում տեղաբաշխված էր երեք զորամաս:

- Ռուս գեներալներից ո՞ւմ գլուխն է պետք բոցնել ռուսական զենքը հանձնելու համար:

- Խորհրդայի՜ն զենքը: Այն բաշխվեց նրանց, ում տարածքում գտնվում էր եւ ստացվեց այնպես, որ Ադրբեջանը Հայաստանից երկու-երեք անգամ ավելին ստացավ:

- Ասացեք անկեղծ, զենքը գնե՞լ եք, թե ստացել:

- Մենք բռնագրավել ենք:

- Ուրեմն կամավոր չե՞ն հանձնել:

- Այո՛, նրանք պետք է զենքը հանձնեին Ադրբեջանին: Մենք դա թույլ չտվեցինք:

- Այսինքն, դուք ավազակային հարձակում եք ձեռնարկել, ինչ-որ մեկը զոհվել է մերոնցից, ինչ-որ մեկը վիրավորվել...

- Զոհեր եւ վիրավորներ չեն եղել, բայց զենքը վերցրել ենք: Դրա հետեւից գեներալներ էին եկել, բայց մենք պահեցինք: Ավելին, մենք համարում ենք դա մեր օրինական բաժինը:

- Ո՞ր իրավունքով:

- Նույնով, որով սպառազինության բաժին հասավ Ադրբեջանին:

- Ի՞նչ է ստացվում: Ռուսաստանը իր զենքը տալիս է թե՛ այս, թե՛ այն կողմերին, որպեսզի իրար կոտորեն: Դուք ինչպե՞ս եք գնահատում մեր պետության նման դիրքորոշումը:

- Դուք հրաշալի հնարավորություններ եք ունենում այդ հարցը տալու ռուս քաղաքական գործիչներին, որոնց հրավիրում եք Ձեր հաղորդումներին: Ես ձեռնպահ կմնամ այդ հարցին պատասխանելուց:

- Փոքրիկ գաղտնիք բացեմ: Իոսելիանիի եւ Արձինբայի հետ հանդիպելուց հետո ես հանդիպեցի նաեւ մարշալ Շապոշնիկովին եւ նկարագրեցի ռուս գեներալների պահվածքը, որը, կներեք, պոռնկական էր. տալիս են ե՛ւ նրան, ե՛ւ սրան: Վերջերս միայն իմացա, որ հատկապես այդ խնդիրն է հանգեցրել մարշալի հրաժարականին:

- Կարծում եմ՝ բանը նաեւ այն է, որ Ռուսաստանը մինչեւ վերջերս չուներ ձեւակերպված մոտեցում այն տարածքին եւ այնտեղ ունենալիք իր դերին: Կարծում եմ դրա ձեւակերպումը շատ բան կհստակեցնի եւ կսահմանափակի առանձին գերատեսչությունների գործունեության ազատությունը:

- Դուք զենքը վերցրիք ուժով եւ ոչ մի զոհ չեղավ: Իսկ եթե մեր զինվորները կրծքով պաշտպանեին այն, դուք նրանց վրա կկրակեիք, այդպես չէ՞:

- Եկեք խնդրին նայենք այն ժամանակի ենթատեքստում: Ստեփանակերտում 366-րդ մոտոհրաձգային գունդն էր՝ 320 հոգի անձնակազմով, բայց ուներ լրիվ անձնակազմի՝ 12050 հոգու սպառազինություն: Սպաների 70 %-ը հայեր էին: Այդ ամիսներին Ստեփանակերտը ռմբակոծվում էր Շուշիից ու այլ կրակակետերից, եւ արկերը պայթում էին նաեւ զորամասի տարածքում: Ի դեպ, այդ ժամանակ մի քանի զինվոր զոհվեց: Այդ զինծառայողները պետք է իմանային, որ զենքը հանձնվելու է Ադրբեջանին: Կրծքով կպաշտպանեի՞ն նրանք այդ զենքը:

- Դուք փորձո՞ւմ եք լեզու գտնել ձեր արդեն նախկին թշնամիների՝ ադրբեջանցիների հետ:

- Ես ադրբեջանցիներին նախկին թշնամի չեմ համարի: Մենք մասնակցում ենք բոլոր խաղաղարար բանակցություններին, նախաձեռնել ենք երկկողմանի հանդիպումներ: Հարցն ուրիշ տեղ է. չի հաջողվում հաշտեցնել կողմերի մոտեցումները:

- Եկեք բացենք խաղաքարտերը: Երկու տարի առաջ Ղարաբաղը դիմեց Ելցինին՝ խնդրելով իրեն ընդունել Ռուսաստանի կազմի մեջ: Այդպե՞ս է, թե՞ ոչ:

- Նամակը կար, բայց մնաց անպատասխան:

- Դուք երբեւէ հանդիպե՞լ եք Հեյդար Ալիեւի հետ:

- Լինում են հանդիպումներ, որոնք կողմերից մեկի խնդրանքով մնում են գաղտնի:



- Շա՜տ լավ: Համարենք, թե չեմ լսել Ձեր պատասխանը եւ առաջարկում եմ 2 շաբաթ հետո մասնակցել այս հաղորդմանը Ալիեւի հետ: Դուք կնստե՞ք դեմ դիմաց:

- Կնստենք: Ավելին, ես խոսելիք ունեմ:

- Այդ դեպքում ես պաշտոնապես դիմում եմ Հեյդար Ալիեւին. ժամանակն է այդպիսի հանդիպումներն անցկացնել բացահայտ: Կրկնեք, խնդրեմ, Դուք պատրա՞ստ եք նման երկխոսության:

- Բնականաբար: Կարծում եմ, եթե այդ հանդիպումը փրկի թեկուզ մի կյանք, դա արդեն լավ արդյունք կարելի է համարել:

- Իսկ դուք կարո՞ղ եք էկրանից խոսք տալ, որ վաղվանից ձեր բանակը չի կռվի Ադրբեջանի տարածքում, որ դուք կանգնեցնում եք պատերազմը:

- Որպես Ղարաբաղի ղեկավար, ես կարող եմ խոսք տալ միայն իմ ժողովրդին:

- Հարցն այլ կերպ դնեմ: Դուք պատրա՞ստ եք Ձեր ողջ հեղինակությունն օգտագործել, որպեսզի անեք այն, ինչի մասին քիչ առաջ ասացի:

- Մեր արտաքին քաղաքական գործունեությունն ամբողջովին ուղղված է պատերազմն ավարտելուն:

- Ինչի՞ հաշվին է գոյատեւում Լեռնային Ղարաբաղի տնտեսությունը:

- Աշխատում է ողջ տնտեսությունը: Բնականաբար, հզորությունը նախկինը չէ, համարյա բոլոր տղամարդիկ բանակում են: Գյուղմթերքները չենք ներմուծում, բախումից առաջ էլ Ղարաբաղից հիմնականում արտահանվում էր ավելի, քան ներմուծվում էր:

- Ադրբեջանի կազմում մնալ-չմնալու հարցի Ձեր պատասխանը ըստ երեւույթին միանշանակ է: Իսկ հետո՞:

- Կարծում եմ՝ սկզբի համար անհրաժեշտ է սառեցնել ռազմական գործողությունները: Հնարավոր է, որ այսօր չարժե շոշափել տարածքային ամբողջության կամ անկախության թեման, այլ մարդկանց շունչ քաշելու հնարավորություն տալ: Ինչպես կորոշի հետագայում ապրել այդ ժողովուրդը՝ իր իրավունքն է:

- Ձեր գնդերի մասին լեգենդներ են պատմում, ըստ որոնց դրանցում երկաթե կարգապահություն է, չկան թմրամոլներ: Որպեսզի այդ ամենը իրականացվի, պետք է ոչ միայն ռազմական տաղանդ, այլեւ պատկերացում իրական բանակի մասին: Որտեղի՞ց ձեզ այդ ամենը:

- Մենք ձգտում ենք դրան, բայց առայժմ չենք հասել: Այո, իսկապես եւ կարգապահություն, եւ զորանոցներ, եւ ուսումնական կենտրոններ կան, եւ պայքար կա թմրամոլության դեմ: Որտեղի՞ց: Երեւի հիմքն է հարմար, ժողովուրդն է օրինապահ, հպարտ եւ կազմակերպված: Դրանով զբաղվում եմ ոչ միայն ես:

- Իսկ եթե Ադրբեջանը ընդհանուր զորահավաք անի եւ զենքի կոչի իր յոթ միլիոնը, ի՞նչ եք անելու: Ադրբեջանն ունի նավթ, ուրեմն նաեւ դոլլարներ:

- Ադրբեջանն արդեն հայտարարել է զորահավաք: Պոտենցիալների տարբերությունը Ադրբեջանին հույս է ներշնչում, որ այնուամենայնիվ հնարավոր է հարցը ուժով լուծել: Ես գիտեմ միայն, որ մենք կանգնելու ենք այնքան, ինչքան հնարավոր է:

- Իսկ Հայաստանի կանոնավոր բանակը մասնակցո՞ւմ է մարտերին:

- Հայաստանի բանակը կազմված է 18 տարեկաններից, եւ նրանց այս խառնարանը լցնելը բացառվում է: Հայաստանից կամավորներ կան:

- Մի՞թե ձեր բանակում վարձկաններ չկան: Ես զարմանքով իմացա, որ մեր աֆղանցիներին օգտագործում են ամերիկյան բանակում: Միանգամայն օրինական կարգով: Ձեր մտքով երբեւէ չի՞ անցել վարձկաններ հրավիրել:

- Ինչի՞ համար:

- Չէ՞ որ դուք շատ քիչ եք:

- Բայց սա մե՛ր պատերազմն է»:

Ա. Կարաուլովի կազմակերպած այս հարցազրույցը մինչեւ կցուցադրվեր, ռազմաճակատում դրությունը փոխվեց. խախտելով հրադադարը՝ ադրբեջանական զորքերն անցան նոր ու վճռական գրոհների: Այդ առթիվ Ռ. Քոչարյանը հեռագրեց հեռուստակենտրոն:

Եվ, ի պատիվ հեռուստալրագրողի, պետք է նշել, որ նա զրույցի հետ հաղորդել տվեց նաեւ հեռագիրը (տես ստորեւ).

«Ադրբեջանը, մերժելով կրակը դադարեցնելու ռուսական նախաձեռնությունը, դեկտեմբերի սկզբին սկսել է լայնածավալ հարձակում ռազմաճակատի ողջ գծով: Արդեն ամսից ավելի շարունակվում են կատաղի մարտերը: Վիճակը շատ բարդ է: Հարավային թեւում ադրբեջանական բանակը, չնայած մեծաթիվ կորուստներին, զգալիորեն առաջ է շարժվել: Հարձակման համար օգտագործում է հարեւան երկրի տարածքը: Ադրբեջանի հարձակումը նախապատրաստել են բավական հիմնավոր: Հայտնվել են մեծ թվով նոր տանկեր եւ զրահամեքենաներ, զորքը զինված է 1993 թ. արտադրության հրազենով, ամերիկյան հակատանկային միջոցներով, ամերիկյան ռնակներով ու ռադիոկայաններով, թուրքական ականանետներով: Անընդմեջ աշխատում է հրետանին: Այս ամենը խոսում է զենքի ու զինամթերքի խոշոր ներդրումների մասին, այն դեպքում, երբ ՄԱԿ-ի Ախ-ը արգելել է սպառազինություն մատակարարել այս տարածք: Ադրբեջանի բանակում կռվում են աֆղան մոջահեդներ, մասնագետներ Թուրքիայից, բազմաթիվ վարձկաններ Ռուսաստանից եւ Ուկրաինայից: Մնում է ենթադրել, թե ո՛վ է այս ամենի համար վճարում: Մեզ համար շատ դժվար է դիմագրավել հարձակումը, մենք շատ քիչ ենք բոլորի դեմ կռվելու համար: Կանգնում ենք ժողովրդի արիության ու կամքի շնորհիվ»:

✧ ✧ ✧

**Հունվարի 10-11-ին** թուրքի զորամասերը մարտի են նետվել ամբողջ ճակատի երկարությամբ՝ Օմարի լեռնանցքից մինչեւ Իրանի սահմանը: Նրանց հաճախ ուղեկցում էին ռազմական օդանավեր (երեւի ռուս վարձկան օդաչուներով), սակայն նրանք երկյուղած թռչում էին բարձրից, ուստի եւ ոչնչով չէին օգնում հակառակորդի ձախողակ բանակին («Ազգ», հունվ. 13):

✧ ✧ ✧

Դեռեւս անցյալ տարվա հոկտեմբերին լրատվական տարբեր մարմիններ վստահորեն հայտարարում էին, թե ադրբեջանական բանակում ԼՂՀ դեմ կռվում են աֆղան մոջահեդներ: Հունվարի սկզբին ԼՂՀ Ազգային անվտանգության կոմիտեի պետ Կամո Աբրահամյանը վստահեցնում էր, թե այդ լուրերը հաստատվում են նոր բազմաթիվ փաստերով ու փաստաթղթերով: Նրանցից մեկը, 160-րդ զորամասի հրամանատար փոխգնդապետ Դ. Լյաթիֆովը 1993 թ. հոկտեմբերի 2-ին գրած զեկույցում գանգատվել է վերադասին, թե մոջահեդները շատ ծանր պահանջներ են ներկայացնում իրենց, բացի նրանից, որ ստանում են մեծ դրամագլուխ: Օրինակ, սանմաս են դիմել 1350 հոգի, որոնցից 41-ը հոսպիտալացվել են: «Այն տպավորությունն է ստացվում,-գրել է Լյաթիֆովը,- թե նրանք մեզ մոտ են եկել բուժվելու եւ ոչ թե կռվելու» («Ազգ», հունվ. 13):

Իսկ որոշ ժամանակ անց մեր զորքին գերի ընկած ադրբեջանցի Ալիովսաթ Ռաջաբովը վկայել է, թե մոջահեդները, որ շատ-շատ են իրենց բանակում, զբաղվում են նաեւ թմրաբիզնեսով, օրինակ, Աղջաբադու շրջանի Մինախորլի բնակավայրում տեղավորված 120 մոջահեդներ այդ բնակավայրը դարձրել են թմրանյութի փոխադրման կենտրոն, ուրկից նյութը տարածում են ոչ միայն զինվորականների, այլեւ շրջանի բնակավայրերի բնակչության շրջաններում («Ազգ», հուն. 15):

**Հունվարի 12-ին** ԼՂՀ երկնքում հայտնվել էին թշնամու հինգ ռազմական ինքնաթիռներ, որոնցից մեկը ցած գցվելուց հետո մնացածները շտապ հեռացան հանրապետության օդային տարածքից:

**Հաջորդ օրերին թուրքերի գրոհների թափն ընկած էր: Ըստ երեւույթին Հ. Ալիեւի ձեռնարկած մեծ արշավի խափանումը գիտակցվում էր իր եւ յուրայինների կողմից, եւ պետք է ոտուձեռ ընկնեին հրադադար հաստատելու համար:**



**Հունվարի 13-ին** թուրքերը գրոհներ էին ձեռնարկել ճակատի տարբեր կետերում՝ ամենուրեք էլ տալով մեծ կորուստներ, նահանջել: Մատաղիս-Լյուլասազ գծի վրա սպանվել են 76 ասկյար, գերի են հանձնվել 11-ը, Աղդամի շրջանի Սալահլի-Քենգերլի գծի վրա կորցրել են 2 տանկ, 34 ասկյար («Ազգ», հուն. 15):

ԼՂՀ պաշտպանության կենտրոնի տվյալներով՝ թուրքի կորված ասկյարների թիվը հասել է 4200-ի, մեծ մասը՝ 16-18 տարեկան պատանիներ, որոնց պատերազմի դաշտ էին բերում առանց ռազմական լուրջ պատրաստության («Ազգ», հունվ. 19):

Նոր հաղորդումների համաձայն՝ թուրքերը լուրջ ձախողումներ ունեն ռազմաճակատի բոլոր հատվածներում, խմբերով գերի են հանձնվում լեզգիներն ու թալիշները: Իսկ ռազմաճակատի հարավ-արեւելյան հատվածում հունվարի 19-ի առավոտյան թուրքի երկու գումարտակներ մարտի են բռնվել միմյանց դեմ, կան զոհեր եւ վիրավորներ («Ազգ», հունվ. 20):

**Հունվարի 18-ին** ԼՂՀ արտգործնախարար Ար. Ղուկասյանը վերադարձավ Հարավսլավիայից, ուր հանդիպումներ էր ունեցել սերբական ղեկավարների հետ:

**Հունվարի 19-ի** մարտերում սպանվել են թշնամու 117 զինվոր, խփվել է 4 տանկ, մերոնցից՝ 6 սպանված, 13 վիրավոր («Ազգ», հուն. 21):

✧ ✧ ✧

Դեռեւս անցած տարի, Աշգաբադի գագաթաժողովից հետո խոսք կար, թե ՀՀ եւ Ադրբեջանի նախագահները պիտի հանդիպեն, պայմանավորվեն կայուն խաղաղություն հաստատելու համար: Դա չստացվեց: Հիմա արդեն Ռուսաստանն է եռանդուն գործում՝ ղարաբաղյան բարդույթն իր միջնորդությամբ լուծելու նպատակով: Այդ հարցի շուրջ պայմանավորվելու համար հանդիպել են ՀՀ եւ Ռուսաստանի արտգործնախարարները, որոնք, իբր, հաջող բանակցություններ են վարել: Ռուսաստանի արտգործնախարարը զրույցներ է ունեցել Ադրբեջանի ու ԼՂՀ պաշտոնակիցների հետ: Եվ հիմա, ասում են, հունվարի 25-ին Հ. Ալիեւն ու Լ. Տեր-Պետրոսյանը պետք է հանդիպեն Մոսկվայում:

✧ ✧ ✧

Ադրբեջանի նոր ու աննախադեպ հարձակման թելադրանքով հայության բոլոր հատվածները տոգորված էին մեծ մտահոգությամբ: Արցախին պետք է՝ օգնություն հասցնել՝ ոչ միայն փող ու նյութական միջոցներ, այլեւ ռազմական ուժեր, ավելի ստույգ՝ հայ զինվորներ:

«Արցախ» հայրենակցական միությունը հրապարակել է հայտարարություն, որով Հայաստանում ու դրսերում բնակվող արցախցիներին կոչ էր անում մեկնել Արցախ, մասնակցել հայրենի սրբազան հողի պաշտպանությանը: Եվ կոչն իր դերն ունեցավ. նոր տարվա առաջին օրերից սկսած՝ «Արցախ» կոմիտե էին գալիս երիտասարդ ու տարեց տղամարդիկ, պահանջում իրենց անմիջապես ուղարկել ռազմաճակատ:

Գրանցված այս կամավորների թիվն օրական հասնում էր 50-60 հոգու: Հայրենի հողի պաշտպանությանն էին զինվորագրվում նաեւ տասնյակ ու տասնյակ երիտասարդներ Երեւանից ու ՀՀ տարբեր շրջաններից («Երկիր», հուն. 21):

Ոտքի էին կանգնել նաեւ պետական, հասարակական կազմակերպությունները կամավորական ուժերն Արցախ հասցնելու, թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար:

ՀՀ ԳԽ-ի Արցախի հարցերի հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը հրապարակային հավաքներում էր ելույթ ունենում, թերթում ու հեռուստատեսությամբ եւ, պատմելով բուն Արցախի վիճակը (բացի նրանից, որ զորահավաքով ճակատ են ուղարկվել 18 տարեկանից բարձր տղամարդիկ, այնտեղ պատերազմի դաշտում են գտնվում զենք

բռնելու ընդունակ բոլոր մարդիկ՝ հասուն ու դեռահաս, հաճախ նաեւ կանայք), պահանջում էր, որ կամավորական խմբեր գնան Արցախ, այդ են պահանջում կռվողները՝ «Ով տղամարդ է, թող գա» (նույն տեղում):

ՀՀԴ բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը նոր էր վերադարձել Արցախից, գտնում էր, որ այնտեղ պիտի լինի ողջ հայ ժողովրդի ուժը, մենք այնտեղ վերջին ճակատագրական կռվին նետված թշնամուն պիտի դիմակայենք ազգովին՝ «գիտակցելով, որ այդ պայքարի ելքից կախված է ոչ թե ինչ-որ հողակտորի հայկական կամ ոչ հայկական լինելու հարցը, այլ դրանից է կախված ողջ հայ ժողովրդի ճակատագիրը: Ո՞ղջ հայ ժողովրդի, ընդ որում՝ նաեւ Սփյուռքում, նաեւ այն տեղերում, որոնք շատ հեռու են գտնվում արցախյան ճակատից» («Երկիր», հուն. 22):

Հովհաննիսյանը գտնում էր, որ պետք է «կամավորական շարժումը» վեր չածել «կամայական շարժման», գիտակցելով պահի լրջությունը զինվորագրվել Արցախին այս վիճակի ամենալուրջ գիտակցությամբ, լինել նրա զինվորն ու պաշտպանը ողջ էությամբ:

✧ ✧ ✧

**Հունվարի 20-ն** Ադրբեջանի համար սգո օր էր համարվում 90-ի հունվարյան դեպքերի պատճառով, եւ Հ. Ալիեւն ամբողջ ժողովրդին էր ոտքի հանել՝ ի նշանավորումն այդ օրվա, բոլոր ուժերը լարելու, ճակատում մեծ հաղթանակ ձեռք բերելու համար: Մեծ հանրահավաքում նա իր խոսքն այսպես է ավարտել. «Երդվում եմ բոլոր սրբություններով՝ վերջ կդրվի մեր հողը ծվատող դժբախտություններին ու ողբերգություններին, նրա վրա այսօր կախված սեւ ամպերին:

Ոտքի՜ ել, սրբազան ժողովուրդ» («Երկիր», հունվ. 22):

**Հունվարի 24-ին** բարոնուհի Կոքսը՝ Արցախյան աշխարհի իսկական մեծ բարեկամն ու անդուլ պաշտպանը, լրագրողների հետ ունեցած հանդիպմանը կարդաց մի հրապարակում՝ իր երկրի կողմից Ադրբեջանին զինում ու զենք մատակարարելու մասին եւ արտահայտեց իր վրդովմունքը: Ասաց՝ դեռեւս 92-ին, ականատես լինելով Լեռնային Ղարաբաղի վրա թափվող ադրբեջանական կրակի եւ վայրագության, «դիմել էի բրիտանական կառավարությանը՝ պահանջելով զսպել մարդու իրավունքները կոպտորեն ոտնահարող ադրբեջանցիներին: Այն ժամանակ Արտաքին գրասենյակի բարձրագույն պաշտոնյաներից մեկը պատասխանեց. «Ոչ մի երկրի մեկ այլ երկիր չի հետաքրքրում: Հետաքրքրում են միայն շահերը, իսկ մենք Ադրբեջանում նավթային շահեր ունենք»: Կյանքումս առաջին անգամ ես խորապես ամաչեցի բրիտանացի լինելուս համար»:

Եվ հիմա էլ այս նոր խայտառակությունը. Մեծ Բրիտանիան զինուժով ու զինամթերքով օգնում է ցեղասպան Ադրբեջանին: Մեր կաթողիկոս Վազգեն Ա-ի խոսքով՝ հայի համար իջած սուրբ հրեշտակ Քերոլայն Կոքսն ընդվզում է. «Եթե այսպես շարունակվի, ես կամաչեմ, երբ թոռներս ու ծոռներս իմանան, որ Բրիտանիան առեւտրական շահերը մարդու իրավունքներից վեր է դասել եւ նպաստել հայերի ոչնչացմանն իրենց պատմական հայրենիքում՝ Լեռնային Ղարաբաղում» («Երկիր», փետր. 8):

✧ ✧ ✧

Իսլամը հարբեցողությունը մեծ մեղք է համարում: Իսկ թուրքերը ճակատում անասված խմում էին, մանավանդ Բայլականի գինու մեծ գործարանից դուրս բերված գինիներ: Մոջահեդներն իրենց հավատակիցներին խորհուրդ էին տալիս չանել այդ: Երբ տեսան՝ խորհուրդը չի օգնում, սպառնալիքներ կարդացին: Տեսան՝ դրանք էլ չեն օգնում, պայթեցրին գինու վիթխարի գործարանը, եւ եղան շատ զոհեր ու վիրավորներ,- պատմել է ռազմագերի Բախտիյար Սաֆարովը՝ Ֆիզուլու բնակիչ («Ազգ», հուն. 22):



✧ ✧ ✧

Կասկածելի է Հ. Ալիեւի ու Լ. Տեր-Պետրոսյանի հունվարի 25-ին Մոսկվայում տեղի ունենալիք հանդիպման հնարավորությունը, քանի որ այդպիսի դեպքերին նախորդող պաշտպանության ու արտգործնախարարների հանդիպումները ձախողվել էին. հայերը պահանջել էին հրադադար հաստատել, ապա նստել բանակցությունների, իսկ թուրքերը պահանջում էին նախ եւ առաջ հայկական զորքերը դուրս բերել Ադրբեջանից...

Դիվանագիտական շրջանները պահանջում էին, որ ընդունվի Ռուսաստանի նախագահի խորհրդական Անդրանիկ Միհրանյանի ներկայացրած ծրագիրը, որով Բաքուն խաղաղության դիմաց պարտավորվում է ԼՂ-ին տալ լայն ինքնավարություն եւ քաղաքական համապատասխան կարգավիճակ, ինչպես նաեւ ապահովել Լաչին-Քալբաջար միջանցքի անխափան գործունեությունը: Դրանից բացի, ԼՂՀ սահմանների ամբողջ երկարությամբ պետք է ստեղծվի բուֆերային ապառազմականացված գոտի եւն... («Ազգ», հուն. 25):

✧ ✧ ✧

Ադրբեջանական զորամիավորումները շարունակում էին անկանոն գրոհներն ու ձախողանքները ռազմաճակատի համարյա բոլոր գոտիներում:

**Հունվարի 23-ին** գրոհային 2 ինքնաթիռ փորձեցին ռմբակոծել Ստեփանակերտը, նրանցից մեկը վայր գցվեց քաղաքից 9-10 կմ հեռավորության վրա:

Ըստ երեւույթին նախորդ օրերին ԼՂՀ ուժերը հանձնել էին Օմարի լեռնանցքը եւ այս օրերին վերագրավելու միջոցներ են գործադրում:

✧ ✧ ✧

Մարտակերտ շրջկենտրոնի ուղղությամբ գրոհի եկած թշնամին ջարդ է կերել, կորցրել 6 տանկ (4-ը խփվել են, երկուսը՝ պայթել ականի վրա), ետ փախել:

✧ ✧ ✧

Թուրքի ռազմական ինքնաթիռները պարբերաբար խախտում են ԼՂՀ սահմանները, փորձում ռմբակոծել բնակավայրերն ու ռազմական կետերը, սակայն զգաստ էր մեր հակաօդային պաշտպանությունը, ինչի շնորհիվ էլ հակառակորդին ոչինչ չէր հաջողվում:

Վերջին օրերին ադրբեջանական լրատվությունը թմբկահարում էր իրենց հաջողությունները. իբր ազատագրել են Քալբաջարի 12 բնակավայրեր («Ազգ», հուն. 26):

ԼՂՀ պաշտոնական հաղորդումների համաձայն՝ Քալբաջարի շրջանում տեղի են ունեցել միայն դիրքային մարտեր: Իսկ կորուստները Մարտակերտի ու Մարտունու շրջաններում հետեւյալ պատկերն են ունեցել. 25-ին թուրքերը կորցրել են 80 զինվոր եւ 7 տանկ, հայերը՝ 4 զոհ, 11 վիրավոր, 26-ին թուրքերի կողմից՝ 200 սպանված, հայկական կողմից՝ 5 սպանված, 11 վիրավոր («Ազգ» հուն. 27):

**Հունվարի 27-ին** հաղորդեցին, թե անցյալ դեկտեմբերի վերջին Ստամբուլի «Այդինլիկ» թերթը լուր է տպել այն մասին, որ Ադրբեջանում Ղարաբաղի դեմ կռվում են 5000 թուրք-իսլամական սպաներ ու զինվորներ, եւ ահա որոշ ժամանակ անց թերթի խմբագրին ձերբակալեցին իշխանությունները» («Ազգ», հուն. 28):

**Հունվարի 26-27-ին** ԼՂՀ ուժերը, հաջողությամբ դիմագրավելով թշնամու գրոհները ռազմաճակատի բոլոր հատվածներում եւ պատճառելով մեծ վնասներ, Քալբաջարում առաջ էին շարժվում եւ ընդհուպ մոտեցել էին Օմարի լեռնանցքին:

Այս օրերին Ադրբեջանի նախագահի մերձավոր աշխատակիցներից մեկը՝ Վաֆա Գուլուզադեն, հեռուստատեսությամբ հայտարարել է, թե իրենք պատրաստ են խաղաղության համար նստել բանակցությունների սեղանի շուրջ եւ ԼՂ-ին տալ ինքնավարություն

✧ ✧ ✧

Այսօր Օմարի լեռնանցքի դիմաց ԼՂՀ զորամասը գրավել է թշնամու մեկ տանկ, վայր գցել ռազմական մեկ ինքնաթիռ, որի երկու սավառնորդներն էլ գերի են վերցվել, հաղորդեց մեր «Լրաբերը»:

Հաջորդ օրվա թերթում ճշգրտված էր այս լուրը. Օմարի լեռնանցքի մոտ գցված ինքնաթիռի օդաչվի ճակատագիրը հայտնի չէ: Իսկ, ահա՛, նույն օրը Վարդենիսի շրջանի տարածքում գցված մի ինքնաթիռի երկու օդաչուները բռնված են («Երկիր», փետր. 18):

Երեւում է Ադրբեջանը, ցամաքում անվերջ ձախողվելով, որոշել է իր հարցերը լուծել օդից...

✧ ✧ ✧

«Միջազգային զգոնություն» կոչված հասարակական կազմակերպությունն Ադրբեջանի ու Հայաստանի փորձագետ-ներկայացուցիչներին հրավիրել էր Նորվեգիայի մայրաքաղաք Օսլո՝ ղարաբաղյան հակամարտության լուծման ուղիներ փնտրելու: Հայաստանը հրաժարվել էր իր փորձագետներին ուղարկելուց: Սա հիմք դարձավ, որ Ադրբեջանի արտգործնախարարությունը հատուկ հայտարարությամբ դատապարտի Հայաստանին՝ «Ադրբեջանի հետ ուժի դիրքերից խոսելու եւ ադրբեջանական տարածքների բռնագրավումները շարունակելու մեջ»: Տեսեք-տեսե՜ք, հիմա էլ միջազգային կազմակերպության հրավիրած հավաքին չի ներկայանում...

Այս մեղադրանքին պատասխանելով՝ ՀՀ արտգործնախարարությունն իր ներկայացուցիչներին չուղարկելը պատճառաբանեց նրանով, որ հավաքին հրավիրված չեն եղել «ԼՂՀ օրինական իշխանության ներկայացուցիչները» («Ազգ», փետր. 19):

Ուրեմն, ՀՀ իշխանություններն սկսեցին ճանաչե՞լ այդ ԼՂ հանրապետությունը:

**Փետրվարի 19-ին** առավել ճշգրտվեց տեղեկությունը. Վարդենիսում գերվել է գցված ինքնաթիռի մեկ օդաչու՝ թաթար Մարաս Իչկենովը, որ վարձվել է Ղրղզստանում, ամսական 1000 դոլար է ստանում, 300 դոլլար էլ լրացուցիչ՝ յուրաքանչյուր թռիչքի համար:

Գերված մյուս օդաչուն հինգշաբթի օրը ԼՂՀ-ում գցված ինքնաթիռինն է եղել («Ազգ», փետր. 19):

**Փետրվարի 18-ին** ԼՂՀ ուժերը լրիվ գրավեցին Օմարի լեռնանցքը եւ առհասարակ Քալբաջարի հյուսիսային ողջ տարածքը՝ տեր դառնալով մեծաքանակ ռազմավարի եւ թշնամուն պատճառելով զինուժի լգալի կորուստ («Երկիր», փետր. 19):

✧ ✧ ✧

Նախօրոք արված լրատվությամբ՝ այսօր 18-րդ անգամը պետք է Ստեփանակերտ հասներ բարոնուհի Քերոլայն Կոքսի խումբը, որ բաղկացած է դիվանագետներից ու լրատվության աշխատողներից:

Այստեղ ուղեւորվելուց առաջ, փետրվարի 8-ին, բարոնուհի Կոքսը եղել է ԱՄՆ-ում, մասնակցել է Հարվարդի համբավավոր համալսարանում կազմակերպված հայանպաստ մի շատ կարեւոր միջոցառման (ամուլիս «Հայաստանը, Միացյալ Նահանգների արտաքին քաղաքականությունը, արժեքները եւ մարդասիրական միտումները» թեմայով): Ելույթ է ունեցել, պաշտպանել իրեն այնպես հարազատացած Արցախի դատը եւ, ցույց տալով աշխարհի աչքի առաջ, ուրեմն եւ իր երկրի աչքի առաջ կատարվող անարդարությունները, որ գործվում են ազատ կյանքի համար արյան ու եռանդի վերջին պաշարները ծախսող այդ փոքրիկ երկրի դեմ, մանավանդ բրիտանական անտարբերությունն ու ակնհայտ մեքենայությունները, ասել է՝ «Դրանց առկայությամբ ես ամոթ եմ զգում բրիտանացի լինելուս համար»:

**Փետրվարի 19-ին** Երեւանում, Ստեփանակերտ ուղեւորվելուց առաջ, բարոնուհի Քոք-



սը հայտարարեց. «Ես մեծ մարդասեր Անդրեյ Սախարովի աշակերտուհին եմ ու նրա գաղափարի զինվորը. ես միշտ կլինեմ զոհի կողքին, կպայքարեմ մինչեւ վերջ, մինչեւ Արցախի վերջնական հաղթանակը»:

Բարոնուհի Կոքսն այս անգամ Արցախին նվեր էր բերել 42 տոննա բեռ՝ դեղորայք, բուժսարքավորում, շտապ օգնության երկու մեքենա եւ հետագա օգնության սրտագին խոստումներ:

✧ ✧ ✧

Ըստ երեւույթին Ադրբեջանը, Հայաստանն ու ԼՂՀ-ն նախապես դիմած են եղել Ռուսաստանին՝ պատերազմը դադարեցնելու համար: Այսօր (փետր. 19-ին) Մոսկվայում Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովը, նախարարներ Սերժ Սարգսյանին, Մամեդռաֆի Մամեդովին ու ԼՂՀ ռազմական ուժերի ներկայացուցիչ Սահակյանին մեկտեղ հավաքելով, վճռաբար հայտարարել է. «Եթե այս հանդիպումն էլ ապարդյուն անցնի, ես այլեւս հանդես չեմ գա որպես միջնորդ»:

Ասում են՝ պետք է վճռվեր հրադադարի, գրավյալ տարածքներից զորքերի դուրսբերման եւ հարակից հարցերը, որպեսզի հետո էլ սկսվեին բանակցությունները՝ հակամարտությանը վերջ տալու նպատակով:

Այս հանդիպման ընդունած փաստաթղթի մասին մամուլում խոսք է ասել ՀՀ ԳԽ-ի Արցախի հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղար Սուրեն Զոլյանը՝ փաստաթուղթը հայտարարելով անընդունելի՝ թե քաղաքական եւ թե ռազմական առումներով: Փաստաթուղթը կոչվում է «Հայ-ադրբեջանական հակամարտության մասին»: Բայց չէ՞ որ հակամարտությունն Ադրբեջանի ու ԼՂՀ միջեւ է: Ոչ մի խոսք չկա գրավյալ տարածքները վերադարձնելուց հետո անմիջապես իրականացվելիք միջոցառումների մասին. ուրեմն, հայ զորքերի դուրս բերումից, այսինքն՝ ԼՂՀ-ն ուժազրկելուց հետո, Ադրբեջանը կարող է անել այն, ինչ իրեն է ձեռնտու:

Մի խոսքով՝ դարձյալ ընդունվել է մի փաստաթուղթ, որի մեջ արհամարհվում է ԼՂՀ իրավունքները: Այն ո՞վ պիտի ընդունի:

Նույնիսկ այս պարագայում, Ռուսաստանի պաշտպանության նախարարության այսօրինակ դիրքորոշման դեմքում, Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը հայտարարեց, թե չի կարելի ընդառաջել «Մոսկվայի միակողմանի միջնորդություններին», ԵԱՀԽ-ը չի կարող հավաքվել, հարցը քննության դնել, քանի դեռ «հայերն անվերապահորեն ետ չեն քաշվել» եւ «Անկարելի է զիջում անել այն հարցում, որ Ղարաբաղն ադրբեջանական տարածք է»: Իսկ եթե է՜ն գլխից վճռված է, որ Ղարաբաղն ադրբեջանական տարածք է, եւ այստեղ ուրիշ ոչ մի խոսք ու կարծիք չի կարող լինել, ոչ մի զիջում ու փոխադարձաբար ընդունելի տարբերակ, այդ ժամանակ էլ ինչի՞ համար պիտի հավաքվեն, ինչի՞ շուրջ պայմանավորվեն...

**Փետրվարի 20-ին** քաղաքից թերթեր բերին, եւ «Երկիր»-ի ս. թ. փետրվարի 3-ի համարում կարդացի Նաիրի Բաղալյանի «Բանակին ռեզերվ ու ապահովվածություն է հարկավոր» ակնարկը՝ բերված Մարտակերտից (տպը «Մարտակերս» է գրված: Մտածեցի, որ լավ է մեր լրագրողները ճակատի գիծ էլ են գնում):

Երեւում է, որ տղան եղել է ռազմաճակատի գծում, ծանոթացել է կռվողների կյանքին, իմացել հոգսերը, ցավով խոսում է կռվող զինվորի անմխիթարական, պարզապես ողբերգական վիճակի հանգամանքներից: Կարելի՞ է պատկերացնել. այսօր արդեն աշխարհին իր հաղթանակներով, նույնիսկ նվաճումներով հարուստ կենսագրությամբ հայտնի արցախցի զինվորն իրականում կարիքավոր մարդ է եւ օրվա մեծ մասն անց է կացնում կիսաքաղց վիճակում: Ահա թե նրան ինչպես է տեսել մեր լրագրողը. «Պատկերացնելու համար, թե ի՛նչ պայմաններում է հայոց ներկա պատմության տարեգրության հերոսական էջերը գրում արցախցի զինվորը, տեղեկացնեմ, որ նրանց մեծ մասը, ում հետ ինձ հաջողվեց զրուցել, այս տարիների ընթացքում կամ համազգեստ չի ստացել, կամ էլ

ստացել է մեկ կամ երկու անգամ: Իսկ ձմեռային պայմաններում կռվելու համար անհրաժեշտ տաք արտահագուստի մասին խոսելն ավելորդ է: Ի ցավ արցախցու եւ համայն հայության, այն, ինչով այսօր արցախցի զինվորը ծածկում է իր մերկությունը, գլխավորաբար հանված է սպանված ադրբեջանցիների վրայից: Ամեն-ամեն ինչ՝ սկսած կոշիկից, վերջացրած գլխարկով: Ավելի լավ չէ նաեւ նրանց ընտանիքների սոցիալական ապահովվածությունը: Նրանցից շատերը իրենց, այսպես կոչված, աշխատավարձի 10 հազար ռուբլին (150 դրամը) վերջին անգամ ստացել են անցյալ տարվա մայիսին: Համեմատության համար նշեմ, որ Ստեփանակերտում 1 տուփ հայկական ծխախոտը արժե 5-6 հազար ռուբլի...

Արցախյան զումարտակի գլխավոր գործող անձինք կռվում են կիսաքաղց: Ինքս եմ ականատես եղել, թե ինչպես էր արցախյան բանակի երեւի թե ամենամարտունակ (եթե կարելի է համեմատություն անել) կազմավորումներից մեկի՝ Ստեփանակերտի գնդի այն վաշտը, որը ժամանակին գլխավորել էր լեգենդար Բեկոր Աշոտը, ճակատամարտի գնալուց առաջ ձեռքից ձեռք փոխանցում օրապահիկ ստացած մի քանի հացը: Հացի միմի փոքրիկ կտոր կտրելով՝ յուրաքանչյուրը շարժվում էր մարտական առաջադրանքով նախատեսված ուղղությամբ, եւ այդ մի կտոր հացը պետք է լիներ այն սնունդը, որը նրանց ուժ պետք է հաղորդեր գուցե թե ամբողջ օրը ձգվելիք ճակատամարտում: Այդ մի կտոր հացը պետք է վերականգներ նրանց այն ուժերը, որ կորցրել էին 20 օր առաջ Ֆիզուլու եւ նախորդ օրը՝ Աղդամի ճակատներում ունեցած ծանր մարտերի ժամանակ, եւ որոնցից հետո հանգստանալու, ուժերը վերականգնելու հնարավորություն գունդը չուներ, քանի որ այս անգամ արդեն Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւելյան ուղղությամբ թշնամու ձեռնարկած նոր վտանգավոր հարձակումը կասեցնելու համար մարտունակ օժանդակ օգնական ուժերի անհրաժեշտություն էր ծագել: ԵՎ ի պատիվ նրանց, ուզում եմ նշել, որ այդ օրվա նրանց մարտական առաջադրանքը՝ վերցնել դիմացի երկու կարեւոր բարձունքները, կատարվեց փայլուն կերպով: Մարտի սկզբից 5 ժամ անց արդեն թշնամին, մարտադաշտում թողնելով իր սպանվածներին, խուճապահար փախչում էր Մաղավուզ ու Հակոբ Կամարի գյուղերի միջեւ ընկած բարձունքից եւ միայն օրվա վերջում մթության քողի շնորհիվ հանգիստ գտավ Մատաղիս գյուղի մերձակայքում»:

Սրանից ավելի լավ, նույնիսկ տանելի չէ նաեւ զինավառության խնդիրը, որի մասին եւս լրագրողը տալիս է ճշգրիտ տեղեկություն (նրան հավատում եմ, քանի որ այցելություններիս ընթացքում ինքս էլ նույն ցավին եմ դեմ առել): Ասում է. «Զինամթերքը եւ զենքը գլխավորապես ռազմավար են՝ հայթայթված հակառակորդից: Բայց դա, իհարկե, չի կարող եւ չի բավարարում օրավուր ահագնացող պատերազմի պահանջները: Քիչ չեն դեպքերը, երբ փախչող թշնամուն ԼՂՀ բանակային կազմավորումը չի հետապնդում միայն այն պատճառով, որ վերջացած է լինում զինամթերքը»:

Լրագրողը հաղորդում է մի տեղեկություն էլ, որն ամենաճակատագրականն է, որ, հպարտության հիմք լինելով հանդերձ, կարող է դառնալ մեծ ողբերգության պատճառ: «Արցախում այսօր զենք բռնելու տարիքի չզորակոչված տղամարդ չկա,- ասում է,- բոլորը ճակատներում են: Սակավաթիվ են Արցախի պաշտպանների միավորումները: Եվ սակավանում են օրեցօր: Արցախն այլեւս ռեզերվ չունի: Մինչ այսօր արցախցին պաշտպանել է հայության դատը, այսօր արդեն հայությունն ինքն է պարտավոր զինվորագրվել Արցախի դատին»:

Բարձր խոսք է, սակայն եւ տեղին, ամոթ չէ ասելը: Ամոթ է լսել եւ ականջի ետեւ գցելը:

Եղվարդում նախկին արցախցի (Առաջաձորից) ծանոթ մի ընտանիք գիտեմ. տան մեծը Մայիս Շեկյանն է, մոտավորապես 60-ամյա մի մարդ, որի երեք տղաներն էլ՝ Անդրանիկը, Նվերն ու Էռնեստը, կռվում էին իրենց հայրենի Մարտակերտի ճակատներում: Երբ դեռ կռիվ չկար, եւ աղետի գոտու շինարարական աշխատանքներն էին եռում, երեքով այնտեղ էին, գիշեր-ցերեկ տուն ու տեղից կտրված, կառուցում էին, ծառայում երկիրը վերականգնելու գործին: Արցախում դրությունը բարդանալուն պես շտապել են այնտեղ,



թե՝ վերականգնելը հետո էլ կլինի, հիմա պետք է փրկենք մեր հողը: Կռվում էին երեքով: Մարտակերտի կողմերում լավ գիտեին նրանց անաղմուկ նվիրվածության ու մարտական անցուցադիր խիզախությունների մասին: Նրանք Շուշին ազատագրողների առաջին շարքերում էին երեքով: Վերջերս Էռնեստին ծանր վիրավոր բերել էին Երեւան: Արկի բեկորներ են հանել ոտքերից, մարմնի տարբեր մասերից: Ասում են՝ էլի կան դրանցից, էլի պիտի հանեն:

Ասում են՝ Նվերը ռազմաճակատից զանգել է հորը, թե՝ այդ Էռնեստն ինչքա՞ն պիտի մնա հիվանդանոցում, զենքին տեր կանգնող չկա... Վիրավոր եղբորը հաղորդել են: Վեր է կացել քայլելու փորձ արել, արնահոսություն է սկսվել: Բուժողները հարկադրաբար պառկեցրել են ու կարգադրել, որ տեղից վեր չկենա, մինչեւ կարգին չբուժվի: Իսկ նա գլուխն առած բժիշկներին էր փնովում. «Դուք ի՞նչ բժիշկներ եք,- ասում է,- չեք էլ կարողանում այս հասարակ վերքերն արագ բուժեք»:

✧ ✧ ✧

**Փետրվարի 20-ի լույս 21-ի գիշերը** Լոս-Անջելեսահայությունը հեռուստամարաթոն է կազմակերպել մարտնչող Արցախին նյութական օգնություն հավաքելու համար եւ 12 ժամում շուրջ ինն հազար մարդ է մասնակցել միջոցառմանը, հանգանակվել է ավելի քան մեկ ու կես միլիոն դոլլար («Երկիր», մարտի 1):

Այս միջոցառման կենտրոնում է եղել Հայ հեղափոխական դաշնակցության ամերիկյան կենտրոնի ղեկավարներից մեկը՝ «Արցախ» հիմնադրամի ղեկավար Հովիկ Սալիբյան, որը հետո էլ պետք է օգնությունն առած Արցախ գար, բաժաներ կռվողներին ու նրանց ընտանիքներին, ճակատներում օրեր ու շաբաթներ շրջեր՝ բաժանելով հայրենապաշտպան ռազմիկների դառը ճակատագիրը:

**Փետրվարի վերջերին** ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի նախագահ Յան Էլիասոնը պիտի այցելեր հակամարտության գոտի՝ այցն սկսելով, իհարկե, Բաքվից: Եվ Բաքուն մեծապատիվ հյուրին արժանավայել դիմավորելու համար եղանակ էր գտել. հարձակումներ էր ձեռնարկել ռազմաճակատի բոլոր մասերում՝ Հադրութի, Մարտակերտի, Օմարի կողմերում, նույնիսկ ՀՀ սահմանային շրջաններում, ստիպում էր, որ հայկական ուժերը պատասխան գործողություններ կատարեն, ետ մղեն իրենց զորամասերը, պատճառեն մեծամեծ վնասներ..., որպեսզի հետո էլ իրենք իրավունք ունենան հայերին մեղադրելու հրադադարը խախտելու եւ Ադրբեջանի դեմ ռազմական նոր գրոհներ ձեռնարկելու մեջ:

✧ ✧ ✧

Ադրբեջանական լրատվական բոլոր միջոցներով նոր լուր էր տարածվել «ԼՂՀ ինքնապաշտպանական զորամասերում լրացուցիչ 5 արգելիչ ջոկատ ստեղծված լինելու» մասին: Այդ առթիվ ԼՂՀ Պաշտպանության շտաբի պետի տեղակալ Սեյրան Օհանյանը հրապարակեց հայտարարություն, որով ասում էր՝ «այդ լուրի մեջ ճիշտ էր միայն ԼՂՀ բառը, եւ խրախուսելի է, որ հակառակորդն արդեն սովորել է այն, օգտագործում է... Իսկ մնացածը սուտ է, անիրական, որովհետեւ ԼՂՀ բանակում արգելելու կարիք չի զգացվում: Ադրբեջանական զորամասերն են, որ ետ են փախչում, դիմում դասալքության, եւ այնտեղ պատժիչ ջոկատները միշտ էլ մեծ գործ ունեն, տեղում գնդակահարում են, զանազան ուրիշ պատժամիջոցների դիմում... ԵՎ հիմա էլ այս միջոցներից փրկվելու համար ադրբեջանցի զինվորները գերի են հանձնվում, օրինակ, միայն վերջին երկու ամսում գերի են հանձնվել 60 ասկյար ու սպա, այդ թվում՝ նաեւ արտասահմանյան վարձկաններ («Ազգ», մարտի 1):

**Փետրվարի 21-ին** ԼՂՀ բանակի գլխ. հրամանատարի տեղակալ գեներալ Քրիստափոր Իվանյանը տեղեկացրել է, որ Օմարի լեռնանցքի համար մղված վերջին մարտում թուրքերն ունեցել են լուրջ կորուստներ՝ 500 զինվոր ու սպա, ծանր զրահատեխնիկայի 12 միա-

վոր, այդ թվում՝ T-72 տիպի 5 տանկ, մեկ «Գրադ» կայանք, մի քանի թնդանոթ եւ մեծ քանակությամբ զինամթերք:

Ծերունազարդ գեներալը ԼՂՀ փոքրաքանակ զինուժի դեմ հանված թշնամական գերազանց ուժերի պարտությունը բացատրեց ոչ միայն արցախցիների հմտությամբ ու խիզախությամբ, այլեւ հակառակորդի անխոհեմությամբ: Լեռնային պայմաններում ի՞նչ պետք է աներ մեծաքանակ ու անկանոն խառնիճաղանջը, որը նույնիսկ իր համար նպաստավոր պայմաններում նահանջում է ու կոտորվում:

Երեւի թե գոնե այս պարտությունից հետո թշնամին խելքի կգա եւ կհասկանա, որ Արցախի հետ ռազմի դաշտում կրակի լեզվով խոսելն անիմաստ է («Ազգ», փետր. 22):

**Փետրվարի 22-ին** ՀՀ պետնախարար Վազգեն Սարգսյանը, Փարիզի հայկական դեսպանատանը հավաքված հայրենակիցների առաջ ելույթ ունենալով, հանրագումարի բերեց արցախյան ռազմաճակատի վերջին ավելի քան երկու ամսվա վիճակը, ցույց տվեց, որ Հեյդար Ալիեւի ադրբեջանական իշխանությունը եւս չկարողացավ ծնկի բերել Արցախի հայությանը, հակառակը, կրեց կորուստներ, որոնց իսկական անունն է պարտություն: Պատկերացրեք, դեկտեմբերի 18-ից, այսինքն՝ Ալիեւի կազմակերպած վճռական ճակատամարտից այս կողմ թուրքերը կորցրել են շուրջ 8000 ասկյար, մենք 700: 700՝ 8000-ի դիմաց, չնայած մենք մեր 700-ն էլ մեծ կորուստ ենք համարում, քանի որ փոքրաթիվ արցախահայության համար անգնահատելի է յուրաքանչյուր անհատի կյանքը... Թուրքը զրկվել է իր մի շարք շրջաններից եւ հիմա ագրեսոր է կոչում հայերին, որոնք, իբր, նվաճել են իրենց հանրապետության 20 տոկոսը... Հիմա զինադադար է, եւ անհրաժեշտ է հակամարտությանը վերջ տալ քաղաքական ճանապարհով: Իսկ եթե հակառակորդը պիտի պատրաստվի նոր ու ավելի մեծ կռվի: Մենք իրավո՞ւնք ունենք սպասելու դրան, երբ այդպիսի շարունակությունը կարող է մահ լինել ոչ միայն Արցախի համար, այլեւ Հայաստանի... Ուրեմն, դրա համար «անհրաժեշտ է, որպեսզի ողջ հայ ժողովուրդը, արդեն ամբողջ աշխարհով մեկ, ամբողջ հայությունը,- ես սա ասում եմ ամբողջ պատասխանատվությամբ,- պատրաստվի պատերազմական վիճակի, քանի որ Ղարաբաղը չափազանց փոքր է միանգամից շատ-շատերի դեմ կռվելու համար» («Ազգ», մարտի 1):

Չափազանցնո՞ւմ էր պետնախարարը: Բնա՛վ: Շատ իրատեսական էր նրա խոսքը, եւ անհրաժեշտ էր այդ նոր փորձությանը պատրաստվել ազգովին, աննախադեպ միասնությամբ, ուժերի եւ ամեն տեսակ հնարավորությունների գերագույն լարումով:

**Փետրվարի 23-ին** հեռուստատեսությամբ խոսեցրին Գրաչովին, եւ նա ասաց՝ 18-ին իրենք պայմանավորվել են դադարեցնել կրակը, շուտով կլինի նաեւ երեքի՝ Ռուսաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի պրեզիդենտների հանդիպումը, որը եւ կարեւորագույն քայլ կդառնա հակամարտությունը կարգավորելու ճանապարհին:

**Փետրվարի 24**. Մոսկվայից հաղորդեցին, որ Ելցինը Վլ. Կազիմիրովին նշանակել է իր հատուկ դեսպանը՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման գծով:

✧ ✧ ✧

Նույն օրը Ադրբեջանի ազգային խորհուրդը որոշեց ամեն տարի փետրվարի 24-ը նշել որպես Խոջալուի ցեղասպանության սգո օր: Նույն օրը Մոսկվայի «Մայակ» ռադիոկայանը հաղորդեց, թե Ադրբեջանի գլխավոր դատախազը Խոջալուի ողբերգության առթիվ հանրապետության նախկին նախագահ Այազ Մութալիբովին ձերբակալելու օրդեր է ստորագրել («Երկիր», մարտի 1):

✧ ✧ ✧

Հաջորդ օրերին ճակատներում եղան հրետակոծություններ ու մանր բախումներ: Իսկ Մոսկվայի կարծիքով՝ արդեն լիակատար հրադադար էր, որովհետեւ հարկ էր ընդգծել ռուսական այս միջնորդության (փետրվարի 18-ի փաստաթղթի) նշանակությունը:



✧ ✧ ✧

Ալիեւը վերադարձել է Մեծ Բրիտանիա կատարած այցից, հիացած է իր բանակցությունների արդյունքներով, համոզված է, որ Մեյջորի իշխանությունը կկատարի իր խոստումը՝ միջազգային հավաքներում ագրեսոր Հայաստանին կստիպի հեռանալ Ադրբեջանի տարածքից, հրաժարվել Ղարաբաղի նկատմամբ ունեցած անօրինական հավակնություններից: Իսկ աշխարհի նավթային խոշոր կենտրոն դարձած Ադրբեջանը, պարզ է, կսկսի իր արդար կամքը թելադրել մեծ տերություններին («Ազգ», փետր. 25):

✧ ✧ ✧

Լրատվության մարմինների պնդումով՝ Հ. Ալիեւը կակղել է, համաձայն է ԼՂՀ եւ Հայաստանի համար միջանցք ստեղծելուն, եթե նման միջանցք ստեղծվի նաեւ Ադրբեջանի ու Նախիջեւանի միջեւ («Երկիր», փետր. 26): Ուրեմն, Լաչինն ուզում է փոխանակել Մեղրիով: Բայց չէ՞ որ Լաչինն այլեւս իրենը չէ:

**Մարտի 1-ի** երեկոյան Աշոտ Բլեյանին նորից ՀՀ հեռուստատեսության էկրան քաշեցին, եւ նա դարձյալ զլեց իր՝ հիմնականում ապազգային, հակահայկական (ուրեմն եւ հակամարդկային) զառանցանքները, որոնք այստեղ ներկայացնում եմ անմիջապես գրի առած պատառիկներով:

- Ես այն տիպն եմ, որն իր գործն է համարում օգնել հասարակական առաջադիմությանը:

- Մենք դժգոհ ենք մեր պատմությունից, նաեւ այսօրվանից... Ինձ անհանգստացնում են մեր հասարակական մտածողության դաշնակցականացումը, պատրանքապաշտությունը, անգիտակից վերաբերմունքն իրականության:

- Երեկ լսեցի Սումգայիթի տարելիցին նվիրված հաղորդումը եւ սարսափով մտածեցի՝ մարդիկ մեզ ո՞ւր են տանում, ի՛նձ, իմ երեխայի՛ն, իմ ընտանի՛քը...

- Ենթարկվելով իր տերերի հրահանգին, լրատվությունը մեր ազգը մղում է խելացնորության, միջնադար, մի կատարյալ սատանայական ջաղաց...

- «Հայաստանի Հանրապետությունը» պետական թերթ է, «Երկիրը»՝ կուսակցական, բայց երկուսն էլ նույն ավերածություններով են զբաղված:

- Մեր հասարակական կյանքն առաջ է գնում անգիտակցաբար, արյան կանչի ու ցեղի անկախության զառանցանքներով:

- 70 տարվա ընթացքում ռուսների նախաձեռնությամբ ստեղծվել էր պետական կարգ, բարեկեցություն... 90-91 թվականներին անկախացանք, փոխանակ արժեքավորելու եղածը, շուռ եկանք դեպի գլխապահությունը, աղմկոտ ազգային նկարագիրը, սկսեցինք հպարտանալ մեր ազգային արատներով...

- 88-ին փողոց ելանք այնպես աղմկոտ ու անհավասարակշիռ, ասես փորձ ու անցյալ չենք ունեցել, ոչ մի դաս չենք առել: Չէ՞ որ նույնիսկ աշխարհի հզորներին տրված չէ հակադրվելու իրավունքը...

- Ես մեկ-մեկ ինձ հյուր եմ զգում այս երկրում, քանի որ տիրապետող է դառնում դաշնակիզմը:

- Հարցը հնչակին, ռամկավարին, դաշնակցականին չի վերաբերում... Ես նույնիսկ կարող էի հանդուրժել ֆետիշացումը, առասպելացումը... Լեոյի հետ վիճելու, նրան հաղթահարելու հնարավորություն ունեմ: Բայց ինչո՞ւ չեն տպում «Թուրքական գաղափարաբանությունը», որպեսզի մենք ճանաչենք նրա ամենաճշմարիտ խումբը

(Լեոյի «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը» (հատոր Ա) լույս է տեսել Փարիզում 1934-ին, քննում է հայկական ազատագրական շարժման 19-րդ դարի երկրորդ կեսի իրողությունները ու նրանց գաղափարական արծարծումները եւ շատ էլ չի տարբերվում մեծ պատմաբանի ու մտածողի մնացած գրքերից, հրապարակած ու անտիպ անհամար երկերից, որոնց առանցքը հայոց պատմությունն է, հայոց ճակատագիրը, հայ

հայրենասիրությունը: Այնտեղ ի՞նչ է գտել նորօրյա ուրացողը, որ փորձում է նրանով խաչ քաշել Լեոյի մնացյալ ժառանգության վրա):

- Իշխանությունը չի զբաղված իր հիմնական գործով, որը երկրի առաջադիմության ստեղծումն է: Այդ պատճառով էլ բոլոր մարդիկ, մեզնից յուրաքանչյուրը, զբաղված է իր սեփական գլուխը պահելով:

- Մեր տնտեսական կառույցները պարապ բաներ են, ոչնչով զբաղված չեն, ոչ մի հեռանկար չունեն: Այդ պատճառով էլ մեր շուրջը պարապ մարդկանց հասարակություն է:

- Թումանյանն իր գլխապահությամբ փակուղի մտավ (կուլտուրական անկախություն եւլն, եւլն...): Երեւի դա էլ նրան գերեզման տարավ, որովհետեւ տեսավ իր գաղափարաբանության խարխլումը...

- Չարենցը եւս: 21-ին կար «Գիրք ճանապարհին», որը նույն գլխապահությունն է: Այդպես էլ 88-ին:

- Իսկ ձեր ԳԽ-ն ինչո՞վ է զբաղված, մի՞թե օրենքներ չեն ստեղծում, որ գոնե վաղը գործ դառնան,- հարցնում է նրան էկրան քաշողը:

- Դրա մասին չէ իմ խոսքը, ես գտնում եմ, որ մեր հասարակությունը չի ստեղծել այն գաղափարները, որոնք գոնե վաղը գործ են դառնալու... Չգիտեմ՝ ե՛րբ էր, որ մենք տրվեցինք թմբիրին, զառանցանքին, անլրջությանը, ինքնագոհ պոռոտախոսությանը, որոնց 1500 տարի գերի ենք եղել եւ չենք ազատվում... Իսկ հիմա հասկապե՛ս, քանի որ այսօր այս բոլորն առավել ցայտուն են... Եթե մենք մեր բախտը հանձնել ենք հրապարակի վրա գտնվողներին, ապա մենք կորած ենք:

- Հիմա իրական է սոցիալական մահը, եւ սա է, որ պետք է արձանագրենք:

- Իսկ տանիքի՞ մասին, Անդրկովկասի երեք ժողովուրդների մասին է խոսքը, ընդհանուր տան տանիքի մասին պիտի՞ մտածենք...

Այս եւ նման ուրիշ բամբառակություններ, որոնց տեղը է՛ ուր ուզես, բայց ո՛չ Հայաստանի հեռուստատեսությունը:

Իսկ ինչո՞ւ են քաշել այնտեղ: Մանավանդ նրա զրուցակից Ռոբերտ Մավիսակալյանը, որ կարգին հայ մարդ է, հայավարի մտածող, ինչո՞ւ բերել, հրապարակ է հանել այս ամբողջ ամոթը:

Մեկն էլ կարող է կշտամբել, թե Արցախյան գոյապայքարի լուրջ տարեգրության մեջ ինչո՞ւ տեղ ես տալիս նույն այդ ամոթին, ի՞նչ կապ ունի, երբ մի ժամվա բարբաջանքի մեջ մեկ անգամ էլ չտվեց այդ «Արցախ» կամ իր հարազատ թուրքի ասած «Ղարաբաղ» անունը:

Այո՛, չտվեց, բայց խոսքը ներծծված էր նրա դեմ հորդացող մաղձով ու ատելությամբ: Այդ Արցախի խնդրի համար է այնպես դիվոտված... Հիշեցեք նրա ուրիշ-ուրիշ խոսքերը, Բաքու-Մեքկա գնալ-գալու պատմությունը, առհասարակ նրա ամբողջությունը:

**Մարտի 3-ին** իմացանք, որ Ժիրայր Լիպարիտյանը դուրս է եկել արտգործնախարարությունից, նշանակվել նախագահի գլխավոր խորհրդական եւ հատուկ հանձնարարությունների դեսպան: Այս երկրորդը երեւի միայն Արցախի խնդրին է վերաբերում:

✧ ✧ ✧

Այսօր Ստեփանակերտում Յան Էլիասոնը վստահություն է հայտնել, թե բարդույթը կլուծվի քաղաքական ճանապարհով, եւ ժողովուրդն ազատ շունչ կքաշի: Նա այսպես է ասել, իսկ ԼՂՀ ղեկավարները մտածել են, թե Ռուսաստանը նոր միջնորդություն է սկսել, ուզում է գործ կատարել, դրանից էլ ԵԱՀԽ-ի խանդը բռնել է, ներկայացուցիչը վազել-եկել է, բայց ի՞նչ է անելու: Գուցե խանգարի՞ ռուսներին:

**Մարտի 5-ին** ԼՂՀ արտգործնախարար Արկ. Ղուկասյանը հայտարարել է, թե շուտով ԵԱՀԽ-ի ու Ռուսաստանի ծրագրերը կմիավորվեն, եւ հարցի լուծումը կդյուրանա:



Իսկ Ադրբեջանից պետխորհրդական Գաբիլ Հուսեյնլին ու պաշտպանության նախարար Մ. Մամեդովը տարբեր առիթներով հաղորդել են, որ Ալիեւը Կազիմիրովին ու գեներալ Կոնդրատեւին պարզ է ասել, թե ինքը դեմ է Ռուսաստանի զորքերի հակամարտության գոտի, ուրեմն՝ Ադրբեջան, մտցնելուն, հետեւապես եւ ռուսական միջնորդությունն Ադրբեջանի կողմից չի ընդունվում («Երկիր», մարտի 8):

**Մարտի 7-ին** Կազիմիրովը Բաքու տարավ ռուսական միջնորդության նոր, մշակված եւ Ստեփանակերտի ու Երեւանի հավանությանն արժանացած տարբերակը, որի մեջ, ասում էին, ռուսական զորքերը մտնում էին ոչ թե Ադրբեջան, այլ հակամարտության գոտի՝ իբրեւ խաղաղարարներ («Ազգ», մարտի 9):

Իսկ Մաքսիմ Միրզոյանը (ԼՂՀ նախագահի խորհրդական), երեւի, իրավացի էր, երբ պնդում էր, թե Ռուսաստանն Այսրկովկաս է վերադառնում՝ իբրեւ այստեղ իր խոսքն ու գործն ունեցող գործուն ուժ, մանավանդ, երբ այդ Մինսկի խումբը ոչ մի հարց չլուծեց եւ չի էլ կարող լուծել իր ներկա հնարավորություններով (նույն տեղում):

Կազիմիրովի ասածներից չէր կարելի եզրակացնել, թե «Զորքերի դուրսբերումը գրավված տարածքներից» նշանակում է նաեւ Լաչինից: Իսկ Ժ. Լիպարիտյանն ասում էր՝ թուրք զորքն էլ դուրս պիտի բերվի Մարտակերտի շրջանից, եւ Շահումյանի հարցն էլ պետք է քննվի հետագայում: Իբր, այդպիսի տարբերակ է ստեղծվել նոյեմբերի 2-8-ին Վիեննայում՝ ԵԱՀԽ-ի կողմից («Երկիր», մարտի 9):

**Մարտի սկզբից** Այսրկովկասում էր Ռուսաստանի պաշտպանության փոխնախարար, գեներալ-գնդապետ Գեորգի Կոնդրատեւը՝ ռազմական մի պատկառելի պատվիրակությամբ, որ խնդիր ուներ գործել ըստ Գրաչովի ղեկավարությամբ ձեռք բերված պայմանագրի, ղեկավարել այն քայլերը, որոնց շնորհիվ պետք է ավարտվեն նախապատրաստական աշխատանքները, եւ հիմք պետք է ստեղծվի հակամարտության շրջանը խաղաղարար, մանավանդ ռուսական ուժեր մտցնելու համար:

✧ ✧ ✧

Ադրբեջանական կողմն անտեսում էր ձեռք բերված պայմանագիրը հրադադարի վերաբերյալ եւ ռազմաճակատի տարբեր հատվածներում հրահրում բախումներ, զինուժի նոր կուտակումներ անում,- համարյա ամեն օր հաղորդում էին հայկական լրատվական մարմինները:

✧ ✧ ✧

Գեներալ Կոնդրատեւը, Երեւանում համաձայնության եւ բարյացակամության հանդիպելով, ասել է՝ եթե Ադրբեջանում եւս նման վերաբերմունք լինի, Ռուսաստանը ստիպված կլինի դադարեցնել իր միջնորդությունը: Եվ, ահա՛, Բաքվում ինքն ու Կազիմիրովը հանդիպեցին Հ. Ալիեւի հետ, որն էլ բացեիբաց արտահայտվեց Ռուսաստանի միջնորդության դեմ՝ գտնելով, որ այն շատ կետերով համաձայն չէ ԵԱՀԽ-ի ծրագրին:

Նույն Ալիեւը դրանից առաջ հանդիպում էր ունեցել Մինսկի խմբի նոր նախագահ Յան Էլիասոնի հետ եւ հայտնել իր համերաշխությունն այդ կազմակերպության նախաձեռնություններին՝ հորդորելով դրանք ավելի եռանդուն դարձնել («Ազգ», մարտի 3):

**Մարտի 12-ին** Իջեւան-Ղազախ սահմանագլխին հանդիպեցին Ադրբեջանի ու Հայաստանի ԳԽ-ի նախագահները: Արարքցյանը գոհ է 1,5 ժամ տեւած զրույցից, քանի որ պայմանավորվել են, թե հրադադարը հաստատուն կդարձնեն, ապա կնստեն բանակցությունների, որոնց կմասնակցի նաեւ ԼՂՀ-ը («Երկիր», մարտի 16):

Արարքցյանն իր համար նույնիսկ իրավիճակի ու իրենց վճռի բնութագիրն է ձեւակերպել՝ «գրավյալ տարածքների փոխարեն խաղաղություն եւ ապաշրջափակում» («Երկիր», մարտի 15): Եվ սա էլ ավա՞րտն է: Իսկ Արցախի ինքնորոշո՞ւմը, նրա ազատագրությունն ու անկախ ապագայի ապահովությո՞ւնը:

✧ ✧ ✧

ԱՄՆ-ում արցախյան բարդույթի լուծման շարժում է սկսվել. սենատոր Ռոբերտ Քենեդին նամակ է պատրաստել եւ հղել պրեզիդենտ Բիլ Քլինթոնին՝ պահանջելով լրջորեն զբաղվել Արցախի հարցով, որպեսզի արդար լուծում տանա ինքնորոշման համար ծավալված 6-ամյա պայքարը: Նամակն ստորագրել են Ռոբերտ Դոուլը, Պոլ Սայմոնը, Կառլ Լեւինը, Ջոն Քենեդին եւ ուրիշներ:

Ի՞նչ արդյունք կունենա այս նախաձեռնությունը: Կարծում եմ՝ եթե ուղղակի ոչ մի, ապա անուղղակիորեն կստիպի, որ Ռուսաստանի կողմից սկսված ԱՊՀ նախաձեռնությունը չձգձգվի:

✧ ✧ ✧

Ադրբեջանն իրարով էր անցել այս նախաձեռնությունից եւ, իբրեւ ահեղ նախազգուշացում, հենց այս օրերին բողոքագիր հղեց Ռուսաստանի արտգործնախարարությանը՝ ի լրումն երկու շաբաթ առաջ (մարտի 19-ին) արած նոտայի, հիշեցնելով, որ Ռուսաստանի դաշնության պետական դումայի անդամ, ՌԴ ազգային հանրապետական կուսակցության ղեկավար Ն. Լիսենկոն Ստեփանակերտ կատարած իր այցի ժամանակ հանդես է եկել միացյալ Հայաստան ստեղծելու, այսինքն՝ Լեռնային Ղարաբաղն ու Լաչինը Հայաստանին տալու, դրանով իսկ Ադրբեջանի ամբողջականությունը խախտելու կոչով: Ապա նա առաջարկել է, որ Հայաստանը դառնա «ուժեղ Ռուսաստանի դաշնակիցը»... Սրանք, իհարկե, բացասական ազդեցություն պիտի ունենան ռուս-ադրբեջանական հարաբերությունների զարգացման վրա («Երկիր», ապրիլի 2):

✧ ✧ ✧

ԱՊՀ խորհրդարանական պատվիրակության այցերը Բաքու, Երեւան, Ստեփանակերտ օգտակար է համարել Կազիմիրովը, որի կարծիքով՝ բարելավվել է մթնոլորտը՝ քննարկումները շարունակելու համար: Մնում է լուծել հակամարտության գոտում խաղաղարար ուժեր տեղադրելու հարցը: Միայն սա կարող է կայունացնել հրադադարը: Սակայն այդպիսի ուժեր տրամադրելուն առայժմ պատրաստ է միայն Ռուսաստանը («Երկիր», ապրիլի 5):

Պատվիրակությունը գտնում էր, որ հետագա քննարկումներին եւ առհասարակ խնդրի կարգավորման ողջ ընթացքին ԼՂ-ը պետք է մասնակցի որպես հակամարտող կողմ:

Նախատեսվում է, որ Բիշքեկում Բելառուսը դառնա միջնորդության ղեկավար՝ Գրիբի (երեւի Բելոռուսի խորհրդարանի նախագահն էր) գլխավորությամբ:

**Ապրիլի 4-ին** արտասահմանյան ռադիոները հաղորդում էին, որ Ադրբեջանն ու Թուրքիան միաժամանակ դիմել են ՄԱԿ, որպեսզի այնտեղ քննարկվի ու դատապարտվի Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի տարածքում:

✧ ✧ ✧

Հայտնի դարձավ, որ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը հրավեր է ստացել՝ մասնակցելու Բիշքեկի առաջիկա խորհրդաժողովին: Իսկ Ադրբեջանի ղեկավարությունը դեմ է դրան:

**Ապրիլի 5-ին** ԼՂՀ է ժամանել Մինսկի խմբում Ֆրանսիայի ներկայացուցիչ Էլեն Դյուբան եւ հանդիպել Կ. Բաբուրյանի ու Ա. Ղուկասյանի հետ:

Ռուսաստանի ակտիվացումը կստիպի ակտիվանալ նաեւ ՄԱԿ-ին ու ԵԱՀԽ-ին:

**Ապրիլի 7-ին** ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարը՝ Սամվել Բաբայանը, կանանց տոնի առթիվ շնորհավորել է արցախյան բանակում ծառայող կանանց. «Ղարաբաղի բանակը պետք է նմանվի Իսրայելի զինված ուժերին, որտեղ ծառայում են նաեւ կանայք: Արցախի դուստրերն ապացուցել են, որ տղամարդկանցից պակաս չեն մարտնչում թշնամու դեմ: Բոլորս հիշում ենք Ստեփանակերտի բնակիչ Մարգարիտ Սարգսյանին, որը ոչնչացրել է հակառակորդի 37 զինվոր, իսկ վերջում, երբ շրջապատել են նրան, Բաշառատ գյուղի մոտ, պայթեցրել է ինքն իրեն՝ թշնամու 7 զինվորի հետ միասին»:



✧ ✧ ✧

Իսկ Արցախյան ճակատում ադրբեջանական խժդժությունները շարունակվում էին: Համարյա ամեն օր հրթիռակոծվում էին Ֆիզուլիի, Աղդամի շրջանների եւ Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւելյան բնակավայրերի հայկական դիրքերը: Մասնագետներն ապացուցում էին, որ հրթիռակոծությունն ու հրետակոծությունը կատարվում էին թրքական նորագույն զենքերով: Ուրեմն, Թուրքիան նորագույն զենքեր ու զինամթերք էր հայթայթում ու մատակարարում Ադրբեջանին («Երկիր», ապրիլի 7, «Ազգ», ապրիլի 7):

**Ապրիլի 7-ին** Երեւանի հեռուստատեսությամբ ցույց տվին տեսագրություն ԼՂՀ-ից: Ռուս լրագրողուհին ռազմական տեխնիկայի վերանորոգման գործարանում է, զրուցում է գործարանի ղեկավարի, գումարտակի հրամանատարի եւլոց հետ: Սրանք բացատրում են, թե ինչպես գործարանում վերակենդանանում են ռազմի բարդագույն մեքենաներն ու զինտեխնիկայի տեսակները:

Հետո էլ լրագրողուհին խոսում է Ռուսաստանից այստեղ հյուր եկած Լիսենկոյի հետ, որն ասում է՝ քանի օր է, ես ծանոթացել եմ ԼՂՀ բանակին, որն ամենամարտունակ, ամենակազմակերպված բանակն է ԱՊՀ-ում, նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում...

Համեմատում է իր տեսածների՝ Վրաստանի, Աբխազիայի, Հարավային Օսիայի եւլ վայրերում կռվողների հետ, ապա ասում.

– Համեմատելու եզր իսկ չկա... Այս բանակն ընդունակ է իրականացնելու իր ամեն տեսակ ծրագրերը: Եվ լավ կլինի, որ հակառակորդն այդ հանգամանքը հասկանա ու դրանից էլ անի համապատասխան եզրակացություն:

Ցույց են տալիս զինվոր Կարեն Ադամյանին: Երեւանի բժշկական ինստիտուտի 4-րդ կուրսի ուսանող է, հեռացրել են, որովհետեւ ռազմաճակատում է եղել, թուրքի հունվարյան հարձակումները դիմագրավողների հետ եւ ձմեռային սեսիաներին մասնակցելու հնարավորություն չի ունեցել: Երբ իմացել է, որ հեռացրել են, տեղեկանքներ վերցրած գնացել է, հանդիպել ռեկտորի հետ... Ասում են՝ մեկ է, չենք վերականգնի, եւ քննություններ հանձնել չես կարող, ուշ է...Ո՞ւշ է: Իսկ երբեւէ ժամանակին իրենց արարքի համար պատասխան պիտի՞ տան Կարեն Ադամյանին պատժողները...

**Ապրիլի 8-ին** Մոսկվայից հաղորդեցին, որ ԱՊՀ պատվիրակության քարտուղար Իվան Կորոտչենյան հայտնել է, թե ապրիլի 15-ին Մոսկվայում կլինի խորհրդակցություն՝ նվիրված ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Իբր, արդեն շատ հարցերի առթիվ ձեռք են բերվել համաձայնություններ: Ասում են՝ նույն օրն էլ Ելցինի ղեկավարությամբ տեղի կունենան նաեւ Ալիեւի ու Տեր-Պետրոսյանի բանակցությունները:

**Ապրիլի 10-ին** ադրբեջանական ինքնաթիռները ռմբակոծեցին ԼՂՀ մի շարք բնակավայրեր եւ Ստեփանակերտը: Կան մեծ թվով զոհեր (կանայք ու երեխաներ) եւ վիրավորներ: ՀՀ ԳԽ-ի նստաշրջանն այդ առթիվ հայտարարություն արեց՝ դատապարտելով կատարվածը:

Մարտակերտի կողմերում թշնամու գրոհները ետ մղելուց հետո մերոնք ազատագրել են Թալիշն ու Գյուլիստանը («Ազգ», ապրիլի 12):

ՀՀ ԳԽ-ի նստաշրջանում Արա Սահակյանը հայտարարեց, թե ԼՂՀ զորքերը գրավել են Թալիշն ու Գյուլիստանը, եւ դրա պատճառով էլ թուրքերը գործի են դրել իրենց օդուժը:

**Ապրիլի 12-ից** Պրահայում տեղի ունեին Մինսկի խմբի հանդիպումները, եւ Ադրբեջանը հենց այդ ժամանակ էլ իր ռազմական ինքնաթիռներով ռմբակոծում էր ԼՂՀ խո-

չպետք է մոռանալ իսլամական գործոնը. աշխարհում կան մեկ միլիարդ մահմեդականներ, իսկ քրիստոնյաները լոկ ութ հարյուր հազար են:

Թուրքը միշտ այդպես է. եթե ճնշանքը չի օգնում, սպառնալիքին ու չարությանն է դիմում («Երկիր», ապրիլի 16):

**Ապրիլի 16-17-ին** ԼՂՀ զորքերը, Մարտակերտի շրջանում, կասեցնելով թշնամու նոր հարձակումները, ազատագրել են Մարաղա, Վերին Չայլու գյուղերը եւ շրջակա մի քանի բարձունքներ («Ազգ», ապրիլի 19):

✧ ✧ ✧

Այս օրերին լրատվության մարմինները վերստին խոսում էին ԼՂՀ-ում իր անլուր չարություններով հայտնի եւ անմոռանալի գեներալ Սաֆոնովի մասին, հատկապես նրա դեմ ձախողված մահափորձի մանրամասներից: ԵՎ, ահա՛, «Երկիրը» տպագրել է հոդված, որի հիմնական մասը մեջ եմ բերում այստեղ.

«1991 թ. ապրիլի 8-ին Ռոստով քաղաքում գեներալ Սաֆոնովի նկատմամբ իրականացվեց հատուցման գործողություն: Պատահմունքի բերումով Սաֆոնովը փրկվեց: Արդարահատույցների գնդակներից զոհվեց գնդապետ Բլախոտինը, որը Սաֆոնովի տեղակալն է եղել Ղարաբաղում եւ նույնպես աչքի էր ընկնում հայատյացությամբ ու դաժանությամբ:

Ապրիլի 9-ին ահաբեկչության մեղադրանքով ձերբակալվեցին չորս հայեր՝ Հակոբ եւ Սամվել Բաղմանյանները, Արմեն Անտոնյանը, Կամո Եղյանը: Ահաբեկիչներին ապաստան տրամադրելու եւ նրանց օժանդակելու մեղադրանքով ձերբակալեցին նաեւ Կառլեն Հակոբյանին: Հետագայում Կամո Եղիյանը եւ Արմեն Անտոնյանն ընդունեցին իրենց մեղքը, Կամո Եղիյանը ազատ արձակվեց անմիջապես դատարանի դահլիճում: Արմեն Անտոնյանը, որպես ահաբեկչության անմիջական իրագործող, դատապարտվեց 15 տարվա կալանքի: Հակոբն ու Սամվելը չընդունեցին իրենց նկատմամբ հարուցված մեղադրանքը: Բայց նույնպես դատապարտվեցին: Հակոբը՝ ահաբեկչությունը կազմակերպելու եւ ղեկավարելու համար՝ 15 տարի, Սամվելը՝ 12 տարի: 4 տարվա ազատազրկման ենթարկվեց Կառլեն Հակոբյանը:

Հակոբն ու Սամվելը եղբայրներ են, Ստեփանակերտից: ՀՀԴ անդամ: Հակոբը Ղարաբաղի առաջին ազատամարտիկներից է, առաջին կազմակերպիչներից: Լեգենդար Բեկոր Աշոտը նրա քավորն էր, Հակոբը Բեկորի հետ զենքի եղբայրներ են եղել եւ միմյանց զավակների հոգեւոր հայր: Գաղափարի ընկերներ եւ հայրենիքի նվիրյալ զինվոր:

Բանտում Հակոբն ու Սամվելը անլուր չարչարանքների են ենթարկվել: Խոստովանություն կորզելու նպատակով նրանց ուղարկել են Բաքվի բանտ: Սա էլ է անցել ապարդյուն: Կրկին հետ են վերադարձրել Ռոստով, դատապարտել: Այժմ Չերկասովի բանտում են: Լուրեր կան, որ նրանց կրկին խոշտանգում են: Հուսով ենք Հայաստանի Կարմիր խաչը, մարդու իրավունքների կոմիտեն եւ համապատասխան կազմակերպությունները քայլեր կձեռնարկեն նրանց վիճակը մեղմելու համար: Պարտավոր ենք: Հակոբն ու Սամվելը ահաբեկիչներ են այլոց համար: Մեզ համար եւ իրականում նրանք ահաբեկիչներ չեն: Արդար վրիժառուներ են, ինչպես Սողոմոն Թեհլերյանն ու նրա զինակիցները» («Երկիր», ապրիլի 19):

**Ապրիլի 19-ին** ՀՀ ԳԽ-ի նախագահ Բ. Արարքցյանը ժամանեց Ստեփանակերտ՝ մայիսի սկզբներին Բիշքեկում տեղի ունենալիք խորհրդարանական ժողովին ՀՀ ու ԼՂՀ պատվիրակությունների նախապատրաստման համար եւ զրույցներ ունեցավ Կ. Բաբուրյանի ու ԼՂՀ ԳԽ-ի Նախագահության եւ հանձնաժողովների հետ:

✧ ✧ ✧

Այս օրերին դիրքային համառ մարտեր են եղել Մարտակերտի շրջանի հյուսիս-արեւելյան մասում. մեր թուրքերն ունեցել են կենդանի ուժի, մի քանի տանկի եւ զրահատեխ-



նիկայի ուրիշ միավորների կորուստներ: Սպանվել է Ադրբեջանի ազգային հերոս (Շուշվա հրամանատար) Ֆարհադ Ասկերովը: Դիրքերն ինքնակամ թողել-հեռացել են Մինգեչաուրի, Խաչմասի, Գեոկչայի ու Բարդայի զորամասերը, որոնց գտնելու եւ ճակատ վերադարձնելու հրաման է տվել Ալիեւը («Ազգ», ապրիլի 20):

**Ապրիլի 20-ին** Երեւանում զորահավաք էր, տոնախմբության պես ընթացող ռազմական միջոցառում, որը նպատակ ուներ հզորացնել վտանգված հայրենիքի պաշտպանությունը: Հեռուստատեսությամբ ցույց են տալիս նաեւ զորահավաքից «ուշացած» ու այլ երկինքների տակ իրենց դժխեմ կյանքն անցկացնող հայորդիներին: Եվ մեկ էլ էկրանին ցույց տվին էստոնացի երիտասարդ գեղանկարիչ Ֆելիքս Բուրմանին, որը, մասնակցելով հայոց զորահավաքին, ռազմական զգեստով ու զենքով գնում է ճակատ: Նա մի անթերի հայերենով գեղեցիկ խոսք ասաց՝ այն ավարտելով սուրբ խոստովանությամբ. «Ես էստոնացի եմ՝ հայի հոգով ու բնավորությամբ: Հայոց եւ իմ հայրենիքի պաշտպանն եմ այս պահից»:

Այսօր Երեւանում ԱՄՆ-ի դեսպանը հարցազրույց է ունեցել լրագրողների հետ, որոնց հայտարարել է, թե արդեն պարզ հայտնի է, որ շարունակվող պատերազմը ոչ մի կողմին հաղթանակ չի բերի: Անհրաժեշտ է, որ ԼՂՀ-ն ու Ադրբեջանը կտրուկ հրաժարվեն արյունահեղությունից եւ փոխզիջումների գնով, անպայման փոխզիջումների՛, հասնեն խաղաղության ու դաշինքի:

Նույն օրվա առավոտյան թուրքերը մեծ արշավանքի էին եկել Ֆիզուլու հայկական դիրքերի վրա (12 տանկ, շուրջ 700 ասկյար), ջարդ կերած ետ դարձան: Այս պարտության վրեժը լուծեցին Ստեփանակերտից, որի վրա եկած ռազմական ինքնաթիռները ռմբակոծեցին արվարձանները՝ պատճառելով ավերածություններ: Այս վայրագությանը վկա էին իրենց բարեգործական առաքելությամբ ԼՂՀ-ում գտնվող բարոնուհի Կոքսն ու իր ուղեկիցները («Ազգ», ապրիլի 21):

**Ապրիլի 21-ին** դաժան մարտեր են եղել ԼՂՀ ճակատի բոլոր մասերում: Բոլորում էլ թուրքը կորուստներ ունեցավ, սակայն շարունակում էր նոր ուժեր բերել, նոր զոհեր տալ («Ազգ», ապրիլի 23):

✧ ✧ ✧

Ամերիկացի փորձագետները գտնում են, որ Ադրբեջանն անզոր է դիմակայել ԼՂՀ զորքերին, որոնք նոր շրջաններ չեն գրավում լոկ «քաղաքական պատճառներով», սակայն, եթե Ադրբեջանը շատ չարություն անի, նրանք կգրավեն Եվլախը, եւ կփակվի Բաքու-Բաթում նավթամուղը (անդ):

✧ ✧ ✧

**21-ի** երեկոյան հեռուստատեսությամբ հարցազրույց էր Պարույր Հայրիկյանի հետ: Խոսեցնում էին իբրեւ նախկին քաղբանտարկյալի, եւ նա հանգամանորեն պատմեց իր կյանքը՝ սկսած 1960-ական թվականներից, այն ժամանակից, երբ ինքը, հասկանալով սոցիալիստական հասարակարգում տիրող ապազգային, ավելի ճիշտ՝ հակազգային վայրագ քաղաքականությունը, ընդվզել էր, միացել համախոհ երիտասարդների հետ (առանձին երախտագիտությամբ հիշեց հայտնի նահատակ Զատիկյանին), մասնակցել հայ ազգի անկախության համար մղվող պայքարին, գլխավորել նրա մի ճյուղը, որը հետագայում պետք է վերածեր, դառնար իր այսօրվա կուսակցությունը: Ես հաճույքով էի լսում այն մանրամասները, որոնցում ցայտուն երեւում է իր այլասիրությունը, պայքարի ամենանողբերգական պահերին անգամ իր ցուցաբերած ուշադրությունը, հաճախ պարզապես ինքնազոհաբերությունը գործակիցներին փրկելու, պատժից ու վտանգներից հեռու պահելու համար: Հետաքրքիր էին նաեւ պայքարի տարբեր փուլերում, ճակատագրական պահերին երիտասարդ մտքի այն պոռթկումները, որոնք հուշում էին հավասարակշիռ քայ-

րի շերտերն էին, առհասարակ այն ամենը, որ այս ծառերի կենդանության վկայությունը պիտի լինեին:

✧ ✧ ✧

Իսկ ճակատում մեր զորքերը թշնամուն բավական ետ են մղել Սեյսուլան ու Յարըմջա գյուղերի մոտ, խփել երկու տանկ, մեկն առգրավել: Նույնը տեղի է ունեցել նաեւ Մարտունուց արեւելք, դեպի Մուխանք ձգված դաշտում, Կուրոպատկինո-Գեւորգավան ուղղությամբ:

Ստեփանակերտի վրա գրոհի եկած մեկ ինքնաթիռ են խոցահարել ԼՂՀ ուժերը, այն ընկել է Ֆիզուլու շրջանում:

«Ղարաբաղում ես ականատես դարձա, թե ինչպես են ադրբեջանական ինքնաթիռները ռմբակոծում Ղարաբաղի խաղաղ քաղաքներն ու գյուղերը,- ասել է Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ լեդի Քերոլայն Կոքսը: – Իմ կարծիքով, պատահական չէ, որ խաղաղ բնակավայրերի ռմբակոծումները համընկնում են Մեծ Եղեռնի հիշատակի օրվա հետ: Ղարաբաղի հայերի դեմ ռազմական ահաբեկչությունը պետք է դիտել որպես աշխարհի որոշ պետությունների կողմից 1915 թ. ցեղասպանությունը չընդունելու տրամաբանական հետեւանք» («Ազգ», ապրիլի 26):

**Ապրիլի 25-ին** Ֆիզուլու շրջանում վարած մարտական գործողությունների ընթացքում հայ զինվորները գերել են մի աֆղան մոջահեդի եւ անմիջապես փոխադրել Ստեփանակերտ՝ իբրեւ թանկագին ունեցվածք, որովհետեւ մինչեւ այդ մոջահեդներին տեսել են միայն սպանված վիճակում:

«Բոստոն Գլոբ» ամերիկյան թերթի տեղեկության համաձայն՝ Ալիեւն անցյալ աշնանը մեծ գրոհի նախապատրաստվելիս, վարձել էր 1500 աֆղան մոջահեդների, որոնց միջոցով հույս ուներ հասնել ճակատագրական հաղթանակի («Երկիր», ապրիլի 27):

**Ապրիլի 26-ին** Մոսկվայի հեռուստատեսությամբ հաղորդեցին իրենց լրագրողի հարցազրույցը ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Քոչարյանի հետ: Հարցերից մեկը՝ «ԼՂՀ-ում պատմական ու պաշտպանական ի՞նչ ավանդների եք հետեւում եւ ո՞րն է կառավարական-պետական բաղձանքը»:

Բավականաչափ լուրջ հարց չէր, սակայն ինքը լուրջ պատասխանեց.

«Մեր Արցախի անցյալ ամբողջ պատմությունը ձգված է իբրեւ ինքնապաշտպանական պայքարի մի շղթա: Վերջին տարիներին էլ նրան ավելացավ այս նոր օղակը, որը... իմաստությամբ պիտի արձանագրենք... արժանի է շղթային: Ինչ վերաբերում է պետականության իդեալին, այստեղ մեր նախնիները, նրանց հետեւելով էլ՝ մենք, միշտ երազել ենք ազգային միասնությամբ հիմնավորված պետական կառուցվածք... Իսկ թե որ դա անհնար է եղել... պատկերացնո՞ւմ եք... ստեղծել ենք մեր նահանգային-ազգային իշխանությունը, թեկուզ եւ մելիքությունը... Լսած կա՞ք: Ա՛յ, շա՜տ ապրեք, այդպիսին ենք մենք»:

**Ապրիլի 27-ի** առավոտյան «Ազատությունը» հաղորդեց, որ նախորդ օրվա երեկոյան Ռուսաստանի պաշտպանության նախարար Գրաչովը հայտարարել է, թե Ադրբեջանը համաձայնել է միակողմանի հրադադար անել, այն պետք է սկսվի հինգշաբթի-լույս ուրբաթ գիշերը: Իբր, դրա համար հիմքեր նախապատրաստված են եղել. փետրվարին Ադրբեջանի ու ՀՀ պաշտպանության նախարարներն էին համաձայնել համապատասխան պայմանավորվածության, մարտին՝ արտգործնախարարները, հենց նոր էլ՝ Ադրբեջանի ու ՀՀ խորհրդարանների նախագահները: Վերջին պայմանագրով Ադրբեջանը վերջապես համաձայնություն է տվել Ռուսաստանի՝ ամիսներ շարունակ շրջանառության մեջ դրվող միջնորդությանը, որի էությունը սա է. հրադադար, բախվող կողմերը ծանր զինատեսակները ետ են քաշում ճակատի գծից, ԼՂ-ի զորքերը թողնում են նվաճած տարածքների մի մասը, ամենակարեւորը՝ Ռուսաստանի դիտորդները կանգնում են ԼՂՀ ու Ադրբեջանի (հակառակորդ ուժերի) արանքում: Դիտորդներ ասելով պետք է հասկանալ զինվորական միավորումներ...



✧ ✧ ✧

Այսօր «Լրաբերը» հաղորդեց, որ Լ. Տեր-Պետրոսյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի խորհրդարանի նախագահ Շումեյկոյի հետ, խոսել են ղարաբաղյան բարդույթի լուծմանն ուղղված խնդիրների համար առաջիկայում Բիշքեկում գումարվելիք խորհրդաժողովի մասին, պարզել մի շարք հարցեր:

✧ ✧ ✧

Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակությունը՝ Ղազիեւի ղեկավարությամբ բանակցություններ է վարել Շումեյկոյի հետ, պայմանավորվել Ռուսաստանի ու Ադրբեջանի փոխհարաբերությունները զարգացնելու մասին՝ հարգելով մեկ-մյուսի անկախությունը: Շումեյկոն գտնում է, որ հարցերի հաջողության համար անհրաժեշտ է կռիվը դադարեցնել Ղարաբաղում:

**Ապրիլի 27-ի** իր համարում «Երկիրը» հարցազրույց է տպագրել ԱՄՆ-ի Արեւմտյան (Կալիֆորնիայի) շրջանի ՀՀԴ կոմիտեի անդամ եւ «Արցախ» հիմնադրամի ներկայացուցիչ Հովիկ Սալիպայի հետ, որի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հեռուստամարաթոն, հավաքվել էր մեկուկես միլիոն դոլլար օգնություն, որը տրամադրվելու է Արցախյան գոյապայքարին:

Հ. Սալիբան ասել է. «Մարաթոնի կազմակերպման աշխատանքն սկսվեց սեպտեմբերից: Հիմնական նպատակը հնարավորին չափ շատ գումար հավաքելն ու ավելի շատ մարդիկ ներգրավելն էր: Մյուս՝ դաստիարակչականը. Մարաթոնի միջոցով ամերիկահայությունը ծանոթացավ Արցախի պատմությանը, տնտեսական կացությանը: Մենք կազմեցինք տասներկուժամյա ծրագիր, որի ընթացքում ներկայացվեց Արցախ աշխարհն իր հարուստ բնությամբ, հերոսական ժողովրդով: Մարաթոնին իրենց մասնակցությունը բերեցին Արցախի իշխանությունների ներկայացուցիչները, ազատամարտիկներ, Կիլիկիո եւ Էջմիածնի առաջնորդարանների ղեկավարները, ԱՄՆ-ի կոնգրեսի եւ քաղաքական տարբեր կազմակերպությունների անդամներ: Իմ կարծիքով՝ շատ կարեւոր է նաեւ Հայաստանից արտագաղթած հայերի մասնակցությունը: Մի խոսքով՝ Մարաթոնի նպատակը, կարելի է ասել, իրականացվեց, որովհետեւ ողջ ժողովուրդը համոզվեց, որ Արցախի պայքարի շուրջ կարող ենք համախմբվել ամենքս: Հանգանակվեց մեկուկես միլիոն դոլլար: Գանձումները շարունակվում են: Հավաքված գումարը մեզ հետ բերեցինք: Արդեն այցելել ենք Արցախ»:

Հովիկ Սալիպյան ու իր հայր Հարությունը՝ Լիբանանի հայրենասիրական շրջաններին հայտնի մի մարդ, եղան Արցախի ռազմաճակատի շատ կետերում, մասնակցեցին օգնության բաշխմանը, հայրենասիրական ելույթներ ունեցան ռազմական ջոկատների առաջ՝ խոստանալով պահպանել սերտ կապը մարտնչող Արցախի, նրա հերոս ժողովրդի հետ:

✧ ✧ ✧

Գերված աֆղան մոջահեդ Բախտիար Վերբալլահը (20 տարեկան, Մազարի Շերիֆ քաղաքից) հաղորդեց, որ «մոջահեդները խիստ հիասթափված են ադրբեջանական բանակի ծառայությունից, քանի որ բանակի հրամանատարությունը չի տալիս ամսական 5000 դոլար խոստացված վարձը, եւ երկրորդ՝ ծառայության պայմանները բավականին վատ են: Ռազմագերին հայտնել է նաեւ, թե մոտ կես տարի առաջ ադրբեջանական պաշտոնյաները գալիս էին Աֆղանստան, պայմանագրեր կնքում տարբեր ցեղախմբերի առաջնորդների հետ եւ մոջահեդներին հրավիրում Ադրբեջան: Աֆղանստանի կառավարությունը տեղյակ էր դրան եւ ամենեւին չէր խոչընդոտում» («Ազգ», ապրիլի 27):

րիլի 27-ի համար)։

Այսքանից հետո պարզ էր, որ Ադրբեջանի ղեկավարությունը Բիշքեկում մայիսի սկզբներին տեղի ունենալիք միջխորհրդարանային բանակցություններից եւ իր համար դրական լուծման որեւէ տարբերակ չէր սպասում՝ չնայած խորհրդաժողովի տեղին, որ մահմեդական կենտրոն էր, եւ նախաձեռնության հեղինակին, որ Ղրղզստանի ԳԽ-ի նախագահ Շերիմկուլովն էր, համարյա ցեղակից ու հավատակից մի մարդ, որպիսինի հետ առաջները, ուրիշ պայմաններում Ադրբեջանը հեշտ ու հանգիստ իր օգտին կլուծեր սեփական ամեն մի հարց։

Շերիմկուլովը նախապես եղել էր հակամարտության գոտու կենտրոններում (Բաքու, Ստեփանակերտ, Երեւան), հանգամանալից զրույցներ էր ունեցել կողմերի հետ, պարզել դիրքորոշումները, հավանաբար ինչ-որ չափով բացահայտել նաեւ ԱՊՀ միջխորհրդարանային խմբի տրամադրությունը, որը բնականաբար շատ էլ չէր կարող տարբեր լինել Ռուսաստանի դաշնության դիրքից։ Դրանից հետո, այդ միջխորհրդարանական համաժողովի նախապատրաստությանը ձեւականորեն մասնակցելու հետ միասին եւ, առաջին հերթին, Ադրբեջանի ղեկավարությունն ամեն ինչ անում էր իր հարցը լուծելու այլ տեղերում, գոնե ռուսական տարբերակի կամ այդ միջխորհրդարանային կոչված հանձնաժողովի վրա իր ցանկացած ազդեցությանը հասնել ուրիշ հեղինակավոր ու ազդեցիկ մարմինների միջոցով։

Այդպիսի հեղինակավոր ու ազդեցիկ մեկն ո՞վ պիտի լիներ, եթե ոչ ԱՄՆ-ի պրեզիդենտ Բիլ Քլինթոնը։ Եվ ահա Հեյդար Ալիեւը Քլինթոնին դիմում հղեց՝ բացատրելով իր երկրին այնպես տանջող խնդիրը, որ ղարաբաղյան հակամարտությունն է, խնդրեց գործադրել Քլինթոնի հեղինակությունն ու ԱՄՆ-ի քաղաքական հզոր դիրքը, որպեսզի խնդիրը լուծվի միջազգային գործող օրենքների համաձայն, Կովկասում ու հարակից երկրներում պետական կարգապահության եւ արդարություն ստեղծելու նպատակով։

Չի կարելի չնշել, որ Ալիեւը հույսով է սպասել իր խնդրի դրական արդյունքին։ Չէ՞ որ ինքը ներկայացնում է ժամանակակից աշխարհին առաջ տանող ուժի՝ նավթի հզոր աղբյուրներից մեկի երկիրը, եւ, ապա, իր թիկունքում կանգնած է Թուրքիան՝ այս աշխարհագրական ու քաղաքական գոտում Ամերիկայի վստահելի դաշնակիցը։ Հնարավոր է, որ նամակին նախորդած կամ ուղեկցած լինի Թուրքիայի առաջնորդների միջնորդ բարեխոսությունը։ Չէ՞ որ հենց այն օրերին ԱՄՆ-ում էր գտնվում վարչապետ Թանսու Չիլլերը, որ Քլինթոնի առաջ լեզու էր թափում Կիպրոսի՝ միջերկրական գոտում այդ ղարաբաղյան հարցի շուրջ։

Սակայն պրեզիդենտ Քլինթոնը,- մի՞թե հնարավոր էր գուշակել,- կարծես հենց այդ դիմումին էլ սպասում էր, որպեսզի հեղինակին ցույց տա, թե ինչպես չի կարելի ծուռ նստել եւ ուղիղ խոսել։ Ապրիլի 29-ին գրած իր պատասխան նամակում ԱՄՆ-ի պրեզիդենտը Հեյդար Ալիեւին հաղորդեց հետեւյալը. «Ես հետեւում եմ ղարաբաղյան պատերազմի ընթացքին եւ խորապես զգում եմ անմեղ զոհերի, իրենց տները լքած մարդկանց տառապանքը։ Ինձ համար հասկանալի է ձեր դժգոհությունը «Ազատության օժանդակություն» փաստաթղթում առկա այն կետից, որն ԱՄՆ-ին արգելում է օգնություն տրամադրել Ադրբեջանին։ Սկզբունքորեն ես դեմ եմ նման սահմանափակումներին, քանզի դրանք թույլ չեն տալիս լայնորեն օժանդակել բարեփոխումներին, իսկ ձեր երկրի դեպքում՝ նաեւ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը։ - Եվ հարցին միջամտելուց այսպես բարեկիրթ ձեւով հրաժարվելուն հետեւում էր իր թղթակցի հանցանքը մատնացույց անելը.- Միաժամանակ ես գտնում եմ, որ կողմերը չպետք է դիմեն շրջափակումների կամ էմբարգոների՝ խաղաղ բնակչությանը զրկելով առաջին անհրաժեշտության ապրանքներից։ Դիտորդների մասնակցությամբ պետք է ստեղծել մարդասիրական միջանցքներ, որոնք հնարավորություն կտան բեռներ տեղափոխել Հայաստան ու Նախիջեւան, մեծ օգուտ կբերեն պատերազմական զրկանքների մատնված մարդկանց։ Մեծապես հույսով եմ, որ Դուք կհամաձայնեք այս առաջարկին՝ թեթեւացնելու մարդկանց վիճակն այդ տարածքում...»։ Ապա նամակի վերջում ցույց էր տալիս Ալիեւին հուզող հարցի լուծ-



ման ելքը՝ «խաղաղ փոխհամաձայնության գալը ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի շրջանակներում ընթացող բանակցություններում («Ազգ», ապրիլի 30)։

Ալիեւը Քլինթոնից խնդրել էր օգնություն եւ աջակցություն ղարաբաղյան բարդույթն իր օգտին լուծելու, այն «բռնագրավիչ հայերին» մի լավ դաս տալու համար, իսկ նա խորհուրդ էր տալիս դադարեցնել Հայաստանի ու Ղարաբաղի շրջափակումները եւ խաղաղ փոխհամաձայնության գնալ Մինսկի խմբի միջոցառումների ժամանակ։

Ալիեւը չհուսահատվեց նույնիսկ այսպիսի պատասխանից։ Հետո էլ ՆԱՏՕ-ի դռները ծեծեց։ Սա արդեն Բիշքեկի միջխորհրդարանային ժողովի օրերին էր, միլլի մեջլիսի նախագահի տեղակալ Ջալիլովին ուղարկելով Բիշքեկ, ինքն ուղեւորվեց Բրյուսել, որտեղ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանն է։ Նա Ջալիլովին հրահանգել էր չստորագրել ոչ մի պայմանագիր, քանի դեռ ինքը չի փորձարկել բոլոր այն օղակները, որոնցից օգնություն աղերսելով հնարավոր է հասնել որեւէ հաջողության։ Եվ ինքը գնաց, մայիսի 4-ին Բրյուսելում ստորագրեց «Գործակցություն հանուն խաղաղության» ծրագիրը, որով հույս ուներ գտնել փնտրածը՝ Ադրբեջանի օգտին լուծել հակամարտությունը հայերի հետ, ռազմական հզոր դաշինքի միջոցով վերականգնել եւ հաստատուն դարձնել իր հանրապետության ամբողջականությունը... Այստեղ էլ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Սերջո Բալանցինոն նրան բացատրեց, թե «Հյուսիս-ատլանտյան դաշինքը նմանօրինակ հարցերում չի կարող հանդես բերել ինքնագլուխ նախաձեռնություն, եւ Ադրբեջանը հակամարտության վերաբերյալ միայն խորհրդակցելու համար կարող է դիմել ՆԱՏՕ-ին («Երկիր», մայիսի 5)։

«Միայն խորհրդակցելու՞ համար»։ Ալիեւը նախապես կարո՞ղ էր պատկերացնել, թե ՆԱՏՕ-ն՝ Եվրոպայի ռազմական այն հզորագույն մարմինը, իրեն միայն խորհուրդներ տալու պատրաստակամություն պիտի ցուցաբերի։ Ինչպես պրեզիդենտ Քլինթոնը։ Եվ այսպես, համարյա թեւաթափ, նա բռնեց վերադարձի ճամփան՝ որոշած լինելով այցելել Թուրքիա, ստուգել իր առաջին ու վերջին հույսի հնարավորությունները։

Զանգվածային լրատվության տվյալներից ելնելով՝ Ալիեւն Անկարայում եւս լսել է միայն ցավակցական խոսքեր եւ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի շրջանակներում հարցը լուծելուն օգնելու խոստումներ։ Եվ որքան էլ լրագրողների հետ ունեցած զրույցում նա երդվում էր («Այժմ, ինչպես երբեք, հայերի կողմից շարունակվող ագրեսիան խափանելու համար մենք զգում ենք Թուրքիայի պաշտպանության կարիքը»), հայտնի է, որ այդ առաջին ու վերջին հույսը եւս ի դերեւ է ելել, եւ Ալիեւը տուն է հասել լրիվ թեւաթափ ու հուսահատ...

Հեյդար Ալիեւի այս, ըստ էության, ապարդյուն ճամփորդության օրերին էր, որ Բիշքեկում տեղի ունեցավ ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը, որի քննարկմանն էր դրված ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրը։

Բիշքեկ, Ղրղզստանի մայրաքաղաք։ Այնտեղ էր տեղի ունենում ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը։ Սակայն ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ այնտեղ տիրական է լինելու Մոսկվայի ձայնը։ Ղրղզստանի խորհրդարանի նախագահ Շերիմկուլովն էր հրավիրել այդ վեհաժողովը, որի ամեն տեսակ հոգսերն էլ ինքը պիտի քաշեր ամենայն հոգատարությամբ։ Բայց մի՞թե հնարավոր է կասկածել, թե հարցի լուծումը թելադրելու էր մեկ ուրիշ Շ., Ռուսաստանի խորհրդարանի ղեկավար Շումեյկոն։

Նախապես այս համոզումն ուներ Ադրբեջանը, որի պատճառով էլ նրա համար ռուսական մոտեցումները ոչ թե անընդունելի էին, այլ պարզապես կործանարար։

Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեկում **մայիսի 4-ին** սկսված ԱՊՀ միջխորհրդարանային համաժողովին հավաքվել էին մասնակից պատվիրակությունները՝ Ռուսաստանի դաշնության խորհրդարանի նախագահ եւ ԱՊՀ միջխորհրդարանային վեհաժողովի նախագահ Վլադիմիր Շումեյկոյի, ԱՊՀ-ում Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հանձնաժողովի ղեկավար, Ղրղզստանի խորհրդարանի նախագահ Շերիմկուլովի, Ադրբեջանի մեջլիսի նախագահի տեղակալ Աֆիադդին Ջալիլովի, ՀՀ խորհրդարանի նախագահ Բաբկեն Արարքցյանի եւ ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար Կարեն

նության նախարար Գրաչովը Մոսկվա հրավիրեց Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարներին ու ԼՂ-ի գլխավոր հրամանատարին, եւ այնտեղ էլ առաջարկեց մի պայմանագիր, որով հրադադար պիտի լիներ հաջորդ օրվա (17-ի) 00 ժամից, երկու կողմերի զորքերը ռազմաճակատի ամբողջ երկայնքով ետ պիտի քաշվեին 5-10 կմ, որպեսզի հակամարտողների միջեւ երկարությամբ էլ տեղադրվեն, այսպես կոչված, խաղաղարար ուժերը, որոնք ոչ այլ ինչ էին լինելու, քան ռուսական զորքերը: Եվ այսքանից հետո էր, որ պետք է ստեղծվեին բոլոր պայմանները խաղաղ բանակցություններով, քաղաքական ճանապարհով հակամարտության հարցերը լուծելու համար:

Երբ Ադրբեջանի նախարարը հարցրել է.

- Իսկ բռնագրավված տարածքնե՞րը...

Գրաչովը կտրուկ պատասխանել է.

- Մեր գործն է խաղաղություն հաստատել եւ դադարեցնել արյունահեղությունը: Գրավված տարածքներով կզբաղվեն քաղաքագետները:

Այս անգամ էլ երեւի Ադրբեջանի նախարարը կապվել էր իր ղեկավարության հետ, զեկուցել իրադրության մանրամասները եւ առավոտյան հայտարարեց, թե ինքը լիազորված չէ ստորագրել պայմանագիրը, հրահանգ է ստացել վերադառնալ Բաքու:

Հաջորդ օրերին հայտնի դարձավ, որ Ադրբեջանի մայրաքաղաքում ընդդիմությունը՝ ժողովրդական ճակատը եւ 13 ուրիշ կուսակցություններ ժողովրդին ոտքի են հանել կառավարության անձնատուական քաղաքականության դեմ, ղարաբաղյան բարդույթի լուծման ռուսական առաջարկությունները համարում են անկախ եւ ինքնիշխան Ադրբեջանին ծնկի բերելու վճիռ եւ պահանջում են «ռուսամետ» Ալիեւի հրաժարականը:

Այսուամենայնիվ ռազմաճակատում հրադադար էր մայիսի 17-ից (նույնիսկ նախորդ օրերից), միակ իրական արդյունքը, որ տիրական պիտի մնար այս մեծադղորդ միջոցառումներից հետո: Թե որքան ժամանակ, այդ էլ ինքը՝ ժամանակը ցույց կտա:

**Մայիսի 21-ին**, «Ազատություն» ռադիոյի Ադրբեջանական խմբագրության հաղորդումների համաձայն՝ Բաքվում հակակառավարական բազմահազարանոց հանրահավաք էին կազմակերպել վերոհիշյալ 14 կուսակցությունները: Ասում էին՝ ցուցարարների առաջին պահանջն է եղել՝ արգելել ռուսական զորամասերի մուտքն Ադրբեջան, ինչ անվան տակ էլ նրանք գալու լինեն, խաղաղարարների՛ թե դիտորդների՛, քանի որ դա լինելու է անկախ Ադրբեջանի ստրկացման սկիզբը:

Հանրահավաքի վրա հարձակվել էին քաղաքի ոստիկանական զորամասեր եւ ինչ-որ «սեւագլխարկների» սպառազեն ջոկատներ, որոնք, իբր, խոսում են մի հատուկ բարբառով: Նրանք, բազմատեսակ բռնություններ գործադրելով եւ կալանքի տակ առնելով մեջլիսի մի շարք դեպուտատների, կուսակցական ղեկավարների ու քարոզիչների, արգելեցին հանրահավաքը, ապա հետապնդեցին նրա հավանական կազմակերպիչներին:

«Մուսավաթ» կուսակցության ղեկավար Իսա Գամբարի ասելով՝ կալանավորված էին ընդդիմության ավելի քան 90 ղեկավարներ: Նա տեղի ունեցածից արել էր երկու ցավալի եզրակացություն. մեկ՝ որ կառավարական բռնություններից կբորբոքվի, վճռական քայլերի կգնա նաեւ ընդդիմությունը, հանրապետությունը կդառնա եռացող մի կաթսա, եւ «դրանից կարող էին օգտվել արտաքին թշնամիները»: Երկրորդ՝ «Կառավարող շրջանները իրենց բռնություններով ապացուցում էին, որ պատրաստ են ստորագրելու Ռուսաստանի ներկայացրած պայմանագիրը... Կառավարության գործադրած այդ բռնությունները ցույց էին տալիս, որ հանրապետության ղեկավարությունն անձնատուական դիրք է զբաղեցնում»:

✧ ✧ ✧

Բիշքեկի բանակցություններում եւ Մոսկովյան (Գրաչովի հրավիրած) խորհրդաժողովում որոշակի խոսք էր եղել հրադադարից հետո հակառակորդ զորքերի եւ խաղաղարար ուժերի գրավելիք դիրքերի վերաբերյալ եւ այն գծվել էր քարտեզի վրա: Այն երեք երկա-



րությունները, որոնց վրա դասավորվելու էին հայ ու ադրբեջանցի զորքերը եւ սրանց տարանջատող ռուսները, ես տեսել եմ ԼՂՀ Պաշտպանության շտաբում եւ այստեղ ընդհանուր գծերով ներկայացնում եմ.

1) Ադրբեջանի զորքերը պիտի զբաղեցնեն մի գիծ, որն Արաքսի ափից (Հորադիզից արեւելք) ձգվելով դեպի հյուսիս, ապա հյուսիս-արեւմուտք, անցնում է հետեւյալ աշխարհագրական կետերով. Արայաթլի-Ալխանլի-Աղբուռունից արեւելք-Մինախորլիի արեւմտյան փեշը-Քյուրդլար-Հասանխանլի-Բայաթ-Կարախանլի-Բոյուքբեյլի բնակավայրերով-Էմիրլի-Քյուչարլի-Միր Բաշիրի արեւմտյան եզրով-Սեիդիմլի, Դեմիրչիլար գյուղերով, Նավթալանից հարավ-արեւմուտք-Ջեյվա-Կարաչինար-Շահումյան-Վերին Աղջաքենդ-Փերվիրդիլար բնակավայրերով:

2) Խաղաղարար զորքերի դասավորության գիծն է. Չոջուկ Ահմեդլի-Հորադիզ գյուղից արեւելք-Աշաղի Ահմեդլի-Աշաղի Սեյիդահմեդլի-Կարախանբեյլի-Աշաղի Վեյսալիից արեւելք-Կուրոպատկինոյից արեւելք-Մարզիլիից արեւելք-Յուսիֆջանլի-Շըխլար, Նամիրլի գյուղերով-Սեյսուլանից արեւելք-Կարմիրավանի կողքով- Ջրաբերդի տակով-Չայլու-Թափակոյունլու-Գյուլիստան բնակավայրերով-Մռավից բավական հյուսիս-Օմարի լեռնանցքից հյուսիս:

3) ԼՂՀ զորքերը պիտի դասավորվեն մի գծով, որն անցնելու է Ներքին Մարալյանի միջով-Կույջուկ-Բալյանդ-Կարաքյոլլու գյուղերով-Ֆիզուլիից արեւելք-Յուխարի Յաղլեւանդ–Ուրյան բլրից արեւելք-Յուխարի Վեյսալիից արեւելք-Ամիրանլարով-Կարաքենդից արեւելք-Մուղանլի-Կասիմլի-Ղարադաղլի-Մուրադբեյլի գյուղերով-Աղդամով-Շահբուլաղով-Մաքսուդլու-Սալահլի-Քենգերլի գյուղերով-Մարտակերտից արեւելք-Մինգրելսկ-Հակոբ Կամարիից արեւելք-Մատաղիսից հյուսիս-Աղդաբանից-Բաղիրլիից-Գանլըքենդից-Սեյիդլարից հյուսիս:

Հասկանալի է, որ այս գծերով արցախյան զորքերի հսկողության տակ պիտի մնային ոչ միայն նախկին ԼՂԻՄ-ի տարածքը՝ տարբեր տեղերում նրա մեջ մխրճված «ադրբեջանական» բնակավայրերը, այլեւ սահմանային բավական լայն շերտեր Ֆիզուլիի կողմերից սկսած մինչեւ Մարտակերտի շրջանի հյուսիսային մասը: Սակայն դուրս պիտի մնար Շահումյանի մեծ մասը, եթե չասենք՝ այն ամբողջությամբ:

Արդյոք հայկական ու արցախյան պատվիրակությունները հաշտվե՞լ են Շահումյանի շրջանի կորստի հետ՝ այդ զոհաբերությունը հավասարակշռելով ինչպես արեւելքում ու հյուսիսում, այնպես էլ Լաչինում ու Քելբաջարում ստացած տարածքների հետ: Թե՞ այս ամենի մասին լռելն այն ժամանակ համարել են գոնե շահութաբեր: Դժվար է բացատրել:

Եթե հենց միայն այս պատճառով հայկական կողմը կարող էր եւ պետք է դժգոհ լիներ ընդունված արդյունքից, ապա Ադրբեջանը սեփական բավական տարածքներ էր թողնում իր հսկողությունից դուրս, եւ հասկանալի էին նրա ղեկավարության դժգոհությունն ու անհավասարակշիռ քայլերը վերջին շրջանում: Հասկանալի, սակայն ո՛չ արդարացնելի, որովհետեւ, երբ նստում են բանակցությունների սեղանի շուրջ, վճիռներ թելադրողը պարտվող կողմը չպետք է լինի: Մանավանդ, երբ եւ պատերազմ սանձազերծողը, եւ վեցամյա հակամարտության ընթացքի, նրա բոլոր չարիքների համար մեղավորը նույն այդ կողմն էր եղել:

Ադրբեջանի ղեկավարները գիտեին, որ նշված քարտեզն իր երեք գծերով հավիտենական չէ: Այն իր ուժը կկորցնի նոր բանակցությունների ընթացքում, երբ լուծված կլինեն բոլոր հարցերը, եւ զորքերը դուրս կբերվեն գրավյալ տարածքներից: Հասկանալի է՝ ԼՂՀ զորքե՛րը: Սակայն բանակցույթունների եւ ընդունված թղթերի մանրամասների առթիվ խոսողները հաստատում էին, թե բոլոր այդ խոսակցությունների ընթացքում «գրավյալ տարածքների մեջ չէին մտել Լաչինի շրջանն ու Շուշին: Եվ հետո Ադրբեջանն այս երկու հավանական կորուստների դեմ էլ պիտի ապստամբեր: Դա քանիցս արտահայտություն գտավ Ադրբեջանի արտգործնախարար Հասան Հասանովի բողոքներում: Պրեզիդենտ Ալիեւն էր Մոսկվայում տրտնջացել՝ պահանջելով, որ հայկական զորքերը դուրս բերվեն

գրավյալ բոլոր տարածքներից (բացառվում էր, իհարկե, Լեռնային Ղարաբաղը) եւ թույլ տրվի, որպեսզի ադրբեջանցի 50 հազար փախստականները վերադառնան ղարաբաղյան իրենց բնակավայրերը։

Երեւում էր՝ Ադրբեջանի ղեկավարները դեռեւս որոշակի ու կոնկրետ ձեւակերպում չէին տվել իրենց պահանջներին, որպեսզի դրանք ներկայացնելիս իրենք իրենց չդնեին անհարմար վիճակում։ Մանավանդ, որ առանց այդ էլ նրանց վիճակն իսկապես անլուրջ էր։ Ո՛չ հեռավոր հնում, ասենք՝ մի երկու-երեք ամիս առաջ աշխարհով մեկ էին արել, թե Ղարաբաղն իրենց անկախ ու ինքնիշխան պետության ներքին հարցն է, որի լուծմանն իրավունք չունի խառնվելու արտաքին եւ ոչ մի ուժ, նույնիսկ միջազգային որեւէ մարմին։ Իսկ այժմ պահանջում են այդ նույն Ղարաբաղի զորքերը դուրս բերել «գրավյալ տարածքներից», թող որ նաեւ Շուշիից։ Չէ՞ որ այս արդեն նշանակում է՝ Ադրբեջանի տերերը ձեռ են քաշել Լեռնային Ղարաբաղից, բացառյալ Շուշին։

Ինչ մնում է 50 հազար փախստականների վերադարձին, ապա, նախ, այդքան չեն եղել ԼՂԻՄ-ում բնակվող ադրբեջանցիները։ Իսկ եթե լինեին է՜լ։ Չէ՞ որ դրա տասը չափ էլ հայեր են բնակվել Բաքվում եւ Ադրբեջանի մյուս քաղաքներում ու շրջաններում։ Հիմա նրանցից մեկն իսկ չկա այն վայրերում։ Մեկն իսկ ցանկություն չի հայտնում վերադառնալ...., որովհետեւ տեսել է իր դեմ կազմակերպված կողոպուտ ու չարություն, ջարդ ու գեհենային մահեր։ Մի՞թե 50 հազար մամեդներն ու ալիները մտածում էին, թե նրանց՝ հայ 500 հազար փախստականների արյունակիցները բնավ ընդունակ չեն վրիժառության։ Թե այդպես հեշտությամբ մոռացե՞լ են իրենց երեկ-մեկել օրը գործած վայրագությունները, Շուշիից ու Խոջալվից, Մալիբեյլիից ու Ղարադաղլվից այդ երկրի տերերի վրա ուղարկած «գրադները», ուրիշ-ուրիշ մահաբեր նվերների հուշն են անհետ կորցրել։

Մենք այն ժամանակ չէինք մտածում, թե բանակցությունների սեղանի շուրջ նստածները հենց այս հանգամանքներով էլ պիտի առաջնորդվեին։ Քա՛վ լիցի։ Բայց չէ՞ որ պարտադիր է չմոռանալ այս ամենի, երբ վճիռներ պիտի հանեն, որովհետեւ մարդկանց համար են այդ վճիռները, այն մարդկանց, որոնց ճակատագրի վրա են ծանրացած վեց տարիների տառապանքները։

✧ ✧ ✧

Երբ Ռուսաստանի նոր միջնորդությունը որոշակի ձեւ ու կերպարանք էր ստացել, եւ սպասվում էր, որ այն գործ էլ դառնա, միանգամից սթափվեց, եռանդով աշխատանքի լծվեց նաեւ ԵԱՀԽ-ը։ Նրա՝ Մինսկի խմբի ղեկավարն ու տեղակալը (Յան Էլիասոն, Մոսբերգ) իրար հերթ չտալով այցելեցին Բաքու եւ Երեւան, բարեհաճեցին գնալ նույնիսկ Ստեփանակերտ, նոր բանակցություններ վարեցին, արտահայտեցին իրենց գոհունակությունը Ռուսաստանի ձեռնարկումների նկատմամբ։ Նորից խորհրդաժողովների ու եռանդուն քննարկումների հավաքվեցին Վիեննայում ու Ստրասբուրգում... Արդյո՞ւնքն ինչ։ Երեւի այն, որ ցույց տային, թե իրենք եւս ջանքեր են գործադրում ԵԱՀԽ-ի ու Ռուսաստանի դիրքերն իրար մերձեցնելու, համաձայնեցնելու համար։ Սակայն իրականում գործն էին ձգձգում՝ Ադրբեջանին ու նրա թիկունքում գործող Թուրքիային հնարավորություն տալով խափանելու խաղաղություն հաստատելու նաեւ այս փուլը։

Ադրբեջանի պրեզիդենտ Ալիեւը նորից կառավարական բարձր մակարդակի հանդիպումների արշավի ելավ՝ շրջելով Իրանից մինչեւ Սաուդյան Արաբիա, եւ ամենուրեք քննարկումների կենտրոնում էր ղարաբաղյան բարդույթը։ Թուրքիայի ղեկավարները չգոհացան ԵԱՀԽ-ի ու ՄԱԿ-ի ժողովներում ձեռնարկած խարդավանքներով, հիմա էլ զորաջոկատներ առանձնացրին՝ Ղարաբաղ ուղարկելու համար։ Հայտնի է հայկական կողմի, մանավանդ ԼՂՀ ղեկավարության կտրուկ մերժողական վերաբերմունքը Թուրքիայի ամեն տեսակ միջնորդության հանդեպ։ Դա էլ արդեն վերջնականապես բացառում էր Թուրքիայի մասնակցությունը հակամարտության կարգավորման գործին։ Սակայն վարչապետ Թանսու Չիլլերի պահանջով՝ արձակուրդում գտնվող իրենց խորհրդարանը պիտի հավաքվեր եւ որոշում ընդուներ՝ Ղարաբաղ զորք ուղարկելու մասին (իբր, թուրք զորքի այսօրինակ տեղաշարժերի համար պարտադիր է խորհրդարանի որոշումը։ Ուրեմն, Թուրքիան էլ ձեւացնում է, թե օրինապահ զորք ունի)։ Այս լուրն առնելով՝ Ռուսաստանի պրեզիդենտի հատուկ հանձնարարությունների (տվյալ դեպքում ղարաբաղյան հակամարտության) գծով դեսպան Վլադիմիր Կազիմիրովը հունիսի վերջին թռավ Անկարա, իհարկե, խանգարելու Թուրքիայի այս նոր գռեհիկ միջամտությունը։

Թե հետո ի՞նչ բանակցություններ վարեցին ռուս ու թուրք դիվանագետները, դա իրենց գաղտնիքն է։ Բայց ահա սրանից հետո էր, որ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բրիգադի գեներալ Դահան Գյունեշը ժամանեց Բաքու, փակ դռների ետեւ զրույց ունեցավ Հեյդար Ալիեւի հետ (**հուլիսի 7-ին**), ապա, Բաքվի ու Մոսկովյան հեռուստալրագրողների վկայությամբ, հայտարարեց, թե Թուրքիան իր բարեկամ երկիր Ադրբեջան այնքան զինուժ կուղարկի, որքան պետք լինի նրան։

Հետաքրքիր է, որ սրանից անմիջապես հետո, **հուլիսի 8-ին** էլ, Ռուսաստանի պաշտպանության նախարար գեներալ Գրաչովը «բացվեց»՝ վճռաբար հայտնելով, թե Ադրբեջանում իր կարեւորագույն շահերն ունի նաեւ Ռուսաստանը, որն այնտեղ կմտցնի եւ իր սեփական զորքերը, եւ միասնական պաշտպանական համագործակցությամբ իրար հետ դաշն կնքած ԱՊՀ երկրների խաղաղապահ ուժերը։

Ադրբեջանի լրատվական մարմինները **հուլիսի 12-13-ին**, ոտ ու ձեռ ընկած, հայտարարում էին, թե Թուրքիայի գեներալը չի արել այն հայտարարությունը, որի մասին իրենք մի քանի օր առաջ սանձարձակ հպարտությամբ թմբկահարում էին։

Այս խաղին սովոր ենք, ահա, ավելի քան վեց տարի. օսմանյան թուրքն ու ադրբեջանցի թուրքը միշտ երազում են եւ երազելով փորձում են ստեղծել այն ճեղքը, ուրկից կարող են ինչ-որ բան փրցնել Ռուսաստանի աչքից հեռու, կամ նրա կաշառված ներկայացուցիչների թմբիրի մթնոլորտում։ Ի՞նչ կլինի այս անգամ։ Չնայած քիչ չէ նաեւ եղածը, ահա որքա՜ն ժամանակ իրական հրադադար է, մարդիկ (արցախահայ կանայք, որովհետեւ տղամարդիկ ճակատում են) գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվեցին, բերք ու բարիքի տիրացան։ Իսկ բերքը մի մեծ զորություն ունի. նրա հետ առնչվողին թվում է, թե հետո էլ պիտի լինի հանգիստ-խոհուն կյանքը, ճերմակ խաղաղությունը...

Բայց մի՞թե քաղաքական ու դիվանագիտական մեքենայի անիվը նորից կպտտվի ետ՝ իր հետ տանելով նաեւ ժողովրդի հերոսական ջանքերի արդյունքը, տերությունների քաղաքական մթնոլորտում բացված այն երանելի տարածքը, որից արդարության լույսն է ցոլանում։

Ապրենք, տեսնենք՝ հուսալով, թե գոնե այս անգամ կարժանանանք արդարության հաղթանակը տեսնելու բախտին։

# Վերջաբանի փոխարեն

Այս տողերը գրում եմ 1996-ի աշնանը, ավելի ճիշտ՝ ձմեռնամուտին, Արցախյան հակամարտության գոտում հրադադար հաստատելուց ավելի քան երկուս ու կես տարի հետո: Երկուս ու կես տարի, որ հագեցած էր խնդրին վերաբերող բազմաթիվ ու բազմապիսի իրողություններով, որոնք, ցավոք, համարյա ոչնչով չօգնեցին խնդրի լուծմանը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը, ԵԱՀԽ-ի (հետագայում ԵԱՀԿ կոչվածի) հետ գործակցում էին հեռու եւ մոտիկ շատ երկրների հեղինակավոր գործիչներ, օրինակ, ԱՄՆ-ի պրեզիդենտը 1995-ի ամռանը ղարաբաղյան հակամարտության գոտում իր հատուկ ներկայացուցիչ-դեսպան էր նշանակել փորձառու դիվանագետ Ջոզեֆ Ա. Պրեսելին, որն էլ անմիջապես հայտարարեց, թե իր նշանակումը «հակամարտության կարգավորմանը ԱՄՆ-ի ներգրավման նախանշանն է», եւ «լավ հնարավորություններ կան առաջիկա մի քանի ամսում այս հակամարտությունը կարգավորելու համար», որ կարգավորման մեջ Ամերիկյան կառավարությունն ունի հատուկ շահեր եւ դրանց մեջ էլ՝ «Ադրբեջանից նավթամուղ հանելու խնդիրը» («Ազգ», 1995, օգոստոսի 4):

Այսպես, ուրեմն, մենք ԱՄՆ-ի խաղաղարար միջնորդության վրա հույս ենք դնում, իսկ նրա դիվանագետը հայտարարում է, թե իրենք Արցախի խնդրի շուրջ իրենց շահն ունեն, եւ դա էլ՝ «Ադրբեջանից նավթամուղ հանելու խնդիրը»: Սրանից առաջ ու հետո բարդույթի գոտում իրենց հատուկ ներկայացուցիչները նշանակեցին նաեւ ուրիշ մեծ ու փոքր տերությունները, որոնք հատկապես ԵԱՀԽ-ի շրջանակներում գործում էին, պարբերաբար լինում հակամարտության բոլոր կետերում, ուսումնասիրություններ կատարում, բանակցություններ անում, հանդես գալիս խոստումնալից հայտարարություններով: Եվրոպայում համարյա չմնաց որեւէ նշանավոր քաղաք, որտեղ կազմակերպված չլինի ղարաբաղյան բարդույթի քննարկում: Սակայն նկատելի տեղաշարժ, խնդրի որեւէ առաջխաղացում այդպես էլ չեղավ. տեղում դոփում էին՝ ձեւացնելով, թե դա եւս տեղաշարժ է, առաջխաղացման ինքնահատուկ մի ձեւ:

Եվ, ահա՛, երեկ էլ ավարտվեց Լիսաբոնում գումարված հիսունից ավել երկրների բարձրագույն ղեկավարների հավաքը: Այն գագաթաժողով էր կոչվում, սակայն մեր հարցի համար հերթական մի հավաք էր, որին Հեյդար Ալիեւը վերստին զլեց վերջին երկու-երեք տարիների վարժ սովորած հանկերգը. Հայաստանը բռնագրավել է հարավի ադրբեջանական շրջանները եւ Լեռնային Ղարաբաղը, բնակչությանը, մեկ միլիոն խաղաղ մարդկանց, փախստական դարձրել: Ադրբեջանը փրկեցե՛ք այդ չեղած-չտեսնված աղետից: Փրկեցե՛ք եւ մենք Լեռնային Ղարաբաղին կտանք ամենալայն, նմանակը չունեցող ինքնավարություն: Հայաստանի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանը եւս ասաց իր խոսքը: Հաստատեց, որ Հայաստանը չի գրավել Ադրբեջանի շրջանները: Ադրբեջանի հետ հաշիվ ունի Լեռնային Ղարաբա՛ղը, որին եթե պարոն Ալիեւը պատրաստ է շնորհել ամենալայն ինքնավարություն, ապա ինքնավարության ամենալայնը դա անկախ ինքնավարությունն է: Թե չէ, մենք տեսել ենք ալիեւների ունեցած ինքնավարության տեսակը, հայությունն այն վայելել է Սումգայիթում ու Բաքվում, Գանձակ-Կիրովաբադում ու հայաբնակ մնացած շրջաններում...

Եվ այստեղ էլ հարցը փակվել է: Շահագրգիռ տերությունները խոստացել են նրան անդրադառնալ երկու տարի հետո, այն գագաթաժողովում, որ պիտի գումարվի Ստամբուլում... Աչքներս լո՜ւյս՝ Ստամբուլո՜ւմ:

Վերջին երկուս ու կես տարվա այսօրինակ արծարծումները եւս գրի էի առել, սակայն չմտցրի գրքի մեջ, որովհետեւ այն միապաղաղ է, ըստ էության անհետաքրքիր: Այո, անհետաքրքիր, բայց ո՛չ իմ մեղքով:

Գիրքը շատ ծավալվեց, դրա համար էլ այն չի պարունակում նաեւ Արցախյան զինական ուժի կենսագրությունը: Զինական ուժի, որ իր դժվար ծնունդով պարտական է Արցախի մինչեւ այսօր էլ ապօրինի համարվող, նույնիսկ մայր Հայաստանի իշխանու-



թյունների կողմից հիմնավոր կերպով չճանաչված պետականության, իսկ հաղթանակները՝ նախ եւ առաջ իրեն ու իրեն, ապա եւ Հայաստանին, Սփյուռքին, համայն հայությանը եւ մեր դատի պաշտպան, մեր մաքառումին սատարած, նյութական ու բարոյական օժանդակություն հասցրած բարեկամներին:

Այս ամենը պահել եմ հաջորդ գրքին, որ, հուսով եմ, կամբողջացնեմ, կավարտեմ, կհանձնեմ ընթերցողի դատին, որովհետեւ աշխարհի քաղաքական մթնոլորտը, մեծ ու փոքր տերությունների դիվանագիտական խաղերը մեր առաջ բաց են արել մի մեծ ճշմարտություն. մեր հողի ու նրա տիրոջ անվտանգությունը միայն ու միայն այդ զինվորությունն է պաշտպանելու, մեր լեռնաստանում ծնված, նրա պատիվն ու անկախությունն իր կյանքից բարձր դասող զինվորությունը:

Ի՞նչ մեղքս թաքցնեմ, ես աստվածապաշտ չեմ՝ այս բառի պարզ ու սովորական իմաստով: Սակայն միշտ ու ամենուր, նոր գործի ձեռնարկելիս դիմում եմ ինձ պահող ու պաշտպանող Աստծուն. «Դո՛ւ օգնիր, որ այս պարտքս էլ կատարեմ»:

1996 թվական, 3-ը դեկտեմբերի,

Ի Եղվարդ:

# Անձնանունների ցանկ


| | |
|---|---|
| Աբասով Աբաս | 742: |
| Աբասովա Խումուման | 72,77: |
| Աբդուլաթիփով | 577: |
| Աբդուլլաեւա Արզու | 585: |
| Աբիեւ Սաֆար | 729, 734: |
| Աբովյան Էդուարդ | 197: |
| Աբրահամյան Արամ, լրագրող | 669, 675, 681: |
| Աբրահամյան Լեւոն | 90: |
| Աբրահամյան Կամո | 764: |
| Ադամյան Կարեն | 785: |
| Ադկինսոն Դեւիդ | 499: |
| Ազատյան Վիլեն, ակադեմիկոս | 578: |
| Ազիզբեկովա | 32: |
| Ազիզով Վագիֆ | 517: |
| Աթաբեկով Ի. Գ. | 38: |
| Աթալյանց Արտյոմ, բիզնեսմեն | 617: |
| Աթայան Իվան, ժող. ուսուցիչ | 40: |
| Աթայան Ռոբերտ, երաժշտագետ | 669: |
| Ալավերդյան Լարիսա | 583: |
| Ալեքսանյան Հ. | 246, 247: |
| Ալեքսեեւսկի Կիրիլ | 243, 252, 254-256, 285, 289, 359, 374, 502, 656, 700, 716, 752: |
| Ալեքսի Ա. Ռուսիո պատրիարք | 316, 666: |
| Ալիեւ Արիֆ | 670: |
| Ալիեւ Ջալուբեյ | 578: |
| Ալիեւ Իգրար | 76: |
| Ալիեւ Հեյդար | 7, 26, 32, 72, 191, 236, 276, 277, 331, 367, 390, 395, 408, 417, 423-430, 433, 435, 436, 438-440, 443, 458, 473, 520, 650, 657, 686, 689, 691, 693, 695, 706, 708, 709, 718, 720, 722, 730-733, 735-741, 744, 748, 749, 753, 756, 761-767, 769, 778, 779, 781, 785-787, 792, 794, 796, 798, 799, 802, 805: |
| Ալիեւ Մուհամեդ Նովրուզ օղլի | 735: |
| Ալիեւ Նամազ | 274: |
| Ալիզադե Զարդուշ | 622: |
| Ալիյարով Սուլեյման | 7, 34: |
| Ախունդով | 331: |
| Ախունդով Դ. | 38: |
| Աղաբեկյան | 182: |
| Աղաեւ Մ., լրագրող | 146: |
| Աղայան Էդուարդ, ակադեմիկոս | 129: |
| Աղանբեգյան Աբել, ակադեմիկոս | 8, 45: |
| Աղաջանյան Ռոլես | 172, 173, 437: |
| Աղաջանյան Վահրամ, լրագրող | 601: |
| Աղաջանյան Վլադիմիր | 110, 111, 138, 169, 635: |
| Աղասյան Ալ. | 675: |
| Այդինյան Վալերի, լրագրող | 598: |
| Այվազյան Սմբատ | 521: |
| Անանյան Ջեմմա | 632: |
| Անար. Ադրբ. ԳՄ նախագահ | 68, 76: |
| Անդրեեւ Վ. | 209: |
| Անդրոնով Իոն, լրագրող | 392: |
| Անտոնյան Արմեն | 788: |
| Անցիֆերով Ալ., լրագրող | 334, 335: |
| Աշոտ (Ուլուբաբյան) | 89: |
| Աչիկգյոզյան Սիմոն | 215: |
| Ապրեսյան Մուրադ | 601: |
| Աշիդ Էյուբ | 737: |
| Աշճյան Մեսրոպ արքեպիսկոպոս, առաջնորդ ամերիկահայոց Արեւելյան շրջանի եւ Կանադայի հայկական թեմի | 618: |
| Առաքելյան Գուրգեն | 725: |
| Առաքելյան Յուրի | 53, 74: |
| Առաքելյան Քնարիկ | 40: |
| Առուշանյան Ա. | 203: |
| Առուշանյան Բորիս | 504, 512, 528, 529, 620, 629, 630, 638: |
| Առուշանյան Սլավիկ | 168: |
| Ասադով Ռ. Ի. | 150, 189, 195, 227, 274, 331: |
| Ասատրյան Բագրատ | 409, 447, 479: |
| Ասատրյան Գառնիկ | 412: |
| Ասբեռն Ջիդ | 321: |
| Ասլամովա Դարյա, լրագրող | 323, 324: |
| Ասկերով Ֆահրադ | 789: |
| Ասկերովա Ս., լրագրող | 397, 398: |
| Ասրյան Միքայել-175: | |
| Ավագյան Բաղդասար | 110: |
| Ավագյան Գրիգոր | 468: |
| Ավագյան Հրանտ | 7: |
| Ավանեսյան Ալյոշա | 331: |
| Ավանեսյան, ուսուցչուհի | 22: |
| Ավետիսյան, հեռուստավար | 394, 396, 540: |
| Ավետիսյան Հրանտ, ակադեմիկոս | 567: |
| Ավետիքյան Հակոբ, «Ազգի» խմբագիր | 574, 696: |
| Արամայիս | 33: |
| Արարքցյան Բաբկեն | 89, 96, 220, 263, 380, 442, 443, 446, 454-456, 463, 465, 468, 469, 471-473, 479, 482, 483, 485, 579, 592-597, 607, 645, 686, 691, 702, 705, 706, 781-783, 788, 799, 801: |
| Արաֆաթ Յասեր | 739: |
| Արիստակեսյան Հարություն | 478: |
| Արքուր, ֆիդայի | 216: |
| Արծրունի Վ. | 86 |

Արծինբա, Աբխազիայի ղեկավարը 762:
Արղության Ա., լրագրող 664:
Արշակ Բ, թագավոր Մեծ Հայքի 633:
Աուերբախ Ջոն, լրագրող 795:
Աֆանասեւ Յու. 106, 285:

Բաբայան Արմեն 178:
Բաբայան Գրիգոր, լրագրող 615:
Բաբայան Ռոզա 137:
Բաբայան Սամվել, ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ 623, 734, 784:
Բաբայան Սեմյոն 95, 99, 101, 171, 518:
Բաբանով Իգոր, լրագրող 21, 34, 202, 265:
Բաբլումյան Ս. 24:
Բաբուրյան Ալեքսանդր 39:
Բաբուրյան Կարեն, ԼՂՀ ԳԽ-ի նախագահի պաշտոնակատար 509, 692, 694, 695, 701, 705, 707, 708, 715, 717, 720, 727-730, 732, 740, 749, 752, 756, 784, 788, 799, 800:
Բագրատյան Հրանտ 237, 445, 452, 645, 682, 685, 704:
Բադալյան Նաիրի, լրագրող 175:
Բադալյան Ռաֆիկ 655:
Բաալախանովա Լեյլա 378, 390, 398, 430, 433, 481, 491:
Բալայան Զորի 26-28, 30, 32, 43, 45, 46, 48, 49, 57, 59, 62, 89, 104, 144, 156, 157, 161, 171, 185,190, 194, 213, 221, 243, 257, 265, 275, 291, 316, 322, 323, 329, 337, 357, 362, 392, 404, 415, 418, 425, 431, 439, 470, 559, 566, 703, 704, 710, 713:
Բալայան Կիմ 250, 454, 473:
Բալայան Վալերի 693:
Բալաշով Լեւ 262:
Բալասանյան Նելսոն 186:
Բախշիյան Մանֆրեդ 168:
Բախշինյան Հենրիկ, բանասեր 669:
Բակատին Վ. Վ., ԽՍՀՄ մինիստր 13, 104, 149, 155, 187, 209, 210:
Բահրամով Ռուվի 21:
Բաղդասարյան Գեղամ, լրագրող 167, 395, 531, 551, 700:
Բաղդասարյան Ալբերտ 454:
Բաղդասարյան Կամո 178:
Բաղդասարյան Նադյա 39:
Բաղդասարյան Սեյրան, ՀՀ ԳԽ-ի Արցախի հանձնաժողովի նախագահ 237, 374, 376, 412, 605, 690, 712, 759, 765:
Բաղդասարյան Վիլեն, զինվորական 493:
Բաղդասյան Մուշեղ, լրագրող 501:
Բաղիյան Գրիշա 168:
Բաղիրով Միր Ջաֆար 6.7, 33:
Բաղիրով Քյամրան 11, 14, 16-23 34, 44-46 49, 53, 60, 75, 297:



Բաղմանյան Հակոբ 788:
Բաղմանյան Նաիրա 178
Բաղմանյան Սամվել 787
Բաղյան Արմեն 655:
Բաղրամյան Հ. Ք., մարշալ 115:
Բաղումյան Արտավազդ 653:
Բայանդուր Անահիտ 211, 310, 583, 585:
Բայբուրդցյան, ՀՀ դեսպան Իրանում 651:
Բայրամովա, Սումգայիթի կուս. քաղկոմի Բ քարտուղար 35:
Բայրամով Նիզամի 800:
Բաշկեւիչ Բ. 294:
Բասով, ակադեմիկոս 82:
Բաշկին Լեոնիդ 88, 265:
Բարաննիկով 690:
Բարանովսկի Վլադիմիր 202:
Բարթող, հոգեւորական 742:
Բարխուդարյան Ֆելիքս 186:
Բարսեղյան Վ. 241:
Բարսեղով Յուրի, պրոֆեսոր 233, 412, 578:
Բեգլարյան Հրաչյա 11, 99, 164:
Բեգլարյան Մհեր 331:
Բեգիրջյան Խաչատուր 625:
Բելիխ Վադիմ, լրագրող 658:
Բելիչենկո Յուրի 537, 567, 749:
Բելոզերցեւ Ս. 266:
Բեկլարյան Արիշ 178:
Բեկոր Աշոտ 788:
Բեյքեր Ջեյմս 328, 342, 343, 345, 353:
Բեռդյաեւ, գեներալ 330, 373, 382, 385:
Բեսմերտնիխ, դիվանագետ 124:
Բեստավաշվիլի Անահիտ 175, 202, 237:
Բերիա Լ. Պ. 6.7:
Բըկին, լրագրող 325:
Բիլբրեյ Ջեյմս, ԱՄՆ-ի սենատոր 645:
Բիրանդ Մահմեդ Ալի, լրագրող 608:
Բլախոտին, գնդապետ 788:
Բլեյան Աշոտ 150, 268, 454, 562, 563, 565, 566, 569, 576, 582, 585, 593, 602, 620, 621, 624, 626-631, 779:

Բոզվանով Ալեքսանդր, զինվորական 143:
Բոգդուխով, զինվորական 164:
Բոգոմոլով Օլեգ 87, 202:
Բոններ Ելենա 98, 175, 231, 305, 306, 312, 362, 389, 590, 653, 700, 768:
Բորովիկ Հենրիխ Ավերյանովիչ 56, 59-68, 124, 174:
Բովին 264:
Բրեժնեւ Լ. Ի. 26:
Բրըլ 56:

| | |
|---|---|
| Բունիաթով Զիա | 38, 76, 599: |
| Բուշ Ջորջ, ԱՄՆ-ի պրեզիդենտ | 226, 273, 315, 327-329, 342, 353, 381, 382, 388, 416, 589, 592, 600: |
| Բուլացկի Ֆ. | 124, 171, 226: |
| Բուրբուլիս Գենադի | 431, 517: |
| Բուրկովա Ինեսա, գրող | 226, 227, 237, 285, 352, 359, 363, 656, 726, 737, 752: |
| Գաբա Սերգեյ, ռուս սպա | 116 |
| Գաբրիելյան Գագիկ | 178: |
| Գաբրիելյան Գուրգեն, բանաստեղծ | 11, 22, 24, 52, 99, 164: |
| Գաբրիելյան Մեխակ | 293: |
| Գաբրիելյան Վալերի | 182: |
| Գալոյան Գ. Ա., ակադեմիկոս | 57, 63: |
| Գալստյան Արշավիր | 50: |
| Գալստյան Ժաննա, պատգամավոր դերասանուհի | 39: |
| Գալստյան Համբարձում | 96, 770, 772: |
| Գալստյան Ռաֆայել | 634: |
| Գամբարով Իսա | 425, 436, 439, 440, 444, 492, 627, 646, 673, 802: |
| Գայդար | 436, 515, 549, 550 |
| Գայդար Թիմուր | 189, 190, 193, 202, 656: |
| Գայիբով | 274, 279: |
| Գանիլ Սոոյան | 538: |
| Գասպարյան Աշոտ, ԽՄ հերոս | 50: |
| Գասպարյան Համլետ | 771: |
| Գասպարյան Յուրի | 185: |
| Գասպարյան Շահեն, Գարի Կասպարովի պապը | 790: |
| Գարաֆյան Արամայիս | 634: |
| Գելման Ալեքսանդր | 70, 171: |
| Գեյվանդով Կոնստանտին | 40: |
| Գենդյալիս Բ., Լիտվայի գիտնական | 111: |
| Գենշեր | 362, 382: |
| Գեւորգյան Վահան | 578: |
| Գեւորգյան Սամվել | 96: |
| Գզոյան Ֆելիքս | 508: |
| Գիլեւիչ | 56: |
| Գիրենկո, ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար | 138: |
| Գյոզալով | 110: |
| Գյուրեշ, գեներալ | 676: |
| Գյուրջյան Գ. | 140: |
| Գոլուբեւ Ա. Ի. | 150: |
| Գոնչարով Ա. | 171: |
| Գոբլ Պոլ | 587: |
| Գոզման Լեոնիդ | 202: |
| Գովորուխին Ստանիսլավ | 682: |
| Գորբաչով Մ. Ս. | 18, 25-28, 30-34, 38, 41, 43, 45, 46, 48, 49, 53, 54, 63, 66, 70-73, 77-79, 81-83, 95. |





| | |
|---|---|
| Գորբաչով Մ. Ս. | 97, 99, 101, 105, 106, 108, 109, 115-117, 123-125, 134, 137, 138, 140, 141, 145-147, 149-151, 155-157, 160, 161, 163, 165, 167, 170, 171, 173, 174, 180, 187, 189, 195, 199-201, 208, 211, 213, 220, 221, 223, 224, 226, 227, 230, 233, 234, 236, 248, 249, 252, 254, 259, 260, 262, 263, 265,269, 273, 280, 281, 285, 306, 367, 408, 459, 481, 526, 536, 594, 620, 623, 713, 719: |
| Գորգիսյան Մ | 88: |
| Գորոդեցկի Սերգեյ | 84: |
| Գորսկի Ալեքսանդր | 438, 439: |
| Գրանին Դ. | 171: |
| Գրաչով Պավել, գեներալ | 427, 539, 540, 544-547, 647, 668-671, 674-675, 736, 775, 778, 792, 794, 802, 805: |
| Գրիք | 784: |
| Գրիգոր Լուսավորիչ | 121: |
| Գրիգորիս եպիսկոպոս, Գրիգոր Լուսավորչի թոռ, Արցախի թեմի առաջին առաջնորդ | 121: |
| Գրիգորյան Ավետ | 454: |
| Գրիգորյան Արամ, ակադեմիկոս | 63: |
| Գրիգորյան Արամ | 655: |
| Գրիգորյան Գեւորգ | 215, 217: |
| Գրիգորյան Գրիգոր | 655: |
| Գրիգորյան Եղիշե, ԼՂ-ի կուս. մարզկոմի նախկին առաջին քարտուղար | 42: |
| Գրիգորյան Ժ. | 197: |
| Գրիգորյան Համլետ | 168, 172, 173, 464, 693: |
| Գրիգորյան Հ. | 712: |
| Գրիգորյան Մարտուն | 197: |
| Գրիգորյան Ն. Ա. | 228: |
| Գրիգորյան Սամվել, ակադեմիկոս | 700: |
| Գրիգորյան Սոս | 198: |
| Գրիգորյան Վալերի | 260, 407: |
| Գրիգորյան Վահան | 104: |
| Գրիգորյան Վաչագան | 51, 104, 113, 128, 130, 171: |
| Գրիգորյան Վարուժան, Եվրախորհրդի աշխատակից | 411: |
| Գրոմիկո Ա. Ա. | 46, 73: |
| Գրոմով, գեներալ | 202, 358, 382: |
| Գուլիեւ Ջալալ | 76, 782: |
| Գուլիեւ Ռասուլ | 794, 797, 729-731: |
| Գուլյան Աշոտ | 634: |
| Գուլուզադե Վաֆա | 643, 767: |
| Գուրզադյան Վահագն | 310: |
| Գուդավա Թենգիզ | 388, 480, 481: |
| Դադամյան Բորիս Վարդանի | 50, 97, 104, 107, 108, 122, 135, 136. |

154, 173-175, 271:
Դաղայան Սիմոն 312:
Դաղաշիձե Իլյա, լրագրող 684:
Դալի Ղազար 376:
Դալլաքյան Անժելա 206:
Դանիելյան Գ. 241,
Դանիելյան Ռազմիկ 437,
Դանիլով Վ. 243:
Դաշկևիչ Յա. 90, 91, 656:
Դաշտամիրով, Ադր. ԿԿ. ԿԿ-ի քարտուղար 196:
Դավթյան Սերգեյ 50:
Դեմիչև Պ. Ն. 22-24, 34, 36, 47:
Դենիսով Ա. 107:
Դեմիրբուլաշ Յաշար, օսմանյան հրամանատար 583:
Դեմիրել Սուլեյման 328, 342, 351-377, 378, 417, 418, 421, 425, 429, 435, 436, 439, 440, 453, 458, 474, 518, 543, 584, 604, 606, 607, 632, 633, 670, 692, 706, 729, 737, 748:
Դեմիրճյան Դերենիկ 379:
Դեմիրճյան Կարեն Սերոբի 16, 17, 28, 44-50, 71, 74, 75:
Դենիս դե Կոնսինի 328:
Դևրիկյան Վարդան, լրագրող 588, 601, 615, 616:
Դերյուգին Յուրի, դիվանագետ 327:
Դինստբիր Իրժի 391, 394, 396-398:
Դյուբուա Էլեն, Ֆրանսիայի ներկայացուցիչ 784:
Դյումա Ռոլան, Ֆրանսիայի ԱԳՆ 312
Դյումին Դմիտրի 254:
Դոլգիխ 25, 26, 36, 44, 46-48, 75:
Դուբինյակ Վ., գեներալ 148:
Դուդաև Ջոխար, Չեչնիայի ղեկավար 293, 610, 648:
Դուլյան Արմեն 405, 658:
Դուման Նիկոլ 494:

Եգորյան Էդուարդ 239, 250, 259, 268293, 454, 465, 466, 468, 471, 472, 595:
Ելցին Բորիս 194, 224, 225, 227, 235, 253, 260, 269, 270, 272, 275, 280, 282, 283, 285, 286, 298, 300, 305, 306, 313, 319, 327, 328, 333, 342, 343, 353, 357, 359, 364, 375, 381, 419, 512-514, 549, 552, 556, 589, 592, 598-600, 623, 633, 647, 649, 657, 671, 688, 704, 713, 716, 736, 740, 741, 745762, 768, 773, 778.
Եղյան Կամո 788:
Եմելյանով Պ. 108, 111
Ենիկոլոպով Ն. Ս., ակադեմիկոս 38:
Եպիսկոպոսով Հրանտ, պրոֆեսոր 40, 578:



Եսայան Է. 195:
Եսայան Օլեգ 154, 181, 300, 308, 348, 360, 388, 482, 488, 505:
Երմակով Ա., լեյտենանտ 523:

Զագեր Դիրկ 312:
Զախարով Մ. 171:
Զատիկյան 789:
Զարգարով Ա. 41, 42:
Զոլյան Սուրեն 211, 212, 231, 239, 412, 495, 507, 526, 565, 583, 678, 711, 775, 787:

Զոտով, լրագրող 356:
Զորի, տե՛ս Բալայան Զորի:
Զուբկո Մարատ 755:
Զուբով Անդրեյ 98:
Զուլֆուղարով 722
Էգգերտ Կոնստանտին, լրագրող 652:
Էլիասոն Յան 777, 780, 781, 804:
Էլկին Ա., զինվորական 523:
Էլչիբեյ Աբուլֆազ 416, 417, 429, 432, 442, 445, 447, 482, 483, 508, 511, 513, 516, 517, 519, 524, 525, 533, 535, 538, 540, 543, 548, 549, 556,557, 569, 570, 571, 575, 579, 580, 581, 599, 600, 609, 620, 624, 628, 629, 634, 646, 647, 649, 652, 677, 684, 689, 691, 695, 700, 702, 703, 706, 709, 787:
Էմեքսուզյան Վահրամ, բարեգործ 426:
Էմին Գևորգ 19, 192:
Էմին Հովսեփ 999, 500:
Էչբներ Ջոն 307:

Թադևոսյան, զինկոմ 459:
Թաթուայլեր Մարգրետ, ԱՄՆ-ի լրագրող 147:
Թալբոտ Ստրոբ 671:
Թալիշինսկի Ռ. 24:
Թել Կլեյբորն 110:
Թևոսյան Իվան 110:
Թետչեր Մարգրետ 530, 560, 591, 682:
Թյուրքեշ Ալփարսլան, համաթուրանականության գաղափարախոս 583, 634:
Թոմսոն 439, 682:
Թովմասյան Վ. Ա. 101, 113, 271:
Թորան Ժան Լուի 498:
Թումանյան (Հովհաննես) 7-80:

Ժիգալին Ա. 171:
Ժինկին, գեներալ 274, 279:
Ժոկո, տե՛ս Վարդանյան Գևորգի:

Ժուկով Վ. Մ., գնդապետ 203, 241, 252, 296:

Իգիբյան Հենրիկ 265, 275:
Իլյուխին Վիկտոր 236, 237:
Ինենյու Խերդալ 381:
Իոսելիանի 762:
Իչկինով Մարատ. վարձկան օդաչու 774:
Իսագուլյան Գառնիկ 697:
Իսահակյան Ավետիք 9, 199, 512:
(Իսահակյան) Ավիկ 199:
Իսկանդարյան Արշավիր 261:
Իսմայիլով 274:
Իսրայելյան Վրեժ 412:
Իվանյան Քրիստոֆոր. գեներալ 777:
Իվանով 274:

Լազարեւ Բ. -41:
Լակշին Վլադիմիր 202:
Լավլինսկի Լ. 171:
Լեբեդ Ալեքսանդր. գեներալ 485:
Լեհման Ռիչարդ. ԱՄՆ-ի սենատոր 645:
Լենին Վ. Ի. 20, 50, 66:
Լենկ Թեմուր 38:
Լեո 779, 780:
Լեոնտեւ Կոնստանտին 517:
Լեւին Կառլ. ԱՄՆ-ի սենատոր 754:
Լեւկովիչ. զինվորական 523:
Լիգաչով Ե. Կ. 34, 40, 47, 48, 75, 77, 78, 117:
Լիխանով Ալբերտ 226:
Լիխանովա. լրագրողուհի 189:
Լիխաչով Դմիտրի. ակադեմիկոս 80, 226:
Լիպարիտյան Ժիրայր 412, 442, 548, 549, 561, 606, 607, 625, 640, 666, 679-681, 687, 729, 743, 746, 747, 753, 780, 781:

Լիսենկո Ն., ՌԴ պետդումայի հանձնաժողովի նախագահ 784, 785:
Լիտովկին Վ., թղթակից 142:
Լյաթիֆով Դ., զինվորական 764:
Լոբկանով Վ., զինվորական 133:
Լոբով Օլեգ 121, 685:
Լուկաշով 275:
Լուկաշ Վլադիմիր 36:
Լուկյանով Ա. Ի. 26, 34, 44, 46, 47, 49, 120, 125,136, 154, 160, 161, 173, 196, 228, 230, 719:

Լունինա Ելենա 262:
Լուչինսկի Պ. 88:
Լուշչուկ Վիտալի 553:
Խազրի Նաքի 76:
Խալիլ Ռզա 171, 172:

Խալիլով Գուզար. լրագրող 386, 388, 389, 391:
Խալլիկ. գիտնական 111:
Խանզադյան Սերո Նիկոլայի 61, 93, 129:
Խանյան Սոկրատ. բանաստեղծ 164:
Խանջյան Գրիգոր. ժողովրդական նկարիչ 130, 154, 156:
Խաչատրյան Արսեն 639:
Խաչատրյան Արտակ 655:
Խաչատրյան Հրանտ (ԼՂՀ) 504, 620:
Խաչատրյան Մարտին. սենատոր 167:
Խաչատրյան Ց. 669:
Խաչատուրյան Միխայել 12, 191:
Խաչատուրով Տ. Ա., ակադեմիկոս 38:
Խաչիյան Մամիկոն 103:
Խասբուլատով Ռուսլան 436, 636:
Խարչենկո Գ. Պ. 50, 51, 87:
Խաչատրյան Հրանտ 464, 473, 581:
Խաչատրյան Վարդան 581:
Խաչատրյան Վիգեն 581:
Խոեր Ստենի 328:
Խոմեյնի Այաթոլլա 245, 246, 365:
Խվոստիկով Յու., գնդապետ 523:
Խուդավերդյան Կոստանդին. պրոֆեսոր 567:

Ծառուկյան Անդրանիկ 438:

Կաղըմբեկով Վ. Զ. 53:
Կադիրովա Սոնա 64, 65:
Կազիմիրով Վլադիմիր. ԼՂՀ գծով ՌԴ պրեզիդենտի դեսպանը 492, 493, 495, 499, 577, 671, 720, 733, 738, 751, 752, 768, 778, 781, 783, 801:

Կազընավ Ռ. 314:
Կալաշնիկով. գնդապետ 382:
Կալինկին. լրագրող 291:
Կանե Յուլյա Միխայլովնա 56, 57:
Կապանեց Ն., ԽՄԿԿ կենտկոմի աշխատակից 207, 208:
Կապլանով Ռ. 90:
Կապուտիկյան Սիլվա 25, 26,28, 30-34, 43, 49, 54, 61, 144, 166, 357:

Կասիմով Թոֆիկ 489:
Կասյան Ա. 241:
Կասպարով Պավել. հեռուստավար 326:
Կասպարով Գարի. շախմատի գծով աշխարհի չեմպիոն 790:
Կասիմով Գանի 525:
Կաստրո Էմիլիո 579:
Կարաեւ Թամերլան 42, 432:

Կարամանօղլի Ա. 362:
Կարապետյան Բակուր, լրագրող 634:
Կարապետյան Վաչիկ 182:
Կարապետյան Վլադիմիր 460:
Կարապով Անդրեյ, հեռուստալրագրող 759, 763:
Կասոուեւ 20, 22:
Կարկառավիլի, գնդապետ 519:
Կարոլով Անատոլի 226, 266, 568:
Կաֆարովա Է., Ադրբ. ԳԽ-ի նախագահ 145, 160, 228, 375:
Կեռրկով Բորիս 11, 14, 21, 45, 72, 297:
Կեսովանի 544:
Կըչման Միկոլա, իրավապաշտպան 420:
Կիրակոսյան Ալեքսան 163:
Կիրիլյուկ 163:
Կյուրեղյան Տիգրան 239:
Կոզըրեւ Ա., ՌԴ արտգործնախարար 332, 354, 366, 398-400, 404, 685, 690, 700:
Կոմանդոս, տե՛ս Տեր-Թադեւոսյան Արկադի:
Կոմարովա Տասյանա, հեռուստավար 344, 435, 505:
Կոնարեւ 168:
Կոնդրասեւ 78:
Կոնտրիմայտե Մարիտե, լրագրողուհի 532:
Կոսոլապով Յուրի, գեներալ 145, 151:
Կոստանդյան Արամ 110:
Կոստանդյան Կարեն 288:
Կոստիկով 695:
Կովալենկո Ալեքսեյ 577:
Կովալյով Յուրի, ֆինվորական 64, 274, 279:
Կովալյով Սերգեյ, իրավապաշտպան 235:
Կոխ Քեռոլայն 236, 306, 307, 311, 314, 316, 337, 344, 357, 362, 380, 385, 402, 404, 405, 439, 440, 442, 495, 498, 499, 530, 560, 561, 573, 590, 591, 605, 622, 625, 641, 642, 672, 674, 676, 682, 701, 704, 707, 766, 774, 789, 792:
Կրավչենկո 168:
Կրավչուկ 385:
Կրավցով Բ. 88, 217:
Կրիկորյան Վարուժան 668:
Կրյուչկով 157, 210, 254, 265:
Կրոտով Մ. 801:
Կրուպնիկ Ի. 90, 92:
Կրփեյան Թաթուլ, ֆիդայի 216:
Կուզուլինով Դ. 171:
Կուդրյավցեւ Վ. 171:
Կուլիեւ Վիլայաթ 117:
Կուլիկովա Գ. 243:
Կուլիշ Օ. 36:
Կուլչիցկայա Սվետլանա, հեռուստալրագրողուհի 392:
Կումրի Անտոնի 172:
Կուշեւ Ստանիսլավ 521:
Կուպրեեւ Ս. Ա. 101:
Հազկերտ, Պարսից արքայից արքա 365:
Հակոբյան Ալեքսան 90, 96, 473:
Հակոբյան Արմեն, նանդակագործ 39, 137, 185:
Հակոբյան Լեոնիդ 443, 446, 454:
Հակոբյան Ռուբեն 307, 695:
Հակոբյան Սպարտակ 121:
Հակոբյան Վարդան 11, 12, 14, 16, 22, 50, 71, 99, 258, 414:
Համազասպյան Վ(արդգես) 93:
Համբարձումյան Եղիշե 12, 50:
Համբարձումյան Սերգեյ Ալեքսանդրի, ակադեմիկոս 78, 79, 81-84, 124, 157-161, 275:
Համբարձումյան Վիկտոր Համազասպի, ՀԱԱ-ի պրեզիդենտ 37, 55, 78, 83, 171, 275:
Համզաքով Ռասուլ, բանաստեղծ 78:
Համիդով, Ադրբեջանի ՆԳՄ 461, 483, 547, 609:
Հայրապետյան Գրիգոր 500, 616, 638
Հայրապետյան Ռոբերտ 410:
Հայրապետյան Վալերի 185:
Հայրապետյան Վիգեն 14:
Հայրիկյան Պարույր 132, 466, 489, 495, 497, 499, 503, 511, 581, 610, 669, 789, 790:
Հայրյան Ռ. 161:
Հաջիեւա Լալա-Շովքյաթ, Ադրբ. պետ. նախարար 748:
Հաջիեւ 50, 191, 299:
Հաջիեւ Ալի 21:
Հաջիեւ Արիֆ 37, 372:
Հաջիզադե Հիքմեդ, լրագրող 388, 389, 405, 542
Հաջոյան Գագիկ 505:
Հասանով 86:
Հասանով Հասան, Ադրբեջանի վարչապետ 336, 538, 737, 745, 771, 797:
Հասան-Ջալալյան իշխանական տոհմ 72, 944:
Հավել Վացլավ, Չեխոսլովակիայի պրեզիդենտ 391:
Հարցներ Կիմ, քարեգործ 664:
Հիսուս Քրիստոս 664, 406:
Հովակիմյան Բ., բաստերազետ 669:
Հովակիմյան Հենրիկ 331:
Հովհաննիսյան Գագիկ 455, 464, 479:
Հովհաննիսյան Էդուարդ 355, 356, 398, 399, 539:
Հովհաննիսյան Կոնստանտին, լրագրող 404:
Հովհաննիսյան Հմայակ 576-578:

| | |
|---|---|
| Հովհաննիսյան Հովհաննես | 420: |
| Հովհաննիսյան Հրաչյա, գրող | 63, 99: |
| Հովհաննիսյան Մաքսիմ, լրագրող | 341, 343, 565, 572: |
| Հովհաննիսյան Յուրի | 526, 527, 631: |
| Հովհաննիսյան Նախշուն, Սոսի կոլտնտեսության նախագահ | 181: |
| Հովհաննիսյան Նիկոլայ, պրոֆեսոր | 567: |
| Հովհաննիսյան Ռիչարդ-Տիգրան, ակադեմիկոս | 567: |
| Հովհաննիսյան Վահան Էդուարդի | 611, 697, 666: |
| Հովհաննիսյան Վարդան, լրագրող | 660: |
| Հովհաննիսյան Վարդուհի, Ռիչարդի տիկինը | 567: |
| Հովհաննիսյան Վլադիմիր, իրավաբան | 631: |
| Հովհաննիսյան Րաֆֆի Ռիչարդի, ՀՀ արտգործնախարար | 283, 321, 329, 340, 344, 354, 360, 368, 372, 378, 384, 390, 398, 402, 427, 445, 450, 499, 507, 533-535, 539, 540, 548, 557-559, 563, 567, 613, 639, 662, 663, 671, 680: |
| Հոբլ Պոլ | 537: |
| Հոգ Դուգլաս, Մեծ Բրիտանիայի ԱԳՆ | 572: |
| Հովսեփյան Յա. | 203: |
| Հոֆֆ Մագդալեն, Եվրախորհրդարանի աշխատակից | 636: |
| Հրաչ, ֆիդայի | 216: |
| Հուք Դուգլաս | 380: |
| Հուսեյնով Ռահիմ | 424: |
| Հուսեյնով Ռաֆիկ | 276, 287, 416: |
| Հուսեյնով Սուրաթ | 686, 693, 695, 702, 703, 705, 706, 709, 710, 716, 722: |
| Հուսեյնով Փանահ | 584: |
| Հուսիկ Քահանա | 413: |
| | |
| Ղազարյան Ա. | 93: |
| Ղազարյան Հայկ | 594: |
| Ղազարյան Ռաֆայել, ակադեմիկոս | 96, 130, 470: |
| Ղազարյան Սամսոն | 96: |
| Ղազարյան Վալերի | 693: |
| Ղազարյան Ֆերդինանդ | 467: |
| Ղազիեւ Ռասիմ, Ադրբ. պաշտպանության նախարար | 385, 544, 545, 609, 619: |
| Ղալի Բուտրոս | 303, 304, 313, 328, 355, 358, 387, 390, 391, 457, 514, 531, 533, 539, 544, 554, 640, 653, 666, 671, 627, 728, 747: |
| Ղահրամանյան Կարինե | 312: |
| Ղամբարով Իսա | 412: |
| Ղասումով Թոֆիկ, Ադրբ. ԱԳՆ | 627, 630, 655: |
| Ղասումով Ռ., լրագրող | 619: |





| | |
|---|---|
| Ղարիբջանյան Գ. Բ., ակադեմիկոս | 58: |
| Ղափլանյան Հրաչյա, ՀՀ ժող. դերասան | 73: |
| Ղուկասյան Արկադի | 151, 571, 620, 670, 681, 683, 712, 721, 722, 730, 732, 734, 738, 739, 743, 747, 756, 765, 780, 784: |
| Ղուկասյան Էդիկ | 168: |
| Ղուկասյան Լուսիկ | 738: |
| | |
| Մագոմաեւ Մուսլիմ, երգիչ | 390: |
| Մազովա Դ., չեխ լրագրող | 403: |
| Մալենկովիչ Վլ., լրագրող | 353, 356: |
| Մախմուրյան Գայանե | 567: |
| Մամիկոնյան Ֆելիքս | 223, 667: |
| Մամյան Իգնատ, գրող | 71, 72: |
| Մամունց Սամվել | 50, 95: |
| Մայիլյան Վլադիմիր | 12: |
| Մայորեց Ա. | 88: |
| Մայտինանս Մայտ | 187: |
| Մանասյան Ալեքսանդր, պրոֆեսոր | 237: |
| Մանգասարյան Սառա | 178, 179: |
| Մանիլով, գեներալ | 503: |
| Մանուկյան Արայիկ, լրագրող | 703: |
| Մանուկյան Վազգեն | 96, 207, 220, 232, 490, 527, 533, 537, 542, 594, 613, 635, 648, 717, 718: |
| Մանուչարյան Աշոտ | 88, 92, 93, 96, 128-130, 203, 453, 769,770: |
| Մանուչարով Արկադի | 11, 14, 52, 96, 132, 243, 360, 468, 638: |
| Մանուչարովա, լրագրողուհի | 207: |
| Մաշկով, գնդապետ | 216, 217, 219, 230: |
| Մավիսակալյան Ռոբերտ | 374, 780: |
| Մավյան Վահրամ | 438: |
| Մարեսկա Ջոն, դիվանագետ | 671: |
| Մարչուկ Գ., ԽՍՀՄ ԳԱ-ի պրեզիդենտ | 171: |
| Մարուխյան Հրայր | 478, 481, 611, 698: |
| Մարուխյան Ոստանիկ | 695: |
| Մարտիրոսյան Վիլեն, զինվորական | 381: |
| Մարուսիչ Ֆիլիպ | 447 |
| Մեդվեդեւ Ռոյ, պատմաբան | 73: |
| Մեթլոկ Ջ., ԱՄՆ-ի դեսպան | 124: |
| Մեյջոր Ջոն, Մեծ Բրիտանիայի վարչապետ | 363: |
| Մելիկով Դ. | 36: |
| Մելիք-Շահնազարյան Արսեն | 231: |
| Մելիք Շահնազարյան Լեւոն | 308, 339, 405, 426, 467, 500, 516, 533, 538, 559, 630, 638, 648, 693, 756: |
| Մելյան, հեռուստավար | 540: |
| Մելքումյան Հրանտ | 184: |
| Մելքումյան Մարգարիտ | 198 |
| Մելքոնյան Մոնթե, զորապետ | 693, 702, 722: |
| Մեղրյան Հայկ | 655: |

Մեղրյան Շահեն 291, 292, 361, 445, 446, 461, 484, 493, 560, 654, 655:
Մեհմանդարով 331:
Մեհթիեւ Ա., լրագրող 285:
Մենթեշաշվիլի Թ., ԽՍՀՄ ԳԽ-ի քարտուղար 101:
Մերիմե, ՄԱԿ-ի ԱԽ-ի ղեկավար 556, 561:
Միխայլով Ալ. 171:
Միկոլա, ուկրաինացի կամավորական 332:
Միկոյան Ս. Ա. 40:
Միկուշեւիչ 752:
Միհրանյան Անդրանիկ 390, 667, 759, 767, 769:
Մինասբեկյան Մ. 86:
Մինասյան Գրիգոր 174:
Մինասյան Մարիետա 178:
Միշինա Վ. Մ. 101, 219, 230:
Միտերան, Ֆրանսիայի պրեզիդենտ 226, 263, 421, 452, 459, 592, 632, 633, 699:
Միրզախանյան Ռուբեն 696, 697:
Միրզոյան Գրետա 310:
Միրզոյան Էդուարդ, կոմպոզիտոր 61:
Միրզոյան Մաքսիմ 40, 110, 154, 573, 781:
Միրզոյան Ռուբիկ 185:
Մխիթար Գոշ, միջնադարյան հայ պատմիչ-իրավաբան 261:
Միքայելյան Իոսիֆ 655:
Մխիթարյան Գագիկ 460:
Մկրտչյան Ան. 17:
Մկրտչյան Արթուր-ԼՂՀ ԳԽ-ի առաջին նախագահ 308, 312, 318, 322, 360, 367-383, 386, 404-410, 465, 596, 653:
Մկրտչյան Ա., դիվանագետ 17, 125:
Մկրտչյան Լեւոն 310:
Մկրտչյան Շահեն 669:
Մոսբերգ, Շվեդիայի փոխարտգործնախարար 411, 804:
Մոստովշչիկով Ս., լրագրող 142:
Մովսիսյան Ջավեն 50, 71:
Մովսիսյան Վլադիմիր 7, 132, 170, 772:
Մուդակ Վիկտոր 230
Մութալիբով Այազ 42, 146, 162-164, 166-168, 173, 189, 196, 197, 208, 213-215, 220, 236, 237, 246, 249, 252, 260, 265, 273, 275, 280, 282, 283, 288, 289, 292, 298, 303, 304, 306, 313, 318, 319, 322, 325, 326, 329, 331-333, 335, 345-347, 349, 350, 352-354, 357, 367, 369, 392, 403, 423-425, 429, 432, 433, 511, 566, 571, 778:
Մուխին Վլադիմիր 523, 524:

Մուշեղյան Ալբերտ 305:
Մուսաբեկով Ռասիմ 412:
Մուսլիմզադե, Սումգայիթի կուսքաղկոմի Ա քարտուղար 35, 53:
Մուսլիմ, գյուղացի 716:
Մուստաֆաեւ, Ադրբ. Կոմկուսի նախկին Ա քարտուղար, 275, 685, 689:
Մուստաֆաեւ Չինգիզ 456:
Մուրադյան Սարգիս, ժողովրդական նկարիչ 93, 130:
Մուրադյան Իգոր 45, 48, 96, 234, 240, 616:
Մուրադյան Զանփոլադ 655:
Մուցատակիս Կոստանդինոս 427:

Յազով, ԽՍՀՄ նախարար 14, 149, 155, 157, 187, 210, 224, 227, 249, 254, 257:
Յակովլեւ Ալեքսանդր 25-27, 47, 48, 75, 209, 210:
Յակովլեւ Ե. -Վ. 318:
Յաշին Վ. Մ. 12, 34:
Յանաեւ 263, 266:
Յանեկ, չեխ լրագրող 252:
Յըլմազ Ֆաթիհ, թղթակից 211:
Յուդենիչ 348:
Յումախ Աբիլ, օսման. թուրք վարձկան 358:
Յունուսովա Լեյլա 119, 310, 418, 430, 462, 485, 516, 522, 619, 621, 648:
Յուրա, ճարտարգի, ջոկատի հրամանատար 503:

Նազարբաեւ Նուրսուլթան 269, 270, 272, 282, 283, 300, 306, 319, 327, 342, 343, 375, 376, 517, 520, 522, 524, 525, 538, 541, 623, 649, 741:
Նազարյան Անգին, ֆիդայու մայր 216:
Նազարյան, լրագրող 325, 326, 380, 648:
Նազարյան Վալերի, ֆիդայի 216:
Նազարով Յու. 86:
Նամազով Էլդար 648:
Նաջաֆով Ն. 412:
Նավասարդյան Աշոտ 239, 454, 465, 581:
Նավասարդյան Արման 554, 561:
Նավասարդյան Գրիգելյա 127:
Նարիմանբեկով Օլեգ 337:
Նարիմանով Նարիման 5, 30, 331, 557:
Նեչաեւ, գեներալ 153:
Նեվզորով Ալեքսանդր, հեռուստալրագրող 636-637:
Նեվերով Վլադիմիր 402:
Ներսիսյան Մկրտիչ 567:
Ներսիսյան Յուրի 11:
Ներսիսյան Վեներա 312:
Նիկոլաեւ, փոխգնդապետ 21:

Նիկոլյան Լիո, լրագրող 602:
Նիյազով Ս. 756:
Նիշանով Ռ. 115, 138, 156, 159, 246:
Նույկին Անդրեյ 189-191, 202, 208, 211, 236, 237, 287, 299, 335, 431, 656, 716, 726:
Նույկինա Գալինա 189-191, 202, 656:

Շաբադ Անատոլի 187, 227, 228, 252, 253, 255, 262, 311, 319:
Շախրայ 704:
Շահբազյան Գագիկ 554:
Շահբազով 275:
Շահմուրադյան Սամվել 454, 535:
Շահնազարյան Դավիթ 524, 526, 533, 580, 606, 634, 640, 666, 674, 677, 681, 685, 687, 691, 704, 731, 768:
Շահնազարյան մելիքական տոհմ 31:
Շահնազարով 31, 40, 41:
Շահումյան Ստեփան 58:
Շապոշնիկով Ե., ավիացիայի մարշալ 301, 347, 348, 350, 352-355, 357, 358, 362, 364, 368-370, 372, 373, 377, 381, 386, 485, 546, 675:
Շատալին, գեներալ 115, 166, 184-187, 223, 224, 716:
Շատելվորտ 33, 439, 682:
Շարաֆուտդինով Սուրաբ 171:
Շելով-Կովեդյաեւ Ֆյոդոր 90, 91, 225, 227, 235, 370, 371, 431:
Շեկյան Անդրանիկ 776:
Շեկյան Արմեն 232:
Շեկյան Էռնեստ 776, 777:
Շեկյան Մայիս 776:
Շեկյան Նվեր 776:
Շեյլի, ԱՄՆ-ի պետքարտուղարության աշխատակից 754:
Շեյնիս Վիկտոր 237, 564:
Շեւարդնաձե Էդուարդ 251, 265, 281, 381, 417, 489, 513, 552, 610, 649, 705, 773:
Շեվելյով, գնդապետ 188:
Շերիմկուլով Մեդեթկան 742, 783, 796, 798, 799, 801:
Շիխլինսկի 331:
Շիրինյան Վիգեն 168, 314:
Շիրխանյան Վահան 314, 348, 470, 490, 502, 770:
Շիրվանզադե Ալեքսանդր 142:
Շկիրյով Ալեքսեյ 424:
Շկլյարեւսկի Ի. 171:
Շմելյով Նիկոլայ 202:
Շոնիա Վալտեր, դեսպան 752:
Շվարցենբերգեր, Չեխիայի վարչապետ 391:
Շվեդով Անդրեյ, լրագրող 255, 256:
Շվեց Ի. Ա. 50:



Շուշկեւիչ, Բելոռուսի ԳԽ-ի նախագահ 286, 375:
Շուգարյան Ռուբեն 504, 535:
Շումեյկո Վլադիմիր, ՌԴ պետդումայի նախագահ 793, 799-801:
Շուստեր Սավիկ, «Ազատություն» ռադիոյի աշխատակից 181:
Շուքուրով Ռուստամ 171:

Ոսկանյան Հրանտ 16, 46, 48, 128, 129, 133:

Չալիկովա Վիկտորյադ 175:
Չալյան Թելման 24:
Չայլախյան Լեւոն, ակադեմիկոս 578:
Չարենց Եղիշե 29, 780:
Չեբրիկով Վ. 114:
Չեթին Հիքմեթ 368, 369, 375, 378, 388, 426, 429, 435, 546, 573, 576, 625, 627-629, 635, 681, 683, 736, 740, 748, 745:
Չերնենկո Ա. 88:
Չերնիկով Ե. Լ. 577:
Չերնոմիրդին Վիկտոր, ՌԴ վարչապետ 578, 716, 736:
Չերնիչենկո Յուրի 189, 190, 193, 202, 216:
Չերնյավին, ադմիրալ 358:
Չեռնիշեւ Ալբերտ, դիվանագետ 675:
Չիլլեր Թանսու 736, 738, 787, 798, 805:
Չիլինգարյան Մեծլում 217:
Չիստյակով Անատոլի 737, 749:
Չիֆթալարյան Ռ. 534:

Պաղայան Ռ., ՀՀ ԳԽ-ի հանձնաժողովի նախագահ 622:
Պասկալեւա Ցվետանա, հեռուստալրագրող 660, 667, 676:
Պավլով, գեներալ 347:
Պավլով, ԽՍՀՄ նախարար 154, 210:
Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսյան, Արցախի թեմի առաջնորդ 288, 316, 770:
Պարշին, զինվոր 314:
Պետրոսյան Գայանե 178:
Պետրոսյան Գեորգի 168, 464, 491, 498, 524, 526, 531, 556, 565, 569, 572, 583, 589, 590, 636, 638, 661, 679, 689, 690, 692, 693, 696, 698:
Պետրոսյան Գեւորգ 261, 263:
Պետրոսյան Գեւորգ, գնդապետ 533:
Պետրոսյան Լեոնարդ 268, 269, 271, 272, 286, 288, 292, 294, 296, 303, 304, 306, 308, 446, 579, 637, 711:
Պետրոսյան Հրաչիկ 398:
Պետրոսյան Մարսել 257, 624, 625:
Պետոսյան Մուրադ, ԼՂՀ բանակի հրամատարի տեղակալ 794, 795:

Պետրոսյան Շմավոն 11, 14, 97, 112:
Պետրոսյան Ռազմիկ, ինքնապաշտպանության հրամանատար 11, 168, 551:
Պետրոսյան Ռազմիկ Հայկի 438:
Պետրոսյան Սվետլանա 39:
Պետրոսյան Վարդգես 55, 60, 61, 78, 79, 310, 468:
Պետրոսյան Վիտալի 68:
Պետրուշենկո Մ. Ս. 154:
Պերես դե Կուելյար 229:
Պինոչետ 264:
Պիշչեւ, Երեւանի զորահրամանատար 251:
Պլավսկի 274:
Պոգորիլի Ալեքսեյ 262:
Պոդոպրիգորա Վ. Ն. 577:
Պոլյակով Ալ. 175:
Պոլյանիչկո Վ. Պ. 104, 112, 134, 138, 146, 150, 160, 163-166, 168, 174, 187, 188, 191, 193, 196, 210, 236, 241-243, 260, 261, 265, 266, 279, 433, 716, 725:
Պողոսյան Ժիրայր 742:
Պողոսյան Հենրիկ 14, 21, 29, 71, 72, 85, 88, 90, 92, 95, 102-104, 107, 188, 237, 238, 245, 248:
Պողոսյան Ստեփան 207, 213, 223, 224:
Պոպով Գավրիիլ 153:
Պրալնիկով Անդրեյ 36, 151, 492:
Պրիմակով Եվգենի 40, 78, 154, 156, 209, 210, 432:
Պուգո, ԽՍՀՄ նախարար 210, 224, 227, 228, 236, 265, 526:

Ջալիլով Աֆիադդին 739, 799, 800, 801:
Ջալիլով Ս. 570, 734:
Ջահուկյանց 454:
Ջանդարուք Հյուսամեթդին 512:
Ջանյան Բոգդան, բանաստեղծ 71:
Ջարմեն Պիտեր
Ջարմեն Ռոսիտա, անգլիացի կվակերներ 585:
Ջաֆարով Ջաֆար 716:
Ջաֆարով Վ. Դ. 101, 104, 107, 110, 150, 168, 274:
Ջիլավյան Սերգեյ, անհատ ձեռներեց 707:
Ջիմբազյան Տիգրան 695:
Ջհանգիրյան Յուրի 11:

Ռաբին Իսահակ 739:
Ռադաեւ Մ. Ռ. 150:
Ռազումովսկի Գ. Պ. -22, 23, 34:
Ռայիսա Մաքսիմովնա 30, 167, 181:
Ռաջաբով Ալիովսաթ 764:
Ռասպուտին Վ. 171:



Ռաֆայելի Մարիո 414, 415, 443, 454, 479, 480, 484, 489, 495-498, 507, 516, 517, 519, 531, 534, 593, 604, 624, 625, 685-687, 691, 694, 698, 708, 714, 716-718, 727, 732, 745, 747, 752:
Ռաֆսանջանի, Իրանի պրեզիդենտ 415, 582, 740:
Ռեուտ, գեներալ 402, 619:
Ռզաեւ Դադաշ, գեներալ 619:
Ռզաեւ Շ. 286:
Ռիժկով Նիկոլայ Իվանովիչ 31, 47, 104, 106, 156, 719:
Ռըբար Յան, չեխ լրագրող 255:
Ռոգանով Ալեքսանդր 505:
Ռոգով Վիկտոր, գրող 682:
Ռոյտման Լեւ 355, 398, 399:
Ռոստով Յուրի, լրագրող 338, 344, 353, 354, 393, 427:
Ռոստովսկայա Մ. Ն. 257:
Ռուբեն, տե՛ս Տեր- Մինասյան Ռուբեն:
Ռումյանցեւ Օլեգ 678:
Ռուցկոյ 380-382, 387, 392, 401, 402, 438, 449, 463, 577, 578:
Ռուպերտ Ջեմս 315:
Ռուստամխանլի Սաբիր 310:
Սաբի Անրի 172:
Սադըխով, գեներալ 637:
Սադըխով Հուսեյն աղա 354, 375, 432:
Սաբիրով Ռաֆիկ 495:
Սադոյան Արշակ 130, 472:
Սալամով 525:
Սալիբա Հարություն, Ամերիկահայ բարերար 793:
Սալիբա Հովիկ, ամերիկահայ բարերար, Հարությունի որդին 777, 793:
Սալմանով 573:
Սալման Ռուշդի 365:
Սախարով Անդրեյ, ակադեմիկոս, իրավապաշտպան 36, 53, 70, 73, 98, 108, 109, 235, 306, 312, 435, 587, 590, 775:
Սահակյան Անդրանիկ 183:
Սահակյան Արա 470, 484, 487, 510, 547, 578, 620:
Սահակյան Արամայիս 500:
Սահակյան Մելս 479:
Սահակյան Ռուբեն, պրոֆեսոր 567:
Սամվել, ազատամարտիկ 323:
Սայմոն Պոլ, ԱՄՆ-ի սենատոր 784:
Սանասարյան Հակոբ 473:
Սավին, գեներալ 299:
Սարգսյան Արամ 237, 239, 380, 470, 581:
Սարգսյան Արմեն, դեսպան '572:
Սարգսյան Արտեմ, ակադեմիկոս 38:
Սարգսյան Գ. Խ., ակադեմիկոս 55, 61:

Սարգսյան Եղիշե 208, 243:
Սարգսյան Մանվել, ԼՂՀ ներկայացուցիչը ՀՀ-ում 275, 627, 666, 674, 679, 686, 726:
Սարգսյան Մարգարիտ 785:
Սարգսյան Յուրի 460:
Սարգսյան Սերժ 262, 546, 609, 635, 644, 722, 729, 732, 775:
Սարգսյան Սոս, ժող. դերասան 55, 58, 158, 208, 275:
Սարգսյան Վազգեն 262, 300, 377, 389, 415, 450-453, 468, 492, 496, 498, 501, 504, 511, 540, 544, 548, 649, 778:
Սարգսյան Տիգրան 465:
Սարգսյան Ֆ. Տ., ակադեմիկոս 48:
Սարկիսով Մ. Ա., պրոֆեսոր 38:
Սարուխանյան Սարգիս 183:
Սարուխանյան Վրեժ 395:
Սավին, գեներալ 284:
Սարդարյան Կտրիճ 169, 170, 239, 268, 284, 304, 477, 482, 585, 586, 611, 621, 624, 625, 631:
Սաֆարլի 736:
Սաֆարյան Խաչիկ 234, 467:
Սաֆոնով, գեներալ, ԼՂԻՄ-ի ռազմական պարետ 121, 148, 150, 158, 160, 162-164, 166-169, 181, 188-194, 789:
Սեդրակյան Սեդրակ, Գյուլիստանի ֆիդայի 655:
Սեդրակյան Սեդրակ 154:
Սելիմխանով, լեզգիների ազգային ազատագրական շարժման ղեկավար 627:
Սեմյոնով Վլադիմիր, Ելենա Բոնների որդին 380:
Սեիդով 45:
Սելյունին Վասիլի 202:
Սեյմստոն, ԱՄՆ-ի սենատոր 150:
Սևակ Պարույր 85:
Սերիկով 274
Սիլաև 265:
Սքյուֆլբերգեր Հանս 510:
Սիդորով Վ. Ա. 101, 106, 120:
Սիմոնյան Կարեն 129, 131:
Սիմոնյան Հրաչիկ, ակադեմիկոս 17, 469:
Սիմոնյան Պողոս 655:
Սիմոր, ԱՄՆ-ի սենատոր 315:
Սիորիս Խրիստո 678:
Սիրադեղյան Վանո 88, 96, 126, 127, 130, 477, 769, 773:
Սլավգորոդսկի 151:
Սյունիկով 97-114, 141:
Սմիռնով Վ. 266, 285, 286, 373:



Սմոլենցև 195:
Սնեգուր 485:
Սոբոլևա Տատյանա 12, 40:
Սոբչակ Անատոլի 107, 134:
Սոլոուխին Վլադիմիր, գրող 171:
Սոկոլով Վ., գեներալ 289:
Սպիրիդոնով Վիկտոր, զինվորական 139:
Սոնենց-Փափազյան Վիգեն 572:
Ստալին 5, 6, 7, 15, 20, 79:
Ստամբոլցյան Խաչիկ 96, 128, 599:
Ստարովոյտովա Գալինա 90, 98, 168, 169, 175, 275, 276, 314, 315, 354, 362, 387, 563, 587:
Ստեփանյան Եսայի 594:
Ստեփանյան Նելսոն 110:
Ստեփանյան Վ. 133:
Ստուպիշին Վլադիմիր Պետրովիչ 462, 506, 563, 575, 590, 674, 677, 689, 718:
Սրապիոնյանց Ռ. Ա., պրոֆեսոր 38, 40:
Սուլթանով 331, 334:
Սուվորով Ալեքսանդր, գնդապետ 435:
Սուրենյան Կարպիս 232:
Սուքիասյան Սիլվա 441:
Վազգեն Ա, Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոս 24, 171, 222, 242, 355, 431, 561, 579, 766, 770:
Վարիանիս Նիկոլաս 344:
Վահաբզադե Բախտիյար 7, 34, 76, 77:
Վայեզի Մահմուդ 387, 388, 393, 400, 402, 418, 421:
Վանյան Թամարա 217:
Վասիլևսկի Ալեքսանդր 21:
Վարդանյան Գևորգ 489:
Վարդանյան Գեորգի 770:
Վարդանյան Դավիթ 96, 211, 251, 413, 455, 465, 472, 482, 537, 591, 594, 770:
Վարդանյան Ստեփան 60:
Վարդանյան Վլադիմիր 50:
Վարդգես (Ուլուբաբյան) 529:
Վարդումյան Ալվարդ 502, 503:
Վեզիրով Ա. 75, 83, 86, 90, 104, 105, 117, 119, 121, 138, 140, 423, 435:
Վելայեթի Ալի Աքբար 361, 364, 366, 368, 372, 383, 543:
Վելիմամեդով Ս. Մ. 150:
Վիշինսկի Մ. 209:
Վոլսկի Արկադի Իվանովիչ 70, 71, 84-86, 90, 92-94, 98, 100, 101, 104, 116, 120, 130, 256, 265, 284, 492, 578, 719:
Վոեվոդսկի Կոնստանտին 21, 34, 36, 216, 285, 605:
Վոյկո 168:
Վենդել Ֆրանսիսկո 432, 433:

Վենս Սայրուս 383-385, 388, 390:
Վերբալլահ Բախտիար, աֆղան մոջահեդ 793:
Վերմիշեւա Սեդա 656:
Վոլին Վլադիմիր 492:
Վոսս Ա. Է. 88-90, 93, 103:
Վորոնցով-Դաշկով 348:
Վորոնցով, դիվանագետ 428:
Վուրղուն Սամեդ 29:

Տառազեւիչ Գ. Ա. 122:
Տեր-Գրիգորյան Նորայր, գեներալ 504, 506:
Տեր-Թադեւոսյան Արկադի, գեներալ 414, 502:
Տեր-Մինասյան Ռուբեն 7:
Տեր-Պետրոսյան Լեւոն 88, 89, 96, 126, 128-131, 196, 198, 206, 209-212, 214, 215, 220, 224, 225, 227, 229, 230, 233, 234, 238-240, 243, 254, 259, 260, 268, 269, 271, 273, 275, 282, 284, 293, 295, 298, 311, 312, 329, 332, 340, 342, 347, 349, 350, 352, 353, 357, 360, 367, 372, 379, 383-384, 387, 388, 400, 405, 414, 416, 418, 421, 427, 429, 433, 445, 449, 450, 452, 456, 457, 759, 460, 462-465, 468, 471, 472, 476-479, 481, 483, 493, 498, 501, 506, 509-511, 513, 516, 517, 520, 522, 524, 528, 531, 538, 540, 543-545, 548, 555, 557, 558, 564, 571, 575, 576, 579, 584-586, 592, 594-596, 598, 604, 606, 622, 629, 732, 634, 638, 640, 641, 647, 649, 657, 670, 677, 678, 686, 688, 691-694, 696, 698-701, 709, 712, 717, 730, 731, 734, 737, 740-745, 756, 771-773, 783, 785, 787, 793:
Տեր-Ստեփանյան Քրիստիան 371, 482, 528:
Տիգրան Մեծ 25:
Տիտանյան Ռուբեն 478:
Տիտով Վյաչեսլավ, Մոսխորհրդի դեպուտատ 253,255:
Տյուգանով Անդրեյ, ռուս սպա 116:
Տրավկին 578:

Ցիտրինյակ Գրի(գորի) 108:
Ցուդերու Վերժինիա, Հունաստան ԱԳՆ-ի տեղակալ 684:

Ուլուբաբյան Բագրատ 5, 33:

Փանահ-Ալի (խան) 283:
Փաշազադե շեյխ-ուլ-իսլամ 501, 579, 666, 667:
Փաշայան, սենատոր 167:



Փափազյան Արշալույս 310:
Փել, ԱՄՆ-ի սենատոր 315:
Փիրումյան Դանիելբեկ 251:
Փիրումյան Պողոսբեկ 251:

Քալանթարյան Սերգեյ 412:
Քաջազնունի Հովհաննես 477, 611:
Քացախյան Պետրոս 486, 491:
Քեմալ Աթաթուրք 362:
Քենեդի Ջոզեֆ, ԱՄՆ-ի սենատոր 607-612:
Քենեդի Ջոն, ԱՄՆ-ի սենատոր 751, 784:
Քենեդի Ռոբերտ 784:
Քերիմով Ճ. Ք. 150:
Քլինթոն Բիլ, ԱՄՆ-ի պրեզիդենտ 634, 699, 740, 784, 798, 799:
Քոչարյան Շավարշ 638:
Քոչարյան Ռիմա 39:
Քոչարյան Ռոբերտ Սեդրակի 40, 50, 110, 117, 168, 271, 308, 463, 469, 509, 514, 515, 527, 534, 580, 614, 636, 638, 642, 644, 653, 659, 678-690, 693, 696, 712-728, 729, 735, 739, 740, 746-748, 754, 759-761, 763, 763, 765, 792:
Քոչարյան Սեդրակ 614:
Քրիստոֆեր Ու., ԱՄՆ-ի պետ. քարտուղար 621, 691:
Քուշներ Բեռնար 314, 332, 355, 360, 361, 370, 389, 408:

Օզալ Թուրգութ, Թուրքիայի պրեզիդենտ 199, 200, 351, 369, 377, 378, 423, 425, 428, 445, 458, 633, 645, 649, 651, 652, 654, 657:

Օզֆաթուրան Նեջաթի Մուստաֆա, լրագրող 664, 665:
Օլեանդրով Վսեվոլոդ 507:
Օլեյնիկ Բորիս 111-113
Օհանյան Լենսեր 189:
Օհանյան Սեյրան 770, 777:
Օհանյան Պադ 167:
Օհանջանյան Կարեն 753:
Օմար Խալիմ, ՄԱԿ-ի աշխատակից 511:
Օմելիչեւ Բ., գեներալ 146:
Օվյան Վարդգես, լրագրող 588:
Օսիպով Վ. 11, 13, 14, 16:
Օսկոցկի Վալենտին 189-191, 202, 216, 217, 237, 257, 299, 381, 431, 656, 716, 726:

Օսմանով Նադիր 458:
Օվչարենկո Գ. 53, 88:
Օվչիննիկով, զինվորական 170:
Օրբելյան Սայիդա 40:
Օրուջեւ Զ. 112:
Օրուջեւ Թ. Խ. 42, 50, 86, 90, 92, 274:

Ֆաթալիեւ Ն. Ս. 115:
Ֆարաջյան Էմիլյա 217:
Ֆել Կլեյբորն 327, 328:
Ֆերնանդես Ֆրանսիսկո, Իսպանիայի արտգործնախարար 321:
Ֆիլատով Սերգեյ, ՌԴ պրեզիդենտի աշխատակազմի ղեկավար 684:
Ֆիցուստեր Մարլին, լրագրող 147:
Ֆյոդորով Ալեքսեյ 450, 451:
Ֆյոդորով Ա. Վ., Ռուցկոյի խորհրդականը 577:
Ֆյոդորով Անդրեյ, ֆոտոթղթակից 492:
Ֆյոդորով Սվյատոսլավ, ակնաբույժ 192, 226:
Ֆոտեեւ Վ. Կ. 137, 164, 196, 237, 241, 242:
Ֆրանս դը Արտինգ, Ֆրանսիայի դեսպան ՀՀ-ում 668:
Ֆուրման Դմիտրի 481:






Այսպես է ոտքի ելել Արցախը եւ շարժվել դէպի իր ազատ անկախությունը:



Առաջին հանրահավաքներից մեկը: Ցուցարարներին խոսք է ասում Արկադի Մանուչարովը: Ելույթի է պատրաստվում բանաստեղծ Հրաչյա Բեգլարյանը:



Արցախի գոյամարտի պաշտպանության համար ոտքի կանգնեցին Երեւանը, Հայաստանը, ողջ հայ ժողովուրդը:




Կառավարական
բութ ամբաստա-
նությունը չի
կարող ճնշել
համաժողովր-
դական կամքը։



Վաչե Սարուխան-
յանը թատրոնի
մարդ է։ Այն օրերին
Թատերական հրա-
պարակում էր նրա
բեմը, հարյուր հա-
զարավոր հանդիսա-
տեսների առաջ





88-ի Արցախյան
հանրահավաքների ո-
գին էր Ժաննա
Գալստյանը՝ մարզի
ազգային դրամատի-
կական թատրոնի տա-
ղանդավոր դերասա-
նուհին։



Ինքնապաշտպանու-
թյան օրերին Ժաննա
Գալստյանը ստանձնել
է իր կյանքի ամենա-
ծանր եւ ամենափա-
ռավոր դերը, զորամա-
սերում էր, նրա մար-
տական հանձնարա-
րությունները էին կա-
տարում ազատամար-
տիկները, ապա զեկու-
ցում, արժանանում
խրախուսանքի, ստա-
նում նոր, առավել
պատասխանատու
հրահանգներ։



Բանաստեղծ Սիլ-
վա Կապուտիկյա-
նը 60-ական
թվականներից սկ-
սած գրում, պա-
հանջում էր Արցա-
խը վերամիավորել
մայր Հայաստա-
նին։ Հիմա էլ հրա-
պարակում էր
բարձրացրել իր
ձայնը, եւ նրան
լսում էր հանուր
հայությունը։



9. Հիվանդ էր բանաստեղծ Վահագն Դավթյանը, եւ ամեն ելույթը կարող էր վերջինը դառնալ: Նրա այդ գրավոր ու բանավոր ելույթներից յուրաքանչյուրը, իբրեւ վերջինը, կտակի նման էր հնչում:



– Այսպես լա՞վ է, հրապարակը դատարկ չի լինի, եւ օմոնը այնտեղ տիրություն չի անի,- ասում էր ստեփանակերտցին:



«Եզդիները ձեզ հե՞տ են, հա՞յ եղբայրներ»:





Գործադուլ են անում գործավորները, դասադուլ են անում ԲՈՒՀ-երի ուսանողները:



Հացադուլի է պառկել Սոցիալիստական աշխատանքի հերոս Գառնիկ Մանասյանը եւ Հայաստանի ԳԽ-ից պահանջում է որոշում ընդունել Արցախի դատը պաշտպանելու մասին:



14. Ժողովուրդը զինված ինքնապաշտպանության է անցնում... Ինքնապաշտպանական առաջին ջոկատներից մեկը:



Ծանր ու հոգնատանջ զինվարժանքից հետո որքա՜ն բաղձալի է սուրբ պողին պառկած դեսից-դենից խոսել։



80-ամյա Վիկտոր Համբարձումյանը՝ Հայաստանի ակադեմիայի պրեզիդենտն ու աշխարհահռչակ գիտնականը, հացադուլի է պառկել Մոսկվայում, որ գուցե թե Գորբաչովին անուշի բերի Արցախի հանդեպ։



Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա վեհափառը Մոսկվա է հասել, որ տուն բերի հացադուլ անող Զորի Բալայանին, Սոս Սարգսյանին ու նրանց ընկերներին։





ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը խոսք է ասում Գորբաչովին.
– Միխայիլ Սերգեեւիչ, մի՞թե այնպես անհնար է, որ դուք մի քիչ մարդանաք։



19. ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Լյուդմիլա Հարությունյանը եւ նրա գործընկեր



20. Հենրիկ Իգիթյանը, որոնք համայն մարդկությանը ցույց տվին, թե ինչպես պիտի կենդանացնել մինչ այդ մեռյալ դեպուտատի դերը եւ ծառայել սեփական ժողովրդին. Արցախի ազատագրության գործին։

Լեռնային Ղարաբաղի հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նախագահը։



ԼՂՀ-ն արդեն ունի իր սեփական բանակը, որը ոչ միայն հաղթում է թշնամուն, այլեւ տոնախմբություններին իր հզորությունն ու տեխնիկան է ցուցադրում մայրաքաղաք Ստեփանակերտի մեծ հրապարակում։







23. Ավոյի հետ հանդիպելը երջանկություն էր զինվորների համար։





«Կոմանդոս»-գեներալ Արկադի Տեր-Թադեւոսյանը Շուշին ազատագրելուց առաջ։



Խիզախ ֆիդայի Պավլիկ Մանուկյանը («Ապարանցի Պավլոն»)։



Լեգենդար Ավո-Մոնթե Մելքոնյանը վերջին անգամ է տեսնում ԼՂՀ պաշտպանության ղեկավար Ռոբերտ Քոչարյանին եւ իր ջահել զինակիցներին։



26. Մարտունեցի խիզախ հրամանատար Վալոդ Խաչատրյանը եւ երկու որդիները՝ Ռուբենն ու Հրայրը, զոհվել են հայրենի եզերքի համար մղված դաժան մարտերում։ «–Կենդանի մնացած միակն եմ, արժանավորապես փոխարինեմ երեքին»,- այս է որդի Միերի մտորումը։



Առաջաձորի զավակ, իսկ այժմ Եղվարդում բնակվող Մայիս Շեկյանի երեք զավակները՝ Էռնեստը, Նվերն ու Անդրանիկը Արցախի ազատագրական կռիվներում են շարժման առաջին օրերից։ Այստեղ նրանք անմահացրել են Շուշիի ազատագրությանը հաջորդած երջանիկ պահը։ Իսկ այժմ երեքով մասնակցում են հայրենի եզերքի վերականգնմանը։



Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Կոքսը հերթական այցով բարեգործական մեծ բեռ է տեղ հասցրել եւ Արցախի ղեկավար Ռոբերտ Քոչարյանից ու ամենահաս Զորի Բալայանից ուզում է իմանալ, թե ինչի կարիքն է սուղ…





Բարոնուհի Քերոլայն Կոքսը ցնծության մեջ է. օրհնել է նոր արցախցու ծնունդը։

Մեր Վարդգեսն էլ ուրախ ու հպարտ է, որ ուղեւորվում է Հորադիզի ճակատամարտին։





Արցախ է եկել Հայկական Բարեգործականի տնօրինուհի Լուիզ Սիմոն Մանուկյանը, եւ Զորի Բալայանը կողմնորոշում է նրան՝ օգնությունը ճիշտ հասցեագրելու։



Արցախյան գոյամարտի երիտասարդ զորապետը՝ 30-ամյա գեներալ Սամվել Բաբայանը։



34. Ամերիկայի արեւելյան շրջանի եւ Կանադայի հայության Կիլիկյան թեմի առաջնորդ գերաշնորհ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը 88-ին Արցախահայությանն է հայտարարել Տարվա մարդը եւ դրանից հետո միշտ նրա հետ է իր եղբայրական օգնությամբ եւ հայրական քաջալերիչ օրհնությամբ։



35. Բիշքեկում որոշվել են հակամարտող ուժերի դասավորության դիրքերը, եւ դրանցից գոհ են ռազմական քարտեզի վրա դիրքերը վերականգնողները՝ ԼՂՀ վարչապետ Լեոնարդ Պետրոսյանը, Բագրատ Ուլուբաբյանը, ռազմական շտաբի աշխատակիցներ Ծատրյանն ու Առուշանյանը։



Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առաջին պրեզիդենտ Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը



36. Ո՞վ է պարզել այս հրաշակերտ կոթողի դե-րը ԼՂՀ հաղթանակի գործում (Հայաստանի ժողովրդական քանդա-կագործ, Վանաձոր- Բա-նազուրի զավակ Սար-գիս Բաղդասարյան):



# Մի էջ էլ մեր հակառակորդի կյանքից



1. Ադրբեջանի առաջ-նորդ Հեյդար Ալիեւն այսպես է ապահո-վում իր հանրապե-տության անկախու-թյունը կախվելով մեծավորի շլնքից:



Այս նկարը կոչվել է «Տոնական խնջույք»: Իբր, Արցախն արդեն ծն-կի են բերել եւ իրենց այդ հաղթանակն են տո-նում Շուշիում: Ձախից առաջինը Վ. Ջաֆարովն է, Շուշվա կուս. շրջկոմի առաջին քարտուղարը: Ա-ջից առաջինը դժնահի-շատակ Պոլյանիչկոն է: Ո՞ւր են նրանք... Աջից երկրորդը չարահուշ Սաֆ-ոնովն է, երրորդը նրա տեղակալ Ռադաեւը Ղա-րաբաղի պարտությու-նում: Սրանք էլ այսօր մե-ռած են, թաղված չեն...



3. Ասկերանի բերդի պատի տակ ընկած է թշնամու ուղղաթիռի լեշը՝ իբր ահեղ զգուշացում բոլոր նրանց, որոնք պիտի փորձեն ճեղքել Լեռ-նային Ղարաբաղի հանրապետության սահմանը:

# Գոյամարտի մի խումբ հերոս անմահներ



ԼՂՀ ԳԽ-ի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը.



Աշոտ Ղուլյան («Բեկոր»),



Վարդան Ստեփանյան («Դուշման»),



Ֆիդայինների առաջնորդը Շահեն Մեղրյան.



Վիգեն Գրիգորյան («Վրեժ»)



Արմեն Գասպարյան («Արմենչո»),





Պետրոս Ղևոնդյան («Պետո»)



Արթուր Ղարիբյան.



Անդրանիկ Հարությունյան.



Բենիամին Մկրտչյան.



Գեղամ Զախարյան.



Աղվան Մինասյան («բանաստեղծ»)



Սամվել Շահմուրադյան.



Ֆուրման Շահումյանց.



Թաթուլ Կրպեյան.



Մերուժան Մոսիյան



Սիմոն Աչիկգոզյան («Դեդ»).



Նորայր Դանիելյան.





Վարդան Բախչյան.



Իգոր Հասրաթյան.



Մհեր Ջուլհաճյան («Բեյրութի զավակ»).



Վազգեն Սարգսյան.



Վասակ Բարսեղյան.



Արմեն Պետրոսյան



Ռոբերտ Գևորգյան



Արծվիկ Պետրոսյան («Մայեստրո»)



Սերգեյ Ջավադյան.



Նորայր Բերդաձորցի



Վահե Բաղդասարյան.



Արթուր Ուղումյան.





Էդուարդ Կամսարի (Ղարաբաղցի).



Համլետ Հակոբյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբանի փոխարեն ........................................5
1988........................................10
1989........................................99
1990........................................137
1991........................................189
1992........................................303
1993........................................589
1994........................................758
Վերջաբանի փոխարեն ........................................806
Անվանացանկ........................................808
Լուսանկարներ ........................................822

Հանձնվել է շարվածքի 1996թ. մայիսի 20-ին:

Տպագրական մամուլ: Տպաքանակը՝

Գինը՝ պայմանագրային: